Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

1904 р.

1 OCT 2009

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

# ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ

264
Ա-84

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

# ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ

ԸՍՏ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ



ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1904.

6108

13 MAY 2013

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յայտ է ամենեցուն եթէ քանիօն ցանկութիւն սրտի եւ փոյթ ի մտի էր ի սկզբանէ Պատրիարքաց Կիւլիկիոյ, Նախագահ Աբքեպիսկոպոսաց Կ-Պոլսի եւ վիճակակցաց նոցին՝ Աբքեպիսկոպոսաց եւ Եպիսկոպոսաց, որպէս եւ ընդհանրական Աբբայից կրօնաւորական Միաբանութեանց եւ համօրէն կղերի Ազգիս, ի բարեկարգութիւն եւ ի միակերպ հաւասարութիւն կարգաց յեկեղեցական Պաշտամունս։ Քանզի չունելով ի ձեռին հաստատուն ինչ հրահանգս՝ այր իւրաքանչիւր վարէր միշտ, որպէս եւ ցարդ իսկ վարի, այլ եւ այլ օրինակաւ ի կարգս Պաշտամանց Եկեղեցւոյ եւ ի մատակարարութեան սրբոց Խորհրդոց։

Առ ի զառաջս ունել զանպատեհութեանցս՝ չեղեւ իւիք խնայութիւն ի ջան եւ ի վաստակ. նա զի՝ եւ յամին 1847, որպէս եւ յետոյ եւս, հաւանութեամբ եւ հրամանաւ իսկ Սրբոյ Առաքելական Աթոռոյն՝ գումարեցան աստ ի Կ-Պոլիս, մասնաւոր ժողովք հմուտ եւ յաջողակ եկեղեցականաց, որոց առաջի աչաց կալեալ զգրեալսն եւ զնկատեալս ի Պատրիարքական Աթոռոյն Կիւլիկիոյ եւ ի

758 - 81

կրօնաւորական Միաբանութեանց, եւ զհետ երթեալ առաւելապէս ընթացից՝ զոր ի բազում ամաց հետէ ունէր եւ պահէր կղերն, արկին ընդ դրով հրահանգս եւ կարգաւորութիւնս վանս եկեղեցական պաշտամանց, եւ մանաւանդ վանս թիւս եւ ձայնաւոր պատարագի:

Ցանկալի էր ապաքէն՝ զայս ամենայն սիւնհոդոսիս Նպիսկոպոսաց Ընդիս սահմանել, եւ հաւանութեամբ Սրբոյ Ընաքելական Ընթոռոյն հաստատուն գործել, զի լեցի կանոն անշարժական ի կարգս պաշտամանց Նկեղեցւոյս Ընայոց, որով եւ պահեցի յամենայնի հաւատարմութիւն եւ միաբանութիւն ցանկացեալ յամենեցունց: Ընյլ այն ամենայն խափանեցաւ մինչեւ ցայժմ վանս իրաւացի պատճառաց եւ ձախող ընթացից ժամանակաց: Նե թէպէտ յետ միութեան երկոցունց Ընթոռոցն՝ պատրիարքականին Կիւլեկիոյ եւ Նախապահականին Կ-Պոլսոյ, գումարեցաւ ըստ ակնկալութեան ամենեցուն Սիւնհոդոս ազգային պատրիարքական, սակայն եւ այնպէս չեղեւ հնար այնպիսեաց պատկառ կալ: Նե քանզի եւ յայժմու ժամանակիս եւս կարի դժուարին է ի ժողով գումարել զնպիսկոպոսունս վանս այսպիսի իրաց, նմին իրի պատշաճ թուեցաւ այժմ օրինակս ինչ պատարագամատոյց գրոց տպագրութեամբ ի լոյս ընծայել առ ի դիւրութիւն քննութեան, թողեալ ի նոսին լուսանցս ըստ



բաւականի, որպէս զի քննեալ Նպիսկոպոսաց եւ որոց անկ իցէ զամենայն զբովանդակեալսն՝ նշանակեսցեն անդէն զկարծիս իւրեանց: Նե այսպէս՝ եթէ ոչ այլազգ ինչ վախճան լեցի իրացս, գէթ ի գումարել վերատին Նպիսկոպոսաց Ընդիս ի Սիւնհոդոս, դիւրաւ եկեսցեն ի միութիւն, եւ հոգ տարցին Սիւնհոդոսական սահմանօք առաջի առնել զամենայն ի քննութիւն եւ ի հաստատութիւն Սրբոյ Ընաքելական Ընթոռոյն, որով հուսկ ուրեմն յաջողեսցի ունել զհաստատուն կանոն պատարագի, որպէս եւ զայլոց գրոց պաշտամանց ըստ կարգի:

Ի Կաթողիկոսարանի Ընայոց Ընղջափառաց,

Ի Ռերա Կոստանդնուպոլսի.

Ի 6 Յունուարի, 1879:

**Ընտն Պետրոս Թ.**

ՊԵՏՐՈՒԲՐՔ ՏԵՂՆ ԿԻՒԼԻԿԻՈՑ

# ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ
## ԿԱԹՈՂԻԿԵԱՅ ՀԱՅՈՑ

*Թիւ 1093.*

*ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ. Արտօնութիւն վասն տպագրութեան խորհրդատետրի եւ Մաշտոցի:*

*Այսու պաշտօնական թղթով Մերով տամք իշխանութիւն Միաբանութեան Մխիթարեանց Վիեննայ առնելոյ զերկրորդ տպագրութիւն եւ վաճառելոյ ի հաշիւ Միաբանութեան զխորհրդատետրն տպագրեալ յամին 1879 ի Վիեննա եւ զՄաշտոցն տպագրեալ յամին 1880 ի նմին քաղաքի, առանց փոփոխութեան ընագրին. քայց եթէ Մերով հաւանութեամբ, վերապահելով Մեզ զյաջորդ տպագրութիւնս:*

*Ի հաստատութիւն արկանեմք զձեռնագիր Մեր:*

*Բերա, Կ.Պօլսոյ յ17 Մայիսի հ. տ. 1903:*

Տ. Կ.

*ՊՕՂՈՍ ՊԵՏ. ԺԱ.*
*Կթղ.-Պտր.*
*Կիլիկիոյ:*



Ի ՏՕՆԻ ԾՆՆԴԵԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

# ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

---

Ի ԻԴ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

## Ի ԺՐԱԳԱԼՈՒՑԻ ԾՆՆԴԵԱՆ

Համամուտ. Աստուածածին ամէնօրհնեալ, զԲանն անսկիզբն յղացար եւ զԱստուածն անբովանդակելին ծնար, զանպարագրելին ի գիրկս քո բարձեր. նմա անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց:

Սղ. Բ. Տէր ասաց ցիս՝ Որդի իմ ես դու. եւ ես այսօր ծնայ զքեզ:

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. եւ ժողովուրդք խորհեցան՝ ի սնոտիս:

Պօղոսի Առաքելոյն ի Տիտոսի թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Բ. 11:

Քանզի երեւեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան, որ խրատէն զմեզ զի ուրասցուք զամբարշտութիւն եւ զաշխարհական ցանկութիւնս: Զգաստութեամբ եւ արդարութեամբ եւ աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհի. եւ ակն կալցուք երանելի յուսոյն եւ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ եւ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ ետ զանձն վասն մեր, զի փրկեսցէ զմեզ յամենայն անօրէնութենէ, եւ սրբեսցէ իւր ժողովուրդ սեպ-

հական՝ նախանձաւոր գործոց բարութեան: Զայդ խօսեաց, եւ մխիթարեա եւ յանդիմանեա ամենայն սաստիւք. զի մի ոք իցէ, որ զքեզ արհամարհիցէ: 15:

Ալէլուիա, ալէլուիա. Այսօր ծնաւ որ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս Որդի, որ է օծեալ Տէր՝ ի քաղաքի Դաւթի: Ի վայելչութիւն սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ա. 18:

Վասն ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս: Խօսեցեալ զմայր նորա Մարիամ Յովսեփու, մինչ չեւ եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ի Հոգւոյն սրբոյ: Եւ Յովսէփ այրն նորա, քանզի արդար էր եւ ոչ կամէր առակել զնա, խորհեցաւ լռելեայն արձակել զնա: Եւ մինչ դեռ նա զայս ածէր զմտաւ, ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երեւեցաւ նմա եւ ասէ. Յովսէփ որդի Դաւթի, մի երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ ի նմայն ծնեալ է՝ ի Հոգւոյն սրբոյ է: Ծնցի որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս. զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց: Այլ այս ամենայն եղեւ, զի լցցի որ ասացաւն ի Տեառնէ ի ձեռն Եսայեայ մարգարէի. Ահա կոյս յղասցի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Եմմանուէլ, որ թարգմանի՝ ընդ մեզ Աստուած: Եւ զարթուցեալ Յովսէփ ի քնոյ անտի, արար որպէս հրամայեաց նմա հրեշտակն Տեառն, եւ առ յինքն զկին իւր: Եւ ոչ գիտէր զնա, մինչեւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, եւ կոչեաց զանուն նորա Յիսուս: 25:

---

Ի ԻԵ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

## ԱՌԱՋԻՆ ՕՐ ԾՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ժամամուտ. Աստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց. քանզի ուր քերովբէքն բազմաչեայք եւ աթոռք հրանիւթք եւ վեցթեւեան սերովբէքն նայել ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս յանապա-



կանումն ի յարգանդի քում որպէս աղախին զՏէր, եւ ծնար որպէս մարդ զԱստուածն բոլորից զմարմնացեալն առ ի քէն զանճառ զՐանն, ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Սղ. Բ. Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու. եւ ես այսօր ծնայ զքեզ:

Ընդէր խռովեցան հեթանոսք. եւ ժողովուրդք խորհեցան՝ ի սնոտիս:

Պօղոսի Առաքելոյն ի Տիտոսի թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Բ. 11:

Քանզի երեւեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան, որ խրատէն զմեզ՝ զի ուրասցուք զամբարշտութիւն եւ զաշխարհական ցանկութիւնս. զգաստութեամբ եւ արդարութեամբ եւ աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհի. եւ ակն կալցուք երանելի յուսոյն եւ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ եւ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ ետ զանձն վասն մեր, զի փրկեսցէ զմեզ յամենայն անօրէնութենէ, եւ սրբեսցէ իւր ժողովուրդ սեպհական՝ նախանձաւոր գործոց բարութեան: Զայդ խօսեաց, եւ մխիթարեա եւ յանդիմանեա ամենայն սաստիւք. զի մի ոք իցէ, որ զքեզ արհամարհիցէ: 15:

Ալէլուիա, ալէլուիա. Այսօր ծնաւ որ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս Որդի, որ է օծեալ Տէր՝ ի քաղաքի Դաւթի: Ի վայելչութիւն սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Բ. 1:

Վասն ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել հրաման յՕգոստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս: Այս առաջին աշխարհագիր եղեւ ի դատաւորութեան Ասորւոց Կիւրենեայ: Եւ երթային ամենեքեան մտանել յաշխարհագիր յիւրաքանչիւր քաղաքի: Ել եւ

Յովսէփ ի Գալիլեէ ի քաղաքէ Նազարեթէ՝ ի Հրէաստան, ի քաղաք Դաւթի, որ կոչի Բեթղեհէմ. վասն լինելոյ նորա ի տանէ եւ յազգէ Դաւթի, մտանել յաշխարհագիր Մարեմաւ հանդերձ՝ զոր խօսեալն էր նմա, եւ էր յղի: Եւ եղեւ ի հասանելն նոցա անդր, լցան աւուրք ծնանելոյ նորա. եւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, եւ պատեաց ի խանձարուրս եւ եդ զնա ի մսուր. զի ոչ գոյր նոցա տեղի յիջեւանին: 7:

---

Ի ԻԶ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

## ԵՐԿՐՈՐԴ ՕՐ ԾՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Եւ է անմիջապէս Ա-ագ Տօն

**Սրբոյն Ստեփանոսի Նախավկային,**

յորում աւուր եւ հանդիպեսցի, Բեպէտ եւ ի Կիրակէի, ի Չորէշաբաթու եւ յՈւրբաթու:

Ժամամուտ. Ցնծա այսօր ցնծա եւ զուարճացիր կաթուղիկէ սուրբ՝ յիշատակաւ սրբոյն Ստեփանոսի նախավկային Քրիստոսի՝ վկայեցելոյ Հօր. որ աղօթիւք բանայր զերկինս, զոր փակեաց Ադամ. եւ հրեշտակակերպ տեսլեամբ տեսանէր զկերպարանն Հօր ի կերպի Ադամայ՝ նստեալ յաթոռ փառաց: Որ զբազմութիւն քարանցն որպէս զծաղիկս հաւաքելով՝ բոլորէր պսակս փոխանակ փշոցն եւ եղեգանն. եւ զմարտիրոսական արիւնն խառնէր ընդ փրկական արեանն Քրիստոսի հոսեցելոյն ի կողէն: Վասն որոյ գերազանցեալ ի փառս առաւել քան զամենայն սուրբս՝ հայցեա եւ մեզ ի վերնատուողէն՝ զպարգեւս կենաց անվախճանից եւ զմեծ զողորմութիւն:

Յորովայնէ ընտրեալ՝ սուրբ Ստեփանոս, յորովայնէ ընտրեալ՝ սուրբ Ստեփանոս, վկայ ճշմարիտ առաքելական քարոզութեանցն. որ ի վերայ անօրէն քարաձգողացն աղօթէիր առ Քրիստոս Աստուած՝ Մի համարիր սոցա զայս ի մեղս: Ի ձեռն սորին բարեխօսութեանն շնորհեա մեզ զմեծ քո զողորմութիւն:



Սղ. Ե. Տէր, որպէս զինու՝ հաճութեամբ քով պսակեցեր զմեզ:

Բանից իմոց ունկն դիր Տէր. եւ ի միտ առ զաղաղակ իմ:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Զ. 8:

Ստեփանոս՝ այր լի շնորհօք եւ զօրութեամբ, առնէր նշանս եւ արուեստս մեծամեծս ի ժողովրդեանն: Յարեան ոմանք ի ժողովրդենէն, որ կոչէր Լիբէացւոց եւ Աղէքսանդրացւոց եւ Կիւրենացւոց, եւ որ ի Կիւլիկեցւոց եւ յԱսիայ, վիճել ընդ Ստեփանոսի: Եւ ոչ կարէին զդէմ ունել զիմաստութեանն եւ զՀոգւոյն, որով խօսէր: Յայնժամ հրապուրեցին արս ոմանս ասել, թէ Լուաք զդորա խօսել բանս հայհոյութեան ի Մովսէս եւ յԱստուած: Եւ խռովեցին զժողովուրդն եւ զերիցունսն եւ զդպիրսն. եւ հասեալ ի վերայ՝ յափշտակեցին զնա եւ ածին յատեանն: Եւ կացուցին վկայս սուտս՝ որ ասէին. Այրս այս ոչ դադարէ խօսել բանս հայհոյութեան զտեղւոյն սրբոյ եւ զօրինացն: Լուաք ի դմանէ՝ զի ասէր, թէ Յիսուս Նազովրեցի՝ նա քակեսցէ զտեղիս զայս, եւ փոխեսցէ զօրէնս՝ զոր ետ մեզ Մովսէս: Եւ հայեցեալ ի նա ամենեցուն՝ որ նստէին յատենին, տեսին զերեսս նորա իբրեւ զերեսս հրեշտակի: Ասէ քահանայապետն՝ թէ Արդարեւ այդ ա՞յդպէս իցէ: Եւ նա ասէ. Ա՛րք եղբարք եւ հարք՝ լուարուք ինձ: Աստուած փառաց երեւեցաւ հօր մերում Աբրահամու մինչ դեռ ի Միջագետս էր, մինչ չեւ բնակեցուցեալ էր զնա ի Խառան, եւ ասէ ցնա. Ել յերկրէ քումէ եւ յազգէ քումէ, եւ եկ յերկիր՝ զոր ցուցից քեզ: Յայնժամ ելեալ յերկրէն Քաղդէացւոց՝ բնակեցաւ ի Խառան. եւ անտի յետ մեռանելոյ հօր նորա՝ փոխեաց եւ պանդխտեցոյց զնա յերկրիս յայսմիկ, յորում դուք այժմ բնակեալ էք: Եւ ոչ ետ նմա ժառանգութիւն ի սմա, եւ ոչ քայլ մի ոտին. եւ խոստացաւ տալ նմա զսա ի բնակութիւն, եւ զաւակի նորա յետ նորա. եւ մինչ ոչ գոյր նորա որդի, խօսեցաւ Աստուած այսպէս, թէ Եղիցի զաւակ նորա պանդուխտ յօտար երկրի, եւ ծառայեցուսցեն զնա եւ չարչարեսցեն ամս չորեքհարիւր: Եւ զազգն՝ որում ծառայեսցեն, դատեցայց ես, ասէ Աստուած. եւ յետ այսորիկ ելցեն

եւ պաշտեսցեն զնա ի տեղւոջն յայսմիկ: Եւ ետ նմա ուխտ
թլփատութեան. եւ ապա ծնաւ զԻսահակ, եւ թլփատեաց
զնա յաւուր ութերորդի, եւ Իսահակ զՅակովբ, եւ Յա-
կովբ զերկոտասան նահապետսն: Եւ նահապետքն նախան-
ձեալ ընդ Յովսեփայ՝ վաճառեցին Եգիպտոս. եւ էր Ա-
տուած ընդ նմա: Եւ փրկեաց զնա յամենայն նեղութեանց
նորա. եւ ետ նմա շնորհս եւ իմաստութիւն առաջի փա-
րաւոնի արքային Եգիպտացւոց. եւ կացոյց զնա իշխան
Եգիպտացւոցն եւ ամենայն տան նորա: Եւ եկն սով յամե-
նայն երկիրն Եգիպտոսի եւ ի Քանան, նեղութիւն մեծ. եւ
ոչ գտանէին կերակուր հարքն մեր: Եւ լուեալ Յակովբայ
թէ գտանի կերակուր Եգիպտոս՝ առաքեաց զհարսն մեր
յառաջագոյն: Եւ յերկրորդումն ետ Յովսէփ եղ-
բարց իւրոց. եւ յայտնի եղեւ փարաւոնի ազգն նորա:
Առաքեաց Յովսէփ եւ կոչեաց զՅակովբ զհայր իւր, եւ զա-
մենայն ազգատոհմն՝ ոգիս եօթանասունն եւ հինգ: Եւ էջ
Յակովբ Եգիպտոս, եւ վախճանեցաւ ինքն եւ հարքն մեր:
Եւ փոխեցան ի Սիւքեմ, եւ եդան յայրին, զոր ստացաւ
Աբրահամ գնով արծաթոյ յորդւոցն Եմովրայ՝ ի Սիւքեմ:
Երբեւ մերձեցաւ ժամանակ աւետեացն՝ զոր խոստացաւ Ա-
տուած Աբրահամու, աճեաց ժողովուրդն եւ բազմացաւ
Եգիպտոս. մինչեւ յարեաւ այլ թագաւոր Եգիպտոս,
որ ոչ ճանաչէր զՅովսէփ: Նա հնարեցաւ ազգին մերում,
եւ չարչարեաց զհարսն մեր առնել ընկեցիկ զմանկունս նոցա՝
զի մի ապրեսցին: Յորում ժամանակի ծնաւ եւ Մովսէս եւ
էր կայտառ առաջի Աստուծոյ. որ եւ սնաւ ի տան հօր իւրոյ
ամիսս երիս: Եւ յընկեցիկն առնել զնա՝ եբարձ զնա դուստրն
փարաւոնի, եւ սնոյց զնա իւր յորդեգիրս: Եւ վարժեցաւ
Մովսէս ամենայն իմաստութեամբ Եգիպտացւոցն. եւ էր
զօրաւոր բանիւք եւ գործովք իւրովք: Երբեւ լցաւ նորա
քառասնամեայ ժամանակ, անկաւ ի սիրտ նորա շրջել զեղ-
բարբք իւրովք՝ զորդւովքն Իսրայելի: Եւ տեսեալ զոմն
զրկեալ՝ զջարեցաւ, եւ խնդրեաց զվրէժ զրկելոյն՝ սպանանել
զԵգիպտացին: Ոչմտաւ ածէր թէ իմացին եղբարք նորա,
զի Աստուած ի ձեռն նորա տալոց էր ազատութիւն նոցա. եւ
նոքա ոչ իմացան: Եւ ի վաղիւ անդր երեւեցաւ նոցա մինչ
դեռ մարտնչէին, եւ վարեաց զնոսա ի խաղաղութիւն, ասէ.
Եղբք եղբարք եք, ընդէր զրկէք զմիմեանս: Իսկ որ զրկէր զըն-



կերն, մերժեաց զնա եւ ասէ. Ո՞կացոյց զքեզ իշխան եւ
դատաւոր ի վերայ մեր. միթէ սպանանել կամիցիս զնա, զոր
օրինակ սպաներ երէկ զԵգիպտացին: Եւ փախեաւ Մովսէս
ի բանիցս յայսցանէ, եւ եղեւ պանդուխտ յերկրին Մադիա-
մու. ուր ծնաւ երկուս որդիս: Եւ ի կատարել ամացն քա-
ռասնից, երեւեցաւ նմա յանապատին ի լերինն Սինայ
հրեշտակ Տեառն ի բոց հրոյ մերձենալոյն: Եւ Մովսէսի
տեսեալ՝ զարմացաւ ընդ տեսիլն. եւ ի մտանելն նորա
նշմարել՝ եղեւ ձայն Տեառն. Ես եմ Աստուած հարց
քոց, Աստուած Աբրահամու եւ Աստուած Սահակայ եւ
Աստուած Յակովբայ. եւ զահի հարեալ Մովսէս՝ ոչ իշ-
խէր հայել: Եւ ասէ ցնա Տէր. Լոյծ զկօշիկս յոտից
քոց, զի տեղիդ յորում դուդ կացեր՝ երկիր սուրբ է: Տե-
սանելով տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ որ Եգիպտոս,
եւ լուայ հեծութեան նոցա, եւ իջի փրկել զնոսա. եւ արդ՝
եկ առաքեցից զքեզ Եգիպտոս: Ասէր Մովսէս՝ զոր ու-
րացան եւ ասեն. Ո՞կացոյց զքեզ իշխան եւ դատաւոր ի
վերայ մեր. զնա Աստուած իշխան եւ փրկիչ առաքեաց ի
ձեռն հրեշտակին, որ երեւեցաւ նմա ի մորենւոջն: Նա եհան
զնոսա՝ արարեալ նշանս եւ արուեստս յերկրին Եգիպտացւոց
եւ ի պարմիր ծովուն եւ յանապատին, ամս քառասուն:
Այս Մովսէս է, որ ասաց ցորդիսն Իսրայելի. Մարգարէ յա-
րուսցէ ձեզ Տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց իբրեւ զիս,
նմա լուիջիք: Սա է՝ որ եղեւ յեկեղեցւոջն՝ յանապատին
ընդ հրեշտակին որ խօսեցաւ ընդ նմա ի լերինն Սինայ եւ ընդ
հարսն մեր. որ ընկալաւ զպատգամս կենդանիս՝ տալ մեզ:
Որում ոչ կամեցան հնազանդ լինել հարքն մեր. այլ մեր-
ժեցին եւ դարձան սրտիւք իւրեանց Եգիպտոս: Եւ ասեն
ցՀարոնն. Արա մեզ Աստուածս, որ երթայցեն առաջի
մեր. զի Մովսէսն այն՝ որ եհան զմեզ յերկրէն Եգիպտա-
ցւոց, ոչ գիտեմք զի եղեւ նմա: Եւ արարին յաւուրսն յայ-
նոսիկ որթ, եւ մատուցին զոհս կռոց, եւ ուրախ լինէին ի
գործս ձեռաց իւրեանց: Դարձոյց Աստուած եւ մատնեաց
զնոսա ի պաշտօն զօրութեան երկնից. որպէս եւ գրեալ է ի
գիրս մարգարէից. Միթէ զո՞հս եւ պատարագս մատուցէք
եւ ի պարմիր ծովուն եւ յանապատին, ամս քառասուն:
առէք զվրանն Մողոքայ, եւ զաստղն աստուածոյն Ռեմփայ,
զպատկերսն՝ զոր արարէք՝ երկիր պագանել նոցա. եւ փոխե-

ցից զձեզ յայն կողմն Յաբեղացւոց: Եւորանն վկայութեան էր ընդ հարսն մեր յանապատին. որպէս հրաման ետ՝ որ խօսէրն ընդ Մովսէսի, առնել զայն ըստ օրինակին՝ զոր ետես: Օգոր եւ ընկալեալ բերէին հարքն մեր հանդերձ Յեսուաւ ի վիճակ ազգացն, զորս մերժեաց Աստուած յերեսաց հարցն մերոց. մինչեւ յաւուրս Դաւթի, որ եգիտ շնորհս առաջի Աստուծոյ, եւ խնդրեաց գտանել զյարկս Աստուծոյ Յակովբայ: Նա եւ Սողոմոն շինեաց նմա տուն: Այլ ոչ եթէ Յարձրեաւն ի ձեռագործ տաճարս բնակէ. այլ որպէս մարգարէն ասէ. Երկինք աթոռ իմ են, եւ երկիրս պատուանդան ոտից իմոց. որպիսի՞ տուն շինեցէք ինձ, ասէ Տէր, կամ ո՞րչ տեղի հանգստեան իմոյ: Ոչ ձեռն իմ արար զայս ամենայն: Խստապարանոցք եւ անթլփատք սրտիւք եւ ականջօք. դուք հանապազ Հոգւոյն սրբոյ հակառակ կայք, որպէս եւ հարքն ձեր եւ դուք: Օ՞ր ի մարգարէիցն ոչ հալածեցին հարքն ձեր. եւ սպանին զայնոսիկ՝ որ յառաջագոյն պատմեցին վասն գալստեան Երդարոյն, որոյ դուք այժմ մատնիչք եւ սպանողք եղերուք. որք առէք զօրէնս ի հրամանս հրեշտակաց, եւ ոչ պահեցէք: Եւ լուեալ զայս՝ զայրանային ի սիրտս իւրեանց, եւ կրճտէին զատամունս ի վերայ նորա: Եւ նա էր լի Հոգւով սրբով. հայեցաւ յերկինս եւ ետես զփառս Աստուծոյ, եւ զՅիսուս՝ զի կայր ընդ աջմէ Աստուծոյ, եւ ասէ. Ահա տեսանեմ զերկինս բացեալ եւ զՈրդի մարդոյ՝ զի կայ ընդ աջմէ Աստուծոյ: Աղաղակեալ ի ձայն մեծ՝ խցին զականջս իւրեանց, եւ դիմեցին առ հասարակ ի վերայ նորա: Եւ հանեալ արտաքոյ քաղաքին՝ քարկոծէին. եւ վկայքն դնէին զձորձս իւրեանց առ ոտս երիտասարդի միոջ՝ որ կոչէր Սաւուղ: Եւ քարկոծ առնէին զՍտեփանոս, որ կարդայր եւ ասէր. Տէր Յիսուս, ընկալ զոգի իմ: Եդ ծունր՝ աղաղակեաց ի ձայն բարձր. Տէր, մի՛ համարիր դոցա զայս մեղս. եւ զայս իբրեւ ասաց՝ ննջեաց. եւ Սաւղոս էր կամակից սպանման նորա: Եւ եղեւ յաւուր յայնմիկ հալածումն մեծ ի վերայ եկեղեցւոյն Երուսաղէմ. եւ ամենեքեան ցրուեցան ի գեղս Հրէաստանի եւ ի Սամարիա՝ բաց յառաքելոցն: Եւ բարձին զՍտեփանոս արք երկիւղածք եւ արարին կոծ մեծ ի վերայ նորա: Ը. 2:



Ընդ լուիա, ալելուիա. Հոգւով սրբով զօրացեալ սուրբ Սաւփանոս, եւ ընտրեալ յորովայնէ. Ձնմարիտ վկայ, սիրող եւ առաքեալ Առաքելոյն. ի Երիսաոսէ ընկալար զուարթնոյն զպսակն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԺԲ. 24:

Տէրն մեր Յիսուս Երիսաոս ասէ.

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ: Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. եւ որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ՝ ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա: Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. եւ ուր եմն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ: 26:

---

Ի հինգ յաջորդ աւուրսդ Հոգեգալստեան Երիսաոսի որոնք ընդ աւուրս Աստուածայնոյ Պատարագին, ունին եւ զկնի իւրեանց զՏօնն Աստուածայնոյն Պենտեկոստէի, նախ՝ Սրբոյ Երիսաոսի Աստուածընկալ պետրոսի եւ Պօղոսի, եւ ապա Սրբոյ Որդոյն Որոտման:

---

## ԵՐՐՈՐԴ ՕՐ ԾՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ընդ պօն է

**Սրբոց Գլխաւոր Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի:**

Յամաոս. Առաքեալք եւ վկայք Երիսաոսի Աստուածոյ. ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդեգրութիւն կենաց կոչելով՝ միաբանական սուրբ Երրորդութեանն յորդորեցին երգել փառս ի յաւիտեանս. ամէն:

Սղ. ԺԸ. Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա. եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա:

Երկինք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Դ. 1:

Զայս վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի՝ որ դատելոց է զկենդանիս եւ զմեռեալս ի յայտնութեան իւրում եւ յարքայութեան: Եւ դու քարոզեա զբանն, հաս ի վերայ ժամու եւ տարաժամու. յանդիմանեա, սաստեա, մխիթարեա ամենայն երկայնմտութեամբ եւ վարդապետութեամբ: Քանզի եկեսցէ ժամանակ, զի ողջմտութեան վարդապետութեանն ոչ անսայցեն. այլ ըստ իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետս ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց. եւ ի ճշմարտութենէ անտի դարձուցանիցեն զլսելիս. եւ յառասպելս կործանեսցին: Այլ դու զուարթ կաց յամենայնի, ճգնեաց, զգործս աւետարանչի գործեա, զպաշտօնդ քո կատարեալ կալ: Զի ես այսուհետեւ նուիրեալ եմ, եւ ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ: Զբարւոք պատերազմ պատերազմեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի: Այսուհետեւ կայ եւ մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուսցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարն դատաւոր. ոչ միայն ինձ, այլ եւ ամենեցուն՝ որ սիրեցին զյայտնութիւն նորա: 8:

Ալէլուիա, ալէլուիա. Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. եւ յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԻԱ. 15:

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ իբրեւ ճաշեցին, ասէ ցՍիմովն Պետրոս Յիսուս. Սիմովն Յովնանու, սիրե՞ս զիս առաւել քան զդոսա: Ասէ ցնա. Այո՛ Տէր, եւ դու գիտես՝ զի սիրեմ զքեզ: Ասէ ցնա. Արածեա զգառինս իմ: Դարձեալ ասէ ցնա. Սիմովն



Յովնանու, սիրե՞ս զիս: Ասէ ցնա. Այո՛ Տէր, եւ դու գիտես՝ զի սիրեմ զքեզ: Ասէ ցնա. Արածեա զոչխարս իմ: Ասէ ցնա երիցս անգամ. Սիմովն Յովնանու, սիրե՞ս զիս: Տրտմեցաւ Պետրոս, զի ասացն ցնա երիցս՝ թէ Սիրե՞ս զիս. եւ ասէ ցնա. Տէր, դու զամենայն գիտես, եւ դու իսկ զամենայն ճանաչես, եւ եթէ սիրեմ զքեզ: Ասէ ցնա Յիսուս. Արածեա զոչխարս իմ: Ամէն ամէն ասեմ քեզ, զի մինչ մանուկն էիր, անձամբ անձին գօտի ածէիր եւ երթայիր յո եւ կամէիր. եւ յորժամ ծերասցիս, ձեռս ի վեր կալցիս, եւ այլք ածցեն քեզ գօտի, եւ տարցին՝ ուր ոչն կամիցիս: Զայս ասաց՝ նշանակեալ թէ որո՛վ մահու փառաւոր առնիցէ զԱստուած. եւ զայս իբրեւ ասաց, ասէ ցնա. Եկ զկնի իմ: 19:

---

## ՉՈՐՐՈՐԴ ՕՐ ԾՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ա-ագ տօն է

Սրբոց Որդւոցն որոտման՝ Յակովբայ Առաքելոյն եւ Յովհաննու Աւետարանչին:

Ժամամուտ. Այսօր ահաւոր ձայնք որոտման հնչեցին յերկնից ի յերկիր՝ կոչելով յորդէգրութիւն զձեզ որդիք Սիովնի. հաստատութիւն հաւատոյ եւ պարծանք եկեղեցւոյ. որք ցօղով արեան ձերոյ՝ մաքրեցիք զտիեզերս յանօրէն կռապաշտութեանց: Արդ հայցեցէք ի Քրիստոսէ զքաւութիւն տօնողացս անուան ձերոյ: Մաղթանօք սոցա Տէր խնայեա ի փրկեալ քո ժողովուրդս, որ միայնդ ես մարդասէր:

Սղ. ՂԵ. Աւետարանեցէք օր ըստ օրէ զփրկութիւն նորա. պատմեցէք ի հեթանոսս զփառս նորա:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնեցէք զՏէր ամենայն երկիր:

Յովհաննու առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 1:

Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուաքն, որում ականատեսն իսկ եղեաք, ընդ որ հայեցաքն, եւ ձեռք մեր շօշափեցին ի վերայ բանին կենաց. եւ կեանքն յայտնեցան, եւ տեսաք եւ

վկայեմք, եւ պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն, որ էր առ Հօր եւ երեւեցաւ մեզ: Զոր տեսաքն եւ լուաք, պատմեմք եւ ձեզ, զի եւ դուք հաղորդութիւն ունիցիք ընդ մեզ, եւ մեր հաղորդութիւնն իցէ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ իւրում Յիսուսի Քրիստոսի: Եւ զայս գրեմք ձեզ, զի ձեր ուրախութիւնն կատարեալ իցէ: Եւ այս են աւետիքն՝ զոր լուաք առ ի նմանէ եւ պատմեմք ձեզ. զի Աստուած լոյս է, եւ խաւար ի նմա չիք եւ ոչ մի: Եթէ ասիցեմք եթէ հաղորդութիւն ունիմք ընդ նմա, եւ ի խաւարի շրջիցիմք, ստեմք եւ ոչ առնեմք զճշմարտութիւնն: Իսկ եթէ ընդ լոյս գնայցեմք, որպէս եւ նա լոյս է, հաղորդութիւն ունիմք ընդ միմեանս. եւ արիւնն Յիսուսի Որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. եւ յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԻԱ. 20:

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Դարձաւ Պետրոս եւ տեսանէ զաշակերտն՝ զոր սիրէր Յիսուս, զի երթայր զկնի, որ եւ անկաւ զանջքն նորա եւ ասէ. Տէր, ո՞վ է՝ որ մատնելոցն է զքեզ: Զնա տեսեալ Պետրոսի, ասէ ցՅիսուս. Տէր, իսկ սա զի: Ասէ ցնա Յիսուս. Եթէ կամիմ զի կացցէ դա՝ մինչեւ ես գամ, քեզ զի՞ փոյթ է, դու եկ զկնի իմ: Եւ ել բանս այս յեղբարս, եւ համարեցան թէ աշակերտն այն ոչ մեռանիցի. եւ ոչ ասաց նմա Յիսուս եթէ ոչ մեռանիցի. այլ՝ Թէ կամիմ ես թէ կացցէ դա՝ մինչեւ ես գամ: Ասյս աշակերտ է՝ որ վկայէ վասն այսոցիկ, որ եւ գրեացն իսկ զայսոսիկ. եւ գիտեմք եթէ ճշմարիտ է վկայութիւն նորա: Կայց է եւ այլ ինչ բազում զոր արար Յիսուս, զոր եթէ գրեալ էր մի ըստ միոջէ, կարծեմ թէ եւ ոչ աշխարհս բաւական էր տանել զգիրսն՝ որ թէ գրեալ էին: 25:

---



## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ ԾՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Յառաջաբան. Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մարիամ Աստուածածին, Կարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ եւ սուրբ Հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ. որ զամենայն գոյութեանց ստեղծիչն յղացեալ ծնար անճառապէս. մարմնացելոյն առ ի քէն բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր:

Սկ. Ղբ. Տէր թագաւորեաց, վայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ:

Հաստատեաց զաշխարհ զի մի սասանեսցի. պատրաստ է աթոռ քո. եւ ի սկզբանէ յաւիտեանս դու ես:

Պողոսի առաքելոյն Հռոմայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Ա. 1:

Բազում մասամբք եւ բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք: Ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ Որդւովն՝ զոր եդ ժառանգ ամենայնի, որով եւ գյաւիտեանսն արար: Որ է լոյս փառաց եւ նկարագիր էութեան նորա. որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ. սրբութիւն մեղաց մերոց արարեալ՝ նստաւ ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս: Ընդչափ առաւել եղեալ քան զհրեշտակս, որչափ լաւ եւս քան զնոսա անուն ժառանգեաց: Վասնզի ո՞ երբեք ասաց ի հրեշտակաց. Որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ. եւ դարձեալ Թէ Ես եղէց նմա ի հայր, եւ նա եղիցի ինձ յորդի: Եւ յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ. Երկիր պագցեն նմա ամենայն հրեշտակք Աստուծոյ: Եւ առ հրեշտակն ասէ. Ո արար զհրեշտակս իւր հոգիս, եւ զպաշտօնեայս իւր ի բոց հրոյ: Իսկ ցՈրդին ասէ. Աթոռ քո Աստուած յաւիտեանս յաւիտենից, գաւազան ուղղութեան, գաւազան արքայութեան քո: Սիրեցեր զարդարութիւն եւատեցեր զանօրէնութիւն. վասն այսորիկ օծ զքեզ Աստուած, Աստուած քո իւղով ուրախութեան առաւել քան զընկերս քո: Եւ դու Տէր ի սկզբանէ զերկիր հաստատեցեր, եւ գործք ձեռաց քոց երկինք են. նոքա կորնչեն, եւ դու կաս եւ ամենք. ամենեքեան իբրեւ զձորձս մա-

շեսցին, եւ իբրեւ զվերարկուս. գալարեսցես զնոսա իբրեւ զհանդերձ, եւ գալարեսցին: 12:

Ալէլուիա, ալէլուիա. Փրկութիւն առաքեաց Տէր ժողովրդեան իւրում. պատուիրեաց յաւիտենից զուխտ իւր. սուրբ եւ ահեղ է անուն նորա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Բ. 8:

Վասն ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ հովիւք էին ի տեղւոջն յայնմիկ բացօթեայք, որ պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց: Եւ հրեշտակ Տեառն երեւեցաւ նոցա, եւ փառք Տեառն ծագեցին առ նոսա. եւ երկեան երկիւղ մեծ: Եւ ասէ ցնոսա հրեշտակն. Մի՛ երկնչիք՝ զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն: Զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ Տէր ի քաղաքի Դաւթի: Եւ այս նշանակ ձեզ. գտանիցէք մանուկ պատեալ ի խանձարուրս, եւ եդեալ ի մսուր: Եւ յանկարծակի եղեւ ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որ օրհնէին զԱստուած եւ ասէին. Փառք ի բարձունս Աստուծոյ. եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն: 14:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՕՐ ԾՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ժամամուտ. Աստուածածին ամէնօրհնեալ, զԲանն անսկիզբն յղացար, եւ զԱստուածն անբովանդակելին ծնար, զանպարագրելին ի գիրկս քո բարձեր. նմա անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց:

Սղ. ՃԹ. Ի վայելչութիւն սրբոց քոց. յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ:

Ասաց Տէր ցՏէր իմ. նիստ ընդ աջմէ իմմէ, մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց:



Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Դ. 1:

Զայս ասեմ, ցորքան ժամանակս ժառանգն տղայ է, չէ ինչ աւելի քան զծառայն, թէպէտ եւ տէր իցէ ամենեցուն. այլ ընդ հազարապետօք է եւ ընդ գաւառապետօք մինչեւ ի ժամանակակէտ հօրն: Նոյնպէս եւ մեք մինչ տղայքն էաք՝ ընդ տարերբք աշխարհիս ի ծառայութեան կայաք: Այլ իբրեւ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր՝ որ եղեւ ի կնոջէ, եւ եմուտ ընդ օրինօք. զի զնոսա որ ընդ օրինօքն իցեն, գնեսցէ. զի մեք զորդեգրութիւն ընկալցուք: Եւ զի էք դուք որդիք, առաքեաց Աստուած զՀոգի Որդւոյն իւրոյ ի սիրտս մեր, որ աղաղակէ՝ Աբբա, հայր: Այսուհետեւ չես ծառայ, այլ որդի. եթէ որդի, եւ ժառանգ Աստուծոյ: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Այսօր ծնաւ որ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս Որդի, որ է օծեալ Տէր՝ ի քաղաքի Դաւթի: Ի վայելչութիւն սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Բ. 15:

Վասն ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ եղեւ իբրեւ վերացան ի նոցանէ հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս հովիւքն. Եկայք երթիցուք մինչեւ ցԲեթղեհէմ, եւ տեսցուք զի՞նչ է բանս այս որ եղեւ, զոր Տէր եցոյց մեզ: Եւ եկին փութանակի, եւ գտին զՄարիամ եւ զՅովսէփ եւ զմանուկն եդեալ ի մսուր: Եւ ծանեան վասն բանին՝ որ ասացաւ նոցա զմանկանէն: Եւ ամենեքեան որ լսէին, զարմանային վասն բանիցն՝ զոր խօսեցան ընդ նոսա հովիւքն: Եւ Մարիամ զամենայն զբանս զայսոսիկ պահէր, եւ խելամուտ լինէր ի սրտի իւրում: Եւ դարձան հովիւքն, փառաւոր առնէին եւ օրհնէին զԱստուած վասն ամենայնի զոր լուան եւ տեսին. որպէս պատմեցաւ նոցա:

---

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՕՐ ԾՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ժամամուտ. Աստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց, քանզի ուր քերովբէքն բազմաչեայք եւ աթոռք հրանիւթք եւ վեցթեւեան սերովբէքն նայել ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս յանապականումն ի յարգանդի քում որպէս աղախին զՏէր, եւ ծնար որպէս մարդ զԱստուածն բոլորից՝ զմարմնացեալն առ ի քէն զանճառ զԲանն, ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Սղ. Ղէ. Եցոյց Տէր զփրկութիւն իւր. առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 1:

Պօղոս ծառայ Յիսուսի Քրիստոսի, կոչեցեալ առաքեալ, որոշեալ յաւետարանն Աստուծոյ. որ յառաջ խոստացաւ ի ձեռն մարգարէից իւրոց գրովք սրբովք, վասն Որդւոյ իւրոյ եղելոյ ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ, սահմանելոյ Որդւոյն Աստուծոյ զօրութեամբ ըստ հոգւոյն սրբութեան, ի յարութենէ մեռելոց Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ. որով ընկալաք շնորհս եւ առաքելութիւն՝ ի հնազանդութիւն հաւատոց յամենայն հեթանոսս վասն անուան նորա: Յորս եւ դուք էք կոչեցեալ Յիսուսի Քրիստոսի: Ամենեցուն որոց էք ի Հռովմ, սիրելեաց Աստուծոյ՝ կոչեցելոց սրբոց, շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ, եւ ոչ ստեաց նմա. ի պտղոյ որովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ա. 1:

Ի Հօրէն լուսոյ.

Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն: Նա էր ի սկզբանէ առ Աստուած:



Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ՝ որ ինչ եղեւն: Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան. եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւոր էր, եւ խաւար նմա ոչ եղեւ հասու: Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս: Սա եկն ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վասն լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն նովաւ: Ոչ էր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն: Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ: Յաշխարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ, եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ: Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան: Իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նորա: Ոյք ոչ յարենէ եւ ոչ ի կամաց մարմնոյ եւ ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան: Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ. եւ տեսաք զփառս նորա՝ զփառս իբրեւ զմիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ: Յովհաննէս վկայէ վասն նորա, աղաղակեաց եւ ասէ. Սա է զորմէ ասէի, որ զկնի իմ գալոցն էր, առաջի իմ եղեւ, զի նախ քան զիս էր: Զի ի լրութենէ անտի նորա՝ մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնորհաց: Զի օրէնքն ի ձեռն Մովսիսի տուան. շնորհքն եւ ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն: 17:

---

## ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐ ԾՆՆԴԵԱՆ

## ԵՒ ՏՕՆ

## ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ժամամուտ. Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մարիամ Աստուածածին, Բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ եւ սուրբ Հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ. որ զամենայն գոյութեանց ստեղծիչն յղացեալ ծնար անճառապէս. մարմնացելոյն առ ի քէն բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր:

Սղ. ճԺԲ. Եղիցի անուն Տեառն օրհնեալ. յայսմ հետէ մինչեւ յաւիտեան:

Օրհնեցէք մանկունք զՏէր. եւ օրհնեցէք զանուն Տեառն:



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
758-81

Պօղոսի առաքելոյն ի փիլիպպեցւոց թղթոյն է ընթերցուածս.

ԳԼ. Բ. 5։

Ոչ այն խորհեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ, որ եւ ի Քրիստոս Յիսուս. որ ի կերպարանս Աստուծոյ է, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ. այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ, եւ կերպարանօք գտեալ իբրեւ զմարդ։ Խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մինչեւ ցաւի եւ մինչեւ խաչի։ Վասն որոյ եւ Աստուած զնա առաւել բարձրացոյց, եւ շնորհեաց նմա անուն՝ որ ի վեր է քան զամենայն անուն։ Oվ յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց։ Եւ ամենայն լեզու խոստովան լինի, թէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր։ 11։

Ալէլուիա, ալէլուիա. Եղեցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան. զի յառաջ քան զարեւ է անուն նորա։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

ԳԼ. Բ. 21։

Վասն անօրինութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ իբրեւ լցան աւուրք ութ թլփատել զնա, եւ կոչեցաւ անուն նորա Յիսուս, որ կոչեցեալն էր ի հրեշտակէն, մինչ չեւ յղացեալ էր զնա յորովայնի։ 21։

Յետ պատճէ պանօղէնո-ռեան Քրիստոսի ելիէ երկո- աւո-րդ պատճէյ պրէոյ պատահեացին, ո-րոյն կապալբա զայնոսիկ. եւ էլիէ ի հետյն օր, զերկա-ան ի հետկին, ե- գյա-ելեալ վերջին պատճա պրէոյն անգելոյ ասին։ Յառ-աջնո-մ աւո-ր՝ Ընբահամո-ե- Լսողենայ, ե- Ընապձամն էձէկուցն պոլմայէ ե- Դաւիճանոսկ։ Գինա է կարգին։ Յերկրորդ աւո-ր՝ Աբրա-ածապրոյ վկային։ Գինա է կարգին։ Ե- է հանդիսել կիրակէէ, Զորե+զաբելո-ե- Ո-րքանո- ինոյն աւո-րս, ընդերցիր է վերջին յա-ելո-ածոյ անգոլ պաբ-ոյն։

---



## Ի ՄՐԱԳԱԼՈՒՑԻ ՅԱՑՏՆՈՒԹԵԱՆ

### ՏԵՐՈՒՆ ՄԵՐՈՑ

### ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Յաճախապահ. Oվ խաղաղութիւն շնորհեա եկեղեցւոյդ քումմ սրբոյ, զխաղաղութիւն եւ զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմէ. եւ հաստատեա ի մի հաւատ զկաթողիկէ եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տէր եւ Աստուած. կեցո զմեզ։

Ալ. Խէ. Աստուած հիմունս արկ նմա յաւիտեան։

Սկիզբ է Տէր եւ օրհնեալ է յոյժ. ի քաղաք Աստուծոյ մերոյ, ի լեառն սուրբ նորա։

Պետրոսի առաքելոյն ի կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. ԳԼ. Բ. 1։

Ի բաց թօթափել այսուհետեւ զամենայն չարութիւն եւ զամենայն նենգութիւն եւ զկեղծաւորութիւնս եւ զնախանձ եւ զամենայն չարախօսութիւն։ Իբրեւ զարդի ծնեալ մանկունս խօսունս, եւ անխարդախ կաթինն փափագիցէք. զի նովաւ աճիցէք ի փրկութիւն։ Եթէ ճաշակիցէք, զի քաղցր է Տէր։ Ընդ որ մատուցեալ ի վէմն կենդանի, որ թէպէտ ի մարդկանէ անարգեալ, այլ առ ի Աստուծոյ ընտրեալ եւ պատուական է։ Եւ դուք իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր. յանարատ քահանայութիւն մատուցանել զհոգեւորն պատարագ հաճոյս Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի։ Վասնզի կայ իսկ ի գրի, թէ Ահաւասիկ դնեմ ի Սիոնի վէմ ընտիր, գլուխ անկեան պատուական, եւ որ ի նա հաւատացէ՝ մի՛ ամաչեսցէ։ Ձեզ այսուհետեւ հաւատացելոց է վէմ պատուական. իսկ անհաւատիցն՝ վէմ զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան. եւ վէմ գայթակղման եւ վէմ գայթագղութեան, որ գայթագղին ապստամբեալք ի բանէն՝ յոր եւ եդանն։ Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական. որպէս զի զձեր առաքինութիւնսն նուիրիցէք այնմ, որ զձեզ ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն։ Որք երբեմն չժողովուրդ, բայց

արդ ժողովուրդ Աստուծոյ, որք չողորմեալք՝ այժմ ողորմութիւն գտէք։ 10։

Ալէլուիա, ալէլուիա. Հիմունք նորա ի լեառն սուրբ նորա. սիրէ Տէր զդրունս Սիովնի առաւել քան զամենայն յարկսն Յակոբայ։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԶ. 13։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ելեալ Յիսուս ի կողմանս Փիլիպպեայ Կեսարեայն, հարցանէր ցաշակերտսն եւ ասէր. Զո՞ ոք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ Որդի մարդոյ։ Եւ նոքա ասեն. Ոմն զՅովհաննէս Մկրտիչ, եւ այլք զԵղիա, եւ կէսք զԵրեմիա, կամ զմի ոք ի մարգարէիցն։ Ասէ ցնոսա. Իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ։ Պատասխանի ետ նմա Սիմովն Պետրոս եւ ասէ. Դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանւոյ։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Երանի՛ է քեզ Սի՛մովն որդի Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է։ Եւ ես քեզ ասեմ, զի դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, եւ դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն։ Եւ տաց քեզ զփականս արքայութեան երկնից. եւ զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս։ 19։



# Ի ՏՕՆԻ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
## ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ
# ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

---

## ԱՌԱՋԻՆ ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Ժամամուտ. Աստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց, քանզի ուր քերովբէքն բազմաչեայք եւ աթոռք հրանիւթք եւ վեցթեւեան սերովբէքն նայել ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս յանապականումն ի յարգանդի քում որպէս աղախին զՏէր, եւ ծնար որպէս մարդ զԱստուածն բոլորից՝ զմարմնացեալն առ ի քէն զանճառ. զԲանն, ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց։

Սղ. ՀԱ. Երկիր պագցեն նմա ամենայն թագաւորք երկրի. եւ ամենայն ազգք ծառայեսցեն նմա։

Թագաւորք Թարսսի եւ կղզեաց պատարագս մատուսցեն նմա. Թագաւորք Արաբայ եւ Սաբայ պատարագս բերցեն նմա։

Պօղոսի Առաքելոյն ի Տիտոսի Թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Բ. 11։

Քանզի երեւեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան, որ խրատէն զմեզ զի ուրասցուք զամբարշտութիւն եւ զաշխարհական ցանկութիւնս։ Զգաստութեամբ եւ արդարութեամբ եւ աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհի. եւ ակն կալցուք երանելի յուսոյն եւ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ եւ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ ետ զանձն վասն մեր, զի փրկեսցէ զմեզ յա-

մենայն անօրէնութենէ, եւ սրբեսցէ իւր ժողովուրդ սեպ-
հական՝ նախանձաւոր գործոց բարութեան: Զայդ խօսեաց,
եւ մխիթարեա եւ յանդիմանեա ամենայն սաստիւք. զի մի
ոք իցէ, որ զքեզ արհամարհիցէ: 15:

Ալէլուիա, ալէլուիա. Երկիր պագցեն նմա ամենայն
թագաւորք երկրի. եւ ամենայն ազգք ծառայեսցեն նմա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Բ. 1:

Վասն յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհէմ Հրէաստանի
յաւուրս Հերովդի արքայի, ահա մոգք յարեւելից եկին
յԵրուսաղէմ, եւ ասեն. Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից.
զի տեսաք զաստղն նորա յարեւելս, եւ եկաք երկիր պա-
գանել նմա: Եւ իբրեւ լուաւ արքայ Հերովդէս՝ խռովեցաւ,
եւ ամենայն Երուսաղէմ ընդ նմա: Եւ ժողովեալ զամե-
նայն զքահանայապետսն եւ զդպիրս ժողովրդեանն, հար-
ցանէր ի նոցանէ՝ թէ ո՛ւր ծնանիցի Քրիստոսն: Եւ նոքա
ասեն ցնա. Ի Բեթղեհէմ Հրէաստանի. զի այսպէս գրեալ
է ի ձեռն մարգարէին. Եւ դու Բեթղեհէմ, երկիր Յու-
դայ, ոչինչ կրտսեր ես յիշխանս Յուդայ. ի քէն ելցէ ինձ
իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ: Յայն-
ժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, եւ ստուգեաց ի
նոցանէ զժամանակ աստեղն երեւելոյ: Եւ արձակեալ զնոսա
ի Բեթղեհէմ, ասէ. Գնացէք ստուգեցէք վասն մանկանն.
եւ յորժամ գտանիցէք՝ ազդ արասջիք ինձ, զի եւ ես եկեալ
երկիր պագից նմա: Եւ նոքա իբրեւ լուան ի թագաւորէն,
գնացին. եւ ահա աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնոր-
դեաց նոցա, մինչեւ եկեալ եկաց ի վերայ՝ ուր էր մանուկն:
Իբրեւ տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութիւն մեծ:
Եւ իբրեւ մտին ի տուն, տեսին զմանուկն հանդերձ Մա-
րեմաւ մարբն իւրով, եւ անկեալ երկիր պագանէին նմա.
եւ բացեալ զգանձս իւրեանց, մատուցին նմա պատարագս՝
ոսկի եւ կնդրուկ եւ զմուռս: Եւ հրաման առեալ ի տես-
լեան չդառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանապարհ
գնացին յաշխարհն իւրեանց: 12:

---



## ԵՐԿՐՈՐԴ ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Ժամամուտ. Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մարիամ
Աստուածածին, Բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ,
եւ սուրբ Հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ. որ զա-
մենայն գոյութեանց ստեղծիչն յղացեալ ծնար անճառապէս.
մարմնացելոյն առ ի քէն բարեխօսեա կեցուցանել զան-
ձինս մեր:

Սղ. ԻԸ. Ձայն Տեառն ի վերայ ջուրց, եւ Ա-
ստուած փառաց որոտաց. եւ Տէր ինքն ի վերայ ջուրց
բազմաց:

Մատուցէք Տեառն որդիք Աստուծոյ. մատուցէք
Տեառն զորդիս խոյոց:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԺԹ. 1:

Եւ եղեւ մինչ դեռ Ապողոսն ի Կորնթոս էր, Պօղոսի
շրջեալ զվերին կողմամբքն, եւ իջանել յԵփեսոս եւ գտա-
նել զոմանս զաշակերտս, ասէ ցնոսա. Եթէ Հոգի սուրբ
ընկալարո՞ւք ի հաւատալն: Նոքա ասեն ցնա. Այլ եւ ոչ
թէ Հոգի սուրբ գուցէ՝ լուեալ է մեր: Եւ ասէ. Իսկ յի՞նչ
մկրտեցարուք: Նոքա ասեն. Ի Յովհաննու մկրտութիւն:
Եւ ասէ Պօղոս. Յովհաննէս մկրտեաց մկրտութիւն ապաշ-
խարութեան ամենայն ժողովրդեանն. եւ ասէր, զի որ գա-
լոցն է յետ նորա՝ ի նա հաւատասցեն, այս ինքն է՝ ի Յիսուս
Քրիստոս: Եւ իբրեւ լուան, մկրտեցան յանուն Տեառն
Յիսուսի: Եւ ի դնել ի վերայ նոցա Պօղոսի զձեռն, եկն
Հոգին սուրբ ի վերայ նոցա. խօսէին լեզուս եւ մար-
գարէանային: Եւ էին՝ ամենեքեան արք իբրեւ եր-
կոտասան: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Կարապետն Յովհաննէս զար-
հուրեալ, յորովայնէ յորովայն երկիր պագանէր. սպասաւոր
եղեւ Բանին Աստուծոյ. եւ լուեալ զահաւոր զձայնն՝ աղա-
ղակէր ասելով. Ահա Գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս
աշխարհի:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Գ. 1:

Վասն մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս Մկրտիչ քարոզել յանապատին Հրէաստանի, եւ ասել. Ապաշխարեցէք՝ զի մերձեալ է արքայութիւն երկնից: Զի սա է՝ վասն որոյ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի, որ ասէ. Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհ Տեառն եւ ուղիղ արարէք զշաւիղս նորա: Եւ ինքն Յովհաննէս ունէր հանդերձ ի ստեւոյ ուղտու, եւ գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. եւ կերակուր նորա էր մարախ եւ մեղր վայրենի: Յայնժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղեմացիք եւ ամենայն Հրէաստան եւ ամենայն կողմն Յորդանանու. եւ մկրտէին ի նմանէ ի Յորդանան գետ, եւ խոստովան լինէին զմեղս իւրեանց: Եւ տեսեալ զբազումս ի սադուկեցւոցն եւ ի փարիսեցւոց եկեալս ի մկրտութիւն նորա, ասէ ցնոսա. Ծնունդք իժից, ո՛ ցոյց ձեզ փախչել ի բարկութենէն որ գալոցն է: Արարէք այսուհետեւ պտուղ արժանի ապաշխարութեան. եւ մի՛ համարիցիք ասել յանձինս՝ թէ Ունիմք մեք հայր զԱբրահամ: Ասեմ ձեզ, զի կարող է Աստուած ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու: Զի ահաւասիկ տապար առ արմին ծառոց դնի. ամենայն ծառ որ ոչ առնիցէ պտուղ բարի, հատանի եւ ի հուր արկանի: Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն. բայց որ զկնի իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս, եւ ես չեմ բաւական բառնալ զկօշիկս նորա. Նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին սուրբ եւ ի հուր: Որոյ հեծանոցն ի ձեռին իւրում. եւ սրբեսցէ զկալ իւր, եւ ժողովեսցէ զցորեանն ի շտեմարանս իւր, եւ զյարդն այրեսցէ անշէջ հրով: Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլեէ ի Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտել ի նմանէ: Եւ Յովհաննէս արգելու զնա եւ ասէ. Ինձ պիտոյ է ի քէն մկրտել, եւ դու առ ի՞ս գաս: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն. եւ ապա թոյլ ետ նմա: Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ի ջրոյ անտի. եւ ահա բացան նմա



երկինք. եւ ետես զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի, եւ գայր ի վերայ նորա: Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. Դա է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ: 17:

---

## ԵՐՐՈՐԴ ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Ժամամուտ. Աստուածածին ամէնօրհնեալ, զԲանն անսկիզբն յղացար, եւ զԱստուածն անբովանդակելին ծնար, զանպարագրելին ի գիրկս քո բարձեր. նմա անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց:

Սղ. ՂԸ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ժ. 1:

Ոչ կամիմ եթէ տգէտք իցէք, եղբարք, զի հարքն մեր ամենեքին ընդ ամպովն էին, եւ ամենեքին ընդ ծովն անցին. եւ ամենեքին ի Մովսէս մկրտեցան յամպն եւ ի ծովն. եւ ամենեքին զնոյն հոգեւոր կերակուրն կերան. եւ ամենեքին զնոյն հոգեւոր ըմպելին արբին. զի ըմպէին ի հոգեւոր վիմէն՝ որ երթայր զհետ նոցա, եւ վէմն էր ինքն Քրիստոս: 4:

Ալէլուիա, ալէլուիա. Դու մանուկ, մարգարէ Բարձրելոյն կոչեսջիր. գնասցես առաջի Տեառն պատրաստել զճանապարհս նորա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Ա. 1:

Վասն մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Սկիզբն Աւետարանի Յիսուսի Քրիստոսի Որդւոյ Աստուծոյ: Որպէս եւ գրեալ է ի մարգարէս. Ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, որ հանդերձեսցէ զճանապարհս քո առաջի քո: Ձայն բարբառոյ յանապատի.

պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, եւ ուղիղս արարէք զշաւիղս նորա: Եւ եղեւ՝ զի Յովհաննէս մկրտէր յանապատի, եւ քարոզէր մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց: Եւ երթայր առ նա ամենայն աշխարհն Հրէաստանի, եւ Երուսաղէմացիք ամենեքեան. եւ մկրտէին ի նմանէ ի Յորդանան գետ՝ խոստովանեալ զմեղս իւրեանց: Եւ էր Յովհաննէս զգեցեալ ստեւ ուղտու եւ գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, եւ կերակուր նորա մարախ եւ մեղը վայրենի: Քարոզէր եւ ասէր. Գայ զօրագոյնն քան զիս զկնի իմ, որում չեմ բաւական խոնարհել լուծանել զխրացս կօշկաց նորա: Ես մկրտեցի զձեզ ջրով, եւ նա մկրտեսցէ զձեզ Հոգւով սրբով: Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ եկն Յիսուս ի Նազարեթէ Գալիլեացւոց, եւ մկրտեցաւ ի Յովհաննէ ի Յորդանան: Եւ նոյնժամայն ընդ վերանալն ի ջրոցն, ետես ցելեալ զերկինս, եւ զՀոգին Աստուծոյ իբրեւ զաղաւնի՝ զի իջանէր ի վերայ նորա: Զայն եղեւ յերկնից եւ ասէ. Դու ես որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ: Եւ նոյնժամայն Հոգին հանէ զնա յանապատ: Եւ էր նա անդ զաւուրս քառասուն՝ փորձեալ ի սատանայէ, եւ էր ընդ գազանս, եւ հրեշտակք պաշտէին զնա: 13:

---

## ՉՈՐՐՈՐԴ ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Ժամամուտ. Աստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց. քանզի ուր քերովբէքն բազմաչեայք եւ աթոռք հրանիւթք եւ վեցթեւեան սերովբէքն նայել ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս յանապականումն ի յարգանդի քում որպէս աղախին զՏէր, եւ ծնար որպէս մարդ զԱստուածն բոլորից՝ զմարմնացեալն առ ի քէն զանճառ զՐանն, ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Սղ. Ղ. Լոյս ծագեաց արդարոց. ուղղոց սրտիւք եղեւ ուրախութիւն:

Տէր թագաւորեաց, ցնծասցէ երկիր. ուրախ եղիցին կղզիք բազումք:



Յովհաննու առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 4:

Զի ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է՝ յաղթէ աշխարհի. եւ այս է յաղթութիւնն որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր: Եւ ո՞վ իցէ՝ որ յաղթիցէ աշխարհի, եթէ ոչ՝ որ հաւատայցէ եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ: Սա է՝ որ եկն ջրով եւ Հոգւով եւ արեամբ, Յիսուս Քրիստոս. ոչ ջրով միայն, այլ եւ արեամբ եւ ջրով. եւ Հոգին է՝ որ վկայէ, զի Հոգին իսկ է ճշմարտութիւն: Զի երեք են որ վկայեն յերկինս. Հայր, Բանն եւ Հոգին սուրբ. եւ երեքինս մի են: Եւ երեք են որ վկայեն յերկրի. հոգի, ջուր եւ արիւն. եւ երեքինն մի են: Եթէ զմարդկան ինչ վկայութիւն ունիցիմք, ապաքէն Աստուծոյ վկայութիւնն մեծ իցէ: Այս է վկայութիւնն Աստուծոյ, զի վկայեաց ի վերայ Որդւոյն իւրոյ: Որ հաւատայ յՈրդին Աստուծոյ, ունի յանձին զվկայութիւնս զայս. որ ոչ հաւատայ Որդւոյ Աստուծոյ սուտ առնէ զնա. քանզի ոչ հաւատայ վկայութեանն զոր վկայեաց Աստուած ի վերայ Որդւոյն իւրոյ: 10:

Ալէլուիա, ալէլուիա. Ծով ետես եւ փախեաւ. եւ Յորդանան անդրէն դարձաւ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ա. 29:

Վասն մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս՝ զի գայր առ նա, եւ ասէ. Ահաւասիկ Գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի: Սա է վասն որոյ եսն ասէի. Զկնի իմ գայ այր՝ որ առաջի իմ եղեւ, զի յառաջ իսկ էր քան զիս: Եւ ես ոչ գիտէի զնա. այլ զի յայտնի լինիցի Իսրայելի, վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել: Վկայեաց Յովհաննէս եւ ասէ, թէ Տեսանէի զՀոգին՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի յերկնից, եւ հանգչէր ի վերայ նորա: Եւ ես ոչ գիտէի զնա. այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով՝ նա ասաց ցիս. Յոյր վերայ տեսանիցես զՀոգին, զի իջանիցէ եւ հանգչիցի ի վերայ նորա, նա է՝ որ մկրտէ Հոգւովն սրբով: Եւ ես տեսի եւ վկայեցի՝ եթէ սա է Որդին Աստուծոյ: 34:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Ժամամուտ. Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մարիամ Աստուածածին, Բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ եւ սուրբ Հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ. որ զամենայն գոյութեանց ստեղծիչն յղացեալ ծնար անճառապէս. մարմնացելոյն առ ի քէն բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր:

Սղ. Ղէ. Եցոյց Տէր զփրկութիւն իւր. առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. ԺԲ. 18:

Զի ոչ էք մատուցեալ առ լեառն շօշափելի՝ որ հրովն վառեալ էր եւ միգով եւ մառախղով եւ խաւարաւ եւ մթով. ուր փողն հնչէր եւ բարբառ պատգամացն. ուստի՝ որք լուանն, հրաժարեցին, զի մի՛ կրկնեսցի առ նոսա բանն: Քանզի ոչ հանդարտէին հրամանին. թէպէտ եւ գազան մերձենայր ի լեառն՝ քարկոծ լինէր: Եւ այնպէս ահագին էր տեսիլն, զի եւ Մովսէս ասէր՝ թէ Զահի հարեալ եմ եւ դողամ: Այլ մատուցեալ էք ի Սիովն լեառն եւ ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ՝ յԵրուսաղէմ յերկինս, եւ ի բիւրաւոր բանակս հրեշտակաց, եւ յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս, եւ առ դատաւորն ամենեցուն Աստուած, եւ յոգիս արդարոց կատարելոց. եւ ի նորոց կտակարանաց միջնորդն Յիսուս, եւ ի հեղումն արեան նորա՝ որ առաւել խօսի քան զՀաբելին: Զգոյշ լերուք, գուցէ հրաժարիցէք յայնմանէ՝ որ խօսեցաւն. զի եթէ նոքա ոչ կարացին զերծանել հրաժարեալք յայնմանէ՝ որ յերկրին հրաման տայր, որչափ եւս առաւել մեք, եթէ յերկնաւորէն թիկունս դարձուցանիցեմք: Որոյ ձայնն զերկիր շարժեաց յայնժամ, եւ այժմ խոստացեալ է եւ ասէ. Միւսանգամ շարժեցից ոչ միայն զերկիր, այլ եւ զերկինս: Այլ միւսանգամն յայտ առնէ զշարժելոցն իբրեւ զեղելոց փոփոխումն, զի հաստատուն կացցեն անշարժքն: 27:



Ալէլուիա, ալէլուիա. Ուրախ լիցին երկինք, եւ ցնծասցէ երկիր. զուարճասցի ծով լրիւ իւրով, տիեզերք եւ ամենայն բնակեալքն ի նմա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ա. 18:

Վասն յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

ԶԱստուած ոչ ոք ետես երբեք, բայց միածինն Որդի որ է ի ծոց Հօր՝ նա պատմեաց: Եւ այս է վկայութիւնն Յովհաննու, յորժամ առաքեցին առ նա Հրեայքն յԵրուսաղեմէ քահանայս եւ ղեւտացիս, զի հարցցեն ցնա՝ թէ Դու ո՛ ես: Եւ խոստովան եղեւ, եւ ոչ ուրացաւ. խոստովան եղեւ, եթէ Ես ոչ եմ Քրիստոսն: Եւ հարցին ցնա. իսկ Ո՞վ ես դու, Եղիա՞ ես: Եւ ասէ, Ոչ եմ: Իսկ մարգարէ՞ն ես դու. պատասխանի ետ՝ թէ Ոչ: Իսկ ասա մեզ՝ դու ո՞վ ես, զի պատասխանի տարցուք՝ որոց առաքեցինն զմեզ. զի՞ ասես վասն քո: Ասէ. Ես ձայն բարբառոյ յանապատի. ուղիղ արարէք զճանապարհս Տեառն, որպէս ասաց Եսայի մարգարէ: Եւ որք առաքեցանն՝ ի փարիսեցւոց անտի էին: Հարցին ցնա եւ ասեն. Իսկ զի՛ մկրտես՝ եթէ դու չես Քրիստոսն, եւ ոչ Եղիա, եւ ոչ մարգարէն: Պատասխանի ետ նոցա Յովհաննէս եւ ասէ. Ես մկրտեմ զձեզ ջրով. ի միջի ձերում կայ, զոր դուքն ոչ գիտէք, որ զկնի իմ գալոցն է, որում չեմն արժանի՝ եթէ լուծից զխրացս կօշկաց նորա: Այս ի Բեթաբրայ եղեւ՝ յայնկոյս Յորդանանու, ուր էրն Յովհաննէս եւ մկրտէր: 28:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Ժամամուտ. Աստուածածին ամէնօրհնեալ, զԲանն անսկիզբն յղացար, եւ զԱստուածն անբովանդակելին ծնար, զանպարագրելին ի գիրկս քո բարձեր. նմա անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց:

Սղ. ՂԸ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ժ. 1:

Ոչ կամիմ եթէ տգէտք իցէք, ե՛ղբարք, զի հարքն մեր ամենեքին ընդ ամպովն էին, եւ ամենեքին ընդ ծովն անցին. եւ ամենեքին ի Մովսէս մկրտեցան յամպն եւ ի ծովն. եւ ամենեքին զնոյն հոգեւոր կերակուրն կերան. եւ ամենեքին զնոյն հոգեւոր ըմպելին արբին, զի ըմպէին ի հոգեւոր վիմէն՝ որ երթայր զհետ նոցա, եւ վէմն էր ինքն Քրիստոս: 4:

Այէլուիա, ալէլուիա. Դու մանուկ, մարգարէ Բարձրելոյ նկոչեսջիր. գնասցես առաջի Տեառն պատրաստել զճանապարհս նորա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Ա. 1:

Վասն մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Սկիզբն Աւետարանի Յիսուսի Քրիստոսի Որդւոյ Աստուծոյ: Որպէս եւ գրեալ է ի մարգարէս. Ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, որ հանդերձեսցէ զճանապարհս քո առաջի քո: Ձայն բարբառոյ յանապատի. պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, եւ ուղիղս արարէք զշաւիղս նորա: Եւ եղեւ՝ զի Յովհաննէս մկրտէր յանապատի, եւ քարոզէր մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց: Եւ երթայր առ նա ամենայն աշխարհն Հրէաստանի, եւ Երուսաղէմացիք ամենեքեան. եւ մկրտէին ի նմանէ ի Յորդանան գետ՝ խոստովանեալ զմեղս իւրեանց: Եւ էր Յովհաննէս զգեցեալ ստեւ ուղտու եւ գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, եւ կերակուր նորա մարախ եւ մեղր վայրենի: Քարոզէր եւ ասէր. Գայ զօրագոյնն քան զիս զկնի իմ, որում չեմ բաւական խոնարհել լուծանել զխրացս կօշկաց նորա: Ես մկրտեցի զձեզ ջրով, եւ նա մկրտեսցէ զձեզ Հոգւով սրբով: Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ եկն Յիսուս ի Նազարեթէ Գալիլեացւոց եւ մկրտեցաւ ի Յով-



հաննէ ի Յորդանան: Եւ նոյնժամայն ընդ վերանալն ի ջրոցն, ետես ցելեալ զերկինս, եւ զՀոգին Աստուծոյ իբրեւ զաղաւնի՝ զի իջանէր ի վերայ նորա: Ձայն եղեւ յերկնից եւ ասէ. Դու ես Որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ: Եւ նոյնժամայն Հոգին հանէ զնա յանապատ: Եւ էր նա անդ զաւուրս քառասուն՝ փորձեալ ի սատանայէ, եւ էր ընդ գազանս, եւ հրեշտակք պաշտէին զնա: 13:

---

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Ժամամուտ. Աստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց. քանզի ուր քերովբէքն բազմաչեայք եւ աթոռք հրանիւթք եւ վեցթեւեան սերովբէքն նայել ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս յանապականումն ի յարգանդի քում որպէս աղախին զՏէր, եւ ծնար որպէս մարդ զԱստուածն բոլորից՝ զմարմնացեալն առ ի քէն զանճառ զԲանն, ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Սղ. ԻԸ. Ձայն Տեառն ի վերայ ջուրց, եւ Աստուած փառաց որոտաց. եւ Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց:

Մատուցէք Տեառն որդիք Աստուծոյ. մատուցէք Տեառն զորդիս խոյոց:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԺԹ. 1:

Եւ եղեւ մինչ դեռ Ապողոսն ի Կորնթոս էր, Պօղոսի շրջեալ զվերին կողմամբքն, եւ իջանել յԵփեսոս եւ գտանել զոմանս զաշակերտս, ասէ ցնոսա. Եթէ Հոգի սուրբ ընկալարո՞ւք ի հաւատալն: Նոքա ասեն ցնա. Այլ եւ ոչ թէ Հոգի սուրբ գուցէ՝ լուեալ է մեր: Եւ ասէ. Իսկ յի՞նչ մկրտեցարուք: Նոքա ասեն. Ի Յովհաննու մկկրտութիւն: Եւ ասէ Պօղոս. Յովհաննէս մկրտեաց մկրտութիւն ապաշխարութեան ամենայն ժողովրդեանն. եւ ասէր, զի որ գալոցն է յետ նորա՝ ի նա հաւատասցեն, այս ինքն է՝ ի Յիսուս Քրիստոս: Եւ իբրեւ լուան, մկրտեցան յանուն Տեառն

Յիսուսի: Եւ ի դնել ի վերայ նոցա Պօղոսի զձեռն, եկն Հոգին սուրբ ի վերայ նոցա. խօսէին լեզուս եւ մարգարէանային: Եւ էին ամենեքեան արք իբրեւ երկոտասան: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Կարապետն Յովհաննէս զարհուրեալ, յորովայնէ յորովայն երկիր պագանէր. սպասաւոր եղեւ Բանին Աստուծոյ. եւ լուեալ զահաւոր զձայնն՝ աղաղակէր ասելով. Ահա Գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Գ. 1:

Վասն մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս Մկրտիչ քարոզել յանապատին Հրէաստանի, եւ ասել. Ապաշխարեցէք՝ զի մերձեալ է արքայութիւն երկնից: Զի սա է՝ վասն որոյ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի, որ ասէ. Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհ Տեառն եւ ուղիղ արարէք զշաւիղս նորա: Եւ ինքն Յովհաննէս ունէր հանդերձ ի ստեւոյ ուղտու, եւ գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. եւ կերակուր նորա էր մարախ եւ մեղր վայրենի: Յայնժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղէմացիք եւ ամենայն Հրէաստան եւ ամենայն կողմն Յորդանանու. եւ մկրտէին ի նմանէ ի Յորդանան գետ, եւ խոստովան լինէին զմեղս իւրեանց: Եւ տեսեալ զբազումս ի սադուկեցւոցն եւ ի փարիսեցւոց եկեալս ի մկրտութիւն նորա, ասէ ցնոսա. Ծնունդք իժից, ո՞ ցոյց ձեզ փախչել ի բարկութենէն որ գալոցն է: Արարէք այսուհետեւ պտուղ արժանի ապաշխարութեան. եւ մի համարիցիք ասել յանձինս՝ թէ Ունիմք մեք հայր զԱբրահամ: Ասեմ ձեզ, զի կարող է Աստուած ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու: Զի ահաւասիկ տապար առ արմին ծառոց դնի. ամենայն ծառ որ ոչ առնիցէ պտուղ բարի, հատանի եւ ի հուր արկանի: Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն, բայց որ զկնի իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս, եւ ես չեմ բաւական բառնալ զկօշիկս նորա. նա



մկրտեսցէ զձեզ ի Հոգին սուրբ եւ ի հուր: Որոյ հեծանոցն ի ձեռին իւրում. եւ սրբեսցէ զկալ իւր, եւ ժողովեսցէ զցորեանն ի շտեմարանս իւր, եւ զյարդն այրեսցէ անշէջ հրով: Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլեէ ի Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտել ի նմանէ: Եւ Յովհաննէս արգելու զնա եւ ասէ. Ինձ պիտոյ է ի քէն մկրտել, եւ դու առ իս գաս: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն. եւ ապա թոյլ ետ նմա: Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ի ջրոյ անտի. եւ ահա բացան նմա երկինք. եւ ետես զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի, եւ գայր ի վերայ նորա: Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. Դա է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ: 17:

---

## ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Ժամամուտ. Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մարիամ Աստուածածին, Բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ եւ սուրբ Հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ. որ զամենայն գոյութեանց ստեղծիչն յղացեալ ծնար անճառապէս. մարմնացելոյն առ ի քէն բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր:

Սղ. ՀԱ: Երկիր պագցեն նմա ամենայն թագաւորք երկրի. եւ ամենայն ազգք ծառայեսցեն նմա:

Թագաւորք Թարսսի եւ կղզեաց պատարագս մատուսցեն նմա. Թագաւորք Արաբայ եւ Սաբայ պատարագս բերցեն նմա:

Պօղոսի Առաքելոյն ի Տիտոսի թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Բ. 11:

Քանզի երեւեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան, որ խրատէն զմեզ զի ուրասցուք զամբարշտութիւն եւ զաշխարհական ցանկութիւնս: Զգաստութեամբ եւ արդարութեամբ եւ աստուածպաշտութեամբ կեցցուք

յաշխարհի. եւ ակն կալցուք երանելի յուսոյն եւ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ եւ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ ետ զանձն վասն մեր, զի փրկեսցէ զմեզ յամենայն անօրէնութենէ, եւ սրբեսցէ իւր ժողովուրդ սեպհական՝ նախանձաւոր գործոց բարութեան: Զայդ խօսեաց, եւ մխիթարեա եւ յանդիմանեա ամենայն սաստիւք. զի մի ոք իցէ, որ զքեզ արհամարհիցէ: 15:

Ալէլուիա, ալէլուիա: Երկիր պագցեն նմա ամենայն թագաւորք երկրի. եւ ամենայն ազգք ծառայեսցեն նմա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Բ. 1:

Վասն յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհէմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի, ահա մոգք յարեւելից եկին Յերուսաղէմ, եւ ասեն. Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից. զի տեսաք զաստղն նորա յարեւելս, եւ եկաք երկիր պագանել նմա: Եւ իբրեւ լուաւ արքայ Հերովդէս՝ խռովեցաւ, եւ ամենայն Երուսաղէմ ընդ նմա: Եւ ժողովեալ զամենայն զքահանայապետսն եւ զդպիրս ժողովրդեանն, հարցանէր ի նոցանէ՝ թէ ո՛ւր ծնանիցի Քրիստոսն: Եւ նոքա ասեն ցնա. Ի Բեթղեհէմ Հրէաստանի. զի այսպէս գրեալ է ի ձեռն մարգարէին. Եւ դու Բեթղեհէմ, երկիր Յուդայ, ոչինչ կրտսեր ես յիշխանս Յուդայ. ի քէն ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ: Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, եւ ստուգեաց ի նոցանէ զժամանակ աստեղն երեւելոյ: Եւ արձակեալ զնոսա ի Բեթղեհէմ, ասէ. Գնացէք ստուգեցէք վասն մանկանն. եւ յորժամ գտանիցէք՝ ազդ արասջիք ինձ, զի եւ ես եկեալ երկիր պագից նմա: Եւ նոքա իբրեւ լուան ի թագաւորէն, գնացին. եւ ահա աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց նոցա, մինչեւ եկեալ եկաց ի վերայ՝ ուր էր մանուկն: Իբրեւ տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութիւն մեծ: Եւ իբրեւ մտին ի տուն, տեսին զմանուկն հանդերձ Մարեմաւ մարբն իւրով, եւ անկեալ երկիր պագանէին նմա.



եւ բացեալ զգանձս իւրեանց, մատուցին նմա պատարագս՝ ոսկի եւ կնդրուկ եւ զմուռս: Եւ հրաման առեալ ի տեսլեան չդառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց: 12:

---

## ԱՌԱՋԻՆ ԿԻՐԱԿԷ

### ԶԿՆԻ ՈՒԹՕՐԷԻՑ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. Կդ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 1:

Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի ըստ հրամանի փրկչին մերոյ Աստուծոյ եւ Քրիստոսի Յիսուսի յուսոյն մերոյ, Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ հաւատովք, շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: Որպէս աղաչեցի զքեզ կալ յԵփեսոս՝ մինչ երթային ի Մակեդոնիա. զի պատուէր տացես ոմանց չլինել օտարուսմունս, եւ չհայել յառասպելս եւ ի տոհմաթիւս անչափս. որ մանաւանդ խնդիրս յուզեն, եւ ոչ զտնտեսութիւն Աստուծոյ հաւատովք: Քանզի գլուխ պատուիրանին սէր է, ի սուրբ սրտէ եւ ի մտաց բարեաց եւ յանկեղծաւոր հաւատոց: Յորոց ոմանք վրիպեցան, խոտորեալք յունայնութիւն բանից: Կամին լինել վարդապետք օրինաց. ինքեանք ոչ իմանան զինչ խօսին, եւ ոչ վասն որոց պնդեալն են: Գիտեմք եթէ բարւոք են օրէնք՝ եթէ ոք զնոսա օրինօքն կրեսցէ: Բայց զայս գիտասցէ, զի ի վերայ

արդարոց օրէնք ոչ կան, այլ ի վերայ անօրինաց եւ անհնազանդից, ամպարշտաց եւ մեղաւորաց, անսրբոց եւ պղծոց, զհայր եւ զմայր անարգողաց, մարդասպանաց, պոռնկաց, արուագիտաց, մարդելուզաց, ստոց, ստերդմանց, եւ եթէ այլ ինչ իցէ հակառակ ողջամիտ վարդապետութեանս, որ ըստ աւետարանի փառաց երանելւոյն Աստուծոյ է, որում եղէ ես հաւատարիմ: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Բ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ի Կանա Գալիլեացւոց. եւ անդ էր մայրն Յիսուսի: Կոչեցաւ եւ Յիսուս եւ աշակերտքն նորա ի հարսանիսն: Եւ ի պակասել գինւոյն, ասէ մայրն ցՅիսուս. Գինի ոչ ունին: Եւ ասէ ցնա Յիսուս. Զի՞ կայ իմ եւ քո՝ կին դու, չեւ է հասեալ ժամանակ իմ: Ասէ մայրն նորա ցսպասաւորսն. Որ զինչ ասիցէ ձեզ՝ արասջիք: Անդ էին թակոյկք կճեայք վեց՝ ըստ սրբութեան Հրէից. տանէին մի մի ի նոցանէ մարս երկուս կամ երիս: Ասէ ցնոսա Յիսուս. Լցէք զթակոյկսդ ջրով. եւ լցին զնոսա մինչեւ ի վեր: Եւ ասէ ցնոսա. Արդ՝ առէք եւ բերէք տաճարապետիդ. եւ նոքա բերին: Եւ իբրեւ ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի եղեալ, եւ ոչ գիտէր ուստի իցէ, բայց սպասաւորքն գիտէին՝ որք արկին զջուրն: Խօսի ընդ փեսային տաճարապետն եւ ասէ. Ամենայն մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ, եւ յորժամ արբենան, յայնժամ զյոռին. դու պահեցեր զանոյշ գինիդ մինչեւ ցայժմ: Զայս արար սկիզբն նշանաց Յիսուս ի Կանա Գալիլեացւոց, եւ յայտնեաց զփառս իւր. եւ հաւատացին ի նա աշակերտքն նորա: 11:

---

## ԱՌԱՋԻՆ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:



Սղ. 2Ե. Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 8:

Կամիմ զի արք կայցեն յաղօթս յամենայն տեղիս. բառնայցեն զսուրբ ձեռս ի վեր առանց բարկութեան եւ երկմտութեան: Նոյնպէս եւ կանայք ի զարդ խոնարհութեան. ակնածութեամբ եւ զգաստութեամբ զարդարել զանձինս. մի ի հիւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով կամ ի հանդերձս պաճուճեալս. այլ որպէս վայել է կանանց՝ զաստուածպաշտութիւն յանձն առելոց գործովք բարութեան: Կին մարդ ցածութեամբ ուսցի, ամենայն հնազանդութեամբ: Այլ ուսուցանել կնոջ մարդոյ ոչ հրամայեմ, եւ ոչ ճոխաբան լինել քան զայր մարդ. այլ ի լռութեան կալ: Զի Ադամ նախ ստեղծաւ, եւ ապա Եւա. եւ Ադամ ոչ պատրեցաւ, այլ կինն պատրեցաւ եւ յանցեաւ: Բայց կեցցէ վասն որդեծնութեանն, եթէ կացցեն ի հաւատս եւ ի սէր եւ ի սրբութիւն պարկեշտութեամբ: Հաւատարիմ է բանս. եթէ ոք եպիսկոպոսութեան ցանկայ, բարւոյ գործոյ ցանկայ: Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել, միոյ կնոջ այր, հեզ, ցած, պարկեշտ, հիւրասէր, ուսուցիչ: Մի՛ թշնամանող, մի՛ հարկանող, այլ հանդարտ. մի՛ կռուող, մի՛ արծաթասէր: Զի իւրում տանն իսկ բարւոք վերակացու լեալ իցէ. որդեակս ունիցի, որ ի հնազանդութեան կայցեն ամենայն պարկեշտութեամբ: Ապա եթէ ոք իւրում տանն վերակացու չգիտիցէ լինել, զիա՞րդ եկեղեցւոյ Աստուծոյ խնամակալ լինիցի: Մի՛ մատաղատունկ, զի մի՛ հպարտացեալ ի դատաստանս սատանայի անկանիցի: Այլ պարտ է նմա վկայութիւն բարի եւ յարտաքնոցն ունել. զի մի՛ ի նախատինս անկանիցի եւ յորոգայթս սատանայի: Նոյնպէս եւ զսարկաւագունս պարկեշտս. մի՛ երկբանս, մի՛ գինեսէրս, մի՛ զօշաքաղս. այլ ունիցին զխորհուրդ հաւատոցն սուրբ մտօք. ինքեանք նախ փորձեսցին, եւ ապա ի պաշտօնն մատիցեն, զի անարատք իցեն: Նոյնպէս եւ կանայք նոցա պարկեշտք.

մի չարախօսք. հեզք, հաւատարիմք յամենայնի: Սարկաւագք լինիցին միոյ կնոջ այր. որոց որդւոց իւրեանց բարւոք վերակացու լեալ իցեն եւ տանց իւրեանց: Զի որ բարւոք պաշտիցեն՝ աշտիճան բարի անձանց իւրեանց շահին, եւ բազում համարձակութիւն ի հաւատսն՝ որ ի Քրիստոս Յիսուս: Գ. 13:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց է Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Բ. 12:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յետ այսորիկ էջ Յիսուս ի Կափառնաում, ինքն եւ մայր իւր եւ եղբարք իւր. եւ անդ լինէր ոչ բազում ինչ աւուրս: Եւ էր մերձ զատիկն Հրէից, եւ ել Յիսուս յԵրուսաղէմ: Եւ եգիտ ի տաճարին՝ զի վաճառէին զարջառս եւ զոչխարս եւ զաղաւնիս, եւ զլումափոխսն՝ որ նստէին: Եւ արար խարազան չուանեայ, եւ եհան զամենեսին ի տաճարէն, զոչխարսն եւ զարջառս, եւ զպղինձս հատավաճառացն ցրուեաց, եւ զսեղանսն կործանեաց: Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա. Առէք զայդ աստի, եւ մի՛ առնէք զտուն Հօր իմոյ՝ տուն վաճառի: Ապա յիշեցին աշակերտքն նորա, թէ գրեալ է. Նախանձ տան քո կերիցէ զիս: Պատասխանի ետուն Հրեայքն եւ ասեն ցնա. Զի՞նչ նշան ցուցանես դու մեզ՝ զի զայդ առնես: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Քակեցէք զտաճարդ զայդ, եւ զերիս աւուրս կանգնեցից զդա: Ասեն ցնա Հրեայքն. Զքառասուն եւ զվեց ամ շինեցաւ տաճարս այս, եւ դու զերիս աւուրս կանգնե՞ս զսա: Բայց նա ասէր վասն տաճարի մարմնոյ իւրոյ: Իսկ յորժամ յարեաւն ի մեռելոց, յիշեցին աշակերտքն նորա թէ այս է՝ զոր ասացն, եւ հաւատացին գրոյն եւ բանին՝ զոր ասաց Յիսուս: 22:

---

## ԱՌԱՋԻՆ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:



Սղ. Ղէ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Դ. 1:

Այլ Հոգին սուրբ յայտնապէս ասէ, թէ ի ժամանակս յետինս քակեսցին ոմանք ի հաւատոցն, եւ հայեսցին յայսս մոլորութեան եւ ի վարդապետութիւնս դիւաց. կեղծաւորութեամբ ստաբանք, խարեալք իւրեանց խղճիւն մտաց: Որ արգելուցուն յամուսնանալոյ, եւ մեկնիցեն ի կերակրոց՝ զոր Աստուած հաստատեաց ի վայելել հաւատացելոց, եւ ոյք հասեալ իցեն ի ճշմարտութեանն վերայ: Զի ամենայն արարածք Աստուծոյ բարի են, եւ չիք ինչ խոտան, մանաւանդ որ գոհութեամբ ընդունիցին: Զի սրբի բանիւն Աստուծոյ եւ աղօթիւք: Զայս խրատ տուեալ եղբարց՝ բարւոք պաշտօնեայ լինիցիս Քրիստոսի Յիսուսի. սնանիցիս բանիւք հաւատոց, եւ բարւոք վարդապետութեամբն՝ զորոյ զհետն իսկ եղեր: Այլ ի պիղծ բանից եւ յառասպելաց պառաւանց հրաժարեսջիր: Բայց կրթեա զանձն քո յաստուածպաշտութիւն. զի մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է. իսկ աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է, եւ զաւետիս կենաց ունի, զարդիս եւ զհանդերձելոցն: Հաւատարիմ է բանս, եւ ամենայն ընդունելութեան արժանի է: Զի ի սոյն իսկ վաստակեմք եւ նախատինս յանձն առնումք. զի յուսացեալ եմք յԱստուած կենդանի, որ է փրկիչ ամենայն մարդկան, մանաւանդ հաւատացելոց: Պատուէր տաջիր զայդ եւ ուսուցանիջիր: Զի մի՞ ոք իցէ՝ որ զքո մանկութիւնդ արհամարհիցէ: 12:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց է Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Բ. 23:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ իբրեւ էր յԵրուսաղէմ ի զատկին ի տօնի, բազումք հաւատացին յանուն նորա. զի տեսանէին զնշանսն՝ զոր առնէր: Բայց ինքն Յիսուս ոչ հաւատայր զանձն նոցա,

քանզի ինքն գիտէր զամենայն. եւ զի ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վասն մարդոյ. զի ինքն իսկ գիտէր՝ զինչ կրէր ի մարդն: Եւ էր այր մի ի փարիսեցւոց անտի՝ Նիկոդեմոս անուն նորա՝ իշխան Հրէից: Սա եկն առ նա գիշերի եւ ասէ ցնա. Ռաբբի, գիտեմք եթէ յԱստուծոյ եկեալ ես վարդապետ. զի ոչ ոք կարէ զայդ նշանսդ առնել՝ զոր դուդ առնես, եթէ ոչ Աստուած իցէ ընդ նմա: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի վերստին՝ ոչ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ: Ասէ ցնա Նիկոդեմոս. Զիա՞րդ կարէ մարդ ծնանել՝ որ ծերն իցէ. միթէ մա՞րթ ինչ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել եւ ծնանել: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ: Զի ծնեալն ի մարմնոյ՝ մարմին է, եւ ծնեալն ի Հոգւոյ՝ հոգի է: Դու մի՛ զարմանար, թէ ասացի քեզ՝ պարտ է ձեզ ծնանել վերստին: Զի հողմն ուր կամի շնչէ, եւ զձայն նորա լսես. այլ ոչ գիտես ուստի՛ գայ կամ յո՛ երթայ. սոյնպէս եւ ամենայն ծնեալն ի Հոգւոյն: Պատասխանի ետ Նիկոդեմոս եւ ասէ ցնա. Զիա՞րդ մարթի այդմ լինել: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Դու ես վարդապետ Իսրայելի, եւ զայդ ո՞չ գիտես: Ամէն ամէն ասեմ քեզ. զի զոր ինչ գիտեմք՝ խօսիմք, եւ զոր տեսաք՝ վկայեմք. եւ զվկայութիւնն մեր ոչ ընդունիք: Իսկ արդ՝ եթէ զերկրաւորս ասացի ձեզ, եւ ոչ հաւատայք. զիա՞րդ եթէ զերկնաւորսն ասացից՝ հաւատայցէք: Գ. 12:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. ԿԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:



Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Դ. 12:

Այլ օրինակ լինիջիր հաւատացելոց բանիւք, գնացիւք, սիրով, հաւատովք, սրբութեամբ: Մինչեւ գամ ես, միտ դիր ընթերցուածոց մխիթարութեան, վարդապետութեան: Մի՛ անփոյթ առներ զշնորհացդ՝ որ ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ ի ձեռնադրութենէ երիցութեան: Յայդ խորհեաց եւ ի դոյն կանխեսջիր. զի քո յառաջադիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի: Զգոյշ լինիջիր անձին եւ վարդապետութեանդ, եւ ի դմին յամեսջիր. զայդ եթէ առնիցես, եւ զանձն ապրեցուսցես եւ զայնոսիկ՝ որ քեզն լսիցեն: Զծերն մի՛ պատուհասեսցես, այլ մխիթարեսջիր իբրեւ զհայր, զերիտասարդս իբրեւ զեղբարս, զպառաւունս իբրեւ զմարս, զմանկամարդս իբրեւ զքորս ամենայն սրբութեամբ: Զայրիս պատուեա, որ ստոյգ այրիքն իցեն: Ապա թէ ոք այրի՝ որդիս եւ թոռունս ունիցի, ուսանիցին նախ իւրեանց տանց բարի առնել եւ զփոխարէնս հատուցանել ծնողացն. զի այն է բարի եւ ընդունելի առաջի Աստուծոյ: Իսկ որ ճշմարտիւ այրին իցէ եւ մենացեալ, յուսացեալ յԱստուած, եւ կանխեալ յաղօթս եւ ի խնդրուածս զցայգ եւ զցերեկ: Իսկ գիրգ այրին՝ կենդանւոյն մեռեալ է: Զայս պատուիրեա, զի անարատք իցեն: Իսկ եթէ ոք իւրոց եւ մանաւանդ ընտանեացն խնամ ոչ տանիցի, ի հաւատոցն ուրացեալ է, եւ չար եւս քան զանհաւատսն է: Այրի ընդ այրիս անուանեսցի, որ չիցէ պակաս ի վաթսնամենից, միոյ առն կին լեալ, եւ ի գործս բարիս վկայեալ. եթէ մանկունս սնուցեալ իցէ, եթէ զհիւրս ընկալեալ իցէ, եթէ զսրբոց զոտս լուացեալ իցէ, եթէ նեղելոց բաւական լեալ իցէ, եթէ զամենայն գործոց բարեաց զհետ երթեալ իցէ: Այլ ի մանկամարդաց այրեացն հրաժարեաց, զի յորժամ խայտան զՔրիստոսիւ՝ ամուսնանալ կամին. իսկ զդատաստանս ընդունին, զի զառաջին հաւատսն արհամարհեցին: Միանգամայն եւ դատարկանձունք ուսանին, շրջողք տանէ ի տուն. եւ ոչ միայն դատարկք այլ եւ փասքուսք եւ հետաքրքիրք. եւ խօսին՝ որ ինչ ոչ է պիտոյ: Կամիմ զմանկամարդացդ

ամուսնանալ, որդիս ծնանել, տնարարս լինել, եւ մի՛ ինչ պատճառս տալ հակառակորդին ի հայհոյութեան աղագս: Զի արդէն իսկ ոմանք խոտորեցան զկնի սատանայի: Եթէ ոք հաւատացեալ՝ այրիս ունիցի, բաւական լիցի նոցա, եւ մի՛ ծանրասցի եկեղեցւոյն. զի ճշմարիտ այրեացն բաւական լինիցի: Ե. 16:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան է Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Գ. 13:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ՝ որ էջն յերկնից՝ Որդին մարդոյ, որ էն յերկինս: Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ: Զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս: Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ՝ մինչեւ զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս: Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշխարհ՝ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ: Որ հաւատայ ի նա, ոչ դատապարտեսցի. եւ որ ոչ հաւատայ ի նա՝ արդէն իսկ դատապարտեալ է. զի ոչ հաւատաց յանուն միածնի Որդւոյն Աստուծոյ: Եւ այս իսկ է դատաստան, զի լոյս եկն յաշխարհ եւ սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս. զի էին գործք իւրեանց չարութեան: Զի ամենայն որ զչար գործէ, ատեայ զլոյս. եւ ոչ գայ առ լոյսն, զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա: Իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա, թէ Աստուծով գործեցան: 21:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:



Սղ. 26. Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 17:

Որ բարւոք վերակացու լինիցին երիցունք՝ կրկին պատուոյ արժանի եղիցին. մանաւանդ որ աշխատիցին բանիւ եւ վարդապետութեամբ: Քանզի ասէ գիր. Մի՛ կապեսցես զցռուկ եզին կալոտւոյ. եւ արժանի է մշակն վարձու իւրոյ: Զերիցուէ չարախօսութիւն մի՛ ընդունիցիս. բայց եթէ երկուք եւ երիւք վկայիւք: Իսկ որ մեղանչենն, առաջի ամենեցուն յանդիմանեա, զի եւ այլքն երկիցեն: Վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի եւ ընտրելոց հրեշտակաց, զի զայդ պահեսցես առանց մտահաճութեան. մի՛ ինչ առնել աչառանօք: Չեռս վաղվաղակի յուրուք վերայ մի՛ դնիցես, եւ մի՛ կցորդ լինիցիս մեղաց օտարաց. զանձն քո սուրբ պահեսջիր: Այսուհետեւ մի՛ ջուր եւեթ ըմպիցես, այլ սակաւիկ մի եւ գինի խառնեսջիր վասն ստամոքսի եւ ստէպ հիւանդութեանց: Են մարդք՝ որոց մեղքն յայտնի են, եւ յառաջագոյն հասեալ ի դատաստան, եւ են՝ որոց զկնի երթան: Նոյնպէս եւ բարի գործքն յայտնի են. եւ որ այլ ազգ եւս ինչ իցեն՝ թաքչել ոչ կարեն: Որ միանգամ ընդ լծով ծառայութեան իցեն, զիւրաքանչիւր տեարս պատուի արժանի համարեսցին. զի մի՛ անունն Աստուծոյ եւ վարդապետութիւնն հայհոյեսցի: Իսկ որ հաւատացեալ տեարս ունիցին՝ մի՛ արհամարհեսցեն, զի եղբարք են. այլ առաւել ծառայեսցեն՝ զի հաւատացեալքն են եւ սիրունք, որք զբարերարութիւն յանձինս ունիցին. զայս ուսուցանիջիր եւ մխիթարեսջիր: Իսկ եթէ ոք այլազգ ինչ ուսուցանիցէ, եւ ոչ անսայցէ ողջմտութեան բանից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ ըստ աստուածպաշտութեան վարդապետութեանն, այնպիսին հպարտացեալ է, եւ ոչ ինչ ոչ գիտէ. այլ տապի ի խնդիրս եւ ի բանս հակառակութեան. ուստի լինին նախանձ, հեռ, հայհոյութիւն, կարծիք չարեաց, խարդախութիւնք ապականելոց մտաց մարդկան եւ

օտարացելոց ի ճշմարտութենէ անտի, որ շահավաճառ համարին զաստուածպաշտութիւնն. բայց դու մերժեսջիր յայնպիսեաց անտի: Զ. 5:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Գ. 22:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յետ այսորիկ եկն Յիսուս եւ աշակերտքն նորա յերկիրն Հրէաստանի, եւ անդ շրջէր նոքօք հանդերձ եւ մկրտէր: Մկրտէր եւ Յովհաննէս ի Յայենովն մերձ առ Սաղիմ, զի ջուրք բազումք էին անդ, եւ գային եւ մկրտէին. զի չեւ եւս էր արկեալ զՅովհաննէս ի բանտ: Եւ եղեւ խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ Հրէից վասն սրբութեան: Եկին առ Յովհաննէս եւ ասեն ցնա. Ռաբբի, որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու, որում դուն վկայեցեր, ահաւանիկ նա մկրտէ եւ ամենեքին գան առ նա: Պատասխանի ետ Յովհաննէս եւ ասէ. Ոչ կարէ մարդ առնուլ յանձնէ եւ ոչ ինչ՝ եթէ ոչ իցէ տուեալ նմա յերկնից ի վերուստ: Դուք ձեզէն վկայէք ինձ, զի ասացի ձեզ՝ թէ Չեմ ես Քրիստոսն, այլ թէ առաքեալ եմ առաջի նորա: Որ ունի հարսն, նա է փեսայ. իսկ բարեկամ փեսային՝ որ կայ եւ լսէ նմա, ուրախութեամբ ուրախ լինի վասն ձայնի փեսային. արդ այս ուրախութիւն որ իմն է, լցեալ է: Նմա պարտ է աճել, եւ ինձ մեղմանալ: Որ ի վերուստն գայ՝ ի վերոյ է քան զամենայն. որ յերկրէ աստի է, յերկրէ է եւ յերկրէ խօսի: Որ յերկնիցն գայ, զոր ինչ ետես եւ զոր լուաւ՝ վկայէ. եւ զվկայութիւն նորա ոչ ոք ընդունի: Որ ընդունի զվկայութիւն նորա՝ կնքեաց թէ Աստուած ճշմարիտ է: Զի զոր Աստուածն առաքեաց՝ զբանս Աստուծոյ խօսի. զի ոչ եթէ չափով տայ Աստուած զՀոգին: Հայր սիրէ զՈրդի, եւ զամենայն ինչ ետ ի ձեռս նորա: Որ հաւատայ յՈրդի, ընդունի զկեանսն յաւիտենականս. եւ որ ոչ հնազանդի Որդւոյ, ոչ տեսցէ զկեանս. այլ բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա: 36:

---



## ԵՐԿՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. Ղէ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Զ. 6:

Այլ շահավաճառ մեծ աստուածպաշտութիւնն է՝ բաւականութեամբ հանդերձ: Զի ոչ բերաք ինչ յաշխարհս եւ ոչ տանել ինչ կարասցուք: Այլ ունիմք կերակուր եւ հանդերձս, եւ այնու շատասցուք: Իսկ որք կամին մեծանալ, անկանին ի փորձութիւն եւ յորոգայթ, եւ ի բազում ցանկութիւնս անմիտս եւ վնասակարս. որք ընկղմեն զմարդիկ ի սատակումն եւ ի կորուստ: Զի արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւն է, որում ոմանց ցանկացեալ՝ վրիպեցան ի հաւատոցն եւ զանձինս արկին ընդ բազում ցաւովք: Այլ դու, ո՛վ մարդ Աստուծոյ, փախիր յայնցանէ, եւ երթ զհետ արդարութեան, զաստուածպաշտութեան, զհաւատոց, զսիրոյ, զհամբերութեան, զհեզութեան: Եւ մարտիր զբարւոք մարտն հաւատոց, եւ բուռն հար զկենացն յաւիտենականաց՝ յոր կոչեցարն, եւ դաւանեցեր զբարւոք դաւանութիւնն առաջի բազում վկայից: Պատուիրեմ քեզ առաջի Աստուծոյ՝ որ կենդանի առնէ զամենայն, եւ Յիսուսի Քրիստոսի՝ որ վկայեաց առաջի Պոնտացւոյ Պիղատոսի զբարւոք դաւանութիւնն. պահել քեզ զպատուիրանն անբիծ՝ անարատ մինչեւ ի յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Զոր յիւր ժամանակս ցուցցէ երանելին եւ միայն հզօրն, թագաւոր թագաւորաց եւ Տէր տերանց. որ միայն ունի զանմահութիւն, բնակեալ ի լոյս անմատոյց. զոր ոչ ոք ետես ի մարդկանէ եւ ոչ տեսանել կարող է. որում պատիւ եւ զօրութիւն յաւիտեանս. ամէն: Մեծատանց՝ որ են յայսմ աշխարհի, պատուէր տաջիր մի՛ հպարտանալ եւ մի՛

յուսալ ի մեծութիւն սնոտի, այլ յԱստուած՝ որ տայ մեզ զամենայն առատապէս ի վայելել, զբարիս գործել, մեծանալ գործովք բարութեան, առատս, սիրունս, հաղորդս լինել. գանձել անձանց հիմն բարի ի հանդերձեալսն. զի բուռն հարկանիցեն զճշմարիտ կենացն: Ո՛վ Տիմոթէէ, պահեա զաւանդն, խոտորեալ ի պղծոց եւ ի նորաձայն բանից եւ ի հակառակութենէ եւ ի մոլարանուն գիտութենէ. զոր ոմանց յանձն առեալ՝ վրիպեցան ի հաւատոց անտի: Շնորհք ընդ քեզ. ամէն: 21:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Դ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Իբրեւ գիտաց Յիսուս՝ եթէ լուան փարիսեցիքն եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ եւ մկրտէ քան զՅովհաննէս. քանզի ոչ եթէ Յիսուս ինքնին մկրտէր՝ այլ աշակերտքն նորա. եթող զՀրէաստան երկիր, եւ եկն միւսանգամ ի Գալիլեա: Եւ էր նմա անցանել ընդ Սամարիա: Գայ նա ի քաղաք մի Սամարացւոց՝ որում անուն էր Սիւքար, մերձ ի գեօղն զոր ետ Յակովբ որդւոյ իւրում Յովսեփայ: Եւ անդ էր աղբիւր մի Յակովբայ. եւ Յիսուս վաստակեալ ի ճանապարհէն, նստէր ի վերայ աղբերն. եւ էր ժամ իբրեւ վեցերորդ: Գայ կին մի ի Սամարեայ հանել ջուր, ասէ ցնա Յիսուս. Տուր ինձ ըմպել: Զի աշակերտքն նորա երթեալ էին ի քաղաք անդր՝ զի կերակուրս գնեսցեն: Ասէ ցնա կինն Սամարացի. Դու՝ որ Հրեայդ ես, զիա՞րդ յինէն ըմպել խնդրես ի կնոջէ Սամարացւոյ: Զի ոչ երբեք խառնակին Հրեայք ընդ Սամարացիս: Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Եթէ գիտէիր դու զպարգեւսն Աստուծոյ, եւ ով է՝ որ ասէդ ցքեզ՝ թէ Տուր ինձ ըմպել. դու արդեօք խնդրէիր ի նմանէ, եւ տայր քեզ ջուր կենդանի: Ասէ ցնա կինն. Տէր, դու քանզի եւ դոյլ իսկ ոչ ունիս, եւ ջրհորս խոր է. իսկ արդ՝ ուստի՞ ունիցիս զջուրն կենդանի: Մի՞թէ դու մեծ ինչ ոք իցես քան զհայրն մեր Յակովբ՝ որ զայս ջրհոր ետ մեզ, եւ ինքն աստի արբ եւ որդիք նորա եւ



խաշինք նորա: Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Ամենայն որ ըմպէ ի ջրոյ յայդմանէ՝ միւսանգամ ծարաւէ. բայց որ ըմպէ ի ջրոյն, զոր ես տաց նմա՝ մի՞ ծարաւեսցէ յաւիտեան: Այլ ջուրն զոր ես տաց նմա, եղիցի նմա աղբիւր ջրոյ բղխելոյ ի կեանսն յաւիտենականս: Ասէ ցնա կինն. Տէր, տուր ինձ զջուրն զայն, զի մի՞ ծարաւեցից, եւ մի՞ եկից այսր՝ հանել ջուր: Ասէ ցնա Յիսուս. Երթ կոչեա զայր քո եւ եկ այսր: Պատասխանի ետ նմա կինն եւ ասէ. Չիք իմ այր: Ասէ ցնա Յիսուս. Բարւոք ասացեր՝ թէ չիք իմ այր. զի հինգ այր փոխեալ է քո, եւ զոր այժմ ունիս՝ չէ քո այր. զայդ արդար ասացեր: Ասէ ցնա կինն. Տէր, թուի ինձ թէ մարգարէ իցես դու: Հարքն մեր ի լերինս յայսմիկ երկիր պագին. եւ դուք ասէք՝ եթէ յԵրուսաղէմ եւեթ է տեղի, ուր արժան իցէ երկիր պագանել: Ասէ ցնա Յիսուս. Կի՞ն դու, հաւատա ինձ, զի եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ի լերինս յայսմիկ եւ ոչ յԵրուսաղէմ երկիր պագանիցեն Հօր: Դուք երկիր պագանէք՝ որում ոչն գիտէք. մեք երկիր պագանեմք՝ որում գիտեմքն. զի փրկութիւն ի Հրէից է: Այլ եկեսցէ ժամանակ եւ այժմ իսկ է, յորժամ ճշմարիտքն երկրպագուք երկիր պագանիցեն Հօր հոգւով եւ ճշմարտութեամբ. քանզի եւ Հայր այնպիսի երկրպագուս իւր խնդրէ: 23:

---

## ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. կդ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 1:

Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամօքն Աստուծոյ, ըստ աւետեաց կենացն՝ որ ի Քրիստոս Յիսուս, Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ, շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ եւ ի Քրիստոսէ Յիսուսէ Տեառնէ մերմէ: Շնորհ ունիմ Աստուծոյ՝ զոր պաշտեմն ի նախնեաց մտօք սրբովք, իբր զի անպակաս ունիմ զքէն յիշատակ յաղօթս իմ. զցայգ եւ զցերեկ ցանկացեալ եմ տեսանել զքեզ, յիշատակեալ զարտասուսն քո, զի լցայց ուրախութեամբ. զմտաւ ածեալ զանխիղճ հաւատսն, որ են ի քեզ. որ յառաջագոյն բնակեցաւ ի հանոյ քում Լաւոդեայ եւ ի մօր քում Եւնիկեայ. հաստատեալ եմ թէ եւ ի քեզ է: Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աստուծոյ, որ են ի քեզ ի ձեռնադրութենէ իմմէ: Զի ոչ ետ մեզ Աստուած հոգի վհատութեան, այլ զօրութեան եւ սիրոյ եւ զգաստութեան: Մի այսուհետեւ ամօթ համարիցիս զվկայութիւնն Տեառն մերոյ եւ մի զիս զկապեալ նորա, այլ կցորդ լեր չարչարանաց աւետարանին ըստ զօրութեանն Աստուծոյ. որ փրկեացն զմեզ եւ կոչեաց ի կոչումն սուրբ, ոչ ըստ գործոց մերոց, այլ ըստ իւրում յառաջադրութեանն եւ շնորհացն՝ որ տուաւ մեզ ի Քրիստոս Յիսուս յառաջ քան զժամանակսն յաւիտենից: 9:

Ալէլուիա, ալէլուիա: Յարութեան ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Դ. 24:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Հոգի է Աստուած, եւ երկրպագուացն նորա՝ հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիր պագանել: Ասէ ցնա կինն. Գիտեմ զի Մեսիա գայ՝ անուանեալն Քրիստոս. յորժամ եկեսցէ նա՝ պատմեսցէ մեզ զամենայն: Ասէ ցնա Յիսուս. Ես եմ՝ որ խօսիմս ընդ քեզ: Եւ յայն բան եկին աշակերտքն նորա, եւ զարմանային՝ զի ընդ կնոջն խօսէր. բայց ոչ ոք ասաց ի նոցանէ, թէ Զի՞նչ խնդրես, կամ



զի՞նչ խօսիս ընդ դմա: Եթող կինն զսափորն իւր եւ չոգաւ ի քաղաքն, եւ ասէ ցմարդիկն. Եկայք տեսէք զայր մի, որ ասաց ինձ զամենայն՝ որ ինչ իմ գործեալ է. միթէ նա՞ իցէ Քրիստոսն: Ելին ի քաղաքէն եւ գային առ նա: Եւ մինչ չեւ եկեալ էին նոքա, աղաչէին զնա աշակերտքն եւ ասէին. Ռա՛բբի, հաց կեր: Նա ասէ ցնոսա. Ես կերակուր ունիմ ուտել, զոր դուքն ոչ գիտէք: Ասէին աշակերտքն ընդ միմեանս. Միթէ եբե՞ր ինչ ոք դմա ուտել: Ասէ ցնոսա Յիսուս. Իմ կերակուր այն է՝ զի արարից զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս, եւ կատարեցից զգործն նորա: Ո՞չ դուք ասէք՝ եթէ Այլ եւս չորք ամիսք են, եւ հունձք գան: Ահաւասիկ ես ասեմ ձեզ. Ամբարձէք զաչս ձեր, եւ տեսէք զարտորայսն, զի սպիտակացեալ են եւ ի հունձս հասեալ: Եւ որ հնձէն՝ վարձս առնու, եւ ժողովէ զպտուղ ի կեանսն յաւիտենականս. զի որ սերմանէն եւ որ հնձէ՝ հասարակ ցնծասցեն: Յայսմ իսկ է բանն ճշմարիտ. զի այլ է որ սերմանէ, եւ այլ է որ հնձէ: Ես առաքեցի զձեզ հնձել՝ զոր ոչ դուք վաստակեցէք. այլք վաստակեցին, եւ դուք ի վաստակս նոցա մտէք: Եւ ի քաղաքէն յայնմանէ Սամարացւոց՝ բազումք հաւատացին ի նա, վասն բանի կնոջն վկայելոյ՝ եթէ Ասաց ինձ զամենայն, որ ինչ իմ գործեալ է: Իսկ իբրեւ եկին առ նա Սամարացիքն, աղաչէին զնա լինել առ նոսա. եւ եղեւ անդ աւուրս երկուս: Եւ եւս բազումք հաւատացին ի նա վասն բանին նորա: Եւ ասէին ցկինն, թէ Ոչ այսուհետեւ վասն քո խօսիցդ հաւատամք, զի մեզէն իսկ լուաք ի դմանէ, եւ գիտեմք եթէ դա է ճշմարտիւ փրկիչ աշխարհաց: 42:

---

## ԵՐՐՈՐԴ ԶՈՐԵՔԾԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. 2Ե. Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 10:

Բայց յայտնեցաւ այժմիկ յերեւել փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ խափանեաց զմահ, եւ լուսաւոր արար զկեանս եւ զանեղծութիւն ի ձեռն աւետարանին, որոյ եդայ ես քարոզ եւ առաքեալ եւ վարդապետ հեթանոսաց: Վասն որոյ եւ զայս չարչարանս կրեմ, այլ ոչ ինչ ամօթ համարիմ. քանզի գիտեմ յո հաւատացեալն եմ. եւ հաստատեալ եմ թէ կարող է զաւանդն իմ պահել յօրն յայն: Ունիցիս օրինակ ողջմտութեան բանիցն՝ զորս յինէն լուար, հաւատովք եւ սիրով որ ի Քրիստոս Յիսուս: Զբարւոք աւանդն պահեսջիր ի ձեռն Հոգւոյն սրբոյ ի մեզ բնակելոյ: Զայս գիտասջիր, զի մեկնեցան ի մէնջ ամենեքեան որ էին յԱսիա, որոց սակի են Փիգեղոս եւ Հերմոգենէս: Տացէ Աստուած ողորմութիւն տանն Ոնեսիփորայ, զի բազում անգամ հանգոյց զիս, եւ զկապանս իմ ոչ ամօթ համարեցաւ: Այլ իբրեւ եկն ի Հռոմ, պնդագոյնս խնդրեաց զիս եւ եգիտ: Տացէ նմա Տէր ողորմութիւն գտանել ի Տեառնէ յաւուրն յայնմիկ. եւ որչափ ինչ միանգամ յԵփեսոս սպաս կալաւ ինձ, զայն դու ինքնին քաջ գիտես: Այլ դու, որդեակ իմ, զօրացիր շնորհօքն որ ի Քրիստոս Յիսուս: Եւ զոր լուար յինէն բազում վկայիւք, զայն աւանդեսցես հաւատարիմ մարդոց, որք բաւական իցեն եւ զայլս ուսուցանել: Բ. 2:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Դ. 43:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ յետ երկուց աւուրց ել անտի եւ գնաց ի Գալիլեա: Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց՝ եթէ Մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի: Այլ յորժամ եկն նա ի Գալիլեա, ընկալան զնա Գալիլեացիքն. զի տեսեալ եւս էր զամենայն նշանսն, զոր արար յԵրուսաղէմ ի տօնին, քանզի եւ նոքա եկեալ էին ի տօնն: Եկն դարձեալ ի Կանա Գալիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի, եւ անդ էր թագաւորազն



մի, որոյ որդի նորա հիւանդ կայր ի Կափառնաում: Նա իբրեւ լուաւ եթէ Յիսուս եկեալ է ի Հրէաստանէ ի Գալիլեա, եկն առ նա եւ աղաչէր, զի իջցէ եւ բժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ էր ի մեռանել: Ասէ ցնա Յիսուս. Եթէ ոչ նշանս ինչ եւ արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք: Ասէ ցնա թագաւորազն. Տէր, էջ, մինչ չեւ մեռեալ իցէ մանուկն իմ: Ասէ ցնա Յիսուս. Երթ, որդին քո կենդանի է: Եւ հաւատաց այրն բանին՝ զոր ասաց նմա Յիսուս, եւ գնաց: Եւ մինչ դեռ իջանէր, ընդառաջ եղեն նմա ծառայքն նորա, աւետիս ետուն եւ ասեն, թէ մանուկն նորա կենդանի է: Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեաց, եւ ասեն ցնա. Երէկ յեօթներորդ ժամու եթող զնա ջերմն: Գիտաց հայրն նորա եթէ յայնմ ժամու՝ յորում ասացն ցնա Յիսուս թէ Որդին քո կենդանի է. եւ հաւատաց ինքն եւ ամենայն տուն իւր: Զայս դարձեալ երկրորդ նշան արար Յիսուս եկեալ ի Հրէաստանէ ի Գալիլեա: 54:

---

## ԵՐՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 3:

Վշտակից լեր իբրեւ զբարւոք զինուոր Քրիստոսի Յիսուսի: Ոչ ոք զինուորեալ աստէն ընդ կեանս աշխարհիս պատաղի, եթէ զօրավարին հաճոյ լինիցի: Եւ եթէ մարտիկ ոք իցէ, ոչ պսակի՝ եթէ ոչ ըստ օրինին մարտիցէ: Եւ հողագործին աշխատելոյ պարտ է նախ ի պտղոյն վայելել: Իմա զինչ ասեմս. տացէ քեզ Տէր իմաստութիւն յամենայնի: Յիշեա զՔրիստոս Յիսուս յարուցեալ ի մեռելոց ի զաւակէ

Դաւթի ըստ աւետարանիս իմում, յորում չարչարիմ կապանօք չափ իբրեւ զչարագործ. այլ բանն Աստուծոյ ոչ եթէ կապեալ իցէ: Վասն այնորիկ ամենայնի համբերեմ վասն ընտրելոցն, զի եւ նոքա փրկութեանն հասանիցեն որ ի Քրիստոս Յիսուս երկնաւոր փառօքն հանդերձ: Հաւատարիմ է բանս, զի եթէ ընդ նմա մեռաք, ընդ նմին եւ կեցցուք. եւ եթէ համբերեմք, ընդ նմին եւ թագաւորեսցուք. եւ եթէ ուրանամք, եւ նա ուրանայ զմեզ. եւ եթէ չհաւատամք, նա հաւատարիմ մնայ. ուրանալ զանձն իւր ոչ կարէ: Զայս յուշ արասջիր՝ վկայութիւն եդեալ առաջի Աստուծոյ. մի՛ բանակռիւ լինել յոչ ինչ պէտս ի կործանումն լսողաց: 14:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ե. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յետ այսորիկ տօն էր Հրէից, եւ ել Յիսուս յԵրուսաղէմ: Եւ էր յԵրուսաղէմ ի Պրոպատիկէ աւազանին, որ կոչէր եբրայեցերէն Բեթհեզդա, հինգ սրահ, յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, գօսացելոց, որ ակն ունէին ջրոցն յուզելոյ: Եւ հրեշտակ Տեառն ըստ ժամանակի իջանէր յաւազանն եւ յուզէր զջուրսն. եւ որ նախ ի շարժումն ջուրցն իջանէր՝ բժշկէր, ոչ ունելով նշան հիւանդութեան: Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն եւ ութ ամ էր ի հիւանդութեան իւրում: Զնա իբրեւ ետես Յիսուս՝ զի անկեալ դնէր, եւ գիտաց եթէ բազում ժամանակք են այնուհետեւ, ասէ ցնա. Կամի՞ն ողջ լինել: Պատասխանի ետ նմա հիւանդն. Տէ՛ր ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն. եւ մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ: Ասէ ցնա Յիսուս. Արի, առ զմահիճս քո եւ գնա: Եւ ողջացաւ այրն, եւ յարեաւ, առ զմահիճս իւր եւ շրջէր. եւ էր շաբաթ յաւուրն յայնմիկ: Ասեն Հրեայքն ցբժշկեալն. Շաբաթ է, եւ ոչ է արժան առնուլ քեզ զմահիճս քո: Պատասխանի ետ նոցա եւ ասէ. Որ բժշկեացն զիս՝ նա ասաց ցիս. Առ



զմահիճս քո եւ գնա: Հարցին ցնա եւ ասեն. Ո՞վ է այրն որ ասաց ցքեզ՝ Առ զմահիճս քո եւ շրջեաց: Եւ բժշկեալն ոչ գիտէր թէ ո՛վ իցէ. քանզի Յիսուս խոյս ետ վասն ամբոխին ի տեղւոջէ անտի: Յետ այսորիկ գտանէ զնա Յիսուս ի տաճարին եւ ասէ ցնա. Ահաւասիկ ողջացար, մի՛ եւս մեղանչեր, զի մի՛ չար եւս ինչ լինիցի քեզ: Գնաց այրն եւ պատմեաց Հրէիցն, եթէ Յիսուս էր որ բժշկեացն զիս: Եւ վասն այնորիկ հալածէին զՅիսուս Հրեայք, զի զայն առնէր ի շաբաթու: Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա. Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ ես գործեմ: Վասն այնորիկ առաւել խնդրէին Հրեայքն սպանանել զնա, զի ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլ եւ հայր իւր կոչէր զԱստուած, եւ հաւասար Հօր եւ ընդ առնէր զանձն Աստուծոյ: 18:

---

## ՁՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ

Համամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. ԿԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 15:

Փութասջիր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ. մշակ առանց ամօթոյ, ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեան: Այլ ի պղծոց եւ ի սնոտի խօսից մերժեսջիր. զի առաւել յառաջ գայցեն յամբարշտութիւնս: Եւ բանք նոցա իբրեւ զքաղցկեղ ճարակ գտանեն. որոց սակի են Հիմենոս եւ Փիղետոս, որք վրիպեցան ի ճշմարտութենէ, եւ ասեն եթէ յարութիւն մեռելոց արդէն իսկ եղեալ է, եւ

կործանեն զհաւատս ոմանց: Այլ հաստատուն հիմն Աստուծոյ կայ եւ ունի զկնիքս զայս, եթէ Ծանեաւ Տէր զայնոսիկ՝ որ իւրն են, եւ ի բաց լիցի յանիրաւութենէ ամենայն՝ որ անուանէ զանուն Տեառն: 19:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ե. 19:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ կարէ Որդի մարդոյ առնել յանձնէ եւ ոչ ինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն եւ Որդին նմին նման գործէ: Զի Հայր սիրէ զՈրդի, եւ զամենայն ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն առնէ. եւ մեծամեծս եւս քան զսոյնս ցուցանէ նմա զգործս, ընդ որ դուքդ զարմանայք: Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս եւ կենդանի առնէ, նոյնպէս եւ Որդի զորս կամի կենդանի առնէ: Եւ ոչ եթէ Հայր դատի զոք, այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ իւրոյ: Զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի՝ որպէս պատուեն զՀայր: Որ ոչ պատուէ զՈրդին, ոչ պատուէ զՀայր զառաքիչն նորա: Ամէն ամէն ասեմ ձեզ. զի Որ զբանն իմ լսէ, եւ հաւատայ այնմ որ առաքեացն զիս, ընդունի զկեանս յաւիտենականս. եւ ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս: Ամէն ամէն ասեմ ձեզ. զի Գայ ժամանակ եւ արդէն իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ, եւ որք լսիցենն՝ կեցցեն: Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս ետ եւ Որդւոյ ունել կեանս յանձին իւրում: Եւ իշխանութիւն ետ նմա դատաստան առնել: Եւ զի Որդի մարդոյ է՝ ընդ այն զի՞ զարմանայք. զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որ ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա, եւ եկեսցեն արտաքս. որոց զբարիս գործեալ իցէ՝ ի յարութիւն կենաց, եւ որոց զչար արարեալ՝ ի յարութիւն դատաստանաց: Ոչ կարեմ ես յանձնէ առնել եւ ոչ ինչ. այլ որպէս լսեմ՝ դատիմ, եւ դատաստանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս: 30:

---



## ՉՈՐՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. 2Ե. Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 20:

Այլ ի տան մեծի ոչ միայն են անօթք ոսկեղէնք եւ արծաթեղէնք, այլ եւ փայտեղէնք եւ խեցեղէնք. են՝ որ ի պատուի են, եւ են՝ որ յանարգութեան: Եթէ ոք սրբեսցէ զանձն իւր յայնպիսեաց անտի, եղիցի անօթ պատուական սրբեալ եւ պիտանի տեառն իւրում յամենայն գործս բարութեան պատրաստեալ: Այլ յերիտասարդական ցանկութեանց փախիր. եւ երթ զհետ արդարութեան, զհաւատոց, զսիրոյ, զխաղաղութեան, զսրբութեան, ընդ այնոսիկ՝ որ կարդան զանուն Տեառն սուրբ սրտիւք: Այլ ի յիմար եւ յանխրատ խնդրոց հրաժարեա. գիտասջիր թէ անտի ծնանին կռիւք: Բայց ծառայի Տեառն ոչ է պարտ կռուել, այլ հեզ լինել առ ամենեսին, ուսուցիչ, անոխակալ. հանդարտութեամբ խրատել զհակառակողսն. թերեւս տացէ նոցա Աստուած ապաշխարութիւն ի գիտութիւն ճշմարտութեան, եւ սթափեսցին յորոգայթից սատանայի՝ որսացեալք ի նմանէ ի նորա կամս: 26:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ե. 31:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Եթէ ես վկայեմ վասն իմ, վկայութիւն իմ չէ ճշմարիտ: Այլ է՝ որ վկայէ վասն իմ. եւ դուք գիտէք, եթէ

ճշմարիտ է վկայութիւնն զոր վկայեաց վասն իմ: Դուք առաքեցէք առ Յովհաննէս, եւ վկայեաց ճշմարտութեանն: Այլ ես ոչ եթէ ի մարդկանէ առնում վկայութիւն. այլ զայս ասեմ՝ զի դուք ապրեսջիք: Նա էր ճրագն՝ որ լուցեալ էր եւ ծագէր. եւ դուք կամեցարուք ցնծալ առ ժամանակ մի ի լոյս նորա: Այլ ես ունիմ վկայութիւն մեծ եւս քան զՅովհաննու. զգործսն՝ զորս ետ ցիս Հայր՝ զի կատարեցից զնոսա, նոքին իսկ գործքն զոր գործեմ, վկայեն վասն իմ, եթէ Հայր առաքեաց զիս: Եւ որ առաքեացն զիս Հայր՝ նա վկայեաց վասն իմ: Դուք ոչ զձայն նորա երբեք լուարուք, եւ ոչ զտեսիլ նորա տեսէք, եւ ոչ զբան նորա ունիք ի ձեզ բնակեալ. զի զոր նա առաքեաց՝ դուք նմա ոչ հաւատայք: Քննեցէք զգիրս. զի դուք համարիք նոքօք ունել զկեանսն յաւիտենականս. եւ նոքին իսկ են՝ որ վկայեն վասն իմ, որովք համարիքն ունել կեանս: Եւ դուք ոչ կամիք գալ առ իս՝ զի զկեանսն ունիցիք: Ես փառս ի մարդկանէ ոչ առնում: Այլ գիտեմ զձեզ, եթէ զսէրն Աստուծոյ ոչ ունիք յանձինս: Ես եկի յանուն Հօր իմոյ, եւ ոչ ընդունիք զիս. եթէ այլ ոք եկեսցէ յիւր անուն, զնա ընդունիցիք: Զիա՞րդ կարէք դուք հաւատալ, զի փառս ի միմեանց առնուք. եւ զփառս զառ ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք: Մի համարիք՝ եթէ ես չարախօս ինչ իցեմ զձէնջ առ Հօր. գոյ որ չարախօս կայ զձէնջ՝ Մովսէս, յոր դուքն յուսացեալ էք: Զի եթէ հաւատայիք դուք Մովսիսի, հաւատայիք արդեօք եւ ինձ, զի նա վասն իմ իսկ գրեաց: Զի եթէ նորա գրոցն ոչ հաւատայք, զիա՞րդ իմոց բանիցս հաւատայցէք: 47:

---

## ՉՈՐՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:



Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 1:

Զայս գիտասջիր եթէ յաւուրս յետինս եկեսցեն ժամանակք չարք. զի եղիցին մարդիկ անձնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք, հայհոյիչք, անհաւանք ծնողաց, անշնորհք, անսուրբք, աննուէրք, անգութք, բանսարկուք, անժոյժք. վէսք, անբարեսէրք, մատնիչք, յանդըգունք, ամբարհաւաճք, ցանկասէրք մանաւանդ քան աստուածասէրք: Որ ունիցին զկերպարանս աստուածպաշտութեան, եւ ի զօրութենէ անտի նորա ուրացեալ իցեն. եւ խորշեսջիր ի նոցանէ: Զի ի նոցանէ են՝ որ մտանեն տանէ ի տուն, եւ գերեն զկանայս շեղջակուտեալս մեղօք՝ վարեալս ի պէսպէս ցանկութիւնս: Որ յամենայն ժամ ուսանին, եւ երբեք ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանեն: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Զ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յետ այսորիկ գնաց (Յիսուս) յայնկոյս ծովուն Գալիլեացւոց Տիբերեայ: Եւ զհետ երթայր նորա ժողովուրդ բազում. զի տեսանէին զնշանսն՝ զոր առնէր ի վերայ հիւանդաց: Եւ ի լեառն Յիսուս, եւ անդ նստէր աշակերտօքն հանդերձ: Եւ էր մերձ զատիկ տօնն Հրէից: Բարձ ի վեր զաչս իւր Յիսուս եւ ետես, զի ժողովուրդ բազում գայր առ նա, ասէ ցՓիլիպպոս. Ուստի՞ գնեսցուք հաց՝ զի կերիցեն դոքա: Զայս ասէր փորձելով զնա. այլ ինքն գիտէր զինչ առնելոց էր: Պատասխանի ետ նմա Փիլիպպոս. Երկերիւր դահեկանի հաց չէ դոցա բաւական, թէպէտ եւ իւրաքանչիւր ոք սակաւ ինչ առնուցու: Ասէ ցնա մի յաշակերտացն նորա՝ Անդրէաս, եղբայր Սիմովնի վիմի. Է աստ պատանեակ մի՝ որ ունի հինգ նկանակ գարեղէն եւ երկուս ձկունս. այլ այն զի՞նչ է առ այդչափ մարդիկ: Ասէ Յիսուս. Բազմեցուցէք զմարդիկդ: Եւ էր խոտ յոյժ ի տեղւոջն. եւ բազմեցան մարդիկն թուով իբրեւ հինգ հազար: Եւ առ զհացն

Յիսուս եւ գոհացաւ, եւ բաշխեաց բազմականացն. նոյնպէս եւ ի ձկանցն որչափ եւ կամեցան: Եւ իբրեւ յագեցան, ասէ ցաշակերտսն. Ժողովեցէք զնշխարեալ կոտորսդ՝ զի մի ինչ կորիցէ: Ժողովեցին, եւ լցին երկոտասան սակառի զկոտորոցն՝ ի հինգ գարեղէն նկանակէ անտի, որ յաւելաւ ի կերողացն: Իսկ մարդիկն իբրեւ տեսին զնշանսն զոր արար՝ ասէին, եթէ Սա է ճշմարիտ մարգարէն, որ գալոց էր յաշխարհ: 14:

---

## ՅԵՏ ՈՒԹՕՐԷԻՑՆ

Առաջին տօնն է

### Յովհաննու Կարապետին:

Ժամամուտ. Զյառաջընթացութիւն քո եւ զկարապետութիւն Աստուծոյ Բանին խափանել կարծելով, որ ի ձեռն կնոջն զնախաստեղծն ի դրախտէն արտաքս ընկէց, նա եւ այժմ զՀերովդիադա անօրէնութեամբ բորբոքեալ, եւ բազմելոցն Հերովդեայ՝ զկաքաւս ոտից աղջկանն հաճոյացոյց, զի զքոյդ հատցէ զգլուխ, որ զամենեցուն ձեռնադրեցեր զգլուխն զՔրիստոս: Այլ դու, որ յանապատէ բարբառոյ ձայն, գոչեա որում ձեռնադրեցեր՝ պարգեւել զխաղաղութիւն եւ զմեծ զողորմութիւն:

Սղ. ՁԸ. Աստուած փառաւորեալ է ի խորհուրդս սրբոց իւրոց. մեծ եւ ահաւոր ի վերայ այնոցիկ որ շուրջ են զնովաւ:

Զողորմութիւնս քո, Տէր, յաւիտեան օրհնեցից. յազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնս քո:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԺԳ. 25:

Եւ իբրեւ լնոյր Յովհաննէս զընթացսն, ասէր. Զո՞ ոք կարծէք զինէն՝ թէ իցեմ. չեմ ես այն. այլ ահա գայ զկնի իմ, որում չեմ արժանի զկօշիկս ոտիցն լուծանել: Ա՛րք եղբարք՝ որդիք Աբրահամեան տոհմին եւ որ ի ձեզ երկիւ-



ղածք իցեն յԱստուծոյ, ձեզ բանս այս փրկութեան առաքեցաւ: Բայց որ բնակեալ են յԵրուսաղէմ եւ իշխանք նոցա՝ անծանօթ եղեն ի նմանէ. եւ ըստ բարբառոյ մարգարէիցն, որ զամենայն շաբաթսն ընթեռնուին, դատեալ կատարեցին. եւ ոչ մի ինչ պատճառս մահու գտեալ՝ խնդրեցին ի Պիղատոսէ սպանանել զնա: Եւ իբրեւ կատարեցին զամենայն՝ որ վասն նորա գրեալ էր, իջուցեալ ի փայտէն՝ եդին ի գերեզմանի: Այլ Աստուած յարոյց զնա ի մեռելոց. որ երեւեցաւ աւուրբք բազմօք այնոցիկ, որ ելեալ էին ընդ նմա ի Գալիլեէ յԵրուսաղէմ. որք եւ արդ իսկ վկայք են նորա առ ժողովուրդն: Եւ մեք ձեզ աւետարանեմք զխոստումն՝ որ առ հարսն եղեալ էր: Զի զնոյն Աստուած կատարեաց առ մեզ որդիս նոցա՝ յարուցեալ զՅիսուս, որպէս եւ ի սաղմոսին գրեալ է յերկրորդում. Որդի իմ ես դու, եւ ես այսօր ծնայ զքեզ: 33:

Ալէլուիա, ալէլուիա. Կարապետն Յովհաննէս զարհուրեալ, յորովայնէ յորովայն երկիր պագանէր. սպասաւոր եղեւ Բանին Աստուծոյ. եւ լուեալ զահաւոր զձայնն՝ աղաղակէր ասելով. Ահա Գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Ա. 1:

Վասն մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Սկիզբն Աւետարանի Յիսուսի Քրիստոսի Որդւոյ Աստուծոյ: Որպէս եւ գրեալ է ի մարգարէս. Ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, որ հանդերձեսցէ զճանապարհս քո առաջի քո: Ձայն բարբառոյ յանապատի. պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, եւ ուղիղս արարէք զշաւիղս նորա: Եւ եղեւ՝ զի Յովհաննէս մկրտէր յանապատի, եւ քարոզէր մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց: Եւ երթայր առ նա ամենայն աշխարհն Հրէաստանի, եւ Երուսաղէմացիք ամենեքեան. եւ մկրտէին ի նմանէ ի Յորդանան գետ՝ խոստովանեալ զմեղս իւրեանց: Եւ էր Յովհաննէս զգեցեալ ստեւ ուղտու եւ գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, եւ կերակուր նորա մարախ եւ

մեղը վայրենի: Քարոզէր եւ ասէր. Գայ զօրագոյնն քան զիս զկնի իմ, որում չեմ բաւական խոնարհել լուծանել զխրացս կօշկաց նորա: Ես մկրտեցի զձեզ ջրով, եւ նա մկրտեսցէ զձեզ Հոգւով սրբով: Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ եկն Յիսուս ի Նազարեթէ Գալիլեացւոց, եւ մկրտեցաւ ի Յովհաննէ ի Յորդանան: Եւ նոյնժամայն ընդ վերանալն ի ջրոցն, ետես ցելեալ զերկինս, եւ զՀոգին Աստուծոյ իբրեւ զաղաւնի՝ զի իջանէր ի վերայ նորա: Զայն եղեւ յերկնից եւ ասէ. Դու ես որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ: Եւ նոյնժամայն Հոգին հանէ զնա յանապատ: Եւ էր նա անդ զաւուրս քառասուն՝ փորձեալ ի սատանայէ, եւ էր ընդ գազանս, եւ հրեշտակք պաշտէին զնա: 13:

---

Ապա

**Պետրոսի Աղեքսանդրու հայրապետին եւ Աբիսողոմայ**

**սարկաւագին:**

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ, ծառայ Քրիստոսի ով երանելիդ ի հարս սուրբ հայրապետ: Քանզի քոյ վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ը. 28:

Բայց գիտեմք եթէ որոց սիրենն զԱստուած՝ յամենայնի գործակից լինի ի բարիս, որք հրաւիրանաւն կոչեցան: Զի զորս յառաջն ճանաչէր, յառաջագոյն հրաւիրեաց՝ կերպարանակից լինել պատկերի Որդւոյն իւրոյ. զի եղիցի նա անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց: Եւ զորս յառաջագոյնն հրաւիրեաց, զնոսին եւ կոչեաց. եւ զորս կոչեացն, զնոսին եւ



արդարացոյց. եւ զորս արդարացոյցն. զնոսին եւ փառաւորս արար: Իսկ արդ զի՞նչ ասեմք առ այս. եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ: Որ յիւր Որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա, զիա՞րդ ոչ նովաւ հանդերձ զամենայն շնորհիցէ մեզ: Ո՞վ իցէ որ մեղադիր լինիցի ընտրելոց Աստուծոյ. Աստուած է որ արդարացուցանէ, իսկ արդ ո՞վ է որ դատապարտ առնիցէ. Քրիստոս Յիսուս՝ որ մեռաւն, մանաւանդ թէ յարուցեալ իսկ է, եւ է ընդ աջմէ Աստուծոյ, որ եւ բարեխօս իսկ է վասն մեր: Արդ ո՞վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի. նեղութի՞ւն, թէ անձկութիւն, թէ հալածանք, թէ սով, թէ մերկութիւն, թէ վիշտք, թէ սուր: Որպէս եւ գրեալ է. Վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք իբրեւ զոչխար ի սպանդ: Այլ յայսմ ամենայնի առաւել յաղթեմք նովաւ՝ որ սիրեացն զմեզ: Քանզի հաստատեալ եմ եթէ ոչ մահ եւ ոչ կեանք եւ ոչ հրեշտակք եւ ոչ իշխանութիւնք եւ ոչ որ կանս եւ ոչ հանդերձեալքն եւ ոչ զօրութիւնք, եւ ոչ բարձրութիւնք եւ ոչ խորութիւնք եւ ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ ի սիրոյ անտի Աստուծոյ, որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր: 39:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ժ. 11:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց: Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն եւ փախչի. եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ. քանզի վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն: Ես եմ հովիւն քաջ, եւ ճանաչեմ զիմսն եւ ճանաչիմ յիմոցն: Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայր. եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց: Նա եւ այլ եւս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ. եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր, եւ ձայնի իմում լուիցեն, եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ: 16:

---

Աղա

### Անտոնի անապատականի:

Ժամամուտ. Ձգնաւորք Քրիստոսի, որք տանջանաց անօրինացն համբերեցիք, եւ զմոլութիւն կռոցն խափանեցիք. դասաւորեալք ընդ հրեշտակս ի յերկինս. որք ունիք զհամարձակութիւն ի Քրիստոսէ, բարեխօսեցէք կեցուցանել զանձինս մեր, զձեզ աղաչեմք:

Սղ. ՃԻԳ. Եթէ ոչ Տէր էր առ մեզ. ասասցէ Իսրայէլ. եթէ ոչ Տէր էր առ մեզ:

Ընդ յառնել մարդկան ի վերայ մեր. կենդանւոյն կամեցան կլանել զմեզ:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. ԺԱ. 32:

Եւ արդ զի՞նչ եւս ասացից. զի չէ բաւական ժամանակս պատմելոյ վասն Գեդէովնի, Բարակայ, Սամփսովնի, Յեփթայայ, Դաւթի եւ Սամուէլի եւ այլոց մարգարէիցն. որք հաւատովք պարտեցին զթագաւորութիւնս, գործեցին զարդարութիւն, հասին աւետեաց, խցին զբերանս առիւծուց, շիջուցին զզօրութիւն հրոյ, ապրեցան ի բերանոյ սրոյ, զօրացան ի տկարութենէ, եղեն զօրաւորք ի պատերազմի, առին զբանակս օտարաց: Ընկալան կանայք ի յարութենէ զմեռեալս իւրեանց. կէսք կոշկոճեցան, եւ չեւ եւս ընկալան զփրկութիւն, զի լաւագոյն յարութեանն հասանիցեն: Եւ կէսք զտանջանաց եւ զգանից զփորձ առին, զկապանաց եւ զբանտից: Քարկոծեցան, սղոցեցան, փորձեցան, սպանմամբ սրոյ մեռան, շրջեցան լեշկմաշկօք եւ մորթովք այծենեօք. կարօտեալք, նեղեալք, չարչարեալք: Զորս ոչ արժէ աշխարհս, յանապատի մոլորեալք եւ ի լերինս եւ յայրս եւ ի փապարս երկրի: Եւ սոքա ամենեքին վկայեալք ի հաւատոցն, չեւ եւս ընկալան զաւետիսն, Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատարեսցին: 40:

Ալէլուիա, ալէլուիա. Երանելի են որք բնակեալ են ի տան Տեառն. յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ:



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ժ. 37:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ արժանի. եւ որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի: Եւ որ ոչ առնու զխաչ իւր եւ գայ զկնի իմ, չէ ինձ արժանի: Որ գտանէ զանձն իւր, կորուսցէ զնա. եւ որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա: Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, եւ որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ: Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի՝ զվարձս մարգարէի առցէ. եւ որ ընդունի զարդար յանուն արդարոյ՝ զվարձս արդարոյ առցէ: Եւ որ արբուսցէ միում ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ՝ միայն յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ. ոչ կորուսցէ զվարձս իւր: 42:

---

Աղա

### Մեծին Թէոդոսի Թագաւորին եւ Մանկանցն Եփեսոսի:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց թագաւորաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. Ի. Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. եւ ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ:

Զքանկութիւն սրտի նորա ետուր նմա. եւ զկամս շրթանց նորա ոչ արգելեր ի նմանէ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 1:

Եւ արդ աղաչեմ, նախ քան զամենայն առնել աղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհութիւնս վասն ամենայն մարդկան, մանաւանդ վասն թագաւորաց եւ ամենայն իշխանաց. զի խաղաղութեամբ եւ հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր, ամենայն աստուածպաշտութեամբ եւ

սրբութեամբ: Զի այն է բարի եւ ընդունելի առաջի փրկչին մերոյ Աստուծոյ. որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն եւ ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն: Զի մի է Աստուած, եւ մի միջնորդ Աստուծոյ եւ մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս. որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն, վկայութիւն ժամանակաց իւրոց: Յոր եդայ ես քարոզ եւ առաքեալ. ճշմարիտ ասեմ ի Քրիստոս եւ ոչ ստեմ, եղէ վարդապետ հեթանոսաց հաւատովք եւ ճշմարտութեամբ: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. եւ ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Է. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ իբրեւ կատարեաց զամենայն բանս իւր ի լսելիս ժողովրդեանն, եմուտ ի Կափառնաում: Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր ի վախճանել, որ էր նմա պատուական: Եւ իբրեւ լուաւ զՅիսուսէ, առաքեաց զծերսն ի Հրէից, աղաչէր զնա՝ զի եկեսցէ ապրեցուսցէ զծառայն նորա: Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝ աղաչէին զնա ստէպ եւ ասէին, թէ Արժանի է որում զշնորհս զայս առնես: Զի սիրէ զազգս մեր, եւ զժողովրդանոցն նա շինեաց մեզ: Եւ Յիսուս գնաց ընդ նոսա: Իբրեւ ոչ ինչ կարի հեռի էր ի տանէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս եւ ասէ ցնա. Տէր, մի՛ ինչ աշխատ լինիր, զի չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես: Վասն որոյ եւ ոչ զանձն համարեցայ արժանի առ քեզ գալոյ. այլ ասա բանիւ, եւ բժշկեսցի մանուկս իմ: Քանզի եւ ես այր մի եմ կարգեալ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ ինեւ զինուորս, եւ ասեմ սմա՝ Երթ, եւ երթայ. եւ այլում թէ Եկ, եւ գայ. եւ ծառայի իմում թէ Արա զայս, եւ առնէ: Եւ իբրեւ լուաւ զայս Յիսուս՝ զարմացաւ. դարձաւ առ ժողովուրդն՝ որ երթային զհետ նորա, եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ՝ թէ եւ ոչ յԻսրայելի այսչափ հաւատս գտի: Եւ դարձան անդրէն պատգամաւորքն ի տուն, եւ գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ: 10:

---



Աղա

Կիրակոսի եւ մօր նորա Յուղիտայ:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. Ը. Ի բերանոյ մանկանց տղայոց ստնդիեցաց հաստատեցեր զօրհնութիւն:

Տէր Տէր մեր, զի՛ սքանչելի է անուն քո ի վերայ ամենայն երկրի:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Բ. 14:

Արդ որովհետեւ մանկունք հաղորդեցին արեան եւ մարմնոյ, եւ ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղեւ նոցունց. զի մահուն իւրով խափանեսցէ զայն, որ զիշխանութիւն մահուն ունէր, այս ինքն է՝ զսատանայ. եւ ապրեցուսցէ զայնոսիկ, որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք ի ծառայութիւն: Քանզի ոչ երբեք զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զզաւակէն Աբրահամու բուռն հարկանէ: Ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանել. զի ողորմած լինիցի եւ հաւատարիմ քահանայապետ յաստուածակոյս կողմանէ անտի, առ ի քաւելոյ զմեղս ժողովրդեանն: Զի որով ինքն չարչարեցաւ՝ զփորձ առեալ, կարող է եւ փորձանաւորացն օգնական լինել: 18:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Թ. 44:

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ զարմանային ամենեքեան ի վերայ մեծամեծացն Աստուծոյ. եւ ի զարմանալն ամենեցուն ի վերայ ամենայնի զոր առնէր, ասէ ցաշակերտսն իւր. Դիք դուք ի լսելիս ձեր

զբանս զայսոսիկ. զի Որդի մարդոյ մատնելոց է ի ձեռս մարդկան: Եւ նոքա ոչ գիտէին զբանն, եւ էր ծածկեալ ի նոցանէ՝ զի մի՛ գիտասցեն. եւ երկնչէին հարցանել ցնա վասն բանին այնորիկ: Եմուտ խորհուրդ ի նոսա՝ թէ ո՞ արդեօք մեծ իցէ ի նոցանէ: Յիսուս իբրեւ ծանեաւ զխորհուրդս սրտից նոցա, առ մանուկ մի՝ կացոյց ի մէջ նոցա առ իւր, եւ ասէ ցնոսա. Որ ոք ընկալցի զմանուկս զայս յանուն իմ՝ զիս ընդունի, եւ որ զիս ընդունիցի՝ ընդունի զառաքիչն իմ. զի որ փոքրիկն է յամենեսին ի ձեզ՝ նա եղիցի մեծ: 48:

---

Ապա

### Վահանայ Գողթնացւոյն:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. Գ. Այլ դու Տէր օգնական իմ ես. փառք իմ եւ բարձրացուցիչ գլխոյ իմոյ:

Տէր, զի՞ բազում եղեն նեղիչք իմ. եւ բազումք յարեան ի վերայ իմ:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ը. 12:

Այսուհետեւ, եղբարք, պարտապան եմք ոչ մարմնով՝ ըստ մարմնոյ կեալ: Զի եթէ ըստ մարմնոյ կեցէք, մեռանելոց էք. իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք, կեցջիք: Զի որ Հոգւովն Աստուծոյ վարին, նոքա են որդիք Աստուծոյ: Զի ոչ առէք զհոգին ծառայութեան միւսանգամ յերկիւղ, այլ առէք զհոգին որդեգրութեան, որով աղաղակեսք՝ Աբբայ, հայր: Նոյն ինքն Հոգին վկայէ հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ: Եւ եթէ որդիք, ապա եւ ժառանգք. ժառանգք Աստուծոյ, եւ ժառանգակիցք Քրիստոսի: Եթէ չարչարանացն կցորդ լինիմք, եւ փառացն հաղորդ լինելոց եմք: Ինձ այսպէս թուի եթէ ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն՝ որ յայտնե-



լոց են ի մեզ: Զի ակնկալութիւն արարածոց՝ յայտնութեան Որդւոյն Աստուծոյ սպասէ: Զի ընդունայնութեան արարածք հնազանդեցան, ոչ իւրեանց կամաւ, այլ վասն այնորիկ՝ որ հնազանդեցոյցն յուսով: Զի եւ ինքեանք իսկ արարածք ազատեսցին ի ծառայութենէ ապականութեան՝ յազատութիւն փառաց Որդւոյն Աստուծոյ: Քանզի գիտեմք եթէ ամենայն արարածք հեծեն եւ երկնեն մինչեւ ցայժմ: Եւ ոչ այսչափ միայն. այլ եւ մեք իսկ՝ որ զպտուղ հոգւոյն ունիմք, անձամբ յանձինս մեր հեծեմք, որդեգրութեանն ակն կալեալ փրկութեան մարմնոյ մերոյ: Զի յուսով ապրեցաք. այլ յոյս տեսանելի՝ չէ յոյս. զի զոր տեսանէ ոք՝ զի՞ եւս յուսայ: Ապա եթէ զոր ոչն տեսանեմք՝ յուսամք, համբերութեամբ ակն ունիմք: Նոյնպէս եւ Հոգին ի թիկունս հասանէ տկարութեանս մերում. զի զոր կամքն յաղօթս՝ որպէս արժան իցէ, ոչ գիտեմք. այլ ինքն Հոգին բարեխօս լինի ի հեծութիւնս անմռունչս: Բայց որ քննէն զսիրտս՝ գիտէ զինչ խորհուրդ է Հոգւոյն. զի ըստ Աստուծոյ բարեխօսէ վասն սրբոց: 27:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու. Գլ. Թ. 23:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Եւ ասէր առ ամենեսին. Եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն եւ առցէ զխաչ իւր հանապազ եւ եկեսցէ զհետ իմ: Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա, եւ որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ կեցուսցէ զնա: Զի՞նչ օգուտ է մարդոյ եթէ զաշխարհ շահեսցի, եւ զանձն իւր կորուսցէ կամ տուժեսցի: Զի որ ամօթ համարեսցի զիս եւ զբանս իմ, զնա եւ Որդի մարդոյ յամօթ արասցէ՝ յորժամ գայցէ փառօք իւրովք եւ Հօր եւ հրեշտակաց սրբոց: Բայց արդարեւ ասեմ ձեզ, եթէ են ոմանք ի դոցանէ որ այդր կան՝ որք մի՛ ճաշակեսցեն զմահ, մինչեւ տեսցեն զարքայութիւն Աստուծոյ: 27:

---

Ապա

**Աթանասայ եւ Կիւրղի հայրապետացն Աղեքսանդրու:**

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցէք զաթոռ ի յերկրի. առաքելական առէք զպատիւ յերկնուստ, ծառայք Քրիստոսի ո՛վ երանելիք ի հարս սուրբ հայրապետք: Քանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. ԺԳ. 7:

Յիշեցէք զառաջնորդս ձեր, որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն: Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեանս: Յուսմունս պէսպէսս եւ յօտարաձայնս մի՛ դանդաչէք. զի լաւ է շնորհօք հաստատել զսիրտս, եւ ոչ կերակրովք, որովք ոչ ինչ օգտեցան՝ որ այնպէսն գնացին: 9:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԺԶ. 33:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ընդ իս խաղաղութիւն ունիցիք. յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի: Զայս իբրեւ խօսեցաւ Յիսուս, ամբարձ զաչս իւր յերկինս եւ ասէ. Հայր, հասեալ է ժամ, փառաւորեա զՈրդի քո, զի եւ Որդի քո փառաւորեսցէ զքեզ: Որպէս ետուր նմա իշխանութիւն



ամենայն մարմնոյ, զի ամենայնի՝ զոր ետուր նմա, տացէ զկեանսն յաւիտենականս: Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, եւ զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս: Ես զքեզ փառաւորեցի յերկրի. զգործսն կատարեցի, զոր ետուր ցիս՝ զի արարից: Եւ այժմ փառաւորեա զիս, Հայր, առ ի քէն փառօքն՝ զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ ի քէն: Յայտնեցի զանուն քո մարդկան՝ զորս ետուր ինձ յաշխարհէ. քո էին, եւ ինձ ետուր զնոսա, եւ զբանն քո պահեցին: Արդ գիտացին՝ եթէ զամենայն ինչ զոր ետուր ինձ, առ ի քէն են: Զի զբանն՝ զոր ետուր ինձ, ետու նոցա. եւ նոքա ընկալան, եւ ծանեան ճշմարտութեամբ՝ թէ առ ի քէն ելի. եւ հաւատացին՝ եթէ դու առաքեցեր զիս: ԺԷ. 8:

---

Ապա

**Գրիգորի Աստուածաբանին:**

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ, ծառայ Քրիստոսի ո՛վ երանելիդ ի հարս սուրբ հայրապետ: Քանզի քոյ վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոց զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԽԹ. Պարծեսցին սուրբքն փառօք, եւ ցնծասցեն ի հանգիստս իւրեանց. եւ բարձր արասցեն զԱստուած բերանովք իւրեանց:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Ի. 25:

Եւ արդ՝ ահաւասիկ գիտեմ ես, եթէ ոչ եւս տեսանէք զերեսս իմ դուք ամենեքեան, յորս շրջեցայ քարոզել զարքայութիւնն: Վասն որոյ եւ վկայութիւն դնեմ ձեզ

յաւուրս յայսմիկ՝ զի սուրբ եմ ես յարենէ ամենեցուն: Քանզի ոչ խորշեցայ ի պատմելոյ ձեզ զամենայն կամս Աստուծոյ: Զգոյշ կացէք անձանց եւ ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցոյց արեամբ իւրով: Քանզի գիտեմ ես՝ եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք յափշտակողք ի ձեզ, որ ոչ խնայեսցեն հօտիդ: Եւ ի ձէնջ յարիցեն արք՝ որք խօսեսցին թիւրս, ձգել զաշակերտսն զկնի իւրեանց: Վասն այսորիկ արթուն կացէք եւ յիշեցէք՝ զի զերկեամ մի զցայգ եւ զցերեկ ոչ դադարեցի արտասուօք խրատել զմի մի իւրաքանչիւր: Եւ արդ՝ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ եւ բանի շնորհաց նորա, որ կարողն է շինել եւ տալ ձեզ ժառանգութիւն ընդ սուրբսն ամենեսեան: 32:

Ալէլուիա, ալէլուիա. Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի. եւ Տէր ընդ աջմէ քումմէ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ժ. 11:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց: Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն եւ փախչի. եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ. քանզի վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն: Ես եմ հովիւն քաջ, եւ ճանաչեմ զիմսն եւ ճանաչիմ յիմոցն: Որպէս գիտէ զիս Հայր. գիտեմ եւ ես զՀայր. եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց: Նա եւ այլ եւս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ. եւ զայն եւս պարտ է ինձ տծել այսր, եւ ձայնի իմում լուիցեն, եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ: 16:

---

Ապա

Տրիփոնի վկային:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսու-



թեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ճԺԷ. Տէր է իմ օգնական եւ ես ոչ երկեայց. զի՞ արասցէ ինձ մարդ:

Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ը. 28:

Բայց գիտեմք եթէ որոց սիրենն զԱստուած՝ յամենայնի գործակից լինի ի բարիս, որք հրաւիրանաւն կոչեցան: Զի զորս յառաջն ճանաչէր, յառաջագոյն հրաւիրեաց՝ կերպարանակից լինել պատկերի Որդւոյն իւրոյ. զի եղիցի նա անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց: Եւ զորս յառաջագոյնն հրաւիրեաց, զնոսին եւ կոչեաց. եւ զորս կոչեացն, զնոսին եւ արդարացոյց. եւ զորս արդարացոյցն, զնոսին եւ փառաւորս արար: Իսկ արդ զի՞նչ ասեմք առ այս. եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ: Որ յիւր Որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա, զի՞արդ ոչ նովաւ հանդերձ զամենայն շնորհիցէ մեզ: Ո՞վ իցէ որ մեղադիր լինիցի ընտրելոց Աստուծոյ. Աստուած է որ արդարացուցանէ, իսկ արդ ո՞վ է որ դատապարտ առնիցէ. Քրիստոս Յիսուս՝ որ մեռաւն, մանաւանդ թէ յարուցեալ իսկ է, եւ է ընդ աջմէ Աստուծոյ, որ եւ բարեխօս իսկ է վասն մեր: 34:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ժ. 16:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց. եղերուք այսուհետեւ խորագէտք իբրեւ զօձս, եւ միամիտք իբրեւ զաղաւնիս: Զգոյշ լինիջիք ի մարդկանէ. զի մատնեսցեն զձեզ յատեանս, եւ ի ժողովուրդս իւրեանց

անջևացին զձեզ: Եւ առաջի դատաւորաց եւ թագաւորաց տանիցին զձեզ վասն իմ ի վկայութիւն նոցա եւ հեթանոսաց: Եւ յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հոգայցէք՝ թէ որպէս կամ զի՛նչ խօսիցիք. զի տացի ձեզ ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք: Ոչ եթէ դուք իցէք՝ որ խօսիցիքն, այլ Հոգին Հօր ձերոյ որ խօսիցի ի ձեզ: Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, եւ հայր զորդի. եւ յառնիցեն որդիք ի վերայ հարց եւ սպանանիցեն զնոսա: Եւ եղիջիքատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ. իսկ որ համբերեսցէ մինչեւ ի վախճան, նա կեցցէ: Եւ յորժամ հալածիցեն զձեզ ի քաղաքիս յայսմիկ՝ փախիջիք յայլ. եւ եթէ յայնմանէ հալածիցեն զձեզ՝ փախիջիք ի միւս. ամէն ասեմ ձեզ՝ ոչ սպառեսջիք զքաղաքս Իսրայելի՝ մինչեւ եկեսցէ Որդի մարդոյ: 23:

---

## Ընդ

### Վլասայ եպիսկոպոսին եւ Ղեսիմեայ աշակերտին Պօղոսի առաքելոյն:

Յովհաննէս. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ԺԸ. Ընդ ամենայն երկիր եւ բարբառ նոցա. եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա:

Երկինք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն:

Պօղոսի առաքելոյն ի Փիլիմոնի Թղթոյն է ընթերցուածս.

1:

Պօղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի, եւ Տիմոթէոս եղբայր, Փիլիմոնի սիրելւոյ եւ գործակցի մերոյ, եւ Ապփիայ քեռ, եւ Աղքիպպեայ զինուորակցի մերոյ եւ առանին եկեղեցւոյդ: Հնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ: Գոհանամ



զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ յիշատակեալ յաղօթս իմ վասն քո, իբրեւ լսեմ զքո հաւատսն եւ զսէր, զոր ունիս առ Տէր Յիսուս եւ առ ամենայն սուրբս: Օրհ հաղորդութիւն հաւատոյն քոց արդեալ լինիցի գիտութեամբ ամենայն բարութեան, որ ի ձեզ է ի Քրիստոս Յիսուս: Խնդութիւն յոյժ ընկալայ եւ մխիթարութիւն ի վերայ սիրոյն քո, զի գութք սրբոց քեռ հանգուցեալ են, եղբայր: Վասն որոյ բազում համարձակութիւն ունիմ ի Քրիստոս՝ հրամանատալ քեզ զարժանն վասն սիրոյ. մանաւանդ թէ աղաչեմ իսկ այնպիսի լինել, որպէս եւ Պօղոս ծերացեալ, արդ եւ կապեալ եւս Յիսուսի Քրիստոսի: Աղաչեմ զքեզ վասն որդւոյ իմոյ՝ զոր ծնայ ի կապանս իմ, զՈնեսիմոս, որ երբեմն անպիտան էր քեզ, բայց արդ քեզ եւ ինձ պիտանի. զոր յղեցի առ քեզ: Եւ դու զդա ընկալջիր, այսինքն զիմ աղիս: Որ կամէի առ իս արգելուլ, զի ընդ քո ունիցի ինձ սպաս ի կապանս աւետարանին: Բայց առանց քո կամաց ոչ ինչ կամեցայ առնել, զի մի՛ բարիքդ քո ի հարկէ լինիցին, այլ կամաւ: Եւ թերեւս վասն այնորիկ մեկնեցաւ առ ժամանակ մի, զի յաւիտեան ունիցիս զդա, մի եւս իբրեւ զծառայ, այլ ի վեր քան զծառայ, իբրեւ զեղբայր սիրելի. եւ եթէ ինձ այսպէս, ոքչափ եւս առաւել քեզ մարմնով եւ տերամբ: Եթէ զիս քեզ հաղորդ համարիցիս, ընկալ զդա իբրեւ զիս: Եւ եթէ յանցուցեալ ինձ իցէ կամ պարտիցի, զայն ինձ համարեաց: Ես Պօղոս գրեցի իմով ձեռամբ. ես հատուցից, զի մի՛ ասիցեմ քեզ՝ թէ եւ դու զանձն քո ինձ պարտիս: Այո, եղբայր, ես քո փոխանակ եղէց ի Տէր. հանգո զաղիսդ իմ ի Քրիստոս: Յուսացեալ ի հնազանդութիւնդ քո, գրեցի առ քեզ. քանզի գիտեմ թէ առաւել քան զոր ասեմդ՝ առնիցես: Միանգամայն եւ պատրաստեսջիր ինձ վանս. քանզի յուսամ եթէ աղօթիւք ձերովք շնորհեցայց ձեզ: Ողջոյն տայ ձեզ Եպափրաս գերեկից իմ ի Քրիստոս Յիսուս. եւ Մարկոս եւ Երիստարքոս եւ Դեմաս եւ Ղուկաս՝ գործակիցք իմ: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում. ամէն: 25:

Ընդ. Ալելուիա, ալելուիա. Ընդ ամենայն երկիր եւ բարբառ նոցա. եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԺԵ. 11:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրախութիւն իմ ի ձեզ իցէ, եւ ձեր ուրախութիւնն լցեալ եղիցի: Այս է պատուէր իմ, զի սիրեսջիր զմիմեանս, որպէս եւ ես զձեզ սիրեցի: Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց: Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք՝ զոր եսն պատուիրեմ ձեզ: Ոչ եւս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ Տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն, զոր լուայ ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ. Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս. այլ ես ընտրեցի զձեզ, եւ եդի զձեզ. զի դուք երթայցէք եւ պտղաբերք լինիցիք. եւ պտուղն ձեր կացցէ. եւ զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ: 16:

---

Ապա

Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետին եւ յիշատակ Կոստանդիանոսի Թագաւորին:

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ, ծառայ Քրիստոսի ով երանելիդ ի հարս սուրբ հայրապետ: Քանզի քոյ վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ԼԳ. Բազում նեղութիւնք են արդարոց. յամենայնէ փրկէ զնոսա Տէր եւ պահէ զամենայն ոսկերս նոցա. եւ մի ի նոցանէ ոչ կորիցէ:

Օրհնեցից զՏէր յամենայն ժամ. յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:



Պօղոսի առաքելոյն ի Կողոսացւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Ա. 21:

Եւ զձեզ որ երբեմն օտարացեալքն էիք, եւ թշնամիք խորհրդովք ի գործսն չարութեան, այժմ աւադիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ իւրոյ ի ձեռն մահուն իւրոյ, յանդիման կացուցանել զձեզ սուրբս եւ ամբիծս եւ անարատս առաջի նորա: Եթէ կայցէք ի հաւատսն արմատացեալք եւ հաստատեալք, եւ անշարժք ի յուսոյ աւետարանին՝ զոր լուարուք քարոզելոյ ընդ ամենայն արարածս ի ներքոյ երկնից, որոյ եղէ ես Պօղոս պաշտօնեայ: Եւ արդ ուրախ եմ ի չարչարանս իմ վասն ձեր, եւ լնում զպակասութիւն նեղութեանցն Քրիստոսի ի մարմնի իմում վասն մարմնոյ նորա, որ է եկեղեցի. որոյ եղէ ես Պօղոս պաշտօնեայ, ըստ տնտեսութեանն Աստուծոյ, որ տուեալ է ինձ ի ձեզ՝ կատարել զբանն Աստուծոյ. զխորհուրդն որ ծածկեալն էր ի յաւիտեանցն եւ յազգաց, որ այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց: Որոց կամեցաւ Աստուած ցուցանել, թէ զինչ է մեծութիւն փառաց խորհրդոյն նորա ի հեթանոսս, որ է Քրիստոս ի ձեզ յոյսն փառաց. զոր մեքն քարոզեմք, եւ խրատեմք զամենայն մարդ, եւ ուսուցանեմք զամենայն մարդ ամենայն հոգեւոր իմաստութեամբ. զի կացուսցուք զամենայն մարդ կատարեալ ի Քրիստոս Յիսուս: Յոր եւ աշխատիմ պատերազմեալ ըստ յաջողութեան նորա, որ յաջողեալ է յիս զօրութեամբ: 29:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԹ. 27:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յայնժամ պատասխանի ետ Պետրոս եւ ասէ ցնա. Աւասիկ մեք թողաք զամենայն եւ եկաք զկնի քո. արդ զի՞նչ լինիցի մեզ: Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ասեմ ձեզ. զի դուք որ եկիք զկնի իմ, ի միւսանգամ գալստեան՝ յորժամ նստցի Որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, նստջիք եւ դուք յեր-

կոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգն Իսրայելի: Եւ ամենայն որ ոք եթող զտուն կամ զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ զմայր կամ զկին կամ զորդիս կամ զագարակս վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ եւ զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ: Բազումք եղիցին առաջինք յետինք, եւ յետինք առաջինք: 30:

---

Ապա

**Գորդիոսի վկային: Եւ Պօղիքտոսի եւ Գրիգորիսի:**

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԺԵ. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 1:

Քանզի գիտեմք զի եթէ երկրաւոր տաճար շինուածոյս մերոյ քակտեսցի, շինած յԱստուծոյ ունիմք՝ տաճար առանց ձեռագործի, յաւիտենական յերկինս: Եւ ընդ այս տաղտկամք. քանզի զբնակութիւն երկնից փափագեմք զգենուլ. միայն թէ յորժամ զգենուցումքն՝ ոչ մերկ գտանիցիմք: Քանզի որ եմք ընդ յարկաւս ընդ այսուիկ՝ տաղտկամք ծանրացեալք. զի ոչ կամիմք մերկանալ, այլ զայն ի վերայ այսր զգենուլ, զի ընկղմեսցի մահկանացուս ի կենաց անտի: Այլ որ յաջողէն մեզ ի սոյն՝ Աստուած է, որ ետ մեզ զառհաւատչեայ հոգւոյն: 5:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի յայնէն:



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԻԱ. 12:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Բայց յառաջ քան զայս ամենայն՝ մխեսցեն զձեռս իւրեանց ի ձեզ եւ հալածեսցեն. մատնեսցեն ի ժողովուրդս եւ ի բանտս, եւ տանիցին առաջի դատաւորաց եւ թագաւորաց վասն անուան իմոյ. եւ լինիցի ձեզ այն ի վկայութիւն: Արդ՝ դիք ի սիրտս ձեր՝ մի յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի: Զի ես տաց ձեզ բերան եւ իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր: Մատնեսջիք եւ ի ծնողաց եւ յեղբարց եւ յազգականաց եւ ի բարեկամաց, եւ սպանանիցեն ի ձէնջ: Եւ եղիջիք ատեցեալ յամենեցունց վասն անուան իմոյ. եւ մազ մի ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ: Եւ համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր: 19:

---

Ապա

**Եւգինեայ կուսին եւ հօր նորա Փիլիպպոսի եւ մօր նորա Կղոդեայ, եւ երկուց եղբարց նորա Սերգեայ եւ Ապիտոնի, եւ երկուց ներքինեաց:**

Ժամամուտ. Հարսնացեալք Քրիստոսի երկնաւոր փեսային, դստերք վերին Սիոնի. խնդրեցէք ի Քրիստոսէ զհաշտութիւն եւ զմեծ զողորմութիւն:

Սղ. ԽԴ. Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա. եւ զընկերս նորա տարցին նմա:

Բղխեաց սիրտ իմ բան բարի. եւ ասեմ զգործս իմ թագաւորի:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԵ. 30:

Աղաչեմ զձեզ, եղբարք, ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ սիրով Հոգւոյն, պատերազմակից լինել ինձ յաղօթս վասն իմ առ Աստուած: Զի ապրեցայց յապըս-

տամբացն՝ որ ի Հրէաստանի են. եւ պաշտօնն իմ որ յԵրուսաղէմ, ընդունելի լիցի սրբոցն: Զի խնդութեամբ եկեալ առ ձեզ ի կամս Աստուծոյ, հանգեայց ընդ ձեզ: Եւ Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ ամենեսին. ամէն: 33:

Ալէլուիա, ալէլուիա. Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ. ի հանդերձս ոսկէհուռն զարդարեալ եւ պաճուճեալ:

Սրբոյ Աւատարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԲ. 32:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն: Վաճառեցէք զինչս ձեր, եւ տուք ողորմութիւն. եւ արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս, ուր ոչ գող մերձենայ եւ ոչ ցեց ապականէ: Զի ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին: Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս եւ ճրագունք լուցեալք: Եւ դուք նմանողք մարդկան՝ որ ակն ունիցին տեառն իւրեանց՝ թէ երբ դառնայցէ ի հարսանեաց. զի յորժամ գայցէ եւ բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա: Երանի՛ իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտացէ արթունս. ամէն ասեմ ձեզ՝ զի գօտի ընդ մէջ ածցէ եւ բազմեցուսցէ զնոսա, եւ անցեալ պաշտիցէ զնոսա: Եւ եթէ յերկրորդ կամ յերրորդ պահու եկեսցէ եւ գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ: Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն յորում պահու գող գայ՝ հսկէր, չտայր թոյլ ական հատանել ի տան իւրում: Եւ դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ Որդի մարդոյ: 40:

---

Ապա

Մարութայի եպիսկոպոսին:

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ, ծառայ Քրիստոսի ո՛վ երանելիդ ի հարս սուրբ հայրապետ: Քանզի քոյ վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:



Սղ. ԻԵ. Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քոյ. եւ զտեղի յարկի փառաց քոց:

Դատ արա ինձ, Տէր, զի ես յանբծութեան իմում գնացի. ի Տէր յուսացայ, զի մի եղէց հիւանդ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 10:

Այլ դու զհետ եկիր վարդապետութեան իմոյ, առաջնորդութեան, յօժարութեան, հաւատոց, երկայնմտութեան, սիրոյ, համբերութեան, հալածանաց, չարչարանաց. որպիսիք եղեն ինձ յԱնտիոք եւ յԻկոնիոն եւ ի Լիւստրոս, որպիսի հալածանաց համբերի, եւ յամենայնէ փրկեաց զիս Տէր: Եւ ամենեքին՝ որ կամիցին աստուածպաշտութեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս, ի հալածանս կացցեն: Այլ մարդք չարք եւ կախարդք յառաջ եկեսցեն ի չար անդր, մոլորեալք եւ մոլորեցուցանիցեն: Այլ դու հաստատուն կաց՝ յոր ուսարդ եւ հաւատարիմ եղեր: Գիտես ուստի ուսար. զի ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որ կարող են իմաստուն առնել զքեզ ի փրկութիւն ի ձեռն հաւատոցն՝ որ ի Քրիստոս Յիսուս: 15: .

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ժ. 16:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, եւ որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ. եւ որ զիս անարգէ՝ զառաքիչն իմ անարգէ. եւ որ ինձ լսէ՝ լսէ այնմիկ որ զիսն առաքեաց: Դարձան եօթանասուն եւ երկուքն խնդութեամբ եւ ասեն. Տէ՛ր, եւ դեւք հնազանդին մեզ յանուն քո: Եւ ասէ ցնոսա. Տեսանէի

զսատանայ անկեալ յերկինից իբրեւ զփայլակն: Ընդ եւտու ձեզ իշխանութիւն կոխել զօձս եւ զկարիճս եւ զամենայն զօրութիւն թշնամւոյն, եւ ձեզ ոչ ինչ մեղանչեցուն: Բայց ընդ այն մի՛ խնդայք՝ եթէ այսք հնազանդին ձեզ, այլ խնդացէք զի անուանք ձեր գրեալ են յերկինս: 20:

---

## Ընդ

### եւգինէոսի, Մակարիոսի: եւ վաղերիոսի, կանդիտոսի եւ Ակիւղասայ:

Յովհաննու. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ճԺե. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ՛ի Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

՛Աւետացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

Պօղոսի առաքելոյն ի կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ժ. 3:

Ն՛ղբարք՝ զի թէպէտ եւ մարմնով գնամք, այլ ոչ եթէ ըստ մարմնոյ զինուորիմք: Զի զէն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զօրաւոր, Աստուծոյ, առ ի քակելոյ զամուրս. զխորհուրդս քակեմք, եւ զամենայն բարձրութիւն հպարտացեալ ի վերայ գիտութեանն Աստուծոյ. եւ գերեմք զամենայն միտս ի հնազանդութիւն Քրիստոսի: Եւ ի պատրաստի ունիմք խնդրել զվրէժ ամենայն անհնազանդութեան՝ յորժամ ձեր եւս հնազանդութիւնդ կատարեսցի: 6:

Ընդ՝ Ալէլուիա, ալէլուիա. Մարգարէութեամբ է յայնէն:



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ժ. 23:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Եւ յորժամ հալածիցեն զձեզ ի քաղաքիս յայսմիկ՝ փախիջիք յայլ. եւ եթէ յայնմանէ հալածիցեն զձեզ՝ փախիջիք ի միւս. ամէն ասեմ ձեզ՝ ոչ սպառեսջիք զքաղաքս Իսրայելի՝ մինչեւ եկեսցէ Որդի մարդոյ: Ոչ է աշակերտ առաւել քան զվարդապետ, եւ ոչ ծառայ մեծ քան զտէր իւր: Շատ իցէ աշակերտին՝ եթէ եղիցի իբրեւ զվարդապետ իւր, եւ ծառային՝ իբրեւ զտէր իւր: Եթէ զտանուտէրն բեեղզեբուղ կոչեցին, ո՛րչափ եւս առաւել զընտանիս նորա: Մի՛ այսուհետեւ երկնչիցիք ի նոցանէ. զի ոչ ինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի: Զոր ասեմ ձեզ ի խաւարի՝ ասացէք ի լոյս. եւ զոր լսէք յունկանէ՝ քարոզեցէք ի վերայ տանեաց. Եւ մի՛ երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ զոգի ոչ կարեն սպանանել. այլ երկերուք դուք առաւել յայնմանէ՝ որ կարող է զոգի եւ զմարմին կորուսանել ի գեհենի: Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանկի միոջ վաճառին, եւ մի ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց ՛օր ձերոյ: Այլ ձեր եւ ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է: Եւ արդ՝ մի՛ երկնչիցիք՝ զի լաւ էք քան զբազում ճնճղուկս: Ամենայն որ խոստովանեսցի ինձ առաջի մարդկան, խոստովանեցայց եւ ես զնմանէ առաջի ՛օր իմոյ՝ որ յերկինս է: Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց եւ ես զնա առաջի ՛օր իմոյ՝ որ յերկինս է: 33:



ՅԲ. ՓԵՏՐՈՍԵՐԷ

# Ի ԳԱԼՍՏԵԱՆ ԱՍՏՈՒԱԾՈՐԴՈՒՈՅՆ

## ՔԱՀԱՍՆՕՐԵԱՅ Ի ՏԱՃԱՐՆ

---

Գ. Ա. Ա. Ա

զամենայն զբանսն ի սրտի իւրում: Եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ եւ հասակաւ, եւ շնորհօք յԱստուծոյ եւ ի մարդկանէ: 52:

---

## ԿԻՐԱԿԷ

### ԱՌԱՋԱԻՈՐԻ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. կԳ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց, զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 15:

Փութասջիր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ամօթոյ, ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեան: Այլ ի պղծոց եւ ի սնոտի խօսից մերժեսջիր. զի առաւել յառաջ գայցեն յամբարշտութիւնս. եւ բանք նոցա իբրեւ զքաղցկեղ ճարակ գտանեն. որոց սակի են Հիմենոս եւ Փիղետոս, որք վրիպեցան ի ճշմարտութենէ, եւ ասեն եթէ Յարութիւն մեռելոց արդէն իսկ եղեալ է. եւ կործանեն զհաւատս ոմանց: Այլ հաստատուն հիմն Աստուծոյ կայ եւ ունի զկնիքս զայս, եթէ Ծանեաւ Տէր զայնոսիկ՝ որ իւրն են, եւ ի բաց լիցի յանիրաւութենէ ամենայն՝ որ անուանէ զանուն Տեառն: Այլ ի տան մեծի ոչ միայն են անօթք ոսկեղէնք եւ արծաթեղէնք, այլ եւ փայտեղէնք եւ խեցեղէնք. են՝ որ ի պատուի են, եւ են՝ որ յանարգութեան: Եթէ ոք սրբեսցէ զանձն իւր յայնպիսեաց անտի, եղիցի անօթ պատուական սրբեալ եւ պիտանի Տեառն իւրում յամենայն գործս



բարութեան պատրաստեալ: Այլ յերիտասարդական ցանկութեանց փախիր. եւ երթ զհետ արդարութեան, զհաւատոց, զսիրոյ, զխաղաղութեան, զսրբութեան ընդ այնոսիկ՝ որ կարդան զանուն Տեառն սուրբ սրտիւք: Այլ ի յիմար եւ յանխրատ խնդրոց հրաժարեա. գիտասջիր թէ անտի ծնանին կռիւք: Բայց ծառայի Տեառն ոչ է պարտ կռուել, այլ հեզ լինել առ ամենեսին, ուսուցիչ, անոխակալ: Հանդարտութեամբ խրատել զհեկառակողսն. թերեւս տացէ նոցա Աստուած ապաշխարութիւն ի գիտութիւն ճշմարտութեան, եւ սթափեսցին յորոգայթից սատանայի, որսացեալք ի նմանէ ի նորա կամս: 26:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Զ. 15:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Իբրեւ գիտաց եթէ գալոց են յափշտակել զնա՝ զի արասցեն զնա թագաւոր, գնաց դարձեալ ի լեառնն միայն: Եւ իբրեւ երեկոյ եղեւ, իջին աշակերտքն նորա ի ծովեզրն: Եւ մտեալ ի նաւ՝ գնացին յայնկոյս ծովուն ի Կափառնաում. եւ իբրեւ նսեմացաւ, եւ չեւ եւս եկեալ էր առ նոսա Յիսուս, եւ ծովն ի սաստիկ հողմոյ շնչելոյ յուզէր: Եւ վարեալ իբրեւ ասպարէզս քսան եւ հինգ կամ երեսուն, տեսանէին զՅիսուս՝ զի գնայր ի վերայ ծովուն եւ մերձ էր ի նաւն, զարհուրեցան յոյժ: Նա ասէ ցնոսա. Ես իմ, մի՛ երկնչիք: Եւ կամէին զնա ընդունել ի նաւն. եւ վաղվաղակի եհաս նաւն յերկիրն՝ յոր երթային: 21:

---

Եւ ապա պահք Առաջաւորին, եւ տօնք ոչ լինին:

---

## ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ

Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն
եւ զողորմութիւն. որ յամենայնի ես դու կարող մար-
դասէր:

Սղ. ՃԽԴ. Արքայութիւն քո արքայութիւն ամենայն
յաւիտենից. եւ տէրութիւն քո յազգէ մինչեւ յազգ:
Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր. եւ արդար
է յամենայն գործս իւր:

Յակովբու առաքելոյն ի Կաթողիկեայց թղթոյն է ընթեր-
ցուածս. Գլ. Ա. 1:

Յակովբոս Աստուծոյ եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի
ծառայ. երկոտասան ազգացդ որ ի սփիւռսդ էք, ողջոյն:
Ամենայն ուրախութեան արժանի համարիջիք, եղբարք,
յորժամ ի պէսպէս փորձութեանց ի մէջ անկանիջիք: Գի-
տասջիք զի հանդէս ձերոց հաւատոցն յօրինեալ գործէ
զհամբերութիւն: Իսկ համբերութիւնն գործ կատարեալ
ունիցի, զի իցէք ողջանդամք, եւ կատարեալք, եւ ոչ իւիք
նուազեալք: Ապա թէ ոք ի ձէնջ իցէ նուազեալ յիմաս-
տութենէ, խնդրեսցէ յԱստուծոյ, որ տայն ամենայնի առա-
տապէս, եւ ոչ նախատէ. եւ տացի նմա: Բայց խնդրեսցէ
հաւատովք. եւ մի՛ երկմտեսցէ. զի որ երկմիտն է, նման է
հողմակոծեալ եւ տատանեալ ալեաց ծովու: Մի՛ ակնկալցի
մարդն այն առնուլ ինչ յԱստուծոյ: Օի այր երկմիտ առանց
հաստատութեան է յամենայն ճանապարհս իւր: Պարծեսցի
եղբայր խոնարհ ի բարձրութիւն իւր, եւ որ մեծատունն
իցէ՝ ի խոնարհութիւն իւր. քանզի իբրեւ զծաղիկ խոտոյ
անցցէ: Օի ծագեաց արեւ հանդերձ խորշակաւ, եւ
ցամաքեցոյց զխոտն, եւ թօթափեցաւ ծաղիկն նորա, եւ
կորեաւ վայելչութիւն երեսաց նորա. նոյնպէս եւ մե-
ծատունն հանդերձ շահիւքն իւրովք թարշամեսցի: Երա-
նեալ է այր՝ որ համբերիցէ փորձանաց. զի եթէ ընտիր
եւս գտանիցի, առցէ զպսակն կենաց՝ զոր խոստացաւ սիրե-
լեաց իւրոց: 12:

Ալէլուիա, ալէլուիա. Եկայք ցնծասցուք ի Տէր. աղա-
ղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր:



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.
Գլ. Ը. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Այլ իբրեւ էջ ի լեռնէ անտի, գնացին զկնի նորա ժո-
ղովուրդք բազումք: Եւ ահա մատուցեալ բորոտ մի, երկիր
պագանէր նմա եւ ասէր. Տէր, եթէ կամիս՝ կարող ես զիս
սրբել: Ձգեաց զձեռն իւր եւ հասոյց ի նա Յիսուս եւ ասէ.
Կամիմ սրբեաց. եւ վաղվաղակի սրբեցաւ ի նմանէ բորոտու-
թիւնն: Եւ ասէ ցնա Յիսուս. Օգոյշ լեր՝ մի՛ ումեք ասի-
ցես. այլ երթ ցոյց զանձն քո քահանային. եւ մատո զպա-
տարագն, զոր հրամայեաց Մովսէս, ի վկայութիւն նոցա: 4:

---

## ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մար-
մնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր եւ
լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ
Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ
զողորմութիւն. որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. Ե. Երկիր պագից ի տաճար սուրբ քո. երկիւղիւ
քո Տէր:
Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քոյ Տէր. զի օրհ-
նեսցես դու զարդարն:

Յակովբու առաքելոյն ի Կաթողիկեայց թղթոյն է ընթեր-
ցուածս. Գլ. Ա. 13:

Մի ոք որ ի փորձութեան իցէ, ասիցէ թէ յԱստուծոյ
փորձիմ. զի Աստուած անփորձ է չարեաց, փորձէ նա եւ ոչ
զոք: Իւրաքանչիւր ոք փորձի առ ի յիւրոցն ցանկութեանց
ձգեալ եւ պատրեալ: Ապա այնուհետեւ ցանկութիւնն
յղացեալ՝ զմեզս ծնանի, եւ մեղքն կատարեալ՝ զմահ ծնա-
նին: Մի՛ խաբիք, եղբարք իմ սիրելիք. զի ամենայն տուրք
բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են
իջեալ առ ի Հօրէն լուսոյ, յորում չիք փոփոխումն եւ կամ
շրջելոյ ստուեր: Կամեցեալ ծնաւ զմեզ բանիւ ճշմարտու-

թեանն՝ լինել մեզ պտուղ ինչ ստացուածոց նորա: Գի-
տասջիք, եղբարք իմ սիրելիք. եղիցի ամենայն մարդ արագ
առ ի լսել, եւ ծանր առ ի խօսել, եւ ծանր առ ի բարկա-
նալ: Զի բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ
ոչ գործէ: Որով ի բաց թօթափեալ զամենայն աղտեղու-
թիւնս եւ զյաւելուածս չարեաց, հեզութեամբ ընդունիջիք
զբանն ընդաբոյս, որ կարողն է կեցուցանել զոգիս ձեր: Լի-
նիջիք առնելիք բանին, եւ մի՛ լսելիք միայն համարեսջիք
զանձինս: Զի թէ ոք լսող միայն իցէ բանին եւ ոչ
առնելի, նման է նա մարդոյ՝ որ պշուցեալ հայիցի ընդ
երեսս իւր՝ որ ծնանիցին ի հայելւոջ. զի հայեցեալ ետես
զինքն եւ զանց արար, եւ անդէն մոռացաւ թէ որպիսի ոք
էր: Իսկ որ յառեալ ի կատարեալ օրէնս ազատութեանն
հայիցի եւ ի նմին կացցէ, ոչ եղեւ նա լսող մոռացութեան,
այլ առնելի գործոյն. նա յառնելն իւրում լիցի երանելի:
Եթէ ոք կամիցի կրօնաւոր լինել, եւ ոչ սանձահարիցէ
զլեզու իւր, այլ զբաղեցուցանիցէ զսիրտն իւր, այնպիսւոյն
վայրապար է կրօնաւորութիւնն: Կրօնաւորութիւն սուրբ
եւ անարատ առ ի յԱստուծոյ եւ ի Հօրէ՝ այս է, այցելու
լինել որբոց եւ այրեաց ի նեղութեան իւրեանց, անարատ
պահել զանձն յաշխարհէ: 27:

Ալէլուիա, ալէլուիա. Երգեցէք Տեառն երգ նոր.
երգեցէք Տեառն ամենայն երկիր. երգեցէք Տեառն եւ
բարձր արարէք զանուն նորա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ը. 5:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ մտեալ ի Կափառնաում, մատեաւ առ նա հա-
րիւրապետ մի, աղաչէր զնա, եւ ասէր. Տէ՛ր, մանուկ իմ
անկեալ կայ ի տան անդամալոյծ՝ չարաչար տանջեալ: Ասէ
ցնա Յիսուս. Ես եկից եւ բժշկեցից զնա: Պատասխանի ետ
հարիւրապետն եւ ասէ. Տէ՛ր, չեմ բաւական՝ եթէ ընդ
յարկաւ իմով մտանիցես. այլ ասա բանիւ, եւ բժշկեսցի
մանուկն իմ: Քանզի եւ ես այր մի եմ ընդ իշխանու-
թեամբ, ունիմ ընդ ինեւ զինուորս. ասեմ սմա՝ Երթ, եւ



երթայ, եւ այլում թէ Եկ, եւ գայ, եւ ծառայի իմում
թէ Արա զայս, եւ առնէ: Իբրեւ լուաւ Յիսուս՝ զարմացաւ,
եւ ասէ ցայնոսիկ որ զհետն երթային. Ամէն ասեմ ձեզ եւ
ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս գտի երբեք: Բայց ասեմ
ձեզ, զի բազումք յարեւելից եւ յարեւմտից եկեսցեն եւ
բազմեսցին ընդ Աբրահամու եւ ընդ Սահակայ եւ ընդ
Յակովբու յարքայութեան երկնից: Եւ որդիքն արքայու-
թեան ելցեն ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրճել
ատամանց: Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն. Երթ եւ
որպէս հաւատացերդ՝ եղիցի քեզ. եւ ողջացաւ մանուկն
նորա յաւուր յայնմիկ: Եւ եկեալ Յիսուս ի տուն Պե-
տրոսի, ետես զի զոքանչ նորա անկեալ դնէր տապացեալ:
Կալաւ զձեռանէ նորա, եւ եթող զնա ջերմն. յոտն եկաց
եւ պաշտէր զնոսա: Իբրեւ եղեւ երեկոյ՝ մատուցին առ նա
դիւահարս բազումս, եւ եհան զայսսն բանիւ, եւ զամենայն
հիւանդսն բժշկեաց: Զի լցցի բանն՝ որ ասացաւ ի ձեռն
Եսայեայ մարգարէի. Նա զհիւանդութիւնս մեր վերացոյց,
եւ զցաւս մեր եբարձ: 17:

---

## ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխա-
ղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ
աղաչեմք:

Սղ. 26. Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ
յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհա-
նապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր
համբարձի զանձն իմ:

Յակովբու առաքելոյն ի Կաթողիկեայց թղթոյն է ընթեր-
ցուածս. Գլ. Բ. 1:

Եղբարք իմ, մի՛ աչառութեամբ ունիցիք զհաւատսն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ Տէրն է փառաց:
Եթէ մտանիցէ ի ժողովուրդ ձեր այր՝ որ ունիցի մատանի
ոսկի եւ հանդերձս պայծառս, մտանիցէ անդր եւ աղքատ ոք

ի հանդերձս ազտեղիս, հայիցիք ընդ այն՝ որ ունիցի զհան-
դերձսն պայծառս, եւ ասիցէք եթէ Դու նիստ ասա պա-
տուով. եւ ցաղքատն ասիցէք եթէ Յոտն կաց դու այտի,
կամ թէ եկ նիստ առ պատուանդանիս իմում: Եւ ոչ
խղճիցէք յանձինս ձեր, եւ լինիցիք դատաւորք չարեացն
խորհրդոց: Լուարուք ինձ, եղբարք իմ սիրելիք, ո՞չ ապաքէն
Աստուած ընտրեաց զաղքատս աշխարհիս, որ են մեծա-
տունք հաւատովք եւ ժառանգաւորք արքայութեանն՝ զոր
խոստացաւ սիրելեաց իւրոց. եւ դուք անարգէք զաղքատս:
Ո՞չ մեծատունք յազթահարեն զձեզ, եւ նոքա քարշեն
զձեզ ի դատաստան: Ո՞չ նոքա հայհոյեն զբարւոք անունն՝
որ կոչեցեալ է ի վերայ ձեր: Ապա թէ զօրէնսն կատարիցէք
զարքունականս ըստ գրոց, եթէ Սիրեսցես զընկեր քո իբրեւ
զանձն քո, բարւոք առնէք: Իսկ եթէ աչառիցէք, մեղս
գործէք, յանդիմանեալք յօրինացն իբրեւ օրինազանցք: Որ
ոք զամենայն օրէնսն պահիցէ, եւ միով իւիք ինչ գթիցէ,
եղեւ ամենայն օրինացն պարտապան: Զի որ ասացն՝ թէ
Մի սպանանիցես, ասաց թէ եւ Մի շնայցես. զի եթէ
սպանանիցես ոչ, բայց շնայցես, եղեր յանցաւոր օրինացն:
Այնպէս խօսեցարուք եւ այնպէս արարէք, որպէս զի ազա-
տութեան օրինօքն իցէք դատելոց: Զի անողորմ դատաս-
տան լինելոց է այնմ՝ որ ոչ առնիցէ զողորմութիւն. քանզի
բարձր ի գլուխ պարծի ողորմութիւն առ դատաստանաւն: 13:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԳ. 22:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ շրջէր ընդ քաղաքս եւ ընդ գեօղս, ուսուցանէր.
եւ ճանապարհ արարեալ Յերուսաղէմ, ասէ ոմն ցնա.
Տէր, եթէ սակա՞ւք իցեն, որ ապրելոց իցեն: Եւ նա ասէ
ցնոսա. Ջանացարուք մտանել ընդ դուռն նեղ. ասեմ ձեզ՝
զի բազումք խնդրեսցեն մտանել եւ ոչ կարասցեն: Յորմէ
հետէ մտցէ տանուտէրն եւ փակեսցէ զդուռնն, եւ սկսա-
նիջիք կալ արտաքոյ եւ բախել զդուռնն, եւ ասել. Տէր
Տէր, բաց մեզ. եւ պատասխանի տուեալ ասիցէ ձեզ. Ոչ



գիտեմ զձեզ ուստի էք: Յայնժամ սկսանիջիք ասել.
Կերաք առաջի քո եւ արբաք, եւ ի հրապարակս մեր ուսու-
ցեր: Եւ ասիցէ. Ասեմ ձեզ, ոչ գիտեմ զձեզ ուստի էք. ի
բաց կացէք յինէն ամենայն մշակքդ անիրաւութեան: Ընդ
եղիցի լալ եւ կրճել ատամանց, յորժամ տեսանիցէք
զԱբրահամ եւ զԻսահակ եւ զՅակոբ եւ զամենայն մար-
գարէս յարքայութեան Աստուծոյ, եւ զձեզ հանեալ ար-
տաքս: Եւ եկեսցեն յարեւելից եւ յարեւմտից եւ ի հիւսիսոյ
եւ ի հարաւոյ, եւ բազմեսցին յարքայութեան Աստուծոյ:
Եւ ահա իցեն յետինք՝ որ եղիցին առաջինք, եւ իցեն
առաջինք՝ որ լինիցին յետինք: Ի նմին աւուր մատեան
ոմանք փարիսեցիք, եւ ասեն ցնա. Ել եւ գնա աստի, զի
Հերովդէս կամի սպանանել զքեզ: Եւ ասէ ցնոսա. Եր-
թայք՝ ասացէք աղուեսուն այնմիկ. ահաւասիկ հանեմ
դեւս, եւ բժշկութիւնս կատարեմ այսօր եւ վաղիւ. եւ
յերիր աւուր կատարիմ: Բայց պարտ է այսօր եւ վաղիւ եւ
ի միւսում աւուր գնալ. զի ոչ է մարթ մարգարէի կորնչել
արտաքոյ քան զԵրուսաղէմ: Երուսաղէմ, Երուսաղէմ, որ
կոտորէիր զմարգարէսն, եւ քարկոծ առնէիր զառաքեալսն
առ քեզ. քանի՞ցս անգամ կամեցայ ժողովել զորդիս քո,
որպէս հաւ զձագս իւր ընդ թեւովք, եւ ոչ կամեցարուք:
Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր: Բայց ասեմ ձեզ, թէ
ոչ եւս տեսանիցէք զիս, մինչեւ ասիցէք՝ Օրհնեալ եկեալն
յանուն Տեառն: 35:

---

## ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մար-
մնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր եւ
լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ
Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն
եւ զողորմութիւն. որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. ՂԸ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր
պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին
ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

Յակովբու առաքելոյն ի Կաթողիկեայց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 14:

Զի՞նչ օգուտ իցէ, եղբա՛րք իմ, եթէ ասիցէ ոք հաւատս ունել, եւ գործս ոչ ունիցի. միթէ կարիցե՞ն հաւատքն ապրեցուցանել զնա: Եթէ եղբայր ոք կամ քոյր իցեն մերկ կամ կարօտեալ աւուրն կերակրոյ, ասիցէ ոք ի ձէնջ ցնոսա. Երթայք խաղաղութեամբ, ջեռարուք եւ յագեցարուք. եւ տայցէք ոչ նոցա զպէտս մարմնոյն, զի՞նչ օգուտ իցէ: Սոյնպէս եւ հաւատք՝ եթէ գործս ոչ ունիցին, մեռեալ են առանձինն: Այլ թերեւս ասիցէ ոք, եթէ Դու հաւատս ունիս, եւ ես գործս ունիմ. ցոյց ինձ զհաւատսն քո առանց գործոց, եւ ես ցուցից քեզ ի գործոց իմոց զհաւատս: Դու հաւատաս զի մի է Աստուած, բարւոք առնես. եւ դեւք հաւատան եւ սարսեն: Կամի՞ս գիտել, ո՛վ մարդ սնոտի, զի հաւատք առանց գործոց դատարկ են: Աբրահամ հայր մեր ո՞չ ապաքէն ի գործոց արդարացաւ, հանեալ ի սեղան զորդին իւր զԻսահակ պատարագ: Տեսանես, զի հաւատքն եղեն գործակից գործոց նորա. եւ ի գործոց անտի հաւատքն կատարեցան: Եւ կատարեցաւ գիրն՝ որ ասէ. Հաւատաց Աբրահամ յԱստուած, եւ համարեցաւ նմա յարդարութիւն, եւ կոչեցաւ բարեկամ Աստուծոյ: Տեսանէ՞ք, զի ի գործոց արդարանայ մարդ, եւ ոչ ի հաւատոց միայն: Սոյնպէս եւ Բախաբ պոռնիկ ո՞չ ապաքէն ի գործոց արդարացաւ, ընկալեալ զլրտեսսն, եւ ընդ այլ ճանապարհ արձակեաց: Զոր օրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է, սոյնպէս եւ հաւատք առանց գործոց մեռեալ են: 26:

Ալէլուիա. ալէլուիա. Բարձր արարից զընտրեալն ի ժողովրդենէ իմմէ. գտի զԴաւիթ ծառայ իմ, եւ իւղով սրբով իմով օծի զնա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.
Գլ. Ը. 28:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ իբրեւ անց յայնկոյս յերկիրն Գերգեսացւոց, պատահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք ի գերեզմանացն,



չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ: Եւ ահա աղաղակեցին եւ ասեն. Զի՞ կայ մեր եւ քո, Յիսուս Որդի Աստուծոյ, եկիր տարաժամ տանջել զմեզ: Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից արօտական: Եւ դեւքն աղաչէին զնա եւ ասէին. Եթէ հանես զմեզ աստի, հրաման տուր մեզ երթալ յերամակ խոզիցն: Եւ ասէ ցնոսա. Երթայք. եւ նոքա ելեալ գնացին յերամակն խոզից. եւ դիմեաց ամենայն երամակն ի դարէ անտի ի ծով, եւ մեռան ի ջուրսն: Եւ խոզարածքն փախեան, եւ երթեալ ի քաղաքն՝ պատմեցին զամենայն, եւ զիրս դիւահարացն: Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի. իբրեւ տեսին զնա՝ աղաչեցին զի գնասցէ ի սահմանաց նոցա: 34:

---

## ՈՒՐԲԱԹ

### Յիշատակ Յովնանու մարգարէին:

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. Ղէ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցիք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ը. 1:

Թէ այդպէս իցէ, ոչ ինչ դատապարտութիւն է այնոցիկ՝ որ ի Քրիստոս Յիսուս, որ ոչ գնան ըստ մարմնոյ: Զի օրէնք հոգւոյն կենաց ի Քրիստոս Յիսուս ազատեցին զիս յօրինաց մեղացն եւ մահու: Զի որ անհնարինն էր օրինացն՝ որով տկարանայրն մարմնով, Աստուած զՈրդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնով մեղաց եւ վասն մեղաց, եւ դատապարտեաց զմեղս ի մարմնի անդ: Զի արդարութիւն օրինացն կատարեսցի ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ գնայցեմք, այլ ըստ հոգւոյն: Զի որք ըստ մարմնոյն

են՝ զմարմնոյն խորհին, եւ որք ըստ հոգւոյն՝ զհոգւոյն։ Զի խորհուրդ մարմնոյ՝ մահ է. եւ խորհուրդ հոգւոյն, կեանք եւ խաղաղութիւն։ Քանզի խորհուրդ մարմնոյ թշնամութիւն է յԱստուած, զի օրինացն Աստուծոյ ոչ հնազանդի. նա եւ կարէ իսկ ոչ։ Զի որ մարմնովն են՝ Աստուծոյ հաճոյ լինել ոչ կարեն։ Բայց դուք ոչ էք մարմնով, այլ հոգւով, եթէ իցէ Հոգին Աստուծոյ ի ձեզ բնակեալ. ապա եթէ ոք զՀոգի Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա։ Իսկ եթէ Քրիստոս ի ձեզ է, ապա մարմին մեռեալ է վասն մեղաց. եւ հոգին կենդանի է վասն արդարութեան։ Եթէ Հոգի այնորիկ՝ որ յարոյցն զՅիսուս ի մեռելոց, բնակեալ է ի ձեզ, ապա եւ որ յարոյցն զՅիսուս Քրիստոս ի մեռելոց՝ կենդանացուսցէ զմահկանացու մարմինս ձեր, բնակեալ Հոգւովն իւրով ի ձեզ։ Այսուհետեւ, եղբարք, պարտապան եմք ոչ մարմնով՝ ըստ մարմնոյ կեալ։ Զի եթէ ըստ մարմնոյ կեցէք, մեռանելոց էք. իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք, կեցջիք։ 13։

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԲ. 38։

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յայնժամ պատասխանի ետուն նմա ոմանք ի դպրացն եւ ի փարիսեցւոց եւ ասեն. Վարդապետ, կամիմք նշան ինչ տեսանել ի քէն։ Նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. Ազգ չար եւ շնացող նշան խնդրէ, եւ նշան մի՛ տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի։ Զի որպէս էր Յովնան ի փոր կիտին զերիս տիւս եւ զերիս գիշերս, նոյնպէս եղիցի եւ Որդի մարդոյ ի սիրտ երկրի զերիս տիւս եւ զերիս գիշերս։ Արք Նինուէացիք յարիցեն ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ, եւ դատապարտեսցեն զսա, զի զղջացան ի քարոզութեանն Յովնանու. եւ արդ աւասիկ մեծ քան զՅովնան է աստ։ Դշխոյն հարաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ, եւ դատապարտեսցէ զսա. զի եկն ի ծագաց երկրի՝ լսել զիմաստութիւնն Սողոմովնի. եւ ահա մեծ քան զՍողոմովն է աստ։ 42։



## ՇԱԲԱԹ

### Սրբոյն Սարգսի զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ ԺԴ զինուորացն։

Ժամամուտ. Զօրական եւ վկայ ճշմարիտ՝ քաջ նահատակդ Քրիստոսի սուրբդ Թէոդորոս, որ փոխանակեցեր զմարմինդ ընդ հոգւոյդ քում փրկանս, եւ ոչ ածեր զմտաւ զսպառնալիսն Մաքսիմիանոսի թագաւորին. այլ վերին ազդեցութեամբն՝ դիտելով զայրեցումն հոգւոց նոցա, վասն այնորիկ լուցեր զտաճար կռոց նոցա։ Արդ ի յաղթող պատերազմի տօնողացս զօր նահատակութեան քոյ՝ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց։

Սղ. Ե. Տէր, որպէս զինու՝ հաճութեամբ քով պսակեսցես զնոսա։

Բանից իմոց ունկն դիր Տէր. եւ ի միտ առ զաղաղակ իմ։

Պօղոսի առաքելոյն յԵփեսացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Զ. 10։

Այսուհետեւ զօրացարուք Տերամբ եւ կարողութեամբ զօրութեան նորա. եւ զգեցարուք զսպառազինութիւն Աստուծոյ, զի կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի։ Զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս եւ ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այսս չարութեան որ ի ներքոյ երկնից։ Վասն այսորիկ առէք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիջիք ի դիմի հարկանել չարին յաւուրն չարութեան։ Եւ իբրեւ զամենայն ինչ կատարիցէք, հաստատուն կացէք, զտեղի կալջիք, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, եւ զգեցեալ զզրահսն արդարութեան, եւ ագուցեալ զոտս պատրաստութեամբ աւետարանին խաղաղութեան։ Եւ ի վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոց, որով կարող լինիջիք զամենայն նետս մուխս չարին շիջուցանել։ Եւ առէք զսաղաւարտն փրկութեան եւ զսուսեր հոգւոյն՝ որ է բանն Աստուծոյ։ 17։

Ալէլուիա, Ալէլուիա. Մարտիրոսաց ի Յայնէն։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԻԱ. 10:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յայնժամ ասէ ցնոսա. Յարիցէ ազգ յազգի վերայ, եւ թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ: Եւ շարժմունք մեծամեծք, եւ ի տեղիս տեղիս սովք եւ սրածութիւնք, եւ եղիցին արհաւիրք եւ նշանք մեծամեծք յերկնից: Բայց յառաջ քան զայս ամենայն, մխեսցեն զձեռս իւրեանց ի ձեզ եւ հալածեսցեն. մատնեսցեն ի ժողովուրդս եւ ի բանտս, եւ տանիցին առաջի դատաւորաց եւ թագաւորաց վասն անուան իմոյ. եւ լինիցի ձեզ այն ի վկայութիւն: Արդ՝ դիք ի սիրտս ձեր՝ մի՛ յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի: Զի ես տաց ձեզ բերան եւ իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր: Մատնեսջիք եւ ի ծնողաց եւ յեղբարց եւ յազգականաց եւ ի բարեկամաց, եւ սպանանիցեն ի ձէնջ: Եւ եղիջիք ատեցեալ յամենեցունց վասն անուան իմոյ. եւ մազ մի ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ: Եւ համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր: 19:

---

## ԿԻՐԱԿԷ

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. ԿԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 1:

Զայս գիտասջիր եթէ յաւուրս յետինս եկեսցեն ժամանակք չարք. եղիցին մարդիկ անձնասէրք, արծա-



թասէրք, հպարտք, ամբարտաւանք, հայհոյիչք, անհաւանք ծնողաց, անշնորհք, անսուրբք, աննուէրք, անգութք, բանսարկուք, անժոյժք, վէսք, անբարեսէրք, մատնիչք, յանդգունք, ամբարհաւաճք, ցանկասէրք մանաւանդ քան աստուածասէրք. որ ունիցին զկերպարանս աստուածպաշտութեան, եւ ի զօրութենէ անտի նորա ուրացեալ իցեն. եւ խորշեսջիր ի նոցանէ: Զի ի նոցանէ են՝ որ մտանեն տանէ ի տուն, եւ գերեն զկանայս շեղջակուտեալս մեղօք՝ վարեալս ի պէսպէս ցանկութիւնս. որ յամենայն ժամ ուսանին, եւ երբեք ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանեն: Այլ որպէս Յանէսն եւ Յամրէս հակառակ կացին Մովսիսի, նոյնպէս եւ սոքա հակառակ կան ճշմարտութեան. մարդք ապականեալք մտօք, անպիտանք ի հաւատս: Այլ ոչ երբեք գայցեն յառաջ ի լաւ անդր. քանզի անմտութիւն սոցա յայտնի լինիցի ամենեցուն, որպէս եւ նոցայն իսկ եղեւ: Այլ դու զհետ եկիր վարդապետութեան իմոյ, առաջնորդութեան, յօժարութեան, հաւատոց, երկայնմտութեան, սիրոյ, համբերութեան, հալածանաց, չարչարանաց. որպիսիք եղեն ինձ յԱնտիոք եւ յԻկոնիոն եւ ի Լիւստրոս, որպիսի հալածանաց համբերի, եւ յամենայնէ փրկեաց զիս Տէր: Եւ ամենեքին՝ որ կամիցին աստուածպաշտութեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս, ի հալածանս կացցեն: Այլ մարդք չարք եւ կախարդք յառաջ եկեսցեն ի չար անդր. մոլորեալք եւ մոլորեցուցանիցեն: Այլ դու հաստատուն կաց՝ յոր ուսարդ եւ հաւատարիմ եղեր: Գիտես ուստի ուսար. զի ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որ կարող են իմաստուն առնել զքեզ ի փրկութիւն, ի ձեռն հաւատոցն՝ որ ի Քրիստոս Յիսուս: 15:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Զ. 22:

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Ի վաղիւ անդր ժողովուրդն՝ որ կայր յայնկոյս ծովուն, տեսանէր թէ այլ նաւ ոչ գոյր անդ՝ բայց միայն ի միոյն, յոր մտին աշակերտքն Յիսուսի. եւ զի չէր մտեալ Յիսուս ընդ

աշակերտսն իւր ի նաւն, բայց միայն աշակերտքն նորա գնացին: Իբրեւ այլ նաւք գային ի Տիբերեայ, մօտ յայն տեղին՝ ուր զհացն կերան: Իսկ իբրեւ ետես ժողովուրդն եթէ Յիսուս ոչ է անդ եւ ոչ աշակերտքն նորա, առին նոքա զնաւսն, եւ եկին ի Կափառնաում խնդրել զՅիսուս: Եւ իբրեւ գտին զնա յայնկոյս ծովուն, ասեն ցնա. Ռաբբի, ե՞րբ եկիր այսր: Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. Ամէն ամէն ասեմ ձեզ. խնդրէք զիս, իբրեւ ոչ եթէ զի նշանս ինչ տեսէք, այլ զի կերայք ի հացէ անտի եւ յագեցարուք: Երթայք գործեցէք մի՛ զկորստական կերակուրն, այլ զկերակուրն, որ մնայ ի կեանսն յաւիտենականս, զոր Որդին մարդոյ տացէ ձեզ. քանզի զնա Հայր կնքեաց Աստուած: Ասեն ցնա. Զի՞նչ առնիցեմք՝ զի զգործսն Աստուծոյ գործեսցուք: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Այս է գործն Աստուծոյ, զի հաւատասջիք յայն՝ որ առաքեացն զիս: Ասեն ցնա. Զի՞նչ նշան առնիցես՝ զի տեսցուք եւ հաւատասցուք, զի՞նչ գործիցես: Հարքն մեր կերան զմանանայն յանապատի անդ, որպէս եւ գրեալ է. Հաց յերկնից ետ նոցա ուտել: Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ Ոչ Մովսէս ետ ձեզ զհացն յերկնից, այլ Հայրն իմ տայ ձեզ զհացն յերկնից զճշմարիտ: Զի հաց յԱստուծոյ է, որ իջանէ յերկնից եւ կեանս տայ աշխարհի: Ասեն ցնա. Տէր, յամենայն ժամ տուր մեզ զհացն զայն: Ասէ ցնոսա Յիսուս. Ես եմ հացն կենաց. որ գայ առ իս՝ ոչ քաղցիցէ, եւ որ հաւատայ յիս՝ ոչ երբեք ծարաւեսցի: Այլ ասացի ձեզ՝ թէ տեսէք զիս, եւ ոչ հաւատայք: Զամենայն՝ զոր տայ ինձ Հայր, առ իս եկեսցէ. եւ որ գայ առ իս, ոչ հանից արտաքս: Զի իջի ես յերկնից՝ ոչ զի զկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս: 38:

---

## ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### Սրբոց Ատովմանց զօրավարացն:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք, բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:



Սղ. Խգ. Ետուր զմեզ որպէս զոչխար ի զենումն. եւ ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ:

Աստուած, ականջօք մերովք լուաք. զոր հարքն մեր պատմեցին մեզ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Դ. 10:

Յամենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմինս մեր կրեսցուք, զի եւ կեանքն Յիսուսի ի մարմինս մեր յայտնեսցին: Քանզի միշտ մեք՝ որ կենդանիքս եմք, ի մահ՝մատնիմք վասն Յիսուսի. զի եւ կեանքն Յիսուսի յայտնի լիցին ի մահկանացու մարմինս մեր: Այսուհետեւ մահ ի մեզ զօրանայ, եւ կեանք ի ձեզ: Արդ ունիմք զնոյն հոգի հաւատոց, որպէս եւ գրեալ է. Հաւատացի, վասն որոյ եւ խօսեցայ. եւ մեք հաւատամք, վասն որոյ եւ խօսիմք իսկ: Զայս գիտեմք եթէ որ յարոյցն զՅիսուս, եւ զմեզ ընդ Յիսուսի յարուսցէ եւ յանդիման կացուսցէ ձեօք հանդերձ: Քանզի ամենայն ինչ՝ վասն ձեր է. զի շնորհքն յաճախեալք ի բազմաց գոհութենէ անտի՝ առաւելեսցին ի փառս Աստուծոյ: Վասն որոյ եւ ոչ ձանձրանամք. այլ թէպէտ եւ արտաքին մարդս մեր ապականի, այլ ներքին մարդն մեր նորոգի օր ըստ օրէ: Զի առժամայն յաճախութիւն թեթեւ նեղութեանս մերոյ ի յաւիտենական առաւելութիւն, զմեծութիւն փառացն գործէ ի մեզ: Քանզի ոչ գիտեմք զերեւելիսս, այլ զաներեւոյթսն. զի երեւելիքս առ ժամանակ մի են, եւ աներեւոյթքն յաւիտենականք: Քանզի գիտեմք զի եթէ երկրաւոր տաճար շինուածոյս մերոյ քակտեսցի. շինած յԱստուծոյ ունիմք՝ տաճար առանց ձեռագործի, յաւիտենական յերկինս: Եւ ընդ այս տաղտկամք, քանզի զբնակութիւն երկնից փափագեմք զգենուլ. միայն թէ յորժամ զգենուցումքն՝ ոչ մերկ գտանիցիմք: Քանզի որ եմք ընդ յարկաւս ընդ այսուիկ՝ տաղտկամք ծանրացեալք. զի ոչ կամիմք մերկանալ, այլ զայն ի վերայ այսր զգենուլ, զի ընկղմեսցի մահկանացուս ի կենաց անտի: Այլ որ յաջողէն մեզ ի սոյն՝ Աստուած է որ ետ մեզ զառհաւատչեայ Հոգւոյն: Ե. 5:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

ԳԼ· ԺԶ· 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Օ՛այս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայթագղիսջիք։ Ի ժողովրդոց իւրեանց Հանիցեն զձեզ, այլ եկեսցէ ժամանակ, զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ։ Եւ զայն արասցեն ընդ ձեզ, քանզի ոչ ծանեան զհա՛յր եւ ոչ զիս։ Այլ եւ զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ եկեսցէ ժամանակ, յիշեցէք թէ ես ասացի ձեզ։ Օ՛այս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի։ 5։

---

## ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

**Սրբոց Սուքիասանց քօշիցն։**

Ժամամո՛ւտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարգասէր։

Աղ· ԽԱ· Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագէ անձն իմ առ քեզ Աստուած։

Ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած հզօր եւ կենդանի. երբ եկից երեւեցայց երեսացդ Աստուծոյ։

Պօղոսի առաքելոյն Հրէայեցւոց Թղթոյն է ընթերցուածս.

ԳԼ· ԺԱ· 32։

Եւ արդ զի՞նչ եւս ասացից. զի չէ բաւական ժամանակս պատմելոյ վասն Գեդէոնին, Բարակայ, Սամփսոնին, Յեփթայայ, Դաւթի եւ Սամուէլի եւ այլոց մարգարէիցն. որք հաւատովք պարտեցին զթագաւորութիւնս, գործեցին զարդարութիւն, հասին աւետեաց, խցին զբերանս առիւծուց, շիջուցին զզօրութիւն հրոյ, ապրեցան ի բերանոյ սրոյ, զօրացան ի տկարութենէ, եղեն զօրաւորք ի պատերազմի, առին զբանակս օտարաց։ Ընկալան կանայք ի յարու-



թենէ զմեռեալս իւրեանց. կէսք կոշկոճեցան, եւ չեւ եւս ընկալան զփրկութիւն, զի լաւագոյն յարութեանն հասանիցեն։ Եւ կէսք զտանջանաց եւ զգանից զփորձ առին, զկապանաց եւ զբանտից։ Վարկոծեցան, սղոցեցան, փորձեցան, սպանմամբ սրոյ մեռան, շրջեցան լեշկմաշկօք եւ մորթովք այծենեօք. կարօտեալք, նեղեալք, չարչարեալք։ Զորս ոչ արժէ աշխարհս, յանապատի մնլորեալք եւ ի լերինս եւ յայրս եւ ի փապարս երկրի։ Եւ սոքա ամենեքին վկայեալք ի հաւատոցն, չեւ եւս ընկալան զաւետիսն, Աստուածոյ վասն մեր լաւագոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատարեսցին։ 40։

Ալէլուիա, ալէլուիա. Երանելի են որք բնակեալ են ի տան Տեառն. յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

ԳԼ· ԺԲ· 4։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց. Մի՛ զարհուրիցիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ յետ այնորիկ աւելի ինչ ոչ ունիցին առնել։ Այլ ցուցից ձեզ յո՛ւմէ երկնչիցիք. երկնչիջիք յայնմանէ, որ յետ սպանանելոյ՝ ունի իշխանութիւն արկանել ի գեհեն. այո՛ ասեմ ձեզ՝ յայնմանէ երկնչիջիք։ Ո՞չ ապաքէն հինգ ճագ երկուց դանգաց վաճառի, եւ մի ի նոցանէ ոչ է մոռացեալ առաջի Աստուծոյ։ Այլ ձեր եւ ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է. մի՛ երկնչիք՝ զի քան զբազում ճագս լաւ էք դուք։ Ասեմ ձեզ, զի Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, եւ Որդի մարդոյ խոստովանեսցի զնմանէ առաջի հրեշտակաց Աստուծոյ։ 8։

---

## ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամո՛ւտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զնաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք։

Աղ· Զե· Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացեալ։

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհնա-
պաղ· ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր
համբարձի զանձն իմ:

**Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն ընթեր-
ցուածս. ԳԼ· Գ· 16:**

Ամենայն գիրք աստուածաշունչք եւ օգտակարք, ի
վարդապետութիւն են եւ ի յանդիմանութիւն եւ յուղղու-
թիւն եւ ի խրատ արդարութեան. զի կատարեալ իցէ
մարդն Աստուծոյ՝ յամենայն գործս բարութեան հաստա-
տեալ: Ջայս վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ եւ Յի-
սուսի Քրիստոսի՝ որ դատելոց է զկենդանիս եւ զմեռեալս ի
յայտնութեան իւրում եւ յարքայութեան: Եւ դու քա-
րոզեա զբանն, հաս ի վերայ ժամու եւ տարաժամու. յան-
դիմանեա, սաստեա, մխիթարեա ամենայն երկայնմտու-
թեամբ եւ վարդապետութեամբ: Քանզի եկեսցէ ժամանակ,
զի ողջմտութեան վարդապետութեանն ոչ անասցեն. այլ
ըստ իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վար-
դապետս ըստ մարմնաջելոյ լսելեաց իւրեանց. եւ ի ճշմար-
տութենէ անտի դարձուցանիցեն զլսելիս. եւ յառասպելս
կործանեսցին: Եայլ դու զուարթ կաց յամենայնի, ճգնեաց,
զգործս աւետարանչի գործեա, զպաշտօնդ քո կատարեալ
կալ: Ջի ես այսուհետեւ նուիրեալ եմ, եւ ժամանակ
դարձի իմոյ հասեալ կայ: Ջբարւոք պատերազմ պատերազ-
մեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի: Եայսու-
հետեւ կայ ինձ պսակն արդարութեան պսակն, զոր հա-
տուսցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարն դատաւոր· ոչ
միայն ինձ, այլ եւ ամենեցուն՝ որ սիրեցին զյայտնութիւն
նորա: 8:

Ալէլուիա, ալէլուիա. Պահպ է յայնէն:

**Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.**
**ԳԼ· Զ· 39:**

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Այս են կամք Հօր իմոյ, որ առաքեացն զիս. զի զամե-
նայն զոր ետ ինձ Հայր՝ ոչ կորուսից ի նմանէ, այլ յարու-



ցից զնա յաւուրն յետնում: Այս են կամք Հօր իմոյ, զի
ամենայն որ տեսանիցէ զՈրդի եւ հաւատայցէ ի նա, ընկալցի
զկեանսն յաւիտենական, եւ ես յարուցից զնա յաւուրն
յետնում: Տրտնջէին ցնմանէ Հրեայքն, զի ասաց թէ Ես
եմ հացն իջեալ յերկնից: Եւ ասէին. Ոչ սա է Յիսուս՝
որդին Յովսեփու, զորոյ մեք գիտեմք զհայրն եւ զմայրն. իսկ
արդ զիա՞րդ ասէ՝ թէ Ես յերկնից իջի: Պատասխանի ետ
Յիսուս եւ ասէ ցնոսա. Մի՛ քրթմնջէք ընդ միմեանս: Ոչ
ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ Հայրն որ զիս առաքեաց՝
ձգեսցէ զնա. եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում:
Գրեալ է ի մարգարէս. Եւ եղիցին ամենեքեան ուսեալք
Աստուծոյ: 45:

---

## ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Սրբոց Ոսկեանց:

Յաճախ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց
մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսու-
թեամբ սոցա եւ ալօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո,
Աստուած, որպէս մարդասէր:

Սղ· ՃԼԱ· Քահանայք քո զգեցցին զարդարութիւն.
եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:
Յիշեա Տէր զՊաւլէթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

**Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթ-
ցուածս. ԳԼ· Դ· 10:**

Եայլ դու զհետ եկիր վարդապետութեան իմոյ, առաջ-
նորդութեան, յօժարութեան, հաւատոյ, երկայնմտու-
թեան, սիրոյ, համբերութեան, հալածանաց, չարչարանաց.
որպիսիք եղեն ինձ Անտիոք եւ Իկոնիոն եւ ի Լիւստրա,
որպիսի հալածանաց համբերի, եւ յամենայնէ փրկեաց զնս
Տէր: Եւ ամենեքեան՝ որ կամիցին աստուածպաշտութեամբ
կեալ ի Քրիստոս Յիսուս, ի հալածանս կացցեն: 12:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զար-
դարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ե. 1:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն. եւ իբրեւ
նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա: Եւ բացեալ
զբերան իւր՝ ուսուցանէր զնոսա եւ ասէր. Երանի՛ աղքատաց
հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի՛ սգաւո-
րաց, զի նոքա մխիթարեսցին: Երանի՛ հեզոց, զի նոքա ժա-
ռանգեսցեն զերկիր: Երանի՛ որ քաղցեալ եւ ծարաւի իցեն
արդարութեան, զի նոքա յագեսցին: Երանի՛ ողորմածաց,
զի նոքա ողորմութիւն գտցեն: Երանի՛ այնոցիկ՝ որ սուրբ են
սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն: Երանի՛ խաղաղարա-
րաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին: Երանի՛ որ հալա-
ծեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն
երկնից: Երանի՛ է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ եւ
հալածեսցեն եւ ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ
վասն իմ: Ցնծացէք եւ ուրախ լերուք, զի վարձք ձեր բա-
զում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ
յառաջ քան զձեզ էին: 12:

---

## ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխա-
ղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ. զքեզ
աղաչեմք:

Սղ. Ղէ. Տեսին ամենայն ծագք երկրի, զփրկութիւն
Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս
արար:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Դ. 9:

Փութասջիր գալ առ իս վաղվաղակի. զի Դեմաս
եթող զիս եւ սիրեաց զաշխարհ, եւ գնաց ի Թեսաղոնիկէ.
Կրեսկէս՝ ի Գալիլեա, Տիտոս ի Դաղմատիա. Ղուկաս միայն



է ընդ իս: ԶՄարկոս առեալ ընդ քեզ ածիցես, զի է ինձ
պիտանի ի սպասաւորութիւն: ԶՏիւքիկոս առաքեցի յԵփե-
սոս: ԶՓիլոնն թողի ի Տրովադայ առ Կարպոսի. յորժամ
գայցես, բերջիր եւ զգիրսն, մանաւանդ զմատեանսն: Աղէք-
սանդրոս բազում չարչարանս եցոյց ինձ. հատուսցէ նմա Տէր
ըստ գործս նորա. յորմէ եւ դու անձնապահ լինիջիր. զի շատ
հակառակ եկաց բանից մերոց: Յառաջնում ատենին ոչ ոք
ինձ ի թիկունս եկաց, այլ ամենեքին թողին զիս. մի՛ համա-
րեսցի նոցա այն: Այլ Տէր օգնեաց ինձ եւ զօրացոյց զիս, զի
ինեւ քարոզութիւնն հաստատեսցի, եւ լուիցեն ամենայն
հեթանոսք. եւ ապրեցայ ես ի բերանոյ առիւծուն: Փրկեսցէ
զիս Տէր յամենայն գործոց չարաց եւ զերծուսցէ զիս յար-
քայութիւն իւր՝ որ յերկինս է. որում փառք յաւիտեանս
յաւիտենից. ամէն: Ողջոյն տաջիր Պրիսկեայ եւ Ակիւղեայ
եւ Ոնեսիփորայ տանն: Երաստոս մնաց ի Կորնթոս: ԶՏրո-
փիմոս թողի ի Մելիտոս հիւանդագին: Փութասջիր յառաջ
քան զձմեռն գալ: Ողջոյն տան քեզ Եբուղոս եւ Պուդէս
եւ Ղինոս եւ Կղաւդիա, եւ եղբարք ամենեքեան: Տէր Յի-
սուս Քրիստոս ընդ ոգւոյդ քում: Շնորհք ընդ քեզ: 22:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Զ. 45:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ամենայն որ լսէ ի Հօրէ եւ ուսանի, գայ առ իս:
Իբրեւ ոչ եթէ զՀայր ուրուք տեսեալ իցէ. եթէ ոչ՝ որ էն
յԱստուծոյ, նա ետես զՀայր: Ամէն ամէն ասեմ ձեզ. զի
Որ հաւատայ յիս՝ ընդունի զկեանսն յաւիտենականս: Ես
եմ հացն կենաց: Հարքն ձեր կերան զմանանայն յանա-
պատին եւ մեռան: Այս է հացն, որ յերկնից իջեալ է. զի
որ ուտիցէ ոք ի սմանէ՝ մի՛ մեռանիցի: Ես եմ հացն կեն-
դանի, որ յերկնից իջեալ: Եթէ ոք ուտիցէ ի հացէ յայս-
մանէ՝ կեցցէ ի յաւիտեան. եւ հացն զոր ես տաց՝ մարմին
իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի: Մարտնչէին
ընդ միմեանս Հրեայքն եւ ասէին. Զիա՞րդ կարէ սա տալ
մեզ զմարմին իւր յուտել: Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն

ասեմ ձեզ, եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ եւ
արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս: Որ ուտէ
զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, ունի զկեանսն յաւիտե-
նականս. եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում: Զի
մարմին իմ ճշմարիտ կերակուր է, եւ արիւն իմ ճշմարիտ
ըմպելի է: Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, յիս
բնակեսցէ, եւ ես ի նմա: Որպէս առաքեաց զիս կենդանին
Հայր, եւ ես կենդանի եմ վասն Հօր, եւ որ ուտէն զիս,
եւ նա կեցցէ վասն իմ: 58:

---

## Ծ Ա Բ Ա Թ

### Սրբոյն Սահակայ պարթեւի Հայոց հայրապետի:

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցեր զա-
թոռ ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ,
ծառայ Քրիստոսի ով երանելիդ ի հարս սուրբ հայրապետ:
Քանզի քոյ վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտու-
թեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատու-
ցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն
որոյ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն.
եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:
Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն
նորա:

Պօղոսի առաքելոյն Յեբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. ԺԳ. 17:

Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, եւ հպատակ
կացէք նոցա. զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց, որպէս թէ
համարս տալոց են ընդ ձեր. զի խնդութեամբ արասցեն
զայն, եւ մի՛ յոգւոց հանելով. զի այն ոչ յօգուտ ձեր է:
Աղօթս արարէք վասն մեր. զի հաստատեալ գիտեմք եթէ
բարւոք միտս ունիմք, յամենայնի կամիմք բարւոք գնացս
ցուցանել: Եւ առաւել աղաչեմ՝ զի զայն առնիցէք, զի
վաղագոյն պատսպարեցայց ձեզ: Եւ Աստուած խաղաղու-



թեան՝ որ եհան ի մեռելոց զհովիւն հօտից, զմեծն արեամբ
յաւիտենական ուխտին, զՏէր մեր Յիսուս Քրիստոս, հաս-
տատեսցէ զձեզ ի գործս բարութեան առնել զկամս նորա.
եւ արասցէ ի մեզ զհաճոյսն առաջի իւր ի ձեռն Յիսուսի
Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն: 21:

Ալէլուիա, ալէլուիա. Դու ես քահանայ յաւիտեան
ըստ կարգին Մելքիսեդեկի. եւ Տէր ընդ աջմէ քումմէ:

Սրբոյ Աետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ժ. 11:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի
վերայ ոչխարաց: Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր
են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն
եւ փախչի. եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ. քանզի
վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն: Ես եմ հո-
վիւն քաջ, եւ ճանաչեմ զիմն եւ ճանաչիմ յիմոցն: Որպէս
գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայր. եւ զանձն իմ դնեմ
ի վերայ ոչխարաց: Նա եւ այլ եւս ոչխարք են իմ, որ ոչ են
յայսմ գաւթէ. եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր, եւ
ձայնի իմում լուիցեն, եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ: 16:

---

## Կ Ի Ր Ա Կ Է

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած,
եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի
սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփո-
խելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մա-
հուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն
փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. ԿԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի
Սիոն. եւ քեզ տացին աղօթք Յերուսաղէմ:
Լուր աղօթից իմոց, զի առ քեզ ամենայն մարմին
եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Տիտոսի թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Ա. 1:

Պօղոս ծառայ Աստուծոյ եւ առաքեալ Յիսուսի Քրիստոսի, ըստ հաւատոց ընտրելոցն Աստուծոյ, եւ ի գիտութիւն ճշմարտութեան՝ որ ընդ աստուածպաշտութեանն է. յուսով կենացն յաւիտենից, զոր խոստացաւ անսուտն Աստուած յառաջ քան զժամանակս յաւիտենից: Բայց յայտնեաց իւրովք ժամանակօք զբանն իւր քարոզութեամբ, որոյ եղէ ես հաւատարիմ ըստ հրամանի փրկչին մերոյ Աստուծոյ: Տիտոսի որդւոյ սիրելւոյ ըստ հասարակաց հաւատոց, շնորհք եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ փրկչէ մերմէ: Վասն այնորիկ իսկ թողի զքեզ ի Կրետէ, զի որ ինչ միանգամ պակաս իցէ՝ ուղղեսցես, եւ կացուսցես ըստ քաղաքաց երիցունս, որպէս եւ ես քեզ պատուիրեցի: Եթէ ոք անարատ իցէ, միոյ կնոջ այր, որդեակս ունիցի հաւատացեալս, եւ ոչ յամբաստանութիւն անառակութեան կամ անհնազանդս: Զի պարտ է եպիսկոպոսին անարատ լինել՝ որպէս եւ Աստուծոյ տնտեսի. մի՛ յանդուգն, մի՛ բարկացող, մի՛ թշնամանող, մի՛ հարկանող, մի՛ զօշաքաղ. այլ հիւրասէր, բարեսէր, ցած, արդար, սուրբ, ժուժկալ: Վերակացու լինել հաւատարիմ բանին վարդապետութեան, զի կարող իցէ եւ մխիթարել ողջմտութեամբ վարդապետութեանն եւ զհակառակորդսն կշտամբել: Քանզի բազումք են անհնազանդք, զրախօսք եւ մտախաբք, մանաւանդ որ ի թլփատութենէ անտի են. զորս պարտ է ըմբերանել, որք զամենայն տունս կործանեն, եւ ուսուցանեն՝ զոր չէ արժան, վասն զօշաքաղութեան: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու:

Գլ. Զ. 59:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Այս է հացն՝ որ յերկնից իջեալ. ոչ որպէս կերան հարքն ձեր զմանանայն եւ մեռան. որ ուտէ զհացս զայս՝



կեցցէ յաւիտեան: Զայս ասաց ի ժողովրդեանն՝ յուսուցանելն ի Կափառնաում: Եւ բազումք յաշակերտացն իբրեւ լուան՝ ասեն. Խիստ է բանդ այդ, ո՞կարէ լսել դմա: Իբրեւ գիտաց Յիսուս յանձն իւր՝ եթէ տրտնջեն վասն այնորիկ աշակերտքն նորա, ասէ ցնոսա. Ա՞յդ գայթակղեցուցանէ զձեզ: Իսկ արդ՝ եթէ տեսանիցէք զՈրդի մարդոյ, զի ելանիցէ ուր էր զառաջինն: Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ. զբանն զոր ես խօսեցայ ընդ ձեզ, հոգի է եւ կեանք: Այլ են ոմանք ի ձէնջ՝ որ ոչ հաւատան: Քանզի գիտէր Յիսուս ի սկզբանէ, ո՛վ են այնոքիկ՝ որ ոչն հաւատան, եւ ո՛վ է այն՝ որ մատնելոցն է զնա, եւ ասէր. Վասն այնորիկ ասացի ձեզ՝ թէ ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ իցէ տուեալ նմա ի Հօրէ իմմէ: Յայսմանէ բազումք յաշակերտացն նորա չոգան յետս, եւ ոչ եւս շրջէին ընդ նմա: Ասէ Յիսուս ցերկոտասան աշակերտսն. Միթէ եւ դո՞ւք կամիք երթալ: Պատասխանի ետ նմա Սիմովն Պետրոս. Տէր, առ ո՞վ երթիցուք. բանս կենաց յաւիտենականաց ունիս: Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք՝ եթէ դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ: Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ո՞չ ես զձեզ զերկոտասանսդ ընտրեցի, եւ մինդ ի ձէնջ սատանայ է: Եւ ասէր զՍիմովնեան Յուդայէ Սկարիովտացւոյ, զի նա իսկ մատնելոց էր զնա, եւ մի էր յերկոտասանիցն: 72:

---

## ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Սրբոյն Պիոնի քահանային: Եւ Մարկոսի Արեթուսայ եպիսկոպոսին: Եւ Կիւրղի սարկաւագին: Եւ Աբդեայ եպիսկոպոսին, եւ Որմզդանայ, եւ Սայենի, եւ Բենիամինի սարկաւագին:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց Թղթոյն է ընթեր-
ցուածս. Գլ. Ը. 28:

Բայց գիտեմք եթէ որոց սիրենն զԱստուած՝ յամենայնի
գործակից լինի ի բարիս, որք հրաւիրանաւն կոչեցան: Զի
զորս յառաջն ճանաչէր, յառաջագոյն հրաւիրեաց՝ կերպա-
րանակից լինել պատկերի Որդւոյն իւրոյ. զի եղիցի նա ան-
դրանիկ ի մէջ եղբարց բազմաց: Եւ զորս յառաջագոյնն
հրաւիրեաց, զնոսին եւ կոչեաց. եւ զորս կոչեացն, զնոսին եւ
արդարացոյց. եւ զորս արդարացոյցն, զնոսին եւ փառաւորս
արար: Իսկ արդ զի՞նչ ասեմք առ այս. եթէ Աստուած ի մեր
կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ: Որ յիւր Որդին ոչ խնայեաց,
այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա, զի՞արդ ոչ նովաւ
հանդերձ զամենայն շնորհիցէ մեզ: Ո՞վ իցէ որ մեղադիր
լինիցի ընտրելոց Աստուծոյ. Աստուած է որ արդարացու-
ցանէ, իսկ արդ ո՞վ է որ դատապարտ առնիցէ. Քրիստոս
Յիսուս՝ որ մեռաւն, մանաւանդ թէ յարուցեալ իսկ է, եւ
է ընդ աջմէ Աստուծոյ, որ եւ բարեխօս իսկ է վասն մեր:
Արդ ո՞վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի. նեղութի՞ւն,
թէ անձկութիւն, թէ հալածանք, թէ սով, թէ մերկու-
թիւն, թէ վիշտք, թէ սուր: Որպէս եւ գրեալ է. Վասն
քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք իբրեւ զոչխար ի
սպանդ: Այլ յայսմ ամենայնի առաւել յաղթեմք նովաւ՝
որ սիրեացն զմեզ: Քանզի հաստատեալ եմ եթէ ոչ մահ
եւ ոչ կեանք եւ ոչ հրեշտակք եւ ոչ իշխանութիւնք եւ ոչ
որ կանս եւ ոչ հանդերձեալքն եւ ոչ զօրութիւնք, եւ ոչ
բարձրութիւնք եւ ոչ խորութիւնք եւ ոչ այլ ինչ արարած
կարէ մեկնել զմեզ ի սիրոյ անտի Աստուծոյ, որ ի Քրիստոս
Յիսուս ի Տէր մեր: 39:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զար-
դարութիւն եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.
Գլ. ԺԵ. 17:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս: Եթէ
աշխարհ զձեզ ատեայ, գիտասջիք զի նախ զիս ատեաց: Եթէ
յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զիւրսն սիրէր արդեօք. բայց



զի չէք յաշխարհէ, այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վասն
այնորիկ ատեայ զձեզ աշխարհ: Յիշեցէք զբանն զոր ասացի
ձեզ, թէ Ոչ է ծառայ մեծ քան զՏէր իւր. եթէ զիս հա-
լածեցին, ապա եւ զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պա-
հեցին, ապա եւ զձերն պահեսցեն: Այլ զնոյնս արասցեն ընդ
ձեզ վասն անուան իմոյ, զի ոչ ծանեան զայն՝ որ առաքեացն
զիս: 21:

---

## ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### Սրբոց Ղեւոնդեանց քահանայից:

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցէք զա-
թոռ ի յերկրի. առաքելական առէք զպատիւ յերկնուստ,
ծառայք Քրիստոսի ո՛վ երանելիք ի հարս սուրբ հայրա-
պետք: Քանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարե-
պաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ
հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով:
Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն.
եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:
Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին Թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 3:

Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեան իւրում
ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի, ի ձեռն յարու-
թեանն Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց, յանեղծ եւ յանա-
րատ եւ յանթառամ ժառանգութիւնն որ պահեալ է յեր-
կինս ձեզ: Որ զօրութեամբն Աստուծոյ պահեալ էիք հաւ-
ատովք ի պատրաստեալ փրկութիւնն, յայտնեալ ի յետին
ժամանակս: Որով ուրախ լինիջիք, որք այժմ սակաւիկ ինչ
ըստ պատշաճի իրացդ տրտմեալ էք ի պէսպէս փորձու-
թիւնս: Զի հանդէս ձերոց հաւատոցն առաւել քան զոսկի
կորստական պատուական է. որ հրով փորձեալ՝ գտաւ ի

*զովութիւն եւ ի փառս եւ ի պատիւ ի յայտնութեանն Յիսուսի Քրիստոսի: Օ՛որ ոչն տեսէք, եւ սիրեցէք. ընդ որ այժմ ոչ հայեցեալք, բայց հաւատացէք. եւ ուրախ էք անճառ եւ փառաւորեալ խնդութեամբն. ընկալեալ զկատարումն հաւատոցն ձերոց զոգւոցն փրկութիւն: 9:*

*Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն.*

**Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.**

ԳԼ· ԺԲ· 4:

**Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.**

*Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց. մի՛ զարհուրիցիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ յետ այնորիկ աւելի ինչ ոչ ունիցին առնել: Այլ ցուցից ձեզ յումմէ երկնչիցիք. երկնչիջիք յայնմանէ՝ որ յետ սպանանելոյ ունի իշխանութիւն արկանել ի գեհեն. այո՛ ասեմ ձեզ՝ յայնմանէ երկնչիջիք: Ո՞չ ապաքէն հինգ ձագ երկուց դանգաց վաճառի, եւ մի ի նոցանէ ոչ է մոռացեալ առաջի Աստուծոյ: Այլ ձեր եւ ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է. մի՛ երկնչիք, զի քան զբազում ձագս լաւ էք դուք: Ասեմ ձեզ. զի ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, եւ Որդի մարդոյ խոստովանեսցի զնմանէ առաջի հրեշտակաց Աստուծոյ: Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացեալ լինի առաջի հրեշտակաց Աստուծոյ: Եւ ամենայն որ ասէ բան զՈրդւոյ մարդոյ՝ թողի նմա. բայց որ զՀոգին սուրբ հայհոյեսցէ, մի՛ թողի նմա: 10:*

---

## ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

*Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զնաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:*

*Սղ· 26· Ակեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացեալ:*



*Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհնաւաղ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:*

**Պօղոսի առաքելոյն ի Տիտոս թղթոյն է ընթերցուածս.**

ԳԼ· Ա· 12:

*Ասաց ոմն ի նոցանէ, իւրեանց իսկ մարգարէ, Կրետացիք հանապազաստուք, չարաճճիք, դատարկապորք: Եւ ստոյգ է վկայութիւնս այս. վասն որոյ կշտամբեսցես զնոսա խստագոյնս, զի առողջասցին ի հաւատս. եւ մի՛ հայեսցին ի հրէական առասպելս եւ ի պատուէրս մարդկան զառածելոցն ի ճշմարտութենէ: Ամենայն ինչ սուրբ է սրբոց, բայց պղծոցն եւ անհաւատից ոչ ինչ է սուրբ. այլ պղծեալ են միտք եւ խորհուրդք նոցա: Խոստանան գիտել զԱստուած, եւ գործովք իւրեանց ուրանան. պիղծք եւ անհաւանք, եւ յամենայն գործս բարեաց անպիտանք: Այլ դու խօսեաց որ ինչ վայել է ողջամիտ վարդապետութեանդ: Ծերոց զգաստ լինել, պարկեշտս, ցածուն, ողջամիտս ի հաւատս, ի սէր, ի համբերութեան, ի ժուժկալութեան. պառաւանց նոյնպէս ի զգաստութեան, ի սուրբ վայելչութեան. մի՛ բանսարկուս, մի՛ գինեմոլս, այլ բարեխրատս: Օ՛ի զգաստացուսցեն զմանկամարդսն՝ այրասէրս լինել, որդեսէրս, ցածուն, սուրբս, տնարարս, բարեգործս, հնազանդս իւրեանց արանց. զի մի՛ բանն Աստուծոյ եւ վարդապետութիւնն հայհոյեսցի: Օ՛երիտասարդս նոյնպէս աղաչեսջիր ցածուն լինել: Ամենեցուն զանձն օրինակ կացուցանել՝ գործոց բարութեան, վարդապետութեամբ զանեղծութիւն ունել, զպերճութիւն, զպարկեշտութիւն, զբանն ողջմտութեան, անպարսաւ լինել. զի որ հակառակորդն իցէ՝ յամօթ լինի, եւ մի՛ ինչ ունիցի ասել զմեզ չարութիւն: Ծառայից՝ իւրեանց տերանց հնազանդ լինել եւ հաճոյս յամենայնի. մի՛ հակառակողս, մի՛ հատուս. այլ զամենայն հաւատս ցուցանել բարութեամբ, զի զվարդապետութիւն փրկչին մերոյ Աստուծոյ զարդարեսցեն յամենայնի: Բ· 10:*

**Ալէլուիա, ալէլուիա. պահոյ է յայգին:**

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Է. 1.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յետ այսորիկ շրջէր (Յիսուս) ի Գալիլեա. քանզի ոչ կամէր ի Հրէաստանի շրջել. զի խնդրէին զնա Հրեայքն սպանանել: Եւ էր մերձ տօնն Հրէից տաղաւարահարաց: Ասեն ցնա եղբարքն նորա. Գնա աստի եւ երթ ի Հրէաստան, զի եւ աշակերտքն քո տեսցեն զգործսդ քո՝ զոր գործես: Զի ոչ ոք է՝ որ ի ծածուկ ինչ գործէ, եւ խնդրէ ինքն համարձակ լինել. եթէ զայդ գործես, յայտնեա զանձն քո աշխարհի: Քանզի եւ եղբարքն իսկ չէին հաւատացեալ ի նա: Ասէ ցնոսա Յիսուս. Ժամանակ իմ չեւ է հասեալ. բայց ձեր ժամանակ յամենայն ժամու պատրաստ է: Ոչ կարէ աշխարհս ատել զձեզ. բայց զիս ատեայ, զի ես վկայեմ վասն նորա՝ եթէ գործքն իւր չարութեան են: Դուք երթայք ի տօնն յայն. ես ոչ երթամ ի տօնն յայն. զի իմ ժամանակ չեւ է լցեալ: Զայս իբրեւ ասաց՝ ինքն մնաց անդէն ի Գալիլեա: Իբրեւ ելին եղբարքն նորա, ապա եւ ինքն ել ի տօնն, ոչ յայտնի՝ այլ իբրեւ ի ծածուկ: Եւ Հրեայքն խնդրէին զնա ի տօնի անդ եւ ասէին. Ո՛ւր իցէ նա: Եւ քրթմնջիւն էր զնմանէ ի ժողովուրդսն. կէսքն ասէին՝ թէ Բարւոք է. այլքն ասէին՝ Ո՛չ, այլ մոլորեցուցանէ զժողովուրդն: Եւ ոչ ոք համարձակ խօսէր զնմանէ՝ վասն երկիւղին Հրէից: 13:

---

## ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Սրբոց վարդանանց զօրավարաց եւ այլ զօրականացն Հայոց ՌԼԶ վկայիցն:

Ժամամուտ. Ի աաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. Խգ. Ետուր զմեզ որպէս զոչխար ի զենումն. եւ ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ:



Աստուած, ականջօք մերովք լուաք. զոր հարքն մեր պատմեցին մեզ:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. ԺԲ. 1:

Այսուհետեւ եւ մեք՝ որ այսչափ շուրջ զմեօք մածեալ ունիմք զբազմութիւն վկայից, զհպարտութիւն զամենայն ի բաց ընկեսցուք եւ զմեղս կարեւորս. համբերութեամբ ընթասցուք ի պատերազմն՝ որ առաջի կայ մեզ: Հայեսցուք ի զօրագլուխն հաւատոց եւ ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ուրախութեանն որ նմա առաջի կայր, յանձն առ զխաչն, արհամարհեաց զամօթն, նստաւ ընդ աջմէ աթոռոյն Աստուծոյ: Աղէ ածէք զմտաւ, որ զայսպիսի համբերութիւն ի մեղաւորաց հակառակութենէ անտի կրեաց. զի մի՛ աշխատ լինիցիք անձամբք ձերովք եւ լքանիցիք: Զի չեւ եւս արեամբ չափ պատերազմեալք՝ հակառակ կացէք մեղացն, եւ մոռացարուք զմխիթարութիւնն, որ ընդ ձեզ իբրեւ ընդ որդեակս խօսի: Որդեակ իմ, մի՛ լքանիր ի խրատու Տեառն, եւ մի՛ վհատիցիս՝ յանդիմանեալ ի նմանէ: Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի՝ զոր ընդունի: Ի խրատու համբերութեան կայք, իբրեւ յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Զ. 20:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ամբարձ զաչս իւր յաշակերտսն իւր եւ ասէ. Երանի՛ աղքատացդ հոգւով, զի ձեր է արքայութիւն Աստուծոյ: Երանի՛ որ քաղցեալ են այժմ, զի յագեսցին: Երանի՛ որ լան այժմ, զի ծիծաղեսցին: Երանի՛ է ձեզ՝ յորժամ ատիցեն զձեզ մարդիկ, եւ յորժամ որոշիցեն զձեզ եւ նախատիցեն, եւ հանիցեն անուն չար զձէնջ վասն Որդւոյ մարդոյ: Ուրախ լիջիք յաւուր յայնմիկ եւ ցնծասջիք, զի ահա վարձք ձեր բազում են յերկինս. ըստ դմին օրինակի առնէին մարգարէիցն հարք իւրեանց: Բայց վայ ձեզ մեծատանցդ՝ զի ընդ-

կալայք զմխիթարութիւն ձեր: Վայ ձեզ որ յագեալդ էք
այժմ, զի քաղցիցէք: Վայ ձեզ որ ծիծաղիքդ այժմ, զի
սգայցէք եւ լայցէք: Վայ ձեզ՝ յորժամ բարի ասիցեն զձէնջ
ամենայն մարդիկ, զի այդպէս առնէին սուտ մարգարէիցն
հարք նոցա: 26:

---

## ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխա-
ղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ
աղաչեմք:

Սղ. Ղէ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն
Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս
արար:

Պօղոսի առաքելոյն ի Տիտոսի թղթոյն է ընթերցուածս.
Գլ. Գ. 1.

Եւ յուշ արասջիր նոցա իշխանութեանց եւ պետու-
թեանց հնազանդ լինել եւ հպատակ կալ, եւ ամենայն գոր-
ծոց բարութեան պատրաստ գտանել: Մի՛ զոք հայհոյել,
անկռիւս լինել, հեզս, զամենայն ցածութիւն առ ամենայն
մարդիկ ցուցանել: Զի էաք երբեմն եւ մեք անմիտք, ան-
հաւանք, մոլորեալք, ծառայէաք ցանկութեանց եւ պէսպէս
անառակութեանց. չարութեամբ եւ նախանձու շրջէաք,
ատեցեալք եւ զմիմեանս ատէաք: Իսկ յորժամ քաղցրու-
թիւն եւ մարդասիրութիւն փրկչին մերոյ Աստուծոյ յայտ-
նեցաւ, ոչ ի գործոց արդարութեան՝ զոր արարաք մեք, այլ
ըստ իւրում ողորմութեանն՝ ապրեցոյց զմեզ ի ձեռն աւա-
զանին միւսանգամ ծննդեանն, եւ նորոգութեամբ Հոգւոյն
սրբոյ. զոր եհեղ ի մեզ առատութեամբ, ի ձեռն Յիսուսի
Քրիստոսի փրկչին մերոյ: Զի արդարացեալք շնորհօքն՝ եղի-
ցուք ժառանգաւորք յուսով կենացն յաւիտենականաց:
Հաւատարիմ է բանս, եւ ի սոյն կամիմ զքեզ հաստատուն
լինել, զի փոյթ արասցեն գործոց բարեաց՝ վերակացու լինել
հաւատացելոցն յԱստուած, զի այն է բարի եւ օգտակար
մարդկան: Այլ զյիմարութեան խնդիրս եւ զտոհմաթիւս



եւ զհեռ եւ զօրինական կռիւսն ի բաց մերժեսջիր. զի անօ-
գուտք են եւ սնոտիք: Յառնէ հերձուածողէ, յետ մի ան-
գամ եւ երկիցս խրատելոյ՝ հրաժարեսջիր. գիտասջիր զի
թիւրեալ է այնպիսին, եւ մեղանչէ՝ անձամբ զանձն դատա-
պարտեալ: Այլ յորժամ յղեցից առ քեզ զԱրտեմայ կամ
զՏիւքիկոս, փութասջիր գալ առ իս ի Նիկոպոլիս, զի անդ
եդի ի մտի ձմերել: Եւ զԶենոն զօրինական դպիր եւ զԱպո-
ղոս՝ փութով արձակեսջիր, զի մի՛ ինչ պակասիցէ նոցա:
Ուսցին եւ մերքն եւս բարեաց գործոց վերակացու լինել ի
պէտս կարեւորս, զի մի՛ անպտուղք լինիցին: Ողջոյն տան
քեզ որ ընդ իս են ամենեքին: Ողջոյն տուր սիրելեաց մերոց
հաւատովք: Շնորհք ընդ ձեզ ամենեսին. ամէն: 15:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.
Գլ. Է. 14:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Իբրեւ տօնն ընդմիջեցաւ, ել (Յիսուս) ի տաճարն եւ
ուսուցանէր: Զարմանային Հրեայքն եւ ասէին. Զիա՞րդ
զգիրս գիտէ սա, զի ուսեալ բնաւ չիք: Պատասխանի ետ
նոցա Յիսուս եւ ասէ. Իմ վարդապետութիւնս չէ իմ, այլ
այնորիկ՝ որ առաքեացն զիս: Եթէ ոք կամի զկամս նորա
առնել՝ գիտասցէ վասն վարդապետութեանս, յԱստուծո՞յ
իցէ արդեօք՝ եթէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ: Որ յանձնէ
իւրմէ խօսի՝ փառս անձին իւրում խնդրէ, իսկ որ խնդրէ
զփառս այնորիկ որ առաքեացն զնա՝ նա ճշմարիտ է, եւ անի-
րաւութիւն ոչ գոյ ի նմա: Ո՞չ Մովսէս ետ ձեզ զօրէնսն,
եւ ոչ ոք ի ձէնջ առնէ զօրէնսն: Զի՞ խնդրէք զիս սպանա-
նել: Պատասխանի ետ ժողովուրդն եւ ասէ. Դեւ գոյ ի
քեզ. ո՞վ խնդրէ զքեզ սպանանել: Պատասխանի ետ նոցա
Յիսուս եւ ասէ. Գործ մի գործեցի, եւ ամենեքին զարմա-
ցեալ էք: Վասն այնորիկ Մովսէս ետ ձեզ թլփատութիւն.
զի ոչ եթէ ի Մովսիսէ էր, այլ ի հարց անտի, եւ ի շաբա-
թու թլփատէք զմարդ: Իսկ արդ եթէ թլփատութիւն առ-
նու մարդ ի շաբաթու, զի մի՛ օրէնքն Մովսիսի լուծցին.
ընդ իս ցասուցեալ էք՝ զի ողջոյն իսկ մարդ բժշկեցի ի շա-
բաթու: 23:

---

## ՇԱԲԱԹ

### Սրբոց ՃԾ Հայրապետացն Կոստանդինուպոլսի սուրբ ժողովոյն:

Ժամանակ. Զհայրապետականն զարդարեցէք զա-
թոռ ի յերկրի. առաքելական առէք զպատիւ յերկնուստ,
ծառայք Քրիստոսի ով երանելիք ի հարս սուրբ հայրապետք:
Քանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտու-
թեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հա-
տուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով:
Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն.
եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:
Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզու-
թիւն նորա:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է
ընթերցուածս. Գլ. Զ. 1:

Գործակից եմք ձեր եւ աղաչեմք, մի՛ ընդունայն
զշնորհսն Աստուծոյ ընդունել ձեզ: Զի ի ժամանակի
ընդունելութեան, ասէ, լուայ քեզ, եւ յաւուր փրկու-
թեան օգնեցի քեզ. Ահաւասիկ ժամանակ ընդունելի, ահա
օր փրկութեան: Մի՛ եւ մի՛ իւիք տայցէք պատճառս, զի մի՛
արատեսցի պաշտօնն: Այլ յամենայնի ընծայեցուցէք զան-
ձինս ձեր իբրեւ զպաշտօնեայս Աստուծոյ՝ համբերութեամբ
բազմաւ, ի նեղութիւնս, ի վիշտս, ի չարչարանս, ի գանս,
ի բանտս, ի խռովութիւնս, յաշխատութիւնս, ի հըսկ-
մունս, ի պահս, ի սրբութեան, ի գիտութեան, յերկայն-
մտութեան, ի քաղցրութեան, ի Հոգի սուրբ, ի սէր
առանց կեղծաւորութեան, ի բանս ճշմարտութեան, ի
զօրութեան Աստուծոյ. վասն զինուն արդարութեան՝
որ ընդ աջմէն եւ ընդ ահեկէն է: Փառօք եւ անարգու-
թեամբ, գովութեամբ եւ պարսաւանօք. իբրեւ մոլարք եւ
ճշմարիտք. իբրեւ անծանօթք եւ ծանուցեալք. իբրեւ
մահկանացուք, եւ ահաւասիկ կենդանի եմք. իբրեւ խրա-
տեալք եւ ոչ մահապարտեալք. իբրեւ տրտմեալք եւ հանա-
պազ ուրախ եմք. իբրեւ տնանկք եւ զբազումս մեծացուցա-
նեմք. իբրեւ ոչ ինչ ունիցիմք եւ զամենայն ինչ ունիմք: 10:



Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին
զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.
Գլ. ԺԲ. 22:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր եւ
համր, եւ բժշկեաց զնա. որպէս զի համրն եւ կոյրն խօսիցի
եւ տեսանիցէ: Զարմացան ամենայն ժողովուրդքն եւ
ասէին. Միթէ սա՞ իցէ Քրիստոսն որդի Դաւթի: Բայց
փարիսեցիքն իբրեւ լուան՝ ասեն. Ոչ իւիք հանէ դա զդեւս՝
եթէ ոչ բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց: Իբրեւ գիտաց
Յիսուս զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. Ամենայն թա-
գաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի. եւ ամենայն
քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ: Եւ
եթէ սատանայ զսատանայ հանէ, յանձն իւր բաժանեցաւ.
արդ՝ զիա՞րդ կացցէ թագաւորութիւն նորա: Եւ եթէ ես
բէեղզեբուղաւ հանեմ զդեւս՝ որդիքն ձեր ի՞ւ հանիցեն.
վասն այնորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք: Ապա թէ
Հոգւով Աստուծոյ հանեմ ես զդեւս, ուրեմն հասեալ է
ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ: Կամ զիա՞րդ կարէ
ոք մտանել ի տուն հզօրի եւ զգործիսն նորա յափշտակել.
եթէ ոչ նախ կապիցէ զհզօրն, եւ ապա զտունն նորա
յափշտակիցէ: Որ ոչ ընդ իս է, հակառակ իմ է. եւ որ ոչ
ժողովէ ընդ իս՝ ցրուէ: Վասն այդորիկ ասեմ ձեզ. Ամենայն
մեղք եւ հայհոյութիւնք թողցին մարդկան, բայց զՀոգւոյն
հայհոյութիւն մի՛ թողցի: Եւ որ ոք ասիցէ բան զՈրդւոյ
մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զՀոգւոյն սրբոյ ասիցէ՝ մի՛
թողցի նմա, մի՛ յայսմ աշխարհի եւ մի՛ ի հանդեր-
ձելումն: 32:

# ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

## ԱՌԱՋԻՆ ԿԻՐԱԿԷ ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ

### ԴԿ.

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. կգ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԳ. 11:

Եւ զայս գիտասջիք վասն ժամանակիս. զի արդ ժամ իսկ է մեզ ի քնոյ զարթնուլ. զի այժմ մերձ է մեզ փրկութիւն՝ քան յորժամ հաւատացաքն: Գիշերն մերժեցաւ եւ տիւն մերձեցաւ. ի բաց արասցուք այսուհետեւ զգործսն խաւարի, եւ զգեցցուք զզէնն լուսոյ: Իբրեւ ի տուընջեան զգաստացեալք շրջեսցուք, մի՛ անառակութեամբք եւ արբեցութեամբք, եւ մի՛ խառն անկողնովք եւ պղծութեամբք, եւ մի՛ նախանձու եւ հակառակութեամբք: Այլ զգեցարուք զՏէր Յիսուս Քրիստոս. եւ մարմնոյ խնամ մի՛ տանիք ի ցանկութիւնս: Այլ զտկարացեալն ի հաւատս ընկալարուք՝ մի՛ խղճիւ երկմտութեանց: Ոմն հաւատայ ուտել զամենայն, եւ որ հիւանդն է՝ բանջար



կերիցէ: Որ ուտէն, զայն՝ որ ոչն ուտէ, մի՛ անգոսնեսցէ. եւ որ ոչն ուտէ, զայն՝ որ ուտէն, մի՛ դատեսցի, քանզի Աստուած զնա ընկալաւ: Դու ո՞վ ես՝ որ դատիս զայլոյ ծառայ. իւրում Տեառն կայ կամ անկանի. բայց կացցէ, զի կարող է Տէր հաստատել զնա: Ոմն պահէ օր ըստ օրէ, եւ ոմն պահէ զօրհանապազ. իւրաքանչիւր ոք զիւր միտս հաճեսցէ: Որ խորհի զօրն՝ Տեառն խորհի, եւ որ ոչն խորհի զօրն՝ Տեառն չխորհի. եւ որ ուտէ՝ Տեառն ուտէ, եւ գոհանայ զԱստուծոյ. եւ որ ոչն ուտէ՝ Տեառն չուտէ՝ եւ գոհանայ զԱստուծոյ: Զի ոչ ոք ի մէնջ անձամբ կեայ, եւ ոչ անձամբ մեռանի: Եթէ կեամք՝ Տեառն կեամք, եւ եթէ մեռանիմք՝ Տեառն մեռանիմք. եւ արդ՝ եթէ կեամք եւ եթէ մեռանիմք, Տեառն եմք: Քանզի ի նոյն իսկ եւ Քրիստոս մեռաւ եւ եկեաց, զի մեռելոց եւ կենդանեաց առ հասարակ տիրեսցէ: Դու զի՞ դատիս զեղբայր քո, կամ ընդէ՞ր անգոսնես զեղբայր քո: Քանզի ամենեքեան կալոց եմք առաջի ատենին Աստուծոյ: Զի գրեալ է. Կենդանի եմ ես, ասէ Տէր. զի ինձ կրկնեսցի ամենայն ծունր, եւ ամենայն լեզու խոստովան եղիցի Աստուծոյ: Ապա ուրեմն իւրաքանչիւր ոք ի մէնջ ընդ անձին համարս տացէ Աստուծոյ: Այսուհետեւ մի՛ զմիմեանս դատեսցուք. այլ առաւել զայս դիք ի մտի՝ չդնել գայթագղութիւն եղբօրն: Զայս գիտեմ, եւ հաստատեալ եմ ի Քրիստոս Յիսուս, զի ոչ ինչ է պիղծ նովաւ. բայց այնմ՝ որ համարիցի ոք ինչ պիղծ, նմա է պիղծ: Զի եթէ վասն կերակրոյ եղբայրն քո տրտմի, ոչ եւս սիրով գնացեր. մի՛ կերակրովն քով զնա կորուսաներ, վասն որոյ Քրիստոսն մեռաւ: Մի՛ հայհոյեսցի բարին ձեր: Զի ոչ է արքայութիւն Աստուծոյ կերակուր եւ ըմպելի, այլ արդարութիւն եւ խնդութիւն եւ խաղաղութիւն ի Հոգին սուրբ: Զի որ յայսմ ծառայէ Քրիստոսի՝ հաճոյ է Աստուծոյ եւ ընտիր մարդկան: Ապա այսուհետեւ զհետ երթիցուք զխաղաղութեան եւ զշինութեան՝ որ առ միմեանս: Մի՛ վասն կերակրոյ քակեր զգործ Աստուծոյ: Ամենայն ինչ սուրբ է. այլ չար այնմ մարդոյ է՝ որ խղճիւն ուտիցէ: Լաւ է ոչ ուտել միս, եւ ոչ ըմպել գինի, եւ ոչ՝ որով եղբայրն քո գայթագղի կամ գթէ կամ տկարանայ: Դու ապաքէն հաւատս ունիս, կալ առանձինն առաջի Աստուծոյ. երանի՛ որ ոչ դատիցի զանձն,

որով զընկերն փորձիցէ: Բայց որ խղճէն, թէպէտ եւ ուտիցէ՝ դատապարտեալ է, զի ոչ ըստ հաւատոց. զի ամենայն ինչ որ ոչ ի հաւատոց է, մեղք են: Այլ այնմ, որ կարողն է հաստատել զձեզ ըստ աւետարանիս իմում եւ ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյն՝ ժամանակօքն յաւիտենից լռեցելոյ, եւ յայտնելոյ այժմիկ ի ձեռն գրոց մարգարէականաց, ըստ հրամանի մշտնջենաւորին Աստուծոյ, ի հնազանդութիւն հաւատոց, յամենայն հեթանոսս ծանուցելոյ՝ միայնոյ իմաստնոյն Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն: ԺԴ. 25:

Ալէլուիա, ալէլուիա. Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր. ծառայեցէք Տեառն ուրախութեամբ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

ԳԼ. Զ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զգոյշ լերուք ողորմութեան ձերում՝ մի՛ առնել առաջի մարդկան, որպէս թէ ի ցոյց ինչ նոցա. գուցէ եւ վարձս ոչ ընդունիցիք ի հօրէն ձերմէ՝ որ յերկինսն է: Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի՛ հարկաներ փող առաջի քո, որպէս կեղծաւորքն առնեն ի ժողովուրդս եւ ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա: Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի՛ գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո. որպէս զի եղիցի ողորմութիւն քո ի ծածուկ. եւ հայրն քո որ տեսանէ ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս: Եւ յորժամ յաղօթս կայցես, մի՛ լինիցիս որպէս կեղծաւորքն. զի սիրեն ի ժողովուրդս եւ յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս, որպէս զի երեւեսցին մարդկան. ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա: Այլ դու յորժամ կայցես յաղօթս, մուտ ի սենեակ քո եւ փակեա զդուրս քո, եւ կաց յաղօթս առ հայր քո ի ծածուկ. եւ հայրն քո որ տեսանէ ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս: Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շատխօս լինիք իբրեւ զհեթանոսսն. զի համարին թէ ի բազում խօսից



իւրեանց լսելի լինիցին: Արդ՝ մի՛ նմանիցէք նոցա. զի գիտէ հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչ չեւ ձեր խնդրեալ ինչ իցէ ի նմանէ: Եւ արդ՝ այսպէս կացէք դուք յաղօթս. Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո՝ որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն. զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն: Զի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ եւ ձեզ հայրն ձեր երկնաւոր: Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, եւ ոչ հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր: Եւ յորժամ պահիցէք՝ մի՛ լինիք իբրեւ զկեղծաւորսն տրտմեալք. որ ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երեւեսցին մարդկան թէ պահիցեն. ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա: Այլ դու յորժամ պահիցես, օծ զգլուխ քո եւ լուա զերեսս քո, զի մի՛ երեւեսցիս մարդկան իբրեւ զպահող, այլ հօր քում ի ծածուկ. եւ հայրն քո որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ: Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի. ուր ցեց եւ ուտիճ ապականեն, եւ ուր գողք ական հատանեն եւ գողանան: Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց եւ ոչ ուտիճ ապականեն, եւ ոչ գողք ական հատանեն եւ գողանան: Զի ուր գանձք ձեր են՝ անդ եւ սիրտք ձեր եղիցին: 21:

---

## ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

ԱՁ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. ճԽԴ. Արքայութիւն քո արքայութիւն ամենայն յաւիտենից. եւ տէրութիւն քո յազգէ մինչեւ յազգ:

Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր. եւ արդար է յամենայն գործս իւր:

Յակովբու առաքելոյն ի Կաթողիկեայց թղթոյն է ընթեր-
ցուածս. Գլ. Գ. 1:

Մի՛ բազում վարդապետք լինել, եղբարք. գիտասջիք,
զի մեծ դատաստան ընդունելոց եմք: Քանզի բազում ինչ
յանցանեմք ամենեքեան: Եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ,
նա է մարդ կատարեալ, որ կարողն է սանձահարել զամե-
նայն մարմին իւր: Տես զի ձիոց սանձս ի բերան դնեմք առ
անսալոյ նոցա մեզ, եւ զամենայն մարմինս նոցա նուաճեմք:
Ահաւասիկ եւ նաւք որպիսի՛ ինչ են, եւ ի սաստիկ հողմոց
վարին. եւ փոքր թեւովն շրջին յոր կոյս եւ միտք ուղղչին
կամիցին: Սոյնպէս եւ լեզու փոքր ինչ անդամ է, եւ մեծա-
մեծս բարբառի. ահա եւ սակաւ ինչ հուր զորպիսի՛ ան-
տառս հրդեհէ: Եւ լեզու հուր, զարդ անիրաւութեան,
լեզու հաստատեալ է յանդամս մեր, որ զամենայն մարմինն
ապականէ, եւ վառէ հրով զանիւ ծննդեան, եւ բորբոքեալ
տոչորի ի գեհենի: Ամենայն բնութիւն գազանաց եւ թռչնոց
եւ սողնոց եւ որ ի ծովու են, հնազանդեալ է եւ հնա-
զանդի մարդկեղէն բնութեան: Բայց զլեզու մարդկան ոչ ոք
կարէ հնազանդել, զչարն եւ զանկարգ եւ զլի թունօք մահա-
բերին: Նովաւ օրհնեմք զՏէրն եւ զՀայր, եւ նովաւ անի-
ծանեմք զմարդիկ՝ որ ըստ նմանութեան Աստուծոյ արարան:
Ի նմին բերանոյ ելանեն օրհնութիւնք եւ անէծք. ոչ է
պարտ, եղբա՛րք իմ, այսմ այսպէս լինել: Միթէ աղբիւր
անդստին ի միոյ ականէն բխիցէ՞ քաղցր եւ դառն: Միթէ
մարթ ի՞նչ իցէ, եղբա՛րք իմ, թզենւոյ ձէթ բերել կամ
որթոյ թուզ, եւ ոչ աղտաղտին տեղւոյ ջուր քաղցր
առնել: 12:

Ալէլուիա, ալէլուիա. Եկայք ցնծասցուք ի Տէր. աղա-
ղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.
Գլ. Դ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յայնժամ վարեցաւ (Յիսուս) յանապատ ի Հոգւոյն՝
փորձել ի սատանայէ: Եւ պահեալ զքառասուն տիւ եւ
զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ: Եւ մատուցեալ փոր-



ձիչն ասէ ցնա. Եթէ որդի ես Աստուծոյ՝ ասա զի քարինքս
այսոքիկ հաց լինիցին: Նա պատասխանի ետ եւ ասէ.
Գրեալ է՝ թէ Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն
բանիւ՝ որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ: Յայնժամ առեալ
ածէ զնա սատանայ ի քաղաքն սուրբ, եւ կացուցանէ զնա ի
վերայ աշտարակի տաճարին, եւ ասէ ցնա. Եթէ Որդի ես
Աստուծոյ՝ արկ զքեզ աստի ի վայր. զի գրեալ է՝ թէ
Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, եւ ի վերայ
ձեռաց բարձցեն զքեզ՝ զի մի՛ երբեք հարցես զքարի զոտն
քո: Ասէ ցնա դարձեալ Յիսուս. Գրեալ է՝ թէ Ոչ փոր-
ձեսցես զՏէր Աստուած քո: Դարձեալ առնու ածէ զնա
սատանայ ի լեառն մի բարձր յոյժ, եւ ցուցանէ նմա զամե-
նայն թագաւորութիւնս աշխարհի եւ զփառս նոցա. եւ ասէ
ցնա. Զայս ամենայն քեզ տաց՝ եթէ անկեալ երկիր պա-
գանիցես ինձ: Յայնժամ ասէ ցնա Յիսուս. Երթ յետս իմ,
սա՛տանայ. զի գրեալ է՝ Տեառն Աստուծոյ քում երկիր
պագցես, եւ զնա միայն պաշտեսցես: Ապա եթող զնա սա-
տանայ. եւ ահա հրեշտակք մատեան եւ պաշտէին զնա: 11:

---

## ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԱԿ.

Յամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մար-
մնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ
լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ
Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ
զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. Ե. Երգիր պագից ի տաճար սուրբ քո, երկիւղիւ
քո Տէր:

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քոյ Տէր. զի
օրհնեսցես դու զարդարն:

Յակովբու առաքելոյն ի Կաթողիկեայց թղթոյն է ընթեր-
ցուածս. Գլ. Գ. 13:

Ո՞վ իցէ իմաստուն եւ հանճարեղ ի ձեզ. ցուցցէ ի
բարւոք գնացից զգործս իւր հեզութեամբ իմաստութեան:

Ապա եթէ նախանձ եւ դառնութիւն եւ հակառակութիւն ունիցիք ի սիրտս ձեր, մի՛ պարծիք սուտ առնել զճշմարտութիւնն: Ոչ է իմաստութիւնս այս իջեալ ի վերուստ. այլ երկրաւոր, շնչաւոր եւ դիւական: Զի ուր հեռ եւ նախանձ է, անդ է անկարգութիւն եւ ամենայն իրք չարք: Իսկ վերին իմաստութիւնն, նախ զի սուրբ է. ապա խաղաղարար, հեզ, դիւրահաւան, լի ողորմութեամբ եւ պտղովք բարեաց, անխիղճ, առանց կեղծաւորութեան: Պտուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ՝ որ առնեն զխաղաղութիւն: Ուստի՞ պատերազմունք եւ ուստի՞ կռիւք ի ձեզ. ո՞չ յայսպիսի ցանկութեանց ձերոց, որ զօրացեալ են յանդամս ձեր: Ցանկանայք, եւ ոչ ունիք. սպանանէք եւ նախանձիք, եւ ոչ կարէք հասանել. պատերազմիք, կռուիք եւ ոչ ունիք. վասն զի ոչ խնդրէք: Խնդրէք եւ ոչ առնուք, վասն զի չարաչար խնդրէք. զի անդէն ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք: Շնացողք, ո՞չ գիտէք զի սէր աշխարհիս այսորիկ թշնամութիւն է առ Աստուած. զի որ ոք կամիցի սիրել զաշխարհ, թշնամի առնէ զանձն իւր Աստուծոյ: Կամ թէ վայրապա՞ր համարիցիք զոր ասէ գիրն. Առ նախանձ ինչ՝ որում փափագէ հոգին որ բնակեաց ի մեզ, տալ զառաւել շնորհսն. վասն որոյ ասէ. Տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց: Դ. 6:

Ալէլուիա, ալէլուիա. Երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէք Տեառն ամենայն երկիր. երգեցէք Տեառն եւ բարձր արարէք զանուն նորա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Դ. 12:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ իբրեւ լուաւ (Յիսուս) եթէ Յովհաննէս մատնեցաւ, մեկնեցաւ գնաց ի Գալիլեա: Եւ թողեալ զՆազարէթ, եկն բնակեցաւ ի Կափառնաում ի ծովեզերին, ի սահմանս Զաբուղովնի եւ Նեփթաղիմայ. զի լցցի բանն՝ որ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի. Երկիր Զաբուղովնի եւ երկիր Նեփթաղիմայ՝ ճանապարհ ծովու՝ յայնկոյս Յորդանանու, Գալիլեա հեթանոսաց: Ժողովուրդ որ նստէր ի խաւարի՝



ետես լոյս մեծ. եւ որոց նստէին յաշխարհին եւ ի ստուերս մահու՝ լոյս ծագեաց նոցա: Յայնմ հետէ սկսաւ քարոզել Յիսուս եւ ասել. Ապաշխարեցէք զի մերձեալ է արքայութիւն երկնից: 17:

---

## ԱՌԱՋԻՆ ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

ԲՁ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. 2Ե. Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ:

Յակովբու առաքելոյն ի Կաթողիկեայց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Դ. 7:

Հնազանդեցարուք այսուհետեւ Աստուծոյ, եւ կացէք հակառակ չարախօսին. եւ լիցի փախստական առ ի ձէնջ: Մերձեցարուք առ Աստուած, եւ մերձեսցի առ ձեզ: Սրբեցէք զձեռս, մեղաւորք, եւ ուղիղ արարէք զսիրտս, երկմիտք: Տառապեցարուք, սգացարուք եւ լացէք. ծաղր ձեր ի սուգ դարձցի, եւ ուրախութիւն ձեր՝ ի տրտմութիւն: Խոնարհեցարուք առաջի Տեառն, եւ բարձրացուսցէ զձեզ: Մի՛ բամբասէք զմիմեանս, եղբարք. որ բամբասէ զեղբայր իւր, կամ դատի զեղբայր իւր, զօրէնսն բամբասէ եւ զօրէնսն դատի. իսկ եթէ զօրէնսն դատիցիս, ոչ առնելի օրինացն ես, այլ դատաւոր: Մի է օրէնսդիր եւ դատաւոր, որ կարողն է փրկել եւ կորուսանել. դու ո՞ ես՝ որ դատիս զընկերն: Ահաւասիկ են, որ ասեն. Այսօր եւ վաղիւ երթիցուք յայս անուն քաղաք, եղիցուք անդ տարի մի, վաճառեսցուք եւ շահեսցուք: Որք ոչ գիտէք զվաղուին: Որպիսի՞ ինչ են կեանք ձեր. զի իբրեւ զմրրիկ էք, որ առ սակաւ մի երեւեալ եւ ապա ապականեալ: Փոխանակ զի ասէիք. Եթէ Տէր կամեսցի եւ կեցցուք, արասցուք զայս ինչ կամ զայն: Եւ արդ պարծիք

յամբարտաւանութեան ձերում. ամենայն ինչ այսպիսի պարծանք չարութեան են: Որ ոք գիտիցէ զբարին եւ ոչ առնիցէ, մեղք են նմա: 17:

Ալէլուիա, ալէլուիա. Սիրտ իմ խռովեցաւ յիս. եւ երկիւղ մահու անկաւ ի վերայ իմ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԳ. 1:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եկին ոմանք ի նմին ժամանակի, եւ պատմեցին նմա վասն Գալիլեացւոցն, որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհսն նոցա: Պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. Համարիք եթէ այն Գալիլեացիք եղեն մեղաւորք քան զամենայն Գալիլեացիս, զի զայնպիսի անցս կրեցին: Ոչ, ասեմ ձեզ. այլ եթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքին նոյնպէս կորնչիջիք: Կամ նոքա ութուտասանքն, յորոց վերայ անկաւ աշտարակն ի Սելովամ, եւ սպան զնոսա, համարիք եթէ նոքա պարտապանք եղեն քան զամենայն մարդիկ՝ որ բնակեալ են յԵրուսաղէմ: Ոչ, ասեմ ձեզ. այլ եթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյնպէս կորնչիջիք: Ասաց եւ զառակս զայս. Թզենի մի էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում. եւ եկն խնդրել պտուղ ի նմա, եւ ոչ եգիտ: Ասէ ցայգեգործն. Ահա երեք ամք են՝ յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ի թզենւոջդ եւ ոչ գտանեմ. արդ կտրեա զդա, ընդէ՞ր եւ զերկիրդ խափանէ: Նա պատասխանի ետ եւ ասէ. Տէր, թող զդա այս ամ եւս, մինչեւ շուրջ զդովաւ բրեցից եւ արկից աղբ. թերեւս արասցէ պտուղ. ապա թէ ոչ՝ յամէ եւս հատցես զդա: 9:

---

## ԱՌԱՋԻՆ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

ԲԿ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ



Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. ՂԸ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

Յակովբու առաքելոյն ի Կաթողիկեայց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 1:

Արդ այսուհետեւ, մեծատունք, լացէք եւ ողբացէք ի վերայ թշուառութեանցն, որ գալոց են ի վերայ ձեր: Զի մեծութիւնդ ձեր յոչինչ է, եւ հանդերձ ձեր կերակուր ցեցոյ: Արծաթ ձեր եւ ոսկի ժանկահար, եւ ժանկ նոցա լիցի ձեզ ի վկայութիւն, եւ կերիցէ զմարմինս ձեր. իբրեւ զհուր գանձեցէք աւուրցն յետնոց: Ահաւասիկ վարձք մշակաց որ գործեն զանդս ձեր, առ ձեզ են. զրկեալն ի ձէնջ աղաղակէ, եւ բողոք հնձողացն եհաս յականջս Տեառն զօրութեանց: Փափկացայք ի վերայ երկրի եւ զբօսայք, սնուցէք զսիրտս ձեր իբրեւ աւուր սպանման: Զրկեցէք, սպանէք զարդարն, որ ոչ կայր ձեզ հակառակ: Երկայնամիտ լերուք, եղբարք իմ, մինչեւ ի գալուստն Տեառն. ահա մշակ երկայնամտեալ սպասէ պատուական պտղոյն երկրի, մինչեւ առցէ զկանուխ եւ զանագան: Երկայնամտեցէք եւ դուք, եւ հաստատեցէք զսիրտս ձեր. զի գալուստն Տեառն մերձեալ է: Մի՛ տրտմեցուցանէք զմիմեանս, ե՛ղբարք, զի մի՛ դատիցիք. ահաւասիկ դատաւորն առ դուրս կայ: Օրինակ առէք, ե՛ղբարք, չարչարանաց եւ-երկայնմտութեան զմարգարէսն՝ որք խօսեցան յանուն Տեառն: Ահաւասիկ երանեմք համբերողաց. զհամբերութիւն Յովբայ լուարուք եւ զկատարումն Տեառն տեսէք. զի բազմագութ է Տէր եւ ողորմած: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Բարձր արարից զընտրեալն ի ժողովրդենէ իմմէ. գտի զԴաւիթ ծառայ իմ. եւ իւղով սրբով իմով օծի զնա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Թ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ մտեալ ի նաւ՝ անց յայնկոյս, եւ եկն ի քաղաք իւր: Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի, որ դնէր ի մահիճս. եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո: Եւ ահա ոմանք ի դպրացն ասեն ընդ միտս. Հայհոյէ դա: Ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. Ընդէ՞ր խորհիք դուք չարիս ի սիրտս ձեր. զի՞նչ դիւրին է. ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել՝ Արի եւ շրջեաց: Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս. յայնժամ ասէ ցանդամալոյծն. Արի, առ զմահիճս քո եւ երթ ի տուն քո: Եւ յարուցեալ գնաց ի տուն իւր: Իբրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան. եւ փառաւոր առնէին զԱստուած զտուիչն այնպիսի իշխանութեան՝ մարդկան: 8:

---

## ԱՌԱՋԻՆ ՈՒՐԲԱԹ

Գ. Զ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. Ղէ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Յակովբու առաքելոյն ի Կաթողիկեայց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 12:

Յառաջ քան զամենայն ինչ, եղբա՛րք իմ, մի՛ երդնուցուք, մի՛ յերկինս, մի՛ յերկիր, մի՛ յայլ ինչ երդումն. այլ եղիցի ձեր այոն այո եւ ոչն ոչ. զի մի՛ ի կեղծաւորութիւն ինչ անկանիցիք: Վշտանայցէ ոք ի ձէնջ, յաղօթս կացցէ. բերկրեսցի ոք, սաղմոս ասասցէ: Հիւան-



դանայցէ ոք ի ձէնջ, կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն, եւ արասցեն ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն. եւ աղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն, եւ յարուսցէ զնա Տէր. եւ եթէ մեղս ինչ իցէ գործեալ, թողցի նմա: Խոստովան եղերուք միմեանց զմեղս, եւ աղօթս արարէք ի վերայ միմեանց, որպէս զի բժշկեսջիք. քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոց յօգնականութիւն: Եղիա մարդ էր իբրեւ զմեզ չարչարելի. եւ յաղօթս եկաց, եւ ոչ տեղեաց յերկիր զերիս ամս եւ զվեց ամիս: Եւ դարձեալ եկաց յաղօթս, եւ ետուն երկինք զանձրեւ, եւ բուսոյց երկիր զպտուղ իւր: Եղբա՛րք իմ, եթէ ոք ի ձէնջ մոլորիցի ի ճշմարտութեան ճանապարհէ անտի, եւ դարձուսցէ ոք զնա. գիտասցէ, զի որ դարձուցանէ զմեղաւորն ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի իւր ի մահուանէ, եւ ծածկեսցէ զբազմութիւն մեղաց: 20:

Ալէլուիա, ալէլուիա. Վասն անուան քոյ Տէր քաւեա զմեղս իմ. զի բազում եղեն յոյժ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ե. 1:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն. եւ իբրեւ նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա: Եւ բացեալ զբերան իւր՝ ուսուցանէր զնոսա եւ ասէր. Երանի՛ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին: Երանի՛ հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր: Երանի՛ որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին: Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն: Երանի՛ այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն: Երանի՛ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին: Երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի՛ է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ եւ հալածեսցեն եւ ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ: Ցնծացէք եւ ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին: 12:

---

## ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ

### Գ.Կ.

### Սրբոյն Թէոդորոսի զինաւորի:

Ժամամուտ. Զօրական եւ վկայ ճշմարիտ՝ քաջ նահատակդ Քրիստոսի սուրբդ Թէոդորոս, որ փոխանակեցեր զմարմինդ ընդ հոգւոյդ քում փրկանս, եւ ոչ ածեր զմտաւ զսպառնալիսն Մաքսիմիանոսի Թագաւորին. այլ վերին ազդեցութեամբն՝ դիտելով զայրեցումն հոգւոց նոցա, վասն այնորիկ լուցեր զտաճար կռոց նոցա: Արդ ի յաղթող պատերազմի տօնողացս զօր նահատակութեան քոյ՝ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ճԺԵ. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց Թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ը. 28:

Բայց գիտեմք եթէ որոց սիրենն զԱստուած՝ յամենայնի գործակից լինի ի բարիս, որք հրաւիրանաւն կոչեցան: Զի զորս յառաջն ճանաչէր, յառաջագոյն հրաւիրեաց, կերպարանակից լինել պատկերի Որդւոյն իւրոյ. զի եղիցի նա անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց: Եւ զորս յառաջագոյնն հրաւիրեաց, զնոսին եւ կոչեաց. եւ զորս կոչեացն, զնոսին եւ արդարացոյց. եւ զորս արդարացոյցն, զնոսին եւ փառաւորս արար: Իսկ արդ զի՞նչ ասեմք առ այս. եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ: Որ յիւր Որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա, զիա՞րդ ոչ նովաւ հանդերձ զամենայն շնորհիցէ մեզ: Ո՞վ իցէ որ մեղադիր լինիցի ընտրելոց Աստուծոյ. Աստուած է որ արդարացուցանէ, իսկ արդ ո՞վ է որ դատապարտ առնիցէ. Քրիստոս Յիսուս՝ որ մեռաւն, մանաւանդ թէ յարուցեալ իսկ է, եւ է ընդ աջմէ Աստուծոյ, որ եւ բարեխօս իսկ է վասն մեր: Արդ ո՞վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն



Քրիստոսի. նեղութի՞ւն, թէ անձկութիւն, թէ հալածանք, թէ սով, թէ մերկութիւն, թէ վիշտք, թէ սուր: Որպէս եւ գրեալ է. Վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք իբրեւ զոչխար ի սպանդ: Այլ յայսմ ամենայնի առաւել յաղթեմք նովաւ՝ որ սիրեացն զմեզ: Քանզի հաստատեալ եմ՝ եթէ ոչ մահ եւ ոչ կեանք եւ ոչ հրեշտակք եւ ոչ իշխանութիւնք եւ ոչ որ կանս եւ ոչ հանդերձեալքն եւ ոչ զօրութիւնք, եւ ոչ բարձրութիւնք եւ ոչ խորութիւնք եւ ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ ի սիրոյ անտի Աստուծոյ, որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր: 39:

Ալէլուիա, ալէլուիա. Ուրախ լիցին ամենեքեան որք յուսացեալ են ի քեզ. յաւիտեան ցնծասցեն, եւ բնակեսցիս դու ի նոսա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ժ. 16:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց. եղերուք այսուհետեւ խորագէտք իբրեւ զօձս, եւ միամիտք իբրեւ զաղաւնիս: Զգոյշ լինիջիք ի մարդկանէ. զի մատնեսցեն զձեզ յատեանս, եւ ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ: Եւ առաջի դատաւորաց եւ թագաւորաց տանիցին զձեզ վասն իմ ի վկայութիւն նոցա եւ հեթանոսաց: Այլ յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հոգայցէք՝ թէ ո՛րպէս կամ զի՞նչ խօսիցիք. զի տացի ձեզ ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք: Զի ոչ եթէ դուք իցէք՝ որ խօսիցիքն այլ Հոգին հօր ձերոյ՝ որ խօսիցի ի ձեզ: Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, եւ հայր զորդի. եւ յառնիցեն որդիք ի վերայ հարց եւ սպանանիցեն զնոսա: Եւ եղիցիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ. իսկ որ համբերեսցէ ի սպառ, նա կեցցէ: 22:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ

ՓԱՍԱՏՈՒՓ: Ա՛ԻԱՃԻՆ Ուրդի եւ Լանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Ա՛րիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Աղ. կԴ. Ա՛ռեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք Երուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԲ. 1:

Ընդունէմ զձեզ, եղբարք, զթութեամբքն Աստուծոյ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, զհօսսուն պաշտօնդ ձեր: Եւ մի՛ կերպանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ, այլ նորոգեցարուք ի նորոգութիւն մտաց ձերոց, առ ի քննել ձեզ զլաւն, եւ եթէ զինչ են կամքն Աստուծոյ, բարին եւ հաճոյն եւ կատարեալն: Ո՛յս ասեմ ընդհօքն Աստուծոյ՝ որ տուեալ են ինձ, ամենայնի որ է ի ձեզ, մի՛ առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ. այլ խորհել ի զգաստանալ իւրաքանչիւր՝ որպէս եւ բաժանեաց Աստուած չափ հաւատոյ: Որպէս ի միում մարմնի անդամս բազումս ունիմք, եւ անդամքն ամենայն ոչ զնոյն գործ ունին. նոյնպէս եւ բազումքս մի մարմին եմք ի Ա՛րիստոս. այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք: Ունայց ունիմք մեք շնորհս ըստ շնորհացն, որ տուեալ են մեզ ազգս ազգս. եթէ մարգարէութիւն՝ ըստ չափոյն հաւատոյ, եթէ պաշտօն՝ ըստ պաշտամանն, եթէ որ ուսուցանէն՝ ըստ վարդապետութեանն, եթէ որ մխիթարէն՝ ըստ մխիթարութեանն. որ առատն է՝ զուարթութեամբ. որ վերակացուն է՝ փութով. որ ողորմին՝ լջմտութեամբ: Սէր առանց կեղծաւորութեան, ատել զչար, զհետ երթալ բարեաց. յեղբայրսիրութեան առ միմեանս զթածք,



ի պատիւ զմիմեանս ելանել. ի փոյթ մի՛ վհերոտք. հոգւով եռացեք, Տեառն ծառայեցէք, յուսով խնդացէք, նեղութեանց համբերեցէք, աղօթից ստէպ կացէք, ի պէտս սրբոց հաղորդեցարուք, զհիւրասիրութեան զհետ երթայք: Օրհնեցէք զհալածիչս ձեր, օրհնեցէք եւ մի՛ անիծանէք: Խնդալ ընդ խնդացողս, լալ ընդ լացողս: Ոնոյն միմեանց խորհիլք. մի՛ ամբարտաւանէք, այլ ընդ խոնարհս զիջանիլք. մի՛ լինիք իմաստունք յանձինս ձեր: Մի՛ ումեք չարի չար հատուցանէք. խորհեցարուք զբարիս առաջի ամենայն մարդկան: Եթէ հնար ինչ իցէ ձեզ՝ ընդ ամենայն մարդկան զհաղաղութիւն կալջիք: Մի՛ զանձանց վրէժ խնդրէք, սիրելիք, այլ տուք տեղի բարկութեան. քանզի գրեալ է. Իմ է վրէժխնդրութիւն, եւ ես հատուցից, ասէ Տէր: Եւ եթէ քաղցեալ իցէ թշնամին քո՝ հաց տուր նմա, եւ եթէ ծարաւի՝ ջուր տուր նմա. զայս արարեալ՝ կայծակունս հրոյ կուտեացես ի գլուխ նորա: Մի՛ յաղթիր ի չարէ, այլ յաղթեա բարւոյն չարին: Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ էր ի հնազանդութեան կացցէ. քանզի ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ. եւ որ են, յԱստուծոյ կարգեալ են: Ընդհետեւ որ հակառակ կայ իշխանութեան, Աստուծոյ հրամանին հակառակ կայ. եւ որ հակառակն կան, անձանց դատաստանս ընդունին: Ոչ իշխանք ոչ են յերկիւղ բարեաց գործոց, այլ չարեաց: Կամիս չերկնչել յիշխանութենէ անտի. զբարիս գործեա, եւ ընկալցիս գովութիւն ի նմանէ. զի Աստուծոյ պաշտօնեայ է քեզ ի բարիս: Ապա եթէ չար գործիցես, երկիր. զի ոչ եթէ վայրապար սաճեալ է սուսեր ընդ մէջ. Աստուծոյ սպասաւոր է՝ վրէժխնդիր ի բարկութիւն, այնմ՝ որ զչարն գործիցէ: Պատն որոյ հարկ է հնազանդ լինել՝ ոչ միայն վասն բարկութեան, այլ եւ վասն խղճի մտացն: Պատն այնորիկ եւ հարկս հարկանէք, զի Աստուծոյ սպասաւորք են ի նոյն կանխեալք: Արդ հատուցէք ամենեցուն զպարտս, որում հարկ՝ հարկն, որում մաքս՝ մաքսն, որում զերկիւղ՝ զերկիւղն, որում զպատիւ՝ զպատիւն: Եւ մի՛ ումեք պարտական գտանիցիք, բայց զիմմեանս սիրելոյ. զի որ սիրէ զընկերն, զօրէնսն կատարէ. զմի ընայցեսն, եւ մի՛ սպանանիցես, եւ մի՛ գողանայցես, եւ մի՛ սուտ վկայիցես, եւ մի՛ ցանկանայցես. եւ եթէ այլ ինչ պատուիրան է՝ յայն

բան բովանդակի, եթէ Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն
քո: Սէր ընկերի իւրում չար ոչ առնէ. լրումն օրինացն
սէր է: ԺԳ. 10:

Ալէլուիա, ալէլուիա. Աղաղակեցէք առ Տէր ամենայն
երկիր. Ծառայեցէք Տեառն ուրախութեամբ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.
ԳԼ. Ե. 17:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմար-
գարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ: Ամէն ասեմ ձեզ՝
մինչեւ անցցեն երկինք եւ երկիր, յովտ մի՝ որ նշանախեց մի
է, ոչ անցցէ յօրինացն եւ ի մարգարէից՝ մինչեւ ամենայն
եղիցի: Որ ոք լուծցէ մի ինչ ի պատուիրանացս յայսցանէ
ի փոքունց, եւ ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի
յարքայութեան երկնից. իսկ որ արասցէ եւ ուսուսցէ, նա
մեծ կոչեսցի յարքայութեան երկնից: Բայց ասեմ ձեզ. զի
եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան
զդպրացն եւ զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն
երկնից: Լուարուք զի ասացաւ առաջնոցն, թէ Մի՛ սպա-
նաներ. զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի:
Այլ ես ասեմ ձեզ. թէ ամենայն որ բարկանայ եղբօր
իւրում տարապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի. եւ
որ ասիցէ ցեղբայր իւր՝ յիմար, պարտաւոր լիցի ատենի. եւ
որ ասիցէ ցեղբայր իւր՝ մորոս, պարտաւոր լիցի ի գեհեն
հրոյն: Եթէ մատուցանիցես զպատարագ քո ի վերայ սե-
ղանոյ, եւ անդ յեշեսցես՝ եթէ եղբայր քո ունի ինչ խէթ
զքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն. եւ երթ
նախ հաշտեաց ընդ եղբօր քում, եւ ապա եկեալ մատուս-
ջիր զպատարագն քո: Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում
վաղագոյն, մինչ դեռ իցես ընդ նմա ի ճանապարհի. գուցէ
մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, եւ դատաւորն դահճի.
եւ արկանիցիս ի բանտ: Ամէն ասեմ քեզ. Ոչ ելանիցես
անտի, մինչեւ հատուցանիցես զյետին նաքարակիտն: Լուա-
րուք զի ասացաւ. Մի՛ շնար: Բայց ես ասեմ ձեզ, թէ
ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա, անդէն
շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում: Եթէ ակն քո աջ գայ-



թակղեցուցանէ զքեզ, խլեա զնա եւ ընկեա ի քէն. զի լաւ
է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, եւ մի՛ ամենայն
մարմինդ քո անկանիցի ի գեհեն: Եւ եթէ աջ ձեռն քո
գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա եւ ընկեա ի քէն. զի
լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, եւ մի՛ ամենայն
մարմինդ քո անկանիցի ի գեհեն: Ապաքէն ասացաւ, թէ
Որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն: Բայց ես
ասեմ ձեզ, եթէ ամենայն որ արձակէ զկին իւր առանց
բանի պոռնկութեան, նա տայ նմա շնալ. եւ որ զարձա-
կեալն առնէ՝ շնայ: Դարձեալ լուարուք զի ասացաւ առա-
ջնոցն. Մի՛ երդնուցուս սուտ, բայց հատուսցես Տեառն
զերդմունս քո: Այլ ես ասեմ ձեզ՝ ամենեւին մի՛ երդնուլ.
մի՛ յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ, եւ մի՛ յերկիր՝ զի պա-
տուանդան է ոտից նորա, եւ մի՛ յԵրուսաղէմ՝ զի քաղաք
է մեծի արքայի. եւ մի՛ ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ
կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ: Այլ եղիցի
ձեր բան, այոն այո, եւ ոչն ոչ. զի աւելին քան զայն ի
չարէն է: Լուարուք զի ասացաւ, Ակն ընդ ական, եւ ատամն
ընդ ատաման: Այլ ես ասեմ ձեզ. մի՛ կալ հակառակ
չարին. այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ դարձո
նմա եւ զմիւսն: Եւ որ կամիցի ոք դատել եւ առնուլ
զշապիկս քո, թող ի նա եւ զբաճկոն քո: Եւ որ տարապար-
հակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա եւ երկուս:
Որում խնդրէ ի քէն՝ տուր. եւ որ կամի փոխ առնուլ ի
քէն՝ մի՛ դարձուցաներ զերեսս: Լուարուք ապաքէն զի ասա-
ցաւ. Սիրեսցես զընկեր քո, եւ ատեսցես զթշնամին քո:
Այլ ես ասեմ ձեզ. սիրեցէք զթշնամիս ձեր. օրհնեցէք
զանիծիչս ձեր. բարի արարէք ատելեաց ձերոց. եւ աղօթս
արարէք ի վերայ այնոցիկ՝ որ լլկենն զձեզ եւ հալածեն. զի
եղիջիք որդիք հօր ձերոյ որ յերկինսն է. զի զարեգակն իւր
ծագէ ի վերայ չարաց եւ բարեաց, եւ ածէ անձրեւ ի վերայ
արդարոց եւ մեղաւորաց: Զի եթէ սիրիցէք զայնոսիկ որ
սիրենն զձեզ, զի՞նչ վարձք իցեն. ո՞չ ապաքէն եւ մաք-
սաւորք զնոյն գործեն: Եւ եթէ տայցէք միայն ողջոյն բարե-
կամաց ձերոց, զի՞նչ աւելի առնէք. ո՞չ ապաքէն մաքսաւորք
եւ մեղաւորք զնոյն գործեն: Արդ՝ եղերուք դուք կատա-
րեալք, որպէս եւ հայրն ձեր երկնաւոր կատարեալ է: 48:

Ի վճռակս յորս ասվորս–ին–ն է վաղեմն՝ ց19 Մարտի առաւաչինն կատարել զօր

**Սրբոյն Յովսեփայ Աստուածահօրն,**

զայս կարգ կալցին.

Ժամամուտ. Տէր որ հիմնեցուցեր զեկեղեցի քո ի վերայ վէմին հաւատով. եւ կարգեցեր ի սմա առաքեալս եւ մարգարէս, հովիւս եւ վարդապետս՝ առ ի հաստատութիւն սրբոց. եւ ճգնութեամբ վկայից զթշնամին սորա վանեցեր. ի խաղաղութեան զաս պահեա, Աստուած, որպէս մարդասէր:

Աղ. կէ. Եկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղերացն Իսրայէլի:

Յարիցէ Աստուած եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա:

Պօղոսի առաքելոյն Ա֊փեսացւոց թղթոյն է ընթերցուած.

Գլ· Ա· 3:

Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ յերկինսն ի Քրիստոս: Որպէս ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն աշխարհի, լինել մեզ սուրբս եւ անարատս առաջի նորա սիրով: Յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդեգրութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ի նոյն ըստ հաճութեան կամաց իւրոց, ի գովեստ փառաց շնորհաց իւրոց, որով զուարճացոյց զմեզ սիրելեաւն: Որով ունիմք զփրկութիւն ի ձեռն արեան նորա զթողութիւն մեղաց ըստ մեծութեան շնորհաց իւրոց, որ առաւելաւ ի մեզ ամենայն իմաստութեամբ եւ գիտութեամբ: Եցոյց մեզ զխորհուրդս կամաց իւրոց ըստ հաճութեան իւրում. զոր յառաջագոյն եդ նովաւ, ի տնտեսութիւն լրման ժամանակաց, բովանդակել զամենայն Քրիստոս, որ ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի ի նմա: Որով եւ վճռակեցաք յառաջագոյն հրաւիրեալք ըստ յառաջադրութեան Աստուծոյ, որ զամենայն յաջողէ ըստ խորհրդոյ



կամաց իւրոց, լինել մեզ ի գովեստ փառաց նորա յառաջագոյն յուսացելոցս ի Քրիստոս: 12:

Ալէլուիա, ալէլուիա. Եկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ· Ե· 18:

Այսպէս ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս: Խօսեցեալ զմայր նորա Մարիամ Յովսեփու, մինչ չեւ եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ի Հոգւոյն սրբոյ: Եւ Յովսէփ այրն նորա, քանզի արդար էր եւ ոչ կամէր առակել զնա, խորհեցաւ լռելեայն արձակել զնա: Եւ մինչ զեռ նա զայս աճէր զմտաւ, ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երեւեցաւ նմա եւ ասէ. Յովսէփ որդի Դաւթի, մի երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ ի նմայն ծնեալ է ի Հոգւոյն սրբոյ է: Ծնցի որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս. զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց: 21:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Գ·կ·

Ժամամուտ: Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր եւ լուսաւորեցեր զմիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Աղ· ՃԽԴ· Ընդայութիւն քո արքայութիւն ամենայն յաւիտենից. եւ տէրութիւն քո յազգէ մինչեւ յազգ:

Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր. եւ արդար է յամենայն գործս իւր:

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս։ Գլ. Ա. 1։

Պետրոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի, ընտրելոց նժդեհից՝ որ ի սփիւռս Պոնտացւոց, Գաղատացւոց եւ Կապադովկացւոց եւ Ասիացւոց եւ Բիւթանացւոց, ըստ կանուխ գիտութեանն Աստուծոյ Հօր, սրբութեամբ Հոգւոյն, ի հնազանդութիւն եւ ի հեղումն արեանն Յիսուսի Քրիստոսի. շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն բազմասցի։ Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի, ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց, յանեղծ եւ յանարատ եւ յանթառամ ժառանգութիւնն որ պահեալ է յերկինս ձեզ. որ զօրութեամբն Աստուծոյ պահեալ էիք հաւատովք ի պատրաստեալ փրկութիւնն, յայտնեալ ի յետին ժամանակս։ Որով ուրախ լինիջիք, որք այժմ սակաւիկ ինչ ըստ պատշաճի իրացդ տրտմեալ էք ի պէսպէս փորձութիւնս։ Զի հանդէս ձերոց հաւատոցն առաւել քան զոսկի կորստական պատուական է. որ հրով փորձեալ՝ գտաւ ի գովութիւն եւ ի փառս եւ ի պատիւ ի յայտնութեանն Յիսուսի Քրիստոսի։ Զոր ոչն տեսէք, եւ սիրեցէք. ընդ որ այժմ ոչ հայեցեալք, բայց հաւատացէք. եւ ուրախ էք անճառ եւ փառաւորեալ խնդութեամբն, ընկալեալ զկատարումն հաւատոցն ձերոց զոգւոցն փրկութիւն։ Վասն որոյ փրկութեան խնդրեցին եւ քննեցին եւ մարգարէքն, որք վասն որոյ ի ձեզ լինելոց էին շնորհքն, մարգարէանային։ Քննէին յորում եւ յորպիսի ժամանակի գուշակէր ի նոսա Հոգին Քրիստոսի, որ նախ զչարչարանացն Քրիստոսի վկայէր եւ յետ այնորիկ զփառացն։ Որոց եւ յայտնեցաւ իսկ. զի ոչ եթէ անձանց, այլ մեզ մատակարարք լինէին, նոցին՝ որք այժմ պատմեցան, այնոքիւք՝ որք աւետարանեցինն ձեզ Հոգւովն սրբով, որ առաքէրն յերկնից, զոր ցանկային տեսանել գոնեայ ընդ աղօտ հրեշտակք։ 12։

Ալէլուիա, ալէլուիա. Եկայք ցնծասցուք ի Տէր. աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր։



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի. Գլ. Թ. 18։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Մինչ դեռ նա զայն խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մատուցեալ երկիր պագանէր նմա եւ ասէր. Դուստր իմ արդ եւս վախճանեցաւ. այլ եկեալ դիցես զձեռն քո ի վերայ նորա եւ կեցցէ։ Յարեաւ Յիսուս եւ գնաց զկնի նորա աշակերտօքն հանդերձ։ Եւ ահա կին մի տեռատես երկոտասանամեայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ ի դրօշակ հանդերձի նորա։ Քանզի ասէր ի մտի իւրում. Թէ միայն մերձենամ ի հանդերձս նորա փրկիմ։ Իսկ Յիսուս իբրեւ դարձաւ եւ ետես զնա՝ ասէ. Քաջալերեաց, դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ. եւ փրկեցաւ կինն ի ժամէն յայնմանէ։ Իբրեւ եկն Յիսուս ի տուն իշխանին, եւ ետես զփողարսն եւ ամբոխ յոյժ, ասէ ցնոսա. Ի բաց գնացէք. զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ, այլ ննջէ։ Եւ ծաղր առնէին զնա։ Եւ իբրեւ ել ամբոխն ի բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ նորա, եւ յարեաւ աղջիկն։ Եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն։ 26։

---

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԱՁ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր եւ լուսաւորեցեր զտիեզերս, զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն. որ յամենայնի ես դու կարող մարդասէր։

Սղ. Ե. Երկիր պագից ի տաճար սուրբ քո, երկիւղիւ քո Տէր։

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քոյ Տէր. զի օրհնեսցես դու զարդարն։

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 13:

Որով պնդեալ զմէջս մտաց ձերոց, զուարթացեալք բովանդակ սպասեցէք հասելոց ձեզ շնորհացն ի յայտնութեանն Յիսուսի Քրիստոսի, իբրեւ զորդիս հնազանդութեան. մի՛ կերպարանեալք առաջին ձերովք անգիտութեանն ցանկութեամբք. այլ ըստ սրբոյն՝ որ կոչեաց զձեզ, եւ դուք սուրբք յամենայն գնացս ձեր լինիջիք: Վասն որոյ գրեալ է, եթէ Եղերուք սուրբք, զի ես սուրբ եմ: Եւ եթէ հայր կոչիցէք զայն, որ առանց ակնառութեան դատի ըստ իւրաքանչիւր գործոց, ապա երկիւղիւ զձերոյ պանդխտութեան ժամանակս գնասջիք: Գիտասջիք, զի ոչ ապականացու արծաթեղինօք եւ ոսկեղինօքն փրկեցարուք ի ձերոց ունայնութեան հայրենատուր գնացիցն. այլ պատուական արեամբն Քրիստոսի, իբրեւ անբիծ եւ անարատ գառին. որ յառաջծանօթն էր նախ քան զիսկզբանէ աշխարհի, եւ երեւեցաւ ի վախճան ժամանակաց վասն ձեր, որք նովաւ հաւատացէք յԱստուած՝ որ յարոյց զնա ի մեռելոց, եւ ետ նմա փառս. զի հաւատքն ձեր եւ յոյս իցեն յԱստուած: Զանձինս ձեր սրբել հնազանդութեամբ ճշմարտութեանն, յեղբայրսիրութեան առանց կեղծաւորութեան, ի սուրբ սրտէ սիրել սերտիւ զմիմեանս: Ծնեալք վերստին ոչ յապականութեան սերմանէն, այլ յանապականացուէն, կենդանի եւ մշտնջենական բանիւն Աստուծոյ: Քանզի ամենայն մարմին իբրեւ զխոտ է, եւ ամենայն փառք մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ: Խոտն ցամաքեցաւ, եւ ծաղիկն թօթափեցաւ. եւ բան Տեառն մնայ յաւիտեան, այսինքն է բանն՝ որ ի ձեզ աւետարանեցաւ: 25:

Ալէլուիա, ալէլուիա. Երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէք Տեառն ամենայն երկիր. երգեցէք Տեառն եւ բարձր արարէք զանուն նորա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Թ. 27:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ մինչ դեռ անցանէր ընդ այն (Յիսուս) զհետ եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին եւ ասէին. Ողորմեաց մեզ



որդի Դաւթի: Եւ իբրեւ եկն ի տուն, մատեան առ նա կոյրքն. եւ ասէ ցնոսա Յիսուս. Հաւատայք՝ եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա՝ Այո՛ Տէր: Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա եւ ասէ. Ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ: Եւ բացան աչք նոցա. եւ սաստեաց նոցա Յիսուս եւ ասէ. Զգոյշ կացէք մի՛ ոք գիտասցէ: Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն: Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա այր մի՝ համր դիւահար: Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն. եւ զարմացան ժողովուրդքն եւ ասեն, թէ Եւ ոչ երբեք երեւեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի: Իսկ փարիսեցիքն ասէին, թէ Իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս: 34:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

ԱԿ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քս, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. 2Ե. Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 1:

Ի բաց թօթափել այսուհետեւ զամենայն չարութիւն եւ զամենայն նենգութիւն եւ զկեղծաւորութիւնս եւ զնախանձ եւ զամենայն չարախօսութիւն: Իբրեւ զարդի ծնեալ մանկունս խօսունս, եւ անխարդախ կաթինն փափագիցէք. զի նովաւ աճիցէք ի փրկութիւն: Եթէ ճաշակիցէք, զի քաղցր է Տէր: Առ որ մատուցեալ ի վէմն կենդանի, որ թէպէտ ի մարդկանէ անարգեալ, այլ առ ի յԱստուծոյ ընտրեալ եւ պատուական է: Եւ դուք իբրեւ զվէմս կեն-

դանիս շինիք տաճար հոգեւոր. յանարատ քահանայութիւն մատուցանել Հոգեւորն պատարագ հաճոյս Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի: Վասն կայ իսկ ի գրի, թէ Ահաւասիկ դնեմ ի Սիովն վէմ ընտիր, գլուխ անկեան պատուական, եւ որ ի նա հաւատացէ՝ մի՛ ամաչեցէ: Ձեզ այսուհետեւ հաւատացելոց է վէմ պատուական. իսկ անհաւատիցն՝ վէմ զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան. եւ վէմ գլորման եւ վէմ գայթագղութեան, որ գայթագղին ապստամբեալք ի բանէն՝ յոր եւ եդանն: Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական. որպէս զի զձեր առաքինութիւնան նուիրիցէք այնմ, որ զձեզ ի խաւարէն կոչեաց լիւր սքանչելի լոյն: Որք երբեմն չժողովուրդ, բայց արդ ժողովուրդ Աստուծոյ, որք չողորմեալք՝ այժմ ողորմութիւն գտէք: Սիրելիք, աղաչեմ, իբրեւ զպանդուխտս եւ զնժդեհս ի բաց մերժել ի մարմնաւոր ցանկութեանցն, որ զինուորին ընդդէմ ոգւոց: Ունելով ձեր ի մէջ հեթանոսաց պարկեշտս ցուցանել. զի որով բամբասիցեն զձեզ իբրեւ զչարագործս, ի բարւոք գործոցն ձերոց դիտեալ՝ փառաւորս առնիցեն զԱստուած յաւուրն այցելութեան: 12:

Ալէլուիա, ալէլուիա: Տէր, մի՛ սրամտութեամբ քով յանդիմաներ զիս. եւ մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

ԳԼ. Թ. 9:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ անցեալ ընդ այն (Յիսուսի) տեսս այր մի, զի նստէր ի մաքսաւորութեան՝ Մատթէոս անուն. եւ ասէ ցնա. Ելի զկնի իմ. եւ յարուցեալ գնաց զկնի նորա: Եւ եղեւ իբրեւ բազմեալ էր նա ի տանն, եւ ահա մաքսաւորք եւ մեղաւորք եկեալ եւ բազմեալ էին ընդ Յիսուսի եւ ընդ աշակերտս նորա: Իբրեւ տեսին փարիսեցիքն՝ ասեն ցաշակերտս նորա. Ընդէ՞ր ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր: Իսկ Յիսուս իբրեւ լուաւ՝ ասէ ցնոսա. Ոչ պիտոյ է բժիշկ կարողաց՝ այլ հիւանդաց: Երթայք ուսարուք զինչ է՝ Ողորմութիւն կամիմ, եւ ոչ



զզոհ. զի ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս: Յայնժամ մատեան առ նա աշակերտքն Յովհաննու եւ ասեն. Ընդէ՞ր մեք եւ փարիսեցիքն պահեմք յաճախ, եւ քո աշակերտքդ ոչ պահեն: Ասէ ցնոսա Յիսուս. Միթէ մանկունք առագաստի սուգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ նոսա իցէ. այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն, եւ ապա պահեսցեն: Ոչ ոք արկանէ կապերտ անթափ ի վերայ հնացեալ ձորձոյ. զի առնու լանէ զլուսթիւն նորա ի հանդերձէն, եւ եւս չար պատառումն լինի: Եւ ոչ արկանեն գինի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ տիկքն պատառին եւ գինին հեղու, եւ տիկքն կորնչին. այլ արկանեն գինի նոր ի տիկս նորս, եւ երկոքինն պահին: 17:

## ԵՐԿՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### ՒՉ.

Յաղագս. Որ ի ՚ՀՕրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր եւ լուսաւորեցեր զերեսս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կալող մարդասէր:

Սղ. ՂԲ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

Պետրոսի առաքելոյն ի Պանտողիկացց առաջին թղթոյն է ընթերցուած. ԳԼ. Բ. 13:

Ընդունդ լերուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոյ վասն Տեառն. եթէ թագաւորի՝ իբրեւ առաւել ումեք, եթէ դատաւորաց՝ իբրեւ ի նմանէ առաքելոց ի վրէժխնդրութիւն չարագործացն եւ ի գովութիւն բարեգործաց: Օք այսպէս են կամք Աստուծոյ, բարեգործացն պապանձել զանգիտութիւն: Իբրեւ ազատս լինել, եւ մի՛ իբրեւ պատրուակ չարութեան ունել

զազատութիւնն. այլ իբրեւ Աստուծոյ ծառայք: Զամենեսեան պատուեցէք. զեղբայրսիրութիւն սիրեցէք. յԱստուծոյ երկերուք. զթագաւորս պատուեցէք: Ծառայք, հնազանդ լինել յամենայնի երկիւղիւ տերանց, ոչ միայն բարերարացն եւ հեզոց, այլ եւ կամակորացն: Զի այս շնորհք յԱստուծոյ են, եթէ բարւոք ինչ մտօք տանիցի ոք վշտաց յանիրաւի: Քանզի զի՞նչ երախտիք իցեն, եթէ յորժամ մեղանչիցէք՝ տանջիցիք եւ համբերիցէք. այլ թէ բարիս գործիցէք՝ չարչարիցիք եւ համբերիցէք, այն շնորհք յԱստուծոյ են: Քանզի ի դոյն իսկ կոչեցարուք. զի եւ Քրիստոս վասն ձեր մեռաւ եւ ձեզ եթող օրինակ, զի զհետ երթայցէք հետոց նորա. որ ոչն արար մեղս, եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա: Որ բամբասեալ, եւ ոչ փոխարէն բամբասէր. չարչարեալ, եւ ոչ պահէր սպառնալիս, բայց իրաւամբք մատնէր դատաւորին: Որ զմեր մեղսն իւրով մարմնովն վերացոյց ի խաչափայտն, զի լիցուք զերծեալք ի մեղաց անտի, եւ իցեմք արդարութեանն կենակիցք. որոյ վիրօքն բժշկեցայք: Քանզի էիք իբրեւ զոչխարս մոլորեալս. այլ այժմ դարձարուք առ հովիւն եւ տեսուչ ոգւոց ձերոց: 25:

Ալէլուիա, ալէլուիա. Բարձր արարից զընտրեալն ի ժողովրդենէ իմմէ. գտի զԴաւիթ ծառայ իմ, եւ իւղով սրբով իմով օծի զնա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԲ. 22:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր եւ համր, եւ բժշկեաց զնա. որպէս զի համրն եւ կոյրն խօսիցի եւ տեսանիցէ: Զարմացան ամենայն ժողովուրդքն եւ ասէին. Միթէ սա՞ իցէ Քրիստոսն՝ որդի Դաւթի: Բայց փարիսեցիքն իբրեւ լուան՝ ասեն: Ոչ իւիք հանէ դա զդեւս՝ եթէ ոչ բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց: Իբրեւ գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի. եւ ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ: Եւ



եթէ սատանայ զսատանայ հանէ, յանձն իւր բաժանեցաւ. արդ՝ զիա՞րդ կացցէ թագաւորութիւն նորա: Եւ եթէ ես բէեղզեբուղաւ հանեմ զդեւս, որդիքն ձեր ի՞ւ հանիցեն. վասն այնորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք: Ապա թէ Հոգւով Աստուծոյ հանեմ ես զդեւս, ուրեմն հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ: Կամ զիա՞րդ կարէ ոք մտանել ի տուն հզօրի եւ զգործիսն նորա յափշտակել. եթէ ոչ նախ կապիցէ զհզօրն, եւ ապա զտունն նորա յափշտակիցէ: Որ ոչ ընդ իս է՝ հակառակ իմ է. եւ որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ: 30:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

ԲԿ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 1:

Սոյնպէս եւ կանայք հնազանդ լինել արանց իւրեանց. զի եթէ իցեն նոքա ապստամբք ի բանէ անտի, յաղագս կանանց գնացից եւ առանց բանին իսկ շահեսցին, դիտել երկիւղիւ զձեր պարկեշտ գնացս: Որոց լինիցի ոչ արտաքուստ հիւսիւք եւ ոսկեհուռ ծամակալօք կամ պաճուճեալ զգեստուք զարդ. այլ ծածուկ սրտին մարդն, անեղծութեամբ հեզութեան եւ հանդարտութեան հոգւոյն, որ է առաջի Աստուծոյ բազմապատիկ: Քանզի այսպէս երբեմն եւ կանայք՝ որ յուսացեալ էին յԱստուած, զարդարէին զանձինս հնազանդել իւրեանց արանց: Որպէս եւ Սառայ, զի հնազանդ էր Աբրահամու եւ տէր իւր կոչէր զնա, որոյ եղերուք դուք որդիք. բարեգործք էին, եւ ոչ կասկածէին

եւ ոչ ի միոջէ ինչ երկիւղէ։ Սոյնպէս եւ արք իմաստու-
թեամբ բնակեսցեն ընդ նոսա իբրեւ տկար անօթոյ առնիցեն
պատիւ կանանց՝ իբրեւ ժառանգակցաց շնորհացն կենաց,
զի մի՛ խափան լինիցին աղօթիցն ձերոց։ Եւ գլուխ
ամենայնի, զի համամիտք իցէք, համակարիք, եղբայրասէրք,
ազնուագութք, խոնարհք։ Մի՛ չար փոխանակ չարի
հատուցանել կամ բամբասանս ընդ բամբասանաց. այլ
զսորին հակառակն՝ օրհնել, զի յայս իսկ կոչեցարուք, զի
զօրհնութիւն ժառանգիցէք։ 9։

Ալէլուիա, ալէլուիա. Դարձ, Տէր, եւ փրկեա զանձն
իմ. կեցո զիս Տէր ըստ ողորմութեան քում։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԲ. 43։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Այլ յորժամ այսն պիղծ ելանիցէ ի մարդոյ՝ շրջի ընդ
անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ եւ ոչ գտանէ։ Յայնժամ
ասէ. Դարձայց ի տուն իմ՝ ուստի ելին. եւ եկեալ գտանէ
պարապորդ, մաքրեալ եւ յարդարեալ։ Յայնժամ երթայ
եւ առնու ընդ իւր եօթն այլ այսս չարագոյնս քան զինքն,
եւ մտեալ բնակէ անդ. եւ լինի յետինն մարդոյն այնորիկ
չար քան զառաջինն. այնպէս եղիցի եւ ազգիս այսմիկ չարի։
Մինչ դեռ նա ընդ ժողովուրդսն խօսէր, ահա մայր նորա
եւ եղբարք նորա կային արտաքոյ եւ խնդրէին խօսել ընդ
նմա։ Եւ ասէ ոմն ցնա. Ահա մայր քո եւ եղբարք քո կան
արտաքոյ եւ խնդրեն խօսել ընդ քեզ։ Նա պատասխանի
ետ այնմիկ՝ որ ասացն ցնա եւ ասէ. Ո՞վ է իմ մայր, կամ
ո՞վ են իմ եղբարք։ Եւ ձգեալ զձեռն իւր յաշակետսն
ասէ. Ահաւասիկ մայր իմ եւ եղբարք։ Զի որ առնիցէ
զկամս Հօր իմոյ՝ որ յերկինսն է, նա է իմ եղբայր եւ քոյր
եւ մայր։ 50։

---



# ԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ

## ԳՉ.

### Սրբոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետին եւ միւս Կիւրղի եպիսկոպոսին եւ մօր նորա Աննայի։

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցէք զա-
թոռ ի յերկրի. առաքելական առէք զպատիւ յերկնուստ,
ծառայք Քրիստոսի ո՛վ երանելիք ի հարս սուրբ
հայրապետք։ Քանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝
բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան
պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն
շնորհելով։ Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն
անձանց մերոց։

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն.
եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն։
Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա։

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Դ. 1։

Զայս վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ եւ Յի-
սուսի Քրիստոսի՝ որ դատելոց է զկենդանիս եւ զմեռեալս ի
յայտնութեան իւրում եւ յարքայութեան։ Եւ դու քա-
րոզեա զբանն, հաս ի վերայ ժամու եւ տարաժամու. յան-
դիմանեա, սաստեա, մխիթարեա ամենայն երկայնմտու-
թեամբ եւ վարդապետութեամբ։ Քանզի եկեսցէ ժամանակ,
զի ողջմտութեան վարդապետութեանն ոչ անսայցեն. այլ
ըստ իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վար-
դապետս ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց. եւ ի ճշմար-
տութենէ անտի դարձուցանիցեն զլսելիս. եւ յառասպելս
կործանեսցին։ Այլ դու զուարթ կաց յամենայնի, ճգնեաց,
զգործս աւետարանչի գործեա, զպաշտօնդ քո կատարեալ
կալ։ Զի ես այսուհետեւ նուիրեալ եմ, եւ ժամանակ
դարձի իմոյ հասեալ կայ։ Զբարւոք պատերազմ պատերազ-
մեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի։ Այս-
ուհետեւ կայ մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հա-

տուսցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարն դատաւոր. ոչ միայն ինձ, այլ եւ ամենեցուն՝ որ սիրեցին զյայտնութիւն նորա: 8:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն եւ սուրբք քո ցնծալով ցնծասցին:

Սրբոյ Աետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ժ. 11:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց: Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն եւ փախչի. եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ. քանզի վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն: Ես եմ հովիւն քաջ, եւ ճանաչեմ զիմսն եւ ճանաչիմ յիմոցն: Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայր. եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց: Նա եւ այլ եւս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ. եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր, եւ ձայնի իմում լուիցեն, եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ: 16:

---

## ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ

Գ.Կ.

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիգ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. Կդ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:



Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Զ. 1:

Գործակից եմք ձեր եւ աղաչեմք, մի՛ ընդունայն զշնորհսն Աստուծոյ ընդունել ձեզ: Զի ի ժամանակի ընդունելութեան, ասէ, լուայ քեզ, եւ յաւուր փրկութեան օգնեցի քեզ. Ահաւասիկ ժամանակ ընդունելի, ահա օր փրկութեան: Մի՛ եւ մի՛ իւիք տայցէք պատճառս, զի մի՛ արատեսցի պաշտօնն: Այլ յամենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր իբրեւ զպաշտօնեայս Աստուծոյ՝ համբերութեամբ բազմաւ, ի նեղութիւնս, ի վիշտս, ի չարչարանս, ի գանս, ի բանտս, ի խռովութիւնս, յաշխատութիւնս, ի հըսկմունս, ի պահս, ի սրբութեան, ի գիտութեան, յերկայնմտութեան, ի քաղցրութեան, ի Հոգի սուրբ, ի սէր առանց կեղծաւորութեան, ի բանս ճշմարտութեան, ի զօրութեան Աստուծոյ. վասն զինուն արդարութեան՝ որ ընդ աջմէն եւ ընդ ահեկէն է: Փառօք եւ անարգութեամբ, գովութեամբ եւ պարսաւանօք. իբրեւ մոլարք եւ ճշմարիտք. իբրեւ անծանօթք եւ ծանուցեալք. իբրեւ մահկանացուք, եւ ահաւասիկ կենդանի եմք. իբրեւ խրատեալք եւ ոչ մահապարտեալք. իբրեւ տրտմեալք եւ հանապազ ուրախ եմք. իբրեւ տնանկք եւ զբազումս մեծացուցանեմք. իբրեւ ոչ ինչ ունիցիմք եւ զամենայն ինչ ունիմք: Բերանք մեր բացեալ են առ ձեզ, Կո՛րնթացիք, եւ սիրտք մեր ընդարձակեալք: Ոչ ինչ նեղիք ի մէնջ, բայց եթէ ի գութս ձեր նեղիցիք: Արդ զնոյն հատուցումն իբրեւ ընդ որդեակս ունիմ. ընդարձակեցարուք եւ դուք. եւ մի՛ լինիք լծակիցք անհաւատից: Քանզի զի՞նչ հաղորդութիւն է արդարութեան ընդ անօրէնութեան, եւ կամ զի՞նչ հաւասարութիւն է լուսոյ ընդ խաւարի, եւ կամ զի՞նչ միաբանութիւն է Քրիստոսի ընդ բելիարայ, կամ զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին, կամ զի՞նչ նմանութիւն է տաճարի Աստուծոյ՝ մեհենաց: Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք, որպէս եւ ասաց Աստուած, թէ Բնակեցայց ի նոսա, եւ գնացից ի նոսա, եւ եղէց նոցա Աստուած, եւ նոքա եղիցին իմ ժողովուրդ: Վասն որոյ ելէք ի միջոյ նոցա եւ մեկնեցարուք, ասէ Տէր, եւ ի պիղծս մի՛ մերձենայք. եւ ես ընկալայց զձեզ, եւ ես եղէց ձեզ ի Հայր, եւ դուք եղիջիք ինձ յուստերս եւ ի դստերս, ասէ Տէր ամենակալ: 18:

Ալէլուիա, ալէլուիա. Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր. Ծառայեցէք Տեառն ուրախութեամբ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԵ. 1:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք եւ մեղաւորք՝ լսել ի նմանէ: Տրտնջէին փարիսեցիքն եւ դպիրք եւ ասէին. Ընդէ՞ր սա զմեղաւորս ընդունի եւ ուտէ ընդ նոսա: Ասաց առ նոսա զառակս զայս. Ո՞վ ոք իցէ ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարիւր ոչխար, եւ կորուսանիցէ մի ի նոցանէ. ո՞չ թողուցու զիննսուն եւ զինն յանապատին, եւ երթիցէ զհետ կորուսելոյն՝ մինչեւ գտանիցէ զնա: Եւ իբրեւ գտանէ, դնէ զնա ի վերայ ուսոց իւրոց խնդալով, եւ երթեալ ի տուն, կոչէ զբարեկամս եւ զդրացիս, եւ ասէ ցնոսա. Ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարս իմ զկորուսեալ: Ասեմ ձեզ. զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ, քան վասն իննսուն եւ ինն արդարոց՝ որոց չիցէ պիտոյ ապաշխարութիւն: Կամ ո՞վ իցէ կին, որոյ իցեն դրամք տասն. եւ եթէ կորուսանիցէ դրամ մի, ո՞չ լուցանիցէ ճրագ, եւ ածիցէ աւել ի տան եւ խնդրիցէ ստէպ՝ մինչեւ գտանիցէ: Եւ իբրեւ գտանէ, կոչէ զբարեկամս եւ զդրացիս եւ ասէ. Ուրախ լերուք ընդ իս, զի գտի զդրամն իմ զոր կորուսի: Այնպէս՝ ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ի վերայ միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ: Եւ ասէ. Առն միոջ էին երկու որդիք. ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն. Հայր, տուր ինձ բաժին, որ անկանի յընչիցդ. եւ նա բաժանեաց նոցա զկեանսն: Եւ յետ ոչ բազում աւուրց՝ ժողովեալ զամենայն կրտսեր որդւոյն՝ գնաց յաշխարհ հեռի. եւ անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ: Եւ իբրեւ սպառեաց զամենայն, եղեւ սով սաստիկ յաշխարհին յայնմիկ, եւ սկսաւ ինքն չքաւորել: Եւ գնացեալ յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ. եւ յղեաց զնա յագարակ իւր արածել խոզս: Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն զոր խոզքն ուտէին, եւ ոչ ոք տայր նմա: Եւ եկեալ ի միտս իւր՝ ասէ. Քանի՞ վարձկանք իցեն ի տան հօր



իմոյ հացալիցք, եւ ես աստ սովամահ կորնչիմ: Յարուցեալ գնացից առ հայր իմ, եւ ասացից ցնա. Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո. եւ ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո, արա զիս իբրեւ զմի ի վարձկանաց քոց: Եւ յարուցեալ եկն առ հայր իւր. եւ մինչ դեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն եւ գթացաւ, յարեաւ եւ ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւն նորա, եւ համբուրեաց զնա: Եւ ասէ ցնա որդին. Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո, ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո: Ասէ հայրն ցծառայս իւր. Վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին, եւ ագուցէք նմա, եւ տուք զմատանին ի ձեռն նորա, եւ կօշիկս յոտս նորա. եւ ածէք զեզն պարարակ՝ զենէք, կերիցուք եւ ուրախ լիցուք: Զի այս որդի իմ մեռեալ էր եւ եկեաց, կորուսեալ էր եւ գտաւ. եւ սկսան ուրախ լինել: Եւ էր երէց որդի նորա յագարակի. եւ մինչ դեռ գայր եւ մերձ եղեւ ի տունն, լուաւ զձայն երգոց եւ զպարուց. եւ կոչեցեալ առ ինքն զմի ի ծառայիցն՝ հարցանէր թէ զինչ իցէ այն: Եւ նա ասէ ցնա. Զի եղբայր քո եկեալ է, եւ եզեն հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա: Բարկացաւ եւ ոչ կամէր մտանել. եւ հայրն ելեալ արտաքս աղաչէր զնա: Պատասխանի ետ եւ ասէ ցհայրն. Այս քանի՞ ամք են՝ զի ծառայեմ քեզ, եւ երբեք զպատուիրանաւ քով ոչ անցի. ուլ մի երբեք ոչ ետուր ինձ՝ զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ: Յորժամ եկն որդիդ քո այդ՝ որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զեներ դմա զեզն պարարակ: Եւ ասէ ցնա. Որդեակ, դու հանապազ ընդ իս ես, եւ ամենայն որ ինչ իմ է՝ քո է. այլ ուրախ լինել եւ խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր եւ եկեաց, կորուսեալ էր եւ գտաւ: 32:

---

## ԵՐՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

ԴԶ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. ՃԽԴ. Արքայութիւն քո արքայութիւն ամենայն յաւիտենից. եւ տէրութիւն քո յազգէ մինչեւ յազգ:

Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր. եւ արդար է յամենայն գործս իւր:

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 10:

Զի որ կամիցի զկեանս սիրել եւ տեսանել աւուրս բարութեան, լռեցուսցէ զլեզու իւր ի չարութենէ, եւ զշրթունս իւր ի խօսելոյ զնենգութիւն, խոտորեսցի ի չարէ, եւ արասցէ զբարի. խնդրեսցէ զխաղաղութիւն, եւ երթիցէ զհետ նորա: Զի աչք Տեառն ի վերայ արդարոց եւ ականջք նորա յաղօթս նոցա. երեսք Տեառն ի վերայ չարագործաց: Եւ ո՞ իցէ որ չարչարիցէ զձեզ, եթէ դուք բարւոյն նախանձաւորք լինիցիք: Այլ թէ եւ չարչարիցիք եւս յաղագս արդարութեան, երանելի էք. բայց յերկիւղէ նոցա մի՛ երկնչիցիք եւ մի՛ խռովեսջիք: Այլ զՏէր զնոյն զՔրիստոս սուրբ առնիջիք ի սիրտս ձեր: Պատրաստ իցէք տալ պատասխանի ամենայնի որ խնդրիցէ զբանն, որ է վասն յուսոյն ձերոյ: Այլ հեզութեամբ եւ երկիւղիւ ունիցիք բարս քաղցունս. զի որով չարախօսիցեն զձէնջ, յամօթ լիցին՝ որք բամբասեն զձեր բարւոք գնացս ի Քրիստոս: Զի լաւ է բարեգործաց, եթէ կամիցին ըստ Աստուծոյ կամացն չարչարել, քան չարագործացն: Զի եւ Քրիստոս մի անգամ վասն մեղաց ի վերայ ձեր մեռաւ, արդարն ի վերայ անարդարոց, զի զձեզ մերձեցուսցէ առ Աստուած. թէպէտ եւ մեռաւ մարմնով, այլ կենդանի է հոգւով: Որով եւ ոգւոցն՝ որ էին ի բանտին, երթեալ քարոզեաց, երբեմն ապստամբելոցն, յորժամ ներէր նոցա Աստուծոյ երկայնմտութիւնն յաւուրս Նոյի, յորս տապանն կազմէր, յոր նուազունք՝ այսինքն ոգիք իբրեւ ութ ապրեցան ի ջրոյն: Որ եւ զձեզ ըստ նմին օրինակի կեցուսցէ մկրտութիւնն. ոչ զմարմնոյ աղտն ի բաց ընկենլով, այլ զբարւոք մտացն հանդէս առ Աստուած, ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի. որ է ընդ աջմէ Աստուծոյ երթեալ յերկինս, ի հնազանդել նմա հրեշտակաց եւ իշխանութեանց եւ զօրութեանց: 22:

Ալէլուիա, ալէլուիա. Եկայք ցնծասցուք ի Տէր. աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր:



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԴ. 23:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ իբրեւ արձակեաց զժողովուրդսն, ել ի լեառն առանձինն կալ յաղօթս. եւ իբրեւ ընդ երեկս եղեւ, անդ էր միայն: Եւ նաւն մեկնեալ էր ի ցամաքէն բազում ասպարիսօք՝ ծփեալ յալեացն. քանզի ընդդէմ էր հողմն: Եւ ի չորրորդում պահու գիշերոյն եկն առ նոսա Յիսուս՝ գնալով ի վերայ ծովուն: Իբրեւ տեսին զնա աշակերտքն զի գնայր ի վերայ ծովուն՝ խռովեցան, եւ ասեն թէ Առ աչօք ինչ իցէ. եւ առ ահին աղաղակեցին: Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա Յիսուս եւ ասէ. Քաջալերեցարուք՝ ես եմ, մի՛ երկնչիք: Պատասխանի ետ նմա Պետրոս եւ ասէ. Տէր, եթէ դու ես, հրամայեա ինձ գալ առ քեզ ի վերայ ջրոցս: Եւ նա ասէ՝ Եկ. եւ իջեալ ի նաւէն Պետրոս՝ գնաց ի վերայ ջուրցն, եւ եկն առ Յիսուս: Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ. եւ իբրեւ սկսաւ ընկղմել՝ աղաղակեաց եւ ասէ. Տէր, փրկեա զիս: Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր՝ կալաւ զնա եւ ասէ. Թերահաւատ, ընդէ՞ր երկմտեցեր: Եւ իբրեւ ելին ի նաւն՝ հանդարտեաց հողմն: Եւ որ ի նաւին էին՝ մատեան, երկիր պագին նմա եւ ասեն. Արդարեւ Որդի Աստուծոյ ես դու: Եւ անցեալ եկին ի ցամաք ի Գեննեսարէթ: Եւ իբրեւ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ, առաքեցին ընդ ամենայն գաւառն եւ ածին առ նա զամենայն հիւանդս: Եւ աղաչէին զնա, զի գոնէ միայն ի քղանցս հանդերձի նորա մերձեսցին. եւ որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան: 36:

---

## ԵՐՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Դ.Կ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն

եւ ղողորմութիւն, որ յամենայնի եւս դու կարող մարդասէր:

Սղ· ե· Երկիր պագից ի տաճար սուրբ քո, երկիւղիւ քո Տէր:

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քոյ Տէր· զի օրհնեսցես դու զարդարն:

Պետրոսի առաքելոյն ի Պաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ· Դ· 1:

Քրիստոսի չարչարեալն մարմնով վասն մեր, եւ դուք ի նոյն միտս վառեցարուք· զի որ չարչարի մարմնով, դադարէ ի մեղաց· զի մի եւս ըստ մարդկան ցանկութեանց, այլ ըստ կամացն Աստուծոյ կեցցէ զայլ եւս ժամանակն: Քանզի բաւական է անցեալ ժամանակն լինելոյ կամացն հեթանոսաց, որք գնային գիշերութեամբք, ցանկութեամբք, գինեհարութեամբք, անառակութեամբք, ալբեգութեամբք, անօրէն կռապաշտութեամբք· որով օտարացեալք, ոչ ընդ ձեզ վարին ի նոյն անկարգութեան զեղխութիւն եւ հայհոյեն: Որ տայցեն պատասխանի այնմ, որ ի պատրաստին ունի դատել զկենդանիս եւ զմեռեալս: Քանի ի սոյն իսկ եւ մեռելոց խոստացեալ է, զի դատեսցին ըստ մարդկան մարմնով, եւ կենդանի լինիցին ըստ Աստուծոյ հոգւով: Ամենեցուն վախճան մերձեալ է· զգաստացարուք այսուհետեւ, եւ լերուք զուարթունք յաղօթս: Նախ քան զամենայն սէր սերտ ունել ընդ միմեանս. զի սէր ծածկէ զբազմութիւն մեղաց: Օտարասէրք լինել ընդ միմեանս առանց արտնջելոյ: Իւրաքանչիւր ոք որպէս եւ ընկալաւ շնորհս ինչ, ի միմեանս զնոյն մատակարարել, իբրեւ զբարւոք հազարապետս պէսպէս շնորհացն Աստուծոյ: Եթէ ոք խօսիցի, իբրեւ զԱստուծոյ պատգամս. եթէ ոք մատակարարիցէ, իբրեւ ի զօրութենէ զոր շնորհէ Աստուած· զի յամենայնի փառաւորեսցի Աստուած ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք եւ զօրութիւն յաւիտեանս. ամէն: 11:

Ընթերցուած. Գլ· Դ· 12:

Ընդունիմ, ալելուիա· Երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէք Տեառն ամենայն երկիր· երգեցէք Տեառն եւ բարձր արարէք զանուն նորա:



Սրբոյ Ընտարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ· ԺԹ· 21:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ ելեալ անտի (Յիսուսի) գնաց ի կողմանս Տիւրոսի եւ Սիդոնի: Եւ ահա կին մի քանանացի ի սահմանաց անտի նոցա ելեալ, աղաղակէր եւ ասէր· Ողորմեաց ինձ, Տէր՝ որդի Դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի: Եւ նա ոչ ետ նմա պատասխանի: Եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա եւ ասէին· Արձակեա զնա, զի աղաղակէ զհետ մեր: Նա պատասխանի ետ եւ ասէ· Ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի: Եւ նա մատուցեալ երկիր պագանէր նմա եւ ասէր· Տէր օգնեա ինձ: Պատասխանի ետ նմա եւ ասէ· Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց: Եւ նա ասէ· Այո՛, Տէր, քանզի եւ շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ տեառն իւրեանց: Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ· Ո՛վ կին դու, մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս եւ կամիս. եւ բժշկեցաւ դուստր նորա ի նմին ժամու: 28:

## ԵՐՐՈՐԴ ԶՈՐԵՔՇԱԲԱԹԻ

ԿԶ·

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչելիք:

Սղ· Զե· Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացեալ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհասնապազ· ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր հոգեարձի զանձն իմ:

Պետրոսի առաքելոյն ի Պաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ· Դ· 12:

Սիրելիք, մի օտարոտի համարիլ զհուրանդն ինչ՝ որ ի փորձութիւն ձեզ լինիցի· որպէս թէ օտար ինչ իւրք ձեզ

դեպիցին. այլ իբրեւ հաղորդեալք Քրիստոսի չարչարանացն, ուրախ լինիջիք, զի եւ ի յայտնութեան փառաց նորա ցնծացեալք բերկրեսջիք: Իսկ եթէ նախատիցիք եւս վասն անուանն Քրիստոսի, երանելի էք. զի փառացն եւ զօրութեան անուն է, եւ Աստուծոյ Հոգին ի վերայ ձեր հանգուցեալ է: Մի՞ ոք ի ձէնջ չարչարեսցի իբրեւ զսպանող, կամ իբրեւ զգող, կամ իբրեւ զչարագործ, կամ իբրեւ զօտարատեսուչ: Ապա եթէ իբրեւ զքրիստոնեայ, մի՞ ինչ ամաչեսցէ. այլ փառաւոր առնիցէ զԱստուած անուամբս այսուիկ: Զի ժամանակ է սկիզբն լինելոյ դատաստանին ի տանէն Աստուծոյ. զի եթէ նախ ի մէնջ, իսկ զի՞նչ կատարած այնոցիկ իցէ՝ որ ոչ հաւանեցան Աստուծոյ աւետարանին: Եւ եթէ արդարն հազիւ կեցցէ, իսկ ամբարիշտն եւ մեղաւորն ո՞ւր գտանիցի: Որպէս զի եւ որ չարչարիցին ըստ Աստուծոյ կամացն, հաւատարիմ հաստչին աւանդեսցեն զիւրեանց ոգիսն բարերարութեամբք: 19:

Ալէլուիա, ալէլուիա. Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԳ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յաւուր յայնմիկ ելեալ (Յիսուս) ի տանէն՝ նստէր առ ծովեզերն: Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչեւ մտանել նմա ի նաւն եւ նստել. եւ ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերբն: Եւ խօսէր ընդ նոսա բազումս առակօք, եւ ասէր. Ահա ել սերմանահան սերմանել. եւ ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ, եւ եկն թռչուն երկնից եւ եկեր զնա: Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում, եւ վաղվաղակի բուսաւ՝ առ ի չգոյէ հիւթոյ երկրին. ի ծագել արեւու տապացաւ, եւ զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ: Եւ այլն անկաւ ի մէջ փշոց, եւ ելին փուշքն եւ հեղձուցին զնա: Եւ այլն անկաւ յերկիր բարի, եւ տայր պտուղ, էր որ հարիւրաւոր, եւ էր որ վաթսնաւոր, եւ էր որ երեսնաւոր: 8:

---



## ԵՐՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

ԱԿ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. ՂԸ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 1:

Զերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրեւ երիցակիցս եւ վկայս չարչարանացն Քրիստոսի, որ եւ հանդերձեալ փառացն յայտնելոց հաղորդ. արածեցէք որ ի ձեզ հօտդ է Աստուծոյ. վերակացու լինել մի՛ իբրեւ ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի՛ զօշաքաղութեամբ, այլ յօժաթեամբ. մի՛ իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին: Զի յերեւել հօտապետին՝ ընդունիջիք զանթառամ փառաց պսակն: Սոյնպէս եւ երիտասարդք, հնազանդ լերուք ծերոց: Ամենեքին ընդ միմեանս զխոնարհութիւն ունիցիք. զի Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց: Խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ, զի զձեզ բարձրացուսցէ ի ժամանակի: Զամենայն հոգս ձեր ընկեցէք ի նա, զի նա է որ հոգայ վասն ձեր: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Բարձր արարից զընտրեալն ի ժողովրդենէ իմմէ. գտի զԴաւիթ ծառայ իմ, եւ իւղով սրբով իմով օծի զնա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԵ. 29:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ գնացեալ անտի (Յիսուսի) եկն ի ծովեզրն Գալիլեացւոց, եւ ելեալ ի լեառն նստէր անդ: Մատեան առ նա

ժողովուրդք բազումք, որ ունէին ընդ իւրեանս՝ կաղս, կոյրս, համերս, միակողմանիս եւ այլս բազումս. եւ ընկեցին զնոսա առ ոտս նորա, եւ բժշկեաց զնոսա: Մինչեւ զարմանալ ժողովրդոցն՝ որ տեսանէին, զի համերքն խօսէին, կաղք գնային, միակողմանիք բժշկէին, կոյրք տեսանէին, եւ փառաւոր առնէին զԱստուած Իսրայէլի: Եւ կոչեցեալ առ ինքն զաշակերտսն՝ ասէ. Գթամ ի ժողովուրդդ, զի արդ երեք աւուրք են՝ զի կան առ իս, եւ ոչ ունին զինչ ուտիցեն. եւ արձակել զդոսա նօթիս՝ չկամիմ, գուցէ նքթիցեն զճանապարհայն: Ասեն ցնա աշակերտքն. Իսկ արդ մեզ յանապատի աստ ուստի՞ իցէ այնչափ հաց՝ մինչեւ յագեցուցանել զայսչափ ժողովուրդ: Եւ ասէ ցնոսա Յիսուս. Քանի՞ նկանակ ունիք: Եւ նոքա ասեն. Եօթն եւ սակաւ ձկունս: Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ի վերայ գետնոյ: Եւ առեալ զեօթն նկանակն եւ զձկունսն՝ գոհացաւ եւ եբեկ եւ ետ ցաշակերտսն, եւ նոքա ժողովրդեանն: Կերան ամենեքեան եւ յագեցան. եւ բարձին զնշխարս կոտորոցն՝ եօթն զամբիղ լի: Եւ որք կերանն՝ էին իբրեւ արք չորք հազարք, թող զկանայս եւ զմանկտի: Իբրեւ արձակեաց զժողովուրդսն, ել ի նաւ եւ եկն ի սահմանս Մագդաղեայ: 39:

---

## ԵՐՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

### ԲԶ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 8:

Արթուն լերուք, հսկեցէք, զի ոսոխն ձեր սատանայ իբրեւ զառիւծ գոչէ, շրջի եւ խնդրէ թէ զո՛ կլանիցէ: Որում



ի դիմի հարկանիցիք հաստատեալք հաւատովք. գիտասջիք զնոյն անցս չարչարանաց եղբայրութեան ձերոյ յաշխարհի յանձինս կատարել: Եւ Աստուած ամենայն շնորհաց, որ կոչեաց զձեզ յիւր ի յաւիտենական փառսն Քրիստոսիւ Յիսուսիւ, որում փոքր մի եղերուք չարչարակիցք, նա կազդուրեցուսցէ, կարողացուսցէ, հաստահիմն արասցէ: Նմա իշխանութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն: Իձեռն Սիղուիանոսի հաւատարիմ եղբօր, որպէս կարծեմ, փոքր ի շատէ գրեցի առ ձեզ՝ մխիթարել եւ ի վերայ սորին վկայել. զի եւ այս ճշմարիտ շնորհք Աստուծոյ են, յոր հաստատեալ կայցէք: Ողջոյն տայ ձեզ որ ի Բաբելոն ընտրելակից եկեղեցին է, եւ Մարկոս որդի իմ: Ողջոյն տաջիք միմեանց ի համբոյր սրբութեան: Խաղաղութիւն ընդ ձեզ ամենեսին, որ էք ի Քրիստոս Յիսուս. ամէն: 14:

Ալէլուիա, ալէլուիա. Սիրտ իմ խռովեցաւ յիս. եւ երկիւղ մահու անկաւ ի վերայ իմ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.
Գլ. ԺԳ. 24:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Այլ առակ արկ առ նոսա եւ ասէ. Նմանեցաւ արքայութիւն երկնից առն, որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում: Եւ ի քուն լինել մարդկան, եկն թշնամի նորա եւ ցանեաց ի վերայ որոմն ի մէջ ցորենոյն եւ գնաց: Եւ իբրեւ բուսաւ խոտն եւ արար պտուղ, ապա երեւեցաւ եւ որոմն: Մատուցեալ ծառայք տանուտեառնն՝ ասեն ցնա. Տէր, ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում, արդ՝ ուստի՞ ունիցի զորոմն: Եւ նա ասէ ցնոսա. Այր թշնամի արար զայն: Ասեն ցնա ծառայքն. Կամի՞ս զի երթիցուք քաղեսցուք զայն ի բաց: Եւ նա ասէ ցնոսա. Մի՞. գուցէ մինչ քաղիցէք զորոմնն, եւ զցորեանն ընդ նմին ի բաց խլիցէք: Թոյլ տուք երկոցունց աճել ի միասին մինչեւ ի հունձս, եւ ի ժամանակի հնձոց ասացից ցհնձողսն. Քաղեցէք նախ զորոմնդ եւ կապեցէք զայդ ի խրձունս առ ի յայրել, եւ զցորեանն ժողովեցէք ի շտեմարանս իմ: 30:

---

# ԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ

## ԲԿ.

### Յովհաննու Երուսաղեմայ հայրապետին:

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ, ծառայ Քրիստոսի ո՛վ երանելիդ ի հարս սուրբ հայրապետ: Քանզի քոյ վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Դ. 1:

Վասն այսորիկ ունիմք զպաշտօնս զայս, որպէս եւ գտաք զողորմութիւն, եւ ոչ ձանձրանամք: Այլ հրաժարեցաք ի գաղտնեաց ամօթոյն. զի մի՛ գնասցուք խորամանկութեամբ, եւ մի՛ նենգեսցուք զբանն Աստուծոյ. այլ յայտնութեամբ ճշմարտութեանն ընծայեցուսցուք զանձինս մեր առ ամենայն միտս մարդկան առաջի Աստուծոյ: Ապա թէ իցէ եւս ծածկեալ աւետարանն մեր, ի մէջ կորուսելոցն է ծածկեալ: Որոց Աստուած աշխարհիս այսորիկ կուրացոյց զսիրտս անհաւատիցն, զի մի՛ ծագեսցէ ի նոսա լուսաւորութիւն աւետարանի փառացն Քրիստոսի, որ է պատկեր աներեւութին Աստուծոյ: Զի ոչ եթէ զանձինս քարոզեմք. այլ զՔրիստոս Յիսուս զՏէր, եւ զմեզ ծառայս ձեզ վասն Քրիստոսի: Զի Աստուած՝ որ ասաց ի խաւարի լոյս ծագել, որ եւ ծագեաց իսկ ի սիրտս մեր ի լուսաւորութիւն գիտութեան փառացն Աստուծոյ ի դէմս Յիսուսի Քրիստոսի: Այսուհետեւ ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս, զի առաւելութիւն զօրութեանն իցէ յԱստուծոյ, եւ ոչ ի մէնջ: Յամենայնի նեղեալք, այլ ոչ նուազեալք. կարօտեալք, այլ ոչ տարա-



կուսեալք. հալածեալք, այլ ոչ լքեալք. չարչարեալք, այլ ոչ սատակեալք: Յամենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմինս մեր կրեսցուք, զի եւ կեանքն Յիսուսի ի մարմինս մեր յայտնեսցին: Քանզի միշտ մեք՝ որ կենդանիքս եմք, ի մահ մատնիմք վասն Յիսուսի, զի եւ կեանքն Յիսուսի յայտնի լիցին ի մահկանացու մարմինս մեր: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի. եւ Տէր ընդ աջմէ քումմէ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Թ. 39:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ասէ (Յիսուս.) Ի դատաստան եկի յաշխարհս յայս, զի որ ոչն տեսանեն՝ տեսցեն, եւ որք տեսանենն՝ կուրասցին: Լուան ոմանք ի փարիսեցւոցն՝ որք ընդ նմա էին, եւ ասեն ցնա. Միթէ եւ մեք կոյրք իցեմք: Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ կոյրք էիք՝ ոչ էր ձեր մեղ. բայց արդ ասէք՝ եթէ տեսանեմք, եւ մեղքն ձեր ի ձեզ հաստատեալ են: Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ոչ մտանէ ընդ դուռն ի գաւիթ ոչխարաց, այլ ընդ այլ ելանէ՝ նա գող է եւ աւազակ: Իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ է ոչխարաց: Նմա դռնապանն բանայ. եւ ոչխարքն ձայնի նորա լսեն. եւ զիւր ոչխարսն կոչէ յանուանէ, եւ հանէ զնոսա: Եւ յորժամ զիւրն զամենայն հանիցէ, առաջի նոցա երթայ, եւ ոչխարքն զհետ նորա երթան, զի ճանաչեն զձայն նորա: Զօտարի զհետ ոչ երթիցեն, այլ փախիցեն ի նմանէ, զի ոչ ճանաչեն զձայն օտարաց: Զայս առակ ասաց նոցա Յիսուս, եւ նոքա ոչ գիտէին՝ եթէ զինչ էր որ խօսէրն ընդ նոսա: Դարձեալ ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ, զի ես եմ դուռն ոչխարաց: Ամենեքեան որ յառաջ քան զիս եկին, գողք էին եւ աւազակք. այլ ոչ լուան նոցա ոչխարքն: Ես եմ դուռն. ընդ իս եթէ ոք մտանիցէ, կեցցէ. մտցէ եւ ելցէ եւ ճարակ գտցէ: Գող ոչ գայ՝ եթէ ոչ զի գողասցի եւ սպանցէ եւ կորուսցէ. ես եկի զի զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին: Ժ. 10:

---

## ՅՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ

### Գ·Չ·

*Յոհաննու*։ Ա՛խածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Վրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ։

Սղ· կդ· Վրեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք Երուսաղէմ։

Լուր աղօթից իմոց, զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ։

Պօղոսի առաքելոյն Անփեսացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ· Դ· 17։

Ընդ զայս ասեմ եւ ուխտեմ ի Տէր, մի՛ եւս ձեզ զնոյն օրինակ գնալ, որպէս եւ այլ հեթանոսք գնան ունայնութեամբ մտաց իւրեանց, որոց խաւարեալ են սիրտք իւրեանց, եւ օտարացեալ են ի կենաց անոի Աստուծոյ վասն տգիտութեանն որ է ի նոսա, վասն կուրութեան սրտից իւրեանց։ Որք զանձանց իւրեանց զգայն հատին եւ մատնեցին զանձինս գիջութեան, ի գործս ամենայն պղծութեան ագահութեամբ։ Եայլ դուք ոչ այսպէս ուսարուք զՔրիստոս։ Թէպէտ եւ լուարուք զնմանէ, եւ նովաւ ուսայք՝ որպէս է ճշմարտութիւնն Յիսուսի. ի բաց մերկանալ ի ձէնջ ըստ առաջին գնացիցն զմարդն հինն՝ զապականեալն ցանկութեամբք խաբէութեանն։ Եւ նորոգել հոգւով մտաց ձերոց, եւ զգենուլ զնոր մարդն, որ ըստ Աստուծոյն հաստատեալ է, արդարութեամբ եւ սրբութեամբ ճշմարտութեանն։ Ոյ՞ան որոյ ի բաց ընկեցէք զստութիւն, խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում. զի եմք միմեանց անդամք։ Բարկանայք, եւ մի՛ մեղանչէք. արեգակն ի վերայ բարկութեան ձերոյ մի՛ մոցէ։ Եւ մի՛ տայք տեղի սատանայի։ Որ գողանայրն, մի՛ եւս գողասցի, այլ մանաւանդ վաստակեսցէ գործել ձեռօք իւրովք զբարիս. զի բաւական իցէ տալ ումեք պիտոյ իցէ։ Ամենայն բան տգեղ ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ, այլ որ ինչ բարին է ի շինած պիտոյից. զի տացէ շնորհս այնոցիկ, որ լսենն։ Եւ մի՛ տրամեցուցանէք զՅոգին սուրբ Աստուծոյ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան։ Ամենայն դառնութիւն եւ բարկութիւն եւ սրամտութիւն եւ աղաղակ եւ հայհոյութիւն բարձցի ի ձէնջ ամենայն չարութեամբն հանդերձ։ Լերուք ընդ միմեանս քաղցունք, գթածք, շնորհել միմեանց. որպէս եւ Աստուած Վրիստոս շնորհեաց մեզ։ Եղերուք նմանողք Աստուծոյ, իբրեւ որդիք սիրելիք։ Եւ գնացէք սիրով, որպէս եւ Վրիստոս սիրեաց զմեզ եւ մատնեաց զանձն իւր վասն մեր պատարագ եւ զհնութիւն Աստուծոյ ի հոտ անուշից։ Այլ պոռնկութիւն եւ ամենայն պղծութիւն կամ ագահութիւն եւ անուանեսցի մի՛ ի միջի ձերում, որպէս եւ վայել է սրբոց. եւ զաղտութիւն կամ խօսք յիմարութեան կամ խեղկատակութիւն՝ որ ոչ վայել է, այլ մանաւանդ գոհութիւն։ Զայս տեղեակացեալ գիտասջիք, թէ ամենայն պոռնիկ կամ պիղծ կամ ագահ, որ է կռապարիշտ, ոչ ունի ժառանգութիւն յարքայութեանն Վրիստոսի եւ Աստուծոյ։ Մի՛ ոք զձեզ խաբեսցէ բանիւք սնոտովք. զի վասն այսորիկ իսկ գայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ որդւոցն անհաւանութեան։ Մի՛ այսու հետեւ լինիք բաժանորդք նոցա։ Զի թէպէտ եւ երբեմն էիք խաւար, այժմ լոյս էք ի Տէր, իբրեւ զորդիս լուսոյ գնացէք։ Զի պտուղ լուսոյ ամենայն բարութեամբ է եւ արդարութեամբ եւ ճշմարտութեամբ։ Փորձեցէք զինչ է հաճոյ Տեառն, եւ մի՛ կցորդ լինիք անպտղութեան գործոցն խաւարի. այլ մանաւանդ յանդիմանեցէք։ Զի որ ի ծածուկ ինչ գործի ի նոսա՝ զայն եւ խօսել աղտեղի է։ Եայլ ամենայն ինչ յանդիմանեալ ի լուսոյ՝ յայտնի լինի. զի ամենայն ինչ՝ որ յայտնի է, լոյս է։ Ոյ՞ան որոյ եւ ասէ. Արի որ ննջեցող եւ կանգնեաց ի մեռելոց, եւ լուսաւոր լիցի քեզ Վրիստոս։ Ե. 14։

Ալէլուիա, ալէլուիա. Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր. ծառայեցէք Տեառն ուրախութեամբ։

Սբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու. Գլ· ԺԶ· 1։

Տէրն մեր Յիսուս Վրիստոս.

Եւ ասէ առ աշակերտսն. Այր ոմն էր մեծատուն, որոյ էր տնտես. եւ եղեւ զնմանէ ամբաստանութիւն՝ որպէս թէ

վատնիցէ զինչս նորա։ Կոչեաց, եւ ասէ ցնա. Զի՞նչ է այս
զոր լսեմս զքէն, տուր զհամար տնտեսութեան քո. զի ոչ
եւս կարես լինել տնտես։ Ասէ ընդ միտս իւր տնտեսն. Զի՞նչ
գործեցից, զի տէր իմ հանէ զտնտեսութիւնս. գործել ոչ
կարեմ, մուրանալ ամաչեմ։ Գիտեմ զինչ արարից. զի
յորժամ ի բաց լինիցիմ ի տնտեսութենէս՝ ընկալցին զիս ի
տունս իւրեանց։ Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ միոջէ ի
պարտապանաց տեառն իւրոյ, ասէ ցառաջինն. Քանի՞ ինչ
պարտիս տեառն իմում։ Եւ նա ասէ. Հարիւր մար ձիթոյ.
ասէ ցնա. Կա զգիր քո եւ նիստ գրեա վաղվաղակի յիսուն։
Դարձեալ ասէ ցմիւսն. Դու քանի՞ ինչ պարտիս. եւ նա
ասէ. Հարիւր քոռ ցորենոյ. եւ ասէ ցնա. Կա զգիր քո եւ
նիստ գրեա վաղվաղակի ութսուն։ Եւ գովեաց տէրն զտըն-
տեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար. զի որդիք
աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ
յազգս իւրեանց։ Եւ ես ձեզ ասեմ. Արարէք ձեզ բարեկամս
ի մամոնայէ անիրաւութեան. զի յորժամ պակասիցէ այն՝
ընկալցին զձեզ ի յարկսն յաւիտենականս։ Որ ի փոքուն
հաւատարիմ է, եւ ի բազմին հաւատարիմ է. եւ որ ի
փոքուն անիրաւ է, եւ ի բազմին անիրաւ է։ Իսկ արդ՝ եթէ
յանիրաւ մամոնային չեղէք հաւատարիմք, զճշմարիտն ձեզ
ո՛ հաւատասցէ։ Եւ եթէ յօտարին չեղէք հաւատարիմք,
զձերն ո՞ տացէ ձեզ։ Ոչ ոք ծառայ կարէ երկուց տերանց
ծառայել. զի եթէ զմին ատիցէ, եւ զմիւսն սիրիցէ. կամ
զմին մեծարիցէ, եւ զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք Ա-
ստուծոյ ծառայել եւ մամոնայի։ Իբրեւ լսէին զայս ամենայն
փարիսեցիքն՝ քանզի արծաթասէրք էին, եւ անգոսնէին զնա։
Եւ ասէ ցնոսա. Դուք էք որ արդարացուցանէք զանձինս
առաջի մարդկան, սակայն Աստուած գիտէ զսիրտս ձեր. զի
որ առաջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի Աստուծոյ։
Օրէնքն եւ մարգարէք մինչեւ ցՅովհաննէս. յայնմ հետէ
արքայութիւն Աստուծոյ աւետարանի, եւ ամենայն ոք զնա
բռնաբարէ։ Դիւրին իցէ երկնից եւ երկրի անցանել, քան
յօրինացն միոյ նշանախեցի անկանել։ Ամենայն որ արձակէ
զկին իւր եւ առնէ այլ, շնայ. եւ որ զարձակեալն առնէ,
շնայ։ Այր ոմն էր մեծատուն, եւ ագանէր բեհեզս եւ ծիրա-
նիս, եւ ուրախ լինէր հանապազ առատապէս։ Եւ աղքատ
ոմն անուն Ղազարոս անկեալ դնէր առ դրան նորա վիրաւո-



րեալ. եւ ցանկայր լնուլ զորովայն իւր ի փշրանացն՝ որ ան-
կանէին ի սեղանոյ մեծատանն. այլ եւ շունք եւս գային, եւ
լիզուին զվէրս նորա։ Եւ եղեւ մեռանել աղքատին, եւ տա-
նել հրեշտակաց զնա ի գոգն Աբրահամու. մեռաւ եւ մեծա-
տունն եւ թաղեցաւ։ Եւ ի դժոխսն ամբարձ զաչս իւր մինչ
ի տանջանսն էր. ետես զԱբրահամ ի հեռաստանէ, եւ
զՂազարոս ի գոգ նորա հանգուցեալ։ Եւ նա աղաղակեաց
եւ ասէ. Հայր Աբրահամ, ողորմեաց ինձ, եւ առաքեա
զՂազարոս, զի թացցէ զծագ մատին իւրոյ ի ջուր, եւ զո-
վացուսցէ զլեզու իմ. զի պապակիմ ի տապոյ աստի։ Եւ
ասէ ցնա Աբրահամ. Ո՛րդեակ, յիշեա զի ընկալար անդէն
զբարիս քո ի կեանսն քում, եւ Ղազարոս նոյնպէս զչարչա-
րանսն. արդ՝ սա աստ մխիթարի, եւ դու այդր պապակիս։
Եւ ի վերայ այսր ամենայնի՝ վիհ մեծ է ընդ մեզ եւ ընդ
ձեզ. եթէ կամիցին աստի առ ձեզ անցանել՝ ոչ կարեն, եւ
ոչ այտի ոք առ մեզ անցանել։ Եւ ասէ. Արդ աղաչեմ
զքեզ, հայր, զի արձակեսցես զդա ի տուն հօր իմոյ։ Են իմ
անդ եղբարք հինգ, որպէս զի տայցէ նոցա վկայութիւն. զի
մի՛ եւ նոքա գայցեն յայս տեղի տանջանաց։ Եւ ասէ Աբրա-
համ. Ունին զՄովսէս եւ զմարգարէսն, նոցա լուիցեն։ Եւ
նա ասէ. Ոչ՝ հայր Աբրահամ, բայց թէ ի մեռելոց ոք եր-
թիցէ առ նոսա, եւ ապաշխարիցեն։ Եւ ասէ ցնա. Եթէ
Մովսիսի եւ մարգարէիցն ոչ լսեն, եւ ոչ թէ ի մեռելոց ոք
յառնիցէ՝ հաւանեսցին։ 31։

---

## ՉՈՐՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### ԳԿ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մար-
մնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր եւ
լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ
Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ
զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր։

Սղ. ՃԽԴ. Արքայութիւն քո արքայութիւն ամենայն
յաւիտենից. եւ տէրութիւն քո յազգէ մինչեւ յազգ։
Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր. եւ արդար
է յամենայն գործս իւր։

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 1:

Շմաւովն Պետրոս ծառայ եւ առաքեալ Յիսուսի Քրիստոսի, որոց հանգիտապատիւ մեզ հասէքդ հաւատոց յարդարութիւն Աստուծոյ մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի: Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն բազմասցի գիտութեամբն Աստուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ: Որպէս ամենայն ինչ մեզ իւրոյ աստուածեղէն զօրութեանն առ ի կեանս եւ յաստուածպաշտութիւն շնորհեալ, ի ձեռն գիտութեան այնորիկ, որ կոչեացն զմեզ յիւր ի փառսն եւ ի վայելչութիւն: Որով մեծամեծքն եւ պատուական աւետիք պարգեւեալ են մեզ, զի նոքիմբք աստուածեղէն բնութեանն լինիցիմք հաղորդակիցք, փախուցեալք ի ցանկութեանց աշխարհիս եւ յապականութեանց: Եւ սմին այսմիկ զամենայն փոյթ ի մէջ առեալ՝ ձերովք հաւատովքն մատակարարեսջիք զառաքինութիւն, եւ առաքինութեամբն զգիտութիւն, եւ գիտութեամբն զժուժկալութիւն, եւ ժուժկալութեամբն զհամբերութիւն, եւ համբերութեամբն զաստուածպաշտութիւն, եւ աստուածպաշտութեամբն զեղբայրսիրութիւն, եւ եղբայրսիրութեամբն զսէր: Զայսոսիկ ձեր յանձին կալեալ եւ ի սոյն յաճախեալ, ոչ դատարկս եւ անպտուղս զձեզ հաստատիցեն ի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գիտութիւնն: Իսկ յոր ոչն իցեն սոքա մերձ, կոյր է եւ զաչացու. ի մոռացօնս դարձուցեալ զսրբութիւն առաջնոց իւրոցն յանցանաց: Վասն որոյ, եղբարք, առաւել փութասջիք՝ զի բարեացն գործովք հաստատուն զձեր կոչումն եւ զընտրութիւն պահիցէք: Զայս արարեալ, ոչ երբեք յանցանիցէք: Զի այսպէս առատապէս շնորհեսցի ձեզ մուտ ի յաւիտենական արքայութիւն Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Եկայք ցնծասցուք ի Տէր. աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.
Գլ. Ա. 21:

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Եւ մտանեն ի Կափառնաում, եւ իսկ եւ իսկ ի շաբաթուն մտեալ ի ժողովուրդն՝ ուսուցանէր զնոսա: Եւ



զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ուսուցանէր զնոսա իբրեւ իշխանութեամբ եւ ոչ որպէս դպիրքն: Եւ էր ի ժողովրդեանն նոցա այր մի, յորում այս պիղծ գոյր ի նմա, որ աղաղակեաց եւ ասէ. Թոյլ տուր, զի՞ կայ մեր եւ քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ՝ ով ես սուրբն Աստուծոյ: Սաստեաց ի նա Յիսուս եւ ասէ. Կարկեաց եւ ել ի դմանէ: Եւ զարկոյց զնա այսն պիղծ. եւ աղաղակեաց ի ձայն մեծ, եւ ել ի նմանէ: Եւ զարմացան ամենեքին, մինչեւ հծծել ընդ միմեանս եւ ասել. Զի՞նչ է այս նոր վարդապետութիւնս, զի իշխանութեամբ եւ այսոց պղծոց սաստէ եւ հնազանդին սմա: 27:

---

## ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Դ.Զ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. Ե. Երկիր պագից ի տաճար սուրբ քո, երկիւղիւ քո Տէր:

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քոյ Տէր. զի օրհնեսցես դու զարդարն:

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 12:

Որով պատրաստիցեմ միշտ ձեզ յիշեցուցանել վասն սոցին առաւել եւս գիտակացն եւ հաստատելոցն, եկեալ հասեալ ճշմարտութեանն: Քանզի իրաւունս համարիմ, մինչ դեռ եմ ի մարմնի աստ, զարթուցանել զձեզ յիշատակօք: Գիտեմ թէ վաղվաղակի է լինելոց մերկանալ յինէն մարմնոյս, որպէս եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս եցոյց ինձ: Եւ փութամ ճեպիմ միշտ զձեզ յորդորել, զի եւ յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս՝ առնիցէք զյիշատակս այսո-

ցիկ։ Քանզի ոչ եթէ պաճուճեալ ինչ առասպելաց զհետ երթեալ, ցուցաք ձեզ զՏեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զզօրութիւն եւ զգալուստն. այլ մեզէն եղեալ ականատեսք նորա մեծութեանն։ Քանզի առեալ յԱստուծոյ եւ ի Հօրէ զփառս եւ զպատիւ, եկեալ յայնպիսի բարբառոյ ի մեծվայելչութեան փառաց անտի, եթէ Դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ ես հաճեցայ։ Եւ զայս բարբառ մեք իսկ լուաք եկեալ յերկնից, որ ընդ նմա իսկ էաք ի սուրբ լերինն։ Եւ ունիմք հաստատագոյն զբանն մարգարէական, որում եթէ անսայցէք, բարւոք առնէք, իբրեւ ճրագի՝ որ տայցէ լոյս ի խաւարչտին տեղւոջ, մինչեւ տիւն լուսաւորեսցէ, եւ արուսեակն ծագեսցէ ի սիրտս ձեր։ 19։

Ալէլուիա, ալէլուիա. Երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէք Տեառն ամենայն երկիր. երգեցէք Տեառն եւ բարձր արարէք զանուն նորա։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Գ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ եմուտ միւսանգամ ի ժողովուրդն, եւ էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր։ Եւ սպասէին նմա՝ եթէ բժշկեսցէ զնա ի շաբաթուն, զի չարախօսեսցեն զնմանէ։ Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ էր. Արի անց ի մէջ։ Եւ ասէ ցնոսա. Զի՞նչ արժան է ի շաբաթու, բարի՞ ինչ գործել՝ եթէ չար առնել, ոգի՞ մի ապրեցուցանել, եթէ կորուսանել. եւ նոքա լռեցին։ Եւ հայեցեալ Յիսուսի զնոքօք լի ցասմամբ, տրտմեալ վասն կուրութեան սրտից նոցա՝ ասէ ցայրն. Զգեա զձեռն քո. եւ նա ձգեաց, եւ ողջացաւ ձեռն նորա։ 5։

---

## ՉՈՐՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Դկ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք։



Սղ. 2Ե. Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ։

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ։

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 20։

Բայց նախ այսմ գիտակ լինիջիք, զի ամենայն մարգարէութիւն իւրոց գրոց լուծումն ոչ ունի։ Քանզի ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարէութիւն երբեք, այլ ի Հոգւոյն սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկ յԱստուծոյ։ Լինէին եւ սուտ մարգարէք ի ժողովրդեանն, որպէս եւ այժմ ի ձեզ լինիցին սուտ վարդապետք, որք սպրդեալ մուծանեն հերձուածս կորստեան, եւ զոր Տէրն գնեաց զնոսա՝ ուրացեալ, ածեն ի վերայ անձանց զարագահասն կորուստ։ Եւ բազումք անկեալ երթիցեն զհետ նոցա անառակութեանցն. վասն որոյ ճշմարտութեանն ճանապարհ հայհոյեսցի։ Եւ ագահութեամբ մտացածին բանիւք առնիցեն զձեզ վտարանդի. որոց դատաստանն ի բնէ ոչ դատարկանայ, եւ կորուստն նոցա ոչ նիրհեսցէ։ Զի եթէ ի հրեշտակսն յանցուցեալս՝ Աստուած ոչ խնայեաց, այլ խաւարին կապանօք արկեալ ի տարտարոսն՝ ետ պահել ի դատաստան։ Նա եւ ոչ ի սկզբանն աշխարհի խնայեաց. բայց զութերորդն զՆոյ՝ զարդարութեանն քարոզ պահեաց ի ջրհեղեղէ աշխարհի ամբարշտելոցն ածեալ։ Եւ զքաղաքս Սոդոմացւոց եւ Գոմորացւոց դարձուցեալ յաճիւն՝ դատեցաւ, օրինակ առ յապա ամբարշտելոցն կացուցանէր։ Եւ զարդարն զՂովտ ձանձրացեալ յանկարգ գիջութեան գնացիցն փրկեաց։ Քանզի ականատես եւ ականջալուր արդարն բնակեալ ի մէջ նոցա, օր ըստ օրէ զիւր սուրբ ոգիսն նոցա անօրէն գնացիւքն տանջէր։ Բ. 8։

Ալէլուիա, ալէլուիա. Տէր, ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Դ. 26։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ասէր. Այսպէս է արքայութիւն Աստուծոյ, որպէս զի այր մի արկանիցէ սերմանիս յերկիր, եւ ննջիցէ եւ

յառնիցէ զցայգ եւ զցերեկ. եւ սերմանիքն բուսանիցին եւ
աճիցեն, եւ նա ոչ գիտէ՝ թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ,
նախ զխոտն եւ ապա զհասկն, ապա զցորեանն ատոք ի հաս-
կին: Այլ յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքի
մանգաղ, զի հասեալ են հունձք: Եւ ասէր. Ո՞ւմ նմանե-
ցուսցուք զարքայութիւնն Աստուծոյ, կամ որո՞վ առակաւ
առակեսցուք զնա: Որպէս հատն մանանխոյ՝ որ յորժամ
սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան զամենայն սերմանիս՝
որ են յերկրի. եւ յորժամ սերմանիցի, բուսանի եւ լինի
մեծ քան զամենայն բանջար, եւ արձակէ ոստս մեծամեծս,
մինչեւ բաւական լինել ընդ հովանեաւ նորա թռչնոց երկնից
բնակել: Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն,
որպէս կարող լինէին լսել. եւ առանց առակի ոչ ինչ խօսէր
ընդ նոսա, բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զա-
մենայն: 34:

---

## ՉՈՐՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### ԱՁ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մար-
մնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր եւ
լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ
Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն
եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մար-
դասէր:

Սղ. ՂԸ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր
պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին
ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց երկրորդ թղթոյն է
ընթերցուածս. Գլ. Բ. 9:

Գիտէ Տէր զաստուածապաշտս փրկել ի փորձու-
թենէ, եւ զանօրէնս պահել ի տանջանս աւուրն դատաս-
տանի. մանաւանդ որ զհետ մարմնոյ պղծալիցն ցանկու-



թեանց իցեն երթեալ, արհամարհողք տէրութեանն,
ժպիրհք, յանդգունք, չզանգիտեն զփառսն հայհոյել: Ուր
հրեշտակք զօրութեամբ եւ կարողութեամբ քան զնոսա
մեծամեծք, չածեն զնոքօք ի Տեառնէ զհայհոյութեանն դա-
տաստան: Այլ սոքա իբրեւ զանխօս անասունս ըստ բնածին
բարուցն յեղծումն եւ յապականութիւն, որոց չենն գիտակ՝
հայհոյեն յապականութեան իւրեանց, եւ ապականեսցին:
Տանջեալք ի վարձուց անիրաւութեան. որ ցանկութիւն
զաւուրն փափկութիւն համարին. բծկանք, արատաւորք,
փափկացեալք ի պատիրս իւրեանց, լեալ ձեզ խրախճանա-
կիցք: Աչս ունին հանգոյնս պոռնկաց, անդադարս ի մեղաց,
պատրեն զանձինս յողդողդաց. որ ունին սիրտ հարեալ
զագահութեան, մանկունք անիծից: Թողեալ զուղղորդ
ճանապարհն, մոլորեցան, զհետ երթեալ ճանապարհին
Բաղաամայ Բէորեան, զվարձս անիրաւութեան սիրեցին.
որ կշտամբանս իւրոյ անօրէնութեանն ստացաւ զէշն ան-
խօսուն, մարդկեղէն բարբառովն բարբառեալ, արգել զմար-
գարէին զանօրէնութիւն: Այսպիսիքն են աղբիւրք անջրդիք
եւ մէգք վարեալք ի մրրկէ, որոց աղջամուջք խաւարին
յաւիտեան պահեալ կան: Քանզի մեծարանս սնոտեաց
բարբառեալ, պատրեն գիջութեամբք, ցանկութեամբք մար-
մնոյ զայնոսիկ՝ որ ստոյգն փախչիցին յայնցանէ, որ ի մոլորու-
թեանն շրջիցին: Նոցա ազատութիւն խոստանան, եւ
ինքեանք ապականութեան ծառայք են. զի որով իւիք
յաղթիցի ոք, նորին եւ ծառայ է: Զի եթէ փախուցեալք
ի պղծութեանց աշխարհի գիտութեամբ Տեառն մերոյ եւ
փրկչին Յիսուսի Քրիստոսի, եւ դարձեալ ընդ նոյնս շա-
ղեալք պատիցին, եղեւ նոցա վախճանն չար քան զառաջինն:
Զի լաւ էր նոցա թէ բնաւ իսկ չէր ծանուցեալ զարդարու-
թեան ճանապարհն. քան թէ ծանեան, եւ յետս կացին ի
սուրբ պատուիրանէն՝ որ նոցա աւանդեցաւ: Եկեալ ի դէպ
նոցա ճշմարիտ առակին զգօնութեան՝ եթէ Շուն դառնայ
անդրէն ի փսխած իւր, եւ խոզ լուացեալ ընդ տիղմն
թաւալեալ: 22:

Ալէլուիա, ալէլուիա. Բարձր արարից զընտրեալն ի
ժողովրդենէ իմմէ. գտի զԴաւիթ ծառայ իմ. եւ իւղով
սրբով իմով օծի զնա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Թ. 13:

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Եւ եկեալ առ աշակերտսն, տեսին ամբոխ շուրջ զնոքօք, եւ զդպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա: Եւ վաղվաղակի ամենայն ժողովուրդն իբրեւ տեսին զնա՝ զարմացան, եւ ընդ առաջ ընթացեալ ողջոյն տային նմա: Եւ եհարց ցնոսա՝ թէ Օ՞ի՞նչ վիճէիք ընդ նոսա: Պատասխանի ետ մի ոմն ի ժողովրդենէն եւ ասէ. Վարդապետ, ածի զորդի իմ առ քեզ, զոր ունի այս համր. եւ ուր հասանէ՝ զարկուցանէ զնա, եւ փրփրէ եւ կրճտէ զատամունս իւր եւ ցամաքի. եւ ասացի ցաշակերտսն քո զի հանցեն, եւ ոչ կարացին հանել զնա: Պատասխանի ետ նոցա եւ ասէ. Ո՛վ ազգ անհաւատ, մինչեւ յե՞րբ իցեմ ընդ ձեզ, մինչեւ ցե՞րբ անսայցեմ ձեզ. ածէք զնա առ իս: Եւ ածին զնա առ նա: Իբրեւ ետես զնա այսն, վաղվաղակի շարժլեաց զնա, եւ անկեալ յերկիր թաւալէր եւ փրփրայր: Եհարց ցհայր նորա եւ ասէ. Քանի՞ ժամանակք են՝ յորմէ հետէ այդ եղեւ դմա. եւ նա ասէ. Ի մանկութենէ: Բազում անգամ ի հուր արկանէ եւ ի ջուր՝ զի կորուսցէ զդա. արդ՝ եթէ կարող ինչ ես, օգնեա մեզ, Տէր, գթացեալ ի վերայ մեր: Եւ Յիսուս ասէ ցնա. Ասացեր՝ թէ կարող ես. ամենայն ինչ հնարաւոր է այնմ, որ հաւատայն: Եւ վաղվաղակի աղաղակեաց հայր մանկանն եւ ասէ. Հաւատամ, օգնեա անհաւատութեանս իմում: Իբրեւ ետես Յիսուս եթէ կուտի ժողովուրդն ի վերայ, սաստեաց այսոյն պղծոյ եւ ասէ. Համրդ եւ խուլ այս, ես տամ քեզ հրաման, ել ի դմանէ, եւ այլ եւս մի՛ մտանիցես ի դա: Եւ աղաղակեաց եւ յոյժ լլկեաց զնա, եւ ել. եւ եղեւ պատանեակն իբրեւ զմեռեալ, մինչեւ բազմաց իսկ ասել՝ թէ Մեռաւ: Եւ Յիսուս կալաւ զձեռանէ նորա՝ յարոյց զնա, եւ կանգնեցաւ: Եւ իբրեւ եմուտ նա ի տուն, աշակերտքն առանձինն հարցին ցնա. Մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա: Եւ ասէ ցնոսա. Այդ ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահովք եւ աղօթիւք: 28:

---



# ՉՈՐՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

## ԱԿ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. Ղէ. Տեսին ամենայն ծագք երկրի, զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 1:

Զայս ձեզ, սի՛րելիք, երկրորդ թուղթ գրեմ, որով զարթուցից ի յիշատակ զհաստատուն միտս ձեր. յիշել զյառաջագոյն ասացեալ պատգամս ի սրբոց մարգարէից եւ յառաքելոցն ձերոց, զպատուէրս Տեառն եւ փրկչին: Բայց զայս նախ գիտասջիք, զի յաւուրս յետինս եկեսցեն արհամարհողք, այպանողք, որ ըստ իւրեանց ցանկութեանց գնայցեն. եւ ասիցեն՝ Ո՞ւր են աւետիք գալստեան նորա. զի յորմէ հետէ հարքն ննջեցին՝ ամենայն ինչ նոյնպէս կայ մնայ ի սկզբանէ արարածոց: Եւ զայն մոռացեալ իցէ նոցա՝ որ զայսն կամին, եթէ երկինք եղեն ի սկզբանէ եւ երկիր ի ջրոց, եւ ջուրք հաստատեալ բանիւն Աստուծոյ. վասն որոյ երբեմն աշխարհ ջրհեղեղաւ ապականեալ կորեաւ: Եւ այժմ երկինք եւ երկիր նովին բանիւ գանձեալ են, հրոյ պահեալք յօրն դատաստանի, եւ կորստեան ամբարիշտ մարդկան: Եւ այս եւս մի՛ լիցի ի ձէնջ ծածկեալ, սի՛րելիք, զի մի օր Տեառն իբրեւ զհազար ամ է, եւ հազար ամ իբրեւ զմի օր: Ոչ յամեցուսցէ Տէր զաւետիսն, որպէս ոմանք յամր համարին, այլ երկայնամիտ լինի առ ձեզ. քանզի ոչ կամի եթէ ոք կորիցէ, այլ զամենեցուն հասանել յապաշխարութիւն: 9:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր, մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. եւ մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Ժ. 17:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ ընդ ելանելն նորա անտի ի ճանապարհ, ահաւասիկ ոմն մեծատուն ընթացեալ ի ծունր իջանէր, հարցանէր ցնա եւ ասէր. Վարդապետ բարի, զի՞նչ արարից՝ զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից: Եւ Յիսուս ասէ ցնա. Զի՞ ասես զիս բարի. չէք ոք բարի՝ բայց մի Աստուած: Զպատուիրանս գիտես. մի՛ շնար, մի՛ սպանաներ, մի՛ գողանար, մի՛ սուտ վկայեր. պատուեա զհայր քո եւ զմայր: Նա պապատասխանի ետ եւ ասէ ցնա. Վարդապետ, զայդ ամենայն արարի ի մանկութենէ իմմէ. արդ՝ զի՞նչ եւս պակաս իցեմ: Եւ Յիսուս հայեցեալ ի նա՝ սիրեաց զնա եւ ասէ ցնա. Մի ինչ պակաս է ի քէն. եթէ կամիս կատարեալ լինել, երթ՝ զոր ինչ ունիս վաճառեա եւ տուր աղքատաց, եւ ունիցիս գանձս յերկինս, եւ առ զխաչն եւ եկ զկնի իմ: Եւ նա խոժոռեալ ընդ բանն՝ գնաց տրտում, զի ունէր ինչս բազումս: Եւ հայեցեալ յայսկոյս յայնկոյս Յիսուս, ասէ ցաշակերտսն. Զիա՛րդ դժուարին է՝ որ զինչսդ ունին, մտանել յարքայութիւն Աստուծոյ: Եւ աշակերտքն զարմացեալ էին ի վերայ բանիցն նորա. իսկ Յիսուս դարձեալ պատասխանի ետ նոցա եւ ասէ. Ո՛րդեակք, ո՛րչափ դժուարին է յուսացելոց յինչս՝ մտանել յարքայութիւն Աստուծոյ: Դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել: Եւ նոքա առաւել եւս զարմանային եւ ասէին ընդ միմեանս. Իսկ ո՞ կարասցէ ապրել: Հայեցեալ ընդ նոսա Յիսուս՝ ասէ. Առ ի մարդկանէ այդ անհնարին է, այլ ոչ առ ի յԱստուծոյ: 27:

---

## ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ

ԲՉ.

Սրբոց քառասնիցն Սեբաստիայ:

Ժամամուտ. Գնալով փառաց քոց ի փառս, կաթուղիկէ եկեղեցի, դիմեալք ի Սեբաստիա վերին. ուր թագաւորեալքն յԱստուծոյ նահատակին ի յամօթ եւ ի քարընկէց



յերեսս բանսարկուին. քաջալերելով զմիմեանս, զի մի լուծեալ ոք բաղանեօք անցաւորիս՝ պակասեսցի. այլ դողալով առաքինաբար զինքն ըղերձեալ յանիւս աստուածային գանձուցն հոլովիցի. աղաղակելով առ Քրիստոս՝ Ընկալ զորդեգրութիւն ժողովոյս մերոյ ի յոյս սիրողաց քոց. Տէր փառք քեզ:

Սղ. ԿԵ. Ընցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր. եւ հաներ զմեզ ի հանգիստ:

Աղաղակեցէք առ Աստուած ամենայն երկիր. սաղմոս ասացէք անուան նորա, եւ տուք զփառս օրհնութեան նորա:

Պօղոսի առաքելոյն յԵփեսացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Զ. 10:

Այսուհետեւ զօրացարուք Տերամբ եւ կարողութեամբ զօրութեան նորա. եւ զգեցարուք զսպառազինութիւն Աստուծոյ, զի կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի: Զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս եւ ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այսս չարութեան որ ի ներքոյ երկնից: Վասն այսորիկ առէք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիջիք ի դիմի հարկանել չարին յաւուրն չարութեան: Եւ իբրեւ զամենայն ինչ կատարիցէք, հաստատուն կացէք, զտեղի կալջիք, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, եւ զգեցեալ զզրահսն արդարութեան, եւ ագուցեալ զոտս պատրաստութեամբ աւետարանին խաղաղութեան: Եւ ի վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոց, որով կարող լինիջիք զամենայն նետս մուխս չարին շիջուցանել: Եւ առէք զսաղաւարտն փրկութեան եւ. զսուսեր հոգւոյն՝ որ է բանն Աստուծոյ: 17:

Ալէլուիա, ալէլուիա. Ընցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր. եւ հաներ զմեզ ի հանգիստ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԳ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն յարքայութեան երկնից: Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ:

Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ՝ թագոյց. եւ ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի, եւ գնէ զագարակն զայն: Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից առն վաճառականի՝ որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս: Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր, եւ գնեաց զայն մարգարիտ: Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից ուռկանի արկելոյ ի ծով եւ յամենայն ազգաց ժողովելոյ: Զոր՝ իբրեւ լցաւ, հանեալ ի ցամաք եւ նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս, եւ զխոտանն ի բաց ընկեցին: Այնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք եւ մեկնեսցեն զչարս ի միջոյ արդարոց, եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց: Ասէ ցնոսա Յիսուս. Իմացարուք զայս ամենայն. ասեն ցնա. Այո՛ Տէր: Եւ նա ասէ ցնոսա. Վասն այսորիկ ամենայն դպիր աշակերտեալ արքայութեան երկնից՝ նման է առն տանուտեառն, որ հանէ ի գանձէ իւրմէ զնոր եւ զհին: 52:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ

### ԲԿ.

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. ԿԳ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Փիլիպպեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 1:

Այսուհետեւ, եղբարք իմ, ուրախ լերուք ի Տէր, զնոյն գրել առ ձեզ՝ ինձ ոչ ինչ դանդաղելի է, եւ ձեզ



կարի զգուշալի: Զգոյշ եղերուք ի շանց անտի, զգոյշ եղերուք ի չար մշակաց անտի, զգոյշ եղերուք ի կրճատութենէ անտի: Զի թլփատութիւն մեք եմք, որ Հոգւովն Աստուծոյ պաշտեմք, եւ պարծիմք ի Քրիստոս Յիսուս, եւ ոչ ի մարմին ինչ պանծացեալ եմք: Թէպէտ եւ ես իսկ զնոյն վստահութիւն ունիմ ի մարմնի, եթէ ոք համարիցի այլազգ վստահ լինել ի մարմին, առաւել եւս ես: Թլփատութեամբ ութօրեայ, յազգէ Իսրայէլի, ի ցեղէ Բենիամինի, եբրայեցի յեբրայեցւոյ, ըստ օրինացն փարիսեցի, ըստ նախանձայոյզ լինելոյ՝ հալածէի զեկեղեցին, ըստ արդարութեան օրինացն լեալ անարատ: Այլ որ ինչ ինձ շահն էր՝ զայն վնաս համարիմ վասն Քրիստոսի: Այլ եւ համարիմ իսկ զամենայն վնաս վասն առաւել գիտութեանն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ. վասն որոյ յամենայնէ զրկեցայ, եւ համարիմ կղկղանս, զի զՔրիստոս շահեցայց, եւ գտայց ի նմա. իբրեւ ոչ եթէ զիմ արդարութիւն ինչ՝ որ յօրինաց անտի է, ունիցիմ, այլ զհաւատոցն Քրիստոսի, որ յԱստուծոյ արդարութիւնն է: Հաւատովք ճանաչել զնա, եւ զզօրութիւն յարութեան նորա, եւ զհաղորդութիւն չարչարանաց նորա, կերպարանակից լինել մահու նորա, թէ ո՛րպէս հասից ի մեռելոցն յարութիւն: Իբր ոչ եթէ արդէն առեալ իցէ, կամ արդէն կատարեալ իցեմ, զհետ մտեալ եմ թէ հասից, մանաւանդ թէ ըմբռնեալ իսկ իցեմ ի Քրիստոսէ Յիսուսէ: Ե՛ղբարք, ես ոչ համարիմ զանձն իմ թէ հասեալ իցեմ. բայց մի ինչ է, զի զառ ի յետոյսն մոռացեալ է, եւ ի յառաջադէմսն նկրտեալ եմ: Ուշ եդեալ ընթանամ ի կէտ կոչմանն Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս: Այսուհետեւ որ միանգամ կատարեալքդ էք, զայս խորհեցարուք, եւ եթէ այլ ազգ ինչ խորհիցիք, սակայն եւ զայն Աստուած ձեզ յայտնեսցէ: Բայց յոր ժամանեցաքս, զսոյն խորհել եւ սմին կանոնի միաբան լինել: Նմանողք ինձ եղիջիք, եղբարք, եւ դիտեսջիք զայնպիսիսն, որ այնպէսն գնայցեն, որպէս ունիքդ զմեզ ձեզ օրինակ: Զի բազումք գնան, զորոց բազում անգամ ասէի ձեզ, բայց արդ եւ լալով իսկ ասեմ, զթշնամեաց խաչին Քրիստոսի. որոց կատարածն կորուստ է, որոց Աստուած որովայնն իւրեանց է, եւ փառք ամօթն իւրեանց, որք զերկրաւորս եւեթ խորհին: Այլ մեր առաքինութիւնն յերկինս է, ուստի եւ փրկչին ակն ունիմք

Տեառն Յիսուսի Քրիստոսի. որ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ՝ կերպարանակից լինել մարմնոյ փառացն իւրոց ըստ զօրութեանն, առ ի կարող լինելոյ հնազանդեցուցանել ընդ իւրեւ զամենայն: Այսուհետեւ, եղբարք իմ սիրելիք եւ անձկալիք, ուրախութիւն իմ եւ պսակ. այսպէս հաստատուն կացէք ի Տէր, սիրելիք: ԶԱւետիս աղաչեմ, եւ զՍիւնտիք աղաչեմ զնոյն խորհել ի Տէր: Այո՛, աղաչեմ եւ զքեզ, մտերիմ իմ եւ լծակից, եւ դու օգնական լինիջիր նոցա՝ որք յաւետարանին նահատակեցան ընդ իս Կղեմաւ հանդերձ եւ այլովք գործակցօք իմովք, որոց անուանքն ի դպրութեան կենաց: Ուրախ լերուք ի Տէր յամենայն ժամ. դարձեալ ասեմ, ուրախ լերուք: Հեզութիւն ձեր յայտնի լեցի ամենայն մարդկան. Տէր մերձ է: Մի՛ ինչ հոգայք. այլ ամենայն աղօթիւք եւ խնդրուածովք, գոհութեամբ, խընդրուածք ձեր յայտնի լեցին առ Աստուած: Եւ խաղաղութիւնն Աստուծոյ, որ ի վեր է քան զամենայն միտս, պահեսցէ զսիրտս ձեր եւ զմիտս ի Քրիստոս Յիսուս: Այսուհետեւ, եղբարք, որ ինչ ճշմարտութեամբ է, որ ինչ պարկեշտութեամբ, որ ինչ արդարութեամբ, որ ինչ սրբութեամբ, որ ինչ սիրով, որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ քաջութեամբ, որ ինչ գովութեամբ, զայն խորհիջիք: Զոր ուսարուք եւ ընկալարուք եւ լուայք եւ տեսէք յիս, զայն արարէք եւ Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ: Դ· 9:

Ալելուիա, ալելուիա. Ընդաղակեցէք առ Տէր ամենայն երկիր. ծառայեցէք Տեառն ուրախութեամբ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ· ԺԲ· 20:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Իբրեւ հարցաւ ի փարիսեցւոցն՝ թէ ե՛րբ գայցէ արքայութիւնն Աստուծոյ. պատասխանի ետ նոցա եւ ասէ. Ոչ գայ արքայութիւն Աստուծոյ խտրանօք. եւ չասիցեն, թէ Ահաւասիկ աստ է կամ անդ. զի ահա արքայութիւն Աստուծոյ ի ներքս ի ձեզ է: Ասաց եւ առ աշակերտան. Եկեսցեն աւուրք ցանկանալոյ ձեզ մի յաւուրցն Որդւոյ մարդոյ տեսանել, եւ ոչ տեսանիցէք: Եւ եթէ ասիցեն ձեզ՝



եթէ Ահաւասիկ է կամ անդ, մի՛ երթայցէք զհետ: Զի որպէս փայլակն փայլատակեալ ի ներքոյ երկնից՝ ընդ երկինիւք ծագիցէ, նոյնպէս եւ Որդի մարդոյ յաւուրն իւրում: Բայց նախ պարտ է նմա բազումս չարչարել եւ խոտել յազգէս յայսմանէ: Եւ որպէս եղեւ յաւուրսն Նոյի, նոյնպէս եղիցի եւ յաւուրսն Որդւոյ մարդոյ: Ուտէին, ըմպէին, կանայս առնէին եւ արանց լինէին, մինչեւ յօրն՝ յորում եմուտ Նոյ ի տապանն, եւ եկն Ջրհեղեղն եւ կորոյս զամենեսեան: Նոյնպէս եւ որպէս յաւուրսն Ղովտայ եղեւ. ուտէին, ըմպէին, գնէին, վաճառէին, տնկէին, շինէին. եւ յորում աւուր եւ Ղովտ ի Սոդոմայ, տեղաց հուր եւ ծծումբ յերկնից եւ կորոյս զամենեսեան: Ըստ նմին օրինակի եղիցի եւ յաւուրն, յորում Որդի մարդոյ յայտնելոց է: Յայնմ աւուր որ կայցէ ի տանիս եւ կարասի իւր ի տան, մի՛ իջցէ առնուլ զայն. եւ որ յանդի իցէ, նոյնպէս մի՛ դարձցի յետս: Յիշեցէք զկինն Ղովտայ: Որ խնդրիցէ զանձն իւր ապրեցուցանել, կորուսցէ զնա, եւ որ կորուսցէ, ապրեցուսցէ զնա: Ասեմ ձեզ. յայնմ գիշերի՝ թէ եղիցին երկու ի մի մահիճս, մին առցի եւ միւսն թողցի. եւ եթէ եղիցին երկու՝ աղալ ի միասին, մին առցի եւ միւսն թողցի. եւ եթէ իցեն երկու յանդի, մին առցի եւ միւսն թողցի: Պատասխանի ետուն եւ ասեն ցնա. Յո՞ Տէր: Եւ նա ասէ ցնոսա. Ուր մարմին է, անդր եւ արծուիք ժողովեսցին: Ասաց եւ առակ մի նոցա՝ առ այն, թէ պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս եւ մի ձանձրանալ. ասէ. Դատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն, Աստուծոյ ոչ երկնչէր եւ ի մարդկանէ ոչ ամաչէր: Եւ այրի մի էր ի նմին քաղաքի, գայր առ նա եւ ասէր: Դատ արա ինձ յոսոխէ իմմէ: Եւ ոչ կամէր ի բազում ժամանակս. յետ այնորիկ ասէ ի մտի իւրում. Թէ եւ Աստուծոյ ոչ երկնչիմ, եւ ի մարդկանէ ոչ ամաչեմ, գոնէ վասն աշխատ առնելոյ զիս այրւոյն՝ արարից նմա դատ, զի մի՛ իսպառ եկեալ թախանձիցէ զիս: Եւ ասէ Տէր. Լուարո՛ւք զինչ դատաւորն անիրաւութեան ասէր: Իսկ Աստուած ո՛չ առնիցէ վրէժխնդրութիւն ծառայից իւրոց, որ աղաղակեն առ նա ի տուէ եւ ի գիշերի. եւ երկայնամի՞տ միայն լինիցի առ նոսա: Այո՛ ասեմ ձեզ. զի արասցէ վրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի. իսկ Որդի մարդոյ եկեալ՝ գտանիցէ՞ արդեօք

հաւատս յերկրի։ Ասաց եւ առ ոմանս պանծացեալս յանձինս, թէ արդարք իցեն եւ խոտիցեն զբազումս, զառակս զայս. Արք երկու ելին ի տաճարն կալ յաղօթս, մին փարիսեցի եւ միւսն մաքսաւոր։ Փարիսեցին կայր մեկուսի, եւ զայս առանձինն աղօթս մատուցանէր. Աստուած իմ, գոհանամ զքէն, զի ոչ եմ իբրեւ զայլս ի մարդկանէ, զյափշտակողս եւ զանիրաւս եւ զշունս, կամ իբրեւ զայս մաքսաւոր։ Այլ պահեմ երկիցս ի շաբաթու, եւ տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց։ Եւ մաքսաւորն կայր մեկուսի, եւ ոչ կամէր եւ ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ. այլ կոծէր զկուրծս իւր եւ ասէր. Ա՛ստուած, քաւեա զիս զմեղաւորս։ Ասեմ ձեզ. էջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա. զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեսցի. եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։ ԺԸ. 14։

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### ԳՉ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր։

Սղ. ՃԽԴ. Արքայութիւն քո արքայութիւն ամենայն յաւիտենից. եւ տէրութիւն քո յազգէ մինչեւ յազգ։

Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր. եւ արդար է յամենայն գործս իւր։

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց թղթոյն է ընթերցուածս. ԳԼ. Գ. 10։

Այլ եկեսցէ օր Տեառն իբրեւ զգող. յորում երկինք տագնապաւ անցցեն, եւ բնութիւնք հրով կիզեալ լուծցին, եւ երկիր եւ որ ի նմա գործք գտանիցին։ Եւ ի լուծանել այսպէս այսր ամենայնի, որպիսի՛ ինչ պարտ իցէ ձեզ գտանել. այլ սուրբ եւ աստուածապաշտ կարգաւ ակն



ունել, եւ փութալ հասանել գալստեան աւուրն Տեառն, յորում երկինք հրայրեացք լուծանիցին, եւ բնութիւնք հրդեհեալ հալիցին։ Նորոց երկնից եւ նորոյ երկրի ըստ աւետեացն հայեցեալ սպասիցեմք, յորս արդարութիւնն բնակէ։ Վասն որոյ, սի՛րելիք, այսոցիկ սպասեալ, փոյթ յանձին ունիջիք անբիծք եւ անարատք գտանել նմա ի խաղաղութիւն, եւ զՏեառն երկայնմտութիւնն՝ փրկութիւն համարեսջիք։ Զոր օրինակ եւ սիրելի եղբայրն մեր Պօղոս ըստ շնորհելոյ իմաստութեանն նմա յԱստուծոյ՝ գրեաց ձեզ. որպէս եւ յամենայն իսկ թուղթսն խօսի վասն այսոցիկ, յորս գտանի ինչ ինչ դժուարիմաց, զոր անուսմունքն եւ յողդողդքն կամակորեն, որպէս եւ զամենայն իսկ գիրս առ իւրեանց անձանց կորուստ։ Դուք այսուհետեւ, սի՛րելիք, իբրեւ զկանխագէտս զգուշասջիք, զի մի՛ անառակ մոլորութեամբն զգածեալք անկանիջիք, յաստեաց հաստատութեանն։ Աճեցէք շնորհօք եւ գիտութեամբն Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Նմա փառք եւ այժմ եւ յօրն յաւիտենից. ամէն։ 18։

Ալէլուիա, ալէլուիա. Եկայք ցնծասցուք ի Տէր. աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

ԳԼ. Ը. 22։

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Գան ի Բեթսայիդա. եւ ածեն առաջի նորա կոյր մի, եւ աղաչէին զնա՝ զի մերձեսցի ի նա։ Եւ առեալ զձեռանէ կուրին՝ եհան արտաքոյ շինին, եթուք յաչս նորա, եւ ձեռն եդ ի վերայ նորա. եւ հարցանէր ցնա՝ թէ տեսանիցէ՞ ինչ։ Բացաւ եւ ասէր. Տեսանեմ զմարդիկս զի շրջին՝ իբրեւ զծառս։ Դարձեալ եդ ձեռս ի վերայ աչաց նորա՝ եբաց, եւ տեսանէր. ողջացաւ եւ տեսանէր համարձակ զամենայն։ Արձակեաց զնա ի տուն իւր եւ ասէ. Ի շէնդ մի՛ մտանիցես, այլ երթ ի տուն քո. եւ յորժամ ի շէնն մտանիցես՝ մի՛ ումեք ասիցես ի շինին։ 26։

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### Գ·Կ·

Յ·ամաոո=պ· Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր եւ լուսաւորեցեր զաչեզերս, զնաղղուԹիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղուԹեանց ես Թագաւոր, զնաղղուԹիւն եւ զողորմուԹիւն. որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ· Ե· Նրկիր պագից ի տաճար սուրբ քո, երկիւղիւ քո Տէր:

Պարծեացին ի քեզ սիրելիք անուան քոյ Տէր· զի օրհնեացես դու զարդարն:

Յովհաննու առաքելոյն ի կաթողիկէացյց առաջին ԹղԹոյն է ընԹերցուածս· Գղ· ա· 1:

Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուաքն, որում ականատեսն իսկ եղեաք, ընդ որ հայեցաքն, եւ ձեռք մեր շօշափեցին ի վերայ բանին կենաց. եւ կեանքն յայտնեցան, եւ տեսաք եւ վկայեմք, եւ պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն, որ էր առ Հօր եւ երեւեցաւ մեզ: Զոր տեսաքն եւ լուաք, պատմեմք եւ ձեզ, զի եւ դուք հաղորդուԹիւն ունիցիք ընդ մեզ, եւ մեր հաղորդուԹիւնն լիցէ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ իւրում Յիսուսի Քրիստոսի: Եւ զայս գրեմք ձեզ, զի ձեր ուրախուԹիւնն կատարեալ լիցէ: Եւ այս են աւետիքն՝ զոր լուաք առ ի նմանէ եւ պատմեմք ձեզ. զի Աստուած լոյս է, եւ խաւար ի նմա չիք եւ ոչ մի: Եթէ ասիցեմք եթէ հաղորդուԹիւն ունիմք ընդ նմա, եւ ի խաւարի շրջիցիմք, ստեմք եւ ոչ առնեմք զճշմարտուԹիւնն: Իսկ եթէ ընդ լոյս գնայցեմք, որպէս եւ նա լոյս է, հաղորդուԹիւն ունիմք ընդ միմեանս. եւ արիւնն Յիսուսի Որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց: Եթէ ասիցեմք եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք. եւ ճշմարտուԹիւն ի մեզ ոչ գոյ: Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա եւ արդար առ ի Թողուլ զմեղս մեր, եւ սրբել զմեզ յամենայն անիրաւուԹենէ: Եթէ ասիցեմք եթէ ոչ ինչ մեղաք, սուտ առնեմք զնա, եւ բան նորա ոչ է ի մեզ: 10:



Ալէլուիա, ալէլուիա· Նրգեցէք Տեառն երգ նոր· երգեցէք Տեառն ամենայն երկիր· երգեցէք Տեառն եւ բարձր արարէք զանուն նորա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի·

Գղ· ԺԳ· 46:

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ·

Եւ զան յՆրիքով· եւ ընդ ելանելն նորա յՆրիքովէ աշակերտաւքն եւ բազում ժողովրդով, որդի Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ յանցս ճանապարհի: Լսրեւ լուաւ՝ Թէ Յիսուս Նազովրեցի է, սկսաւ աղաղակել եւ ասել· Որդի ԴաւԹի Յիսուս, ողորմեաց ինձ: Եւ սաստէին նմա բազումք՝ զի լռեսցէ. եւ նա առաւել եւս աղաղակէր· Որդի ԴաւԹի, ողորմեաց ինձ: Ոտեղի առ Յիսուս եւ հրամայեաց կոչել զնա: Կոչեն զկոյրն եւ ասեն ցնա· Քաջալերեաց, արի, կոչէ զքեզ: Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր, յարեաւ եկն առ Յիսուս: Պատասխանի եւ նմա Յիսուս եւ ասէ· Ո՞ր ինչ կամիս՝ Թէ արարից քեզ: Ասէ ցնա կոյրն· Ռաբբունի, զի բացայց: Եւ Յիսուս ասէ ցնա· ԵրԹ՝ հաւատք քո կեցուցին զքեզ· եւ վաղվաղակի բացաւ, եւ երԹայր զհետ նորա ի ճանապարհին: 52:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

### Գ·Զ·

Յ·ամաոո=պ· Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զնաղղուԹիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ· Զե· Ակեղ զձառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ· ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր պազ· Համբարձի զանձն իմ:

Յովհաննու առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 1:

Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ զի մի՛ մեղիցէք. եւ եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Աստուած զՅիսուս Քրիստոս զարդարն եւ զանարատ: Եւ նա է քաւութիւն մեղաց մերոց, եւ ոչ եթէ մերոցն միայն, այլ եւ ամենայն աշխարհի: Եւ յայսմիկ գիտեմք եթէ ծանեաք զնա, եթէ զպատուիրանս նորա պահիցեմք: Որ ասիցէ եթէ Ծանեայ զնա, եւ զպատուիրանս նորա ոչ պահիցէ, սուտ է, եւ ճշմարտութիւն ի նմա ոչ գոյ: Իսկ որ պահիցէ զբան նորա, արդարեւ ի նմա կատարեալ է սէրն Աստուծոյ. այսուիկ ճանաչեմք եթէ ի նմա եմք: Որ ասիցէ ի նմա բնակել՝ այնպէս պարտի գնալ, որպէս եւ նայն գնաց: 6:

Ալէլուիա, ալէլուիա. Յիշեա Տէր զգթութիւնս քո. եւ զողորմութիւնս քո որք ենն յաւիտենից:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Ժ. 28:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Սկսաւ ասել ցնա Պետրոս. Ահաւասիկ մեք թողաք զամենայն եւ եկաք զկնի քո: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ, ոչ ոք է որ եթող զտուն կամ զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ զմայր կամ զորդիս կամ զագարակս վասն իմ կամ վասն աւետարանին, եթէ ոչ առնուցու հարիւրապատիկ այժմ յայսմ ժամանակի տունս եւ եղբարս եւ քորս եւ մայր եւ որդիս եւ ագարակս՝ հալածանօք հանդերձ, եւ յաշխարհին որ գալոց է՝ զկեանսն յաւիտենականս: Զի բազումք եղիցին առաջինք յետինք, եւ յետինք առաջինք: 31:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Դկ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ ուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ



Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. ՂԸ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

Յովհաննու առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 7:

Սիրելիք, ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ ձեզ, այլ զհին պատուիրանն՝ զոր ի սկզբանէ ունէիք. եւ հին պատուիրանն՝ բանն է զոր լուարուք: Դարձեալ նոր պատուիրան գրեմ ձեզ, որ է ճշմարտիւ ի նմա եւ ի ձեզ. զի խաւարն անցանէ, եւ լոյսն ճշմարիտ արդէն իսկ երեւի: Որ ասէ եթէ ի լոյսն իցէ, եւ զեղբայր իւր ատիցէ, սուտ է, եւ ի խաւարի է տակաւին: Որ սիրէ զեղբայր իւր, ի լոյս բնակէ, եւ գայթագղութիւն ի նմա չիք: Իսկ որ ատեայ զեղբայր իւր, ի խաւարի է եւ ընդ խաւար շրջի, եւ ոչ գիտէ յո՛ երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նորա: Գրեմ ձեզ, որդեակք, զի թողեալ են ձեզ մեղքն ձեր վասն անուան նորա: Գրեմ ձեզ, հա՛րք, զի ծանեայք դուք զայն՝ որ ի սկզբանէն է: Գրեմ ձեզ, երիտասարդք, զի յաղթեցէք դուք չարին: Գրեցի ձեզ, մա՛նկունք, զի ծանեայք դուք զՀայրն: Գրեցի ձեզ, հա՛րք, զի ծանեայք դուք զայն որ ի սկզբանէն է: Գրեցի ձեզ, երիտասարդք, զի էք դուք հզօրացեալք, եւ բանն Աստուծոյ ի ձեզ բնակէ, եւ յաղթեցէք դուք չարին: Մի՛ սիրէք զաշխարհ, եւ մի՛ որ ինչ յաշխարհի է: Եթէ ոք սիրէ զաշխարհ, ոչ է ի նմա սէր Հօր: Զի ամենայն որ ինչ յաշխարհի է, ցանկութիւն է մարմնոյ, եւ ցանկութիւն աչաց, եւ ամբարտաւանութիւն աստի կենացս. որ ոչ է առ ի Հօրէ, այլ յաշխարհէ աստի է: Եւ աշխարհս անցանէ եւ ցանկութիւն նորա. իսկ որ առնէ զկամս Աստուծոյ, մնայ յաւիտեան: 17:

Ալէլուիա, ալէլուիա. Բարձր արարից զընտրեալն ի ժողովրդենէ իմմէ. գտի զԴաւիթ ծառայ իմ, եւ իւղով սրբով իմով օծի զնա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ե. 1.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ եղեւ ի խռնել զնովաւ ժողովրդեանն եւ լսել զբանն Աստուծոյ, եւ ինքն կայր առ ծովակին Գեննեսարեթայ: Եւ ետես երկուս նաւս՝ զի կային առ ծովակին, եւ ձկնորսքն ելեալ ի նոցանէ՝ լուանային զգործիսն: Եւ նա ի մի նաւուցն՝ որ էր Սիմովնի, եւ աղաչեաց զնա սակաւիկ մի տանել ի ներքս ի ցամաքէն: Նստաւ եւ ուսուցանէր ի նաւէ անտի զժողովուրդսն: Եւ իբրեւ լռեաց ի խօսիցն, ասէ ցՍիմովն. Խաղացո ի խորն, եւ արկէք զգործիս ձեր յորս: Պատասխանի ետ Սիմովն եւ ասէ ցնա. Վ՛արդապետ, զամենայն գիշերս աշխատ եղեաք եւ ոչ ինչ կալաք. բայց վասն քո բանիդ արկցուք զգործիսս: Զայս իբրեւ արարին՝ փակեցին ի ներքս բազմութիւն ձկանց յոյժ, մինչեւ պարպատէին ուռկանք նոցա: Եւ ակնարկէին որսակցացն ի միւս նաւն՝ գալ օգնել նոցա. եւ եկին, եւ լցան երկոքին նաւքն՝ մինչեւ մերձ յընկղմել նոցա: Իբրեւ ետես Սիմովն Պետրոս՝ անկաւ առ ծունկսն Յիսուսի եւ ասէ. Ի բաց գնա յինէն, Տէ՛ր, զի այր մեղաւոր եմ ես: Քանզի ահ պատեաց զնա եւ զամենեսեան որ ընդ նմայն էին, վասն որսոյ ձկանցն զորս ըմբռնեցին: Նոյնպէս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս՝ զորդիսն Զեբեդեայ, որ էին որսակիցք Սիմովնի: Եւ ասէ ցՍիմովն Յիսուս. Մի՛ երկնչիր՝ յայսմ հետէ զմարդիկ որսայցես ի կեանս: Եւ հանեալ զնաւն ի ցամաք, թողին զամենայն, եւ գնացին զհետ նորա: 11:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

### ԱՁ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:



Յովհաննու առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 18:

Ո՛րդեակք, յետին ժամանակ է, եւ որպէս լուարուք եթէ Նեռն գալոց է, եւ արդէն իսկ նեռինք բազումք եկեալ են. որով մարթեմք իմանալ եթէ յետին ժամանակ է: Առ ի մէնջ ելին, այլ ոչ էին ի մէնջ. զի եթէ ի մէնջ էին, ապա առ մեզ մնային. այլ զի յայտնի լինիցին եթէ ոչ էին ամենեքին նոքա ի մէնջ: Եւ դուք օծութիւն ունիք առ ի սրբոյն, եւ գիտէք ամենեքին: Ոչ գրեցի ձեզ եթէ ոչ գիտէք զճշմարտութիւնն, այլ թէ գիտէք զնա, եւ թէ զի ամենայն ստութիւն ոչ է ի ճշմարտութենէ անտի: Իսկ ո՛ իցէ սուտ, եթէ ոչ՝ որ ուրանայ եթէ Յիսուս չէ Քրիստոսն: Նա իսկ է նեռն, որ ուրանայ զՀայր եւ զՈրդի: Ամենայն որ ուրանայ զՈրդի, եւ ոչ զՀայր ընդունի. իսկ որ խոստովանի զՈրդի, նա եւ զՀայր ընդունի: Դուք զոր լուարուքն ի սկզբանէ՝ ի ձեզ բնակեսցէ. զի եթէ ի ձեզ բնակեսցէ՝ զոր ի սկզբանէն լուարուք, եւ դուք յՈրդի եւ ի Հայր բնակեսջիք: Եւ այս են աւետիքն՝ զոր աւետարանեաց նա մեզ, զկեանս յաւիտենականս: 25:

Ալէլուիա, ալէլուիա. Հոգի քո սուրբ եւ բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ժ. 25:

ԶՏէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ահա յարեաւ ոմն օրինական՝ փորձէր զնա եւ ասէր. Վ՛արդապետ, զի՞նչ գործեցից՝ զի զկեանս յաւիտենականս ժառանգեցից: Եւ նա ասէ ցնա. Յօրէնս զի՞նչ գրեալ է, ո՞րպէս ընթեռնուս: Նա պատասխանի ետ եւ ասէ. Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումէ, եւ յամենայն անձնէ քումէ, եւ յամենայն զօրութենէ քումէ, եւ յամենայն մտաց քոց. եւ զընկեր քո իբրեւ զանձն քո: Եւ ասէ ցնա. Ուղիղ ետուր զպատասխանիդ. զայդ արա, եւ կեցցես: Նա իբրեւ կամեցաւ զանձն արդարացուցանել՝ ասէ ցՅիսուս. Եւ ո՞վ է իմ ընկեր: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Այր մի իջանէր յԵրուսաղեմէ

յԵրիքով, եւ անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա եւ վէրս ի վերայ եդին, թողին կիսամահ եւ գնացին: Դէպ եղեւ քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ, եւ տեսեալ զնա՝ զանց արար: Նոյնպէս եւ Ղեւտացի մի եկեալ ընդ նոյն տեղի՝ ետես եւ զանց արար: Սամարացի ոմն ճանապարհորդեալ եկն ընդ նոյն առ նովաւ, եւ տեսեալ զնա՝ գթացաւ: Եւ մատուցեալ պատեաց զվէրս նորա, արկեալ ի վերայ ձէթ եւ գինի. եւ եդեալ ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա ի պանդոկի մի, եւ դարմանեաց զնա: Եւ ի վաղիւ անդր իբրեւ ելանէր անտի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս եւ ասէ. Դարման տար դմա, եւ զոր ինչ ծախեսցես ի դա՝ ի միւսանգամ գալստեան իմում հատուցից քեզ: Արդ՝ ո՞ յերեցունց ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն ի ձեռս աւազակաց: Եւ նա ասէ. Որ արար զողորմութիւնն ի վերայ նորա. ասէ ցնա Յիսուս. Երթ եւ դու արա նոյնպէս: 37:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### ԱԿ.

### Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին Մուտն ի վիրապն:

Ժամամուտ. Գրիգոր սուրբ քահանայապետ, որ զհաւատս ուսուցեր, եւ զբանակս դիւացն հալածեցեր. մարդկան ուսուցեր քարոզել զԵրրորդութիւնն. պսակեցար յարքայութեան. արդ բարեխօս լեր առ Տէր վասն մեր:

Սղ. 2Է. Եդին զիս ի գբի ներքնում. ի խաւարի եւ ի ստուերս մահու:

Տէր Աստուած փրկութեան իմոյ. ի տուէ կարդացի եւ գիշերի առաջի քո:

Պօղոսի առաքելոյն ի Փիլիպպեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 12:

Կամիմ թէ գիտիցէք, եղբարք, զի որ ինչ վասն իմ էր, եւս քան զեւս ի յառաջադիմութիւն աւետարանին եկն: Մինչեւ կապանաց իմոց յայտնի լինել ի Քրիստոս



յամենայն հրապարակիս, եւ առ այլս ամենեսին, եւ առ բազում եղբարս ի Տէր, որ վստահ են կապանօքս իմովք՝ առաւել եւս համարձակել առանց երկիւղի զբանն Աստուծոյ խօսել: Ոմանք առ նախանձու եւ հակառակութեան, եւ ոմանք մտադիւրութեամբ իսկ զՔրիստոս քարոզեն, եւ ոմանք ի սիրոյ. քանզի գիտեն եթէ ի պատասխանատուութիւն աւետարանին կամ: Եւ ոմանք առ հեստութեան զՔրիստոս պատմեն, այլ ոչ սրբութեամբ. քանզի համարին նեղութիւնս յարուցանել ի վերայ կապանաց իմոց: Բայց այս զի՞նչ է. որո՛վ օրինակաւ եւ իցէ, եթէ պատճառանօք եւ եթէ ճշմարտութեամբ, Քրիստոս պատմի, եւ ընդ այս խնդամ, այլ եւ ուրախ եւս եղէց: Զի գիտեմ, եթէ այս պահի ինձ ի փրկութիւն ի ձերոց խնդրուածոց եւ ի պարգեւաց Հոգւոյն Յիսուսի Քրիստոսի, ըստ ակնկալութեան եւ յուսոյն իմոյ, զի մի՛ իւիք յամօթ եղէց. այլ ամենայն համարձակութեամբ, որպէս եւ յամենայն ժամ եւ այժմ, մեծասցի Քրիստոս ի մարմնի իմում, եթէ կենօք եւ եթէ մահու: Զի ինձ կեանք Քրիստոս է եւ մեռանել շահ: 21:

Ալէլուիա, ալէլուիա. Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի. եւ Տէր ընդ աջմէ քումմէ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԶ. 24:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր. Եթէ ոք կամի զկնի իմ գալ՝ ուրասցի զանձն, եւ առցէ զխաչ իւր եւ եկեսցէ զկնի իմ: Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա. եւ որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա: Զի՞նչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի, եւ զանձն իւր տուժեսցի. կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ: Զի գալոց է Որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւրովք, եւ յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր: Ամէն ասեմ ձեզ. զի իցեն ոմանք ի սոցանէ՝ որք աստ կան, որք ոչ ճաշակեսցեն զմահ մինչեւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով: 28:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ

ՃՋ·

Յաճախապահ· Ա՛ի ածելին Որդի եւ Հանդ Ըստուած, եւ անմահ էութիւն· որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Ըստուածածնէն եւ ի միշտ Կուսէն· անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Վրիստոս Ըստուած, մահուամբդ զմահ կոխեցեր· մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ։

Սղ· կԳ· Վհեզ վայելէ օրհնութիւն Ըստուած ի Սիոն· եւ քեզ տացին աղօթք Երուսաղէմ։

Յուր աղօթից իմոց· զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ։

Պօղոսի առաքելոյն ի Տողոսացւոց թղթոյն է ընթերցուածս·

ԳԼ· Բ· 8։

Ջգոյշ լերուք, մի՛ ոք իցէ՝ որ զձեզ կողոպտիցէ ճարտարմտութեամբ եւ անոտի խաբէութեամբ, որք ըստ մարդկան աւանդութեան եւ ըստ տարերց աշխարհիս, եւ ոչ ըստ Յիսուսի Վրիստոսի։ Զի ի նմա բնակէ ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս։ Եւ էք դուք նովաւ լեալք, որ է գլուխ ամենայն իշխանութեան եւ պետութեան, որով թլփատեցարուք հաւատովք զանձեռագործ թլփատութիւնն՝ ի մերկանալ զանգամս մարմնոյ թլփատութեամբն Վրիստոսի։ Ծաղեալք ընդ նմին մկրտութեամբն, որով եւ ընդ նմին յարեայք հաւատովք Ըստուծոյ ազդեցութեանն, որ յարոյց զնա ի մեռելոց։ Եւ զձեզ՝ որ երբեմն մեռեալն էիք ի մեղս եւ յանթլփատութեան մարմնոյ ձերոյ, կենդանացոյց յանձին իւրում. շնորհեաց մեզ զամենայն յանցանս մեր, եւ ջնջեաց զձեռագիրբ մերոյ հակառակութեանն, հրամանօքն իւրովք՝ որ կայր մեզ հակառակ. եբարձ զայն ի միջոյ, եւ բեւեռեաց ընդ խաչափայտին։ Մերկեաց զիշխանութիւնս եւ զպետութիւնս. յայտ յանդիման խայտառակեաց՝ նշաւակեալ զնոսա յանձին իւրում ի յարութեան իւրում։ Մի՛ ոք այսուհետեւ զձեզ դատեսցի ուտելով կամ ըմպելով կամ մասամբք տօնից կամ



ամսամտիւք կամ շաբաթուք· որ են ստուերք հանդերձելոցն, այլ մարմին Վրիստոս է։ Մի ոք զձեզ խաբեսցէ, որ կամիցի խոնարհութեամբ եւ կրօնիւք հրեշտակաց, զոր չիցէ տեսեալ՝ զըստհետ վարեալ, տարապարտ հպարտացեալ ի մտաց մարմնոյ իւրոյ· եւ ոչ ունիցի զգլուխն Վրիստոս, ուստի ամենայն մարմինն յօդիւք եւ խաղալեօք տարաբերեալ եւ խառնեալ՝ աճէ զաճումն Ըստուծոյ։ Նթէ մեռարուք ընդ Վրիստոսի ի տարերց աշխարհիս, զի՞ եւս իբրեւ զկենդանիս աստէն յաշխարհի կրօնաւորիք։ Մի՛ մերձենար, մի՛ ճաշակեր, մի՛ հուպ լինիր, որ է ամենայն ինչ ի պետս ապականութեան, ըստ պատուիրանաց եւ վարդապետութեան մարդկան, որ յիմաստութիւն իմն համարէ, ինքնաթեան մարդկան, որ յիմաստութիւն իմն համարէ, ինքնակամ կրօնիւք եւ խոնարհութեամբ եւ անխայտութեամբ մարմնոյ, եւ ոչ ի պատիւ ինչ լրութեան մարմնոյ։ Նթէ յարերուք ընդ Վրիստոսի, ապա զվերինն խնդրեցէք, ուր Վրիստոսն նստի ընդ աջմէ Ըստուծոյ· զվերինն խորհեցարուք, մի՛ զայս՝ որ յերկրի աստ է։ Վանզի մեռարուք եւ կեանքն ձեր ծածկեալ են ընդ Վրիստոսի Ըստուածս։ Յոկ յորժամ Վրիստոս յայտնեսցի՝ կեանքն ձեր, յայնժամ եւ դուք ընդ նմա յայտնեսջիք փառաք։ Սպանէք այսուհետեւ զանդամս ձեր զերկրաւորս· ի բաց ընկեցէք զսրոնկութիւն, զբիծ, զցանկութիւն չարեաց, եւ զպղծութիւն, զբարկութիւն՝ որ է կռապաշտութիւն։ Վ՚ան որոյ գայ բարկութիւն Ըստուծոյ ի վերայ որդւոցն անհաւանութեան, որովք եւ դուք երբեմն գնայիք՝ մինչ կենդանիքն էիք ի նոսա։ Այդ ի բաց թօթափեցէք եւ դուք զայն ամենայն, զբարկութիւն, զսրտմտութիւն, զչարութիւն, զհայհոյութիւն, զչարկութիւն, զսրտմտութիւն ի բերանոց ձերոց։ Մի՛ սուտ խօսիք միմեանց· մերկացարուք զհին մարդն գործովքն իւրովք, եւ զգեցարուք զնորն, նորոգեալ ի գիտութիւն ըստ պատկերի արարչին իւրոյ· ուր ոչ է Հրեայ եւ ոչ Հեթանոս, թլփատութիւն եւ անթլփատութիւն, խուժ, դուժ, Սկիւթացի, ծառայ, ազատ, այլ ամենայն եւ յամենայնի Վրիստոս։ Զգեցարուք այսուհետեւ իբրեւ ընտրեալք Ըստուծոյ, սուրբք եւ սիրեցեալք՝ զգութ, զողորմութիւն, զքաղցրութիւն, զխոնարհութիւն, զհեզութիւն, զերկայնմտութիւն. նեցուկ միմեանց, ընդհակ իրերաց, եթէ ուրուք զումեքէ ունիցի դատ ընդ նմա։ Որպէս Ըստուած Վրիստոսիւ ընդհեաց ձեզ, այսպէս եւ դուք։

մեզ՝ նոյնպէս եւ դուք: Եւ ի վերայ այսր ամենայնի զսէրն, որ է զօդ կատարման: Եւ խաղաղութիւնն Քրիստոսի հաստատեսցի ի սիրտս ձեր, յոր եւ կոչեցարուքն միով մարմնով: Եւ գոհացողք լինիջիք. զի բանն Քրիստոսի բնակեսցէ ի ձեզ առատապէս, ամենայն իմաստութեամբ ուսուցանել եւ խրատել զմիմեանս. սաղմոսիւք եւ օրհնութեամբք եւ երգովք հոգեւորօք եւ շնորհօք օրհնել զԱստուած ի սիրտս ձեր: Եւ զամենայն զոր եւ առնիցէք բանիւք եւ արդեամբք, զամենայն յանուն Տեառն Յիսուսի արասջիք. գոհացողք լինիջիք զԱստուծոյ եւ Հօրն նովաւ: Գ· 17:

Ալէլուիա, ալէլուիա. Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր. ծառայեցէք Տեառն ուրախութեամբ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ· ԻԲ· 34:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Իսկ փարիսեցիքն իբրեւ լուան եթէ պապանձեցոյց զսադուկեցիսն, ժողովեցան ի միասին. եւ եհարց մի ոմն ի նոցանէ զնա՝ փորձելով եւ ասէ. Վարդապետ, որ պատուիրան մեծ է յօրէնս: Եւ Յիսուս ասէ ցնա. Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ եւ յամենայն անձնէ քումմէ եւ յամենայն մտաց քոց: Այս է մեծն եւ առաջին պատուիրան: Եւ երկրորդն նման սմին, Սիրեսցես զընկեր քո՝ իբրեւ զանձն քո: Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք եւ մարգարէք կախեալ կան: Եւ ի ժողովել փարիսեցւոցն՝ եհարց ցնոսա Յիսուս եւ ասէ. Ո՞ւիարդ թուի ձեզ վասն Քրիստոսի, որդի որդի է: Ասեն ցնա՝ Դաւթի: Ասէ ցնոսա Յիսուս. իսկ զիարդ Դաւիթ հոգւովն կոչէ զնա Տէր եւ ասէ. Ասաց Տէր ցՏէր իմ. նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց: Իսկ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ՝ զիարդ որդի նորա իցէ: Եւ ոչ ոք կարէր տալ նմա պատասխանի բան մի, եւ ոչ իշխեր ոք յայնմ օրէ հարցանել զնա եւ ոչ ինչ: Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ ժողովուրդսն եւ ընդ աշակերտան իւր եւ ասէ. Յաթոռն



Մովսիսի նստան դպիրքն եւ փարիսեցիք. զամենայն ինչ զոր ասիցեն ձեզ՝ արարէք եւ պահեցէք բայց ըստ գործոցն նոցա մի՛ առնէք. զի ասեն եւ ոչ առնեն: Կապեն բեռինս ծանուընս եւ դժուարակիրս, եւ դնեն ի վերայ ուսոց մարդկան. եւ մատամբ իւրեանց ոչ կամին շարժել զնոսա: Եւ զամենայն գործս իւրեանց առնեն ի ցոյց մարդկան: Լայնեն զպրապանակս իւրեանց, եւ երկայնեն զքղանցս հանդերձից իւրեանց: Սիրեն զյառաջագահս յընթրիս եւ զնախաթոռս ի ժողովուրդս եւ զողջոյնս ի հրապարակս, եւ կոչել ի մարդկանէ՝ Ռաբբի Ռաբբի: Բայց դուք մի՛ զձեզ կոչէք վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ. եւ ամենեքին դուք եղբարք էք: Եւ հայր մի՛ կոչէք ձեզ յերկրի, զի ձեր մի է Հայր՝ որ յերկինսն է: Եւ մի՛ կոչիցիք ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր Քրիստոս է: Եւ մեծն ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր: Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի, եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի: Վա՜յ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց. զի փակէք զարքայութիւն երկնից առաջի մարդկան. դուք ոչ մտանէք, եւ որոց մտանեն՝ չթայք թոյլ մտանել: Վա՜յ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց. զի ուտէք զտունս այրեաց. պատճառանօք երկարէք զաղօթս, վասն զի աւելի դատաստան ընդունիցիք: Վա՜յ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց. զի յածիք ընդ ծով եւ ընդ ցամաք առնել եկամուտ մի. եւ յորժամ լինիցի, առնէք զնա որդի գեհենի կրկին եւս քան զձեզ: Վա՜յ ձեզ առաջնորդք կոյրք, զի ասէք. Որ երդնու ի տաճարն՝ չէ ինչ, բայց որ երդնու յոսկին որ ի տաճարին է՝ արժան է: Որո՞նք եւ կոյրք, զի՞նչ մեծ է. ոսկի՞ն, եթէ տաճարն՝ որ սրբէ զոսկին: Եւ որ երդնու ի սեղանն՝ չէ ինչ, բայց որ երդնու ի պատարագն որ ի վերայ նորա է՝ արժան է: Յիմարք եւ կոյրք, զի՞նչ մեծ է, պատարա՞գն, եթէ սեղանն՝ որ սրբէ զպատարագն: Իսկ արդ՝ որ երդուաւ ի սեղանն, երդուաւ ի նա եւ յամենայն որ ի վերայ նորա է. եւ որ երդուաւ ի տաճարն, երդուաւ ի նա եւ ի բնակիչն նորա. եւ որ երդուաւ յերկինս, երդնու յաթոռն Աստուծոյ եւ յայն որ նստին ի վերայ նորա: Վա՜յ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց. զի տասանորդէք զանանուխ եւ զսամիթ եւ զչաման, եւ թողէք զծանր ծանր օրինացն զդատաստան եւ զողորմութիւն եւ զհաւատս. զայս արժան

էր առնել եւ զայն չթողուլ: Առաջնորդք կոյրք, որ զմժղուկս քամէք եւ զուղտս կլանէք: Վայ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց, զի սրբէք զարտաքին զբաժակին եւ զսկաւառակի, եւ ի ներքոյ լի են յափշտակութեամբ եւ անխառնութեամբ. Փարիսեցի կոյր, սրբեա նախ զներքին բաժակին եւ զսկաւառակին, զի լինիցի եւ արտաքինն նոցա սուրբ: Վայ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց, զի նման էք գերեզմանաց բռելոց, որ արտաքոյ երեւին գեղեցիկք, եւ ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց եւ ամենայն պղծութեամբ: Նոյնպէս եւ դուք արտաքոյ երեւիք մարդկան արդարք, եւ ի ներքոյ լի էք կեղծաւորութեամբ եւ անօրէնութեամբ: Վայ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց, զի շինէք զշիրիմս մարգարէից եւ զարդարէք զգերեզմանս արդարոց: Եւ ասէք. Եթէ էաք յաւուրս հարցն մերոց, ոչ հաղորդէաք արեան մարգարէիցն: Ապա ուրեմն վկայէք զանձանց՝ եթէ որդիք էք այնոցիկ որ կոտորէին զմարգարէսն: Եւ դուք լցէք զչափ հարցն ձերոց: Օ՛ձք՝ ծնունդք իժից, զիա՞րդ փախնուցուք ի դատաստանէ գեհենին: Վասն այդորիկ ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս եւ իմաստունս եւ դպիրս. եւ ի նոցանէ սպանանիցէք եւ ի խաչ հանիցէք. եւ ի նոցանէ տանջիցէք ի ժողովուրդս ձեր, եւ հալածիցէք ի քաղաքէ ի քաղաք: Որպէս զի եկեսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ յերկրի, յարենէն Աբելի արդարոյ՝ մինչեւ ցարիւնն Զաքարիայ՝ որդւոյ Բարաքեայ, զոր սպանէք ընդ մէջ տաճարին եւ սեղանոյ: Ամէն ասեմ ձեզ. եկեսցէ այն ամենայն ի վերայ ազգիս այսորիկ: Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէս եւ քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ. քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո, զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւովք, եւ ոչ կամեցարուք: Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ: Բայց ասեմ ձեզ՝ թէ ոչ եւս տեսանիցէք զիս յայսմ հետէ, մինչեւ ասիցէք, օրհնեալ եկեալն յանուն Տեառն: ԻԳ. 39:

---



## ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### ԲԿ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. ՃԽԴ. Արքայութիւն քո արքայութիւն ամենայն յաւիտենից. եւ տէրութիւն քո յազգէ մինչեւ յազգ:

Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր. եւ արդար է յամենայն գործս իւր:

Յովհաննու առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. ԳԼ. Բ. 26:

Զայս գրեցի ձեզ, զի մի՛ ոք զձեզ մոլորեցուցանիցէ: Եւ դուք օծութիւնն՝ զոր ընկալարուք ի նմանէ, բնակեսցէ ի ձեզ. եւ չէ ինչ պիտոյ թէ ոք զձեզ ուսուսցէ, այլ որպէս զի նորա օծութիւնն ուսուցանիցէ զձեզ վասն ամենայնի. եւ ճշմարիտ է եւ չէ սուտ. եւ որպէս ուսոյցն զձեզ, կայք ի նմա: Եւ այժմ, որդեակք, կացէք ի նմին. զի եթէ յայտնեսցի, ունիցիմք համարձակութիւն, եւ մի՛ ամաչեսցուք ի նմանէ ի գալստեանն նորա: Զի եթէ գիտիցէք եթէ արդար է նա, իմասջիք եթէ ամենայն որ առնէ զարդարութիւն՝ առ ի նմանէ ծնեալ է: Տեսէք որպիսի սէր շնորհեաց մեզ Հայր, զի որդիք Աստուծոյ կոչեսցուք եւ եմք. վասն այսորիկ աշխարհ ոչ ճանաչէ զմեզ, քանզի ոչ ծանեաւ զնա: Գ. 1:

Ալէլուիա, ալէլուիա. Եկայք ցնծասցուք ի Տէր. աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու. ԳԼ. Է. 12:

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Իբրեւ մերձ եղեն ի դուռն քաղաքին, եւ ահա ելանէր մեռեալ մի՝ որդի միամօր մօր իւրոյ, եւ նա էր այրի. եւ

ժողովուրդ բազում քաղաքին էր ընդ նմա: Իբրեւ ետես զնա Տէր՝ գթացաւ ի նա եւ ասէ. Մի՛ լար: Եւ մատուցեալ մերձեցաւ ի դագաղսն. եւ որք բարձեալն տանէին՝ զտեղի առին: Եւ ասէ. Պատանի՛ դու, քեզ ասեմ՝ արի: Կանգնեցաւ եւ նստաւ մեռեալն, եւ սկաւ խօսել. եւ ետ զնա ցմայր իւր: Եւ ահ կալաւ զամենեսին, եւ փառաւոր առնէին զԱստուած եւ ասէին, թէ Մարգարէ ոմն մեծ յարուցեալ է ի միջի մերում, եւ թէ Այց արար Աստուած ժողովրդեան իւրում ի բարութիւն: Եւ ել զրոյցս այս ընդ ամենայն Հրէաստան վասն նորա, եւ ընդ ամենայն կողմանս աշխարհին: 17:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԳԼ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն. որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. Ե. Երկիր պագից ի տաճար սուրբ քո, երկիւղիւ քո Տէր:

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քոյ Տէր. զի օրհնեսցես դու զարդարն:

Յովհաննու առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 2:

Սի՛րելիք, այժմ որդիք Աստուծոյ եմք. եւ չեւ եւս է յայտ եթէ զի՞նչ լինելոց իցեմք: Գիտեմք զի յորժամ նա յայտնեսցի, նման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա, որպէս եւ էն: Եւ ամենայն որ ունի զայս յոյս յանձին՝ սրբէ զանձն իւր, որպէս եւ նայն սուրբ է: Ամենայն որ զմեղս գործէ, նա եւ զանօրէնութիւն առնէ. եւ ինքն իսկ մեղքն անօրէնութիւն է: Եւ գիտեմք զի նա յայն սակս յայտնեցաւ, զի զմեղս բարձցէ, եւ ի նմա մեղք ոչ են: Ամենայն որ ի նմա է հաստատեալ՝ ոչ մեղանչէ. եւ ամենայն որ մեղանչէ, ոչ



ետես զնա եւ ոչ ծանեաւ զնա: Մանկունք, մի՛ ոք զձեզ խաբեսցէ. որ առնէ զարդարութիւն՝ արդար է, որպէս եւ նայն արդար է: Եւ որ առնէ զմեղս՝ ի սատանայէ է, զի ի սկզբանէ սատանայ մեղանչէ. վասն այսորիկ յայտնեցաւ Որդին Աստուծոյ, զի լուծցէ զգործս սատանայի: Ամենայն որ յԱստուծոյ է ծնեալ՝ մեղս ոչ առնէ, զի սերմն նորա ի սմա մնայ. եւ ոչ կարէ մեղանչել, զի յԱստուծոյ է ծնեալ: Այսուիկ յայտնի են ի միմեանց որդիք Աստուծոյ եւ որդիք սատանայի: 10:

Ալէլուիա, ալէլուիա. Երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէք Տեառն ամենայն երկիր. երգեցէք Տեառն եւ բարձր արարէք զանուն նորա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.
Գլ. ԺԱ. 14:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ հանէր դեւ մի համր. եւ եղեւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն, եւ զարմացան ամենայն ժողովուրդքն: Եւ ոմանք ի նոցանէ ասեն. Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս: Եւ այլք փորձէին եւ նշան յերկնից խընդրէին ի նմանէ: Իսկ նորա գիտացեալ զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, եւ տուն բաժանեալ յանձն՝ կործանի: Ապա եթէ եւ սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նորա. զի ասէք զինէն եթէ բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս: Եթէ ես բէեղզեբուղաւ հանեմ զդեւս, որդիքն ձեր ի՞ւ հանիցեն. վասն այդորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք: Իսկ եթէ մատամբ Աստուծոյ հանեմ զդեւս, ապա հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ: Յորժամ հզօր վառեալ՝ պահիցէ զտուն իւր, ի խաղաղութեան են ինչք նորա: Բայց եթէ հզօրագոյն քան զնա ի վերայ եկեալ՝ յաղթեսցէ նմա, զսպառազինութիւնն նորա հանէ՝ յոր յուսացեալ էր, եւ զաւար նորա բաշխեսցէ: Որ ոչ է ընդ իս՝ հակառակ իմ է, եւ որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ: 23:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԳԿ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. 2Ե. Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Յովհաննու առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 11:

Ամենայն որ ոչ առնէ զարդարութիւն՝ չէ նա յԱստուծոյ, եւ որ ոչ սիրէ զեղբայր իւր: Զի այս է պատուիրանն՝ զոր լուարուք ի սկզբանէ, զի սիրեսցուք զմիմեանս: Ոչ որպէս Կայէնն ի չարէ անտի էր, եւ սպան զեղբայր իւր. եւ յո՞ր սակս սպան զնա. զի իւր գործքն չար էին, եւ եղբօրն բարի: Եւ մի՛ ինչ զարմանայք, ե՛ղբարք, եթէ աշխարհս զձեզ ատեայ: Մեք գիտեմք, զի փոխեցաք ի մահուանէ ի կեանս, քանզի սիրեմք զեղբարս. իսկ որ ոչն սիրէ, անդէն ի մահուն մնայ: Ամենայն որ ատեայ զեղբայր իւր, մարդասպան է. եւ գիտէք, զի ամենայն մարդասպան ոչ ունի կեանս յաւիտենականս յանձին հաստատեալ: Այսուիկ գիտացաք զսէրն, զի նա զանձն իւր եդ վասն մեր. եւ մեք վասն եղբարց մերոց պարտիմք դնել զանձինս: Որ ունիցի զկեանս ինչ զաշխարհիս, եւ տեսանիցէ զեղբայր իւր կարօտեալ իւիք, եւ փակեսցէ զգութս իւր առ ի նմանէ, զիա՞րդ սէրն Աստուծոյ ի նմա իցէ բնակեալ: 17:

Ալէլուիա, ալէլուիա. Ողորմեա ինձ Տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.
Գլ. ԺԱ. 31:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Դշխոյն հարաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ արս ազգիս այսորիկ եւ դատապարտեսցէ զսա, զի եկն ի ծագաց



երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի. եւ ահա առաւել քան զՍողոմոն է աստ: Արք Նինուէացիք յարիցեն ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ եւ դատապարտեսցեն զսա, զի ապաշխարեցին ի քարոզութեանն Յովնանու. եւ ահա առաւել քան զՅովնան է աստ: Ոչ ուրուք լուցեալ ճրագ՝ դնէ ի թագստեան, եւ ոչ ընդ գրուանաւ. այլ ի վերայ աշտանակի, զի որ մտանեն՝ լոյս տեսանիցեն: Ճրագ մարմնոյ ակն է. յորժամ ակնն առատ է, ամենայն մարմինն լուսաւոր եղիցի. եւ երբ ակն չար է, եւ մարմինն խաւարին եղիցի: Արդ զգոյշ լեր, գուցէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար իցէ: Եթէ մարմինդ քո ամենայն լուսաւոր է, եւ չգուցէ մասն ինչ խաւարին, եղիցի լուսաւոր ամենայն. որպէս յորժամ ճրագն նշողիւք լուսաւորեսցէ զքեզ: Եւ մինչ խօսէր զայս, աղաչէր զնա ոմն փարիսեցի՝ զի ճաշ կերիցէ առ նմա. եւ նա մտեալ բազմեցաւ: Իբրեւ ետես փարիսեցին՝ զարմացաւ, զի նախ ոչ մկրտեցաւ յառաջ քան զճաշ: Ասէ ցնա Տէր. Այժմ դուք փարիսեցիք զարտաքին բաժակին եւ զպնակին սրբէք. եւ ներքինն ձեր լի է յափշտակութեամբ եւ չարութեամբ: Անմիտք, ո՞չ ապաքէն որ զարտաքինն արար, եւ զներքինն նոյն արար: Բայց աղէ զարժանն իսկ՝ տուք ողորմութիւն, եւ ահա ամենայն սուրբ է ձեր: Այլ վա՛յ ձեզ փարիսեցւոց, զի տասանորդէք զանանուխ եւ զփեգենայ եւ զամենայն բանջար, եւ անցանէք զիրաւամբք եւ զսիրովն Աստուծոյ. զայս արժան էր առնել, եւ զայնու ոչ անցանել: 42:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### ԳՉ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. ՂԸ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

Յովհաննու առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 18:

Որդեակք, մի՛ բանիւք եւ լեզուօք սիրեսցուք, այլ արդեամբք եւ ճշմարտութեամբ: Եւ այսուիկ լիցուք ծանուցեալք եթէ ի ճշմարտութենէ անտի իցեմք. եւ առաջի նորա արասցուք հանդէս սրտից մերոց: Եթէ ստգտանիցեն զմեզ սիրտք մեր, այլ Աստուած մեծ է քան զսիրտս մեր, եւ գիտէ զամենայն: Սիրելիք, եթէ սիրտք մեր զմեզ ոչ ստգտանիցեն, համարձակութիւն ունիմք առ Աստուած. եւ զոր ինչ հայցեմք, առնումք ի նմանէ. զի զպատուիրանս նորա պահեմք եւ զհաճոյս առաջի նորա առնեմք: Եւ այս է պատուիրան նորա, զի հաւատասցուք յանուն Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, եւ սիրեսցուք զմիմեանս, որպէս եւ ետ մեզ պատուէր: Եւ որ պահէ զպատուիրանս նորա՝ ի նմա է հաստատեալ, եւ նա ի սմա. եւ յայսմանէ գիտեմք եթէ բնակեալ է ի մեզ ի Հոգւոյ անտի՝ զոր ետ մեզ: 24:

Ալէլուիա, ալէլուիա. Բարձր արարից զընտրեալն ի ժողովրդենէ իմմէ. գտի զԴաւիթ ծառայ իմ, եւ իւղով սրբով իմով օծի զնա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ե. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յետ այսորիկ տօն էր Հրէից, եւ ել (Յիսուս) յԵրուսաղէմ: Եւ էր յԵրուսաղէմ ի Պրոպատիկէ աւազանին, որ կոչէր եբրայեցերէն Բեթհեզդա, հինգ սրահ, յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, գօսացելոց, որ ակն ունէին ջրոցն յուզելոյ: Եւ հրեշտակ Տեառն ըստ ժամանակի իջանէր յաւազանն եւ յուզէր զջուրսն. եւ որ նախ ի շարժումն ջուրցն իջանէր՝ բժշկէր, ոչ ունելով նշան հիւանդութեան: Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն եւ ութ ամ էր ի հիւանդութեան իւրում: Զնա իբրեւ ետես Յիսուս՝ զի անկեալ դնէր, եւ գիտաց եթէ բազում ժամանակք են այնուհետեւ, ասէ ցնա. Կամի՞ս ողջ լինել: Պատասխանի ետ նմա հիւանդն. Տէ՛ր ոչ զոք ունիմ, թէ յոր-



ժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն. եւ մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ: Ասէ ցնա Յիսուս. Արի, առ զմահիճս քո եւ գնա: Եւ ողջացաւ այրն, եւ յարեաւ՝ առ զմահիճս իւր եւ շրջէր. եւ էր շաբաթ յաւուրն յայնմիկ: Ասեն Հրեայքն ցբժշկեալն. Շաբաթ է, եւ ոչ է արժան առնուլ քեզ զմահիճս քո: Պատասխանի ետ նոցա եւ ասէ. Որ բժշկեացն զիս՝ նա ասաց ցիս. Առ զմահիճս քո եւ գնա: Հարցին ցնա եւ ասեն. Ո՞վ է այրն որ ասաց ցքեզ՝ Առ զմահիճս քո եւ շրջեաց: Եւ բժշկեալն ոչ գիտէր թէ ո՛վ իցէ. քանզի Յիսուս խոյս ետ վասն ամբոխին ի տեղւոջէ անտի: Յետ այսորիկ գտանէ զնա Յիսուս ի տաճարին եւ ասէ ցնա. Ահաւասիկ ողջացար, մի՛ եւս մեղանչեր, զի մի՛ չար եւս ինչ լինիցի քեզ: Գնաց այրն եւ պատմեաց Հրէիցն, եթէ Յիսուս էր որ բժշկեացն զիս: Եւ վասն այնորիկ հալածէին զՅիսուս Հրեայք, զի զայն առնէր ի շաբաթու: Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա. Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ ես գործեմ: Վասն այնորիկ առաւել խնդրէին Հրեայքն սպանանել զնա, զի ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլ եւ հայր իւր կոչէր զԱստուած, եւ հաւասար առնէր զանձն Աստուծոյ: 18:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Դ.Կ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. Ղէ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Զ. 14:

Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի

խաչ ելեալ է եւ ես աշխարհի։ Զի ի Քրիստոս Յիսուս ոչ թլփատութիւն ինչ է եւ ոչ անթլփատութիւն, այլ նոր արարածս։ Եւ որ միանգամ այսմ կանոնի միաբան լինին, խաղաղութիւն ի վերայ նոցա եւ ողորմութիւն եւ ի վերայ Իսրայէլին Աստուծոյ։ Այսուհետեւ աշխատ ոք զիս մի՛ արասցէ. զի ես զչարչարանսն Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում, Եղբարք. ամէն։ 18։

Ալէլուիա, ալէլուիա. Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԺԹ. 25։

Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ կային առ խաչին Յիսուսի մայրն նորա, եւ քոյր մօր նորա Մարիամ Կղէովպայ, եւ Մարիամ Մագդաղենացի։ Յիսուս իբրեւ ետես զմայրն եւ զաշակերտն՝ զոր սիրէր, զի կայր մօտ, ասէ ցմայրն. Կի՛ն դու, ահա որդի քո։ Ապա ասէ ցաշակերտն. Ահա մայր քո։ Եւ յայնմ ժամանակէ առ աշակերտն զնա առ իւր։ 27։





# Ի ՏՕՆԻ ԱԽԵՏԵԱՑ

## ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ

# ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

---

Յոհաննէս. Ըստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց. քանզի ուր քերովբէքն բազմահեպաք եւ աթոռք հրանիւթք եւ վեցթեւեան սերովբէքն նայել ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս յանապատ կանուխն ի յարգանդի քումմ որպէս աղախին զՏէր, եւ ծնար որպէս մարդ զԸստուածն բոլորից՝ զմարմնացեալն առ ի քէն զանձառ զՔանն, ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Ալ. կէ. Տէր տացէ զբան՝ որք աւետարանեն զօրութեամբ բազմաւ:

Յարիցէ Ըստուած, եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. փախչեն ատելիք նորա յերեսաց նորա:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գ. Ջ. 16:

Ապաքէն դուք տաճար Ըստուծոյ կենդանւոյ էք, որպէս եւ ասաց Ըստուած, թէ Բնակեցայց ի նոսա, եւ գնացից ի նոսա, եւ եղէց նոցա Ըստուած, եւ նոքա եղիցին իմ ժողովուրդ: Վասն որոյ ելէք ի միջոյ նոցա եւ մեկնեցարուք, ասէ Տէր, եւ ի պիղծս մի՛ մերձենայք. եւ ես ընկալայց զձեզ, եւ ես եղէց ձեզ ի Հայր, եւ դուք եղիջիք ինձ յուստերս եւ ի դստերս, ասէ Տէր ամենակալ: Իսկ որովհետեւ զայս աւետիս ունիմք, սիրելիք, սրբեսցուք զանձինս

մեր յամենայն պղծութենէ մարմնոյ եւ հոգւոյ. կատարեսցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ: Է. 1:

Ալէլուիա, ալէլուիա. Ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու ի կանայս, եւ օրհնեալ է պտուղ որովայնի քոյ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ա. 26:

Ի Հօրէն ամենակալէ.

Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ ի քաղաք մի Գալիլեացւոց, որում անուն էր Նազարեթ, առ կոյս խօսեցեալ առն, որում անուն էր Յովսէփ՝ ի տանէ Դաւթի, եւ անուն կուսին Մարիամ: Եւ եկեալ առ նա ասէ. Ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ: Եւ նա ընդ բանսն խռովեցաւ եւ խորհէր ընդ միտս՝ թէ որպիսի ինչ իցէ ողջոյնս այս: Եւ ասէ ցնա հրեշտակն. Մի՛ երկնչիր Մա՛րիամ, զի գտեր շնորհս յԱստուծոյ: Եւ ահա յղասջիր եւ ծնցես որդի. եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս: Նա եղիցի մեծ, եւ Որդի բարձրելոյ կոչեսցի. եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր նորա. եւ թագաւորեսցէ ի վերայ տանն Յակովբայ ի յաւիտեանս. եւ թագաւորութեան նորա վախճան մի լիցի: Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն. Զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ: Պատասխանի ետ հրեշտակն եւ ասէ ցնա. Հոգի սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո. քանզի եւ որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է, եւ Որդի Աստուծոյ կոչեսցի: Եւ ահա Եղիսաբեթ ազգական քո, եւ նա յղի է ի ծերութեան իւրում, եւ այս վեցերորդ ամիս է նորա՝ որ ամուլն կոչեցեալ էր. զի ոչ տկարասցի առ յԱստուծոյ ամենայն բան: Եւ ասէ Մարիամ. Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում. եւ գնաց ի նմանէ հրեշտակն: 38:

---



## ՎԵՑԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### Ցօն է Ղազարու յարութեան:

ԱՁ.

Ժամամուտ. Զ Ղազարու զննջումն որպէս կանխագէտ յառաջ ասէիր, զի եւ ի Բեթանիա յառաջէիր, զի յարուսցես զսիրելին քո: Եւ քեզ գոչելով ասեմք. Օրհնեա՛լ որ գաս ի չարչարանս կամաւ Հօր ի փրկութիւն անձանց մերոց:

Յորժամ եկեալ կենարարն ի գերեզմանն Ղազարու. յորժամ եկեալ կենարարն ի գերեզմանն Ղազարու. աւետաւոր ձայնիւն աղաղակէր ասելով. Ղա՛զարէ, արի եկ արտաքս: Իսկ մեռեալն ի գերեզմանէն յարեաւ. եւ նոյն ինքն զանմահութեան պարգեւսն ետ սիրելւոյն, եւ աստուածային ձայնիւն ի գերեզմանէն կոչեաց: Վասն որոյ եւ մանկունք Եբրայեցւոց ոստովք օրհնէին զանմահ թագաւորութիւն քո. Ովսաննա օրհնեալ է գալուստ քո, օրհնութիւն ի բարձունս. օրհնեալ որ գալոցդ ես անուամբ Տեառն:

Սղ. ԻԹ. Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ որ իջանեն ի գուբ:

Բարձր առնեմ զքեզ, Տէր, զի ընկալար զիս. եւ ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս:

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Դ. 12:

Ոչ կամիմ, ե՛ղբարք, եթէ տգէտք իցէք վասն ննջեցելոցն. զի մի՛ տրտմիցիք, որպէս եւ այլքն՝ որոց ոչ գոյ յոյս: Եթէ հաւատամք եթէ Յիսուս մեռաւ եւ յարեաւ, նոյնպէս եւ Աստուած զննջեցեալսն ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա: Բայց զայս ասեմք Տեառն բանիւ, եթէ մեք որ կենդանիքս եմք մնացեալք, ի գալստեանն Տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն: Զի ինքնին Տէր հրամանաւ, ի ձայն հրեշտակապետի եւ ի փող Աստուծոյ իջանէ յերկնից. եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն: Ապա եւ մեք որ կենդանւոյն մնացեալ իցեմք, նոքօք հանդերձ յափշտա-

կեսցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս, եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք: Ընդունեցեալ մխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսոքիւք: 17:

Ալէլուիա, ալէլուիա. Ահան զնա ի գրոյ տառապանաց. ի կաւոյ եւ ի տղմոյ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

ԳԼ· ԺԱ· 55:

Ար Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Ահա էր մերձ զատիկն Հրէից, եւ բազումք ելին յԵրուսաղէմ ի գաւառէ անտի յառաջագոյն քան զզատիկն, զի սրբեսցեն զանձինս իւրեանց: Խնդրէին զՅիսուս, եւ ասէին ընդ միմեանս՝ մինչ կային ի տաճարին. Զիա՞րդ թուի ձեզ՝ եթէ ոչ գայցէ ի տօն այսր: Պատուէր տուեալ էր քահանայապետին եւ փարիսեցւոց, զի թէ ոք գիտասցէ թէ ուր է, գուշակեսցէ զնմանէ, զի կալցին զնա: Իսկ Յիսուս վեց աւուրբք յառաջ քան զզատիկն եկն ի Բեթանիա, ուր էր Ղազար մեռեալն, զոր յարոյցն ի մեռելոց: Եւ արարին անդ նմա ընթրիս. եւ ի սպասու կայր Մարթա, եւ Ղազար միէր ի բազմելոց ընդ նմա: Իսկ Մարիամ առեալ լիտր մի իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, օծ զոտսն Յիսուսի, եւ հերովք իւրովք մաքրէր զոտս նորա. եւ տունն լի եղեւ ի հոտոյ իւղոյն: Ասէ մի ոմն յաշակերտաց անտի՝ Յուդա Իսկարիովտացի, որ մատնելոցն էր զնա. Ընդէ՞ր ոչ իւղդ այդ վաճառեցաւ երեք հարիւր դենարի, եւ տուաւ աղքատաց: Այս ասաց՝ ոչ զի զաղքատաց հնչէ փոյթ էր նմա. այլ զի գող էր եւ զարկղն ինքն ունէր, եւ որ հնչէ անկանէրն՝ նա կրէր: Ասէ Յիսուս. Ձգոյլ տուր դմա, զի յօրն պատանաց իմոց պահեսցէ զայդ: Զաղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիք. զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք: Իբրեւ գիտաց ժողովուրդ բազում ի Հրէից թէ անդ է, եկին՝ ոչ միայն վասն Յիսուսի, այլ զի եւ զՂազար տեսցեն, զոր յարոյցն ի մեռելոց: Խորհուրդ արարին քահանայապետքն՝ զի եւ զՂազար սպանցեն. քանզի բազումք ի Հրէից երթային եւ հաւատային ի Յիսուս: ԺԲ· 11:



## ԿԻՐԱԿԷ
## ԾԱՂԿԱԶԱՐԴ
### ԸԿ·

Ժամամուտ. Զնձա Երուսաղէմ, եւ զարդարեա զառաքաստ քո Սիովն. քանզի ահա թագաւոր քո Քրիստոս նստեալ ի յաւանակի նորոյ՝ հեզութիւն յուցանելով՝ գայ մատնէ յառաքաստ քո Սիովն: Եւ մեք աղաղակեմք՝ Ովսաննա, օրհնեալ եկեալ ի յանուն Տեառն, որ ունի զմեծ զօրհնութիւն:

Սղ· ՂԷ· Երինք ցնծասցեն առաջի Տեառն՝ զի գայ. եւ հասեալ է Տէր ի դատել զերկիր:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի աքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Փիլիպպեցւոց թղթոյն է ընթերցուածս. ԳԼ· Դ· 4:

Ուրախ լերուք ի Տէր յամենայն ժամ. դարձեալ ասեմ, ուրախ լերուք: Հեզութիւն ձեր յայտնի լեցի ամենայն մարդկան. Տէր մերձ է: Մի՛ ինչ հոգայք. այլ ամենայն աղօթիւք եւ խնդրուածովք, գոհութեամբ, խնդրուածք ձեր յայտնի լեցին առ Աստուած: Եւ խաղաղութիւնն Աստուծոյ, որ ի վեր է քան զամենայն միտս, պահեսցէ զսիրտս ձեր եւ զմիտս ի Քրիստոս Յիսուս: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչեւ յանկիւնս սեղանոյ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

ԳԼ· Ի· 29:

Ղան գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ յելանելն նոցա Յերիքովէ, գնացին զկետ նորա ժողովուրդք բազումք: Եւ ահա կոյրք երկու նստէին առ

ձանապարհաւն: Իբրեւ լուան թէ Յիսուս անցանէ՝ աղաղակեցին եւ ասեն. Ողորմեաց մեզ, Յիսուս որդի Դաւթի: Եւ ամբոխն սաստեաց նոցա՝ զի լռեսցեն. եւ նոքա եւս առաւել աղաղակէին եւ ասէին. Տէր, ողորմեաց մեզ, որդի Դաւթի: Ջօտեղն առ Յիսուս, կոչեաց զնոսա եւ ասէ. Ջ՞ինչ կամիք՝ զի արարից ձեզ: Ասեն ցնա. Տէր, զի բացցին աչք մեր: Եւ գթացեալ Յիսուս՝ մերձեցաւ յաչս նոցա, եւ եդ վաղվաղակի տեսին եւ գնացին զհետ նորա: Իբրեւ մօտ եղեն Երուսաղէմ, եւ եկին ի Բեթփագէ մերձ ի լեառն Ձիթենեաց, յայնժամ Յիսուս արձակեաց երկուս յաշակերտացն իւրոց, եւ ասէ ցնոսա. Երթայք ի գեօղն՝ որ առաջի ձեր է, եւ անդէն գտանէք էշ կապեալ եւ յաւանակ ընդ նմին, լուծէք ածէք ինձ. Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ, ասասջիք, եթէ Տեառն իւրեանց պիտոյ են. եւ վաղվաղակի առաքեսցէ զնոսա: Այլ այս ամենայն եղեւ՝ զի լցցի բան մարգարէին՝ որ ասէ. Ասացէք դստեր Սիովնի. ահա թագաւոր քո գայ քեզ հեզ, եւ հեծեալ էշ եւ ի յաւանակի լծոյ: Գնացին աշակերտքն, եւ արարին որպէս հրամայեացն նոցա Յիսուս: Եւ ածին զէշն եւ զյաւանակն, եւ արկին զնոքօք ձորձս եւ նստաւ ի վերայ նոցա: Եւ բազում ժողովուրդք տարածեցին զհանդերձս իւրեանց ի ճանապարհին, եւ այլք հատանէին ոստս ի ծառոց եւ տարածէին ի ճանապարհին: Եւ ժողովուրդքն՝ որ առաջին եւ զկնի երթային, աղաղակէին եւ ասէին. Օրհնութիւն որդւոյ Դաւթի. օրհնեալ որ գայ յանուն Տեառն, օրհնութիւն ի բարձունս: Եւ ի մտանելն նորա Երուսաղէմ՝ դղդեցաւ քաղաքն ամենայն, եւ ասէ. Ո՞վ իցէ սա: Եւ ժողովուրդքն ասեն. Սա է մարգարէն Յիսուս՝ որ ի Նազարեթէ Գալիլեացւոց: Եւ եմուտ Յիսուս ի տաճարն եւ եհան արտաքս զամենեսեան, որ վաճառէին եւ գնէին ի տաճարի անդ. եւ զսեղանս հատաւ վաճառացն կործանեաց եւ զաթոռս ազաւնեվաճառացն: Եւ ասէ ցնոսա. Գրեալ է. Տուն իմ տուն աղօթից կոչեսցի. եւ դուք արարէք զդա այրս աւազակաց: Եւ մատեան առ նա կոյրք եւ կաղք ի տաճարին, եւ բժշկեաց զնոսա: Իբրեւ տեսին քահանայապետքն եւ գպիրք զզքանչելիսն զոր արար, եւ զմանկտին որ աղաղակէին ի տաճարին եւ ասէին. Օրհնութիւն որդւոյ Դաւթի, բարկացան, եւ ասեն ցնա. Լսե՞ս զինչ ասեն դոքա: Ասէ ցնոսա Յիսուս. Այո. չիցէ՞ ընթերցեալ



ցեալ ձեր՝ եթէ ի բերանոյ տղայոց եւ ծանդիեցայց կատարեցեր զօրհնութիւն: Եւ թողեալ զնոսա՝ ել արտաքոյ քաղաքին ի Բեթանիա, եւ անդ ագաւ: ԻԱ. 17:

---

## ԱՒԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### ՐՉ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ լուսաւորեցեր զաիւեղերս. զհաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զհաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարգասէր:

Սղ. ՃԳ. Խոստովանութիւն եւ մեծվայելչութիւն զգեցար. արկար զլոյս որպէս զօթոց. ձգեցեր զերկինս որպէս խորան. եւ արկար ի վերայ ջուրց զվերնայարկս նորա:

Օրհնեա անձն իմ զՏէր. Տէր Աստուած իմ մեծ եղեր յոյժ:

Պօղոսի առաքելոյն ի Փիլիպպեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Բ. 5:

Այն խորհեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ, որ եւ ի Քրիստոս Յիսուս. որ ի կերպարանս Աստուծոյ է, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ. այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ, եւ կերպարանօք գտեալ իբրեւ զմարդ: Խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու յափ եւ մահու խաչի: Վասն որոյ եւ Աստուած զնա առաւել բարձրացոյց, եւ շնորհեաց նմա անուն՝ որ ի վեր է քան զամենայն անուն: Որ յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետաքանաց: Եւ ամենայն լեզու խոստովան լինի, թէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Լուր մեզ Աստուած փրկիչ մեր. յոյս ամենայն ծագաց երկրի, եւ որ ի ծով հեռի:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ի. 17:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Իբրեւ ելանէր (Յիսուս) յԵրուսաղէմ, առ զերկոտասանսն առանձինն, եւ ի ճանապարհին ասէ ցնոսա. Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ, եւ Որդի մարդոյ մատնեսցի քահանայապետիցն եւ դպրաց. եւ դատապարտեսցեն զնա ի մահ, եւ մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել եւ հարկանել եւ ի խաչ հանել. եւ յերիր աւուր յարիցէ: Յայնժամ մատեաւ առ նա մայր որդւոցն Զեբեդեայ որդւովքն իւրովք հանդերձ, երկիր պագանէր եւ խնդրէր ինչ ի նմանէ: Եւ նա ասէ ցնա. Զի՞նչ կամիս: Ասէ ցնա. Ասա զի նստցին սոքա երկու որդիքս իմ, մի ընդ աջմէ քումէ եւ մի ընդ ահեկէ յարքայութեան քում: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Ոչ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբաժակն զոր ես ըմպելոցն եմ, կամ զմկրտութիւնն զոր ես մկրտելոցն եմ՝ մկրտել: Ասեն ցնա. Կարող եմք: Ասէ ցնոսա Յիսուս. Զբաժակն իմ ըմպիցէք, եւ զմկրտութիւնն զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցիք. բայց նստուցանել ընդ աջմէ եւ ընդ ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց տուեալ է ի Հօրէ իմմէ: Եւ լուեալ տասանցն, բարկացան ի վերայ երկուցն եղբարց: Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն եւ ասէ. Գիտէք՝ զի իշխանք ազգաց տիրեն նոցա, եւ մեծամեծքն իշխեն նոցա: Ոչ այնպէս իցէ եւ ի ձերում միջի. այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ. եւ որ կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ: Որպէս Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել, եւ տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց: 28:

---

## ԱՒԱԳ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

ԲԿ.

Ժամանակ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես Թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:



Սղ. Խդ. Տարցին Թագաւորի կուսանք զհետ նորա. եւ զընկերս նորա տարցին նմա:

Բղխեաց սիրտ իմ բան բարի, եւ ասեմ զգործս իմ Թագաւորի:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց Թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 6:

Զի մինչ դեռ տկարքն էաք, Քրիստոս վասն մեր ի ժամանակի ի վերայ ամբարշտաց մեռաւ: Զի վասն արդարոյ հազիւ ոք թէ մեռանիցի. այլ վասն բարւոյ թերեւս համարձակիցի ոք մեռանել: Յայտնեաց Աստուած զսէրն իւր ի մեզ. զի մինչ դեռ մեղաւորքն էաք, Քրիստոս վասն մեր մեռաւ. ո՛րչափ եւս առաւել յարդարանալս մերում այժմիկ արեամբն նորա՝ ապրեսցուք նովաւ ի բարկութենէ անտի: Զի եթէ մինչ թշնամիքն էաք՝ հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա, ո՛րչափ եւս առաւել ի հաշտելս մերում՝ ապրեսցուք կենօքն նորա: Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ պարծիմք եւս յԱստուած ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով եւ զհաշտութիւնն իսկ ընկալաք: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Առ քեզ Տէր համբարձի զանձն իմ. Աստուած իմ ի քեզ յուսացայ. մի՛ ամաչեցից, եւ մի՛ ծիծաղեսցին զինեւ թշնամիք իմ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԻԵ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսայի եւ հարսին: Հինգն ի նոցանէ յիմարք էին եւ հինգն իմաստունք: Յիմարքն առին զլապտերսն, եւ ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին: Իսկ իմաստունքն առին եւ ձէթ ամանօք ընդ լապտերս իւրեանց: Եւ ի յամել փեսային, նիրհեցին ամենեքեան եւ ի քուն մտին: Եւ ի մէջ գիշերի եղեւ բարբառ. Ահա փեսայ գայ, արիք ընդ առաջ նորա:

Յայնժամ յարեան ամենայն կուսանքն եւ կազմեցին զլապտերս իւրեանց: Ասեն յիմարքն ցիմաստունսն. Տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր: Պատասխանի ետուն իմաստունքն եւ ասեն. Գուցէ ոչ իցէ մեզ եւ ձեզ բաւական. այլ երթայք ի վաճառականս եւ գնեսջիք ձեզ: Իբրեւ նոքա գնացին գնել, եկն փեսայն, եւ պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն, եւ փակեցաւ դուռնն: Յետոյ գան եւ այլ կուսանքն եւ ասեն. Տէր Տէր, բաց մեզ: Նա պատասխանի ետ եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ՝ թէ ոչ գիտեմ զձեզ: Արթուն կացէք, զի ոչ գիտէք զօրն եւ ոչ զժամն: 13:

---

## ԱՒԱԳ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԳԶ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. Ե. Որ ուտէր ընդ իս հաց. յաճախեաց առնել ինձ խաբէութիւն:

Երանի որ խորհի զաղքատն եւ զտնանկն. յաւուր չարի փրկէ զնա Տէր:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Ա. 15:

Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետրոս ի մէջ եղբարցն՝ ասէ. եւ էր անդ բազմութիւն անուանց իբրեւ հարիւր եւ քսանից. Ա՛րք եղբարք, պարտ էր կատարել գրոյն, զոր յառաջագոյն ասաց Հոգին սուրբ ի բերանոյ Դաւթի՝ վասն Յուդայի, որ եղեւ առաջնորդ ունելեացն Յիսուսի: Զի ի թիւս մեր էր՝ ընդ մեզ. եւ հասեալ էր նմա վիճակ պաշտամանս այսորիկ: Սա ստացաւ գեօղ ի վարձուց անիրաւութեան, եւ ուռուցեալ հերձաւ ընդ մէջ, եւ հեղաւ ամենայն փոր նորա: Եւ յայտնի եղեւ ամենեցուն՝ որ բնակեալ են յԵրուսաղէմ, մինչեւ կոչել գեղջն այնմիկ բարբառովն իւրեանց Ակեղդամայ, այսինքն է՝ գեօղ



արեան: Զի գրեալ է ի գիրս սաղմոսաց. Եղիցի բնակութիւն նորա աւերակ, եւ մի՛ ոք իցէ որ բնակիցէ ի նմա, եւ զկարգ նորա առցէ այլ: 20:

Ալէլուիա, ալէլուիա. Որ ուտէր ընդ իս հաց. յաճախեաց առնել ինձ խաբէութիւն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԻԶ. 3:

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Յայնժամ ժողովեցան քահանայապետքն եւ դպիրք եւ ծերք ժողովրդեանն ի սրահ քահանայապետին՝ որում անուն էր Կայիափա. եւ արարին խորհուրդ՝ զի նենգութեամբ կալցին զՅիսուս եւ սպանցեն: Բայց ասէին, թէ Մի՛ ի տօնի ասա՝ զի մի՛ խռովութիւն լինիցի ի ժողովրդեանն: Իբրեւ եկն Յիսուս ի Բեթանիա ի տուն Սիմովնի բորոտի, մատեաւ առ նա կին մի՝ որ ունէր շիշ իւղոյ ծանրագնի, եւ թափեաց ի գլուխ նորա ի բազմականին: Իբրեւ տեսին աշակերտքն՝ բարկացան եւ ասեն. Ընդէ՞ր է կորուստ այդ իւղոյդ: Զի մարթ էր վաճառել զդա մեծագնի եւ տալ աղքատաց: Գիտաց Յիսուս եւ ասէ ցնոսա. Զի՞ աշխատ առնէք զկինդ. գործ մի բարի գործեաց դա յիս: Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, բայց զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք: Արկանել դորա զիւղդ ի մարմին իմ առ ի թաղելոյ զիս նշանակեաց: Բայց ամէն ասեմ ձեզ, զի ուր եւ քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ՝ խօսեսցի եւ զոր արար դա ի յիշատակ դորա: Յայնժամ գնաց մի յերկոտասանիցն անուանեալ Յուդա Սկարիովտացի առ քահանայապետսն եւ ասէ. Զի՞նչ կամիք տալ ինձ, եւ ես մատնեցից զնա ձեզ. եւ նոքա կշռեցին նմա երեսուն արծաթի: Եւ յայնմ հետէ խնդրէր պարապ՝ զի մատնեսցէ զնա նոցա: 16:

---

## ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### ԳԿ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր եւ

լուսաւորեցեր զաիեզերս. զնաղաղուԹիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղուԹեանց ես Թագաւոր, զնաղաղուԹիւն եւ զողորմուԹիւն. որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Ահա ո՞ւր էիք աովըո՞ւԹ՝ աասացեն զայս.

Դուռն երկնից եւ ճանապարհ արքայուԹեան, Տէր երկնի. յերկնայնոց օրհնեալ դասուց. որ զմարմին քո եւ զարիւնդ անապական բաշխեցեր առաքելոցն. մաքրեա զմեզ՝ հաղորդել արբուԹեան քումմ խորհրդոյ. եւ ողորմեա:

Սղ. ԻԲ. Պատրաստ արարեր առաջի իմ սեղան. ակնյանդիման նեղչաց իմոց:

Տէր հովուեսցէ զիս. եւ ինձ ինչ ոչ պակասեսցի:

Պօղոսի առաքելոյն ի կորնթացւոց առաջին ԹղԹոյն է ընԹերցուածս. Գլ. ԺԱ. 23:

Ես ես ընկալայ ի Տեառնէ՝ զոր եւ ձեզն աւանդեցի, եԹէ Տէր Յիսուս ի գիշերին՝ յորում մատնէր, առ հաց. դոհացաւ, երեկ եւ ասէ. Առէք եւ կերայք. այս է մարմին իմ, որ վասն ձեր բաշխի. զայս արարէք առ իմոյ յիշատակի: Նոյնպէս եւ զբաժակն յետ ընԹրեացն առ եւ ասէ. Այս բաժակ՝ նոր ուխտ է իմով արեամբ. զայս արարէք քանիցս անգամ եԹէ ըմպիցէք՝ առ իմոյ յիշատակի: Քանիցս անգամ եԹէ ուտիցէք զհացս զայս եւ զբաժակս ըմպիցէք, զմահն Տեառն պատմեցէք, մինչեւ եկեսցէ նա: Այսուհետեւ որ ուտիցէ զհացս կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանուԹեամբ, պարտական եղիցի մարմնոյ եւ արեան Տեառն: Փորձեսցէ մարդ զանձն իւր, եւ ապա ի հացէ անտի կերիցէ եւ ի բաժակէն արբցէ: Զի որ ուտէ եւ ըմպէ անարժանուԹեամբ, դատաստան անձին իւրում ուտէ եւ ըմպէ. զի ոչ խարէ զմարմինն Տեառն: Վասն այնորիկ իսկ են ի ձեզ բազում հիւանդք եւ ախտաժէտք. եւ շատ եւս այն են, որ եւ ննջեցեալքն իսկ իցեն: Զի եԹէ զանձինս քննէաք՝ ապա ոչ դատապարտէաք: Եւ եԹէ դատիմք՝ ի Տեառնէ խրատիմք, զի մի՛ ընդ աշխարհի դատապարտեսցուք: 32:

Ալէլուիա, ալէլուիա. Պատրաստ արարեր առաջի իմ սեղան. ակնյանդիման նեղչաց իմոց:



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԻԶ. 17:

Ած Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն մատեան աշակերտքն առ Յիսուս եւ ասեն. Ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք քեզ ուտել զզատիկն: Եւ նա ասէ ցնոսա. Երթայք ի քաղաքն առ այս անուն եւ ասացէք ցնա. Վարդապետ ասէ, ժամանակ իմ մերձեալ է, առ քեզ առնեմ զզատիկս աշակերտօքս հանդերձ: Եւ արարին աշակերտքն որպէս հրամայեաց նոցա Յիսուս, եւ պատրաստեցին զզատիկն: Եւ իրրեւ երեկոյ եղեւ, կայր բազմեալ ընդ երկոտասան աշակերտսն: Եւ մինչ դեռ ուտէին նոքա՝ ասէ. Ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս: Եւ տրտմեցան յոյժ. սկսան ասել ցնա իւրաքանչիւր ոք ինոցանէ. Միթէ ես իցեմ, Տէր: Նա պատասխանի եւս եւ ասէ. Որ մխեաց ձեռն իւր ընդ իս ի սկաւառակն՝ նա մատնելոց է զիս: Որդի մարդոյ երթայ՝ որպէս եւ գրեալ է վասն նորա. բայց վայ մարդոյն այնմիկ՝ որով որդի մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա թէ չէր ծնեալ մարդն այն: Պատասխանի եւս Յուդա որ մատնելոցն էր զնա եւ ասէ. Միթէ ես իցեմ, վարդապետ: Ասէ ցնա. Դու ասացեր: Եւ մինչ դեռ ուտէին նոքա՝ առ Յիսուս հաց, օրհնեաց եւ երեկ եւ եւս աշակերտացն եւ ասէ. Առէք կերայք, այս է մարմին իմ: Եւ առեալ բաժակ գոհացաւ, եւս նոցա եւ ասէ. Արբէք ի դմանէ ամենեքեան. զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղու ի թողուԹիւն մեղաց: Այլ ասեմ ձեզ. ոչ եւս արբիցէ յայսմ հետէ ի բերոյ որթոյ՝ մինչեւ ցօրն ցայն, յորժամ արբիցէ զդա ընդ ձեզ նոր յարքայուԹեան հօր իմոյ: Եւ օրհնեցին եւ ելին ի լեառն ձիթենեաց: 30:

---

## ԱԻԱԳ ՇԱԲԱԹ

Պաս.

Յառաջաբան. Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարուԹեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Սղ. կդ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիովն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԵ. 1:

Ցուցանեմ ձեզ, եղբարք, զաւետարանն իմ, զոր աւետարանեցի ձեզ, զոր եւ ընկալարուք, յոր եւ հաստատեալդ էք. որով ապրեցէքն, որով բանիւ աւետարանեցի ձեզ՝ եթէ ունիցիք. բայց եթէ ի զուր ինչ հաւատացէք: Զի ես ձեզ զայն նախ աւանդեցի՝ զոր եւ եսն ընկալայ. թէ եւ Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց՝ ըստ գրոց, եւ զի թաղեցաւ, թէ եւ յարեաւ յաւուր երրորդի՝ ըստ գրոց. եւ թէ երեւեցաւ Կեփայի, եւ ապա երկոտասանիցն. ապա երեւեցաւ աւելի եւս քան զհինգ հարիւր եղբարց միանգամայն. յորոց բազումք կան մինչեւ ցայժմ, եւ ոմանք ննջեցին: Եւ ապա երեւեցաւ Յակովբայ, ապա առաքելոցն ամենեցուն: Հուսկ յետոյ քան զամենեսին իբրեւ անարգի միոջ՝ երեւեցաւ եւ ինձ: Զի ես իսկ եմ տրուպն առաքելոց, որ չեմ իսկ արժանի թէ կոչեցայց առաքեալ. զի հալածեցի զեկեղեցին Աստուծոյ: Այլ շնորհօքն Աստուծոյ եմ՝ զինչ եւ իցեմ, եւ շնորհք նորա որ յիս՝ ընդունայն ինչ ոչ եղեն. այլ առաւել քան զնոսա ամենեսին վաստակեցի. եւ ոչ եթէ ես, այլ շնորհքն Աստուծոյ՝ որ ընդ իս: Արդ եթէ ես եւ եթէ նոքա այսպէս քարոզեցաք, եւ դուք այսպէս հաւատացէք: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Յարեաւ Աստուած եւ ցրուեցան ամենայն թշնամիք նորա. փախեան ատելիք նորա յերեսաց նորա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԻԸ. 1:

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի եւ միւս Մարիամն՝



տեսանել զգերեզմանն: Եւ ահա շարժումն մեծ եղեւ. զի հրեշտակ Տեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ ի բաց թաւալեցոյց զվէմն ի դրաց անտի, եւ նստէր ի վերայ նորա. եւ էր տեսիլ նորա իբրեւ զփայլակն, եւ հանդերձ նորա սպիտակ իբրեւ զձիւն: Եւ յահէ անտի նորա խռովեցան պահապանքն, եւ եղեն իբրեւ զմեռեալս: Պատասխանի ետ հրեշտակն եւ ասէ ցկանայսն. Մի երկնչիք դուք, գիտեմ զի զՅիսուս զխաչելեալն խնդրէք. չէ աստ, քանզի յարեաւ, որպէս ասացն. եկայք տեսէք զտեղին ուր կայր: Եւ վաղվաղակի երթայք ասացէք աշակերտացն նորա թէ յարեաւ. եւ ահա յառաջանայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա. ահա ասացի ձեզ: Եւ ելեալ վաղվաղակի ի գերեզմանէ անտի ահիւ եւ խնդութեամբ բազմաւ՝ ընթանային պատմել աշակերտացն: Եւ ահա պատահեաց նոցա Յիսուս եւ ասէ. Ողջ էք. եւ նոքա մատուցեալ կալան զոտս նորա եւ երկիր պագին նմա: Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. Մի երկնչիք, երթայք ասացէք եղբարցն իմոց՝ զի երթիցեն ի Գալիլեա, եւ անդ տեսցեն զիս: Իբրեւ նոքա գնացին, ահա ոմանք ի զօրականացն եկին ի քաղաքն եւ պատմեցին քահանայապետիցն զամենայն որ ինչ եղեւն: Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերովքն խորհուրդ առեալ՝ արծաթ յոյժ ետուն զօրականացն, եւ ասեն. Ասասջիք՝ եթէ աշակերտքն նորա եկեալ գիշերի գողացան զնա՝ մինչ մեք ի քուն էաք: Եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեք հաճեսցուք զնա եւ զձեզ անհոգս արասցուք: Եւ նոցա առեալ զարծաթն, արարին որպէս ուսանն. եւ ել համբաւս այս ի Հրէից մինչեւ ցայսօր: Իսկ մետասան աշակերտքն գնացին ի Գալիլեա ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս: Իբրեւ տեսին զնա, երկիր պագին նմա, եւ ոմանք յերկուացան: Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ. Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ: Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ. եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչեւ ի կատարած աշխարհի: 20:

---

Ի ՏՕՆԻ ԶԱՏԿԻ

# ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

## ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

---

## ԿԻՐԱԿԷ

### ԱՁ.

Ժամամուտ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս ամէն:

ՍՂ. Ա. Երանեալ է այր՝ որ ոչ գնաց ի խորհուրդս ամպարշտաց. ի ճանապարհի մեղաւորաց նա ոչ եկաց. եւ յաթոռս ժանտից նա ոչ նստաւ:

Բ. Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. եւ ժողովուրդք խորհեցան ի սնոտիս:

Գ. Տէր, զի՞ բազում եղեն նեղիչք իմ. եւ բազումք յարեան ի վերայ իմ:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

ԳԼ. Ա. 15:

Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետրոս ի մէջ եղբարցն՝ ասէ. եւ էր անդ բազմութիւն անուանց իբրեւ հարիւր եւ քսանից. Ա՛րք եղբարք, պարտ էր կատարել գրոյն, զոր յառաջագոյն ասաց Հոգին սուրբ ի բերանոյ Դաւթի՝ վասն Յուդայի, որ եղեւ առաջնորդ ունելեացն Յիսուսի: Զի ի թիւս մեր էր՝ ընդ մեզ. եւ հասեալ էր նմա վիճակ պաշտամանս այսորիկ: Սա ստացաւ գեօղ ի վարձուց անիրաւութեան, եւ ուռուցեալ հերձաւ ընդ մէջ եւ հեղաւ ամենայն փոր նորա: Եւ յայտնի եղեւ ամենեցուն՝ որ



բնակեալ են Երուսաղէմ. մինչեւ կոչել գեղջն այնմիկ բարբառովն իւրեանց Ակեղդամայ, այսինքն Է՝ գեօղ արեան: Ոչ գրեալ է ի գիրս սաղմոսաց· Եղեցի բնակութիւն նորա աւերակ, եւ մի ոք իցէ որ բնակիցէ ի նմա, եւ զկարգ նորա առցէ այլ: Արդ՝ պարտ է յարանցս յայսցանէ՝ եկելոցս ընդ մեզ յամենայն ժամանակի, յորում մուտ եւ ել առ մեզ Տէր Յիսուս, սկսեալ ի մկրտութենէն Յովհաննու մինչեւ յօրն՝ յորում վերացաւ ի մէնջ, վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել միւմ ի սոցանէ: Եւ կացուցին երկուս, զՅովսէփ՝ որում Բարսաբայն կոչէին, որ անուանեցաւն Յուստոս, եւ զՄատաթիա: Եւ կացեալ յաղօթս՝ ասեն. Դո՛ւ Տէր սրտագէտ ամենայնի, յայտնեա զմի ոք՝ զոր ընտրեցեր ի սոցանէ երկոցունց, առնուլ զվիճակ պաշտամանս այսորիկ եւ զառաքելութեան, յորմէ անկաւ Յուդաս՝ գնալ ի տեղի իւր: Եւ ետուն վիճակս նոցա, եւ ելանէր վիճակն Մատաթեայ· եւ համարեցաւ ընդ մեռասան առաքեալսն: 26:

Ալէլուիա, ալէլուիա· Գովեա Երուսաղէմ զՏէր· եւ օրհնեա զԱստուած քո Սիովն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի·
ԳԼ· ԺԶ· 2:

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի·

Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան ի գերեզմանն ընդ արեւագալն, եւ ասէին ցմիմեանս. Ո՞վ թաւալեցուսցէ մեզ զվէմն ի դրաց գերեզմանին: Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր զվէմն ի գերեզմանէն, քանզի էր մեծ յոյժ: Եւ մտեալ ի ներքս ի գերեզմանն՝ տեսին երիտասարդ մի, զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատմուճան սպիտակ, եւ զարհուրեցան: Եւ նա ասէ ցնոսա. Մի երկնչէք, զՅիսուս խնդրէք զՆազովրեցի զխաչելեալն, յարեաւ՝ չէ աստ. ահաւադիկ տեղին՝ ուր եդին զնա: Այլ երթայք ասացէք ցաշակերտս նորա եւ ցՊետրոս. եթէ ահա յառաջագոյն երթայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա՝ որպէս ասացն ձեզ: Եւ ելեալ շուտ եկին եւ փախեան ի գերեզմանէն, քանզի զահի հարեալ էին. եւ ոչ ումեք ինչ ասացին, զի երկնչէին: 8:

## ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### ԱԿ.

Ժամամուտ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Սղ. Դ. Ի կարգալ իմում լուար ինձ Աստուած ըստ արդարութեան. ի նեղութեան ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ եւ լուր աղօթից իմոց:

Ե. Բանից իմոց ունկն դիր Տէր. եւ ի միտ առ զաղաղակ իմ:

Զ. Տէր, մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. եւ մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Բ. 22:

Ա՛րք Իսրայէլացիք, լուարուք զբանս զայսոսիկ, զՅիսուս Նազովրեցի, զայր ցուցեալ յԱստուծոյ ի ձեզ զօրութեամբ եւ նշանօք եւ արուեստիւք, զոր արար նովաւ Աստուած ի միջի ձերում, որպէս եւ դուք իսկ գիտէք. զնա նկատեալ խորհրդով եւ կանխագիտութեամբն Աստուծոյ՝ մատնեալ ի ձեռս անօրինաց եւ բեւեռեալ ի փայտի՝ սպանէք. զոր Աստուած յարոյց՝ լուծեալ զերկունս մահու. քանզի ոչ էր հնար ըմբռնել նմա ի նմանէ: Դաւիթ իսկ ասէ զնմանէ. Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ, զի էր ընդ աջմէ իմմէ, զի մի՛ սասանեցայց: Վասն այսորիկ ուրախ եղեւ սիրտ իմ, եւ ցնծացաւ լեզու իմ, եւս եւ մարմին իմ բնակեսցէ յուսով: Զի ոչ թողցես զանձն իմ ի դժոխս եւ ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն: Ծանուցեր ինձ զճանապարհս քո կենաց. լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց ի քաղցրութենէ: Ա՛րք եղբարք, պարտ է համարձակութեամբ ասել վասն նահապետին Դաւթի, զի մեռաւ եւ թաղեցաւ, եւ գերեզման նորա կայ ի միջի ձերում մինչեւ ցայսօր: Զի մարգարէ էր, եւ գիտէր՝ եթէ երդմամբ երդուաւ նմա Աստուած ի պտղոյ յորովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա. յառաջագոյն ծանուցեալ խօ-



սեցաւ վասն յարութեանն Քրիստոսի. զի ոչ թողաւ ոգի նորա ի դժոխս, եւ ոչ մարմին նորա ետես զապականութիւն: Զայս Յիսուս յարոյց Աստուած, որում ամենեքին մեք վկայեմք: Աջովն Աստուծոյ բարձրացեալ, զաւետիս Հոգւոյն սրբոյ ընկալեալ ի Հօրէ՝ սփռեաց զայս, զոր դուք իսկ տեսանէք եւ լսէք: Զի ոչ եթէ Դաւիթ ել յերկինս. ասէ իսկ ինքն. Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց: Արդ՝ ճշմարտիւ գիտասցէ ամենայն տունդ Իսրայէլի, զի եւ Տէր զնա եւ օծեալ Աստուած արար. զայն Յիսուս՝ զոր դուքն խաչեցէք: Եւ լուեալ զայս՝ զղջացան ի սիրտս իւրեանց. եւ ասեն ցՊետրոս եւ ցայլ առաքեալսն. Զի՞նչ գործեսցուք, ա՛րք եղբարք: Ասէ ցնոսա Պետրոս. Ապաշաւեցէք եւ մկրտեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի ի թողութիւն մեղաց, եւ ընկալջիք զաւետիս Հոգւոյն սրբոյ: Զի ձեզ են աւետիքս եւ որդւոց ձերոց, եւ ամենայն հեռաւորաց՝ զորս կոչեսցէ Տէր Աստուած մեր: Եւ այլովք բանիւք բազմօք վկայութիւն դնէր, եւ մխիթարէր զնոսա եւ ասէր. Ապրեցարուք յազգէ աստի խոտորելոյ յայսմանէ: Ոմանք յօժարութեամբ ընկալեալ զբան նորա՝ մկրտեցան. եւ յաւելան յաւուր յայնմիկ ոգիք իբրեւ երեք հազարք: 41:

Ալէլուիա, ալէլուիա. Գովեա Երուսաղէմ զՏէր. եւ օրհնեա զԱստուած քո Սիովն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԻԴ. 1:

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Բայց ի միաշաբաթուն վաղ քաջ ընդ առաւօտն եկին ի գերեզմանն. բերին զխունկսն զոր պատրաստեցին եւ այլ կանայք ընդ նոսա: Եւ գտին զվէմն թաւալեցուցեալ ի գերեզմանէ անտի: Եւ մտեալ ի ներքս ոչ գտին զմարմինն Տեառն Յիսուսի: Եւ եղեւ ընդ հիանալն նոցա վասն այնորիկ, եւ ահա արք երկու հասին առ նոսա ի հանդերձս լուսաւորս: Եւ իբրեւ զահի հարան, եւ խոնարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր, ասեն ցնոսա. Զի՞ խնդրէք զկեն-

դանին ընդ մեռեալս: Չէ աստ, այլ յարեաւ. յիշեցէք՝ որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն ի Գալիլեա, եւ ասէր. թէ Պարտ է Որդւոյ մարդոյ մատնել ի ձեռս մարդոց մեղաւորաց, եւ ի խաչ ելանել եւ յերրորդ աւուր յառնել: Եւ յիշեցին զբանսն նորա: Եւ դարձան պատմեցին զայս ամենայն մետասանիցն եւ այլոցն ամենեցուն: Եւ էին Մարիամ Մագդաղենացի եւ Յովհաննա եւ Մարիամ Յակովբայ, եւ այլք ընդ նոսա՝ որ պատմեցին զայս առաքելոցն: Եւ երեւեցան առաջի նոցա շաղփաղփութիւն բանքն նոցա եւ չհաւատային նոցա: Բայց Պետրոս յարուցեալ ընթացաւ ի գերեզմանն, եւ հայեցեալ տեսանէ զկտաւսն լոկ՝ զի կային, եւ գնաց ընդ միտս զարմացեալ, թէ զինչ եղեւ: 12:

---

## ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԲՉ.

Ժամամուտ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Սղ. Է. Տէր Աստուած իմ, ի քեզ յուսացայ, եւ փրկեա զիս. եւ յամենայն հալածչաց իմոց ապրեցո զիս:

Ը. Տէր Տէր մեր. զի՞ սքանչելի է անուն քո ի վերայ ամենայն երկրի:

Թ. Գոհացայց զքէն Տէր բոլորով սրտիւ իմով. պատմեցից զամենայն սքանչելիս քո:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Բ. 42:

Եւ էին հանապազորդեալք վարդապետութեան առաքելոցն, եւ հաղորդութեան եւ բեկանելոյ հացին եւ աղօթից: Եւ լինէր ամենայն անձին՝ ահ եւ երկիւղ. բազում նշանք եւ արուեստք ի ձեռս առաքելոցն գործէին: Ամենայն հաւատացեալքն էին ի միասին, եւ ունէին զամենայն ինչս հասարակաց: Եւ զստացուածս եւ զինչս վաճառէին, եւ բաշխէին զայն ամենեցուն՝ ում զիարդ պիտոյ ինչ լինէր:



Հանապազօր կանխեալ միաբանութեամբ ի տաճարն, եւ առտնին՝ բեկանէին զհացն, եւ առնուին կերակուր ուրախութեամբ եւ միամտութեամբ սրտի. օրհնէին զԱստուած, եւ ունէին շնորհս առ ամենայն ժողովուրդն. եւ Տէր յաւելոյր ի փրկեալսն հանապազօր ի նոյն: Պետրոս եւ Յովհաննէս ելանէին ի տաճար անդր յիններորդ ժամու աղօթիցն: Եւ էր այր մի կաղ յորովայնէ մօր իւրոյ՝ զոր բարձեալ դնէին հանապազ առ դրան տաճարին, որ կոչէր Գեղեցիկ, խնդրել ողորմութիւն յայնցանէ՝ որ մտանէին ի տաճարն: Որոյ տեսեալ զՊետրոս եւ զՅովհաննէս՝ զի մտանէին ի տաճարն, աղաչէր ողորմութիւն առնուլ: Հայեցաւ ի նա Պետրոս Յովհաննու հանդերձ, եւ ասէ. Հայեաց ի մեզ: Նա դարձաւ ի նոսա, եւ ակն ունէր առնուլ ինչ ի նոցանէ: Եւ ասէ Պետրոս. Արծաթ եւ ոսկի ոչ ունիմ. բայց զոր ունիմ՝ զայս տաց քեզ. յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ արի եւ գնա: Եւ կալեալ զաջոյ ձեռանէ նորա՝ յարոյց զնա. եւ անդէն հաստատեցան բարձք նորա եւ սրունք: Ի վեր վազեաց եւ սկսաւ գնալ, եւ եմուտ ընդ նոսա ի տաճարն. գնայր եւ վազվազէր եւ օրհնէր զԱստուած: Եւ ետես ամենայն ժողովուրդն զնա, զի գնայր եւ օրհնէր զԱստուած. եւ գիտէին զնա՝ զի սա էր, որ նստէր վասն ողորմութեան առ Գեղեցիկ դրան տաճարին. եւ լցան զարմանալեօք ի վերայ նշանին՝ որ եղեւ: Եւ մինչ դեռ նա ունէր զՊետրոս եւ զՅովհաննէս, ընթացաւ ամենայն ժողովուրդն առ նոսա ի սրահն՝ որ կոչէր Սողոմոնի՝ զարմացեալք: Իբրեւ ետես Պետրոս, պատասխանի ետ ժողովբրդեանն. Ա՛րք Իսրայէլացիք, զի՞ զարմացեալ էք ի վերայ այսորիկ կամ ընդ մեզ զի՞ էք պշուցեալ, իբրեւ թէ անձին զօրութեամբ ինչ կամ քաջութեամբ արարեալ իցէ զգնալդ դմա: Աստուած Աբրահամու եւ Աստուած Սահակայ եւ Աստուած Յակովբայ, Աստուած հարցն մերոց փառաւորեաց զՈրդի իւր զՅիսուս, զոր դուքն մատնեցէք եւ ուրացարուք առաջի Պիղատոսի, ի դատելն նորա արձակել: Եւ դուք զսուրբն եւ զարդարն ուրացարուք, եւ խնդրեցէք այր մի մահապարտ շնորհել ձեզ: Եւ զառաջնորդ կենացն սպանէք, զոր Աստուած յարոյց ի մեռելոց. որում մեք իսկ վկայ եմք. եւ հաւատովք անուան նորա՝ զսա զոր տեսանէք եւ գիտէք, հաստատեաց անուն նորա. եւ հաւատքն որ

նովաւ՝ եւտուն գմա զառողջութիւնս զայս՝ յանդիման ձեր ամենեցուն: Եւ արդ, եղբարք, գիտեմ զի անգիտութեամբ արարէք՝ որպէս եւ իշխանքն ձեր: Եայլ Պետուած՝ որպէս յառաջագոյն պատմեաց ի բերանոյ ամենայն մարգարէից զչարչարելն Քրիստոսի իւրոյ՝ նոյնպէս եւ կատարեաց: Ընդ՝ ապաշաւեցէք եւ դարձարուք ի ջնջել զմեղս ձեր. որպէս զի եկեսցեն ժամանակք հանգստեան յերեսաց Տեառն. եւ առաքեսցէ զյառաջագոյն նկատեալն ձեզ՝ զՅիսուս Քրիստոս. զոր պարտ է երկնից ընդունել մինչեւ ի ժամանակս ամենեցուն հաստատելոյ, զորոց խօսեցաւ Պետուած ի բերանոյ սրբոց իւրոց մարգարէից: Գ· 21:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր, ի զօրութեան քումմ ուրախ եղիցի թագաւորն. եւ ի փրկութեան քումմ ցնծասցէ յոյժ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

ԳԼ· ԻԴ· 13:

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ ահա երկուք ի նոցանէ երթային ի նմին աւուր ի գեօղ մի, որ հեռի էր Երուսաղէմ հարիւր եւ վաթսուն ասպարիսաւ. եւ էր անուն նորա Եմմաուս: Եւ նոքա խօսէին ընդ միմեանս վասն ամենայն անցիցն անցելոց: Եւ եղեւ ընդ խօսել նոցա եւ ընդ վիճել, եւ ինքն իսկ Յիսուս մերձեցաւ եւ երթայր ընդ նոսա. եւ նոցա աչք կալեալ էին առ ի չճանաչելոյ զնա: Եւ ասէ ցնոսա. Օ՞ի՞նչ են բանքդ՝ վասն որոյ վիճիքդ ընդ միմեանս՝ մինչ դեռ գնայքդ, եւ տրտմեալ էք: Պատասխանի եւտ մի ումն ի նոցանէ՝ որում անուն էր Կղէովպաս, եւ ասէ ցնա. Դո՞ւ միայն կաս Երուսաղէմ, որ ոչ գիտացեր զինչ գործեցաւ ի նմա յաւուրսս յայսոսիկ: Եւ ասէ ցնոսա. Օ՞ի՞նչ: Եւ նոքա ասեն զՅիսուսէ Նազովրեցւոյ, որ եղեւ այր մարգարէ՝ հզօր արդեամբք եւ բանիւք առաջի Պետուծոյ եւ ամենայն ժողովրդեանն. որպէս մատնեցին զնա քահանայապետքն եւ իշխանքն մեր ի դատապարտութիւն մահու եւ հանին զնա ի խաչ: Մեք ակն ունէաք՝ թէ նա է որ փրկելոցն էր զԻսրայէլ. այլ եւ հանդերձ այսու ամենայնիւ, այս երրորդ օր է՝ յորմէ հետէ այն



գործեցաւ: Եայլ եւ կանայք ոմանք ի մէնջ զարմացուցին զմեզ. որք կանխեալ ընդ առաւօտս չոգան ի գերեզմանն, եւ ոչ գտին զմարմին նորա. եկին եւ ասեն, եթէ եւ տեսիլ եւս հրեշտակաց տեսին, որք ասէին զնմանէ՝ թէ կենդանի է: Եւ գնացին ոմանք ի մէնջ ի գերեզմանն, եւ գտին նոյնպէս՝ որպէս եւ կանայքն ասացին. բայց զնա ոչ տեսին: Եւ նա ասէ ցնոսա. Ո՛վ անմիտք եւ հեղգասիրտք ի հաւատալ ամենայնի՝ զոր խօսեցան մարգարէքն. ո՞չ զնոյնս պարտ էր չարչարել Քրիստոսի, եւ մտանել ի փառս իւր: Եւ սկսեալ ի Մովսիսէ եւ յամենայն մարգարէից, մեկնէր նոցա՝ որ ինչ յամենայն գիրս գրեալ է զնմանէ: Իբրեւ մերձեցան ի գեօղն յոր երթային, եւ նա պատճառէր հեռագոյն եւս ուրեք երթալ: Եւ բռնադատեցին զնա եւ ասեն. Ընդ մեզ ագիր, զի ընդ երեկս է եւ տարաժամեալ է օրս. եւ եմուտ ագանել անդ ընդ նոսա: Եւ եղեւ ի բազմելն նորա ընդ նոսա, առեալ Յիսուս զհացն, օրհնեաց, եբեկ եւ ետ նոցա: Եւ նոցա բացան աչք եւ ծանեան զնա. եւ նա եղեւ ի նոցանէ աներեւոյթ: Եւ ասեն ցմիմեանս. Ո՞չ իսկ եւ սիրտք մեր ճմլէին ի մեզ՝ մինչ խօսէրն ընդ մեզ ճանապարհին, եւ որպէս բանայր մեզ զգիրս: Եւ յարուցեալ նոյնժամայն՝ դարձան Երուսաղէմ, եւ գտին ժողովեալ զմեռեալսն եւ զորս ընդ նոսայն էին: Եւ ասեն, թէ Ընդարեւ յարեաւ Տէր եւ երեւեցաւ Սիմովնի: Եւ նոքա պատմէին զայն որ ճանապարհին, եւ թէ զիարդ եւտ ծանօթս նոցա ի բեկանել հացին: 35:

---

## ԱՌԱՋԻՆ ԶՈՐԵՔՇԱԲԱԹԻ

ՐԿ·

Ժամամուտ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Սղ· ծ· Ի Տէր յուսացայ. որպէս ասիցէք ցանձն իմ՝ փոփոխեաց ի լերինս որպէս ճնճղուկ:

ԾԱ· Ընդէր զիս Տէր, զի նուաղեաց սուրբ. նուազեցին ճշմարտութիւնք յորդւոց ի մարդկանէ:

ԺԲ. Մինչեւ յե՞րբ Տէր մոռանաս զիս ի սպառ. մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

ԳԼ. Գ. 22:

Մովսէս ասաց ցհարսն մեր, թէ Մարգարէ յարուսցէ ձեզ Տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց՝ իբրեւ զիս, նմա լուիջիք ըստ ամենայնի՝ որ զինչ եւ խօսեսցի առ ձեզ: Եւ եղիցի ամենայն անձն՝ որ ոչ լուիցէ մարգարէին այնմիկ, սատակեսցի ի ժողովրդենէն: Եւ ամենայն մարգարէք՝ որ ի Սամուելէ եւ այսր՝ խօսեցան եւ պատմեցին զաւուրսս զայսոսիկ: Դուք էք որդիք մարգարէիցն, եւ ուխտին՝ զոր ուխտեաց Աստուած ընդ հարսն մեր, եւ ասէ ցԱբրահամ. Ի զաւակի քում օրհնեսցին ամենայն ազգք երկրի: Ձեզ նախ յարոյց Աստուած զՈրդին իւր, եւ առաքեաց զնա օրհնել զձեզ՝ ի դառնալ ձեզ իւրաքանչիւր ի չարեաց ձերոց: Եւ մինչ դեռ խօսէին նոքա ընդ ժողովրդեանն, հասին ի վերայ նոցա քահանայապետք եւ իշխանք տաճարին եւ Սադուկեցիքն, զայրագնեալք՝ վասն ուսուցանելոյ նոցա զժողովուրդն եւ պատմելոյ Յիսուսիւ զյարութիւն մեռելոց: Մխեցին ի նոսա զձեռս իւրեանց, եւ եդին զնոսա ի բանտի՝ մինչեւ ի վաղիւն, զի էր ընդ երեկս: Իսկ բազումք ի լսողաց բանին՝ հաւատացին. եւ եղեւ թիւ մարդկան իբրեւ հազարաց հընգից: Եւ եղեւ ի վաղիւ անդր՝ ժողովել նոցա զիշխանսն եւ զերիցունսն եւ զդպիրս յԵրուսաղէմ, եւ զԱննա քահանայապետ եւ զՀայիափա եւ զՅովհաննէս եւ զԱղէքսանդրոս, եւ որք միանգամ էին յազգէ քահանայութեանն: Եւ կացուցեալ զնոսա ի մէջ՝ հարցանէին. Որո՞վ զօրութեամբ կամ որո՞վ անուամբ արարէք դուք զայս: Յայնժամ Պետրոս լցեալ Հոգւով սրբով՝ ասէ ցնոսա. Իշխանք ժողովրդեան եւ երիցունք Իսրայէլի. եթէ արժա՞ն ինչ իցէ դատել զմեզ այսօր վասն երախտեաց առն միոյ տկարի, որով սա բժշկեցաւ: Յայտնի լիցի ամենեցուն ձեզ եւ ամենայն ժողովրդեանդ Իսրայէլի. զի յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ՝ զոր դուքն խաչեցէք, զոր Աստուած յարոյց ի մեռելոց, նովաւ սա կայ աւասիկ առաջի ձեր ողջացեալ: Նա է վէմն անարգեալ ի ձէնջ շինողաց, որ եղեւ գլուխ անկեան.



եւ չիք այլով իւիք փրկութիւն, զի եւ ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ՝ որով արժան իցէ կեալ մեզ: Դ. 12:

Ալէլուիա, ալէլուիա. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոնն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

ԳԼ. ԻԴ. 36:

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ մինչ դեռ զայն խօսէին, ինքն իսկ Յիսուս եկաց ի մէջ նոցա եւ ասէ ցնոսա. Խաղաղութիւն ընդ ձեզ. ես եմ, մի՛ երկնչիք: Եւ զահի հարեալ երկնչէին. եւ համարէին ոգի ինչ տեսանել: Եւ ասէ ցնոսա. Ջի՞խռովեալ էք եւ ընդէ՞ր խորհուրդք ելանեն ի սիրտս ձեր: Տեսէք զձեռս իմ եւ զոտս, զի ես նոյն եմ. շօշափեցէք զիս եւ տեսէք. զի ոգի՝ մարմին եւ ոսկերս ոչ ունի, որպէս զիսս տեսանէք զի ունիմ: Եւ զայս ասացեալ՝ եցոյց նոցա զձեռսն եւ զոտս: 40:

---

## ԱՌԱՋԻՆ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

ԳՉ.

Ժամամուտ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց. եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Սղ. ԺԳ. Ասաց անզգամն ի սրտի իւրում. թէ ոչ գոյ Աստուած:

ԺԴ. Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քում. կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո:

ԺԵ. Պահեա զիս Աստուած իմ, զի ես ի քեզ յուսացայ. ասացի Տեառն՝ Տէր իմ ես դու, եւ բարիք իմ ինձ ի քէն են:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Դ. 13:

Հայեցեալ ի համարձակութիւնն Պետրոսի եւ Յովհաննու, եւ ի վերայ հասեալ՝ թէ արք տգէտք եւ առանց դպրութեան են, զարմանային. զի ճանաչէին զնոսա թէ ընդ Յիսուսի էին: Եւ զայրն եւս տեսանէին զբժշկեալն՝ զի կայր ընդ նոսա. եւ ոչ ինչ կարէին տալ պատասխանի: Եւ հրամայեալ նոցա արտաքս քան զատեանն ելանել, խորհեցան ընդ միմեանս, եւ ասեն. Զի՞նչ արասցուք արանցս այսոցիկ, զի երեւելի նշան եղեւ ի ձեռս սոցա. ամենայն իսկ բնակչաց Երուսաղէմի յայտ է, եւ ոչ կարեմք ուրանալ: Այլ զի մի՛ առաւել ճարակեսցի ի ժողովուրդն, սպառնասցուք նոցա՝ մի՛ եւս խօսել յանունն յայն՝ մի ումեք ի մարդկանէ: Եւ կոչեցեալ զնոսա՝ պատուիրեցին ամենեւին մի՛ խօսել եւ մի՛ ուսուցանել յանունն Յիսուսի: Իսկ Պետրոս եւ Յովհաննէս պատասխանի ետուն եւ ասեն ցնոսա. Եթէ արժա՞ն իցէ առաջի Աստուծոյ՝ ձեզ լսել առաւել քան Աստուծոյ, ընտրեցէք: Այլ մեք ոչ կարեմք՝ զոր տեսաքն եւ լուաք՝ չխօսել: Նոքա սպառնացեալ արձակեցին զնոսա, եւ ոչ ինչ գտեալ՝ թէ ո՛րպէս պատուհասեսցեն զնոսա՝ վասն ժողովըրդեանն. զի ամենեքեան փառաւոր առնէին զԱստուած՝ վասն իրացն եղելոց. զի ամաց էր այրն՝ աւելի քան զքառասուն, յորոյ վերայ եղեւ նշանս այս բժշկութեան: Եւ անտի արձակեալ՝ եկին առ իւրեանցսն, եւ պատմեցին՝ որչափ ինչ ասացին ցնոսա քահանայապետքն եւ երիցունքն: Եւ նոցա լուեալ՝ ամբարձին զձայնս իւրեանց առ Աստուած եւ ասեն. Դո՛ւ Տէր Աստուած, որ արարեր զերկինս եւ զերկիր եւ զծով եւ զամենայն որ ի նոսա, որ ի բերանոյ հօր մերոյ Դաւթի ծառայի քո՝ ի ձեռն Հոգւոյն սրբոյ ասացեր. Զմէ՞ խռովեցան հեթանոսք եւ ժողովուրդք խորհեցան ի սնոտիս: Յանդիման եղեն թագաւորք երկրի, եւ իշխանք ժողովեցան ի միասին վասն Տեառն եւ վասն օծելոյ նորա: Ժողովեցան արդարեւ ի քաղաքիս յայսմիկ ի վերայ սրբոյ Որդւոյ քոյ Յիսուսի՝ զոր օծերն, Հերովդէս եւ Պոնտոս Պիղատոս՝ ազգօք եւ ժողովրդովք Իսրայէլի, առնել՝ որչափ ձեռն քո եւ կամք յառաջագոյն սահմանեցին լինել: Եւ արդ Տէր՝ հայեաց ի սպառնալիս նոցա, եւ տուր ծառայից քոց ամենայն համարձակութեամբ խօսել զբանն քո. ի ձգել զձեռն քո ի բժշկութիւն, եւ նշանս եւ արուեստս՝ լինել անուամբ սրբոյ Որդւոյ քոյ Յիսուսի: Եւ մինչ կային նոքա յաղօթս, շարժեցաւ տեղին՝ յորում էին ժողովեալ, եւ լցան ամենեքին Հոգւով սրբով. եւ խօսէին զբանն Աստուծոյ համարձակութեամբ: 31:



Ալէլուիա, ալէլուիա. Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քում. կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ե. 1:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն. եւ իբրեւ նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա: Եւ բացեալ զբերան իւր՝ ուսուցանէր զնոսա եւ ասէր. Երանի՛ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին: Երանի՛ հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր: Երանի՛ որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին: Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն: Երանի՛ այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն: Երանի՛ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին: Երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի՛ է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ եւ հալածեսցեն եւ ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ: Ցնծացէք եւ ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին: 12:

---

## ԱՌԱՋԻՆ ՈՒՐԲԱԹ

Գկ.

Ժամամուտ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Սղ· ԺԶ· Լուր Տէր արդարութեան, եւ նայեա ի խնդրուածս իմ. ունկն դիր աղօթից իմոց, զի ոչ շրթամբք նենգաւորաց:

ԺԷ· Սիրեցից զքեզ Տէր զօրութիւն իմ. Տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ եւ փրկիչ իմ:

ԺԸ· Աղիւնք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ· Գ· 32:

Եւ բազմութեան հաւատացելոցն էր սիրտ եւ անձն մի, եւ ոչ ոք ի նոցանէ ասէր զընչից իւրոց թէ իւր իցէ. այլ էր նոցա ամենայն ինչ հասարակաց: Եւ զօրութեամբ բազմաւ տային վկայութիւն առաքեալքն զյարութեան Տեառն Յիսուսի Քրիստոսի. եւ շնորհք մեծամեծք էին ի վերայ ամենեցուն նոցա: Եւ ոչ ոք կարօտեր ի նոսա. զի որ միանգամ տեարքն էին դաղից կամ ապարանից՝ վաճառէին եւ բերէին զգինս վաճառելոցն, դնէին առ ոտս առաքելոցն. եւ բաշխեին իւրաքանչիւր՝ որպէս ումեք պիտոյ ինչ լինէր: Յովսէփ՝ որ կոչեցաւն Բառնաբաս յառաքելոց անտի, որ թարգմանի՝ որդի մխիթարութեան, Ղեւտացի յազգէ՝ Կիպրացի. էր նորա գիւղ, վաճառեաց եւ եբեր զգինն՝ եդ առ ոտս առաքելոցն: Իսկ այր ոմն Ընանիա անուն, հանդերձ կնաւ իւրով Սափիրաւ՝ վաճառեաց ագարակ. եւ խորհեաց ի գնոց անտի՝ գիտելով եւ կնոջն. եւ եբեր մասն ինչ՝ եդ առ ոտս առաքելոցն: Իսկ Պետրոս. Ընանիա, ընդէր ելից սատանայ զսիրտ քո՝ ստել քեզ Հոգւոյն սրբոյ, եւ խորել ի գնոց գեղջն. ոչ ապաքէն մինչ կայրն՝ քո էր, եւ ի վաճառելն՝ ընդ քո իշխանութեամբ էր. զիա՞ է՝ զի եդիր ի սրտի քումմ զբան զայս. ոչ սուտեր մարդկան, այլ Աստուծոյ: Եւ լուեալ Ընանիա զբանս զայսոսիկ՝ անկաւ եւ եհան զոգի: Եւ եղեւ ահ մեծ ի վերայ ամենեցուն՝ որ լուան զայն: Յոտն կացին երիտասարդքն եւ ամփոփեցին զնա, եւ տարան թաղեցին: Եւ եղեւ իբրեւ ժամք երիք անցին, եւ կին նորա ոչ գիտեր զինչ եղեալն էր, եմուտ ի ներքս: Պատասխանի ետ նմա Պետրոս եւ ասէ. Ասա դու ինձ՝ թէ այնչափ գնոց զգեօղն վաճառեցէք: Եւ նա ասէ. Այո՝ այնչափ: Եւ ասէ ցնա Պետրոս. Օ՞ի՛ է՝ զի միաբանեցէք դուք փորձել զՀոգին Տեառն. ահա ոտքն՝ որ թաղեցին զայրն քո ի դրանն, հանցեն եւ զքեզ: Եւ անկաւ անդէն առ ոտս նորա եւ եհան զոգի. մտին երիտասարդքն եւ գտին զնա մեռեալ, եւ հանին թաղեցին զնա առ առն իւրում: Եւ եղեւ երկիւղ մեծ ի վերայ ամենայն եկեղեցւոյն, եւ ի վերայ ամենեցուն՝ որ լուան զայն:
Ե· 11:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր թագաւորեաց, վայելութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ· ԻԱ· 1:

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր Յիսուս աշակերտացն իւրոց առ ծովեզերբն Տիբերեայ, եւ յայտնեաց այսպէս: Էին ի միասին Սիմովն Պետրոս, եւ Թովմաս անուանեալն երկուորեակ, եւ Նաթանայէլ՝ որ ի Կանայ Գալիլեացւոց, եւ որդիքն Զեբեդեայ, եւ այլք յաշակերտաց անտի երկու: Ասէ ցնոսա Սիմովն Պետրոս. Երթամ ձուկն որսալ: Ասեն ցնա. Գամք եւ մեք ընդ քեզ: Գնացին եւ մտին ի նաւ, եւ յայնմ գիշերի կալան եւ ոչ ինչ: Իբրեւ այգ եղեւ՝ կայր Յիսուս յեզր ծովուն, բայց ոչ ծանեան աշակերտքն թէ Յիսուս իցէ: Ասէ ցնոսա Յիսուս. Մանկունք, միթէ ունի՞ք ինչ ուտելոյ: Պատասխանի ետուն եւ ասեն ցնա. Ոչ: Ասէ ցնոսա. Երկեք յաջակողմն նաւին զուռկանդ, եւ գտանիցէք: Երկին, եւ ոչ կարէին ձգել ի բազմութենէ անտի ձկանցն: Ասէ աշակերտն այն, զոր սիրէրն Յիսուս՝ ցՊետրոս. Տէր է այն: Սիմովն Պետրոս իբրեւ լուաւ թէ Տէր է, արկաւ զհերբեւ զսփածանելին՝ քանզի մերկ էր, եւ ընկեց զինքն ի ծովն: Եւ այլ աշակերտքն նաւաւն իսկ գային, քանզի չէին հեռի ի ցամաքէն. այլ իբրեւ երկերիւր կանգնաւ, քարշէին զգործին հանդերձ ձկամբն: Իբրեւ ելին ի ցամաք, տեսանեն կրակետղ կայծականց, եւ ձուկն մի ի վերայ, եւ հաց: Ասէ ցնոսա Յիսուս. Երիցէք ի ձկանց այսմ՝ զոր դուքդ կալարուք այժմիկ: Եմուտ Սիմովն Պետրոս, եւ ձգէր զգործին ի ցամաք՝ լի մեծամեծ ձկամբք,

հարիւր յիսուն եւ երիւք. եւ այնչափ ինչ կայր, եւ ոչ պատառեցաւ գործին: Ասէ ցնոսա Յիսուս. Եկայք ճաշեցէք: Եւ ոչ ոք յաշակերտացն իշխէր հարցանել՝ թէ Դու ո՞վ ես. զի գիտէին թէ Տէրն է: Գայ Յիսուս եւ առնու զհացն եւ տայ նոցա, նոյնպէս եւ զձուկնն: Զայս երիցս անգամ երեւեցաւ Յիսուս աշակերտացն՝ յարուցեալ ի մեռելոց: 14:

---

## ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ

### ԴԶ.

### Ցօն է գլխատման Յովհաննու Մկրտչին:

Ժամամուտ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Սղ. ԺԹ. Լուիցէ քեզ Տէր յաւուր անձկութեան. օգնական եղիցի քեզ անուն Աստուծոյ Յակովբայ:

Ի. Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. եւ ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ:

ԻԱ. Աստուած, Աստուած իմ, նայեաց առ իս, ընդէ՞ր թողեր զիս. հեռի եղէ ի փրկութենէ իմմէ վասն բանից յանցանաց իմոց:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Ե. 12:

Եւ ի ձեռս առաքելոց լինէին նշանք եւ արուեստք բազումք ի ժողովրդեանն: Եւ էին միաբան ամենեքեան ի սրահին Սողոմովնի: Եւ յայլոց անտի ոչ ոք իշխէր մերձենալ առ նոսա. այլ յարգէր զնոսա ժողովուրդն: Եւ առաւել եւս յաւելուին հաւատացեալքն ի Տէր, բազմութիւն արանց եւ կանանց. մինչեւ ի հրապարակսն հանել զհիւանդս, եւ դնել պատգարակօք եւ մահճօք իւրեանց. զի ընդ անցանելն Պետրոսի՝ գոնէ հովանի նորա հասցէ ումեք ի նոցանէ: Եւ ժողովէր բազմութիւն շուրջ ի քաղաքաց անտի յԵրուսաղէմ, բերէին զհիւանդս եւ զնեղեալս յայսոց



պղծոց. որք եւ բժշկէին ամենեքեան: Յարուցեալ քահանայապետն, եւ ամենեքեան որ ընդ նմա եւ աղանդ Սադուկեցւոց՝ լցան նախանձու: Եւ արկին ձեռս յառաքեալսն, եւ եդին զնոսա հրապարակաւ ի բանտի: Ապա հրեշտակ Տեառն գիշերի եբաց զդուրս բանտին՝, եւ հանեալ զնոսա՝ ասէ. Գնացէք՝ կացէք ի տաճարին, եւ խօսեցարուք ընդ ժողովրդեանն զամենայն պատգամս կենացս այսոցիկ: Եւ իբրեւ լուան, մտին ընդ առաւօտն ի տաճարն եւ ուսուցանէին: Եկն քահանայապետն եւ որ ընդ նմա, կոչեցին միաբան զատեանն եւ զամենայն ծերակոյտ որդւոցն Իսրայէլի, եւ առաքեցին ի բանտն ածել զնոսա: Եւ իբրեւ եկին սպասաւորքն եւ ոչ գտին զնոսա ի բանտին, դարձեալ անդրէն՝ պատմեցին եւ ասեն, թէ Զբանտն գտաք փակեալ ամենայն զգուշութեամբ, եւ զպահապանսն՝ զի կային առ դրանն. բացաք, եւ ի ներքս զոք ոչ եւս գտաք: Իբրեւ լուան զբանս զայս իշխանք տաճարին եւ քահանայապետքն, հիանային վասն նոցա, թէ զի՞նչ արդեօք լինիցի այն: Եւ եկն ոմն պատմեաց նոցա, թէ Ահա արքն՝ զորս եդիք ի բանտի, կան ի տաճարին, եւ ուսուցանեն զժողովուրդն: Յայնժամ երթեալ իշխանն սպասաւորօքն հանդերձ՝ ած զնոսա ոչ բռնութեամբ. քանզի երկնչէին ի ժողովրդենէն՝ զի մի քարկոծեսցին: Եւ ածեալ զնոսա՝ կացուցին յատենի. եհարց ցնոսա քահանայապետն եւ ասէ. Ո՞չ պատուիրելով պատուիրեցաք ձեզ՝ մի՛ ուսուցանել յանունն յայն. եւ արդ՝ աւասիկ լցէք զԵրուսաղէմ ուսմամբ ձերով, եւ կամիք ածել ի վերայ մեր զարիւն զառն զայնորիկ: Պատասխանի ետ Պետրոս եւ այլ առաքեալքն եւ ասեն. Հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան: Աստուած հարցն մերոց յարոյց զՅիսուս՝ զոր դուքն սպանէք կախեալ զփայտէ: Զնա Աստուած առաջնորդ եւ փրկիչ բարձրացոյց աջովն իւրով՝ տալ ապաշխարութիւն Իսրայէլի եւ թողութիւն մեղաց: Եւ մեք եմք նորա վկայք բանիցս այսոցիկ, եւ Հոգին սուրբ՝ զոր ետ Աստուած հնազանդելոց իւրոց: Եւ նոքա իբրեւ լուան, առատանային եւ խորհէին սպանանել զնոսա: 33:

Ալէլուիա, ալէլուիա. Ցնծացէք առ Աստուած, օգնական է մեր. աղաղակեցէք առ Աստուած Յակովբայ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԻԱ. 15:

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ իբրեւ ճաշեցին, ասէ ցՍիմովն Պետրոս Յիսուս. Սիմովն Յովնանու, սիրե՞ս զիս առաւել քան զդոսա: Ասէ ցնա. Այո՛ Տէր, եւ դու գիտես՝ զի սիրեմ զքեզ: Ասէ ցնա. Արածեա զգառինս իմ: Դարձեալ ասէ ցնա. Սիմովն Յովնանու, սիրե՞ս զիս: Ասէ ցնա. Այո՛ Տէր, եւ դու գիտես՝ զի սիրեմ զքեզ: Ասէ ցնա. Արածեա զոչխարս իմ: Ասէ ցնա երիցս անգամ. Սիմովն Յովնանու, սիրե՞ս զիս: Տրտմեցաւ Պետրոս, զի ասացն ցնա երիցս՝ թէ Սիրե՞ս զիս. եւ ասէ ցնա. Տէր, դու զամենայն գիտես, եւ դու իսկ զամենայն ճանաչես, եւ եթէ սիրեմ զքեզ: Ասէ ցնա Յիսուս. Արածեա զոչխարս իմ: Ամէն ամէն ասեմ քեզ, զի մինչ մանուկն էիր, անձամբ անձին գօտի ածէիր եւ երթայիր յո եւ կամէիր. եւ յորժամ ծերասցիս, ձեռս ի վեր կալցիս, եւ այլք ածցեն քեզ գօտի, եւ տարցին՝ ուր ոչն կամիցիս: Զայս ասաց՝ նշանակեալ թէ որո՛վ մահու փառաւոր առնիցէ զԱստուած. եւ զայս իբրեւ ասաց, ասէ ցնա. Եկ զկնի իմ: Դարձաւ Պետրոս եւ տեսանէ զաշակերտն՝ զոր սիրէր Յիսուս, զի երթայր զկնի, որ եւ անկաւ զլանջօքն նորա եւ ասէ. Տէ՛ր, ո՞վ է՝ որ մատնելոցն է զքեզ: Զնա տեսեալ Պետրոսի, ասէ ցՅիսուս. Տէր, իսկ սա զի՞: Ասէ ցնա Յիսուս. Եթէ կամիմ զի կացցէ դա՝ մինչեւ ես գամ, քեզ զի՞ փոյթ է, դու եկ զկնի իմ: Եւ ել բանս այս յեղբարս, եւ համարեցան թէ աշակերտն այն ոչ մեռանիցի. եւ ոչ ասաց նմա Յիսուս եթէ ոչ մեռանիցի. այլ՝ Թէ կամիմ ես թէ կացցէ դա՝ մինչեւ ես գամ: Այս աշակերտ է՝ որ վկայէ վասն այսոցիկ, որ եւ գրեացն իսկ զայսոսիկ. եւ գիտեմք եթէ ճշմարիտ է վկայութիւն նորա: Բայց է եւ այլ ինչ բազում զոր արար Յիսուս, զոր եթէ գրեալ էր մի ըստ միոջէ, կարծեմ թէ եւ ոչ աշխարհս բաւական էր տանել զգիրսն՝ որ թէ գրեալ էին: 25:

---



# ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՅԻՆԱՆՑ

## ՆՈՐ ԿԻՐԱԿԷ

### ԴԿ.

Ժամամուտ. Ահաւոր եւ սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ: Որ անսկիզբն ի Հօրէ՝ անճառաբար մարմնացաւ ի Կուսէն. խաչի համբերելով, եւ կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգեւեաց շնորհս:

Սղ. ԻԲ. Տէր հովուեսցէ զիս. եւ ինձ ինչ ոչ պակասեսցէ:

ԻԳ. Տեառն է երկիր լրիւ իւրով. աշխարհ եւ ամենայն բնակիչք նորա:

ԻԴ. Առ քեզ Տէր համբարձի զանձն իմ. Աստուած իմ ի քեզ յուսացայ, մի՛ ամաչեցից, եւ մի՛ ծիծաղեսցին զինեւ թշնամիք իմ:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Ե. 34:

Յարուցեալ ոմն ի մէջ ատենին փարիսեցի՝ որում անուն էր Գամաղիէլ, օրէնսուսոյց պատուական ամենայն ժողովրդեանն. հրամայեաց սակաւիկ մի զարսն արտաքս տանել: Եւ ասէ ցնոսա. Ա՛րք Իսրայէլացիք, հայեցարուք ի ձեզ վասն արանցս այսոցիկ՝ զի՞նչ արժան իցէ գործել: Յառաջ քան զաւուրսս զայսոսիկ յարեաւ Թեւդաս՝ ասել զանձնէ, թէ իցէ ոմն. յոր անկան արք թուով իբրեւ չորեքհարիւր. որ սպանաւ, եւ ամենեքեան որ միաբանեալ էին ընդ նմա՝ քակտեցան եւ եղեն յոչինչ: Յետ նորա յարեաւ Յուդա Գալիլեացի՝ յաւուրս աշխարհագրին, եւ ապստամբեցոյց ժողովուրդ բազում զկնի իւր. եւ նա կորեաւ, եւ ամենեքեան որ նմայն հաւանեալ էին՝ ցրուեցան: Եւ զարդիս ասեմ ձեզ. ի բաց կացէք յարանցդ յայդցանէ եւ թոյլ տուք դոցա, զի եթէ ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ կամ գործ, քակտեսցի. ապա եթէ յԱստուծոյ է՝ ոչ կարէք քակտել զդոսա. գուցէ եւ աստուածամարտք գտանիցիք: Հաւանեցան նմա. եւ կոչեցեալ զառաքեալսն՝ գան հարին,

եւ պատուիրեցին՝ մի՛ եւս խօսել յանուն Յիսուսի· եւ արձակեցին զնոսա: Եւ նոքա գնացին խնդալով յերեսաց առնին, զի վասն անուանն Տեառն արժանի եղեն անարգելոյ: Եւ զամենայն օր ի տաճարին եւ առանին ոչ դադարէին ուսուցանել եւ աւետարանել զՅիսուս Քրիստոս: Եւ յաւուրսն յայնոսիկ ի բազմանալ աշակերտացն, եղեւ տրտունջ Յունացն առ Հեբրայեցիսն. զի արհամարհեալ լինէին ի պաշտամանն հանապազորդի այրիք նոցա: Կոչեցին երկոտասանքն զբազմութիւն աշակերտացն եւ ասեն. Ոչ է հաճոյ մեզ թողուլ զբանն Աստուծոյ եւ պաշտել զսեղանս: Ընտրեցէք եղբարք՝ վկայեալս ի ձէնջ արս եօթն, (լիս Հոգւով սրբով եւ իմաստութեամբ) զորս կացուցցուք ի վերայ պիտոյիցս այսոցիկ. եւ մեք աղօթից եւ պաշտամանն եւ բանին հպատակ լինցուք: Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի ամենայն բազմութեանն. եւ ընտրեցին զՍտեփանոս՝ այր լի հաւատովք եւ Հոգւով սրբով, եւ զՓիլիպպոս եւ զՊրոքորոն եւ զՆիկանովրա եւ զՏիմովնա եւ զՊարմենա եւ զՆիկողայոս զեկն Ընտիոքացի: Զորս կացուցին առաջի առաքելոցն. եւ աղօթս արարեալ՝ եդին ի վերայ նոցա զձեռս: Եւ բանն Աստուծոյ ածէր, եւ բազմանայր թիւ աշակերտացն յոյժ յԵրուսաղէմ. եւ բազում ժողովք ի քահանայիցն անսային հաւատոյն: Գ. 7:

Ալէլուիա, ալէլուիա. Գովեա Երուսաղէմ զՏէր. եւ օրհնեա զԱստուած քո Սիովն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

ԳԼ. Ա. 1:

Ի Հօրէն լուաց.

Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն: Նա էր ի սկզբանէ առ Աստուած: Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ՝ որ ինչ եղեւն: Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան. եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւոր էր, եւ խաւար նմա ոչ եղեւ հասու: Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս: Սա եկն ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վասն լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն նովաւ: Ոչ էր նա լոյսն,



այլ զի վկայեսցէ վասն լուսոյն: Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ: Յաշխարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ, եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ: Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան: Իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նորա: Որք ոչ յարենէ եւ ոչ ի կամաց մարմնոյ եւ ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան: Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ. եւ տեսաք զփառս նորա՝ զփառս իբրեւ զմիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ: Յովհաննէս վկայէ վասն նորա, աղաղակեաց եւ ասէ. Սա է զորմէ ասէի, որ զկնի իմ գալոցն էր, առաջի իմ եղեւ, զի նախ քան զիս էր: Ոչ ի լրութենէ անտի նորա՝ մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնորհաց: Օրէնքն ի ձեռն Մովսիսի տուան. շնորհքն եւ ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն: 17:

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

ԸՉ·

Հոմոմոռա. Քանզի յարեաւ ի մեռելոց Քրիստոս Աստուած յաւիտենից արարիչ, եւ յարութիւն աղգի մարդկան. զոր օրհնեն անդադար զենուորութիւնք հրեշտակաց, եւ ամենայն զուարթունք երկնից. ընդ որս գոչելով ասեմք. փա՛ռք սոսկալի յարութեան քոյ Տէր:

Սղ· ԻԵ· Դատ արա ինձ Տէր, զի ես յամբաստութեան իմում գնացի. ի Տէր յուսացայ, զի մի՛ եղէց հիւանդ:

ԻՉ· Տէր լոյս իմ եւ կեանք իմ, ես յումմէ երկեայց· Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ դողայց:

ԻԲ· Ընդ քեզ Տէր կարդացի Աստուած իմ, մի՛ լռեր յինէն. մի՛ երբեք լռեացես յինէն. նմանիցեմ այնոցիկ որ իջանեն ի գուբ:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

ԳԼ. Զ. 8:

Ստեփանոս՝ այր լի շնորհօք եւ զօրութեամբ, առնէր նշանս եւ արուեստս մեծամեծս ի ժողովրդեանն: Յարեան

ոմանք ի ժողովրդենէն, որ կոչէր Լիբէացւոց եւ Աղէքսան-
դրացւոց եւ Կիւրենացւոց, եւ որ ի Կիւլիկեցւոց եւ յԱսիայ,
վիճել ընդ Ստեփանոսի: Եւ ոչ կարէին զդէմ ունել զի-
մաստութեանն եւ զՀոգւոյն, որով խօսէր: Յայնժամ հրա-
պուրեցին արս ոմանս ասել, թէ Լուաք զդորա խօսել բանս
հայհոյութեան ի Մովսէս եւ յԱստուած: Եւ խռովեցին
զժողովուրդն եւ զերիցունսն եւ զդպիրսն. եւ հասեալ ի
վերայ՝ յափշտակեցին զնա եւ ածին յատեանն: Եւ կացու-
ցին վկայս սուտս՝ որ ասէին. Այրս այս ոչ դադարէ խօսել
բանս հայհոյութեան զտեղւոյն սրբոյ եւ զօրինացն: Լուաք ի
դմանէ՝ զի ասէր, թէ Յիսուս Նազովրեցի՝ նա քակեսցէ
զտեղիս զայս, եւ փոխեսցէ զօրէնս՝ զոր ետ մեզ Մովսէս:
Եւ հայեցեալ ի նա ամենեցուն՝ որ նստէին յատենին, տե-
սին զերեսս նորա իբրեւ զերեսս հրեշտակի: Ասէ քահանայա-
պետն՝ թէ Արդարեւ այդ ա՞յդպէս իցէ: Եւ նա ասէ. Ա՛րք
եղբարք եւ հարք՝ լուարուք ինձ: Աստուած փառաց երեւե-
ցաւ հօր մերում Աբրահամու մինչ դեռ ի Միջագետս էր,
մինչ չեւ բնակեցուցեալ էր զնա ի Խառան, եւ ասէ ցնա.
Ել յերկրէ քումէ եւ յազգէ քումէ, եւ եկ յերկիր՝ զոր
ցուցից քեզ: Յայնժամ ելեալ յերկրէն Քաղդէացւոց՝ բնա-
կեցաւ ի Խառան. եւ անտի յետ մեռանելոյ հօր նորա՝ փո-
խեաց եւ պանդխտեցոյց զնա յերկրիս յայսմիկ, յորում դուք
այժմ բնակեալ էք: Եւ ոչ ետ նմա ժառանգութիւն ի սմա,
եւ ոչ քայլ մի ոտին. եւ խոստացաւ տալ նմա զսա ի բնա-
կութիւն, եւ զաւակի նորա յետ նորա. եւ մինչ ոչ գոյր
նորա որդի, խօսեցաւ Աստուած այսպէս, թէ Եղիցի զաւակ
նորա պանդուխտ յօտար երկրի, եւ ծառայեցուսցեն զնա եւ
չարչարեսցեն ամս չորեքհարիւր: Եւ զազգն՝ որում ծառայես-
ցեն, դատեցայց ես, ասէ Աստուած. եւ յետ այսորիկ ելցեն
եւ պաշտեսցեն զիս ի տեղւոջս յայսմիկ: Եւ ետ նմա ուխտ
թլփատութեան. եւ ապա ծնաւ զԻսահակ, եւ թլփատեաց
զնա յաւուր ութերորդի, եւ Իսահակ զՅակովբ, եւ Յա-
կովբ զերկոտասան նահապետսն: Եւ նահապետքն նախան-
ձեալ ընդ Յովսեփայ՝ վաճառեցին յԵգիպտոս. եւ էր Ա-
ստուած ընդ նմա: Եւ փրկեաց զնա յամենայն նեղութեանց
նորա. եւ ետ նմա շնորհս եւ իմաստութիւն առաջի Փա-
րաւովնի արքային Եգիպտացւոց. եւ կացոյց զնա իշխան
Եգիպտացւոցն եւ ամենայն տան նորա: Եւ եկն սով յամե-



նայն երկիրն Եգիպտոսի եւ ի Քանան, նեղութիւն մեծ. եւ
ոչ գտանէին կերակուր հարքն մեր: Եւ լուեալ Յակովբայ
թէ գտանի կերակուր յԵգիպտոս՝ առաքեաց զհարսն մեր
յառաջագոյն: Եւ յերկրորդումն ետ ծանօթս Յովսէփ եղ-
բարց իւրոց. եւ յայտնի եղեւ Փարաւովնի ազգն նորա:
Առաքեաց Յովսէփ եւ կոչեաց զՅակովբ զհայր իւր, եւ զա-
մենայն ազգատոհմն՝ ոգիս եօթանասուն եւ հինգ: Եւ էջ
Յակովբ յԵգիպտոս, եւ վախճանեցաւ ինքն եւ հարքն մեր:
Եւ փոխեցան ի Սիւքեմ, եւ եդան յայրին, զոր ստացաւ
Աբրահամ գնոց արծաթոյ յորդւոցն Եմովրայ՝ ի Սիւքեմ:
Իբրեւ մերձեցաւ ժամանակ աւետեացն՝ զոր խոստացաւ Ա-
ստուած Աբրահամու, աճեաց ժողովուրդն եւ բազմացաւ
յԵգիպտոս. մինչեւ յարեաւ այլ թագաւոր յԵգիպտոս,
որ ոչ ճանաչէր զՅովսէփ: Նա հնարեցաւ ազգին մերում,
եւ չարչարեաց զհարսն մեր առնել ընկեցիկ զմանկունս նոցա՝
զի մի ապրեսցին: Յորում ժամանակի ծնաւ եւ Մովսէս եւ
էր կայտառ առաջի Աստուծոյ. որ եւ սնաւ ի տան հօր իւրոյ
ամիսս երիս: Եւ յընկեցիկն առնել զնա՝ եբարձ զնա դուստրն
Փարաւովնի, եւ սնոյց զնա իւր յորդեգիրս: Եւ վարժեցաւ
Մովսէս ամենայն իմաստութեամբ Եգիպտացւոցն. եւ էր
զօրաւոր բանիւք եւ գործովք իւրովք: Իբրեւ լցաւ նորա
քառասնամեայ ժամանակ, անկաւ ի սիրտ նորա շրջել զեղ-
բարբք իւրովք՝ զորդւովքն Իսրայելի: Եւ տեսեալ զոմն
զրկեալ՝ զչարեցաւ, եւ խնդրեաց զվրէժ զրկելոյն՝ սպանանել
զԵգիպտացին: Զմտաւ ածէր թէ իմասցին եղբարք նորա,
զի Աստուած ի ձեռն նորա տալոց էր զփրկութիւն նոցա.
եւ նոքա ոչ իմացան: Եւ ի վաղիւ անդր երեւեցաւ
նոցա մինչ դեռ մարտնչէինն, եւ վարեաց զնոսա ի խա-
ղաղութիւն, ասէ. Ա՛րք եղբարք էք, ընդէ՞ր զրկէք զմի-
մեանս: Իսկ որ զրկէր զընկերն, մերժեաց զնա եւ ասէ.
Ո կացոյց զքեզ իշխան եւ դատաւոր ի վերայ մեր. միթէ
սպանանե՞լ կամիցիս զիս, զոր օրինակ սպաներ երէկ
զԵգիպտացին: Եւ փախեաւ Մովսէս ի բանիցս յայսցանէ,
եւ եղեւ պանդուխտ յերկրին Մադիամու. ուր ծնաւ երկուս
որդիս: Է. 29:

Ալէլուիա, ալէլուիա. Գովեա Երուսաղէմ զՏէր. եւ
օրհնեա զԱստուած քո Սիովն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ա. 18:

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

ՕԱստուած ոչ ոք ետես երբեք, բայց միածինն Որդի որ է ի ծոց Հօր՝ նա պատմեաց: Եւ այս է վկայութիւնն Յովհաննու, յորժամ առաքեցին առ նա Հրեայքն յԵրուսաղեմէ քահանայս եւ ղեւտացիս, զի հարցցեն ցնա՝ թէ Դու ո՛ ես: Եւ խոստովան եղեւ, եւ ոչ ուրացաւ. խոստովան եղեւ, եթէ Ես ոչ եմ Քրիստոսն: Եւ հարցին ցնա. իսկ Ո՞վ ես դու, Եղիա՞ ես: Եւ ասէ, Ոչ եմ: Իսկ մարգարէ՞ն ես դու. պատասխանի ետ՝ թէ Ոչ: Իսկ ասա մեզ՝ դու ո՞վ ես, զի պատասխանի տարցուք՝ որոց առաքեցինն զմեզ. զի՞ ասես վասն քո: Ասէ. Ես ձայն բարբառոյ յանապատի. ուղիղ արարէք զճանապարհս Տեառն, որպէս ասաց Եսայի մարգարէ: Եւ որք առաքեցանն՝ ի փարիսեցւոց անտի էին: Հարցին ցնա եւ ասեն. Իսկ զի՞ մկրտես՝ եթէ դու չես Քրիստոսն, եւ ոչ Եղիա, եւ ոչ մարգարէն: Պատասխանի ետ նոցա Յովհաննէս եւ ասէ. Ես մկրտեմ զձեզ ջրով. ի միջի ձերում կայ, զոր դուքն ոչ գիտէք, որ զկնի իմ գալոցն է, որում չեմն արժանի՝ եթէ լուծից զխրացս կօշկաց նորա: Այս ի Բեթաբրայ եղեւ՝ յայնկոյս Յորդանանու, ուր էրն Յովհաննէս եւ մկրտէր: 28:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԱԿ.

Ժամամուտ. Ահաւոր եւ սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ: Որ անսկիզբն ի Հօրէ՝ անճառաբար մարմնացաւ ի Կուսէն. խաչի համբերելով, եւ կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգեւեաց շնորհս:

Սղ. ԻԸ. Մատուցէք Տեառն որդիք Աստուծոյ. մատուցէք Տեառն զորդիս խոյոց:

ԻԹ. Բարձր առնեմ զքեզ Տէր, զի ընկալար զիս. եւ ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս:

Լ. Ի քեզ Տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան. յարդարութեան քում փրկեա զիս եւ ապրեցո զիս:



Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Է. 30:

Եւ ի կատարել ամացն քառասնից, երեւեցաւ նմա յանապատին ի լերինն Սինայ հրեշտակ Տեառն ի բոց հրոյ մորենւոյն: Եւ Մովսիսի տեսեալ՝ զարմացաւ ընդ տեսիլն. եւ ի մատչելն նորա նշմարել՝ եղեւ ձայն Տեառն. Ես եմ Աստուած հարց քոց, Աստուած Աբրահամու եւ Աստուած Սահակայ եւ Աստուած Յակովբայ. եւ զահի հարեալ Մովսէս՝ ոչ իշխէր հայել: Եւ ասէ ցնա Տէր. Լոյծ զկօշիկս յոտից քոց, զի տեղիդ յորում դուդ կացեր՝ երկիր սուրբ է: Տեսանելով տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ որ յԵգիպտոս, եւ լուայ հեծութեան նոցա, եւ իջի փրկել զնոսա. եւ արդ՝ եկ առաքեցից զքեզ յԵգիպտոս: Զայն Մովսէս՝ զոր ուրացան եւ ասեն. Ո՞ կացոյց զքեզ իշխան եւ դատաւոր ի վերայ մեր. զնա Աստուած իշխան եւ փրկիչ առաքեաց ի ձեռն հրեշտակին, որ երեւեցաւ նմա ի մորենւոջն: Նա եհան զնոսա՝ արարեալ նշանս եւ արուեստս յերկրին Եգիպտացւոց եւ ի Կարմիր ծովուն եւ յանապատին, ամս քառասուն: Այս Մովսէս է, որ ասաց ցորդիսն Իսրայէլի. Մարգարէ յարուսցէ ձեզ Տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց իբրեւ զիս, նմա լուիջիք: Սա է՝ որ եղեւ յեկեղեցւոջն՝ յանապատին ընդ հրեշտակին որ խօսեցաւ ընդ նմա ի լերինն Սինայ եւ ընդ հարսն մեր. որ ընկալաւ զպատգամս կենդանիս՝ տալ մեզ: Որում ոչ կամեցան հնազանդ լինել հարքն մեր. այլ մերժեցին եւ դարձան սրտիւք իւրեանց յԵգիպտոս: Եւ ասեն ցԱհարովն. Արա մեզ Աստուածս, որ երթայցեն առաջի մեր. զի Մովսէսն այն՝ որ եհան զմեզ յերկրէն Եգիպտացւոց, ոչ գիտեմք զի՞ եղեւ նմա: Եւ արարին յաւուրսն յայնոսիկ որթ, եւ մատուցին զոհս կռոց, եւ ուրախ լինէին ի գործս ձեռաց իւրեանց: Դարձոյց Աստուած եւ մատնեաց զնոսա ի պաշտօն զօրութեան երկնից. որպէս եւ գրեալ է ի գիրս մարգարէից. Միթէ զո՞հս եւ պատարագս մատուցէք ինձ զամս քառասուն յանապատին, տունդ Իսրայէլի: Եւ առէք զվրանն Մողոքայ, եւ զաստղն աստուածոյն Հռեմփայ, զպատկերսն՝ զոր արարէք՝ երկիր պագանել նոցա. եւ փոխեցից զձեզ յայն կողմն Բաբելացւոց: Խորանն վկայութեան էր ընդ հարսն մեր յանապատին. որպէս հրաման ետ՝ որ

խօսէրն ընդ Մովսէսի, առնել զայն ըստ օրինակին՝ զոր
ետես։ Զոր եւ ընկալեալ բերէին հարքն մեր հանդերձ Յե-
սուաւ ի վիճակ ազգացն, զորս մերժեաց Աստուած յերեսաց
հարցն մերոց. մինչեւ յաւուրս Դաւթի, որ եգիտ շնորհս
առաջի Աստուծոյ, եւ խնդրեաց գտանել զյարկս Աստուծոյ
Յակովբայ։ Նա եւ Սողոմովն շինեաց նմա տուն։ Այլ ոչ
եթէ Բարձրեալն ի ձեռագործ տաճարս բնակէ. այլ որպէս
մարգարէն ասէ. Երկինք աթոռ իմ են, եւ երկիրս պա-
տուանդան ոտից իմոց. որպիսի՞ տուն շինեցէք ինձ, ասէ Տէր,
կամ զի՞նչ տեղի հանգստեան իմոյ։ Ո՞չ ձեռն իմ արար
զայս ամենայն։ Խստապարանոցք եւ անթլփատք սրտիւք եւ
ականջօք. դուք հանապազ Հոգւոյն սրբոյ հակառակ կայք,
որպէս եւ հարքն ձեր եւ դուք։ Զո՞ ի մարգարէիցն ոչ հա-
լածեցին հարքն ձեր. եւ սպանին զայնոսիկ՝ որ յառաջագոյն
պատմեցին վասն գալստեան Արդարոյն, որոյ դուք այժմ
մատնիչք եւ սպանողք եղերուք. ոյք առէք զօրէնս ի հրամանս
հրեշտակաց, եւ ոչ պահեցէք։ Եւ լուեալ զայս՝ զայրանային
ի սիրտս իւրեանց, եւ կրճտէին զատամունս ի վերայ նորա։
Եւ նա էր լի Հոգւով սրբով. հայեցաւ յերկինս եւ ետես
զփառս Աստուծոյ, եւ զՅիսուս՝ զի կայր ընդ աջմէ Աստու-
ծոյ, եւ ասէ. Ահա տեսանեմ զերկինս բացեալ եւ զՈրդի
մարդոյ՝ զի կայ ընդ աջմէ Աստուծոյ։ Աղաղակեալ ի ձայն
մեծ՝ խցին զականջս իւրեանց, եւ դիմեցին առ հասարակ ի
վերայ նորա։ Եւ հանեալ արտաքոյ քաղաքին՝ քարկոծէին.
եւ վկայքն դնէին զձորձս իւրեանց առ ոտս երիտասարդի
միոջ՝ որ կոչէր Սաւուղ։ Եւ քարկոծ առնէին զՍտեփանոս,
որ կարդայր եւ ասէր. Տէր Յիսուս, ընկալ զոգի իմ։ Եդ
ծունր՝ աղաղակեաց ի ձայն բարձր. Տէր, մի՛ համարիր դոցա
զայս մեղս. եւ զայս իբրեւ ասաց՝ ննջեաց. եւ Սաւղոս էր
կամակից սպանման նորա։ Եւ եղեւ յաւուր յայնմիկ հալա-
ծումն մեծ ի վերայ եկեղեցւոյն յԵրուսաղէմ. եւ ամենե-
քեան ցրուեցան ի գեօղս Հրէաստանի եւ ի Սամարիա՝ բաց
յառաքելոցն։ Եւ բարձին զՍտեփանոս արք երկիւղածք եւ
արարին կոծ մեծ ի վերայ նորա։ Ը. 2։

Ալէլուիա, ալէլուիա. Տէր, ի զօրութեան քում
ուրախ եղիցի թագաւորն. եւ ի փրկութեան քում
ցնծասցէ յոյժ։



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ա. 29։

ԶՏէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ի վաղիւ անդր տեսանէ (զՅիսուս) զի գայր առ նա,
եւ ասէ. Ահաւասիկ Գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս
աշխարհի։ Սա է վասն որոյ եսն ասէի. Զկնի իմ գայ այր՝
որ առաջի իմ եղեւ, զի յառաջ իսկ էր քան զիս։ Եւ ես
ոչ գիտէի զնա. այլ զի յայտնի լինիցի Իսրայէլի, վասն
այնորիկ եկի ես ջրով մկրտել։ Վկայեաց Յովհաննէս եւ
ասէ, թէ Տեսանէի զՀոգին՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի
յերկնից, եւ հանգչէր ի վերայ նորա։ Եւ ես ոչ գիտէի զնա.
այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով՝ նա ասաց ցիս. Յոյր
վերայ տեսանիցես զՀոգին, զի իջանիցէ եւ հանգչիցի ի
վերայ նորա, նա է՝ որ մկրտէ Հոգւովն սրբով։ Եւ ես տեսի
եւ վկայեցի՝ եթէ սա է Որդին Աստուծոյ։ 34։

---

## ԵՐԿՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

ԲՉ.

Ժամամուտ. Քանզի յարեաւ ի մեռելոց Քրիստոս
Աստուած յաւիտենից արարիչ, եւ յարութիւն ազգի մարդ-
կան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց,
եւ ամենայն զուարթունք երկնից. ընդ որս գոչելով ասեմք.
Փա՛ռք սոսկալի յարութեան քոյ Տէր։

Սղ. ԼԱ. Երանի ում թողութիւն եղեւ մեղաց. եւ
ծածկեցան ամենայն յանցանք նորա։

ԼԲ. Ցնծացէք արդարք ի Տէր, ուղղոց վայելէ օրհնու-
թիւն. խոստովան եղերուք Տեառն օրհնութեամբ, տասն-
աղեաւ սաղմոսարանաւ սաղմոս ասացէք նմա։

ԼԳ. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ. յամենայն
ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ։

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Ը. 3։

Բայց Սաւղոս վնասակար էր եկեղեցւոյն. ի տունս
տունս մտանէր՝ քարշէր զարս եւ զկանայս եւ մատնէր ի

բանտ։ Եւ սփռեալքն շրջէին եւ աւետարանէին զբանն։ Իսկ Փիլիպպոս իջեալ ի քաղաքն Սամարացւոց՝ քարոզէր նոցա զՔրիստոս։ Ունկն դնէին ժողովուրդքն բանիցն Փիլիպպոսի միաբան՝ ի լսել նոցա եւ ի տեսանել զնշանսն, զոր առնէր։ Քանզի բազումք որ ունէին զայսս պիղծս՝ աղաղակէին ի ձայն մեծ եւ ելանէին։ Եւ բազում անդամալոյծք եւ կաղք բժշկէին։ Եւ եղեւ ուրախութիւն մեծ ի քաղաքին յայնմիկ։ Այր ոմն Սիմովն անուն՝ յառաջագոյն էր ի քաղաքին. մոգէր եւ ապշեցուցանէր զազգն Սամարացւոց, ասել զանձնէ՝ թէ իցէ մեծ ոմն։ Յոր հայէին ամենեքեան ի փոքուէ մինչեւ ի մեծամեծս, եւ ասէին. Սա է զօրութիւն Աստուծոյ, որ կոչի մեծ։ Հայէին ի նա վասն բազում ժամանակաց մոգութեամբքն ապշեցուցանելոյ զնոսա։ Բայց յորժամ հաւատացին Փիլիպպոսի, որ աւետարանէր վասն արքայութեան Աստուծոյ եւ անուանն Յիսուսի Քրիստոսի, մկրտէին ամենեքեան արք եւ կանայք։ Այլ եւ ինքն Սիմովն հաւատաց, եւ մկրտեալ կանխէր առ Փիլիպպոս. տեսեալ զնշանսն եւ զմեծամեծ զօրութիւնսն որ լինէին, զարմանայր։ Իբրեւ լուան՝ որ յԵրուսաղէմ առաքեալքն էին, թէ եւ ի Սամարիա ընկալան զբանն Աստուծոյ, առաքեցին առ նոսա զՊետրոս եւ զՅովհաննէս. որք իջեալ կացին յաղօթս ի վերայ նոցա, որպէս զի առցեն զՀոգին սուրբ. զի ցայնժամ չեւ եւս էր եւ ոչ ի վերայ միոյ նոցա հասեալ. բայց միայն մկրտեալք էին յանուն Տեառն Յիսուսի։ Յայժամ եդին ձեռս ի վերայ նոցա, եւ առնուին Հոգի սուրբ։ Տեսեալ Սիմովնի՝ թէ ձեռն ի վերայ դնելով առաքելոցն՝ տուեալ լինի Հոգի սուրբ, մատոյց նոցա ինչս եւ ասէ. Տուք եւ ինձ զիշխանութիւնս զայս, զի յոյր վերայ դնիցեմ ձեռս՝ առցէ Հոգի սուրբ։ Եւ Պետրոս ասէ ցնա. Արծաթ քո ընդ քեզ լիցի ի կորուստ, զի զպարգեւսն Աստուծոյ համարեցար ընչիւք ստանալ։ Ոչ գոյ քեզ մասն եւ վիճակ ի բանիդ յայդմիկ. քանզի սիրտ քո ոչ է ուղիղ առաջի Աստուծոյ։ Ապաշաւեա դու ի չարեացդ քոց յայդցանէ, եւ աղաչեա զՏէր. թերեւս թողութիւն լիցի քեզ ի մեղմեխ խորհրդոց սրտի քոյ։ Քանզի ի դառնութիւն մաղձի եւ ի կնճիռն անիրաւութեան տեսանեմ զքեզ։ Պատասխանի ետ Սիմովն եւ ասէ. Աղաչեցէք դուք վասն իմ զՏէր, զի մի՛ ինչ եկեսցէ ի վերայ իմ՝ յորոց դուքդ ասացէք։ Եւ նոցա եդեալ



վկայութիւն՝ խօսեցան զբանն Աստուծոյ, եւ դարձան յԵրուսաղէմ. եւ ի բազում գեօղս Սամարացւոցն աւետարանէին։ 25։

Ալէլուիա, ալէլուիա. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիովն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ա. 35։

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս, եւ յաշակերտաց անտի նորա երկու։ Եւ նայեցեալ ընդ Յիսուսի զի զգնայր, ասէ. Ահաւասիկ Քրիստոս գառն Աստուծոյ։ Լուան ի նմանէ երկու աշակերտքն՝ զի խօսէր, եւ գնացին զհետ Յիսուսի։ Իբրեւ դարձաւ Յիսուս եւ ետես զնոսա՝ զի երթային զհետ նորա, ասէ ցնոսա. Զի՞նչ խնդրէք. նոքա ասեն ցնա. Ռա՛բբի, որ թարգմանեալ կոչի՝ վարդապետ, ո՞ւր են օթեվանք քո։ Ասէ ցնոսա. Եկայք եւ տեսէք։ Եկին եւ տեսին՝ ուր էին օթեվանք նորա. եւ առ նմա ագան այն օր, զի ժամ էր իբրեւ տասներորդ։ Էր Անդրէաս եղբայր Սիմովնի վիմի, մի յերկուց անտի, որ լուանն ի Յովհաննէ եւ գնացին զհետ նորա։ Գտանէ սա նախ զեղբայր իւր զՍիմովն, եւ ասէ ցնա. Գտաք զՄեսիայ՝ որ թարգմանի Քրիստոս։ Սա ած զնա առ Յիսուս։ Հայեցեալ ընդ նա Յիսուսի՝ ասէ. Դու ես Սիմովն որդի Յովնանու, դու կոչեսցիս Կեփաս, որ թարգմանի Պետրոս։ 42։

---

## ԵՐԿՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

ԲԿ.

Ժամամուտ. Ահաւոր եւ սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ։ Որ անսկիզբն ի Հօրէ՝ անճառաբար մարմնացաւ ի Կուսէն. խաչի համբերելով, եւ կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգեւեաց շնորհս։

Սղ. ԼԴ. Դատեա Տէր զայնոսիկ՝ ոյք դատին զիս. մարտիր ընդ այնոսիկ՝ որ մարտնչին ընդ իս։

Լ. Ասէ անօրէնն ի մեղանչել՝ ընդ միտս իւր. թէ չիք երկիւղ Աստուծոյ առաջի աչաց նորա։

ԼԶ. Մի՛ նախանձիր ընդ չարս, եւ մի՛ ընդ այնոսիկ որ գործեն զանօրէնութիւն։

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Ը. 26։

Հրեշտակ Տեառն խօսեցաւ առ Փիլիպպոս եւ ասէ. Արի եւ գնա դու ի կողմն հարաւոյ, ընդ ճանապարհ՝ որ իջանէ յԵրուսաղէմէ ի Գազայ. զի այս է անապատ։ Եւ յարեաւ գնաց։ Եւ ահաւասիկ այր մի Եթւովպացի, ներքինի հզօր՝ Կանդակայ տիկնոջ Եթւովպացւոց, որ էր ի վերայ ամենայն գանձուց նորա, որ եկեալ էր երկիր պագանել յԵրուսաղէմ, եւ էր անդրէն դարձեալ. եւ նստեալ ի կառս իւրում, ընթեռնոյր զմարգարէն զԵսայի։ Ասէ Հոգին ցՓիլիպպոս. Մատիր եւ յարեաց ի կառսդ յայդոսիկ։ Եւ ընթացեալ Փիլիպպոս՝ լսէր զի ընթեռնոյր զԵսայի մարգարէ, եւ ասէ. Գիտիցե՞ս արդեօք՝ զոր ընթեռնուցուսդ։ Եւ նա ասէ՝ Զիա՞րդ կարիցեմ, թէ ոք ոչ առաջնորդեսցէ ինձ. եւ աղաչեաց զՓիլիպպոս ելանել նստել ընդ նմա։ Եւ գլուխ գրոցն զոր ընթեռնոյր՝ էր այս. Իբրեւ զոչխար ի սպանդ վարեցաւ, եւ իբրեւ զորոջ առաջի կտրչի իւրոյ անմռունչ, այնպէս ոչ բանայ զբերան իւր։ Ի խոնարհութեան նորա դատաստան նորա բարձաւ, եւ զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ, զի բառնան յերկրէ կեանք նորա։ Պատասխանի ետ ներքինին Փիլիպպոսի, եւ ասէ. Աղաչեմ զքեզ՝ վասն ո՞յր ասէ մարգարէն զայս. վասն ի՞ւր, եթէ վասն այլոյ ուրուք։ Եբաց Փիլիպպոս զբերան իւր, եւ սկսեալ ի գրոցս յայսցանէ՝ աւետարանեաց նմա զՅիսուս։ Իբրեւ երթային զճանապարհայն, եկին ի ջուր ինչ. եւ ասէ ներքինին. Ահաւասիկ ջուր, զի՞նչ արգելու զիս ի մկրտելոյ։ Եւ ասէ ցնա. Եթէ հաւատաս բոլորով սրտիւ քով՝ մարթ է։ Պատասխանի ետ եւ ասէ. Հաւատամ՝ եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ։ Եւ հրամայեաց կացուցանել զկառսն. եւ իջին երկոքին ի ջուրն՝ Փիլիպպոս եւ ներքինին, եւ մկրտեաց զնա։ Եւ իբրեւ ելին ի ջրոյ անտի՝ Հոգի սուրբ եկն ի վերայ ներքինւոյն. եւ հրեշտակ Տեառն յափշտակեաց զՓիլիպպոս, եւ ոչ եւս ետես զնա ներքինին. եւ գնայր զճանապարհս իւր



ուրախութեամբ։ Բայց Փիլիպպոս գտաւ յԱզովտոս. եւ շրջեալ աւետարանէր ամենայն քաղաքացն մինչեւ ի գալ նորա ի Կեսարիա։ 40։

Ալէլուիա, ալէլուիա. Տէ՛ր, ո՞վ կացցէ ի խորանի քում. կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ա. 43։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել ի Գալիլեա. գտանէ զՓիլիպպոս, եւ ասէ ցնա Յիսուս. Եկ զկնի իմ։ Եւ էր Փիլիպպոս ի Բեդսայիդայ, ի քաղաքէ Անդրեայ եւ Պետրոսի։ Գտանէ Փիլիպպոս զՆաթանայէլ, եւ ասէ ցնա. Զորմէ գրեաց Մովսէս յօրէնսն եւ մարգարէքն, գտաք զՅիսուս՝ զորդի Յովսեփայ ի Նազարեթէ։ Ասէ ցնա Նաթանայէլ. Իսկ ի Նազարեթէ մա՞րթ ինչ իցէ բարւոյ իմիք լինել։ Ասէ ցնա Փիլիպպոս. Եկ եւ տես։ Իբրեւ ետես Յիսուս զՆաթանայէլ՝ զի գայր առ նա, ասէ վասն նորա. Ահա արդարեւ Իսրայէլացի՝ յորում նենգութիւն ոչ գոյ. Ասէ ցնա Նաթանայէլ. Ուստի՞ ճանաչես զիս։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Մինչ չեւ էր Փիլիպպոսի կոչեցեալ զքեզ՝ զի էիր ի ներքոյ թզենւոյն, տեսի զքեզ։ Պատասխանի ետ նմա Նաթանայէլ եւ ասէ. Ռա՛բբի, դու ես Որդի Աստուծոյ, դու ես թագաւորն Իսրայէլի։ Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Փոխանակ զի ասացի քեզ՝ թէ Տեսի ի ներքոյ թզենւոյն, հաւատաս. մեծամեծս եւս քան զայս տեսցես։ Եւ ասէ ցնա. Ամէն ամէն ասեմ ձեզ, տեսանիցէք զերկինս բացեալ եւ զհրեշտակս Աստուծոյ՝ զի ելանիցեն եւ իջանիցեն ի վերայ Որդւոյ մարդոյ։ 51։

---

## ԵՐԿՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

ԳՉ.

Ժամամուտ. Քանզի յարեաւ ի մեռելոց Քրիստոս Աստուած յաւիտենից արարիչ, եւ յարութիւն ազգի մարդ-

կան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց, եւ ամենայն զուարթունք երկնից. ընդ որս գոչելով ասեմք. Փառք սոսկալի յարութեան քոյ Տէր:

ՍՂ. ԼԷ. Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. եւ մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս:

ԼԸ. Ասացի թէ պահեցից զճանապարհս իմ. զի մի մեղայց լեզուաւ իմով:

ԼԹ. Համբերելով համբերի Տեառն, եւ նայեցաւ առ իս. եւ լուաւ աղօթից իմոց:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Թ. 1:

Իսկ Սաւղոս տակաւին լցեալ սպառնալեօք եւ սպանմամբ աշակերտացն Տեառն, մատուցեալ առ քահանայապետն՝ խնդրեաց ի նմանէ թուղթս ի Դամասկոս առ ժողովուրդսն. որպէս թէ զոք գտցէ զայնր ճանապարհի՝ արս կամ կանայս, կապեալս ածցէ յԵրուսաղէմ: Եւ ընդ երթալն նորա՝ եղեւ մերձենալ ի Դամասկոս. յանկարծակի շուրջ զնովաւ փայլատակեաց լոյս յերկնից: Եւ անկեալ յերկիր, լուաւ բարբառ՝ որ ասէր ցնա. Սաւո՛ւղ Սաւո՛ւղ, զի՞ հալածես զիս: Եւ ասէ. Ո՞վ ես Տէր: Եւ նա ասէ. Ես եմ Յիսուս՝ զոր դուն հալածես. խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել: (Եւ զարհուրեալ եւ անշշունջ լեալ ասաց. Տէր, զի՞նչ կամիս զի արարից: Եւ ասէ ցնա Տէր.) Այլ յոտն կաց եւ մուտ ի քաղաքդ, եւ պատմեսցի քեզ՝ զինչ քեզ պարտ իցէ առնել: Իսկ արքն՝ որ ընդ նմայն երթային, կային անշշունջ. զձայնն միայն լսէին, բայց տեսանէին եւ ոչ ինչ: Յարեաւ Սաւղոս յերկրէ անտի, եւ աչօք բացօք ոչ զոք տեսանէր. զձեռանէ առեալ նորա՝ մուծին ի Դամասկոս: Եւ էր անդ աւուրս երիս. եւ ոչ տեսանէր, եւ ոչ եկեր եւ ոչ արբ: Եւ էր ոմն աշակերտ ի Դամասկոս՝ Անանիա անուն. ասէ ցնա Տէր ի տեսլեան. Անանիա. եւ նա ասէ. Աւասիկ եմ Տէր: Եւ ասէ ցնա Տէր. Յոտն կաց եւ գնա ընդ փողոցն՝ որ կոչի Ուղիղ, եւ խնդրեսցես յապարանսն Յուդայ՝ Սաւղոս անուն զՏարսոնացի՝ զի կայ դեռ յաղօթս: Եւ ետես ի տեսլեան այր մի Անանիա անուն՝



մտեալ եւ եդեալ ի վերայ նորա ձեռն, որպէս զի տեսցէ: Պատասխանի ետ Անանիա. Տէ՛ր, լուայ ի բազմաց վասն առնն այնորիկ՝ ո՛րչափ պարտ չարիս սրբոց քոց յԵրուսաղէմ. եւ աստ ունի իշխանութիւն ի քահանայապետիցն կապել զամենեսեան, որ կարդան զանուն քո: Ասէ ցնա Տէր. Երթ դու՝ զի անօթ ընտրութեան է ինձ նա, կրել զանուն իմ առաջի հեթանոսաց եւ թագաւորաց եւ որդւոցն Իսրայէլի: Քանզի ես իսկ ցուցից նմա՝ ո՛րչափ պարտ իցէ նմա չարչարել վասն անուան իմոյ: Եւ գնաց Անանիա եւ եմուտ յապարանսն. եւ եդեալ ի վերայ նորա ձեռս, ասէ. Սաւո՛ւղ եղբայր, ի վեր հայեաց. Տէր առաքեաց զիս, Յիսուս՝ որ երեւեցաւ քեզ ի ճանապարհին՝ յորում գայիրն. որպէս զի տեսցես եւ լցցիս Հոգւով սրբով: Եւ վաղվաղակի անկան յաչաց նորա իբրեւ կեղեւանք. ետես եւ յարեաւ մկրտեցաւ. եւ առեալ կերակուր՝ զօրացաւ. եւ եղեւ ի Դամասկոս ընդ աշակերտսն աւուրս ինչ: Եւ վաղվաղակի ի ժողովուրդսն քարոզեաց զՅիսուս, թէ Սա է Որդին Աստուծոյ: Զարմացեալ էին ամենեքեան՝ որ լսէին, եւ ասէին. Ո՞չ սա էր՝ որ աւարն հարկանէր յԵրուսաղէմ զայնոսիկ, որ կարդային զանուն Յիսուսի. եւ այսր նմին իրի եկեալ է, զի կապեալ զսոսա տարցի առ քահանայապետսն: Այլ Սաւղոս առաւել եւս զօրանայր եւ յաղթահարէր զՀրեայսն, որ բնակեալ էին ի Դամասկոս. եւ խելամտեցուցանէր թէ սա է Քրիստոսն: Իբրեւ կատարէին աւուրք բազումք, խորհեցան Հրեայքն սպանանել զնա: Յայտնեցաւ Սաւղոսի նենգութիւնն նոցա. քանզի պահէին զդրունսն ի տուէ եւ ի գիշերի՝ որպէս զի սպանցեն զնա: Եւ առեալ զնա աշակերտացն ի գիշերի՝ ընդ պարիսպն կախեալ իջուցին վանդակաւ: Իբրեւ եկն Սաւղոս յԵրուսաղէմ, ընդելանէր յարել յաշակերտսն. եւ ամենեքեան երկնչէին ի նմանէ, չհաւատային թէ իցէ աշակերտ: Բայց Բառնաբայ առեալ զնա՝ ա՛ծ առ առաքեալսն. եւ պատմեաց նոցա՝ ո՛րպէս ի ճանապարհին ետես զՏէր, եւ զի խօսեցաւ ընդ նմա, եւ զի ի Դամասկոս համարձակեցաւ յանուն Յիսուսի: Եւ էր ընդ նոսա մտանել եւ ելանել յԵրուսաղէմ, համարձակեալ յանուն Տեառն: Խօսէր եւ վիճէր ընդ Յոյնսն. եւ նոքա խոկային սպանանել զնա: Եւ իմացեալ եղբարց՝ իջուցին զնա ի Կեսարիա, եւ առաքեցին զնա ի Տարսոն: Բայց եկեղեցին ընդ ամենայն Հրէաստան եւ ի Սա-

մարիա եւ ի Գալիլեա ունէր խաղաղութիւն, շինեալ եւ երթեալ զհետ երկիւղի Տեառն. եւ մխիթարութեամբ Հոգւոյն սրբոյ բազմանայր: 31:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Բ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ի Կանա Գալիլեացւոց. եւ անդ էր մայրն Յիսուսի: Կոչեցաւ եւ Յիսուս եւ աշակերտքն նորա ի հարսանիսն: Եւ ի պակասել գինւոյն, ասէ մայրն ցՅիսուս. Գինի ոչ ունին: Եւ ասէ ցնա Յիսուս. Զի՞ կայ իմ եւ քո՝ կին դու, չեւ է հասեալ ժամանակ իմ: Ասէ մայրն նորա ցսպասաւորսն. Որ զինչ ասիցէ ձեզ՝ արասջիք: Ընդ էին թակոյկք կճեայք վեց՝ ըստ սրբութեան Հրէից. տանէին մի մի ի նոցանէ մարս երկուս կամ երիս: Ասէ ցնոսա Յիսուս. Լցէք զթակոյկսդ ջրով. եւ լցին զնոսա մինչեւ ի վեր: Եւ ասէ ցնոսա. Արդ՝ առէք եւ բերէք տաճարապետիդ. եւ նոքա բերին: Եւ իբրեւ ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի եղեալ, եւ ոչ գիտէր ուստի իցէ, բայց սպասաւորքն գիտէին՝ որք արկին զջուրն: Խօսի ընդ փեսային տաճարապետն եւ ասէ. Ամենայն մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ, եւ յորժամ արբենան, յայնժամ զյոռին. դու պահեցեր զանոյշ գինիդ մինչեւ ցայժմ: Զայս արար սկիզբն նշանաց Յիսուս ի Կանա Գալիլեացւոց, եւ յայտնեաց զփառս իւր. եւ հաւատացին ի նա աշակերտքն նորա: 11:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ

Գ.Կ.

Ժամամուտ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:



Սղ. Խ. Երանի որ խորհի զաղքատն եւ զտնանկն. յաւուր չարի փրկէ զնա Տէր:

ԽԱ. Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց. այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ Աստուած:

ԽԲ. Դատ արա ինձ Աստուած. եւ իրաւ արա ինձ ի դատաստանի իմում:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Թ. 32:

Եւ եղեւ ի շրջելն Պետրոսի առ ամենեքումբք, իջանել նմա եւ առ սուրբսն՝ որ բնակեալ էին ի Լիւդիա: Եւ եգիտ անդ այր մի, որում անուն էր Ենեա, ութամեան դնէր ի մահիճս անդամալոյծ: Եւ ասէ ցնա Պետրոս. Ենեա, բժշկէ զքեզ Տէր Յիսուս Քրիստոս, արի եւ քեզէն թօթափեա զանկողինս քո. եւ վաղվաղակի յարեաւ: Եւ տեսին զնա ամենեքեան, որ բնակեալ էին ի Լիւդիա եւ ի Սարովնայ, որք եւ դարձան իսկ ի Տէր: Եւ ի Յոպպէ էր կին ոմն աշակերտեալ՝ անուն Տաբիթա, որ թարգմանեալ կոչի Այծեմնիկ. սա էր լի գործովք բարեօք եւ ողորմութեամբք զոր առնէր: Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ հիւանդանալ նմա եւ մեռանել: Լուացին զնա եւ եդին ի դստիկոնի անդ: Եւ մերձ էր Լիւդիա ի Յոպպէ. աշակերտացն լուեալ եթէ Պետրոս անդ է, առաքեցին երկուս արս առ նա՝ աղաչել, զի մի դանդաղեսցի գալ առ նոսա: Եւ յարուցեալ Պետրոս՝ եկն ընդ նոսա. զոր՝ իբրեւ եկն՝ հանին ի վերնատունն, եւ կացին շուրջ զնովաւ այրիքն ամենայն. լային եւ ցուցանէին զձորձս եւ զհանդերձս, որչափ առնէր նոցա Այծեմնիկն: Եւ հանեալ արտաքս զամենեսեան Պետրոսի, եդ ծունր՝ եկաց յաղօթս. եւ դարձաւ ի մարմինն եւ ասէ. Տաբիթա, արի կաց յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի. եւ նա եբաց զաչս իւր. եւ տեսեալ զՊետրոս՝ նստաւ կանգուն: Զեռն ետ նմա եւ յարոյց զնա. կոչեաց զորբսն եւ զայրիս, առաջի կացոյց զնա կենդանի: Եւ յայտնի եղեւ ընդ ամենայն Յոպպէ. եւ հաւատացին բազումք ի Տէր: Եւ եղեւ աւուրս բազումս լինել նմա ի Յոպպէ՝ առ ումեմն Սիմովնի խաղախորդի: 43:

Ալէլուիա, ալէլուիա. Ցնծացէք առ Աստուած, օգնական է մեր. աղաղակեցէք առ Աստուած Յակովբայ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Բ. 12:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յետ այսորիկ էջ (Յիսուս) ի Կափառնաում, ինքն եւ մայր իւր եւ եղբարք իւր. եւ անդ լինէր ոչ բազում ինչ աւուրս: Եւ էր մերձ զատիկն Հրէից, եւ ել Յիսուս յԵրուսաղէմ: Եւ եգիտ ի տաճարին՝ զի վաճառէին զարջառս եւ զոչխարս եւ զաղաւնիս, եւ զլումայափոխսն՝ որ նստէին: Եւ արար խարազան չուանեայ, եւ եհան զամենեսին ի տաճարէն, զոչխարսն եւ զարջառս, եւ զպղինձս հատավաճառացն ցրուեաց, եւ զսեղանսն կործանեաց: Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա. Առէք զայդ աստի, եւ մի՛ առնէք զտուն Հօր իմոյ՝ տուն վաճառի: Ապա յիշեցին աշակերտքն նորա, թէ գրեալ է. Նախանձ տան քո կերիցէ զիս: Պատասխանի ետուն Հրեայքն եւ ասեն ցնա. Ջի՞նչ նշան ցուցանես դու մեզ՝ զի զայդ առնես: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Քակեցէք զտաճարդ զայդ, եւ զերիս աւուրս կանգնեցից զդա: Ասեն ցնա Հրեայքն. Զքառասուն եւ զվեց ամ շինեցաւ տաճարս այս, եւ դու զերիս աւուրս կանգնե՞ս զսա: Բայց նա ասէր վասն տաճարի մարմնոյ իւրոյ: Իսկ յորժամ յարեաւն ի մեռելոց, յիշեցին աշակերտքն նորա թէ այս է՝ զոր ասացն, եւ հաւատացին գրոյն եւ բանին՝ զոր ասաց Յիսուս: 22:

---

## ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՅԻՆԱՆՑ

## ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ

ԴԶ.

Ժամամուտ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց, նմա փառք յաւիտեանս ամէն:

Սղ. Խգ. Աստուած, ականջօք մերովք լուաք, զոր հարքն մեր պատմեցին մեզ. զգործսն զոր գործեցեր յաւուրս նոցա՝ յաւուրսն առաջինս:



Խդ. Բղխեսցէ սիրտ իմ զպատգամս քո բարիս. եւ ասացից զգործս իմ թագաւորի:

Խե. Աստուած մեր ապաւէն եւ զօրութիւն. օգնական ի վերայ նեղութեանց՝ որք գտին զմեզ յոյժ:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Ժ. 1:

Այր մի էր ի Կեսարիա՝ անուն Կուռնելիոս՝ հարիւրապետ, ի գնդէ որ կոչէր Իտալացի. բարեպաշտօն եւ երկիւղած յԱստուծոյ ամենայն տամբ իւրով. առնէր ողորմութիւնս բազումս ի ժողովրդեանն. եւ յաղօթս կայր առ Աստուած յամենայն ժամ: Ետես ի տեսլեան յայտնապէս զիններորդ ժամու աւուրն զհրեշտակ Աստուծոյ, զի մտանէր առ նա եւ ասէր ցնա. Կո՛ւռնելիէ: Եւ նա հայեցեալ ընդ նա՝ զարհուրեցաւ եւ ասէ. Ջի՞ է Տէր. եւ ասէ ցնա. Աղօթք քո եւ ողորմութիւնք քո ելին յիշատակաւ առաջի Աստուծոյ: Եւ արդ՝ յղեա արս ի Յոպպէ եւ կոչեա զՍիմովն զոմն որ կոչի Պետրոս. նա մտեալ է առ Սիմովնի ումեմն խաղախորդի, որոյ է տունն մերձ ի ծով: Եւ իբրեւ գնաց հրեշտակն՝ որ խօսէր ընդ նմա, կոչեաց երկուս ի ծառայիցն իւրոց եւ զինուոր մի բարեպաշտօն ի սպասաւորացն իւրոց. եւ պատմեալ նոցա զամենայն՝ առաքեաց զնոսա ի Յոպպէ: Եւ ի վաղիւ անդր ի ճանապարհ անկանել նոցա եւ մօտ ի քաղաքն լինել, ել Պետրոս ի տանիսն կալ յաղօթս զվեցերորդ ժամուն: Եւ քաղցեաւ եւ կամէր ճաշակել. եւ ի պատրաստել նոցա՝ եղեւ ի վերայ նորա զարմացումն: Եւ տեսանէր զերկինս բացեալ, եւ զչորեցունց ատնոց կախեալ անօթ ինչ իբրեւ զկտաւոյ մեծի, իջեալ նստեալ ի վերայ երկրի, յորում էին ամենայն չորքոտանիք եւ սողունք երկրի եւ թըռչունք երկնից: Եւ եղեւ ձայն առ նա. Արի, Պե՛տրոս, զեն եւ կեր: Եւ Պետրոս ասէ. Քա՛ւ լիցի, Տէ՛ր, զի ոչ երբեք կերայ խառնակ ինչ եւ անսուրբ: Ձայն եղեւ առ նա կրկին անգամ. Զոր Աստուած սրբեաց՝ դու մի՛ պղծեր: Այս եղեւ երիցս, եւ վերացաւ անօթն յերկինս: Եւ մինչ դեռ զարմացեալ էր ընդ միտս Պետրոս՝ թէ զի՞նչ իցէ տեսիլն զոր ետես, եւ ահա արքն առաքեալք ի Կուռնելեայ՝ հարցին զապարանիցն Սիմովնի. կացին առ դրանն, կոչեցին եւ հարցանէին,

եթէ Սիմովն՝ որ կոչի Պետրոս, ա՞ստ մտեալ իցէ: Եւ մինչ դեռ Պետրոս զմտաւ ածէր վասն տեսլեանն, ասէ Հոգին ցնա. Ահաւասիկ արք ոմանք խնդրեն զքեզ: Այլ արի էջ եւ երթ ընդ նոսա առանց իրիք խղճելոյ, զի ես առաքեցի զնոսա: Եւ իբրեւ էջ Պետրոս առ նոսա, ասէ. Ահաւասիկ ես եմ՝ զոր խնդրէքն. զի՞նչ իրք են՝ վասն որոյ եկիքդ: Եւ նոքա ասեն. Կուռնելիոս հարիւրապետ՝ այր արդար եւ երկիւղած յԱստուծոյ, վկայեալ յամենայն ազգէն Հրէից, հրաման առ ի հրեշտակէ սրբոյ՝ կոչել զքեզ ի տուն իւր եւ լսել բանս ի քէն: Կոչեաց զնոսա ի ներքս եւ առ իւր ագոյց. եւ ի վաղիւ անդր յարուցեալ Պետրոս՝ գնաց ընդ նոսա. եւ ոմանք յեղբարց անտի՝ որ ի Յոպպէ էին, եկին ընդ նմա: Եւ ի վաղիւ անդր մտին ի Կեսարիա. եւ Կուռնելիոս մնայր նոցա, կոչեցեալ զազգատոհմն իւր եւ զկարեւոր բարեկամս: 24:

Ալէլուիա, ալէլուիա. Գովեա Երուսաղէմ զՏէր. եւ օրհնեա զԱստուած քո Սիովն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Բ. 23:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ իբրեւ էր յԵրուսաղէմ ի զատկին ի տօնի, բազումք հաւատացին յանուն նորա. զի տեսանէին զնշանսն՝ զոր առնէր: Բայց ինքն Յիսուս ոչ հաւատայր զանձն նոցա, քանզի ինքն գիտէր զամենայն. եւ զի ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վասն մարդոյ. զի ինքն իսկ գիտէր՝ զինչ կրէր ի մարդն: Եւ էր այր մի ի փարիսեցւոց անտի՝ Նիկոդեմոս անուն նորա՝ իշխան Հրէից: Սա եկն առ նա գիշերի եւ ասէ ցնա. Ռա՛բբի, գիտեմք եթէ յԱստուծոյ եկեալ ես վարդապետ. զի ոչ ոք կարէ զայդ նշանսդ առնել՝ զոր դուդ առնես, եթէ ոչ Աստուած իցէ ընդ նմա: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի վերստին՝ ոչ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ: Ասէ ցնա Նիկոդեմոս. Զի՞ա՞րդ կարէ մարդ ծնանել՝ որ ծերն իցէ. միթէ մա՛րթ ինչ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել եւ ծնանել: Պատասխանի ետ Յիսուս



եւ ասէ. Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ: Զի ծնեալն ի մարմնոյ՝ մարմին է, եւ ծնեալն ի Հոգւոյ՝ հոգի է: Դու մի՛ զարմանար, թէ ասացի քեզ՝ պարտ է ձեզ ծնանել վերստին: Զի հողմն ուր կամի շնչէ, եւ զձայն նորա լսես. այլ ոչ գիտես ուստի՛ գայ կամ յո՛ երթայ. սոյնպէս եւ ամենայն ծնեալն ի Հոգւոյն: Պատասխանի ետ Նիկոդեմոս եւ ասէ ցնա. Զի՞ա՞րդ մարթի այդմ լինել: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Դու ես վարդապետ Իսրայելի, եւ զայդ ո՞չ գիտես: Ամէն ամէն ասեմ քեզ. զի զոր ինչ գիտեմք՝ խօսիմք, եւ զոր տեսաք՝ վկայեմք. եւ զվկայութիւնն մեր ոչ ընդունիք: Իսկ արդ՝ եթէ զերկրաւորս ասացի ձեզ, եւ ոչ հաւատայք. զի՞ա՞րդ եթէ զերկնաւորսն ասացից՝ հաւատայցէք: Գ. 12:

---

## ԵՐՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Դ.

Ժամամուտ. Ահաւոր եւ սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ: Որ անսկիզբն ի Հօրէ՝ անճառաբար մարմնացաւ ի Կուսէն. խաչի համբերելով, եւ կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգեւեաց շնորհս:

Սղ. Խզ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք. աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան:

Խէ. Մեծ է Տէր եւ օրհնեալ է յոյժ. ի քաղաք Աստուծոյ մերոյ, ի լեառն սուրբ նորա:

Խը. Լուարուք զայս՝ ամենայն ազգք. ունկնդիր լերուք ամենեքեան՝ ոյք բնակեալ էք յաշխարհի:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Ժ. 25:

Եւ եղեւ ի մտանելն Պետրոսի՝ ընդ առաջ եղեւ նմա Կուռնելիոս, անկեալ առ ոտսն՝ երկիր պագանէր: Եւ Պետրոս կանգնեաց զնա եւ ասէ. Յոտն կաց, եւ ես ինքնին մարդ եմ: Եւ խօսելով ընդ նմա եմուտ ի ներքս, եւ գտա-

նէր անդ ժողովեալ զբազումս: Եւ ասէ ցնոսա. Դուք ինքնին գիտէք՝ որպէս անմարթ է առն Հրէի հպել կամ մերձենալ առ այլազգի. եւ ինձ Աստուած եցոյց մի՛ զոք խառնակ կամ անսուրբ ասել ի մարդկանէ: Վասն այսորիկ եւ առանց ընդ բանս ինչ ածելոյ՝ եկի կոչեցեալ. բայց արդ հարցանեմ, վասնչ պէտս կոչեցէք զիս: Եւ Կուռնելիոս ասէ. Յառաջ քան զչորս աւուրս մինչ ցայս ժամ կայի յաղօթս յիմն ժամին ի տան իմում, եւ ահա այր մի եկն եկաց առաջի իմ ի հանդերձս ապիտակս, եւ ասէ. Կուռնելիէ, լսելի եղեն աղօթք քո, եւ ողորմութիւնք քո յիշեցան առաջի Աստուծոյ: Եւ արդ՝ յղեա ի Յոպպէ եւ կոչեա զՍիմոնն, որ կոչեցեալն է Պետրոս. սա մտեալ է ի տուն Սիմոնի ուրուճն խաղախորդի մերձ ի ծով. որ եկեսցէ եւ խօսեսցի բանս ընդ քեզ: Եւ ես իսկ եւ իսկ յղեցի առ քեզ. դու բարւոք արարեր՝ զի եկիր. արդ՝ ամենեքեան մեք առաջի Աստուծոյ կամք՝ լսել զամենայն, որ հրամայեալ է քեզ ի Տեառնէ: Եբաց Պետրոս զբերան իւր եւ ասէ. Ճշմարտութեամբ հասեալ եմ, զի ոչ գոյ աննառութիւն առ ի Աստուծոյ. այլ յամենայն ազգս՝ որ երկնչին ի նմանէ եւ գործեն զարդարութիւն, ընդունելի է նմա: Զբանն առաքեաց որդւոցն Իսրայելի՝ աւետարանել զխաղաղութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. սա է ամենայնի Տէր: Դուք ինքնին գիտէք զբանն, որ եղեւ ընդ ամենայն Հրէաստան՝ սկսեալ ի Գալիլեէ, յետ մկրտութեան՝ զոր քարոզեաց Յովհաննէս. զՅիսուս որ ի Նազարեթէ՝ զոր օծն Աստուած Հոգւով սրբով եւ զօրութեամբ, որ շրջեցաւ բարի առնել եւ բժշկել զամենայն ըմբռնեալսն ի սատանայէ. զի Աստուած էր ընդ նմա: Եւ մեք վկայ եմք ամենայնի՝ զոր արար յերկրին Հրէաստանի եւ Երուսաղէմ. զոր եւ սպանին կախեալ զփայտէ: Զնա Աստուած յարոյց յերրորդ աւուր. եւ ետ նմա յայտնի լինել, ոչ ամենայն ժողովրդեանն, այլ մեզ վկայիցս յառաջագոյն ընտրելոցս Աստուծոյ. որ եւ կերաք եւ արբաք ընդ նմա՝ յետ յարութեան նորա ի մեռելոց: Եւ պատուիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն եւ վկայութիւն դնել, թէ նա է սահմանեալն Աստուծոյ՝ դատաւոր կենդանեաց եւ մեռելոց: Զնմա ամենայն մարգարէք վկայեն, թողութիւն մեղաց առնուլ անուամբ նորա՝ ամենայն հաւատացելոց ի նա: Եւ մինչ դեռ խօսէր Պետրոս զբանս զայս, հանգեաւ Հոգին սուրբ ի վերայ ամենեցուն՝ որ լսէին զբանն: Զարմացան՝ որք ի թլփատութենէ անտի հաւատացեալք եկեալ էին ընդ Պետրոսի. զի եւ ի հեթանոսս պարգեւք Հոգւոյն սրբոյ զեղուին: Վասնզի լսէին ի նոցանէ խօսել լեզուս եւ մեծացուցանել զԱստուած: Յայնժամ պատասխանի ետ Պետրոս. Միթէ զջուր զոք արգելուլ կարէ առ ի չմկրտելոյ զսոսա, որք եւ զՀոգին սուրբ ընկալան՝ որպէս եւ մեք: Եւ հրամայեաց նոցա մկրտել յանուն Յիսուսի Քրիստոսի. յայնժամ աղաչեցին զնա լինել անդ աւուրս ինչ: 48:

Ալէլուիա, ալէլուիա: Գովեա Երուսաղէմ զՏէր. եւ օրհնեա զԱստուած քո Սիովն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Գ. 13:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Եւ ոչ ոք եւ յերկինս, եթէ ոչ՝ որ էջն յերկնից՝ Որդին մարդոյ, որ էն յերկինս: Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ: Զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենական: Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ՝ մինչեւ զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս: Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշխարհ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ: Որ հաւատայ ի նա, ոչ դատապարտեսցի. եւ որ ոչ հաւատայ ի նա՝ արդէն իսկ դատապարտեալ է. զի ոչ հաւատաց յանուն միածնի Որդւոյն Աստուծոյ: Եւ այս իսկ է դատաստան, զի լոյս եկն յաշխարհ եւ սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս. զի էին գործք իւրեանց չարութեան: Զի ամենայն որ զչար գործէ, ատեայ զլոյս. եւ ոչ գայ առ լոյսն, զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա: Իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա, թէ Աստուծով գործեցան: 21:

## ԵՐՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԱՁ.

Ժամամուտ. Քանզի յարեաւ ի մեռելոց Քրիստոս Աստուած յաւիտենից արարիչ, եւ յարութիւն ազգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց, եւ ամենայն զուարթունք երկնից. ընդ որս գոչելով ասեմք. Փառք սոսկալի յարութեան քոյ Տէր:

Սղ. Խթ. Աստուած աստուծոց Տէր խօսեցաւ. կոչեաց զերկիր յարեւելից մինչեւ ի մուտս արեւու:

Ծ. Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ:

ԾԱ. Զի՞ պարծի ի չարութեան հզօր՝ զանօրէնութիւն. զօրհանապազ զանիրաւութիւն խորհեցաւ ի լեզուի իւրում:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց:

Գլ. ԺԱ. 1:

Լուան առաքեալքն եւ եղբարք՝ որ էին ի կողմանս Հրէաստանի, զի եւ ի հեթանոսս ընկալան զբանն Աստուծոյ: Բայց յորժամ ել Պետրոս յԵրուսաղէմ, խղճէին ի նմանէ՝ որ ի թլփատութենէ անտի հաւատացեալքն. եւ ասէին, եթէ Եմուտ առ արս անթլփատս եւ եկեր ընդ նոսա: Եւ սկսաւ Պետրոս պատմել նոցա կարգաւ եւ ասէ. Ես էի ի քաղաքին ի Յոպպէ յաղօթս, եւ տեսի ի զարմացման տեսիլ. իջանել անօթ ինչ իբրեւ կտաւոյ մեծի զչորեցունց ոտնոց կախեալ յերկնից, եւ եհաս մինչեւ առ իս: Յոր պշուցեալ հայէի. եւ տեսի զչորքոտանիս երկրի եւ զգազանս եւ զսողունս եւ զթռչունս երկնից: Եւ լուայ բարբառ՝ որ ասէր ցիս. Արի, Պե՛տրոս, զեն եւ կեր: Եւ ասեմ. Քաւ լիցի, Տէ՛ր, զի խառնակ ինչ եւ անսուրբ ոչ երբեք եմուտ ի բերան իմ: Պատասխանի ետ ինձ երկիցս անդամ բարբառն յերկնից. Զոր Աստուած սրբեաց՝ դու մի՛ խառնակ համարիր: Այս եղեւ երիցս, եւ վերացաւ դարձեալ ամենայն յերկինս: Եւ ահա անդրէն երեք արք եկին կացին առ ապա-



րանիցն՝ ուր եսն էի, առաքեալք ի Կեսարիայ առ իս: Եւ ասէ ցիս Հոգին՝ երթալ ընդ նոսա եւ մի՛ ինչ խղճել. եկին ընդ իս եւ սոքա վեցեքին եղբարքս, եւ մտաք ի տուն առնն այնորիկ: Եւ պատմեաց մեզ՝ որպէս ետես զհրեշտակն ի տան իւրում, զի կայր եւ ասէր ցնա. Առաքեա ի Յոպպէ, եւ կոչեա զՍիմովն զկոչեցեալն Պետրոս, որ խօսեսցի բանս ընդ քեզ, որովք կեցցես դու եւ ամենայն տուն քո: Եւ իբրեւ սկսայ խօսել՝ եկն Հոգին սուրբ ի վերայ նոցա, որպէս եւ ի վերայ մեր ի սկզբանն: Յիշեցի զբանն Տեառն զոր ասէրն. Յովհաննէս մկրտեաց ի Ջուր, բայց դուք մկրտիցիք ի Հոգին սուրբ: Իսկ արդ եթէ զհասարակաց պարգեւն ետ Աստուած եւ նոցա՝ որպէս եւ մեզ՝ ի հաւատալն ի Տէր Յիսուս Քրիստոս, ես զի՞նչ կարող էի արգելուլ զԱստուած: Եւ լուեալ զայս՝ լռեցին, եւ փառաւոր առնէին զԱստուած եւ ասէին. Ուրեմն եւ ի հեթանոսս ետ Աստուած զապաշխարութիւն կենաց: 18:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր, ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. եւ ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Գ. 22:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յետ այսորիկ եկն (Յիսուս) եւ աշակերտքն նորա յերկիրն Հրէաստանի, եւ անդ շրջէր նոքօք հանդերձ եւ մկրտէր: Մկրտէր եւ Յովհաննէս ի Յայենովն մերձ առ Սաղիմ, զի ջուրք բազումք էին անդ, եւ գային եւ մկրտէին. զի չեւ եւս էր արկեալ զՅովհաննէս ի բանտ: Եւ եղեւ խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ Հրէի վասն սրբութեան: Եկին առ Յովհաննէս եւ ասեն ցնա. Ռա՛բբի, որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու, որում դուն վկայեցեր, ահաւանիկ նա մկրտէ եւ ամենեքին գան առ նա: Պատասխանի ետ Յովհաննէս եւ ասէ. Ոչ կարէ մարդ առնուլ յանձնէ եւ ոչ ինչ՝ եթէ ոչ իցէ տուեալ նմա յերկնից ի վերուստ: Դուք ձեզէն վկայէք ինձ, զի ասացի ձեզ՝ թէ Չեմ ես Քրիստոսն, այլ թէ առաքեալ եմ առաջի նորա: Որ ունի հարսն, նա է

փեսայ. իսկ բարեկամ փեսային՝ որ կայ եւ լսէ նմա, ուրախութեամբ ուրախ լինի վասն ձայնի փեսային. արդ այս ուրախութիւն որ իմս է, լցեալ է: Նմա պարտ է աճել, եւ ինձ մեղմանալ: Որ ի վերուստն գայ՝ ի վերոյ է քան զամենայն. որ յերկրէ աստի է, յերկրէ է եւ յերկրէ խօսի: Որ յերկնիցն գայ, զոր ինչ ետես եւ զոր լուաւ՝ վկայէ. եւ զվկայութիւն նորա ոչ ոք ընդունի: Որ ընդունի զվկայութիւն նորա՝ կնքեաց թէ Աստուած ճշմարիտ է: Զի զոր Աստուածն առաքեաց՝ զբանս Աստուծոյ խօսի. զի ոչ եթէ չափով տայ Աստուած զՀոգին: Հայր սիրէ զՈրդի, եւ զամենայն ինչ ետ ի ձեռս նորա: Որ հաւատայ յՈրդի, ընդունի զկեանսն յաւիտենականս. եւ որ ոչ հնազանդի Որդւոյ, ոչ տեսցէ զկեանս. այլ բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա: 36:

---

## ԵՐՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԱԿ.

Ժամամուտ. Ահաւոր եւ սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ: Որ անսկիզբն ի Հօրէ՝ անճառաբար մարմնացաւ ի Կուսէն. խաչի համբերելով, եւ կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգեւեաց շնորհս:

Սղ. ԾԲ. Ասաց անզգամն ի սրտի իւրում՝ թէ ոչ գոյ Աստուած:

ԾԳ. Աստուած, յանուան քում կեցո զիս. եւ ի զօրութեան քում իրաւ արա ինձ:

ԾԴ. Ունկն դիր Աստուած աղօթից իմոց. եւ մի՛ անտես առներ զխնդրուածս իմ:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԺԱ. 19:

Եւ ցրուեալքն ի նեղութենէն որ եղեւ ի վերայ Ստեփանոսի՝ հասին մինչեւ ի Փիւնիկէ եւ ի Կիպրոս եւ յԱնտիոքիա. ոչ ումեք խօսէին զբանն, բայց միայն Հրէից: Եւ էին ոմանք ի նոցանէ արք Կիպրացիք եւ Կիւրենացիք, որք մտեալ յԱնտիոք՝ խօսէին ընդ Յոյնսն աւետարանեալ զՏէր



Յիսուս: Եւ էր ձեռն Տեառն ընդ նոսա. եւ բազմութիւն հաւատացելոց դարձաւ ի Տէր: Լու եղեւ բանս յականջս եկեղեցւոյն՝ որ էր յԵրուսաղէմ, վասն նոցա. եւ առաքեցին զԲառնաբաս մինչեւ յԱնտիոք. որ իբրեւ եկն եւ ետես զշնորհսն Աստուծոյ՝ ուրախ եղեւ, եւ մխիթարէր զամենեսեան՝ յօժարութեամբ սրտիւ կալ նոցա ի Տէր: Զի էր այր զուարթամիտ եւ լի Հոգւով սրբով եւ հաւատովք. եւ յաւելաւ ժողովուրդ բազում Տեառն: Եւ ել ի Տարսոնն խնդրել զՍաւղոս, եւ գտեալ զնա՝ ած յԱնտիոք: Եւ եղեւ նոցա զամն ողջոյն ժողովել յեկեղեցին եւ ուսուցանել ժողովուրդ բազում, եւ անուանել նախ յԱնտիոք զաշակերտսն Քրիստոնեայս: Ընդ աւուրսն ընդ այնոսիկ իջին յԵրուսաղէմէ մարգարէք՝ յԱնտիոք: Յարուցեալ մի ոմն ի նոցանէ անուն Ագաբոս՝ նշանակեաց Հոգւովն սով մեծ լինել ընդ ամենայն աշխարհ, որ եղեւ առ Կղաւդեաւ: Բայց յաշակերտաց անտի, որպէս զիարդ կարող ոք էր՝ իւրաքանչիւր ոք ի նոցանէ որոշեցին առաքել ի պէտս եղբարցն որ բնակեալ էին ի Հրէաստանի. զոր եւ արարին իսկ՝ առաքեալ առ երիցունսն ի ձեռն Բառնաբայ եւ Սաւղոսի: 30:

Ալէլուիա, ալէլուիա. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոնն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Դ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Իբրեւ գիտաց (Յիսուս)՝ եթէ լուան փարիսեցիքն եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ եւ մկրտէ քան զՅովհաննէս. քանզի ոչ եթէ Յիսուս ինքնին մկրտէր՝ այլ աշակերտքն նորա. եթող զՀրէաստան երկիր, եւ եկն միւսանգամ ի Գալիլեա: Եւ էր նմա անցանել ընդ Սամարիա: Գայ նա ի քաղաք մի Սամարացւոց՝ որում անուն էր Սիւքար, մերձ ի գեօղն զոր ետ Յակովբ որդւոյ իւրում Յովսեփայ: Եւ անդ էր աղբիւր մի Յակովբայ. եւ Յիսուս վաստակեալ ի ճանապարհէն, նստէր ի վերայ աղբերն. եւ էր ժամ իբրեւ վեցերորդ: Գայ կին մի ի Սամարեայ հանել

ջուր, ասէ ցնա Յիսուս. Տուր ինձ ըմպել: Զի աշակերտքն նորա երթեալ էին ի քաղաք անդր՝ զի կերակուրս գնեսցեն: Ասէ ցնա կինն Սամարացի. Դու՝ որ Հրեայդ ես, զիարդ յինէն ըմպել խնդրես ի կնոջէ Սամարացւոյ: Զի ոչ երբեք խառնակին Հրեայք ընդ Սամարացիս: Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Եթէ գիտէիր դու զպարգեւսն Աստուծոյ, եւ ով է՝ որ ասէդ ցքեզ՝ թէ Տուր ինձ ըմպել. դու արդեօք խնդրէիր ի նմանէ, եւ տայր քեզ ջուր կենդանի: Ասէ ցնա կինն. Տէր, դու քանզի եւ դոյլ իսկ ոչ ունիս, եւ ջրհորս խոր է. իսկ արդ՝ ուստի՞ ունիցիս զջուրն կենդանի: Միթէ դու մեծ ինչ ոք իցես քան զհայրն մեր Յակովբ՝ որ զայս ջրհոր ետ մեզ, եւ ինքն աստի արբ եւ որդիք նորա եւ խաշինք նորա: Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Ամենայն որ ըմպէ ի ջրոյ յայդմանէ՝ միւսանգամ ծարաւէ. բայց որ ըմպէ ի ջրոյն, զոր ես տաց նմա՝ մի՛ ծարաւեսցէ յաւիտեան: Այլ ջուրն զոր ես տաց նմա, եղիցի նմա աղբիւր ջրոյ բղխելոյ ի կեանսն յաւիտենականս: Ասէ ցնա կինն. Տէր, տուր ինձ զջուրն զայն, զի մի՛ ծարաւեցից, եւ մի՛ եկից այսր՝ հանել ջուր: Ասէ ցնա Յիսուս. Երթ կոչեա զայր քո եւ եկ այսր: Պատասխանի ետ նմա կինն եւ ասէ. Չիք իմ այր: Ասէ ցնա Յիսուս. Բարւոք ասացեր՝ թէ չիք իմ այր. զի հինգ այր փոխեալ է քո, եւ զոր այժմ ունիս՝ չէ քո այր. զայդ արդար ասացեր: Ասէ ցնա կինն. Տէր, թուի ինձ թէ մարգարէ իցես դու: Հարքն մեր ի լերինս յայսմիկ երկիր պագին. եւ դուք ասէք՝ եթէ յԵրուսաղէմ եւեթ է տեղի, ուր արժան իցէ երկիր պագանել: Ասէ ցնա Յիսուս. Կին դու, հաւատա ինձ, զի եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ի լերինս յայսմիկ եւ ոչ յԵրուսաղէմ երկիր պագանիցեն Հօր: Դուք երկիր պագանէք՝ որում ոչն գիտէք. մեք երկիր պագանեմք՝ որում գիտեմքն. զի փրկութիւն ի Հրէից է: Այլ եկեսցէ ժամանակ եւ այժմ իսկ է, յորժամ ճշմարիտքն երկրպագուք երկիր պագանիցեն Հօր հոգւով եւ ճշմարտութեամբ. քանզի եւ Հայր այնպիսի երկրպագուս իւր խնդրէ: 23:

---



## ԵՐՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### ԲՁ.

Ժամամուտ. Քանզի յարեաւ ի մեռելոց Քրիստոս Աստուած յաւիտենից արարիչ, եւ յարութիւն ազգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց, եւ ամենայն զուարթունք երկնից. ընդ որս գոչելով ասեմք. Փառք սոսկալի յարութեան քոյ Տէր:

Սղ. Ծե. Ողորմեա ինձ Աստուած, զի կոխեաց զիս մարդ. զօրհանապազ պատերազմունք նեղեցին զիս:

Ծզ. Ողորմեա ինձ Աստուած, ողորմեա ինձ. զի ի քեզ յուսացաւ անձն իմ:

Ծէ. Եթէ արդարեւ զարդարութիւն խօսէիք. եւ ուղիղս դատէիք, որդիք մարդկան:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԺԲ. 1:

Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ արկ Հերովդէս արքայ ձեռն՝ չարչարել զոմանս յեկեղեցւոյն: Եւ սպան զՅակովբոս զեղբայրն Յովհաննու սրով: Ետես եթէ հաճոյ է Հրէիցն, յաւել եւս ունել զՊետրոս. եւ էին աւուրք բաղարջակերաց: Զոր իբրեւ կալաւ՝ եդ ի բանտի, եւ մատնեաց չորից չորրորդաց զինուորաց՝ պահել զնա. եւ կամէր յետ զատկին ածել զնա ժողովրդեանն: Եւ Պետրոս ի պահեստի էր ի բանտին. եւ աղօթք ստէպ լինէին յեկեղեցւոյն վասն նորա առ Աստուած: Իբրեւ կամեցաւ ածել զնա Հերովդէս, ի գիշերին յայնմիկ էր Պետրոս ի քուն ի մէջ երկուց զինուորաց՝ կապեալ կրկին շղթայիւք. եւ պահապանքն առաջի դրանն պահէին զբանտն: Եւ ահա հրեշտակ Տեառն եկն եկաց ի վերայ, եւ լոյս ծագեաց ի տանն, եւ խթեաց զկողսն Պետրոսի, յարոյց զնա եւ ասէ, Արի վաղվաղակի. եւ անկան շղթայքն ի ձեռաց նորա: Եւ ասէ ցնա հրեշտակն. Ած զգօտի քո, եւ արկ զհողաթափս յոտս քո. եւ արար այնպէս: Եւ ասէ ցնա. Արկ զձորձս քո եւ եկ զկնի իմ: Եւ ելեալ երթայր զհետ, եւ ոչ գիտէր եթէ ճշմարիտ իցէ որ

ինչ եղեւն ի հրեշտակէն. զի համարէր երազ տեսանել: Եւ
իբրեւ անցին նոքա ըստ մի պահ եւ ըստ երկուս, եկին մին-
չեւ ի դուռնն երկաթի՝ որ հանէր ի քաղաքն, որ ինքնին
բացաւ նոցա. եւ մտեալ անցին ընդ փողոց մի. եւ վաղվա-
ղակի ի բաց եկաց ի նմանէ հրեշտակն: Եւ Պետրոս իբրեւ
ի միտս եղեւ, ասէ. Արդ գիտեմ ճշմարիտ թէ առաքեաց
Տէր զհրեշտակ իւր, եւ փրկեաց զիս ի ձեռաց Հերովդի, եւ
յամենայն ակնկալութենէ ժողովրդեանն Հրէից: Եւ լեալ
ի միտս՝ եկն ի տուն Մարեմու մօր Յովհաննու, որ կոչեցաւն
Մարկոս, ուր էին բազումք ժողովեալ եւ աղօթս առնէին:
Եւ բախեալ զդուրս տանն, մատեաւ աղախին մի՝ ունկն
դնէր, որում անուն էր Հռովդէ: Եւ ծանուցեալ զձայնն
Պետրոսի՝ ի խնդալոյն ոչ եբաց զդուռն. ի ներքս ընթացեալ
պատմեաց, եթէ Պետրոս առ դրանն կայ: Նոքա ասեն ցնա՝
Մոլիս. եւ նա եւս պնդէր՝ թէ Այդպէս է. եւ նոքա ասեն.
Հրեշտակ նորա իցէ: Եւ Պետրոս ստէպ բախէր. իբրեւ
բացին, տեսին զնա եւ զարմացան: Եւ նա ձեռամբ ցուցանէր
նոցա լռել. եւ պատմեաց՝ որպէս Տէր եհան զնա ի բանտէն.
եւ ասէ. Պատմեցէք Յակովբայ եւ եղբարց զայս. եւ ել
գնաց յայլ տեղի: Եւ իբրեւ եղեւ այգ՝ էր խռովութիւն
մեծ ի մէջ զինուորացն, զի՞ արդեօք Պետրոսն եղեւ: Իսկ
Հերովդէս իբրեւ խնդրեաց զնա եւ ոչ եգիտ, հարցեալ
զպահապանսն՝ հրամայեաց սպանանել. եւ իջեալ ի Հրէ-
աստանէ ի Կեսարիա, եւ անդ լինէր: Եւ էր Հերովդէս
ցասմամբ ընդ Տիւրացիս եւ ընդ Սիդովնացիս. եւ նոքա առ
հասարակ եկին առ նա. եւ ի բանի արարեալ զԲղաստոս
սենեկապետ արքայի, խնդրէին զխաղաղութիւն՝ վասն կե-
րակրելոյ երկրին նոցա յարքունուստ: Յաւուր միում յե-
րեւելւոջ՝ Հերովդէս զգեցեալ էր զհանդերձ թագաւորու-
թեան եւ նստէր յատենի, եւ խօսէր ընդ նոսա հրապարա-
կաւ: Եւ ամբոխն աղաղակէր՝ թէ Աստուծոյ բարբառ է, եւ
ոչ մարդոյ: Եւ անդէն եհար զնա հրեշտակ Տեառն,
փոխանակ զի ոչ ետ փառս Աստուծոյ. եւ եղեալ որդ-
նալից՝ սատակեցաւ: Եւ բանն Աստուծոյ աճէր եւ բազ-
մանայր: 24:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր, ո՞վ կացցէ ի խորանի
քում. կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո:



## Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Դ. 24:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Հոգի է Աստուած, եւ երկրպագուացն նորա՝ հոգւով
եւ ճշմարտութեամբ պարտ է երկիր պագանել: Ասէ ցնա
կինն. Գիտեմ զի Մեսիա գայ՝ անուանեալն Քրիստոս.
յորժամ եկեսցէ նա՝ պատմեսցէ մեզ զամենայն: Ասէ ցնա
Յիսուս. Ես եմ՝ որ խօսիմս ընդ քեզ: Եւ յայն բան եկին
աշակերտքն նորա, եւ զարմանային՝ զի ընդ կնոջն խօսէր.
բայց ոչ ոք ասաց ի նոցանէ, թէ Զի՞նչ խնդրես, կամ
զի՞նչ խօսիս ընդ դմա: Եթող կինն զսափորն իւր եւ չոգաւ
ի քաղաքն, եւ ասէ ցմարդիկն. Եկայք տեսէք զայր մի, որ
ասաց ինձ զամենայն՝ որ ինչ իմ գործեալ է. միթէ նա՞ իցէ
Քրիստոսն: Ելին ի քաղաքէն եւ գային առ նա: Եւ մինչ
չեւ եկեալ էին նոքա, աղաչէին զնա աշակերտքն եւ ասէին.
Ռաբբի, հաց կեր: Նա ասէ ցնոսա. Ես կերակուր ունիմ
ուտել, զոր դուքն ոչ գիտէք: Ասէին աշակերտքն ընդ
միմեանս. Միթէ եբե՞ր ինչ ոք դմա ուտել: Ասէ ցնոսա
Յիսուս. Իմ կերակուր այն է՝ զի արարից զկամս այնորիկ՝ որ
առաքեացն զիս, եւ կատարեցից զգործն նորա: Ո՞չ դուք
ասէք՝ եթէ Այլ եւս չորք ամիսք են, եւ հունձք գան:
Ահաւասիկ ես ասեմ ձեզ. Ամբարձէք զաչս ձեր, եւ տեսէք
զարտորայսն, զի սպիտակացեալ են եւ ի հունձս հասեալ:
Եւ որ հնձէն՝ վարձս առնու, եւ ժողովէ զպտուղ ի կեանսն
յաւիտենականս. զի որ սերմանէն եւ որ հնձէ՝ հասարակ
ցնծասցեն: Յայսմ իսկ է բանն ճշմարիտ. զի այլ է որ սեր-
մանէ, եւ այլ է որ հնձէ: Ես առաքեցի զձեզ հնձել՝ զոր
ոչ դուք վաստակեցէք. այլք վաստակեցին, եւ դուք ի
վաստակս նոցա մտէք: Եւ ի քաղաքէն յայնմանէ Սամա-
րացւոց՝ բազումք հաւատացին ի նա, վասն բանի կնոջն
վկայելոյ՝ եթէ Ասաց ինձ զամենայն, որ ինչ իմ գործեալ է:
Իսկ իբրեւ եկին առ նա Սամարացիքն, աղաչէին զնա լինել
առ նոսա. եւ եղեւ անդ աւուրս երկուս: Եւ եւս բազումք
հաւատացին ի նա վասն բանին նորա: Եւ ասէին ցկինն, թէ
Ոչ այսուհետեւ վասն քո խօսիցդ հաւատամք, զի մեզէն
իսկ լուաք ի դմանէ, եւ գիտեմք եթէ դա է ճշմարտիւ
փրկիչ աշխարհաց: 42:

## ԵՐՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

### ԲԿ.

Ժամամուտ. Ահաւոր եւ սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ: Որ անսկիզբն ի Հօրէ՝ անճառաբար մարմնացաւ ի Կուսէն. խաչի համբերելով, եւ կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգեւեաց շնորհս:

Սղ. ԾԸ. Փրկեա զիս ի թշնամեաց իմոց Աստուած. յայնցանէ որ յարուցեալ են ի վերայ իմ՝ ապրեցո զիս:

ԾԹ. Աստուած, մերժեցեր եւ աւերեցեր զմեզ. բարկացար, եւ գթասցիս ի մեզ:

Կ. Լուր Աստուած աղօթից իմոց. եւ նայեա Տէր յաղօթս իմ:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԺԲ. 25:

Բառնաբաս եւ Սաւղոս դարձան յԵրուսաղեմէ՝ իբրեւ կատարեցին զպաշտօնն. առեալ էր ընդ իւրեանս եւ զՅովհաննէս՝ որ կոչեցեալն էր Մարկոս: Էին ոմանք յԱնտիոք ըստ եկեղեցւոյն մարգարէք եւ վարդապետք. Բառնաբաս, եւ Շմաւովն կոչեցեալն Նիւգէր, եւ Ղուկիոս Կիւրենացի, եւ Մանայեն դայեկորդի Հերովդի չորրորդապետի, եւ Սաւղոս: Մինչ դեռ ի պաշտաման Տեառն կային եւ պահէին, ասէ Հոգին սուրբ. Որոշեցէք ինձ զԲառնաբաս եւ զՍաւղոս ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ զդոսա: Յայնժամ պահեալ եւ աղօթս արարեալ, եդին ձեռն ի վերայ նոցա եւ արձակեցին: Եւ նոքա առաքեալք ի Հոգւոյն սրբոյ՝ իջին ի Սելեւկիա, եւ անտի նաւեցին ի Կիպրոս: Եւ հասեալ ի Սաղամինա, պատմէին զբանն Աստուծոյ ի ժողովուրդս Հրէիցն. ունէին եւ զՅովհաննէս պաշտօնեայ: Շրջեալ ընդ ամենայն կղզին մինչեւ ի Պափոս, գտին անդ այր զոմն մոգ սուտ մարգարէ՝ հրեայ, որում անուն էր Բարեյեսու, որ էր ընդ փոխանակի բդեշխին Սերգեայ Պօղոսի՝ առն իմաստնոյ. նորա աղաչեալ զԲառնաբաս եւ զՍաւղոս՝ խնդրէր լսել զբանն Աստուծոյ: Ընդդէմ եկաց նոցա Եղիմաս մոգ. քանզի այսպէս թարգմանի անուն նորա. խնդրէր շրջել զփոխանակ



բդեշխին ի հաւատոց: Իսկ Սաւղոս, որ եւ Պօղոսն, լցեալ Հոգւով սրբով հայեցաւ ի նա, եւ ասէ. Ո՛վ լի ամենայն նենգութեամբ եւ խորամանկութեամբ, որդի սատանայի, թշնամի ամենայն արդարութեան, ո՞չ լռես ի թիւրելոյ զճանապարհս Տեառն զուղիղս: Եւ արդ՝ ահա ձեռն Տեառն ի վերայ քո, եւ եղիցիս կոյր՝ չտեսանել զարեւ մինչեւ ի ժամանակ մի. եւ անդէն անկաւ ի վերայ նորա մէգ եւ խաւար, եւ շրջէր խնդրէր առաջնորդս: Յայնժամ տեսեալ փոխանակի բդեշխին զիրսն որ եղեն՝ հաւատաց, զարմացեալ ընդ վարդապետութիւնն Տեառն: ԺԳ. 12:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր թագաւորեաց, վայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Դ. 43:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ յետ երկուց աւուրց ել անտի եւ գնաց ի Գալիլեա: Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց՝ եթէ Մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի: Այլ յորժամ եկն նա ի Գալիլեա, ընկալան զնա Գալիլեացիքն. զի տեսեալ եւս էր զամենայն նշանսն, զոր արար յԵրուսաղէմ ի տօնին, քանզի եւ նոքա եկեալ էին ի տօնն: Եկն դարձեալ ի Կանա Գալիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի, եւ անդ էր թագաւորազն մի, որոյ որդի նորա հիւանդ կայր ի Կափառնաում: Նա իբրեւ լուաւ եթէ Յիսուս եկեալ է ի Հրէաստանէ ի Գալիլեա, եկն առ նա եւ աղաչէր, զի իջցէ եւ բժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ էր ի մեռանել: Ասէ ցնա Յիսուս. Եթէ ոչ նշանս ինչ եւ արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք: Ասէ ցնա թագաւորազն. Տէր, էջ, մինչ չեւ մեռեալ իցէ մանուկն իմ: Ասէ ցնա Յիսուս. Երթ, որդին քո կենդանի է: Եւ հաւատաց այրն բանին՝ զոր ասաց նմա Յիսուս, եւ գնաց: Եւ մինչ դեռ իջանէր, ընդառաջ եղեն նմա ծառայքն նորա, աւետիս ետուն եւ ասեն, թէ մանուկն նորա կենդանի է: Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեաց, եւ ասեն ցնա. Երէկ յեօթներորդ ժամու եթող զնա ջերմն: Գիտաց հայրն նորա եթէ յայնմ ժամու՝ յո-

*րում ասացն ցնա Յիսուս թէ Որդին քո կենդանի է. եւ հաւատաց ինքն եւ ամենայն տուն իւր: Զայս դարձեալ երկրորդ նշան արար Յիսուս եկեալ ի Հրէաստանէ ի Գալիլեա:* 54:

---

## ԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### ԳՉ.

*Ժամանաւ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:*

Սղ. ԿԱ. *Բայց միայն Աստուծոյ հնազանդ լեր անձն իմ. զի ի նմանէ է ինձ փրկութիւն:*

ԿԲ. *Աստուած Աստուած իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ. ծարաւեաց առ քեզ հոգի իմ, քանիպատիկ եւս եւ մարմին իմ:*

ԿԳ. *Լուր Աստուած աղօթից իմոց՝ յաղաչել ինձ առ քեզ. յերկիւղէ թշնամւոյն փրկեա զանձն իմ:*

*Ընթերցուած ի Գործոց առաքելոց:*

ԳԼ. ԺԳ. 13.

*Եւ ամբարձեալ ի Պամփէ Պօղոսեանց՝ եկին ի Պերգէ Պամփիլեայ. Յովհաննէս մեկնեալ ի նոցանէ՝ դարձաւ յԵրուսաղէմ: Եւ նոքա գնացեալ ի Պերգեայ՝ եկին յԱնտիոք Պիսիդեայ. եւ մտեալ ի ժողովուրդն յաւուր շաբաթուց՝ նստան: Եւ յետ ընթեռնլոյ զօրէնսն եւ զմարդարէս, առաքեցին առ նոսա ժողովրդապետքն եւ ասեն. Ա՛րք եղբարք, եթէ իցեն ի ձեզ բանք մխիթարութեան առ ժողովուրդդ՝ խօսեցարուք: Յոտն եկաց Պօղոս՝ շարժեաց զձեռն եւ ասէ. Ա՛րք Իսրայէլացիք եւ ոյք երկնչիք յԱստուծոյ, լուարուք: Աստուած ժողովրդեանս այսորիկ Իսրայէլի ընտրեաց զհարսն մեր, եւ զժողովուրդն բարձրացոյց ի պանդխտութեան յերկրին Եգիպտացւոց, եւ ի բազուկ բարձր եհան զնոսա անտի: Եւ իբրեւ քառասնամեայ ժամանակ կերակրեաց զնոսա յանապատի: Եւ քա-*



*կեալ աղգս եօթն յերկրին Քանանու՝ ժառանգեցոյց նոցա զերկիր նոցա իբրեւ ամս չորեքհարիւր եւ յիսուն. եւ յետ այսորիկ ետ նոցա դատաւորս մինչեւ ի Սամուէլ մարգարէ: Եւ անտի յառաջ խնդրեցին թագաւոր. եւ ետ նոցա Աստուած զՍաւուղ որդի Կիսեայ՝ այր յազգէ Բենիամինի, ամս քառասուն: Եւ իբրեւ փոխեաց զնա, յարոյց նոցա զԴաւիթ թագաւոր, որում եւ ասացաւ վկայութեամբ. Գտի զԴաւիթ որդի Յեսսեայ՝ այր ըստ սրտի իմում, որ արասցէ զամենայն զկամս իմ: Ի սորա զաւակէ Աստուած ըստ աւետեացն յարոյց Իսրայէլի զփրկիչն Յիսուս. ըստ յառաջագոյն քարոզութեան Յովհաննու առաջի երեսաց մտին նորա, մկրտութիւն ապաշխարութեան՝ ամենայն ժողովրդեանն Իսրայէլի: Եւ իբրեւ լնոյր Յովհաննէս զընթացսն, ասէր: Զո՞ ոք կարծէք զինէն՝ թէ իցեմ. չեմ ես այն. այլ ահա գայ զկնի իմ, որում չեմ արժանի զկօշիկս ոտիցն լուծանել: Ա՛րք եղբարք՝ որդիք Աբրահամեան տոհմին եւ որ ի ձեզ երկիւղածք իցեն յԱստուծոյ, ձեզ բանս այս փրկութեան առաքեցաւ: Բայց որ բնակեալ են յԵրուսաղէմ եւ իշխանք նոցա՝ անծանօթ եղեն ի նմանէ. եւ ըստ բարբառոյ մարգարէիցն, որ զամենայն շաբաթսն ընթեռնուին, դատեալ կատարեցին. եւ ոչ մի ինչ պատճառս մահու գտեալ՝ խնդրեցին ի Պիղատոսէ սպանանել զնա: Եւ իբրեւ կատարեցին զամենայն՝ որ վասն նորա գրեալ էր, իջուցեալ ի փայտէն՝ եդին ի գերեզմանի: Այլ Աստուած յարոյց զնա ի մեռելոց. որ երեւեցաւ աւուրբք բազմօք այնոցիկ, որ ելեալ էին ընդ նմա ի Գալիլեէ յԵրուսաղէմ, որք եւ արդ իսկ վկայք են նորա առ ժողովուրդն: Եւ մեք ձեզ աւետարանեմք զխոստումն՝ որ առ հարսն եղեալ էր: Զի զնոյն Աստուած կատարեաց առ մեզ որդիս նոցա՝ յարուցեալ զՅիսուս, որպէս եւ ի սաղմոսին գրեալ է յերկրորդում. Որդի իմ ես դու, եւ ես այսօր ծնայ զքեզ: Եւ զի յարոյց զնա ի մեռելոց, եւ ոչ եւս դառնալոց է յապականութիւն, այսպէս ասէ, եթէ Տաց ձեզ զսրբութիւնսն Դաւթի զհաւատարիմս: Քանզի եւ ի միւսումն ասէ. Ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն: Այլ Դաւիթ յազգի անդ իւրում պաշտեաց եւ ի կամս Աստուծոյ ննջեաց, եւ յաւելաւ առ հարս իւր եւ ետես զապականութիւն: Բայց զոր Աստուած յարոյց՝ ոչ ետես զապականութիւն:*

Յայտնի լեսցի ձեզ, ա՛րք եղբարք, զի սուաւ ձեզ թողութիւն մեղաց առեսարանի. եւ յամենայն՝ յորմէ ոչ կարացէք օրինաքն Մովսիսի արդարանալ, սուաւ ամենայն որ հաւատայ՝ արդարանայ: Ոգոյշ կացէք՝ գուցէ եկեսցէ ի վերայ ձեր ասացեալն ի մարգարէէն. Տեսէք ա՛րհամարհոտք եւ զարմացարուք եւ եղծարուք, զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր, գործ՝ որում ոչ հաւատայցէք, եթէ ոք պատմեսցէ ձեզ: Եւ իբրեւ ելին անտի, աղաչէին ի միւսում շաբաթու խոսել նոցա զնոյն բանս: Իբրեւ արձակեցաւ ժողովուրդն, զհետ երթային բազումք ի Հրէից անտի եւ ի պաշտօնէիցն եկամտից՝ զՊօղոսի եւ զԲառնաբայ, որք խոսէին ընդ նոսա եւ հաւանեցուցանէին զնոսա կալ ՚ի շնորհն Աստուծոյ: 43:

Ալէլուիա, ալէլուիա. Յնծացէք առ Աստուած, օգնական է մեր. աղաղակեցէք առ Աստուած Յակովբայ:

Սրբոյ Առաքելոյս որ ըստ Յովհաննու.

Գլ. ե. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յետ այսորիկ ածն էր Հրէից, եւ եկ (Յիսուս) Երուսաղէմ: Եւ էր Երուսաղէմ ի Պրոպատիկէ աւազանին, որ կոչէր եբրայեցերէն Ղեթհեզդա, հինգ սրահ, յորս անկեալ զնէր բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, գօսացելոց, որ ակն ունէին ջրոյն յուզելոյ: Եւ հրեշտակ Տեառն ըստ ժամանակի իջանէր յաւազանն եւ յուզէր զջուրն. եւ որ նախ ի շարժումն ջուրցն իջանէր՝ բժշկէր, ոչ ունելով նշան հիւանդութեան: Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն եւ ութ ամ էր ի հիւանդութեան իւրում: Զնա իբրեւ եսես Յիսուս՝ զի անկեալ զնէր, եւ գիտաց եթէ բազում ժամանակք են այնուհետեւ, ասէ ցնա. Կամիս ողջ լինել: Պատասխանի եւ նմա հիւանդն. Տէր ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզեցին՝ արկցէ զիս յաւազանն. եւ մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ: Ասէ ցնա Յիսուս. Ելի, առ զմահիճս քո եւ գնա: Եւ ողջացաւ այրն, եւ յարեաւ՝ առ զմահիճս իւր եւ շրջէր. եւ էր շաբաթ յաւուրն յայնմիկ: Ասեն Հրեայքն ցբժշկեալն. Շաբաթ է,



եւ ոչ է արժան առնուլ քեզ զմահիճս քո: Պատասխանի ետ նոցա եւ ասէ: Որ բժշկեացն զիս՝ նա ասաց ցիս: Առ զմահիճս քո եւ գնա: Հարցին ցնա եւ ասեն. Ո՞վ է այրն որ ասաց ցքեզ՝ Առ զմահիճս քո եւ շրջեաց: Եւ բժշկեալն ոչ գիտէր թէ ո՛վ էր. քանզի Յիսուս խոյս ետ վասն ամբոխին ի տեղւոջէ անտի: Յետ այսորիկ գտանէ զնա Յիսուս ի տաճարին եւ ասէ ցնա. Ահաւասիկ ողջացար, մի՛ եւս մեղանչեր, զի մի՛ չար եւս ինչ լինիցի քեզ: Գնաց այրն եւ պատմեաց Հրէիցն, եթէ Յիսուս էր որ բժշկեացն զիս: Եւ վասն այնորիկ հալածէին զՅիսուս Հրեայք, զի զայն առնէր ի շաբաթու: Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա. Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ ես գործեմ: Վասն այնորիկ առաւել խնդրէին Հրեայքն սպանանել զնա, զի ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլ եւ հայր իւր կոչէր զԱստուած, եւ հաւասար առնէր զանձն Աստուծոյ: 18:

---

## ՉՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՑԻՆԱՆՑ

Գ-կ.

Յ-ԱՄԱՌՕ-Ա. Վարիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարուԹեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Սղ. կդ. Վասն վայելչ օրհնուԹիւն Աստուած ի Սիովն. եւ քեզ տացին աղօԹք Երուսաղէմ:

կե. Ընդաղակեցէք առ Աստուած ամենայն երկիր. սաղմոս ասացէք անուան նորա, եւ տուք զփառս օրհնուԹեան նորա:

կզ. Աստուած ողորմեա մեզ եւ օրհնեա զմեզ. երեւեցո զերեսս քո ի մեզ եւ ողորմեա մեզ:

ԸնԹերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԺԳ. 44:

Եւ ի գալ միւսոյ շաբաթուն՝ գրեթէ ամենայն քաղաքն ժողովեցաւ լսել զբանն Աստուծոյ: Իբրեւ տեսին Հրեայքն զամբոխն՝ լցան նախանձու, եւ ընդդէմ դարձեալ

ասացելոցն ի Պօղոսէ՝ հայհոյէին: Համարձակեալ Պօղոսի եւ Բառնաբայ՝ ասէին. Առ ձեզ նախ պարտ էր խօսել զբանն Աստուծոյ. եւ քանզի դուք մերժեցէք զնա եւ ոչ արժանիս համարիք զձեզ կենացն յաւիտենականաց, ահաւասիկ դառնամք ի հեթանոսս: Զի այսպէս պատուիրեաց մեզ Տէր. Եդի զքեզ ի լոյս հեթանոսաց՝ լինել քեզ ի փրկութիւն մինչեւ ի ծագս երկրի: Զայս լուեալ հեթանոսացն՝ ուրախ լինէին եւ փառաւոր առնէին զբանն Տեառն. եւ հաւատացին՝ որք էին կարգեալ ի կեանսն յաւիտենականս: Եւ շրջէր բանն Աստուծոյ ընդ ամենայն գաւառն: Բայց Հրեայքն գրգռեցին զպաշտօնեայ կանայս զգաստս եւ զգլխաւորս քաղաքին, եւ յարուցեալ հալածանս ի վերայ Պօղոսի եւ Բառնաբայ՝ հանին զնոսա ի սահմանացն իւրեանց: Եւ նոցա թօթափեալ զփոշի ոտից ի վերայ նոցա, եկին Իկոնիոն: Եւ աշակերտքն լնուին խնդութեամբ եւ Հոգւով սրբով: Եւ եղեւ Իկոնիոն ի միասին մտանել նոցա ի ժողովուրդ Հրէիցն, եւ խօսել նոյնպէս. մինչեւ հաւատալ Հրէից եւ Յունաց բազմաց յոյժ: Բայց անհաւան Հրեայքն յարուցին եւ չարացուցին զանձինս հեթանոսացն ի վերայ եղբարց: Բազում ժամանակս շրջէին համարձակեալք Տեառն վկայութեամբ, բանիւ շնորհացն իւրոց. եւ տալ նշանս եւ արուեստս լինելոյ ի ձեռս նոցա: Եւ եղեն հերձուածք ի բազմութեան քաղաքին. ոմանք էին ի Հրեայսն, եւ ոմանք յառաքեալսն: Իբրեւ եղեւ դիմել հեթանոսացն եւ Հրէից իշխանօքն իւրեանց՝ ի թշնամանել եւ ի քարկոծել զնոսա, ազդ եղեալ նոցա՝ փախեան ի քաղաքս Լիկոնացւոց, ի Լիւստրա եւ ի Դերբէ եւ շուրջ զգաւառաւն, եւ անդ աւետարանէին: ԺԴ. 6:

Ալէլուիա, ալէլուիա. Գովեա Երուսաղէմ զՏէր. եւ օրհնեա զԱստուած քո Սիովն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ե. 19:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Պատասխանի ետ (Յիսուս) եւ ասէ ցնոսա. Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ կարէ Որդի մարդոյ առնել յանձնէ եւ ոչ



ինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն եւ Որդին նմին նման գործէ: Զի Հայր սիրէ զՈրդի, եւ զամենայն ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն առնէ. եւ մեծամեծս եւս քան զսոյնս ցուցանէ նմա զգործս, ընդ որ դուքդ զարմանայք: Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս եւ կենդանի առնէ, նոյնպէս եւ Որդի զորս կամի կենդանի առնէ: Եւ ոչ եթէ Հայր դատի զոք, այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ իւրոյ: Զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի՝ որպէս պատուեն զՀայր: Որ ոչ պատուէ զՈրդին, ոչ պատուէ զՀայր զառաքիչն նորա: Ամէն ամէն ասեմ ձեզ. զի Որ զբանն իմ լսէ, եւ հաւատայ այնմ որ առաքեացն զիս, ընդունի զկեանս յաւիտենականս. եւ ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս: Ամէն ամէն ասեմ ձեզ. զի Գայ ժամանակ եւ արդէն իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ, եւ որք լսիցենն՝ կեցցեն: Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս ետ եւ Որդւոյ ունել կեանս յանձին իւրում: Եւ իշխանութիւն ետ նմա դատաստան առնել: Եւ զի Որդի մարդոյ է՝ ընդ այն զի՞ զարմանայք. զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որ ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա, եւ եկեսցեն արտաքս. որոց զբարիս գործեալ իցէ՝ ի յարութիւն կենաց, եւ որոց զչար արարեալ՝ ի յարութիւն դատաստանաց: Ոչ կարեմ ես յանձնէ առնել եւ ոչ ինչ. այլ որպէս լսեմ՝ դատիմ, եւ դատաստանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս: 30:

---

## ՉՈՐՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### ԳՉ.

Ժամամուտ. Քանզի յարեաւ ի մեռելոց Քրիստոս Աստուած յաւիտենից արարիչ, եւ յարութիւն ազգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց, եւ ամենայն զուարթունք երկնից. ընդ որս գոչելով ասեմք. Փառք սոսկալի յարութեան քոյ Տէր:

Սղ· կէ· Յարիցէ Աստուած եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. փախիցենատելիք նորա յերեսաց նորա:

կը· Կեցո զիս Աստուած, զի հասին ջուրք յանձն իմ. ընկղայ ես ի խորս անդնդոց, ուր ոչ գոյ հինձ հանգիստ:

կթ· Աստուած, յօգնել հինձ նայեա. եւ Տէր յընկերել հինձ փութեա:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց·

Գլ· ԺԴ· 7:

Եւ այր ոմն Լիւստրացի տկար յոտից նստէր՝ կաղ յորովայնէ մօր իւրոյ, որոյ երբեք չէր գնացեալ: Սա լուաւ զիւսան Պօղոսի, որոյ հայեցեալ ի նա եւ տեսեալ՝ թէ ունի հաւատս փրկութեան, ասէ մեծաձայն. Ւրէզ ասեմ՝ յանունն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ յոտն կաց ի վերայ ոտից քոց ուղեղ. եւ վազվազէր եւ գնայր: Եւ ժողովրդոցն տեսեալ զոր արարն Պօղոս, բարձին զձայնս իւրեանց լեկաոնա-րէն եւ ասեն. Աստուածք նմանեալ մարդկան իջեալ առ մեզ: Եւ կոչէին զԲառնաբաս Դիոս, եւ զՊօղոս Երմէս, քանզի նա էր առաջնորդ բանին: Իսկ քուրմն Դիոսի՝ որ կայր առաջի քաղաքին, ցուլս եւ պսակս հասուցեալ ի դուռն՝ հանդերձ բազմութեամբքն՝ կամէր զոհել: Եւ լուեալ առաքելոցն Բառնաբայ եւ Պօղոսի, պատառեալ զհանդերձս իւրեանց՝ արտաքս վազեցին յամբոխն, աղաղակէին եւ ասէին. Ա՛րք, զի՞նչ գործէք զայդ· մեք ձեզ նմանողք կարեօք մարդիկ եմք, աւետարանել ձեզ յայդպիսի ունայնութեանց դառնալ յԱստուած կենդանի, որ արար զերկինս եւ զերկիր եւ զծով եւ զամենայն որ ի նոսա. որ յանցեալ ազգն թոյլ ետ ամենայն հեթանոսաց գնալ ի ճանապարհս իւրեանց: Եւ սակայն ոչ եթէ առանց վկայութեան զինքն եթող, բարերարութեամբն տալ յերկնից ձեզ անձրեւս եւ ժամանակս պտղաբերս, լնուլ կերակրովք եւ ուրախութեամբ զսիրտս ձեր: Եւ զայս ասացեալ՝ հազիւ լռեցուցանէին զժողովուրդն ի չզոհելոյ նոցա, այլ գնալ յիւրաքանչիւր տեղիս: 17:

Ընկերութիւն, աղերսիս· Դուխ եղերս սաղէմ զՏէր· եւ օրհնեա զԱստուած քո Սիովն:



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու·

Գլ· ե· 31:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ·

Եթէ ես վկայեմ վասն իմ, վկայութիւն իմ չէ ճշմարիտ: Այլ է՝ որ վկայէ վասն իմ. եւ դուք գիտէք, եթէ ճշմարիտ է վկայութիւնն զոր վկայեաց վասն իմ: Դուք առաքեցէք առ Յովհաննէս, եւ վկայեաց ճշմարտութեանն: Այլ ես ոչ եթէ ի մարդկանէ առնում վկայութիւն. այլ զայս ասեմ՝ զի դուք ապրեսջիք: Նա էր ճրագն՝ որ լուցեալ էր եւ ծագէր. եւ դուք կամեցարուք ցնծալ առ ժամանակ մի ի լոյս նորա: Այլ ես ունիմ վկայութիւն մեծ եւս քան զՅովհաննու. զգործսն՝ զորս ետ ցիս Հայր՝ զի կատարեցից զնոսա, նոքին իսկ գործքն զոր գործեմ, վկայեն վասն իմ, եթէ Հայր առաքեաց զիս: Եւ որ առաքեացն զիս Հայր՝ նա վկայեաց վասն իմ: Դուք ոչ զձայն նորա երբեք լսեալդ, եւ ոչ զտեսիլ նորա տեսէք, եւ ոչ զբան նորա ունիք ի ձեզ բնակեալ. զի զոր նա առաքեաց՝ դուք նմա ոչ հաւատայք: Քննեցէք զգիրս. զի դուք համարիք նոքօք ունել կեանս յաւիտենականս. եւ նոքին իսկ են՝ որ վկայեն վասն իմ, որովք համարիքն ունել կեանս: Եւ դուք ոչ կամիք գալ առ իս՝ զի կեանսն ունիցիք: Ես փառս ի մարդկանէ ոչ առնում: Այլ գիտեմ զձեզ, եթէ զսէրն Աստուծոյ ոչ ունիք յանձինս: Ես եկի յանուն Հօր իմոյ, եւ ոչ ընդունիք զիս. եթէ այլ ոք եկեսցէ յիւր անուն, զնա ընդունիցիք: Ո՞ւմպէտ կարէք դուք հաւատալ, զի փառս ի միմեանց առնուք. եւ զփառս զառ ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք: Մի համարիք՝ եթէ ես չարախօս լինիմ ձեզ առ Հօր· գոյ որ չարախօս կայ զձէնջ՝ Մովսէս, յոր դուքն յուսացեալ էք: Ո՛ւ եթէ հաւատայիք դուք Մովսիսի, հաւատայիք արդեօք եւ ինձ, զի նա վասն իմ իսկ գրեաց: Ո՛ւ եթէ նորա գրոցն ոչ հաւատայք, զիա՞րդ իմոց բանիցս հաւատայցէք: 47:

---

## ՁՈՐՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Գ·կ·

Ժամահա՛ս· Ընդհատ եւ պանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ: Որ անսկիզբն ի Հօրէ՝ անձառաբար մարմնա-

ցաւ ի Կուսէն. խաչի համբերելով, եւ կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգեւեաց շնորհս։

Սղ. Հ. Ի քեզ Տէր յուսացայ, մի ամաչեցից յաւիտեան. յարդարութեան քում փրկեա զիս եւ ապրեցո զիս։

ՀԱ. Աստուած զիրաւունս քո արքայի տուր. եւ զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի։

ՀԲ. Իբրեւ զի բարի է Իսրայէլի Աստուած, եւ ոյք ուղիղ են սրտիւք։

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԺԴ. 18։

Եւ ի շրջելն նոցա եւ յուսուցանել՝ եկին հասին յԱնտիոքէ եւ յԻկոնիէ Հրեայք. եւ ի վիճել նոցա համարձակութեամբ՝ պատրեցին զժողովուրդսն ի բաց կալ ի նոցանէ, եւ ասէին՝ թէ Ոչ ինչ ճշմարտութիւն ասեն, այլ զամենայն ստեն. եւ քարկոծեալ զՊօղոս՝ քարշեցին արտաքս քան զքաղաքն, եւ համարէին զնա մեռեալ։ Եւ ի պատել զնովաւ աշակերտացն՝ յարեաւ եմուտ ի քաղաքն, եւ ի վաղիւ անդր ել Բառնաբաւ հանդերձ ի Դերբէ։ Աւետարանեալ ի քաղաքին յայնմիկ եւ աշակերտեալ զբազումս, դարձան ի Լիւստրա եւ յԻկոնիոն եւ յԱնտիոքիա. հաստատել զանձինս աշակերտելոցն եւ մխիթարել՝ կալ հաստատուն ի հաւատսն. եւ թէ Բազում նեղութեամբք պարտ է մեզ մտանել յարքայութիւն Աստուծոյ։ Ձեռնադրեցին նոցա ըստ եկեղեցւոյն երիցունս. աղօթս արարեալ հանդերձ պահովք, յանձն արարին զնոսա Տեառն՝ յոր հաւատացեալն էին։ Եւ շրջեալ ընդ Պիսիդայ՝ եկին ի Պամփիլիա։ Եւ խօսեցեալ ի Պերգէ զբանն Տեառն, իջին յԱտալիա։ Եւ անտի նաւարկեալ՝ գնացին յԱնտիոք. ուստի էին յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ՝ ի գործն զոր կատարեցին։ Եկեալ եւ ժողովեալ զեկեղեցին՝ պատմեցին որչափ արար Աստուած ընդ նոսա, եւ զի եբաց հեթանոսաց դուռն հաւատոց։ Շրջէին ժամանակս ոչ սակաւս ընդ աշակերտսն։ 27։

Ալէլուիա, ալէլուիա. Տէր, ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. եւ ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ։



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Զ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յետ այսորիկ գնաց (Յիսուս) յայնկոյս ծովուն Գալիլեացւոց Տիբերեայ։ Եւ զհետ երթայր նորա ժողովուրդ բազում. զի տեսանէին զնշանսն՝ զոր առնէր ի վերայ հիւանդաց։ Ել ի լեառն Յիսուս, եւ անդ նստէր աշակերտօքն հանդերձ։ Եւ էր մերձ զատիկ տօնն Հրէից։ Բարձ ի վեր զաչս իւր Յիսուս եւ ետես, զի ժողովուրդ բազում գայր առ նա, ասէ ցՓիլիպպոս. Ուստի՞ գնեսցուք հաց՝ զի կերիցեն դոքա։ Զայս ասէր փորձելով զնա. այլ ինքն գիտէր զինչ առնելոց էր։ Պատասխանի ետ նմա Փիլիպպոս. Երկերիւր դահեկանի հաց չէ դոցա բաւական, թէպէտ եւ իւրաքանչիւր ոք սակաւ ինչ առնուցու։ Ասէ ցնա մի յաշակերտացն նորա՝ Անդրէաս, եղբայր Սիմովնի վիմի. Է աստ պատանեակ մի՝ որ ունի հինգ նկանակ գարեղէն եւ երկուս ձկունս. այլ այն զի՞նչ է առ այդչափ մարդիկ։ Ասէ Յիսուս. Բազմեցուցէք զմարդիկդ։ Եւ էր խոտ յոյժ ի տեղւոջն. եւ բազմեցան մարդիկն թուով իբրեւ հինգ հազար։ Եւ առ զհացն Յիսուս եւ գոհացաւ, եւ բաշխեաց բազմականացն. նոյնպէս եւ ի ձկանցն որչափ եւ կամեցան։ Եւ իբրեւ յագեցան, ասէ ցաշակերտսն. Ժողովեցէք զնշխարեալ կոտորսդ՝ զի մի՞ ինչ կորիցէ։ Ժողովեցին, եւ լցին երկոտասան սակառի զկոտորոցն՝ ի հինգ գարեղէն նկանակէ անտի, որ յաւելաւ ի կերողացն։ Իսկ մարդիկն իբրեւ տեսին զնշանսն զոր արար՝ ասէին, եթէ Սա է ճշմարիտ մարգարէն, որ գալոց էր յաշխարհ։ 14։

---

## ՉՈՐՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԱՁ.

Ժամամուտ. Քանզի յարեաւ ի մեռելոց Քրիստոս Աստուած յաւիտենից արարիչ, եւ յարութիւն ազգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց, եւ ամենայն զուարթունք երկնից. ընդ որս գոչելով ասեմք. Փառք սոսկալի յարութեան քոյ Տէր։

Սղ. ՀԳ. Ընդէ՞ր մերժեցեր Աստուած իսպառ. բարկացաւ սրտմտութիւն քո ի վերայ խաշին արօտի քոյ:

ՀԴ. Խոստովան եղիցուք առ քեզ Աստուած. խոստովան եղիցուք եւ կարդասցուք զանուն սուրբ քո:

ՀԵ. Յայտնի է ի Հրէաստանի Աստուած. եւ յԻսրայէլ մեծ է անուն նորա:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԺԵ. 1:

Եւ ոմանք իջեալ ի Հրէաստանէ՝ ուսուցանէին զեղբարս, Եթէ ոչ թլփատիք ըստ օրինացն Մովսիսի՝ ոչ կարէք ապրել: Եւ ի լինել ոչ սակաւ հակառակութեան եւ խնդրոյ՝ Պօղոսի եւ Բառնաբայ ընդ նոսա, եդին ելանել Պօղոսի եւ Բառնաբայ եւ ոմանց ի նոցանէ՝ առ առաքեալսն եւ երիցունս յԵրուսաղէմ վասն խնդրոյն այնորիկ: Նոքա յուղարկեալք յեկեղեցւոյն, շրջեցան ընդ Փիւնիկէ եւ ընդ Սամարիա, պատմէին զդարձն հեթանոսաց, եւ առնէին ուրախութիւն մեծ ամենայն եղբարց: Եւ հասեալ յԵրուսաղէմ՝ ընկալեալք յեկեղեցւոյն եւ յառաքելոցն եւ յերիցանց՝ պատմեցին որչափ ինչ արար ընդ նոսա Աստուած: Յարեան ոմանք ի հերձուածոյն փարիսեցւոց հաւատացեալք, եւ ասեն թէ Պարտ է թլփատել զդոսա եւ պատուիրել պահել զօրէնսն Մովսիսի: Եւ ժողովեցան առաքեալքն եւ երիցունք տեսանել վասն բանիս այսորիկ: Եւ յետ բազում խնդիր լինելոյ՝ յոտն եկաց Պետրոս եւ ասէ ցնոսա. Ա՛րք եղբարք, դուք ինքնին գիտէք զի յաւուրցն առաջնոց ի միջի ձերում ընտրեաց Աստուած բերանով իմով լսել հեթանոսաց բանին աւետարանի եւ հաւատալ. եւ սրտագէտն Աստուած վկայեաց նոցա, տալով նոցա զՀոգին սուրբ՝ որպէս եւ մեզ. եւ ոչ ինչ ընտրութիւն արար ի մէջ նոցա եւ մեր, հաւատովք սրբեալ զսիրտս նոցա: Արդ՝ ընդէ՞ր փորձէք զԱստուած, դնել լուծ ի վերայ պարանոցի աշակերտացն, զոր ոչ հարքն մեր եւ ոչ մեք կարացաք բառնալ: Այլ շնորհօքն Տեառն Յիսուսի Քրիստոսի հաւատամք ապրել, զոր օրինակ եւ նոքա: Լռեաց ամենայն ժողովուրդն, եւ լսէին Բառնաբայ եւ Պօղոսի



պատմելոյն, որչափ արար Աստուած նշանս եւ արուեստս ի հեթանոսս ի ձեռն նոցա: 12:

Ալէլուիա, ալէլուիա. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոնն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Զ. 15:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Իբրեւ գիտաց եթէ գալոց են յափշտակել զնա՝ զի արասցեն զնա թագաւոր, գնաց դարձեալ ի լեառնն միայն: Եւ իբրեւ երեկոյ եղեւ, իջին աշակերտքն նորա ի ծովեզրն: Եւ մտեալ ի նաւ՝ գնացին յայնկոյս ծովուն ի Կափառնաում. եւ իբրեւ նսեմացաւ, եւ չեւ եւս եկեալ էր առ նոսա Յիսուս, եւ ծովն ի սաստիկ հողմոյ շնչելոյ յուզէր: Եւ վարեալ իբրեւ ասպարէզս քսան եւ հինգ կամ երեսուն, տեսանէին զՅիսուս՝ զի գնայր ի վերայ ծովուն եւ մերձ էր ի նաւն, զարհուրեցան յոյժ: Նա ասէ ցնոսա. Ես եմ, մի՛ երկնչիք: Եւ կամէին զնա ընդունել ի նաւն. եւ վաղվաղակի եհաս նաւն յերկիրն՝ յոր երթային: 21:

---

## ՉՈՐՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### ԱԿ.

Ժամամուտ. Ահաւոր եւ սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ: Որ անսկիզբն ի Հօրէ՝ անճառաբար մարմնացաւ ի Կուսէն. խաչի համբերելով, եւ կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգեւեաց շնորհս:

Սղ. ՀԶ. Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի. ձայնիւ իմով առ Աստուած, եւ նայեցաւ առ իս:

ՀԷ. Նայեցարուք ժողովուրդք յօրէնս իմ. խոնարհեցուցէք զունկն ձեր ի բանս բերանոյ իմոյ:

ՀԸ. Աստուած, մտին հեթանոսք ի ժառանգութիւն քո. պղծեցին զտաճար սուրբ քո:

ընթերցուած ի Գործոց առաքելոց.

ԳԼ· ԺԲ· 13:

Եւ յետ լռելոյն նոցա՝ պատասխանի ետ Յակովբոս եւ ասէ. Ա՛րք եղբարք, լուարուք ինձ. Հ՚մուտն պատմեաց՝ որպէս յառաջագոյն այց արար Աստուած առնուլ ժողովուրդ ի հեթանոսաց՝ անուան իւրոյ: Եւ այնմ միաբանին բանք մարգարէիցն, որպէս եւ գրեալ է. Յետ այսորիկ դարձայց եւ շինեցից զյարկն Դաւթի զանկեալն, եւ զկործանեալն նորա վերստին շինեցից եւ կանգնեցից զնա. որպէս զի ինդրեսցեն ճնացորդք մարդկան զՏէր. եւ ամենայն հեթանոսք՝ յորոց վերայ կոչեցեալ է անուն իմ, ասէ Տէր, որ առնէ զայս ամենայն յայտնի է ի յաւիտեանցն (Տեառն գործ իւր): Վասն որոյ եւ ես իրաւունս համարիմ, մի նեղել զայնոսիկ՝ որք ի հեթանոսացն դառնան առ Աստուած: Այլ տալ թուղթ առ նոսա, խորշել ի կերակրոց կռոց եւ ի պոռնկութենէ եւ ի մեռելոտից եւ յարինէ: Օի Մովսէս յազգացն առաջնոց ըստ քաղաքաց զքարոզիչսն իւր ունի՝ ի ժողովն ըստ ամենայն շաբաթուց ընթերցեալ: Յայժամ հաճոյ թուեցաւ առաքելոցն եւ երիցանցն եւ ամենայն եկեղեցւոյն, արս ընտրեալս ի նոցանէ առաքել Անտիոք ընդ Պօղոսի եւ ընդ Բառնաբայ, զՅուդա՝ զկոչեցեալն Բարսաբայ, եւ զՀ՚ղա՝ արս գլխաւորս, գրեալ առ եղբարս ի ձեռն նոցա զայս ինչ. Առաքեալք եւ երիցունք եւ եղբարք, Անտիոք եւ ի Սիւրիա եւ ի Կիլիկիա եղբարցդ՝ որ ի հեթանոսաց էք, ողջոյն: Քանզի լուաք՝ թէ ոմանք իրրեւ ի մէնջ ելեալ՝ խռովեցուցին զձեզ բանիւք, խախտել զանձինս ձեր. ասեն՝ թլփատել եւ պահել զօրէնսն՝ որոց ոչ հրամայեցաք: Հաճոյ թուեցաւ մեզ միաբան ժողովելոցս, արս ընտրեալս յղել առ ձեզ ընդ սիրելիս մեր՝ ընդ Բառնաբայ եւ ընդ Պօղոսի. արք՝ որք մատնեցին զանձինս իւրեանց վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ուրդ՝ առաքեցաք զՅուդա եւ զՀ՚ղա, եւ նոցա ի բանից զնոյն պատմել: Օի հաճոյ թուեցաւ Հոգւոյն սրբոյ եւ մեզ, մի՛ ինչ աւելի բեռն դնել ձեզ, բայց միայն ի կարեւորացս յայտցանէ: Ի բաց կալ ի զոհելոց կռոց եւ յարինէ եւ ի հեղձուցելոյ եւ ի պոռնկութենէ. յորոց պահեալ զանձինս բարւոք գործէք. ողջ լերուք: Եւ նոքա արձակեալք՝ իջին Անտիոք, եւ ժողովեալ



զժողովուրդն՝ եառուն զթուղթն: Եւ ընթերցեալ՝ ուրախ եղեն ի վերայ մխիթարութեանն: Յուդա եւ Հ՚ղա, զի եւ նոքա մարգարէք էին, բանիւք բազմօք մխիթարեցին զեղբարս եւ հաստատեցին: Եւ եղեալ անդ ժամանակս՝ արձակեցան խաղաղութեամբ յեղբարց առ առաքեալսն: Եւ հաճոյ թուեցաւ Հ՚ղային մնալ անդէն: Պայց Պօղոս եւ Բառնաբաս զօրէին Անտիոք, ուսուցանել եւ աւետարանել եւ այլովք բազմօք զբանն Տեառն: 35:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր, ով կացցէ ի խորանի քում. կամ ով բնակեսցէ ի լեառն սուրբ քո:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

ԳԼ· Զ· 22:

Ած Տերամբ մերով Յիսուսիս Քրիստոսիս.

Ի վաղիւ անդր ժողովուրդն՝ որ կայր յայնկոյս ծովուն, տեսանէր թէ այլ նաւ ոչ գոյր անդ՝ բայց միայն ի միոյն, յոր մտին աշակերտքն Յիսուսի. եւ զի չէր մտեալ Յիսուս ընդ աշակերտսն իւր ի նաւն, բայց միայն աշակերտքն նորա գնացին: Իրրեւ այլ նաւք գային ի Տիբերեայ, մօտ յայն տեղին՝ ուր զՀացն կերան: Իսկ իրրեւ ետես ժողովուրդն եթէ Յիսուս ոչ է անդ եւ ոչ աշակերտքն նորա, առին նոքա զնաւսն, եւ եկին ի Կափառնաում խնդրել զՅիսուս: Եւ իրրեւ գտին զնա յայնկոյս ծովուն, ասեն ցնա. Ռաբբի, երբ եկիր այսր: Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. Ամէն ամէն ասեմ ձեզ. խնդրէք զիս, իրրեւ ոչ եթէ զի նշանս ինչ տեսէք, այլ զի կերայք ի հացէ անտի եւ յագեցարուք: Գործեցէք մի զկորստական կերակուրն, այլ զկերակուրն, որ մնայ ի կեանն յաւիտենականս, զոր Որդին մարդոյ տացէ ձեզ. քանզի զնա Հայր կնքեաց Աստուած: Ասեն ցնա. Օ՞րինչ առնիցեմք՝ զի զգործսն Աստուծոյ գործեսցուք: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Այս է գործն Աստուծոյ, զի հաւատասջիք յայն՝ որ առաքեացն զնա: Ասեն ցնա. Օ՞րինչ նշան առնիցես՝ զի տեսցուք եւ հաւատասցուք, զրինչ գործիցես: Հարքն մեր կերան զմանանայն յանապատի անդ, որպէս եւ գրեալ է. Հաց յերկնից ետ նոցա ուտել: Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ Ոչ Մովսէս

ետ ձեզ զհացն յերկնից, այլ Հայրն իմ տայ ձեզ զհացն յերկնից զճշմարիտ: Զի հաց յԱստուծոյ է, որ իջանէ յերկնից եւ կեանս տայ աշխարհի: Ասեն ցնա. Տէր, յամենայն ժամ տուր մեզ զհացն զայն: Ասէ ցնոսա Յիսուս. Ես եմ հացն կենաց. որ գայ առ իս՝ ոչ քաղցիցէ, եւ որ հաւատայ յիս՝ ոչ երբեք ծարաւեսցի: Այլ ասացի ձեզ՝ թէ տեսէք զիս, եւ ոչ հաւատայք: Զամենայն՝ զոր տայ ինձ Հայր, առ իս եկեսցէ. եւ որ գայ առ իս, ոչ հանից արտաքս: Զի իջի ես յերկնից՝ ոչ զի զկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս: 38:

---

## ՉՈՐՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

### ԲՉ.

Ժամամուտ. Քանզի յարեաւ ի մեռելոց Քրիստոս Աստուած յաւիտենից արարիչ, եւ յարութիւն ազգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց, եւ ամենայն զուարթունք երկնից. ընդ որս գոչելով ասեմք. Փառք սոսկալի յարութեան քոյ Տէր:

Սղ. ՀԹ. Որ հովուեսդ Իսրայէլի՝ նայեաց. որ առաջնորդես որպէս խաշին Յովսեփու:

Զ. Ցնծացէք առ Աստուած, օգնական է մեր. աղաղակեցէք առ Աստուած Յակովբայ:

ՁԱ. Աստուած եկաց ի ժողովս աստուածոց. եւ ի միջի նոցա դատէր զնոսա:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԺԵ. 36:

Իսկ յետ աւուրց ինչ ասէ Պօղոս ցԲառնաբաս. Դարձցուք եւ շրջեսցուք զեղբարբք՝ ըստ ամենայն քաղաքաց՝ յորս քարոզեցաք զբանն Տեառն, թէ որպէս ունիցին: Բառնաբաս կամէր առնուլ եւ զՅովհաննէս զկոչեցեալն Մարկոս: Բայց Պօղոս աղաչէր՝ թէ զմեկնեալն ի նոցանէ ի Պամփիլիա եւ զչեկեալն ընդ նոսա ի գործն, մի՛ առնուլ ընդ ինքեանս: Եւ եղեւ գժտութիւն՝ մինչեւ մեկնել նոցա ի միմեանց,



Բառնաբայ առնուլ զՄարկոս՝ նաւել ի Կիպրոս: Եւ Պօղոսի ընտրեալ զՇիղա՝ ել, յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ՝ յեղբարց անտի: Եւ շրջէր ի կողմանս Ասորւոց եւ Կիլիկեցւոց, եւ հաստատէր զեկեղեցիսն: Եկն եհաս ի Դերբէ եւ ի Լիւստրա. եւ ահա աշակերտ ոմն էր անդ՝ անուն Տիմոթէոս, որդի կնոջ հրէի հաւատացելոյ եւ հօր հեթանոսի, որ վկայեալ էր ի Լիւստրացւոց եւ յԻկոնացւոց եղբարց: Զսա կամեցաւ Պօղոս ընդ իւր տանել. եւ առեալ թլփատեաց զնա վասն Հրէիցն՝ որ էին ի տեղիսն յայնոսիկ. քանզի գիտէին ամենեքին զհայր նորա՝ թէ հեթանոս էր: Իբրեւ անցանէին ընդ քաղաքսն՝ աւանդէին նոցա պահել զհրամանսն պատուիրեալս յառաքելոցն եւ յերիցանցն՝ որք յԵրուսաղէմ: Եւ եկեղեցիքն հաստատէին ի հաւատս եւ յաւելուին ի թիւն հանապազօր: ԺԶ. 5:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Զ. 39:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Այս են կամք Հօր իմոյ, որ առաքեացն զիս. զի զամենայն զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից ի նմանէ, այլ յարուցից զնա յաւուրն յետնում: Այս են կամք Հօր իմոյ, զի ամենայն որ տեսանիցէ զՈրդի եւ հաւատայցէ ի նա, ընկալցի զկեանսն յաւիտենականս, եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում: Տրտնջէին զնմանէ Հրեայքն, զի ասաց թէ Ես եմ հացն իջեալ յերկնից: Եւ ասէին. Ոչ՞ սա է Յիսուս՝ որդին Յովսեփու, զորոյ մեք գիտեմք զհայրն եւ զմայր. իսկ արդ զիա՞րդ ասէ՝ թէ Ես յերկնից իջի: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Մի՛ քրթմնջէք ընդ միմեանս: Ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ Հայրն որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա. եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում: Գրեալ է ի մարգարէս. Եւ եղիցին ամենեքեան ուսեալք յԱստուծոյ: Ամենայն որ լսէ ի Հօրէ եւ ուսանի, գայ առ իս: Իբրեւ ոչ եթէ զՀայր ուրուք տեսեալ իցէ. եթէ ոչ՝ որ էն

յԱստուծոյ, նա ետես զՀայր: Ամէն ամէն ասեմ ձեզ. զի Որ հաւատայ յիս՝ ընդունի զկեանսն յաւիտենականս: Ես եմ հացն կենաց: Հարքն ձեր կերան զմանանայն յանապատին եւ մեռան: Այս է հացն, որ յերկնից իջեալ է. զի որ ուտիցէ ոք ի սմանէ՝ մի՛ մեռանիցի: Ես եմ հացն կենդանի, որ յերկնից իջեալ: Եթէ ոք ուտիցէ ի հացէ յայսմանէ՝ կեցցէ ի յաւիտեան. եւ հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի: Մարտնչէին ընդ միմեանս Հրեայքն եւ ասէին. Զիա՞րդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր յուտել: Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ եւ արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս: Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, ունի զկեանսն յաւիտենականս. եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում: Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է, եւ արիւն իմ ճշմարիտ ըմպելի է: Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցէ, եւ ես ի նմա: Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, եւ ես կենդանի եմ վասն Հօր, եւ որ ուտէն զիս, եւ նա կեցցէ վասն իմ: Այս է հացն՝ որ յերկնից իջեալ. ոչ որպէս կերան հարքն ձեր զմանանայն եւ մեռան. որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան: Զայս ասաց ի ժողովրդեանն՝ յուսուցանելն ի Կափառնաում: Եւ բազումք յաշակերտացն իբրեւ լուան՝ ասեն. Խիստ է բանդ այդ, ո՞ կարէ լսել դմա: Իբրեւ գիտաց Յիսուս յանձն իւր՝ եթէ տրտնջեն վասն այնորիկ աշակերտքն նորա, ասէ ցնոսա. Ա՞յդ գայթակղեցուցանէ զձեզ: Իսկ արդ՝ եթէ տեսանիցէք զՈրդի մարդոյ, զի ելանիցէ ուր էր զառաջինն: Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ. զբանն զոր ես խօսեցայ ընդ ձեզ, հոգի է եւ կեանք: Այլ են ոմանք ի ձէնջ՝ որ ոչ հաւատան: Քանզի գիտէր Յիսուս ի սկզբանէ, ո՛վ են այնոքիկ՝ որ ոչն հաւատան, եւ ո՛վ է այն՝ որ մատնելոցն է զնա, եւ ասէր. Վասն այնորիկ ասացի ձեզ՝ թէ ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ իցէ տուեալ նմա ի Հօրէ իմմէ: Յայսմանէ բազումք յաշակերտացն նորա չոգան յետս, եւ ոչ եւս շրջէին ընդ նմա: Ասէ Յիսուս ցերկոտասան աշակերտսն. Միթէ եւ դո՞ւք կամիք երթալ: Պատասխանի ետ նմա Սիմովն Պետրոս. Տէր, առ ո՞վ երթիցուք. բանս կենաց յաւիտենականաց ունիս: Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք՝ եթէ դու ես



Քրիստոսն Որդի Աստուծոյ: Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ո՞չ ես զձեզ զերկոտասանսդ ընտրեցի, եւ մինդ ի ձէնջ սատանայ է: Եւ ասէր զՍիմովնեան Յուդայէ Սկարիովտացւոյ, զի նա իսկ մատնելոց էր զնա, եւ մի էր յերկոտասանիցն: 72:

---

## ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### ԲԿ.

Ժամամուտ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց. եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Սղ. 2Բ. Աստուած ո՞ քեզ նմանիցէ. մի՛ լռեր եւ մի՛ դադարեր Աստուած:

2Գ. Ո՛րպէս սիրելի են յարկք քո, Տէր զօրութեանց. ցանկայ եւ փափագէ անձն իմ ի գաւիթս քո:

2Դ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո. եւ դարձուցեր զգերութիւն Յակովբայ:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԺԶ. 6:

Եւ շրջեցան ընդ Փռիւգիա եւ ընդ կողմանս Գաղատացւոց, արգելեալք ի Հոգւոյն սրբոյ խօսել զբանն յԱսիա: Բայց եկեալ առ Միւսեաւ՝ թեւակոխէին երթալ ի Բիւթանիա, եւ ոչ համարձակեաց նոցա Հոգին Յիսուսի: Եւ անցեալ ըստ Միւսիա՝ իջին ի Տրովադա: Եւ տեսիլ երեւեցաւ ի գիշերին Պօղոսի. այր ոմն Մակեդոնացի կայր, աղաչէր զնա եւ ասէր. Անցեալ ի Մակեդոնիա՝ օգնեսցես մեզ: Եւ իբրեւ զտեսիլն ետես, վաղվաղակի խնդրեցաք ելանել ի Մակեդոնիա, տեղեկացեալք՝ թէ հրաւիրեաց զմեզ Տէր աւետարանել նոցա: Եւ ելեալ ի Տրովադայ՝ դէպ ուղիղ գնացաք ի Սամոթրակէ, եւ ի վաղիւ անդր ի Նոր քաղաքն, եւ անտի ի Փիլիպպուս, որ է առաջին վիճակ Մակեդոնացւոց՝ քաղաք Կողովնիա. եւ անդ ի քաղաքին դադարեալ մեր աւուրս ինչ, յաւուրն շաբաթու ելաք արտաքոյ քաղա-

քին առ գետափնն՝ ուր համարէին աղօթս մատուցանել. եւ նստեալ խօսէաք ընդ ժողովեալ կանայսն: Եւ կին ոմն անուն Լիդիա ծիրանավաճառ՝ ի Թիւատիր քաղաքէ՝ երկիւղած յԱստուծոյ՝ լուաւ, զորոյ Տէր իսկ եբաց զսիրտն անսալ խօսիցն Պօղոսի: Եւ իբրեւ մկրտեցաւ ինքն եւ տուն իւր, աղաչէր եւ ասէր. Եթէ համարիցիք զիս հաւատացեալ Տեառն, մտեալ ի տուն իմ ագերուք. եւ բռնադատեաց տարաւ զմեզ: Եւ եղեւ մինչ երթայաք մեք յաղօթս, պատահեաց մեզ աղախին ոմն, զոր ունէր այս հարցուկ, որ շահս բազում տայր տերանց իւրոց մոլելովն: Նա զհետ եղեալ Պօղոսի եւ մեր՝ աղաղակէր եւ ասէր. Արքս այս՝ ծառայք Աստուծոյ բարձրելոյ են, որ պատմեն ձեզ զճանապարհս փրկութեան: Եւ զայս առնէր ի բազում աւուրս: Զայրացեալ Պօղոս՝ դարձաւ եւ ասէ ցայսն. Պատուիրեմ քեզ յանուն Յիսուսի Քրիստոսի, ել ի դմանէ. եւ ել ի նմին ժամու: Իբրեւ տեսին տեարք նորա՝ եթէ հատաւ յոյս շահի նոցա, առեալ զՊօղոս եւ զՇիղա՝ ձգեցին ի հրապարակ առ իշխանսն: Եւ ածեալ զնոսա առ զօրագլուխսն՝ ասեն. Արքս այս խռովեցուցանեն զքաղաքս մեր. ինքեանք Հրեայք են, եւ պատմեն մեզ օրէնս՝ զոր ոչ է արժան մեզ ընդունել եւ ոչ առնել. զի Հռովմայեցիք եմք: Եւ կուտեցաւ ամբոխն ի վերայ նոցա. եւ զօրագլուխքն պատառեցին զհանդերձս իւրեանց եւ հրամայեցին գան հարկանել: Եւ բազում վէրս եդեալ ի վերայ նոցա՝ արկին ի բանտ, պատուիրեցին բանտապետին զգուշութեամբ պահել զնոսա: Որոյ առեալ զայսպիսի պատուէր՝ արկ զնոսա ի ներքին բանտն եւ զոտս նոցա պնդեաց ի կոճեղ: Եւ ի մէջ գիշերին Պօղոս եւ Շիղա կային յաղօթս եւ օրհնէին զԱստուած, ունկն դնէին նոցա կալանաւորքն: Եւ եղեւ յանկարծակի շարժումն մեծ՝ մինչեւ շարժել հիմանց բանտին. եւ բացան անդրէն դրունքն ամենայն, եւ ամենեցուն կապանք լուծան: Իբրեւ զարթեաւ բանտապետն եւ ետես բացեալ զդրունս բանտին, ձգեաց զսուսեր եւ կամէր երթալ զիւրովին, կարծէր փախուցեալ զկապեալսն: Եւ կոչեաց ի ձայն մեծ Պօղոս եւ ասէ. Մի՛ ինչ գործեր ընդ անձն քո չար, քանզի ամենեքեան աստ եմք: Խնդրեաց լոյս եւ դիմեաց ի ներքս. եւ զահի հարեալ անկաւ առաջի Պօղոսի եւ Շիղայի, եւ ածեալ զնոսա արտաքս՝ ասէ. Տեարք, զի՞նչ պարտ է ինձ առնել՝ զի ապրեցայց: Եւ նոքա



ասեն. Հաւատա ի Տէր Յիսուս Քրիստոս, եւ ապրեսցիս դու եւ ամենայն տուն քո: Եւ խօսեցան նմա զբանն Տեառն եւ ամենեցուն որ էին ի տան նորա: Եւ առեալ զնոսա ի նմին ժամու գիշերոյն՝ լուաց ի վիրաց անտի, եւ մկրտեցաւ ինքն եւ իւրքն ամենեքեան անդէն վաղվաղակի: Եւ ածեալ զնոսա ի տուն իւր, եդ առաջի նոցա սեղան, եւ ուրախ եղեւ ամենայն տամբն հաւատացեալ յԱստուած: Եւ իբրեւ այգ եղեւ՝ առաքեցին զօրագլուխքն զնուիրակսն եւ ասեն. Արձակեա զարսդ զայդոսիկ: Եւ պատմեաց բանտապետն զբանն՝ Պօղոսի, եթէ Առաքեցին զօրագլուխքն՝ զի արձակիցիք. արդ ելէք եւ երթայք խաղաղութեամբ: Իսկ Պօղոս ասէ ցնոսա. Գան հարեալ զմեզ հրապարակաւ՝ արս անմեղս Հռովմայեցիս՝ արկին ի բանտ, եւ արդ լռելեա՞յն հանեն զմեզ. ոչ այդպէս, այլ եկեսցեն ինքեանք իսկ հանցեն զմեզ: Եւ պատմեցին զօրագլխացն նուիրակքն զբանսն. զահի հարան իբրեւ լուան՝ թէ Հռովմայեցիք են. եւ եկեալ աղաչեցին զնոսա: Եւ իբրեւ հանին, աղաչէին գնալ ի քաղաքէն: Եւ ելեալ ի բանտէն՝ մտին ի Լիւդիա. եւ տեսեալ զեղբարս՝ մխիթարեցին զնոսա, եւ գնացին: 40:

Ալէլուիա, ալէլուիա. Ցնծացէք առ Աստուած, օգնական է մեր. աղաղակեցէք առ Աստուած Յակովբայ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Է. 1.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յետ այսորիկ շրջէր (Յիսուս) ի Գալիլեա. քանզի ոչ կամէր ի Հրէաստանի շրջել. զի խնդրէին զնա Հրեայքն սպանանել: Եւ էր մերձ տօնն Հրէից տաղաւարահարաց: Ասեն ցնա եղբարքն նորա. Գնա աստի եւ երթ ի Հրէաստան, զի եւ աշակերտքն քո տեսցեն զգործսդ քո՝ զոր գործես: Զի ոչ ոք է՝ որ ի ծածուկ ինչ գործէ, եւ խնդրէ ինքն համարձակ լինել. եթէ զայդ գործես, յայտնեա զանձն քո աշխարհի: Քանզի եւ եղբարքն իսկ չէին հաւատացեալ ի նա: Ասէ ցնոսա Յիսուս. Ժամանակ իմ չեւ է հասեալ. բայց ձեր ժամանակ յամենայն ժամու պատրաստ է: Ոչ կարէ աշխարհս ատել զձեզ. բայց զիս ատեայ, զի ես վկայեմ

վասն նորա՝ եթէ գործքն իւր չարութեան են: Դուք երթայք ի տօնն յայն. ես ոչ երթամ ի տօնն յայն. զի իմ ժամանակ չեւ է լցեալ: Զայս իբրեւ ասաց՝ ինքն մնաց անդէն ի Գալիլեա: Իբրեւ ելին եղբարքն նորա, ապա եւ ինքն ել ի տօնն, ոչ յայտնի՝ այլ իբրեւ ի ծածուկ: Եւ Հրեայքն խնդրէին զնա ի տօնի անդ եւ ասէին. Ո՛ւր իցէ նա: Եւ քրթմնջիւն էր զնմանէ ի ժողովուրդսն. կէսքն ասէին՝ թէ Բարւոք է. այլքն ասէին՝ Ո՛չ, այլ մոլորեցուցանէ զժողովուրդն: Եւ ոչ ոք համարձակ խօսէր զնմանէ՝ վասն երկիւղին Հրէից: 13:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՅԻՆԱՆՑ

### ԳՁ.

Ժամանակ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Սղ. 2Ե. Խոնարհեցո Տէր զունկն քո եւ լուր ինձ. զի աղքատ եւ տնանկ եմ ես:

2Զ. Հիսունք նորա ի լեառն սուրբ նորա. սիրէ Տէր զդրունս Սիովնի առաւել քան զամենայն յարկսն Յակովբայ:

2Է. Տէր Աստուած փրկութեան իմոյ. ի տուէ կարդացի եւ գիշերի առաջի քո:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԺԷ. 1:

Եւ շրջեալ ընդ Ամփիպոլիս եւ ընդ Ապողոնիա, եկին ի Թեսաղոնիկէ, ուր էր ժողովուրդ Հրէիցն: Եւ ըստ սովորութեանն Պօղոս եմուտ առ նոսա, եւ ի շաբաթս երիս խօսեցաւ ընդ նոսա ի գրոց: Բանայր եւ դնէր առաջի, թէ պարտ էր Քրիստոսի չարչարել եւ յառնել ի մեռելոց. եւ թէ նա է Քրիստոսն Յիսուս՝ զոր եսն պատմեմ ձեզ: Եւ ոմանք ի նոցանէ հաւանեցան եւ վիճակեցան Պօղոսի եւ Շիղայի. բայց պաշտօնէիցն հեթանոսաց էր բազմութիւն յոյժ, եւ ի կանանց գլխաւորաց ոչ սակաւք: Եւ նախանձեցան Հրեայքն, եւ առեալ արս ոմանս գռեհիկս անօրէնս՝



ամբոխ արարեալ խռովեցին զքաղաքն. եւ կուտեալ առ ապարանսն Յասովնի, խնդրէին զնոսա ածել ի հրապարակ: Եւ իբրեւ ոչ գտին զնոսա՝ քարշէին զՅասովն եւ զոմանս եղբարս առ քաղաքապետն, բողոք բարձեալ՝ թէ Որք զաշխարհս խռովեցուցին՝ սոքա եւ այսր հասին, զորս ընկալեալ է Յասովնի. եւ սոքա ամենեքեան հակառակ հրամանացն կայսեր գործեն, թագաւոր զոմն ասեն զՅիսուս: Եւ խռովեցուցին զժողովսն եւ զքաղաքապետսն՝ որ լսէին զայս: Եւ առեալ երաշխաւորութիւն առ ի Յասովնայ եւ յայլոցն՝ արձակեցին զնոսա: Բայց եղբարք վաղվաղակի գիշերայն յուղարկեցին զՊօղոս եւ զՇիղա ի Բերիա. որք իբրեւ հասին անդր՝ ի ժողովուրդն Հրէից գնացին: Զի սոքա էին ազնուականագոյնք՝ քան որ ի Թեսաղոնիկն էին. որք ընկալան զբանն ամենայն յօժարութեամբ. հանապազ քննէին զգիրս, եթէ իցէ՛ այս այսպէս: Եւ բազումք ի նոցանէ հաւատացին, եւ ի Յունաց կանանց զգաստից եւ յարանց ոչ սակաւք: Բայց իբրեւ գիտացին՝ որ ի Թեսաղոնիկէ Հրեայք էին, եթէ եւ ի Բերիա պատմեցաւ ի Պօղոսէ բանն Աստուծոյ, եկին եւ անդր՝ շարժել եւ խռովեցուցանել զժողովսն: Յայնժամ վաղվաղակի զՊօղոս առաքեցին եղբարք գնալ մինչեւ ի ծովեզրն. եւ մնացին Շիղա եւ Տիմոթէոս անդէն: Եւ որք տանէին զՊօղոս, ածին զնա մինչեւ յԱթէնս. եւ առեալ պատուէր ի նմանէ առ Շիղա եւ Տիմոթէոս, զի վաղվաղակի եկեսցեն առ նա. եւ գնացին: 15:

Ալէլուիա, ալէլուիա. Գովեա Երուսաղէմ զՏէր. եւ օրհնեա զԱստուած քո Սիովն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Է. 14:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Իբրեւ տօնն ընդմիջեցաւ, ել (Յիսուս) ի տաճարն եւ ուսուցանէր: Զարմանային Հրեայքն եւ ասէին. Զիա՞րդ զգիրս գիտէ սա, զի ուսեալ բնաւ չիք: Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. Իմ վարդապետութիւնս չէ իմ, այլ այնորիկ՝ որ առաքեացն զիս: Եթէ ոք կամի զկամս նորա առնել՝ գիտասցէ վասն վարդապետութեանս, յԱստուծոյ՞

իցէ արդեօք՝ եթէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ: Որ յանձնէ
իւրմէ խօսի՝ փառս անձին իւրում խնդրէ, իսկ որ խնդրէ
զփառս այնորիկ որ առաքեացն զնա՝ նա ճշմարիտ է, եւ անի-
րաւութիւն ոչ գոյ ի նմա: Ո՞չ Մովսէս ետ ձեզ զօրէնսն,
եւ ոչ ոք ի ձէնջ առնէ զօրէնսն: Զի՞ խնդրէք զիս սպանա-
նել: Պատասխանի ետ ժողովուրդն եւ ասէ. Դեւ գոյ ի
քեզ. ո՞վ խնդրէ զքեզ սպանանել: Պատասխանի ետ նոցա
Յիսուս եւ ասէ. Գործ մի գործեցի, եւ ամենեքին զարմա-
ցեալ էք: Վասն այնորիկ Մովսէս ետ ձեզ թլփատութիւն.
զի ոչ եթէ ի Մովսիսէ էր, այլ ի հարց անտի, եւ ի շաբա-
թու թլփատէք զմարդ: Իսկ արդ եթէ թլփատութիւն առ-
նու մարդ ի շաբաթու, զի մի՛ օրէնքն Մովսիսի լուծցին.
ընդ իս ցասուցեալ էք՝ զի ողջոյն իսկ մարդ բժշկեցի ի շա-
բաթու: 23:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### ԳԿ.

Ժամամուտ. Ահաւոր եւ սքանչելի է խորհուրդ
փրկութեան մերոյ: Որ անսկիզբն ի Հօրէ՝ անճառաբար
մարմնացաւ ի Կուսէն. խաչի համբերելով, եւ կամաւոր
մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգեւեաց շնորհս:

ՍՂ. ՁԸ. Զողորմութիւնս քո Տէր յաւիտեան
օրհնեցից. ազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնս քո
բերանով իմով:

ՁԹ. Տէր ապաւէն եղեր մեր յազգէ մինչեւ յազգ.
մինչ չեւ լերինք հաստատեալ էին, մինչ չեւ ստեղծեալ
զերկիր եւ զամենայն տիեզերս:

Ղ. Որ բնակեալն է յօգնութիւն բարձրելոյն. ընդ
հովանեաւ Աստուծոյ յերկինս հանգիցէ:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

ԳԼ. ԺԷ. 16:

Եւ յԱթէնս ի մնալն նոցա Պօղոսի, զայրանայր հոգի
նորա ի նմա, զի տեսանէր ի կռապաշտութեան զքաղաքն:
Եւ խօսէր ի ժողովրդեանն ընդ հրեայսն եւ ընդ պաշ-



տօնեայսն, եւ ի հրապարակսն զամենայն օր՝ որոց եւ
պատահէին: Ոմանք յԵպիկուրեանցն եւ ի Ստոյիկեանց
փիլիսոփայից հակառակէին ընդ նմա, եւ ոմանք ասէին.
Զի՞նչ կամիցի սերմանաքաղս այս խօսել. իսկ այլք, թէ
Օտարոտի իմն դից թուի պատմիչ լինելոյ, քանզի զՅիսուս
եւ զյարութիւն աւետարանէր: Եւ առեալ զնա ածին
յԱրիսպագոսն, եւ ասէին. Կարասցո՞ւք իմանալ՝ թէ զի՞նչ
է նոր վարդապետութիւնդ՝ որ ի քէն պատմի: Օտարացու-
ցիչս իմն բերես ի լսելիս մեր. կամիմք գիտել՝ թէ զի՞նչ
կամիցի այս լինել: Զի Աթենացիք ամենեքեան եւ եկքն
օտարք ոչ յայլ ինչ պարապէին, բայց ասել ինչ կամ լսել
նորագոյնս: Եկաց Պօղոս ի մէջ Արիսպագին եւ ասէ. Ա՛րք
Աթենացիք, ըստ ամենայնի իբրեւ պաշտօնասէրս տեսանեմ
զձեզ: Քանզի շրջեալ եւ տեսեալ զպաշտամունս ձեր, գտի
բագին մի՝ յորում գրեալ էր. Անծանօթի Աստուծոյ. զոր
դուքն յանծանօթս պաշտէք, ես զնոյն պատմեմ ձեզ:
Աստուած՝ որ արար զաշխարհս եւ զամենայն՝ որ ի նմա, նա
երկնից եւ երկրի է Տէր. ոչ ի ձեռագործ տաճարս բնակէ,
եւ ոչ ի ձեռաց մարդկան պաշտի իբրեւ կարօտ իմիք. նա
տայ ամենայնի կեանս եւ շունչ եւ զամենայն ինչ: Արար ի
միոջէ արենէ զամենայն ազգս մարդկան՝ բնակել ի վերայ
ամենայն երեսաց երկրի. հաստատեաց կարգեալ ժամանակս
եւ սահմանադրութիւնս բնակութեան նոցա՝ խնդրել զԱս-
տուած: Զի թերեւս զննիցեն զնա եւ գտանիցեն. նա եւ ոչ
հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ ի մէնջ: Զի նովաւ
կեամք եւ շարժիմք եւ եմք, որպէս եւ ոմանք ի ձերոց
ճարտարաց ասացին, թէ նորա եւ ազգ իսկ եմք: Եւ արդ՝
որովհետեւ ազգք եմք Աստուծոյ, ոչ պարտիմք համարել
ոսկւոյ կամ արծաթոյ կամ քարի, որ ի ճարտարութենէ
եւ ի մտաց մարդոյ քանդակեալ իցէ, զաստուածականն
լինել նմանող: Բայց զժամանակս անգիտութեանն անտես
արարեալ Աստուծոյ, արդ զայս պատուիրէ մարդկան՝
ամենայն ումեք ապաշխարել: Քանզի հաստատեաց օր՝
յորում պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ, ի
ձեռն առնն՝ որով սահմանեաց տալ հաւատս ամենեցուն՝
յարուցեալ զնա ի մեռելոց: Իբրեւ լուան զյարութիւն
մեռելոց՝ ոմանք ծաղր առնէին. կէսքն ասէին. Լուիցուք ի
քէն վասն այդորիկ միւսանգամ: Եւ ապա Պօղոս ել գնաց

ի միջոյ նոցա: Եւ ոմանք արք անկեալք ի նա՝ հաւատացին. ընդ որս էր եւ Դիոնեսիոս Արիսպագացի, եւ կին մի անուն Դամարիս, եւ այլք ընդ նոսա: 34:

Ալէլուիա, ալէլուիա. Գովեա Երուսաղէմ զՏէր. եւ օրհնեա զԱստուած քո Սիովն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Է. 24:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Մի՛ ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան արարէք: Ասէին ոմանք յԵրուսաղեմացւոց անտի. Ո՞չ նա է սա՝ զոր խնդրէինն սպանանել, եւ աւասիկ յայտնապէս խօսի, եւ չասեն ինչ ընդ դմա. գուցէ արդեօք եւ իշխանքն գիտացի՛ն՝ թէ սա իցէ Քրիստոսն: Այլ զսա գիտեմք ուստի է. իսկ Քրիստոսն յորժամ գայցէ, ոչ ոք գիտէ ուստի է: Աղաղակեաց Յիսուս ի տաճարին, ուսուցանէր եւ ասէր. Եւ զիս գիտէք, եւ ուստի եմ գիտէք. եւ յանձնէ իմմէ ոչ եմ եկեալ, այլ է ճշմարիտ որ առաքեացն զիս՝ զոր դուքն ոչ գիտէք: Ես գիտեմ զնա, զի ի նմանէ իսկ եմ, եւ նա առաքեաց զիս: Խնդրէին զնա ունել եւ ել ի ձեռաց նոցա. եւ ոչ ոք արկ ի նա ձեռն, զի չեւ էր հասեալ ժամ նորա: Եւ բազումք ի ժողովրդենէն հաւատացին ի նա, եւ ասէին. Քրիստոսն յորժամ գայցէ՝ միթէ աւելի՞ ինչ նշանս առնիցէ՝ քան զոր սայս առնէ: Եւ լուան փարիսեցիքն զտրտունջ ժողովրդեանն զնմանէ. եւ առաքեցին քահանայապետքն եւ փարիսեցիք սպասաւորս՝ զի կալցին զնա: Ասէ Յիսուս. Փոքր մի եւս ժամանակ ընդ ձեզ եմ. եւ երթամ առ այն՝ որ առաքեացն զիս: Խնդրիցէք զիս, եւ ոչ գտանիցէք. եւ ուր եսն երթամ, դուք ոչ կարէք գալ: Ասեն Հրեայքն ընդ միմեանս. Իսկ յո՞ երթայցէ դա՝ զի մեք ոչ գտանիցեմք զդա. միթէ ի սփիւռս հեթանոսա՞ց երթայցէ եւ ուսուցանիցէ զհեթանոսս: Զի՞նչ է բանն այն՝ զոր ասաց. Խնդրիցէք զիս, եւ ոչ գտանիցէք. եւ ուր եսն երթամ, դուք ոչ կարէք գալ: 36:

---



## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԴՉ.

Ժամամուտ. Քանզի յարեաւ ի մեռելոց Քրիստոս Աստուած յաւիտենից արարիչ, եւ յարութիւն ազգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց, եւ ամենայն զուարթունք երկնից. ընդ որս գոչելով ասեմք. Փառք սոսկալի յարութեան քոյ Տէր:

Սղ. ՂԱ. Բարի է խոստովան լինել Տեառն. սաղմոս ասել անուան քում, բարձրեալ:

ՂԲ. Տէր թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ:

ՂԳ. Աստուած վրէժխնդիր. Տէր Աստուած՝ վրէժխնդիր յայտնեցար:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԺԸ. 1:

Յետ այսորիկ մեկնեալ Պօղոսի յԱթենացւոց անտի՝ եկն ի Կորնթոս. եւ եգիտ հրեայ զոմն անուն Ակիւղաս՝ յազգէ Պոնտացի, այն ինչ եկեալ յԻտալիայ, եւ զՊրիսկիղա կին նորա, վասն հրամանին Կղաւդեայ՝ որոշել զամենայն Հրեայս ի Հռովմայ. եւ յարեցաւ ի նոսա: Եւ վասն զի համարուեստ էր, եղեւ առ նոսա եւ գործէր. քանզի էին խորանակարք արուեստիւ: Եւ խօսէր ի ժողովրդեանն ըստ ամենայն շաբաթուց, եւ հաւանեցուցանէր զՀրեայս եւ զհեթանոսս: Իբրեւ իջին ի Մակեդոնիա՝ Շիղա եւ Տիմոթէոս, ստիպէր հոգւովն Պօղոս դնել վկայութիւն Հրէից՝ թէ Յիսուս է Քրիստոսն: Եւ յընդդէմ դառնալ նոցա եւ ի հայհոյել, թօթափեաց զձորձս եւ ասէ ցնոսա. Արիւն ձեր ի գլուխս ձեր, քաւեալ եմ ես. յայսմհետէ ի հեթանոսս երթամ: Եւ գնացեալ անտի՝ եմուտ ի տուն ուրումն, որոյ անուն էր Տիտոս Յուստոս՝ պաշտօնեայ Աստուծոյ, որոյ ապարանքն էին մերձ ի ժողովետղն: Կրիսպոս ժողովրդապետ հաւատաց ի Տէր ամենայն տամբ իւրով. եւ բազմաց ի Կորնթացւոցն լուեալ՝ հաւատացին եւ մկրտեցան: Եւ ասէ Տէր ի գիշերին տեսլեամբ ցՊօղոս. Մի՛ երկնչիր, այլ խօսեաց

եւ մի՛ լռեր. քանզի ես ընդ քեզ եմ, եւ ոչ ոք ընդդէմ դարձցի քո՝ ի չարչարել զքեզ. քանզի ժողովուրդ է իմ բազում ի քաղաքիս յայսմիկ: Եւ նստաւ անդ տարի մի եւ ամիսս վեց՝ ուսուցանել նոցա զբանն Աստուծոյ: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր, ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. եւ ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Է. 37:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ի վերջնում աւուր մեծի տօնին կայր (Յիսուս) աղաղակէր եւ ասէր. Եթէ ոք ծարաւի իցէ՝ եկեսցէ առ իս, եւ արբցէ: Որ հաւատայ յիս՝ որպէս եւ ասեն գիրք, գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան: Զայս ասէր վասն Հոգւոյն՝ զոր ընդունելոց էին՝ որ հաւատային ի նա, զի չեւ էր Հոգի, քանզի Յիսուս չեւ էր փառաւորեալ: Ոմանք ի ժողովրդենէն իբրեւ լսէին զբանս զայս՝ ասէին. Սա է ճշմարիտ մարգարէն: Այլքն ասէին. Սա է Քրիստոս. իսկ կէսքն ասէին. Միթէ ի Գալիլեէ՞ գալոց իցէ Քրիստոսն: Ո՞չ գիրք ասեն, եթէ Ի զաւակէ Դաւթի եւ ի Բեթղեհէմ գեղջէ՝ ուր Դաւիթն էր, գալոց է Քրիստոսն: Եւ եղեւ հերձուած ի մէջ ժողովրդեանն վասն նորա: Եւ ոմանք ի նոցանէ կամեցան ունել զնա. այլ ոչ ոք մխեաց ի նա ձեռս: Եւ եկին անդրէն սպասաւորքն առ քահանայապետսն եւ փարիսեցիս, եւ ասեն սոքա ցնոսա. Ընդէ՞ր ոչ ածէք զնա այսր: Պատասխանի ետուն սպասաւորքն եւ ասեն. Ոչ երբեք այնպէս խօսեցաւ մարդ՝ որպէս այրն այն: Պատասխանի ետուն փարիսեցիքն եւ ասեն. Միթէ եւ դո՞ւք մոլորեցարուք: Միթէ ոք յիշխանացն հաւատա՞ց ի նա կամ ի փարիսեցւոց: Այլ այն խաժամուժ ամբոխ, որ ոչ գիտէ զօրէնս, եւ նզովեալք են: Ասէ Նիկոդեմոս ցնոսա, որ եկեալ էր առ նա գիշերի յառաջագոյն եւ մի էր ի նոցանէ. Միթէ օրէնքն մեր դատի՞ն զմարդ՝ եթէ ոչ լսեն ինչ նախ ի նմանէ, կամ գիտեն զի՞նչ գործէ: Պատասխանի ետուն նմա եւ ասեն. Միթէ եւ դու եւս ի Գալիլեէ՞ իցես. քննեա եւ



տես, զի մարգարէ ի Գալիլեէ ոչ յառնէ: Եւ գնացին իւրաքանչիւր ոք ի տեղի իւր: Իսկ Յիսուս գնաց ի լեառն ձիթենեաց: Եւ ընդ առաւօտն դարձեալ եկն ի տաճարն. եւ գայր առ նա ամենայն ժողովուրդն, եւ նստեալ ուսուցանէր զնոսա: Ածին առ նա դպիրքն եւ քահանայապետք եւ փարիսեցիք կին մի ըմբռնեալ ի շնութեան. եւ կացուցեալ զնա առաջի, ասեն ցնա. Վարդապետ, կինս այս ըմբռնեալ՝ ինքն յայտնապէս շնացեալ է: Եւ յօրէնս Մովսէս մեզ պատուիրեաց զայսպիսիս քարկոծել. արդ՝ դու զի՞նչ ասես վասն դորա: Զայս ասէին փորձելով զնա, զի ունիցին ամբաստանութիւն զնմանէ: Իսկ Յիսուս ի խոնարհ նայելով՝ գրէր մատամբն յերկրի: Իսկ իբրեւ ստիպեցին հարցանելով ցնա, հայեցեալ ի վեր՝ ասէ ցնոսա. Անմեղն ի ձէնջ՝ նախ նա ընկեսցէ քար ի վերայ դորա: Եւ դարձեալ ի խոնարհ նայելով՝ գրէր յերկրի: Եւ լուեալ ելանէին մի ըստ միոջէ՝ սկսեալ յառաջնոցն մինչեւ ի վերջինս. եւ մնաց միայն Յիսուս, եւ կինն կայր առաջի նորա: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Կի՞ն դու, ո՞ւր են, ոչ ոք զքեզ դատապարտեաց: Եւ ասէ. Ոչ Տէր: Եւ ասէ Յիսուս. Եւ ոչ ես դատապարտեմ զքեզ. երթ՝ յայսմհետէ մի՛ մեղանչեր: Ը. 11:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԶՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Դ.Կ.

Ժամամուտ. Ահաւոր եւ սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ: Որ անսկիզբն ի Հօրէ՝ անճառաբար մարմնացաւ ի Կուսէն. խաչի համբերելով, եւ կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգեւեաց շնորհս:

Սղ. Ղդ. Եկայք ցնծասցուք ի Տէր. աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր:

Ղե. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնեցէք զՏէր ամենայն երկիր:

Ղզ. Տէր թագաւորեաց՝ ցնծասցէ երկիր. ուրախ եղիցին կղզիք բազումք:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԺԸ. 12:

Առ Գաղիոնաւ փոխանակաւ բդեշխին Աքայեցւոց՝ յարեան միաբան Հրեայքն ի վերայ Պօղոսի, եւ ածին զնա յատեան. եւ ասէին, եթէ Արտաքոյ օրինաց պատրէ սա զմարդիկ՝ պաշտել զԱստուած: Եւ իբրեւ մերձ էր Պօղոս բանալ զբերան իւր, ասէ Գաղիոն ցՀրեայսն. Եթէ էր ինչ անիրաւութիւն կամ խարդախութիւն չարեաց, ով Հրեայք, ի դէպ էր ինձ անսալ ձեզ. ապա եթէ խնդիրք ինչ են վասն բանի եւ անուանց եւ օրինաց ձերոց՝ տեսէք ձեզէն. քանզի դատաւոր այդպիսի իրաց չկամիմ լինել: Եւ մերժեաց զնոսա յատենէ անտի: Եւ առեալ ամենեցուն Յունացն զՍոսթենէս ժողովրդապետն՝ հարկանէին առաջի ատենին. եւ ոչ ինչ զայնմանէ Գաղիոնի փոյթ լինէր: Բայց Պօղոսի տակաւին մնացեալ աւուրս բազումս, յեղբարցն հրաժարեալ՝ նաւէր յԱսորիս. եւ ընդ նմա Պրիսկիղա եւ Ակիւղաս, փոքրել զգլուխ ի Կենքրեայ, քանզի ուխտադիր էր: Եւ հասեալ յԵփեսոս՝ զնոսա եթող անդ. եւ ինքն մտեալ ի ժողովուրդն խօսէր ընդ Հրեայսն: Եւ աղաչեցին զնա՝ բազում ժամանակս լինել անդ. եւ ոչ առ յանձն. այլ հրաժարեաց ի նոցանէ եւ ասէ. Դարձեալ շրջեցայց առ ձեզ Աստուծոյ կամօք. ամբարձաւ յԵփեսեայ, եւ իջեալ ի Կեսարիայ՝ ել եւ ետ ողջոյն եկեղեցւոյն: Էջ յԱնտիոք, եւ եղեալ անդ ժամանակ ինչ, ել շրջել կարգաւ ընդ Գաղատացւոց աշխարհն եւ ընդ Փռիւգիա, հաստատել զամենայն աշակերտեալսն: Հրեայ ոմն Ապեղէս անուն՝ Աղեքսանդրացի յազգէ, այր ճարտարաբան, եկն եհաս յԵփեսոս. զօրաւոր էր գրովք: Սա էր տեղեկացեալ ճանապարհին Տեառն եւ եռայր հոգւով. խօսէր եւ ուսուցանէր ճշմարտութեամբ վասն Յիսուսի. գիտէր միայն զմկրտութիւնն Յովհաննու: Սա սկսաւ համարձակել ի ժողովրդեանն. եւ լուեալ ի նմանէ Ակիւղեայ եւ Պրիսկիղայ, առին զնա առ իւրեանս, եւ ճշմարտագոյնս պատմեցին նմա զճանապարհն Աստուծոյ: Իբրեւ կամեցաւ նա գնալ յԱքայիա, յօժարեալ եղբարք՝ գրեցին առ աշակերտսն ընդունել զնա, որ իբրեւ եհաս անդր՝ բազում նպաստ լինէր հաւատացելոցն ի ձեռն շնորհացն: Քանզի պնդագոյն զՀրեայսն յանդիմանէր



հրապարակաւ, ցուցանել գրովք՝ եթէ Քրիստոսն է Յիսուս: 28:

Ալէլուիա, ալէլուիա. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիովն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ը. 12:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա (Յիսուս) եւ ասէ. Ես եմ լոյս աշխարհի. որ գայ զկնի իմ, ընդ խաւար մի՛ գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց: Ասեն ցնա փարիսեցիքն. Դու վասն անձին քո վկայես, եւ վկայութիւն քո չէ ճշմարիտ: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Թէպէտ եւ ես վկայեմ վասն անձին իմոյ՝ վկայութիւն իմ ճշմարիտ է, զի գիտեմ ուստի եկի եւ յո երթամ. բայց դուք ոչ գիտէք ուստի գամ կամ յո երթամ: Դուք ըստ մարմնոյ դատիք. ես ոչ դատիմ եւ ոչ զոք: Թէպէտ եւ դատիմ եւս զոք՝ դատաստանն իմ ճշմարիտ է. զի չեմ միայն, այլ ես եւ որ առաքեացն զիս Հայր: Եւ յօրէնսն իսկ ձեր գրեալ է՝ թէ Երկուց մարդոց վկայութիւն ճշմարիտ է: Ես եմ՝ որ վկայեմ վասն իմ, եւ վկայէ վասն իմ որ առաքեացն զիս՝ Հայր: Ասէին ցնա. Ո՞ւր է Հայր քո: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Ոչ զիս գիտէք եւ ոչ զՀայրն իմ. եթէ զիս գիտէիք, եւ զՀայրն իմ թերեւս գիտէիք: Զայս բան խօսեցաւ ի տան գանձին՝ յորժամ ուսուցանէր ի տաճարի անդ. եւ ոչ ոք կալաւ զնա, զի չեւ եւս հասեալ էր ժամ նորա: 20:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

ԱՁ.

Ժամամուտ. Քանզի յարեաւ ի մեռելոց Քրիստոս Աստուած յաւիտենից արարիչ, եւ յարութիւն ազգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց, եւ ամենայն զուարթունք երկնից. ընդ որս գոչելով ասեմք. Փառք սոսկալի յարութեան քոյ Տէր:

ՍՂ· ՂԷ· Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր· զի սքանչելիս արար:

ՂԸ· Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին ի քրովբէս· սասանեցաւ երկիր:

ՂԹ· Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր· ծառայեցէք Տեառն ուրախութեամբ:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց·

Գլ· ԺԹ· 1:

Եւ եղեւ մինչ դեռ Ապողոսն ի Կորնթոս էր, Պօղոսի շրջեալ զվերին կողմամբքն եւ իջանել յԵփեսոս եւ գտանել զոմանս զաշակերտս· ասէ ցնոսա· եթէ Հոգի սուրբ ընկալարո՞ւք ի հաւատալն: Նոքա ասեն ցնա· Այլ եւ ոչ թէ Հոգի սուրբ գուցէ՝ լուեալ է մեր: Եւ ասէ· Իսկ յի՞նչ մկրտեցարուք· նոքա ասեն· Ի Յովհաննու մկրտութիւն: Եւ ասէ Պօղոս· Յովհաննէս մկրտեաց մկրտութիւն ապաշխարութեան ամենայն ժողովրդեանն· եւ ասէր· Զի որ գալոցն է յետ նորա՝ ի նա հաւատասցեն, այս ինքն է՝ ի Յիսուս Քրիստոս: Եւ իբրեւ լուան, մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի: Եւ ի դնել ի վերայ նոցա Պօղոսի զձեռն, եկն Հոգին սուրբ ի վերայ նոցա· խօսէին լեզուս եւ մարգարէանային: Եւ էին ամենեքեան արք իբրեւ երկոտասան: Եւ մտեալ ի ժողովուրդն՝ համարձակէր ամիսս երիս· խօսէր եւ հաւանեցուցանէր վասն արքայութեանն Աստուծոյ: Իբրեւ ոմանք խստանային եւ ընդդէմ դառնային բամբասել զճանապարհն առաջի բազմութեանն, մեկնեալ ի նոցանէ՝ որոշեաց զաշակերտսն· հանապազօր խօսէր ի դիւանին Տիւրանեայ ուրումն: Եւ այս եղեւ զերկեամ մի, մինչեւ ամենայն բնակչացն Ասիացւոց լսել զբանն Տեառն՝ Հրէից եւ հեթանոսաց: Եւ զօրութիւնս ոչ սակաւս առնէր Աստուած ի ձեռն Պօղոսի, մինչեւ ի հիւանդս տանել ի քրտանէ նորա թաշկինակս կամ վարշամակս, եւ մերժել ի նոցանէ ախտիցն, եւ այսոց չարաց ելանել: Յանդգնեցան ոմանք եւ ի շրջող Հրէիցն՝ որ երդմնեցուցիչքն էին, անուանել ի վերայ այնոցիկ՝ որ ունէին այսս չարս, զանուն Տեառն Յիսուսի, եւ ասէին· Երդմնեցուցանեմ զձեզ ի Յիսուս՝ զոր Պօղոսն քարոզէ: Էին ուրումն Սկեւեայ Հրէի քահանայապետի



եօթն որդիք, որ զայս առնէին: Պատասխանի ետ այսն չար եւ ասէ ցնոսա· Զ Յիսուս գիտեմ եւ զՊօղոս ճանաչեմ, բայց դուք ո՞վ էք: Եւ վազեաց այրն՝ յորում էր այսն չար, ըմբռնեալ զերկոսին՝ յաղթահարեաց զնոսա, մինչեւ մերկս եւ վիրաւորս փախչել ի տանէ անտի: Եւ այս յայտնի եղեւ ամենայն Հրէից եւ հեթանոսաց՝ որ բնակեալ էին յԵփեսոս· եւ անկաւ երկիւղ յամենեսեան ի նոսա, եւ մեծանայր անուն Տեառն Յիսուսի: Եւ բազումք ի հաւատացելոցն գային եւ խոստովան լինէին եւ պատմէին զգործս իւրեանց: Եւ բազումք ի կախարդասարացն բերէին զգիրսն, այրէին առաջի ամենեցուն· եւ համարեցան զգինս նոցա, եւ գտանէին արծաթոյ բիւրս հինգ: Եւ այսպէս բանն Աստուծոյ աճէր եւ զօրանայր: 20:

Ալէլուիա, ալէլուիա· Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քում· կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու·

Գլ· Ը· 21·

Տէրն մեր Յիսուս Քրիստոս·

Ասէ դարձեալ ցնոսա (Յիսուս·) Ես երթամ, եւ խընդրիցէք զիս, եւ ի մեղս ձեր մեռանիցիք· զի ուր եսն երթամ, դուք ոչ կարէք գալ: Ասէին Հրեայքն· Մի թէ զիւրովի՞ն երթայցէ, զի ասէ թէ Ուր եսն երթամ՝ դուք ոչ կարէք գալ: Եւ ասէ ցնոսա· Դուք ի ներքուստ աստի էք, եւ ես ի վերուստ անտի եմ· դուք յաշխարհէ աստի էք, ես չեմ յայսմ աշխարհէ: Բայց ասացի ձեզ՝ թէ ի մեղս ձեր մեռանիցիք· զի թէ ոչ հաւատայցէք թէ ես եմ, մեռանիցիք ի մեղս ձեր: Ասեն ցնա· Դու ո՞վ ես· ասէ ցնոսա Յիսուս· Նախ զի եւ խօսիմս իսկ ընդ ձեզ: Բազում ինչ ունիմ վասն ձեր խօսել եւ դատել· այլ որ առաքեացն զիս՝ ճշմարիտ է· եւ ես զոր լուայ ի նմանէ, զայն խօսիմ յաշխարհի: Եւ ոչ գիտացին՝ թէ զՀօրէ ասէր ցնոսա: Ասէ ցնոսա Յիսուս· Յորժամ բարձրացուցանիցէք զՈրդի մարդոյ, յայնժամ գիտասջիք՝ թէ ես եմ· եւ յանձնէ իմմէ ինչ ոչ առնեմ, այլ որպէս ուսոյց զիս Հայրն իմ, զայն խօսիմ: Եւ որ առաքեացն

զիս՝ ընդ իս է. ոչ եթող զիս միայն, զի ես զհաճոյս նորա առնեմ հանապազ: Իբրեւ զայս խօսեցաւ՝ բազումք հաւատացին ի նա: 30:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

### ԱԿ.

Ժամանակ. Ահաւոր եւ սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ: Որ անսկիզբն ի Հօրէ՝ անճառաբար մարմնացաւ ի Կուսէն. խաչի համբերելով, եւ կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգեւեաց շնորհս:

Սղ. ճ. Յողորմութիւն եւ յիրաւունս օրհնեցից զքեզ Տէր. սաղմոս ասացից, եւ ի միտ առից:

ճԱ. Տէր լուր աղօթից իմոց. աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն:

ճԲ. Օրհնեա անձն իմ զՏէր. եւ ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԺԹ. 21:

Եւ իբրեւ կատարեցաւ այս, եդ Պօղոս ի մտի շրջել ընդ Մակեդոնիա եւ ընդ Աքայիա եւ գալ յԵրուսաղէմ. ասէր եթէ Յետ երթալոյն իմ անդր, պարտ է ինձ եւ զՀռովմ տեսանել: Առաքեաց ի Մակեդոնիա երկուս ի պաշտօնէիցն իւրոց զՏիմոթէոս եւ զԵրաստոս, եւ ինքն մնաց ժամանակս ինչ յԱսիա: Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ խռովութիւն ոչ սակաւ վասն ճանապարհին: Իսկ Դեմետրիոս ոմն անուն՝ արծաթագործ, գործէր մեհեանս արծաթիս Արտեմիս դիցն. եւ տայր ճարտարացն լինել ոչ սակաւ շահ: Որ ժողովեացն իսկ զձեռագէտս արուեստին եւ ասէ. Ա՛րք, դուք ձեզէն իսկ գիտէք, զի յայսմ գործոյ է շահ մեզ: Եւ տեսանէք եւ լսէք՝ եթէ ոչ միայն զԵփեսացւոց, այլ գրեթէ զամենայն իսկ Ասիացւոց՝ Պօղոսս այս հաւանեցուցեալ շրջեաց բազում ժողովս, ասել՝ թէ Ոչ են աստուածք՝ ձեռագործք: Եւ ոչ միայն այս ճգնէ զմեր կողմնս գալ ի յանդիմանութիւն, այլ եւ զմեծին տստուածոյ Արտեմեայ զմեհեանն յոչինչ համարել. նաեւ քակելոց եւս իցէ մեծու-



թիւն նորա, զոր ամենայն Ասիա եւ տիեզերք պաշտեն: Եւ զայս իբրեւ լուան, լի եղեն բարկութեամբ. աղաղակէին եւ ասէին. Մեծ է Արտեմիս Եփեսացւոց: Եւ լցաւ քաղաքն խռովութեամբ. դիմեցին առ հասարակ ի թէատրոնն, յափըշտակեցին զԳայիոս եւ զԱրիստարքոս Մակեդոնիացի՝ զուղեկիցսն Պօղոսի: Բայց Պօղոս իբրեւ կամեցաւ մտանել յամբոխն, ոչ թողին զնա աշակերտքն: Ոմանք եւ յասիապետացն՝ որ էին նորա բարեկամք, յղէին առ նա եւ աղաչէին՝ մի՛ տալ զանձն ի թէատրոնն: Այլք այլ իմն աղաղակէին, զի էր ժողովն նոցա խռովեալ, եւ բազումք ի նոցանէ ոչ գիտէին եթէ վասն ո՛յր ժողովեալ իցեն: Եւ յամբոխէն բազմութենէ յառաջ կալան զԱղեքսանդրոս. եւ իբրեւ ածին զնա յառաջ Հրեայքն, Աղեքսանդրոս շարժեաց զձեռն եւ կամէր պատասխանի առնել ամբոխին: Իբրեւ գիտացին՝ թէ այրն Հրեայ է, միաբարբառ եղեալ յամենեցունց՝ իբրեւ ժամս երկուս աղաղակել, թէ Մեծ է Արտեմիս Եփեսացւոց: Լռեցոյց դպրապետն զամբոխն եւ ասէ. Ա՛րք Եփեսացիք, իսկ ո՞է ի մարդկանէ՝ որ ոչ գիտէ զԵփեսացւոց քաղաքս մեհենազարդ՝ մեծին Արտեմեայ դիցն եւ Դիոպետեայ: Եւ զի այդ այդպէս է անշուշտ՝ պարտ է ձեզ հանդարտել, եւ մի՛ ինչ յանդըգնութեամբ գործել: Ածէք զարդ զայդոսիկ այսր, ոչ մեհենակապուտս եւ ոչ հայհոյիչս աստուածոցն մերոց: Զի եթէ Դեմետրիոս եւ որք ընդ նմա ճարտարք՝ ունիցին ինչ ընդ ումեք բանս, յատեան երթիցեն, եւ դատաւորք գոն, եւ ամբաստան լիցին զմիմեանց: Ապա եթէ վասն այլ իրիք խնդիր իցէ՝ յօրինաւոր ժողովսն վճարեսցեն: Քանզի եւ մեզ վիշտ վտանգի է ընդ կռուոյս այսր աւուր՝ առանց իրիք յանցանաց լինելոյ, զորմէ ոչ կարասցուք պատասխանի տալ վասն ժողովոյս այսորիկ: Եւ զայս ասացեալ արձակեաց զժողովսն: 40:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր թագաւորեաց, վայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ը. 31:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ասէր (Յիսուս) առ Հրեայսն հաւատացեալս. Եթէ դուք կացջիք ի բանի իմում, ճշմարիտ աշակերտք իմ էք.

եւ ծանիջիք զՃշմարտութիւնն, եւ Ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ: Պատասխանի ետուն նմա եւ ասեն. Զաւակ Աբրահամու եմք, եւ ոչ ումեք երբեք ծառայեցաք. զիա՞րդ ասես թէ ազատք լինիջիք: Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ամենայն որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց. եւ ծառայն ոչ յաւիտեան կայ ի տան, իսկ որդին յաւիտեան կայ: Իսկ արդ՝ եթէ որդին զձեզ ազատեցուսցէ, Ճշմարիտ ազատք լինիջիք: Գիտեմ զի զաւակ Աբրահամու էք. այլ խնդրէք սպանանել զիս, զի բանին իմոյ չիք տեղի ի ձեզ: Ես զոր տեսի առ Հօր իմում՝ խօսիմ. եւ դուք զոր լուարուք ի հօրէն ձերմէ՝ առնէք: Պատասխանի ետուն նմա եւ ասեն. Հայր մեր Աբրահամ է: Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ որդիք Աբրահամու էիք՝ զգործսն Աբրահամու գործէիք: Այլ այժմիկ խնդրէք սպանանել զիս. զայր մի՝ որ ձեզ զՃշմարտութիւն խօսեցայ՝ զոր լուայ ի Հօրէ իմմէ. զայդ Աբրահամ ոչ արար: Դուք առնէք զգործս հօրն ձերոյ: Ասեն ցնա. Մեք ի պոռնկութենէ չեմք ծնեալ. մի է հայր մեր Աստուած: Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ Աստուած էր հայր ձեր, սիրէիք արդեօք զիս, զի ես յԱստուծոյ ելի եւ եկի. եւ ոչ եթէ յանձնէ ինչ եկի, այլ նա առաքեաց զիս: Ընդէ՞ր զխօսս իմ ոչ գիտէք դուք, վասն զի ոչ կարէք լսել զբանն իմ: Դուք ի հօրէ ի սատանայէ էք, եւ զցանկութիւնս հօրն ձերոյ կամիք առնել. զի նա մարդասպան էր ի սկզբանէ, եւ ի Ճշմարտութեան ոչ եկաց, զի ոչ գոյ Ճշմարտութիւն ի նմա. յորժամ խօսիցի սուտ՝ յիւրոց անտի խօսի. զի սուտ է եւ հայր նորա: Իսկ ես զի զՃշմարտութիւն խօսիմ, ոչ հաւատայք ինձ: Ո՞ ի ձէնջ յանդիմանէ զիս վասն մեղաց. եթէ զՃշմարիտն ասեմ ձեզ՝ ընդէ՞ր ոչ հաւատայք ինձ: Որ էն յԱստուծոյ՝ զբանս Աստուծոյ լսէ. եւ դուք վասն այնորիկ ոչ լսէք, զի չէք յԱստուծոյ: Պատասխանի ետուն Հրեայքն եւ ասեն ցնա. Ո՞չ բարւոք ասեմք մեք՝ եթէ Սամարացի ես դու, եւ դեւ գոյ ի քեզ: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Յիս դեւ ոչ գոյ. այլ պատուեմ զՀայր իմ, եւ դուք անարգէք զիս: Ես ոչ խնդրեմ զփառս իմ. է որ խնդրէն եւ դատի: Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոք զբանն իմ պահեսցէ՝ զմահ մի՛ տեսցէ ի յաւիտեան: Ասեն ցնա Հրեայքն. Արդ՝ գիտացաք եթէ դեւ գոյ ի քեզ. Աբրահամ մեռաւ եւ



մարգարէքն. եւ դու ասես՝ եթէ ոք զբանն իմ պահեսցէ, մի՛ Ճաշակեսցէ զմահ ի յաւիտեան: Միթէ դու մե՞ծ ինչ ոք իցես քան զՀայր մեր Աբրահամ՝ որ մեռաւ, եւ մարգարէքն մեռան. արդ՝ դու զո՞ առնես զքեզ: Պատասխանի ետ Յիսուս. Եթէ ես փառաւորեմ զանձն իմ, փառքն իմ ոչ ինչ են. է Հայր՝ որ փառաւորէ զիս, զորմէ դուքն ասէք՝ թէ Աստուած մեր է, եւ ոչ Ճանաչէք զնա. բայց ես գիտեմ զնա. եւ թէ ասեմ, թէ ոչ գիտեմ զնա՝ ձեզ նման սուտ լինիմ. այլ գիտեմ զնա, եւ զբան նորա պահեմ: Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զօր իմ, ետես եւ ուրախ եղեւ: Ասեն ցնա Հրեայքն. Յիսուն ամ չեւ եւս է քո, եւ զԱբրահա՞մ տեսեր: Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ. յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես: Վէմս առին Հրեայքն, զի արկցեն ի վերայ նորա. եւ Յիսուս խոյս ետ, եւ ել գնաց ի տաճարէ անտի: 59:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### ԲՁ.

Ժամամուտ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Սղ. ՃԳ. Օրհնեա անձն իմ զՏէր. Տէր Աստուած իմ մեծ եղեր յոյժ:

ՃԴ. Խոստովան եղերուք Տեառն եւ կարդացէք զանուն նորա. պատմեցէք ի հեթանոսս զգործս նորա:

ՃԵ. Խոստովան եղերուք Տեառն՝ զի քաղցր է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Ի. 1:

Եւ յետ դադարելոյ ամբոխին՝ կոչեաց Պօղոս զաշակերտսն եւ մխիթարեաց. ողջոյն ետ եւ ել գնաց ի Մակեդոնիա: Եւ շրջեալ ընդ կողմանսն ընդ այնոսիկ եւ մխիթարեալ զնոսա բանիւք բազմօք, եկն յԵլլադա: Իբրեւ արար անդ ամիսս երիս, եղեւ նմա դաւ ի Հրէիցն, մինչ դեռ կամէր ելանել յԱսորիս. խորհուրդ կալաւ դառնալ

ընդ Մակեդոնիա: Եւ երթայր ընդ նմա մինչեւ յԱսիա՝ Սոսիպատրոս Պիռեայ Բերացի, եւ ի Թեսաղոնիկեցւոց՝ Արիստարքոս եւ Սեկունդոս եւ Գայիոս Դերբացի եւ Տիմոթէոս, եւ Ասիացիք՝ Տիւքիկոս եւ Տրոփիմոս: Սոքա յառաջ երթեալ՝ մնային մեզ ի Տրովադա: Եւ մեք նաւեցաք յետ աւուրցն բաղարջակերաց ի Փիլիպպեայ եւ եկաք առ նոսա ի Տրովադա՝ մինչեւ աւուրս հինգ. անդ դադարեցաք աւուրս եօթն: Եւ յաւուրն շաբաթուց՝ մինչ դեռ ժողովեալ էաք բեկանել զհացն, Պօղոս խօսէր ընդ նոսա՝ զի գնալոց էր ի վաղիւ անդր. եւ երկայնեաց զբանն մինչեւ ի մէջ գիշերոյն: Էին լապտերք բազումք ի վերնատանն, ուր էաքն ժողովեալ: Եւ նստէր ոմն երիտասարդ՝ անուն Եւտիքոս՝ ի վերայ պատուհանին, նիրհէր ի քուն թանձրութեան՝ ի խօսելն Պօղոսի յաճախ, ընկղմեալ ի քնոյ անտի՝ անկաւ յերրորդ դստիկոնէն ի վայր, եւ բարձաւ մեռեալ: Եւ իջեալ Պօղոս անկանէր զնովաւ. առնոյր զնա ընդ գիրկս եւ ասէր. Մի՛ խռովիք, քանզի հոգի սորա ի սմին է: Եւ ել եբեկ զհացն եւ ճաշակեաց, եւ բազում եւս խօսեցաւ մինչեւ յառաւօտն, եւ ապա ել գնաց: Եւ ածին զպատանին կենդանի, եւ մխիթարեցան ոչ սակաւ: Եւ մեք մտեալ ի նաւն՝ ամբարձաք յԱսոն. անտի ակն ունէաք միւսանգամ առնուլ զՊօղոս. զի այնպէս պատուիրեալ էր՝ մինչ ինքն զցամաքաւն երթալոց էր: Եւ իբրեւ դիպեցաւ մեզ ի յԱսոն, առեալ զնա եկաք ի Մետիլինէ: Եւ անտի նաւեալ՝ ի վաղիւ անդր հասաք հանդէպ Քեայ. եւ ի միւս օրն հասաք ի Սամոս, եւ ի վաղիւ անդր եկաք ի Մելիտոն: Զի ի մտի եդեալ էր Պօղոսի նաւել առ Եփեսեաւ, որպէս զի մի՛ լեցի նմա ժամանակ ինչ յամել յԱսիա. քանզի փութայր՝ եթէ հնար ինչ իցէ նմա՝ զօրն պենտէկոստէից երթալ յԵրուսաղեմ: 16:

Ալէլուիա, ալէլուիա. Ցնծացէք առ Աստուած, օգնական է մեր. աղաղակեցէք առ Աստուած Յակովբայ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Թ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Եւ մինչ դեռ անցանէր՝ ետես այր մի կոյր ի ծնէ: Եւ հարցին ցնա աշակերտքն նորա եւ ասեն. Ռա՛բբի, ո՞յր վնաս



է, սորա՞ թէ հօր եւ մօր իւրոյ, զի կոյր ծնցի: Պատասխանի ետ Յիսուս. Ոչ դորա վնաս է, եւ ոչ հօր եւ մօր իւրոյ. այլ զի յայտնի լիցին գործքն Աստուծոյ ի դմա: Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ՝ որ առաքեացն զիս, մինչ աւուր կայ. գայ գիշեր՝ յորժամ ոչ ոք կարէ գործել: Մինչ դեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի: Զայս իբրեւ ասաց, եթուք ի գետին եւ արար կաւ ի թքոյն, եւ ծեփեաց զկաւն ի վերայ աչաց կուրին, եւ ասէ ցնա. Երթ՝ լուա յաւազանին Սելովմայ, որ թարգմանի առաքեալ: Չոգաւ լուացաւ, եկն եւ տեսանէր: Իսկ դրացիքն եւ որոց տեսեալն էր զնա յառաջագոյն թէ մուրացիկ էր, ասէին. Ո՞չ սա էր՝ որ նստէրն եւ մուրանայր: Կէսքն ասէին. Նա է: Այլքն ասէին. Ոչ՝ այլ նման է նմա. եւ ինքն ասէր՝ թէ Ես եմ: Ասեն ցնա. Իսկ զիա՞րդ բացան աչք քո: Նա ետ պատասխանի. Այր մի՝ որում Յիսուսն ասեն, կաւ արար եւ ծեփեաց զաչս իմ, եւ ասէ ցիս. Երթ ի Սելովամ եւ լուա. չոգայ՝ լուացայ եւ տեսանեմ: Ասեն ցնա. Ո՞ւր է նա. ասէ ցնոսա. Ոչ գիտեմ: Ածին առ փարիսեցիսն զնա՝ որ երբեմն կոյրն էր: Եւ էր շաբաթ՝ յորժամ զկաւն արար Յիսուս, եւ եբաց զաչս կուրին: Դարձեալ հարցանէին զնա փարիսեցիքն, թէ Զիա՞րդ տեսանես. Եւ նա ասէ ցնոսա. Կաւ եդ ի վերայ աչաց իմոց, եւ լուացայ եւ տեսանեմ: Ասեն ոմանք ի փարիսեցւոցն. Ոչ է այրն այն յԱստուծոյ, զի զշաբաթս ոչ պահէ: Կէսքն ասէին. Իսկ զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր այսպիսի նշանս առնել: Եւ էին հերձուածք ի մէջ նոցա: Ասեն դարձեալ ցկոյրն. Դու զի՞ ասես վասն նորա՝ զի եբաց զաչս քո: Եւ նա ասէ թէ Մարգարէ է: Եւ ոչ հաւատային Հրեայքն զնմանէ՝ թէ կոյր էր եւ բացաւ, մինչեւ կոչեցին զծնողս բացելոյն: Հարցին ցնոսա եւ ասեն. Սա՞ է որդին ձեր, զորմէ դուքն ասէիք, եթէ Կոյր ծնաւ. արդ զիա՞րդ տեսանէ: Պատասխանի ետուն նոցա ծնողքն նորա եւ ասեն. Գիտեմք զի սա է որդին մեր, եւ զի կոյր ծնաւ. բայց զիա՛րդ այժմդ տեսանէ՝ ոչ գիտեմք, կամ թէ ո՛ եբաց զաչս դորա՝ մեք ոչ գիտեմք. ցդա իսկ հարցէք. ինքնին ի չափ հասեալ է, ինքն իսկ խօսեսցի վասն իւր: Զայս ասացին ծնողքն նորա, զի երկնչէին ի Հրէիցն. քանզի ուխտ եդեալ էր Հրէից, եթէ ոք խոստովանեսցէ զնա Քրիստոս՝ ի բաց կացցէ ի ժողովրդենէն: Վասն

այնորիկ ասացին ծնողքն նորա, թէ Յնքնին ի չափ հասեալ է, ցնա իսկ հարցէք: Դարձեալ կրկին անգամ կոչեցին զայրն՝ որ կոյրն էր, եւ ասեն ցնա. Տուր փառս Աստուծոյ, մեք գիտեմք՝ զի այրն այն մեղաւոր է: Նա ասէ. Թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ գիտեմ. բայց զայս գիտեմ, զի կոյր էի եւ արդ տեսանեմ: Դարձեալ ասեն ցնա. Ո՛րինչ արար քեզ, զնա՞րդ երաց զաչս քո: Պատասխանի ետ նոցա. Ասացի ձեզ եւ ոչ լուարուք. զի՞ կամիք միւսանգամ լսել. միթէ եւ դո՞ւք կամիք աշակերտել նմա: Նզրա հայհոյէին զնա եւ ասէին. Դու լինջիր նորա աշակերտ. մեք Մովսիսի աշակերտք եմք: Մեք գիտեմք՝ զի ընդ Մովսիսի խօսեցաւ Աստուած. զսա ոչ գիտեմք ուստի՛ իցէ: Պատասխանի ետ այրն եւ ասէ ցնոսա. Եւդ իսկ ևն աքանչելիք, զի դուք ոչ գիտէք ուստի իցէ, եւ զնմ՛ զաչս երաց: Գիտեմք՝ զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ. բայց եթէ աստուածապաշտ ոք իցէ եւ զկամն նորա առնիցէ, նմա լսէ: Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ երաց ոք զաչս կուրի ի ծնէ կոյր ծնելոյ: Եթէ ոչ յԱստուծոյ էր այրն այն՝ ոչ կարէր առնել ինչ: Պատասխանի ետուն եւ ասեն ցնա. Ի մեղս իսկ ծնեալ ես ամենեւին, եւ դու վարդապե՞տ լինիս մեր. եւ հանին զնա արտաքս: Լուաւ Յիսուս՝ եթէ հանին զնա արտաքս. եւ իբրեւ եգիտ զնա՝ ասէ ցնա. Դու հաւատա՞ս յՈրդի Աստուծոյ: Նա պատասխանի ետ եւ ասէ. Տէր ո՞վ է՝ զի հաւատացից ի նա: Ասէ ցնա Յիսուս. Եւ տեսեր զնա, եւ որ խօսիդ ընդ քեզ՝ նա է: Եւ նա ասէ. Հաւատամ Տէր, եւ երկիր եպագ նմա: 38:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՑԻՆԱՆՑ

ՌԿ·

Ջ·ա·մ·ե·ս· Վրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Սղ· ճԶ· Խոստովան եղերուք Տեառն՝ զի քաղցր է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

ճԷ· Պատրաստ է սիրտ իմ Աստուած. պատրաստ է սիրտ իմ օրհնել եւ սաղմոս ասել քեզ փառօք իմովք:



ՃԸ· Աստուած, օրհնութեան իմոյ մի՛ լռեր. զի բերան մեղաւորի, բերան նենգաւորի բացաւ ի վերայ իմ:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց·

Գլ· Ի· 17:

Եւ ի Մելիտեայ յղեալ Յ֊փեսոս՝ կոչեաց զերիցունս եկեղեցւոյն: Եւ իբրեւ եկին առ նա, ասէ ցնոսա. Դուք ձեզէն գիտէք յօրէ յառաջնմէ՝ յորմէ եկի Յասիա, որպէս ընդ ձեզ զամենայն ժամանակս եղէ, ծառայել Տեառն ամենայն խոնարհութեամբ եւ բազում արտասուօք եւ փորձութեամբք՝ որ դիպեցան ինձ ի նենգութեանցն Հրէից: Որպէս ոչ ինչ զանգիտեցի յօգտակարացն ցալատել ձեզ եւ ուսուցանել զձեզ հրապարակաւ եւ առանձին: Տալ վկայութիւն Հրէից եւ հեթանոսաց զապաշխարութեանն՝ որ առ Աստուած, եւ զհաւատոցն՝ որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս: Եւ արդ՝ ահաւասիկ ես կապեալ հոգւովն երթամ Յերուսաղէմ, եւ որ ինչ անդ ընդ իս անցանելոց է՝ չգիտեմ: Բայց զի Հոգին սուրբ ըստ քաղաքաց վկայէ ինձ եւ ասէ, եթէ կապանք եւ նեղութիւնք ինան քեզ: Եւ ես ոչ իւիք համարիմ զանձն իմ պատուական՝ որպէս զկատարեալ զընթացս իմ ուրախութեամբ, եւ զպաշտօնն՝ զոր առի ի Տեառնէ Յիսուսէ՝ վկայ լինել աւետարանի շնորհացն Աստուծոյ: Եւ արդ՝ ահաւասիկ գիտեմ ես, եթէ ոչ եւս տեսանէք զերեսս իմ դուք ամենեքեան, յորս շրջեցայ քարոզել զարքայութիւնն: Վասն որոյ եւ վկայութիւն դնեմ ձեզ յաւուրս յայսմիկ՝ զի սուրբ եմ ես յարենէ ամենեցուն: Վասնզի ոչ խորշեցայ ի պատմելոյ ձեզ զամենայն կամս Աստուծոյ: Ջգոյշ կացէք անձանց եւ ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցոյց արեամբ իւրով: Վասնզի գիտեմ ես՝ եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք յափշտակողք ի ձեզ, որ ոչ խնայեսցեն հօտիդ: Եւ ի ձէնջ յարիցեն արք՝ որք խօսեսցին թիւրս, ձգել զաշակերտան զկնի իւրեանց: Վասն այսորիկ արթուն կացէք եւ յիշեցէք՝ զի զերկեամ մի զքայ եւ զերեկ ոչ դադարեցի արտասուօք խրատել զմի մի իւրաքանչիւր: Եւ արդ՝ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ եւ բանի շնորհացն նորա, որ կարող է շինել եւ տալ ձեզ ժա-

ռանգութիւն ընդ սուրբսն ամենեսեան: Երծաթոյ կամ ոսկւոյ կամ հանդերձից ոչ ուրուք ի ձէնջ ցանկացայ: Դուք ինքնին գիտէք զի զպէտսն իմ եւ որոց ընդ իս էին՝ պաշտեցին ձեռքս այս: Եւ զամենայն ինչ ցուցի ձեզ· զի այսպէս պարտ է վաստակել եւ դարմանել զհիւանդս, եւ յիշել զբանն Տեառն Յիսուսի, զոր ինքն իսկ ասաց· Երանելի է մանաւանդ տալ քան առնուլ: Եւ զայս իբրեւ ասաց, եդեալ ծունր ամենեքումբք՝ եկաց յաղօթս: Բազում լալիւն եղեւ ամենեցուն. եւ անկեալ զպարանոցսն Պօղոսի՝ համբուրէին զնա: Մորմոքէին մանաւանդ ի վերայ բանին՝ զոր ասէր, թէ ոչ եւս տեսանելոց են զերեսս նորա. եւ յուղարկեցին զնա ի նաւ անդր: 38:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց:

Գլ· ԻԱ· 1:

Եւ իբրեւ եղեւ ելանել մեզ եւ մեկնել ի նոցանէ, հանդիպ գնացեալ եկաք ի Կով· եւ ի վաղիւ անդր ի Հռոդոն, եւ անտի ի Պատարա: Եւ գտեալ նաւ մի՝ զի երթայր ի Փիւնիկէ, ելեալ ի նա գնացաք: Եւ յայտ եղեալ Կիպրեայ՝ թողաք զնա ի ձախակողմն, նաւեցաք ի Սորիս եւ իջաք ի Տիւրոս, քանզի անդ էր նաւն թափելոց զբեռինն: Եւ գտեալ զաշակերտսն՝ կացաք անդ աւուրս եօթն, որք ասէին ցՊօղոս ի ձեռն Հոգւոյն՝ մի՛ ելանել ի Երուսաղէմ: Եւ իբրեւ եղեւ մեզ կատարել զաւուրսն՝ ելեալ գնացաք, յուղարկեալ զմեզ ամենեցունն հանդերձ կանամբք եւ որդւովք մինչեւ արտաքոյ քաղաքին. եւ եդեալ ծունր առ ծովեզերին՝ կացաք յաղօթս: Եւ հրաժարեցաք ի միմեանց եւ ելաք ի նաւն, եւ նոքա դարձան յիւրեանց: 1:

ռանգութիւն ընդ սուրբսն ամենեսեան: Երծաթոյ կամ ոսկւոյ կամ հանդերձից ոչ ուրուք ի ձէնջ ցանկացայ: Դուք ինքնին գիտէք զի զպէտսն իմ եւ որոց ընդ իս էին՝ պաշտեցին ձեռքս այս: Եւ զամենայն ինչ ցուցի ձեզ· զի այսպէս պարտ է վաստակել եւ դարմանել զհիւանդս, եւ յիշել զբանն Տեառն Յիսուսի, զոր ինքն իսկ ասաց· Երանելի է մանաւանդ տալ քան առնուլ: Եւ զայս իբրեւ ասաց, եդեալ ծունր ամենեքումբք՝ եկաց յաղօթս: Բազում լալիւն եղեւ ամենեցուն. եւ անկեալ զպարանոցսն Պօղոսի՝ համբուրէին զնա: Մորմոքէին մանաւանդ ի վերայ բանին՝ զոր ասէր, թէ ոչ եւս տեսանելոց են զերեսս նորա. եւ յուղարկեցին զնա ի նաւ անդր: 38:

Ընկէցէք զանասնագործն ի ծովն, եւ գտանիցէ ի նմա ստատէր մի: Եւ բացեալ զբերան նորա՝ գտանիցէ ստատէր մի, առեալ տուր նոցա ինձ եւ քեզ: Եւ արարին այսպէս: Եւ ահա ելանէ ի ձկնէն ստատէր մի, եւ տուին ի մաքսն: Եւ ասէ Տէր ցՊետրոս. Ի Պետրոսէ առեալ ընկալ զդրամն, եւ տուր նոցա ինձ եւ քեզ: Եւ ասէ Պետրոս ցՏէր. Եթէ դու ես, հրամայեա զիս գալ առ քեզ ի վերայ ջուրց: Եւ նա ասէ. Եկ: Եւ իջեալ Պետրոս ի նաւակէն՝ քայէր ի վերայ ջուրց, գայր առ Յիսուս: Եւ տեսեալ զհողմն զօրաւոր՝ երկեաւ, եւ սկսեալ խորասուզանել՝ գոչեաց եւ ասէ. Տէր, փրկեա զիս: Եւ անդէն Յիսուս երկարեալ զձեռն՝ բռնեաց զնա, եւ ասէ ցնա. Ով սակաւահաւատ, ընդէ՞ր երկբայեցար: Եւ մտեալ նոքա ի նաւակն՝ դադարեաց հողմն: Եւ որ էին ի նաւակին՝ եկեալ երկիր պագին նմա, եւ ասեն. Ճշմարիտ Որդի Աստուծոյ ես դու: Եւ անցեալ անտի՝ եկին ի Գեննեսարեթ: Եւ ծանեալ նմա արանց տեղւոյն՝ առաքեցին յամենայն գաւառն զնա: Եւ մատուցին առ նա զամենայն հիւանդս: Եւ աղաչէին զնա, զի միայն զծայրն հանդերձից նորա մերձենան: Եւ որ մերձեցան՝ ապրեցան: 14:

Ընկէցէք զանասնագործն ի ծովն, եւ գտանիցէ ի նմա ստատէր մի: Եւ բացեալ զբերան նորա՝ գտանիցէ ստատէր մի, առեալ տուր նոցա ինձ եւ քեզ: Եւ արարին այսպէս: Եւ ահա ելանէ ի ձկնէն ստատէր մի, եւ տուին ի մաքսն: Եւ ասէ Տէր ցՊետրոս. Ի Պետրոսէ առեալ ընկալ զդրամն, եւ տուր նոցա ինձ եւ քեզ: Եւ ասէ Պետրոս ցՏէր. Եթէ դու ես, հրամայեա զիս գալ առ քեզ ի վերայ ջուրց: Եւ նա ասէ. Եկ: Եւ իջեալ Պետրոս ի նաւակէն՝ քայէր ի վերայ ջուրց, գայր առ Յիսուս: Եւ տեսեալ զհողմն զօրաւոր՝ երկեաւ, եւ սկսեալ խորասուզանել՝ գոչեաց եւ ասէ. Տէր, փրկեա զիս: Եւ անդէն Յիսուս երկարեալ զձեռն՝ բռնեաց զնա, եւ ասէ ցնա. Ով սակաւահաւատ, ընդէ՞ր երկբայեցար: Եւ մտեալ նոքա ի նաւակն՝ դադարեաց հողմն: Եւ որ էին ի նաւակին՝ եկեալ երկիր պագին նմա, եւ ասեն. Ճշմարիտ Որդի Աստուծոյ ես դու: Եւ անցեալ անտի՝ եկին ի Գեննեսարեթ: Եւ ծանեալ նմա արանց տեղւոյն՝ առաքեցին յամենայն գաւառն զնա: Եւ մատուցին առ նա զամենայն հիւանդս: Եւ աղաչէին զնա, զի միայն զծայրն հանդերձից նորա մերձենան: Եւ որ մերձեցան՝ ապրեցան: 14:



այլ ոչ լուան նոցա ոչխարքն: Ես եմ դուռն. ընդ իս եթէ ոք մտանիցէ, կեցցէ. մտցէ եւ ելցէ եւ ճարակ գտցէ: Գող ոչ գայ՝ եթէ ոչ զի գողասցի եւ սպանցէ եւ կորուսցէ. ես եկի զի կեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին: Ց· 10:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### Գ·Շ·

Ժամամուտ. Վրանզի յարեաւ ի մեռելոց Քրիստոս Աստուած յաւիտենից արարիչ, եւ յարութիւն ազգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց, եւ ամենայն զուարթունք երկնից. ընդ որս գոչելով ասեմք. Փառք սոսկալի յարութեան քոյ Տէր:

Սղ· ՃԹ· Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ. մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց:

ՃԺ· Խոստովան եղէց քեզ Տէր բոլորով սրտիւ իմով, ի խորհուրդս ուղղոց, ի ժողովուրդս. մեծ են գործք Տեառն, եւ քննեալ են յամենայնի կամք նորա:

ՃԺԱ· Երանելի է այր՝ որ երկնչի ի Տեառնէ. զպատուիրանս նորա նա կամի յոյժ:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց:

Գլ· ԻԱ· 1:

Եւ իբրեւ եղեւ ելանել մեզ եւ մեկնել ի նոցանէ, հանդիպ գնացեալ եկաք ի Կով· եւ ի վաղիւ անդր ի Հռոդոն, եւ անտի ի Պատարա: Եւ գտեալ նաւ մի՝ զի երթայր ի Փիւնիկէ, ելեալ ի նա գնացաք: Եւ յայտ եղեալ Կիպրեայ՝ թողաք զնա ի ձախակողմն, նաւեցաք ի Սորիս եւ իջաք ի Տիւրոս, քանզի անդ էր նաւն թափելոց զբեռինն: Եւ գտեալ զաշակերտսն՝ կացաք անդ աւուրս եօթն, որք ասէին ցՊօղոս ի ձեռն Հոգւոյն՝ մի՛ ելանել ի Երուսաղէմ: Եւ իբրեւ եղեւ մեզ կատարել զաւուրսն՝ ելեալ գնացաք, յուղարկեալ զմեզ ամենեցուն հանդերձ կանամբք եւ որդւովք մինչեւ արտաքոյ քաղաքին. եւ եդեալ ծունր առ ծովեզերին՝ կացաք յաղօթս: Եւ հրաժարեցաք ի միմեանց եւ ելաք ի նաւն, եւ նոքա դարձան յիւրեանց: 1:

եւ նոքա դարձան յիւրեանց տեղիս: Եւ մեր զնաւն առխրթեալ ի Տիւրոսէ՝ հասաք ի Պտղոմիդա. եւ ողջոյն տուեալ եղբարց՝ եղաք օր մի առ նոսա: Եւ ի վաղիւ անդր ելեալ անտի՝ եկաք ի Կեսարիա. եւ մտեալ յապարանսն Փիլիպպոսի աւետարանչի՝ որ էր յեօթանց անտի. ագաք առ նմա: Նորա էին դստերք չորք՝ կոյսք մարգարէք: Եւ ի լինելն մեր անդ աւուրս բազումս, էջ ոմն ի Հրէաստանէ մարգարէ՝ անուն Ագաբոս: Եւ եկեալ առ մեզ, առեալ զգօտին Պօղոսի՝ կապեաց զոտս եւ զձեռս իւր, եւ ասէ. Այսպէս ասէ Հոգին սուրբ. զայրն՝ որոյ գօտիս այս է, այսպէս կապեսցեն յԵրուսաղէմ Հրեայք, եւ մատնեսցեն ի ձեռս հեթանոսաց: Եւ իբրեւ լուաք զայն՝ աղաչէաք մեք եւ որ ի տեղւոջն էին՝ չելանել նմա յԵրուսաղէմ: Յայնժամ պատասխանի ետ Պօղոս. Ջի՞նչ գործէք, զի՞ լայքդ եւ ճմլեցուցանէք զսիրտ իմ. քանզի ես ոչ միայն կապելոյ, այլ եւ մեռանելոյ յԵրուսաղէմ պատրաստ եմ վասն անուանն Տեառն Յիսուսի Քրիստոսի: Եւ ի չանսալն նորա՝ լռեցաք, ասեմք. Տեառն կամք իցին: 14:

Ալէլուիա, ալէլուիա. Գովեա Երուսաղէմ զՏէր. եւ օրհնեա զԱստուած քո Սիովն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ժ. 11:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց: Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն եւ փախչի, եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ. քանզի վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն: Ես եմ հովիւն քաջ, եւ ճանաչեմ զիմսն եւ ճանաչիմ յիմոցն: Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայր. եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց: Նա եւ այլ եւս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ. եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր, եւ ձայնի իմում լուիցեն, եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ: Վասն այնորիկ սիրէ զիս Հայր իմ, զի ես դնեմ զանձն իմ, զի միւսանգամ առից զնա: Ոչ ոք հանէ զնա յինէն, այլ ես



դնեմ զնա անձամբ իմով. իշխանութիւն ունիմ դնել զնա, եւ իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա. զայս պատուէր առի ի Հօրէ իմմէ: Դարձեալ հերձուած լինէր ի մէջ Հրէից վասն բանիցս այսոցիկ: Եւ ասէին բազումք ի նոցանէ. Դեւ գոյ ի նմա եւ մոլեգնի, զի՞ բնաւ լսէք նմա: Կէսքն ասէին. Այսպիսի բանք ոչ դիւահարի են. միթէ դեւ կարէ՞ զաչս կուրի բանալ: 21:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Գ.Կ.

Ժամամուտ. Ահաւոր եւ սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ: Որ անսկիզբն ի Հօրէ՝ անճառաբար մարմնացաւ ի Կուսէն. խաչի համբերելով, եւ կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգեւեաց շնորհս:

Սղ. ՃԺԲ. Օրհնեցէք մանկունք զՏէր. եւ օրհնեցէք զանուն Տեառն:

ՃԺԳ. Յելանելն Իսրայէլի յԵգիպտոսէ, տանն Յակովբայ ի ժողովրդենէ այլազգեաց:

ՃԺԴ. Սիրեցի զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց. խոնարհեցոյց զունկն իւր առ իս, եւ ես յաւուրս իմ կարդացի առ նա:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԻԱ. 15:

Եւ յետ աւուրցն այնոցիկ՝ հանդերձեալ ելանէաք յԵրուսաղէմ: Եկին ընդ մեզ եւ յաշակերտաց անտի Կեսարացւոց, եւ տանէին զմեզ առ որում վանս ունելոց էաք՝ Մնասովնի ումեմն Կիպրացւոյ՝ առաջին աշակերտի: Եւ ի մտանելն մեր յԵրուսաղէմ, խնդութեամբ ընկալան զմեզ եղբարք: Ի վաղիւ անդր եմուտ Պօղոս ընդ մեզ առ Յակովբոս. եւ եկին ամենայն երիցունքն: Եւ ողջոյն տուեալ նոցա՝ պատմէր մի ըստ միոջէ զոր արար Աստուած ի հեթանոսս ի ձեռն պաշտաման նորա: Եւ նոցա լուեալ՝ փառաւոր առնէին զԱստուած, եւ ասեն ցնա. Տեսանե՞ս,

եղբայր, քանի բիւրք են հաւատացելոցն Հրէից, եւ ամենեքեան նախանձաւոր օրինացն են: Բայց իրազեկ եղեն վասն քո՝ թէ ապստամբութիւն ուսուցանես ի Մովսիսէ՝ որոց ի հեթանոսս ամենայն Հրեայք են. ասես՝ մի՛ թլփատել զորդիս նոցա եւ մի՛ ըստ կրօնիցն գնալ: Արդ՝ զի՞նչ լինիցի, ապաքէն լսեն եթէ եկեալ ես: Արդ զայս արա զոր ասեմք քեզ. են ի մեզ արք չորք ուխտադիրք յանձինս իւրեանց. զնոսա առեալ՝ սրբեսցիս ընդ նոսա, եւ ծախեա ինչ ի նոսա՝ զի գերծցեն զգլուխս. եւ գիտասցեն ամենեքեան, թէ զորոց իրազեկն եղեն զքէն՝ ոչ ինչ է. այլ միաբանիս եւ դու պահել զօրէնսն: Բայց վասն հաւատացելոցն հեթանոսաց, մեք առաքեցաք՝ որպէս ընտրեցաք, մի ինչ այնպիսի պահել նոցա. բայց միայն զգուշանալ ի կռոց զոհելոյ եւ յարենէ եւ ի հեղձուցելոյ եւ ի պոռնկութենէ: Յայնժամ Պօղոսի առեալ զարսն՝ ի վաղիւ անդր ընդ նոսա սրբեալ եմուտ ի տաճարն, յայտ առնել զկատարումն աւուրցն սրբութեան, մինչեւ մատեաւ ի վերայ իւրաքանչիւր ուրուք ի նոցանէ պատարագ: 26:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր, ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. եւ ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ժ. 22:

Առ տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Եղեն յայնժամ նաւակատիքն յԵրուսաղէմ, եւ ձմեռն էր: Եւ շրջէր Յիսուս ի տաճարին՝ ի սրահին Սողոմոնի: Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն եւ ասեն. Մինչեւ յե՞րբ թափես զոգիս մեր. եթէ դու ես Քրիստոսն՝ ասա մեզ համարձակ: Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. Ասացի ձեզ եւ ոչ հաւատայք ինձ. զգործսն զոր ես գործեմ յանուն Հօր իմոյ՝ նոքին իսկ վկայեն վասն իմ: Այլ դուք ոչ հաւատայք, զի չէք յոչխարաց անտի իմոց: Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, եւ ես ճանաչեմ զնոսա, եւ զկնի իմ գան. եւ ես տամ նոցա զկեանսն յաւիտենականս, եւ մի՛ կորիցեն ի յաւիտեան. եւ մի՛ ոք յափշտակեսցէ զնոսա ի



ձեռաց իմոց: Հայրն իմ՝ որ ետ ինձ զնոսա, մեծ է քան զամենայն, եւ ոչ ոք կարէ յափշտակել ի ձեռաց Հօր իմոյ: Ես եւ Հայր իմ մի եմք: Վէմս առին Հրեայքն՝ զի քարկոծ արասցեն զնա: Պատասխանի ետ նոցա Յիսուս. Բազում գործս բարիս ցուցի ձեզ ի Հօրէ իմմէ. վասն որոյ՞ գործոյ ի նոցանէ քարկոծ առնէք զիս: Պատասխանի ետուն նմա Հրեայքն. Վասն բարւոյ գործոյ ոչ առնեմք զքեզ քարկոծ, այլ վասն հայհոյութեան. եւ զի դու մարդ ես, եւ զանձն քո Աստուած առնես: Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ո՞չ յօրէնս ձեր գրեալ է. Ես ասացի թէ աստուածք իցէք: Իսկ եթէ զնոսա աստուածս ասէ, առ որս բանն Աստուծոյ եղեւ, եւ չէ մարթ եղծանել գրոյն. իսկ զոր Հայր սրբեաց եւ առաքեաց յաշխարհ, դուք ասէք թէ Հայհոյես. զի ասացի՝ թէ Որդի Աստուծոյ եմ: Եթէ ոչ գործեմ զգործս Հօր իմոյ, մի՛ հաւատայք ինձ. ապա թէ գործեմ, թէ եւ ինձ ոչ հաւատայք, սակայն գործոցն հաւատացէք. զի գիտասջիք եւ ծանիջիք՝ եթէ Հայր յիս եւ ես ի Հայր: Դարձեալ խնդրէին զնա ունել, եւ ել ի ձեռաց նոցա: Եւ գնաց միւսանգամ յայնկոյս Յորդանանու՝ ի տեղին, ուր էր Յովհաննէս զառաջինն եւ մկրտէր. եւ անդ լինէր: Եկին բազումք առ նա եւ ասեն. զի Յովհաննէս նշան ինչ ոչ արար. բայց զամենայն զոր ասաց Յովհաննէս վասն նորա՝ ճշմարիտ էր. եւ բազումք հաւատացին ի նա անդ: 42:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

ԴԶ.

Ժամամուտ. Քանզի յարեաւ ի մեռելոց Քրիստոս Աստուած յաւիտենից արարիչ, եւ յարութիւն ազգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց, եւ ամենայն զուարթունք երկնից. ընդ որս գոչելով ասեմք. Փառք սոսկալի յարութեան քոյ Տէր:

Սղ. ճԺԵ. Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

ճԺԶ. Օրհնեցէք զՏէր ամենայն աղինք. գովեցէք զնա ամենայն ժողովուրդք:

ՃԺԷ. Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

ԳԼ. ԻԱ. 27:

Եւ իբրեւ մերձ էին եօթն աւուրքն ի կատարել, տեսեալ զնա ի տաճարին Ասիացւոց Հրէիցն՝ զեղուին զնովաւ զամենայն ամբոխն. եւ արկեալ ի նա ձեռս՝ աղաղակէին. Ա՛րք Իսրայէլացիք, օգնեցէք. այս այր է՝ որ հակառակ ժողովրդեանն եւ օրինացն եւ տեղւոյս այսորիկ՝ ամենեցուն ամենայն ուրեք ուսուցանէ. մինչեւ հեթանոսս եւս եմոյծ ի տաճարն եւ պղծեաց զսուրբ տեղին: Քանզի էր յառաջագոյն տեսեալ զՏրոփիմոս զԵփեսացի ի քաղաքին ընդ նմա, զոր կարծէին եթէ ի տաճար անդր եմոյծ Պօղոս: Շարժեցաւ քաղաքն ամենայն, եւ կուտեցաւ ժողովուրդն, եւ առեալ զՊօղոս՝ ձգէին արտաքոյ տաճարին. եւ վաղվաղակի փակեցան դրունքն: Եւ խնդրէին զնա սպանանել. եհաս զրոյց ի հազարապետ գնդին, եթէ խռովեալ է ամենայն Երուսաղէմ: Որոյ անդէն առեալ զօրականս եւ հարիւրապետս՝ դիմեաց ի վերայ նոցա. եւ նոցա տեսեալ զհազարապետն եւ զզօրականսն, դադարեցին ի հարկանելոյ զՊօղոս: Յայնժամ մատուցեալ հազարապետն՝ կալաւ զնա եւ հրամայեաց կապել կրկին շղթայիւք, եւ հարցանէր թէ ո՛ իցէ եւ զինչ իցէ արարեալ: Այլք այլ ի՛մն աղաղակէին զնմանէ յամբոխին: Իբրեւ ոչ կարաց գիտել զստոյգն վասն ամբոխին, հրամայեաց ածել զնա ի բանակն: Եւ իբրեւ եհաս յաստիճանսն, դէպ եղեւ բառնալ բերել զնա ի զօրականացն՝ վասն բռնութեան ամբոխին: Քանզի զհետ երթայր բազմութիւն ժողովրդեանն, եւ ասէին՝ Բարձ զդա: Մինչ դեռ մտանելոց էր Պօղոս ի բանակն, ասէ ցհազարապետն. Եթէ արժա՞ն իցէ ինձ խօսել ընդ քեզ: Եւ նա ասէ. Յունարէն գիտե՞ս: Մի՞ արդեօք դու իցես Եգիպտացին, որ յառաջ քան զայս աւուրս ապստամբեցուցեր եւ հաներ յանապատ չորս հազարս արս սիկարեանս: Եւ ասէ Պօղոս. Ես եմ այր հրեայ ի Տարսոնէ Կիլիկեցւոց, ոչ աննշան քաղաքի քաղաքացի. աղաչեմ զքեզ հրամայեա ինձ խօսել առ ժողովուրդդ: Եւ ի հրամայելն նորա, Պօղոս կացեալ ի վերայ աշտիճանացն՝



շարժեաց զձեռն՝ ժողովրդեանն: Իբրեւ բազում լռութիւն լինէր, սկսաւ բարբառել Հեբրայեցւոց բարբառովն եւ ասէ. Ա՛րք եղբարք եւ հարք, լուարուք ինձ այժմ առ ձեզ պատասխանատուութեանս: Իբրեւ լուան՝ թէ Հեբրայեցւոց լեզուաւն բարբառեցաւ նոցա՝ առաւել եւս դադարեցին ի լռութիւն: Եւ ասէ. Ես եմ այր հրեայ ծնեալ ի Տարսոն Կիլիկեցւոց՝ սնեալ ի քաղաքիս յայսմիկ, առ ոտս Գամաղիէլի, խրատեալ ըստ ճշմարտութեան հայրենի օրինացն. նախանձայոյզ էի Աստուծոյ, որպէս ամենեքին դուք այսօր: Որ զսոյն ճանապարհ վարեցի մինչեւ ի մահ, կապել եւ մատնել ի բանտ արս եւ կանայս. որպէս եւ քահանայապետդ վկայէ ինձ եւ ամենայն ծերակոյտդ. յորոց եւ թուղթս առեալ առ եղբարս ի Դամասկոս երթայի, ածել եւ անտի կապեալս յԵրուսաղէմ, զի պատժեսցին: Եւ եղեւ ինձ ի գնալն եւ ի մերձենալ ի Դամասկոս, զմիջաւուրբն յանկարծակի յերկնից փայլատակեալ լոյս սաստիկ զինեւ: Եւ անկայ յերկիր, եւ լուայ բարբառ՝ որ ասէր ցիս. Սաւո՛ւղ Սաւո՛ւղ, զի՞ հալածես զիս: Եւ ես ետու պատասխանի՝ թէ Ո՞վ ես Տէր: Եւ ասէ ցիս. Ես եմ Յիսուս Նազովրեցի՝ զոր դուն հալածես: Բայց որ ընդ իսն էին՝ զլոյսն տեսին, այլ զձայնն ոչ լսէին՝ որ խօսէր ընդ իս: Եւ ասեմ. Զի՞նչ արարից Տէր: Եւ ասէ ցիս Տէր. Յարուցեալ երթիցես ի Դամասկոս, եւ անդ պատմեսցի քեզ վասն ամենայնի՝ որ հրաման է քեզ առնել: Իբրեւ ոչ տեսանէի ի փառաց լուսոյն այնորիկ, զձեռանէ ձգեալ ի նոցանէ՝ որ ընդ իսն էին, մտի ի Դամասկոս: Անանիա ոմն՝ այր երկիւղած ըստ օրինացն, վկայեալ յամենայն բնակչաց՝ որ ի Դամասկոս Հրեայքն էին, եկն եկաց առ իս եւ ասէ. Սաւո՛ւղ եղբայր, ի վեր հայեաց: Եւ ես նոյնժամայն ի վեր հայեցայ ի նա. եւ նա ասէ ցիս. Աստուած հարցն մերոց յառաջագոյն ընտրեաց զքեզ ճանաչել զկամս նորա, եւ տեսանել զարդարն եւ լսել բարբառ ի բերանոյ նորա. զի եղիցես վկայ նորա առ ամենայն մարդիկ որոց տեսերն եւ լուար: Եւ արդ՝ զի՞ հեղգաս, արի մկրտեաց եւ լուա զմեղս քո ի կարդալ զանուն նորա: Եւ եղեւ ինձ ի դառնալն յԵրուսաղէմ եւ կալ յաղօթս ի տաճարին, լինել ի զարմացման. եւ տեսանել զնա՝ զի ասէր ցիս. Փութա ել յԵրուսաղեմէ վաղվաղակի, քանզի չեն ընդունելոց զքո վկայութիւնդ վասն իմ: Եւ ես ասեմ. Տէր, ինքեանք իսկ

գիտեն՝ զի ես էի որ ի բանան ասի եւ գան Հարկանէի ըստ
ժողովրդոյն զհաւատացեալսն ի քեզ: Եւ յորժամ հեղոյր
արիւնն Ստեփանոսի վկայի քո, ես ինքն էի՝ որ ի վերայ կայի,
եւ կամակից լինէի սպանման նորա, եւ պահէի զհանդերձս
սպանողացն նորա: Եւ ասէ ցիս. Գնա, զի ես ի հեթանոս
հեռաւորս առաքեցից զքեզ: Եւ ունկն դնէին նմա մինչեւ
ցայս բան. ապա բարձին զձայնս իւրեանց եւ ասեն. Խարձ
յերկրէ զայդպիսիդ. զի չէ պարտ այդպիսւոյդ կեալ: Եւ յա-
ղաղակելն նոցա եւ ընկենուլ զհանդերձս եւ զփոշին ցանել
յօդսն, հրամայեաց հազարապետն մուծանել զնա ի բանակն.
ասէր՝ գանիւ հարցանել զնա, զի Գիտացից վասն որոյ յանց-
մանն այնպէս աղաղակէին զնմանէ: Եւ իբրեւ պրկեցին զնա
փոկովք, ասէ Պօղոս ցհարիւրապետն՝ որ ի վերայ կայր. Եթէ
զայր Հռովմայեցի եւ անարատ պատիր իցէ ձեզ գան հարկա-
նել: Իբրեւ լուաւ հարիւրապետն, մատուցեալ առ հազա-
րապետն պատմեաց եւ ասէ. Ո՞ինչ կամիս առնել՝ քանզի
այրն այն Հռովմայեցի է: Եւ մատուցեալ հազարապետն՝
ասէ ցնա. Ասա դու ցիս՝ Հռովմայեցի՞ ես. եւ նա ասէ. Ա՛յո:
Պատասխանի եւ հազարապետն. Ես բազում գլխոյ զզե-
նուորութիւնս զայս ստացայ: Ասէ Պօղոս. Ես ծնեալ իսկ ի
դմին եմ: Եւ վաղվաղակի ի բաց կացին ի նմանէ՝ որ հար-
կանելոցն էին զնա. եւ հազարապետն իսկ երկեաւ, իբրեւ
գիտաց եթէ Հռովմայեցի է. եւ զի կապեալն եւս էր զնա:
Իբ. 29:

Ալէլուիա, ալէլուիա. Վասն վայելչ օրհնութիւն Ա-
ստուած ի Սիովն. եւ քեզ տացին աղօթք Երուսաղէմ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու:

Գլ. ԺԱ. 1:

Ա՛յն ժամանակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ էր ոմն հիւանդ Ղա՛զարոս ի Բեթանիա, ի գեղջէ
Մարեմայ եւ Մարթայի քեռւոջ նորա: Էր այն Մարիամ էր՝
որ օծ զՏէրն իւղով եւ ջնջեաց զոտս նորա հերով իւրով.
որոյ եղբայրն Ղա՛զարոս հիւանդ էր: Առաքեցին առ նա քոյրն
նորա եւ ասեն, Տէր, ահաւասիկ զոր դուն սիրէիր՝ հիւան-
դացեալ է: Իբրեւ լուաւ Յիսուս, ասէ. Ընդ հիւանդու-



թիւն չէ ի մահ, այլ վասն փառացն Աստուծոյ. զի փառաւոր
լիցի Որդի Աստուծոյ այնուհետեւ: Եւ սիրէր Յիսուս զՄարթա
եւ զքոյր նորա զՄարիամ եւ զՂազար: Իբրեւ լուաւ թէ
հիւանդացեալ է, զտեղի կալաւ անդէն ուր էրն՝ աւուրս եր-
կուս: Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա. Եկայք երթիցուք
միւսանգամ ի Հրէաստան: Ասեն ցնա աշակերտքն՝ Ռաբբի,
այժմ եւս խնդրէին զքեզ Հրեայքն քարկոծ առնել. եւ
դարձեա՞լ երթաս անդրէն: Պատասխանի Յիսուս. Ո՞չ
երկոտասան ժամ է աւուր. եթէ ոք գնայ ի տուընջեան՝ ոչ
գայթագղի, զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ. ապա թէ
ոք գնայ ի գիշերի՝ գայթագղի, զի լոյս ոչ գոյ ընդ նմա: Ա՛յս
իբրեւ ասաց, յետ այնորիկ ասէ ցնոսա. Ղազարոս բարեկամ
մեր ննջեաց. այլ երթամ, զի զարթուցից զնա: Ասեն ցնա
աշակերտքն. Տէր, եթէ ննջեաց՝ ապա ապրի: Էր Յիսուս
վասն մահուն նորա ասէր. Նոցա այսպէս թուեցաւ՝ թէ վասն
ննջելոյ քնոյն ասէ: Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս յայտնա-
պէս. Ղազարոս մեռաւ. եւ ես ուրախ եմ վասն ձեր, զի
դուք հաւատասջիք ինձ, զի ես չէի անդ. բայց արդ՝ եկայք
երթիցուք առ նա: Ասէ Թովմաս՝ անուանեալն երկուորեակ՝
ցաշակերտակիցսն. Ո՛ն, եկայք եւ մեք՝ զի ընդ նմա մեռցուք:
Նմին Յիսուս՝ եգիտ զնա չորեքօրեայ ի գերեզմանի: Եւ էր
Բեթանիա մերձ Երուսաղէմ, իբրեւ ասպարիսօք հնգետա-
սան: Բազումք ի Հրէից անտի եկեալ էին առ Մարթա եւ
Մարիամ, զի մխիթարեսցեն զնոսա վասն եղբօրն: Մարթա
իբրեւ լուաւ՝ թէ Յիսուս գայ, ընդառաջ գնաց նորա. բայց
Մարիամ նստէր անդէն ի տան: Ասէ Մարթա ցՅիսուս.
Տէր, եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ. այլ եւ
արդ գիտեմ, եթէ զոր ինչ խնդրեսցես յԱստուծոյ՝ տացէ
քեզ Աստուած: Ասէ ցնա Յիսուս. Յարիցէ եղբայրն քո:
Ասէ ցնա Մարթա. Գիտեմ զի յարիցէ ի յարութեան՝
յաւուրն յետնում: Ասէ ցնա Յիսուս. Ես իսկ եմ յարու-
թիւն եւ կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ եւ մեռանի՝
կեցցէ. եւ ամենայն որ կենդանի է եւ հաւատայ յիս, մի՛
մեռցի ի յաւիտեան. հաւատաս այսմիկ: Ասէ ցնա. Այո՛
Տէր, ես հաւատացի՝ եթէ դու ես Քրիստոսն Որդի Աստու-
ծոյ, որ յաշխարհ գալոց էիր: Եւ զայս իբրեւ ասաց, գնաց
եւ կոչեաց զՄարիամ զքոյր իւր լռելեայն եւ ասէ. Վարդա-
պետն եկեալ է եւ կոչէ զքեզ: Նա իբրեւ լուաւ՝ յարեաւ

վաղվաղակի, եւ եկն առ Յիսուս: Չեւ եւս էր եկեալ Յիսուս ի գեօղն. այլ էր անդէն ի տեղւոջն՝ ուր ընդառաջ եղեւ նմա Մարթա: Իսկ Հրեայքն՝ որ էին ընդ նմա ի տան անդ եւ մխիթարէին զնա, իբրեւ տեսին զՄարիամ թէ յարեաւ վաղվաղակի եւ գնաց, գնացին եւ նոքա զհետ նորա. Համարէին թէ ի գերեզմանն երթայ՝ զի լացցէ անդ: Իսկ Մարիամ իբրեւ եկն ուր էրն Յիսուս եւ ետես զնա, անկաւ առ ոտս նորա եւ ասէ. Տէր, եթէ աստ էիր դիպեալ՝ ոչ էր մեռեալ եղբայրն իմ: Յիսուս իբրեւ ետես զնա զի լայր, եւ որ ընդ նմայն էին Հրեայքն՝ լային, խռովեցաւ յոգի իւր իբրեւ զայրացեալ, եւ ասէ. Ո՛ւր եդիք զնա. ասեն ցնա. Տէր, եկ եւ տես: Եւ արտասուեաց Յիսուս: Ասէին Հրեայքն. Տեսէք՝ ո՛րչափ սիրէր զնա: Կէսքն ի նոցանէ ասէին. Ո՞չ կարէր սա, որ եբաց զաչս կուրին, առնել՝ զի եւ սա մի՛ մեռցի: Յիսուս դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր, գայ ի գերեզմանն. եւ էր այր մի, եւ վէմ մի եդեալ ի վերայ նորա: Եւ ասէ Յիսուս. Ի բաց արարէք զվէմդ: Ասէ ցնա Մարթա՝ քոյր մեռելոյն. Տէր, արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է: Ասէ ցնա Յիսուս. Ո՞չ ասացի քեզ՝ եթէ հաւատասցես, տեսցես զփառսն Աստուծոյ: Եւ իբրեւ ի վեր առին զվէմն, Յիսուս ամբարձ զաչս իւր ի վեր, եւ ասէ. Հա՛յր, գոհանամ զքէն, զի լուար ինձ. եւ ես գիտէի՝ զի յամենայն ժամ լսես ինձ. այլ վասն ժողովրդեանս որ շուրջ կան՝ առնեմ, զի հաւատասցեն՝ թէ դու առաքեցեր զիս: Զայս իբրեւ ասաց, ի ձայն մեծ աղաղակեաց եւ ասէ. Ղա՛զարէ, արի եկ արտաքս: Եւ ել մեռեալն ոտիւք կապելովք, եւ ձեռօքն երիզապնդօք, եւ երեսօքն վարշամակապատօք: Եւ ասէ ցնոսա Յիսուս. Լուծէք զդա եւ թողէք երթալ: Բազումք ի Հրէիցն՝ որ եկեալ էին առ Մարեմանս, իբրեւ տեսին զոր արարն, հաւատացին ի նա: Եւ ոմանք ի նոցանէ գնացին առ փարիսեցիս, եւ պատմեցին նոցա՝ զոր արարն Յիսուս: 46:

# Ի ՏՕՆԻ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

## ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

# ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### ԴԿ.

Ժամամուտ. Հիացան վերնական բազմութիւնքն՝ տեսանելով զքեզ ի հրեղէն կառս բազմեալ. սարսեալ ասէին. Ո՞վ է սա որ դիմեալ գայ յԵդովմայ, եւ եկեալ մտանէ փառօք ի փառս. Տէր փառք քեզ:

Սղ. ՃԺԸ. Երանեալ են անբիծք ի ճանապարհի. եւ ոյք գնան յօրէնս Տեառն: Բաժին իմ ես դու Տէր. ասացի պահել ինձ զօրէնս քո: Արարի իրաւունս եւ արդարութիւն. մի մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց:

ՃԺԹ. Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, եւ լուաւ ինձ. Տէր փրկեաց զանձն իմ ի շրթանց նենգաւորաց եւ ի լեզուէ չարէ:

ՃԻ. Համբարձի զաչս իմ ի լերինս. ուստի եկեսցէ ինձ օգնութիւն:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Ա. 1:

Զբանն առաջին՝ զոր արարի վասն ամենայնի, ո՛ Թէովփիլէ, զոր սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել, մինչեւ յօրն պատուիրելոյ առաքելոցն ի ձեռն Հոգւոյն սրբոյ, զորս ընտրեացն եւ վերացաւ: Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի յետ չարչարանացն իւրոց ի բազում արուեստս՝

յաւուրս քառասուն երեւել նոցա եւ ասել վասն արքայութեանն Աստուծոյ: Եւ ի հաղորդել ընդ նոսա հացիւ, պատուէր տայր նոցա՝ Երուսաղեմէ մի՛ մեկնել, այլ սպասել աւետեացն Հօր՝ զոր լուարուքն յինէն: Զի Յովհաննէս մկրտեաց ի ջուր· այլ դուք մկրտիցիք ի Հոգին սուրբ, ոչ յետ բազում ինչ աւուրցս այսոցիկ: Եւ նոքա մատուցեալ հարցանէին զնա եւ ասէին. Տէր, եթէ ի ժամանակի՞ աստ յայսմիկ հաստուցանելոց իցես զարքայութիւնն Իսրայէլի: Ասէ ցնոսա. Ոչ է ձեզ գիտել զժամս եւ զժամանակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեան. այլ առջիք զօրութիւն ի հասանել Հոգւոյն սրբոյ ի վերայ ձեր. եւ եղիջիք ինձ վկայք Երուսաղէմ եւ յամենայն Հրէաստանի եւ ի Սամարիա եւ մինչեւ ի ծագս երկրի: Եւ զայս իբրեւ ասաց, մինչ դեռ հայէին նոքա՝ վերացաւ. եւ ամպն կալաւ զնա յաչաց նոցա: Եւ մինչ դեռ պշուցեալ էին ընդ երկինս երթալոյ նորա, եւ ահաւասիկ արք երկու երեւեցան նոցա ի հանդերձս սպիտակս, որք եւ ասացինն. Ա՛րք Գալիլեացիք, զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս: Այս Յիսուս որ վերացաւ ի ձէնջ երկինս, սոյնպէս եկեսցէ՝ զոր օրինակ տեսէք զնա երթալ երկինս: Ապա դարձան Երուսաղէմ յանուանեալ լեռնէն Ձիթենեաց, որ է մերձ Երուսաղէմ ըստ շաբաթուն ճանապարհի: Եւ իբրեւ մտին, ելին ի վերնատունն՝ ուր վանքն իսկ էին. Պետրոս եւ Յակովբոս եւ Յովհաննէս եւ Անդրէաս, Փիլիպպոս եւ Թովմաս, Բարթողոմէոս եւ Մատթէոս, Յակովբոս Ալփեան եւ Հմաւէլն Նախանձայոյզ եւ Յուդա Յակովբեան: Որք ամենեքեան էին հանապազորդեալ միաբան յաղօթս հանդերձ կանանբք եւ Մարեմամ մարբն Յիսուսի եւ եղբարբք նորա: 14:

Ալէլուիա, ալէլուիա. Ամբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. ամբարձցին դրունք յաւիտենից, եւ մտցէ Թագաւոր փառաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

ԳԼ. ԻԴ. 41:

Վասն համբարձման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ մինչ դեռ տակաւին չհաւատային ի խնդութենէն եւ զարմացեալ էին, ասէ ցնոսա. Ունիք ինչ կերակուր աստ:



Եւ նոքա ետուն նմա ձկան խորովելոյ մասն եւ խորիսխ մեղու: Եւ առ՝ եկեր առաջի նոցա, եւ զմնացորդսն ետ նոցա. Եւ ասէ ցնոսա. Այս բանք են՝ զոր խօսեցայ ընդ ձեզ, մինչ առ ձեզն էի, թէ պարտ է լնուլ ամենայն գրելոցն յօրէնսն Մովսիսի եւ ի մարգարէս եւ ի սաղմոսն վասն իմ: Յայնժամ երաց զմիտս նոցա իմանալ զգիրս: Եւ ասէ ցնոսա, թէ Այսպէս պարտ էր չարչարել Քրիստոսի, եւ յառնել ի մեռելոց յաւուր երրորդի, եւ քարոզել յանուն նորա ապաշխարութիւն եւ թողութիւն մեղաց յամենայն ազգս՝ սկսեալ Երուսաղեմէ. Եւ դուք էք վկայք այսոցիկ: Եւ ահա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ ի ձեզ. Եւ դուք նստարուք ի քաղաքիս Երուսաղէմ, մինչեւ զգենուցուք զօրութիւն ի բարձանց: Եհան զնոսա մինչեւ ի Բեթանիա, եւ ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա: Եւ եղեւ յօրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ ի նոցանէ, եւ վերանայր յերկինս: Եւ նոցա երկիր պագեալ նմա, դարձան Երուսաղէմ ուրախութեամբ մեծաւ: Եւ էին հանապազ ի տաճարին, գովէին եւ օրհնէին զԱստուած: 53:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

### ԸՋ.

Ժամամուտ. Որ յանպատում յաթոռ նստիս եւ յանմարմնոց վերօրհնիս, անհասանելի Հանդ Աստուած, ի յերկրի երեւեցար ճշմարիտ մարդ. զանօրէնութեան կատարեալ զնորհուրդ՝ խաչի եւ մահու համբերեցեր, եւ զհրաշալի զյարութիւնդ քո ցուցեր հզօր զօրութեամբ: Այսօր համբարձար փառօք ի յերկինս, եւ զկուսածին զմարմինդ քո հրաշափառապէս լուսազարդեցեր. զոր տեսեալ Եսայիա՝ նախաձայնեալ ասէր. Ով է սա՝ որ գիմեալ գայ յերկրէ: Իւացեալ պետութեանց երկնից՝ գոչէին առ միմեանս. Ամբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, եւ մտցէ Թագաւոր փառաց: Այլ որ յամենայնի կարողդ ես եւ հզօր, ընդհեա եւ մեզ հանդիպել քեզ ամպովք ի միւսանգամ քո գալստեանդ. որ միայնդ ես մարդասէր:

Սղ. ՃԻԱ. Ուրախ եղէ ես՝ ոչք ասէին ցիս. ի տուն Տեառն երթիցուք մեք:

ՃԻԲ. Առ քեզ Տէր համբարձի զաչս իմ. որ բնակեալդ ես յերկինս:

ՃԻԳ. Եթէ ոչ Տէր էր առ մեզ. ասասցէ Իսրայէլ, եթէ ոչ Տէր էր առ մեզ:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԻԲ. 30:

Եւ ի վաղիւ անդր կամէր գիտել զճշմարիտն, թէ զի՞նչ չարախօսութիւն իցէ Հրէիցն. արձակեաց զնա, եւ հրամայեաց կոչել զքահանայապետսն եւ զամենայն ատեանն. եւ իջուցեալ զՊօղոս կացոյց ի մէջ նոցա: Եւ հայեցեալ Պօղոսի յատեանն՝ ասէ. Ա՛րք եղբարք, ես ամենայն ուղիղ մտօք գնացեալ եմ առաջի Աստուծոյ մինչեւ ցայսօր: Եւ քահանայապետն Անանիա հրամայեաց սպասաւորացն հարկանել զբերան նորա: Յայնժամ Պօղոս ասէ ցնա. Հարկանելոց է զքեզ Աստուած, ո՛րմ բռեալ, եւ դու նստիս դատել զիս ըստ օրինացն, եւ առանց օրինաց հրամայես զիս հարկանել: Եւ որ շուրջն կային՝ ասեն. Զքահանայապետ Աստուծոյ հայհոյես: Եւ ասէ Պօղոս. Ոչ գիտէի, եղբարք, եթէ իցէ քահանայապետ. գրեալ իսկ է. Զիշխան ժողովրդեան քո ոչ հայհոյեսցես: Իբրեւ գիտաց Պօղոս՝ եթէ մի կողմն սադուկեցւոց է, եւ միւսն՝ փարիսեցւոց, աղաղակէր ի մէջ ատենին. Ա՛րք եղբարք, ես փարիսեցի եմ, որդի փարիսեցւոյ. վասն յուսոյ եւ յարութեան մեռելոց ես աւասիկ դատիմ: Եւ զայս իբրեւ ասաց՝ եղեն հերձուածք փարիսեցւոցն եւ սադուկեցւոց. եւ պատառեցաւ բազմութիւնն: Քանզի սադուկեցիքն ասեն. Չիք յարութիւն եւ ոչ հրեշտակ եւ ոչ հոգի. բայց փարիսեցիքն խոստովանին զերկոսեան: Եւ եղեւ աղաղակ մեծ. յոտն կացին ոմանք ի դպրաց անտի ի կողմանէ փարիսեցւոց, հակառակէին եւ ասէին. Ոչ ինչ չարութիւն գտանեմք յառնս յայսմիկ, բայց եթէ հոգի խօսեցաւ ի դմա կամ հրեշտակ: Եւ ի բազմանալ ամբոխին՝ երկուցեալ հազարապետն թէ գուցէ ճեղքիցի Պօղոս ի նոցանէ, հրամայեաց զօրականին իջանել յափշտակել զնա ի միջոյ նոցա եւ ածել ի բանակն: Եւ ի վաղուեան գիշերին եկաց առ նմա Տէր եւ ասէ. Քաջալերեաց, Պօղէ, զի որպէս վկայեցեր վասն իմ յԵրուսաղէմ, սոյնպէս պարտ է քեզ եւ ի Հռովմ վկայել: ԻԳ. 11:



Ալէլուիա, ալէլուիա. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. ամբարձցին դրունք յաւիտենից, եւ մտցէ թագաւոր փառաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԺԱ. 47:

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Ժողովեցին քահանայապետքն եւ փարիսեցիք ատեան, եւ ասեն. Զի՞նչ արասցուք, զի այրն այն բազում նշանս առնէ: Եթէ թողումք զնա այնպէս, ամենեքին հաւատան ի նա. եւ գայցեն Հոռոմք եւ բառնայցեն զազգս մեր եւ զտեղի: Մի ոմն ի նոցանէ՝ անուն Կայիափա, որ քահանայապետ էր տարւոյն այնորիկ, ասէ ցնոսա. Դուք ոչ ինչ գիտէք, եւ ոչ բնաւ խորհել իսկ, թէ լաւ է մեզ՝ զի այր մի մեռանիցի ի վերայ ժողովրդեանս, եւ մի՛ ամենայն ազգս կորիցէ: Զայս ոչ յանձնէ ինչ ասաց. զի քահանայապետ էր տարւոյն այնորիկ, մարգարէացաւ եթէ մեռանելոց էր Յիսուս ի վերայ ազգին. եւ ոչ ի վերայ ազգին միայն, այլ զի եւ զորդիսն Աստուծոյ զցրուեալսն ժողովեսցէ ի մի: Ապա յայնմ օրէ խորհուրդ արարին՝ զի սպանցեն զնա: Եւ Յիսուս այնուհետեւ ոչ եթէ համարձակ շրջէր ի մէջ Հրէիցն. այլ գնաց անտի յերկիր մի՝ որ մերձ էր յանապատ, ի քաղաք մի՝ որում անուն էր Եփրայիմ, եւ անդ լինէր աշակերտօքն հանդերձ: 54:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### ԱԿ.

Ժամամուտ. Հիացան վերնական բազմութիւնքն՝ տեսանելով զքեզ ի հրեղէն կառս բազմեալ. սարսեալ ասէին. Ո՞վ է սա որ դիմեալ գայ յԵդովսայ, եւ եկեալ մտանէ փառօք ի փառս, Տէր փառք քեզ:

Սղ. ՃԻԴ. Որ յուսայ ի Տէր, որպէս լեառն Սիովն. մի՛ սասանեսցի յաւիտեան՝ որ բնակեալն է յԵրուսաղէմ:

ՃԻԵ. Ի դարձուցանել Տեառն զգերութիւն Սիովնի. եւ եղաք մեք մխիթարեալք:

ՃԻԶ. Եթէ ոչ Տէր շինէ զտուն, ի նանիր վաստակին շինողք նորա:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

ԳԼ. ԻԳ. 12:

Եւ իբրեւ այգ եղեւ՝ արարեալ ժողով Հրէից, նզովեցին զանձինս ոչ ուտել եւ ոչ ըմպել՝ մինչեւ սպանցեն զՊօղոս: Եւ էին աւելի քան զքառասունն՝ որոց զայս ընդ միմեանս երդմունս արարեալ էր. որք մատեան առ քահանայապետան եւ երիցունս եւ ասեն. Նզովիւք նզովեցաք զանձինս ոչ ինչ ճաշակել՝ մինչեւ սպանցուք զՊօղոս: Այժ դուք զգացուցէք հազարապետին հանդերձ ատենիւն, զի իջուսցէ զնա առ ձեզ, որպէս թէ կամիցիք ճշմարտագոյնս ինչ գիտել զնմանէ. եւ մեք յառաջ քան զմօտել նորա՝ պատրաստեմք ի սպանանել զնա: Եւ լուեալ քեռորդւոյն Պօղոսի զդաւաճանութիւնն, եկն եմուտ ի բանակ անդր, պատմեաց Պօղոսի: Եւ կոչեցեալ Պօղոսի առ իւր զմի ի հարիւրապետաց անտի՝ ասէ. Զպատանիս զայս տար առ հազարապետն, զի ունի ինչ պատմել նմա: Եւ նորա առեալ զնա տարաւ առ հազարապետն եւ ասէ. Պաղեալն Պօղոս կոչեաց զիս եւ աղաչեաց զպատանիս զայս ածել առ քեզ, ունի ինչ խօսել ընդ քեզ: Առեալ զձեռանէ նորա հազարապետին՝ գնաց մեկուսի, հարցանէր՝ թէ Զ՞ինչ ունիս խօսել ընդ իս: Եւ նա ասէ. Հրեայք միաբանեցին աղաչել զքեզ, զի վաղիւ զՊօղոս իջուսցես յատեան, իբրեւ թէ կամիցին ինչ ճշմարտագոյնս հարցանել վասն նորա: Ընդ՝ դու մի՛ անսայցես նոցա. քանզի դարան գործեալ է նմա ի նոցանէ արանց աւելի քան զքառասունն, որ նզովեցին զանձինս ոչ ուտել եւ ոչ ըմպել՝ մինչեւ սպանցեն զնա. արդ պատրաստ են եւ սպասեն քումմէ հրամանի: Ապա հազարապետ արձակեաց զպատանին՝ պատուիրեալ մի՛ ումեք ասել, թէ Զայս զգացուցեր ինձ: Եւ կոչեաց երկուս ի հարիւրապետացն եւ ասէ. Պատրաստեցէք զօրականս երկերիւր, որպէս զի երթիցեն մինչեւ ի Կեսարիա, եւ հեծեալս եօթանասունս եւ տիգաւորս



երկերիւր, յերից ժամու գիշերոյն. եւ գրաստ պատրաստական՝ որպէս զի իջուցեալ զՊօղոս ապրեցուսցեն առ Փելիքս դատաւոր, գրեալ Թուղթ՝ որ ունէր օրինակ զայս. Կղեւդիոս Լիւսիաս առ քաջ դատաւորդ Փելիքս, ողջոյն: Զայրս զայս կալեալ ի Հրէից եւ մերձ ի սպանանել ի նոցանէ, հասեալ ի վերայ զօրականաւ՝ ապրեցուցի, իմացեալ թէ Հռովմայեցի է: Կամեցայ գիտել զվնասն՝ վասն որոյ ամբաստանէին զդմանէ, իջուցի զդա յատեան նոցա: Զոր գտի ամբաստանեալ վասն խնդրոյ իրիք իւրեանց օրինաց. եւ ոչ ինչ արժանի մահու կամ կապանաց ունէր վնաս: Իբրեւ ազդ եղեւ ինձ նենգութեան յայրդ լինելոյ ի նոցանէ՝ յղեցի առ քեզ. հրաման տուեալ եւ չարախօսացն խօսել զդմանէ առաջի քո. ողջ լեր: Եւ զօրականացն ըստ հրամանի նորա առեալ զՊօղոս՝ ածին գիշերայն յԱնտիպատրիս: Եւ ի վաղիւ անդր արձակեալ զհեծեալսն ընդ նմա երթալ՝ դարձան ի բանակն: Նոքա մտին ի Կեսարիա. եւ տուեալ ցդատաւորն զԹուղթն, առաջի կացուցին նորա եւ զՊօղոս: Իբրեւ ընթերցաւ՝ եհարց թէ յորմէ՞ նահանգէ իցէ. եւ ստուգեալ եթէ ի Կիլիկեայ է, Լուայց քեզ, ասէ, յորժամ չարախօսքն քո եկեսցեն. եւ հրամայեաց յապարանսն Հերովդի պահել զնա: 35:

Ալէլուիա, ալէլուիա. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. ամբարձցին դրունք յաւիտենից, եւ մտցէ Թագաւոր փառաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

ԳԼ. ԺԱ. 55:

Ընդ Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Եւ էր մերձ զատիկն Հրէից, եւ բազումք ելին յԱրուսաղէմ ի գաւառէ անտի յառաջագոյն քան զզատիկն, զի սրբեսցեն զանձինս իւրեանց: Խնդրէին զՅիսուս, եւ ասէին ընդ միմեանս՝ մինչ կային ի տաճարին. Զի՞նդ Թուի ձեզ՝ եթէ ո՛չ գայցէ ի տօն այսր: Պատուէր տուեալ էր քահանայապետիցն եւ փարիսեցւոց, զի թէ ոք գիտասցէ թէ ուր է, գուշակեսցէ զնմանէ, զի կալցին զնա: Իսկ Յիսուս վեց աւուրբ յառաջ քան զզատիկն եկն ի Բեթանիա, ուր էր

Պաղատ մեռանէն, զոր յարոյցն ի մեռելոց։ Եւ արարին անդ նմա ընթրիս. եւ ի սպասու կայր Մարթա, եւ Պաղատ մի էր ի բազմելոց ընդ նմա։ Իսկ Մարիամ առեալ լիտր մի իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, օծ զոտն Յիսուսի, եւ հերով իւրով մաքրէր զոտս նորա. եւ տունն լի եղեւ ի հոտոյ իւղոյն։ Ասէ մի ոմն յաշակերտաց անտի՝ Յուդա Իսկարիովտացի, որ մատնելոցն էր զնա. Ընդէր ոչ իւղդ այդ վաճառեցաւ երեք հարիւր դենարի, եւ տուաւ աղքատաց։ Ոչայս ասաց՝ ոչ զի զաղքատաց ինչ փոյթ էր նմա. այլ զի գող էր եւ զարկղն ինքն ունէր, եւ որ ինչ անկանէրն՝ նա կրէր։ Ասէ Յիսուս. Թողլ տուր դմա, զի յօրն պատանաց իմոց պահեսցէ զայդ։ Ոչ աղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիք. զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք։ Իբրեւ գիտաց ժողովուրդ բազում ի Հրէից թէ անդ է, եկին՝ ոչ միայն վասն Յիսուսի, այլ զի եւ զՊաղատ տեսցեն, զոր յարոյցն ի մեռելոց։ Խորհուրդ արարին քահանայապետքն՝ զի եւ զՊաղատ սպանցեն. քանզի բազումք ի Հրէից երթային եւ հաւատային ի Յիսուս։ ՃԲ· 11։

---

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՅԻՆԱՆՑ

## ԵՐՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ

### ՌԶ·

Ջամաճո՛ւթ· Որ յանպատում յաթոռ նստիս եւ յանմարմնոց վերօրհնիս, անհասանելի Հանդ Աստուած, ի յերկրի երեւեցար ճշմարիտ մարդ. զանօրինութեան կատարեալ զնորհուրդ՝ խաչի եւ մահու համբերեցեր, եւ զհրաշալի զյարութիւնդ քո ցուցեր հզօր զօրութեամբ։ Ակսօր համբարձար փառօք յերկինս, եւ զկուսածին զմարմինդ քո հրաշափառապէս լուսազարդեցեր. զոր տեսեալ Նասայիան՝ նախանձայնեալ ասէր. Ո՞վ է սա՝ որ դիմեալ գայ յերկրէ։ Հայեալ պետութեանց երկնից՝ գոչէին առ միմեանս. Ամբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, եւ մուտ թագաւոր փառաց։ Ակն որ յամենայնի կարողդ ես եւ հզօր, ընդհեա եւ մեզ հանդիպել քեզ ամպովք ի միւսանգամ քո գալստեանդ. որ միայնդ ես մարդասէր։



Սղ· ՃԻԷ· Նրանի ամենեցուն՝ որք երկնչին ի Տ֊առնէ, եւ գնան ի ճանապարհս նորա։

ՃԻԸ· Բազում անգամ մարտեան ընդ իս ի մանկուընէ իմմէ. ասացէ Իսրայէլ։

ՃԻԹ· Ի խորոց կարդացի առ քեզ Տէր· Տէր, լուր ձայնի իմում։

Ընթերցուած ի Գործոց առաքելոց·

ԳԼ· ԻԴ· 1։

Եւ յետ հինգ աւուր էջ քահանայապետն Ընանիա՝ հանդերձ ծերովք ոմամբք եւ ճարտարախօսաւ Տերտիղեաւ ոմամբ, որք եւ զգացուցին դատաւորին վասն Պօղոսի։ Եւ ի կոչելն զնա՝ սկսաւ Տերտիղոս ամբաստան լինել եւ ասել. Բազում խաղաղութիւն գտեալ ի քէն եւ իրաց ուղղուածք թիւն ազգիս այսորիկ քով խնամով, ամենայնիւ եւ ամենայն ուրեք ընդոհակալ եմք, քաջդ Փելիքս, ամենայն գոհութեամբ։ Բայց զի մի՛ աւելի եւս աշխատ արարից զքեզ, աղաչեմ լսել մեզ կարճ ի կարճոյ՝ քոյին հեզութեամբդ։ Գտանզի գտաք զայս ապականիչ եւ խռովիչ ամենայն Հրէից՝ որք են ընդ տիեզերս, եւ առաջնորդ Նազովրացւոց հերձուածոյն. որ եւ զտաճարն իսկ կամեցաւ պղծել, զոր եւ կալաք եւ ըստ մերոց օրինացն դատել կամեցաք։ Եկեալ Լիւսիաս հազարապետ՝ մեծաւ բռնութեամբ ի ձեռաց մերոց եհան։ Հրամայեաց եւ չարախօսացն նորա գալ առ քեզ. յորմէ դու իսկ բաւական լինիցիս վերստին դատել, ամենայնի հասու լինել՝ զորոց մեքս ամբաստանեմք զդմանէ։ Ասացեալքն եւ Հրեայքն, ասեն. Այդ այդպէս է։ Պատասխանի ետ Պօղոս՝ յակնարկել նմա դատաւորին խօսել. Ի բազում ամաց լինել քեզ դատաւոր ազգիս այսորիկ գիտեմ. յօժարութեամբ վասն իմոց իրաց պատասխանի առնեմ։ Գտանզի կարող ես գիտել, զի ոչ ինչ աւելի է իմ քան զաւուրս երկոտասան՝ յորմէ հետէ ելի երկիր պագանել Երուսաղէմ։ Եւ ոչ ի տաճարի անդ գտին զիս ընդ ուժեք խօսեցեալ, եւ կամ՝ ժողովս արարեալ բազմաց, ոչ ի ժողովարանս եւ ոչ ի քաղաքի. եւ ոչ յանդիման առնել կարեն քեզ՝ վասն որոյ այժմ չարախօսեն զինէն։ Բայց զայս խոստանամ քեզ, եթէ ըստ ճանապարհին՝ զոր ասեն հերձուած,

այնպէս պաշտեմ զհայրենի Աստուածն, հաւատացեալ ամենայնի՝ որ ինչ յօրէնսն եւ ի մարգարէս գրեալ է: Ունիմ յոյս առ Աստուած, որում եւ դոքա իսկ ակն ունին, թէ յարութիւն լինելոց է արդարոց եւ մեղաւորաց: Յորում եւ ես իսկ ճգնիմ, անխիղճ միտս ունել առ Աստուած եւ առ մարդիկ յամենայն ժամ: Ի բազում ամաց ողորմութիւնս եկի առնել յազգդ իմ, եւ ետու պատարագիս. որովք գտին զիս սրբեալ ի տաճարին՝ ոչ բազմօք եւ ոչ ամբոխիւ: Ոմանք յԱսիացւոց անտի Հրեայք՝ որոց պարտ էր գալ առաջի քո եւ ամբաստան լինել, եթէ ունիցին ինչ զինէն. եւ կամ ինքեանք սոքա ասասցեն, զի՞նչ գտին յիս անիրաւութիւն՝ մինչ դեռ կայի յատենին: Բայց միայն վասն միոյ բարբառոյս այսորիկ՝ զոր աղաղակեցի մինչ կայի ի մէջ նոցա, եթէ Վասն յարութեան մեռելոց դատիմ ես այսօր ի ձէնջ: Եւ յապաղեաց զնոսա Փելիքս, զի ստուգագոյնս գիտէր վասն ճանապարհին, ասէ. Յորժամ Լիւսիաս հազարապետ իջցէ այսր՝ տեղեկացայց վասն ձեր: Հրամայեաց հարիւրապետին պահել զնա, եւ ունել յընդարձակի, եւ մի՛ զոք յիւրոց անտի արգելուլ ի պաշտելոյ զնա: 23:

Ալէլուիա, ալէլուիա. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. ամբարձցին դրունք յաւիտենից, եւ մտցէ Թագաւոր փառաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԺԲ. 12:

Վասն գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում՝ որ եկեալ էր ի տօնն, իբրեւ լուան թէ գայ Յիսուս յԵրուսաղէմ, առին ոստս արմաւենեաց եւ ելին ընդ առաջ նորա, աղաղակէին եւ ասէին. Ովսաննայ, օրհնեալ որ գասդ յանուն Տեառն՝ Թագաւորդ Իսրայէլի: Եւ գտեալ Յիսուսի էշ մի, նստաւ ի վերայ նորա. որպէս եւ գրեալ է. Մի երկնչիր դուստր Սիովնի՝ ահաւադիկ Թագաւոր քո գայ նստեալ ի վերայ յաւանակի իշոյ: Եւ զայն ինչ ոչ գիտացին աշակերտքն նորա զառաջինն. այլ յորժամ փառաւորեցաւ Յիսուս, յայնժամ յիշեցին, եթէ այն էր՝ որ գրեալն էր վասն նորա, եւ զայն



արարին նմա: Եւ ժողովուրդն վկայէր՝ որ էր ընդ նմա, թէ զՂազար կոչեաց եւ եթ ի գերեզմանէն, եւ յարոյց զնա ի մեռելոց: Եւ վասն այնորիկ ընդառաջ եղեւ նմա ժողովուրդն, զի լուան եթէ զայն նշանս արարեալ էր նորա: Իսկ փարիսեցիքն ասէին ընդ միմեանս. Տեսանէ՞ք զի ոչ ինչ օգտիք. ահաւասիկ աշխարհ ամենայն զկնի նորա գնաց: Էին անդ ոմանք եւ հեթանոսք յելելոցն անդր, զի երկիր պագանիցեն ի տօնին: Նոքա մատեան առ Փիլիպպոս՝ որ ի Բեթսայիդա Գալիլեացւոցն էր, աղաչէին զնա եւ ասէին. Տէր, կամիմք զՅիսուս տեսանել: Գայ Փիլիպպոս եւ ասէ ցԱնդրէաս. Անդրէաս եւ Փիլիպպոս ասեն ցՅիսուս: Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա եւ ասէ. Եհաս ժամ զի փառաւորեսցի Որդի մարդոյ: 23:

---

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

ԲԿ.

Ժամամուտ. Հիացան վերնական բազմութիւնքն՝ տեսանելով զքեզ ի հրեղէն կառս բազմեալ. սարսեալ ասէին. Ո՞վ է սա որ դիմեալ գայ յԵդովմայ, եւ եկեալ մտանէ փառօք ի փառս. Տէր փառք քեզ:

Սղ. ՃԼ. Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ. եւ ոչ զբօսան աչք իմ:

ՃԼԱ. Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

ՃԼԲ. Զի՛ բարի կամ զի՛ վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԻԴ. 24:

Եւ յետ աւուրց ինչ եկն Փելիքս հանդերձ Դրուսելաւ կնաւ իւրով, որ էր հրեայ. կոչեաց զՊօղոս եւ լուաւ ի նմանէ վասն որ ի Քրիստոս Յիսուս հաւատոցն: Եւ ի խօ-

սեղն նորա վասն արդարութեան եւ ժուժկալութեան եւ հանդերձեալ դատաստանին, զահի հարեալ Փելիքս՝ եւ պատասխանի. Դու առ այժմ երթ, եւ յորժամ ժամ լինիցի, կոչեցից զքեզ: Միանգամայն եւ ակն ունէր՝ թէ տացի ինչ նմա ի պողոսէ. վասն որոյ եւ ստէպ կոչեցեալ զնա՝ խօսէր ընդ նմա: Եւ ի կատարել երկուց ամաց, եկն փոխանակ Փելիքսի՝ Փեստոս Պորկիոս. իբրեւ կամեցաւ շնորհս առնել Հրէից Փելիքս, եթող զՊօղոս կապեալ: Փեստոս իբրեւ եհաս յիշխանութիւնն, յետ երից աւուրց եկ յԵրուսաղէմ ի Կեսարիայ: Եւ զգացուցին նմա քահանայապետքն եւ գլխաւորք Հրէից զՊօղոսէ: Եւ աղաչէին խնդրել շնորհս ի նմանէ. զի կոչեսցէ զնա յԵրուսաղէմ. զարան գործեալ սպանանել զնա ի ճանապարհին: Իսկ Փեստոս արար պատասխանի՝ պահել զնա ի Կեսարիա. թէ ինքն իսկ ընդ հուպ անդր երթալոց էր: Եւ որ ի ձէնջ կարողք իցեն, ասէ, ընդ իս իջցեն, եւ եթէ իցէ ինչ յառնն վնաս՝ ամբաստան լինիցին զնմանէ: Եւ լեալ անդ աւուրս ոչ աւելի քան զուրթ կամ զտասն, եկն էջ ի Կեսարիա. եւ ի վաղիւ անդր նստեալ յատենի, հրամայեաց ածել զՊօղոս: Եւ իբրեւ եկն՝ կացին շուրջ զնովաւ որ յԵրուսաղեմէ իջեալ էին Հրեայքն. բազում եւ ծանր վնասս դնէին՝ զոր ոչ կարէին ցուցանել: Վասն զի առնէր պատասխանի Պօղոս, եթէ ոչ յօրինս Հրէից եւ ոչ ի տաճարն եւ ոչ ի կայսր ինչ վնասակար եմ: Այլ Փեստոս կամեցեալ Հրէից շնորհս առնել՝ պատասխանի ետ Պօղոսի եւ ասէ. Կամի՞ս յԵրուսաղէմ ելանել եւ անդ վասն սոցին իրաց դատել առաջի իմ: Եւ ասէ Պօղոս. Յատենի կայսեր հասեալ կամ, ուր պարտ է ինձ դատել. Հրէից ինչ չեմ վնասակար, որպէս եւ դու իսկ քաջ գիտես: Եպա թէ վնասակար իցեմ եւ արժանի ինչ մահու գործեցի, ոչ զանգիտեմ ի մեռանելոյ. իսկ եթէ ոչ ինչ իցէ՝ զորոց սոքա ամբաստան լինին զինէն, ոչ ոք կարէ զնս դոցա շնորհել. ի կայսր բողոքեմ: Յայնժամ Փեստոսի խօսեցեալ ընդ խորհրդակցին՝ արար պատասխանի. Ի կայսր բողոքեցեր, առ կայսր երթիջիր: Իե. 12:

Ալէլուիա, ալէլուիա. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. ամբարձին դրունք յաւիտենից, եւ մտցէ Թագաւոր փառաց:



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԺԲ. 24:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ: Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. եւ որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ՝ ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա: Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. եւ ուր եմն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ: 26:

---

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### Գ·Շ·

Յոհաննու. Որ յանապատում յաթոռ նստիս եւ յանմարմնոց վերօրհնիս, անհասանելի Բանիդ Աստուած, ի յերկրի երեւեցար ճշմարիտ մարդ. զանօրէնութեան կատարեալ գիտօրհուրդ՝ խաչի եւ մահու համբերեցեր. եւ զհրաշալի գլարութիւնդ քո ցուցեր հզօր զօրութեամբ: Այսօր համբարձար փառօք ի յերկինս, եւ զկուսածին զմարմինդ քո հրաշափառապէս լուսազարդեցեր. զոր տեսեալ Նայիաս՝ նախաձայնեալ ասէր. Ո՞վ է սա՝ որ գիմեալ գայ յերկրէ: Հացեալ պետութեանց երկնից՝ գոչէին առ միմեանս. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, եւ մտցէ Թագաւոր փառաց: Այլ որ յամենայնի կարողդ ես եւ հզօր, ընդհեա եւ մեզ հանդիպել քեզ ամպովք ի միւսանգամ քո գալստեանդ. որ միայնդ ես մարդասէր:

Սղ· ՃԼԳ· Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն զՏէր. ո կայք ի տուն Տեառն եւ ի գաւիթս Աստուծոյ մերոյ:

ՃԼԴ· Օրհնեցէք զանուն Տեառն, օրհնեցէք ծառայք Տեառն զՏէր. ո կայք ի տուն Տեառն, ի գաւիթս տան Աստուծոյ մերոյ:

ՃԼԵ· Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

ՅՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ՊՕՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՑԻ·

ԳԼ· ԻԵ· 13:

Իբրեւ անցին աւուրք ինչ՝ Ագրիպպաս արքայ եւ Բերենիկէ եկին ի Կեսարիա՝ յողջոյն փեստոսի: Եւ իբրեւ աւուրս բազումս հանէին անդ, փեստոս զկոյս արքայի զՊօղոսէ եւ ասէ· Ելյր մի է աստ ձնացեալ կապեալ ի փելիքսէ: Վասն որոյ իբրեւ էրթայր Երուսաղէմ, զգացուցին ինձ քահանայապետքն եւ գլխաւորք Հրէից· խնդրէին յինէն առնել նմա պատուհաս: Որոց ետու պատասխանի· եթէ Ոչ է օրէն Հռովմայեցւոց ընծրհել ումեք զոք, մինչ չեւ ամբաստանեալն յանդիման ունիցի զդատապարտսն եւ տեղի պատասխանւոյ առնուցու վասն ամբաստանութեանն: Եւ իբրեւ եկին այսր, ոչ ինչ յապաղեցի· այլ ի վաղիւն նստեալ յատենի՝ հրամայեցի ածել զայրն: Վասն որոյ մատուցեալ ամբաստանքն, եւ ոչ մի ինչ ինձաս չարութեան ի մէջ բերէին՝ զորոց եսն կարծէի: Այլ խնդիրս ինչ՝ որ վասն իւրեանց պաշտաման ունէին ընդ նմա, եւ վասն Յիսուսի ուրումն մեռելոյ, զորմէ ասէր Պօղոս թէ կենդանի է: Իբրեւ յանհնարս մտի վասն այնպիսի իրաց քննութեան, ասեմ· եթէ կամիցի՞ երթալ Երուսաղէմ, եւ անդ դատել վասն նոցին իրաց: Այլ ի Պօղոսի բողոքելն՝ զի պահեսցի ի քաջի արանց յանդիմանութիւն, հրամայեցի պահել զնա՝ մինչեւ տաց տանել առ կայսր: Ագրիպպաս ցփեստոս ասէ· Կամէի եւ ես լսել առնն. եւ նա ասէ· Վաղիւ լսիցես: 22:

Ալէլուիա, ալէլուիա· Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր· ամբարձցին դրունք յաւիտենից, եւ մտցէ Թագաւոր փառաց:

ՍՐԲՈՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՍ ՈՐ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ·

ԳԼ· ԺՌ· 27:

ՏԷրն մեր Յիսուս Քրիստոս ասէ·

Այլ այժմ անձն իմ խռովեալ է· եւ զի՞նչ ասացից, եթէ Հա՛յր, ապրեցո զիս ի ժամանակէ աստի յայսմանէ, այլ վասն այնորիկ եկի ի ժամս յայս· Հա՛յր, փառաւորեա զՔրդի քո: Ձին բարբառ յերկնից· Եւ փառաւոր արարի, եւ դարձեալ փառաւորեցից: Եւ ժողովուրդն որ կայր եւ լսէր, ասէին՝ որոտումն լինել: Ուրեմն ասէին· Հրեշտակ խօսեցաւ ընդ նմա: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ· Ոչ վասն իմ ինչ եկին բարբառս այս, այլ վասն ձեր: Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ, այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեցի արտաքս: Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս: Այս ասէր, նշանակեալ՝ թէ որո՛վ մահու մեռանելոց իցէ: Պատասխանի ետ նմա ժողովուրդն· Մեք լուաք յօրինաց՝ եթէ Քրիստոսն յաւիտեան կայ, եւ դու զիա՞րդ ասես՝ թէ պարտ է բարձրանալ Որդւոյ մարդոյ, ո՞վ է այն Որդին մարդոյ: Ասէ ցնոսա Յիսուս· Փոքր միւս եւս ժամանակ լոյս ընդ ձեզ է· գնացէք՝ մինչ դեռ զլոյսն ունիք, զի մի՛ խաւար ձեզ հասցէ· զի որ գնայ ի խաւարի՝ ոչ գիտէ յո երթայ: Մինչ դեռ զլոյսն ընդ ձեզ ունիք՝ հաւատացէք ի լոյսն, զի որդիք լուսոյ եղիջիք: Այս խօսեցաւ Յիսուս, եւ չոգաւ թաքեաւ ի նոցանէ: Եւ այնչափ նշանս արարեալ էր առաջի նոցա, եւ նոքա ոչ հաւատային ի նա· զի լցցի բանն Եսայեայ մարգարէի՝ զոր ասացն· ՏԷր, ո՞ հաւատաց ի լուր մեր, եւ բազուկ Տեառն ո՞ւմ յայտնեցաւ: Վասն այնորիկ ոչ կարէին հաւատալ, զի միւսանգամ ասէ Եսայի, թէ Կուրացոյց զաչս նոցա, եւ ապշեցոյց զսիրտս նոցա· զի մի՛ տեսցեն աչօք, եւ խմացին սրտիւք, եւ դարձցին եւ բժշկեցից զնոսա: Այս ասաց Եսայի, զի տեսս զփառս նորա, եւ խօսեցաւ վասն նորա: Այլ սակայն եւ յիշխանաց անտի բազումք հաւատացին ի նա· այլ վասն փարիսեցւոցն ոչ յայտնէին, զի մի՛ ի ժողովրդենէն ելանիցեն: Սիրեցին զփառս մարդկան առաւել քան զփառս Աստուծոյ: 43:

---

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ԶՈՐԵՔՇԱԲԱԹԻ

ԳՒ·

Յոամաս առ. Հիացան վերնական բազմութիւնքն՝ տեսանելով զքեզ ի հրեղէն կառս բազմեալ· սարսեալ ասէին· Ո՞վ է սա որ դիմեալ գայ Երզովմայ, եւ եկեալ մտանէ փառօք ի փառս· Տէր փառք քեզ:

Սղ· ՃԼԶ· Ընդ գետս Բաբելացւոց, անդ նստէաք եւ լայաք· որպէս յիշեցաք մեք անդ զՍիովն։

ՃԼԷ· Խոստովան եղեց քեզ Տէր՝ բոլորով սրտիւ իմով· առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ։

ՃԼԸ· Տէր փորձեցեր զիս եւ ծանեար զիս· դու ծանեար զնստել իմ եւ զյառնել իմ։

## Ընթերցուած ի Գործոց առաքելոց·

Գլ· Իե· 23։

Եւ ի վաղիւ անդր իբրեւ եկն Ագրիպպաս եւ Բերնիկէ՝ բազում երեւելի սպասուք, եւ մտին յատեանն հանդերձ հազարապետօքն եւ արամբք պատուաւորօք քաղաքին, եւ հրամայեալ փեստոսի՝ ածին զՊօղոս։ Եւ ասէ փեստոս. Ընքայ Ագրիպպա եւ ամենայն արք՝ որք ընդ մեզ էք, տեսանէք զսա. վասն որոյ ամենայն ժողովք Երկից ամբաստան եղեն ինձ Երուսաղէմ եւ աստ. աղաղակէին թէ Ձէ պարտական կեալ։ Բայց ես ի վերայ հասի՝ թէ ոչ ինչ է դորա արժանի մահու գործեալ. եւ դորա ինքնին բողոք կալեալ առ քաջ արանցն, խորհեցայ յղել։ Վասն որոյ ստուգութեամբ ինչ գրել տեառն իմում ոչ ունիմ. վասն այսորիկ ածի զդա առաջի ձեր, եւ մանաւանդ առաջի քո, արքայ Ագրիպպա. որպէս վերստին քննեալ՝ մարթացից ինչ գրել։ Վասնզի անպատեհ ինձ թուի ինձ՝ տալ տանել կապեալ մի, եւ ոչ ինչ միասս զնմանէ նշանակել։ Եւ Ագրիպպաս ասէ ցՊօղոս. Երամայեալ է քեզ՝ վասն քո խօսել։ Յայնժամ Պօղոս ձգեալ զձեռն՝ առնէր պատասխանի. Վասն ամենայն ամբաստանութեան Երէից զինէն, արքայ Ագրիպպա, համարիմ զանձն երանելի, զի քո առաջի այսօր տալոց եմ պատասխանի։ Մանաւանդ զի գիտակ իսկ ես ամենայն կրօնից եւ խնդրոց Երէից. վասն որոյ աղաչեմ երկայնմտութեամբ լսել ինձ։ Վասնզի կենաց իմոյ՝ որ ի մանկութենէ, ի սկզբանէ լեալ յազգի իմում Երուսաղէմ, տեղեակ են ամենայն Երեայք։ Յառաջագոյն գիտեն ի վաղուց հետէ, եթէ կամիցեն վկայել, զի ըստ ճշմարտագոյն կրօնից օրինացն մերոց կեցեալ եմ փարիսեցի։ Եւ արդ վասն յուսոյն՝ առ հարսն եղելոյ աւետեացն Աստուծոյ դատեալ կամ յատենի. յոր երկոտասան ազգատոհմիս մերոյ անպակաս զպաշ-



եւ զջերեկ պաշտեալ ակն ունին հասանել. վասն որոյ յուսոյ ամբաստանիմ, արքայ, ի Երէից։ Զինչ անհաւատ թուի ձեզ՝ եթէ Աստուած զմեռեալս յարուցանէ։ Ես իսկ ինքնին պատշաճ համարէի՝ զբազում ինչ հակառակ անուանն Յիսուսի նազովրեցւոյ գործել։ Որ եւ արարի իսկ Երուսաղէմ. եւ զբազումս ի սրբոցն ես բանտարգել առնէի, ի քահանայապետէն առեալ իշխանութիւն. եւ զսպանելոցն նոցա բերէի համար։ Եւ ըստ ամենայն ժողովրդոցն՝ բազում անգամ պատժեալ զնոսա՝ բռնադատէի հայհոյել. առաւել եւս մոլեալ ի վերայ նոցա՝ հալածէի մինչեւ յարտաքին քաղաքն։ Որով գնացեալ ի Դամասկոս՝ իշխանութեամբ եւ հրամանօք քահանայապետին. զկիսաւուրբն ի ճանապարհի տեսի, արքայ, յերկնից առաւել քան զլուսաւորութիւն արեգական ծագեալ զինեւ լոյս եւ զնոքօք՝ որ ընդ իս երթային։ Եւ յամենեցուն մեր անկանել յերկիր, լսեայ ձայն, որ ասէր ցիս՝ Երբայեցւոց բարբառովն. Սաւուղ Սաւուղ, զի՞ հալածես զիս. խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել։ Եւ ես ասեմ. Ո՞վ ես, Տէր. եւ Տէր ասէ. Ես եմ Յիսուս՝ զոր դուն հալածես։ Այլ արի եւ կաց ի վերայ ոտից քոց. զի վասն այսորիկ երեւեցայ քեզ՝ առնուլ զքեզ ի ձեռն պաշտօնեայ եւ վկայ՝ որոց տեսերդ զիս եւ որոց երեւեցայց քեզ. փրկել զքեզ ի ժողովրդենէդ եւ ի հեթանոսաց, յորս ես առաքեցից զքեզ. բանալ զաչս նոցա, դարձուցանել ի խաւարէ ի լոյս, եւ յիշխանութենէ սատանայի Աստուած. առնուլ նոցա զթողութիւն մեղաց, եւ վիճակ ընդ սուրբս՝ հաւատովքն որ յիս։ Ուստի, արքայ Ագրիպպա, ոչ եղէ անհաւան երկնաւոր տեսլեանն. այլ նախ որոց ի Դամասկոս եւ Երուսաղէմ էին, եւ ընդ ամենայն գաւառսն Երկաստանի եւ ի հեթանոսս պատմեցի՝ զղջանալ եւ դառնալ Աստուած կենդանի, արժանի ապաշխարութեան գործս գործել։ Վասն այսորիկ Երէից կալեալ զիս ի տաճարին, կամէին սպանանել։ Օգնութիւն հասեալ առ ի Աստուծոյ՝ մինչեւ ցայսօր կացի վկայեալ փոքու եւ մեծի, ոչ ինչ արտաքոյ ասել՝ քան զոր մարգարէքն եւ Մովսէս խօսեցան զհանդերձելոցն լինելոյ. եթէ չարչարելոց է Քրիստոս, եթէ առաջին ի յարութենէ մեռելոց՝ լոյս պատմելոց է ժողովրդեանն եւ հեթանոսաց։ Եւ նորա զայս պատասխանի տուեալ, փեստոս ի ձայն մեծ

ասէ. Մոլիս, Պօղէ, բազում դպրութիւնք զքեզ ի մոլութիւն դարձուցանեն: Իսկ Պօղոս ասէ. Ոչ մոլիմ, քաջդ Փեստոս, այլ զցածութեան եւ զճշմարտութեան բանս բարբառիմ: Գիտակ իսկ է այսոցիկ արքայ, ընդ որում եւ համարձակեալդ խօսիմ. քանզի ծածկել ի քէն իմիք ի սոցանէ՝ չառնում յանձն. զի ոչ եթէ յանկեան ուրեք գործեալ իցէ այս: Հաւատաս, արքայ Ագրիպպա, մարգարէից. գիտեմ զի հաւատաս: Եւ ասէ Ագրիպպաս ցՊօղոս. Փոքու իմն հաւանեցուցանես զիս լինել քրիստոնեայ: Եւ Պօղոս ասէ. Խնդրէի յԱստուծոյ եւ փոքու եւ մեծաւ, ոչ միայն զքեզ, այլ զամենեսեան՝ որ լսեն ինձ այսօր, լինել այսպիսի որպէս եւ եսս եմ, բաց ի կապանաց աստի: Յոտն եկաց արքայն եւ դատաւորն եւ Բերինիկէ եւ որ ընդ նոսայն նստէին: Եւ իբրեւ գնացին, խօսէին ընդ միմեանս եւ ասէին. թէ Ոչ ինչ արժանի մահու կամ կապանաց գործէ այրս այս: Իսկ Ագրիպպաս ցՓեստոս ասէ. Արձակել մարթ էր զայրս զայս, եթէ ոչ էր բողոքեալ ի կայսր: ԻԶ. 32:

Ալէլուիա, ալէլուիա. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. ամբարձցին դրունք յաւիտենից, եւ մտցէ թագաւոր փառաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԺԲ. 44:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Աղաղակէր եւ ասէր. Որ հաւատայ յիս՝ ոչ հաւատայ յիս, այլ յայն՝ որ առաքեացն զիս: Եւ որ տեսանէ զիս, զայն տեսանէ՝ որ առաքեացն զիս: Ես լոյս յաշխարհ եկի, զի ամենայն որ հաւատայ յիս՝ ի խաւարի մի՛ մնասցէ: Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց, եւ ոչ պահեսցէ, ես ոչ դատիմ զնա, քանզի ոչ եկի՝ թէ դատեցայց զաշխարհ, այլ զի փրկեցից զաշխարհ: Որ անարգէ զիս, եւ ոչ ընդունի զբանս իմ, գոյ որ դատի զնա. բանն զոր ես խօսեցայ, նա դատի զնա յաւուրն յետնում: Զի ես յանձնէ իմմէ ոչ խօսեցայ. այլ որ առաքեացն զիս Հայր, նա ետ ինձ պատուէր՝ զինչ ասացից եւ զինչ խօսեցայց: Եւ գիտեմ՝ եթէ պատուէրն այն կեանք են յաւիտենականք: Արդ՝ զոր եսն խօսիմ, որպէս ասաց ինձ Հայրն՝ այնպէս խօսիմ: 50:

---



## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

ԴՉ.

Ժամամուտ. Որ յանպատում յաթոռ նստիս եւ յանմարմնոց վերօրհնիս, անհասանելի Բանդ Աստուած, ի յերկրի երեւեցար ճշմարիտ մարդ, զանօրէնութեան կատարեալ զխորհուրդ՝ խաչի եւ մահու համբերեցեր, եւ զհրաշալի զյարութիւնդ քո ցուցեր հզօր զօրութեամբ: Այսօր համբարձար փառօք ի յերկինս, եւ զկուսածին զմարմինդ քո հրաշափառապէս լուսազարդեցեր. զոր տեսեալ Եսայիաս նախաձայնեալ ասէր. Ո՞վ է սա՝ որ դիմեալ գայ յերկրէ: Հիացեալ պետութեանց երկնից՝ գոչէին առ միմեանս. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, եւ մտցէ թագաւոր փառաց: Այլ որ յամենայի կարողդ ես եւ հզօր, շնորհեա եւ մեզ հանդիպել քեզ ամպովք ի միւսանգամ քո գալստեանդ. որ միայնդ ես մարդասէր:

Սղ. ՃԼԹ. Ապրեցո զիս Տէր ի մարդոյ չարէ. յառնէ անիրաւէ փրկեա զիս:

ՃԽ. Տէր կարդացի առ քեզ, եւ լուր ինձ. նայեա ի ձայն աղօթից իմոց՝ ի կարդալ իմում առ քեզ:

ՃԽԱ. Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի. ձայնիւ իմով զՏէր աղաչեցի:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԻԷ. 1:

Իբրեւ հրամայեցաւ մեզ նաւել յԻտալիա, տային զՊօղոս եւ զայլս ոմանս կապեալս ցհարիւրապետ մի, որում անուն էր Յուղիոս՝ Սեբաստեան գնդին: Եւ ելեալ ի նաւ մի Անդրամինտացի, որ երթալոց էր ի կողմանս Ասիացւոց՝ գնացաք: Էր ընդ մեզ եւ Արիստարքոս Մակեդոն Թեսաղոնիկեցի: Եւ ի վաղիւ անդր իջաք ի Սիդովն. եւ մարդասիրութիւն ցուցեալ Յուղեայ առ Պօղոս, հրամայեաց առ բարեկամս երթալ եւ դարման գտանել: Եւ անտի ելեալ խոնարհագոյն նաւեցաք ի Կիպրոս՝ վասն հողմոյն ընդդէմ լինելոյ: Յայնժամ ընդ մէջ ծովուն Կիւլիկեայ եւ Պամփիլեայ նաւեալ՝ իջաք ի Սմիւռայ Լիկիացւոց: Եւ անդ

գտեալ հարիւրապետին նաւ մի Ադրքսանդրացի՝ որ երթայր յԻտալիա, եմոյծ զմեզ անդր: Եւ ի բազում աւուրս ծանրանաւեալք՝ հազիւ հասաք առ Կնիդեաւ. եւ ի չթողացուցանել զմեզ հողմոյն, նաւեցաք խոնարհագոյն ի Կրետէ առ Սաղմոնեաւ: Հազիւ անցեալ առ նովաւ՝ եկաք ի տեղի մի՝ որ կոչէր Գեղեցիկ Նաւահանգիստ. յոր հուպ էր քաղաքն Ղասեայ: Եւ իբրեւ բազում ժամանակք անցանէին, եւ սկսեալ եւս լինէր նաւելոյն, եւ վասն այն ինչ եւս պահոցն անցանելոյ, տայր խրատ Պօղոս, եւ ասէ ցնոսա. Ա՛րք, տեսանեմ զի Թշնամանօք եւ բազում վնասու՝ ոչ միայն բեռինդ եւ նաւիդ, այլ եւ անձանց մերոց լինելոց է նաւարկութիւնս: Յայն հարիւրապետն նաւապետին եւ նաւավարին առաւել անսայր՝ քան բանիցն Պօղոսի: Իբրեւ դժպատեհ իմն Թուէր նաւահանգիստն առ ի ձմերել, բազումք խորհեցան գնալ անտի. Թերեւս կարասցեն հասանել ի Փիւնիկէ՝ ձմերել ի նաւահանգստին Կրետացւոց, որ հայէր ընդ հարաւակողմն եւ ընդ աշխարհն: Եւ ի շնչել հարաւոյն, համարեցան ուր դիմեալն էին հասանել, եւ արկեալ՝ մօտ անցանէին զԿրետեաւ: Եւ ոչ յետ բազում ժամուց՝ անկաւ զնովաւ հողմ ուռուցիկ, որ կոչի Եւրակիկլոն: Ընդ յափշտակել նաւին եւ ի չհանդուրժել ընդդէմ հողմոյն, թոյլ տուեալ երթայաք եւ գայաք: Ի կղզի մի՝ որ կոչէր Կղաւդիա. հազիւ կարացաք ըմբռնել զմակոյկն: Զոր առեալ յօգնականութիւն՝ կապէին ընդ նաւն, երկուցեալ թէ գուցէ ի յորձանուտն անկանիցին. խզուցեալ զառագաստն՝ այնպէս երթային եւ գային: Եւ ի սաստկագոյն վշտանալոյն մերոյ՝ ի վաղիւ անդր զկարասին ընկեցիկ առնէին: Եւ յերրորդ աւուր ընդ իւրեանց ձեռն զգործիսն նաւին ընկեցին: Իբրեւ ոչ արեւ եւ ոչ աստեղք երեւէին ի բազում աւուրս, եւ ձմեռն ոչ սակաւ կայր ի վերայ, ապա բառնայր ամենայն յոյս փրկութեան մերոյ. եւ զի բազում աւուրս նօթի էին: Յայնժամ Պօղոս կացեալ ի մէջ նոցա՝ ասէ. Պարտ էր ձեզ, ո՛վ արք, անսալ ինձ եւ ոչ ելանել ի Կրետեայ, եւ շահել զվնաս զայս եւ զվնաս: Եւ արդ՝ խրատեմ զձեզ քաջալերել. զի վնաս անձին եւ ոչ միւսմ ի ձէնջ լինիցի, բայց ի նաւէդ: Քանզի երեւեցաւ ինձ յայսմ գիշերի հրեշտակ Աստուծոյ՝ որոյ եմ եմ եւ պաշտեմ զնա, եւ ասէ. Մի երկնչիր, Պօղո՛ս, կայսեր եւս պարտ է քեզ յանդիման լինել. եւ ահա շնորհեալ է քեզ Աստուծոյ զամենեսեան, որ են ընդ քեզ ի նաւիդ: Վասն այսորիկ քաջալերեցարուք, արք, զի հաւատամ Աստուած՝ թէ այսպէս լինի՝ զոր օրինակ խօսեցաւ ընդ իս: Պայց ի կղզի մեզ անկանել: 26:

Ալէլուիա, ալէլուիա. Ամբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. ամբարձցին դրունք յաւիտենից, եւ մտցէ թագաւոր փառաց:

## Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

ԳԼ· ԺԳ· 1:

### Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յառաջագոյն քան զտօնն զատկի, գիտաց (Յիսուս) թէ հասեալ է ժամ նորա՝ զի փոխեսցի յաշխարհէ աստի առ Հայր. սիրեաց զիւրսն՝ որ յաշխարհի աստ են, ի սպառ սիրեաց զնոսա: Եւ ի լինել ընթրեացն, սատանայի իսկ արկեալ էր ի սիրտ՝ զի մատնեսցէ զնա Յուդա Սիմովնի Իսկարիովտացւոյ: Գիտաց Յիսուս զի զամենայն ինչ ետ Հայր ի ձեռս նորա, եւ թէ Աստուծոյ ել եւ առ Աստուած երթայ, յառնէ յընթրեաց անտի, եւ դնէ զհանդերձն, եւ առեալ զընձյակ մի՝ սփածաւ: Եւ ապա առեալ ջուր՝ արկ ի կոնք, եւ սկսաւ լուանալ զոտս աշակերտացն, եւ սրբէր զընձյականն՝ զոր սփածեալն էր: Գայ առ Սիմովն Պետրոս, եւ նա ասէ ցնա. Տէր, դո՞ զիմ զոտս լուանաս: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Զոր ինչ եես գործեմ, դու այժմ ոչ գիտես. բայց ապա գիտասջիր: Ասէ ցնա Պետրոս. Ո՛չ լուասցես զոտս իմ յաւիտեան: Պատասխանի ետ նմա Յիսուս. Եթէ ոչ լուացից զքեզ՝ ոչ ունիս ընդ իս մասն: Ասէ ցնա Սիմովն Պետրոս. Տէր, մի միայն զոտս իմ, այլ եւ զձեռս եւ զգլուխ: Ասէ ցնա Յիսուս. Լուացեալն չէ ինչ պիտոյ՝ բայց զի զոտն լուանայցէ. քանզի ամենեւին սուրբ է. եւ դուք սուրբ էք, այլ ոչ ամենեքին: Զի գիտէր զայն որ մատնելոցն էր զնա, վասն այնորիկ ասաց՝ թէ Ո՛չ ամենեքին սուրբ էք: Եւ յորժամ լուաց զոտս նոցա, առ զհանդերձն իւր եւ դարձեալ բազմեցաւ, եւ ասէ ցնոսա. Գիտէ՞ք զինչ արարի ձեզ: Դուք կոչէք զիս վարդապետ եւ

Տէր. եւ բարւոք ասէք, քանզի եմ իսկ: Իսկ արդ՝ եթէ ես լուացի զոտս ձեր՝ Տէրս եւ վարդապետս, եւ դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ: Զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, եւ դուք առնիջիք: 15:

---

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

### ԴԿ.

Ժամամուտ. Հիացան վերնական բազմութիւնքն՝ տեսանելով զքեզ ի հրեղէն կառս բազմեալ. սարսեալ ասէին. Ո՞վ է սա որ դիմեալ գայ յԵդովմայ, եւ եկեալ մտանէ փառօք ի փառս. Տէր փառք քեզ:

Սղ. ՃԽԲ. Տէր լուր աղօթից իմոց. ունկն դիր խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով:

ՃԽԳ. Օրհնեալ Տէր Աստուած իմ. որ ուսոյց զձեռս իմ ի պատերազմ, եւ զմատունս իմ ի ճակատամարտ:

ՃԽԴ. Բարձր առնեմ զքեզ Աստուած իմ եւ թագաւոր իմ. եւ օրհնեմ զանուն քո յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԻԷ. 27:

Իբրեւ չորեքտասաներորդ գիշեր լինէր՝ մինչ դեռ ծփէաք ի Հանդրին անդունդս, ի մէջ գիշերին կարծէին նաւավարքն եթէ հասեալ իցեն յաշխարհ ուրեք: Եւ ընկեցեալ զգունդսն՝ գտին գիրկս քսան. եւ սակաւ ինչ դադարեալ՝ դարձեալ ընկեցին, եւ գտին գիրկս հնգետասան: Զահի հարեալ թէ գուցէ ի խիստ ինչ տեղիս անկանիցին, յետուստ կողմանէ ընկեցին խարիսխս չորս. ըղձանային այգուն լինելոյ: Բայց նաւավարքն խնդրէին փախչել ի նաւէ անտի. եւ իջուցեալ զկուրն ի ծով անդր, պատճառանօք՝ որպէս թէ առաջոյ կողմանէ զխարիսխն ձգելոց իցեն: Ասէ Պօղոս ցհարիւրապետն եւ ցզօրականսն. Եթէ ոչ դոքա մնան ի նաւիս՝ դուք ապրել ոչ կարէք: Յայնժամ զօրականքն հատին զլարս կրին եւ ի բաց ընկեցին: Եւ մինչ դեռ այգն կամէր լինել, աղաչէր Պօղոս զամենեսեան առնուլ կերակուր, ասէ. Այս չորեքտասաներորդ օր է՝ որում ակն ունիք նօթիս կատարել, եւ չէ ինչ ճաշակեալ: Վասն որոյ աղաչեմ զձեզ՝ ճաշակել կերակուր, զի այն իսկ վասն ձերոյ փրկութեան է. զի ոչ ուրուք ի ձէնջ մազ մի ի գլխոյ կորիցէ: Եւ իբրեւ ասաց զայս, առեալ հաց՝ գոհացաւ զԱստուծոյ առաջի ամենեցուն, եբեկ եւ սկսաւ ուտել: Եւ քաջալերեցան ամենեքին, եւ նոքա առին կերակուր: Եւ էաք ամենայն հոգիք ի նաւին՝ երկերիւր եօթանասուն եւ վեց: Իբրեւ յագեցան կերակրովն, թեթեւացուցին զնաւն՝ թափեալ զցորեանն ի ծով: Եւ իբրեւ այգ եղեւ՝ զերկիրն ոչ ճանաչէին, բայց զգոգ մի նշմարէին՝ թէ ափն ծովուն իցէ, յոր խորհէին՝ թէ հնար ինչ իցէ, զերծուցանել զնաւն: Եւ զխարիսխն հատեալ՝ ընկեցին ի ծովն, թողացուցին զխառնելիս թեւոցն, եւ ի բաց առին զառագաստն. եւ ետուն հողմոյն յափն կոյս ծովուն: Ընկեալ ի տեղի մի երկծով՝ թիւրեցին զնաւն. եւ առաջին կողմն նաւին խրեալ՝ անշարժ մնայր, եւ յետին կողմն քակէր ի բռնութենէն: Եւ զօրականացն խորհուրդ արարեալ՝ զի զկապեալսն սպանցեն, եւ մի՛ ոք լուղեցի եւ փախիցէ: Եւ հարիւրապետն՝ քանզի կամեցաւ ապրեցուցանել զՊօղոս՝ արգել զնոսա ի խորհրդոյն. հրամայեաց զի որ կարողն իցեն լուղել՝ անկանիցին նախ եւ ի ցամաք ելանիցեն: Եւ զայլսն՝ զորս ի տախտակս եւ զորս յայլ ինչ կահ ի նաւէ անտի. եւ այսպէս եղեւ ամենեցուն փրծանել յերկիր եւ ապրեալք: Յայնժամ գիտացաք թէ Մելիտինէ էր անուն կղզւոյն. բայց բարբարոսքն շնորհեցին ոչ սակաւ մարդասիրութիւն մեզ: Քանզի լուցին խարոյկ եւ ընկալան զամենեսին զմեզ վասն անձրեւին որ ստիպէր եւ վասն ցրտոյն: Եւ ի ժողովել Պօղոսի խռիւ ինչ բազում եւ դնել ի վերայ խարուկին, իժ մի ի ջերմութենէն ելեալ՝ կալաւ զձեռանէ նորա: Եւ իբրեւ տեսին բարբարոսք կախեալ զգազանն զձեռանէ նորա, ասէին ցմիմեանս. Ուրեմն սպանող է այրս այս, որ թէպէտ եւ ապրեցաւ ի ծովէն՝ իրաւունքն չետուն կեալ: Եւ նորա թօթափեալ զգազանն ի հուրն, եղեւ նմա չար եւ ոչ ինչ: Եւ նոքա ակն ունէին նմա այտնլոյ կամ անկանելոյ եւ յանկարծակի մեռանելոյ. իբրեւ շատ ակն կալեալ, եւ տեսանէին թէ ոչ ինչ վնաս եղեւ նմա՝ դարձեալ դարձուցին զբանսն, ասէին թէ Աստուած ոմն է: Եւ շուրջ զտեղեաւն

զայնուիկ էին գեօղք գլխաւորի կղզւոյն՝ որում անուն էր Պոպղիոս, որ առ զմեզ յերաշխի զերիս աւուրս եւ սիրով ընկալաւ։ Եւ եղեւ հօրն Պոպղեայ ի ջերմն եւ յախտ թանչից հիւանդանալ դնել. առ որ մտեալ Պօղոս եւ կացեալ յաղօթս՝ եդ ծունր եւ բժշկեաց զնա։ Եւ իբրեւ այգ եղեւ, այլ հիւանդք՝ որ էին ի կղզւոջն, գային եւ բժշկէին. որք եւ բազում պատուովք պատուեցին զմեզ. եւ իբրեւ գնացաք՝ ետուն որ ինչ պէտք էին։ ԻԸ. 10։

Ալէլուիա, ալէլուիա. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. ամբարձցին դրունք յաւիտենից, եւ մտցէ թագաւոր փառաց։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

ԳԼ. ԺԳ. 16։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ամէն ամէն ասեմ ձեզ. Ոչ է ծառայ մեծ քան զՏէր իւր, եւ ոչ առաքեալ՝ մեծ քան զայն որ առաքեացն զնա։ Եթէ զայս գիտէք, երանելի եւս էք՝ եթէ առնիցէք զայս։ Ոչ վասն ամենեցուն ձեր ասեմ. զի ես գիտեմ՝ զորս ընտրեցիդ. այլ զի լցցի գիրն, թէ Որ ուտէր ընդ իս հաց՝ արար ինձ խաբէութիւն։ Յայսմհետէ իսկ ասեմ ձեզ մինչ չեւ եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք թէ ես եմ։ Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ընդունի՝ զոր ոք ես առաքեցից, զիս ընդունի. եւ որ զիս ընդունի, ընդունի զայն՝ որ առաքեացն զիս։ Զայս իբրեւ ասաց Յիսուս՝ խռովեցաւ յոգի իւր, վկայեաց եւ ասէ. Ամէն ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս։ Հայէին ընդ միմեանս աշակերտքն տարակուսեալք թէ զումէ ասիցէ։ Եւ էր մի ոմն յաշակերտացն բազմեալ առ Յիսուսիւ, զոր սիրէրն Յիսուս. ակնարկէ նմա Սիմովն Պետրոս հարցանել՝ ո՛վ իցէ, վասն որոյ ասէն։ Եւ նա անկեալ զլանջօքն Յիսուսի, ասէ ցնա. Տէր ո՞վ է։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Այն է՝ որում ես թացից զպատառն եւ տաց։ Եւ թացեալ զպատառն տայ Յուդայի Սկարիովտացւոյ։ Եւ յետ պատառոյն՝ ապա եմուտ ի նա սատանայ։ Եւ ասէ ցնա Յիսուս. Արդ՝ զոր ինչ առնելոց ես՝ արա վաղվաղակի։ Եւ զայս ոչ ոք իմացաւ ի բազմականաց



անտի, թէ առ ի՞նչ ասաց ցնա. զի ոմանք համարէին թէ՝ զի զարկղն ունէր Յուդա, ասաց նմա Յիսուս՝ գնեա ինչ որ պիտոյ իցէ մեզ ի տօնիս. եւ կամ զի աղքատաց ինչ տացէ։ Իսկ նորա առեալ զպատառն, ել արտաքս վաղվաղակի. եւ էր գիշեր։ 30։

---

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### ԱՁ.

Ժամամուտ. Որ յանպատում յաթոռ նստիս եւ յանմարմնոց վերօրհնիս, անհասանելի Բանդ Աստուած, ի յերկրի երեւեցար ճշմարիտ մարդ. զտնօրէնութեան կատարեալ զխորհուրդ՝ խաչի եւ մահու համբերեցեր, եւ զհրաշալի զյարութիւնդ քո ցուցեր հզօր զօրութեամբ։ Այսօր համբարձար փառօք յերկինս, եւ զկուսածին զմարմինդ քո հրաշափառապէս լուսազարդեցեր. զոր տեսեալ Եսայիաս՝ նախաձայնեալ ասէր. Ո՞վ է սա՝ որ դիմեալ գայ յերկրէ։ Հիացեալ պետութեանց երկնից՝ գոչէին առ միմեանս. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, եւ մտցէ թագաւոր փառաց։ Այլ որ յամենայնի կարողդ ես եւ հզօր, շնորհեա եւ մեզ հանդիպել քեզ ամպովք ի միւսանգամ քո գալըստեանդ. որ միայնդ ես մարդասէր։

Սղ. ՃԽԵ։ Օրհնեա անձն իմ զՏէր. օրհնեցից զՏէր ի կեանս իմ. սաղմոս ասացից Աստուծոյ իմոյ մինչեւ եմ ես։

ՃԽԶ. Օրհնեցէք զՏէր՝ զի բարի են սաղմոսք։ Աստուծոյ մերում քաղցր եղիցի օրհնութիւն։

ՃԽԷ. Գովեա Երուսաղէմ զՏէր. եւ օրհնեա զԱստուած քո Սիովն։

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

ԳԼ. ԻԸ. 11։

Եւ յետ երից ամսոց ելաք ի նաւ մի Աղեքսանդրացի՝ որ ձմերեալ էր ի կղզւոջն նշանաւորաւ Դիոսկորացւոց։ Եւ իջեալ ի Սիրակուսա՝ եղաք աւուրս երիս։ Ուստի գնացեալ հասաք ի Հռեգիոն. եւ յետ աւուր միոյ՝ ի շնչել հարաւոյն,

երկօրեայք եկաք ի Պատիողոս: Ուր եւ գտաք եղբարս՝ աղաչեցեալք ի նոցանէ լինել աւուրս եօթն. եւ ապա ելաք ի Հռոմ: Եւ անտի լուեալ եղբարց զմեզ՝ ելին ընդ առաջ մեր մինչեւ Յորգոստայն Ապիեայ եւ Երիցն կրպակաց. զորս տեսեալ Պօղոսի՝ գոհացաւ զԱստուծոյ եւ քաջալերեցաւ: Եւ իբրեւ մտաք ի Հռոմ, հրաւայեցաւ Պօղոսի լինել առանձինն հանդերձ զինուորաւն պահապանաւ իւրով: Եւ եղեւ յետ երից աւուրց՝ կոչել նմա զԱրեիցն զլխաւորս. եւ իբրեւ եկին, ասէ ցնոսա. Ես, արք եղբարք, ոչ ինչ հակառակ գործեալ ժողովրդեանն կամ կրօնիցն հայրենեաց, կապեալ Երուսաղեմէ՝ մատնեցայ ի ձեռս Հռովմայեցւոց: Որք իբրեւ դատեցան զիս՝ կամեցան արձակել, վասն եւ ոչ մի ինչ վնաս մահու գտանելոց յիս: Ի հակառակել Հրէիցն, հարկ եղեւ բողոքել ի կայսր, իբրեւ ոչ եթէ զազգէն իմմէ ունիմ ինչ չարախօսել: Վասն այսր պատճառանաց աղաչեցի զձեզ՝ տեսանել եւ խօսել. քանզի վասն յուսոյն Իսրայելի կամ ի շղթայիս յայսոսիկ: Եւ նոքա ասեն ցնա. Մեք ոչ Թուղթս ինչ վասն քո ընկալաք ի Հրէաստանէ, եւ ոչ եկեալ ոք յեղբարց պատմեաց կամ խօսեցաւ ինչ վասն քո չարութիւն: Բայց աղաչեմք ի քէն լսել՝ Թէ զինչ խորհիցիս. զի վասն հերձուածոյդ այդորիկ յայտ իսկ է մեզ, զի ամենայն ուրեք հակառակութիւն կրէ: Ցամ եղեալ նմա օր մի, եկին ի վանսն առ նա բազումք. որոց պատմէր վկայութեամբ զարքայութիւն Աստուծոյ, եւ հաւանեցուցանէր զնոսա վասն Յիսուսի, յօրինացն Մովսիսի եւ ի մարգարէից՝ յայգուէ մինչեւ ցերեկոյ: Եւ ոմանք հաւանէին բանիցն, եւ կէսք չհաւատային: Եւ անմիաբանք լեալ միմեանց՝ արձակէին, յասելն Պօղոսի բան մի, Թէ Բարւոք խօսեցաւ Հոգին սուրբ ի ձեռն Եսայեայ մարգարէի առ հարսն մեր, եւ ասէ. Երթ առ ժողովուրդն եւ ասասցես. Լսելով լուիջիք եւ մի իմասջիք, եւ տեսանելով տեսջիք եւ մի՛ տեսջիք: Ցի թանձրացաւ սիրտ ժողովրդեանն այնորիկ, եւ ականջօք իւրեանց ծանրունս լուան. եւ զաչս իւրեանց կափուցին, զի մի՛ երբեք տեսցեն աչօք եւ ականջօքն լուիցեն եւ սրտիւք իմասցին եւ դարձցին, եւ բժշկեցից զնոսա: Եւ արդ՝ յայտնի լեցի ձեզ, զի հեթանոսաց առաքեցաւ փրկութիւն յԱստուծոյ, նոքին եւ լուիցեն: (Եւ իբրեւ զայս ասաց՝ ի բաց գնացին ի նմանէ Հրեայքն, որք ունէին խնդիրս բազում ընդ



միմեանս:) Եւ եղեւ զերկեամ մի՝ բովանդակ իւրով վարձու. եւ ընդունէր զամենեսեան որ մտանէին առ նա: Քարոզէր զարքայութիւնն Աստուծոյ, եւ ուսուցանէր վասն Տեառն Յիսուսի Քրիստոսի անխափան՝ ամենայն համարձակութեամբ: 32:

Ալէլուիա, ալէլուիա. Հմբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. ամբարձցին դրունք յաւիտենից, եւ մտցէ Թագաւոր փառաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ· ԺԳ· 31:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ իբրեւ ել, ասէ (Յիսուս). Այժմ փառաւորեցաւ Որդի մարդոյ, եւ Աստուած փառաւորեցաւ ի նմա: Ցի եթէ Աստուած փառաւորեցաւ ի նմա, եւ Աստուած փառաւորեսցէ զնա յանձն իւր. եւ վաղվաղակի փառաւորեսցէ զնա: Որդեակք իմ, փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրիցէք զիս, եւ որպէս ասացի Հրեայն՝ եթէ ուր եմն եւ երթամ, դուք ոչ կարէք գալ. եւ արդ ձեզ ասեմ: Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս. որպէս սիրեցի ես զձեզ, զի եւ դուք սիրեսջիք զմիմեանս: Յայսմ գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս: Ասէ ցնա Սիմոն Պետրոս. Տէր, յո՞ւր երթաս: Պատասխանի ետ Յիսուս. Ուր եմն երթամ՝ դու ոչ կարես այժմ գալ զկնի իմ, բայց ապա եկեսցես զկնի իմ: Ասէ ցնա Պետրոս. Տէր, ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ այժմ զկնի քո. արդէն զանձն իմ իսկ եդից ի վերայ քո: Պատասխանի ետ Յիսուս. Ցո՞ւնձն քո դիցես ի վերայ իմ. ամէն ամէն ասեմ քեզ, չեւ իցէ հաւու խօսեալ, մինչ դու երիցս ուրասցիս զիս: Մի խռովեսցին սիրտք ձեր. այլ հաւատացէք յԱստուած, եւ յիս հաւատացէք: Ի տան հօր իմոյ օթեւանք բազում են. ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, Թէ երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի: Եւ եթէ երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ եւ առնումս զձեզ առ իս. զի ուր եմն իցեմ, եւ դուք անդ իցէք: Եւ ուր երթամն՝ գիտիցէք, եւ զճանապարհն գիտիցէք: Ասէ ցնա

Թովմաս, Տէր, ոչ գիտեմք յո՛ երթաս, եւ զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել։ Ասէ ցնա Յիսուս. Ես եմ ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք. ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինեւ։ Եթէ զիս գիտէիք՝ ապա եւ զՀայրն իմ գիտէիք, եւ այսուհետեւ գիտասջիք զնա։ Ասէ ցնա Փիլիպպոս. Տէր, ցոյց մեզ զՀայր, եւ շատ է մեզ։ Ասէ ցնա Յիսուս. Այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, եւ ո՞չ ծանեար զիս Փի՛լիպպէ. որ ետես զիս՝ ետես զՀայրն. եւ դու զիա՞րդ ասես՝ եթէ ցոյց մեզ զՀայր։ Ո՞չ հաւատաս՝ եթէ ես ի Հայր, եւ Հայր յիս է. զբանս զոր ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն՝ որ յիս բնակեալ է, նա գործէ զգործսն։ Հաւատա՞յք ինձ, եթէ ես ի Հայր եւ Հայր յիս։ Ապա թէ ոչ՝ գոնէ վասն գործոցն հաւատացէք ինձ։ Ամէն ամէն ասեմ ձեզ, թէ որ հաւատայն յիս, զգործսն զոր ես խործեմ՝ եւ նա գործեսցէ, եւ մեծամեծս եւս քան զնոյնս գործեսցէ. զի ես առ Հայր երթամ. եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, արարից զայն։ Զի փառաւորեսցի Հայր յՈրդի։ ԺԴ. 14։





ՊԵՆՏԷԿՈՍՏԷ

# ՏՕՆ ԳԱԼՍՏԵԱՆ

## ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ

---

### ԿԻՐԱԿԷ

### ԱԿ.

Ժամամուտ. Աստուած զքեզ խոստովանիմք զսուրբ Հոգիդ, եւ երկիր պագանեմք. որ ես պատճառ կենդանութեան եղելոցս եւ խաղաղարար աշխարհի. որ զտգիտութիւն աշակերտացն բազում գիտութեամբ լցեր, եւ ի հրեղէն լեզուս բաժանեալ անճառելեօք ցուցար նոցա. աղաղակեմք Տէր, խնայեա եւ կեցո զմեզ:

Սղ. ճԽԸ. Օրհնեցէք զՏէր յերկնից. օրհնեցէք զնա ի բարձանց:

ճԽԹ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց:

ճԾ. Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան նորա. օրհնեցէք զնա ի հաստատութեան զօրութեան նորա:

Փոքր էի ես յեղբարս իմ, եւ կրտսեր ի տան հօր իմոյ. արածէի զխաշինս հօր իմոյ:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Բ. 1:

Եւ ի կատարել աւուրցն պենտէկոստէից՝ էին ամենեքեան միաբան ի միասին: Եւ եղեւ յանկարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրեւ սաստիկ հողմոյ, եւ ելից զամենայն տունն յորում նստէին: Եւ երեւեցան նոցա բաժանեալ լեզուք իբրեւ ի հրոյ. եւ նստաւ իւրաքանչիւր ի վերայ նոցա:

Եւ լցան ամենեքեան Հոգւով սրբով, եւ սկսան խօսել յայլեւայլ լեզուս՝ որպէս եւ Հոգին տայր բարբառել նոցա։ Եւ էին յԵրուսաղէմ բնակեալ Հրեայք՝ արք երկիւղածք յամենայն ազգաց՝ որ ի ներքոյ երկնից։ Եւ իբրեւ եղեւ բարբառս այս՝ եկն միաբան բազմութիւնն եւ խռնեցաւ. զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօսել նոցա։ Աքանչանային ամենեքեան եւ զարմանային, եւ ասէին ընդ միմեանս. Ո՞չ աւասիկ ամենեքեան սոքա որ խօսինս՝ Գալիլեացիք են. եւ զիա՞րդ լսեմք մեք յիւրաքանչիւր բարբառս մեր՝ յորում ծնեալ եմք. Պարթեւք եւ Մարք եւ Իլամացիք, եւ որ բնակեալ են ի Միջագետս, ի Հրէաստանի եւ ի Գամիրս, ի Պոնտոս եւ յԱսիա, ի Փռիւգիա եւ ի Պամփիլիա, յԵգիպտոս եւ ի կողմանս Լիբէացւոց, որ ընդ Կիւրենացիս եւ որ եկք Հռովմայեցիք, Հրեայք եւ եկք նոցուն, Կրետացիք եւ Արաբացիք, լսեմք խօսից նոցա ի մեր լեզուս զմեծամեծս Աստուծոյ։ Աքանչանային ամենեքեան զարմացեալք, եւ ասէին ցմիմեանս. Զի՞նչ կամիցի այս լինել։ Եւ կիսոցն ընդ խաղ արկեալ ասէին, եթէ քաղցուալից իցեն։ Յարուցեալ Պետրոս հանդերձ մետասանիւքն՝ ամբարձ զձայն իւր եւ խօսեցաւ ընդ նոսա. Արք Հրէաստանեայք եւ որ բնակեալ էք յԵրուսաղէմ ամենեքեան, այս ձեզ յայտնի լիցի եւ ունկն դիք բանից իմոց։ Ոչ որպէս դուք կարծէք թէ սոքա արբեալ իցեն, զի դեռ երեք ժամք են աւուրս։ Այլ այս է՝ որ ասացաւ ի ձեռն մարգարէին Յովելայ. Եւ եղիցի յետ այսորիկ յաւուրս յետինս, ասէ Աստուած, հեղից յոգւոյ իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ. եւ մարգարէասցին ուստերք ձեր եւ դստերք ձեր. եւ երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն. եւ ծերք ձեր երազովք յերազեսցին։ Եւ ի վերայ ծառայից իմոց եւ ի վերայ աղախնաց իմոց՝ յաւուրսն յայնոսիկ հեղից յոգւոյ իմմէ, եւ մարգարէասցին։ Եւ տաց նշանս յերկինս ի վեր եւ նշանս յերկիր ի խոնարհ, արիւն եւ հուր եւ մրրիկ ծխոյ. արեգակն դարձցի ի խաւար, եւ լուսին յարիւն՝ մինչ չեւ եկեալ իցէ օր Տեառն մեծ եւ երեւելի։ Եւ եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ։ 21։

Ալէլուիա, ալէլուիա. Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր, եւ բանիւ Տեառն երկինք հաստատեցան. եւ Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԺԴ. 25։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ ձեզս եմ։ Իսկ մխիթարիչն Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն, եւ յիշեցուսցէ զամենայն՝ որ ինչ ասացի ձեզ։ Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի՛ խռովեսցին սիրտք ձեր, եւ մի՛ զանգիտեսցեն։ Լուայք, զի ասացի ես ձեզ թէ երթամ, եւ գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լեալ էր ձեր՝ թէ ես առ Հայր երթամ, զի Հայր իմ մեծ է քան զիս։ Եւ այժմ ասացի ձեզ մինչ չեւ եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք։ Ոչ եւս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. գայ իշխան աշխարհիս այսորիկ եւ յիս ինչ ոչ գտանէ։ Այլ զի ծանիցէ աշխարհ, եթէ սիրեմ զՀայր, եւ որպէս պատուիրեաց ինձ Հայր՝ այնպէս առնեմ. օն արիք՝ գնասցուք աստի։ 31։

---

## ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

ԲԶ.

Ժամամուտ. Այսօր ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառաքեալսն լուսաւորելով զնոսա. եւ այժմ աղաչեմք զքեզ, սուրբ Աստուած՝ որ ես պատճառ կենդանութեան եղելոցս եւ խաղաղարար աշխարհի, խնայեա եւ կեցո զմեզ։

Սղ. ՃԽԴ. Արքայութիւն քո արքայութիւն ամենայն յաւիտենից. եւ տէրութիւն քո յազգէ մինչեւ յազգ։

Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր. եւ արդար է յամենայն գործս իւր։

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 1։

Պօղոս ծառայ Յիսուսի Քրիստոսի, կոչեցեալ առաքեալ, որոշեալ յաւետարանն Աստուծոյ. որ յառաջ խոստացաւ ի ձեռն մարգարէից իւրոց գրովք սրբովք, վասն

Որդւոյ իւրոյ եղելոյ ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ, սահմանելոյ Որդւոյն Աստուծոյ զօրութեամբ ըստ հոգւոյն սրբութեան. ի յարութենէ մեռելոց Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ. որով ընկալաք շնորհս եւ առաքելութիւն՝ ի հնազանդութիւն հաւատոց յամենայն հեթանոսս վասն անուան նորա. յորս եւ դուք էք կոչեցեալ Յիսուսի Քրիստոսի: Ամենեցուն որոց էք ի Հռովմ, սիրելեաց Աստուծոյ՝ կոչեցելոց սրբոց, շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ: Նախ գոհանամ զԱստուծոյ իմոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի վասն ձեր ամենեցուն. զի հաւատք ձեր պատմեալ են ընդ ամենայն աշխարհ: Վկայ է ինձ Աստուած, զոր պաշտեմն հոգւով իմով յաւետարանի Որդւոյ նորա, թէ որպէս զյիշատակս ձեր առնեմ յամենայն ժամ յաղօթս իմ, աղաչելով զի թերեւս երբեք յաջողեսցի ինձ կամօքն Աստուծոյ գալ առ ձեզ: Քանզի անձկացեալ եմ տեսանել զձեզ, զի փոխեցից ի ձեզ շնորհս ինչ հոգեւորս՝ առ ի հաստատել զձեզ. այսինքն է, միսիթարակից լինել ձեզ վասն ընդ միմեանց իմոյ եւ ձերդ հաւատոց: Ոչ կամիմ եթէ տգէտք իցէք, եղբարք, զի բազում անգամ յօժարեցի գալ առ ձեզ, եւ արգելայ մինչեւ ցայժմ. զի եւ ի ձեզ գտից պտուղ ինչ՝ որպէս եւ յայլ հեթանոսս: Քանզի Յունաց եւ բարբարոսաց, իմաստնոց եւ անմտից պարտապան եմ, այնպէս՝ որչափ իմովսանն յօժարութեամբ եւ ձեզ որ ի Հռովմդ էք՝ աւետարանել: Զի ոչ եթէ ամօթ ինչ համարիմ զաւետարանն. քանզի զօրութիւն Աստուծոյ է ի փրկութիւն ամենայն հաւատացելոց, նախ Հրէի եւ ապա հեթանոսի: Զի արդարութիւն Աստուծոյ նովաւ յայտնի ի հաւատոց ի հաւատս. որպէս եւ գրեալ է եթէ Արդարն ի հաւատոց կեցցէ: 17:

Ալէլուիա, ալէլուիա. Եկայք ցնծասցուք ի Տէր. աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Է. 28:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ եղեւ իբրեւ կատարեաց (Յիսուս) զամենայն զբանս զայսոսիկ, զարմանային ժողովուրդքն ընդ վարդապետութիւն



նորա. զի իբրեւ իշխանութեամբ ուսուցանէր, եւ ոչ որպէս դպիրքն: Այլ իբրեւ էջ ի լեռնէ անտի, գնացին զկնի նորա ժողովուրդք բազումք: Եւ ահա մատուցեալ բորոտ մի՝ երկիր պագանէր նմա եւ ասէր. Տէր, եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել: Զգեաց զձեռն իւր եւ հասոյց ի նա Յիսուս եւ ասէ. Կամիմ սրբեաց. եւ վաղվաղակի սրբեցաւ ի նմանէ բորոտութիւնն: Եւ ասէ ցնա Յիսուս. Զգոյշ լեր՝ մի՛ ումեք ասիցես. այլ երթ ցոյց զանձն քո քահանային. եւ մատո զպատարագն, զոր հրամայեաց Մովսէս՝ ի վկայութիւն նոցա: Ը. 4:

---

## ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԲԿ.

Ժամամուտ. Վասն որոյ եւ մեք զՀոգին սուրբ ընդ Հօր միաւորեալ եւ ընդ Որդւոյ միասնական խոստովանիմք. եւ հայցեմք ի վերնատուողէդ մեզ զհոգեւորական զխաղաղութիւնդ. Տէր փառք քեզ:

Սղ. Ե. Երկիր պագից ի տաճար սուրբ քո. երկիւղիւ քո Տէր:

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քոյ Տէր. զի օրհնեսցես դու զարդարն:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 18:

Քանզի յայտնելոց է բարկութիւն Աստուծոյ յերկնից ի վերայ ամենայն ամբարշտութեան եւ անիրաւութեան մարդկան, որք զճշմարտութիւնն անիրաւութեամբ ունին: Վասն զի գիտութիւնն Աստուծոյ յայտնի է ի նոսա. քանզի Աստուած իսկ յայտնեաց նոցա: Զի աներեւոյթք նորա ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանին. այսինքն է՝ մշտնջենաւորութիւն եւ զօրութիւն եւ աստուածութիւն նորա. զի ոչ գտանիցեն ամենեւին տալ պատասխանի: Զի ծանեան զԱստուած, եւ ոչ իբրեւ զԱստուած փառաւորեցին կամ գոհացան. այլ նանրացան ի խորհուրդս իւրեանց, եւ խաւարեցան անմտութեամբ սիրտք նոցա:

Զանձինս առ իմաստունս ունէին՝ յիմարեցան: Եւ փոխեցին զփառս անեղծին Աստուծոյ՝ ի նմանութիւն պատկերի եղծանելի մարդոյ եւ թռչնոց եւ չորքոտանեաց եւ սողնոց: Վասն որոյ մատնեաց զնոսա Աստուած ի ցանկութիւն սրտից նոցա ի պղծութիւն, անարգել զմարմինս իւրեանց յանձինս իւրեանց. որք փոխանակեցին զճշմարտութիւն Աստուծոյ ընդ ստութեան. Հնազանդեցան եւ պաշտեցին զարարածս, եւ ոչ զարարիչն, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն: Վասն այսորիկ մատնեաց զնոսա Աստուած ի կարիս անարգութեան. զի էգք նոցա փոխանակեցին զպէտս բնականս ի պէտս անբնականս: Նոյնպէս եւ արուացն թողեալ զբնական պէտս իգութեանն, բորբոքեցան ցանկութեամբք իւրեանց ի միմեանս. արուք ընդ արուս զխայտառակութիւն գործէին, եւ զդարձ փոխարինին՝ որ պարտ էր մոլորութեանն նոցա, յանձինս իւրեանց ընդունէին: Եւ որպէս զի ոչ ընտրեցին զԱստուած ունել ի գիտութեան, մատնեաց զնոսա Աստուած ի միտս անարգութեան՝ գործել զանարժանս. զլցեալսն ամենայն անիրաւութեամբ, պոռնկութեամբ, անզգամութեամբ, ագահութեամբ, չարութեամբ, լի նախանձու, սպանութեամբ, հեռիւ, նենգութեամբ, չարաբարութեամբ, շոգմոգք, չարախօսք, աստուածատեացք, թշնամանողք, ամբարտաւանք, ամբարհաւաճք, գտիչք չարեաց, զծնողս անարգուք, անմիտք, ուխտադրուժք, անագորոյնք, աննուէրք, անողորմք: Ոյք հասեալ էին յԱստուծոյ իրաւանցն վերայ, եթէ ոյք զայսպիսիսն գործեն՝ արժանի են մահու. եւ ոչ միայն որ զայսն առնեն, այլ եւ որ կամակիցն լինին գործելեացն: Վասն որոյ առանց պատասխանի տալոյ ես, ով մարդ, որ դատիսդ: Զի որով դատիս զընկերն, զանձն քո դատապարտես, զի դու զնոյն գործես՝ որով դատիսն: Բ. 1:

Ալէլուիա, ալէլուիա. Երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէք Տեառն ամենայն երկիր. երգեցէք Տեառն եւ բարձր արարէք զանուն նորա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ը. 5:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ մտեալ ի Կափառնաում, մատեաւ առ նա հարիւրապետ մի, աղաչէր զնա, եւ ասէր. Տէր, մանուկ իմ



անկեալ կայ ի տան անդամալոյծ՝ չարաչար տանջեալ: Ասէ ցնա Յիսուս. Ես եկից եւ բժշկեցից զնա: Պատասխանի ետ հարիւրապետն եւ ասէ. Տէր, չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես. այլ ասա բանիւ, եւ բժշկեսցի մանուկն իմ: Քանզի եւ ես այր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինեւ զինուորս. ասեմ սմա՝ Երթ, եւ երթայ, եւ այլում թէ Եկ, եւ գայ, եւ ծառայի իմում թէ Արա զայս, եւ առնէ: Իբրեւ լուաւ Յիսուս՝ զարմացաւ, եւ ասէ ցայնոսիկ որ զհետն երթային. Ամէն ասեմ ձեզ եւ ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս գտի երբեք: Բայց ասեմ ձեզ, զի բազումք յարեւելից եւ յարեւմտից եկեսցեն եւ բազմեսցին ընդ Աբրահամու եւ ընդ Սահակայ եւ ընդ Յակովբու յարքայութեան երկնից: Եւ որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց: Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն. Երթ եւ որպէս հաւատացերդ՝ եղիցի քեզ. եւ ողջացաւ մանուկն նորա յաւուր յայնմիկ: Եւ եկեալ Յիսուս ի տուն Պետրոսի, ետես զի զոքանչ նորա անկեալ դնէր տապացեալ: Կալաւ զձեռանէ նորա, եւ եթող զնա ջերմին. յոտն եկաց եւ պաշտէր զնոսա: Իբրեւ եղեւ երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս բազումս, եւ եհան զայսսն բանիւ, եւ զամենայն հիւանդսն բժշկեաց: Զի լցցի բանն՝ որ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի. Նա զհիւանդութիւնս մեր վերացոյց, եւ զցաւս մեր եբարձ: 17:

---

## ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԳՉ.

Ժամամուտ. Աստուած զքեզ խոստովանիմք զսուրբ Հոգիդ, եւ երկիր պագանեմք. որ ես պատճառ կենդանութեան եղելոցս եւ խաղաղարար աշխարհի. որ զտգիտութիւն աշակերտացն բազում գիտութեամբ լցեր, եւ ի հրեղէն լեզուս բաժանեալ անճառելեօք ցուցար նոցա. աղաղակեմք Տէր, խնայեա եւ կեցո զմեզ:

Սղ. ՉԵ. Կեցո զծառայս քո, Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 2:

Քանզի գիտեմք՝ եթէ Աստուծոյ դատաստանն ճշմարտութեամբ է ի վերայ այնոցիկ՝ որ զայնպիսիսն գործեն: Իսկ արդ՝ խորհիցի՞ս զայս, ո՛վ մարդ, որ դատիս զայնոսիկ՝ որ զայնպիսիսն գործեն, եւ դու զնոյն գործես, եթէ դու ապրելոց իցես ի դատաստանացն Աստուծոյ: Եթէ զմեծութեամբ քաղցրութեան նորա եւ զներելովն եւ զերկայնմտութեամբն արհամարհիցես, չգիտիցե՞ս՝ զի քաղցրութիւնն Աստուծոյ զքեզ յապաշխարութիւն ածէ: Այլ ըստ խստութեան քում եւ ըստ անզեղջ սրտի՝ գանձես անձին քում բարկութիւն՝ յաւուր բարկութեան եւ յայտնութեան արդար դատաւորութեան Աստուծոյ: Որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց. որ համբերութեամբ են ի գործս բարութեան, զփառս եւ զպատիւ եւ զանեղծութիւն խնդրեն, զկեանսն յաւիտենից. իսկ որ ի հակառակութենէ անտի են, եւ ապստամբք ի ճշմարտութենէն, եւ զհետ երթեալ զանիրաւութեան, բարկութիւն եւ սրտմտութիւն: Նեղութիւն եւ անձկութիւն ի վերայ ամենայն մարդոյ՝ որ գործէ զչար, նախ Հրէին եւ ապա հեթանոսի. փառք եւ պատիւ եւ խաղաղութիւն ամենայնի՝ որ գործէ զբարի, նախ Հրէին եւ ապա հեթանոսի: Զի ոչ է ակնառութիւն առաջի Աստուծոյ: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Վասն անուան քոյ Տէր քաւեա զմեղս իմ. զի բազում եղեն յոյժ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ը. 18:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Տեսեալ (Յիսուսի) ժողովուրդս բազումս զիւրեւ, հրամայեաց երթալ յայնկոյս: Եւ մատուցեալ դպիր մի ասէ ցնա. Վարդապետ, եկից եւ ես զկնի քո յոր վայր եւ



երթիցես: Ասէ ցնա Յիսուս. Աղուեսուց որջք գոն եւ թռչնոց երկնից բոյնք, այլ Որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր: Եւ մի ոմն յաշակերտաց նորա ասէ ցնա. Տէր, տուր ինձ հրաման՝ զի երթայց նախ թաղեցից զհայր իմ: Ասէ ցնա Յիսուս. Եկ զկնի իմ, եւ թոյլ տուր մեռելոցն թաղել զմեռեալս իւրեանց: Եւ իբրեւ եմուտ ի նաւն, գնացին զկնի նորա աշակերտքն նորա: Եւ ահա շարժումն մեծ եղեւ ի ծովուն՝ մինչ նաւին ծածկել յալեաց անտի, եւ ինքն ննջէր: Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա եւ ասեն. Տէր, փրկեա զմեզ՝ զի կորնչիմք: Եւ ասէ ցնոսա Ընդէ՞ր վատասիրտք էք սակաւահաւատք: Յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոցն եւ ծովուն, եւ եղեւ խաղաղութիւն մեծ: Եւ մարդիկն զարմացան եւ ասեն. Որպիսի՞ ոք իցէ սա, զի եւ հողմք եւ ծով հնազանդին սմա: 27:

---

## ՀԻՆԳԾԱԲԱԹԻ

Գ. Կ.

Ժամամուտ. Այսօր ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառաքեալսն լուսաւորելով զնոսա. եւ այժմ աղաչեմք զքեզ, սուրբ Աստուած՝ որ ես պատճառ կենդանութեան եղելոցս եւ խաղաղարար աշխարհի, խնայեա եւ կեցո զմեզ:

Սղ. ՂԸ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 12:

Որք միանգամ արտաքոյ օրինացն մեղան արտաքոյ օրինացն եւ կորնչին. եւ որք ընդ օրինօքն մեղան, օրինօքն եւ դատեսցին: Զի ոչ եթէ որ լսելիք օրինացն են՝ արդարացեալ են առաջի Աստուծոյ, այլ առնելիք օրինացն արդարասցին: Այլ յորժամ հեթանոսք՝ որ զօրէնս ոչ ունին,

բնութեամբ զօրինացն գործիցեն, նոքա՝ որ զօրէնսն ոչ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք: Որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ ի սիրտս իւրեանց՝ վկայութեամբ մտաց իւրեանց, եւ յանդիմանեալ զմիմեանս ի խորհրդոց իւրեանց, կամ թէ պատասխանի իսկ տալ, յաւուրն՝ յորում դատիցի Աստուած զգաղտնիս մարդկան՝ ըստ աւետարանիս իմոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի: Ապա եթէ դու հրեայ անուանեալ ես, եւ յեցեալ ես յօրէնսն, եւ պարծիս յԱստուած, եւ գիտես զկամս նորա, եւ ընտրես զլաւն, եւ խրատեալ ես յօրինացն. վստահ ես յանձն քո առաջնորդ լինել կուրաց, լոյս խաւարելոց, խրատիչ անզգամաց, վարդապետ տղայոց, ունել զկերպարանս գիտութեան եւ ճշմարտութեան օրինացն: Իսկ արդ՝ որ ուսուցանես զընկերն, զանձն քո ոչ ուսուցանես. որ քարոզես չգողանալ, գողանաս. որ ասես չշնալ, շնաս. որ գարշիս ի մեհենաց, զսեղանս կողոպտես. որ օրինօքն պարծիս, յանցանել ըստ օրէնսն զԱստուած անարգես: Զի անուն Աստուծոյ վասն ձեր հայհոյի ի մէջ հեթանոսաց, որպէս եւ գրեալ է: 24:

Ալէլուիա, ալէլուիա. Բարձր արարից զընտրեալն ի ժողովրդենէ իմմէ. գտի զԴաւիթ ծառայ իմ, եւ իւղով սրբով իմով օծի զնա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ը. 28:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ իբրեւ անց յայնկոյս յերկիրն Գերգեսացւոց, պատահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք ի գերեզմանացն, չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ: Եւ ահա աղաղակեցին եւ ասեն. Զի՞ կայ մեր եւ քո, Յիսուս Որդի Աստուծոյ, եկիր տարաժամ տանջել զմեզ: Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից արօտական: Եւ դեւքն աղաչէին զնա եւ ասէին. Եթէ հանես զմեզ աստի, հրաման տուր մեզ երթալ յերամակ խոզիցն: Եւ ասէ ցնոսա. Երթայք. եւ նոքա ելեալ գնացին յերամակն խոզից. եւ դիմեաց ամենայն



երամակն ի դարէ անտի ի ծով, եւ մեռան ի ջուրսն: Եւ խոզարածքն փախեան, եւ երթեալ ի քաղաքն՝ պատմեցին զամենայն, եւ զիրս դիւահարացն: Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի. իբրեւ տեսին զնա՝ աղաչեցին զի գնասցէ ի սահմանաց նոցա: 34:

---

## ՈՒՐԲԱԹ

### ԴԶ.

Ժամամուտ. Վասն որոյ եւ մեք զՀոգին սուրբ ընդ Հօր միաւորեալ եւ ընդ Որդւոյ միասնական խոստովանիմք. եւ հայցեմք ի վերնատուողէդ մեզ զհոգեւորական զխաղաղութիւնդ. Տէր փառք քեզ:

Սղ. Ղէ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 25:

Թլփատութիւն օգնէ՝ եթէ զօրէնսն պահիցես. ապա եթէ յանցաւոր օրինացն իցես, թլփատութիւն քո անթլփատութիւն եղեւ: Իսկ եթէ անթլփատութիւնն զիրաւունս օրինացն պահիցէ, ո՞չ ապաքէն անթլփատութիւն նորա ի թլփատութիւն համարեսցի. եւ դատիցի՝ որ ի բնէ անթլփատութիւնն է զօրէնսն կատարելով՝ զքեզ, որ գրովն եւ թլփատութեամբն յանցաւոր օրինացն իցես: Զի ոչ եթէ որ յայտնի հրեայն է, եւ ոչ որ յայտնի մարմնով թլփատութիւնն. այլ որ ի ծածուկ հրեայն է, եւ թլփատութիւն սրտի հոգւով եւ ոչ գրով. որոյ գովութիւն ոչ ի մարդկանէ է, այլ յԱստուծոյ: Իսկ արդ՝ զի՞նչ աւելի է Հրէին, կամ զի՞նչ օգուտ ի թլփատութենէ անտի: Բազում ինչ ամենայն իրօք. նախ այն իսկ՝ զի հաւատարիմ եղեն պատգամքն Աստուծոյ: Իսկ արդ՝ եթէ չէր հաւատացեալ ոմանց, միթէ անհաւատութիւն նոցա զԱստուծոյ հաւատսն խափանէ՞ր. քա՛ւ լիցի: Արդ՝ եղիցի

Ըստուած ճշմարիտ, եւ ամենայն մարդ՝ սուտ. որպէս եւ գրեալ է. Որպէս արդար եղիցես ի բանս քո, եւ յաղթեսցես ի դատել քեզ: Իսկ արդ՝ եթէ ապիրատութիւնն մեր զԸստուծոյ արդարութիւնն յանդիման կացուցանէ. զինչ ասեմք, միթէ անիրաւ ինչ է Ըստուած՝ որ ածէ զբարկութիւնն: Ընա մարդկութեան ասեմ. քաւ լեցի. ապա թէ ոչ՝ զիա՞րդ դատի Ըստուած զաշխարհ: Օ՛ի եթէ ճշմարտութիւնն Ըստուծոյ յիմում ստութեանն առաւելաւ ի փառս նորա, զի՞ եւս ես իբրեւ զմեղաւոր դատիմ: Եւ կամ թէ՝ որպէս հայհոյիմքն, եւ որպէս ասեն զմէնջ ունիք ասել, թէ Ընացուք զչար՝ զի եկեսցէ բարի. որոց դատաստանքն յիրաւի են: Եւ արդ՝ ի՞նչ իւիք առաւել իցեմք. ապաքէն եւ ոչ իւիք. քանզի յառաջագոյն իսկ մեղադիր եղեաք Հրէից եւ հեթանոսաց՝ ամենեցուն ընդ մեղաք լինելոյ: Որպէս եւ գրեալ է, թէ Ոչ ոք է արդար եւ ոչ մի. եւ ոչ ոք է՝ որ իմանայ, եւ ոչ ոք է՝ որ խնդրէ զԸստուած: Ամենեքեան խոտորեցան, ի միասին անպիտանացան. ոչ ոք է որ առնէ գքաղցրութիւն, եւ ոչ ոք է մինչեւ ի մի: Գերեզման բաց է կոկորդ նոցա, լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն. թոյնք իժից ի նեղքոյ շրթանց նոցա: Որոց բերանք անիծիւք եւ դառնութեամբ լի են: Երագ են ոտք նոցա հեղուլ զարիւն: Ի նկուճն եւ թշուառութիւն ի ճանապարհս նոցա. եւ զճանապարհն խաղաղութեան ոչ ծանեան: Ոչ է երկիւղ Ըստուծոյ առաջի աչաց նոցա: Գ. 18:

Ալէլուիա, ալէլուիա. Յիշեա Տէր զգթութիւնս քո. եւ զողորմութիւնս քո՝ որք են յաւիտենից:

Սրբոյ Առաքելոյն որ ըստ Մատթէոսի.

Գլ. Թ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ մտեալ ի նաւ՝ անց յայնկոյս, եւ եկն ի քաղաք իւր: Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի, որ դնէր ի մահիճս. եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո: Եւ ահա ոմանք ի դպրացն ասեն ընդ միտս. Հայհոյէ դա: Ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. Ընդէ՞ր խորհիք դուք չարիս



ի սիրտս ձեր. զինչ դիւրին է. ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել՝ Ելի եւ շրջեաց: Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս. յայնժամ ասէ ցանդամալոյծն. Ելի, առ զմահիճս քո եւ երթ ի տուն քո: Եւ յարուցեալ գնաց ի տուն իւր: Իրրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան. եւ փառաւորառնէին զԸստուած զտուիչն այնպիսի իշխանութեան՝ մարդկան: 8:

---

## ԹԱՐԱԹ

Պ·Կ·

Ժամամո՛ւտ. Ըստուած զքեզ խոստովանիմք զսուրբ Հոգիդ. եւ երկիր պագանեմք. որ ես պատճառ կենդանութեան եղելոցս եւ խաղաղարար աշխարհի. որ զգիտութիւն աշակերտացն բազում գիտութեամբ լցեր, եւ ի հրեղէն լեզուս բաժանեալ անճառելեօք ցուցար նոցա. աղաղակեմք Տէր, խնայեա եւ կեցո զմեզ:

Աղ· Ա՛թ· Եհան զիս ի գրոյ տառապանաց· ի կաւոյ եւ ի տղմոյ:

Հաւերելով համբերի Տեառն, եւ նայեցաւ առ իս· եւ լուաւ աղօթից իմոց:

Պետրոսի առաքելոյն ի Պաթողիկէայց երկրորդ թղթոյն Հ ընթերցուածս. Գլ· Բ· 9:

Գիտէ Տէր զաստուածապաշտս վրկել ի փորձութենէ, եւ զանօրէնս պահել ի տանջանս աւուրն դատաստանի. մանաւանդ որ զհետ մարմնոյ պղծալից ցանկութեանց իցեն երթեալ, արհամարհողք տէրութեանն, ժպիրհք, յանդգնունք, չզանգիտեն զփառան հայհոյել: Ուր հրեշտակք զօրութեամբ եւ կարողութեամբ քան զնոսա մեծամեծք, չածեն զնոքօք ի Տեառնէ զհայհոյութեանն դատաստան: Այլ սոքա իբրեւ զանխօս անասունս ըստ բնածին բարուցն յեղծումն եւ յապականութիւն, որոց չենն գիտակ՝ հայհոյեն յապականութեան իւրեանց, եւ ապականեսցին: Տանջեալք ի վարձուց անիրաւութեան. որ ցանկութիւն

զաւուրն փափկութիւն համարին. բծկանք, արատաւորք, փափկացեալք ի պատիրս իւրեանց, լեալ ձեզ խրախճանակիցք: Աչս ունին հանգոյնս պոռնկաց, անդադարս ի մեղաց, պատրեն զանձինս յողդողդաց. որ ունին սիրտ հարեալ զագահութեան, մանկունք անիծից: Թողեալ զուղղորդ ճանապարհն, մոլորեցան, զհետ երթեալ ճանապարհին Բաղաամայ Բէորեան, զվարձս անիրաւութեան սիրեցին: 15:

Ալէլուիա, ալէլուիա. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի:

Գլ. Բ. 16:

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Յայնժամ իբրեւ ետես Հերովդէս թէ խաբեցաւ ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. եւ առաքեաց կոտորեաց զամենայն մանկունս որ էին ի Բեթղեհէմ եւ յամենայն սահմանս նորա՝ յերկեմենից եւ ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց ի մագուցն: Յայնժամ կատարեցաւ ասացեալն ի ձեռն Երեմիայ մարգարէի՝ որ ասէ. Ձայն գուժեաց ի Հռամայ, ողբումն եւ լալումն եւ աշխարումն յոյժ. Հռաքէլ լայր զորդիս իւր, եւ ոչ կամէր մխիթարել՝ զի ոչ էին: 18:



ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐ

ԳԱԼՍՏԵԱՆ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ

ԵՒ ՏՕՆ

# ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ

---

## ԱՌԱՋԻՆ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ՊԵՆՏԷԿՈՍՏԷԻՆ

ԱՁ.

Ժամամուտ. Վասն որոյ եւ մեք զՀոգին սուրբ ընդ Հօր միաւորեալ եւ ընդ Որդւոյ միասնական խոստովանիմք. եւ հայցեմք ի վերնատուողէդ մեզ զհոգեւորական զխաղաղութիւնդ. Տէր փառք քեզ:

Սղ. ՀԶ. Ձայն ետուն ամպք. քանզի եւ նետք քո գնան ի ձայնէ որոտալոյ քոյ անուի:

Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի. ձայնիւ իմով առ Աստուած, եւ նայեցաւ առ իս:

Յակովբու առաքելոյն ի Կաթողիկեայց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 16:

Խոստովան եղերուք միմեանց զմեղս, եւ աղօթս արարէք ի վերայ միմեանց, որպէս զի բժշկեսջիք. քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոց յօգնականութիւն: Եղիա մարդ էր իբրեւ զմեզ չարչարելի. եւ յաղօթս եկաց, եւ ոչ տեղեաց յերկիր զերիս ամս եւ զվեց ամիս: Եւ դարձեալ եկաց յաղօթս, եւ ետուն երկինք զանձրեւ, եւ բուսոյց երկիր զպտուղ իւր: Եղբարք իմ, եթէ ոք ի ձէնջ մոլորիցի ի ճշմարտութեան ճանապարհէ անտի, եւ դար-

ձուսցէ ոք զնա. գիտասցէ, զի որ դարձուցանէ զմեղաւորն ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի իւր ի մահուանէ, եւ ծածկեսցէ զբազմութիւն մեղաց: 20:

Ալէլուիա, ալէլուիա. Դու յարուցեալ զթասցիս ի վերայ Սիովնի. ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ· Դ· 25:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Արդարեւ ասեմ ձեզ, զի բազում այրիք էին յաւուրս Եղիայի ի մէջ Իսրայէլի՝ յորժամ փակեցաւն երկինք զերիս ամն եւ վեց ամիս, եւ եղեւ սով մեծ ընդ ամենայն երկիր: Եւ ոչ առ մի ի նոցանէ առաքեցաւ Եղիա, բայց միայն ի Սարեբթա Սիդովնացւոց՝ առ կին մի այրի: Եւ բազում բորոտք էին յԻսրայէլի առ Եղիսէի մարգարէիւ, եւ ոչ ոք ի նոցանէ սրբեցաւ, բայց միայն Նէեման ասորի: Եւ լսան ամենեքին բարկութեամբ ի ժողովրդեանն՝ իբրեւ լսէին զայս: Եւ յարուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին, եւ ածին զնա մինչեւ յարտեւան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր՝ գահավէժ առնել զնա: Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա՝ գնայր: 30:

---

## ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### ԸԿ·

**Սրբոց Հռիփսիմեանց:**

Յաճախօք: Ոք ծագեցան մեզ յարեւմտից որպէս զարեգակն, եւ լուսաւորեցին հաւանգամայն զաշխարհս Հայաստանեայց· փարատեցին զխաւարն անգիտութեան կռապաշտութեան, եւ լուսաւորեցին զամենայն հոգի հաւատով աստուածգիտութեան, սոցա բարեխօսութեամբն Քրիստոս Աստուածդ, պարգեւեա աշխարհի քում զխաղաղութիւն, եւ անձանց մերոց գմեղաց զթողութիւն, որպէս մարդասէր Տէր:



Սղ· Խդ· Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա. եւ զընկերս նորա տարցին նմա:

Ընկեաց սիրտ իմ բան բարի. եւ ասեմ զգործս իմ թագաւորի:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ· Ժե· 30:

Ընդունեմ զձեզ, եղբարք, ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ սիրով Հոգւոյն, պատերազմակից լինել ինձ յաղօթս վասն իմ առ Աստուած: Զի ապրեցայց յապրատամբացն՝ որ ի Հրէաստանի են. եւ պաշտօնն իմ որ ինդրուսաղէմ, ընդունելի լեցի սրբոցն: Զի խնդութեամբ եկեալ առ ձեզ ի կամս Աստուծոյ, հանգեայց ընդ ձեզ: Եւ Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ ամենեսեան. ամէն: Յանձն առնեմ ձեզ զՓիլբէ զքոյր մեր, որ է սպասաւոր եկեղեցւոյն Կենքրեացւոց· զի զնա ընկալջիք ի Տէր՝ արժանի սրբոց, եւ վերակացու լինիջիք նմա՝ յոր պէս իրաց եւ կոչեսցէ զձեզ· քանզի եւ նա վերակացու եղեւ բազմաց եւ ինձ իսկ գլխովին: ԺԶ· 2:

Ալէլուիա, ալէլուիա. Ացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ. ի հանդերձս ոսկեհուռն զարդարեալ եւ պաճուճեալ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ· Ժ· 26:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զի ոչ ինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի: Զոր ասեմ ձեզ ի խաւարի՝ ասացէք ի լոյս. եւ զոր լսէք յունկանէ՝ քարոզեցէք ի վերայ տանեացդ. Եւ մի՛ երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ զոգի ոչ կարեն սպանանել. այլ երկերուք դուք առաւել յայնմանէ՝ որ կարողն է զոգի եւ զմարմին կորուսանել ի գեհենի: Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանկի միոջ վաճառին, եւ մի ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց Հօր ձերոյ: Այլ ձեր եւ ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է: Եւ արդ՝ մի՛ երկնչեցիք՝ զի լաւ էք քան զբազում ճնճղուկս: Ամենայն որ

խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցից եւ ես զնմանէ առաջի Հօր իմոյ՝ որ յերկինսն է։ Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց եւ ես զնա առաջի Հօր իմոյ՝ որ յերկինսն է։ 33։

---

## ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԲՉ·

### Սրբոց Գայիանեանց:

Ժամամուտ. Զյաղթական զձեր զհանդէս զուարճացեալ տօնէ եկեղեցի սուրբ. քանզի սրբութեամբ ստացայք զկուսութիւն, եւ ի մարմնի զանմարմնոցն ցուցէք զհանդէս։

Սղ· Խդ։ Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա. եւ զընկերս նորա տարցին նմա։

Բղխեաց սիրտ իմ բան բարի. եւ ասեմ զգործս իմ թագաւորի։

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ· Զ· 16։

Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք որպէս եւ ասաց Աստուած, թէ Բնակեցայց ի նոսա, եւ գնացից ի նոսա, եւ եղէց նոցա Աստուած, եւ նոքա եղիցին իմ ժողովուրդ։ Վասն որոյ ելէք ի միջոյ նոցա եւ մեկնեցարուք, ասէ Տէր, եւ ի պիղծս մի՛ մերձենայք, եւ ես ընկալայց զձեզ, եւ ես եղէց ձեզ ի հայր, եւ դուք եղիցիք ինձ յուստերս եւ ի դստերս, ասէ Տէր ամենակալ։ Իսկ որովհետեւ զայս աւետիս ունիմք, սիրելիք, սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղծութենէ մարմնոյ եւ հոգւոյ. կատարեսցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ։ Է· 1։

Ալէլուիա, ալէլուիա. Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ. ի հանդերձս ոսկէհուռն զարդարեալ եւ պաճուճեալ։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ· ԺԶ· 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի գայթագղեսջիք։ Ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ. այլ եկեսցէ ժամանակ



զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ։ Եւ զայն արասցեն ընդ ձեզ, քանզի ոչ ծանեան զՀայր եւ ոչ զիս։ Այլ եւ զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ եկեսցէ ժամանակ, յիշիցէք թէ ես ասացի ձեզ։ Զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի։ 5։

---

## ԱՌԱՋԻՆ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԲԿ·

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք։

Սղ· ՉԵ· Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ։

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ· Գ· 19։

Բայց գիտեմք՝ որ ինչ միանգամ օրէնքն ասեն, այնոցիկ որ ընդ օրինօքն են՝ ասեն. զի ամենայն բերան խցցի, եւ դատապարտ լիցի ամենայն աշխարհ Աստուծոյ։ Զի ի գործոց օրինաց ոչ արդարասցի ամենայն մարմին առաջի նորա. քանզի օրինօքն է գիտութիւն մեղաց։ Բայց արդ՝ առանց օրինացն իսկ արդարութիւնն Աստուծոյ յայտնեալ է՝ վկայեալ յօրինաց անտի եւ ի մարգարէից։ Քանզի արդարութիւնն Աստուծոյ ի հաւատոց անտի Յիսուսի Քրիստոսի յամենայն հաւատացեալս. եւ ոչ ինչ է խտիր. քանզի ամենեքեան մեղան, եւ նուազեալ են ի փառացն Աստուծոյ։ Եւ արդարանան ձրի նորին շնորհօք ի ձեռն փրկութեանն՝ որ ի Քրիստոս Յիսուս։ Զոր յառաջն եդ Աստուած քաւութիւն ի ձեռն հաւատոցն արեամբն նորա, ի հանդէս արդարութեան նորա վասն թողութեան յառաջագոյն մեղացն գործելոց, ի ներելն Աստուծոյ՝ ի հանդէս արդարութեանն

նորա ի ժամանակի յայսմիկ. զի եղեցի նա արդար, եւ արդարացուսցէ զայն՝ որ ի հաւատոցն Յիսուսի։ Իսկ արդ ո՞ւր են պարծանքն. արգելան։ Յորո՞ց օրինաց, ի գործո՞ց անտի. ոչ, այլ ի հաւատոցն օրինաց։ Քանզի համարիմք հաւատովք արդարանալ մարդոյ՝ առանց գործոց օրինաց։ Եթէ Հրէի՞ց միայն իցէ Աստուած, եւ հեթանոսաց ոչ. այո՛ եւ հեթանոսաց։ Զի եթէ մի է Աստուած՝ որ արդարացուցանէ զթլփատութիւն ի հաւատոց, ապա եւ զանթլփատութիւնն նովին հաւատովք։ Արդ զօրէնսն ինչ խափանե՞մք հաւատովքս, քաւ լիցի. այլ զօրէնսն հաստատեմք։ 31։

Ալէլուիա, ալէլուիա. Դարձ, Տէր, եւ փրկեա զանձն իմ. կեցո զիս Տէր ըստ ողորմութեան քում։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Թ. 9։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ անցեալ ընդ այն (Յիսուսի) ետես այր մի, զի նստէր ի մաքսաւորութեան՝ Մատթէոս անուն. եւ ասէ ցնա. Եկ զկնի իմ. եւ յարուցեալ գնաց զկնի նորա։ Եւ եղեւ իբրեւ բազմեալ էր նա ի տանն, եւ ահա մաքսաւորք եւ մեղաւորք եկեալ եւ բազմեալ էին ընդ Յիսուսի եւ ընդ աշակերտս նորա։ Իբրեւ տեսին փարիսեցիքն՝ ասեն ցաշակերտս նորա. Ընդէ՞ր ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր։ Իսկ Յիսուս իբրեւ լուաւ՝ ասէ ցնոսա. Ոչ պիտոյ է բժիշկ կարողաց՝ այլ հիւանդաց։ Երթայք ուսարուք զի՞նչ է՝ Զողորմութիւն կամիմ, եւ ոչ զզոհ. զի ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։ Յայնժամ մատեան առ նա աշակերտքն Յովհաննու եւ ասեն. Ընդէ՞ր մեք եւ փարիսեցիքն պահեմք յաճախ, եւ քո աշակերտքդ ոչ պահեն։ Ասէ ցնոսա Յիսուս. Միթէ մա՞րթ ինչ իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ նոսա իցէ. այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն, եւ ապա պահեսցեն։ 15։

---



## ԱՌԱՋԻՆ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### ԳԶ.

**Սրբոյն Յովհաննու կարապետին եւ Աթանագինեայ եպիսկոպոսին:**

Ժամամուտ. Զյառաջընթացութիւն քո եւ զկարապետութիւն Աստուծոյ Բանին խափանել կարծելով, որ ի ձեռն կնոջն զնախաստեղծն ի դրախտէն արտաքս ընկէց, նա եւ այժմ զՀերովդիադա անօրէնութեամբ բորբոքեալ, եւ բազմելոցն Հերովդեայ՝ զկաքաւս ոտից աղջկանն հաճոյացոյց, զի զքոյդ հատցէ զգլուխ, որ զամենեցուն ձեռնադրեցեր զգլուխն զՔրիստոս։ Այլ դու, որ յանապատէ բարբառոյ ձայն, գոչեա որում ձեռնադրեցեր՝ պարգեւել զխաղաղութիւն եւ զմեծ զողորմութիւն։

Սղ. ՁԸ. Աստուած փառաւորեալ է ի խորհուրդս սրբոց իւրոց. մեծ եւ ահաւոր ի վերայ այնոցիկ որ շուրջ են զնովաւ։

Զողորմութիւնս քո, Տէր, յաւիտեան օրհնեցից. յազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնս քո։

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 1։

Զերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրեւ երիցակիցս եւ վկայս չարչարանացն Քրիստոսի, որ եւ հանդերձեալ փառացն յայտնելոց հաղորդ. արածեցէք որ ի ձեզ հօտդ է Աստուծոյ. վերակացու լինել մի՛ իբրեւ ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի՛ զօշաքաղութեամբ, այլ յօժաթեամբ. մի՛ իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին։ Զի յերեւել հօտապետին՝ ընդունիջիք զանթառամ փառաց պսակն։ Սոյնպէս եւ երիտասարդք, հնազանդ լերուք ծերոց։ Ամենեքին ընդ միմեանս զխոնարհութիւն ունիցիք. զի Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց։ Խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ, զի զձեզ բարձրացուսցէ ի ժամանակի։ Զամենայն հոգս ձեր ընկեցէք ի նա, զի նա է որ հոգայ վասն ձեր։ 7։

Ալէլուիա, ալէլուիա. Դու մանուկ, մարգարէ Բարձրելոյն կոչեսջիր. գնասցես առաջի Տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

ԳԼ· ԺԱ· 2։

Աղ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Իսկ Յովհաննէս իբրեւ լուաւ ի բանտին զգործսն Քրիստոսի, առաքեաց ի ձեռն աշակերտաց իւրոց, եւ ասէ ցնա. Դո՞ւ ես՝ որ գալոյն ես, եթէ այլում ակն կալցուք։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Գնացէք պատմեցէք Յովհաննու, զոր լուայք եւ տեսէք։ Կոյրք տեսանեն, կաղք գնան, բորոտք սրբին, եւ խուլք լսեն, եւ մեռեալք յառնեն, եւ աղքատք աւետարանին. եւ երանեալ է՝ որ ոչ գայթակղեսցի յիս։ Եւ իբրեւ նոքա գնացին, սկսաւ Յիսուս ասել ցժողովուրդսն զՅովհաննէ. Զի՞նչ ելէք տեսանել յանապատին, եղէգն շարժուն ի հողմոյ։ Այլ զի՞նչ ելէք տեսանել, մարդ ի հանդերձս փափկութեան զարդարեալ. ահաւասիկ որ զփափկական զգեցեալ են՝ ի տունս թագաւորաց են։ Այլ զի՞նչ ելէք տեսանել. մարգարէ՞. այո՛ ասեմ ձեզ, եւ առաւել եւս քան զմարգարէ։ Զի նա է վասն որոյ գրեալն է. Ահա ես առաքեցից զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց՝ որ պատրաստեսցէ զճանապարհս քո առաջի քո։ Ամէն ասեմ ձեզ՝ չէ յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ. բայց փոքրիկն յարքայութեան երկնից՝ մեծ է քան զնա։ Յայց յաւուրսն Յովհաննու Մկրտչի մինչեւ ցայժմ՝ արքայութիւն երկնից բռնադատի, եւ բռնաւքն յափշտակեն զնա։ Վասնզի ամենայն օրէնք եւ մարգարէք մինչեւ ցՅովհաննէս մարգարէացան. եւ եթէ կամիք ընդունել՝ նա է Եղիա որ գալոյն է։ 14։

---

Իսկ ո՞ւր եցէ «ովքո՞ն վալէմ կոպպըէլայ պօն»

ՄԱՐՄՆՈՑ ԵՒ ԱՐԵԱՆ ՏԵԱՌՆ

յա՜ո՜ը ՛էնգլաքա՜ն՝ որ պէնի պօնի Սըբոյ Աստուա՜ծն, պայ կոպի կալցին։

Դասդաս՜պ· Իան ՛օր եւ քահանայապետ սուրբ, որ ի յերկնից իջեր, եւ զմարմին քո եւ զարիւնդ անապական



բաշխեցեր սրբոց քոց առաքելոց, եւ մեզ ի փրկութիւն սահմանեցեր. մաքրեա զմեզ Տէր հաղորդել սրբութեան քումմ խորհրդոյ. եւ պարգեւեա մեզ քաղցելոցս՝ զքաղցրութեան քումմ ճաշակումն, զի դու միայն ես բազմգութ. քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Սղ· ԻԲ. Պատրաստ արարեր առաջի իմ սեղան. ակնյանդիման նեղչաց իմոց։

Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս։

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. ԳԼ· ԺԱ· 23։

Ես ընկալայ ի Տեառնէ՝ զոր եւ ձեզն աւանդեցի, եթէ Տէր Յիսուս ի գիշերին՝ յորում մատնէր, առ հաց. գոհացաւ, երեկ եւ ասէ. Առէք եւ կերայք. այս է մարմին իմ՝ որ վասն ձեր բաշխի. զայս արարէք առ իմոյ յիշատակի։ Նոյնպէս եւ զբաժակն յետ ընթրեացն առ եւ ասէ. Այս բաժակ՝ նոր ուխտ է իմով արեամբ. զայս արարէք քանիցս անգամ եթէ ըմպիցէք՝ առ իմոյ յիշատակի։ Վասնիցս անգամ եթէ ուտիցէք զհացս զայս եւ զբաժակս ըմպիցէք, զմահն Տեառն պատմեցէք, մինչեւ եկեսցէ նա։ Այսուհետեւ որ ուտիցէ զհացս կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ եւ արեան Տեառն։ Փորձեսցէ մարդ զանձն իւր, եւ ապա ի հացէ անտի կերիցէ եւ ի բաժակէն արբցէ։ Զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ, դատաստան անձին իւրում ուտէ եւ ըմպէ. զի ոչ խտրէ զմարմինն Տեառն։ Վասն այնորիկ իսկ են ի ձեզ բազում հիւանդք եւ ախտաժէտք. եւ շատ եւս այն են, որ եւ ննջեցեալքն իսկ իցեն։ Զի եթէ զանձինս քննէաք՝ ապա ոչ դատապարտէաք։ Եւ եթէ դատիմք՝ ի Տեառնէ խրատիմք, զի մի՛ ընդ աշխարհի դատապարտեսցուք։ 32։

Ալելուիա, ալելուիա. Պատրաստ արարեր առաջի իմ սեղան. ակնյանդիման նեղչաց իմոց։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

ԳԼ· Զ· 51։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ես եմ հացն կենդանի, որ յերկնից իջեալ։ Եթէ ոք ուտիցէ ի հացէ յայսմանէ՝ կեցցէ ի յաւիտեան. եւ հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի։ Ա՞րանձինն ընդ միմեանս Հրեայքն եւ ասէին. Ո՞իարդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր յուտել։ Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ եւ արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս։ Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, ունի զկեանսն յաւիտենականս. եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում։ Ո՞իւ մարմին իմ ճշմարիտ կերակուր է, եւ արիւն իմ ճշմարիտ ըմպելի է։ Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցէ, եւ ես ի նմա։ Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, եւ ես կենդանի եմ վասն Հօր, եւ որ ուտէն զիս, եւ նա կեցցէ վասն իմ։ Այս է հացն՝ որ յերկնից իջեալ. ոչ որպէս կերան հարքն ձեր զմանանայն եւ մեռան. որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան։ 59։

---

## ԱՌԱՋԻՆ ՈՒՐԲԱԹ

ԳԿ·

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զհաւաղողութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչելիք։

Սղ· Ղէ· Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար։

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. ԳԼ· Դ· 1։

Իսկ արդ՝ զինչ ասիցեմք զգտանելն Աբրահամու նահապետին մերոյ ըստ մարմնոյ։ Ո՞վ եթէ Աբրահամու գործովք էր արդարացեալ, ունէր պարծանս, այլ ոչ առ Աստուած։ Իսկ զինչ ասիցէ գիր. Հաւատաց Աբրահամ Աստուած, եւ համարեցաւ նմա յարդարութիւն։ Հայց այնմ՝ որ գործիցէն, ոչ համարին վարձքն ըստ շնորհաց, այլ ըստ պարտեաց։ Իսկ այնմ՝ որ ոչն գործիցէ, բայց հաւատայցէ յայն՝ որ արդարացուցանէ զամբարիշտս, համարին հաւատք նորա յարդարութիւն։ Որպէս եւ Դաւիթ ասէ զերանութիւն մարդոյ՝ որում Աստուած համարի արդարութիւն առանց գործոց. Երանի որոց թողան անօրէնութիւնք, եւ որոց ծածկեցան մեղք իւրեանց։ Երանեալ է այր՝ որում ոչ համարեսցի Տէր զմեղս նորա։ Արդ երանութիւնս այս ի վերայ թլփատութե՞ն է, թէ ի վերայ անթլփատութեան. քանզի ասեմք՝ եթէ համարեցան Աբրահամու հաւատքն յարդարութիւն։ Արդ զիա՞րդ համարեցան. մինչ դեռ ի թլփատութե՞ն էր՝ եթէ յանթլփատութեան. ոչ ի թլփատութեանն, այլ յանթլփատութեանն։ Եւ նշանակ առ զթլփատութիւնն, կնիք արդարութեանն հաւատոյ՝ որ յանթլփատութենէ անտի. զի եղիցի նա Հայր ամենայն հաւատացելոց՝ որ յանթլփատութենէ անտի իցեն, առ ի համարելոյ եւ նոցա արդարութիւն. եւ Հայր թլփատութեան՝ որոց ոչ ի թլփատութենէ անտի եւէթ, այլ եւ որոց երթայցեն ընդ հետս անթլփատութեան հաւատոյ հօր մերոյ Աբրահամու։ 12։

Ա՛լէլուիա, ալէլուիա. Ողորմեա ինձ Տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

ԳԼ· Թ· 27։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ մինչ դեռ անցանէր ընդ այն (Յիսուս) զհետ եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին եւ ասէին. Ողորմեայ մեզ որդի Դաւթի։ Եւ իբրեւ եկն ի տուն, մատեան առ նա կոյրքն. եւ ասէ ցնոսա Յիսուս. Հաւատա՞ք՝ եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա՝ Այո՛ Տէր։ Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա եւ ասէ. Ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ։ Եւ բացան աչք նոցա. եւ սաստկաց նոցա

Յիսուս եւ ասէ. Զգոյշ կացէք մի՛ ոք գիտասցէ: Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն: Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա այր մի՝ համր դիւահար: Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն. եւ զարմացան ժողովուրդքն եւ ասեն, թէ Եւ ոչ երբեք երեւեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի: Իսկ փարիսեցիքն ասէին, թէ Իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս: 34:

---

## ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ

### ԴՉ.

**Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին ելն ի վիրապէն:**

Ժամամուտ. Գրիգոր սուրբ քահանայապետ, որ զհաւատս ուսուցեր, եւ զբանակս դիւացն հալածեցեր, մարդկան ուսուցեր քարոզել զԵրրորդութիւնն, պսակեցար յարքայութեան. արդ բարեխօս լեր առ Տէր վասն մեր:

Սղ. ԼԹ. Եհան զիս ի գբոյ տառապանաց. ի կաւոյ եւ ի տղմոյ:

Համբերելով համբերի Տեառն, եւ նայեցաւ առ իս. եւ լուաւ աղօթից իմոց:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. ԺԳ. 17:

Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, եւ հպատակ կացէք նոցա. զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց, որպէս թէ համարս տալոց են ընդ ձեր. զի խնդութեամբ արասցեն զայն, եւ մի՛ յոգւոց հանելով. զի այն ոչ յօգուտ ձեր է: Աղօթս արարէք վասն մեր. զի հաստատեալ գիտեմք եթէ բարւոք միտս ունիմք, յամենայնի կամիմք բարւոք գնացս ցուցանել: Եւ առաւել աղաչեմ՝ զի զայն առնիցէք, զի վաղագոյն պատսպարեցայց ձեզ: Եւ Աստուած խաղաղութեան՝ որ եհան ի մեռելոց զհովիւն հօտից, զմեծն արեամբ յաւիտենական ուխտին, զՏէր մեր Յիսուս Քրիստոս, հաստատեսցէ զձեզ ի գործս բարութեան առնել զկամս նորա. եւ արասցէ ի մեզ զհաճոյսն առաջի իւր ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն: 21:



Ալէլուիա, ալէլուիա. Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդիկի. եւ Տէր ընդ աջմէ քումմէ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԹ. 27:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յայնժամ պատասխանի ետ Պետրոս եւ ասէ ցնա. Աւասիկ մեք թողաք զամենայն եւ եկաք զկնի քո. արդ զի՞նչ լինիցի մեզ: Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ասեմ ձեզ. զի դուք որ եկիք զկնի իմ, ի միւսանգամ գալստեան՝ յորժամ նստցի Որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, նստջիք եւ դուք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգն Իսրայելի: Եւ ամենայն որ ոք եթող զտուն կամ զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ զմայր կամ զկին կամ զորդիս կամ զագարակս վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ եւ զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ: 29:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ՊԵՆՏԷԿՈՍՏԷԻՆ

### ՏՕՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

### ԴԿ.

Ժամամուտ. Զխաղաղութիւն շնորհեա եկեղեցւոյ քում սրբոյ, զխաղաղութիւն եւ զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմէ. եւ հաստատեա ի մի հաւատ զկաթուղիկէ եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տէր եւ Աստուած. կեցո զմեզ:

Սղ. ՃԺԷ. Այս օր է զոր արար Տէր. եկայք ցնծասցուք եւ ուրախ եղիցուք ի սմա:

Խոստովան եղերուք Տեառն զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Թ. 1:

Ունել ունէր եւ առաջինն իրաւունս պաշտաման յայնժամ զաշխարհական սրբութիւնն: Զի խորանն առաջին

հանդերձեցաւ այսպէս. յորում աշտանակն եւ սեղանն եւ հացն նուիրաց՝ որ Սրբուհին կոչէր. եւ յետ երկրորդ վարագուրին խորանն՝ որ կոչէր Սրբուհին սրբուհեանց: Յորում կայր բուրվառն ոսկի, եւ արկղն կտակարանաց պատեալ ներքոյ եւ արտաքոյ ոսկւով. յորում սափորն ոսկի լի մանանայիւ, եւ գաւազանն Ահարոնի՝ որ ծաղկեցաւ, եւ տախտակք կտակարանացն. եւ ի վերայ նորա քերովբէքն փառաց՝ որ հովանի ունէին ի վերայ քաւութեանն. վասն որոյ ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ: Եւ այն ամենայն իբրեւ այնպէս հանդերձեալ կայր, յառաջին խորանն յամենայն ժամ մտանէին քահանայքն զպաշտամունն կատարել: Բայց յերկրորդն մի անգամ ի տարւոջն քահանայապետն, եւ զայն՝ ոչ առանց արեան, զոր մատուցանէր վասն իւր եւ վասն ժողովրդեանն անգիտութեան: Զայս ցուցեալ Հոգւոյն սրբոյ՝ մինչ չեւ յայտնեալ էր ճանապարհի սրբութեանցն. քանզի դեռ առաջին խորանն ունէր զհաստատութիւն, որ է առակ ժամանակին որ առաջի կայր. յորում պատարագքն եւ զոհք մատչէին, որք ոչ կարէին ըստ միտս կատարել զպաշտօնեայն. բայց միայն կերակրովք եւ ըմպելեօք, եւ պէսպէս մկրտութեամբք՝ մարմնոյ արդարութիւնքն, որ մինչեւ ի ժամանակս ուղղութեանն ի վերայ կային: 10:

Ալէլուիա, ալէլուիա: Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քումմ. կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո:

## Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ· Ժ· 22:

Ընդ տերամբ մերով Յիսուսիս Քրիստոսիւ.

Եղեն յայնժամ նաւակատիքն Երուսաղէմ, եւ ձմեռն էր: Եւ շրջէր Յիսուս ի տաճարին՝ ի սրահին Սողոմոնի: Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն եւ ասեն. Մինչեւ յե՞րբ թափես զոգիս մեր. եթէ դու ես Քրիստոս՝ ասա մեզ համարձակ: Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. Ասացի ձեզ եւ ոչ հաւատայք ինձ. զգործսն զոր ես գործեմ յանուն հօր իմոյ՝ նոքին իսկ վկայեն վասն իմ: Եւյլ դուք ոչ հաւատայք, զի չէք յոչխարաց անտի իմոց: Ձայնիմ իմ ձայնի իմում լսեն, եւ ես ճանաչեմ զնոսա, եւ զկնի իմ



գան. եւ ես տամ նոցա զկեանսն յաւիտենականս, եւ մի՛ կորիցեն ի յաւիտեան. եւ մի՛ ոք յափշտակեսցէ զնոսա ի ձեռաց իմոց: Հայրն իմ՝ որ եւս ինձ զնոսա, մեծ է քան զամենայն, եւ ոչ ոք կարէ յափշտակել ի ձեռաց Հօր իմոյ: Նա եւ Հայր իմ մի եմք: 30:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### ԸՉ·

**Սրբոց Մանկանցն Բեթղեհէմի եւ Ակակիոսի վկային:**

Յոհաննու. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Ըստուած, որպէս մարդասէր:

Սղ· Ը· Ի բերանոյ մանկանց տղայոց ստնդիեցաց հաստատեցեր զօրհնութիւն:

Տէր Տէր մեր, զի՛ սքանչելի է անուն քո ի վերայ ամենայն երկրի:

Պօղոսի առաքելոյն Հռոմայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ· Ը· 14:

Որդ որովհետեւ մանկունք հաղորդեցին արեան եւ մարմնոյ, եւ ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղեւ նոցունց. զի մահուն իւրով խափանեսցէ զայն, որ զիշխանութիւն մահուն ունէր, այս ինքն է՝ զսատանայ. եւ ապրեցուսցէ զայնոսիկ, որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք ի ծառայութիւն: Վասնզի ոչ երբեք զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զզաւակն Աբրահամու բուռն հարկանէ: Ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանիլ. զի ողորմած լինիցի եւ հաւատարիմ քահանայապետ յաստուածակոյս կողմանէ անտի, առ ի քաւել զմեղս ժողովրդեանն: Ոչ որով ինքն չարչարեցաւ՝ զփորձ առեալ, կարող է եւ փորձանաւորացն օգնական լինել: 18:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր սիրէ զերաւունս եւ ոչ ընդ վայր հարկանէ զսուրբս իւր. այլ յաւիտեան պահէ զնոսա:

**Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.**

Գլ· Բ· 16։

**Ո՞ւստ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.**

*Յայնժամ իբրեւ տեսս Հերովդէս թէ խաբեցաւ ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ, եւ առաքեաց կոտորեաց զամենայն մանկունս որ էին ի Բեթղեհէմ եւ յամենայն սահմանս նորա՝ յերկեմենից եւ ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց ի մոգուցն։ Յայնժամ կատարեցաւ ասացեալն ի ձեռն Երեմիայ մարգարէի՝ որ ասէ. Ձայն գուժեաց ի Հռամայ, ողբումն եւ լալումն եւ աշխարումն յոյժ. Հռաքէլ լայր զորդիս իւր, եւ ոչ կամէր մխիթարել՝ զի ոչ էին։ 18։*

---

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

**ԸՆ·**

**Սրբոց կուսանացն նուիրեալ եւ Մանեայ։**

*Ժամամուտ. Հարանցեալք Քրիստոսի երկնաւոր փեսային, դատերք վերին Սիոնի. լինդրեցէք ի Քրիստոսէ զհաշտութիւն եւ զմեծ զողորմութիւն։*

*Սղ· ԽԴ· Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա. եւ զընկերս նորա տարցին նմա։*

*Ընկեաց սիրտ իմ բան բարի. եւ ասեմ զգործս իմ թագաւորի։*

**Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկէացց առաջին թղթոյն ԺԷ ընթերցուածս.** Գլ· Ե· 8։

*Ընթուն լերուք, հսկեցէք, զի ոսոխն ձեր սատանայ իբրեւ զառիւծ գոչէ, շրջի եւ լինդրէ թէ զո՞ կլանիցէ։ Որում ի դիմի հարկանիցիք հաստատեալք հաւատովք. գիտասջիք զնոյն անցս չարչարանաց եղբայրութեան ձերոյ յաշխարհի յանձինս կատարել։ Եւ Աստուած ամենայն շնորհաց, որ կոչեաց զձեզ յիւր ի յաւիտենական փառան Քրիստոսիւ Յիսուսիւ, որում փոքր մի եղերուք չարչարակիցք, նա կազդուրեցուսցէ, կարողացուսցէ, հաստահիմն արասցէ։ Նմա իշխանութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն։ 11։*



*Ալէլուիա, ալէլուիա. Պայցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ. ի հանդերձս ոսկեհուռն զարդարեալ եւ պաճուճեալ։*

**Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.**

Գլ· ԺԲ· 24։

**Տէրն մերն Յիսուս Քրիստոս ասէ.**

*Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատանի ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ։ Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. եւ որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ՝ ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա։ Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. եւ ուր եմն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ։ 26։*

---

## ԵՐԿՐՈՐԴ ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

**ՌՉ·**

*Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զհաղորդութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք։*

*Սղ· Զե. Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացեալ։*

*Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհնապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։*

**Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն Ե ընթերցուածս.** Գլ· Դ· 13։

*Ոչ եթէ օրինաւքն են աւետիքն Աբրահամու եւ զաւակի նորա՝ ժառանգ լինել աշխարհի, այլ ի հաւատոցն արդարութենէ։ Ոչ եթէ որք յօրինացն են՝ ժառանգ իցեն, ապա ընդունայն են հաւատքն եւ դատարկ աւետիքն։ Վասնզի օրէնքն զբարկութիւն գործեն. բայց ուր ոչ են օրէնք, եւ ոչ*

յանցանք ինչ: Վ՚ասն այնորիկ ի հաւատաց անտի, զի ըստ
ընորհացն իցէ· առ ի լինելոյ հաստատուն աւետեացն ամե-
նայն զաւակին. ոչ այժմ միայն՝ որ յօրինաց անտի, այլ եւ
այնմ՝ որ ի հաւատոցն Աբրահամու, որ է հայր մեր ամենե-
ցուն: Որպէս եւ գրեալ է, Թէ Հայր ազգաց բազմաց արա-
րիչ զքեզ առաջի Աստուծոյ, որում հաւատացն եթէ կեն-
դանի առնէ զմեռեալս եւ կոչէ զչգոյն իբրեւ զգոյ: Որ յան-
յոյս յուսով հաւատաց լինել նմա հայր ազգաց բազմաց·
որպէս եւ ասացաւն, Թէ Այնպէս եղիցի զաւակ քո: Եւ նա
ոչ երկմտեաց ի հաւատոցն· Թէպէտ եւ հայեցաւ ի մարմին
իւր այնուհետեւ իբրեւ ի մեռեալ, քանզի շհարիւրամենիւք
ուրեմն էր, եւ ի մեռելութիւն արգանդին Սառայի: Ոչայց
յաւետեացն Աստուծոյ ոչ երկմտեաց անհաւատութեամբ·
այլ զօրացաւ հաւատովք, եւ փառս Աստուծոյ· եւ հաս-
տատեցաւ ի միտս իւր, Թէ որ խոստացաւն՝ կարող է առ-
նել: Վ՚ասն որոյ համարեցաւ նմա յարդարութիւն: Այլ զի
գրեցաւն, ոչ եթէ վասն նորա միայն՝ Թէ համարեցաւ նմա:
Այլ եւ վասն մերոց համարելոց է, որք հաւատամք յայն՝ որ
յարոյցն զՅիսուս զՏէր մեր ի մեռելոց: Որ մատնեցաւ վասն
յանցանաց մերոց, եւ յարեաւ վասն զմեզ արդարացուցա-
նելոյ: 25:

Ալէլուիա, ալէլուիա· Ահրա իմ խոովեցաւ յիս· եւ
երկիւղ մահու անկաւ ի վերայ իմ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի·

Գլ· ԺԱ· 34:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ·

Մի համարիք եթէ եկի արկանել խաղաղութիւն յեր-
կիր· ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր: Քանզի
եկի քակել զայր ի հօրէ իւրմէ, եւ զդուստր ի մօրէ իւրմէ,
եւ զհարսն ի սկեսրէ իւրմէ: Եւ թշնամիք առն ընտանիք
իւր: Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ
արժանի· եւ որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան
զիս՝ չէ ինձ արժանի: Եւ որ ոչ առնու զխաչ իւր եւ գայ
զկնի իմ, չէ ինձ արժանի: Որ գտանէ զանձն իւր, կորուսցէ
զնա· եւ որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա: Որ ըն-



դունի զձեզ՝ զիս ընդունի, եւ որ զիս ընդունի՝ ընդունի զա-
ռաքիչն իմ: Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի՝
զվարձս մարգարէի առցէ, եւ որ ընդունի զարդար յանուն
արդարոյ՝ զվարձս արդարոյ առցէ: Եւ որ արբուսցէ միում ի
փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ՝ միայն յանուն
աշակերտի, ամէն ասեմ ձեզ· ոչ կորուսցէ զվարձս իւր: 42:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

ՐԿ·

### Սրբոցն Սարգսի եւ Բագոսի:

Ժամամուտ· Ի տաճարի սրբոց եւ ի չիշատակի սրբոց
մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք· բարեխօսու-
թեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո,
Աստուած, որպէս մարգասէր:

Սղ· ճԺԵ· Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց
իւրոց· ո Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախ-
նոյ քոյ:

Հաւատացի զոր եւ խօսեցայ· եւ ես խոնարհ եղէ յոյժ:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց Թղթոյն է ընթեր-
ցուածս. Գլ· Ը· 18:

Ինձ այսպէս թուի եթէ ոչ են արժանի չարչարանք
ժամանակիս հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոց են ի
մեզ: Օք ակնկալութիւն արարածոց՝ յայտնութեան որ-
դւոյն Աստուծոյ սպասէ: Օք ընդունայնութեան արարածք
հնազանդեցան, ոչ իւրեանց կամաւ, այլ վասն այնորիկ՝
որ հնազանդեցոյցն յուսով: Օք եւ ինքեանք իսկ արա-
րածք ազատեսցին ի ծառայութենէ ապականութեան՝ յա-
զատութիւն փառաց Որդւոյն Աստուծոյ: Քանզի գիտեմք
եթէ ամենայն արարածք հեծեծն եւ երկնեն մինչեւ ցայժմ:
Եւ ոչ այսչափ միայն. այլ եւ մեք իսկ՝ որ զպատուղ հոգւոյն
ունիմք, անձամբ յանձինս մեր հեծեմք, որդեգրութեանն
ակն կալեալ փրկութեան մարմնոյ մերոյ: Օք յուսով ապրե-
ցաք· այլ յոյս տեսանելի չէ յոյս· զի զոր տեսանէ ոք՝ զի՞ եւս

յուսայ: Ապա եթէ զոր ոչն տեսանեմք՝ յուսամք, համբերութեամբ ակն ունիմք: Նոյնպէս եւ Հոգին ի թիկունս հասանէ տկարութեանս մերում. զի զոր կամքն յաղօթս՝ որպէս արժան իցէ, ոչ գիտեմք. այլ ինքն Հոգին բարեխօս լինի ի հեծութիւնս անմռունչս: Բայց որ քննէն զսիրտս՝ գիտէ զինչ խորհուրդ է Հոգւոյն. զի ըստ Աստուծոյ բարեխօսէ վասն սրբոց: 27:

Ալէլուիա, ալէլուիա. Կարդացին արդարքն առ Տէր, եւ Տէր լուաւ նոցա. եւ յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԻԱ. 12:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Բայց յառաջ քան զայս ամենայն՝ մխեսցեն զձեռս իւրեանց ի ձեզ եւ հալածեսցեն. մատնեսցեն ի ժողովուրդս եւ ի բանտս, եւ տանիցին առաջի դատաւորաց եւ թագաւորաց վասն անուան իմոյ. եւ լինիցի ձեզ այն ի վկայութիւն: Արդ՝ դիք ի սիրտս ձեր՝ մի յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի: Զի ես տաց ձեզ բերան եւ իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր: Մատնեսջիք եւ ի ծնողաց եւ յեղբարց եւ յազգականաց եւ ի բարեկամաց, եւ սպանանիցեն ի ձէնջ: Եւ եղիջիք ատեցեալ յամենեցունց վասն անուան իմոյ. եւ մազ մի ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ: Եւ համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր: 19:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

### ԳՉ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:



Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս: Գլ. Ե. 12:

Զի որպէս ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին, եւ ի մեղաց անտի մահ, եւ այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ, որով ամենեքան մեղան: Քանզի մինչեւ յօրէնսն մեղք էին յաշխարհի. բայց մեղք ոչ համարին, ուր օրէնք ոչ իցեն: Այլ թագաւորեաց մահ յԱդամայ մինչեւ ի Մովսէս, եւ ի վերայ չյանցուցելոցն, ըստ նմանութեան յանցուածոցն Ադամայ, որ է օրինակ հանդերձելոցն: Այլ ոչ որպէս յանցանքն՝ նոյնպէս եւ շնորհքն. զի եթէ միոյն յանցանօք բազումք մեռան, ո՛րչափ եւս առաւել շնորհքն Աստուծոյ եւ պարգեւք շնորհօք միոյն մարդոյ Յիսուսի Քրիստոսի ի բազումս առաւելաւ: Եւ ոչ որպէս ի միոջէ յանցուցելոյն պարգեւքս. զի դատաստանն ի միոջէ յանցուածոց անտի ի դատապարտութիւն. այլ շնորհքն ի բազմաց յանցուածոցն յարդարութիւն: Զի եթէ ի միոյն յանցանաց մահ թագաւորեաց միովն, ո՛րչափ եւս առաւել որք զառաւելութիւն շնորհաց եւ զպարգեւաց արդարութեանն առնուցուն, կենօք թագաւորեսցեն ի ձեռն միոյն Յիսուսի Քրիստոսի: Ապա ուրեմն որպէս միոյն յանցանօք յամենայն մարդիկ դատապարտութիւն, նոյնպէս եւ միոյն արդարութեամբն՝ յամենայն մարդիկ արդարութիւն կենաց: Զի որպէս անհնազանդութեամբ միոյն մարդոյ՝ մեղաւորք բազումք եղեն. նոյնպէս եւ հնազանդութեամբ միոյն՝ արդարք բազումք եղիցին: Բայց օրէնք ի ներքս անկան, զի յանցանքն բազմասցին. զի ուր առաւել եղեն մեղքն, առաւել եւս յաւելան շնորհքն: Զի որպէս թագաւորեցին մեղքն ի մահու անդ, նոյնպէս եւ շնորհքն թագաւորեսցեն արդարութեամբ ի կեանսն յաւիտենից ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ: 21:

Ալէլուիա, ալէլուիա. Վասն անուան քոյ Տէր քաւեա զմեղս իմ. զի բազում եղեն յոյժ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԱ. 25:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յայնմ ժամանակի պատասխանի ետ (Յիսուս) եւ ասէ. Գոհանամ զքէն, Հայր՝ Տէր երկնի եւ երկրի, զի ծածկե-

ցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց, եւ յայտնեցեր տղայոց: Այո՛ Հա՛յր, զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո: Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ. եւ ոչ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր, եւ ոչ զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի, եւ ում Որդին կամիցի յայտնել. Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ: Առէք ղլուծ իմ ի ձեզ, եւ ուսարուք յինէն զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ. եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց: Զի լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ փոքրոգի: 30:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### ԳԿ.

### Սրբոյն Մովկիմայ քահանային եւ Կոդրատիոսի զինաւորին:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Դ. 11:

Փութասցուք այսուհետեւ մտանել յայն հանգիստ. զի մի՛ ոք ընդ նովին օրինակաւ անհաւատութեանն անկանիցի: Զի կենդանի է բանն Աստուծոյ եւ ազդող եւ հատու քան զամենայն սուր երկսայրի, եւ անցանէ մինչեւ ցորոշումն շնչոյ եւ ոգւոյ եւ յօդից եւ ուղղոյ, եւ քննիչ է մտաց եւ խորհրդոց սրտից: Եւ չիք արարած աներեւոյթ յերեսաց նորա. այլ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նորա՝ զորմէ մեր բանքս են: Ունիմք այսուհետեւ քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս, զՅիսուս զՈրդին Աստուծոյ. պինդ կալցուք զխոստովանութիւնն: Քանզի ոչ եթէ ունիմք քահանայապետ՝ որ չիցէ կարող չարչարակից լինել



տկարութեան մերոյ. այլ փորձ է ամենայնիւ ըստ նմանութեան առանց մեղաց: 15:

Ալէլուիա, ալէլուիա. Ուրախ լիցին ամենեքեան որք յուսացեալ են ի քեզ. յաւիտեան ցնծասցեն, եւ բնակեսցես դու ի նոսա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԺԶ. 33:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ընդ իս խաղաղութիւն ունիցիք. յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի: Զայս իբրեւ խօսեցաւ Յիսուս, ամբարձ զաչս իւր յերկինս եւ ասէ. Հա՛յր, հասեալ է ժամ, փառաւորեա զՈրդի քո, զի եւ Որդի քո փառաւորեսցէ զքեզ: Որպէս ետուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ, զի ամենայնի՝ զոր ետուր նմա, տացէ զկեանսն յաւիտենականս: Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, եւ զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս: Ես զքեզ փառաւորեցի յերկրի. զգործսն կատարեցի, զոր ետուր ցիս՝ զի արարից: Եւ այժմ փառաւորեա զիս, Հա՛յր, առ ի քէն փառօքն՝ զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ ի քէն: Յայտնեցի զանուն քո մարդկան՝ զորս ետուր ինձ յաշխարհէ. քո էին, եւ ինձ ետուր զնոսա, եւ զբանն քո պահեցին: Արդ գիտացին՝ եթէ զամենայն ինչ զոր ետուր ինձ, առ ի քէն են: Զի զբանն՝ զոր ետուր ինձ, ետու նոցա. եւ նոքա ընկալան, եւ ծանեան ճշմարտութեամբ՝ թէ առ ի քէն ելի. եւ հաւատացին՝ եթէ դու առաքեցեր զիս: ԺԷ. 8:

---

## ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ՊԵՆՏԷԿՈՍՏԷԻՆ

### ԴԶ.

*Բարեկենդան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:*

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ

Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ
եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ
կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ
Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. կԳ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի
Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:
Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին
եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթեր-
ցուածս. Գլ. Զ. 12:

Մի՛ այսուհետեւ թագաւորեսցեն մեղք ի մահկանա-
ցու մարմինս ձեր՝ հնազանդել ցանկութեանց նորա: Եւ մի՛
պատրաստէք զանդամս ձեր զէն անիրաւութեան մեղացն.
այլ պատրաստեցէք զանձինս ձեր Աստուծոյ՝ որպէս ի մեռե-
լոց ի կենդանիս. եւ զանդամս ձեր զէն արդարութեանն
Աստուծոյ: Զի մեղք ձեզ ոչ տիրեսցեն. քանզի ոչ էք
ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք: Իսկ արդ՝ զիա՞րդ. մեղիցո՞ւք՝
զի չեմք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք. քա՛ւ լիցի: Ո՞չ
գիտէք՝ եթէ որում պատրաստէք զանձինս ձեր ծառայս ի
հնազանդութիւն, ծառայ էք՝ որում հնազանդիքն, եթէ
մեղաց՝ ի մահ, եւ եթէ ի հնազանդութիւն արդարութեան՝
ի կեանս: Այլ շնորհք Աստուծոյ. զի էիք ծառայք մեղաց՝
հնազանդեցարուք ի սրտէ՝ որում աւանդեցայք յառակ
վարդապետութեան: Արդ ազատացեալք ի մեղաց՝ ծառայե-
ցէք արդարութեանն: Մարդկօրէն ասեմ վասն տկարու-
թեան մարմնոյ ձերոյ. զի որպէս պատրաստեցէք զանդամս
ձեր ծառայս պղծութեան եւ անօրէնութեան՝ յանօրէնու-
թիւն, նոյնպէս եւ այժմ պատրաստեցէք զանդամս ձեր
ծառայս արդարութեան՝ ի սրբութիւն: Զի մինչ ծառայքն
էիք մեղաց, ազատացեալք էիք յարդարութենէն: Իսկ արդ
զի՞նչ պտուղ ունէիք յայնժամ, որովք այժմդ զամօթի
հարեալ էք. զի վախճան նոցա մահ է: Բայց արդ ազա-
տացեալք ի մեղաց եւ ծառայեալք Աստուծոյ՝ ունիք
զպտուղ ձեր ի սրբութիւն, եւ վախճան նորա կեանք յաւի-
տենից: Զի թոշակն մեղաց մահ է. այլ շնորհք Աստուծոյ՝
կեանք յաւիտենից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր: 23:



Ալէլուիա, ալէլուիա. Հաճեցար Տէր ընդ երկիր քո.
եւ դարձուցեր զգերութիւն Յակովբայ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.
Գլ. ԺԲ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յայնժամ գնաց (Յիսուս) ընդ արտորայսն նոցա ի
շաբաթու. եւ աշակերտքն նորա քաղցեան, եւ սկսան հասկ
կորզել եւ ուտել: Փարիսեցիքն իբրեւ տեսին՝ ասեն ցնա.
Ահաւանիկ աշակերտքն քո գործեն, զոր ոչ է արժան գոր-
ծել ի շաբաթու: Եւ նա ասէ ցնոսա. Ո՞չ իցէ ընթերցեալ
ձեր՝ զոր արար Դաւիթ, յորժամ քաղցեաւն, եւ որ ընդ
նմայն էին: Զիա՛րդ եմուտ ի տունն Աստուծոյ եւ եկեր զհաց
զառաջաւորութեանն՝ զոր ոչ էր օրէն նմա ուտել, եւ ոչ՝
որոց ընդ նմայն էին, բայց միայն քահանայից: Կամ թէ
չիցէ՞ ընթերցեալ յօրէնս՝ զի ի շաբաթս քահանայքն ի
տաճարին պղծեն զշաբաթն, եւ անմեղք են: Բայց ասեմ
ձեզ՝ զի մեծ քան զտաճարն է աստ: Եւ եթէ գիտէիք՝
զի՞նչ է Զողորմութիւն կամիմ, եւ ոչ զզոհ, ապա ոչ դա-
տապարտէիք դուք զանպարտսն: Զի տէր է շաբաթու Որդին
մարդոյ: 8:

---

## ԵՐՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### ԴԿ.

### Սրբոյն Եպիփանու Կիպրացւոյ հայրապետին:

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ
ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ, ծառայ
Քրիստոսի ո՛վ երանելիդ ի հարս սուրբ հայրապետ: Քանզի
քոյ վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան
բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով
եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ
բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն.
եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:
Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն ի կորնթացւոց առաջին Թղթոյն է ընթերցուածս. Գլ· ԺԲ· 4։

Թէպէտ եւ բաժինք շնորհաց են, այլ Հոգի նոյն է։ Եւ Թէպէտ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է։ Եւ Թէպէտ բաժինք աջողութեանց են, այլ Աստուած նոյն է, որ ամենայն զամենայն յամենայնի։ Բայց իւրաքանչիւր ումեք առեալ է յայտնութիւն Հոգւոյն՝ առ իւրաքանչիւր օգուտ։ Ումեմն ի Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան, այլում բան գիտութեան ըստ նմին Հոգւոյ, միւսում հաւատք նովին Հոգւով, այլում շնորհք բժշկութեանց նովին Հոգւով, այլում աջողութիւնք զօրութեանց, այլում մարգարէութիւն, այլում ընտրութիւն հոգւոց, այլում ազգք լեզուաց, այլում թարգմանութիւնք լեզուաց։ Եւ զայս ամենայն աջողէ մի եւ նոյն Հոգի, եւ բաժանէ իւրաքանչիւր որպէս եւ կամի։ 11։

Ընկերութիւն, ալելուիա. Վասն քո զգեցեալք զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ· Զ· 45։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ նոյն ժամայն ձեռեաց զաշակերտան մտանել ի նաւ եւ յառաջագոյն քան զնա երթալ յայնկոյս ի Բեթսայիդա, մինչ ինքն զժողովուրդն արձակիցէ։ Եւ հրաժարեալ ի նոցանէ՝ եւ ի լեառն կալ յաղօթս։ Եւ իբրեւ երեկոյ եղեւ, էր նաւն ի մէջ ծովուն, եւ ինքն ի ցամաքի։ Եւ տեսս զնոսա հոգմակոծեալս ի վարելն, զի էր հողմն ընդդէմ նոցա. եւ զչորրորդ պահու գիշերոյն գայ առ նոսա գնալով ի վերայ ծովուն, եւ կամէր զանց առնել առ նոսա։ Նոքա իբրեւ տեսին զի գնայր ի վերայ ծովուն, համարեցան թէ առ աչօք ինչ լինիցի, եւ զաղաղակ բարձին։ Վասնզի ամենեքեան տեսին զնա եւ խռովեցան. եւ նա անդէն վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ. Վաջալեր եցարուք, ես եմ՝ մի երկնչիք։ Եւ եկն ի նաւն առ նոսա, եւ դադարեաց հողմն։ Եւ առաւել եւս յիմարեալ էին ի միտս իւրեանց, եւ զարմանային յոյժ. քանզի եւ ի վերայ հացին ոչ իմացան, զի էր սիրտ նոցա թմբրեալ։ 52։

---



## ԵՐՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԱՁ·

**Սրբոյն Կոստանդիանոսի թագաւորին եւ մօր նորա Հեղինեայ։**

Ջ·ամ·ամ·ո·պ· Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց թագաւորաց զՀեռս համբառնալով աղաչեմք· բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր։

Սղ· Ի· Տէր ի զօրութեան քումմէ ուրախ եղիցի թագաւորն· եւ ի փրկութեան քումմէ ցնծասցէ յոյժ։

Օ՛ղանկութիւն սրտի նորա ետուր նմա· եւ զկամս շրթանց նորա ոչ արգելեր ի նմանէ։

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին Թղթոյն է ընթերցուածս. Գլ· Բ· 1։

Եւ արդ աղաչեմ, նախ քան զամենայն առնել աղօթս, լինկրուածս, պաղատանս, գոհութիւնս վասն ամենայն մարդկան, մանաւանդ վասն թագաւորաց եւ ամենայն իշխանաց· զի խաղաղութեամբ եւ հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր, ամենայն աստուածպաշտութեամբ եւ սրբութեամբ։ Օ՛ի այն է բարի եւ ընդունելի առաջի փրկչին մերոյ Աստուծոյ· որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն եւ ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն։ Օ՛ի մի է Աստուած, եւ մի միջնորդ Աստուծոյ եւ մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս. որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն, վկայութիւն ժամանակաց իւրոց։ Որ եդայ ես քարոզ եւ առաքեալ· ճշմարիտ ասեմ ի Քրիստոս եւ ոչ ստեմ, եղէ վարդապետ հեթանոսաց հաւատովք եւ ճշմարտութեամբ։ 7։

Ընկերութիւն, ալելուիա. Տէր ի զօրութեան քումմէ ուրախ եղիցի թագաւորն. եւ ի փրկութեան քումմէ ցնծասցէ յոյժ։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ· Է· 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ իբրեւ կատարեաց զամենայն բանս իւր ի լսելիս ժողովրդեանն, եմուտ ի Կափառնաում։ Հարիւրապետի

ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր ի վախ-
ճանել, որ էր նմա պատուական: Եւ իբրեւ լուաւ զՅիսու-
սէ, առաքեաց զծերսն ի Հրէից, աղաչէր զնա՝ զի եկեսցէ
ապրեցուսցէ զծառայն նորա: Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝
աղաչէին զնա ստէպ եւ ասէին, թէ Արժանի է որում
զշնորհս զայս առնես: Զի սիրէ զազգս մեր, եւ զժողովրդա-
նոցն նա շինեաց մեզ: Եւ Յիսուս գնաց ընդ նոսա: Իբրեւ
ոչ ինչ կարի հեռի էր ի տանէն, յղեաց առ նա հարիւրա-
պետն բարեկամս եւ ասէ ցնա. Տէր, մի՛ ինչ աշխատ լինիր,
զի չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես:
Վասն որոյ եւ ոչ զանձն համարեցայ արժանի առ քեզ
գալոյ. այլ ասա բանիւ, եւ բժշկեսցի մանուկս իմ: Քանզի
եւ ես այր մի եմ կարգեալ ընդ իշխանութեամբ. ունիմ
ընդ ինեւ զինուորս, եւ ասեմ սմա՝ Երթ, եւ երթայ. եւ
այլում թէ Եկ, եւ գայ. եւ ծառայի իմում թէ Արա զայս,
եւ առնէ: Եւ իբրեւ լուաւ զայս Յիսուս՝ զարմացաւ. դար-
ձաւ առ ժողովուրդն՝ որ երթային զհետ նորա, եւ ասէ.
Ամէն ասեմ ձեզ՝ թէ եւ ոչ յԻսրայելի այսչափ հաւատս
գտի: Եւ դարձան անդրէն պատգամաւորքն ի տուն, եւ
գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ: 10:

---

## ԵՐՐՈՐԴ ՁՈՐԵՔԾԱԲԱԹԻ

### ԱԿ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխա-
ղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ,
զքեզ աղաչեմք:

Սղ. 2Ե. Կեցո զծառայս քո Աստուած իմ. որ ի
քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօր-
հանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ
Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթեր-
ցուածս.

Գլ. Է. 1:

Եթէ ո՞չ գիտէք, եղբարք, զի ընդ գիտունս օրինացն
խօսիմ. զի օրէնք տիրեն մարդոյ՝ որչափ ժամանակս կենդանի



իցէ: Քանզի կին առնակին ի կենդանի այր իւր կապեալ
կայ օրինօք. իսկ եթէ մեռանիցի այրն, արձակեալ է
յօրինաց առնն: Ապա ուրեմն մինչ կենդանի է այրն, շուն
կոչի՝ եթէ լինիցի առն այլում. եւ եթէ մեռանիցի այրն՝
ազատ է յօրինացն, չհամարեալ շուն՝ եթէ լինիցի առն
այլում: Այսուհետեւ եւ դուք, եղբարք, մեռարուք
օրինացն մարմնովն Քրիստոսի, լինել այլում՝ որ ի մեռելոցն
յարուցեալ է, զի պտղաբերք լիցուք Աստուծոյ: Քանզի
մինչ էաքն մարմնով, կարիք մեղաց՝ որ օրինօքն էին,
զօրանային յանդամս մեր, առ ի պտղաբեր առնելոյ զմեզ
մահու: Բայց այժմ դատարկացաք յօրինաց անտի. քանզի
մեռաք այնմիկ՝ որով ըմբռնեալն էաք, առ ի ծառայել մեզ
նորոգութեամբ հոգւոյն, եւ ոչ հնութեամբ գրոյն: Իսկ
արդ՝ զի՞նչ ասեմք. օրէնքն մե՞ղք իցեն. քա՛ւ լիցի. այլ
զմեղս ոչ գիտէի, եթէ ոչ օրինօքն. եւ զցանկութիւն ոչ
ճանաչէի, եթէ ոչ օրինացն էր ասացեալ՝ Մի՛ ցանկանայցես:
Պատճառս առին մեղքն պատուիրանաւն, եւ գործեցին
յիս զամենայն ցանկութիւն. զի առանց օրինաց մեղքն
մեռեալ էին: Եւ ես առանց օրինացն երբեմն էի կենդանի.
այլ իբրեւ եհաս յիս պատուիրանն, մեղքն կենդանացան,
եւ ես մեռայ. եւ գտաւ ինձ պատուիրանն՝ որ ի կեանսն էր,
նոյն ի մահ: Զի մեղացն պատճառս առեալ պատուիրանաւն՝
խաբեցին զիս, եւ նովին սպանին: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր, մի սրտմտութեամբ քով
յանդիմաներ զիս. եւ մի բարկութեամբ քով խրատեր զիս:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԲ. 9:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ գնացեալ անտի (Յիսուս) եկն ի ժողովուրդն
նոցա: Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր.
հարցին ցնա եւ ասեն. Եթէ պարտ իցէ ի շաբաթու բժշկել.
զի չարախօսեսցեն զնմանէ: Եւ նա ասէ ցնոսա. Ո՞վ է ի
ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, եւ անկանիցի այն ի խոր-
խորատ ի շաբաթու. միթէ ո՞չ ունիցի եւ յարուցանիցէ
զնա: Իսկ արդ՝ որչափ եւս առաւել է մարդ քան զոչխար.

ապա ուրեմն պարտ է ի շաբաթու բարիս գործել: Յայնժամ ասէ ցայրն. Ձգեա զձեռն քո. եւ նա ձգեաց, եւ եղեւ ողջ իբրեւ զմիւսն: Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ առին զնմանէ՝ թէ որպէս կորուսցեն զնա: Եւ Յիսուս իբրեւ գիտաց, մեկնեցաւ անտի: 15:

---

## ԵՐՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### ՐՁ·

**Սրբոյն Թէոդիտոնի Գաղատացւոյն եւ Թալիլեայ բժշկին եւ ճօթն կուսանացն Անկիւրիայ:**

Յառաջաբան. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Ստուած, որպէս մարդասէր:

Սղ· ճԺե· Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ի Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ· Զ· 1:

Գործակից եմք ձեր եւ աղաչեմք, մի՛ ընդունայն զշնորհն Ստուծոյ ընդունել ձեզ: Օդ ի ժամանակի ընդունելութեան, ասէ, լուայ քեզ, եւ յաւուր փրկութեան օգնեցի քեզ· Ահաւասիկ ժամանակ ընդունելի, ահա օր փրկութեան: Մի՛ եւ մի՛ իւիք տայցէք պատճառս, զի մի՛ արատեսցի պաշտօնն: Այլ յամենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր իբրեւ պաշտօնեայս Ստուծոյ՝ համբերութեամբ բազմաւ, ի նեղութիւնս, ի վիշտս, ի չարչարանս, ի գանս, ի բանտս, ի խռովութիւնս, յաշխատութիւնս, ի հըսկմունս, ի պահս, ի սրբութեան, ի գիտութեան, յերկայնմտութեան, ի քաղցրութեան, ի Հոգի սուրբ, ի սէր առանց կեղծաւորութեան, ի բանս ճշմարտութեան, ի



զօրութեան Ստուծոյ. վասն զինուն արդարութեան՝ որ ընդ աջմէն եւ ընդ ահեկէն է: փառաք եւ անարգութեամբ, գովութեամբ եւ պարսաւանաք. իբրեւ մոլարք եւ ճշմարիտք. իբրեւ անճանաչք եւ ծանուցեալք. իբրեւ մահկանացուք, եւ ահաւասիկ կենդանի եմք. իբրեւ խրատեալք եւ ոչ մահապարտեալք. իբրեւ տրտմեալք եւ հանապազ ուրախ եմք. իբրեւ տնանկք եւ զբազումս մեծացուցանեմք. իբրեւ ոչ ինչ ունիցիմք եւ զամենայն ինչ ունիմք: 10:

Ալէլուիա, ալէլուիա. Պարծեսցին սուրբքն փառաք եւ ցնծասցեն ի հանգիստս իւրեանց. եւ բարձր արասցեն զՍտուածն բերանովք իւրեանց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ· ԺԶ· 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայթագղեսջիք: Ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ· այլ եկեսցէ ժամանակ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մատուցանել Ստուծոյ: Եւ զայն արասցեն ընդ ձեզ, քանզի ոչ ծանեան զհայր եւ ոչ զիս: Այլ եւ զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ եկեսցէ ժամանակ, յիշեցէք թէ ես ասացի ձեզ: Զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի: 5:

---

## ԵՐՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

### ՐԿ·

Յառաջաբան. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Ստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ· ՂԷ· Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Ստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր· զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Է. 12:

Այսուհետեւ օրէնքն սուրբ են, եւ պատուիրանն՝ սուրբ եւ արդար եւ բարերար: Իսկ արդ՝ ինձ բարին մա՞հ եղեւ. քա՛ւ լիցի. այլ մեղքն. զի երեւեսցին մեղքն բարեաւն գործել ինձ զմահ, զի եղիցին ըստ առաւելութեան մեղքն մեղաւոր ի ձեռն պատուիրանին: Գիտեմք զի օրէնքն հոգեւոր են. այլ ես մարմնաւոր եմ, ընդ մեղօք վաճառեալ: Զի զոր գործեմն՝ ոչ գիտեմ. ոչ եթէ զոր կամիմն՝ զայն առնեմ, այլ զոր ատեամն՝ զայն գործեմ: Ապա թէ զոր ոչն կամիմ՝ զայն առնեմ, վկայեմ օրինացն՝ եթէ բարւոք են: Այլ արդ ոչ եթէ ես գործեմ զայն, այլ բնակեալ յիս մեղքն: Գիտեմ զի ոչ բնակեալ է յիս, այսինքն ի մարմնի իմում, բարի ինչ. զի կամքն առաջի կան ինձ, եւ առնել զբարին՝ ոչ: Զի ոչ եթէ զոր կամիմ զբարին՝ առնեմ, այլ զոր ոչն կամիմ զչարն՝ զայն գործեմ: Ապա եթէ զոր ոչն կամիմ՝ զայն առնեմ, ոչ եւս ես առնեմ զայն, այլ բնակեալ յիս մեղքն: Եւ արդ գտանեմ զօրէնս այնորիկ՝ որ կամիցին առնել յիս զբարին. եւ ինձ չարն առաջի կայ: Հաճեալ եմ ընդ օրէնսն Աստուծոյ ըստ ներքին մարդոյն. բայց տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ, զինեալ հակառակ օրինաց մտաց իմոց. եւ գերեալ զիս օրինօքն մեղաց՝ որ են յանդամս իմ: Այր մի տառապեալ եմ ես. ո՞վ ապրեցուսցէ զիս ի մարմնոյ աստի մահու: Այլ շնորհքն Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ: 25:

Ալէլուիա, ալէլուիա. Դարձ, Տէր, եւ փրկեա զանձն իմ. կեցո զիս Տէր ըստ ողորմութեան քում:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԲ. 15:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք, եւ բժշկեաց զամենեսեան: Եւ սաստեաց նոցա զի մի՛ յայտնեսցեն զնմանէ ումեք: Զի լցցի, որ ասացաւն ի ձեռն Եսայեայ մարգարէի. Ահա մանուկ իմ՝ զոր ընտրեցի, եւ սիրելի իմ՝



ընդ որ հաճեցաւ անձն իմ. եդից զոգի իմ ի վերայ նորա, եւ իրաւունս հեթանոսաց պատմեսցէ: Ոչ հակառակեսցի եւ ոչ աղաղակեսցէ, եւ ոչ ոք լուիցէ ի հրապարակս զբարբառ նորա: Զեղէգն ջախջախեալ ոչ փշրեսցէ, եւ զպատրոյկն առկայծեալ ոչ շիջուսցէ. մինչեւ հանցէ ի յաղթութիւն զդատաստան: Եւ յանուն նորա հեթանոսք յուսասցին: 21:

ՏՕՆ ԳԻՒՏԻ ՆՇԽԱՐԱՅ

# ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԵՐՈՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

---

## ԵՐՐՈՐԴ ՅԱՐԱԹ

### Գ·Չ·

Յ·ՈՒՆՎԱՐԻ·Ի. Գրիգոր սուրբ քահանայապետ, որ զհաւատս ուսուցեր, եւ զբանակս դիւացն հալածեցեր. մարդկան ուսուցեր քարոզել զՅարութիւնն. պսակեցար յարքայութեան. արդ բարեխօս լեր առ Տէր վասն մեր:

Սղ· ՃԼԱ· Վասն այք զի զգեցեալն զարդարութիւն. եւ սուրբք զի ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զՅաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Ընթերցուած ի գործոց առաքելոց.

ԳԼ· Ի· 22:

Եւ արդ՝ ահաւասիկ ես կապեալ հոգւովն երթամ Երուսաղէմ, եւ որ ինչ անդ ընդ իս անցանելոց է՝ չգիտեմ: Բայց զի Հոգին սուրբ ըստ քաղաքաց վկայէ ինձ եւ ասէ, եթէ պապանք եւ նեղութիւնք ինձ կան քեզ: Այլ եւ ոչ իւիք համարիմ զանձն իմ պատուական՝ որպէս զկատարել զընթացս իմ ուրախութեամբ, եւ զպաշտօնն՝ զոր առի ի Տեառնէ Յիսուսէ՝ վկայ լինել աւետարանի շնորհացն Աստուծոյ: Եւ արդ՝ ահաւասիկ գիտեմ ես, եթէ ոչ եւս տեսանիք զերեսս իմ դուք ամենեքեան, յորս շրջեցայ քարոզել զարքայութիւնն: Վասն որոյ եւ վկայութիւն գնեմ ձեզ յաւուրս յայսմիկ՝ զի սուրբ եմ ես յարենէ ամենեցուն: Վասնզի ոչ խորշեցայ ի պատմելոյ ձեզ զամենայն կամս Աս-



տուծոյ: Զգոյշ կացէք անձանց եւ ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցոյց արեամբ իւրով: Վասնզի գիտեմ ես՝ եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք յափշտակողք ի ձեզ, որ ոչ խնայեսցեն հօտիդ: Եւ ի ձէնջ յարիցեն արք՝ որք խօսեսցին թիւրս, ձգել զաշակերտան զկնի իւրեանց: Վասն այսորիկ արթուն կացէք եւ յիշեցէք՝ զի զերկեամ մի զգայգ եւ զցերեկ ոչ դադարեցի արտասուօք խրատել զմի մի իւրաքանչիւր: Եւ արդ՝ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ եւ բանի շնորհացդ նորա, որ կարողն է շինել եւ տալ ձեզ ժառանգութիւն ընդ սուրբսն ամենեսեան: 32:

Ալէլուիա, ալէլուիա. Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի. եւ Տէր ընդ աջմէ քումմէ:

Սրբոյ Աետարանիս որ ըստ Յովհաննու.

ԳԼ· Ժ· 11:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց: Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն եւ փախչի. եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ. քանզի վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն: Ես եմ հովիւն քաջ, եւ ճանաչեմ զիմն եւ ճանաչիմ յիմոցն: Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայր. եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց: Ունիմ եւ այլ եւս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ. եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր, եւ ձայնի իմում լուիցեն, եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ: 16:

---

## ՉՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՋԿՆԻ ՊԵՆՏԷԿՈՍՏԷԻՆ

### Գ·Կ·

Յ·ՈՒՆՎԱՐԻ·Ի. Ա՛իածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ

կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. կդ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց, զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Է. 25:

Ապա ուրեմն ես ինքնին մտօք իմովք ծառայեմ օրինացն Աստուծոյ, եւ մարմնով՝ օրինացն մեղաց: Թէ այդպէս իցէ, ոչ ինչ դատապարտութիւն է այնոցիկ՝ որ ի Քրիստոս Յիսուս, որ ոչ գնան ըստ մարմնոյ: Զի օրէնք հոգւոյն կենաց ի Քրիստոս Յիսուս ազատեցին զիս յօրինաց մեղացն եւ մահու: Զի որ անհնարինն էր օրինացն՝ որով տկարանայրն մարմնով, Աստուած զՈրդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց եւ վասն մեղաց, եւ դատապարտեաց զմեղս ի մարմնի անդ: Զի արդարութիւն օրինացն կատարեսցի ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ գնայցեմք, այլ ըստ հոգւոյն: Զի որք ըստ մարմնոյն են՝ զմարմնոյն խորհին, եւ որք ըստ հոգւոյն՝ զհոգւոյն: Զի խորհուրդ մարմնոյ՝ մահ է. եւ խորհուրդ հոգւոյն, կեանք եւ խաղաղութիւն: Քանզի խորհուրդ մարմնոյ թշնամութիւն է յԱստուած, զի օրինացն Աստուծոյ ոչ հնազանդի. նա եւ կարէ իսկ ոչ: Զի որ մարմնովն են՝ Աստուծոյ հաճոյ լինել ոչ կարեն: Բայց դուք ոչ էք մարմնով, այլ հոգւով, եթէ իցէ Հոգին Աստուծոյ ի ձեզ բնակեալ. ապա եթէ ոք զՀոգի Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա: Իսկ եթէ Քրիստոս ի ձեզ է, ապա մարմին մեռեալ է վասն մեղաց. եւ հոգին կենդանի է վասն արդարութեան: Եթէ Հոգի այնորիկ՝ որ յարոյցն զՅիսուս ի մեռելոց, բնակեալ է ի ձեզ, ապա եւ որ յարոյցն զՅիսուս Քրիստոս ի մեռելոց՝ կենդանացուսցէ զմահկանացու մարմինս ձեր, բնակեալ Հոգւովն իւրով ի ձեզ: Ը. 11:

Այէլուիա, ալէլուիա. Եկայք եւ տեսէք զգործս Աստուծոյ. որպէս զի ահեղ են խորհրդով քան զամենայն որդւոց մարդկան:



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԲ. 38:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յայնժամ պատասխանի ետուն նմա ոմանք ի դպրացն եւ ի փարիսեցւոց եւ ասեն. Վարդապետ, կամիմք նշան ինչ տեսանել ի քէն: Նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. Ազգ չար եւ շնացող նշան խնդրէ, եւ նշան մի՛ տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի: Զի որպէս էր Յովնան ի փոր կիտին զերիս տիւս եւ զերիս գիշերս, նոյնպէս եղիցի եւ Որդի մարդոյ ի սիրտ երկրի զերիս տիւս եւ զերիս գիշերս: Արք Նինուէացիք յարիցեն ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ, եւ դատապարտեսցեն զսա, զի զզջացան ի քարոզութեանն Յովնանու. եւ արդ աւասիկ մեծ քան զՅովնան է աստ: Դշխոյն հարաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ, եւ դատապարտեսցէ զսա. զի եկն ի ծագաց երկրի՝ լսել զիմաստութիւնն Սողոմովնի. եւ ահա մեծ քան զՍողոմովն է աստ: Այլ յորժամ այսն պիղծ ելանիցէ ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ եւ ոչ գտանէ: Յայնժամ ասէ. Դարձայց ի տուն իմ՝ ուստի ելին. եւ եկեալ գտանէ պարապորդ, մաքրեալ եւ յարդարեալ: Յայնժամ երթայ եւ առնու ընդ իւր եօթն այլ այսս չարագոյնս քան զինքն, եւ մտեալ բնակէ անդ. եւ լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն. այնպէս եղիցի եւ ազգիս այսմիկ չարի: 45:

---

## ՁՈՐՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### ԴՉ.

### Սրբոյն Ներսիսի հայրապետին եւ խադայ եպիսկոպոսին:

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցէք զաթոռ ի յերկրի. առաքելական առէք զպատիւ յերկնուստ, ծառայք Քրիստոսի ո՛վ երանելիք ի հարս սուրբ հայրապետք: Քանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցա-

նելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. ԺԳ. 7:

Յիշեցէք զառաջնորդս ձեր, որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն: Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեանս: Յուսմունս պէսպէսս եւ յօտարաձայնս մի՛ դանդաչէք. զի լաւ է շնորհօք հաստատել զսիրտս, եւ ոչ կերակրովք, որովք ոչ ինչ օգտեցան՝ որ այնպէսն գնացին: 9:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ժ. 16:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց. եղերուք այսուհետեւ խորագէտք իբրեւ զօձս, եւ միամիտք իբրեւ զաղաւնիս: Զգոյշ լինիջիք ի մարդկանէ. զի մատնեսցեն զձեզ յատեանս, եւ ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ: Եւ առաջի դատաւորաց եւ թագաւորաց տանիցին զձեզ վասն իմ ի վկայութիւն նոցա եւ հեթանոսաց: Այլ յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հոգայցէք՝ թէ ո՛րպէս կամ զի՛նչ խօսիցիք. զի տացի ձեզ ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք: Զի ոչ եթէ դուք իցէք՝ որ խօսիցիքն, այլ Հոգին Հօր ձերոյ որ խօսիցի ի ձեզ: Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, եւ հայր զորդի. եւ յառնիցեն որդիք ի վերայ հարց եւ սպանանիցեն զնոսա: Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ. իսկ որ համբերեսցէ խսպառ, նա կեցցէ: 22:

---



## ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԴԿ.

### Սրբոյն Դանիէլի մարգարէին եւ Երից մանկանցն:

Ժամամուտ. Որ ի վերայ քերովբէիցն հանգչիս, եւ ի զօրացն հրեղինաց օրհնաբանիս, իջեր ի Բաբիլոն եւ փրկեցեր զերիս մանկունս ի հրոյն բռնութենէ. որք աղաղակելով գոչէին երգ նոր. Ամենայն գործք օրհնեցէք եւ բարձր արարէք: Թագաւոր փառաց Քրիստոս եւ արարիչ բոլորից, որ մարդասիրապէս գթացար ի սուրբ մանկունսն, փրկեցեր ի բորբոքեալ բոցոյն. որք անարգեցին զբռնութիւն թագաւորին, եւ շիջուցին զզօրութիւն հրոյն: Ընդ նոսին եւ մեք քեզ վերագոչեմք. փրկեա զմեզ ի հրոյն յաւիտենից. զի դու միայն ես բազմագութ Տէր. քեզ փառք յաւիտեանս. ամէն:

Սղ. ԿԷ. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Յարիցէ Աստուած եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. ԺԱ. 32:

Եւ արդ զի՞նչ եւս ասացից. զի չէ բաւական ժամանակս պատմելոյ վասն Գեդէոնի, Բարակայ, Սամփսոնի, Յեփթայայ, Դաւթի եւ Սամուէլի եւ այլոց մարգարէիցն. որք հաւատովք պարտեցին զթագաւորութիւնս, գործեցին զարդարութիւն, հասին աւետեաց, խցին զբերանս առիւծուց, շիջուցին զզօրութիւն հրոյ, ապրեցան ի բերանոյ սրոյ, զօրացան ի տկարութենէ, եղեն զօրաւորք ի պատերազմի, առին զբանակս օտարաց: Ընկալան կանայք ի յարութենէ զմեռեալս իւրեանց. կէսք կոշկոճեցան, եւ չեւ եւս ընկալան զփրկութիւն, զի լաւագոյն յարութեանն հասանիցեն: Եւ կէսք զտանջանաց եւ զգանից զփորձ առին, զկապանաց եւ զբանտից: Քարկոծեցան, սղոցեցան, փորձեցան, սպանմամբ սրոյ մեռան, շրջեցան լեշկմաշկօք եւ մորթովք այծենեօք. կարօտեալք, նեղեալք, չարչարեալք: Զորս ոչ

արժէ աշխարհս, յանապատի մոլորեալք եւ ի լերինս եւ յայրս եւ ի փապարս երկրի: Եւ սոքա ամենեքին վկայեալք ի հաւատոցն, չեւ եւս ընկալան զաւետիսն, Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատարեսցին: 40:

Ալէլուիա, ալէլուիա. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԻԴ. 9:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Յայնժամ մատնեսցեն զձեզ ի նեղութիւնս, եւ սպանանիցեն զձեզ. եւ եղիջիք ատեցեալք յամենայն ազգաց վասն անուան իմոյ: Եւ յայնժամ գայթակղեսցեն բազումք եւ զմիմեանս մատնեսցեն եւ ատեսցեն զմիմեանս: Եւ բազում սուտ մարգարէք յարիցեն, եւ զբազումս մոլորեցուսցեն: Եւ վասն բազմանալոյ անօրէնութեանն, ցամաքեսցի սէր բազմաց: Բայց որ համբերեացն իսպառ, նա կեցցէ: Եւ քարոզեսցի աւետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս ի վկայութիւն ամենայն հեթանոսաց, եւ ապա եկեսցէ կատարած: Արդ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածոյն, որ ասացեալն է ի ձեռն Դանիէլի մարգարէի, զի կայցէ ի տեղւոջն սրբութեան, որ ընթեռնուն ի միտ առցէ: 15:

---

## ՉՈՐՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԱՁ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՁԵ. Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:



Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Թ. 1:

Ստուգութեամբ ասեմ ի Քրիստոս, եւ ոչ ստեմ, վկայեն ինձ միտք իմ ի Հոգի սուրբ. զի տրտմութիւն է ինձ յոյժ եւ անպակաս ցաւք սրտի իմոյ: Զի ուխտիւք խնդրէի ես իսկ ինքնին նզով լինել ի Քրիստոսէ վասն եղբարց եւ ազգականաց իմոց ըստ մարմնոյ, որ են Իսրայէլացիք. որոց որդեգրութիւնն եւ փառքն եւ կտակարանքն եւ օրէնդրութիւնն եւ պաշտօնն եւ աւետիքն, որոց հարքն, յորոց եւ Քրիստոս ըստ մարմնոյն, որ է ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս. ամէն: Ոչ ինչ է մարթ՝ եթէ անկած լինիցի բանն Աստուծոյ. զի ոչ ամենեքեան՝ որ յԻսրայէլէն են, նոքա Իսրայէլեանք իցեն. եւ ոչ որ զաւակն Աբրահամու են՝ ամենեքեան որդիք իցեն. այլ Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ: Այսինքն՝ ոչ եթէ որ որդիք մարմնոյն են, են որդիք Աստուծոյ. այլ որդիք աւետեացն համարին ի զաւակ: Քանզի աւետեաց իսկ է բանս այս՝ եթէ Ի ժամանակի յայսմիկ եկից, եւ եղիցի որդի Սառայի: Եւ ոչ այնչափ միայն, այլ եւ ի Հռեբեկայ ի միոջէ անկողնոյ Սահակայ հօր մերոյ: Զի մինչ չեւ ծնեալ էին, եւ մինչ չեւ բարի ինչ կամ չար գործեալ էր, զի ըստ ընտրութեանն յառաջադրութիւնն Աստուծոյ հաստատեսցի. ոչ ի գործոց, այլ յայնմանէ՝ որ կոչեացն, ասացաւ նմա թէ Երէցն կրտսերոյն ծառայեսցէ. որպէս եւ գրեալ է թէ ԶՅակովբ սիրեցի, եւ զԵսաւ ատեցի: Իսկ արդ զի՞նչ ասեմք. միթէ անիրաւութի՞ւն իցէ Աստուծոյ. քա՛ւ լիցի: Զի Մովսիսի ասէ. Ողորմեցայց՝ որում ողորմեցայցն, եւ գթացայց՝ յորս գթացայցն: Ապա ոչ ըստ այնմ ինչ է՝ որ կամիցին, եւ ոչ ըստ այնմ՝ որ ընթանայցէ. այլ ըստ Աստուծոյ՝ որ ողորմի: 16:

Ալէլուիա, ալէլուիա. Հոգի քո սուրբ եւ բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԳ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յաւուր յայնմիկ ելեալ (Յիսուս) ի տանէն՝ նստէր առ ծովեզերն: Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բա-

զումք, մինչեւ մտանել նմա ի նաւն եւ նստել. եւ ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերբն: Եւ խօսէր ընդ նոսա բազումս առակօք, եւ ասէր. Ահա ել սերմանահան սերմանել. եւ ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ, եւ եկն թռչուն երկնից եւ եկեր զնա: Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում, եւ վաղվաղակի բուսաւ՝ առ ի չգոյէ հիւթոյ երկրին. ի ծագել արեւու տապացաւ, եւ զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ: Եւ այլն անկաւ ի մէջ փշոց, եւ ելին փուշքն եւ հեղձուցին զնա: Եւ այլն անկաւ յերկիր բարի, եւ տայր պտուղ, էր որ հարիւրաւոր, եւ էր որ վաթսնաւոր, եւ էր որ երեսնաւոր: Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ: 9:

---

## ՉՈՐՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### ԱԿ.

### Սրբոց Թարգմանչացն՝ Սահակայ եւ Մեսրոպայ:

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցէք զաթոռ ի յերկրի. առաքելական առէք զպատիւ յերկնուստ, ծառայք Քրիստոս ո՛վ երանելիք ի հարս սուրբ հայրապետք: Քանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ԺԴ. Զերկիւղածս Տեառն փառաւոր առնէ. որ երդնու ընկերի իւրում եւ ոչ ստէ:

Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քում. կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԲ. 4:

Թէպէտ եւ բաժինք շնորհաց են, այլ Հոգի նոյն է: Եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է: Եթէ բաժինք աջողութեանց են, այլ Աստուած նոյն է, որ աջողէ



զամենայն յամենայնի: Բայց իւրաքանչիւր ումեք առեալ է յայտնութիւն Հոգւոյն՝ առ իւրաքանչիւր օգուտ: Ումեմն ի Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան, այլում բան գիտութեան ըստ նմին Հոգւոյ, միւսումն հաւատք նովին Հոգւով, այլում շնորհք բժշկութեանց նովին Հոգւով, այլում աջողութիւնք զօրութեանց, այլում մարգարէութիւն, այլում ընտրութիւն հոգւոց, այլում ազգք լեզուաց, այլում թարգմանութիւնք լեզուաց: Այլ զայս ամենայն աջողէ մի եւ նոյն Հոգի, եւ բաժանէ իւրաքանչիւր որպէս եւ կամի: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԲ. 32:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն: Վաճառեցէք զինչս ձեր, եւ տուք ողորմութիւն. եւ արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս, ուր ոչ գող մերձենայ եւ ոչ ցեց ապականէ: Զի ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին: Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս եւ ճրագունք լուցեալք: Եւ դուք նմանողք մարդկան՝ որ ակն ունիցին տեառն իւրեանց՝ թէ ե՛րբ դառնայցէ ի հարսանեաց. զի յորժամ գայցէ եւ բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա: Երանի՛ իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ՝ զի գօտի ընդ մէջ ածցէ եւ բազմեցուսցէ զնոսա, եւ անցեալ պաշտիցէ զնոսա: Եւ եթէ յերկրորդ կամ յերրորդ պահու եկեսցէ եւ գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ: Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն յորում պահու գող գայ՝ հսկէր եւ չտայր թոյլ ական հատանել ի տան իւրում: Եւ դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ Որդի մարդոյ: 40:

---

## ՁՈՐՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

### ՒՉ·

Յաճախոտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զԱստուածաշունչ քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ· ՂԲ· Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի պատնէշելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց Թղթոյն է ընթերցուածս. Գլ· Թ· 17:

Ասէ գիր ցփարաւոնն, Թէ ի սա՛ն այնորիկ գրգռեցի զքեզ, զի ի քեզ ցուցից զզօրութիւն իմ, եւ պատմեսցի անուն իմ ընդ ամենայն երկիր: Ապա ուրեմն ումա՛ կամի՝ ողորմի, եւ ումա՛ կամի՝ խստանայ: Իսկ արդ՝ ասիցես, Թէ Մե՛ղ եւս զի՞նչ դնէ՝ զի կամաց նորա ոչ ոք կայ հակառակ: Իսկ արդ դու ո՞վ ես, մա՛րդ, որ պատասխանի տաս Աստուծոյ. միթէ ասիցէ՞ ստեղծուածն ցստեղծիչն՝ Թէ ընդէ՞ր այդպէս արարեր զիս: Եթէ ո՞չ ունիցի իշխանութիւն բրուտն կաւոյն, ի նմին զանգուածոյ առնել անօթ՝ զոմն ի պատիւ եւ զոմն յանարգանս: Ապա եթէ կամէր Աստուած ցուցանել զբարկութիւն եւ յայտնի առնել զզօրութիւն իւր, զոր համբերն բազում երկայնմտութեամբ անօթոցն բարկութեան՝ պատրաստելոցն ի կորուստ: Օ՛ի յայտնի արասցէ զմեծութիւն փառաց իւրոց ի վերայ անօթոցն ողորմութեան, զոր պատրաստեաց ի փառս: Օ՛որս եւ կոչեաց զմեզ, ոչ միայն ի Հրէից, այլ եւ ի հեթանոսաց, որպէս եւ Յովսէէ ասէ. Կոչեցից զոր ոչ ժողովուրդն իմ, ժողովուրդ ինձ. եւ զչսիրեցեալն՝ սիրեցեալ, եւ զչողորմեալն՝ ողորմեալ: Եւ եղիցի ի տեղւոջ՝ յորում ասացաւ նոցա Թէ ոչ ժողովուրդ իմ դուք. անդ կոչեսցին նոքա որդիք Աստուածոյ կենդանւոյ: Եսայի աղաղակէ վասն Իսրայէլի. Եթէ իցէ Թիւ որդւոցն Իսրայէլի իբրեւ զաւազ ծովու, սակաւ ինչ մնացորդք մնասցեն: Օ՛ի բան մի հակիրճ եւ համառօտ արդարութեամբ, զբանն հակիրճ արասցէ Տէր ի վերայ երկրի: Եւ որպէս ասէ Եսայի. Եթէ ոչ Տէառն զօրուաթեանց Թողեալ էր մեզ զաւակ, իբրեւ զՍոդոմ լինէաք, եւ զԳոմորայ նմանէաք: 29:

Ընդ ելս լիա, ալելուիա. Սիրտ իմ խառնվեցաւ յիս. եւ երկիւղ մահու անկաւ ի վերայ իմ:

Սրբոյ Ա՛ետարանիս որ ըստ Մատթէոսի. Գլ· ԺԳ· 16:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Նայց ձեր երանի է աչացդ՝ զի տեսանեն, եւ ականջաց ձերոց՝ զի լսեն: Ամէն ասեմ ձեզ, զի բազում մարգարէք եւ արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ, եւ ոչ տեսին, եւ լսել զոր լսէքդ, եւ ոչ լուան: Եւ արդ՝ լուարուք դուք զառակ սերմնացանին: Յամենայնէ՝ որ լսէ զբանն արքայութեան եւ ոչ առնու ի միտ, գայ չարն եւ յափշտակէ զսերմանեալն ի սիրտ նորա. այն է՝ որ առ ճանապարհաւն սերմանեցաւ: Եւ որ յապառաժին սերմանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն, եւ վաղվաղակի խնդութեամբ ընդունի զնա: Նայց քանզի ոչ ունի արմատս յինքեան, այլ առ ժամանակ մի է, ի լինել նեղութեան եւ հալածանաց վասն բանին՝ վաղվաղակի գայթակղի: Իսկ որ ի մէջ փշոյն սերմանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն, եւ հոգք աշխարհիս եւ պատրանք մեծութեան հեղձուցանեն զբանն, եւ լինի անպտուղ: Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն, եւ ի միտ առնու, եւ տայ պտուղ, է որ հարիւր, եւ է որ վաթսուն, եւ է որ երեսուն: Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: 23:



---

## ՁՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### ՒԿ·

**Սրբոյն Զաքարիայ մարգարէին եւ Ընտիրիոսի սուրբ Հօրն:**

Յաճախոտ. Տէր որ հիմնեցուցեր զերկերիզի քո ի վերայ վիմին հաւատով. եւ կարգեցեր ի սմա առաքեալս եւ մարգարէս, հովիւս եւ վարդապետս՝ առ ի հաստատութիւն

սրբոց. եւ ձգնուԹեամբ վկայից զԹշնամին սորա վանեցեր. ի խաղաղուԹեան զսա պահեա, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ· կԷ· Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Յարիցէ Աստուած եւ ցրուեսցին ամենայն Թշնամիք նորա. փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա:

Պօղոսի առաքելոյն կորնԹացւոց առաջին ԹղԹոյն է ընԹերցուածս: Գլ· ԺԲ· 28:

Նա զորս եդ Աստուած յեկեղեցւոջ՝ այս են. նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ զվարդապետս, ապա զօրուԹիւնս, ապա շնորհս բժշկուԹեանց. օգնուԹիւնս, վարիչս, ազգս լեզուաց, ԹարգմանուԹիւնս լեզուաց: ՄիԹէ ամենեքին առաքեա՞լք իցեն. միԹէ ամենեքին մարգարէք իցեն. միԹէ ամենեքին վարդապե՞տք իցեն. միԹէ ամենեքին զօրուԹի՞նք իցեն. միԹէ ամենեքին շնորհս բժշկուԹեա՞նս ունիցին. միԹէ ամենեքին ի լեզո՞ս խօսիցին. միԹէ ամենեքին ԹարգմանիցՁ՞ն: Այլ նախանձաւորք լերուք շնորհացն՝ որ լաւն են: Եւս ես առաւել եւս ճանապարհ ցուցանեմ ձեզ: ՆԹէ զլեզուս մարդկան խօսիցիմ եւ զհրեշտակաց, եւ սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ զպղինձ՝ որ հնչէ, կամ իբրեւ զձնճղայս՝ որ ղօղանջեն: Նա եԹէ ունիցիմ մարգարէուԹիւն, եւ գիտիցեմ զխորհուրդս ամենայն եւ զամենայն գիտուԹիւն, եւ եԹէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչեւ զլերինս փոփոխել, եւ սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ: Նա եԹէ ջարդիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, եւ մատնիցեմ զմարմինս իմ յայրուձին, եւ սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ: Ա Գ· 3:

Ալէլուիա, ալէլուիա. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ ՄատԹէոսի.

Գլ· ԻԳ· 34:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Վասն այդորիկ ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս եւ իմաստունս եւ գպիրս. եւ ի նոցանէ



սպանանիցէք եւ ի խաչ հանիցէք. եւ ի նոցանէ տանջիցէք ի ժողովուրդս ձեր, եւ հալածիցէք ի քաղաքէ ի քաղաք: Որպէս զի եկեսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ յերկրի, յարենէն Աբելի արդարոյ՝ մինչեւ ցարիւնն Օաքարիայ՝ որդւոյ Բարաքեայ, զոր սպանէք ընդ միջ տաճարին եւ սեղանոյ: Ամէն ասեմ ձեզ. եկեսցէ այն ամենայն ի վերայ ազգիս այսորիկ: Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէս եւ քարկոծ առնէիր զառաքեալն առ քեզ. քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո, զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւովք, եւ ոչ կամեցարուք: Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ: Բայց ասեմ ձեզ՝ Թէ ոչ եւս տեսանիցէք զիս յայսմ հետէ, մինչեւ ասիցէք, օրհնեալ եկեալն յանուն Տեառն: 39:

# ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ

# ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻՆ

## ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ԻԴ. ՅՈՒՆԻՍԻ

---

Ժամամուտ. Զյառաջընթացութիւն քո եւ զկարապետութիւն Աստուծոյ Բանին խափանել կարծելով, որ ի ձեռն կնոջն զնախաստեղծն ի դրախտէն արտաքս ընկէց, նա եւ այժմ զՀերովդիադա անօրէնութեամբ բորբոքեալ, եւ բազմելոցն Հերովդեայ՝ զկաքաւս ոտից աղջկանն հաճոյացոյց, զի զքոյդ հատցէ զգլուխ, որ զամենեցուն ձեռնադրեցեր զգլուխն զՔրիստոս: Այլ դու, որ յանապատէ բարբառոյ ձայն, գոչեա որում ձեռնադրեցեր՝ պարգեւել զխաղաղութիւն եւ զմեծ զողորմութիւն:

Սղ. Դու մանուկ, մարգարէ Բարձրելոյն կոչեսջիր. գնասցես առաջի Տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա:

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, զի յայց ել մեզ. եւ արար փրկութիւն ժողովրդեան իւրում:

### Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. ԺԳ. 25:

Եւ իբրեւ լնոյր Յովհաննէս զընթացսն, ասէր. Զո՞ ոք կարծէք զինէն՝ թէ իցեմ. չեմ ես այն. այլ ահա գայ զկնի իմ, որում չեմ արժանի զկօշիկս ոտիցն լուծանել: Ա՛րք եղբարք՝ որդիք Աբրահամեան տոհմին եւ որ ի ձեզ երկիւղածք իցեն յԱստուծոյ, ձեզ բանս այս փրկութեան առաքեցաւ: Բայց որ բնակեալ են յԵրուսաղէմ եւ իշխանք նոցա՝ անծանօթ եղեն ի նմանէ. եւ ըստ բարբառոյ մարգարէիցն, որ զամենայն շաբաթսն ընթեռնուին, դատեալ կա-



տարեցին. եւ ոչ մի ինչ պատճառս մահու գտեալ՝ խնդրեցին ի Պիղատոսէ սպանանել զնա: Եւ իբրեւ կատարեցին զամենայն՝ որ վասն նորա գրեալ էր, իջուցեալ ի փայտէն՝ եդին ի գերեզմանի: Այլ Աստուած յարոյց զնա ի մեռելոց. որ երեւեցաւ աւուրբք բազմօք այնոցիկ, որ ելեալ էին ընդ նմա ի Գալիլեէ յԵրուսաղէմ. որք եւ արդ իսկ վկայք են նորա առ ժողովուրդն: Եւ մեք ձեզ աւետարանեմք զխոստումն՝ որ առ հարսն եղեալ էր: Զի զնոյն Աստուած կատարեաց առ մեզ որդիս նոցա՝ յարուցեալ զՅիսուս, որպէս եւ ի սաղմոսին գրեալ է յերկրորդում. Որդի իմ ես դու, եւ ես այսօր ծնայ զքեզ: 33:

Ալէլուիա, ալէլուիա. Կարապետն Յովհաննէս զարհուրեալ, յորովայնէ յորովայն երկիր պագանէր. սպասաւոր եղեւ Բանին Աստուծոյ. եւ լուեալ զահաւոր զձայնն՝ աղաղակէր ասելով. Ահա գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի:

### Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ա. 57:

Վասն փառաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ Եղիսաբեթի լցան ժամանակք ծնանելոյ, եւ ծնաւ որդի: Եւ լուան որ շուրջ զնովաւ էին եւ ազգատոհմ նորա, զի մեծ արար Տէր զողորմութիւն իւր ընդ նմա. եւ խնդացին ընդ նմա: Եւ եղեւ յաւուրն ութերորդի եկին թլփատել զմանուկն, եւ կոչէին զնա յանուն հօր իւրոյ Զաքարիա: Պատասխանի ետ մայր նորա եւ ասէ. Ոչ, այլ կոչեսցի Յովհաննէս: Եւ ասեն ցնա. Քանզի ոչ ոք է յազգի քում, որոյ կոչի անուն Յովհաննէս: Ակնարկէին հօրն նորա թէ զի՞նչ կամիցի կոչել զնա: Եւ խնդրեաց տախտակ, գրեաց եւ ասէ. Յովհաննէս է անուն դորա. եւ զարմացան ամենեքին: Եւ բացաւ բերան նորա վաղվաղակի եւ լեզու նորա. եւ խօսէր եւ օրհնէր զԱստուած: Եւ եղեւ ահ ի վերայ ամենեցուն որ լսէին զայս, եւ որ շուրջ բնակեալ էին զնոքօք. եւ ընդ ամենայն լեռնակողմն Հրէաստանի պատմէին ամենայն բանքս այսոքիկ: Եւ եդին ամենեքեան որ լսէինն՝ ի սիրտս իւրեանց եւ ասէին: Զի՞նչ լինիցի

մանուկս այս. եւ ձեռն Տեառն էր ընդ նմա: Եւ Զաքարիա հայր նորա լցաւ Հոգւով սրբով, մարգարէացաւ եւ ասէ. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, զի յայց ել մեզ, եւ արար փրկութիւն ժողովրդեան իւրում: Եւ յարոյց եղջիւր փրկութեան մեզ ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ: Որպէս խօսեցաւ բերանով սրբոց՝ որ յաւիտենից մարգարէքն նորա էին: Փրկութիւն ի թշնամեաց մերոց, եւ ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց: Առնել ողորմութիւն ընդ հարս մեր, եւ յիշել զուխտն իւր սուրբ: Զերդումն զոր երդուաւ Աբրահամու հօր մերում՝ տալ մեզ, առանց երկիւղի, ի ձեռաց թշնամեաց մերոց փրկեալս: Պաշտել զնա սրբութեամբ եւ արդարութեամբ առաջի նորա զամենայն աւուրս կենաց մերոց: Եւ դու մանուկ՝ մարգարէ Բարձրելոյն կոչեսջիր. զի երթիցես առաջի երեսաց Տեառն պատրաստել զճանապարհս նորա: Տալ գիտութիւն փրկութեան ժողովրդեան նորա, ի թողութիւն մեղաց նոցա: Վասն գթութեանց ողորմութեան Աստուծոյ մերոյ, որովք այց արասցէ մեզ արեգակն ի բարձանց: Երեւել՝ որոց ի խաւարի եւ ի ստուերս մահու նստէին. ուղղել զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան: Եւ մանուկն աճէր եւ զօրանայր Հոգւով. եւ էր յանապատ մինչեւ յօն երեւելոյ նորա Իսրայէլի: 80:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ՊԵՆՏԷԿՈՍՏԷԻՆ

### ԳԶ.

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Օղ. կԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:



Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Թ. 30.

Իսկ արդ զի՞նչ ասիցեմք. զի հեթանոսք՝ որ ոչ երթային զհետ արդարութեան, հասին արդարութեան. այնմ արդարութեան՝ որ ի հաւատոց անտի: Այլ Իսրայէլ երթայր զհետ օրինացն արդարութեան, եւ յօրէնս արդարութեանն ոչ ժամանեաց: Ընդէ՞ր. զի ոչ ի հաւատոց, այլ իբրեւ ի գործոց օրինաց. քանզի գթեցին նոքա առ վիմին գայթագղութեան: Որպէս եւ գրեալ է. Ահաւասիկ դնեմ ի Սիոն քար գայթագղութեան եւ վէմ գլորման, եւ ամենայն՝ որ հաւատասցէ ի նա, մի՞ ամաչեսցէ: Ե՛ղբարք, իմ կամք սրտի եւ աղօթք առ Աստուած վասն նոցա են ի փրկութիւն: Քանզի վկայեմ նոցա՝ եթէ զնախանձն Աստուծոյ ունին, այլ ոչ գիտութեամբ: Զի տգէտ են Աստուծոյ արդարութեանն, եւ զիւրեանցն խնդրեն կացուցանել. զի արդարութեանն Աստուծոյ ոչ հնազանդեցան: Քանզի կատարած օրինացն Քրիստոս է՝ յարդարութիւն ամենայն հաւատացելոց: Ժ. 4:

Ալէլուիա, ալէլուիա. Ուրախ եղեւ Իսրայէլ յարարիչ իւր. որդիք Սիովնի ցնծասցեն ի թագաւորն իւրեանց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԳ. 24:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Այլ առակ արկ առ նոսա եւ ասէ. Նմանեցաւ արքայութիւն երկնից առն, որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում: Եւ ի քուն լինել մարդկան, եկն թշնամի նորա եւ ցանեաց ի վերայ որոմն ի մէջ ցորենոյն եւ գնաց: Եւ իբրեւ բուսաւ խոտն եւ արար պտուղ, ապա երեւեցաւ եւ որոմն: Մատուցեալ ծառայք տանուտեառնն՝ ասեն ցնա. Տէր, ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում, արդ՝ ուստի՞ ունիցի զորոմնն: Եւ նա ասէ ցնոսա. Այր թշնամի արար զայն: Ասեն ցնա ծառայքն. Կամի՞ս զի երթիցուք քաղեսցուք զայն ի բաց: Եւ նա ասէ ցնոսա. Մի՞. գուցէ մինչ քաղիցէք զորոմնն, եւ զցորեանն ընդ նմին ի բաց

խլիցէք: Թոյլ տուք երկոցունց աճել ի միասին մինչեւ ի հունձս, եւ ի ժամանակի հնձոց ասացից ցհնձողսն. Քաղեցէք նախ զորոմնդ եւ կապեցէք զայդ ի խրձունս առ ի յայրել, եւ զցորեանն ժողովեցէք ի շտեմարանս իմ: 30:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### ԳԿ·

**Սրբոյն Տրդատայ Թագաւորին եւ Աշխէն տիկնոջն եւ խոսրովիդխտոյ:**

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց Թագաւորաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ· Ի· Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի Թագաւորն. եւ ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ:

Զցանկութիւն սրտի նորա ետուր նմա. եւ զկամս շրթանց նորա ոչ արգելեր ի նմանէ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին Թղթոյն է ընթերցուածս. Գլ· Բ· 1:

Եւ արդ աղաչեմ, նախ քան զամենայն առնել աղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհութիւնս վասն ամենայն մարդկան, մանաւանդ վասն Թագաւորաց եւ ամենայն իշխանաց. զի խաղաղութեամբ եւ հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր, ամենայն աստուածպաշտութեամբ եւ սրբութեամբ: Զի այն է բարի եւ ընդունելի առաջի փրկչին մերոյ Աստուծոյ. որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն եւ ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն: Զի մի է Աստուած, եւ մի միջնորդ Աստուծոյ եւ մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս. որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն, վկայութիւն ժամանակաց իւրոց: Յոր եդայ ես քարոզ եւ առաքեալ. ճշմարիտ ասեմ ի Քրիստոս եւ ոչ ստեմ, եղէ վարդապետ հեթանոսաց հաւատովք եւ ճշմարտութեամբ: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Ուրախ լիցին ամենեքեան որք յուսացեալ են ի քեզ. յաւիտեան ցնծասցեն, եւ բնակեսցես դու ի նոսա:



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ· ԺԱ· 14:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ հանէր դեւ մի համր. եւ եղեւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն, եւ զարմացան ամենայն ժողովուրդքն: Եւ ոմանք ի նոցանէ ասեն. Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս: Եւ այլք փորձէին եւ նշան յերկնից խընդրէին ի նմանէ: Իսկ նորա գիտացեալ զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. Ամենայն Թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, եւ տուն բաժանեալ յանձն՝ կործանի: Ապա եթէ եւ սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիա՞րդ կայցէ Թագաւորութիւն նորա. զի ասէք զինէն եթէ բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս: Եթէ ես բէեղզեբուղաւ հանեմ զդեւս, որդիքն ձեր ի՞ւ հանիցեն. վասն այդորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք: Իսկ եթէ մատամբ Աստուծոյ հանեմ զդեւս, ապա հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ: Յորժամ հզօր վառեալ՝ պահիցէ զտուն իւր, ի խաղաղութեան են ինչք նորա: Բայց եթէ հզօրագոյն քան զնա ի վերայ եկեալ՝ յաղթեսցէ նմա, զսպառազինութիւնն նորա հանէ՝ յոր յուսացեալ էր, եւ զաւար նորա բաշխեսցէ: Որ ոչ է ընդ իս՝ հակառակ իմ է, եւ որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ: 23:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԴԶ·

**Սրբոց հայրապետացն՝ որդւոց եւ Թոռանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի եւ Դանիէլի:**

Ժամամուտ: Զհայրապետականն զարդարեցէք զաթոռ ի յերկրի. առաքելական առէք զպատիւ յերկնուստ, ծառայք Քրիստոսի ո՛վ երանելիք ի հարս սուրբ հայրապետք: Քանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատու-

ցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ· ՃԼԱ· Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ· Ա· 6·

Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աստուծոյ, որ են ի քեզ ի ձեռնադրութենէ իմմէ: Զի ոչ ետ մեզ Աստուած հոգի վհատութեան, այլ զօրութեան եւ սիրոյ եւ զգաստութեան: Մի՛ այսուհետեւ ամօթ համարիցիս զվկայութիւնն Տեառն մերոյ եւ մի՛ զիս զկապեալ նորա, այլ կցորդ լեր չարչարանաց աւետարանին ըստ զօրութեան Աստուծոյ· որ փրկեացն զմեզ եւ կոչեաց ի կոչումն սուրբ, ոչ ըստ գործոց մերոց, այլ ըստ իւրում յառաջադրութեանն եւ շնորհացն՝ որ տուաւ մեզ ի Քրիստոս Յիսուս յառաջ քան զժամանական յաւիտենից: Բայց յայտնեցաւ այժմիկ յերեւել փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ խափանեաց զմահ, եւ լուսաւոր արար զկեանս եւ զանեղծութիւն ի ձեռն աւետարանին, որոյ եդայ ես քարոզ եւ առաքեալ եւ վարդապետ հեթանոսաց: Վասն որոյ եւ զայս չարչարանս կրեմ, այլ ոչ ինչ ամօթ համարիմ· քանզի գիտեմ յո հաւատացեալն եմ· եւ հաստատեալ եմ թէ կարող է զաւանդն իմ պահել յօրն յայն: Ունիցիս օրինակ ողջմտութեան բանիցն՝ զորս յինէն լուար, հաւատովք եւ սիրով որ ի Քրիստոս Յիսուս: Զբարւոք աւանդն պահեսջիր ի ձեռն Հոգւոյն սրբոյ ի մեզ բնակելոյ: 14:

Ալէլուիա, ալէլուիա· Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ· ԺԱ·29:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ի դիզանել ի վերայ նորա ժողովրդոցն՝ սկսաւ ասել· Ազգս այս՝ ազգ չար է· նշան խնդրէ, եւ նշան յերկնից ոչ



տացի նմա՝ բայց նշանն Յովնանու: Զի որպէս եղեւ Յովնան նշան Նինուէացւոցն, այնպէս եղիցի եւ Որդի մարդոյ ազգիս այսմիկ: Դշխոյն հարաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ արս ազգիս այսորիկ եւ դատապարտեսցէ զսա, զի եկն ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի· եւ ահա առաւել քան զՍողոմոն է աստ: Արք Նինուէացիք յարիցեն ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ եւ դատապարտեսցեն զսա, զի ապաշխարեցին ի քարոզութեանն Յովնանու· եւ ահա առաւել քան զՅովնան է աստ: 32:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉՈՐԵՔԾԱԲԱԹԻ

ԴԿ·

Ժամամուտ· Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ· ՁԵ· Կեցո զծառայս քո Աստուած իմ· որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ· ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ· Ժ· 5:

Մովսէս գրէ զարդարութիւն, որ յօրինաց անտի է· եթէ արասցէ զայն մարդ՝ կեցցէ նովին: Իսկ զհաւատոցն արդարութենէ այսպէս ասէ· Մի՛ ասիցես ի սրտի քում· ո՞վ ելանիցէ յերկինս, այսինքն է՝ զՔրիստոս իջուցանել· կամ ո՞վ իջանիցէ յանդունդս, այսինքն է՝ զՔրիստոս հանել ի մեռելոց: Այլ զի՞նչ ասէ գիր· Մերձ է բանն ի բերան քո, եւ ի սրտի քում է· այսինքն է՝ բանն հաւատոց զոր քարոզեմք: Զի եթէ խոստովանեսցես բերանով քով Տէր զՅիսուս, եւ հաւատասցես ի սրտի քում, թէ Աստուած յարոյց զնա ի մեռելոց, կեցցես: Զի սրտիւ հաւատայք յարդարութիւն, եւ բերանով խոստովանիք ի փրկութիւն: Քանզի ասէ գիր· Ամենայն՝ որ հաւատասցէ ի նա, մի՛

ամաչեսցէ: Օ՛չ ոչ գոյ խաիր հրէի եւ հեթանոսի· քանզի նոյն Տէր է ամենեցուն, բաւական յամենեսին՝ որք կարդան առ նա: Օ՛չ ամենայն՝ որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ: Լսէ զիա՞րդ կարդասցեն՝ յոր ոչն հաւատացին, կամ զիա՞րդ հաւատասցեն՝ որում ոչն լուան· կամ զիա՞րդ լուիցեն՝ առանց ուրուք քարոզելոյ· կամ զիա՞րդ քարոզեսցեն, եթէ ոչ առաքեսցին· որպէս եւ գրեալ է· Իբրեւ զի գեղեցիկ են ոտք աւետարանչացն խաղաղութեան եւ աւետարանչացն բարութեան: Այլ ոչ ամենեքեան հնազանդ եղեն աւետարանին: Նոյնպէս ասէ· Տէր, ո՞ հաւատաց լսոյ մերում: Ապա ուրեմն հաւատք ի լսելոյ են, եւ լսոյ ի բանէն Քրիստոսի: 17:

Ալէլուիա, ալէլուիա· Տէր, ողորմութիւն քո յաւիտեան· զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի·

Գլ· ԺԳ· 31:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս·

Այլ առակ արկ առ նոսա եւ ասէ· Նման է արքայութիւն երկնից հատու մանանխոյ, զոր առեալ մարդոյ՝ սերմանեաց յագարակի իւրում· որ փոքր է քան զամենայն սերմանիս, եւ յորժամ աճիցէ, մեծ է քան զամենայն բանջարս· եւ լինի ծառ՝ մինչեւ գալ թռչնոց երկնից եւ հանգչել յոստս նորա: Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ· Նման է արքայութիւն երկնից խմորոյ, զոր առեալ կնոջ թագոյց ի գրիւս երիս ալեր՝ մինչեւ ամենայն խմորեցաւ: Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովուրդն· եւ առանց առակի ոչ ինչ խօսէր ընդ նոսա: Օ՛չ լցի ասացեալն ի մարգարէէն· Բացից առակօք զբերան իմ, բղխեցից զծածկեալսն ի սկզբանէ աշխարհի: Յայնժամ թողեալ Յիսուսի զժողովուրդն՝ եկն ի տուն· մատեան առ նա աշակերտքն նորա եւ ասեն· Յայտնեա մեզ զառակ որոմանցն ագարակի: Նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա· Որ սերմանէ սերմն բարի՝ է Որդի մարդոյ: Եւ ագարակն աշխարհս է: Սերմն բարի նոքա են՝ որ որդիքն արքայութեան են· իսկ որոմն որդիք չարին են: Եւ թշնամին որ վարեաց զայն՝ սատանայ է· եւ հունձքն կատարած աշխարհիս է, եւ



հնձողքն հրեշտակք են: Որպէս ժողովի որոմն եւ ի հուր այրի, այնպէս եղիցի ի կատարած աշխարհիս: Առաքեսցէ Որդի մարդոյ զհրեշտակս իւր, եւ ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթակղութիւնս, եւ զայնոսիկ որք գործեն զանօրէնութիւն, եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյ· անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց: 42:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### ԸՂ·

**Սրբոյն եղիսէի մարգարէին:**

Յոհաննու· Տէր որ հիմնեցուցեր զեկեղեցի քո ի վերայ վէմին հաւատով· եւ կարգեցեր ի սմա առաքեալս եւ մարգարէս, հովիւս եւ վարդապետս՝ առ ի հաստատութիւն սրբոց· եւ ձգնութեամբ վկայից զթշնամին սորա վանեցեր· ի խաղաղութեան զսա պահեա, Աստուած· որպէս մարգասեր:

Սղ· կե· Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած· եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Յարիցէ Աստուած եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա· փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս: Գլ· Բ· 6:

Օ՛չ իմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս· զիմաստութիւն ոչ զաշխարհիս այսորիկ, եւ ոչ զիշխանաց աշխարհիս այսորիկ զնախանձելեացս: Այլ խօսիմք զԱստուծոյ իմաստութիւն ծածուկ խորհրդով, զոր յառաջ քան զյաւիտեանս Թիւնն ծածուկ խորհրդով, զոր ոչ ոք յիշխանաց սահմանեաց Աստուած ի փառս մեր· զոր ոչ ոք աշխարհիս այսորիկ ծանեաւ· զի եթէ էր ծանուցեալ, ոչ արդեօք զՏէրն փառաց ի խաչ հանէին: Այլ որպէս եւ գրեալ է· Օ՛որ ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց: Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն իւրով· զի Հոգին զամենայն քննէ եւ զխորս Աստուծոյ: 10:

Ալէլուիա, ալէլուիա: Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ· Դ· 25:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Արդարեւ ասեմ ձեզ, զի բազում այրիք էին յաւուրս Եղիայի ի մէջ Իսրայէլի՝ յորժամ փակեցանն երկինք զերիս ամս եւ զվեց ամիս, եւ եղեւ սով մեծ ընդ ամենայն երկիր: Եւ ոչ առ մի ի նոցանէ առաքեցաւ Եղիա, բայց միայն ի Սարեբթա Սիդովնացւոց՝ առ կին մի այրի: Եւ բազում բորոտք էին յԻսրայէլի առ Եղիսէիւ մարգարէիւ, եւ ոչ ոք ի նոցանէ սրբեցաւ, բայց միայն Նէեման ասորի: Եւ լցան ամենեքին բարկութեամբ ի ժողովրդեանն՝ իբրեւ լսէին զայս: Եւ յարուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին, եւ ածին զնա մինչեւ յարտեւան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր՝ գահավէժ առնել զնա: Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա՝ գնայր: 30:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

### ԱԿ·

Ժամամուտ· Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ· ՂԷ· Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ· ԺԱ· 1:

Իսկ արդ՝ ասեմ, միթէ մերժեաց Աստուած զժողովուրդ իւր. քա՛ւ լիցի. քանզի եւ ես Իսրայէլացի եմ, ի զաւակէ Աբրահամու, յազգէ Բենիամինի: Ոչ մերժեաց Աստուած



զժողովուրդ իւր, զոր յառաջն ծանեաւ. թէ ո՞չ գիտէք յԵղիա զի՞նչ ասէ գիր, ո՛րպէս ամբաստան լինի Աստուծոյ զԻսրայէլէ. Տէ՛ր, զմարգարէս քս կոտորեցին եւ զսեղանս քո կործանեցին. ես մնացի միայն, եւ խնդրեն զանձն իմ: Այլ զի՞նչ ասէ նմա պատասխանին. Թողի ինձ, ասէ, եօթն հազար այր՝ որ ոչ կրկնեցին ծունր Բահաղու: Նոյնպէս եւ յայսմ ժամանակի մնացորդք ըստ ընտրութեան շնորհացն եղեն: Իսկ եթէ շնորհօք, ոչ եւս ի գործոց. ապա թէ ոչ՝ շնորհքն ոչ եւս շնորհք լինին: Իսկ արդ՝ զոր խնդրէրն Իսրայէլ՝ այնմ ոչ եհաս, բայց ընտրութեանն եհաս. եւ այլքն կուրացան: Որպէս եւ գրեալ է. Եւ նոցա Աստուած հոգի յիմարութեան, աչս՝ որովք ոչ տեսանիցեն, եւ ականջս՝ որովք ոչ լսիցեն, մինչեւ ցայսօր ժամանակի: Եւ Դաւիթ ասէ. Եղիցին սեղանք նոցա յորոգայթ եւ յորս եւ ի գայթագղութիւն եւ ի հատուցումն նոցին: Խաւարեսցին աչք նոցա՝ զի մի՛ տեսցեն. եւ զթիկունս նոցա հանապազ կորացո: Իսկ արդ ասեմ, միթէ վասն ա՞յնորիկ յանցեան՝ զի կործանեսցին. քա՛ւ լիցի. այլ նոցա յանցանօքն փրկութիւն հեթանոսաց, զի նախանձ արկցէ նոցա: Իսկ եթէ յանցանքն նոցա մեծութիւն աշխարհի, եւ պարտութիւն նոցա մեծութիւն հեթանոսաց. ո՛րչափ եւս առաւել լրութիւն նոցա: 12:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր, մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. եւ մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ· ԺԳ· 43:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն յարքայութեան երկնից: Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ՝ թագոյց. եւ ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի, եւ գնէ զագարակն զայն: Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից առն վաճառականի՝ որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս: Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր, եւ գնեաց զայն մարգարիտ: Դար-

ձեալ՝ նման է արքայութիւն երկնից ուռկանի արկելոյ ի ծով
եւ յամենայն ազգաց ժողովելոյ։ Զոր՝ իբրեւ լցաւ, հանեալ
ի ցամաք եւ նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս, եւ
զխոտանն ի բաց ընկեցին։ Այնպէս եղիցի ի կատարածի աշ-
խարհիս. ելցեն հրեշտակք եւ մեկնեսցեն զչարս ի միջոյ ար-
դարոց, եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ եւ
կրճել ատամանց։ Ասէ ցնոսա Յիսուս. Իմացարո՞ւք զայս
ամենայն. ասեն ցնա. Այո՛ Տէր։ Եւ նա ասէ ցնոսա. Վասն
այսորիկ ամենայն դպիր աշակերտեալ արքայութեան երկնից՝
նման է առն տանուտեառն, որ հանէ ի գանձէ իւրմէ զնոր եւ
զհին։ 52։

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### ԲԶ.

### Սրբոց Երկոտասան առաքելոցն, եւ գլխաւորացն Պետրոսի եւ Պօղոսի։

Ժամամուտ. Առաքեալք եւ վկայք Քրիստոսի Աստու-
ծոյ. ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդ-
հանուր յորդէգրութիւն կենաց կոչելով՝ միասնական սուրբ
Երրորդութեանն յորդորեցին երգել փառս ի յաւիտեանս.
ամէն։

Սղ. ԺԸ. Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա. եւ
մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա։

Երկինք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս
ձեռաց նորա պատմէ հաստատութիւն։

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է
ընթերցուածս. Գլ. Բ. 9։

Յիշեցէք եղբարք, զվաստակն մեր եւ զջան. զի զցայգ
եւ զցերեկ գործէաք վասն չծանրանալոյ ումեք ի ձէնջ, եւ
քարոզէաք ձեզ զաւետարանն Աստուծոյ։ Դուք ինքնին
վկայէք եւ Աստուած, որպէս սրբութեամբ եւ արդարու-
թեամբ եւ ամբծութեամբ ձեզ հաւատացելոցդ եղեաք, որ-
պէս եւ գիտէք իսկ. զի զիւրաքանչիւր ոք ի ձէնջ, իբրեւ



հայր զորդիս, մխիթարէաք եւ սփոփէաք եւ դնէաք վկայու-
թիւն՝ գնալ ձեզ արժանապէս Աստուծոյ, որ կոչեացն զձեզ
յիւր արքայութիւնն եւ ի փառս։ Վասն այնորիկ եւ մեք
գոհանամք զԱստուծոյ անպակաս, զի առեալ զլուր բանին
Աստուծոյ առ ի մէնջ՝ ընկալարուք, ոչ իբրեւ զբան մարդ-
կան, այլ որպէս ճշմարտիւ զբան Աստուծոյ, որ եւ յաջո-
ղեալ իսկ է ի ձեզ հաւատացեալսդ։ Զի դուք նմանողք
եղերուք, եղբարք, եկեղեցեացն Աստուծոյ՝ որ են ի Հրէաս-
տանի ի Քրիստոս Յիսուս, զի զնոյն չարչարանս չարչարե-
ցայք եւ դուք ի ձերոց ազգականաց, որպէս եւ նոքայն ի
Հրէից. որք եւ զՏէրն Յիսուս սպանին եւ զմարգարէսն, եւ
զմեզ հալածեցին, եւ Աստուծոյ յաչաց ելին, եւ ամենայն
մարդկան հակառակ եղեն։ Եւ արգելուին զմեզ խօսել հե-
թանոսաց՝ զի ապրեսցին, զի կատարեսցեն զմեղս իւրեանց
յամենայն ժամ. քանզի հասեալ է ի վերայ նոցա բարկու-
թիւն մինչեւ ի սպառ։ 16։

Ալէլուիա, ալէլուիա. Կացուսցես զնոսա իշխանս ընդ
ամենայն երկիր. եւ յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս
ազգաց։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.
Գլ. Թ. 36։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ ի նոսա. զի էին
աշխատեալք եւ ցրուեալք իբրեւ զոչխարս, որոց ոչ իցէ հո-
վիւ։ Յայնժամ ասէ ցաշակերտս իւր. Հունձք բազում են
եւ մշակք սակաւ։ Արդ՝ աղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ
մշակս ի հունձս իւր։ Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանե-
սին աշակերտսն իւր, ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց
հանել զնոսա, եւ բժշկել զամենայն ցաւս եւ զամենայն
հիւանդութիւնս։ Եւ առաքելոցն երկոտասանից էին անուանք
այսոքիկ. առաջին Սիմովն՝ անուանեալն Պետրոս, եւ Ան-
դրէաս եղբայր նորա. Յակովբոս Զեբեդեայ, եւ Յովհաննէս
եղբայր նորա. Փիլիպպոս եւ Բարթողոմէոս. Թովմաս եւ
Մատթէոս մաքսաւոր. Յակովբոս Ալբեայ, եւ Ղեբէոս՝ որ
անուանեցաւն Թադէոս. Սիմովն Կանանացի, եւ Յուդայ

Ակարիովտացի՝ որ եւ մատնեացն զնա: Զնոսա երկոտասանեսեան առաքեաց Յիսուս. պատուիրեաց նոցա եւ ասէ. Ի ճանապարհ հեթանոսաց մի՛ երթայցէք, եւ ի քաղաք Սամարացւոց մի՛ մտանիցէք: Այլ երթայք առաւել առ ոչխարան կորուսեալս տանն Իսրայելի: Եւ իբրեւ երթայցէք՝ քարոզեցէք եւ ասացէք. Թէ մերձեալ է արքայութիւն երկնից: Զհիւանդս բժշկեցէք, զբորոտս սրբեցէք, զդեւս հանէք, ձրի առէք եւ ձրի տուք: Ա· 8:

---

Իսկ ո՞ր էրէ ասվորո՞ւն՞ վաղմի կոպաբելոյ է 29 Յո՞ւնիսի գՏօն գԼա՞որ Ը՞ատելոյն պէտրոսի է՞ պօղոսի, զայն կոբճ կալցին՝ զոր եդած յԱ՞ովբ՞ա ձննդեան Քրիստոսի: Տե՞ էրէ 9:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ՊԵՆՑԷԿՈՍՑԷԻՆ

ՐԿ·

Յոհաննու. Սիածին Որդի եւ Բանդ Ըստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Ըստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Ըստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ· կդ· Քեզ վայելէ օրհնութիւն Ըստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք Երուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. ԳԼ· ԺԱ· 13:

Այլ ձեզ ասեմ հեթանոսաց՝ ցորչափ ժամանակս իցեմ հեթանոսաց առաքեալ, զպաշտօնն իմ փառաւոր առնեմ. զի թերեւս նախանձ արկից նոցա մարմնով իմով, եւ ապրեցուցից զոմանս ի նոցանէ: Զի եթէ մերժումն նոցա հաշտութիւն աշխարհի է, իսկ ընդունելութիւնն զի՞նչ իցէ, եթէ ոչ՝ կենդանութիւն ի մեռելոց: Իսկ եթէ սկիզբն սուրբ է, եւ զանկուածն. եւ եթէ արմատն, ապա եւ ոստքն: Եթէ յոստոց անտի ոմանք փշրեցան, եւ դու որ ձիթենիդ վայրենի էիր, պատուաստեցար ի նոսա, եւ բաժանորդ եղեր արմատոյն եւ պարարտութեան ձիթենւոյն, մի՛ պարծիր առ ոստովքն. ապա եթէ պարծիցիս՝ ոչ եթէ դու զարմատն ի վեր ունիս, այլ արմատն զքեզ: Իսկ արդ՝ ասիցես, ոստքն փշրեցան, զի ես պատուաստեցայ: Լաւութ է. անհաւատութեամբ փշրեցան, եւ դու հաւատովք հաստատեցար. մի՛ հպարտանար, այլ երկիր: Զի եթէ Ըստուած ի բուն ոստսն ոչ խնայեաց, գուցէ երբեք եւ ի քեզ ոչ խնայիցէ: Արդ՝ տես զքաղցրութիւն եւ զաստկութիւն Ըստուծոյ. ի վերայ կործանելոցն աստկութիւն, եւ ի վերայ քո քաղցրութիւն Ըստուծոյ, եթէ կայցես ի նմին քաղցրութեան. ապա թէ ոչ, եւ դու կոճռոպեսցիս: Եւ նոքա եթէ ոչ ի նմին անհաւատութեան կայցեն, պատուաստեսցին. զի կարող է Ըստուած միւսանգամ պատուաստել զնոսա: Զի եթէ դու ի բուն ի վայրենի ձիթենւոյ անտի հատար, եւ յանբուն քո ի բարի ձիթենւոջն պատուաստեցար, որչափ եւս առաւել նոքա՝ որ բունքն իսկ են, պատուաստեսցին յիւրեանց ձիթենւոջն: Նհ·ՀՀ· 24:

Ալելուիա, ալելուիա. Որի Տէր Ըստուած իմ ի հրամանս քո զոր պատուիրեցեր. եւ ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքեզ. վասն այսորիկ ի բարձունս դարձ Տէր:

Սրբոյ Ըւետարանիս որ ըստ Մատթէոսի.

ԳԼ· ԺԴ· 13:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ իբրեւ լուաւ (Յիսուս,) գնաց անտի նաւու յանապատ տեղի առանձինն: Իբրեւ լուան ժողովուրդքն՝ գնացին զհետ նորա հետի ի քաղաքաց անտի: Եւ իբրեւ ել՝ եառես ժողովուրդ բազում, գթացաւ ի նոսա եւ բժշկեաց զհիւանդս նոցա: Իբրեւ ընդ երեկս եղեւ, մատեան առ նա աշակերտքն եւ ասեն. Տեղիս անապատ է եւ օրս տարաժամեալ. արձակեա ժողովուրդսդ, զի երթիցեն շուրջ ի ձէնսն՝ գնեսցեն իւրեանց կերակուրս: Եւ ասէ Յիսուս. Ոչ ինչ պիտոյ է

դոցա երթալ· դուք տուք դոցա ուտել: Եւ նոքա ասեն ցնա. Ոչ ինչ ունիմք աստ, բայց հինգ նկանակ եւ երկուս ձկունս: Եւ ասէ ցնոսա. Բերէք այսր ցայն: Եւ հրամայեաց բազմեցուցանել զժողովուրդն ի վերայ խոտոյ. եւ առեալ զհինգ նկանակն եւ զերկուս ձկունս՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց եւ եբեկ եւ ետ ցաշակերտան զնկանական, եւ աշակերտքն՝ ժողովրդոցն: Ուրան ամենեքեան եւ յագեցան, եւ բարձին զնշխարս կոտորոցն երկոտասան սակառի լի: Եւ որք կերանն՝ էին արք իբրեւ հինգ հազար· Թող զկանայս եւ զմանկտի: 21:

---

Ե֊ ապա պահ֊ ա֊ջրթավաճառին. Ե֊ պօձ֊ ա֊ լինին:

## ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### Գ·Ջ·

Յառաջ֊· Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ· ճՀԳ· Ընդայութիւն քո ընդայութիւն ամենայն յաւիտենից. եւ տէրութիւն քո յազգէ ի ազգ:

Հաւատամ է Տէր յամենայն բանս իւր. եւ արդար է յամենայն գործս իւր:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գ·Ժ·. 25:

Ոչ կամիմ, եղբարք, եթէ տգիտք իցէք խորհրդոյս այսմիկ, զի մի՛ յանձինս ձեր իցէք իմաստունք. զի կուրութիւն փոքր ի շատէ եղեւ Իսրայէլի, մինչեւ լրումն հեթանոսաց մտցէ, եւ ապա ամենայն Իսրայէլ կեցցէ. որպէս եւ գրեալ է. Ելցէ ի Սիովնէ փրկիչ, եւ դարձուսցէ զամբարշտութիւնս Յակովբայ: Եւ այս նոցա որ յինէն ուխտ, յորժամ բարձից զմեղս նոցա: Ըստ աւետարանին թշնամիք են վասն ձեր, ըստ ընտրութեանն՝ սիրելիք վասն հարցն: Վասնզի անզեղջ են շնորհք եւ կոչումն Աստուծոյ: Օ՛ի որպէս եւ դուք երբեմն ապստամբք էիք Աստուծոյ, եւ արդ ողորմութիւն գտէք առ նոցա ապստամբութեամբն. նոյնպէս եւ նոքա այժմ ապստամբք եղեն առ ձերով ողորմութեամբդ, զի եւ նոքա ողորմութիւն գտցեն: Վասնզի արգել Աստուած զամենեսին յանհաւանութիւն՝ զի ամենեցուն ողորմեսցի: Ո՛վ խորք մեծութեան եւ իմաստութեան եւ գիտութեանն Աստուծոյ, որպէս զի առանց քննելոյ են դատաստանք նորա, եւ առանց զննելոյ են ճանապարհք նորա: Օ՛ի ո՞վ գիտաց զմիտս Տեառն, կամ ո՞վ խորհրդակից լինիցի նմա. կամ ո՞վ եթ նմա փոխ, եւ առնուցու փոխարէն ի նմանէ: Օ՛ի ի եթ նմա փոխ, եւ առնուցու փոխարէն ի նմանէ: Օ՛ի ի նմանէ եւ նովաւ եւ ի նոյն ամենայն. նմա փառք յաւիտեանս. ամէն: 36:

Ալէլուիա, ալէլուիա. Ակայք զնծասցուք ի Տէր. աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի·

Գ·Ի· ԺԴ· 22:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս·

Եւ ստիպեաց վաղվաղակի զաշակերտան մտանել ի նաւ եւ յառաջել յայնկոյս, մինչ ինքն զժողովուրդն արձակեսցէ: Եւ իբրեւ արձակեաց զժողովուրդն, ել ի լեառն առանձինն կալ յաղօթս. եւ իբրեւ ընդ երեկս եղեւ, անդ էր միայն: Եւ նաւն մեկնեալ էր ի ցամաքէն բազում ասպարսիք՝ ծփեալ յալեացն. քանզի ընդդէմ էր հողմն: Եւ ի չորրորդում պահու գիշերոյն եկն առ նոսա Յիսուս՝ գնալով ի վերայ ծովուն: Իբրեւ տեսին զնա աշակերտքն զի գնայր ի վերայ ծովուն՝ խռովեցան, եւ ասեն թէ Ուռ աչօք ինչ էցէ. եւ առ ահին աղաղակեցին: Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա Յիսուս եւ ասէ. Քաջալերեցարուք՝ ես եմ, մի՛ երկնչէք: Պատասխանի ետ նմա Պետրոս եւ ասէ. Տէր, եթէ դու ես, հրամայեա ինձ գալ առ քեզ ի վերայ ջուրց: Եւ նա ասէ՝ Եկ. եւ իջեալ ի նաւէն Պետրոս՝ գնաց ի վերայ ջուրցն, եւ եկն առ Յիսուս: Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ. եւ իբրեւ սկսաւ ընկղմել՝ աղաղակեաց եւ ասէ. Տէր, փրկեա զիս: Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր՝ կալաւ զնա եւ ասէ. Ո՛ւեր հաւատաց, ընդէր

երկմտեցեր: Եւ իբրեւ ելին ի նաւն՝ հանդարտեաց հողմն: Եւ որ ի նաւին էին՝ մատեան, երկիր պագին նմա եւ ասեն. Արդարեւ Որդի Աստուծոյ ես դու: Եւ անցեալ եկին ի ցամաք ի Գեննեսարէթ: Եւ իբրեւ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ, առաքեցին ընդ ամենայն գաւառն եւ ածին առ նա զամենայն հիւանդս: Եւ աղաչէին զնա, զի գոնէ միայն ի քղանցս հանդերձի նորա մերձեսցին. եւ որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան: 36:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԳԿ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. Ե. Երկիր պագից ի տաճար սուրբ քո. երկիւղիւ քո Տէր:

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քոյ Տէր. զի օրհնեսցես դու զարդարն:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԵ. 1:

Պարտ է մեզ՝ որ կարողքս եմք, զտկարութիւն տկարացն բառնալ, եւ մի՛ անձանց եւեթ հաճոյ լինել: Այլ իւրաքանչիւր ոք ի մէնջ ընկերին հաճոյ լինիցի ի բարիս վասն շինութեան: Քանզի եւ Քրիստոս ոչ եթէ անձին հաճոյ եղեւ, այլ որպէս եւ գրեալ է. Նախատինք նախատչաց քոց անկան ի վերայ իմ: Բայց որ ինչ գրեցաւն՝ ի մեր վարդապետութիւն գրեցաւ. զի համբերութեամբ եւ մխիթարութեամբ գրոց զյոյսն ընկալցուք: Այլ Աստուած համբերութեան եւ ամենայն մխիթարութեան՝ տացէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս ըստ Յիսուսի Քրիստոսի. զի միաբանութեամբ ի մի բերան փառաւոր առնիցէք զԱստուած եւ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Վասն որոյ ընկալարուք զմիմեանս, որպէս եւ Քրիստոս ընկալաւ զձեզ ի փառս Աստուծոյ: Ասեմ, թէ Քրիստոսի սպասաւոր թլփատութեանն լինել՝ վասն ճշմարտութեան Աստուծոյ էր, առ ի հաստատուն առնելոյ զաւետիս հարցն: Այլ հեթանոսք վասն ողորմութեան փառաւոր առնեն զԱստուած, որպէս եւ գրեալ է. Վասն այսորիկ խոստովան եղէց քեզ ի հեթանոսս, եւ անուան քում սաղմոս ասացից: Եւ դարձեալ ասէ. Ուրախ եղերուք հեթանոսք ընդ ժողովրդեան նորա. եւ դարձեալ՝ թէ Օրհնեցէք ամենայն հեթանոսք զՏէր, եւ գովեցէք զնա ամենայն ժողովուրդք: Եւ դարձեալ Եսայի ասէ. Եղիցի արմատն Յեսսեայ, եւ որ կանգնելոցն է՝ իշխան հեթանոսաց. ի նա հեթանոսք յուսասցին: Այլ Աստուած յուսոյ՝ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն սրբոյ: 13:

Ալէլուիա, ալէլուիա. Երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէք Տեառն ամենայն երկիր. երգեցէք Տեառն եւ բարձր արարէք զանուն նորա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԵ. 1:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յայնժամ մատեան (առ Յիսուս) որ յԵրուսաղեմէ փարիսեցիքն եւ դպիրք եւ ասեն. Ընդէ՞ր աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն. զի ոչ լուանան զձեռս յորժամ հաց ուտեն: Նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. Իսկ դուք ընդէ՞ր անցանէք զպատուիրանաւն Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեանն: Զի Աստուած ասաց. Պատուեա զՀայր քո եւ զմայր. եւ որ բամբասէ զՀայր կամ զմայր՝ մահու վախճանեսցի: Եւ դուք ասէք որ ասիցէ ցՀայր իւր կամ ցմայր իւր, թէ Պատարագ է՝ զոր յինէն օգտիցիս. եւ ոչ պատուիցէ զՀայր իւր եւ զմայր իւր. եւ խոտէք զբանն Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեանն: Կեղծաւորք, բարւոք մարգարէացաւ ի վերայ ձեր Եսայի եւ ասէ. Ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս, եւ սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի է յինէն: Զուր պաշտեն զիս. ուսուցանեն վարդա-

պետութիւնս՝ զմարդկան պատուիրեալս: Եւ կոչեցեալ առ
ինքն զժողովուրդն՝ ասէ ցնոսա. Լուարուք եւ ի միտ առէք:
Ոչ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ
ելանէ ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ: Յայնժամ մատուցեալ
աշակերտացն նորա՝ ասեն ցնա. Գիտես՝ զի փարիսեցիքն
իբրեւ լուան զբանն՝ գայթակղեցան: Նա պատասխանի ետ
նոցա եւ ասէ. Ամենայն տունկ՝ զոր ոչ տնկեաց Հայր իմ
երկնաւոր, խլեսցի: Թոյլ տուք զնոսա. կոյրք են՝ կուրաց
առաջնորդք. կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ, եւ
երկոքին ի խորխորատ անկանին: Պատասխանի ետ Նաա պե-
տրոս եւ ասէ. Մեկնեա մեզ զառակս զայս: Ասէ Յիսուս.
Տակաւին եւ դուք անմիտք էք. եւ ոչ իմանայք թէ ամենայն
որ մտանէ ի բերան՝ յորովայն երթայ եւ արտաքս ելանէ: Իսկ
որ ելանէ ի բերանոյ՝ ի սրտէ անտի գայ. եւ այն պղծէ զմարդն:
Զի ի սրտէ ելանեն խորհուրդք չարք՝ սպանութիւնք, շնու-
թիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայութիւնք,
հայհոյութիւնք: Այս ամենայն է՝ որ պղծէ զմարդ. այլ ան-
լուայ ձեռօք ուտել՝ ոչ պղծէ զմարդ: 20:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՀՈՐԵՔԱԲԱՐԹԻ

### Գ·Հ·

Յ-ամաո-ս. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զնա-
ղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ,
զքեզ աղաչեմք:

Սղ· 26· Կեցո զծառայս քո Աստուած իմ. որ ի
քեզ յուսացեալ:
Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօր-
հանապազ· ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ
Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն Ե ընթեր-
ցուածս. ԳԼ· ԺԲ· 14:

Հաստատեալ եմ եւ ես ինքնին, եղբարք իմ, վասն
ձեր, զի եւ դուք լի էք բարութեամբ, լի էք ամենայն
գիտութեամբ, կարող էք եւ զմիմեանս խրատել: Այլ



համարձակագոյնս գրեցի առ ձեզ, եղբարք, փոքր ի շատէ,
իբրեւ յիշեցուցանելով ձեզ, վասն շնորհացն՝ որ տուեալ
են ինձ Աստուծոյ, լինել ինձ սպասաւոր Յիսուսի
Քրիստոսի ի հեթանոսս. ըղձակերտս առնել զաւետարանն
Աստուծոյ, զի եղիցի պատարագն հեթանոսաց ընդունելի՝
սրբեալ Հոգւովն սրբով: Ունիմք այսուհետեւ պարծանս
ի Քրիստոս Յիսուս առ Աստուած: Քանզի ոչ իշխեմ
խօսել ինչ՝ զոր ոչ գործեաց Քրիստոս ինեւ ի հնազանդու-
թիւն հեթանոսաց՝ բանիւք եւ արդեամբք. զօրութեամբ
նշանաց եւ արուեստից, զօրութեամբ Հոգւոյն սրբոյ. որպէս
ինձ Աղբուսաղեմէ մինչեւ ի կողմանս Իլլիրիկեցւոց լնուլ
զաւետարանն Քրիստոսի: Այնպէս առատացեալ յաւետա-
բանել, ոչ ուր անուանեցաւ Քրիստոս, զի մի իբրեւ յայլոյ
հիման վերայ շինիցեմ, այլ որպէս եւ գրեալ է, թէ Որոց
ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, եւ որոց ոչ լուան՝
ի միտ առցեն: Վասն որոյ շատ խափանեցայ գալ առ ձեզ:
Բայց արդ ոչ եւս գոյ ինձ տեղի ի կողմանս յայսոսիկ. եւ
անձուկ յոյժ ունիմ ի բազում ամաց գալ առ ձեզ:
Յորժամ անցանիցեմ ի Սպանիա, ակն ունիմ յանցանելն
առ նոսա՝ տեսանել զձեզ. եւ ի ձէնջ յուղարկել անդր,
եթէ նախ իսկ փոքր ի շատէ ձեզ լցայց: Բայց արդ երթամ
Աղբուսաղեմ պաշտել զսուրբսն: Քանզի հաճոյ թուեցաւ
Մակեդոնացւոցն եւ Աքայեցւոցն հաղորդութիւն ինչ
առնել ընդ աղքատս սրբոցն՝ որ են Աղբուսաղեմ: Հաճոյ
թուեցաւ, քանզի եւ պարտական իսկ են նոցա. զի եթէ
հոգեւորացն նոցա հաղորդ եղեն հեթանոսք, պարտին եւ
մարմնաւորացն կցորդ լինել նոցա: Արդ զայս կատարեալ եւ.
կնքեալ զպտուղն նոցա, անցից առ ձեզ ի Սպանիա: Գիտեմ
այս գիտեմ, զի ի գալն առ ձեզ՝ լրութեամբ օրհնութեան եկից: 29:

Ալէլուիա, ալէլուիա. Յիշեա Տէր զգթութիւնս քո.
եւ զողորմութիւնս քո որք են յաւիտենից:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.
ԳԼ· ԺԶ· 21:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.
Եւ եկեալ անտի (Յիսուսի) գնաց ի կողմանս Տիւրոսի
եւ Սիդոնի: Եւ ահա կին մի քանանացի ի սահմանաց անտի

նոցա ելեալ, աղաղակէր եւ ասէր. Ողորմեաց ինձ, Տէր՝ որդի Դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի: Եւ նա ոչ ետ նմա պատասխանի: Եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա եւ ասէին. Արձակեա զնա, զի աղաղակէ զհետ մեր: Նա պատասխանի ետ եւ ասէ. Ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի: Եւ նա մատուցեալ երկիր պագանէր նմա եւ ասէր. Տէր օգնեա ինձ: Պատասխանի ետ նմա եւ ասէ. Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց: Եւ նա ասէ. Այո՛, Տէր, քանզի եւ շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ տեառն իւրեանց: Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Ո՛վ կին դու, մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս եւ կամիս. եւ բժշկեցաւ դուստր նորա ի նմին ժամու: 28:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### ԴԿ.

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. ՂԸ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԵ. 30:

Աղաչեմ զձեզ, եղբարք, ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ սիրով Հոգւոյն, պատերազմակից լինել ինձ յաղօթս վասն իմ առ Աստուած. զի ապրեցայց յապստամբացն՝ որ ի Հրէաստանի են, եւ պաշտօնն իմ որ յԵրուսաղէմ՝ ընդունելի լիցի սրբոցն. զի խնդութեամբ եկեալ առ ձեզ ի կամս Աստուծոյ հանգեայց ընդ ձեզ: Եւ Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ ամենեսին. ամէն: Յանձն առնեմ ձեզ զՓիբէ զքոյր մեր, որ է սպասաւոր



եկեղեցւոյն Կենքրացւոց. զի զնա ընկալջիք ի Տէր՝ արժանի սրբոց, եւ վերակացու լինիջիք նմա՝ յոր պէտս իրաց եւ կոչեսցէ զձեզ. քանզի եւ նա վերակացու եղեւ բազմաց եւ ինձ իսկ գլխովին: Ողջոյն տաջիք Պրիսկեայ եւ Ակիւղայ՝ գործակցաց իմոց ի Քրիստոս Յիսուս. որք ընդ անձին իմոյ զիւրեանց պարանոցս մատուցին. զորոց ոչ ես միայն գոհանամ, այլ եւ ամենայն եկեղեցիք հեթանոսաց: Եւ առտնին եկեղեցւոյն նոցա: Ողջոյն տաջիք Եպենտեայ սիրելւոյ իմոյ, որ է պտուղ Ասիացւոց ի Քրիստոս: Ողջոյն տաջիք Մարեայ՝ որ բազում վաստակս վաստակեաց ի ձեզ: Ողջոյն տաջիք Անդրոնիկեայ եւ Յունեայ ազգականաց իմոց եւ գերեկցաց, որք երեւելիքն իսկ են յառաքեալս. որք եւ յառաջ իսկ քան զիս եղեն ի Քրիստոս: Ողջոյն տաջիք Ամպղեայ սիրելւոյ իմոյ ի Տէր: Ողջոյն տաջիք Ուրբանեայ գործակցի իմոյ ի Տէր, եւ Ստաքեայ սիրելւոյ իմոյ: Ողջոյն տաջիք Ապեղեայ՝ որ ընտիրն է ի Տէր: Ողջոյն տաջիք նոցա՝ որ յԱրիստաբուղեայ տանէ անտի են, ողջոյն տաջիք Հերովդիովնայ ազգականի իմոյ. ողջոյն տաջիք այնոցիկ՝ որ ի Նարկիսեայ տանէն իցեն ի Տէր: Ողջոյն տաջիք Տրիփոսեայ եւ Տրիփոնեայ վաստակաւորաց ի Տէր. ողջոյն տաջիք Պերսիդեայ սիրելւոյ, որ բազում վաստակս վաստակեաց ի Տէր: Ողջոյն տաջիք Ռուփայ ընտրելոյ ի Տէր, եւ մօր նորա եւ իմոյ: Ողջոյն տաջիք Ասիւնկրիտեայ, Փլեգոնտեայ, Երմայ, Պատրոբայ, Երմեայ, եւ որք ընդ նոսա եղբարք իցեն: Ողջոյն տաջիք Փիլողոգեայ եւ Յուլեայ, Ներեայ եւ քեռ նորա, եւ Ողիմպեայ եւ որք ընդ նոսա սուրբք ամենեքին իցեն: Ողջոյն տաջիք միմեանց ի համբոյր սրբութեան. ողջոյն տան ձեզ ամենայն եկեղեցիք Քրիստոսի: ԺԶ. 16:

Ալէլուիա, ալէլուիա. Բարձր արարից զընտրեալն ի ժողովրդենէ իսմէ. գտի զԴաւիթ ծառայ իմ, եւ իւղով սրբով իմով օծի զնա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի. Գլ. ԺԵ. 29:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ գնացեալ անտի (Յիսուսի) եկն ի ծովեզրն Գալիլեացւոց, եւ ելեալ ի լեառն նստէր անդ: Մատեան առ նա

ժողովուրդք բազումք, որ ունէին ընդ իւրեանս՝ կաղս, կոյրս, համերս, միակողմանիս եւ այլս բազումս. եւ ընկեցին զնոսա առ ոտս նորա, եւ բժշկեաց զնոսա: Մինչեւ զարմանալ ժողովրդոցն՝ որ տեսանէին, զի համերքն խօսէին, կաղք գնային, միակողմանիք բժշկէին, կոյրք տեսանէին, եւ փառաւոր առնէին զԱստուած Իսրայէլի: Եւ կոչեցեալ առ ինքն զաշակերտան՝ ասէ. Գթամ ի ժողովուրդդ, զի արդ երեք աւուրք են՝ զի կան առ իս, եւ ոչ ունին զինչ ուտիցեն. եւ արձակել զդոսա նօթիս՝ չկամիմ, գուցէ նքթիցեն ճանապարհայն: Ասեն ցնա աշակերտքն. Իակ արդ մեզ յանապատի աստ ուստի՞ լցէ այնչափ հաց՝ մինչեւ յագեցուցանել զայսչափ ժողովուրդ: Եւ ասէ ցնոսա Յիսուս. Քանի՞ նկանակ ունիք: Եւ նոքա ասեն. Եօթն եւ սակաւ ձկունս: Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ի վերայ գետնոյ: Եւ առեալ զեօթն նկանակն եւ զձկունսն՝ գոհացաւ եւ եբեկ եւ ետ ցաշակերտսն, եւ նոքա ժողովրդեանն: Կերան ամենեքեան եւ յագեցան. եւ բարձին զնշխարս կոտորոցն՝ եօթն զամբիւղ լի: Եւ որք կերանն՝ էին իբրեւ արք չորք հազարք, թող զկանայս եւ զմանկտի: 38:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

### ԸՂ·

Ժամամուտ· Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զնաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ· ՂԷ· Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր· զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուած: ԳԼ· ԺԶ· 17:

Աղաչեմք զձեզ, եղբարք, դիտել զայնպիսիսն, որ հերձուածս եւ գայթագղութիւնս առնիցեն արտաքոյ վարդապետութեան՝ զոր դուքն ուսարուք· եւ խորշեցարուք ի նոցանէ: Զի այնպիսիքն Տեառն մերոյ Քրիստոսի ոչ ծա-



ռայեն· այլ իւրեանց որովայնին, եւ քաղցրաբանութեամբ եւ օրհնութեամբ պատրեն զսիրտս անմեղաց: Զի ձեր հնազանդութիւնդ առ ամենեսեան հասեալ է· եւ արդ ի ձեզ ուրախ եմ· բայց կամիմ զձեզ իմաստուն լինել ի բարիս եւ անմեղս ի չարիս: Եւ Աստուած խաղաղութեան խորտակեսցէ զսատանայ ընդ ոտիւք ձերովք մերձ ընդ մերձ: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ: Ողջոյն տայ ձեզ Տիմոթէոս եղբայր եւ գործակից իմ, եւ Ղուկիոս, եւ Յասոնէն, եւ Սոսիպատրոս ազգականք իմ: Ողջոյն տամ ձեզ եւ ես Տերտիոս, որ զթուղթս գրեցի ի Տէր: Ողջոյն տայ ձեզ Գայիոս աստնջական իմ, եւ ամենայն եկեղեցւոյն: Ողջոյն տայ ձեզ Երաստոս շահապ քաղաքիս, եւ Կուարտոս եղբայր: Այլ այնմ, որ կարողն է հաստատել զձեզ ըստ աւետարանիս իմում եւ ըստ քարոզութեան Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյս այսորիկ ժամանակք յաւիտենից լռեցելոյ, եւ յայտնելոյ այժմիկ ի ձեռն գրոց մարգարէականաց, ըստ հրամանի միանձնաւորին Աստուծոյ, ի հնազանդութիւն հաւատոյ, յամենայն հեթանոսս ծանուցելոյ, միայնոյ իմաստնոյն Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի· նմա պատիւ եւ փառք յաւիտեանս յաւիտենից· ամէն: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ամենեսեան: 27:

Ալէլուիա, ալէլուիա· Ողի քո սուրբ եւ բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի·

ԳԼ· ԺԵ· 39:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս·

Իբրեւ արձակեաց զժողովուրդսն, ել ի նաւ եւ եկն ի սահմանս Մագդաղեայ: Եւ մատուցեալ փարիսեցիքն եւ սադուկեցիք փորձելով խնդրէին ի նմանէ՝ նշան յերկնից ցուցանել նոցա: Ե՛ա պատասխանի եւ ասէ ցնոսա. (Յորժամ երեկոյ լինի՝ ասէք պարզ լինիցի՝ զի կարմրացեալ է երկինն: Եւ առաւօտու՝ այսօր մրրիկ, զի շառագունի տրտմութեամբ երկինն· արդ՝ զերեսս երկնի կարէք քննել, իսկ զնշան ժամանակիս ոչ կարէք գիտել:) Ազգ չար եւ

շնացող՝ նշան խնդրէ, եւ նշան մի՛ տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի. եւ եթող զնոսա եւ գնաց: Գնացին եւ աշակերտքն յայնկոյս, եւ մոռացան առնուլ հաց: Ասէ ցնոսա Յիսուս. Տեսէք եւ զգոյշ լերուք ի խմորոյ սադուկեցւոցն եւ փարիսեցւոց: Նոքա խորհէին ընդ միմեանս եւ ասէին, թէ Հաց ոչ բարձաք: Գիտաց Յիսուս եւ ասէ. Զի՞ խորհիք ի միտս ձեր, թերահաւատք, եթէ հաց ոչ ունիք: Տակաւին չիմանայք, եւ ոչ յիշէք զհինգ նկանակն ի հինգ հազարսն, եւ քանի՛ սակառի բարձէք: Եւ ոչ զեօթն նկանակն ի չորս հազարսն, եւ քանի՛ զամբիղս բարձէք: Արդ՝ զիա՞րդ ոչ իմանայք՝ եթէ ոչ վասն հացի ասացի ձեզ՝ զգոյշ լինել ի խմորոյ փարիսեցւոցն եւ սադուկեցւոց: Յայնժամ ի միտ առին եթէ ոչ ասաց զգուշանալ ի խմորոյ, այլ յաղանդոյ փարիսեցւոցն եւ սադուկեցւոց: ԺԶ. 12:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### ԱԿ.

### Տօն է Տապանակին:

Ժամամուտ. Զխաղաղութիւն շնորհեա եկեղեցւոյ քում սրբոյ, զխաղաղութիւն եւ զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմէ. եւ հաստատեա ի մի հաւատ զկաթուղիկէ եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տէր եւ Աստուած. կեցո զմեզ:

Սղ. ՃԼԱ. Արի Տէր ի հանգիստ քո. դու եւ տապանակ կտակի սրբութեան քոյ:

Յիշեա Տէր զԴաւիթ եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Թ. 1:

Ունել ունէր եւ առաջինն իրաւունս պաշտաման յայնժամ զաշխարհական սրբութիւնն: Զի խորանն առաջին հանդերձեցաւ այսպէս. յորում աշտանակն եւ սեղանն եւ



հացն նուիրաց՝ որ Սրբութիւնն կոչէր. եւ յետ երկրորդ վարագուրին խորանն՝ որ կոչէր Սրբութիւն սրբութեանց: Յորում կայր բուրվառն ոսկի, եւ արկղն կտակարանաց պատեալ ներքոյ եւ արտաքոյ ոսկւով. յորում սափորն ոսկի լի մանանայիւ, եւ գաւազանն Ահարովնի՝ որ ծաղկեցաւ, եւ տախտակք կտակարանացն. եւ ի վերայ նորա քերովբէքն փառաց՝ որ հովանի ունէին ի վերայ քաւութեանն. վասն որոյ ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ: Եւ այն ամենայն իբրեւ այնպէս հանդերձեալ կայր, յառաջին խորանն յամենայն ժամ մտանէին քահանայքն զպաշտամունսն կատարել: Բայց յերկրորդն մի անգամ ի տարւոջն քահանայապետն, եւ զայն՝ ոչ առանց արեան, զոր մատուցանէր վասն իւր եւ վասն ժողովրդեանն անգիտութեան: Զայս ցուցեալ Հոգւոյն սրբոյ՝ մինչ չեւ յայտնեալ էր ճանապարհի սրբութեանցն. քանզի դեռ առաջին խորանն ունէր զհաստատութիւն, որ է առակ ժամանակին որ առաջի կայր. յորում պատարագքն եւ զոհք մատչէին, որք ոչ կարէին ըստ միտս կատարել զպաշտօնեայսն. բայց միայն կերակրովք եւ ըմպելեօք, եւ պէսպէս մկրտութեամբք՝ մարմնոյ արդարութիւնքն, որ մինչեւ ի ժամանակս ուղղութեանն ի վերայ կային: 10:

Ալէլուիա, ալէլուիա. Արի Տէր ի հանգիստ քո. դու եւ տապանակ կտակի սրբութեան քոյ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի. Գլ. Ե. 17:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ: Ամէն ասեմ ձեզ՝ մինչեւ անցցեն երկինք եւ երկիր, յովտ մի՝ որ նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինացն եւ ի մարգարէից՝ մինչեւ ամենայն եղիցի: Որ ոք լուծցէ մի ինչ ի պատուիրանացս յայսցանէ ի փոքունց, եւ ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից. իսկ որ արասցէ եւ ուսուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից: Բայց ասեմ ձեզ. զի եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն եւ զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից: 20:

---

# ՎԱՐԴԱՎԱՌ

## ՏՕՆ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

### ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

# ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

---

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ՊԵՆՏԷԿՈՍՏԷԻՆ

### ԲՁ.

Ժամամուտ. Երեւի Տէր այսօր աշակերտացն ի Թաբորական լերինն. եւ աշակերտացն զարհուրեալ աղաղակէին ասելով. Արասցուք երիս տաղաւարս, մի Տեառն, եւ մի Մովսիսի, եւ մի Եղիայի: Եւ մեք բանաւոր հօտքս երգեմք ընդ քոյ ճշմարիտ վկայիցդ. Առաքեա ի մեզ զլոյս քոյ շնորհացդ ի քո միւսանգամ գալստեանդ, եւ կեցո:

Սղ. ԺԴ. Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քում. կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո:

Որ գնայ ամբիծ, գործէ զարդարութիւն. խօսի զճշմարտութիւն ի սրտի իւրում:

Յովհաննու առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 1:

Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուաքն, որում ականատեսն իսկ եղեաք, ընդ որ հայեցաքն, եւ ձեռք մեր շօշափեցին ի վերայ բանին կենաց. եւ կեանքն յայտնեցան, եւ տեսաք եւ վկայեմք, եւ պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն, որ էր առ Հօր եւ երեւեցաւ մեզ: Զոր տեսաքն եւ լուաք, պատմեմք եւ ձեզ, զի եւ դուք հաղորդութիւն ունիցիք



մեզ, եւ մեր հաղորդութիւնն իցէ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ իւրում Յիսուսի Քրիստոսի: Եւ զայս գրեմք ձեզ, զի ձեր ուրախութիւնն կատարեալ իցէ: Եւ այս են աւետիքն՝ զոր լուաք առ ի նմանէ եւ պատմեմք ձեզ. զի Աստուած լոյս է, եւ խաւար ի նմա չիք եւ ոչ մի: Եթէ ասիցեմք եթէ հաղորդութիւն ունիմք ընդ նմա, եւ ի խաւարի շրջիցիմք, ստեմք եւ ոչ առնեմք զճշմարտութիւնն: Իսկ եթէ ընդ լոյս գնայցեմք, որպէս եւ նա լոյս է, հաղորդութիւն ունիմք ընդ միմեանս. եւ արիւնն Յիսուսի Որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Ամպ լուսաւոր հովանի լինէր նոցա. ձայն եղեւ յամպոյն որ ասէ. Դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԶ. 13:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ելեալ (Յիսուս) ի կողմանս Փիլիպպեայ Կեսարեայն, հարցանէր ցաշակերտսն եւ ասէր. Զո՞ ոք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ Որդի մարդոյ: Եւ նոքա ասեն. Ոմն զՅովհաննէս Մկրտիչ, եւ այլք զԵղիա, եւ կէսք զԵրեմիա, կամ զմի ոք ի մարգարէիցն: Ասէ ցնոսա. Իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ: Պատասխանի ետ նմա Սիմովն Պետրոս եւ ասէ. Դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ կենդանւոյ: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Երանի՛ է քեզ Սիմովն որդի Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է: Եւ ես քեզ ասեմ. զի դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, եւ դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն: Եւ տաց քեզ զփականս արքայութեան երկնից. եւ զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս: Յայնժամ սաստեաց աշակերտացն, զի մի՛ ումեք ասիցեն՝ թէ նա է Քրիստոսն: Յայնմհետէ սկսաւ Յիսուս ցուցանել աշակերտացն թէ պարտ է նմա երթալ յԵրուսաղէմ. եւ բազում չարչարանս չարչարել եւ անարգել ի քահանայապետից եւ ի դպրաց եւ ի ծերոց ժողովը-

դեանն, եւ սպանանել եւ յերիր աւուր յառնել։ Եւ առեալ
զնա մեկուսի Պետրոսի, սկսաւ կագել ընդ նմա եւ ասել.
Քա՛ւ լիցի քեզ Տէր, մի՛ եղիցի քեզ այդ։ Եւ նա դարձեալ
ի Պետրոս՝ ասէ. Երթ յետս իմ, սա՛տանայ, գայթակղու-
թիւն իմ ես. զի ոչ խորհիս դու զԱստուծոյսն, այլ զմարդ-
կան։ Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտսն իւր. Եթէ ոք
կամի զկնի իմ գալ՝ ուրասցի զանձն, եւ առցէ զխաչ իւր
եւ եկեսցէ զկնի իմ։ Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝
կորուսցէ զնա. եւ որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ
զնա։ Զի՞նչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհս ամենայն
շահեսցի, եւ զանձն իւր տուժեսցի. կամ զի՞նչ տացէ մարդ
փրկանս ընդ անձին իւրում։ Զի գալոց է Որդի մարդոյ
փառօք Հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւրովք, եւ յայն-
ժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր։ Ամէն ասեմ
ձեզ. զի իցեն ոմանք ի սոցանէ՝ որք աստ կան, որք ոչ ճաշա-
կեսցեն զմահ՝ մինչեւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ արքայու-
թեամբ իւրով։ Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս
զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս զեղբայր նորա, եւ
հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն։ Եւ այլակերպեցաւ
առաջի նոցա. եւ լուսաւորեցան երեսք նորա իբրեւ զարե-
գակն, եւ հանդերձք նորա եղեն սպիտակ իբրեւ զլոյս։
Եւ ահա երեւեցան նոցա Մովսէս եւ Եղիա՝ որ խօսէին
ընդ նմա։ Պատասխանի ետ Պետրոս եւ ասէ ցՅիսուս.
Տէ՛ր, բարւոք է մեզ աստ լինել. եթէ կամիս՝ արասցուք
երիս տաղաւարս, մի քեզ եւ մի Մովսիսի եւ մի Եղիայի։
Եւ մինչ դեռ նա խօսէր, ահա ամպ լուսաւոր հովանի
եղեւ ի վերայ նոցա. ձայն եղեւ յամպոյն եւ ասէ. Դա
է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ, դմա լուարուք։
Իբրեւ լուան աշակերտքն, անկան ի վերայ երեսաց իւրեանց
եւ երկեան յոյժ։ Եւ մատուցեալ Յիսուս բուռն եհար
զնոցանէ եւ ասէ. Յոտն կացէք եւ մի՛ երկնչիք։ Ամբարձին
զաչս իւրեանց եւ ոչ զոք տեսին, բայց միայն զՅիսուս։ Եւ
մինչ դեռ իջանէին ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա
Յիսուս եւ ասէ. Մի՛ ումեք ասիցէք զտեսիլդ զայդ՝ մինչեւ
Որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ։ Հարցին ցնա աշակերտքն
եւ ասեն. Զի՞արդ դպիրքն ասեն, եթէ Եղիայի նախ պարտ
է գալ։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա։ Եղիա գայ
եւ հաստատեսցէ զամենայն։ Այլ ասեմ ձեզ՝ զի Եղիա



եկեալ իսկ է. եւ ոչ ծանեան զնա, այլ արարին ընդ նա՝
զոր ինչ կամեցան, նոյնպէս եւ Որդի մարդոյ չարչարելոց է ի
նոցանէ։ Յայնժամ ի միտ առին աշակերտքն՝ թէ վասն
Յովհաննու Մկրտչի ասաց ցնոսա։ ԺԷ. 13։

---

## ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

## ԵՐԿՐՈՐԴ ՕՐ ՎԱՐԴԱՎԱՌԻ

### ԲԿ.

Ժամամուտ. Երեւի Տէր այսօր աշակերտացն ի Թա-
բորական լերինն. եւ աշակերտացն զարհուրեալ աղաղակէին
ասելով. Արասցուք երիս տաղաւարս, մի Տեառն, եւ մի
Մովսիսի, եւ մի Եղիայի։ Եւ մեք բանաւոր հօտքս երգեմք
ընդ քոյ ճշմարիտ վկայիցդ. Առաքեա ի մեզ զլոյս քոյ շնոր-
հացդ ի քո միւսանգամ գալստեանդ, եւ կեցո։

ՍՂ. ՂԸ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր
պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է։
Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին
ի քերոբէս. սասանեցաւ երկիր։

Յովհաննու առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է
ընթերցուածս. ԳԼ. Ե. 9։

Սի՛րելիք, եթէ զմարդկան ինչ վկայութիւն ունիցիմք,
ապաքէն Աստուծոյ վկայութիւնն մեծ իցէ։ Այս է վկայու-
թիւնն Աստուծոյ, զի վկայեաց ի վերայ Որդւոյն իւրոյ։ Որ
հաւատայ յՈրդին Աստուծոյ, ունի յանձին զվկայութիւնս
զայս. որ ոչ հաւատայ Որդւոյ Աստուծոյ, սուտ առնէ զնա.
քանզի ոչ հաւատայ վկայութեանն զոր վկայեաց Աստուած
ի վերայ Որդւոյն իւրոյ։ Եւ այս իսկ է վկայութիւնն, զի
կեանս յաւիտենականս ետ մեզ Աստուած. եւ այս են կեանք՝
որ յՈրդին նորա են։ Որ ընդունի զՈրդին, ընդունի եւ զկեանս,
եւ որ ոչ ընդունի զՈրդին Աստուծոյ, եւ ոչ զկեանս ընդ-
ունի։ 12։

Ալէլուիա, ալէլուիա. Բարձրութիւնք լերանց նորա
են. նորա է ծով, եւ նա արար զնա. եւ զցամաք ձեռք նորա
ստեղծին։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ա. 1:

Ի Հօրէն լուսոյ.

Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն: Նա էր ի սկզբանէ առ Աստուած: Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ՝ որ ինչ եղեւն: Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան. եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւոր էր, եւ խաւար նմա ոչ եղեւ հասու: Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս: Սա եկն ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վասն լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն նովաւ: Ոչ էր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն: Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ: Յաշխարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ, եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ: Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան: Իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նորա: Ոյք ոչ յարենէ եւ ոչ ի կամաց մարմնոյ եւ ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան: Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ. եւ տեսաք զփառս նորա՝ զփառս իբրեւ զմիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ: Յովհաննէս վկայէ վասն նորա, աղաղակեաց եւ ասէ. Սա է զորմէ ասէի, որ զկնի իմ գալոցն էր, առաջի իմ եղեւ, զի նախ քան զիս էր: Զի ի լրութենէ անտի նորա՝ մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնորհաց: Զի օրէնքն ի ձեռն Մովսիսի տուան. շնորհքն եւ ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն: 17:

---

## ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

## ԵՐՐՈՐԴ ՕՐ ՎԱՐԴԱՎԱՌԻ

### ԳԶ.

Ժամամուտ. Երեւի Տէր այսօր աշակերտացն ի Թաբորական լերինն. եւ աշակերտացն զարհուրեալ աղաղակէին ասելով. Արասցուք երիս տաղաւարս, մի Տեառն, եւ մի Մովսիսի, եւ մի Եղիայի: Եւ մեք բանաւոր հօտքս երգեմք



ընդ քոյ ճշմարիտ վկայիցդ. Առաքեա ի մեզ զլոյս քոյ շնորհացդ ի քո միւսանգամ գալստեանդ, եւ կեցո:

Սղ. ՃԼԲ. Որպէս ցօղ զի ցօղէ յԱհերմոնէ՝ ի վերայ լերին Սիովնի:

Զի բարի կամ զի վայելուչ. զի բնակեն եղբարք ի միասին:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. ԺԲ. 18:

Զի ոչ էք մատուցեալ առ լեառն շօշափելի՝ որ հրովն վառեալ էր եւ միգով եւ մառախղով եւ խաւարաւ եւ մթով. ուր փողն հնչէր եւ բարբառ պատգամացն. ուստի՝ որք լուանն, հրաժարեցին, զի մի կրկնեսցի առ նոսա բանն: Քանզի ոչ հանդարտէին հրամանին. Թէպէտ եւ գազան մերձենայր ի լեառն՝ քարկոծ լինէր: Եւ այնպէս ահագին էր տեսիլն, զի եւ Մովսէս ասէր՝ թէ Զահի հարեալ եմ եւ դողամ: Այլ մատուցեալ էք ի Սիովն լեառն եւ ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ՝ յԵրուսաղէմ յերկինս, եւ ի բիւրաւոր բանակս հրեշտակաց, եւ յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս, եւ առ դատաւորն ամենեցուն Աստուած, եւ յոգիս արդարոց կատարելոց. եւ ի նորոց կտակարանաց միջնորդն Յիսուս, եւ ի հեղումն արեան նորա՝ որ առաւել խօսի քան զԱբելին: Զգոյշ լերուք, գուցէ հրաժարիցէք յայնմանէ՝ որ խօսեցաւն. զի եթէ նոքա ոչ կարացին զերծանել հրաժարեալք յայնմանէ՝ որ յերկրին հրաման տայր, որչափ եւս առաւել մեք, եթէ յերկնաւորէն թիկունս դարձուցանիցեմք: Որոյ ձայնն զերկիր շարժեաց յայնժամ, եւ այժմ խոստացեալ է եւ ասէ. Միւսանգամ շարժեցից ոչ միայն զերկիր, այլ եւ զերկինս: Այլ միւսանգամն յայտ առնէ զշարժելոցն իբրեւ զեղելոց փոփոխումն, զի հաստատուն կացցեն անշարժքն: 27:

Ալէլուիա, ալէլուիա. Քո են երկինք եւ քո է երկիր. զաշխարհս լրիւ իւրով դու հաստատեցեր: Զհիւսիս եւ զհարաւ դու արարեր. Թաբոր եւ Հերմոն յանուն քո ցընծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Թ. 27:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Բայց արդարեւ ասեմ ձեզ, եթէ են ոմանք ի դոցանէ
որ այդր կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ՝ մինչեւ տեսցեն
զարքայութիւն Աստուծոյ: Եւ եղեւ յետ այսց բանից իբրեւ
աւուրք ութ, առեալ զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅով-
հաննէս՝ ել ի լեառն կալ յաղօթս: Եւ ի կալ նմա յաղօթս՝
եղեւ տեսիլ երեսաց նորա այլակերպ. եւ փոխեցաւ հանդերձ
նորա եւ եղեւ սպիտակ փայլուն: Եւ ահա արք երկու խօսէին
ընդ նմա, որ էին Մովսէս եւ Եղիա, երեւեալ փառօք. եւ
ասէին զելիցն նորա՝ զոր կատարելոց էր յԵրուսաղէմ: Իսկ
Պետրոս եւ որ ընդ նմայն էին՝ ծանրացեալք ի քնոյ զար-
թեան, տեսին զփառսն նորա եւ զերկուս արսն որ կային առ
նմա: Եւ եղեւ ի մեկնելն նոցա ի նմանէ, ասէ Պետրոս ցՅի-
սուս. Վարդապետ, բարւոք է մեզ աստ լինել, եւ արասցուք
երիս տաղաւարս, մի քեզ եւ մի Մովսիսի եւ մի Եղիայի.
եւ ոչ գիտէր զինչ խօսէր: Եւ իբրեւ զայս ասաց, եկն ամպ
եւ հովանի եղեւ ի վերայ նոցա. եւ երկեան ի մտանելն նոցա
ընդ ամպովն: Զայն եղեւ յամպոյն եւ ասէ. Դա է Որդի իմ
ընտրեալ, դմա լուարուք: Եւ ընդ լինել բարբառոյն՝ գտաւ
Յիսուս միայն. եւ ինքեանք լռեցին, եւ ոչ ումեք պատմեցին
յաւուրսն յայնոսիկ եւ ոչ ինչ՝ յորոց տեսինն: 36:

---

## ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Գ.Կ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղա-
ղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ
աղաչեմք:

Սղ. 2Ե. Կեցո զծառայս քո Աստուած իմ. որ ի քեզ
յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանա-
պազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր
համբարձի զանձն իմ:



Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է
ընթերցուածս. Գլ. Ա. 1:

Պօղոս կոչեցեալ առաքեալ Յիսուսի Քրիստոսի կա-
մօքն Աստուծոյ, եւ Սոսթենէս եղբայր. եկեղեցւոյդ Աստու-
ծոյ՝ որ է ի Կորնթոս, նուիրելոց ի Քրիստոս Յիսուս, կոչե-
ցելոց սրբոց, ամենեքումբք հանդերձ՝ որ կարդան զանուն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յամենայն տեղիս նոցա եւ
մեր: Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ
մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ: Գոհանամ զԱս-
տուծոյ իմոյ յամենայն ժամ վասն ձեր ի վերայ շնորհացն
Աստուծոյ՝ որ տուեալ են ձեզ ի Քրիստոս Յիսուս: Զի
յամենայնի մեծացարուք դուք նովաւ, ամենայն բանիւ եւ
ամենայն գիտութեամբ. որպէս վկայութիւնն իսկ Աստուծոյ
հաստատեցաւ ի ձեզ: Զի դուք մի՛ նուազիցիք եւ մի՛ իւիք
շնորհօք, ակնկալեալ յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի. որ եւ հաստատեսցէ զձեզ մինչեւ ի կատարած
անարատս յօր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Հաւա-
տարիմ է Աստուած, որով կոչեցարուք ի հաղորդութիւն
Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ: 9:

Ալէլուիա, ալէլուիա. Ողորմեա ինձ Տէր, զի հիւանդ
եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԷ. 21:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ մինչ դեռ շրջէին նոքա ի Գալիլեա՝ ասէ ցնոսա
(Յիսուս.) Մատնելոց է Որդի մարդոյ ի ձեռս մարդկան, եւ
սպանցեն զնա, եւ յերիր աւուր յարիցէ. եւ տրտմեցան
յոյժ: Իբրեւ եկին նոքա ի Կափառնաում, մատեան որ զերկ-
դրամեանն պահանջէին՝ առ Պետրոս եւ ասեն. Վարդապետն
ձեր ո՞չ տայ զերկդրամեանն: Եւ նա ասէ. Այո՛: Եւ իբրեւ
եմուտ ի տուն՝ յառաջեաց քան զնա Յիսուս եւ ասէ.
Զիա՞րդ թուի քեզ, Սի՛մովն. թագաւորք ազգաց յումէ՞ առ-
նուն զհարկս կամ զհասն, յորդւո՞ց իւրեանց՝ թէ յօտարաց:
Եւ իբրեւ ասաց՝ թէ Յօտարաց, ասէ ցնա Յիսուս. Ապա

ուրեմն ազատ են որդիքն: Բայց զի մի՛ գայթակղեցուսցուք զնոսա, երթ ի ծով եւ ընկեա կարթ, եւ զառաջին ձուկն որ ելանիցէ՝ առ եւ բաց զբերան նորա, եւ գտանիցես սատեր. եւ զայն առեալ տացես նոցա ընդ իմ եւ ընդ քո: 26:

---

## ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### ԴԶ.

### Սրբոյն Եսայեայ մարգարէին:

Ժամամուտ. Տէր որ հիմնեցուցեր զեկեղեցի քո ի վերայ վիմին հաւատով. եւ կարգեցեր ի սմա առաքեալս եւ մարգարէս, հովիւս եւ վարդապետս՝ առ ի հաստատութիւն սրբոց. եւ ճգնութեամբ վկայից զթշնամին սորա վանեցեր. ի խաղաղութեան զսա պահեա, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ԿԷ. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Յարիցէ Աստուած եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. ԺԱ. 32:

Եւ արդ զի՞նչ եւս ասացից. զի չէ բաւական ժամանակս պատմելոյ վասն Գեդէոնի, Բարակայ, Սամփսոնի, Յեփթայայ, Դաւթի եւ Սամուէլի եւ այլոց մարգարէիցն. որք հաւատովք պարտեցին զթագաւորութիւնս, գործեցին զարդարութիւն, հասին աւետեաց, խցին զբերանս առիւծուց, շիջուցին զզօրութիւն հրոյ, ապրեցան ի բերանոյ սրոյ, զօրացան ի տկարութենէ, եղեն զօրաւորք ի պատերազմի, առին զբանակս օտարաց: Ընկալան կանայք ի յարութենէ զմեռեալս իւրեանց. կէսք կոշկոճեցան, եւ չեւ եւս ընկալան զփրկութիւն, զի լաւագոյն յարութեանն հասանիցեն: Եւ կէսք զտանջանաց եւ զգանից զփորձ առին, զկապանաց եւ զբանտից: Քարկոծեցան, սղոցեցան, փորձեցան, սպանմամբ սրոյ մեռան, շրջեցան լեշկմաշկօք եւ մորթովք



այծենեօք. կարօտեալք, նեղեալք, չարչարեալք: Զորս ոչ արժէ աշխարհս, յանապատի մոլորեալք եւ ի լերինս եւ յայրս եւ ի փապարս երկրի: Եւ սոքա ամենեքին վկայեալք ի հաւատոցն, չեւ եւս ընկալան զաւետիսն, Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատարեսցին: 40:

Ալէլուիա, ալէլուիա. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Դ. 14:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ դարձաւ (Յիսուս) զօրութեամբ Հոգւոյն ի Գալիլեա. եւ ել համբաւ զնմանէ ընդ ամենայն կողմանս գաւառին: Եւ նա ուսուցանէր ի ժողովուրդս նոցա փառաւորեալ յամենեցունց: Եւ եկն ի Նազարէթ՝ ուր սնեալն էր. եւ եմուտ ըստ սովորութեան իւրում յաւուր շաբաթու ի ժողովուրդն: Եւ ետուն նմա գիրս զԵսայեայ մարգարէի, եւ յարեաւ ընթեռնուլ. եւ իբրեւ եբաց զգիրսն՝ եգիտ զայն տեղի յորում գրեալն էր. Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ եւ օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւ. քարոզել գերեաց զթողութիւն, եւ կուրաց տեսանել, արձակել զվիրաւորս ի թողութիւն, քարոզել զտարեկան Տեառն ընդունելի: Եւ խփեալ զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն, եւ նստաւ. եւ ամենեցուն որ ի ժողովըրդեանն էին աչք՝ ի նա հայէին: Եւ սկսաւ ասել ցնոսա. Այսօր լցան գիրքս այս յականջս ձեր: Եւ ամենեքին վկայէին նմա, եւ զարմանային ընդ բանս շնորհացն՝ որ ելանէին ի բերանոյ նորա: 22:

---

## ՈՒՐԲԱԹ

### ԴԿ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 10:

Աղաչեմ զձեզ, եղբարք, անուամբն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի զնոյն բան ունիցիք ամենեքեան, եւ մի՛ իցեն ի ձեզ հերձուածք. քանզի էիք հաստատեալք ի նոյն միտս եւ ի նոյն հանճար: Ազդ եղեւ ինձ վասն ձեր, եղբարք, ի Քղուացւոց անտի, թէ հակառակութիւնք են ի ձեզ: Եւ արդ ասեմ իսկ, եթէ իւրաքանչիւր ոք ի ձէնջ ասէ. Ես Պօղոսեան եմ, եւ միւսն՝ եթէ ես Ապողոսեան, եւ միւսն՝ եթէ ես Կեփայեան, եւ միւսն՝ եթէ ես Քրիստոսեան: Իսկ արդ բաժանեալ ի՞նչ իցէ Քրիստոս. միթէ Պօղո՞ս ի խաչ ելեալ իցէ վասն ձեր, կամ յանուն Պօղոսի՞ մկրտեցարուք: Գոհանամ զԱստուծոյ իմոյ՝ զի ոչ զոք ի ձէնջ մկրտեցի, բայց միայն զԿրիսպոս եւ զԳայիոս. զի մի՛ ոք ասիցէ թէ յիմ անուն մկրտեցարուք: Տալ ետու կնիք եւ տանն Ստեփանեայ. զայլ ոք ոչ գիտեմ ամենեւին թէ մկրտեցի: Զի ոչ առաքեաց զիս Քրիստոս մկրտել, այլ աւետարանել. ոչ ճարտարութեամբ բանից, զի մի՛ ընդունայն լիցի խաչն Քրիստոսի: Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է. այլ փրկելոցս մեզ՝ զօրութիւն Աստուծոյ: Զի գրեալ է. Կորուսից զիմաստութիւն իմաստնոց, եւ զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից: Ո՞ւր իմաստուն, ո՛ւր դպիր, ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ. ո՞չ ապաքէն յիմարեցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ: Քանզի իմաստութեամբն Աստուծոյ՝ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութեամբն զԱստուած. հաճեցաւ Աստուած յիմարութեամբ քարոզութեանն ապրեցուցանել զհաւատացեալս: 21:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ:



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԸ. 1:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յայնմ աւուր մատեան աշակերտքն (առ Յիսուս) եւ ասեն. Ո՞վ իցէ ի մէնջ մեծ յարքայութեան երկնից: Եւ կոչեաց առ ինքն Յիսուս մանուկ մի, կացոյց զնա ի մէջ նոցա, եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ դարձջիք եւ եղիջիք իբրեւ զմանկտի, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից: Արդ՝ որ խոնարհեցուցանէ զանձն իբրեւ զմանուկս զայս, նա է մեծ յարքայութեան երկնից: Եւ որ ոք ընկալցի մանուկ մի այսպիսի յանուն իմ, զիս ընդունի: Եւ որ ոք գայթակղեցուսցէ զմի ի փոքրկանցս յայսցանէ յիս հաւատացելոց, լաւ է նմա եթէ կախիցի երկան իշոյ ընդ պարանոց նորա եւ ընկղմեսցի ի խորս ծովու: Վա՛յ աշխարհի ի գայթակղութեանց. հարկ է գալ գայթակղութեանց, բայց վա՛յ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն: Եթէ ձեռն քո կամ ոտն գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա եւ ընկեա ի քէն. լաւ իցէ քեզ միաձեռանի կամ կաղ մտանել ի կեանս, քան թէ երկուս ձեռս եւ երկուս ոտս ունիցիս, եւ անկանիցիս ի հուրն յաւիտենից: Եւ եթէ ակն քո գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա եւ ընկեա ի քէն. լաւ իցէ քեզ միականի մտանել ի կեանս, քան երկուս աչս ունել, եւ անկանել ի գեհեն հրոյն: 9:

---

## ՇԱԲԱԹ

### ԱՁ.

### Սրբոյն Թադէոսի առաքելոյն եւ Սանդխտոյ կուսին:

Ժամամուտ. Առաքեալք եւ վկայք Քրիստոսի Աստուծոյ. ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդէգրութիւն կենաց կոչելով՝ միասնական սուրբ Երրորդութեանն յորդորեցին երգել փառս յաւիտեանս. ամէն:

Սղ. ԺԸ. Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա. եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա:

Երկինք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն:

Պօղոսի առաքելոյն Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս: Գլ. ԺԲ. 28:

Եւ զորս եդ Աստուած յեկեղեցւոջ՝ այս են. նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ զվարդապետս, ապա զօրութիւնս, ապա շնորհս բժշկութեանց. օգնութիւնս, վարիչս, ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց: Միթէ ամենեքին առաքեալք իցեն. միթէ ամենեքին մարգարէք իցեն. միթէ ամենեքին վարդապետք իցեն. միթէ ամենեքին զօրութիւնք իցեն. միթէ ամենեքին շնորհս բժշկութեան ունիցին. միթէ ամենեքին ի լեզուս խօսիցին. միթէ ամենեքին թարգմանիցեն: Բայց նախանձաւորք լերուք շնորհացն՝ որ լաւն են: Այլ ես առաւել եւս ճանապարհ ցուցանեմ ձեզ: Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ եւ զհրեշտակաց, եւ սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ զպղինձ՝ որ հնչէ, կամ իբրեւ զծնծղայս՝ որ զօղանջեն: Եւ եթէ ունիցիմ մարգարէութիւն, եւ գիտիցեմ զխորհուրդս ամենայն եւ զամենայն գիտութիւն, եւ եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչեւ զլերինս փոփոխելոյ, եւ սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ: Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, եւ մատնիցեմ զմարմինս իմ յայրումն, եւ սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ: Սէր երկայնամիտ է, քաղցրանայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճէ, ոչ հպարտանայ. ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւր, ոչ գրգռի, ոչ խորհի չար. ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն: Ամենայնի տեւէ, ամենայնի հաւատայ, ամենեւին յուսայ, ամենայնի համբերէ: Սէր ոչ երբեք անկանի. եթէ մարգարէութիւնք են՝ խափանեսցին. եթէ լեզուք՝ լռեսցեն. եթէ գիտութիւնք՝ խափանեսցին: Քանզի փոքր ի շատէ գիտեմք, եւ փոքր ի շատէ մարգարէանամք. Այլ յորժամ եկեսցէ կատարումն, փոքր ի շատէս խափանեսցի: ԺԳ. 10:

Ալէլուիա, ալէլուիա. Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա. եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա:



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Թ. 1:

Տերն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն, ետ նոցա զօրութիւն եւ իշխանութիւն ի վերայ ամենայն դիւաց. եւ բժշկել զհիւանդութիւնս: Եւ առաքեաց զնոսա քարոզել զարքայութիւնն Աստուծոյ, եւ բժշկել զախտաժէտս: Եւ ասէ ցնոսա. Մի՛ ինչ բառնայք ի ճանապարհ. մի՛ գաւազան եւ մի՛ մախաղ, մի՛ հաց եւ մի՛ արծաթ. մի՛ երկուս հանդերձս ունիցիք: Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ ագջիք, եւ անտի գնայցէք: Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յորժամ ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ՝ զփոշի ոտից ձերոց թօթափեսջիք ի վկայութիւն նոցա: Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս եւ ընդ գեօղս, աւետարանէին եւ բժշկէին ընդ ամենայն տեղիս: 6:

---

## ԱՌԱՋԻՆ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

### ԱԿ.

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. ԿԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 22:

Իսկ որովհետեւ հրեայք նշան հայցեն, եւ հեթանոսք իմաստութիւն խնդրեն. մեք քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս, Հրէից գայթագղութիւն եւ հեթանոսաց յիմարու-

թիւն. բայց նոցին իսկ կոչեցելոցն Հրէից եւ հեթանոսաց, զՔրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն։ Զի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ, եւ տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ։ Թէպէտ եւ զձեր իսկ կոչումնդ տեսէք, եղբարք, զի ոչ բազում իմաստունք ըստ մարմնոյ, եւ ոչ բազում հզօրք, եւ ոչ բազում ազնուականք։ Այլ զյիմարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զիմաստունս. եւ զտկարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զհզօրս. եւ զանտոհմս աշխարհի եւ զարհամարհեալս ընտրեաց Աստուած եւ զոչինչսն, զի զէսն իմն խափանեսցէ. որպէս զի մի՛ պարծեսցի ամենայն մարմին առաջի Աստուծոյ։ Զի ի նմանէ դուք էք ի Քրիստոս Յիսուս, որ եղեւ մեզ իմաստութիւն յԱստուծոյ, արդարութիւն եւ սրբութիւն եւ փրկութիւն. զի որպէս եւ գրեալ է. Որ պարծին՝ ի Տէր պարծեսցի։ Եւ ես թէպէտ եւ եկի առ ձեզ, եղբարք, ոչ ըստ առաւելութեան ինչ բանից իմաստութեան պատմել ձեզ զվկայութիւն Աստուծոյ. զի ոչ եթէ ի մտի եդի գիտել ինչ ի ձեզ՝ բայց միայն զՅիսուս Քրիստոս, եւ զնոյն ի խաչ ելեալ։ Եւ ես տկարութեամբ եւ երկիւղիւ եւ դողութեամբ բազմաւ եղէ առ ձեզ. եւ բանն իմ եւ քարոզութիւն, ոչ պատիր բանիւք իմաստութեան, այլ արդեամբք Հոգւոյն եւ զօրութեամբ. զի հաւատք ձեր մի՛ իցեն իմաստութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աստուծոյ։ Բ. 5։

Ալէլուիա, ալէլուիա. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԸ. 10.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զգոյշ լերուք՝ մի արհամարհիցէք զմի ի փոքրկանցս յայսցանէ. ասեմ ձեզ, զի հրեշտակք նոցա յերկինս հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ՝ որ յերկինս է։ Զի եկն Որդի մարդոյ կեցուցանել զկորուսեալն։ Զիա՞րդ թուի ձեզ, եթէ լինիցի մարդոյ հարիւր ոչխար, եւ մոլորիցի մի ի նոցանէ, ո՞չ թողուցու զիննսուն եւ զինն ոչխարն ի լերինս, եւ երթիցէ



խնդրիցէ զմոլորեալն։ Եւ եթէ լինիցի գտանել զնա, ամէն ասեմ ձեզ, զի ուրախ լինի ի վերայ նորա առաւել՝ քան ի վերայ իննսուն եւ ինունցն, որ չիցեն մոլորեալ։ Այսպէս ոչ են կամք առաջի Հօր իմոյ որ յերկինս է՝ եթէ կորիցէ մի ի փոքրկանցս յայսցանէ։ 14։

---

## ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

ԲՁ.

### Սրբոյն Ծուշանայ դստեր մեծին վարդանայ:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր։

Սղ. ՃԻԳ. Օգնութիւն է մեզ յանուանէ Տեառն. որ արար զերկինս եւ զերկիր։

Եթէ ոչ Տէր էր առ մեզ. ասասցէ Իսրայէլ. եթէ ոչ Տէր էր առ մեզ։

Յովհաննու առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 2։

Սիրելիք, այժմ որդիք Աստուծոյ եմք. եւ չեւ եւս է յայտ եթէ զինչ լինելոց իցեմք։ Գիտեմք զի յորժամ նա յայտնեսցի, նման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա, որպէս եւ էն։ Եւ ամենայն որ ունի զայս յոյս յանձին՝ սրբէ զանձն իւր, որպէս եւ նայն սուրբ է։ Ամենայն որ զմեղս գործէ, նա եւ զանօրէնութիւն առնէ. եւ ինքն իսկ մեղքն անօրէնութիւն է։ Եւ գիտեմք զի նա յայն սակս յայտնեցաւ, զի զմեղս բարձցէ, եւ ի նմա մեղք ոչ են։ Ամենայն որ ի նմա է հաստատեալ՝ ոչ մեղանչէ. եւ ամենայն որ մեղանչէ, ոչ ետես զնա եւ ոչ ծանեաւ զնա։ Մանկունք, մի՛ ոք զձեզ խաբեսցէ. որ առնէ զարդարութիւն՝ արդար է, որպէս եւ նայն արդար է։ Եւ որ առնէ զմեղս՝ ի սատանայէ է, զի ի սկզբանէ սատանայ մեղանչէ. վասն այսորիկ յայտնեցաւ Որդին

Աստուծոյ, զի լուծցէ զգործս սատանայի: Ամենայն որ յԱստուծոյ է ծնեալ՝ մեղս ոչ առնէ, զի սերմն նորա ի սմա մնայ. եւ ոչ կարէ մեղանչել, զի յԱստուծոյ է ծնեալ: 9:

Ալէլուիա, ալէլուիա. Պարծեսցին սուրբքն փառօք եւ ցնծասցեն ի հանգիստս իւրեանց. եւ բարձր արասցեն զԱստուած բերանովք իւրեանց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ը. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ եղեւ յետ այնորիկ եւ ինքն շրջէր ընդ քաղաքս եւ ընդ գեօղս, քարոզէր եւ աւետարանէր զարքայութիւնն Աստուծոյ. եւ երկոտասանքն ընդ նմա: Եւ կանայք ոմանք՝ որ բժշկեալ էին յայսոց չարաց եւ ի հիւանդութենէ. Մարիամ՝ որ կոչէր Մագդաղենացի, յորմէ եօթն դեւն ելեալ էր. եւ Յովհաննա կին Քուզայ՝ հազարապետին Հերովդի. եւ Շուշան եւ այլք բազումք. որք պաշտէին զնա յընչից իւրեանց: 3:

---

## ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԲԿ.

**Սրբոյն Կիպրիանոսի եպիսկոպոսին եւ Յուստիանեայ կուսին:**

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Գ. 13:

Քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք. զի գրեալ է, թէ Անիծեալ է ամենայն՝



որ կախեալ կայցէ զփայտէ: Զի ի հեթանոսս օրհնութիւնն Աբրահամու եղիցի ի Քրիստոս Յիսուս. զի մեք զաւետիս Հոգւոյն սրբոյ առցուք հաւատովք: Ըստ մարդկութեան ասեմ, եղբարք. ապաքէն զմարդկան հաստատեալ կտակ ոչ ոք կարէ անարգել, եւ ոչ այլ հրաման ի վերայ այնր տալ: Իսկ Աբրահամու խոստացան աւետիքն, եւ զաւակի նորա. եւ ոչ ասէ՝ զաւակաց՝ իբրեւ բազմաց, այլ իբրեւ զմիոյ, թէ եւ զաւակի քում, որ է Քրիստոս: Բայց զայս ասեմ, զկտակն յառաջագոյն հաստատեալ յԱստուծոյ ի Քրիստոս, օրէնքն որ յետ չորեքհարիւր եւ երեսուն ամի եդան՝ ոչ կարեն խախտել առ ի խափանելոյ զաւետիսն: Եթէ յօրինաց անտի է ժառանգութիւն, ապա ոչ եւս յաւետեացն. բայց Աբրահամու աւետեօք շնորհեաց Աստուած: Իսկ զի՞նչ իցեն օրէնք. յանցուածոց վասն յաւելան. մինչեւ եկեսցէ զաւակն, որում խոստացեալն էր՝ կարգեալ հրեշտակօք ի ձեռն միջնորդի: Իսկ միջնորդ միոյ ուրուք ոչ է, բայց Աստուած մի է: Իսկ արդ օրէնքն հակառա՞կ ինչ իցեն աւետեացն Աստուծոյ. քա՛ւ լիցի. զի եթէ տուեալ էին օրէնքն՝ որ կարող էին կենդանի առնել, ապա հաստատ յօրինաց անտի էր արդարութիւն: Այլ փակեցին գիրք զամենեսեան ընդ մեղօք, զի աւետիքն ի հաւատոց անտի Յիսուսի Քրիստոսի տացին հաւատացելոց: 22:

Ալէլուիա, ալէլուիա. Կարդացին արդարքն առ Տէր, եւ Տէր լուաւ նոցա. եւ յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԵ. 1:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք եւ մեղաւորք՝ լսել ի նմանէ: Տրտնջէին փարիսեցիքն եւ դպիրք եւ ասէին. Ընդէ՞ր սա զմեղաւորս ընդունի եւ ուտէ ընդ նոսա: Ասաց առ նոսա զառակս զայս. Ո՞վ ոք իցէ ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարիւր ոչխար, եւ կորուսանիցէ մի ի նոցանէ. ո՞չ թողուցու զիննսուն եւ զինն յանապատին, եւ երթիցէ զհետ կորուսելոյն՝ մինչեւ գտանիցէ զնա: Եւ իբրեւ

գտանէ, դնէ զնա ի վերայ ուսոց իւրոց խնդալով, եւ երթեալ ի տուն, կոչէ զբարեկամս եւ զդրացիս, եւ ասէ ցնոսա. Ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարս իմ զկորուսեալ: Ասեմ ձեզ. զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ, քան վասն իննսուն եւ ինն արդարոց՝ որոց չիցէ պիտոյ ապաշխարութիւն: Կամ ո՞վ իցէ կին, որոյ իցեն դրամք տասն. եւ եթէ կորուսանիցէ դրամ մի, ո՞չ լուցանիցէ ճրագ, եւ ածիցէ աւել ի տան եւ խնդրիցէ ստէպ՝ մինչեւ գտանիցէ: Եւ իբրեւ գտանէ, կոչէ զբարեկամս եւ զդրացիս եւ ասէ. Ուրախ լերուք ընդ իս, զի գտի զդրամն իմ զոր կորուսի: Այնպէս՝ ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ի վերայ միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ: 10:

---

## ԱՌԱՋԻՆ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԳՉ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. 2Ե. Կեցո զծառայս քո Աստուած իմ. որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 10:

Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն իւրով. զի Հոգին զամենայն քննէ եւ զխորս Աստուծոյ: Զի ո՛ ոք ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն, եթէ ոչ հոգի մարդոյն՝ որ ի նմա. նոյնպէս եւ ոչ զԱստուածոյսն ոք գիտէ՝ եթէ ոչ Հոգին Աստուծոյ: Այլ մեք ոչ եթէ զհոգի աշխարհիս առաք, այլ զհոգին՝ որ յԱստուծոյ. զի ծանիցուք զայն՝ որ յԱստուծոյն շնորհեցաւ մեզ: Եւ զոր խօսիմքս՝ ոչ եթէ մարդկեղէն ուսմամբ ճարտարութեամբ բանից, այլ վարդապետութեամբ Հոգւոյն ընդ հոգեւորս զհոգեւորն համեմատեմք: Քանզի շնչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա. եւ ոչ կարէ գիտել՝ թէ հոգեպէս քննիցի: Իսկ հոգեւորն քննէ զամենայն, եւ ինքն յումեքէ ոչ քննի: Իսկ արդ ո՞վ գիտաց զմիտս Տեառն, որ եւ խրատատու լինիցի նմա. այլ մեք զմիտս Քրիստոսի ունիմք: Եւ ես, եղբարք, ոչ կարացի խօսել ընդ ձեզ իբրեւ ընդ հոգեւորս, այլ իբրեւ ընդ մարմնաւորս: Իբրեւ տղայոց ի Քրիստոս կաթն ջամբեցի ձեզ, եւ ոչ հաստատուն կերակուր, զի ոչ եւս կարէիք. նա եւ արդ իսկ ոչ կարէք զի դեռ մարմնաւոր էք: Ուր եւ արդ են իսկ ի ձեզ հեռ եւ նախանձ. ո՞չ ապաքէն մարմնաւոր էք եւ ըստ մարդկան գնայք: Յորժամ ասէ ոք ի ձէնջ. Ես Պօղոսեան եմ, եւ միւն՝ եթէ Ես Ապողոսեան, ո՞չ մարդիկ էք. իսկ արդ ո՞վ է Պօղոսն, կամ ո՞վ է Ապողոս: Պաշտօնեայք՝ որովք հաւատացէքն, եւ իւրաքանչիւր որպէս եւ Տէր ետ: Ես տնկեցի, Ապողոս ջուր ետ, այլ Աստուած աճեցոյց: Այսուհետեւ ոչ այն ոք ինչ է՝ որ տնկեացն, եւ ոչ այն՝ որ զջուրն ետ. այլ որ աճեցոյցն Աստուած: Որ տնկեացն եւ որ զջուրն ետ՝ մի են. բայց իւրաքանչիւր ոք զիւր վարձս առնուցու ըստ իւրում վաստակոց: Զի Աստուծոյ գործակից եմք, Աստուծոյ արդիւն էք, Աստուծոյ շինած էք: Ըստ շնորհացն Աստուծոյ՝ որ տուեալ են ինձ, իբրեւ իմաստուն ճարտարապետ հիմն եդի. բայց ա՛յլ է՝ որ շինէն. այլ իւրաքանչիւր ոք զգոյշ լիցի՝ թէ ո՛րպէս շինիցի: Զի հիմն այլ ոք ոչ կարէ դնել՝ քան զեդեալն, որ է Յիսուս Քրիստոս: Գ. 11:

Ալէլուիա, ալէլուիա. Վասն անուան քոյ Տէր քաւեա զմեղս իմ. զի բազում եղեն յոյժ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԸ. 15:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա զնա՝ յորժամ դու եւ նա միայն իցէք: Եթէ լուիցէ քեզ, շահեցար զեղբայր քո. ապա թէ ոչ լուիցէ քեզ, առ ընդ

քեզ միւս եւս կամ երկուս. զի ի բերանոյ երկուց եւ երից վկայից հաստատեսցի ամենայն բան: Իսկ եթէ նոցա ոչ լուիցէ, ասասջելը յեկեղեցւոջ. ապա թէ եւ եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրեւ գհեթանոսն եւ զմաքսաւոր: Ամէն ասեմ ձեզ. զի զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս: Դարձեալ ասեմ ձեզ. եթէ երկու ի ձէնջ միաբանիցեն յերկրի վասն ամենայն իրաց, զինչ եւ խնդրիցեն՝ եղիցի նոցա ի Հօրէ իմմէ որ յերկինսն է: Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա: Յայնժամ մատեաւ առ նա պետրոս եւ ասէ. Տէր, քանի՞ցս անգամ եթէ մեղեցէ ինձ եղբայր իմ, եւ թողից նմա. մինչեւ ցեօթն անգամ: Ասէ ցնա Յիսուս. Ոչ ասեմ քեզ՝ թէ մինչեւ յեօթն անգամ, այլ մինչեւ յեօթանասնեկին եօթն: 22:

---

## ԱՌԱՋԻՆ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Գ·Ի·

**Սրբոց Խե վկայիցն: եւ սրբոց կուսանացն եւփիմեայ եւ Քրիստինեայ:**

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Ստուած. որպէս մարդասէր:

Սղ· Խդ· Տալցին թագաւորի կուսանք զհետ նորա. եւ զընկերս նորա տալցին նմա:

Ի՞ղեսեաց սիրտ իմ բան բարի. եւ ասեմ զգործս իմ թագաւորի:

**Պօղոսի առաքելոյն ի կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս.** Գլ· Դ· 6:

Զի Ստուած՝ որ ասաց ի խաւարի լոյս ծագել, որ եւ ծագեաց իսկ ի սիրտս մեր ի լուսաւորութիւն գիտութեան փառացն Ստուծոյ ի դէմս Յիսուսի Քրիստոսի: Եւ



հետեւ ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս, զի առաւելութիւն զօրութեանն իցէ Աստուծոյ, եւ ոչ ի մէնջ: Յամենայնի նեղեալք, այլ ոչ նուաղեալք. կարօտեալք, այլ ոչ տարակուսեալք. հալածեալք, այլ ոչ լքեալք. չարչարեալք, այլ ոչ սատակեալք: Յամենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմինս մեր կրեսցուք, զի եւ կեանքն Յիսուսի ի մարմինս մեր յայտնեսցին: Վասնզի միշտ մեք՝ որ կենդանիքս եմք, ի մահ մատնիմք վասն Յիսուսի, զի եւ կեանքն Յիսուսի յայտնի լիցին ի մահկանացու մարմինս մեր: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Ուրախ լիցին ամենեքեան որք յուսացեալ են ի քեզ. յաւիտեան ցնծասցեն, եւ բնակեսցես դու ի նոսա:

**Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.**

Գլ· Ժդ· 9:

**Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.**

Յայնժամ մատնեսցեն զձեզ ի նեղութիւնս, եւ սպանանիցեն զձեզ. եւ եղիջիք ատելեալք յամենայն ազգաց վասն անուան իմոյ: Եւ յայնժամ գայթակղեսցեն բազումք եւ զմիմեանս մատնեսցեն եւ ատեսցեն զմիմեանս: Եւ բազում սուտ մարգարէք յարիցեն, եւ զբազումս մոլորեցուսցեն: Եւ վասն բազմանալոյ անօրէնութեանն, ցամաքեսցի սէր բազմաց: Այլ որ համբերեացն իսպառ, նա կեցցէ: Եւ քարոզեսցի աւետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս ի վկայութիւն ամենայն հեթանոսաց, եւ ապա եկեսցէ կատարած: 14:

---

## ԱՌԱՋԻՆ ՈՒՐԲԱԹ

### Դ·Չ·

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Ստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. Ղէ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար։

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 9։

Գրեցի ձեզ ի թղթի այդր չխառնակել ընդ պոռնիկս։ Եւ ոչ եթէ ընդ պոռնիկս աշխարհիս այսորիկ կամ ընդ ագահս եւ ընդ յափշտակողս կամ ընդ կռապարիշտս. ապա թէ ոչ՝ պարտ էիք եւ յաշխարհէ իսկ ելանել։ Բայց արդ գրեցի ձեզ չխառնակել, եթէ ոք եղբայր անուանեալ, կամ պոռնիկ իցէ կամ կռապարիշտ կամ ագահ կամ բամբասող կամ արբեցող կամ յափշտակող, ընդ այնպիսումն եւ հաց մի՛ ուտել։ Զի՞ կայ իմ եւ զարտաքինսն դատելոյ. ո՞չ ապաքէն դուք զներքինսն դատիցիք. եւ զարտաքինսն Աստուած դատիցի։ Բարձէք զչարն ի միջոյ ձերմէ։ Իշխէ՞ ոք ի ձէնջ՝ եթէ իրք ինչ իցեն ընդ ընկերի իւրում, դատել առաջի անիրաւաց, եւ ոչ առաջի սրբոց։ Եթէ ո՞չ գիտէք զի սուրբք զաշխարհ դատին. եւ եթէ ձեօք դատի աշխարհ, ապա ոչ էք արժանի անարգ ատենից։ Ո՞չ գիտէք եթէ զհրեշտակս դատիմք, թող թէ զերկրաւորս։ Զերկրաւոր ատեանս եթէ յանձն առնուցուք, զանարգս եկեղեցւոյ դատաւորս նստուցանէք։ Առ ամօթոյ ձերոյ ասեմ. այնչափ ո՞չ գոյ ոք իմաստուն ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտրել ի մէջ եղբօր իւրոյ. այլ եղբայր ընդ եղբօր դատի, եւ զայն՝ ի մէջ անհաւատից։ Եւ արդ ամենեւին իսկ վատթարութիւն է ի ձեզ, զի դատաստանք իսկ գոն ի միջի ձերում. ընդէր ոչ դուք զրկիք եւ ոչ դուք առաւել նեղիք։ Այլ դուք զրկէք եւ նեղէք, եւ այդ՝ զեղբարս եւս։ Եթէ ո՞չ գիտէք զի անիրաւք զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն. մի՛ խաբիք՝ ոչ պոռնիկք, ոչ կռապարիշտք, ոչ շունք, ոչ իգացեալք, ոչ արուագէտք, ոչ գողք, ոչ ագահք, ոչ արբեցողք, ոչ բամբասողք եւ ոչ յափշտակողք՝ զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն։ Եւ դուք այնպիսիք ոմանք էիք. այլ լուացարուք, այլ սրբեցարուք, այլ արդարացարուք յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ի Հոգին Աստուծոյ մերոյ։ Զ. 11։



Ալէլուիա, ալէլուիա. Յիշեա Տէր զգթութիւնս քո. եւ զողորմութիւնս քո՝ որք ենն յաւիտենից։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԸ. 23։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ կամեցաւ համար առնել ի մէջ ծառայից իւրոց։ Եւ իբրեւ սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտապան մի բիւր քանքարոյ։ Իբրեւ ոչ ունէր հատուցանել, հրամայեաց՝ զնա վաճառել տէրն նորա, եւ զկին նորա եւ զորդիս եւ զամենայն որ զինչ եւ ունիցի, եւ հատուցանել։ Եւ անկեալ ծառայն երկիր պագանէր նմա եւ ասէր. Երկայնամիտ լեր առ իս, եւ զամենայն հատուցից քեզ։ Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա, եւ զփոխն եթող նմա։ Եւ ելեալ ծառայն այն եգիտ զմի ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարիւր դահեկան. եւ կալեալ զնա խեղդէր եւ ասէր. Հատո ինձ զոր պարտիսդ։ Արդ՝ անկեալ ծառայակցին առ ոտս նորա, աղաչէր զնա եւ ասէր. Երկայնամիտ լեր առ իս, եւ հատուցից քեզ։ Եւ նա ոչ կամէր. այլ չոգաւ արկ զնա ի բանտ՝ մինչեւ հատուսցէ զպարտսն։ Իբրեւ տեսին ծառայակիցքն նորա որ ինչ եղեւն՝ տրտմեցան յոյժ. եւ եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն որ ինչ եղեւն։ Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր եւ ասէ. Ծառայ չար, զամենայն զպարտսն թողի քեզ, վասն զի աղաչեցեր զիս։ Իսկ արդ՝ ո՞չ էր պարտ եւ քեզ ողորմել ծառայակցին քում, որպէս եւ ես քեզ ողորմեցայ։ Եւ բարկացեալ տէրն նորա՝ մատնեաց զնա դահճաց, մինչեւ հատուսցէ զամենայն զպարտսն։ Նոյնպէս եւ Հայր իմ որ յերկինս է՝ արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում ի սրտից ձերոց զյանցանս նոցա։ 35։

---

# ԱՌԱՋԻՆ ՅԱՐԱԹ

## ԳԿ.

**Սրբոց նախահարցն Ադամայ, Աբելի, Սեթայ, Ենովսայ, Ենովքայ, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամու, Սահակայ, Յակովբայ, Յովսեփայ, Մովսիսի, Ահարովնի, Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի, եւ այլոց նախահարցն:**

Ժամանակ. Տէր որ հիմնեցուցեր զեկեղեցի քո ի վերայ վիմին հաւատով. եւ կարգեցեր ի սմա առաքեալս եւ մարգարէս, հովիւս եւ վարդապետս՝ առ ի հաստատութիւն սրբոց. եւ ճգնութեամբ վկայից զթշնամին սորա վանեցեր. ի խաղաղութեան զսա պահեա, Աստուած, որպէս մարդասէր:

Ող. հջ. Առաջնորդեցեր որպէս խաշին՝ ժողովրդեան քոյ. ի ձեռն Մովսիսի եւ Ահարոնի:

Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի. ձայնիւ իմով առ Աստուած, եւ նայեցաւ առ իս:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. ԺԱ. 1:

Զի՞նչ են հաւատք, եթէ ոչ յուսացելոց իրաց հաստատութիւն, եւ յանդիմանութիւն որոց ոչն երեւին: Զի նովաւ վկայեցան առաջինքն: Հաւատովք իմանամք հաստատեալ զյաւիտեանսն բանիւ Աստուծոյ, յաներեւութից զերեւելիսս եղեալ: Հաւատովք լաւ պատարագ Հաբէլ քան զԿայէն մատուցանէր Աստուծոյ, որով վկայեցաւ իսկ արդար լինել. զի ի վերայ պատարագացն եղեւ վկայութիւն նմա յԱստուծոյ. զի թէպէտ եւ մեռաւ ի նմին, սակայն տակաւին խօսի: Հաւատովք Ենովք փոխեցաւ, զի մի՛ զմահ ճաշակեսցէ. եւ ոչ ուրեք գտանէր, քանզի փոխեաց զնա Աստուած, եւ յառաջ քան զփոխելն նորա՝ վկայեցաւ հաճոյ լինել Աստուծոյ: Բայց առանց հաւատոց անհնար է հաճոյ լինել. այլ հաւատալ արժան է այնմ որ մերձենայ առ Աստուած՝ թէ է Աստուած, եւ որ խնդրեն զնա՝ լինի պարգեւատու: Հաւատովք առեալ հրաման Նոյի, վասն չեւ



եւս երեւելեացն զահի հարեալ կազմէր զտապանն ի փրկութիւն տան իւրոյ, որով դատեցաւ զաշխարհ, եւ հաւատոցն արդարութեան եղեւ ժառանգաւոր: Հաւատովք որ Աբրահամն կոչեցաւ՝ ունկնդիր եղեւ ելանել ի տեղին, զոր առնլոց էր ի ժառանգութիւն. ել գնաց, եւ ոչ գիտէր յո՛վ երթիցէ: Հաւատովք պանդխտեցաւ յերկրին աւետեաց իբրեւ յօտարութեան. խորանօք բնակեաց Սահակաւ եւ Յակովբաւ հանդերձ՝ ժառանգակցօք նոցին աւետեաց: Քանզի ակն ունէր հիմամբք հաստատելոյ քաղաքին, որոյ ճարտարապետ եւ արարիչ Աստուած է: Հաւատովք եւ ինքն Սառա՝ որ ամուլն էր, զօրութիւն առնլոյ զսերմն որդեծնութեան ընդունէր, եւ ի տարաժամ հասակի ծնանէր. քանզի հաւատարիմ համարեցաւ զայն՝ որ խոստացաւն: Վասն որոյ եւ ի միոջէն ծնանէին, եւ այն՝ յանցեալ ժամանակի, իբրեւ զաստեղս երկնից բազմութեամբ եւ՝ իբրեւ զաւազ առ ափն ծովու առանց թուոյ: Ըստ հաւատոց մեռան ամենեքին սոքա, եւ չեւ եւս ընկալեալ զաւետիսն, այլ ի հեռուստ տեսին զնոսա եւ ցնծացան, եւ խոստովան եղեն թէ օտարք եւ պանդուխտք են յերկրի: Զի որք զայնպիսիսն խօսին, յայտ առնեն թէ գաւառ իմն խնդրեն: Զի եթէ զայն յիշէին՝ ուստի ելինն, գոյր ժամանակ դառնալոյ անդրէն: Նա աւանիկ ազնուականի իմն ցանկացեալ են, այս ինքն է երկնաւորին. վասն որոյ ոչ համարի ամօթ Աստուած՝ կոչել նոցա Աստուած. քանզի պատրաստեաց նոցա քաղաք: Հաւատովք մատոյց Աբրահամ ի փորձութեան իւրում զԻսահակ պատարագ. եւ զմիամօրն մատուցանէր, որոյ զաւետիսն ընկալեալ էր, որում ասացաւն թէ Սահակաւ կոչեսցի քեզ զաւակ: Եդ ի մտի իւրում, թէ եւ ի մեռելոց կարող է յարուցանել Աստուած. ուստի եւ յառակս ընկալաւ զնա: Հաւատովք վասն հանդերձելոց իրաց օրհնեաց Իսահակ զՅակովբ եւ զԵսաւ: Հաւատովք Յակովբ ի մեռանել իւրում զիւրաքանչիւր ոք յորդւոցն Յովսեփու օրհնեաց, եւ երկիր եպագ ի ծագ գաւազանի իւրոյ: Հաւատովք Յովսէփ ի վախճանել իւրում յիշեաց զելս որդւոցն Իսրայէլի, եւ վասն ոսկերաց իւրոց պատուիրեաց: Հաւատովք՝ զՄովսէս իբրեւ ծնան, թաքուցաւ ամիսս երիս ի հարց իւրոց, քանզի տեսին կայտառ զմանուկն, եւ ոչ զանգիտեցին ի հրամանէ թագաւորին: Հաւատովք Մովսէս իբրեւ

աճեաց՝ ուրացաւ կոչել որդի դստերն Փարաւովնի։ Լաւ համարեցաւ չարչարել ընդ ժողովրդեանն Աստուծոյ, քան առ ժամանակ մի վայելել ի մեղս։ Կարեւոր համարեցաւ զնախատինսն Քրիստոսի, քան զմեծութիւն գանձուցն Եգիպտացւոց. զի հայեցեալ ակն ունէր վարձուցն հատուցման։ Հաւատովք թողոյր զերկիրն Եգիպտացւոց, եւ ոչ երկնչէր ի ցասմանէ թագաւորին. զի զաներեւոյթսն իբրեւ զտեսեալ համբերութեամբ համարեցաւ։ Հաւատովք արար զզատիկն եւ զհեղումն արեանն. զի մի՛ սատակիչն անդրանկաց մերձենայցէ ի նոսա։ Հաւատովք անցին ընդ ծովն կարմիր՝ իբրեւ ընդ ցամաք երկիր. զորոյ զփորձ առեալ Եգիպտացւոցն, ընկղմեցան։ Հաւատովք պարիսպքն Երիքովի անկան, շուրջ եկեալ զնոքօք զեօթն օր։ Հաւատովք Բախաբ պոռնիկ ոչ կորեաւ ընդ անհաւատսն, որոյ ընկալեալ էր զլրտեսսն խաղաղութեամբ։ 31։

Ալէլուիա, ալէլուիա. Պատմէ զբան իւր Յակովբայ. զարդարութիւն եւ զիրաւունս՝ Իսրայէլի։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ի. 34։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Պատասխանի ետ նոցա (Յիսուս) եւ ասէ. Որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն եւ արանց լինին։ Իսկ որ արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել եւ յարութեանն որ ի մեռելոց, ոչ կանայս առնեն եւ ոչ արանց լինին։ Քանզի եւ ոչ մեռանել եւս կարեն, զի հաւասար հրեշտակաց են եւ որդիք Աստուծոյ, քանզի յարութեան որդիք են։ Այլ զի յառնեն մեռեալք, եւ Մովսէս գուշակեաց ի մորենւոջն, որպէս ասէ զՏեառնէ Աստուծոյ Աբրահամու եւ զԱստուծոյ Սահակայ եւ զԱստուծոյ Յակովբայ։ Եւ Աստուած չէ մեռելոց, այլ կենդանեաց, զի ամենեքին նմա կենդանի են։ Պատասխանի ետուն ոմանք ի դպրացն եւ ասեն. Վարդապետ, բարւոք ասացեր։ Եւ ոչ եւս ոք իշխէր հարցանել զնա եւ ոչ ինչ։ 40։

---



# ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

## ԱՁ.

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ։

Սղ. կդ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ։

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ։

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Զ. 12։

Ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ ամենայն ինչ օգուտ է. ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ եթէ ես ընդ իշխանութեամբ ուրուք լինիցիմ։ Կերակուր որովայնի, եւ որովայն կերակրոյ. այլ Աստուած զսա եւ զնոսա խափանեսցէ. բայց մարմին ոչ պոռնկութեան այլ Տեառն, եւ Տէր մարմնոյ։ Այլ Աստուած՝ որ եւ զՏէրն յարոյց, եւ զձեզ յարուսցէ զօրութեամբ իւրով։ Ո՞չ գիտէք եթէ մարմինք ձեր անդամք են Քրիստոսի. արդ առեալ զանդամս Քրիստոսի, առնիցեմք անդամս պոռնկի՞. քա՛ւ լիցի։ Եթէ ո՞չ գիտէք զի որ մերձենայ ի պոռնիկ՝ մի մարմին է. Եղիցին, ասէ, երկոքեան ի մարմին մի։ Եւ որ մերձենայ ի Տէր՝ մի հոգի է։ Փախերուք ի պոռնկութենէ։ Զամենայն մեղս՝ զոր եւ գործէ մարդ, արտաքոյ մարմնոյ իւրոյ է. իսկ որ պոռնկին՝ յիւր մարմինն մեղանչէ։ Եթէ ո՞չ գիտէք զի մարմինք ձեր տաճար են Հոգւոյն սրբոյ՝ որ է ի ձեզ, զոր ունիք յԱստուծոյ. եւ չէք անձանց տէր։ Քանզի գնոց գնեցայք. փառաւոր արարէք զԱստուած ի մարմինս ձեր եւ յոգիս, որ է յԱստուծոյ։ Այլ վասն որոյ գրեցէքն առ իս, բարւոք է մարդոյ ի կին մարդ չմերձենալ։ Բայց վասն պոռնկութեան իւրաքանչիւր ոք զիւր կին կալցի. եւ իւրաքանչիւր ոք կին զիւր այր կալցի։ Կնոջ՝ այր իւր զպարտսն հատուսցէ. նոյնպէս եւ կին՝ առն

իւրում: Զի կին մարմնոյ իւրում ոչ իշխէ, այլ այրն. նոյնպէս եւ այրն իւրում մարմնոյ ոչ իշխէ, այլ կինն: Մի զրկէք զմիմեանս. բայց եթէ ինչ ի միաբանութենէ առ ժամանակ մի, զի ուխտիցն պարապիցէք. եւ դարձեալ ի նոյն դարձջիք, զի մի՛ փորձեսցէ զձեզ սատանայ վասն անխառնութեան ձերոյ: Զայս ասեմ ներելով եւ ոչ հրաման տալով: Քանզի կամիմ եթէ ամենայն մարդ լինէր իբրեւ զիս. այլ իւրաքանչիւր ոք զիւր շնորհս ունի յԱստուծոյ, ոմն այսպէս եւ ոմն այնպէս: Բայց ամուրեացն եւ այրեացն ասեմ, լաւ է նոցա թէ կայցեն իբրեւ զիս: Ապա թէ ոչ ունիցին ժոյժ՝ ամուսնասցին. զի լաւ է ամուսնանալ՝ քան զջեռնուլ: Այլ կանամբեացն պատուիրեմ, ոչ ես՝ այլ Տէր, կնոջ յառնէ մի՛ մեկնել: Ապա եթէ մեկնեսցի, անայր մնասցէ կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի. եւ առն՝ զկին իւր մի՛ թողուլ: Է. 11:

Ալէլուիա, ալէլուիա. Դու յարուցեալ գթասցիս ի վերայ Սիոնի. ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

ԳԼ. ԺԹ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ եղեւ՝ իբրեւ կատարեաց (Յիսուս) զբանս զայսոսիկ, փոխեցաւ ի Գալիլեէ, եւ եկն ի սահմանս Հրէաստանի՝ յայնկոյս Յորդանանու: Եւ գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք, եւ բժշկեաց զնոսա անդ: Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն փորձէին զնա եւ ասէին. Եթէ արժա՞ն իցէ ումեք արձակել զկին իւր ըստ ամենայն վնասու: Պատասխանի ետ նոցա եւ ասէ. Չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ հաստատեացն ի սկզբանէ՝ արու եւ էգ արար զնոսա, եւ ասէ. Վասն այսորիկ թողցէ այր զհայր եւ զմայր, եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկոքեան ի մարմին մի: Ապա ուրեմն ոչ են երկու, այլ մի մարմին. արդ՝ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ: Ասեն ցնա. Իսկ Մովսէս ընդէ՞ր պատուիրեաց մեզ՝ տալ թուղթ մեկնելոյ, եւ արձակել: Ասէ ցնոսա. Մովսէս վասն խստասրտութեան ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր. այլ ի սկզբանէ ոչ եղեւ այնպէս: Բայց



ասեմ ձեզ, զի ամենայն որ արձակէ զկին իւր, եւ ոչ վասն պոռնկութեան, եւ առնիցէ այլ՝ շնայ. եւ որ զարձակեալն առնէ, շնայ: Ասեն ցնա աշակերտքն իւր. Եթէ այդպէս ինչ վնաս իցէ ընդ այր եւ ընդ կին, լաւ է չամուսնանալ: Եւ նա ասէ ցնոսա. Ոչ ամենեքեան բաւական են այդմ բանի, այլ որոց տուեալ է: Զի են ներքինիք՝ որ յորովայնէ մօր իւրեանց ծնան այնպէս. եւ են ներքինիք՝ որ ի մարդկանէ եղեն ներքինիք. եւ են ներքինիք՝ որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեան երկնից. որ կարողն է տանել՝ տարցի: 12:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### ԱԿ.

### Սրբոյն Սահակայ եւ Յովսեփայ:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԺԵ. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. ԳԼ. Ե. 1:

Այսուհետեւ արդարացեալք ի հաւատոց անտի, խաղաղութիւն կալցուք առ Աստուած ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որով եւ զընծայութիւնն ընկալաք հաւատովք ի շնորհս յայսոսիկ՝ յորում կամք, եւ պարծիմք յուսով փառացն Աստուծոյ: Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ պարծիմք եւս ի նեղութիւնս մեր. քանզի գիտեմք, եթէ նեղութիւնք զհամբերութիւն գործեն, համբերութիւն զհանդէս, հանդէս զյոյս. յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ. զի սէրն Աստուծոյ սփռեալ է ի սիրտս մեր ի ձեռն Հոգւոյն սրբոյ՝ որ տուաւ մեզ: 5:

Ալէլուիա, ալէլուիա. Պարծեսցին սուրբքն փառօք եւ ցնծասցեն ի հանգիստս իւրեանց. եւ բարձր արասցեն զԱստուած բերանովք իւրեանց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԲ. 32:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն: Վաճառեցէք զինչս ձեր, եւ տուք ողորմութիւն. եւ արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս, ուր ոչ գող մերձենայ եւ ոչ ցեց ապականէ: Զի ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին: Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս եւ ճրագունք լուցեալք: Եւ դուք նմանողք մարդկան՝ որ ակն ունիցին տեառն իւրեանց՝ թէ երբ դառնայցէ ի հարսանեաց. զի յորժամ գայցէ եւ բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա: Երանի՛ իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ՝ զի գօտի ընդ մէջ ածցէ եւ բազմեցուսցէ զնոսա, եւ անցեալ պաշտիցէ զնոսա: Եւ եթէ յերկրորդ կամ յերրորդ պահու եկեսցէ եւ գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ: Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն յորում պահու գող գայ՝ հսկէր եւ չտայր թոյլ ական հատանել ի տան իւրում: Եւ դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ Որդի մարդոյ: 40:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

ԲՁ.

**Սրբոց Երկոտասան մարգարէիցն՝ Ովսէի, Ամովսայ, Միքեայ, Յովելեայ, Աբդիու, Յովնանու, Նաւումայ, Ամբակումայ, Սոփոնիայ, Անգեայ, Զաքարեայ, Մաղաքիայ:**

Ժամամուտ. Տէր որ հիմնեցուցեր զեկեղեցի քո ի վերայ վիմին հաւատով. եւ կարգեցեր ի սմա առաքեալս եւ մարգարէս, հովիւս եւ վարդապետս՝ առ ի հաստատութիւն



սրբոց. եւ ճգնութեամբ վկայից զթշնամին սորա վանեցեր. ի խաղաղութեան զսա պահեա, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ԿԷ. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Յարիցէ Աստուած եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԱ. 2:

Թէ ո՞չ գիտէք յԵղիա զի՞նչ ասէ գիր, որպէս ամբաստան լինի Աստուծոյ զԻսրայէլէ. Տէր, զմարգարէս քո կոտորեցին եւ զսեղանս քո կործանեցին. ես մնացի միայն, եւ խնդրեն զանձն իմ: Այլ զի՞նչ ասէ նմա պատասխանին. Թողի ինձ, ասէ, եօթն հազար այր՝ որ ոչ կրկնեցին ծունր Բահաղու: Նոյնպէս եւ յայսմ ժամանակի մնացորդք ըստ ընտրութեան շնորհացն եղեն: 5:

Ալէլուիա, ալէլուիա. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԳ. 31:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ի նմին աւուր մատեան ոմանք փարիսեցիք, եւ ասեն ցնա. Ել եւ գնա աստի, զի Հերովդէս կամի սպանանել զքեզ: Եւ ասէ ցնոսա. Երթայք՝ ասացէք աղուեսուն այնմիկ. ահաւասիկ հանեմ դեւս, եւ բժշկութիւնս կատարեմ այսօր եւ վաղիւ. եւ յերիր աւուր կատարիմ: Բայց պարտ է այսօր եւ վաղիւ եւ ի միւսում աւուր գնալ. զի ոչ է մարթ մարգարէի կորնչել արտաքոյ քան զԵրուսաղէմ: Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէսն, եւ քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ. քանի՞ցս անգամ կամեցայ ժողովել զորդիս քո, որպէս հաւ զձագս իւր ընդ թեւովք, եւ ոչ կամեցարուք: Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր: Բայց ասեմ ձեզ, թէ ոչ եւս տեսանիցէք զիս, մինչեւ ասիցէք՝ Օրհնեալ եկեալն յանուն Տեառն: 35:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԲԿ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. 2Ե. Կեցո զծառայս քո Աստուած իմ. որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Է. 25:

Այլ վասն կուսանաց հրաման ինչ ի Տեառնէ ոչ ունիմ. բայց խրատ տամ՝ որպէս ողորմելոյ ուրուք ի Տեառնէ, հաւատարիմ լինել: Համարիմ թէ այնպէս լաւ իցէ. բայց վասն վտանգին որ ի վերայ կայ՝ բարւոք է մարդոյ թէ այնպէս իցէ: Կապեալ ես ի կին, մի՛ խնդրեր արձակել. արձակեալ ես ի կնոջէ, մի՛ խնդրեր կին: Զի եթէ ամուսնանայցես՝ ոչ մեղար, եւ եթէ ամուսնանայցէ կոյսն՝ ոչ մեղաւ. բայց նեղութիւն մարմնոյ ունիցին այնպիսիքն. այլ ես խնայեցի ի ձեզ: Բայց զայս ասեմ, եղբարք, եթէ ժամանակս կարճեալ է այսուհետեւ. զի որ ունիցին կանայս՝ որպէս թէ չունիցին. եւ որ լայցենն՝ որպէս թէ ոչ լայցեն. եւ որ խնդանն՝ որպէս թէ չխնդայցեն. եւ որ գնենն՝ որպէս թէ չունիցին. եւ որ վարենն զաշխարհս՝ որպէս թէ չվայելիցեն. զի անցեալ է վայելչութիւն աշխարհիս այսորիկ: Այլ կամիմ զձեզ անհոգս լինել. զի որ անկինն է՝ հոգայ զՏեառն, թէ ո՛րպէս հաճոյ լիցի Տեառն. եւ որ կանամբին է, հոգայ զաշխարհիս՝ թէ ո՛րպէս հաճոյ լիցի կնոջ իւրում: Եւ ահա մեկնեցան ի միմեանց առնակինն եւ կոյսն. զի կոյսն հոգայ զՏեառն՝ զի իցէ սուրբ մարմնով եւ հոգւով, եւ առնակինն հոգայ զաշխարհիս՝ թէ ո՛րպէս հաճոյ լիցի առն իւրում: Այլ զայս վասն ձերոյ օգտի ասեմ. ոչ եթէ խեղդ ինչ արկանեմ ձեզ, այլ վասն պարկեշտութեան եւ հպատակութեան Տեառն առանց զբաղանաց: 35:



Ալէլուիա, ալէլուիա. Դարձ, Տէր, եւ փրկեա զանձն իմ. կեցո զիս Տէր ըստ ողորմութեան քում:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԹ. 13:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յայժամ մատուցան առ նա մանկտի, զի ձեռն դիցէ ի վերայ նոցա եւ աղօթս արասցէ. եւ աշակերտքն նորա սաստէին նոցա: Ասէ Յիսուս. Թոյլ տուք մանկտւոյդ եւ մի՛ արգելուք զդոսա գալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից: Եւ եդեալ ձեռն ի վերայ նոցա՝ գնաց անտի: Եւ ահա մատուցեալ ոմն առ նա՝ ասէ. Վարդապետ բարի, զի՞նչ բարի գործեցից՝ զի ընդունիցիմ զկեանսն յաւիտենականս: Եւ նա ասէ ցնա. Զի հարցանես զիս զբարւոյ. մի է բարի. եթէ կամիս ի կեանսն յաւիտենականս մտանել՝ պահեա զպատուիրանսն: Ասէ ցնա. Զո՞րս: Ասէ ցնա Յիսուս. Զմի՛ սպանաներն եւ մի՛ շնար եւ մի՛ գողանար եւ մի՛ սուտ վկայեր. պատուեա զհայր քո եւ զմայր, եւ սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո: Ասէ ցնա պատանին. Զայդ ամենայն պահեցի ի մանկութենէ իմմէ. արդ՝ ի՞ւ իւիք պակաս իցեմ: Ասէ ցնա Յիսուս. Եթէ կամիս կատարեալ լինել, երթ՝ վաճառեա զինչս քո եւ տուր աղքատաց, եւ ունիցիս գանձս յերկինս, եւ եկ զկնի իմ: Իբրեւ լուաւ պատանին զբանն, գնաց տրտմեալ, զի ունէր ստացուածս բազումս: Ասէ Յիսուս ցաշակերտսն. Ամէն ասեմ ձեզ. զի դժուարաւ մտցէ մեծատուն յարքայութիւն երկնից: Դարձեալ ասեմ ձեզ. դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել: Իբրեւ լուան աշակերտքն՝ զարմացան յոյժ եւ ասեն. Իսկ ո՞ կարիցէ ապրել: Հայեցաւ ի նոսա Յիսուս եւ ասէ. Առ ի մարդկանէ այդ անկար է, այլ առ յԱստուծոյ ամենայն ինչ զօրաւոր: 26:

## ԵՐԿՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Գ·Չ·

**Սրբոյն Աթանագինեայ եպիսկոպոսին, եւ ցասն աշակերտացն նորա, եւ հինգ վկայիցն:**

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ, ծառայ Քրիստոսի ով երանելիդ ի հարս սուրբ հայրապետ: Քանզի քոյ վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն ընդունելով: Վասն որոյ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ· ձկն· Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պետրոսի առաքելոյն ի Պաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ· ե· 1:

Զերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրեւ երիցակիցս եւ վկայս չարչարանացն Քրիստոսի, որ եւ հանդերձեալ փառացն յայտնելոց հաղորդ· արածեցէք որ ի ձեզ հօտ է Աստուծոյ. վերակացու լինել ոչ իբրեւ ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ. ոչ զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ. ոչ իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին: Զի յերեւել հօտապետին՝ ընդունիջիք զանթառամ փառաց պսակն: Նոյնպէս եւ երիտասարդք, հնազանդ լերուք ծերոց: Ամենեքին ընդ միմեանս զխոնարհութիւն ունիցիք. զի Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց: Խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ, զի զձեզ բարձրացուսցէ ի ժամանակի: Զամենայն հոգս ձեր ընկեցէք ի նա, զի նա է որ հոգայ վասն ձեր: 7:

Ալելուիա, ալելուիա. Վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպէս զոչխար ի զենուճն:



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ· ԺԲ· 33:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ընդ իս խաղաղութիւն ունիցիք. յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի: Զայս իբրեւ խօսեցաւ Յիսուս, ամբարձ զաչս իւր յերկինս եւ ասէ. Հայր, հասեալ է ժամ, փառաւորեա զՈրդի քո, զի եւ Որդի քո փառաւորեսցէ զքեզ: Որպէս ետուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ, զի ամենայնի՝ զոր ետուր նմա, տացէ զկեանն յաւիտենական: Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, եւ զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս: Ես զքեզ փառաւորեցի յերկրի. զգործն կատարեցի, զոր ետուր ցիս՝ զի արարից: Եւ այժմ փառաւորեա զիս, Հայր, առ ի քէն փառօքն՝ զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ ի քէն: Յայտնեցի զանունն քո մարդկան՝ զորս ետուր ինձ յաշխարհէ. քո էին, եւ ինձ ետուր զնոսա, եւ զբանն քո պահեցին: Ուրդ գիտացին՝ եթէ զամենայն ինչ զոր ետուր ինձ, առ ի քէն են: Զի զբանն՝ զոր ետուր ինձ, ետու նոցա. եւ նոքա ընկալան, եւ ծանեան ճշմարտութեամբ՝ թէ առ ի քէն ելի. եւ հաւատացին՝ եթէ դու առաքեցեր զիս: Ժէ· 8:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

### Գ·Կ·

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զփառաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ· ՂԷ· Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր· զի պատշաճ արար:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Է. 36:

Ապա թէ ոք ամօթ համարեսցի վասն կուսին իւրոյ՝ եթէ իցէ ելեալ ըստ չափ, եւ այնպէս ինչ պարտ իցէ լինել, զոր կամեսցի արասցէ. ոչ մեղանչէ. ամուսնասցի: Իսկ որ հաստատեալ է ի սրտի իւրում, եւ վտանգ ինչ ոչ իցէ նմա, իշխանութիւն ունի ի վերայ կամաց իւրոց, եւ զայն ընտրեաց ի սրտի իւրում պահել զկոյսն իւր, բարւոք առնէ: Եւ որ ամուսնացուցանէ զկոյսն իւր՝ բարւոք առնէ. եւ որ ոչն ամուսնացուցանէ՝ լաւ եւս առնէ: Կին կապեալ է՝ ցորքան ժամանակս կենդանի է այր նորա. ապա եթէ ննջիցէ այր նորա, ազատ է՝ ում կամիցի ամուսնանալ. բայց միայն Տերամբ: Բայց երանելի եւս է՝ թէ այնպէս կացցէ ըստ իմում խրատու. ես այսպէս համարիմ՝ թէ եւ յիս իցէ Հոգի Աստուծոյ: Այլ վասն զոհից կռոցն՝ գիտեմք եթէ ամենեքին գիտութիւն ունիմք. գիտութիւն հպարտացուցանէ, այլ սէր շինէ: Եթէ ոք կամիցի գիտել ինչ, չեւ եւս գիտաց՝ որպէս արժանն էր գիտել: Բայց որ սիրէ զԱստուած, նա է տեղեկացեալ ի նմանէ: Այլ վասն կերակրոցն զոհելոց, գիտեմք՝ եթէ ոչ ինչ իսկ կուռքդ են յաշխարհի. զի չիք ոք Աստուած՝ բայց ի միոյն: Զի թէպէտ եւ իցեն անուանեալ աստուածք՝ եթէ յերկինս եւ եթէ յերկրի, որպէս եւ են աստուածք բազումք եւ տեարք բազումք. այլ մեզ մի է Աստուած Հայր՝ յորմէ ամենայն, եւ մեք ի նա, եւ մի Տէր Յիսուս Քրիստոս՝ որով ամենայն եւ մեք նովաւ: Ը. 6:

Ալէլուիա, ալէլուիա. Ողորմեա ինձ Տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ի. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Քանզի նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն, որ ել ընդ առաւօտս ի վարձու ունել մշակս



յայգի իւր: Եւ արկ վարձս մշակացն աւուրն դահեկան, եւ առաքեաց զնոսա յայգի իւր: Եւ ելեալ զերրորդ ժամու, ետես այլս՝ զի կային դատարկ ի հրապարակս. ասէ եւ ցնոսա. Երթայք եւ դուք յայգի իմ, եւ որ ինչ արժան իցէ՝ տաց ձեզ: Գնացին եւ նոքա: Եւ դարձեալ ելեալ զվեց ժամու եւ զինն ժամու՝ արար նոյնպէս: Եւ զմետասաներորդ ժամու ելեալ եգիտ այլս՝ զի կային դատարկ, ասէ ցնոսա. Ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ դատարկ: Ասեն ցնա. Զի ոչ ոք կալաւ զմեզ ի վարձու: Ասէ ցնոսա. Երթայք եւ դուք յայգին, եւ որ ինչ արժան է՝ առնուցուք: Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր. Կոչեա զմշակսն եւ տուր նոցա վարձս՝ սկսեալ ի յետնոցն մինչեւ ցառաջինսն: Իբրեւ եկին որք զմետասաներորդ ժամուն, առին մէն մի դահեկան: Եկեալ եւ առաջինքն՝ համարէին թէ աւելի առնուցուն. եւ առին մէն մի դահեկան եւ նոքա: Իբրեւ առին, տրտնջէին զտանուտեառնէն եւ ասէին, թէ Դոքա յետինքդ մի ժամ գործեցին, եւ հասարակորդս մեզ արարեր զդոսա, որ զծանրութիւն աւուրն բարձաք եւ զտօթ: Նա պատասխանի ետ միում ի նոցանէ եւ ասէ. Ընկեր, չզրկեմ զքեզ. ո՞չ դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս. առ զքոյդ եւ երթ: Եթէ կամիմ յետնոցս տալ՝ որպէս եւ քեզ. եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմսս առնել զինչ եւ կամիմ. կամ թէ ակն քո չար է, զի ես առատս եմ: Այսպէս եղիցին յետինք առաջինք, եւ առաջինք յետինք. զի բազումք են կոչեցեալք, եւ սակաւք են ընտրեալք: 16:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### ԴՉ.

### Սրբոց վկայիցն Անտոնինոսի եւ Թէոփիլոսի, Անիկտոսի եւ Փոտինոսի:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԺԵ. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ։

Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ։

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 10։

Այլ դու զհետ եկիր վարդապետութեան իմոյ, առաջնորդութեան, յօժարութեան, հաւատոց, երկայնմտութեան, սիրոյ, համբերութեան, հալածանաց, չարչարանաց. որպիսիք եղեն ինձ յԱնտիոք եւ յԻկոնիոն եւ ի Լիւստրոս, որպիսի հալածանաց համբերի, եւ յամենայնէ փրկեաց զիս Տէր։ Եւ ամենեքին՝ որ կամիցին աստուածպաշտութեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս, ի հալածանս կացցեն։ Այլ մարդք չարք եւ կախարդք յառաջ եկեսցեն ի չար անդր, մոլորեալք եւ մոլորեցուցանիցեն։ Այլ դու հաստատուն կաց՝ յոր ուսարդ եւ հաւատարիմ եղեր։ Գիտես ուստի ուսար. զի ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որ կարող են իմաստուն առնել զքեզ ի փրկութիւն ի ձեռն հաւատոցն՝ որ ի Քրիստոս Յիսուս։ 15։

Ալէլուիա, ալէլուիա. Արդարքն որպէս զարսաւենիս ծաղկեսցին. որպէս զմայրսն Լիբանանու բազում եղիցին։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԺԵ. 11։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրախութիւն իմ ի ձեզ իցէ, եւ ձեր ուրախութիւնն լցեալ եղիցի։ Այս է պատուէր իմ, զի սիրեսջիր զմիմեանս, որպէս եւ ես զձեզ սիրեցի։ Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց։ Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք՝ զոր եսն պատուիրեմ ձեզ։ Ոչ եւս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ Տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն, զոր լուայ ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ։ Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս.



այլ ես ընտրեցի զձեզ, եւ եդի զձեզ. զի դուք երթայցէք եւ պտղաբերք լինիցիք. եւ պտուղն ձեր կացցէ. եւ զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ 16։

---

## ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

Դ.Կ.

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ։

Սղ. ԿԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ։

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ։

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Թ. 24։

Ո՞չ գիտէք եթէ որ յասպարիսին ընթանան, ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք առնու զյաղթութեանն. այնպէս ընթացարուք՝ զի հասանիցէք։ Ամենայն որ պատերազմի՝ ամենայնի ժուժկալ լինի. նոքա զի զեղծանելի պսակն առնուցուն, եւ մեք զանեղծութեանն։ Արդ ես իսկ այնպէս ընթանամ, ոչ որպէս յաներեւոյթս. այնպէս մրցիմ, որպէս ոչ թէ զհողմս ինչ կոծելով. այլ ճնշեմ զմարմինս իմ եւ հնազանդեցուցանեմ. զի գուցէ որ այլոցն քարոզեցի՝ ես ինքնին անպիտան գտանիցիմ։ Ոչ կամիմ եթէ տգէտք իցէք, եղբարք, զի հարքն մեր ամենեքին ընդ ամպովն էին, եւ ամենեքին ընդ ծովն անցին. եւ ամենեքին ի Մովսէս մկրտեցան յամպն եւ ի ծովն. եւ ամենեքին զնոյն հոգեւոր կերակուրն կերան. եւ ամենեքին զնոյն հոգեւոր ըմպելին արբին, զի ըմպէին ի հոգեւոր վիմէն՝ որ երթայր զհետ նոցա, եւ վէմն էր ինքն Քրիստոս։ Այլ ոչ եթէ ընդ բազումս ի նոցանէ հաճեցաւ Աստուած. քանզի տապաստ անկան

յանապատի անդ: Եւ այն օրինակաւ լինէր վասն մեր. զի մի՛ լինցուք ցանկացողք չարեաց, որպէս եւ նոքայն ցանկացան: Եւ մի՛ կռապաշտիշք լինել, որպէս ոմանք ի նոցանէ. որպէս եւ գրեալ է. Նստաւ ժողովուրդն ուտել եւ ըմպել եւ յարեան ի խաղալ: Եւ մի՛ պոռնկեսցուք, որպէս ոմանք պոռնկեցան ի նոցանէ, եւ անկան ի միում աւուր քսան եւ չորք հազարք: Եւ մի՛ փորձեսցուք զՏէր, որպէս ոմանք ի նոցանէ փորձեցին, եւ յօձից անտի սատակեցան: Եւ մի՛ տրտնջեսցուք, որպէս ոմանք ի նոցանէ տրտնջեցին, եւ կորեան ի սատակչէ անտի: Այլ այն ամենայն օրինակաւ անցանէր ընդ նոսա. բայց գրեցաւ վասն մերոյ խրատու, յորս վախճան յաւիտեանցն եհաս: ՃԻ. 11:

Ալէլուիա, ալէլուիա. Յարեաւ Աստուած, եւ ցրուեցան ամենայն թշնամիք նորա. փախեան ատելիք նորա յերեսաց նորա:

## Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

ԳԼ· Ւ· 14:

### Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ յետ մատնելոյն Յովհաննու, եկն (Յիսուս) ի Գալիլեա. քարոզէր զաւետարանն Աստուծոյ եւ ասէր, թէ կատարեալ է ժամանակ, եւ հասեալ է արքայութիւնն Աստուծոյ, ապաշխարեցէք եւ հաւատացէք յաւետարանն: Երբեւ անցանէր առ Ծովեզերբն Գալիլեացւոց, ետես զՍիմոնն եւ զԸնդրէաս զեղբայր Սիմոնի, զի արկեալ էր նոցա ուռկանս ի ծով, քանզի ձկնորսք էին: Եւ ասէ ցնոսա Յիսուս. Եկայք զկնի իմ, եւ արարից զձեզ լինել որսորդս մարդկան: Եւ վաղվաղակի թողեալ զուռկանն, գնացին զկնի նորա: Եւ մատուցեալ անտի սակաւիկ մի յառաջ, ետես զՅակովբոս Օ̈ղբեդեայ եւ զՅովհաննէս զեղբայր նորա, եւ զնոսա ի նաւին մինչ կազմէին ուռկանս, եւ կոչեաց զնոսա: Եւ վաղվաղակի թողեալ զՀայրն իւրեանց զՕ̈ղբեդէոս ի նաւին վարձկանօքն հանդերձ, գնացին զկնի նորա: 20:



# ԵՐՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

## ԸՁ·

### Սրբոց Մակաբայեցւոցն՝ եղիազարու քահանային եւ եօթն եղբարցն եւ մօր նոցա Շամունայ:

Ջ·ահ·ամ·ո·պ· Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսեցէք եւ մեզ սուգս եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ· ճԻԵ· Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց· ո՛ Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

Լաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհեղէ յոյժ:

Պողոսի առաքելոյն Հրեայեցւոց Թղթոյն է ընթերցուածս·

ԳԼ· ԺԱ· 32:

Եւ արդ զի՞նչ եւս ասացից. զի չէ բաւական ժամանակս պատմել վասն Գեդէոնի, Բարակայ, Սամփսոնի, Յեփթայայ, Դաւթի եւ Սամուէլի եւ այլոց մարգարէիցն. որք հաւատովք պարտեցին զթագաւորութիւնս, գործեցին զարդարութիւն, հասին աւետեաց, խցին զբերանս առիւծուց, շիջուցին զզօրութիւն հրոյ, ապրեցան ի բերանոյ սրոյ, զօրացան ի տկարութենէ, եղեն զօրաւորք ի պատերազմի, առին զբանակս օտարաց: Ընկալան կանայք ի յարութենէ զմեռեալս իւրեանց. կէսք կոշկոճեցան, եւ չեւ եւս ընկալան զփրկութիւն, զի լաւագոյն յարութեանն հասանիցեն: Եւ կէսք զտանջանաց եւ զգանից զփորձ առին, գկապանաց եւ զբանտից: Վարկոծեցան, սղոցեցան, փորձեցան, սպանմամբ սրոյ մեռան, շրջեցան լերկմաշկօք եւ մորթովք այծենեօք. կարօտեալք, նեղեալք, չարչարեալք: Օ̈րս ոչ արժէ աշխարհս, յանապատի մոլորեալք եւ ի լերինս եւ յայրս եւ ի փապարս երկրի: Եւ սոքա ամենեքին վկայեալք ի հաւատոյն, չեւ եւս ընկալան զաւետիսն, Աստուծոյ վասն մեր լաւագոյն հասանելոյ, զի մի՛ առանց մեր կատարեցին: 40:

Ալէլուիա, ալէլուիա. Փրկութիւն արդարոց ի Տեառնէ է. վերակացու է նոցա ի ժամանակս նեղութեան:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

ԳԼ. Ե. 17:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ: Ամէն ասեմ ձեզ՝ մինչեւ անցցեն երկինք եւ երկիր, յովտ մի՝ որ նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինացն եւ ի մարգարէից՝ մինչեւ ամենայն եղիցի: Որ ոք լուծցէ մի ինչ ի պատուիրանացս յայսցանէ ի փոքունց, եւ ուսուցցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից. իսկ որ արասցէ եւ ուսուցցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից: Քայց ասեմ ձեզ. զի եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն եւ զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից: 20:

---

## ԵՐՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԱԿ.

**Սրբոյն Սոփիայ եւ երից դստերաց նորա Պիստիսի, ելպիսի եւ Ագապի:**

Յաճախեսցուք. Ի տաճարի սրբոյ եւ ի յիշատակի սրբոյ մարտիրոսացդ զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Ող. ԽԴ. Լուր դուստր եւ տես, խոնարհեցո զունկն քո. մոռա զժողովուրդ քո եւ զտուն հօր քոյ. զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քոյ:

Լսեսցէ սիրտ իմ զպատգամն քո բարիս. եւ ասացից զգործս իմ թագաւորի:



Պօղոսի առաքելոյն ի կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուած. ԳԼ. Դ. 6:

Օ՛ի Աստուած՝ որ ասաց ի խաւարի լոյս ծագել, որ եւ ծագեաց իսկ ի սիրտս մեր ի լուսաւորութիւն գիտութեան փառացն Աստուծոյ ի դէմս Յիսուսի Քրիստոսի: Այսուհետեւ ունիմք զգանձս գոյս յամանս խեցեղէնս, զի առաւելութիւն զօրութեանն իցէ Աստուծոյ, եւ ոչ ի մէնջ: Յամենայնի նեղեալք, այլ ոչ նուաղեալք. կարօտեալք, այլ ոչ տարակուսեալք. հալածեալք, այլ ոչ լքեալք. չարչարեալք, այլ ոչ սատակեալք: Յամենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմինս մեր կրեսցուք, զի եւ կեանքն Յիսուսի ի մարմինս մեր յայտնեսցին: Քանզի միշտ մեք՝ որ կենդանիքս եմք, ի մահ մատնիմք վասն Յիսուսի, զի եւ կեանքն Յիսուսի յայտնի լիցին ի մահկանացու մարմինս մեր: Այսուհետեւ մահ ի մեզ զօրանայ, եւ կեանք ի ձեզ: Ունիմք զնոյն հոգի հաւատոյ, որպէս եւ գրեալ է. Հաւատացի, վասն որոյ եւ խօսեցայ. եւ մեք հաւատամք, վասն որոյ եւ խօսիմք իսկ: Գոյս գիտեմք եթէ որ յարոյցն զՅիսուս, եւ զմեզ ընդ Յիսուսի յարուսցէ եւ յանդիման կացուսցէ ձեզօք հանդերձ: 14:

Ալէլուիա, ալէլուիա. Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ. ի հանդերձս ոսկեհուռն զարդարեալ եւ պաճուճեալ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

ԳԼ. ԺԲ. 2:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Օ՛ի ոչ ինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի: Վասն զի զոր ինչ ասիցէք ի խաւարի, լսելի լիցի ի լոյս. եւ զոր յունկանէն խօսեցարուք ի շտեմարանս, քարոզեսցի ի վերայ տանեաց: Քայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց. մի՛ զարհուրիցիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ յետ այնորիկ աւելի ինչ ոչ ունիցին առնել: Այլ ցուցից ձեզ յումմէ երկնչիցիք. երկնչիջիք յայնմանէ՝ որ յետ սպանանելոյ ունի իշխանութիւն արկանել ի գեհեն. այո՛ ասեմ ձեզ, յայնմանէ երկնչիջիք: Ո՛չ ապաքէն

հինգ ձագ երկուց դանգաց վաճառի. եւ մի ի նոցանէ ոչ է մոռացեալ առաջի Աստուծոյ: Այլ ձեր եւ ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է. մի՛ երկնչիք՝ զի քան զբազում ձագս լաւ էք դուք: Ասեմ ձեզ. զի ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, եւ Որդի մարդոյ խոստովանեսցի զնմանէ առաջի հրեշտակաց Աստուծոյ: Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ: Եւ ամենայն որ ասէ բան զՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զՀոգին սուրբ հայհոյեսցէ, մի՛ թողցի նմա: 10:

---

## ԵՐՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԲՁ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. 2Ե. Կեցո զծառայս քո Աստուած իմ. որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ժ. 12:

Այսուհետեւ որ համարիցի հաստատուն կալ՝ զգոյշ լիցի, գուցէ անկանիցի: Փորձութիւն ի ձեր վերայ ոչ է եկեալ՝ բաց ի մարդկանէ. այլ հաւատարիմ է Աստուած՝ որ ոչ արկցէ զձեզ ի փորձութիւն առաւել քան զկար ձեր. այլ արասցէ ընդ փորձութեան եւ զելսն, զի համբերել կարասջիք: Վասն որոյ, սիրելիք իմ, փախերուք ի կռապաշտութենէ: Իբրեւ ընդ իմաստունս խօսիմ. ընտրեցէք ձեզէն զոր ասեմս: Բաժակն օրհնութեան զոր օրհնեմք՝ ո՞չ ապաքէն հաղորդութիւն է արեանն Քրիստոսի. հացն զոր բեկանեմք՝ ո՞չ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի: Զի մի հաց, մի մարմին եմք բազումքս. զի ամենեքին



ի միոջէ հացէ անտի վայելեմք: Տեսէք զԻսրայէլն ըստ մարմնոյ. ո՞չ ապաքէն որ ուտեն ի զոհիցն՝ հաղորդք են սեղանոյն: Իսկ արդ զի՞նչ ասեմ. եթէ զոհեալն իցէ՞ ինչ, եւ կամ թէ կուռքն իսկ իցե՞ն ինչ: Այլ զոր զոհենն հեթանոսք՝ դիւաց եւ ոչ Աստուծոյ զոհեն. ոչ կամիմ զձեզ հաղորդս դիւաց լինել. քանզի ոչ կարէք զբաժակն Տեառն ըմպել եւ զբաժակն դիւաց. եւ ոչ կարէք ի սեղանոյ Տեառն վայելել եւ ի սեղանոյ դիւաց: Եթէ նախանձ ինչ արկանիցեմք Տեառն. միթէ զօրագո՞յնք իցեմք քան զնա: Ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ ամենայն ինչ օգուտ է: Ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ ամենայն ինչ շինէ: Մի՛ ոք զանձին եւեթ խնդրիցէ, այլ եւ զընկերին: Ամենայն ինչ որ ի սպանդանոցի վաճառի, կերայք եւ մի՛ խտրէք վասն խղճի մտաց. զի Տեառն է երկիր լրիւ իւրով: Եթէ ոք կոչեսցէ զձեզ յանհաւատից եւ կամիցիք երթալ, զամենայն ինչ՝ որ առաջի դնիցի, կերայք եւ մի՛ խտրէք վասն խղճի մտաց: Ապա եթէ ոք ասիցէ ձեզ՝ եթէ Այդ զոհեալ է, մի՛ ուտիցէք վասն նորա՝ որ գուշակն եղեւ, եւ վասն խղճի մտացն: Այլ զխիղճ մտացն ասեմ ոչ զիւրն, այլ զընկերին: Իսկ ընդէ՞ր բնաւ ազատութիւնս իմ դատիցի յայլոյ խղճէ մտաց: Եթէ ես շնորհօք վայելեմ, ընդէ՞ր հայհոյիցիմ, վասն որոյ եսն գոհանամ: Արդ եթէ ուտիցէք, եթէ ըմպիցէք, եթէ զինչ եւ գործիցէք, զամենայն ինչ ի փառս Աստուծոյ արասջիք: Առանց գայթագղութիւն դնելոյ Հրէից եւ հեթանոսաց լինիջիք, եւ եկեղեցւոյն Աստուծոյ: Որպէս եւ ես ամենեւին ամենեցուն հաճոյ լինիմ. ոչ խնդրեմ զանձին օգուտ, այլ զբազմաց՝ զի ապրեսցին: 33:

Ալէլուիա, ալէլուիա. Սիրտ իմ խռովեցաւ յիս. եւ երկիւղ մահու անկաւ ի վերայ իմ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Ա. 21:

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Եւ մտանեն ի Կափառնաում, եւ իսկ եւ իսկ ի շաբաթուն մտեալ ի ժողովուրդն՝ ուսուցանէր զնոսա: Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ուսուցանէր

զնոսա իբրեւ իշխանութեամբ եւ ոչ որպէս դպիրքն: Եւ էր ի ժողովրդեանն նոցա այր մի, յորում այս պիղծ գոյր ի նմա, որ աղաղակեաց եւ ասէ. Թոյլ տուր, զի կայ մեր եւ քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ՝ ո՛վ ես սուրբն Աստուծոյ: Սաստեաց ի նա Յիսուս եւ ասէ. Կարկեաց եւ ել ի դմանէ: Եւ զարկոյց զնա այսն պիղծ. եւ աղաղակեաց ի ձայն մեծ, եւ ել ի նմանէ: Եւ զարմացան ամենեքին, մինչեւ հծծել ընդ միմեանս եւ ասել. Զի՞նչ է այս նոր վարդապետութիւնս, զի իշխանութեամբ եւ այսոց պղծոց սաստէ եւ հնազանդին սմա: 27:

---

## ԵՐՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### ԲԿ.

### Սրբոյն Քրիստափորի վկային եւ երկուց կանանցն Կալինիկեայ եւ Ակիւլինեայ:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԺԵ. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 12:

Շնորհ ունիմ այնմիկ, որ զօրացոյցն զիս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. զի հաւատարիմ համարեցաւ կարգել ի սպասաւորութիւն, որ յառաջագոյն հայհոյիչն էի եւ հալածիչ եւ թշնամանիչ. այլ գտի ողորմութիւն, զի զայն յանգիտութեան եւ յանհաւանութեան գործէի: Եւ առաւել եղեն շնորհք Տեառն մերոյ հաւատովքն եւ սիրով՝ որ ի Քրիստոս Յիսուս: Հաւատարիմ է բանս եւ ամենայն



ընդունելութեան արժանի է. զի Քրիստոս Յիսուս եկն յաշխարհ փրկել զմեղաւորս, որոց գլուխն ես եմ: Այլ վասն այնորիկ գտի ողորմութիւն, զի նախ յիս եցոյց Յիսուս Քրիստոս զամենայն երկայնմտութիւն յօրինակ այնոցիկ՝ որ հաւատալոց իցեն ի նա, ի կեանսն յաւիտենից: Այլ թագաւորին յաւիտենից, անեղծի եւ աներեւութի, միոյն Աստուծոյ փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: 17:

Ալէլուիա, ալէլուիա. Կարդացին արդարքն առ Տէր, եւ Տէր լուաւ նոցա. եւ յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԲ. 32:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Մի երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն: Վաճառեցէք զինչս ձեր, եւ տուք ողորմութիւն, եւ արարէք ձեզ քսակ առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող մերձենայ, եւ ոչ ցեց ապականէ: Զի ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին: Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս եւ ճրագունք լուցեալք: Եւ դուք նմանողք մարդկան՝ որ ակն ունիցին տեառն իւրեանց՝ թէ ե՛րբ դառնայցէ ի հարսանեաց. զի յորժամ գայցէ եւ բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա: Երանի՛ իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ՝ զի գօտի ընդ մէջ ածցէ եւ բազմեցուսցէ զնոսա, եւ անցեալ պաշտիցէ զնոսա: Եւ եթէ յերկրորդ կամ յերրորդ պահու եկեսցէ եւ գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ: Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն յորո՛ւմ պահու գող գայ՝ հսկէր եւ չտայր թոյլ ական հատանել ի տան իւրում: Եւ դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ Որդի մարդոյ: 40:

---

## ԵՐՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

### ԳԶ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԱ. 1:

Նմանողք ինձ եղերուք, որպէս եւ ես Քրիստոսի: Գովեմ զձեզ՝ զի զամենայն ինչ զիմ յիշէք. եւ որպէս աւանդեցի ձեզ՝ զաւանդութիւնսն ունիցիք: Կամիմ զի գիտիցէք դուք եթէ առն ամենայնի գլուխ Քրիստոս է, եւ գլուխ կնոջ այր, եւ գլուխ Քրիստոսի Աստուած: Ամենայն այր՝ յորժամ յաղօթս կայցէ կամ մարգարէանայցէ, եւ զգլուխն ծածկեալ ունիցի, յամօթ առնէ զգլուխն իւր: Եւ ամենայն կին՝ յորժամ յաղօթս կայցէ կամ մարգարէանայցէ բացաւ գլխով, յամօթ առնէ զգլուխն իւր, զի այնպէս համարէ թէ գերծեալ իցէ: Զի եթէ ոչ սքողեսցի կին, փոքրեսցէ զհերս իւր. ապա թէ անպատեհ է կնոջ փոքրել կամ գերծուլ, սքողեսցի: Առն մարդոյ չէ պարտ ծածկել զգլուխ, զի պատկեր եւ փառք Աստուծոյ է. իսկ կին՝ փառք առն իւրոյ է: Զի ոչ եթէ այր ի կնոջէ է, այլ կին յառնէ: Քանզի ոչ իսկ հաստատեցաւ այր վասն կնոջ, այլ կին վասն առն: Վասն այնորիկ պարտի կինն շուք դնել գլխոյն վասն հրեշտակաց: Բայց ոչ կին առանց առն, եւ ոչ այր առանց կնոջ ի Տէր: Զի որպէս կին յառնէ՝ նոյնպէս եւ այր ի կնոջէ, բայց ամենայն յԱստուծոյ: Այլ դուք ձեզէն տուք զիրաւդ. արժա՞ն է կնոջ մարդոյ հոլանի յաղօթս կալ առաջի Աստուծոյ: Եւ ո՞չ բնութիւնն իսկ ուսուցանէ զձեզ. զի այր եթէ գիսաւոր է՝ անարգանք են նմա. բայց կին եթէ գիսաւոր է՝ փառք են նմա. զի գէսք փոխանակ զգեստու տուեալ են նմա: Ապա եթէ ոք կամի հակառակող լինել, մեք չունիմք այնպիսի սովորութիւն, եւ ոչ եկեղեցիքն Աստուծոյ: 16:



Ալէլուիա, ալէլուիա. Վասն անուան քոյ Տէր քաւեա զմեղս իմ. զի բազում եղեն յոյժ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Ա. 28:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ ել լուր նորա ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց: Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդենէն, եկն ի տուն Սիմովնի եւ Անդրեայ՝ Յակովբաւ եւ Յովհաննու հանդերձ: Եւ զոքանչ Սիմովնի դնէր ջերմացեալ. եւ վաղվաղակի ասեն ցնա վասն նորա: Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա. եւ եթող զնա տենդն եւ պաշտէր զնոսա: Եւ իբրեւ երեկոյ եղեւ ի մտանել արեգականն, բերին առ նա զամենայն հիւանդս եւ զդիւահարս. եւ էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դուրսն: Եւ բժշկեաց բազում հիւանդս ի պէսպէս ախտից, եւ դեւս բազումս եհան. եւ ոչ տայր խօսել դիւացն, զի գիտէին զնա թէ Քրիստոսն է: 34:

---

## ԵՐՐՈՐԴ ԾԱԲԱԹ

### ԳԿ.

Եփեսոսի Ս. ժողովոյն Մ. Հայրապետացն:

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցէք զաթոռ ի յերկրի. առաքելական առէք զպատիւ յերկնուստ, ծառայք Քրիստոսի ո՛վ երանելիք ի հարս սուրբ հայրապետք: Քանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

**Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս.** ԳԼ· Ա· 6։

Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աստուծոյ, որ են ի քեզ ի ձեռնադրութենէ իմմէ։ Օ՛ի ոչ ետ մեզ Աստուած հոգի վհատութեան, այլ զօրութեան եւ սիրոյ եւ զգաստութեան։ Մի այսուհետեւ ամօթ համարիցիս զվկայութիւնն Տեառն մերոյ եւ մի զիս զկապեալ նորա. այլ կցորդ լեր չարչարանաց աւետարանին ըստ զօրութեան Աստուծոյ. որ փրկեացն զմեզ եւ կոչեաց ի կոչումն սուրբ, ոչ ըստ գործոց մերոց, այլ ըստ իւրում յառաջադրութեանն եւ շնորհացն՝ որ տուաւ մեզ ի Քրիստոս Յիսուս յառաջ քան զժամանակական յաւիտենից։ Բայց յայտնեցաւ այժմիկ յերեւել փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ խափանեաց զմահ, եւ լուսաւոր արար զկեանս եւ զանեղծութիւն ի ձեռն աւետարանին, որոյ եդայ ես քարոզ եւ առաքեալ եւ վարդապետ հեթանոսաց։ Վասն որոյ եւ զայս չարչարանս կրեմ, այլ ոչ ինչ ամօթ համարիմ. քանզի գիտեմ յո հաւատացեալն եմ. եւ հաստատեալ եմ թէ կարող է զաւանդն իմ պահել յօրն յայն։ Ունիցիս օրինակ ողջմտութեան բանից՝ զորս լինէն լուար, հաւատովք եւ սիրով որ ի Քրիստոս Յիսուս։ Զքարւոք աւանդն պահեսջեր ի ձեռն Հոգւոյն սրբոյ ի մեզ բնակելոյ։ 14։

Ալէլուիա. ալէլուիա. Վահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

**Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.**

ԳԼ· Ժ· 16։

**Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.**

Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, եւ որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ. եւ որ զիս անարգէ՝ զառաքիչն իմ անարգէ. եւ որ ինձ լսէ՝ լսէ այնմիկ որ զիս առաքեաց։ Դարձան եօթանասունն եւ երկուքն խնդութեամբ եւ ասեն. Տէր, եւ դեւք հնազանդին մեզ յանուն քո։ Նա ասէ ցնոսա. Տեսանէի զսատանայ անկեալ յերկնից իբրեւ զփայլակն։ Ահա ետու ձեզ իշխանութիւն կոխել զօձս եւ զկարիճս եւ



զամենայն զօրութիւն թշնամւոյն, եւ ձեզ ոչ ինչ մեղանչեցեն։ Բայց ընդ այն մի՛ խնդայք՝ եթէ այսք հնազանդին ձեզ, այլ խնդացէք՝ զի անուանք ձեր գրեալ են յերկինս։ 20։

---

Ընտ ժէջոյ՝ որ է վարդավառէն մինչ է սուրբ Աստուածածնին, հանապազ յաւելու ե- նոպէ։ Ապա է վարդավառէն է վեր տո- հաշո-եա ե- պես պո-պէն, ե- պօծնէրն է վերայ ա-ո-ըցն ահհանես։ Ընկե պըս շաքար է ո-պէն, տո- ըստ գրեցելո-ծ ապա։ Ը- ընկ էան պըս շաքարն պակաս է ո-պէն, տո- պօծնէրն եպէո- եպէո- կամ եպե+ եպե+ պօծնես ընդ ժ, որ ճաքի։ Իսկ ընկ էան պըս շաքարն ա-ելք ընկն ո-պէն, տո- յա-ելըդեացն ա- ե- պօծնես, որ ո-պնէ գեայ։ Բայց այնպէսպ՝ որ է քաքէկենդեանի շաքար օրն հանապազ պէշրո- հապը-ը հայրապետացն պօծնես անպատճառ։ Ը- է յա-ելես շաքարո-ն՝ պնի-բահէնն ե- պշօրե+շաքարո-ն ե- պո-բահո-ն կարգ պյապէս ապա։

---

## ՁՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՋԿՆԻ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

### ԴՁ·

Յոհաննէս. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ կուսէն. անփոփոխելով մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցոյց զմեզ։

Սղ· կդ· Զեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք Երուսաղէմ։

Լսեր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ։

**Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս.** ԳԼ· ԺԲ· 1։

Այլ վասն հոգեւորացն, ե՛ղբարք, ոչ կամիմ եթէ տգէտք իցէք։ Գիտէք իսկ զի մինչ հեթանոսքն էիք, առ

կուռս անմռունչս որպէս երթայիք եւ գայիք։ Վասն որոյ ցուցանեմ ձեզ, զի ոչ ոք Հոգւով Աստուծոյ խօսի, եւ ասիցէ թէ նզովեալ Յիսուս. եւ ոչ ոք կարէ ասել Տէր զՅիսուս, եթէ ոչ Հոգւովն սրբով։ Թէպէտ եւ բաժինք շնորհաց են, այլ Հոգի նոյն է։ Եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է։ Եթէ բաժինք աջողութեանց են, այլ Աստուած նոյն է, որ աջողէ զամենայն յամենայնի։ Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութիւն Հոգւոյն՝ առ իւրաքանչիւր օգուտ։ Ումեմն ի Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան, այլում բան գիտութեան ըստ նմին Հոգւոյ. միւսումն հաւատք նովին Հոգւով, այլում շնորհք բժշկութեանց նովին Հոգւով. այլում աջողութիւնք զօրութեանց, այլում մարգարէութիւն, այլում ընտրութիւն հոգւոց, այլում ազգք լեզուաց, այլում թարգմանութիւնք լեզուաց։ Այլ զայս ամենայն աջողէ մի եւ նոյն Հոգի, եւ բաժանէ իւրաքանչիւր որպէս եւ կամի։ 11։

Ալէլուիա, ալէլուիա. Հաճեցար Տէր ընդ երկիր քո. եւ դարձուցեր զգերութիւն Յակովբայ։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Ա. 35։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ ել եւ գնաց յանապատ տեղի, եւ անդ կայր յաղօթս։ Եւ գնաց զհետ նորա Սիմովն եւ որ ընդ նմայն էին։ Եւ իբրեւ գտին զնա՝ ասեն ցնա, թէ Ամենեքին խնդրեն զքեզ։ Եւ ասէ ցնոսա. Եկայք երթիցուք եւ յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն, զի եւ անդ քարոզեցից, զի յայս իսկ եկեալ եմ։ Եւ քարոզէր ի ժողովուրդս նոցա ընդ ամենայն Գալիլեացիս, եւ դեւս հանէր։ 39։

---

## ՉՈՐՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

### ԱԿ.

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք։



Սղ. 2Ե. Կեցո զծառայս քո Աստուած իմ. որ ի քեզ յուսացայ։

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԲ. 12։

Որպէս մարմին մի է, եւ անդամս բազումս ունի, եւ ամենայն բազում անդամք մարմնոյն՝ մի մարմին է. նոյնպէս եւ Քրիստոս։ Քանզի միով Հոգւով մեք ամենեքին ի մի մարմին մկրտեցաք. եթէ Հրեայք, եթէ հեթանոսք, եթէ ծառայք, եթէ ազատք. ամենեքին զմի Հոգի արբաք։ Քանզի մարմին ոչ մի անդամ է, այլ բազում։ Եթէ ասիցէ ոտն. Զի չեմ ձեռն՝ չեմ ի մարմնոյ անտի, ոչ այնու չիցէ ի մարմնոյ անտի։ Եթէ ասիցէ ունկն. Վասն զի չեմ ակն՝ չեմ ի մարմնոյ անտի, ոչ այնու չիցէ ի մարմնոյ անտի։ Եթէ ամենայն մարմին ակն էր՝ ո՞ւր էր ունկն. եւ եթէ ամենայն լսելիք էին՝ ո՞ւր էին հոտոտելիք։ Բայց արդ Աստուած եդ զանդամսն՝ զմի մի իւրաքանչիւր ի նոցանէ ի մարմին, որպէս եւ կամեցաւ։ Ապա թէ էր ամենայն մի անդամ, ո՞ւր էր մարմին։ Բայց արդ անդամք բազում են, եւ մարմին մի։ Ոչ կարէ ակն ասել ցձեռն, թէ Չես ինձ պիտոյ, եւ կամ դարձեալ գլուխն ցոտսն՝ թէ Չէք ինձ պիտոյ։ Այլ առաւել որ թուին անդամք մարմնոյն թէ տկարագոյնք իցեն, կարեւորք են. եւ որ թուինն թէ անարգագոյնք իցեն մարմնոյն, այնց առաւելագոյն պատիւ առնեմք. եւ ամօթոյքն մեր առաւել եւս պարկեշտութիւն ունին։ Եւ պարկեշտիցն մերոց չէ ինչ պիտոյ. քանզի Աստուած խառնեաց զմարմինն, եւ նուազին առաւել եւս պատիւ ետ. զի մի՛ իցեն հերձուածք ի մարմնի անդ. այլ զի նոյնք զմիմեանց հոգայցեն անդամքն։ Եթէ վշտանայ ինչ մի անդամն, վշտանան ամենայն անդամքն ընդ նմա. եւ եթէ փառաւորի մի անդամն, խնդան ամենայն անդամքն ընդ նմա։ Այլ դուք մարմին Քրիստոսի էք եւ անդամք յանդամոց նորա։ 27։

Ալէլուիա, ալէլուիա. Տէր, մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. եւ մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

ԳԼ· Ա· 40:

Ընդ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Գայ առ նա բորոտ մի, աղաչէր՝ ի ծունր իջանէր եւ ասէր. Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել: Իսկ Յիսուս գթացեալ ձգեաց զձեռն, մերձեցաւ ի նա եւ ասէ ցնա. Կամիմ սրբեաց: Եւ իբրեւ ասացն ցնա՝ վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտութիւնն եւ սրբեցաւ: Եւ սաստեալ նմա՝ եհան արտաքս վաղվաղակի եւ ասէ. Օգոյշ լեր՝ մի՛ ումեք ինչ ասիցես. այլ երթ ցոյց զքեզ քահանային. եւ մատո վասն սրբութեան քո պատարագ՝ զոր հրամայեաց Մովսէս ի վկայութիւն նոցա: Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ եւ հռչակ հարկանել զբանն, մինչ ոչ եւս կարող լինել նմա յայտնապէս ի քաղաք մտանել, այլ արտաքոյ յանապատ տեղիս էր. եւ գային առ նա յամենայն կողմանց: 45:

---

## ՁՈՐՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

ՌԿ·

Ժամամուտ. Ող ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ· ԶԷ· Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի պաճուճելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. ԳԼ· ԺԳ· 1:

Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ եւ զհրեշտակաց, եւ սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ զպղինձ՝ որ հնչէ, կամ իբրեւ զծնծղայս՝ որ ղօղանջեն: Եւ եթէ ունիցիմ մարգարէութիւն, եւ գիտիցեմ զխորհուրդս ամենայն եւ զամենայն գիտութիւն, եւ եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչեւ



զլերինս փոփոխել, եւ սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ: Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, եւ մատնիցեմ զմարմինս իմ յայրուիմն, եւ սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ: Սէր երկայնամիտ է, քաղցրանայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճէ, ոչ հպարտանայ, ոչ յանդգնի, ոչ խնդրէ զնւր, ոչ գրգռի, ոչ խորհի չար, ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն. ամենայնի տեւէ, ամենայնի հաւատայ, ամենեւին յուսայ, ամենայնի համբերէ: Սէր ոչ երբեք անկանի. եթէ մարգարէութիւնք են՝ խափանեսցին, եթէ լեզուք՝ լռեսցեն, եթէ գիտութիւնք՝ խափանեսցին: Վասնզի փոքր ի շատէ գիտեմք, եւ փոքր ի շատէ մարգարէանամք: Այլ յորժամ եկեսցէ կատարումն, փոքր ի շատէս խափանեսցի: 10:

Ալէլուիա, ալէլուիա. Դարձ, Տէր, եւ փրկեա զանձն իմ. կեցո զիս Տէր ըստ ողորմութեան քումմ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

ԳԼ· Թ· 1:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ մտեալ դարձեալ ի Պափառնաում յետ աւուրց, լուաւ եղեւ եթէ ի տան է, եւ ժողովեցան բազումք՝ մինչեւ տեղի եւս ոչ լինել եւ ոչ առ դրանն. եւ խօսէր նոցա զբանն: Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ մի բարձեալ ի չորից: Եւ իբրեւ ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխէ անտի, քակեցին զկարկն՝ ուր էր Յիսուս, եւ բացեալ զառաստաղն իջուցին զմահիճան յորում կայր անդամալոյծն: Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն. Որդեակ, թողեալ լինին քեզ մեղք քո: Եւ էին ոմանք ի դպրաց անտի՝ որ անդ նստէին, եւ խորհէին ի սիրտս իւրեանց. Ընդէ՞նչ է այս՝ որ խօսի սա զհայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ՝ մի Աստուած: Եւ գիտաց Յիսուս յոգի իւր՝ թէ այնպէս խորհին ի սիրտս իւրեանց, եւ ասէ. Ընդէ՞ խորհիք զայդ ի սիրտս ձեր: Ընդէ՞նչ դիւրին է. ասել՞ ցանդամալոյծն՝ Թողեալ լինին քեզ մեղք քո, եթէ ասել՝ Յարի առ զմահիճն քո եւ երթ ի տուն քո: Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ ի վերայ երկրի

թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն. վասն զի ասեմ՝ արի առ զմահիճս քո եւ երթ ի տուն քո: Եւ յարեաւ վաղվաղակի, առեալ զմահիճն՝ եւ առաջի ամենեցուն. մինչեւ զարմանալ ամենեցուն եւ փառաւոր առնել զԸստուած եւ ասել, թէ Ընդ այսպիսի ինչ երբեք ոչ տեսաք: 12:

---

## ԿԻՐԱԿԷ

*Բարեկենդան Աստուածածնին:*

Ժամամուտ. Ի ծածին Որդի եւ Խանդ Ըստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Ըստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար վասն Քրիստոս Ըստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Աղ. կթ. Վասն վայելչ օրհնութիւն Ըստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք Երուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուած. Գղ. ժգ. 11:

Մինչ տղայն էի՝ իբրեւ զտղայ խօսէի, իբրեւ զտղայ խորհէի, իբրեւ զտղայ համարէի. այլ յորժամ եղէ այր՝ զտղայութեանն ի բաց խափանեցի: Այժմ տեսանեմք իբրեւ ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման. այժմ խելամուտ եմ փոքր ի շատէ, այլ յայնժամ գիտացից՝ որպէս եւ նայն ծանեաւ զիս: Այլ արդ մնան հաւատք, յոյս, սէր. սոքա երեքեան, եւ մեծ քան զսոսա սէր է: Զհետ երթայք սիրոյ, եւ նախանձաւոր լերուք հոգեւորացն առաւել՝ զի եւ դուք մարգարէանայցէք: Զի որ խօսի ի լեզուս՝ ոչ ընդ մարդկան խօսի, այլ ընդ Ըստուծոյ. զի ոչ ոք է՝ որ լսէ, բայց հոգւով խօսի ի խորհուրդս: Իսկ որ մարգարէանայն, մարդկան խօսի շինուածիւ եւ մխիթարութիւն եւ սփոփութիւն: Որ խօսի ի լեզուս, զանձն իւր շինէ. եւ որ մարգարէանայ, զեկեղեցին շինէ: Կամիմ զի ամենեքին դուք ի լեզուս խօսիցիք, առաւել՝ զի մարգարէանայցէք. զի լաւ է որ մարգարէանայն քան զայն՝ որ ի լեզուսն խօսիցի, բայց եթէ թարգմանիցէ՝ զի եկեղեցին շինուածիւն առնուցու: Ծդ. 5:

Ալէլուիա, ալէլուիա. Յաղո-ՂԵաւ է յայնէն:

Սրբոյ Ըւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գղ. Բ. 13:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ել դարձեալ ի ծովեզրն, եւ ամենայն ժողովուրդն գայր առ նա. եւ ուսուցանէր զնոսա: Եւ մինչ դեռ անցանէր, տեսս զԼեւի Ըլփեայ՝ զի նստէր ի մաքսաւորութեան. եւ ասէ ցնա. Ելի զկնի իմ. եւ յարուցեալ գնաց զկնի նորա: Եւ եղեւ ի բազմելն նորա ի տան նորա, եւ բազում մաքսաւորք եւ մեղաւորք բազմեալ էին ընդ Յիսուսի եւ ընդ աշակերտան նորա. քանզի էին բազումք՝ որ երթային զհետ նորա: Իսկ դպիրքն եւ փարիսեցիք իբրեւ տեսին՝ թէ ուտէ ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս, ասեն ցաշակերտան նորա: Ո՞վ զի ընդ մեղաւորս եւ ընդ մաքսաւորս ուտէք եւ ըմպէք: Իբրեւ լուաւ Յիսուս՝ ասէ ցնոսա. Ոչ ինչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց. եւ ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս: 17:

---

Եր- ապա պահ+ ա-ըք Ըսպա-ածածնին. ե- պօն+ ա ը ընին:

## ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկինից իջեր եւ լուսաւորեցեր զտիեզերս. զհաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թոգաւոր, զհաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Աղ. ճխգ. Ողբայութիւն քո արքայութիւն ամենայն յաւիտենից. եւ տէրութիւն քո յազգէ մինչեւ յազգ:

Հաւատամք է Տէր յամենայն բանս իւր. եւ արդար է յամենայն գործս իւր:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԴ. 18:

Գոհանամ զԱստուծոյ, վասն ամենեցուն ձեր՝ առաւել լեզուաւ խօսիմ: Այլ ի մէջ եկեղեցւոյն կամիմ բանս հինգ մտօք խօսել, զի եւ զայլս խրատիցեմ, քան զբազում բանս լեզուաւ: Ե՛զբարք, մի՛ տղայք լինիք մտօք, այլ ի չարեաց տղայացարուք, եւ մտօք կատարեալք լինիջիք: Քանզի եւ յօրէնս գրեալ է, եթէ Յօտար լեզուս եւ ի շրթունս օտարոտիս խօսեցայց ընդ ժողովրդեանդ ընդ այդմիկ. սակայն եւ ոչ այնպէս լուիցեն ինձ, ասէ Տէր: Ապա ուրեմն լեզուք նշանակի վասն են՝ ոչ հաւատացելոց, այլ անհաւատից. իսկ մարգարէութիւն՝ ոչ անհաւատից, այլ հաւատացելոց: Ապա եթէ գայցէ եկեղեցին ամենայն ի մի վայր, եւ ամենեքեան ի լեզուս խօսիցին, եւ մտանիցեն անդր տգէտք կամ անհաւատք, ո՞չ ասիցեն՝ եթէ Ջի՞ մոլիքդ: Իսկ եթէ ամենեքեան մարգարէանայցեն, եւ մտանիցէ ոք անդր անհաւատ կամ տգէտ, յանդիմանի յամենեցունց, եւ քննի յամենեցունց. եւ գաղտնիք սրտի նորա յայտնի լինին. եւ ապա անկեալ ի վերայ երեսաց՝ երկիր պագանիցէ Աստուծոյ, եւ խոստովան լինիցի՝ թէ Արդարեւ Աստուած է ի ձեզ: 25:

Ալէլուիա, ալէլուիա. Եկայք ցնծասցուք ի Տէր. աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Բ. 18:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ էին աշակերտքն Յովհաննու եւ փարիսեցիքն ի պահս, գան եւ ասեն ցնա. Ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու եւ փարիսեցիքն պահեն, եւ քո աշակերտքդ ոչ պահեն: Եւ ասէ ցնոսա Յիսուս. Միթէ մա՞րթ ինչ իցէ որդւոց առագաստի մինչ ընդ նոսա իցէ փեսայն՝ պահել. ցորքան ընդ իւրեանս ունիցին զփեսայն, ոչ է մարթ պահել: Այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ վերասցի ի նոցանէ փեսայն, եւ ապա պահեսցեն յաւուրն յայնմիկ: Ոչ ոք կապերտ նոր անթափ արկանէ ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ առնու լրութեամբն իւրով նորն ի հնոյ անտի, եւ չար եւս պատառումն լինի: Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին՝ զտիկսն, գինին հեղու, եւ տիկքն կորնչին. այլ գինի նոր ի տիկս նորս արկանելի է: 22:



---

## ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն, որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. Ե. Երկիր պագից ի տաճար սուրբ քո. եկիւղիւ քո Տէր:

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քոյ Տէր. զի օրհնեսցես դու զարդարն:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԴ. 26:

Եւ արդ զի՞նչ իցէ, եղբարք. յորժամ ի մի վայր ժողովիցիք, իւրաքանչիւր ոք ի ձէնջ եթէ սաղմոս ունիցի, եթէ վարդապետութիւն ունիցի, եթէ յայտնութիւն ունիցի, եթէ լեզուս ունիցի, եթէ թարգմանութիւն ունիցի, ամենայն ի շինած լինիցի: Եթէ ի լեզուս ոք խօսեսցի՝ երկուք, եւ եթէ եւս աւելի՝ երեք, եւ ապա մի ըստ միոջէ. եւ մինն թարգմանիցէ: Ապա եթէ չիցէ ոք՝ որ թարգմանիցէ, լուռ լիցի յեկեղեցւոջն. ընդ միտս իւր եւ ընդ Աստուծոյ խօսեսցի: Բայց մարգարէք երկու կամ երեք խօսեսցին, եւ այլքն քննեսցեն: Ապա եթէ այլ ումեք որ նստիցին՝ յայտնեսցի, առաջինն լռեսցէ: Քանզի կարող էք ամենեքին մի ըստ միոջէ մարգարէանալ. զի ամենեքեան ուսանիցին, եւ ամենեքեան մխիթարեսցին: Քանզի եւ հոգիք իսկ մարգարէից՝ մարգարէից հնազանդին: Ջի ոչ եթէ խռովութեան է Աստուած, այլ խաղաղութեան. որպէս յամենայն եկեղեցիս սրբոց: Կանայք յամենայն եկեղեցիս լուռ լիցին. զի ոչ հրամայի նոցա խօսել, այլ հնազանդ լինել. որպէս եւ օրէնքն իսկ ասեն: Ապա եթէ ուսանել ինչ կամիցին, ի տան զարս

իւրեանց հարցանիցեն. քանզի անպատեհ է կնոջ մարդոյ յեկեղեցւոջ խօսել: Եթէ ի ձէ՞նջ բանն Աստուծոյ ել, եւ կամ թէ առ ձե՞զ միայն եհաս: Իսկ եթէ ոք համարիցի մարգարէ լինել կամ հոգեւոր, գիտասցէ զոր գրեցիդ առ ձեզ, եթէ Տեառն պատուիրանք են: Ապա եթէ ոք տգիտանայցէ, տգիտասցի: Այսուհետեւ, եղբարք, նախանձեցարուք մարգարէանալ, եւ զխօսելն լեզուօք մի՛ արգելուք: Եւ ամենայն ինչ ձեր պարկեշտութեամբ եւ ըստ կարգի լինիցի: 40:

Ալէլուիա, ալէլուիա. Երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէք Տեառն ամենայն երկիր. երգեցէք Տեառն եւ բարձր արարէք զանուն նորա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.
Գլ. Բ. 23:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ եղեւ նմա ի շաբաթու անցանել ընդ արտորայս, եւ աշակերտքն ի գնալն իւրեանց՝ սկսան հասկ կորզել եւ ուտել: Եւ փարիսեցիքն ասեն ցնա. Տես՝ զի՞նչ գործեն աշակերտքն քո ի շաբաթուս՝ զոր չէ արժան: Եւ ասէ ցնոսա Յիսուս. Ո՞չ երբեք իցէ ընթերցեալ ձեր զոր արարն Դաւիթ, յորժամ պիտոյն եղեւ, եւ քաղցեաւ նա եւ որ ընդ նմայն էին: Զի՛արդ եմուտ ի տունն Աստուծոյ առ Աբիաթարաւ քահանայապետիւ, եւ զհացն զառաջաւորութեան եկեր եւ ետ այնոցիկ որ ընդ նմայն էին. զոր ոչ էր օրէն ուտել, բայց միայն քահանայիցն: Եւ ասէ ցնոսա. Շաբաթ վասն մարդոյ եղեւ, եւ ոչ եթէ մարդ վասն շաբաթու: Ապա ուրեմն՝ տէր է Որդի մարդոյ եւ շաբաթու: Եւ եմուտ միւսանգամ ի ժողովուրդն. եւ էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր: Եւ սպասէին նմա՝ եթէ բժշկեսցէ զնա ի շաբաթուն, զի չարախօսեսցեն զնմանէ: Եւ ասէ ցայրն որոյ ձեռն գօսացեալ էր. Արի անց ի մէջ: Եւ ասէ ցնոսա. Զի՞նչ արժան է ի շաբաթու, բարի՞ ինչ գործել՝ եթե չար առնել, ոգի՞ մի ապրեցուցանել՝ եթէ կորուսանել. եւ նոքա լռեցին: Եւ հայեցեալ Յիսուսի զնոքօք լի ցասմամբ տրտմեալ վասն կուրութեան սրտից նոցա՝ ասէ ցայրն. Ձգեա զձեռն քո. եւ նա ձգեաց, եւ ողջացաւ ձեռն նորա: Գ. 5:

---



## ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. Ձե. Կեցո զծառայս քո Աստուած իմ. որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԵ. 20:

Այլ արդ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց՝ առաջին պտուղ ննջեցելոց: Քանզի մարդով եղեւ մահ, եւ մարդով յարութիւն մեռելոց: Որպէս Ադամաւն ամենեքին մեռանին, նոյնպէս եւ Քրիստոսիւ ամենեքին կենդանասցին: Իւրաքանչիւր յիւրում կարգի. նախ Քրիստոս, եւ ապա քրիստոսեանք ի գալստեան նորա: Եւ ապա կատարած. յորժամ տացէ ի ձեռս զթագաւորութիւնն Աստուծոյ եւ Հօր. յորժամ խափանեսցէ զամենայն իշխանութիւնս եւ զամենայն պետութիւն եւ զզօրութիւն: Զի պարտ է նմա թագաւորել՝ մինչեւ դիցէ զամենայն թշնամիս ի ներքոյ ոտից իւրոց: Յետին թշնամին խափանի՝ մահ. եւ զամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից նորա: Այլ յորժամ ասիցէ, թէ Հնազանդեալ է նմա ամենայն, յայտ է թէ բաց յայնմանէ՝ որ հնազանդեցոյց նմա զամենայն: Այլ յորժամ հնազանդեսցի նմա ամենայն, յայնժամ եւ ինքն Որդի հնազանդեսցի այնմ՝ որ հնազանդեցոյց նմա զամենայն, զի եղիցի Աստուած ամենայն յամենայնի: Ապա թէ ոչ՝ զի՞նչ գործիցեն որ մկրտիցինն վասն մեռելոց, եթէ արդարեւ մեռեալք ոչ յառնիցեն. ընդէ՞ր իսկ բնաւ մկրտին վասն նոցա. ընդէր եւ մեք ճգնիմք յամենայն ժամ, եւ հանապազ մեռանիմք: Ի պարծանս ձեր երդնում, եղբարք, զոր ունիմ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր: Եթէ վասն մարդոյ ի գազանամարտի լեալ էի Յափեսոս, զի՞նչ օգուտ էր ինձ, եթէ մեռեալք ոչ յառնեն. կերիցուք արբցուք, քանզի վաղիւ մեռանիմք: Մի՛ խաբիք. ապականեն զբարս քաղցունս բանք չարք: 33:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի յայնէն:

### Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Գ. 6:

### Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն հերովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ առնէին վասն նորա՝ թէ զիա՛րդ կորուսցեն զնա: Իսկ Յիսուս աշակերտօքն իւրովք գնաց ի ծովեզրն. եւ բազում ժողովուրդ ի Գալիլեացւոց երթային զհետ նորա. եւ ի Հրէաստանէ, եւ յԵրուսաղեմէ, եւ յայնկոյս Յորդանանու, եւ որք ի Տիւրոսէ եւ ի Սիդովնէ. բազում ժողովուրդ իբրեւ լսէին՝ որչափ ինչ առնէր, գային առ նա: Եւ ասէ ցաշակերտսն իւր, զի նաւակ մի պատրաստական կայցէ նմա վասն ամբոխին՝ զի մի՛ նեղեսցեն զնա: Քանզի զբազումս բժշկեաց, մինչ գալ խռնել զնովաւ՝ զի մերձեսցին առ նա, որք ունէին ախտս ինչ: Եւ այսք պիղծք՝ յորժամ տեսանէին զնա, անկանէին առաջի նորա, աղաղակէին եւ ասէին, թէ Դու ես Որդի Աստուծոյ. եւ նա յոյժ սաստէր նոցա, զի մի՛ յայտնի առնիցեն զնա: 12:

---

## ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն. որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. ՂԸ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԵ. 34:

Սթափեցարուք արդարութեամբ եւ մի՛ մեղանչէք. զի զգիտութիւն Աստուծոյ ոչ ունին ոմանք. առ ամօթոյ ձերոյ ասեմ: Այլ ասիցէ ոք. զիա՞րդ յառնեն մեռեալք, կամ



որո՞վ մարմնով գայցեն: Ա՞նմիտ, դու զոր սերմանեսն, ոչ կենդանանայ՝ թէ ոչ մեռանիցի: Եւ զոր սերմանեսն, ոչ զնոյն մարմին որ ծնանելոցն իցէ՝ սերմանես, այլ հատ մերկ. եթէ ցորենոյ իցէ եւ եթէ այլոց սերմանեաց: Եւ Աստուած տայ նմա մարմին՝ որպէս եւ կամի. եւ իւրաքանչիւր սերմանեացն զիւր մարմինն: Ոչ ամենայն մարմին նոյն մարմին է, այլ՝ ա՛յլ մարմին է մարդկան, եւ ա՛յլ մարմին անասնոց ա՛յլ մարմին թռչնոց եւ ա՛յլ մարմին ձկանց: Եւ մարմինք երկնաւորք եւ մարմինք երկրաւորք. այլ՝ ա՛յլ փառք երկնաւորաց են եւ ա՛յլ փառք երկրաւորաց: Այլ փառք արեգական, եւ ա՛յլ փառք լուսնի, եւ ա՛յլ փառք աստեղաց. եւ աստղ քան զաստղ առաւել է փառօք: Նոյնպէս եւ յարութիւն մեռելոց. սերմանի ապականութեամբ եւ յառնէ առանց ապականութեան. սերմանի անարգութեամբ եւ յառնէ փառօք. սերմանի տկարութեամբ եւ յառնէ զօրութեամբ. սերմանի մարմին շնչաւոր եւ յառնէ մարմին հոգեւոր: Եթէ գոյ մարմին շնչաւոր, գոյ եւ հոգեւոր: Այսպէս եւ գրեալ է. Եղեւ մարդն առաջին Ադամ ի շունչ կենդանի. երկրորդ Ադամ՝ ի հոգի կենդանարար: Բայց ոչ նախ հոգեւորն. այլ շնչաւորն, եւ ապա հոգեւորն: Առաջին մարդն յերկրէ՝ հողեղէն. իսկ երկրորդ մարդն՝ Տէր յերկնից: Որպէս հողեղէնն, նոյնպէս եւ հողեղէնքս, եւ որպէս երկնաւորն, նոյնպէս եւ երկնաւորքն: Եւ որպէս զգեցաք զպատկեր հողեղինին, զգեցցուք եւ զպատկեր երկնաւորին: 49:

Ալէլուիա, ալէլուիա. Բարձր արարից զընտրեալն ի ժողովրդենէ իմմէ. գտի զԴաւիթ ծառայ իմ, եւ իւղով սրբով իմով օծի զնա:

### Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Գ. 20:

### Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Գան ի տուն, եւ գայ միւսանգամ ընդ նոսա ժողովուրդն, մինչ զի եւ հաց եւս ոչ ժամանել ուտել նոցա: Եւ իբրեւ լուան որ իւրքն էին՝ ելին ունել զնա, զի համարէին թէ մոլեգնեալ իցէ: Եւ դպիրքն՝ որ յԵրուսաղեմէ

իջեալ էին, ասէին թէ Լեղեղբուղ գոյ ի դմա, եւ իշխանաւ դիւացն հանէ զա զդեւս: Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն, առակօք խօսէր ընդ նոսա. Օվիմդ կարէ սատանայ զսատանայ հանել: Եւ արդ եթէ թագաւորութիւն յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ կալ թագաւորութիւնն այն: Եւ եթէ տուն յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ կալ տունն: Եւ եթէ սատանայ ի վերայ անձին իւրոյ յարեաւ եւ բաժանեալ է, ոչ կարէ կալ, այլ վախճանեալ է: Այլ ոչ ոք կարէ զկարասի հզօրի՝ մտեալ ի տուն նորա՝ աւար հարկանել, եթէ ոչ նախ զհզօրն կապիցէ, եւ ապա զտուն նորա աւար հարկանիցէ: Ամէն ասեմ ձեզ, զի ամենայն թողցի որդւոց մարդկան մեղք եւ հայհոյութիւնք՝ որչափ եւ հայհոյիցեն. բայց որ հայհոյեսցէ զՀոգին սուրբ, ոչ ունիցի թողութիւն յաւիտեան. այլ պարտապան լինի յաւիտենից մեղաց: Օվ ասէին՝ թէ Ունի պիղծ գոյ ի նմա: 30:

---

## ՈՒՐԲԱԹ

Ժամամոտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զնաղղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Աղ. Ղէ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յորհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԵ. 50:

Այլ զայս ասեմ, եղբարք, եթէ մարմին եւ արիւն զարքայութիւն Աստուծոյ ժառանգել ոչ կարեն. եւ ոչ ապականութիւն զանապականութիւն ժառանգէ: Արդ խորհուրդ մի ասեմ ձեզ. ամենեքեան ննջեսցուք, այլ ոչ եթէ ամենեքեան նորոգեսցուք: Յանկարծակի յաման թօթափիլ՝ ի փող յետին. քանզի փող հարկանի, եւ մեռեալք յարիցեն առանց ապականութեան, եւ մեք նորոգեսցուք: Օվ պարտ է ապականութեանս այսմիկ զգենուլ զանապականութիւն, եւ մահկանացուիս այսմիկ



զգենուլ զանմահութիւն: Այլ յորժամ մահկանացուս այս զգեցցի զանմահութիւն, եւ ապականութիւնս՝ զանապականութիւն, յայնժամ եղիցի բանն՝ որ գրեցաւ, եթէ Ընկլաւ մահ ի յաղթութիւն: Որ է մահ յաղթութիւն քո. ո՞ւր են դժոխք խայթոցք քո: Խայթոց մահու մեղք են, եւ զօրութիւն մեղաց օրէնք: Այլ շնորհք Աստուծոյ՝ որ ետ մեզ զյաղթութիւն ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: 57:

Ալելուիա, ալելուիա. Պահոց է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Գ. 31:

Ընդ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Գան եղբարքն եւ մայր նորա, եւ արտաքոյ կացեալ յղեցին եւ կոչէին զնա: Եւ անդ ժողովուրդն շուրջ զնովաւ նստէր. եւ իբրեւ ասացին ցնա. Ահաւասիկ մայր քո եւ եղբարք քո կան արտաքոյ եւ խնդրեն զքեզ. պատասխանի ետ նոցա եւ ասէ. Ո՞վ է իմ մայր կամ եղբարք: Յայեցաւ շուրջ զնուրեւ յաշակերտսն զի նստէին եւ ասէ. Ահաւասիկ մայր իմ եւ եղբարք իմ. զի որ առնիցէ զկամս Աստուծոյ, նա է իմ եղբայր եւ քոյր եւ մայր: Սկսաւ դարձեալ ուսուցանել առ ծովեզերբն. եւ խռնեցան զնովաւ ժողովուրդք բազումք. մինչեւ ի նաւ մտանել նմա եւ նստել ի ծովուն. եւ ամենայն ժողովուրդն զծովեզերբն զգամաքն ունէին: Եւ ուսուցանէր զնոսա առակօք բազում ինչ. եւ ասէր նոցա ի վարդապետութեան իւրում. Լսէք՝ ահաւասիկ եւ սերմանող սերմանել: Եւ եղեւ ի սերմանելն, ոմն անկաւ առ ճանապարհաւ, եւ եկին թռչունն եւ եկեր զնա: Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում. եւ վաղվաղակի բուսաւ, քանզի ոչ գոյր հիւթ երկրին. եւ յորժամ ծագեաց արեւ՝ ջեռաւ, եւ զի ոչ գոյին արմատք՝ ցամաքեցաւ: Եւ այլն անկաւ ի մէջ փշոց. ելին փուշքն եւ հեղձուցին զնա, եւ պտուղ ոչ ետ: Եւ այլն անկաւ յերկիր բարւոք. եւ ելեալ աճեցեալ տայր պտուղ, եւ բերէր ընդ միոյ երեսուն, եւ ընդ միոյ վաթսուն, եւ ընդ միոյ հարիւր: Եւ ասէր. Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ: Դ. 9:

---

## ԾԱԲԱԹ

### Ցօն է շողակաթին:

Յոհաննու-ի. Օ՛Խաղաղութիւն ընդ ձեզ եկեղեցւոյ քումմ սրբոյ. զխաղաղութիւն եւ զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմի. եւ հաստատեա ի մի հաւատ զկաթուղիկէ եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տէր եւ Աստուած. կեցո զմեզ:

Սղ. Խէ. Աստուած հիմունս արկ նմա յաւիտեան:
Մեծ է Տէր եւ օրհնեալ է յոյժ. ի քաղաք Աստուծոյ մերոյ, ի լեառն սուրբ նորա:

Պետրոսի առաքելոյն ի կաթողիկէական առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 1:

Ի բաց թօթափել այսուհետեւ զամենայն չարութիւն եւ զամենայն նենգութիւն եւ զկեղծաւորութիւնս եւ զնախանձ եւ զամենայն չարախօսութիւն: Իբրեւ զարդի ծնեալ մանկունս խօսունս, եւ անխարդախ կաթինն փափագիցէք. զի նովաւ աճիցէք ի փրկութիւն: Եթէ ճաշակիցէք, զի քաղցր է Տէր: Ընդ որ մատուցեալ ի վէմն կենդանի, որ թէպէտ ի մարդկանէ անարգեալ, այլ առ ի Աստուծոյ ընտրեալ եւ պատուական է: Եւ դուք իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր. յանարատ քահանայութիւն մատուցանել զհոգեւորն պատարագ հաճոյս Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի: Վասնզի կայ իսկ ի գրի, թէ Ահաւասիկ դնեմ ի Սիովն վէմ ընտիր, գլուխ անկեան պատուական, եւ որ ի նա հաւատացէ՝ մի ամաչեսցէ: Ձեզ այսուհետեւ հաւատացելոց է վէմ պատուական. իսկ անհաւատիցն՝ վէմ զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան. եւ վէմ գլորման եւ վէմ գայթագղութեան, որ գայթագղին ապստամբեալք ի բանէն՝ յոր եւ եդանն: Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական. որպէս զի զձեր առաքինութիւնն նուիրիցէք այնմ, որ զձեզ ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյս: Որք երբեմն չժողովուրդ, բայց արդ ժողովուրդ Աստուծոյ, որք չողորմեալք՝ այժմ ողորմութիւն գտէք: 10:



Ալէլուիա, ալէլուիա. Հիմունք նորա ի լեառն սուրբ նորա. սիրէ Տէր զդրունս Սիովնի առաւել քան զամենայն յարկս Յակոբայ:

### Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԶ. 13:

### Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ եկեալ (Յիսուս) ի կողմանս Փիլիպպեայ Կեսարիոյ, հարցանէր զաշակերտսն եւ ասէր. Զո՞ր ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ Որդի մարդոյ: Եւ նոքա ասեն. Ոմն զՅովհաննէս Մկրտիչ, եւ այլք զԵղիա, եւ կէսք զՅերեմիա, կամ զմի ոք ի մարգարէիցն: Ասէ ցնոսա. Իսկ դուք զո՞ր ասէք զինէն թէ իցեմ: Պատասխանի ետ նմա Սիմոն Պետրոս եւ ասէ. Դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ կենդանւոյ: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Երանի՛ է քեզ Սիմոն որդի Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է: Եւ ես քեզ ասեմ. զի դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, եւ դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն: Եւ տացց քեզ զփականս արքայութեան երկնից. եւ զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս: 19:

# Ե ՏՕԾԵ ՓՈՔՄԱԾ

ՍՐԲՈՑ ԿՈՒՍԻՆ

# ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

---

## ԿԻՐԱԿԷ

## Ա. ՕՐ ՓՈԽՄԱՆ

Յ-ամաճոռ-պ. Ըստուածածին ամենօրհնեալ, զԻսանն անսկիզբն յղացար, եւ զԸստուածն անբովանդակելին ծնար. զանպարագրելին ի գիրկս քո բարձեր. նմա անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց:

Սղ. ճԼԱ. Երի Տէր ի հանգիստ քո. դու եւ տապանակ կտակի սրբութեան քոյ:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն ի Դաղատացւոց Թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 29:

Ըպա եթէ դուք Քրիստոսի էք՝ ուրեմն Աբրահամու զաւակ էք, ըստ աւետեացն՝ ժառանգք: Այս ասեմ, ցորքան ժամանակս ժառանգն տղայ է, չէ ինչ առաւել քան զծառայն, թէպէտ եւ տէր իցէ ամենեցուն. այլ ընդ հսկապետօք է եւ ընդ գաւառապետօք մինչեւ ի ժամանակակէտ հօրն: Նոյնպէս եւ մեք մինչ տղայքն էաք՝ ընդ տարերբք աշխարհիս ի ծառայութեան կայաք: Այլ իբրեւ եկն լրումն ժամանակին, առաքեաց Ըստուած զՈրդին իւր՝ որ եղեւ ի կնոջէ, եւ եմուտ ընդ օրինաց. զի զնոսա որ ընդ օրինաւքն իցեն, գնեացէ. զի մեք զորդեգրութիւն ընկալցուք:



եւ զի էք դուք որդիք, առաքեաց Ըստուած զՅոգի Որդւոյն իւրոյ ի սիրտս մեր, որ աղաղակէ Աբբա, Հայր: Այսուհետեւ չես ծառայ, այլ որդի. եթէ որդի, եւ ժառանգ Ըստուծոյ: Գ. 7:

Ալէլուիա, ալէլուիա. Այսօր ծնաւ որ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս Որդի, որ է օծեալ Տէր՝ ի քաղաքի Դաւթի: Ի վայելչութիւն սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու. Գլ. Բ. 1:

Ելանն ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Ի եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ եւ հրաման յՕգոստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս: Այս առաջին աշխարհագիր եղեւ ի դատաւորութեան Սորոց Կիւրենեայ: Եւ երթային ամենեքեան մտանել յաշխարհագիր յիւրաքանչիւր քաղաքի: Եւ եւ Յովսէփ ի Գալիլեէ ի քաղաքէ Նազարեթ՝ ի Հրէաստան, ի քաղաք Դաւթի, որ կոչի Բեթղեհէմ. վասն լինելոյ նորա ի տանէ եւ յազգէ Դաւթի, մտանել յաշխարհագիրն Մարիամ հանդերձ՝ զոր խօսեալն էր նմա, եւ էր յղի: Եւ եղեւ ի հասանելն նոցա անդր, լցան աւուրք ծնանելոյ նորա. եւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, եւ պատեաց ի խանձարուրս եւ եդ զնա ի մսուր. զի ոչ գոյր նոցա տեղի յիջեւանին: 7:

---

## ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

## Բ. ՕՐ ՓՈԽՄԱՆ

Յ-ամաճոռ-պ. Ըստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց. քանզի ուր քերովբէքն բազմաչեայք եւ սեռաթոռք հրանիւթք եւ վեցթեւեան սերովբէքն նայել ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս յանապական ունուն ի յարգանդի քում՝ որպէս աղախին զՏէր, եւ ծնար որպէս մարդ զԸստուածն բոլորից՝ զմարմնացեալն առ ի քէն զանձառ զԱնան, ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Սղ. հԱ. Ծագեսցէ յաւուրս նորա արդարութիւն. բազում խաղաղութիւն, մինչեւ կատարեսցի լուսին:

Աստուած, զիրաւունս քո արքայի տուր. եւ զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Զ. 16:

Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք որպէս եւ ասաց Աստուած, թէ Բնակեցայց ի նոսա, եւ գնացից ի նոսա, եւ եղէց նոցա Աստուած, եւ նոքա եղիցին իմ ժողովուրդ: Վասն որոյ ելէք ի միջոյ նոցա եւ մեկնեցարուք, ասէ Տէր, եւ ի պիղծս մի՛ մերձենայք, եւ ես ընկալայց զձեզ, եւ ես եղէց ձեզ ի հայր, եւ դուք եղիցիք ինձ յուստերս եւ ի դստերս, ասէ Տէր ամենակալ: Իսկ որովհետեւ զայս աւետիս ունիմք, սի՛րելիք, սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղծութենէ մարմնոյ եւ հոգւոյ. կատարեսցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ: Է. 1:

Ալէլուիա, ալէլուիա. Ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու ի կանայս, եւ օրհնեալ է պտուղ որովայնի քոյ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ա. 26:

Ի Հօրէն ամենակալէ.

Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ ի քաղաք մի Գալիլեացւոց, որում անուն էր Նազարեթ, առ կոյս խօսեցեալ առն, որում անուն էր Յովսէփ՝ ի տանէ Դաւթի, եւ անուն կուսին Մարիամ: Եւ եկեալ առ նա ասէ. Ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ: Եւ նա ընդ բանսն խռովեցաւ եւ խորհէր ընդ միտս՝ թէ որպիսի՞ ինչ իցէ ողջոյնս այս: Եւ ասէ ցնա հրեշտակն. Մի՞ երկնչիր Մա՛րիամ, զի գտեր շնորհս յԱստուծոյ: Եւ ահա յղասջիր եւ ծնցես որդի. եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս: Նա եղիցի մեծ, եւ Որդի բարձրելոյ կոչեսցի. եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր նորա. եւ



թագաւորեսցէ ի վերայ տանն Յակովբայ ի յաւիտեանս. եւ թագաւորութեան նորա վախճան մի լիցի: Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն. Զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ: Պատասխանի ետ հրեշտակն եւ ասէ ցնա. Հոգի սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո. քանզի եւ որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է, եւ Որդի Աստուծոյ կոչեսցի: Եւ ահա Եղիսաբեթ ազգական քո, եւ նա յղի է ի ծերութեան իւրում, եւ այս վեցերորդ ամիս է նորա՝ որ ամուլն կոչեցեալ էր. զի ոչ տկարասցի առ յԱստուծոյ ամենայն բան: Եւ ասէ Մարիամ. Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում. եւ գնաց ի նմանէ հրեշտակն: 38:

---

## ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

## Գ. ՕՐ ՓՈԽՄԱՆ

Ժամամուտ. Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մարիամ Աստուածածին, Բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ եւ սուրբ Հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ. որ զամենայն գոյութեանց ստեղծիչն յղացեալ ծնար անճառապէս. մարմնացելոյն առ ի քէն բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր:

Սղ. Բ. Տէր ասաց ցիս՝ Որդի իմ ես դու. եւ ես այսօր ծնայ զքեզ:

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. եւ ժողովուրդք խորհեցան՝ ի սնոտիս:

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 24:

Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեզ ի Քրիստոս Յիսուս, զի ի հաւատոցն արդարասցուք: Այլ իբրեւ եկին հաւատքն, ոչ եւս ընդ դաստիարակաւ եմք: Քանզի ամենեքեան որդիք Աստուծոյ էք հաւատովք ի Քրիստոս Յիսուս: Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք. չիք խտիր, ոչ հրէի եւ ոչ հեթանոսի, ոչ

ծառայի եւ ոչ ազատի, ոչ արուի եւ ոչ իգի. զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս։ Ապա եթէ դուք Քրիստոսի էք, ուրեմն Աբրահամու զաւակ էք, ըստ աւետեացն ժառանգք։ 29։

Ալէլուիա, ալէլուիա. Ուրախ լիցին երկինք, եւ ցնծասցէ երկիր. զուարճասցի ծով լրիւ իւրով, տիեզերք եւ ամենայն բնակեալքն ի նմա։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ա. 39։

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ, գնաց ի լեռնակողմն փութապէս ի քաղաքն Յուդայ։ Եւ եմուտ ի տուն Զաքարիայ, եւ ետ ողջոյն Եղիսաբեթի։ Եւ եղեւ իբրեւ լուաւ զողջոյնն Մարիամու Եղիսաբեթ, խաղաց մանուկն յորովայնի նորա. եւ լցաւ Եղիսաբեթ Հոգւով սրբով։ Եւ ի ձայն բարձր աղաղակեաց եւ ասէ. Օրհնեալ ես դու ի կանայս, եւ օրհնեալ է պտուղ որովայնի քոյ։ Եւ ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս։ Զի ահաւասիկ իբրեւ եղեւ ձայն ողջունի քո յականջս իմ, խաղաց ցնծալով մանուկս յորովայնի իմում։ Եւ երանի՞ որ հաւատայցէ՝ եթէ եղիցի կատարումն ասեցելոցս նմա ի Տեառնէ։ Եւ ասէ Մարիամ. Մեծացուսցէ անձն իմ զՏէր։ Եւ ցնծացաւ հոգի իմ յԱստուած փրկիչ իմ։ Զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. զի ահա յայսմհետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք։ Զի արար ինձ մեծամեծս հզօրն, եւ սուրբ է անուն նորա։ Եւ ողորմութիւն նորա ազգաց յազգս երկիւղածաց իւրոց։ Արար զօրութիւն բազկաւ իւրով. ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց։ Քակեաց զհզօրս յաթոռոց, եւ բարձրացոյց զխոնարհս։ Զքաղցեալս լցոյց բարութեամբ, եւ զմեծատունս արձակեաց ունայնս։ Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրում՝ յիշել զողորմութիւնս։ Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրահամու եւ զաւակի նորա յաւիտեան։ Եկաց Մարիամ առ նմա իբրեւ ամիսս երիս, եւ դարձաւ ի տուն իւր։ 56։

---



## ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Դ. ՕՐ ՓՈԽՄԱՆ

Ամենայն ինչ Ա. աւուրն է երբա 506։

---

## ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ե. ՕՐ ՓՈԽՄԱՆ

Ամենայն ինչ Բ. աւուրն է. երբա 507։

---

## ՈՒՐԲԱԹ

Զ. ՕՐ ՓՈԽՄԱՆ

Ամենայն ինչ Գ. աւուրն է. երբա 509։

---

## ՇԱԲԱԹ

Է. ՕՐ ՓՈԽՄԱՆ

Ամենայն ինչ Ա. աւուրն է. երբա 506։

---

## ԱՌԱՋԻՆ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ՓՈԽՄԱՆ

Ը. ՕՐ ՓՈԽՄԱՆ

Ամենայն ինչ Բ. աւուրն է. երբա 507։

---

## ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Թ. ՕՐ ՓՈԽՄԱՆ

Ամենայն ինչ Գ. աւուրն է. երբա 509։

---

## ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

**Սրբոյն Յովակիմայ եւ Աննայի ծնողաց Սուրբ Աստուածածնի եւ կանանցն իւղաբերից:**

Ժամամուտ. Ընդաքեալք եւ վկայք Քրիստոսի Աստուածոյ. ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդեգրութիւն կենաց կոչելով՝ միաւնական սուրբ Երրորդութեանն յորդորեցին երգել փառս յաւիտեանս. ամէն:

Սղ. ՂԵ. Ընտարանեցէք օր ըստ օրէ զփրկութիւն նորա. պատմեցէք ի հեթանոսս զփառս նորա:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնեցէք զՏէր ամենայն երկիր:

Պօղոսի առաքելոյն ՚Ի փեսացւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Ա. 3:

Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ յերկինսն ի Քրիստոս: Որպէս ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն աշխարհի, լինել մեզ սուրբս եւ անարատս առաջի նորա սիրով: Յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդեգրութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ի նոյն ըստ հաճութեան կամաց իւրոց, ի գովեստ փառաց շնորհաց իւրոց, որով զուարճացոյց զմեզ սիրելեաւն: Որով ունիմք զփրկութիւն ի ձեռն արեան նորա զթողութիւն մեղաց ըստ մեծութեան շնորհաց իւրոց, որ առատեալ ի մեզ ամենայն իմաստութեամբ եւ գիտութեամբ: Ցոյց մեզ զխորհուրդս կամաց իւրոց ըստ հաճութեան իւրում. զոր յառաջագոյն եդ նովաւ, ի տնտեսութիւն լրման ժամանակաց, բովանդակել զամենայն Քրիստոսիւ, որ ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի ի նմա: Որով եւ վիճակեցաք յառաջագոյն հրաւիրեալք ըստ յառաջադրութեանն Աստուծոյ, որ զամենայն յաջողէ ըստ խորհրդոյ կամաց իւրոց, լինել մեզ ի գովեստ փառաց նորա յառաջագոյն յուսացելոցս ի Քրիստոս: 12:



Ընդ՝ ամենայն ազգքն յԱբրահամ մինչեւ ի Դաւիթ՝ ազգք չորեքտասանք. եւ ի Դաւթէ մինչեւ ի գերութիւնն Բաբելացւոց ազգք չորեքտասանք. եւ ի գերութենէն Բաբելացւոց մինչեւ ի Քրիստոս՝ ազգք չորեքտասանք: Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս: Խօսեցեալ զմայր նորա Մարիամ Յովսեփու, մինչ չեւ եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ի Հոգւոյն սրբոյ: Եւ Յովսէփ այրն նորա, քանզի արդար էր եւ ոչ կամէր առակել զնա, խորհեցաւ լուծանել զնա: Եւ մինչ դեռ նա զայս ածէր զմտաւ, ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երեւեցաւ նմա եւ ասէ. Յովսէփ որդի Դաւթի, մի՛ երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ ի նմանէ ծնեալ է՝ ի Հոգւոյն սրբոյ է: Ծնցի որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս. զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց: 21:

---

## ԱՌԱՋԻՆ ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զնաղղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՀԹ. Կեցո զծառայս քո, Աստուած իմ, որ ի քեզ յուսացեալ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհնապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԵ. 58:

Այսուհետեւ, եղբայրք իմ սիրելիք, հաստատուն եղերուք, անշարժ կացէք, առատել լերուք ի գործս Տեառն

յամենայն ժամ. գիտասջիք զի վաստակքն ձեր ոչ են ընդունայն առաջի Տեառն: Եւ զվան հաշուին՝ որ ի սուրբսն է, որպէս պատուէր ետու եկեղեցեացն Գաղատացւոց, նոյնպէս եւ դուք առնիջիք: Ըստ իւրաքանչիւր միաշաբաթուցն իւրաքանչիւր ոք ի ձէնջ անձին իւրում գանձեսցէ՝ որ ինչ եւ աջողեսցի: Զի մի՛ յորժամ գայցեմ, յայնժամ հաշիւք լինիցին. այլ յորժամ եկիցի՝ զոր միանգամ ընտրեցէք թղթովք, զնոսա առաքեցից տանել զշնորհն ձեր Երուսաղէմ: Եպա եթէ արժան իցէ եւ ինձ երթալ՝ ընդ իս երթիցեն: Եւ եկից առ ձեզ՝ յորժամ ի Մակեդոնիա անցանիցեմ. բայց իբրեւ շրջեցայց ընդ Մակեդոնիա, թէ դէպ լինի, առ ձեզ միացից եւ կամ ձմերեցից. զի դուք յուղարկիցէք զնա՝ ուր եւ երթալոցն իցեմ: Զի ոչ կամիմ զձեզ այժմ ի հարեւանցի տեսանել. ակն ունիմ ժամանակ ինչ առնել առ ձեզ, եթէ Տէր հրամայեսցէ: Բայց այժմ լինիմ Երուսաղէմ մինչեւ ցպենտակոստէ. զի դուռն բացեալ է ինձ մեծ եւ կարեւոր, եւ հակառակորդք բազում են: Որդ եթէ եկեսցէ Տիմոթէոս՝ տեսջիք զի՛պրդ աներկիւղ լինիցի առ ձեզ. զի զգործ Տեառն գործէ՝ որպէս եւ ես: Մի՛ ոք զնա անգոսնեսցէ. եւ յուղարկեսջիք զնա խաղաղութեամբ՝ զի եկեսցէ առ իս. քանզի ակն ունիմ նմա եղբարբք հանդերձ: Ա Ջ. 11:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց է յայնէն:

Սբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

ԳԼ. Դ. 10:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ իբրեւ եղեւ առանձինն՝ հարցին զնա, որ զնովաւն էին աշակերտաքն հանդերձ՝ զառակն: Եւ ասէ ցնոսա. Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան Աստուծոյ. բայց նոցա որ արտաքինքն են՝ ամենայն ինչ առակօք լինի. զի տեսանելով տեսցեն եւ մի՛ տեսցեն, եւ լսելով լուիցեն եւ մի՛ իմացին, զի մի՛ երբեք դարձցին եւ թողթի նոցա: Եւ ասէ ցնոսա. Ոչ գիտէք զառակս զայս, եւ զի՞պրդ զամենայն առակսն գիտիցէք: Որ սերմանէն՝ զբանն սերմանէ: Եւ նոքա են որ առ ճանապարհաւն, ուր բանն սերմանի. եւ յորժամ



լսեն զնա, գայ սատանայ եւ հանէ զբանն սերմանեալ ի սիրտս նոցա: Եւ նոքա են որ յապառաժին սերմանեցան, որք յորժամ լսիցեն զբանն, վաղվաղակի խնդութեամբ ընդունին. եւ զի ոչ ունին արմատս յանձինս, այլ առ ժամանակ մի են, ապա ի հասանել նեղութեան կամ հալածման վասն բանին, վաղվաղակի գայթակղին: Իսկ որ ի մէջ փշոցն սերմանեցան՝ նոքա են, որ իբրեւ զբանն լսեն, եւ հոգք աշխարհիս եւ պատրանք մեծութեան մտանեն եւ հեղձուցանեն զբանն, եւ անպտուղ լինի: Եւ նոքա են որ յերկիրն բարւոք սերմանեցան, որք լսեն զբանն եւ ընդունին, եւ առնպտուղ՝ ընդ միոյ երեսուն, եւ ընդ միոյ վաթսուն, եւ ընդ միոյ հարիւր: Եւ ասէ ցնոսա. Մի՞թէ գայ ճրագ, զի ընդ գրուանաւ դնիցի կամ ընդ մահճաք. ոչ ապաքէն ի վերայ աշտանակի դնիցի: Զի չէ ինչ ի ծածուկ՝ որ թէ ոչ յայտնեսցի. եւ ոչ եղեւ ինչ գաղտնի, եթէ ոչ ի յայտ գայցէ: Եթէ ոք ունիցի ականջս լսելոյ, լուիցէ: Եւ ասէ ցնոսա. Տեսէք զինչ լսէքդ, եւ յաւելցի ձեզ որոց լսէքդ: Որով չափով չափէք՝ նովին չափեսցի ձեզ: Որ ոք ունիցի՝ տացի նմա. եւ որ ոչն ունիցի, եւ զոր ունիցինն՝ բարձցի ի նմանէ: 25:

---

## ԱՌԱՋԻՆ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

**Սրբոյն Բարեղայ հայրապետին եւ երից աշակերտաց նորին:**

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ, ծառայ Քրիստոսի ծվ երանելիդ ի հարս սուրբ հայրապետ: Քանզի քոյ վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ· ՃԼԱ· Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբքդ քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն Հեբրայեցւոց Թղթոյն է ընթերցուածս.

ԳԼ· Բ· 14։

Արդ որովհետեւ մանկունք հաղորդեցին արեան եւ մարմնոյ, եւ ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղեւ նոցունց· զի մահուն իւրով խափանեսցէ զայն, որ զիշխանութիւն մահուն ունէր, այս ինքն է՝ զսատանայ· եւ ապրեցուսցէ զայնոսիկ, որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք ի ծառայութիւն։ Վասնզի ոչ երբեք զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զզաւակէն Աբրահամու բուռն հարկանէ։ Ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանիլ· զի ողորմած լինիցի եւ հաւատարիմ քահանայապետ յաստուածակոյս կողմանէ անտի, առ ի քաւելոյ զմեղս ժողովրդեանն։ Օ՛ի որով ինքն չարչարեցաւ՝ զփորձ առեալ, կարող է եւ փորձանաւորացն օգնական լինել։ 18։

Ալէլուիա, ալէլուիա· Վահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

ԳԼ· ժ· 11։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ես եմ հովիւն քաջ· հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց։ Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն եւ փախչէ· եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ· քանզի վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն։ Ես եմ հովիւն քաջ, եւ ճանաչեմ զիմն եւ ճանաչեմ յիմոցն։ Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայր· եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց։ Եւ այլ եւս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ· եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր, եւ ձայնի իմում լուիցեն, եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ։ 16։

---

## ԱՌԱՋԻՆ ՈՒՐԲԱԹ

Յոհաննու· Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած· տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք։



Սղ· ԴՒ· Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր· զի պանչելիս արար։

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին Թղթոյն է ընթերցուածս։ ԳԼ· ԺԱ· 12։

Այլ ասէ Պօղոսի եղբօր, յոյժ աղաչեցի զնա՝ զի եկեսցէ առ ձեզ եղբարբք հանդերձ. եւ արդեօք ոչ էին կամք՝ զի այժմ եկեսցէ· այլ եկեսցէ յորժամ եւ պարապեսցէ։ Սկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք։ Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի։ Աղաչեմ զձեզ, եղբարք, գիտէք զտունն Ստեփանեայ եւ Փորտունատեայ՝ որ են պտուղ Աքայեցւոց, եւ ի պաշտօն սրբոցն կարգեցին զանձինս· զի եւ դուք հնազանդ լինիք այնպիսեացն. եւ ամենայնի՝ որ գործակից եւ վաստակակից։ Ուրախ եղէ ի գալ Ստեփանեայ եւ Փորտունատեայ եւ Աքայիկոսի, զի զձեր պակասութիւն նոքա լցին. քանզի հանգուցին զոգի իմ եւ զձեր։ Արդ ծանիջիք զայնպիսիսն։ Ողջոյն տան ձեզ եկեղեցիքն Ասիացւոց· ողջոյն շատ տան ձեզ ի Տէր՝ Ակիւղաս եւ Պրիսկիլղա՝ հանդերձ առտնին եկեղեցեաւն իւրեանց։ Ողջոյն տան ձեզ եղբարք ամենեքեան։ Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան։ Ողջոյնդ այդ իմոյ ձեռին Պօղոսի է։ Եթէ ոք ոչ սիրէ զՏէր Յիսուս, եղիցի նզովեալ՝ Մարանաթայ։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ։ Եւ սէրն իմ ընդ ամենեսին ձեզ ի Քրիստոս Յիսուս. ամէն։ 24։

Ալէլուիա, ալէլուիա· Պահոց է յայնէն։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

ԳԼ· Դ· 26։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ասէր· Այսպէս է արքայութիւն Աստուծոյ, որպէս զի այր մի արկանիցէ սերմանիս յերկիր, եւ ննջեսցէ եւ յառնիցէ զգայդ եւ զգերեկ. եւ սերմանիքն բուսանիցին եւ աճիցեն, եւ նա ոչ գիտէ՝ թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ,

նախ զխոտն եւ ապա զհասկն, ապա զցորեանն ատոք ի հասկին: Այլ յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքի մանգաղ, զի հասեալ են հունձք: Եւ ասէր. Ո՞ւմ նմանեցուսցուք զարքայութիւնն Աստուծոյ, կամ որո՞վ առակաւ առակեսցուք զնա: Որպէս հատն մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան զամենայն սերմանիս՝ որ են յերկրի. եւ յորժամ սերմանիցի, բուսանի եւ լինի մեծ քան զամենայն բանջար, եւ արձակէ ոստս մեծամեծս, մինչեւ բաւական լինել ընդ հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակել: Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն, որպէս կարող լինէին լսել. եւ առանց առակի ոչ ինչ խօսէր ընդ նոսա, բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն: 34:

---

## ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ

### Սրբոյն Երեմեայ մարգարէին:

Ժամամուտ. Տէր որ հիմնեցուցեր զեկեղեցի քո ի վերայ վիմին հաւատով. եւ կարգեցեր ի սմա առաքեալս եւ մարգարէս, հովիւս եւ վարդապետս՝ առ ի հաստատութիւն սրբոց. եւ ճգնութեամբ վկայից զթշնամին սորա վանեցեր. ի խաղաղութեան զսա պահեա, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. Լթ. Եհան զիս ի գբոյ տառապանաց. ի կաւոյ եւ ի տղմոյ:

Համբերելով համբերի Տեառն, եւ նայեցաւ առ իս. եւ լուաւ աղօթից իմոց:

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 9:

Գիտէ Տէր զաստուածապաշտս փրկել ի փորձութենէ, եւ զանօրէնս պահել ի տանջանս աւուրն դատաստանի. մանաւանդ որ զհետ մարմնոյ պղծալիցն ցանկութեանց իցեն երթեալ, արհամարհողք տէրութեանն, ժպիրհք, յանդգունք, չզանգիտեն զփառսն հայհոյել: Ուր հրեշտակք զօրութեամբ եւ կարողութեամբ քան զնոսա մեծամեծք, չածեն զնոքօք ի Տեառնէ զհայհոյութեանն դատաստան: Այլ սոքա իբրեւ զանխօս անասունս ըստ բնածին բարուցն յեղծումն եւ յապականութիւն, որոց չենն գիտակ՝ հայհոյեն յապականութեան իւրեանց, եւ ապականեսցին: Տանջեալք ի վարձուց անիրաւութեան. որ ցանկութիւն զաւուրն փափկութիւն համարին. բծկանք, արատաւորք, փափկացեալք ի պատիրս իւրեանց, լեալ ձեզ խրախճանակիցք: Աչս ունին հանգոյնս պոռնկաց, անդադարս ի մեղաց, պատրեն զանձինս յողդողդաց. որ ունին սիրտ հարեալ զագահութեան, մանկունք անիծից: Թողեալ զուղղորդ ճանապարհն, մոլորեցան, զհետ երթեալ ճանապարհին Բաղաամայ Բէորեան, զվարձս անիրաւութեան սիրեցին. որ կշտամբանս իւրոյ անօրէնութեանն ստացաւ զէշն անխօսուն, մարդկեղէն բարբառովն բարբառեալ, արգել զմարգարէին զանօրէնութիւն: Այսպիսիքն են աղբիւրք անջրդիք եւ մէգք վարեալք ի մրրկէ, որոց աղջամուղջք խաւարին յաւիտեան պահեալ կան: Քանզի մեծարանս սնոտեաց բարբառեալ, պատրեն գիջութեամբք, ցանկութեամբք մարմնոյ զայնոսիկ՝ որ ստոյգն փախչիցին յայնցանէ, որ ի մոլորութեանն շրջիցին: Նոցա ազատութիւն խոստանան, եւ ինքեանք ապականութեան ծառայք են. զի որով իւիք յաղթիցի ոք, նորին եւ ծառայ է: Զի եթէ փախուցեալք ի պղծութեանց աշխարհի գիտութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, եւ դարձեալ ընդ նոյնս շաղեալք պատիցին, եղեւ նոցա վախճանն չար քան զառաջինն: Զի լաւ էր նոցա թէ բնաւ իսկ չէր ծանուցեալ զարդարութեան ճանապարհն. քան թէ ծանեան, եւ յետս կացին ի սուրբ պատուիրանէն՝ որ նոցա աւանդեցաւ: Եկեալ ի դէպ նոցա ճշմարիտ առակին զգօնութեան՝ եթէ Շուն դառնայ անդրէն ի փսխած իւր, եւ խոզ լուացեալ ընդ տիղմն թաւալեալ: 22:

Ալէլուիա, ալէլուիա. Եհան զիս ի գբոյ տառապանաց. ի կաւոյ եւ ի տղմոյ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: Գլ. Բ. 16:

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Յայնժամ իբրեւ ետես Հերովդէս թէ խաբեցաւ ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. եւ առաքեաց կոտորեաց

զամենայն մանկունս որ էին ի Բեթղեհէմ եւ յամենայն սահմանս նորա՝ յերկեմենից եւ ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց ի մոգուցն: Յայնժամ կատարեցաւ ասացեալն ի ձեռն Երեմիայ մարգարէի՝ որ ասէ. Ձայն գուժեաց ի Հռամայ, ողբումն եւ լալումն եւ աշխարումն յոյժ. Հռաքէլ լայր զորդիս իւր, եւ ոչ կամէր մխիթարել՝ զի ոչ էին: 18:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ՓՈԽՄԱՆ

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. կԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս: Գլ. Ա. 1:

Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամօքն Աստուծոյ, եւ Տիմոթէոս եղբայր, եկեղեցւոյդ Աստուծոյ՝ որ է ի Կորնթոս, սրբովքդ ամենեքումբք՝ որ են յամենայն կողմանս Աքայեցւոց: Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ: Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հայր գթութեանց եւ Աստուած ամենայն մխիթարութեան. որ մխիթարէն զմեզ յամենայն նեղութիւնս մեր, առ ի կարող լինելոյ մեզ մխիթարել զայնոսիկ՝ որ յամենայն նեղութիւնս իցեն, մխիթարութեամբն՝ որով մեք մխիթարիմք յԱստուծոյ: Զի որպէս առաւելան չարչարանքն Քրիստոսի ի մեզ, նոյնպէս եւ ի ձեռն Քրիստոսի առաւել լիցի եւ մխիթարութիւնն մեր: Զի եթէ նեղիմք՝ վասն ձե-



րոյ մխիթարութեան եւ փրկութեան. եւ եթէ մխիթարիմք՝ վասն ձերոյ մխիթարութեան եւ փրկութեան, որ յաջողեալն է համբերութեամբ նոցին չարչարանաց, զոր եւ մեքն չարչարիմք: Եւ յոյսն մեր հաստատուն է վասն ձեր, քանզի գիտեմք թէ որպէս կցորդ եմք չարչարանացն, նոյնպէս եւ մխիթարութեանն: Քանզի ոչ կամիմ տգէտ լինել ձեզ, եղբարք, վասն նեղութեանն մերոյ եղելոյ յԱսիա. զի առաւել քան զկար մեր ծանրացաք, մինչեւ անյոյս լինելոյ մեզ եւ ի կենաց: Այլ անձամբ յանձինս զվճիռ մահու ընկալաք. զի մի՛ յանձինս ապաստան իցեմք, այլ յԱստուած՝ որ յարուցանէ զմեռեալս, որ յայնպիսի մահուանէ փրկեաց զմեզ եւ փրկեսցէ. քանզի յուսացեալ եմք, եթէ տակաւին փրկեսցէ օգնականութեամբ աղօթից ձերոց վասն մեր: Զի ի բազմադէմ շնորհացն որ ի մեզ, բազմօք յաճախեսցեն գոհութիւնքն վասն մեր: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Դ. 35:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ասէ ցնոսա յաւուրն յայնմիկ՝ իբրեւ ընդ երեկս լինէր. Եկայք անցցուք յայն կողմն: Թողուն զժողովուրդն, եւ առնուն զնա նաւաւն հանդերձ, եւ զայլ եւս նաւսն որ էին ընդ նմա: Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ, եւ զալիսն ի նաւն զեղոյր, մինչ գրեթէ լի իսկ լինել: Եւ ինքն ննջէր ի խելս նաւին ի վերայ բարձի. զարթուցանէին զնա եւ ասէին. Վարդապետ, ոչ ինչ է քեզ փոյթ, զի կորնչիմք աւասիկ: Եւ զարթուցեալ սաստեաց հողմոյն եւ ծովուն, ասէ. Դադարեա կարկեաց. եւ դադարեաց հողմն, եւ եղեւ խաղաղութիւն մեծ: Եւ ասէ ցնոսա. Ընդէ՞ր այդպէս վատասիրտք էք, չեւ եւս ունիք հաւատս: Եւ երկեան երկիւղ մեծ եւ ասէին ցմիմեանս. Ո՛ ոք արդեօք իցէ սա, զի եւ հողմ եւ ծով հնազանդին սմա: 40:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### Սրբոյն Պիոնի քահանային եւ Ստեփանոսի Ուլնեցւոյն եւ Աբդլմսեհի վկային:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԺԵ. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց, ո՛ Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Դ. 11:

Ե՛ղբարք, փութասցուք այսուհետեւ մտանել յայն հանգիստ. զի մի՛ ոք ընդ նովին օրինակաւ անհաւատութեանն անկանիցի: Զի կենդանի է բանն Աստուծոյ եւ ազդող եւ հատուքան զամենայն սուր երկսայրի, եւ անցանէ մինչեւ ցորոշումն շնչոյ եւ ոգւոյ եւ յօդից եւ ուղղոյ, եւ քննիչ է մտաց եւ խորհրդոց սրտից: Եւ չիք արարած աներեւոյթ յերեսաց նորա. այլ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նորա՝ զորմէ մեր բանքս են: Ունիմք այսուհետեւ քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս, զՅիսուս զՈրդին Աստուծոյ. պինդ կալցուք զխոստովանութիւնն: Քանզի ոչ եթէ ունիմք քահանայապետ՝ որ չիցէ կարող չարչարակից լինել տկարութեան մերոյ. այլ փորձ է ամենայնիւ ըստ նմանութեան առանց մեղաց: 15:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ե. 1:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն. եւ իբրեւ նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա: Եւ բացեալ



զբերան իւր՝ ուսուցանէր զնոսա եւ ասէր. Երանի՛ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին: Երանի՛ հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր: Երանի՛ որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին: Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն: Երանի՛ այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն: Երանի՛ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին: Երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի՛ է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ եւ հալածեսցեն եւ ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ: Ցնծացէք եւ ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին: 12:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### Սրբոյն Անդրէի զօրավարին եւ բանակի նորին, եւ Կալինիկոսի վկային եւ Դիոմիդեայ բժշկին:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. Ե. Տէր, որպէս զինու՝ հաճութեամբ քով պսակեցեր զմեզ:

Բանից իմոց ունկն դիր Տէր. եւ ի միտ առ զաղաղակ իմ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ժ. 3:

Ե՛ղբարք, զի թէպէտ եւ մարմնով գնամք, այլ ոչ եթէ ըստ մարմնոյ զինուորիմք: Զի զէն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զօրաւոր յԱստուծոյ, առ ի քակելոյ զամուրս. զխորհուրդս քակեմք, եւ զամենայն բարձրութիւն հպարտացեալ ի վերայ գիտութեանն Աս-

տուածոյ, եւ զերեմք զամենայն միտս ի հնազանդութիւն Քրիստոսի. եւ ի պատրաստի ունիմք խնդրել զվրէժ ամենայն անհնազանդութեան՝ յորժամ ձեր եւս հնազանդութիւնդ կատարեսցի: 6:

Ալէլուիա, ալէլուիա. Մատթէոսոյ է Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

ԳԼ· Ժ· 37:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ արժանի. եւ որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի: Եւ որ ոչ առնու զխաչ իւր եւ գայ զկնի իմ, չէ ինձ արժանի: Որ գտանէ զանձն իւր, կորուսցէ զնա. եւ որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա: Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, եւ որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ: Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի՝ զվարձս մարգարէի առցէ. եւ որ ընդունի զարդար յանուն արդարոյ՝ զվարձս արդարոյ առցէ: Եւ որ արբուսցէ միում ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրա՝ միայն յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ. ոչ կորուսցէ զվարձս իւր: 42:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԶՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Յոհաննոպ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զնաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ· 26· Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացեալ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհնապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. ԳԼ· Ա· 12:

Վասն պարծանք մեր այս են, վկայութիւն մտաց մերոց. զի սրբութեամբ եւ ստուգութեամբ Աստուծոյ, եւ ոչ



մարմնեղէն իմաստութեամբ, այլ շնորհօքն Աստուծոյ շրջեցաք յաշխարհի, բայց առաւել եւս առ ձեզ: Վասնզի ոչ եթէ այլազգ ինչ գրեմք առ ձեզ, այլ զոր ընթեռնուցուքն եւ գիտակ լինիցիք. քանզի յուսամ եթէ մինչ ի վախճան գիտիցէք, որպէս եւ խելամուտ եղէք մեզ փոքր ի շատէ. զի պարծանք ձեր եմք, որպէս եւ դուք մեր յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ յայս ապաստան՝ կամէի նախ առ ձեզ գալ, զի դուք կրկին շնորհս ընդունիցիք, եւ ի ձէնջ երթալ ի Մակեդոնիա. եւ դարձեալ ի Մակեդոնիայ գալ առ ձեզ, եւ ի ձէնջ յուղարկել ի Հրէաստան: Իսկ եթէ զայս խորհեցայ, միթէ թեթեւութեամբ ինչ գնացի, եւ կամ զոր խորհիմն՝ ըստ մարմնոյ ինչ խորհիմ. այլ զի եղիցի ինձն կողմանէ այո՝ այո, եւ ոչն՝ ոչ: Հաւատարիմ է Աստուած՝ զի բանն որ առ ձեզ եհաս, ոչ է այո եւ ոչ: Վասնզի Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս, որ ի ձեզ մեօք քարոզեցաւ, ինեւ եւ Սիղուանոսիւ եւ Տիմոթէոսիւ, ոչ եղեւ այո եւ ոչ. այլ այոն ի նմին եղեւ: Օհ որչափ աւետիքն Աստուծոյ են ի նմա այոն. վասն որոյ եւ նովին ամէնն մեօք ի փառս Աստուծոյ: Այլ որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ ի Քրիստոս, եւ որ օծ զմեզ՝ Աստուած է. որ եւ կնքեացն զմեզ, եւ ետ զառհաւատչեայ Հոգւոյն ի սիրտս մեր: 22:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց է Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

ԳԼ· Ե· 35:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Մինչ դեռ նա զայն խօսէր, գան ոմանք ի տանէ ժողովրդապետին եւ ասեն՝ Թէ Դուստրն քո մեռաւ, զի՞ եւս աշխատ առնես զվարդապետդ: Իսկ Յիսուս իբրեւ լուաւ զբանն ասացեալ, ասէ ցժողովրդապետն. Մի՛ երկնչիր, բայց միայն հաւատա: Եւ ոչ զոք եթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊետրոս եւ զՅակոբոս եւ զՅովհաննէս՝ զեղբայրն Յակոբայ: Գայ ի տունն ժողովրդապետին, եւ տեսանէ ամբոխ լոյժ եւ լալականս, եւ աղաղակ լոյժ: Եւ մտեալ ի ներքս՝ ասէ ցնոսա. Օհ՛ խռովեալ էք եւ լայք. մանուկն ոչ է մե-

ռեալ, այլ ննջէ: Եւ ծաղը առնէին զնա. եւ նորա հանեալ արտաքս զամենեսեան, առնու ընդ իւր զհայր մանկանն եւ զմայր, եւ զնոսա որ ընդ նմայն էին, եւ մտանէ ուր դնէր մանուկն: Եւ կալեալ զձեռանէ մանկանն՝ ասէ ցնա. Տալիթա կումի, որ թարգմանի, աղջիկ դու՝ քեզ ասեմ, արի: Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն եւ գնայր, քանզի էր ամաց իբրեւ երկոտասանից. եւ զարմացան մեծաւ զարմանալեօք: Եւ պատուէր տայր նոցա յոյժ, զի մի՛ ոք գիտասցէ զայն. եւ ասաց տալ նմա ուտել: 43:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Սրբոյն Ադրիանոսի եւ կնոջ նորա Անատոլեայ, եւ Թէոդորոսի ստրատելատի եւ Թիւրսոսի վկային:

Ժամամուտ Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԺԵ. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ Տէր, ես ծառայ քո եմ. ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ը. 18:

Ինձ այսպէս թուի եթէ ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոց են ի մեզ: Զի ակնկալութիւն արարածոց՝ յայտնութեան Որդւոյն Աստուծոյ սպասէ: Զի ընդունայնութեան արարածք հնազանդեցան, ոչ իւրեանց կամաւ, այլ վասն այնորիկ՝ որ հնազանդեցոյցն յուսով: Զի եւ ինքեանք իսկ արարածք ազատեսցին ի ծառայութենէ ապականութեան՝ յազատութիւն փառաց Որդւոյն Աստուծոյ: Քանզի գիտեմք եթէ ամենայն արարածք հեծեն եւ երկնեն մինչեւ ցայժմ: Եւ ոչ այսչափ միայն. այլ եւ մեք իսկ՝ որ զպտուղ հոգւոյն



ունիմք, անձամբ յանձինս մեր հեծեմք, որդեգրութեանն ակն կալեալ փրկութեան մարմնոյ մերոյ: Զի յուսով ապրեցաք. այլ յոյս տեսանելի՝ չէ յոյս. զի զոր տեսանէ ոք՝ զի՞ եւս յուսայ: Ապա եթէ զոր ոչն տեսանեմք՝ յուսամք, համբերութեամբ ակն ունիմք: Նոյնպէս եւ Հոգին ի թիկունս հասանէ տկարութեանս մերում. զի զոր կամքն յաղօթս՝ որպէս արժան իցէ, ոչ գիտեմք. այլ ինքն Հոգին բարեխօս լինի ի հեծութիւնս անմռունչս: Բայց որ քննէն զսիրտս՝ գիտէ զինչ խորհուրդ է Հոգւոյն. զի ըստ Աստուծոյ բարեխօսէ վասն սրբոց: 27:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.
Գլ. ԺԶ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայթագղեսջիք: Ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ. այլ եկեսցէ ժամանակ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ: Եւ զայն արասցեն ընդ ձեզ, քանզի ոչ ծանեան զՀայր եւ ոչ զիս: Այլ եւ զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ եկեսցէ ժամանակ, յիշիցէք թէ ես ասացի ձեզ: Զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի: 5:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 23:

Այլ ես վկայ զԱստուած կոչեմ անձին իմոյ, զի վասն խնայելոյ ի ձեզ ոչ եւս եկի ի Կորնթոս. զի ոչ եթէ տի-

րեմք ձեզ հաւատովքս, այլ գործակից եմք շնորհացդ ձերոց. քանզի հաւատովք հաստատեալ կայք: Բայց զայս եւեթ ընտրեցի՝ զի մի՛ միւսանգամ տրտմութեամբ եկից առ ձեզ: Զի եթէ ես տրտմեցուցանեմ զձեզ, եւ ո՞վ է որ ուրախ առնիցէ զիս, եթէ ոչ որ տրտմիցին յինէն: Եւ զայս զի գրեցի, զի մի՛ յորժամ գայցեմ՝ տրտմութիւն ինչ կրիցեմ, ուստի արժան իցէ ինձ ուրախ լինել. յուսացեալ եմ ի ձեզ ամենեսին, զի իմ ուրախութիւնս՝ ձեր ամենեցուն է: Զի ի բազում վշտաց եւ ի նեղութենէ սրտի գրեցի առ ձեզ բազում արտասուօք. ոչ զի տրտմիցիք, այլ զի զսէրն իմ գիտասջիք՝ զոր ունիմ առաւելապէս առ ձեզ: Ապա թէ ոք տրտմեցոյց, ոչ եթէ զիս տրտմեցոյց՝ այլ փոքր ի շատէ, զի մի՛ ծանրացայց ամենեցուն ձեզ: Շատ է այնպիսւոյն պատուհասն այն՝ որ ի բազմաց անտի է: Այսուհետեւ նմին հակառակ՝ մանաւանդ շնորհել ձեզ նմա եւ մխիթարել. զի մի՛ յառաւել տրտմութենէն ընկղմեսցի այնպիսին: Վասն որոյ աղաչեմ զձեզ հաստատել ի նա զսէրն: Վասն այնորիկ իսկ եւ գրեցի, զի զչափ առից զձեր՝ եթէ յամենայնի հպատակ իցէք: Զի եթէ ումեք շնորհիցէք, եւ ես. քանզի եւ ես եթէ շնորհիցեմ, զոր ինչ շնորհիցեմն՝ վասն ձեր ի դէմս Քրիստոսի, զի մի՛ զրկիցիմք ի սատանայէ. քանզի չեմք ինչ անտեղեակ խորհրդոցն նորա: Բ. 11:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Զ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ել անտի եւ եկն ի գաւառ իւր. եւ երթային զհետ նորա աշակերտքն իւր: Եւ եղեւ ի շաբաթուն՝ սկսաւ ուսուցանել ի ժողովրդեանն. եւ բազումք իբրեւ լսէին՝ զարմանային ընդ վարդապետութիւն նորա եւ ասէին. Ուստի՞ է սմա այս, կամ զի՞նչ է իմաստութիւնս որ տուեալ է սմա. զի զօրութիւնք այսպիսիք ի ձեռաց սորա լինիցին: Ո՞չ սա է մանուկ հիւսանն, եւ որդին Մարիամայ, եղբայր Յակովբայ եւ Յովսեայ եւ Յուդայի եւ Սիմովնի, եւ չիցե՞ն քորք դորա աստ առ մեզ: Եւ գայթակղէին ի նա: Եւ ասէ ցնոսա. Ոչ



է մարգարէ անարգ, բայց եթէ ի գաւառի իւրում եւ յազգատոհմի եւ ի տան իւրում: Եւ ոչ կարէր անդ եւ ոչ մի ինչ զօրութիւն առնել. բայց սակաւ հիւանդաց ձեռն եդեալ՝ բժշկէր զնոսա: Եւ զարմանայր վասն անհաւատութեան նոցա: 6:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### Սրբոյն Թովմայի առաքելոյն:

Ժամամուտ. Առաքեալք եւ վկայք Քրիստոսի Աստուծոյ. ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդեգրութիւն կենաց կոչելով՝ միասնական սուրբ Երրորդութեանն յորդորեցին երգել փառս ի յաւիտեանս. ամէն:

Սղ. ԺԸ. Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա. եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա:

Երկինք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն:

Պօղոսի առաքելոյն Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԲ. 28:

Եւ զորս եդ Աստուած յեկեղեցւոջ՝ այս են. նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ զվարդապետս, ապա զօրութիւնս, ապա շնորհս բժշկութեանց, օգնութիւնս, վարիչս, ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց: Միթէ ամենեքին առաքեալ՞ք իցեն. միթէ ամենեքին մարգարէ՞ք իցեն. միթէ ամենեքին վարդապե՞տք իցեն. միթէ ամենեքին զօրութի՞ւնք իցեն. միթէ ամենեքին շնորհս բժշկութեա՞ն ունիցին. միթէ ամենեքին ի լեզո՞ւս խօսիցին. միթէ ամենեքին թարգմանիցե՞ն: Բայց նախանձաւորք լերուք շնորհացն՝ որ լաւն են: Այլ ես առաւել եւս ճանապարհ ցուցանեմ ձեզ: Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ եւ զհրեշտակաց, եւ սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ զպղինձ՝ որ հնչէ, կամ իբրեւ զծնծղայս՝ որ ղօղանջեն: Եւ եթէ ունիցիմ մարգարէութիւն, եւ գիտիցեմ զխորհուրդս ամենայն եւ զամենայն գիտութիւն, եւ եթէ ունիցիմ զամենայն

հաւատամ՝ մինչեւ զերկինս փոփոխելոյ, եւ սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ: Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, եւ մատնիցեմ զմարմինս իմ յայրուածն, եւ սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ: Ա Գ. 3:

Ալէլուիա, ալէլուիա. Պատուասիս զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. եւ յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

ԳԼ. Ի. 24:

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Իսկ Թովմաս մի յերկոտասանից՝ անուանեալն Երկուորեակ, ոչ էր ընդ նոսա՝ յորժամ եկն Յիսուս: Ասէին ցնա այլ աշակերտքն, եթէ Տեսաք զՏէր: Եւ նա ասէ ցնոսա. Եթէ ոչ տեսից ի ձեռս նորա զնշան բեւեռացն, եւ արկից զմատունս իմ ի տեղիս բեւեռացն, եւ մխեցից զձեռս իմ ի կողս նորա, ոչ հաւատամ: Եւ յետ ութ աւուր դարձեալ էին ի ներքս աշակերտքն, եւ Թովմաս ընդ նոսա. գայ Յիսուս դրօքն փակելովք, եւ եկաց ի մէջ եւ ասէ. Ողջոյն ընդ ձեզ: Ապա ասէ ցԹովմաս. Բեր զմատունս քո եւ արկ այսր, եւ տես զձեռս իմ, եւ բեր զձեռն քո եւ մխեա ի կողս իմ. եւ մի՛ լինիր անհաւատ, այլ հաւատացեալ: Պատասխանի ետ Թովմաս եւ ասէ ցնա. Տէր իմ եւ Աստուած իմ: Ասէ ցնա Յիսուս. Այդ զի տեսեր զիս եւ հաւատացեր. երանի՛ որոց ոչ իցէ տեսեալ եւ հաւատացեն: Բազում եւ այլ նշանս արար Յիսուս առաջի աշակերտաց իւրոց, որ ոչ է գրեալ ի գիրս յայսմիկ: Այլ սոյա այնչափ ինչ գրեցաւ՝ զի հաւատայցէք, եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ. եւ զի հաւատայցէք, եւ զկեանն յաւիտենական ընդունիցիք յանուն նորա: 31:

---

Յայս ջղջոյս հանապազ ընթերն ի յաւելս ե նոսպե. ընէ յաւելս՝ կոչեա զսուրբ գրեցեալսն պօնեա. ե ընէ նոսպէ՝ ջղջոյ ընթերոյ պօնո է ի ջնեանեա:

---



## ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՋԿՆԻ ՓՈԽՄԱՆ

Յոամաոոպ. Ա՛իածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. կԳ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք Երուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. ԳԼ. Բ. 12:

Այլ իբրեւ հասի ես ի Տրովադա յաւետարանն Քրիստոսի, եւ դուռն բաց էր ինձ ի Տէր, ոչ եւս հանգիստ հոգւոյ իմում. քանզի ոչ գտի ես անդ զՏիտոս զեղբայր իմ, այլ հրաժարեալ ի նոցանէ՝ գնացի ի Մակեդոնիա: Այլ Աստուծոյ շնորհքն՝ որ յամենայնի հոչակ հարկանէ զմեզ ի Քրիստոս Յիսուս, եւ զհոտ գիտութեանն իւրոյ յայտնի առնէ մեզ յամենայն տեղիս: Օ՛ի հոտ անոյշ եմք Քրիստոսի առ Աստուած ի մէջ փրկելոցն եւ ի մէջ կորուսելոցն. ոմանց հոտ մահու անէ ի մահ, եւ ոմանց հոտ կենդանութենէ ի կեանս. եւ առ այս ո՞ բաւական իցէ: Քանզի ոչ եմք իբրեւ զայլսն՝ որ վաճառական լինին բանին Աստուծոյ. այլ իբրեւ ի հաստատութենէ, այլ իբրեւ յԱստուծոյ, առաջի Աստուծոյ ի Քրիստոս խօսիմք: Սկսանիմք այսուհետեւ վերստին զանձինս ընծայեցուցանել. թէպէտ եւ ոչ պիտոյ իցեն մեզ, որպէս ոմանց, թուղթք ընծայութեան առ ձեզ կամ ի ձէնջ: Այլ թուղթք մեր դուք էք, գրեալ ի սիրտս մեր, ծանուցեալ եւ ընթերցեալ յամենայն մարդկանէ. յայտնեալք, զի էք թուղթք Քրիստոսի, պաշտեցեալ ի մէնջ, եւ գրեալ ոչ մրով, այլ Հոգւով Աստուծոյ կենդանւոյ, ոչ ի տախտակս քարեղէնս, այլ ի տախտակս սրտի մարմնեղէնս: Գ. 3:

Ալէլուիա, ալէլուիա. Յարոյեան է յայնէն:

Սրբոյ Ա֊ետարանիս որ ըստ Մարկոսի·

ԳԼ· Զ· 30։

## Ընդ տէրն մեր Յիսուս Քրիստոս·

Ժողովեցան առաքեալքն (առ Յիսուս) եւ պատմեցին նմա զամենայն ինչ զոր արարին եւ զոր ուսուցին։ Եւ ասէ ցնոսա Յիսուս· Եկայք դուք առանձինն յանապատ տեղի, եւ հանգիչջիք սակաւ մի· զի էին բազումք որ երթային եւ գային, եւ հաց անգամ չժամանէին ուտել։ Եւ գնացին նաւու յանապատ տեղի առանձինն։ Եւ տեսին զնոսա զի երթային, եւ ճանաչին բազումք· եւ հետի յամենայն քաղաքաց խուռն ընթանային անդր, եւ մերձենային առ նոսա։ Եւ ելեալ ետես ամբոխ բազում, եւ գթացաւ ի նոսա, զի էին իբրեւ ոչխարք՝ որոց ոչ հայէ հովիւ· եւ սկսաւ ուսուցանել զնոսա յոյժ։ Եւ իբրեւ բազում ժամ եղեւ, մատուցեալ աշակերտքն ասէին· Տեղիս անապատ է, մինչ դեռ աւուր կայ, արձակեա զժողովուրդսդ, զի երթեալ շուրջ յագարակս եւ ի գեղս՝ գնեսցեն իւրեանց ինչ ուտիցեն· զի ասա ինչ ուտել ոչ ունին։ Նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա· Դուք տուք դոցա ուտել։ Ասեն ցնա· Երթիցուք գնեսցուք երկերիւր դահեկանի հաց, եւ տացուք դոցա ուտել։ Ասէ ցնոսա· Քանի՞ նկանակ ունիք՝ երթայք տեսէք։ Իբրեւ գիտացին՝ ասեն ցնա· Հինգ, եւ երկուս ձկունս։ Եւ հրամայեաց նոցա բազմել երախանս երախանս ի վերայ դալար խոտոյ։ Եւ բազմեցան դասք դասք՝ ուր հարիւր եւ ուր յիսուն։ Եւ առեալ զհինգ նկանակն եւ զերկուս ձկունսն, հայեցաւ յերկինս, օրհնեաց մանրեաց զնկանակսն եւ ետ ցաշակերտսն, զի արկցեն նոցա· եւ զերկուս ձկունսն բաշխեաց ամենեցուն։ Կերան եւ յագեցան, եւ բարձին զնշխարսն երկոտասան սակաւիկ լի, եւ ի ձկանց անտի։ Եւ էին որ կերանն՝ իբրեւ արք հինգ հազար։ 44։

---



## ԵՐՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

**Սրբոց Թարգմանչացն՝ Մեսրոպայ վարդապետին եւ եղիշէի, Մովսիսի քերթողի եւ Դաւթի անյաղթ փիլիսոփայի, Գրիգորի Նարեկացւոյն եւ Ներսիսի Կլայեցւոյն եւ Ներսիսի Լամբրոնացւոյն։**

Յառաջա֊. Զհայրապետականն զարդարեցէք զաթոռ ի յերկրի· առաքելական առէք զպատիւ յերկինսն, Ծառայք Քրիստոսի ով երանելիք ի հարս սուրբ հայրապետք։ Քանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն ընդհակելով։ Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց։

Սղ· ծդ· Զերկիւղած Տեառն փառաւոր առնէ, որ երդնու ընկերի իւրում եւ ոչ ստէ։

Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քում· կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո։

Պօղոսի առաքելոյն ի կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուած։ ԳԼ· ԺԲ· 4։

Թէպէտ եւ բաժինք շնորհաց են, այլ ֊ոգի նոյն է։ Եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է։ Եթէ բաժինք աջողութեանց են, այլ Աստուած նոյն է, որ աջողէ զամենայն յամենայնի։ Այլ իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութիւն ֊ոգւոյն՝ առ իւրաքանչիւր օգուտ։ Ումեմն ի ֊ոգւոյն տուեալ է բան իմաստութեան, այլում բան գիտութեան ըստ նմին ֊ոգւոյ· միւսումն հաւատք նովին ֊ոգւով· այլում շնորհք բժշկութեանց նովին ֊ոգւով· այլում աջողութիւնք զօրութեանց, այլում մարգարէութիւն, այլում ընտրութիւն հոգւոց, այլում ազգք լեզուաց, այլում թարգմանութիւնք լեզուաց։ Այլ զայս ամենայն աջողէ մի եւ նոյն ֊ոգի, եւ բաժանէ իւրաքանչիւր որպէս եւ կամի։ 11։

Ալէլուիա, ալէլուիա· Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Է. 6:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Մի՛ տայք զսրբութիւն շանց. եւ մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց, զի մի՛ առ ոտն կոխիցեն զնոսա, եւ դարձեալ երգիծուցանիցեն զձեզ: Խնդրեցէք, եւ տացի ձեզ. հայցեցէք եւ գտջիք. բախեցէք, եւ բացցի ձեզ: Զի ամենայն որ խնդրէ՝ առնու, եւ որ հայցէ՝ գտանէ, եւ որ բախէ՝ բացցի նմա: Ո՞իցէ ի ձէնջ մարդ՝ ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր տայցէ նմա. եւ կամ խնդրիցէ ձուկն, միթէ օ՞ձ տայցէ նմա: Արդ՝ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց, որչափ եւս առաւել Հայրն ձեր որ յերկինս է՝ տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա: Զամենայն որ միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս եւ դուք արարէք նոցա, զի այն իսկ են օրէնք եւ մարգարէք: 12:

---

## ԵՐՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### Սրբոց մարգարէիցն Եզեկիէլի, Եզրի, եւ Զաքարիայ հօրն Յովհաննու Մկրտչի:

Ժամամուտ. Տէր որ հիմնեցուցեր զեկեղեցի քո ի վերայ վիմին հաւատով. եւ կարգեցեր ի սմա առաքեալս եւ մարդարէս, հովիւս եւ վարդապետս՝ առ ի հաստատութիւն սրբոց. եւ ճգնութեամբ վկայից զԹշնամին սորա վանեցեր. ի խաղաղութեան զսա պահեա, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ԿԷ. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Յարիցէ Աստուած եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս: Գլ. Բ. 6:

Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս. զիմաստութիւն ոչ զաշխարհիս այսորիկ, եւ ոչ զիշխանաց աշխարհիս



այսորիկ զխափանելեացս: Այլ խօսիմք զԱստուծոյ իմաստութիւնն ծածուկ խորհրդով, զոր յառաջ քան զյաւիտեանս սահմանեաց Աստուած ի փառս մեր. զոր ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ. զի եթէ էր ծանուցեալ, ոչ արդեօք զՏէրն փառաց ի խաչ հանէին: Այլ որպէս եւ գրեալ է. Զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց: Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն իւրով. զի Հոգին զամենայն քննէ եւ զխորս Աստուծոյ: 10:

Ալէլուիա, ալէլուիա. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԻԳ. 34:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Վասն այդորիկ ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս եւ իմաստունս եւ դպիրս. եւ ի նոցանէ սպանանիցէք եւ ի խաչ հանիցէք. եւ ի նոցանէ տանջիցէք ի ժողովուրդս ձեր, եւ հալածիցէք ի քաղաքէ ի քաղաք: Որպէս զի եկեսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ յերկրի, յարենէն Աբելի արդարոյ՝ մինչեւ ցարիւնն Զաքարիայ՝ որդւոյ Բարաքեայ, զոր սպանէք ընդ մէջ տաճարին եւ սեղանոյ: Ամէն ասեմ ձեզ. եկեսցէ այն ամենայն ի վերայ ազգիս այսորիկ: Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէս եւ քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ. քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո, զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւովք, եւ ոչ կամեցարուք: Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ: Բայց ասեմ ձեզ՝ թէ ոչ եւս տեսանիցէք զիս յայսմ հետէ, մինչեւ ասիցէք, օրհնեալ եկեալն յանուն Տեառն: 39:

---

## ԵՐՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. 2Ե. Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 4:

Յոյս մի այսպիսի ունիմք ի ձեռն Քրիստոսի առ Աստուած: Իբր ոչ եթէ անձամբ բաւական եմք խորհել ինչ իբրեւ ի մէնջ, այլ բաւականութիւնն մեր յԱստուծոյ է. որ եւ բաւականս արար զմեզ պաշտօնեայս նորոց կտակարանացս, ոչ գրով, այլ հոգւով. զի գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ: Զի եթէ պաշտօնն մահու գրով դրոշմեալ ի տախտակսն քարեղէնս՝ եղեւ փառօք, զի մի՛ կարասցեն հայել որդիքն Իսրայէլի յերեսսն Մովսիսի՝ վասն փառաց երեսաց նորա, որ խափանելոցն էր. ո՛րչափ եւս առաւել պաշտօն հոգւոյն եղիցի փառօք: Զի եթէ պաշտօն դատապարտութեան փառօք էր, ո՛րչափ եւս առաւել պաշտօն արդարութեանն փառօք: Քանզի ոչ եթէ փառաւորի փառաւորեալն յայսմ մասին, վասն առաւելութեան փառացն: Զի եթէ որ խափանելոցն էր՝ այն փառօք էր, ո՛րչափ եւս առաւել որ կալոցն է՝ փառօք իցէ: Եւ արդ զի ունիմք այսպիսի յոյս, բազում համարձակութեամբ վարեսցուք. եւ ոչ որպէս Մովսէս արկանէր քող ի վերայ երեսաց իւրոց, վասն չհայելոյ որդւոցն Իսրայէլի ի վախճան խափանելոցն: Այլ կուրացան միտք նոցա, քանզի մինչեւ ցայսօր ժամանակի նոյն քող ձգեալ կայ ի վերայ ընթերցուածոց հին կտակարանացն. եւ ոչ վերանայ, զի Քրիստոսիւ խափանելոց է: Այլ մինչեւ ցայսօր, յորժամ ընթեռնուն զՄովսէս, նոյն առագաստ կայ ի վերայ սրտից նոցա: Այլ յորժամ դարձցին առ Տէր՝ ապա վերասցի առագաստն: Զի Տէր Հոգին է. ուր Հոգի Տեառն է, անդ ազատութիւն է: 17:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի յայնէն:



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.
Գլ. Զ. 45:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ նոյն ժամայն ճեպեաց զաշակերտսն մտանել ի նաւ եւ յառաջագոյն քան զնա երթալ յայնկոյս ի Բեթսայիդա, մինչ ինքն զժողովուրդսն արձակիցէ: Եւ հրաժարեալ ի նոցանէ՝ ել ի լեառն կալ յաղօթս: Եւ իբրեւ երեկոյ եղեւ, էր նաւն ի մէջ ծովուն, եւ ինքն ի ցամաքի: Եւ ետես զնոսա հողմակոծեալս ի վարելն, զի էր հողմն ընդդէմ նոցա. եւ զչորրորդ պահու գիշերոյն գայ առ նոսա գնալով ի վերայ ծովուն, եւ կամէր զանց առնել առ նոքօք: Նոքա իբրեւ տեսին զի գնայր ի վերայ ծովուն, համարեցան թէ առ աչօք ինչ լինիցի, եւ զաղաղակ բարձին: Քանզի ամենեքեան տեսին զնա եւ խռովեցան. եւ նա անդէն վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ. Քաջալերեցարուք, ես եմ՝ մի՛ երկնչիք: Եւ ել ի նաւն առ նոսա, եւ դադարեաց հողմն: Եւ առաւել եւս յիմարեալ էին ի միտս իւրեանց, եւ զարմանային յոյժ. քանզի եւ ի վերայ հացին ոչ իմացան, զի էր սիրտ նոցա թմբրեալ: Եւ իբրեւ անցին յայնկոյս, եկին յերկիրն Գեննեսարէթ: Եւ իբրեւ ելին ի նաւէ անտի՝ իսկ եւ իսկ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ. եւ ընթացեալ այսր անդր ընդ ամենայն գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս, ուր լսէին՝ թէ անդ իցէ: Եւ ուր եւ մտանէր՝ ի գեղս կամ ի քաղաքս կամ յագարակս, ի հրապարակս դնէին զախտաժէտս, եւ աղաչէին զնա՝ զի գոնէ ի քղանցս հանդերձի նորա մերձենայցեն. եւ որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան: 56:

---

## ԵՐՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Սրբոյն Յովհաննու Կարապետին, եւ յիշատակ Յովբայ արդարոյն:

Ժամամուտ. Զյառաջընթացութիւն քո եւ զկարապետութիւն Աստուծոյ Բանին խափանել կարծելով, որ ի ձեռն կնոջն զնախաստեղծն ի դրախտէն արտաքս ընկէց, նա եւ այժմ զՀերովդիադա անօրէնութեամբ բորբոքեալ, եւ բազմելոցն Հերովդեայ՝ զկաքաւս ոտից աղջկանն հա-

ճոյացոյց, զի զքոյդ հատցէ զգլուխ, որ զամենեցուն ձեռնադրեցեր զգլուխն զՔրիստոս։ Այլ դու, որ յանապատէ բարբառոյ ձայն, դոչեա որում ձեռնադրեցեր՝ պարգեւել զխաղաղութիւն եւ զմեծ զողորմութիւն։

Սղ. ՁԸ. Աստուած փառաւորեալ է ի խորհուրդս սրբոց իւրոց. մեծ եւ ահաւոր ի վերայ այնոցիկ որ շուրջ են զնովաւ։

Զողորմութիւնս քո, Տէր, յաւիտեան օրհնեցից, յազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնս քո։

Յակովբու առաքելոյն ի Կաթողիկեայց Թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 7։

Երկայնամիտ լերուք, եղբարք իմ, մինչեւ ի գալուստն Տեառն. ահա մշակ երկայնամտեալ սպասէ պատուական պտղոյն երկրի, մինչեւ առցէ զկանուխ եւ զանագան։ Երկայնամտեցէք եւ դուք, եւ հաստատեցէք զսիրտս ձեր. զի գալուստն Տեառն մերձեալ է. Մի՛ տրտմեցուցանէք զմիմեանս, ե՛ղբարք, զի մի՛ դատիցիք. ահաւասիկ դատաւորն առ դուրս կայ։ Օրինակ առէք, ե՛ղբարք, չարչարանաց եւ երկայնմտութեան զմարգարէսն՝ որք խօսեցան յանուն Տեառն։ Ահաւասիկ երանեմք համբերողաց. զհամբերութիւն Յովբայ լուարուք եւ զկատարումն Տեառն տեսէք. զի բազմագութ է Տէր եւ ողորմած։ 11։

Ալէլուիա, ալէլուիա. Դու մանուկ, մարգարէ Բարձրելոյն կոչեսջիր. գնասցես առաջի Տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԴ. 1։

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս չորրորդապետ զլուր Յիսուսի։ Եւ ասէ ցծառայս իւր. Նա է Յովհաննէս Մկրտիչ, նա յարեաւ ի մեռելոց, եւ վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ։ Քանզի Հերովդէս կալաւ զՅովհաննէս, կապեաց զնա եւ եդ ի բանտի՝ վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա։ Զի ասէր ցնա Յովհաննէս. Չէ արժան քեզ ունել զդա։ Եւ կամէր զնա սպանանել. բայց երկնչէր ի ժողովրդենէ անտի, քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա։ Եւ իբրեւ եղեն ծնունդք Հերովդի, կաքաւեաց դուստրն Հերովդիայ ի մէջ բազմականին. եւ հաճոյ թուեցաւ Հերովդի։ Ուստի եւ երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ եւ խնդրեսցէ։ Եւ նա յառաջագոյն խրատեալ ի մօրէ իւրմէ, Տուր ինձ, ասէ, այսր ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու Մկրտչի։ Եւ տրտմեցաւ Թագաւորն. բայց վասն երդմանցն եւ բարձակցացն՝ հրամայեաց տալ նմա։ Եւ առաքեաց գլխատեաց զՅովհաննէս ի բանտի։ Եւ բերաւ գլուխ նորա սկտեղբ եւ տուաւ աղջկանն, եւ տարաւ առ մայր իւր։ Եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ բարձին զմարմինն եւ թաղեցին, եւ եկեալ պատմեցին Յիսուսի։ 12։

---

## ԵՐՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք։

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար։

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ Թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 6։

Արդ համարձակիմք յամենայն ժամ, եւ գիտեմք եթէ որչափ յամեմք ի մարմնի աստ, օտարանամք ի Տեառնէ. զի հաւատովք գնամք եւ ոչ կարծեօք։ Այլ համարձակիմք եւ առաւել եւս հաճեալ եմք ելանել ի մարմնոյ աստի եւ մտանել առ Աստուած։ Վասն որոյ եւ առատանամք. զի եթէ յամիցեմք եւ եթէ ելանիցեմք՝ հաճոյ եւեթ իցեմք նմա։ Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի ատե-

նին Քրիստոսի. զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնովն զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի եւ եթէ չար: Իսկ արդ զահն Տեառն գիտելով չափ, զմարդկան ինչ միտս հաճեմք. սակայն առաջի Աստուծոյ յայտնելոց եմք, բայց ես յուսամ եւ ի ձեր միտս յայտնի լինել: Ոչ զի ոչ եթէ միւսանգամ զանձինս ինչ ընծայեցուցանեմք ձեզ, այլ պատճառս տամք ձեզ պարծանայ վասն մեր. զի ունիցիք առ այնոսիկ՝ որ առ աչսն պարծիցին, եւ ոչ սրտիւք: Օվ եթէ առանցաք ինչ՝ այն Աստուծոյ է. եւ եթէ զգաստանամք՝ այն ձեր է: Օվ սէրն Քրիստոսի ստիպէ զմեզ քննել զայս. զի եթէ մին փոխանակ ամենեցուն մեռաւ, ապա ուրեմն ամենեքեան մեռեալ էին: Եւ ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդանիքն իցեն՝ մի՛ անձանց իցեն կենդանիք, այլ այնմ՝ որ ի վերայ նոցայն մեռաւ եւ յարեաւ: Ընդհետեւ մեք ոչ զոք գիտեմք մարմնով. զի թէպէտ եւ գիտէաք մարմնով զՔրիստոս, այլ արդ ոչ եւս նոյնպէս գիտեմք: Ասյց եթէ ինչ ի Քրիստոս նոր արարած իցէ. զի հինն անց, եւ արդ նոր եղեւ: Ընդ ամենայն ինչ Աստուծոյ՝ որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր ի ձեռն Քրիստոսի. եւ եւս մեզ զպաշտօնն հաշտութեան: 18:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Է. 17:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ իբրեւ եմուտ ի տուն յամբոխէ անտի, հարցանէին զնա աշակերտքն վասն առակին: Եւ ասէ ցնոսա. Ընդդէս եւ դուք անմիտք էք. ոչ իմանայք՝ եթէ ամենայն որ արտաքուստ ի ներքս մտանէ ի մարդ, ոչ կարէ զնա պղծել. զի ոչ եթէ ի սիրտ նորա մտանէ, այլ յորովայն, եւ արտաքս ելանէ, եւ սրբէ զամենայն կերակուրսն: Եւ ասէր, թէ Որ ինչ ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ: Օվ ի ներքուստ ի սրտէ մարդկան խորհուրդք չարութեան ելանեն. շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սպանութիւնք, ագահութիւնք, չարութիւնք, նենգութիւնք, գիշերութիւն, չարակնութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամու-



թիւն: Ընդ ամենայն չարիք ի ներքուստ ելանեն, եւ պղծեն զմարդ: Եւ անտի յարուցեալ՝ եկն ի սահմանս Տիւրոսի եւ Սիդովնի. եւ մտեալ ի տուն՝ ոչ ումեք կամէր յայտնել, եւ ոչ կարաց ծածկել: Այլ կին մի զնմանէ, որոյ դուստր իւր նեղեալ էր յայսոյ պղծոյ. եկն անկաւ առաջի նորա: Եւ կինն էր հեթանոս՝ փիւնիկ Ասորի յազգէ. եւ աղաչէր զնա՝ զի զդեւն հանցէ ի դստերէ նորա: Եւ Յիսուս ասէ ցնա. Թոյլ տուր՝ նախ յագեսցին մանկունք. զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց: Նա պատասխանի ետ եւ ասէ. Տէր, եւ շունք ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերան կրին: Եւ ասէ ցնա. Վասն այդր բանի երթ, եկ դեւն ի դստերէ քումէ: Գնաց ի տուն իւր, եւ եգիտ եղեալ զդեւն. եւ զդուստրն, զի անկեալ դնէր ի մահիճս: 30:

## ԵՐՐՈՐԴ ԾԱԲԱԹ

### Նիկիոյ Ս. ժողովոյն ՃԺԸ հայրապետաց:

Ժամամուտ. Օվ Հայրապետականն զարդարեցէք զաթոռ ի յերկրի. առաքելական առէք զպատիւ յերկնուստ, ծառայք Քրիստոսի ով երանելիք ի հարս սուրբ հայրապետք: Գանղէ ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն ընորհելով: Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Գահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն Հնբրայեցւոց Թղթոյն է ընթերցուածս.

Գլ. ԺԲ. 1:

Ընդհետեւ եւ մեք՝ որ այսչափ շուրջ զմեօք մածեալ ունիմք զբազմութիւն վկայից, զկպարտութիւն զամենայն ի բաց ընկեցցուք եւ զմեղս կարեւորս. համբերութեամբ ընթացցուք ի պատերազմին՝ որ առաջի կայ մեզ: Հայեցցուք ի զօրագլուխն հաւատոյ եւ ի կատարիչն Յիսուս, որ փոխա-

նակ ուրախութեանն որ նմա առաջի կայր, յանձն առ զխաչն, արհամարհեաց զամօթն, նստաւ ընդ աջմէ աթոռոյն Աստուծոյ: Ընդ ածէք զմտաւ, որ զայսպիսի համբերութիւն ի մեղաւորաց հակառակութենէ անտի կրեաց. զի մի՛ աշխատ լինիցիք անձամբք ձերովք եւ լքանիցիք: Ոչ չեւ եւս արեամբ չափ պատերազմեալք՝ հակառակ կացէք մեղացն, եւ մոռացարուք զմխիթարութիւնն, որ ընդ ձեզ իբրեւ ընդ որդեակս խօսի: Որդեա՛կ իմ, մի՛ լքանիր ի խրատու Տեառն, եւ մի՛ վհատիցիս՝ յանդիմանեալ ի նմանէ: Ոչ զոր սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի՝ զոր ընդունի: Ի խրատու համբերութեան կայք, իբրեւ յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Վասն անայք քո զգեցան զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

ԳԼ. ԺԴ. 25:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ ձեզս եմ: Իսկ մխիթարիչն Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն, եւ յիշեցուսցէ զամենայն՝ որ ինչ ասացի ձեզ: Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի՛ խռովեսցին սիրտք ձեր, եւ մի՛ զանգիտեսցեն: Լուայք, զի ասացի ես ձեզ Թէ երթամ, եւ գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լեալ էր ձեր՝ Թէ ես առ Հայր երթամ, զի Հայր իմ մեծ է քան զիս: Եւ այժմ ասացի ձեզ մինչ չեւ եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք: Ոչ եւս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. գայ իշխան աշխարհիս այսորիկ եւ յիս ինչ ոչ գտանէ: Այլ զի ծանիցէ աշխարհ, եթէ սիրեմ զՀայր, եւ որպէս պատուիրեաց ինձ Հայր՝ այնպէս առնեմ. ծն արիք՝ գնասցուք աստի: 31:



## ՁՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՋԿՆԻ ՓՈԽՄԱՆ

Յաճախոպ. Ա՛իածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. կԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տայցին աղօթք Երուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. ԳԼ. Է. 4:

Բազում համարձակութիւն է ինձ առ ձեզ, բազում պարծանք են ինձ վասն ձեր. լի եմ մխիթարութեամբ. առաւելեալ եմ ուրախութեամբ յամենայն նեղութիւնս մեր: Քանզի յորժամ հասաք մեք ի Մակեդոնիա, եւ ոչ միով իւիք հանգիստ գտաւ մարմնոյ մերում, այլ յամենայնի նեղեալք. քանզի արտաքոյ մարտք եւ ի ներքոյ արհաւիրք: Այլ որ մխիթարէն զխոնարհս՝ մխիթարեաց զմեզ Աստուած ի գալստեանն Տիտոսի: Ոչ միայն ի գալստեան նորա, այլ եւ ի մխիթարութեանն՝ զոր մխիթարեցաւ նա ի ձեզ, ի պատմել մեզ զանձուկն ձեր, զողբումն ձեր, զնախանձն ձեր վասն իմ, մինչեւ առաւել ուրախ լինել ինձ: Ոչ թէ եւ տրտմեցուցի զձեզ թղթովն՝ ոչ զղջանամ, թէպէտ եւ զղջացեալ էի. քանզի տեսանեմ՝ զի թուղթն այն թէ եւ առ ժամանակ մի տրտմեցոյց զձեզ, արդ ուրախ եմ, ոչ զի տրտմիցիք, այլ զի յապաշխարութիւն տրտմեցարուք, քանզի տրտմեցայք դուք ըստ Աստուծոյ, զի մի՛ իւիք զրկիցիք ի մէնջ: Ոչ որ ըստ Աստուծոյն տրտմութիւն է՝ ապաշխարութիւն ի փրկութիւն առանց զղջանալոյ գործէ. իսկ աշխարհի տրտմութիւն՝ մահ գործէ: Արդ նոյն իսկ որ ըստ Աստուծոյն տրտմեցարուք, որչափ ինչ փոյթ գործեաց ի ձեզ, կամ աղերս կամ սաստ կամ երկիւղ կամ անձուկ կամ նախանձ կամ վրէժխնդրութիւն. քանզի յամենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր սուրբս

լինել յիրիդ յայդմիկ: Ապա ուրեմն թէ եւ գրեցի ես առ ձեզ, ոչ վասն այնորիկ՝ որ զրկեացն, եւ ոչ վասն այնորիկ՝ որ զրկեցաւն. այլ վասն յայտնի լինելոյ փութոյն ձերոյ՝ որ վասն մեր առ ձեզ առաջի Աստուծոյ: Վասն այնորիկ մխիթարեալ եմք ի վերայ մխիթարութեանն մերոյ. առաւել եւս խնդացաք ի վերայ խնդութեանն Տիտոսի. քանզի հանգուցեալ էր հոգի նորա ի ձէնջ ամենեցունց: Զի զինչ եւ պարծեցայ առ նմա վասն ձեր՝ ոչ ամաչեցի. այլ որպէս զամենայն ճշմարտութեամբ խօսեցաք ընդ ձեզ, նոյնպէս եւ պարծանքն մեր առ Տիտոսի ճշմարիտ եղեն: Նա եւ գութք նորա առաւել եւս են ի ձեզ. քանզի յիշեցուցանէր մեզ զամենեցուն զձեր հնազանդութիւն, թէ ո՛րպէս ահիւ եւ դողութեամբ ընկալարուք զնա: Եւ արդ ուրախ եմ, զի յամենայնի համարձակ եմ առ ձեզ: 16:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Է. 31:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ ելեալ միւսանգամ ի սահմանացն Տիւրոսի եւ Սիդովնի, եւ եկն ի ծովեզրն Գալիլեացւոց ի մէջ սահմանացն ի Դեկապոլիս: Եւ բերին առաջի նորա խուլ մի եւ համր, եւ աղաչէին՝ զի ձեռն դիցէ ի վերայ նորա: Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի, արկ զմատունս իւր ընդ ականջս նորա եւ եթուք անդր. եւ կալաւ զլեզուէ նորա, հայեցաւ յերկինս, յոգւոց եհան եւ ասէ. Եփփաթայ՝ որ է բացիր: Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա, եւ լուծան կապանք լեզուի նորա. եւ խօսէր ուղիղ: Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ումեք ասիցեն. եւ որչափ նա պատուիրէր նոցա, նոքա եւս առաւել քարոզէին. եւ եւս քան զեւս զարմանային եւ ասէին. Զամենայն ինչ բարւոք գործեաց սա, զի խլից լսել տայ եւ համերց խօսել: 37:



Ի ՏՕՆԻ ԾՆՆԴԵԱՆ

ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ

# ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ Ը.

---

Ժամամուտ. Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մարիամ Աստուածածին, Բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ եւ սուրբ Հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ. որ զամենայն գոյութեանց ստեղծիչն յղացեալ ծնար անճառապէս. մարմնացելոյն առ ի քէն բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր:

Ող. Զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. զի ահա յայսմհետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք:

Մեծացուսցէ անձն իմ զՏէր. եւ ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով:

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 24:

Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեզ ի Քրիստոս Յիսուս, զի ի հաւատոցն արդարասցուք: Այլ իբրեւ եկին հաւատքն, ոչ եւս ընդ դաստիարակաւ եմք: Քանզի ամենեքեան որդիք Աստուծոյ էք հաւատովք ի Քրիստոս Յիսուս: Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք. չիք խտիր, ոչ հրէի եւ ոչ հեթանոսի, ոչ ծառայի եւ ոչ ազատի, ոչ արուի եւ ոչ իգի. զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս: Ապա եթէ դուք Քրիստոսի էք, ուրեմն Աբրահամու զաւակ էք, ըստ աւետեացն ժառանգք: 29:

Ալելուիա, ալելուիա. Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ. եւ զօրութիւն Բարձրելոյն հովանի լինի ի վերայ քո:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ա. 39:

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ, գնաց ի լեռնակողմն փութապէս ի քաղաքն Յուդայ: Եւ եմուտ ի տունն Զաքարիայ, եւ ետ ողջոյն Եղիսաբեթի: Եւ եղեւ իբրեւ լուաւ զողջոյնն Մարիամու Եղիսաբեթ, խաղաց մանուկն յորովայնի նորա. եւ լցաւ Եղիսաբեթ Հոգւով սրբով: Եւ ի ձայն բարձր աղաղակեաց եւ ասէ. Օրհնեալ ես դու ի կանայս, եւ օրհնեալ է պտուղ որովայնի քոյ: Եւ ուստի է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս: Զիահաւասիկ իբրեւ եղեւ ձայն ողջունի քո յականջս իմ, խաղաց ցնծալով մանուկս յորովայնի իմում: Եւ երանի՛ որ հաւատացեալ է՝ եթէ եղիցի կատարումն ասացելոցս նմա ի Տեառնէ: Եւ ասէ Մարիամ. Մեծացուսցէ անձն իմ զՏէր: Եւ ցնծացաւ հոգի իմ յԱստուած փրկիչ իմ: Զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. զի ահա յայսմհետէ երանի՛ նեսցեն ինձ ամենայն ազգք: Զի արար ինձ մեծամեծս հզօրն, եւ սուրբ է անուն նորա: Եւ ողորմութիւն նորա ազգաց յազգս երկիւղածաց իւրոց: Արար զօրութիւն բազկաւ իւրով. ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց: Վարկեաց զՀզօրս յաթոռոց, եւ բարձրացոյց զխոնարհս: Զքաղցեալսն լցոյց բարութեամբ, եւ զմեծատունս արձակեաց ունայնս: Պաշտպանեաց Իսրայէլ ծառայի իւրում՝ յիշել զողորմութիւնս: Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրահամ եւ զաւակի նորա յաւիտեան: Եկաց Մարիամ առ նմա իբրեւ ամիսս երիս, եւ դարձաւ ի տուն իւր: 56:

---

Պահպանեաց Խաչին. ե- պահպ ու լինին:

## ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Յոհաննու- Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ կուսէն. որ վասն մեր ի յերկինից իջեր եւ



լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. ճԽԹ. Ընդայութիւն քո արդայութիւն ամենայն յաւիտենից. եւ տէրութիւն քո յազգէ մինչեւ յազգ:

Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր. եւ արդար է յամենայն գործս իւր:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ը. 1:

Յուցանեմ ձեզ, ե՛ղբարք, զշնորհսն Աստուծոյ՝ որ տուեալ են եկեղեցեացն Մակեդոնացւոց. զի մեծաւ հանդիսիւ նեղութեան՝ առատութիւն խնդութեանն նոցա, եւ ծանր աղքատութիւն նոցա առատել եղեւ ի մեծութիւն առատութեան նոցա: Զի ըստ կարի նոցա վկայեմ, եւ աւելի քան զկար, ինքնակամ բազում աղաչանօք աղաչէին՝ զշնորհսն եւ զհաղորդութիւն պաշտամանն որ ի սուրբսն՝ տալ ցմեզ: Եւ ոչ որչափ ակն ունէաք, այլ եւ զանձինս եւս ետուն, նախ Տեառն եւ ապա մեզ՝ կամօքն Աստուծոյ, աղաչել զՏիտոս, զի որպէս սկսաւն յառաջագոյն, նոյնպէս եւ կատարեսցէ ի ձեզ եւ զայդ եւս շնորհս: Այլ որպէս յամենայնի առաւել էք հաւատովք եւ բանիւ եւ գիտութեամբ եւ ամենայն փութով, եւ որ ի մէնջ ի ձեզ սէրն է, զի եւ յայդմ եւս շնորհի առաւել լինիցիք: Ոչ որպէս հրաման տալոյ ասեմ. այլ վասն այլոց փութոյ, եւ վասն ձերոյ սիրոյ զմտերմութիւնդ փորձեմ: Գիտէք զի շնորհսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի վասն ձեր աղքատացաւ՝ որ մեծատունն էր, զի դուք նորա աղքատութեամբն մեծասջիք: Եւ խրատ մի յայսմիկ տամ, զի այն իսկ օգտի է ձեզ. որք ոչ միայն զառնելն, այլ եւ զկամելն յառաջագոյն սկսայք ի հերուն հետէ: Այժ արդ եւ զառնելն իսկ կատարեցէք. զի որպէս յօժարութիւնն ի կամաց է, նոյնպէս եւ առնելն ըստ գոյին: Զի եթէ յօժարութիւնն առաջի կայ, ըստ գոյին ընդունելի է, եւ ոչ եթէ ըստ չգոյին: Զի ոչ եթէ այլոց հանգիստ կամիցիմ, եւ ձեզ նեղութիւն: Այլ հաւասարութեամբ յայժմու ժամանակիս ձեր առաւելութիւնդ ի նոցա պա-

կասութեանն. զի եւ նոցա առաւելութիւնն եղիցի ի ձերում պակասութեանդ. զի եղիցի հաւասարութիւն, որպէս եւ գրեալ է, թէ Որ բազումն առ՝ ոչ առաւելաւ, եւ որ սակաւն՝ ոչ նուազեցաւ: 15:

Ալէլուիա, ալէլուիա. Եկայք ցնծասցուք ի Տէր. աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Ը. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յաւուրսն յայնոսիկ դարձեալ ժողովուրդ բազում էր, եւ ինչ ոչ ունէին ուտել. կոչեաց զաշակերտսն իւր եւ ասէ ցնոսա. Գթամ ես ի վերայ ժողովրդեանդ. զի արդ երեք աւուրք են՝ մինչ առ իս են, եւ ոչ ունին զինչ ուտիցեն: Եւ եթէ արձակեմ զդոսա նօթիս ի տունս իւրեանց՝ նքթիցին ի ճանապարհի. զի ոմանք ի դոցանէ ի հեռաստանէ եկեալ են: Պատասխանի ետուն նմա աշակերտքն նորա. Ուստի՞ կարես յագեցուցանել զդոսա հացիւ յանապատի աստ: Եւ հարցանէր զնոսա: Քանի՞ նկանակ հաց ունիք. եւ նոքա ասեն. Եօթն: Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ի վերայ երկրի. եւ առեալ զեօթն նկանակն, գոհացաւ՝ եբեկ, եւ տայր ցաշակերտսն՝ զի արկցեն. եւ արկին առաջի ժողովրդեանն: Եւ ձկունս սակաւ ունէին. եւ զայն եւս օրհնեաց, եւ հրամայեաց արկանել: Կերան եւ յագեցան եւ բարձին զնշխարս կոտորոցն եօթն զամբիղ: Եւ էին որ կերանն՝ իբրեւ չորք հազարք. եւ արձակեաց զնոսա: 9:

---

## ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր. որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես գու կարող մարդասէր:



Սղ. Ե. Երկիր պագից ի տաճար սուրբ քո. երկիւղիւ քո Տէր:

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քոյ Տէր. զի օրհեսցես դու զարդարն:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ը. 16:

Բայց շնորհք Աստուծոյ՝ որ արկ զնոյն փոյթ վասն ձեր ի սիրտ Տիտոսի. զի զաղաչանսն ընկալաւ, եւ փութացաւ յօժարագոյնս դիմեաց գալ առ ձեզ: Եւ առաքեցաք ընդ նմա զեղբայրն՝ որոյ գովութիւնն յաւետարանի անդ է ընդ ամենայն եկեղեցիս: Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ ձեռնադրեալ յեկեղեցեաց անտի, նշդեհակից մեր եղեւ ի շնորհս յայսոսիկ՝ որ պաշտին ի մէնջ, ի փառս Տեառն եւ ի մեր յօժարութիւն: Բայց զայս խղճէաք իսկ թէ գուցէ արատ ինչ ոք դնիցէ ի հաստատութեանս յայսմիկ՝ որ պաշտեցաւս ի մէնջ: Քանզի խորհիմք զբարիս ոչ միայն առաջի Տեառն, այլ եւ առաջի մարդկան: Եւ առաքեցաք ընդ նոսա զեղբայրն մեր՝ զոր ընտրեցաք ի բազում իրս բազում անգամ պինդ գտեալ, եւ առաւել եւս այժմ պնդագոյն, յուսով մեծաւ ի ձեզ: Բայց եթէ վասն Տիտոսի ինչ բանք են, իմ հաւասար է եւ ձեր գործակից. եւ եթէ եղբարք մեր, առաքեալքն եկեղեցւոյ եւ փառք Քրիստոսի: Եւ արդ զհանդէս սիրոյ ձերոյ եւ զմերոյ պարծանացն վասն ձեր, ի դոսա ցուցջիք յանդիման ամենայն եկեղեցեաց: 24:

Ալէլուիա, ալէլուիա. Երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէք Տեառն ամենայն երկիր. երգեցէք Տեառն եւ բարձր արարէք զանուն նորա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Ը. 10:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ նոյն ժամայն մտեալ ի նաւ հանդերձ աշակերտօքն՝ եկն ի կողմանս Դաղմանունեայ: Եկին փարիսեցիքն եւ սկսան վիճել ընդ նմա, եւ խնդրէին ի նմանէ նշան յերկնից՝

փորձելով զնա: Եւ զայրացաւ յոգի իւր եւ ասէ. Զի՞ է՝ զի ազգս այս նշան խնդրէ. ամէն ասեմ ձեզ, թէ տացի նշան ազգիս այսմիկ: Եթող զնոսա. դարձեալ եմուտ ի նաւ եւ գնաց յայնկոյս: Եւ մոռացան հաց բառնալ. բայց մի նկանակ ունէին ընդ իւրեանս ի նաւին: Եւ պատուիրէր նոցա եւ ասէր. Զգոյշ եղերուք ի խմորոյ անտի փարիսեցւոց եւ ի խմորոյ հերովդիանոսաց: Եւ խորհէին ընդ միմեանս եւ ասէին, թէ Զի հացս ոչ ունիմք: Գիտաց Յիսուս եւ ասէ ցնոսա. Զի՞ խորհիք ի սիրտս ձեր, թերահաւատք, թէ հաց ոչ ունիք. տակաւին ո՞չ իմանայք եւ ո՞չ յիշէք. ապշութիւն ունի զսիրտս ձեր: Աչք գոն եւ ոչ տեսանէք, ականջք են եւ ոչ լսէք, եւ ոչ իմանայք տակաւին եւ ոչ յիշէք: Յորժամ զհինգ նկանակն ի հինգ հազարսն, եւ քանի՞ սակառի լի բարձէք զկոտորոցն: Եւ ասեն ցնա. Երկոտասան: Եւ յորժամ զեօթն նկանակն ի չորս հազարսն, եւ քանի՞ զամբիղ լի բարձէք զկոտորոցն: Եւ նոքա ասեն. Եօթն: Եւ ասէ ցնոսա. Իսկ զիա՞րդ ոչ իմանայք: 21:

---

## ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. 2Ե. Կոցո զծառայս քո, Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Թ. 1:

Այլ վասն պաշտամանն՝ որ ի սուրբսն է, աւելի է ինձ եւ գրել առ ձեզ: Զի գիտեմ զյօժարութիւն ձեր, զոր վասն ձեր պարծեցեալ եմ ի մէջ Մակեդոնացւոցն, եթէ Աքայեցիքն ի հերուն հետէ պատրաստ են. եւ ձեր նախանձն զբազումս յորդորեաց: Եւ առաքեցաք զեղբարսն,



զի մի՛ պարծանքն մեր որ վասն ձեր՝ ընդունայն լինիցին ի մասինդ յայդմիկ. այլ որպէս ասէի իսկ, պատրաստագոյնք գտանիջիք: Գուցէ յորժամ գայցեն ընդ մեզ Մակեդոնացիքն եւ գտանիցեն զձեզ անպատրաստս, եւ ամաչեսցուք մեք, զի մի՛ ասասցուք թէ դուք, ի մասինդ յայդմիկ պարծանաց: Արդ կարեւոր համարեցայ աղաչել զեղբարս, զի յառաջագոյն եկեսցեն առ ձեզ, եւ յառաջագոյն պատրաստեսցեն զյառաջագոյն խոստացեալ օրհնութիւնն ձեր ի պատրաստի ունել. այնպէս իբրեւ զօրհնութիւն, եւ մի՛ իբրեւ զագահութիւն: Քանզի զայդ որ սերմանէ ճշդելով՝ ճշդելով եւ հնձեսցէ. եւ որ սերմանէ առատութեամբ՝ առատութեամբ եւ հնձեսցէ: Իւրաքանչիւր որպէս եւ յօժարեսցէ ոք սրտիւ, մի՛ առ հարկի եւ տրտմութեան. քանզի զտուրս զուարթառատս սիրէ Աստուած: Այլ կարող է Աստուած զամենայն շնորհս առաւելուլ ի ձեզ. զի յամենայնի յամենայն ժամ զամենայն բաւականութիւն ընկալեալ՝ առաւելուցուք յամենայն գործս բարութեան, որպէս եւ գրեալ է. Սփռեաց եւ ետ տնանկաց, արդարութիւն նորա մնայ յաւիտեան: 9:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Ը. 22:

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Գան ի Բեթսայիդա. եւ ածեն առաջի նորա կոյր մի, եւ աղաչէին զնա՝ զի մերձեսցի ի նա: Եւ առեալ զձեռանէ կուրին՝ եհան արտաքոյ շինին, եթուք յաչս նորա, եւ ձեռն եդ ի վերայ նորա. եւ հարցանէր ցնա՝ թէ տեսանիցէ՞ ինչ: Բացաւ եւ ասէր. Տեսանեմ զմարդիկս զի շրջին՝ իբրեւ զծառս: Դարձեալ եդ ձեռս ի վերայ աչաց նորա՝ եբաց, եւ տեսանէր. ողջացաւ եւ տեսանէր համարձակ զամենայն: Արձակեաց զնա ի տուն իւր եւ ասէ. Ի շէնդ մի՛ մտանիցես, այլ երթ ի տուն քո. եւ յորժամ ի շէնն մտանիցես՝ մի՛ ումեք ասիցես ի շինին: 26:

---

## ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. ՂԸ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Թ. 10:

Այլ այն որ պարգեւէ սերմն սերմանահանաց, եւ հաց ի կերակուր պարգեւեսցէ, եւ բազմացուսցէ զսերմանիս ձեր, եւ աճեցուսցէ զարդիւնս արդարութեան ձերոյ. յամենայնի մեծացեալք ամենայն առատութեամբ, որ յօրինէն մեօք գոհութիւն Աստուծոյ: Զի պաշտօն հարկիս այսորիկ ոչ միայն առ ի լնուլ զպակասութիւն սրբոցն է, այլ եւ առաւելուլ բազմօք գոհութիւնս Աստուծոյ: Հանդիսիւ պաշտամանս այսորիկ փառաւորել զԱստուած ի վերայ հնազանդութեան խոստովանութեան ձերոյ յաւետարանն Քրիստոսի, եւ առատութեամբ հաղորդութեանն ի նոսա եւ յամենեսեան: Եւ նոցա աղօթք վասն ձեր. քանզի անձկացեալ են առ մեզ վասն առաւել շնորհացն Աստուծոյ՝ որ ի մեզ: Այլ շնորհք Աստուծոյ ի վերայ անպատում պարգեւացն նորա: Այլ ես իսկ Պօղոս աղաչեմ զձեզ հեզութեամբ եւ հանդարտութեամբն Քրիստոսի, որ յանդիման ձեզ իբրեւ տառապեալ մի եմ ի միջի ձերում. բայց ի հեռուստ համարձակիմ առ ձեզ: Աղաչեմ, զի մի՛ ի մօտոյ եւեթ համարձակիցիմ վստահութեամբ, կամ համարիցիմ յանդգնել ի վերայ ոմանց՝ որ կարծեն զմէնջ եթէ ըստ մարմնոյ գնայցեմք: Զի թէպէտ եւ մարմնով գնամք, այլ ոչ եթէ ըստ մարմնոյ զինուորիմք: Զի զէն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զօրաւոր յԱստուծոյ, առ ի քակելոյ զամուրս, զխորհուրդս քակեմք, եւ զամենայն



բարձրութիւն հպարտացեալ ի վերայ գիտութեանն Աստուծոյ. եւ գերեմք զամենայն միտս ի հնազանդութիւն Քրիստոսի. եւ ի պատրաստի ունիմք խնդրել զվրէժ ամենայն անհնազանդութեան՝ յորժամ ձեր եւս հնազանդութիւնդ կատարեսցի: Ժ. 6:

Ալէլուիա, ալէլուիա. Բարձր արարից զընտրեալն ի ժողովրդենէ իմմէ. գտի զԴաւիթ ծառայ իմ, եւ իւղով սրբով իմով օծի զնա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Թ. 13:

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Եւ եկեալ առ աշակերտսն, տեսին ամբոխ շուրջ զնոքօք, եւ զդպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա: Եւ վաղվաղակի ամենայն ժողովուրդն իբրեւ տեսին զնա՝ զարմացան, եւ ընդ առաջ ընթացեալ ողջոյն տային նմա: Եւ եհարց ցնոսա՝ թէ Զի՞նչ վիճէիք ընդ նոսա: Պատասխանի ետ մի ոմն ի ժողովրդենէն եւ ասէ. Վարդապետ, ածի զորդի իմ առ քեզ, զոր ունի այս համր. եւ ուր հասանէ՝ զարկուցանէ զնա, եւ փրփրէ եւ կրճտէ զատամունս իւր եւ ցամաքի. եւ ասացի ցաշակերտսն քո զի հանցեն, եւ ոչ կարացին հանել զնա: Պատասխանի ետ նոցա եւ ասէ. Ո՛վ ազգ անհաւատ, մինչեւ յե՞րբ իցեմ ընդ ձեզ, մինչեւ ցե՞րբ անսայցեմ ձեզ. ածէք զնա առ իս: Եւ ածին զնա առ նա: Իբրեւ ետես զնա այսն, վաղվաղակի շարժլեաց զնա, եւ անկեալ յերկիր թաւալէր եւ փրփրայր: Եհարց ցհայր նորա եւ ասէ. Քանի՞ ժամանակք են՝ յորմէ հետէ այդ եղեւ դմա. եւ նա ասէ. Ի մանկութենէ: Բազում անգամ ի հուր արկանէ եւ ի ջուր՝ զի կորուսցէ զդա. արդ՝ եթէ կարող ինչ ես, օգնեա մեզ, Տէր, գթացեալ ի վերայ մեր: Եւ Յիսուս ասէ ցնա. Ասացեր՝ թէ կարող ես. ամենայն ինչ հնարաւոր է այնմ, որ հաւատայն: Եւ վաղվաղակի աղաղակեաց հայր մանկանն եւ ասէ. Հաւատամ, օգնեա անհաւատութեանս իմում: Իբրեւ ետես Յիսուս եթէ կուտի ժողովուրդն ի վերայ, սաստեաց այսոյն պղծոյ եւ ասէ. Համրդ եւ խուլ այս, ես տամ քեզ հրաման, ել ի դմանէ, եւ այլ եւս մի՛ մտանիցես ի դա: Եւ

աղաղակեաց եւ յոյժ լլկեաց զնա, եւ ել. եւ եղեւ պատա-
նեակն իբրեւ զմեռեալ, մինչեւ բազմաց իսկ ասել՝ թէ
Մեռաւ: Եւ Յիսուս կալաւ զձեռանէ նորա՝ յարոյց զնա,
եւ կանգնեցաւ: Եւ իբրեւ եմուտ նա ի տուն, աշակերտքն
առանձինն հարցին ցնա. Մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել
զնա: Եւ ասէ ցնոսա. Այդ ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ
պահովք եւ աղօթիւք: 28:

---

## ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխա-
ղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ
աղաչեմք:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն
Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս
արար:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ժ. 7:

Ե՛ղբարք, ըստ իւրաքանչիւր երեսաց դիտեսջիք. եթէ
ոք վստահ յանձն իցէ՝ Քրիստոսի լինել, զայս խորհեսցի
դարձեալ ի միտս իւր, թէ որպէս նայն Քրիստոսի է՝ նոյն-
պէս եւ մեք: Զի թէ առաւել եւս պարծեցայց վասն իշխա-
նութեանս մերոյ՝ զոր ետ մեզ Տէր ի շինել, եւ ոչ ի քակել
զձեզ, ոչ ինչ ամաչեցից: Զի մի՛ թուեցայց իբրեւ ահ ինչ
արկանել ձեզ թղթովքս: Ասիցէ՛ք. Թուղթքս ծանունք են
եւ սաստիկք. բայց տեսիլ մարմնոյ տկար եւ բանն արհա-
մարհեալ: Զայս խորհեսցի այնպիսին, զի որպիսիք եմք
բանիւք թղթոցդ ի հեռուստ՝ նոյնպիսիք եւ ի մօտոյ ար-
դեամբք: Քանզի ոչ իշխեմք կշռել եւ հաւասարել զան-
ձինս մեր ոմանց, որ զանձինս իւրեանց ձեզ ընծայեցուցա-
նեն. այլ անձամբ յանձինս զանձինս չափեն, եւ ի կշռել
անձամբ յանձինս՝ ոչ առնուն ի միտ: Այլ մեք ոչ եթէ
յանչափս ինչ պարծեսցուք, այլ ըստ չափոյ կանոնին, զոր
բաժանեաց մեզ Աստուած չափով՝ հասանել մինչեւ առ



ձեզ: Իբր ոչ եթէ հասու ինչ չիցեմք ի ձեզ եւ ձկտեցու-
ցանիցեմք զանձինս. քանզի մինչեւ առ ձեզ հասաք աւե-
տարանաւն Քրիստոսի: Եւ ոչ յանչափս ինչ պարծիմք
օտար վաստակօք: Բայց յոյս մի ունիմք զաճմանն հաւատոց
ձերոց այդրէն ի ձեզ մեծանալոյ ըստ կանոնիս մերոյ յառաւե-
լութիւն, ի վեր եւս քան զձեզ աւետարանել՝ ոչ օտար
կանոնաւ ի պատրաստականս ինչ պարծել: Զի որ պարծի-
ցին՝ ի Տէր պարծեսցի: 17:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.
Գլ. Թ. 37:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Պատասխանի ետ նմա Յովհաննէս եւ ասէ. Վարդա-
պետ, տեսաք զոմն, զի յանուն քո դեւս հանէր եւ զմեր կնի
ոչ շրջէր, եւ արգելաք զնա: Եւ նա ասէ. Մի՛ արգելուք
զնա. զի ոչ ոք է՝ որ առնէ զօրութիւնս յանուն իմ, եւ
կարիցէ հայհոյել զիս: Զի որ ոչն է ընդ մեզ հակառակ՝ ի
մեր կոյս է: Եւ որ ոք արբուսցէ ձեզ ջուր բաժակաւ յա-
նունս յայս՝ թէ դուք Քրիստոսի էք, ամէն ասեմ ձեզ՝ մի՛
կորուսցէ զվարձս իւր: Եւ որ ոք գայթագղեցուսցէ զմի ի
փոքրկանցս՝ որ հաւատան յիս, լաւ էր նմա առաւել՝ եթէ
արկեալ էր ընդ պարանոց նորա երկան իշոյ, եւ ընկեցեալ ի
ծով: Եւ եթէ գայթագղեցուսցէ զքեզ ձեռն քո, հատ՝
ընկեա ի քէն. զի լաւ իցէ քեզ խեղ մտանել ի կեանսն
յաւիտենից, քան երկուս ձեռս ունել եւ երթալ ի գեհեն
ի հուրն անշէջ. ուր որդն նոցա ոչ մեռանի եւ հուրն ոչ
շիջանի: Եւ եթէ ոտն քո գայթակղեցուսցէ զքեզ, հատ՝
ընկեա զնա ի քէն. լաւ իցէ քեզ կաղ մտանել ի կեանսն
յաւիտենից, քան երկուս ոտս ունել եւ անկանել ի գեհեն
ի հուրն անշէջ. ուր որդն նոցա ոչ մեռանի եւ հուրն ոչ
շիջանի: Եւ եթէ ակն քո գայթագղեցուսցէ զքեզ, հան
զնա ի բաց. լաւ իցէ քեզ միով ակամբ մտանել յարքայու-
թիւն Աստուծոյ, քան երկուս աչս ունել եւ անկանել ի
գեհեն. ուր որդն նոցա ոչ մեռանի եւ հուրն ոչ շիջանի:
Զի ամենայն ինչ հրով յաղեսցի, եւ ամենայն ողջակէզ

աղիւ յաղեսցի։ Բարւոք է աղ. եւ եթէ աղն անհամեսցի՝ ի՞ւ համեմեսցի։ Արդ՝ դուք կալարուք յանձինս ձեր զաղն, եւ խաղաղութիւն արարէք ընդ միմեանս։ 49։

---

## ՇԱԲԱԹ

### Ցօն է Նաւակատեաց սուրբ Խաչի:

Ժամամուտ. Զխաղաղութիւն շնորհեա եկեղեցւոյ քում սրբոյ, զխաղաղութիւն եւ զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմէ. եւ հաստատեա ի մի հաւատ զկաթուղիկէ եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տէր եւ Աստուած. կեցո զմեզ։

Օղ. կԴ. Երանի՛ զորս ընտրեցեր եւ ընկալար. եւ բնակեսցեն ի գաւիթս քո։

Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ։

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 14։

Զայս գրեմ առ քեզ, զի ակն ունիմ ի մօտոյ գալ։ Ապա թէ յամեցից, զի գիտասցես թէ որպէս պարտ իցէ քեզ ի տան Աստուծոյ շրջել, որ է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ, սիւն եւ հաստատութիւն ճշմարտութեան։ Եւ յայտնի իսկ մեծ է խորհուրդն աստուածպաշտութեան, որ երեւեցաւ մարմնով, արդարացաւ հոգւով, յայտնեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ ի հեթանոսս, հաւատարիմ եղեւ յաշխարհի, եւ վերացաւ փառօք։ 16։

Ալէլուիա, ալէլուիա. Տէր սիրեցի զվայելչութիւն տան քոյ. եւ զտեղի յարկի փառաց քոց։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու. Գլ. Ժ. 22։

Առ Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Եղեն յայնժամ նաւակատիքն յԵրուսաղէմ, եւ ձմեռն էր։ Եւ շրջէր Յիսուս ի տաճարին՝ ի սրահին Սողոմովնի։ Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն եւ ասեն. Մինչեւ յե՞րբ թափես զոգիս մեր. եթէ դու ես Քրիստոսն՝ ասա մեզ համարձակ։ Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. Ասացի ձեզ եւ ոչ հաւատայք ինձ. զգործսն զոր ես գործեմ յանուն Հօր իմոյ՝ նոքին իսկ վկայեն վասն իմ։ Այլ դուք ոչ հաւատայք, զի չէք յոչխարաց անտի իմոց։ Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, եւ ես ճանաչեմ զնոսա, եւ զկնի իմ գան. եւ ես տամ նոցա զկեանսն յաւիտենականս, եւ մի՛ կորիցեն ի յաւիտեան. եւ մի՛ ոք յափշտակեսցէ զնոսա ի ձեռաց իմոց։ Հայրն իմ՝ որ ետ ինձ զնոսա, մեծ է քան զամենայն, եւ ոչ ոք կարէ յափշտակել ի ձեռաց Հօր իմոյ։ Ես եւ Հայր իմ մի եմք։ Վէմս առին Հրեայքն՝ զի քարկոծ արասցեն զնա։ Պատասխանի ետ նոցա Յիսուս. Բազում գործս բարիս ցուցի ձեզ ի Հօրէ իմմէ. վասն որո՞յ գործոյ ի նոցանէ քարկոծ առնէք զիս։ Պատասխանի ետուն նմա Հրեայքն. Վասն բարւոյ գործոյ ոչ առնեմք զքեզ քարկոծ, այլ վասն հայհոյութեան. եւ զի դու մարդ ես, եւ զանձն քո Աստուած առնես։ Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ո՞չ յօրէնս ձեր գրեալ է. Ես ասացի թէ աստուածք իցէք։ Իսկ եթէ զնոսա աստուածս ասէ, առ որս բանն Աստուծոյ եղեւ, եւ չէ մարթ եղծանել գրոյն. իսկ զոր Հայր սրբեաց եւ առաքեաց յաշխարհ, դուք ասէք թէ Հայհոյես. զի ասացի՝ թէ Որդի Աստուծոյ եմ։ Եթէ ոչ գործեմ զգործս Հօր իմոյ, մի՛ հաւատայք ինձ. ապա թէ գործեմ, թէ եւ ինձ ոչ հաւատայք, սակայն գործոցն հաւատացէք. զի գիտասջիք եւ ծանիջիք՝ եթէ Հայր յիս եւ ես ի Հայր։ Դարձեալ խնդրէին զնա ունել, եւ ել ի ձեռաց նոցա։ Եւ գնաց միւսանգամ յայնկոյս Յորդանանու՝ ի տեղին, ուր էր Յովհաննէս զառաջինն եւ մկրտէր. եւ անդ լինէր։ Եկին բազումք առ նա եւ ասեն. զի Յովհաննէս նշան ինչ ոչ արար. բայց զամենայն զոր ասաց Յովհաննէս վասն նորա՝ ճշմարիտ էր. եւ բազումք հաւատացին ի նա անդ։ 42։

# ԽԱՉՎԵՐԱՑ

## ԿԱՄ

# ՏՕՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ

---

## ԿԻՐԱԿԷ

Ժամամուտ. Առաջի պատուական ամենայաղթ խաչի քոյ անկանիմք երկրպագելով, եւ խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան: Եւ այժմ վասն սրբոյ աստուածային քոյ նշանի՝ շնորհեա զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշխարհի:

Սղ. Դ. Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. եւ ետուր ուրախութիւն սրտից մերոց:

Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած. ի նեղութեան ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ եւ լուր աղօթից իմոց:

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Զ. 14:

Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է եւ ես աշխարհի: Զի ի Քրիստոս Յիսուս ոչ թլփատութիւն ինչ է եւ ոչ անթլփատութիւն, այլ նոր արարածս: Եւ որ միանգամ այսմ կանոնի միաբան լինին, խաղաղութիւն ի վերայ նոցա եւ ողորմութիւն եւ ի վերայ Իսրայէլին Աստուծոյ: Այսուհետեւ աշխատ ոք զիս մի՛ արասցէ. զի ես զչարչարանսն Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում, եղբարք. ամէն: 18:



Ալէլուիա, ալէլուիա. Տուր զօրութիւն ծառայի քոյ. կեցո զորդի աղախնոյ քոյ. եւ արա առ իս նշան բարութեան:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Գ. 13:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ՝ որ էջն յերկնից՝ Որդին մարդոյ, որ էն յերկինս: Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ: Զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս: Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ՝ մինչեւ զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս: Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշխարհ՝ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ: Որ հաւատայ ի նա, ոչ դատապարտեսցի. եւ որ ոչ հաւատայ ի նա՝ արդէն իսկ դատապարտեալ է. զի ոչ հաւատաց յանուն միածնի Որդւոյն Աստուծոյ: Եւ այս իսկ է դատաստան, զի լոյս եկն յաշխարհ եւ սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս. զի էին գործք իւրեանց չարութեան: Զի ամենայն որ զչար գործէ, ատեայ զլոյս. եւ ոչ գայ առ լոյսն, զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա: Իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա, թէ Աստուծով գործեցան: 21:

---

## ԵՐԿՈՒԾԱԲԱԹԻ

### Տօն Խաչի:

Ժամամուտ. Առաջի պատուական ամենայաղթ խաչի քոյ անկանիմք երկրպագելով, եւ խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան: Եւ այժմ վասն սրբոյ աստուածային քոյ նշանի՝ շնորհեա զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշխարհի:

Սղ. ԾԹ. Ետուր երկիւղածաց քոց նշան. զի ապրեսցին յերեսաց աղեղան:

Աստուած, մերժեցեր եւ աւերեցեր զմեզ. բարկացար, եւ գթասցիս ի մեզ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս: Գլ. Բ. 6:

Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս. զիմաստութիւն ոչ զաշխարհիս այսորիկ. եւ ոչ զիշխանաց աշխարհիս այսորիկ զխափանելեացս: Այլ խօսիմք զԱստուծոյ իմաստութիւնն ծածուկ խորհրդով, զոր յառաջ քան զյաւիտեանս սահմանեաց Աստուած ի փառս մեր. զոր ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ. զի եթէ էր ծանուցեալ, ոչ արդեօք զՏէրն փառաց ի խաչ հանէին: Այլ որպէս եւ գրեալ է. Զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց: Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն իւրով զի Հոգին զամենայն քննէ եւ զխորս Աստուծոյ: 10:

Ալէլուիա, ալէլուիա. Ետուր երկիւղածաց քոց նշան. զի ապրեսցին յերեսաց աղեղան:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Գ. 22:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յետ այսորիկ եկն (Յիսուս) եւ աշակերտքն նորա յերկիրն Հրէաստանի, եւ անդ շրջէր նոքօք հանդերձ եւ մկրտէր: Մկրտէր եւ Յովհաննէս ի Յայենովն մերձ առ Սաղիմ, զի ջուրք բազումք էին անդ, եւ գային եւ մկրտէին. զի չեւ եւս էր արկեալ զՅովհաննէս ի բանտ: Եւ եղեւ խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ Հրէի վասն սրբութեան: Եկին առ Յովհաննէս եւ ասեն ցնա. Ռաբբի, որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու, որում դուն վկայեցեր, ահաւանիկ նա մկրտէ եւ ամենեքին գան առ նա: Պատասխանի ետ Յովհաննէս եւ ասէ. Ոչ կարէ մարդ առնուլ յանձնէ եւ ոչ ինչ՝ եթէ ոչ իցէ տուեալ նմա յերկնից ի վերուստ: Դուք



ձեզէն վկայէք ինձ, զի ասացի ձեզ՝ թէ Չեմ ես Քրիստոսն, այլ թէ առաքեալ եմ առաջի նորա: Որ ունի հարսն, նա է փեսայ. իսկ բարեկամ փեսային՝ որ կայ եւ լսէ նմա, ուրախութեամբ ուրախ լինի վասն ձայնի փեսային. արդ այս ուրախութիւն որ իմս է, լցեալ է: Նմա պարտ է աճել, եւ ինձ մեղմանալ: Որ ի վերուստն գայ՝ ի վերոյ է քան զամենայն. որ յերկրէ աստի է, յերկրէ է եւ յերկրէ խօսի: Որ յերկնիցն գայ, զոր ինչ ետես եւ զոր լուաւ՝ վկայէ. եւ զվկայութիւն նորա ոչ ոք ընդունի: Որ ընդունի զվկայութիւն նորա՝ կնքեաց թէ Աստուած ճշմարիտ է: Զի զոր Աստուածն առաքեաց՝ զբանս Աստուծոյ խօսի. զի ոչ եթէ չափով տայ Աստուած զՀոգին: Հայր սիրէ զՈրդի, եւ զամենայն ինչ ետ ի ձեռս նորա: Որ հաւատայ յՈրդի, ընդունի զկեանսն յաւիտենականս. եւ որ ոչ հնազանդի Որդւոյ, ոչ տեսցէ զկեանս. այլ բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա: 36:

---

## ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### Տօն եկեղեցւոյ:

Ժամամուտ. Զխաղաղութիւն շնորհեա եկեղեցւոյ քում սրբոյ, զխաղաղութիւն եւ զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմէ. եւ հաստատեա ի մի հաւատ զկաթուղիկէ եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տէր եւ Աստուած. կեցո զմեզ:

Սղ. ՃԺԷ. Այս օր է զոր արար Տէր. եկայք ցնծասցուք եւ ուրախ եղիցուք ի սմա:

Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Գ. 1:

Ուստի, եղբարք սուրբք, երկնաւոր կոչմանն բաժանորդք, նայեցարուք ընդ առաքեալն եւ ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ՝ ընդ Յիսուս Քրիստոս. որ հաւատարիմ է արարչին իւրոյ, որպէս եւ Մովսէս յամենայն տան

նորա: Օ՛ի առաւել եւս փառաց քան զՄովսէս արժանի եղեւ, որչափ առաւել եւս պատիւ ունիցի քան զտունն՝ տանն առնելի: Օ՛ի ամենայն տուն կազմի, յումէ կազմի. իսկ որ զամենայն արար, Աստուած է: Մովսէս հաւատարիմ է յամենայն տան նորա իբրեւ զծառայ առ ի վկայութեանէ բանից ասացելոց: Եւ՛ Քրիստոս իբրեւ Որդի ի վերայ տան իւրոյ, որոյ տունն մեք իսկ եմք, միայն թէ զհամարձակութիւն եւ զպարծանս յուսոյն մինչեւ ի վախճան հաստատուն ունիցիմք: 6:

Ալէլուիա, ալէլուիա. Սիրեաց Տէր զՍիովն, եւ ընտրեաց բնակել ի նմա. ասէ. Այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից. ի սմա բնակեցայց, զի հաճեցայ ընդ սա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Բ. 12:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յետ այսորիկ էջ (Յիսուս) ի Կափառնաում, ինքն եւ մայր իւր եւ եղբարք իւր. եւ անդ լինէր ոչ բազում ինչ աւուրս: Եւ էր մերձ զատիկն Հրէից, եւ ել Յիսուս յԵրուսաղէմ: Եւ եգիտ ի տաճարին՝ զվաճառէին զարջառս եւ զոչխարս եւ զաղաւնիս, եւ զլումայափոխսն՝ որ նստէին: Եւ արար խարազան չուանեայ, եւ հան զամենեսին ի տաճարէն, զոչխարսն եւ զարջառս, եւ զդրամս հատավաճառացն ցրուեաց, եւ զսեղանսն կործանեաց: Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա. Առէք զայդ աստի, եւ մի առնէք զտուն Հօր իմոյ՝ տուն վաճառի: Եպա յիշեցին աշակերտքն նորա, թէ գրեալ է. Նախանձ տան քո կերիցէ զիս: Պատասխանի ետուն Հրեայքն եւ ասեն ցնա. Օ՛ի՞նչ նշան ցուցանես դու մեզ՝ զի զայդ առնես: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Վասկեցէք զտաճարդ զայդ, եւ զերիս աւուրս կանգնեցից զդա: Ասեն ցնա Հրեայքն. Օ՛քառասուն եւ վեց ամ շինեցաւ տաճարս այս, եւ դու զերիս աւուրս կանգնես զսա: Այլ նա ասէր վասն տաճարի մարմնոյ իւրոյ: Իսկ յորժամ յարեաւն ի մեռելոց, յիշեցին աշակերտքն նորա թէ այս է՝ զոր ասացն, եւ հաւատացին գրոյն եւ բանին՝ զոր ասաց Յիսուս: 22:



## ՁՈՐԵՔԾԱԲԱԹԻ

### Ցօն եկեղեցւոյ:

Յոհաննու. Օ՛խաղաղութիւն ընդհեա եկեղեցւոյ քումմ սրբոյ, զխաղաղութիւն եւ զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմէ. եւ հաստատեա ի մի հաւատ զկաթուղիկէ եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տէր եւ Աստուած. կեցո զմեզ:

Սղ. ՃԽԷ. Գովեա Երուսաղէմ զՏէր. եւ օրհնեա զԱստուած քո Սիովն:

Օ՛ի զօրացոյց զնիգս դրանց քոց. եւ օրհնեաց զորդիս քո ի քեզ:

Պողոսի առաքելոյն ՚Ի բրայեցւոց Թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Թ. 11:

Եւ՛ Քրիստոս եկեալ քահանայապետ հանդերձեալ բարեաց՝ մեծաւն եւ կատարելով եւ անձեռագործ խորանաւն, այսինքն է՝ որ ոչ յայսց արարածոց, եւ ոչ արեամբ նոխազաց եւ զուարակաց. այլ իւրով արեամբն եմուտ մի անգամ ի սրբութիւնսն յաւիտենականս գտեալ փրկութիւն: Օ՛ի եթէ արիւն ցլոյն եւ նոխազացն եւ մոխիր երինջոյն ցանեալ՝ զպղծեալսն սրբէր առ ի մարմնոյ սրբութենէ. ո՛րչափ եւս առաւել արիւնն Քրիստոսի, որ ի ձեռն Հոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն անարատ պատարագ Աստուծոյ, սրբեսցէ զխիղճ մտաց ձերոց ի մեռելոտի գործոց անտի՝ պաշտել զԱստուած կենդանի: Եւ վասն այնորիկ նորոյ ուխտիս է միջնորդ. զի յորժամ մահ լինիցի՝ ի փրկութիւն վասն առաջին ուխտին յանցանաց, զաւետիս առցեն հրաւիրեալքն ի ժառանգութիւն յաւիտենից: 15:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քոյ. եւ զտեղի յարկի փառաց քոց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԻԶ. 13:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ եկեալ (Յիսուս) ի կողմանս Փիլիպպեայ Կեսարիայն, հարցանէր ցաշակերտսն եւ ասէր. Օ՞ր ոք ասեն զինէն

մարդիկն՝ թէ իցէ Որդի մարդոյ: Եւ նոքա ասեն. Ոմն զՅովհաննէս Մկրտիչ, եւ այլք զԵղիա, եւ կէսք զԵրեմիա, կամ զմի ոք ի մարգարէիցն: Ասէ ցնոսա. Իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ: Պատասխանի ետ Նաա Սիմովն Պետրոս եւ ասէ. Դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ կենդանւոյ: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Երանի՛ ք քեզ Սիմովն որդի Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է: Եւ ես քեզ ասեմ, զի դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, եւ դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն: Եւ տայ քեզ զփականս արքայութեան երկնից. եւ զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս: 19:

---

## ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ցօն եկեղեցւոյ:

Յոհաննու. Զխաղաղութիւն ընորհեա եկեղեցւոյ քումմ սրբոյ, զխաղաղութիւն եւ զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմէ. եւ հաստատեա ի մի հաւատ զկաթուղիկէ եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տէր եւ Աստուած. կեցո զմեզ:

Սղ. 22. Հիմունք նորա ի լեառն սուրբ նորա. սիրէ Տէր զդրունս Սիովնի առաւել քան զամենայն յարկս Յակովբայ:

Փառաւորեալն խօսեցաւ վասն քո. ահաւադիկ քաղաք Աստուծոյ:

Պօղոսի առաքելոյն Հռոմայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. ԺԲ. 18:

Զի ոչ էք մատուցեալ առ լեառն շօշափելի՝ որ հրովն վառեալ էր եւ միգով եւ մառախղով եւ խաւարաւ եւ մրրիկով. ուր փողն հնչէր եւ բարբառ պատգամացն. ուստի՝ որք լուանն, հրաժարեցին, զի մի՛ կրկնեսցի առ նոսա բանն: Քանզի ոչ հանդարտէին հրամանին. Թէպէտ եւ գազան



մերձենայր ի լեառն՝ քարկոծ լինէր: Եւ այնպէս ահագին էր տեսիլն, զի եւ Մովսէս ասէր՝ Թէ Զահի հարեալ եմ եւ դողամ: Եայլ մատուցեալ էք ի Սիովն լեառն եւ ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ՝ Երուսաղէմ յերկինս, եւ ի բիւրաւոր բանակս հրեշտակաց, եւ յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս, եւ առ դատաւորն ամենեցուն Աստուած, եւ յոգիս արդարոց կատարելոց. եւ ի նորոց կտակարանաց միջնորդն Յիսուս, եւ ի հեղումն արեան նորա՝ որ առաւել խօսի քան զԱբելն: Զգոյշ լերուք, գուցէ հրաժարիցէք յայնմանէ՝ որ խօսեցաւն. զի եթէ նոքա ոչ կարացին զերծանել հրաժարեալք յայնմանէ՝ որ յերկրին հրամայեր, որչափ եւս առաւել մեք, եթէ յերկնաւորէն թիկունս դարձուցանիցեմք: Որոյ ձայնն զերկիր շարժեաց յայնժամ, եւ այժմ խոստացեալ է եւ ասէ. Միւսանգամ շարժեցից ոչ միայն զերկիր, այլ եւ զերկինս: Եայլ միւսանգամն յայտ առնէ զշարժելոցն իբրեւ զեղելոց փոփոխումն, զի հաստատուն կացցեն անշարժքն: 27:

Ալելուիա, ալելուիա. Որպէս սիրելի են յարկք քո, Տէր զօրութեանց. ցանկայ եւ փափաքէ անձն իմ ի գաւիթս քո:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԻԱ. 12:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ եմուտ (Յիսուս) ի տաճարն եւ եհան արտաքս զամենեսեան, որ վաճառէին եւ գնէին ի տաճարի անդ. եւ զսեղանս հատաւաճառացն կործանեաց եւ զաթոռս աղաւնեվաճառացն: Եւ ասէ ցնոսա. Գրեալ է. Տունն իմ տուն աղօթից կոչեսցի. եւ դուք արարէք զդա այրս աւազակաց: Եւ մատեան առ նա կոյրք եւ կաղք ի տաճարին, եւ բժշկեաց զնոսա: Իբրեւ տեսին քահանայապետքն եւ դպիրք զքանչելիսն զոր արար, եւ զմանկտին որ աղաղակէին ի տաճարին եւ ասէին. Օրհնութիւն որդւոյ Դաւթի, բարկացան, եւ ասեն ցնա. Լսե՞ս զինչ ասեն դոքա: Ասէ ցնոսա Յիսուս. Եւ՛ո. չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ եթէ ի բերանոյ տղայոց եւ ստնդիւեցաց կատարեցեր զօրհնութիւն: Եւ թողեալ զնոսա՝ ել արտաքս քաղաքին ի Բեթանիա, եւ անդ ագաւ: 17:

---

## ՈՒՐԲԱԹ

### Յօն Խաչի:

Ժամամուտ. Առաջի պատուական ամենայաղթն խաչի քոյ անկանիմք երկրպագելով, եւ խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան: Եւ այժմ վասն սրբոյ աստուածային քոյ նշանի՝ շնորհեա զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշխարհի:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Փիլիպպեցւոց թղթոյն է ընթերցուածս.
Գլ. Բ. 5:

Զայն խորհեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ, որ եւ ի Քրիստոս Յիսուս. որ ի կերպարանս Աստուծոյ է, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ. այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ, եւ կերպարանօք գտեալ իբրեւ զմարդ: Խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ եւ մահու խաչի: Վասն որոյ եւ Աստուած զնա առաւել բարձրացոյց, եւ շնորհեաց նմա անուն՝ որ ի վեր է քան զամենայն անուն: Զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց: Եւ ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Ետուր երկիւղածաց քոց նշան. զի ապրեսցին յերեսաց աղեղան:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.
Գլ. ԺԹ. 16:

Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Յայնժամ ետ զնա ի ձեռս նոցա, զի ի խաչ ելանիցէ: Եւ նոքա առեալ տանէին զնա. եւ բարձեալ էր ինքնին



զխաչափայտն, եւ ելանէր ի տեղին՝ որ անուանեալ էր Գագաթն, եւ կոչէր եբրայեցերէն Գողգոթա, ուր եւ ի խաչն իսկ հանին զնա. եւ ընդ նմա երկուս եւս այլս աստի եւ անտի, եւ ի միջի զՅիսուս: Գրեաց եւ տախտակ մի Պիղատոս, եւ եդ ի վերայ խաչին. եւ էր գրեալ. Յիսուս Նազովրեցի թագաւոր Հրէից: Զայն տախտակ ընթերցան բազումք ի Հրէից, զի մօտ էր ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն Յիսուս. եւ էր գրեալ եբրայեցերէն, դաղմատերէն եւ յունարէն: Ասեն ցՊիղատոս քահանայապետքն Հրէից. Մի գրեր՝ թագաւոր Հրէից, այլ թէ նա ասաց՝ թագաւոր եմ Հրէից: Պատասխանի ետ Պիղատոս. Զոր ինչ գրեցի՝ գրեցի: 22:

---

## ԾԱԲԱԹ

### Յօն Խաչի:

Ժամամուտ. Առաջի պատուական ամենայաղթ խաչի քոյ անկանիմք երկրպագելով, եւ խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան: Եւ այժմ վասն սրբոյ աստուածային քոյ նշանի՝ շնորհեա զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշխարհի:

Սղ. ՂԶ. Պատմեսցեն երկինք զարդարութիւն նորա. տեսին ամենայն ժողովուրդք զփառս նորա:

Տէր թագաւորեաց, ցնծասցէ երկիր. ուրախ եղիցին կղզիք բազումք:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Զ. 13:

Պատուիրեմ քեզ առաջի Աստուծոյ՝ որ կենդանի առնէ զամենայն, եւ Յիսուսի Քրիստոսի՝ որ վկայեաց առաջի Պոնտացւոյ Պիղատոսի զբարւոք դաւանութիւնն. պահել քեզ զպատուիրանն անբիծ՝ անարատ մինչեւ ի յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Զոր յիւր ժամանակս ցուցցէ երանելին եւ միայն հզօրն, թագաւոր թագաւորաց եւ Տէր տերանց. որ միայն ունի զանմահութիւն,

բնակեալ ի լոյս անմատոյց. զոր ոչ ոք ետես ի մարդկանէ եւ ոչ տեսանել կարող է. որում պատիւ եւ զօրութիւն յաւիտեանս. ամէն: 16:

Ալէլուիա, ալէլուիա. Որպէս փրկեցան սիրելիք քո. կեցո աջով քո եւ լուր մեզ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Է. 37:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ի վերջնում աւուր մեծի տօնին կայր (Յիսուս) աղաղակէր եւ ասէր. Եթէ ոք ծարաւի իցէ՝ եկեսցէ առ իս, եւ արբցէ: Որ հաւատայ յիս՝ որպէս եւ ասեն գիրք, գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան: Զայս ասէր վասն Հոգւոյն՝ զոր ընդունելոց էին՝ որ հաւատային ի նա, զի չեւ էր Հոգի, քանզի Յիսուս չեւ էր փառաւորեալ: Ոմանք ի ժողովրդենէն իբրեւ լսէին զբանս զայս՝ ասէին. Սա է ճշմարիտ մարգարէն: Այլքն ասէին. Սա է Քրիստոս. իսկ կէսքն ասէին. Միթէ ի Գալիլեէ՞ գալոց իցէ Քրիստոսն: Ոչ՞ գիրք ասեն, եթէ Ի զաւակէ Դաւթի եւ ի Բեթղեհէմ գեղջէ՝ ուր Դաւիթն էր, գալոց է Քրիստոսն: Եւ եղեւ հերձուած ի մէջ ժողովրդեանն վասն նորա: Եւ ոմանք ի նոցանէ կամեցան ունել զնա. այլ ոչ ոք մխեաց ի նա ձեռս: Եւ եկին անդրէն սպասաւորքն առ քահանայապետսն եւ փարիսեցիս, եւ ասեն սոքա ցնոսա. Ընդէ՞ր ոչ ածէք զնա այսր: Պատասխանի ետուն սպասաւորքն եւ ասեն. Ոչ երբեք այնպէս խօսեցաւ մարդ՝ որպէս այրն այն: Պատասխանի ետուն փարիսեցիքն եւ ասեն. Միթէ եւ դո՞ւք մոլորեցարուք: Միթէ ոք յիշխանացն հաւատա՞ց ի նա կամ ի փարիսեցւոց: Այլ այն խաժամուժ ամբոխ, որ ոչ գիտէ զօրէնս, եւ նզովեալք են: Ասէ Նիկոդեմոս ցնոսա, որ եկեալն էր առ նա գիշերի յառաջագոյն եւ մի էր ի նոցանէ. Միթէ օրէնքն մեր դատի՞ն զմարդ՝ եթէ ոչ լսեն ինչ նախ ի նմանէ, կամ գիտեն զի՞նչ գործէ: Պատասխանի ետուն նմա եւ ասեն. Միթէ եւ դու եւս ի Գալիլեէ՞ իցես. քննեա եւ տես, զի մարգարէ ի Գալիլեէ ոչ յառնէ: 52:

---



## ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ԽԱՉԻՆ

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. ԿԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ժ. 18:

Եղբարք, զի ոչ եթէ որ զանձն իւր ընծայեցուցանէ՝ նա է ընտրեալ, այլ զոր Տէրն ընծայեցուցանէ: Լաւ էր եթէ ներէիք փոքր մի եւ իմում անզգամութեանս. այլ եւ անսացէք իսկ: Նախանձեցուցանեմ զձեզ ի նախանձն Աստուծոյ, զի խօսեցայց զձեզ առն միում, իբրեւ զկոյս մի սուրբ յանդիման կացուցանել Քրիստոսի: Բայց երկնչիմ գուցէ որպէս օձն խաբեաց զԵւա խորամանկութեամբ իւրով, ապականեսցին միտք ձեր ի միամտութենէն՝ որ ի Քրիստոս: Զի եթէ որ գալոցն իցէ՝ այլ Քրիստոս քարոզիցէ, զոր մեքն ոչ քարոզեցաք, կամ ոգի օտար առնուցուք՝ զոր ոչ առէք կամ աւետարան օտար՝ զոր ոչ ընկալարուք, բարւոք անսայիք նոցա: Բայց ես այսպէս համարիմ, թէ ոչ ինչ իւիք պակաս իցեմ քան զլաւ առաքեալսն: Թէպէտ եւ տգէտ եւս իցեմ բանիւ, այլ ոչ եթէ գիտութեամբ. սակայն յամենայնի յայտնեցաք զանձինս ամենեւին առ ձեզ: Եւ եթէ վնա՞ս ինչ գործեցի՝ զի զանձն խոնարհեցուցի, եւ այն՝ զի դուք բարձրասջիք. զի ձրի զաւետարանն Աստուծոյ աւետարանեցի ձեզ: Զայլ եկեղեցիս կողոպտեցի՝ առեալ թոշակ ի ձեր սպասաւորութիւն: Եւ յորժամ եկի առ ձեզ, թէպէտ եւ պակասեաց ինչ, ոչ զոք ի ձէնջ ձանձրացուցի, զի զպակասութիւնն իմ լցին եղբարքն եկեալք ի Մակեդոնացւոց. եւ

յամենայնի առանց ծանրանալոյ ձեզ զանձն իմ պահեցի եւ պահեցից: Վասն զի գոյ յիս ճշմարտութիւնն Քրիստոսի: ԺԱ: 10:

Ընդունիա, ալելուիա. Յարո՛ւցեան է յայնմանէ:

Սրբոյ Ա֊ետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ· ժ· 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ անտի յարուցեալ գայ ի սահմանս Հրէաստանի յայնկոյս Յորդանանու. եւ երթայր դարձեալ խռնեալ ժողովուրդն առ նա, եւ որպէս սովոր էր՝ միւսանգամ ուսուցանէր զնոսա: Իսկ փարիսեցիքն մատուցեալ փորձելով հարցանէին զնա եւ ասէին. Եթէ արժա՞ն իցէ առն զկին իւր արձակել: Նա պատասխանի եւ նոցա եւ ասէ. Ո՛րինչ պատուիրեաց ձեզ Մովսէս: Եւ նոքա ասեն. Մովսէս հրաման եւ գիր մեհնելոյ գրել, եւ արձակել: Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնոսա. Վասն խստասրտութեան ձերոյ գրեաց ձեզ զպատուիրանն զայն: Այլ ի սկզբանէ արարածոց՝ արու եւ էգ արար զնոսա Աստուած, եւ ասէ. Վասն այսորիկ թողեսէ այր զհայր իւր եւ զմայր, եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ: Եւ եղիցին երկուքն ի մարմին մի. եւ այնուհետեւ ոչ են երկու, այլ մարմին մի: Որդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ: Եւ ի տան դարձեալ աշակերտքն զնոյն հարցին ցնա: Եւ ասէ ցնոսա. Եթէ այր արձակեսցէ զկին իւր եւ արասցէ այլ, շնայ. եւ կին եթէ ելցէ յառնէ իւրմէ եւ եղիցի առն այլում, շնայ: 12:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

**Սրբոյն Մամասայ եւ փիլիկտիմոնի եւ Սիմէոնի Սիւնակեցին:**

Ժամահարք. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:



Ալ· ՃԻԳ· Օգնութիւն է մեզ յանուանէ Տեառն. որ արար զերկինս եւ զերկիր:

Եթէ ոչ Տէր էր առ մեզ. ասասցէ Իսրայէլ. եթէ ոչ Տէր էր առ մեզ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ· Ե· 1:

Ա՛ղբարք, քանզի գիտեմք զի եթէ երկրաւոր տաճար շինուածոյս մերոյ քակտեսցի, շինած յԱստուծոյ ունիմք՝ տաճար առանց ձեռագործի, յաւիտենական յերկինս: Եւ ընդ այս տաղտկամբ. քանզի զբնակութիւն երկնից փափագեմք զգենուլ. միայն թէ յորժամ զգենուցուքն՝ ոչ մերկ գտանիցիմք: Վասն զի որ եմք ընդ յարկաւս ընդ այսուիկ՝ տաղտկամբ ծանրացեալք. զի ոչ կամիմք մերկանալ, այլ զգեն ի վերայ այլոր զգենուլ, զի ընկղմեսցի մահկանացուս ի կենաց անտի: Այլ որ յաջողէն մեզ ի սոյն՝ Աստուած է, որ եւ մեզ զաւհաւաչեայ հոգւոյն: 5:

Ընդունիա, ալելուիա. Աւրհնեսցի է յայնմանէ:

Սրբոյ Ա֊ետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ· ԻԷ· 12:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Բայց յառաջ քան զայս ամենայն՝ մխեսցեն զձեռս իւրեանց ի ձեզ եւ հալածեսցեն. մատնեսցեն ի ժողովուրդս եւ ի բանտս, եւ տանիցեն առաջի դատաւորաց եւ թագաւորաց վասն անուան իմոյ. եւ լինիցի ձեզ այն ի վկայութիւն: Արդ՝ դիք ի սիրտս ձեր՝ մի յառաջագոյն կրթել ասելոյ պատասխանի: Ես եւ տայց ձեզ բերան եւ իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր: Մատնեսջիք եւ ի ծնողաց եւ յեղբարց եւ յազգականաց եւ ի բարեկամաց, եւ սպանանիցեն ի ձէնջ: Եւ եղիջիք ատեցեալ յամենեցունց վասն անուան իմոյ. եւ մազ մի ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ: Ի համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր: 19:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### Սրբոց Կուսանացն Փեբրոնեայ եւ Մարիանեայ:

Ժամամուտ. Հարսնացեալք Քրիստոսի երկնաւոր փեսային, դստերք վերին Սիոնի. խնդրեցէք ի Քրիստոսէ զհաշտութիւն եւ զմեծ զողորմութիւն:

Սղ. ԽԴ. Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա. եւ զընկերս նորա տարցին նմա:

Բղխեաց սիրտ իմ բան բարի. եւ ասեմ զգործս իմ թագաւորի:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Զ. 16:

Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք որպէս եւ ասաց Աստուած, թէ Բնակեցայց ի նոսա, եւ գնացից ի նոսա, եւ եղէց նոցա Աստուած, եւ նոքա եղիցին իմ ժողովուրդ: Վասն որոյ ելէք ի միջոյ նոցա եւ մեկնեցարուք, ասէ Տէր, եւ ի պիղծս մի՛ մերձենայք, եւ ես ընկալայց զձեզ, եւ ես եղէց ձեզ ի Հայր, եւ դուք եղիցիք ինձ յուստերս եւ ի դստերս, ասէ Տէր ամենակալ: Իսկ որովհետեւ զայս աւետիս ունիմք, սի՛րելիք, սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղծութենէ մարմնոյ եւ հոգւոյ. կատարեսցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ: Է. 1:

Ալէլուիա, ալէլուիա. Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ. ի հանդերձս ոսկէհուռն զարդարեալ եւ պաճուճեալ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Զ. 20:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ամբարձ զաչս իւր յաշակերտսն իւր եւ ասէ. Երանի՛ աղքատացդ հոգւով, զի ձեր է արքայութիւն Աստուծոյ: Երանի՛ որ քաղցեալ են այժմ, զի յագեսցին: Երանի՛ որ լան այժմ, զի ծիծաղեսցին: Երանի՛ է ձեզ՝ յորժամ ատիցեն զձեզ մարդիկ, եւ յորժամ որոշիցեն զձեզ եւ նախատիցեն,



եւ հանիցեն անուն չար զձէնջ վասն Որդւոյ մարդոյ: Ուրախ լիջիք յաւուր յայնմիկ եւ ցնծասջիք, զի ահա վարձք ձեր բազում են յերկինս. ըստ դմին օրինակի առնէին մարգարէիցն հարք իւրեանց: 23:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՁԵ. Կեցո զծառայս քո, Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԱ. 10:

Ե՛ղբարք, զի պարծանքս այս ոչ արգելցին յինէն ի կողմանս Աքայեցւոց: Ընդէ՞ր. իբրու թէ ո՞չ սիրիցեմ զձեզ. զայն Աստուած գիտէ: Զոր առնեմն, եւ արարից, զի հատից զպատճառս այնոցիկ՝ որ զպատճառսն կամիցին. զի որով պարծիցինն, եւ նոքա իբրեւ զմեզ գտանիցին: Զի այնպիսիքն սուտ առաքեալք, մշակք նենգաւորք, կերպարանին ի կերպարանս առաքելոց Քրիստոսի: Եւ չեն ինչ զարմանք. քանզի եւ ինքն սատանայ կերպարանի ի հրեշտակ լուսոյ: Եւ ոչ ինչ է մեծ թէ եւ պաշտօնեայք նորա կերպարանին իբրեւ պաշտօնեայք արդարութեան, որոց կատարածն եղիցի ըստ գործոց իւրեանց: Դարձեալ ասեմ, մի՛ ոք համարեսցի զիս անզգամ. ապա թէ ոչ՝ գոնէ իբրեւ զանզգամ ընկալարուք զիս, զի եւ ես փոքր մի ինչ պարծեցայց: Եւ զոր խօսիմ՝ ոչ եթէ ըստ Տեառն ինչ խօսիմ, այլ իբրեւ անզգամութեամբ ըստ կարգի այդց պարծանաց: Եւ քանզի բազումք պարծին ըստ մարմնոյ, եւ ես պարծեցայց: Մտադիւր իմն անսայիք անմտացն ձերովդ իմաստութեամբ: Քանզի անսայք եթէ ոք խաբէ զձեզ,

եթէ ոք ծառայեցուցանէ, եթէ ոք ուտէ զձեր, եթէ ոք առնու ինչ, եթէ ոք հպարտանայ, եթէ ոք զձեզ յանդիման հարկանէ: Ըստ անարգանացդ ասեմ, իբրեւ թէ մեք տկարացա՞ք արդեօք. յոր ինչ ոք համարձակիցի. անզգամութեամբ ասեմ, համարձակիմ եւ ես: Եբրայեցի՞ք իցեն, եւ ես. Իսրայէլացի՞ք իցեն, եւ ես. զաւակ Աբրահամո՞ւ իցեն, եւ ես. պաշտօնեայք Քրիստոսի՞ իցեն, յանդգնագոյնս ասացից՝ թէ առաւել եւս ես: Եթէ վաստակովք՝ առաւել, եթէ գանիւք՝ եւս առաւել, եթէ բանտիւ՝ աւելի քան զնոսա, եթէ մահուամբք՝ բազում անգամ: Ի Հրէից հնգիցս՝ քառասուն միով պակաս արբի. երիցս ձաղկեցայ, մի անգամ քարկոծ եղէ, երիցս նաւակոծ եղէ, զտիւ եւ զգիշեր յանդունդս տառապեցայ: Ի ճանապարհս բազում անգամ. վիշտս ի գետոց, վիշտս յաւազակաց, վիշտս յազգէ, վիշտս ի հեթանոսաց, վիշտս ի քաղաքի, վիշտս յանապատի, վիշտս ի ծովու, վիշտս ի սուտ եղբարց: Ի ջանս եւ ի վաստակս, ի տքնութիւնս բազում անգամ, ի քաղց եւ ի ծարաւ, ի պահս բազում անգամ, ի ցուրտ եւ ի մերկութեան: Թող զայլ նեղութիւնսն, եւ զի հանապազ խուժանն ի վերայ իմ կուտէր եւ հոգք ամենայն եկեղեցեացն: Ո՞ հիւանդանայ, եւ ոչ ես հիւանդանամ. ո՞ գայթագղի, եւ ոչ ես տապանամ: 29:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Ժ. 17:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ ընդ ելանելն նորա անտի ի ճանապարհ, ահաւասիկ ոմն մեծատուն ընթացեալ ի ծունր իջանէր, հարցանէր ցնա եւ ասէր. Վարդապետ բարի, զի՞նչ արարից՝ զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից: Եւ Յիսուս ասէ ցնա. Զի՞ ասես զիս բարի. չիք ոք բարի՝ բայց մի Աստուած: Զպատուիրանս գիտես. մի՛ շնար, մի՛ սպանաներ, մի՛ գողանար, մի՛ սուտ վկայեր. պատուեա զհայր քո եւ զմայր: Նա պապատասխանի ետ եւ ասէ ցնա. Վարդապետ, զայդ ամենայն արարի ի մանկութենէ իմմէ. արդ՝ զի՞նչ եւս պակաս իցեմ:



Եւ Յիսուս հայեցեալ ի նա՝ սիրեաց զնա եւ ասէ ցնա. Մի ինչ պակաս է ի քէն. եթէ կամիս կատարեալ լինել, երթ՝ զոր ինչ ունիս վաճառեա եւ տուր աղքատաց, եւ ունիցիս գանձս յերկինս, եւ առ զխաչն եւ եկ զկնի իմ: Եւ նա խոժոռեալ ընդ բանն՝ գնաց տրտում, զի ունէր ինչս բազումս: Եւ հայեցեալ յայսկոյս յայնկոյս Յիսուս, ասէ ցաշակերտսն. Զիա՛րդ դժուարին է՝ որ զինչսդ ունին, մտանել յարքայութիւն Աստուծոյ: Եւ աշակերտքն զարմացեալ էին ի վերայ բանիցն նորա. իսկ Յիսուս դարձեալ պատասխանի ետ նոցա եւ ասէ. Ո՛րդեակք, ո՛րչափ դժուարին է յուսացելոց յինչս՝ մտանել յարքայութիւն Աստուծոյ: Դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել: Եւ նոքա առաւել եւս զարմանային եւ ասէին ընդ միմեանս. Իսկ ո՞ կարասցէ ապրել: Հայեցեալ ընդ նոսա Յիսուս՝ ասէ. Առ ի մարդկանէ այդ անհնարին է, այլ ոչ առ ի յԱստուծոյ: 27:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Սրբոց հայրապետացն Անթիմոսի եւ Երանոսի:

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցէք զաթոռ ի յերկրի. առաքելական առէք զպատիւ յերկնուստ, ծառայք Քրիստոսի ո՛վ երանելիք ի հարս սուրբ հայրապետք: Քանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 1:

Զերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրեւ երիցակիցս եւ վկայս չարչարանացն Քրիստոսի, որ եւ հանդերձեալ

փառացն յայտնելոց հաղորդ. արածեցէք որ ի ձեզ հօտդ է Աստուծոյ. վերակացու լինել մի՛ իբրեւ ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի՛ զօշաքաղութեամբ, այլ յօժաթեամբ. մի՛ իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին: Զի յերեւել հօտապետին՝ ընդունիջիք զանթառամ փառաց պսակն: Սոյնպէս եւ երիտասարդք, հնազանդ լերուք ծերոց: Ամենեքին ընդ միմեանս զխոնարհութիւն ունիցիք. զի Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց: Խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ, զի զձեզ բարձրացուսցէ ի ժամանակի. Զամենայն հոգս ձեր ընկեցէք ի նա, զի նա է որ հոգայ վասն ձեր: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ժ. 11:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց: Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն եւ փախչի, եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ. քանզի վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն: Ես եմ հովիւն քաջ, եւ ճանաչեմ զիմսն եւ ճանաչիմ յիմոցն: Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայր. եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց: Նա եւ այլ եւս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ. եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր, եւ ձայնի իմում լուիցեն, եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ: 16:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. Ղէ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:



Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԱ. 30:

Ե՛ղբարք, եթէ պարծել ինչ պարտ իցէ, զտկարութեանն պարծեցայց: Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գիտէ որ է օրհնեալ յաւիտեանս, զի ոչ ստեմ: Ի Դամասկոս ազգապետն Արետայ արքայի պահէր զքաղաքն Դամասկացւոց՝ ունել զիս. եւ ընդ պատուհանն վանդակաւ կախեցայ ընդ պարիսպն, եւ փախեայ ի ձեռաց նորա: Արդ պարծել ինչ պարտ իցէ. այլ օգնէ ինչ ոչ: Բայց եկից ի տեսիլս եւ ի յայտնութիւնս Տեառն: Գիտեմ այր մի ի Քրիստոս յառաջ քան զչորեքտասան ամ, եթէ մարմնով՝ ոչ գիտեմ, եւ եթէ առանց մարմնոյ՝ ոչ գիտեմ, Աստուած գիտէ. յափշտակեալ զայնպիսին մինչեւ յերրորդ երկնից: Եւ գիտեմ զայնպիսի այր, եթէ մարմնով եւ եթէ առանց մարմնոյ ոչ գիտեմ, Աստուած գիտէ. զի յափշտակեցաւ ի դրախտն, եւ լուաւ բանս անճառս, զոր ոչ է պարտ մարդոյ խօսել: Վասն այնպիսւոյն պարծեցայց. այլ վասն անձին ինչ ոչ պարծեցայց, բայց եթէ ի տկարութիւնս: Զի եթէ եւ կամիցիմ պարծել՝ ոչ եղէց անզգամ, քանզի զարդարն ասեմ, այլ անխայեմ, գուցէ ոք համարիցի ինչ յիս աւելի՝ քան զոր տեսանիցէ յիս կամ լուիցէ յինէն: Եւ զի մի՛ առաւելութեամբ յայտնութեանցն հպարտացայց, տուաւ ինձ խայթ մարմնոյ հրեշտակ սատան՝ կռփել զիս. զի մի՛ հպարտացայց: Եւ վասն այնորիկ երիցս անգամ աղաչեցի զՏէր՝ զի ի բաց արասցէ յինէն. եւ ասէ ցիս. Շատ են քեզ շնորհք իմ, զի զօրութիւն իմ ի տկարութեան կատարի. եւ արդ լաւ եւս լիցի ինձ պարծել ի տկարութիւնս, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի: ԺԲ. 9:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Ժ. 28:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Սկսաւ ասել ցնա Պետրոս. Ահաւասիկ մեք թողաք զամենայն եւ եկաք զկնի քո: Պատասխանի ետ Յիսուս եւ

ասէ. Ամէն ասեմ ձեզ, ոչ ոք է որ եթող զտուն կամ զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ զմայր կամ զորդիս կամ զագարակս վասն իմ կամ վասն աւետարանին, եթէ ոչ առնուցու հարիւրապատիկ այժմ յայսմ ժամանակի տունս եւ եղբարս եւ քորս եւ մայր եւ որդիս եւ ագարակս՝ հալածանօք հանդերձ, եւ յաշխարհին որ գալոց է՝ զկեանսն յաւիտենականս: Զի բազումք եղիցին առաջինք յետինք, եւ յետինք առաջինք: Եւ էին ի ճանապարհի մինչ դեռ ելանէին յԵրուսաղէմ. եւ երթայր Յիսուս առաջի քան զնոսա, եւ զարմացեալ էին որ զհետն երթային եւ երկնչէին: Եւ առեալ միւսանգամ զերկոտասանսն առանձինն, սկսաւ ասել նոցա զինչ անցք անցանելոց իցեն ընդ նա, թէ Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ. եւ Որդի մարդոյ մատնեսցի քահանայապետիցն եւ դպրաց. եւ դատեսցեն զնա ի մահ, եւ մատնեսցեն զնա հեթանոսաց. եւ կատակեսցեն զնովաւ, եւ հարկանիցեն զնա, եւ թքանիցեն ի նա, եւ սպանցեն. եւ յերիր աւուր յարիցէ: 34:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### Սրբոյն Գէորգայ զօրավարին եւ Ադոկտոսի եւ Ռոմանոսի երգեցողին:

Ժամամուտ. Զօրական եւ վկայ ճշմարիտ՝ քաջ նահատակդ Քրիստոսի սուրբդ Թէոդորոս, որ փոխանակեցեր զմարմինդ ընդ հոգւոյդ քում փրկանս, եւ ոչ ածեր զմտաւ զսպառնալիսն Մաքսիմիանոսի թագաւորին. այլ վերին ազդեցութեամբն՝ դիտելով զայրեցումն հոգւոց նոցա, վասն այնորիկ լուցեր զտաճար կռոց նոցա: Արդ ի յաղթող պատերազմի տօնողացս զօր նահատակութեան քոյ՝ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ.ճԺԷ. Տէր է իմ օգնական. եւ ես տեսից ի թշնամիս իմ:

Խոստովան եղերուք Տեառն զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 3:

Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հայր գթութեանց եւ Աստուած ամենայն մխի-



թարութեան. որ մխիթարէն զմեզ յամենայն նեղութիւնս մեր, առ ի կարող լինելոյ մեզ մխիթարել զայնոսիկ՝ որ յամենայն նեղութիւնս իցեն, մխիթարութեամբն՝ որով մեք մխիթարիմք յԱստուծոյ: Զի որպէս առաւելան չարչարանքն Քրիստոսի ի մեզ, նոյնպէս եւ ի ձեռն Քրիստոսի առաւել լիցի եւ մխիթարութիւնն մեր: Զի եթէ նեղիմք՝ վասն ձերոյ մխիթարութեան եւ փրկութեան. եւ եթէ մխիթարիմք՝ վասն ձերոյ մխիթարութեան եւ փրկութեան, որ յաջողեալն է համբերութեամբ նոցին չարչարանաց, զոր եւ մեքն չարչարիմք: Եւ յոյսն մեր հաստատուն է վասն ձեր, քանզի գիտեմք թէ որպէս կցորդ եմք չարչարանացն, նոյնպէս եւ մխիթարութեանն: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԲ. 2:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զի ոչ ինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի: Վասն զի զոր ինչ ասիցէք ի խաւարի, լսելի լիցի ի լոյս. եւ զոր յունկանէն խօսեցարուք ի շտեմարանս, քարոզեսցի ի վերայ տանեաց: Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց. մի՛ զարհուրիցիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ յետ այնորիկ աւելի ինչ ոչ ունիցին առնել: Այլ ցուցից ձեզ յումէ երկնչիցիք. երկնչիջիք յայնմանէ՝ որ յետ սպանանելոյ ունի իշխանութիւն արկանել ի գեհեն. այո՛ ասեմ ձեզ, յայնմանէ երկնչիջիք: Ո՛չ ապաքէն հինգ ձագ երկուց դանգաց վաճառի. եւ մի ի նոցանէ ոչ է մոռացեալ առաջի Աստուծոյ: Այլ ձեր եւ ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է. մի՛ երկնչիք՝ զի քան զբազում ձագս լաւ էք դուք: Ասեմ ձեզ. զի ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, եւ Որդի մարդոյ խոստովանեսցի զնմանէ առաջի հրեշտակաց Աստուծոյ: Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ: 9:

---

## ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՋԿՆԻ ԽԱՉԻՆ

### ՏՕՆ ՎԱՐԴԱՎԱՅ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ

Ջոամաոթ. Ընդաջի պատուական ամենայաղթ խաչն քոյ անկանիմք երկրպագելով, եւ խնդրեմք զԹողութիւն յանցանաց մերոց· քանզի սուաւ բարձեր ղգատապարտութիւն ազգի մարդկան: Եւ այժմ վասն սրբոյ աստուածային քոյ նշանի՝ ընդրհեա զերկնային զնաղաղութիւնդ ամենայն աշխարհի:

Աղ· Դ· Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց· եւ ետուր ուրախութիւն սրտից մերոց:

Ի կարդալ իմում լուար ինձ Ստուածդ, ինեղութեան ինձ անդորր արարեր· ողորմեա ինձ եւ լուր աղօթից իմոց:

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց Թղթոյն է ընթերցուածս· Գլ· Զ· 14:

Այլ ինձ քաւ լինի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ եղեալ է եւ ես աշխարհի: Օվ ի Քրիստոս Յիսուս ոչ թլփատութիւն ինչ է եւ ոչ անթլփատութիւն, այլ նոր արարած: Եւ որ միանգամ այսմ կանոնի միաբան լինին, խաղաղութիւն ի վերայ նոցա եւ ողորմութիւն եւ ի վերայ Իսրայէլին Ստուածոյ: Այսուհետեւ աշխատ ոք զիս մի՛ արասցէ· զի ես զչարչարանս Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում, եղբարք· ամէն: 18:

Ալէլուիա, ալէլուիա· Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց· եւ ետուր ուրախութիւն սրտից մերոց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի·

Գլ· Իդ· 30:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ·

Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս· եւ յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի, եւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ եւ



փառօք բազմօք: Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, եւ ժողովեսցեն զընտրեալս նորա ի չորից հողմոց, ի ծագաց երկնից մինչեւ ի ծագս նոցա: Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն· զի յորժամ նորա ոստքն կակղասցին եւ տերեւն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն: Նոյնպէս եւ դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գիտասջիք թէ մերձ է ի դուրս: Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եղիցի: Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի՛ անցցեն: 35:

---

## ԵՐՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

**Սրբոյն Դաւթի Դվնեցւոյն, եւ սրբոց վկայիցն Ղամբէոսի եւ Ղամբէուիւոյն:**

Ջոամաոթ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք· բարեխօսեսցեն Թեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Ստուածդ, որպէս մարդասէր:

Աղ· Ե· Տէր, որպէս զինու՝ հաճութեամբ քով պսակեցեր զմեզ:

Բանից իմոց ունկն դիր Տէր· եւ ի միտ առ զաղաղակ իմ:

Պօղոսի առաքելոյն Հրէայեցւոց Թղթոյն է ընթերցուածս· Գլ· ԺՐ· 1:

Այսուհետեւ եւ մեք՝ որ այսչափ շուրջ զմեօք մածեալ ունիմք զբազմութիւն վկայից, զհպարտութիւն զամենայն ի բաց ընկեսցուք եւ զմեզս կարեւորս· համբերութեամբ ընթացցուք ի պատերազմն՝ որ առաջի կայ մեզ: Հայեցցուք ի Թասցուք ի պատերազմն՝ որ առաջի կայ մեզ: Հայեցցուք ի զօրագլուխն հաւատոյ եւ ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ուրախութեանն որ նմա առաջի կայր, յանձն առ խաչն, արհամարհեաց զամօթն, նստաւ ընդ աջմէ աթոռոյն Ստուածոյ: Ընդ ածէք զմտաւ, որ զայսպիսի համբերութիւն ի մեղաւորաց հակառակութենէ անտի կրեաց· զի մի՛ աշխատ լինիցիք անձամբք ձերովք եւ լքանիցիք: Օվ չէ եւս արեամբ

*չափ պատերազմեալք՝ հակառակ կացէք մեղացն, եւ մոռացարուք զմխիթարութիւնն, որ ընդ ձեզ իբրեւ ընդ որդեակս խօսի: Որդեակ իմ, մի՛ լքանիր ի խրատու Տեառն, եւ մի՛ վհատիցիս՝ յանդիմանեալ ի նմանէ: Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի՝ զոր ընդունի: Ի խրատու համբերութեան կայք, իբրեւ յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած: 7:*

Ալէլուիա, ալէլուիա. Մարգարէութիւն է յայնմէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԳ. 22:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

*Եւ շրջէր ընդ քաղաքս եւ ընդ գեօղս, ուսուցանէր. եւ ճանապարհ արարեալ Երուսաղէմ, ասէ ոմն ցնա. Տէր, եթէ սակաւք իցեն, որ ապրելոց իցեն: Եւ նա ասէ ցնոսա. Ջանացարուք մտանել ընդ դուռն նեղ. ասեմ ձեզ՝ զի բազումք խնդրեսցեն մտանել եւ ոչ կարասցեն: Յորմէ հետէ մտցէ տանուտէրն եւ փակեսցէ զդուռնն, եւ սկսանիջիք կալ արտաքոյ եւ բախել զդուռնն, եւ ասել. Տէր Տէր, բաց մեզ. եւ պատասխանի տուեալ ասիցէ ձեզ. Ոչ գիտեմ զձեզ ուստի էք: Յայնժամ սկսանիջիք ասել. Կերաք առաջի քո եւ արբաք, եւ ի հրապարակս մեր ուսուցեր: Եւ ասիցէ. Ասեմ ձեզ, ոչ գիտեմ զձեզ ուստի էք. ի բաց կացէք յինէն ամենայն մշակքդ անիրաւութեան: Ընդ եղիցի լալ եւ կրճել ատամանց, յորժամ տեսանիցէք զԱբրահամ եւ զԻսահակ եւ զՅակոբ եւ զամենայն մարգարէս յարքայութեան Աստուծոյ, եւ զձեզ հանեալ արտաքս: Եւ եկեսցեն յարեւելից եւ յարեւմտից եւ ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ, եւ բազմեսցին յարքայութեան Աստուծոյ: Եւ ահա իցեն յետինք՝ որ եղիցին առաջինք, եւ իցեն առաջինք՝ որ լինիցին յետինք: 30:*



## ԵՐՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

**Սրբոյն Եւստաքէոսի եւ կնոջ նորա Թէոպիստեայ եւ երկուց որդուցն, եւ սրբոց կուսանացն Երմոնեայ եւ Նեքտաւիներայ:**

*Ժամաւոր. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոյ մարտիրոսացդ զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:*

Աղ. Ա. Ընդ ձիս ի գերեզ տառապանաց. ի կաւոյ եւ ի տղմոյ:

*Համբերելով համբերի Տեառն, եւ նայեցաւ առ իս. եւ լուաւ աղօթից իմոց:*

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ· 10:

*Դու ընդ ինձ եկիր վարդապետութեան իմոյ, առաջնորդութեան, յոժարութեան, հաւատոյ, երկայնմտութեան, սիրոյ, համբերութեան, հալածանաց, չարչարանաց. որպիսիք եղեն ինձ Անտիոք եւ Իկոնիոն եւ ի Լիւստրոս, որպիսի հալածանաց համբերի, եւ յամենայնէ փրկեաց զիս Տէր: Եւ ամենեքեան՝ որ կամիցին աստուածպաշտութեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս, ի հալածանս կացցեն: Եւ մարդք չարք եւ կախարդք յառաջ եկեսցեն ի չար անդր, մոլորեալք եւ մոլորեցուցանիցեն: Եւ դու հաստատուն կաց՝ յոր ուսարդ եւ հաւատարիմ եղեր: Գիտես ուստի ուսար. զի ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որ կարող են իմաստուն առնել զքեզ ի փրկութիւն ի ձեռն հաւատոցն՝ որ ի Քրիստոս Յիսուս: 15:*

Ալէլուիա, ալէլուիա. Մարգարէութիւն է յայնմէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ե. 1:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

*Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն. եւ իբրեւ նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա: Եւ բացեալ*

զբերան իւր՝ ուսուցանէր զնոսա եւ ասէր. Երանի՛ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին: Երանի՛ հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր: Երանի՛ որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին: Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն: Երանի՛ այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն: Երանի՛ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին: Երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի՛ է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ եւ հալածեսցեն եւ ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ: Ցնծացէք եւ ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին: 12:

---

## ԵՐՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. 26. Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԲ. 10:

Վասն որոյ հաճեալ եմ ընդ տկարութիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշտս, ընդ հալածանս եւ ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի. զի յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ: Եղէ անզգամ, քանզի դուք ստիպեցէք. զի ինձ պարտ էր ի ձէնջ վկայութիւն առնուլ՝ թէ ոչ ինչ պակաս գտայ քան զլաւ առաքեալսն: Զի թէպէտ եւ ես ոչ ինչ եմ, սակայն նշանք առաքելոյ գարծեցան ի ձեզ ամենայն համբերութեամբ, նշանօք եւ արուեստիւք եւ զօրութեամբք: Եւ



արդ զի՞նչ իցէ, որո՞վ պակաս գտայք քան զայլ եկեղեցիս. բայց եթէ այնու՝ զի ես զձեզ ոչ ձանձրացուցի. շնորհեցէք ինձ զվնասդ զայդ: Ահաւասիկ այս երիցս անգամ պատրաստեալ եմ գալ առ ձեզ, եւ ձեզ բեռն ինչ ոչ եղէց. զի ոչ խնդրեմ ինչ զձեր, այլ զձեզ. քանզի ոչ պարտին որդիք հարց գանձել, այլ հարք՝ որդւոց: Բայց ես մտադիւրութեամբ ծախեցից եւ ծախեցայց վասն անձանց ձերոց. զի թէպէտ եւ յառաւել սիրոյն զձեզ սակաւ սիրիցեմ, այլ գրեթէ ես ոչ ինչ ծանրացայ ձեզ. այլ քանզի խորագէտ էի, խելօք կալայ զձեզ: Միթէ որովք առաքեցին առ ձեզ՝ նոքօք ինչ ագահեցի՞ ի ձէնջ: Աղաչեցի զՏիտոս եւ առաքեցի ընդ նմա զեղբայրն, միթէ ագահեա՞ց ինչ զձեր Տիտոս. ո՞չ նովին ոգւով գնացաք, ո՞չ նովին շաւղօք շրջեցաք: 18:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Ժ. 35:

Առ Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Եւ երթային առ նովաւ Յակովբոս եւ Յովհաննէս՝ որդիքն Զեբեդեայ, եւ ասեն ցնա. Վարդապետ, կամիմք զի զոր ինչ խնդրեսցուք ի քէն՝ արասցես մեզ: Եւ նա ասէ ցնոսա. Զի՞նչ կամիք յինէն՝ զի արարից ձեզ: Եւ նոքա ասեն ցնա. Տուր մեզ՝ զի նստցուք մի յաջմէ քումէ եւ մի յահեկէ՝ ի փառսն քում: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Ոչ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոց եմ, կամ զմկրտութիւնն մկրտել՝ զոր ես մկրտելոցն եմ: Եւ նոքա ասեն ցնա. Կարեմք: Եւ Յիսուս ասէ ցնոսա. Զբաժակն զոր ես ըմպելոց եմ՝ ըմպիցէք, եւ զմկրտութիւնն զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցիք. այլ նստուցանել ընդ աջմէ իմմէ եւ ընդ ահեկէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց պատրաստեալ իցէ: Եւ լուեալ զայն տասանցն, սկսան բարկանալ Յակովբայ եւ Յովհաննու: Եւ Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն եւ ասէ. Գիտէք՝ զի որ յանուան իշխանքն են հեթանոսաց, տիրեն նոցա, եւ մեծամեծք նոցա իշխեն նոցա: Ոչ նոյնպէս իցէ եւ ի ձերում միջի. այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ. եւ որ կամիցի ի

ձէնջ առաջին լինել՝ եղիցի ամենեցուն ծառայ: Քանզի եւ Որդի մարդոյ ոչ եկն առնուլ պաշտօն, այլ պաշտել, եւ տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց: 45

---

## ԵՐՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Սրբոց իշխանացն Հայոց Սահակայ եւ Համազասպայ:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԻԴ. Ո յուսայ ի Տէր՝ որպէս լեառն Սիովն. Նա մի՛ սասանեսցի յաւիտեան, բնակեալն յԵրուսաղէմ:

Լերինք շուրջ են զնովաւ. Տէր շուրջ է զժողովրդեամբ իւրով յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ը. 18:

Ինձ այսպէս թուի եթէ ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոց են ի մեզ: Զի ակնկալութիւն արարածոց՝ յայտնութեան Որդւոյն Աստուծոյ սպասէ: Զի ընդունայնութեան արարածք հնազանդեցան, ոչ իւրեանց կամաւ, այլ վասն այնորիկ՝ որ հնազանդեցոյցն յուսով: Զի եւ ինքեանք իսկ արարածք ազատեսցին ի ծառայութենէ ապականութեան՝ յազատութիւն փառաց Որդւոյն Աստուծոյ: Քանզի գիտեմք եթէ ամենայն արարածք հեծեն եւ երկնեն մինչեւ ցայժմ: Եւ ոչ այսչափ միայն. այլ եւ մեք իսկ՝ որ զպտուղ հոգւոյն ունիմք, անձամբ յանձինս մեր հեծեմք, որդեգրութեանն ակն կալեալ փրկութեան մարմնոյ մերոյ: Զի յուսով ապրեցաք. այլ յոյս տեսանելի՝ չէ յոյս. զի զոր տեսանէ ոք՝ զի՞ եւս յուսայ: Ապա եթէ զոր ոչն տեսանեմք՝ յուսամք, համբերութեամբ ակն ունիմք: Նոյնպէս եւ Հոգին ի թիկունս հա-



սանէ տկարութեանս մերում. զի զոր կամքն յաղօթս՝ որպէս արժան իցէ, ոչ գիտեմք. այլ ինքն Հոգին բարեխօս լինի ի հեծութիւնս անմռունչս: 26:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԺԶ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայթագղեսջիք: Ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ. այլ եկեսցէ ժամանակ՝ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ: Եւ զայն արասցեն ընդ ձեզ, քանզի ոչ ծանեան զՀայր եւ ոչ զիս: Այլ եւ զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ եկեսցէ ժամանակ, յիշիցէք թէ ես ասացի ձեզ: Զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի: 5:

---

## ԵՐՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԲ. 19:

Դարձեալ համարիցիք՝ եթէ յողոք անկեալ ինչ ձեզ աղերսիցե՞մք: Առաջի Աստուծոյ ի Քրիստոս խօսիմք, զի ամենայն ինչ, սի՛րելիք, վասն ձերոյ շինութեան է: Այլ երկնչիմ, գուցէ եկեալ՝ ոչ որպիսիս կամիմն գտանիցեմ զձեզ. եւ ես գտանիցիմ ձեզ՝ որպէս եւ դուք ոչ կամիցիք. գուցէ դարձեալ հեռ, նախանձ, սրտմտութիւնք, գրգռութիւնք, չարախօսութիւնք, քսութիւնք, հպարտութիւնք,

ամբարտաւանութիւնք, խռովութիւնք: Գուցէ դարձեալ յորժամ գայցեմ՝ նկուն ինչ առնիցէ զիս Աստուած իմ առ ձեզ. եւ սուգ առնուցում վասն բազմաց յառաջագոյն մեղուցելոց եւ ոչ ապաշխարելոց ի վերայ պղծութեան եւ պոռնկութեան եւ գիջութեան զոր գործեցին: Այս երիցս անգամ գամ առ ձեզ, զի ի բերանոյ երկուց եւ երից վկայից հաստատեսցի ամենայն բան: Յառաջ ասացի, եւ դարձեալ կանխաւ ասեմ. յանդիման երկիցս անգամ, եւ այժմ ի բացուստ գրեմ յառաջագոյն յանցուցելոցն եւ այլոցն ամենեցուն. զի եթէ եկից դարձեալ՝ ոչ խնայեցից: Եթէ զփո՞րձ ինչ խնդրէք զՔրիստոսի, որ ինեւս ընդ ձեզ խօսի, որ հզօրացեալն է ի ձեզ, եւ ոչ տկարացեալ: Զի թէպէտ եւ խաչեցաւ ի մերմէ տկարութենէ, այլ կենդանի է զօրութեամբն Աստուծոյ. եւ մեք թէպէտ եւ տկարանայցեմք վասն նորա, այլ կենդանի լիցուք ընդ նմա զօրութեամբն Աստուծոյ: ԺԳ. 4:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

ԳԼ. ԺԱ. 15:

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Գան յԵրուսաղէմ. եւ ստեալ ի տաճարն՝ սկսաւ հանել զվաճառականսն եւ զգնողս՝ որ էին ի տաճարին. եւ զսեղանս հատավաճառացն ցրուեաց, եւ զաթոռս աղաւնեվաճառացն կործանեաց. եւ ոչ թողոյր՝ եթէ ոք անօթ ինչ անցուցանիցէ ընդ տաճարն: Եւ ուսուցանէր զնոսա եւ ասէր. Գրեալ է. Տուն իմ տուն աղօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց, եւ դուք արարէք զդա այրս աւազակաց: Լուան քահանայապետքն եւ դպիրք. եւ խնդրէին՝ թէ ո՛րպէս կորուսցեն զնա. բայց երկնչէին ի նմանէ, զի ամենայն ժողովուրդն զարմացեալ էր ընդ ուսումն նորա: Եւ իբրեւ երեկոյ լինէր՝ արտաքոյ քան զքաղաքն ելանէին: Եւ մինչ դեռ այգուցն առ նովաւ անցանէին, տեսին զթզենին ցամաքեալ յարմատոց: Յիշեաց Պետրոս եւ ասէ ցնա. Ռա՛բբի, ահաւասիկ թզենին զոր անիծեր, ցամաքեցաւ: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Եթէ ունիցիք զհաւատսն Աստու-



ծոյ, ամէն ասեմ ձեզ, որ ոք ասիցէ լերինս այսմիկ, Բարձիր եւ անկիր ի ծով, եւ ոչ երկմտիցէ ի սրտի իւրում, այլ հաւատայցէ թէ զոր ասէն՝ լինի, եղիցի նմա զոր ինչ եւ ասիցէ: Վասն այսորիկ ասեմ ձեզ. զամենայն ինչ վասն որոյ աղօթս արարեալ խնդրիցէք, եւ հաւատայցէք թէ առնուցուք, եղիցի ձեզ: Եւ յորժամ յաղօթս կայցէք, թողուցուք՝ եթէ ունիցիք ինչ զումեքէ. զի եւ հայրն ձեր՝ որ յերկինս է, թողցէ ձեզ զյանցանս ձեր: Զի եթէ դուք ոչ թողուցուք, եւ ոչ հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր: 26:

---

## ԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### Սրբոց ՀԲ աշակերտացն Քրիստոսի:

Ժամամուտ. Առաքեալք եւ վկայք Քրիստոսի Աստուծոյ. ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդէգրութիւն կենաց կոչելով՝ միասնական սուրբ Երրորդութեանն յորդորեցին երգել փառս յաւիտեանս. ամէն:

Սղ. ԺԸ. Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա. եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա:

Երկինք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. ԳԼ. Բ. 14:

Այլ Աստուծոյ շնորհքն՝ որ յամենայնի հռչակ հարկանէ զմէնջ ի Քրիստոս Յիսուս, եւ զհոտ գիտութեանն իւրոյ յայտնի առնէ մեօք յամենայն տեղիս: Զի հոտ անոյշ եմք Քրիստոսի առ Աստուած ի մէջ փրկելոցն եւ ի մէջ կորուսելոցն. ոմանց հոտ մահուանէ ի մահ, եւ ոմանց հոտ կենդանութենէ ի կեանս. եւ առ այս ո՞ բաւական իցէ: Քանզի ոչ եմք իբրեւ զայլսն՝ որ վաճառական լինին բանին Աստուծոյ. այլ իբրեւ ի հաստատութենէ, այլ իբրեւ յԱստուծոյ, առաջի Աստուծոյ ի Քրիստոս խօսիմք: Սկսանիմք այսուհետեւ վերստին զանձինս ընծայեցուցանել. թէպէտ եւ ոչ

պիտոյ իցեն մեզ, որպէս ոմանց, թուղթք ընծայութեան առ ձեզ կամ ի ձէնջ: Այլ թուղթք մեր դուք էք, գրեալ ի սիրտս մեր, ծանուցեալ եւ ընթերցեալ յամենայն մարդկանէ. յայտնեալք, զի էք թուղթք Քրիստոսի, պաշտեցեալ ի մէնջ, եւ գրեալ ոչ մրով, այլ Հոգւով Աստուծոյ կենդանւոյ, ոչ ի տախտակս քարեղէնս, այլ ի տախտակս սրտի մարմնեղէնս: Գ. 3:

Ալէլուիա, ալէլուիա. Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա. եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ժ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յետ այսորիկ երեւեցոյց (Տէր) եւ այլ եւս եօթանասուն եւ երկուս. եւ առաքեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր յամենայն քաղաքս եւ ի տեղիս, ուր ինքն երթալոց էր: Եւ ասէ ցնոսա. Հունձք բազում են եւ մշակք սակաւ. արդ աղաչեցէք զտէր հնձոց, զի հանցէ մշակս ի հունձս իւր: Երթայք, ահա առաքեմ զձեզ իբրեւ զգառինս ի մէջ գայլոց: Մի՛ բառնայք քսակ, մի՛ մախաղ, մի՛ կօշիկս, եւ ի ճանապարհի ումեք ողջոյն մի՛ տայցէք: Յոր տուն մտանիցէք՝ նախ ասասջիք թէ Ողջոյն տանս այսմիկ. եւ եթէ իցէ անդ որդի ողջունի, հանգիցէ ի վերայ նորա ողջոյնն ձեր. ապա թէ ոչ՝ ի ձեզ դարձցի: Եւ ի նմին տան ագանիջիք, ուտիջիք եւ ըմպիջիք ի նոցանէ. զի արժանի է մշակն վարձու իւրոյ. մի՛ փոխիցիք տանէ ի տուն: Յոր քաղաք մտանիցէք եւ ընդունիցին զձեզ, ուտիջիք զինչ առաջի դնիցեն ձեր. եւ բժշկեսջիք որ ի նմա հիւանդք իցեն. եւ ասասջիք նոցա. Մերձեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ: Իսկ յոր քաղաք մտանիցէք եւ ոչ ընդունիցին զձեզ, իբրեւ ելանիցէք ի հրապարակս նորա, ասասջիք. Եւ զփոշիս որ կռուեալ է ի քաղաքէ ձերմէ յոտս մեր՝ թօթափեսցուք ի ձեզ. բայց զայս գիտասջիք՝ զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ: Ասեմ ձեզ, զի Սոդոմացւոց ընդարձակագոյն լիցի յաւուրն յայնմիկ՝ քան քաղաքին այնմիկ: 12:

---



## ՉՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ԽԱՉԻՆ

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. ԿԳ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԳ. 5:

Ե՛ղբարք, փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայցէք ի նոյն հաւատս. քննեցէք զանձինս, եթէ ո՛չ գիտէք զանձինս՝ զի Քրիստոս Յիսուս ի ձեզ է. բայց եթէ անպիտանք իցէք: Այլ ակն ունիմ թէ գիտիցէք, զի մեք ոչ եմք անպիտանք: Այլ խնդրեմք յԱստուծոյ, զի մի՛ ինչ արասցէ ձեզ չար. ոչ զի մեք ընտիրք երեւեսցուք, այլ զի դուք զբարիս գործիցէք, եւ մեք անպիտանք իցեմք: Զի ոչ կարեմք ինչ հակառակ կալ ճշմարտութեանն, այլ վերակացու եմք ճշմարտութեանն: Խրախ եմք՝ յորժամ մեք տկարանայցեմք, եւ դուք զօրաւորք իցէք. զդոյն իսկ եւ աղօթս առնեմք զձեր հաստատութիւնդ: Վասն այնորիկ զայս ի հեռուստ գրեմ, զի մի՛ յորժամ եկից՝ սաստկութեամբ վարեցայց ըստ իշխանութեանս, զոր ետ ինձ Տէր ի շինել եւ ոչ ի քակել: Այսուհետեւ, ե՛ղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք, մխիթարեցարուք, միաբան լերուք, խաղաղութիւն արարէք. եւ Աստուած խաղաղութեան եւ սիրոյ եղիցի ընդ ձեզ: Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան. ողջոյն տան ձեզ սուրբք ամենայն: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ սէրն Աստուծոյ եւ հաղորդութիւն Հոգւոյն սրբոյ ընդ ձեզ ամենեսին. ամէն: 13:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. ԺԱ. 27:

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Գան միւսանգամ յԵրուսաղէմ. եւ մինչ դեռ ի տաճարի անդ զգնայր, գան առ նա քահանայապետքն եւ դպիրք եւ ծերք, եւ ասեն ցնա. Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ, եւ ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Հարցից եւ ես զձեզ բան մի. տուք ինձ պատասխանի, եւ ես ասացից ձեզ որո՞վ իշխանութեամբ առնեմ զայս: Մկրտութիւնն Յովհաննու յերկնի՞ց էր՝ եթէ ի մարդկանէ. տուք ինձ պատասխանի: Խորհէին ընդ միմեանս եւ ասէին. Եթէ ասեմք՝ եթէ յերկնից, ասէ ցմեզ. Իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա: Այլ եթէ ասեմք՝ Ի մարդկանէ, երկնչիմք ի ժողովրդենէն. զի ամենեքին գիտէին զՅովհաննէս՝ թէ մարգարէ էր: Պատասխանի ետուն եւ ասեն ցՅիսուս. Չգիտեմք: Եւ Յիսուս ետ նոցա պատասխանի եւ ասէ. Եւ ոչ ես ասեմ ձեզ, որո՞վ իշխանութեամբ առնեմ զայս: 33:

---

## ՉՈՐՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### Սրբոյն Փոկասու հայրապետին, եւ Երանոսի հետեւողի առաքելոցն:

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցէք զաթոռ ի յերկրի. առաքելական առէք զպատիւ յերկնուստ, ծառայք Քրիստոսի ո՛վ երանելիք ի հարս սուրբ հայրապետք: Քանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ եւ զամենայն հեզութիւն նորա:



Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԱ. 21:

Ե՛ղբարք, ըստ անարգանացդ ասեմ, իբրեւ թէ մեք տկարացա՞ք արդեօք. յոր ինչ ոք համարձակիցի, անզգամութեամբ ասեմ, համարձակիմ եւ ես: Եբրայեցի՞ք իցեն, եւ ես. Իսրայէլացի՞ք իցեն, եւ ես. զաւակ Աբրահամո՞ւ իցեն, եւ ես. պաշտօնեայք Քրիստոսի՞ իցեն, յանդգնագոյնս ասացից՝ թէ առաւել եւս ես: Եթէ վաստակովք՝ առաւել, եթէ գանիւք՝ եւս առաւել, եթէ բանտիւ՝ աւելի քան զնոսա, եթէ մահուամբք՝ բազում անգամ: Ի Հրէից հնգիցս՝ քառասուն միով պակաս արբի. երիցս ձաղկեցայ, մի անգամ քարկոծ եղէ, երիցս նաւակոծ եղէ, զտիւ եւ զգիշեր յանդունդս տառապեցայ: Ի ճանապարհս բազում անգամ. վիշտս ի գետոց, վիշտս յաւազակաց, վիշտս յազգէ, վիշտս ի հեթանոսաց, վիշտս ի քաղաքի, վիշտս յանապատի, վիշտս ի ծովու, վիշտս ի սուտ եղբարց. ի ջանս եւ ի վաստակս, ի տքնութիւնս բազում անգամ, ի քաղց եւ ի ծարաւ, ի պահս բազում անգամ, ի ցուրտ եւ ի մերկութեան: Թող զայլ նեղութիւնսն, եւ զի հանապազ խուժանն ի վերայ իմ կուտէր եւ հոգք ամենայն եկեղեցեացն: Ո՞ հիւանդանայ եւ ոչ ես հիւանդանամ. ո՞ գայթագղի, եւ ոչ ես տապանամ: Եթէ պարծել ինչ պա՞րտ իցէ, զտկարութեանն պարծեցայց: Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գիտէ՝ որ է օրհնեալ յաւիտեանս, զի ոչ ստեմ: 31:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Զ. 45:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ նոյն ժամայն ճեպեաց զաշակերտսն մտանել ի նաւ եւ յառաջագոյն քան զնա երթալ յայնկոյս ի Բեթսայիդա, մինչ ինքն զժողովուրդսն արձակիցէ: Եւ հրաժարեալ ի նոցանէ՝ ել ի լեառն կալ յաղօթս: Եւ իբրեւ երեկոյ եղեւ, էր նաւն ի մէջ ծովուն, եւ ինքն ի ցամաքի:

Եւ ետես զնոսա հողմակոծեալս ի վարելն, զի էր հողմն ընդդէմ նոցա. եւ զչորրորդ պահու գիշերոյն գայ առ նոսա գնալով ի վերայ ծովուն, եւ կամէր զանց առնել առ նոքօք: Նոքա իբրեւ տեսին զի գնայր ի վերայ ծովուն, համարեցան թէ առ աչօք ինչ լինիցի, եւ զաղաղակ բարձին: Քանզի ամենեքեան տեսին զնա եւ խռովեցան. եւ նա անդէն վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ. Քաջալերեցարուք, ես եմ՝ մի՛ երկնչիք: Եւ ել ի նաւն առ նոսա, եւ դադարեաց հողմն: Եւ առաւել եւս յիմարեալ էին ի միտս իւրեանց, եւ զարմանային յոյժ. քանզի եւ ի վերայ հացին ոչ իմացան, զի էր սիրտ նոցա թմբրեալ: Եւ իբրեւ անցին յայնկոյս, եկին յերկիրն Գեննեսարէթ: Եւ իբրեւ ելին ի նաւէ անտի՝ իսկ եւ իսկ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ. եւ ընթացեալ այսր անդր ընդ ամենայն գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս, ուր լսէին՝ թէ անդ իցէ: Եւ ուր եւ մտանէր՝ ի գեղս կամ ի քաղաքս կամ յագարակս, ի հրապարակս դնէին զախտաժէտս, եւ աղաչէին զնա՝ զի գոնէ ի քղանցս հանդերձի նորա մերձենայցեն. եւ որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան: 56:

---

## ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### Սրբոց Կուսանացն Թեկղի եւ Վառվառեայ:

Ժամամուտ. Հարսնացեալք Քրիստոսի երկնաւոր փեսային, դստերք վերին Սիոնի. խնդրեցէք ի Քրիստոսէ զհաշտութիւն եւ զմեծ զողորմութիւն:

Սղ. Խդ. Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա. եւ զընկերս նորա տարցին նմա:

Բղխեաց սիրտ իմ բան բարի. եւ ասեմ զգործս իմ թագաւորի:

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 8:

Արթուն լերուք, հսկեցէք, զի ոսոխն ձեր սատանայ իբրեւ զառիւծ գոչէ, շրջի եւ խնդրէ թէ զո՛ կլանիցէ: Որում ի դիմի հարկանիցիք հաստատեալք հաւատովք. գիտասջիք



զնոյն անցս չարչարանաց եղբայրութեան ձերոյ յաշխարհի յանձինս կատարել: Եւ Աստուած ամենայն շնորհաց, որ կոչեաց զձեզ յիւր ի յաւիտենական փառսն Քրիստոսիւ Յիսուսիւ, որում փոքր մի եղերուք չարչարակիցք, նա կազդուրեցուսցէ, կարողացուսցէ, հաստահիմն արասցէ: Նմա իշխանութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ. ի հանդերձս ոսկէհուռն զարդարեալ եւ պաճուճեալ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԲ. 32:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն: Վաճառեցէք զինչս ձեր, եւ տուք ողորմութիւն. եւ արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս, ուր ոչ գող մերձենայ եւ ոչ ցեց ապականէ: Զի ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին: Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս եւ ճրագունք լուցեալք: Եւ դուք նմանողք մարդկան՝ որ ակն ունիցին տեառն իւրեանց՝ թէ երբ դառնայցէ ի հարսանեաց. զի յորժամ գայցէ եւ բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա: Երանի իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ՝ զի գօտի ընդ մէջ ածցէ եւ բազմեցուսցէ զնոսա, եւ անցեալ պաշտիցէ զնոսա: Եւ եթէ յերկրորդ կամ յերրորդ պահու եկեսցէ եւ գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ: Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն յորում պահու գող գայ՝ հսկէր եւ չտայր թոյլ ական հատանել ի տան իւրում: Եւ դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ Որդի մարդոյ: 40:

---

## ՉՈՐՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. 2Ե. Կեցո զծառայս քո Աստուած իմ. որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուած: Գլ. Ա. 1:

Պօղոս առաքեալ ոչ ի մարդկանէ եւ ոչ ի ձեռն մարդոյ, այլ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եւ Աստուծոյ Հօր՝ որ յարոյց զնա ի մեռելոց. եւ որ ընդ իս են եղբարք ամենեքեան, եկեղեցեացդ Գաղատացւոց: Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. որ ետ զանձն իւր վասն մեղաց մերոց, զի զմեզ փրկեսցէ յաշխարհէ աստի չարէ՝ ըստ կամացն Աստուծոյ եւ Հօր մերոյ, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն: Զարմանամ զի այդպէս վաղվաղակի փոփոխիք յայնմանէ՝ որ կոչեացն զձեզ ի շնորհսն Քրիստոսի, յայլ աւետարան, որ ոչ գոյ այլ. բայց եթէ իցեն ոմանք՝ որ խռովեցուցանիցեն զձեզ, եւ կամիցին շրջել զաւետարանն Քրիստոսի: Այլ թէ մեք կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի: Որպէս յառաջագոյնն ասացաք եւ արդ դարձեալ ասեմ. եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առէքն, նզովեալ լիցի: Արդ մարդկա՞ն հաճոյ լինիցիմ, թէ Աստուծոյ, կամ խնդրիցեմ մարդկա՞ն հաճոյ լինել: Եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի: 10:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. ԺԲ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք եւ ասել. Այր մի տնկեաց այգի, եւ ած շուրջ զնովաւ ցանգ, եւ գուբ հնձան փորեաց, եւ շինեաց աշտարակ. եւ ետ զնա ցմշակս, եւ գնաց



ի տար աշխարհ: Եւ առաքեաց առ մշակսն ի ժամանակի ծառայ մի, զի ի մշակաց անտի առցէ ի պտղոյ այգւոյն: Եւ նոցա կալեալ՝ գան հարին զնա, եւ արձակեցին ունայն: Դարձեալ առաքեաց այլ ծառայ, եւ զնա կառափնատեցին եւ արձակեցին անարգեալ: Եւ դարձեալ այլ առաքեաց, եւ զնա սպանին. եւ զբազումս այլս՝ զոմանս հարկանէին եւ զոմանս սպանանէին: Ապա որդի մի էր իւր սիրելի, զնա առաքեաց առ նոսա յետոյ եւ ասէ. Թերեւս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ: Իսկ մշակքն իբրեւ տեսին զնա զի գայր՝ ասեն ցմիմեանս. Սա է ժառանգն. եկայք սպանցուք զսա, եւ մեր լիցի ժառանգութիւնն: Եւ կալեալ զնա սպանին, եւ հանին արտաքոյ այգւոյն: Արդ՝ զի՞նչ արասցէ տէր այգւոյն. եկեսցէ եւ կորուսցէ զմշակսն, եւ տացէ զայգին ի ձեռս այլոց: Եւ ո՞չ զգիրն զայն իցէ ընթերցեալ ձեր, թէ Զվէմն զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան: Ի Տեառնէ եղեւ այս. եւ է սքանչելի յաչս մեր: Եւ խնդրէին զնա ունել, եւ երկեան ի ժողովրդենէ անտի, զի գիտացին թէ առ նոսա ասաց զառակն. եւ թողին զնա եւ գնացին: 12:

---

## ՉՈՐՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Պանդալէոնի բժշկին եւ Երմողեայ քահանային եւ Եւպրաքսեայ կուսին:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԲ. 1:

Այլ վասն հոգեւորացն, ե՛ղբարք, ոչ կամիմ եթէ տգէտք իցէք: Գիտէք իսկ զի մինչ հեթանոսքն էիք, առ

կուռս անմռունչս որպէս երթայիք եւ գայիք: Վասն որոյ ցուցանեմ ձեզ, զի ոչ ոք Հոգւով Աստուծոյ խօսի, եւ ասիցէ թէ նզովեալ Յիսուս. եւ ոչ ոք կարէ ասել՝ Տէր զՅիսուս, եթէ ոչ Հոգւովն սրբով: Թէպէտ եւ բաժինք շնորհաց են, այլ Հոգի նոյն է: Եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է: Եթէ բաժինք աջողութեանց են, այլ Աստուած նոյն է, որ աջողէ զամենայն յամենայնի: Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութիւն Հոգւոյն՝ առ իւրաքանչիւր օգուտ: Ումեմն ի Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան, այլում բան գիտութեան ըստ նմին Հոգւոյ, միւսումն հաւատք նովին Հոգւով, այլում շնորհք բժշկութեանց նովին Հոգւով, այլում աջողութիւնք զօրութեանց, այլում մարգարէութիւն, այլում ընտրութիւն հոգւոց, այլում ազգք լեզուաց, այլում թարգմանութիւնք լեզուաց: Այլ զայս ամենայն աջողէ մի եւ նոյն Հոգի, եւ բաժանէ իւրաքանչիւր որպէս եւ կամի: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Թ. 35:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ շրջէր (Յիսուս) ընդ ամենայն քաղաքս եւ ընդ գեղս. ուսուցանէր ի ժողովուրդս նոցա, եւ քարոզէր զաւետարանն արքայութեան. եւ բժշկէր զամենայն ախտս եւ զամենայն հիւանդութիւնս ի ժողովրդեանն: Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ ի նոսա. զի էին աշխատեալք եւ ցրուեալք իբրեւ զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ: Յայնժամ ասէ ցաշակերտս իւր. Հունձք բազում են եւ մշակք սակաւ: Արդ՝ աղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս ի հունձս իւր: Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր, ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց՝ հանել զնոսա, եւ բժշկել զամենայն ցաւս եւ զամենայն հիւանդութիւնս: Ժ. 1:

---



## ՉՈՐՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. Ղէ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 11:

Ցուցանեմ ձեզ, եղբարք, զաւետարանն՝ որ աւետարանեցաւ յինէն. զի ոչ է ըստ մարդոյ. քանզի եւ ոչ ես ի մարդոյ առի. եւ ոչ ուսայ յումեքէ, այլ ի յայտնութենէն Յիսուսի Քրիստոսի: Քանզի լուեալ իսկ է ձեր զիմ գնացսն, որ երբեմն ի հրէութեան անդ. զի անչափ հալածէի զեկեղեցին Աստուծոյ եւ աւար հարկանէի զնա: Եւ յառաջադէմ էի ի հրէութեանն՝ քան զբազում հասակակիցս իմ, որ յազգին իմում էին. առաւել նախանձախնդիր էի իմոյ հայրենի աւանդութեանցն: Այլ յորժամ կամեցաւ Աստուած՝ որոշեաց զիս յորովայնէ մօր իմոյ, եւ կոչեաց ի ձեռն շնորհաց իւրոց, յայտնել զՈրդին իւր ինեւ, զի աւետարանեցից զնա ի հեթանոսս. անդէն վաղվաղակի ոչ ինչ զգացուցի մարմնոյ եւ արեան, եւ ոչ ելի յԵրուսաղէմ, առ որ յառաջագոյն քան զիս առաքեալքն էին. այլ չոգայ յԱրաբիա, եւ դարձեալ դարձայ ի Դամասկոս: Ապա յետ երից ամաց ելի յԵրուսաղէմ տեսանել զՊետրոս, եւ եղէ առ նմա աւուրս հնգետասան: Զայլ ոք յառաքելոց անտի ոչ տեսի, բայց միայն զՅակովբոս՝ զեղբայրն Տեառն: Այլ զոր գրեմս առ ձեզ, ահաւասիկ առաջի Աստուծոյ՝ զի ոչ ստեմ: Ապա եկի ի կողմանս Ասորւոց եւ Կիլիկեցւոց: Եւ յանծանօթս էի երեսօք եկեղեցեացն՝ որ ի թլփատութենէ անտի էին ի Քրիստոս: Բայց զի լսելով լուեալ էր, թէ որ հալածէրն զմեզ յայնժամ, արդ աւետարանէ զհաւատսն՝ զոր երբեմն խախտէր. եւ փառաւոր առնէին ինեւ զԱստուած: 24:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. ԺԲ. 18:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Գան առ նա սադուկեցիքն որ ասեն՝ թէ Չիք յարութիւն. հարցանէին ցնա եւ ասէին. Վարդապետ, Մովսէս գրեաց մեզ, եթէ ուրուք եղբայր մեռանիցի եւ թողուցու կին, եւ որդի ոչ թողուցու, զի առցէ եղբայր նորա զկին նորա, եւ յարուսցէ զաւակ եղբօր իւրում: Արդ՝ եղբարք եօթն էին առ մեզ. առաջինն առ կին եւ մեռաւ, եւ ոչ եթող զաւակ: Եւ երկրորդն առ զնոյն եւ մեռաւ, եւ ոչ նա եթող զաւակ. նոյնպէս եւ երրորդն առ զնոյն: Եւ եօթնեքեան իսկ. եւ ոչ թողին զաւակ: Յետ ամենեցուն մեռաւ եւ կինն: Արդ՝ ի յարութեան յորժամ յառնիցեն, ո՞յր ի նոցանէ լինիցի կինն. զի եօթնեքեան կալան զնա կին: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Ո՞չ վասն այդորիկ իսկ մոլորեալ էք. զի ոչ գիտէք զգիրս եւ ոչ զզօրութիւնն Աստուծոյ: Զի յորժամ ի մեռելոց յարիցեն, ոչ արք կանայս առնեն, եւ ոչ կանայք արանց լինին. այլ իբրեւ զհրեշտակս իցեն որ յերկինսն են: Այլ վասն յարութեան մեռելոց զի յառնեն, չիցէ՞ ընթերցեալ ձեր ի գիրսն Մովսիսի ի մորենւոջն, որպէս ասաց ցնա Աստուած. Ես եմ, ասէ, Աստուած Աբրահամու եւ Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակովբայ: Եւ ոչ է Աստուած մեռելոց, այլ կենդանեաց. եւ արդ՝ դուք յոյժ մոլորեալ էք: Եւ մատուցեալ մի ոմն ի դպրացն՝ լսէր նոցա մինչ վիճէինն. իբրեւ ետես եթէ բարւոք ետ նոցա զպատասխանին, եհարց ցնա եւ ասէ. Ո՞ր պատուիրան է առաջին: Եւ Յիսուս ասէ ցնա. Առաջին քան զամենայն, Լուր Իսրայէլ, Տէր Աստուած մեր՝ Տէր մի է. եւ սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումէ, եւ յամենայն անձնէ քումէ, եւ յամենայն մտաց քոց, եւ յամենայն զօրութենէ քումէ. այս է առաջին պատուիրան: Եւ երկրորդն նման սմին. Սիրեսցես զընկեր քո՝ իբրեւ զանձն քո. մեծ քան զսոսա այլ պատուիրան ոչ գոյ: Եւ ասէ ցնա դպիրն. Բարւոք է, վարդապետ, ճշմարտութեամբ ասացեր՝ թէ մի է Աստուած, եւ ոչ գոյ այլ բաց ի նմանէ, եւ սիրելն զնա յամենայն սրտէ եւ յամենայն զօրութենէ եւ յամենայն մտաց, եւ սիրելն զընկերն իբրեւ



զանձն, առաւել է քան զողջակէզս եւ զզոհս: Եւ տեսեալ Յիսուսի թէ իմաստութեամբ ետ զպատասխանին ասէ ցնա. Չես հեռի յարքայութենէ Աստուծոյ: Եւ ոչ եւս ոք իշխէր ինչ հարցանել զնա: 34:

---

## ՉՈՐՐՈՐԴ ԾԱԲԱԹ

### Սրբոյն Կալիստրատոսի եւ խԹ վկայիցն, եւ Ղուկիանոսի քահանային:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած. որպէս մարդասէր:

Սղ. ՃԺԵ. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ Տէր, ես ծառայ քո եմ. ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. ԺԲ. 1:

Այսուհետեւ եւ մեք՝ որ այսչափ շուրջ զմեօք մածեալ ունիմք զբազմութիւն վկայից, զհպարտութիւն զամենայն ի բաց ընկեսցուք եւ զմեղս կարեւորս. համբերութեամբ ընթասցուք ի պատերազմն՝ որ առաջի կայ մեզ: Հայեսցուք ի զօրագլուխն հաւատոց եւ ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ուրախութեանն որ նմա առաջի կայր, յանձն առ զխաչն, արհամարհեաց զամօթն, նստաւ ընդ աջմէ աթոռոյն Աստուծոյ: Աղէ ածէք զմտաւ, որ զայսպիսի համբերութիւն ի մեղաւորաց հակառակութենէ անտի կրեաց. զի մի՛ աշխատ լինիցիք անձամբք ձերովք եւ լքանիցիք: Զի չեւ եւս արեամբ չափ պատերազմեալք՝ հակառակ կացէք մեղացն, եւ մոռացարուք զմխիթարութիւնն, որ ընդ ձեզ իբրեւ ընդ որդեակս խօսի: Որդեակ իմ, մի՛ լքանիր ի խրատու Տեառն, եւ մի՛ վհատիցիս՝ յանդիմանեալ ի նմանէ: Զի զոր սիրէ Տէր՝

խրատէ, տանջէ զամենայն որդի՝ զոր ընդունի: Ի խրատու Համբերութեան կայք, իբրեւ յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. ԺԳ. 9:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Եւ զձեզ իսկ մատնեսցեն յատեանս, եւ ի ժողովուրդս տանջիցիք, եւ առաջի դատաւորաց եւ թագաւորաց կայցէք վասն իմ ի վկայութիւն նոցա եւ ամենայն հեթանոսաց. բայց նախ պարտ է աւետարանիս քարոզել: Այլ յորժամ տանիցին զձեզ մատնել, մի՛ յառաջագոյն հոգայցէք եւ մի՛ զմտաւ ածիցէք թէ զի՞նչ խօսիցիք. այլ որ ինչ տացի ձեզ ի ժամուն յայնմիկ՝ զայն խօսիցիք. զի ոչ դուք էք որ խօսիցիքն՝ այլ Հոգին սուրբ: Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, եւ հայր զորդի. եւ յարիցեն որդիք ի վերայ հարց եւ սպանանիցեն զնոսա: Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ. այլ որ համբերեսցէն իսպառ՝ նա կեցցէ: 13:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ԽԱՉԻՆ

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. ԿԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 1:

Ապա յետ ամաց չորեքտասանից միւսանգամ ելի յԵրուսաղէմ ընդ Բառնաբայ, առեալ ընդ իս եւ զՏիտոս:



Եւ ելի ըստ յայտնութեանն, եւ զգացուցի նոցա զաւետարանն՝ զոր քարոզէի ի հեթանոսս, առանձինն այնոցիկ՝ որ կարծեալքն էին, գուցէ ընդունայն ինչ ընթացեալ իցեմ կամ ընթանայցեմ: Այլ եւ ոչ Տիտոս՝ որ ընդ իս ի հեթանոսաց էր, բռնադատեցաւ թլփատել. այլ վասն սպրդողաց սուտ եղբարցն. որք սպրդեցին մտանել դիտել զազատութիւնն մեր՝ զոր ունիմք ի Քրիստոս Յիսուս, զի զմեզ ծառայեցուսցեն: Որոց եւ ոչ առ ժամանակ մի անսացաք հնազանդութեանն, զի ճշմարտութիւն աւետարանին հաստատեսցի առ ձեզ: Բայց զկարծելոցն եթէ իցեն ինչ, որպիսիք ոք երբեմն էին, չէ ինչ ինձ փոյթ. քանզի Աստուած ակն մարդկան ոչ առնու, զի ինձ կարծեալքն այնպիսի ինչ ոչ զգացուցին: Այլ զնորին հակառակն իբրեւ տեսին եթէ հաւատացեալ է ինձ աւետարանն անթլփատութեան, որպէս եւ Պետրոսի թլփատութեանն. զի որ յաջողեացն Պետրոսի յառաքելութիւն թլփատութեան, յաջողեաց եւ ինձ ի հեթանոսս: Իբրեւ գիտացին զշնորհսն որ տուեալ էին ինձ, Յակովբոս եւ Կեփաս եւ Յովհաննէս, որ կարծեալ սիւնքն էին, ձեռն ետուն հաւանութեան ինձ եւ Բառնաբայ. զի մեք ի հեթանոսս, եւ նոքա ի թլփատութեանն. բայց միայն զի զաղքատսն յիշեսցուք, զոր եւ ես փութացայ զնոյն առնել: 10:

Ալէլուիա, ալէլուիա: Յարութեան ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. ԺԲ. 35:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ, մինչ ուսուցանէր ի տաճարին. Զիա՞րդ ասեն դպիրքն, թէ Քրիստոսն որդի Դաւթի է. Եւ ինքն Դաւիթ Հոգւովն սրբով ասէ. Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց: Արդ՝ եթէ ինքն իսկ Դաւիթ զնա Տէր կոչէ, զիա՞րդ իցէ որդի նորա: Եւ բազում ժողովուրդ լսէր նմա քաղցրութեամբ: Եւ ասէր ուսուցանելով ի վարդապետութեան իւրում. Զգոյշ լերուք ի դպրաց անտի, որ կամին ի հանդերձս երեւելիս շրջել, զնախողջոյնս խնդրել

ի հրապարակս, եւ զնախաթոռս ի ժողովուրդս, եւ զգահագլուխս յընթրիս: Որ ուտեն զտունս այրեաց, պատճառանօք յերկարեալ զաղօթս, զի աւելի եւս դատաստանս ընկալցին: Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին, տեսանէր թէ զիարդ ժողովուրդն արկանէր պղինձ ի գանձանակն. եւ բազում մեծատունք արկին բազում ինչ: Եկն այրի մի եւ արկ երկուս լումայս, որ է նաքարակիտ մի: Եւ կոչեցեալ առ ինքն զաշակերտսն իւր՝ ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ՝ զի այրին այն տառապեալ շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին ի գանձանակն: Քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին. այլ նա ի չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ զոր ունէր՝ արկ, գոյիւ չափ զկեանս իւր: 44:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

**Գիւտ Նշխարաց սրբոյն Գրիգորիսի Աղուանից Կաթողիկոսի, եւ սրբոց հարցն Թաթլոյ եւ Վարոսի եւ Թոմասու եւ Անտոնի եւ Կրոնիդեայ, եւ եօթն խոտաճարակացն:**

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ, ծառայ Քրիստոսի ո՛վ երանելիդ ի հարս սուրբ հայրապետ: Քանզի քոյ վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ժ. 32:

Արդ յիշեցէք զաւուրսն զառաջինս, յորս լուսաւորեալք բազում ճգանց եւ չարչարանաց համբերէք. մերթ ի նախատինս եւ ի նեղութիւնս խայտառակեալք, մերթ կցորդք այնպիսեաց վաստակաւորացն լինել: Քանզի եւ ընդ կապեալս



չարչարեցարուք. եւ զյափշտակութիւն ընչից ձերոց խնդութեամբ ընկալարուք. քանզի գիտէիք եթէ լաւագոյն եւս ստացուածս ունիք անձանց յերկինս՝ ուր կանն եւ մնան: Արդ մի՛ մերժէք ի ձէնջ զհամարձակութիւնն ձեր, յորում կայ մեծաց վարձուց հատուցումն: Պիտոյ է ձեզ համբերութիւն, զի զկամս Աստուծոյ արարեալ՝ հասջիք աւետեացն: Զի փոքր միւս եւս քան որչափ, որ գալոցն իցէ՝ եկեսցէ եւ ոչ յամեսցէ: Զի արդարն իմ ի հաւատոց կեցցէ. եւ եթէ յերկմիտս ոք իցէ, ոչ հաճեսցի ընդ նա անձն իմ: Բայց մեք ոչ եթէ երկմտութեամբ եմք ի կորուստ. այլ հաւատովք ի փրկութիւն հոգւոց: 39:

Ալէլուիա, ալէլուիա. Երանելի են որք բնակեալ են ի տան Տեառն. յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու. Գլ. Ժ. 21:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ի նմին ժամու ցնծացաւ (Յիսուս) Հոգւովն սրբով եւ ասէ. Գոհանամ զքէն, Հա՛յր, Տէր երկնից եւ երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց եւ յայտնեցեր զայս տղայոց: Այո՛, Հա՛յր, զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո: Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ. եւ ոչ ոք գիտէ՝ եթէ ո՛վ է Որդի, եթէ ոչ՝ Հայր, եւ ո՛ է Հայր՝ եթէ ոչ Որդի, եւ ում կամիցի Որդին յայտնել: Եւ դարձեալ առանձինն առ աշակերտսն ասէ. Երանի՛ աչաց, որ տեսանիցեն զոր տեսանէքդ: Ասեմ ձեզ. զի բազում մարգարէք եւ թագաւորք կամեցան տեսանել զոր դուքդ տեսանէք, եւ ոչ տեսին. եւ լսել զոր լսէքդ, եւ ոչ լուան: 24:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

**Անանիայ առաքելոյն, եւ սրբոց առաքելոցն Մատաթեայ եւ Բառնաբայ, եւ Փիլիպպոսի եւ Յովհաննու եւ Ծիղայի եւ Սիղուանոսի՝ գործակցացն Պօղոսի, եւ Երկոտասան վարդապետացն:**

Ժամամուտ. Առաքեալք եւ վկայք Քրիստոսի Աստուծոյ. ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդեգրութիւն կենաց կոչելով՝ միասնական սուրբ

Ներորդութեանն յորդորեցին երգել փառս ի յաւիտեանս. ամէն։

Սղ· ԾԸ· Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա. եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա։

Ներկինք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն։

Ընթերցուած ի Գործոց առաքելոց·

Գլ· Ա· 21։

Արդ՝ պարտ է յարանցս յայսցանէ՝ եկելոցս ընդ մեզ յամենայն ժամանակի, յորում մուտ եւ ել առ մեզ Տէր Յիսուս, սկսեալ ի մկրտութենէն Յովհաննու մինչեւ յօրն՝ յորում վերացաւ ի մէնջ, վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել միում ի սոցանէ։ Եւ կացուցին երկուս, զՅովսէփ՝ որում Բարսաբայն կոչէին, որ անուանեցաւ Յուստոս, եւ զՄատաթիա։ Եւ կացեալ յաղօթս՝ ասեն. Դո՛ւ Տէր սրտագէտ ամենայնի, յայտնեա զմի ոք՝ զոր ընտրեցեր ի սոցանէ երկոցունց, առնուլ զվիճակ պաշտամանս այսորիկ եւ զառաքելութեան, յորմէ անկաւ Յուդաս՝ գնալ ի տեղի իւր։ Եւ ետուն վիճակս նոցա, եւ ելանէր վիճակն Մատաթեայ. եւ համարեցաւ ընդ մետասան առաքեալսն։ 26։

Ալէլուիա, ալէլուիա. Պայուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. եւ յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու·

Գլ· Թ· 1։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի·

Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն, ետ նոցա զօրութիւն եւ իշխանութիւն ի վերայ ամենայն դիւաց. եւ բժշկել զհիւանդութիւնս։ Եւ առաքեաց զնոսա քարոզել զարքայութիւն Աստուծոյ, եւ բժշկել զախտաժէտս։ Եւ ասէ ցնոսա. Մի՛ ինչ բառնայք ի ճանապարհ. մի՛ գաւազան եւ մի՛ մախաղ, մի՛ հաց եւ մի՛ արծաթ. մի՛ երկուս հանդերձս ունիցիք։ Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ ազգիք, եւ



անտի գնայցէք։ Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յորժամ ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ՝ զփոշի ոտից ձերոց թօթափեսջիք ի վկայութիւն նոցա։ Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս եւ ընդ գեօղս, աւետարանէին եւ բժշկէին ընդ ամենայն տեղիս։ 6։

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԶՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Քահանայապ· Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք։

Սղ· Զե· Ակեղո զծառայս քո Աստուած իմ. որ ի քեզ յուսացեալ։

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։

Պողոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուած· Գլ· Բ· 11։

Եւ յորժամ եկն Կեփաս Անտիոք, ընդդէմ դարձայ նորա, քանզի գող իրրեւ ստգտեալ էին։ Քանզի մինչ չեւ եկեալ էին ոմանք առ ի Յակովբայ, ընդ հեթանոսս ուտէր անխիղճ. իսկ իրրեւ եկին, զատանէր եւ որոշէր զանձն, երկուցեալ յայնցանէ՝ որ ի թլփատութենէ անտի էին։ Եւ կեղծաւորեցան ընդ նմա եւ այլ Հրեայքն. մինչեւ Բառնաբաս անգամ խոնարհեցաւ ի նոցա կեղծաւորութիւնն։ Եւ իրրեւ տեսի թէ ոչ ուղիղ գնան ի ճշմարտութիւն աւետարանին, ասեմ ցԿեփաս առաջի ամենեցուն. Եթէ դու որ հրեայդ ես՝ հեթանոսաբար եւ ոչ հրեաբար կեաս, զինչո՞ւ ստիպես հեթանոսաց լինել հրեարէն։ Ոչ մեք բուն հրեայք եմք, եւ ոչ ի հեթանոսաց մեղաւորք։ Այս գիտեմք եթէ ոչ արդարանայ մարդ ի գործոց օրինաց, եթէ ոչ ի հաւատոյն Յիսուսի Քրիստոսի. եւ մեք ի Քրիստոս Յիսուս հաւատացաք, զի արդարացուք ի հաւատոյն Քրիստոսի, եւ ոչ ի գործոց օրինաց. զի ի գործոց օրինաց ոչ արդարասցի ամենայն մարմին։ Իսկ եթէ մինչ խնդրիցեմք արդարանալ ի Քրիստոս, եւ գտանիցիմք մեղաւորք, ապա ուրեմն Քրիս-

տոս մեղաց պաշտօնեայ եղեւ. քաւ լիցի: Զի եթէ զոր քակեցին՝ զնոյն միւսանգամ շինիցեմ, ապա յանցաւոր զանձն իմ ես ինձէն երեւեցուցանեմ: Զի ես օրինօք՝ օրինացն մեռայ, զի Աստուծոյ կեցից եւ ընդ Քրիստոսի ի խաչ ելից: Եւ կենդանի եմ այսուհետեւ, ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս: 20:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. ԺԳ. 14:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Եւ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածին, զի կայցէ ի տեղւոջ ուր չիցէ արժան. որ ընթեռնուն ի միտ առցէ. յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի լերինս. եւ որ ի վերայ տանեացն իցէ՝ մի՛ իջցէ ի տուն, եւ մի՛ մտցէ բառնալ ինչ ի տանէ իւրմէ. եւ որ յագարակին իցէ՝ մի՛ դարձցի յետս առնուլ զձորձս իւր: Բայց վա՛յ իցէ յղեաց եւ ստնտուաց յաւուրսն յայնոսիկ: Յաղօթս կացէք՝ զի մի ձմերանի լինիցի այն: Եղիցին աւուրքն այնոքիկ նեղութեանց՝ որպիսի ոչ եղեն երբեք այնպիսիք ի սկզբանէ արարածոց մինչեւ ցայժմ, եւ մի՛ այլ լիցի: Եւ եթէ ոչ էր կարճեալ Աստուծոյ զաւուրսն զայնոսիկ վասն ընտրելոց իւրոց, ոչ ապրէր ամենայն մարմին. այլ վասն ընտրելոցն՝ զորս ընտրեաց, կարճեաց զաւուրսն զայնոսիկ: Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ, եթէ Ահաւասիկ է Քրիստոսն կամ աւանիկ, մի՛ հաւատայցէք: Զի յարիցեն սուտ քրիստոսք եւ սուտ մարգարէք, եւ տացեն նշանս եւ արուեստս առ ի մոլորեցուցանելոյ եթէ հնար ինչ իցէ եւ զընտրեալսն: Բայց դուք զգոյշ եղերուք, ահաւասիկ յառաջագոյն ասացի ձեզ զամենայն: 23:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Դիոնեսիոսի Արիսպագացւոյն, եւ սրբոց առաքելոցն Տիմոթէոսի եւ Տիտոսի եւ այլոց աշակերտացն Պօղոսի:

Ժամամուտ. Առաքեալք եւ վկայք Քրիստոսի Աստուծոյ. ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդ-



հանուր յորդեգրութիւն կենաց կոչելով՝ միասնական սուրբ Երրորդութեանն յորդորեցին երգել փառս յաւիտեանս. ամէն:

Սղ. ԺԸ. Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա. եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա:

Երկինք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն:

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 1:

Պօղոս եւ Սիղուանոս եւ Տիմոթէոս՝ եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց՝ յԱստուած Հայր մեր եւ ի Տէր Յիսուս Քրիստոս: Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ: Գոհանալ պարտիմք զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձեր, եղբարք, որպէս եւ արժան իսկ է. զի եւս քան զեւս աճեն հաւատքդ ձեր, եւ յաճախէ սէր իւրաքանչիւր ձեր ամենեցուն առ միմեանս: Որպէս եւ մեզ ձեօք պարծել յեկեղեցիսն Աստուծոյ վասն համբերութեան ձերոյ եւ հաւատոց յամենայն հալածանս ձեր եւ ի նեղութիւնս, որում դուքն համբերէք, յօրինակ արդար դատաստանին Աստուծոյ. արժանի լինել ձեզ արքայութեանն Աստուծոյ, վասն որոյ եւ զճգնութիւնդ կրէք. եթէ պարտ է առաջի Աստուծոյ հատուցանել նեղչացն ձերոց նեղութիւն, եւ ձեզ նեղելոցդ հանգիստ ընդ մեզ ի յայտնութեանն Տեառն մերոյ Յիսուսի յերկնից հրեշտակօք զօրութեան իւրոյ, ի բոց հրոյ առնուլ զվրէժս յայնցանէ՝ ոյք ոչ ճանաչեն զԱստուած, եւ որ ոչ հնազանդին աւետարանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Որք տայցեն վրէժս ի սատակումն յաւիտենից յերեսաց Տեառն եւ ի փառաց զօրութեան նորա, յորժամ գայցէ փառաւոր լինել ի մէջ սրբոց իւրոց, եւ սքանչելի ի մէջ ամենայն հաւատացելոց. զի հաւատարիմ եղեւ վկայութիւնն մեր ի վերայ ձեր յաւուր յայնմիկ: Յոր եւ աղօթս առնեմք վասն ձեր յամենայն ժամ, զի զձեզ արժանիս արասցէ կոչմանն ձերում Աստուած, մինչեւ լցցէ զամենայն հաճութիւն բարութեան եւ զգործս հաւատոցն զօրութեամբ: Զի փառաւոր լիցի անուն

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ձեզ, եւ դուք ի նմա, ըստ շնորհացն Աստուծոյ մերոյ եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի: 12:

Ալէլուիա, ալէլուիա: Պատուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. եւ յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց:

## Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

ԳԼ· Ա· 1:

## Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յետ այսորիկ երեւեցոյց (Տէր) եւ այլ եւս եօթանասունն եւ երկուս. եւ առաքեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր յամենայն քաղաքս եւ ի տեղիս, ուր ինքն երթալոց էր: Եւ ասէ ցնոսա. Հունձք բազում են եւ մշակք սակաւ. արդ աղաչեցէք զտէր հնձոց, զի հանցէ մշակս ի հունձս իւր: Երթայք, ահա առաքեմ զձեզ իբրեւ զգառինս ի մէջ գայլոց: Մի՛ բառնայք քսակ, մի՛ մախաղ, մի՛ կօշիկս, եւ ի ճանապարհի ումեք ողջոյն մի՛ տայցէք: Որ տունն մտանիցէք՝ նախ ասասջիք թէ Ողջոյն տանս այսմիկ. եւ եթէ իցէ անդ որդի ողջունի, հանգիսցի ի վերայ նորա ողջոյնն ձեր. ապա թէ ոչ՝ ի ձեզ դարձցի: Եւ ի նմին տան ագանիջիք, ուտիջիք եւ լմպիջիք ի նոցանէ. զի արժանի է մշակն վարձու իւրոյ. մի՛ փոխիցիք տանէ ի տուն: Որ քաղաք մտանիցէք եւ ընդունիցին զձեզ, ուտիջիք զինչ առաջի դնիցեն ձեր. եւ բժշկեսջիք որ ի նմա հիւանդք իցեն. եւ ասասջիք նոցա. Մերձեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ: 9:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՈՒԲԲԱԹ

Յաղագս. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ· Ղէ· Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:



Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս. ԳԼ· Բ· 20:

Ամէն որ այժմ կեամ մարմնով՝ հաւատովք Որդւոյն Աստուծոյ կեամ. որ սիրեացն զիս եւ մատնեաց զանձն վասն իմ: Եւ ես ոչ անարգեմ զշնորհսն Աստուծոյ. զի եթէ յօրինաց անտի է արդարութիւն, ապա Քրիստոս զուր մեռաւ: Ո՛ անմիտ Գաղատացիք, ո՞ նախանձ արար զձեզ (չհնազանդել ճշմարտութեան). որոց գրեթէ առաջի աչաց Քրիստոս Յիսուս գրեցաւ ի խաչ եղեալ: Զայս միայն կամիմ ուսանել ի ձէնջ. ի գործոց օրինաց զՀոգին ընկալարուք, եթէ ի լուոյ հաւատոյ: Այդչափ անմիտք էք. սկսեալ հոգւով, եւ արդ մարմնով վախճանիք: Եւ այնչափ անցք անցին ընդ ձեզ զուր, եթէ իցէ զուր: Իսկ արդ որ բաշխեաց ի ձեզ զՀոգին եւ յայտնեաց ի ձեզ զզօրութիւնս՝ ի գործոց օրինաց նմա է, եթէ ի լուոյ հաւատոյ: Որպէս Աբրահամ հաւատաց Աստուծոյ, եւ համարեցաւ նմա յարդարութիւն: Գիտէք ուրեմն արդարացուցանէ Աստուած զհեթանոսս, յառաջագոյն խոստացաւ Աստուած Աբրահամու, թէ ի քեզ օրհնեսցին ամենայն ազգք: Ուրեմն որք ի հաւատոյ անտի են՝ օրհնին ընդ հաւատացելոյն Աբրահամու: Զի որ միանգամ ի գործոց օրինացն են, ընդ անիծիւք են. քանզի գրեալ է, թէ Անիծեալ ամենայն մարդ՝ որ ոչ կացցէ յամենայն ի գրեալսն ի գիրս օրինաց՝ առնել զամենայն: Զի օրինաքն ոչ որք արդարանայ առաջի Աստուծոյ, այն յայտ իսկ է. զի Արդարն, ասէ, ի հաւատոյ կեցցէ: Գ· 11:

Ալէլուիա, ալէլուիա. պահոյ է յայնչէն:

## Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

ԳԼ· ԺԳ· 24:

## Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ամէն յաւուրսն յայնոսիկ, յետ նեղութեանն այնորիկ՝ արեգակն խաւարեսցի, եւ լուսին ոչ տացէ զլոյս իւր: Եւ աստեղք յերկնից թօթափեսցին, եւ զօրութիւնք յերկինս

շարժեսցին: Եւ յայնժամ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ամպովք՝ զօրութեամբ եւ փառօք բազմօք: Եւ յայնժամ առաքեսցէ զհրեշտակս իւր, եւ ժողովեսցէ զընտրեալս իւր ի չորից հողմոց՝ ի ծագաց երկրի մինչեւ ի ծագս երկնից: Այլ դուք ի թզենւոյ անտի ուսջիք զառակն. յորժամ տակաւ ոստքն նորա կակղանայցեն եւ տերեւ արձակիցի ի նմա, գիտէք թէ մերձ է ամառն: Նոյնպէս եւ դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք թէ մերձ է առ դուրս: Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչեւ այս ամենայն եղիցի: Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ ոչ անցանիցեն: Այլ վասն աւուրն այնորիկ եւ ժամուն ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք յերկինս եւ ոչ Որդի, բայց միայն Հայր: Ջգոյշ եղերուք. սկեցէք եւ կացէք յաղօթս. զի ոչ գիտէք երբ ժամանակն իցէ: Որպէս այր մի գնացեալ ի տար աշխարհ՝ թողուցու զտուն իւր. եւ տացէ ծառայից իւրոց իշխանութիւն, եւ իւրաքանչիւր զգործս իւր. եւ դռնապանին պատուէր տայցէ, զի արթուն լինիցի: Երդ՝ արթուն կացէք, զի ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ, յերեկորեայ, եթէ ի մէջ գիշերի, եթէ ի հաւախօսի, եթէ ընդ առաւօտս: Գուցէ եկեալ յանկարծակի՝ գտանիցէ զձեզ ի քուն: Այլ զոր ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ՝ արթուն կացէք: 37:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

**Սրբոց Աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու եւ Յովհաննու, եւ Ղուկիանոսի քահանային, եւ սրբոց վկայիցն Տարագոսի, Պրոբոսի եւ Անդրոնիկոսի, եւ Պեղագեայ կուսին:**

Յառաջաբան. Ընդունելք եւ վկայք Քրիստոսի Աստուծոյ. ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդեգրութիւն կենաց կոչելով՝ միաբանական սուրբ Եկեղեցութեանն յորդորեցին երգել փառս յաւիտեան. ամէն:

Սղ. Ղե. Աւետարանեցէք օր ըստ օրէ զփրկութիւն Նորա. պատմեցէք ի հեթանոսս զփառս Նորա:



Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնեցէք զՏէր ամենայն երկիր:

Պօղոսի առաքելոյն Հռփեսացւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Դ. 7:

Ամէն իւրաքանչիւր ումեք ի մէնջ տուեալ են շնորհք ըստ չափոյ պարգեւացն Քրիստոսի: Վասն որոյ եւ ասէ. Եւ ի բարձունս, գերեաց զգերութիւն եւետ պարգեւս մարդկան: Որ եղեն զի՞նչ է, եթէ ոչ՝ զի էջ նախ ի սաորին կողմն երկրի: Որ էջն՝ նոյն է եւ որ եկն ի վերոյ քան զամենայն երկինս, զի լցցէ զամենայն: Եւ նա ետ զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս եւ վարդապետս, ի հաստատութիւն սրբոց, ի գործ պաշտամանն, ի շինուած մարմնոյն Քրիստոսի. մինչեւ հասցուք ամենեքեան ի մի միաբանութիւն հաւատոյ եւ գիտութեան Որդւոյն Աստուծոյ, հայր կատարեալ ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի: 13:

Ալէլուիա, ալէլուիա. Պացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. եւ յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Զ. 13:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ իբրեւ այգ եղեւ՝ կոչեաց զաշակերտան իւր, եւ ընտրեաց ի նոցանէ երկոտասանս, զորս եւ առաքեալս անուանեաց. զՍիմովն՝ զոր եւ Պետրոս անուանեաց, եւ զԱնդրէաս զեղբայր նորին, եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս, եւ զՓիլիպպոս եւ զԲարթողիմէոս, եւ զՄատթէոս եւ զԹովմաս, եւ զՅակովբոս Ալփեայ, եւ զՍիմովն զկոչեցեալն նախանձայոյզ, եւ զՅուդա Յակոբեայ, եւ զՅուդա Իսկարիովտացի՝ որ եղեւ իսկ մատնիչ: Եւ իջեալ նոքօք հանդերձ ի տեղի մի տափարակ. եւ ժողով աշակերտացն նորա եւ բազմութիւն յոյժ ժողովրդեանն, յամենայն Հրէաստանէ եւ Երուսաղէմէ եւ յայնմ կողմանէ եւ ի ծովեզերէն Տիւրոսի

եւ Սիդոմնի. որ եկին լսել ի նմանէ եւ բժշկել ի հիւանդութենէ իւրեանց. եւ նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին: Եւ ամենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ ի նա, զի զօրութիւն բազում ելանէր ի նմանէ եւ բժշկէր զամենեսին: 19:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ԽԱՉԻՆ

Ժամանակ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. կԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Դ. 1:

Զայս ասեմ, ցորքան ժամանակս ժառանգն տղայ է, չէ ինչ աւելի քան զծառայն, թէպէտ եւ տէր իցէ ամենեցուն. այլ ընդ հազարապետօք է եւ ընդ գաւառապետօք մինչեւ ի ժամանակակէտ հօրն: Նոյնպէս եւ մեք մինչ տղայքն էաք՝ ընդ տարերբք աշխարհիս ի ծառայութեան կայաք: Այլ իբրեւ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր՝ որ եղեւ ի կնոջէ, եւ եմուտ ընդ օրինօք. զի զնոսա որ ընդ օրինօքն իցեն, գնեսցէ. զի մեք զորդեգրութիւն ընկալցուք: Եւ զի էք դուք որդիք, առաքեաց Աստուած զՀոգի Որդւոյն իւրոյ ի սիրտս մեր, որ աղաղակէ՝ Աբբա, հայր: Այսուհետեւ չես ծառայ, այլ որդի. եթէ որդի, եւ ժառանգ Աստուծոյ: Այլ յայնժամ մինչ ոչն գիտէիք զԱստուած, ծառայէիք այնոցիկ՝ որ ոչն էին ի բնէ աստուածք: Այլ այժմիկ ծաներուք զԱստուած, մանաւանդ թէ ծանուցայք իսկ յԱստուծոյ. զիա՞րդ դառնայք միւսանգամ անդրէն ի տարերս տկարս եւ յաղքատս, որոց միւսան-



գամ զանձինս ծառայեցուցանել կամիք: Զաւուրս խտրէք եւ զամիսս եւ զժամանակս եւ զտարիս: Երկնչիմ ի ձէնջ, գուցէ թէ ի զուր ինչ վաստակեցի ի ձեզ: Եղերուք իբրեւ զիս, քանզի եւ ես իբրեւ զձեզդ էի: Ե՛ղբարք, աղաչեմ զձեզ, չիք ինչ ձեր մեղուցեալ առ իս: Գիտէք դուք զի տկարութեամբ մարմնոյ աւետարանեցի ձեզ զառաջինն, եւ զփորձանսն որ ի մարմնի իմում էին, ոչ անարգեցէք եւ ոչ անգոսնեցէք. այլ իբրեւ զհրեշտակ Աստուծոյ ընկալարուք զիս, իբրեւ զՔրիստոս Յիսուս: Իսկ արդ ո՞ւր է երանութիւնն ձեր. վկայեմ ձեզ, եթէ հնար ինչ էր, զաչս ձեր հանէիք եւ տայիք ինձ: Արդ զի՞ թշնամի իմն եղէ ձեզ, զի զստոյգն խօսեցայ: Այլ նախանձեցուցանեն զձեզ ոչ ի բարի, եւ արգելուլ կամին զձեզ՝ զի նոցա նախանձաւորք լինիցիք: Բայց լաւ է նախանձաւոր լինել ի բարիս յամենայն ժամ, եւ ոչ միայն յորժամ ի ձերում միջի իցեմ: 18:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու. Գլ. Դ. 14:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ դարձաւ (Յիսուս) զօրութեամբ Հոգւոյն ի Գալիլեա. եւ ել համբաւ զնմանէ ընդ ամենայն կողմանս գաւառին: Եւ նա ուսուցանէր ի ժողովուրդս նոցա փառաւորեալ յամենեցունց: Եւ եկն ի Նազարէթ՝ ուր սնեալն էր. եւ եմուտ ըստ սովորութեան իւրում յաւուր շաբաթու ի ժողովուրդն: Եւ ետուն նմա գիրս զԵսայեայ մարգարէի, եւ յարեաւ ընթեռնուլ. եւ իբրեւ եբաց զգիրսն՝ եգիտ զայն տեղի յորում գրեալն էր. Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ եւ օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւ. քարոզել գերեաց զթողութիւն, եւ կուրաց տեսանել, արձակել զվիրաւորս ի թողութիւն, քարոզել զտարեկան Տեառն ընդունելի: Եւ խփեալ զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն, եւ նստաւ. եւ ամենեցուն որ ի ժողովըրդեանն էին աչք՝ ի նա հայէին: Եւ սկսաւ ասել ցնոսա. Այսօր լցան գիրքս այս յականջս ձեր: Եւ ամենեքին վկայէին նմա, եւ զարմանային ընդ բանս շնորհացն՝ որ ելանէին ի բե-

բանոյ նորա, եւ ասէին. Ո՞չ սա է որդին Յովսեփայ: Եւ ասէ ցնոսա: Ապաքէն ասիցէք առ իս զառակս զայս. Բժիշկ՝ բժշկեա զանձն քո. որչափ լուաք զոր արարեր ի Կափառնաում, արա եւ աստ ի քում գաւառի: Եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ՝ թէ չէ մարգարէ ընդունելի ի քաղաքի իւրում: 24:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

**Սրբոյն Ղունկիանոսի հարիւրապետին, եւ Յովսեփայ Աստուածահօրն, եւ Յովսեփայ Արիմաթացւոյն, եւ բարեկամին Քրիստոսի Ղազարու, եւ քերցն նորա Մարթայի եւ Մարիամու:**

Ժամամուտ. Առաքեալք եւ վկայք Քրիստոսի Աստուծոյ. ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդեգրութիւն կենաց կոչելով՝ միասնական սուրբ Երրորդութեանն յորդորեցին երգել փառս ի յաւիտեանս. ամէն:

Սղ. ԺԴ. Զերկիւղածս Տեառն փառաւոր առնէ, որ երդնու ընկերի իւրում եւ ոչ ստէ:

Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քում. կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 12:

Շնորհ ունիմ այնմիկ, որ զօրացոյցն զիս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. զի հաւատարիմ համարեցաւ կարգել ի սպասաւորութիւն, որ յառաջագոյն հայհոյիչն էի եւ հալածիչ եւ թշնամանիչ. այլ գտի ողորմութիւն, զի զայն յանգիտութեան եւ յանհաւանութեան գործէի: Եւ առաւել եղեն շնորհք Տեառն մերոյ հաւատովքն եւ սիրով՝ որ ի Քրիստոս Յիսուս: Հաւատարիմ է բանս եւ ամենայն ընդունելութեան արժանի է. զի Քրիստոս Յիսուս եկն յաշխարհ փրկել զմեղաւորս, որոց գլուխն ես եմ: Այլ վասն այնորիկ գտի ողորմութիւն, զի նախ յիս եցոյց Յիսուս Քրիստոս զամենայն երկայնմտութիւն յօրինակ այնոցիկ՝ որ հաւատալոցն իցեն ի նա, ի կեանսն յաւիտենից: Այլ թագաւորին յաւիտենից, անեղծի եւ աներեւութի, միոյն Աստուծոյ փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: 17:



Ալէլուիա, ալէլուիա. Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. եւ յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԻԷ. 50:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Դարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ եւ արձակեաց զոգին: Եւ ահա վարագոյր տաճարին ցելաւ յերկուս՝ ի վերուստ մինչեւ ի վայր. եւ երկիր շարժեցաւ, եւ վէմք պապառեցան: Եւ գերեզմանք բացան, եւ բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան: Եւ ելեալ ի գերեզմանաց յետ յարութեանն նորա, մտին ի քաղաքն սուրբ, եւ երեւեցան բազմաց: Իսկ հարիւրապետն եւ որ ընդ նմա պահէին զՅիսուս, իբրեւ տեսին զշարժումն եւ զեղեալսն, երկեան յոյժ եւ ասեն. Արդարեւ Աստուծոյ Որդի էր սա: Էին անդ կանայք բազումք, կային ի հեռաստանէ եւ հայէին, որք եկին զկնի Յիսուսի ի Գալիլեէ պաշտել զնա. յորս էր Մարիամ Մագդաղենացի եւ Մարիամ Յակովբայ եւ Յովսեայ մայր, եւ մայր որդւոցն Զեբեդեայ: Եւ իբրեւ երեկոյ եղեւ, եկն այր մի մեծատուն յԱրիմաթեայ՝ որում անուն էր Յովսէփ. որ եւ աշակերտեցաւ իսկ Յիսուսի: Սա մատուցեալ առ Պիղատոս, խնդրեաց զմարմինն Յիսուսի. յայնժամ Պիղատոս հրամայեաց տալ զմարմինն: Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ կտաւովք, եւ եդ ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց ի վիմի. եւ թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ՝ գնաց: Ընդ էր Մարիամ Մագդաղենացի եւ միւս Մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին: 61:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

**Սրբոյն Թէոդորիտոնի քահանային եւ Ջենոնի զինաւորին, եւ Մակարայ, եւդոքսիոսի եւ Ռոմելայ:**

Յ֊ՀՈՎՀՈ֊Ի· Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք· բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Ընտուածդ, որպէս մարդասէր:

Սղ· ՂԱ· Ինարի է խոստովան լինել Տեառն· սաղմոս ասել անուան քումմ, բարձրեալ:

Պատմել ահաւոտու զողորմութիւնս քո· եւ զճշմարտութիւնս քո ի գիշերի:

**Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս· Գլ· Ե· 17:**

Որ բարուք վերակացու լինիցին երիցունք՝ կրկին պատուոյ արժանի եղիցին· մանաւանդ որ աշխատիցին բանիւ եւ վարդապետութեամբ: Վասնզի ասէ գիր· Մի կապեացես զբռուկ եզին կալոտոյ· եւ արժանի է մշակն վարձու իւրոյ: Ընդդիմդուէ չարախօսութիւն մի՝ ընդունիցիս· բայց եթէ երկուք եւ երիք վկայիք: Յակ որ մեղանչէնն՝ առաջի ամենեցուն յանդիմանեա, զի եւ այլքն երկիցեն: Ի կայութիւն դնեմ առաջի Ընտուածոյ եւ Յիսուսի Քրիստոսի եւ ընտրելոց հրեշտակաց, զի զայդ պահեսցես առանց մտահաճութեան· մի՝ ինչ առնել աչառանաք: 21:

Ընկլուխա, ալէլուխա: Ա֊ՊՈՒՒՈՈՍՈՅ Ի ՅԱՅՆԼԸՆ:

**Սրբոյ Ա֊ետարանին որ ըստ Ա֊ատթէոսի·**

Գլ· Ծ· 26:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ·

Օ՚ի ոչ ինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտնեացի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի: Օ՚որ ասեմ ձեզ ի խաւարի՝ ասացէք ի լոյս· եւ զոր լսէք յունկանէ՝ քարոզեցէք ի վերայ տանեացդ· Եւ մի՝ երկնչէք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ զոգի



ոչ կարեն սպանանել· այլ երկերեաք դուք առաւել յայնմանէ՝ որ կարող է զոգի եւ զմարմին կորուսանել ի գեհենի: Ոչ ապաքէն երկու ճնճղուկք դանկի միոջ վաճառին, եւ մի ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց Օ՚ր ձերոյ: Ընդ ձեր եւ ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է: Եւ արդ՝ մի՛ երկնչիցիք՝ զի լաւ էք քան զբազումս ճնճղուկս: Ընդենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցից եւ ես զնմանէ առաջի Օ՚ր իմոյ՝ որ յերկինսն է: Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց եւ ես զնա առաջի Օ՚ր իմոյ՝ որ յերկինսն է: 33:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Յ֊ՀՈՎՀՈ֊Ի· Ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Ընտուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ· 26· Կեցո զծառայս քո Ընտուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ· ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

**Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս· Գլ· Դ· 19:**

Որդեակք իմ, զորս դարձեալ վերստին երկնեմ՝ մինչեւ նկարեացի Քրիստոս ի ձեզ: Կամէի այժմ գալ առ ձեզ եւ փոխել զբարբառ իմ· զի տարակուսեալ եմ ես վասն ձեր: Ընդ֊ինչ ինձ՝ որ ընդ օրինաւքն կամիք լինել, չեցէք ընթերցեալ ձեր զօրէնս: Օ՚ի գրեալ է՝ թէ Աբրահամու երկու որդիք էին, մի յաղախնոյ անտի եւ մի յազատէն: Եւ որ յաղախնոյն էր՝ ըստ մարմնոյ ծնեալ էր, եւ որ յազատէն՝ ըստ աւետեացն· որ է առակ օրինակի, զի այս ինքն են երկու կտակարանք, մի ի լեռնէ Սինայ՝ ի ծառայութիւն ծնեալ, որ է Հագար: Վասնզի Հագարն լեառն Սինայ է յԱրաբիա, հաւասար է այսմ Երուսաղեմի· զի ծառայէ որդւովքն իւրովք հանդերձ: Եւ վերինն Երուսաղէմ ազատ է, որ է մայր մեր ամենեցուն: Օ՚ի գրեալ է· Ուրախ լեր ամուլ՝ որ

ոչ ծնանէիր, գոչեա եւ աղաղակեա՝ որ ոչդ երկնէիր. զի բազում են որդիք սկնդկիդ առաւել քան զարամբոյն: Այլ մեք, եղբարք, ըստ Սահակայ աւետեացն որդիք եմք: Այլ որպէս յայնժամ որ ըստ մարմնոյն ծնեալ էր՝ հալածէր զայն որ ըստ հոգւոյն, նոյնպէս եւ այժմ: Այլ զի՞նչ ասէ գիր. Ի բաց հան զաղախինդ եւ զորդի դորա. զի մի՛ ժառանգեսցէ որդի աղախնոյն ընդ որդւոյն ազատի: Վասն որոյ, եղբարք, չեմք որդիք աղախնոյն, այլ ազատին. ազատութեամբն՝ որով Քրիստոս զմեզ ազատեցոյց: Պինդ կացէք այսուհետեւ, եւ մի՛ միւսանգամ ընդ լծով ծառայութեան մտանիցէք: Ե. 1:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Դ. 31:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ էջ ի Կափառնաում ի քաղաքն Գալիլեացւոց, եւ ուսուցանէր զնոսա ի շաբաթսն: Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի իշխանութեամբ էր բան նորա: Եւ էր ի ժողովրդեանն այր մի, զոր ունէր այս դիւի պղծոյ, եւ աղաղակեաց ի ձայն մեծ, եւ ասէ. Թուլացո, զի՞ կայ մեր եւ քո, Յիսո՛ւս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ՝ ո՛վ ես սուրբն Աստուծոյ: Սաստեաց ի նա Յիսուս եւ ասէ. Պապանձեաց եւ ել ի դմանէ: Զգետնեաց զնա դեւն ի միջի անդ եւ ել ի նմանէ, եւ ինչ ոչ վնասեաց նմա: Եւ եղեն զարմանալիք ի վերայ ամենեցուն. խօսէին ընդ միմեանս եւ ասէին. Զի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ եւ զօրութեամբ սաստէ այսոց պղծոց, եւ ելանեն: Եւ երթայր հռչակ զնմանէ ընդ ամենայն տեղիս շուրջ զգաւառաւն: Եւ յարուցեալ ի ժողովրդենէ անտի, եմուտ ի տուն Սիմովնի: Զոքանչ Սիմովնի տագնապէր ջերմամբ մեծաւ, եւ աղաչեցին զնա վասն նորա: Եկաց առ նմա, սաստեաց ջերմանն, եւ եթող զնա. եւ վաղվաղակի յարեաւ եւ պաշտէր զնոսա: Եւ ընդ արեւուն մտանել՝ ամենեքին որոց էին հիւանդք ի պէսպէս ցաւս՝ բերէին զնոսա առ նա: Եւ նա իւրաքանչիւր ումեք ի նոցանէ դնէր ձեռս եւ բժշկէր զնոսա: 41:

---



## ՎԵՑԵՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Սրբոց խարիթեանց՝ տասն հազար եւ երկերիւր մարտիրոսացն, եւ Արտեմեայ վկային:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ճԺԵ. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 13:

Վասն այնորիկ եւ մեք գոհանամք զԱստուծոյ անպակաս, զի առեալ զլուր բանին Աստուծոյ առ ի մէնջ՝ ընկալարուք, ոչ իբրեւ զբան մարդկան, այլ որպէս ճշմարտիւ զբան Աստուծոյ, որ եւ յաջողեալ իսկ է ի ձեզ հաւատացեալսդ: Զի դուք նմանողք եղերուք, եղբարք, եկեղեցեացն Աստուծոյ՝ որ են ի Հրէաստանի ի Քրիստոս Յիսուս, զի զնոյն չարչարանս չարչարեցայք եւ դուք ի ձերոց ազգականաց, որպէս եւ նոքայն ի Հրէից. որք եւ զՏէրն Յիսուս սպանին եւ զմարգարէսն, եւ զմեզ հալածեցին, եւ Աստուծոյ յաչաց ելին, եւ ամենայն մարդկան հակառակ եղեն. եւ արգելուին զմեզ խօսել հեթանոսաց՝ զի ապրեսցին, զի կատարեսցեն զմեղս իւրեանց յամենայն ժամ. քանզի հասեալ է ի վերայ նոցա բարկութիւն մինչեւ ի սպառ: Այլ մեք, եղբարք, թէպէտ եւ որբ մնացաք ի ձէնջ առ ժամանակ մի, երեսօք եւ ոչ սրտիւք, առաւել եւս փութացաք տեսանել զերեսս ձեր մեծաւ ցանկութեամբ: Վասն այսորիկ կամեցայ գալ առ ձեզ ես Պօղոս մի անգամ եւ երկիցս, եւ խափանեաց զմեզ սատանայ: Քանզի ո՞վ է մեր յոյս կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ դուք ի Տէր առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի նորա գալստեանն: Զի դուք էք փառք մեր եւ խնդութիւն: 20:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԺԵ. 11:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրախութիւն իմ ի ձեզ իցէ, եւ ձեր ուրախութիւնն լցեալ եղիցի: Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս եւ ես զձեզ սիրեցի: Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց: Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք՝ զոր եսն պատուիրեմ ձեզ: Ոչ եւս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ Տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն, զոր լուայ ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ: Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս. այլ ես ընտրեցի զձեզ, եւ եդի զձեզ. զի դուք երթայցէք եւ պտղաբերք լինիցիք. եւ պտուղն ձեր կացցէ. եւ զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ: 16:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 2:

Ահաւասիկ ես Պօղոս ասեմ ձեզ. զի եթէ թլփատիք, Քրիստոս ինչ ձեզ ոչ օգնէ: Վկայեմ ամենայն մարդոյ՝ որ թլփատիցի, թէ պարտական է զամենայն օրէնսն կատարել: Խափանեալ էք ի Քրիստոսէ՝ որ օրինօքն արդարանայք եւ անկեալ էք ի շնորհաց անտի: Զի մեք հոգւոյն ի հաւատոց յուսոյն արդարութեան ակն ունիմք: Զի ի Քրիստոս Յիսուս ոչ թլփատութիւն ինչ կարող է եւ ոչ անթլփատութիւն. այլ հաւատք սիրով աջողեալք: Բարւոք ընթանայիք. ո՞ կասեցոյց զձեզ ճշմարտութեանն չհաւանել: Զի այն հրապոյրք ոչ յայնմանէ են՝ որ կոչեացն զձեզ: Փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ: Այլ ես յուսացեալ եմ ի ձեզ Տերամբ թէ ոչ այլազգ ինչ խորհիցիք. եւ որ խռովեցուցանէ զձեզ, կրեսցէ դատաստան ո՛ ոք եւ իցէ: Այլ ես, ե՛ղբարք, եթէ թլփատութիւն քարոզէի, ընդէ՞ր տակաւին հալածիմ. ապա ուրեմն խափանեալ իցէ գայթագղութիւն խաչին: Երանի՛ թէ մօտակտուր իսկ լինէին՝ որ զձեզն խռովեցուցանեն: Զի դուք յազատութիւն կոչեցեալ էք, ե՛ղբարք. միայն զի ազատութիւնն ձեր ոչ լինիցի ի պատճառս մարմնոյ, այլ սիրով ծառայեցէք միմեանց: Զի ամենայն օրէնք ի մի բան կատարին. ի Սիրեսցեսն զընկեր քո իբրեւ զանձն քո: Ապա թէ զմիմեանս խածատիցէք եւ ուտիցէք, զգոյշ լերուք՝ գուցէ ի միմեանց սատակիցիք: 15:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ե. 17:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ եղեւ ի միում աւուրց եւ ինքն ուսուցանէր, եւ փարիսեցիքն եւ օրինացն վարդապետք նստէին, որ ժողովեալ էին յամենայն քաղաքաց Գալիլեացւոց եւ Հրէաստանի եւ Երուսաղէմի. եւ զօրութիւն Տեառն էր ի բժշկել զնոսա: Եւ ահա արք բերէին մահճօք զայր մի՝ որ էր անդամալոյծ, եւ խնդրէին զնա մուծանել ի ներքս եւ դնել առաջի նորա: Եւ իբրեւ ոչ գտանէին թէ ընդ որ մուծանիցեն զնա ի ներքս վասն ամբոխին, ելին ի տանիս եւ ի ցուոցն կախեցին զնա, եւ իջուցին մահճօքն հանդերձ ի մէջ՝ առաջի Յիսուսի: Եւ տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ ցնա. Այր դու, թողեալ լիցին քեզ մեղք քո: Սկսան խորհել դպիրքն եւ փարիսեցիք, եւ ասեն. Ո՞ է սա՝ որ խօսի զհայհոյութիւնս. ո՞ կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն Աստուած: Իբրեւ գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա, պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. Զի՞ խորհիք ի սիրտս ձեր: Զի՞նչ դիւրագոյն է, ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ Արի եւ գնա: Այլ զի գի-

տասջիք եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թո-
ղուլ զմեղս. ասէ ցանդամալոյծն. Քեզ ասեմ՝ արի առ զմա-
հիճս քո եւ երթ ի տուն քո: Եւ առժամայն յարուցեալ
առաջի ամենեցուն՝ առ զիւրեւ յորոյ վերայ անկեալն դնէր,
գնաց ի տուն իւր, եւ փառաւոր առնէր զԱստուած: Զար-
մանք կալան զամենեսեան, եւ փառաւոր առնէին զԱս-
տուած. լի եղեն ահիւ եւ ասեն, եթէ Տեսաք այսօր նոր
նշան: 26:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### Սրբոյն Դեմետրեայ վկային եւ Բասիլիսկոսի քահանային:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց
մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսու-
թեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո,
Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԽԹ. Պարծեսցին սուրբքն փառօք. եւ ցնծասցեն
ի հանգիստս իւրեանց:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնութիւն
նմա յեկեղեցիս սրբոց:

Պօղոսի առաքելոյն ի Տիտոսի թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Գ. 3:

Զի էաք երբեմն եւ մեք անմիտք, անհաւանք,
մոլորեալք, ծառայէաք ցանկութեանց եւ պէսպէս ան-
առակութեանց. չարութեամբ եւ նախանձու շրջէաք,
ատեցեալք եւ զմիմեանս ատէաք: Իսկ յորժամ քաղցրու-
թիւն եւ մարդասիրութիւն փրկչին մերոյ Աստուծոյ յայտ-
նեցաւ, ոչ ի գործոց արդարութեան՝ զոր արարաք մեք, այլ
ըստ իւրում ողորմութեանն՝ ապրեցոյց զմեզ ի ձեռն աւա-
զանին միւսանգամ ծննդեանն, եւ նորոգութեամբ Հոգւոյն
սրբոյ. զոր եհեղ ի մեզ առատութեամբ, ի ձեռն Յիսուսի
Քրիստոսի փրկչին մերոյ: Զի արդարացեալք շնորհօքն՝ եղի-
ցուք ժառանգաւորք յուսով կենացն յաւիտենականաց:
Հաւատարիմ է բանս, եւ ի սոյն կամիմ զքեզ հաստատուն



լինել, զի փոյթ արասցեն գործոց բարեաց՝ վերակացու լինել
հաւատացելոցն յԱստուած, զի այն է բարի եւ օգտակար
մարդկան: 8:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զար-
դարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. ԺԳ. 9:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Եւ զձեզ իսկ մատնեսցեն յատեանս, եւ ի ժողովուրդս
տանջիցիք, եւ առաջի դատաւորաց եւ թագաւորաց կայցէք
վասն իմ ի վկայութիւն նոցա եւ ամենայն հեթանոսաց.
բայց նախ պարտ է աւետարանիս քարոզել: Այլ յորժամ
տանիցին զձեզ մատնել, մի՛ յառաջագոյն հոգայցէք եւ մի՛
զմտաւ ածիցէք թէ զի՞նչ խօսիցիք. այլ որ ինչ տացի ձեզ
ի ժամուն յայնմիկ՝ զայն խօսիցիք. զի ոչ դուք էք որ խօսի-
ցիքն՝ այլ Հոգին սուրբ: Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ,
եւ հայր զորդի. եւ յարիցեն որդիք ի վերայ հարց եւ սպա-
նանիցեն զնոսա: Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն
անուան իմոյ. այլ որ համբերեսցէն իսպառ՝ նա կեցցէ: 13:

---

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ԽԱՉԻՆ

### ԽԱՉԳԻՒՏ

Ժամամուտ. Առաջի պատուական ամենայաղթ խաչի
քոյ անկանիմք երկրպագելով, եւ խնդրեմք զթողութիւն
յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զդատապարտու-
թիւն ազգի մարդկան: Եւ այժմ վասն սրբոյ աստուածային
քոյ նշանի՝ շնորհեա զերկնային զխաղաղութիւնդ ամենայն
աշխարհի:

Սղ. Դ. Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. եւ
ետուր ուրախութիւն սրտից մերոց:

Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած. ի նեղու-
թեան ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ եւ լուր
աղօթից իմոց:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին Թղթոյն է ընթերցուածս. ԳԼ· Ա· 18։

Քրիստոս զիս ոչ առաքեաց մկրտել զայլ քարոզել զաւետարանն, ոչ իմաստութեամբ բանի, զի մի՛ պարապեսցի խաչն Քրիստոսի։ Վասն զի բանն խաչին հանդերձ կորստեան՝ հրէից եւ յոյնից, մեզ՝ զորս կայ՝ զօրութիւն Աստուծոյ է։ Զի գրեալ է. Կորուսից զիմաստութիւն իմաստնոց, եւ զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից։ Ո՞ւր իմաստուն, ո՞ւր դպիր, ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ. ո՞չ ապաքէն յիմարեցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ։ Վասնզի իմաստութեամբն Աստուծոյ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութեամբն զԱստուած, հաճեցաւ Աստուած յիմարութեամբ քարոզութեանն ապրեցուցանել զհաւատացեալս։ Եւ որովհետեւ հրէայք նշան հայցեն, եւ հեթանոսք իմաստութիւն խնդրեն. մեք քարոզեսցուք զխաչեալն Քրիստոս, հրէից գայթագղութիւն եւ հեթանոսաց յիմարութիւն. բայց նոցին իսկ կոչեցելոցն հրէից եւ հեթանոսաց, զՔրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն։ 24։

Ալէլուիա, ալէլուիա. Տուր զօրութիւն ծառայի քոյ. կեցո զորդի աղախնոյ քոյ. եւ արա առ իս նշան բարութեան։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

ԳԼ· ԻԴ· 27։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարեւելից եւ երեւի մինչեւ յարեւմուտս, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ։ Ո՛ւր որ դէշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք։ Ի՛ղուաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի, եւ լուսին ոչ տացէ լոյս իւր, եւ աստեղք անկցին յերկնից, եւ զօրութիւնք երկնից շարժեսցին։ Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս. եւ յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի, եւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ եւ փառաւք բազմաւք։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, եւ ժողովեսցեն զընտրեալս նորա ի չորից հողմոց, ի ծագաց երկնից մինչեւ ի ծագս նոցա։ Ի թզենւոյ անտի ու-



սարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին եւ տերեւն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն։ Նոյնպէս եւ դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գիտասջիք թէ մերձ է ի դուրս։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եղիցի։ Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի՛ անցցեն։ Այլ վասն աւուրն այնորիկ եւ ժամու, ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք երկնից եւ ոչ Որդի, բայց միայն Հայր։ 36։

---

Ո՞ւ վաղեմ ասվըռ-ընեմ կոռոսի է Նոյեմբեր

## ՅՕՆ ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ

Ղայս կոչի կոլեն։

Ջամամո՞ռ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր։

Սղ· կէ· Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի։

Պարծեսցին սուրբքն փառաք. եւ ցնծասցեն ի հանգիստս իւրեանց։

Պօղոսի առաքելոյն ի Հռոմայեցւոց Թղթոյն է ընթերցուածս. ԳԼ· ԺՌ· 1։

Այսուհետեւ եւ մեք՝ որ այսչափ շուրջ զմեզ ամբեալ ունիմք զբազմութիւն վկայից, զհպարտութիւն զամենայն ի բաց ընկեցուք եւ զմեզ կարեւորս. համբերութեամբ ընթացուք ի պատերազմին՝ որ առաջի կայ մեզ։ Հայեցուք ի զօրագլուխն հաւատոց եւ ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ուրախութեանն որ նմա առաջի կայր, յանձն առ զխաչն, արհամարհեաց զամօթն, նստաւ ընդ աջմէ աթոռոյն Աստուծոյ։ Ղէ ածէք զմտաւ, որ զայսպիսի համբերութիւն ի մեղաւորաց հակառակութենէ անտի կրեաց. զի մի՛ աշխատ լինիցիք անձամբք ձերովք եւ լքանիցիք։ Դուք չեւ եւս արեամբ չափ պատերազմեալք՝ հակառակ կացէք

մեղացն, եւ մոռացարուք զմխիթարուԹիւնն, որ ընդ ձեզ իբրեւ ընդ որդեակս խօսի: Որդեակ իմ, մի՛ լքանիր ի խրատու Տեառն, եւ մի՛ վհատիցիս՝ յանդիմանեալ ի նմանէ: Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի՝ զոր ընդունի: Ի խրատու համբերուԹեան կայք, իբրեւ յորդիս մատուցեալ է ի ձեզ Ընտուած: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Պարծեսցին սուրբքն փառօք եւ ցնծասցեն ի հանգիստս իւրեանց. եւ բարձր արասցեն զԸնտուած բերանովք իւրեանց:

Սրբոյ Ե֊ետարանիս որ ըստ ՄատԹէոսի.

Գլ· ԺԳ· 43:

Տէրն մեր Յիսուս Ք֊րիստոս ասէ.

Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն յարքայուԹեան երկնից: Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: Պարձեալ՝ նման է արքայուԹիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ՝ Թագոյց. եւ ի խնդուԹենէ անտի երԹայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի, եւ գնէ զագարակն զայն: Պարձեալ՝ նման է արքայուԹիւն երկնից առն վաճառականի՝ որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս: Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երԹեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր, եւ գնեաց զայն մարգարիտ: Պարձեալ՝ նման է արքայուԹիւն երկնից ուեւկանի արկելոյ ի ծով եւ յամենայն ազգաց ժողովելոյ: Զոր՝ իբրեւ լցաւ, հանեալ ի ցամաք եւ նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս, եւ զխոտանն ի բաց ընկեցին: Այնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք եւ մեկնեսցեն զչարս ի միջոյ արդարոց, եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ եւ կրճել առամանց: Ասէ ցնոսա Յիսուս. Համարուիք զայս ամենայն. ասեն ցնա. Այո՛ Տէր: Եւ նա ասէ ցնոսա. Ա֊ան այսորիկ ամենայն դպիր աշակերտեալ արքայուԹեան երկնից՝ նման է առն տանուտեառն, որ հանէ ի գանձէ իւրմէ զնոր եւ զհին: 52:



## ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Սրբոյն Աստուածասէր քահանային եւ վարուսի եւ Թեոդիտեայ եւ որդւոց նորա եւ որոց ընդ նոսա:

Յոհաննու. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսուԹեամբ սոցա եւ աղօԹիւք զկենդանուԹիւնս մեր խաղաղացո, Ընտուած, որպէս մարդասէր:

Սղ· ԺԴ· Երկիւղած Տեառն փառաւոր առնէ, որ երդնու ընկերի իւրում եւ ոչ ստէ:

Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քում. կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո:

Պօղոսի առաքելոյն ի ՏիմոԹէոսի երկրորդ ԹղԹոյն է ընԹերցուածս. Գլ· Բ. 3:

Ա֊շտակից լեր իբրեւ զբարւոք զինուոր Ք֊րիստոսի Յիսուսի: Ոչ ոք զինուորեալ աստէն ընդ կեանս աշխարհիս պատաղէ, եԹէ զօրավարին հաճոյ լինիցի: Եւ եԹէ մարտիկ ոք իցէ, ոչ պսակի՝ եԹէ ոչ ըստ օրինին մարտիցէ: Եւ հողագործին աշխատելոյ պարտ է նախ ի պտղոյն վայելել: Լմա զինչ ասեմ. տացէ քեզ Տէր իմաստուԹիւն յամենայնի: Յիշեա զՔ֊րիստոս Յիսուս յարուցեալ ի մեռելոց ի զաւակէ ԴաւԹի ըստ աւետարանիս իմում, յորում չարչարիմ կապանօք չափ իբրեւ զչարագործ. այլ բանն Ընտուծոյ ոչ եԹէ կապեալ իցէ: Ա֊ան այնորիկ ամենայնի համբերեմ վասն ընտրելոցն, զի եւ նոքա փրկուԹեանն հասանիցեն որ ի Ք֊րիստոս Յիսուս երկնաւոր փառաւքն հանդերձ: 10:

Ալէլուիա, ալէլուիա. Ա֊ոչխարք ոսոց է յայնէն:

Սրբոյ Ե֊ետարանիս որ ըստ ՄատԹէոսի.

Գլ· ԺԹ· 27:

Ընդ Տէրն մեր Յիսուս Ք֊րիստոս.

Յայնժամ պատասխանի ետ Պետրոս եւ ասէ ցնա. Ե֊ասիկ մեք Թողաք զամենայն եւ եկաք զկնի քո. արդ զի՞նչ լինիցի մեզ: Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ասեմ ձեզ. զի դուք

որ եկիք զկնի իմ, ի միւսանգամ գալստեան՝ յորժամ նստցի Որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, նստջիք եւ դուք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգն Իսրայելի։ Եւ ամենայն որ ոք եթող զտուն կամ զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ զմայր կամ զկին կամ զորդիս կամ զագարակս վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ եւ զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ։ 29։

---

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### Սրբոց Հիպերիքեանց:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր։

Սղ. ՃԺԵ. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ։

Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ։

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Դ. 6։

Զի Աստուած՝ որ ասաց ի խաւարի լոյս ծագել, որ եւ ծագեաց իսկ ի սիրտս մեր ի լուսաւորութիւն գիտութեան փառացն Աստուծոյ ի դէմս Յիսուսի Քրիստոսի։ Այսուհետեւ ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս, զի առաւելութիւն զօրութեանն իցէ յԱստուծոյ, եւ ոչ ի մէնջ։ Յամենայնի նեղեալք, այլ ոչ նուազեալք. կարօտեալք, այլ ոչ տարակուսեալք. հալածեալք, այլ ոչ լքեալք. չարչարեալք, այլ ոչ սատակեալք։ Յամենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմինս մեր կրեսցուք, զի եւ կեանքն Յիսուսի ի մարմինս մեր յայտնեսցին։ Քանզի միշտ մեք՝ որ կենդանիքս եմք, ի մահ մատնիմք վասն Յիսուսի, զի եւ կեանքն Յիսուսի յայտնի լիցին ի մահկանացու մարմինս մեր։

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի Յայնէն։



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ժ. 21։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ի նմին ժամու ցնծացաւ (Յիսուս) Հոգւովն սրբով եւ ասէ. Գոհանամ զքէն, Հայր, Տէր երկնից եւ երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց եւ յայտնեցեր զայս տղայոց։ Այո՛, Հայր, զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո։ Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ. եւ ոչ ոք գիտէ՝ եթէ ո՛վ է Որդի, եթէ ոչ՝ Հայր, եւ ո՛ է Հայր՝ եթէ ոչ Որդի, եւ ում կամիցի Որդին յայտնել։ Եւ դարձեալ առանձինն առ աշակերտսն ասէ. Երանի աչաց, որ տեսանիցեն զոր տեսանէքդ։ Ասեմ ձեզ. զի բազում մարգարէք եւ թագաւորք կամեցան տեսանել զոր դուքդ տեսանէք, եւ ոչ տեսին. եւ լսել զոր լսէքդ, եւ ոչ լուան։ 24։

---

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք։

Սղ. ՁԵ. Կեցո զծառայս քո Աստուած իմ. որ ի քեզ յուսացայ։

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 16։

Բայց զայս ասեմ. հոգւով գնացէք, եւ զցանկութիւն մարմնոյ մի՛ կատարէք։ Զի մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, եւ հոգի հակառակ մարմնոյ. եւ զի սոքա միմեանց հակառակ են, մի՛ զոր կամիցիքն՝ զայն առնիցէք։ Իսկ եթէ հոգւով վարիք, ապա չէք ընդ օրինօք։ Զի յայտնի են գործք մարմնոյ. այսինքն են՝ շնութիւն, պոռնկութիւն, գիջութիւն, պղծութիւն, կռապաշտութիւն, կախարդու-

թիւն, թշնամութիւն, հեռ, նախանձ, բարկութիւն, հակառակութիւնք, երկպառակութիւնք, հերձուածք, չարակնութիւնք, սպանութիւնք, արբեցութիւնք, անառակութիւնք եւ որ ինչ սոցին նման են։ Զոր յառաջագոյն իսկ ասեմ ձեզ, որպէս եւ կանխաւն ասէի, թէ որ զայսպիսի ինչ գործեն՝ զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն։ Իսկ պտուղ Հոգւոյն այս է. սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն. զայսպիսեաց աստի օրէնքն չեն հակառակ։ Իսկ որ Քրիստոսեանքն են՝ զմարմինս իւրեանց ի խաչ հանին կարեօք եւ ցանկութեամբք հանդերձ։ Եթէ կեամք հոգւով՝ ընդ հոգւոյն եւ միաբանեսցուք։ Եւ մի՛ լիցուք սնապարծք միմեանց ձայն տալով, եւ ընդ միմեանս նախանձելով։ 26։

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Է. 36։

ԶՏէրն մեր Յիսուս Քրիստոս.

Աղաչէր (զնա) ոմն ի փարիսեցւոցն զի կերիցէ ճաշ ընդ նմա. եւ մտեալ ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ։ Եւ կին մի էր ի քաղաքին մեղաւոր. իբրեւ գիտաց թէ բազմեալ է ի տան փարիսեցւոյն, բերեալ շիշ մի իւղոյ ազնուի, կայր յետոյ առ ոտս նորա, լայր, եւ արտասուօքն սկսաւ թանալ զոտս նորա եւ հերով գլխոյ իւրոյ ջնջէր, եւ համբուրէր զոտս նորա, եւ օծանէր իւղովն։ Եւ տեսեալ փարիսեցւոյն՝ որ կոչեաց զնա, ասէր ընդ միտս իւր. Սա թէ մարգարէ ոք էր, ապա գիտէր թէ ո՛վ եւ որպիսի՛ ոք կին մերձենայ ի սա. զի մեղաւոր է։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Սի՛մովն, ունիմ ինչ ասել քեզ. եւ նա ասէ. Ասա վարդապետ. եւ ասէ. Երկու պարտապանք էին ուրումն փոխատուի. մինն պարտէր հինգ հարիւր դահեկան, եւ միւսն յիսուն։ Եւ իբրեւ ոչ գոյր նոցա հատուցանել, երկոցունցն շնորհեաց. արդ ասա՝ ո՞վ առաւել սիրեսցէ զնա։ Ասէ Սիմովն. Ինձ այսպէս թուի՝ եթէ որում զբազումն շնորհեաց։ Եւ նա ասէ ցնա. Ուղիղ դատեցար։ Եւ դարձեալ ի



կինն կողմն, ասէ ցՍիմովն. Տեսանե՞ս զայս կին. մտի ի տուն քո՝ ջուր ոտից իմոց ոչ ետուր. իսկ սա արտասուօք իւրովք եթաց զոտս իմ, եւ հերով իւրով ջնջեաց։ Համբոյր մի դու ոչ ետուր ինձ. սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ՝ ոչ դադարեաց ի համբուրելոյ զոտս իմ։ Իւղով զգլուխ իմ ոչ օծեր. սա իւղով անուշիւ օծ։ Վասն որոյ ասեմ քեզ. թողեալ լիցին սմա մեղք իւր բազում, զի յոյժ սիրեաց. զի որում շատ թողուցու՝ շատ սիրէ, եւ որում սակաւ՝ սակաւ։ Եւ ասէ ցնա. Թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ սկսան որ բազմեալն էին ընդ նմա՝ ասել ընդ միտս իւրեանց. Ո՞վ է սա՝ որ զմեղս թողու։ Եւ նա ասէ ցկինն. Հաւատք քո կեցուցին զքեզ. երթ ի խաղաղութիւն։ 50։

---

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Սրբոյն Սեւերիանոսի Սեբաստացւոյն, եւ Բաբելայ Ծերոյն եւ ՁԴ աշակերտաց նորին։

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր։

Սղ. ՃԺԵ. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ։

Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ։

Յովհաննու առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 7։

Սի՛րելիք, ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ ձեզ, այլ զհին պատուիրանն՝ զոր ի սկզբանէ ունէիք. եւ հին պատուիրանն՝ բանն է զոր լուարուք։ Դարձեալ նոր պատուիրան գրեմ ձեզ, որ է ճշմարտիւ ի նմա եւ ի ձեզ. զի խաւարն անցանէ, եւ լոյսն ճշմարիտ արդէն իսկ երեւի։ Որ ասէ եթէ ի լոյսն իցէ, եւ զեղբայր իւր ատիցէ, սուտ է, եւ ի խաւարի է տակաւին։ Որ սիրէ զեղբայր իւր, ի լոյս բնակէ,

եւ գայթագղութիւն ի նմա չկիք: Լաւ որ առեայ զեղբայր իւր, ի խաւարի է եւ ընդ խաւար շրջի, եւ ոչ գիտէ յո՛ երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նորա: Գրեմ ձեզ, որդեակք, զի թողեալ են ձեզ մեղքն ձեր վասն անուան նորա: Գրեմ ձեզ, հարք, զի ծանեայք դուք զայն՝ որ ի սկզբանէն է: Գրեմ ձեզ, երիտասարդք, զի յաղթեցէք դուք չարին: Գրեցի ձեզ, մանկունք, զի ծանեայք դուք զՀայրն: Գրեցի ձեզ, հարք, զի ծանեայք դուք զայն որ ի սկզբանէն է: Գրեցի ձեզ, երիտասարդք, զի էք դուք հզօրացեալք, եւ բանն Աստուծոյ ի ձեզ բնակէ, եւ յաղթեցէք դուք չարին: 14:

Ալէլուիա, ալէլուիա. Մատթէոսոյ է Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ· ԺԶ· 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայթագղեսջիք: Ի ժողովրդոց իւրեանց Հանիցեն զձեզ. այլ եկեսցէ ժամանակ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ: Եւ զայն արասցեն ընդ ձեզ, քանզի ոչ ծանեան զՀայր եւ ոչ զիս: Այլ եւ զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ եկեսցէ ժամանակ, յիշեցէք թէ ես ասացի ձեզ: Զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի: 5:

---

## ՅՕԹՆԵՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Յոհաննէս. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ· Ընդ· Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի պանչելիս արար:



Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ· Զ· 1:

Ե՛ղբարք, եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք ի ձէնջ յինչ եւ իցէ յանցանս, դուք որ հոգեւորքդ էք՝ հաստատեցէք զայնպիսին հոգւով հեզութեան. զգոյշ լինիցիք անձանց՝ զի մի եւ դուք փորձիցիք: Զմիմեանց բեռն բարձէք, եւ այնպէս կատարեցէք զօրէնսն Քրիստոսի: Եթէ համարիցի ոք լինել ինչ, եւ չիցէ, զանձն իւր խաբէ: Զգործ իւր կշռեսցէ իւրաքանչիւր ոք, եւ ապա անձին իւրում միայն պարծանս տացէ, եւ մի՛ առ ընկերասն: Զի իւրաքանչիւր ոք զիւր բեռն բառնալոց է: Հաղորդութիւն արասցէ աշակերտն վարդապետին յամենայն բարութիւնս: Մի՛ խաբիք. Աստուած ոչ արհամարհի: Զի զոր ինչ սերմանէ մարդ՝ զնոյն եւ հնձեսցէ. որ սերմանէ ի մարմին իւր, ի մարմնոյ անտի հնձեսցէ զապականութիւն. եւ որ սերմանէ ի հոգին, ի հոգւոյ անտի հնձեսցէ զկեանսն յաւիտենից: Այլ զբարիս գործել մի՛ ձանձրասցուք, զի ի ժամանակի իւրում հնձեսցուք առանց լքանելոյ: Ընդհակառակ մինչ դեռ ժամանակս ի ձեռս է՝ գործեսցուք զբարիս առ ամենեսեան, մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ: Տեսէք որպիսի գրով գրեցի առ ձեզ՝ իմով ձեռամբ: Զի որ միանգամ կամին բարեմարդիկ լինել մարմնով, նոքա ստիպեն զձեզ թլփատել. միայն զի մի՛ զխաչին Քրիստոսի զհետ երթայցեն: Քանզի որ թլփատեալքն իսկ իցեն, նոքա զօրէնսն ոչ պահեն. այլ կամին զի ձեւալքն իսկ իցեն, նոքա զօրէնսդ պարծեսցին: 13:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոյ է Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ· Ը· 4:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ե՛ւ ի ժողովել բազում ժողովրդոց, եւ ըստ քաղաքաց քաղաքաց եկելոց առ նա, ասէ առակաւ. Ել սերմանացան սերմանել զսերմանիս իւր. եւ ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ եւ եղեւ կոխան, եւ թռչունք երկնից կերան զնա: Եւ այլն անկաւ յապառաժի. եւ ընդ

բուսանելն չորացաւ, առ ի չգոյէ հիւթոյ։ Եւ այլն անկաւ ի մէջ փշոց, եւ ընդ նմին բուսեալ փշոցն՝ հեղձուցին զնա։ Եւ այլն անկաւ յերկիր բարի եւ պարարտ, եւ բուսեալ արար պտուղ հարիւրապատիկ։ Զայս իբրեւ խօսեցաւ, ասէ. Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ Հարցանէին զնա աշակերտքն, թէ զի՞նչ իցէ առակն։ Եւ նա ասէ. Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան Աստուծոյ. բայց այլոցն առակօք, զի տեսցեն եւ մի՛ տեսցեն, եւ լուիցեն եւ մի՛ իմասցին։ Բայց առակն այս ինչ է. սերմն բանն Աստուծոյ է։ Եւ որք առ ճանապարհաւն՝ այնոքիկ են որ լսենն. եւ ապա գայ սատանայ՝ հանէ զբանն ի սրտից նոցա, զի մի՛ հաւատասցեն եւ ապրեսցին։ Եւ որք յապառաժին՝ որք յորժամ լսիցեն՝ խնդութեամբ ընդունին զբանն, եւ արմատս ոչ ունիցին. որք առ ժամանակ մի հաւատան, եւ ի ժամանակի փորձութեան հեռանան։ Իսկ որ ի մէջ փշոցն անկաւ՝ նոքա են, որ իբրեւ լսեն զբանն, եւ ի հոգս եւ ի մեծութիւն եւ ի ցանկութիւն աշխարհիս զբաղեալ՝ հեղձնուն եւ անպտուղ լինին։ Իսկ որ յերկիրն պարարտ, որոց բարւոք եւ զուարթագին սրտիւ լուեալ զբանն՝ ընդունին, եւ տան պտուղ համբերութեամբ։ Ոչ ոք լուցանէ ճրագ եւ թաքուցանէ ընդ կարասեաւ կամ դնէ ընդ մահճօք. այլ ի վերայ աշտանակի դնէ, զի որք մտանեն՝ զլոյս տեսցեն։ 16։

---

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### Սրբոյն Բարաղամու Անտիոքացւոյն, եւ Եօթն մանկանցն Եփեսոսի:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր։

Սղ. ՂԱ. Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին. որպէս զմայրսն Լիբանանու բազումք եղիցին։

Բարի է խոստովան լինել Տեառն. եւ սաղմոս ասել անուան քում, բարձրեալ։



Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. ԺԱ. 32։

Եւ արդ զի՞նչ եւս ասացից. զի չէ բաւական ժամանակս պատմելոյ վասն Գեդէոնի, Բարակայ, Սամփսոնի, Յեփթայայ, Դաւթի եւ Սամուէլի եւ այլոց մարգարէիցն. որք հաւատովք պարտեցին զթագաւորութիւնս, գործեցին զարդարութիւն, հասին աւետեաց, խցին զբերանս առիւծուց, շիջուցին զզօրութիւն հրոյ, ապրեցան ի բերանոյ սրոյ, զօրացան ի տկարութենէ, եղեն զօրաւորք ի պատերազմի, առին զբանակս օտարաց։ Ընկալան կանայք ի յարութենէ զմեռեալս իւրեանց. կէսք կոշկոճեցան, եւ չեւ եւս ընկալան զփրկութիւն, զի լաւագոյն յարութեանն հասանիցեն։ Եւ կէսք զտանջանաց եւ զգանից զփորձ առին, զկապանաց եւ զբանտից։ Քարկոծեցան, սղոցեցան, փորձեցան, սպանմամբ սրոյ մեռան, շրջեցան լեշկմաշկօք եւ մորթովք այծենեօք. կարօտեալք, նեղեալք, չարչարեալք։ Զորս ոչ արժէ աշխարհս, յանապատի մոլորեալք եւ ի լերինս եւ յայրս եւ ի փապարս երկրի։ Եւ սոքա ամենեքին վկայեալք ի հաւատոցն, չեւ եւս ընկալան զաւետիսն, Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատարեսցին։ 40։

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի յայնէն։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհանու.

Գլ. ԺԶ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայթագղեսջիք։ Ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ. այլ եկեսցէ ժամանակ՝ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ։ Եւ զայն արասցեն ընդ ձեզ, քանզի ոչ ծանեան զՀայր եւ ոչ զիս։ Այլ եւ զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ եկեսցէ ժամանակ, յիշիցէք թէ ես ասացի ձեզ։ Զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի։ 5

---

## ՈՒԹԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ԽԱՉԻՆ

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. ԿԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն յԵփեսացւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Ա. 1:

Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամօքն Աստուծոյ, սրբոց որ են յԵփեսոս եւ հաւատացելոց ի Քրիստոս Յիստուս: Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ: Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ յերկնաւորս ի Քրիստոս: Որպէս ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն աշխարհի, լինել մեզ սուրբս եւ անարատս առաջի նորա սիրով: Յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդեգրութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ի նոյն ըստ հաճութեան կամաց իւրոց, ի գովեստ փառաց շնորհաց իւրոց, որով զուարճացոյց զմեզ սիրելեաւն: Որով ունիմք զփրկութիւն ի ձեռն արեան նորա զթողութիւն մեղաց ըստ մեծութեան շնորհաց իւրոց, որ առաւելաւ ի մեզ ամենայն իմաստութեամբ եւ գիտութեամբ: Եցոյց մեզ զխորհուրդս կամաց իւրոց ըստ հաճութեան իւրում. զոր յառաջագոյն եդ նովաւ, ի տնտեսութիւն լրման ժամանակաց, բովանդակել զամենայն Քրիստոսիւ, որ ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի ի նոյն: Որով եւ վիճակեցաք յառաջագոյն հրաւիրեալք ըստ յառաջադրութեանն Աստուծոյ, որ զամենայն յաջողէ ըստ խորհրդոց կամաց իւրոց, լինել մեզ ի գովեստ փառաց նորա յառաջագոյն յուսացելոցս ի Քրիստոս: Որով եւ դուք իբրեւ լուարուք զբան ճշմարտութեան, զաւետարանն փրկութեան ձերոյ, որով եւ հաւատացեալ կնքեցայք Հոգւոյն սրբոյ աւետեաց, որ է առհաւատչեայ ժառանգութեան մերոյ, ի փրկութիւն նուաճութեան, ի գովեստ փառաց նորա: 14:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ը. 17:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Չիք ինչ ծածուկ՝ որ ոչ յայտ լիցի. եւ ոչ գաղտնի որ ոչ ծանիցի եւ եկեսցէ ի յայտ: Տեսէք այսուհետեւ զիարդ լսէքդ. զի ոյր գուցէ՝ տացի նմա, եւ ոյր ոչն գուցէ, եւ զոր կարծէն թէ ունիցի՝ բարձցի ի նմանէ: Եկին առ նա մայրն եւ եղբարք իւր, եւ ոչ կարէին հասանել ի նա վասն բազմութեանն: Ազդ եղեւ նմա եւ ասեն. Մայր քո եւ եղբարք քո կան արտաքոյ եւ կամին զքեզ տեսանել: Եւ ասէ ցնոսա. Մայր իմ եւ եղբարք իմ սոքա են, որ զբանն Աստուծոյ լսեն եւ առնեն: 21:

---

## ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### Սրբոյն Ստեփանոսի Հռովմայ հայրապետին, եւ քահանայից եւ սարկաւագաց եւ ժողովրդոց:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Ողբ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն յԵփեսացւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Գ. 1:

Վասն այսորիկ ես Պօղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի վասն ձեր հեթանոսաց. Թերեւս լուեալ իցէ ձեր զտնտեսութիւն շնորհացն Աստուծոյ, որ տուեալ են ինձ ի ձեզ: Զի ըստ յայտնութեան ցուցաւ ինձ խորհուրդն, որպէս յառաջագոյն գրեցի առ ձեզ սակաւուք, առ ի կարող լինելոյ ընթեռնուլ եւ ի միտ առնուլ զիմաստութիւն զիմ ի խորհրդեանն Քրիստոսի: Զի այլոց ազգաց ոչ ցուցաւ որդւոց մարդկան, որպէս այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց առաքելոց եւ մարգարէից Հոգւովն, լինել հեթանոսաց ժառանգակիցս եւ մարմնակիցս եւ հաղորդս աւետեացն ի Քրիստոս Յիսուս աւետարանաւն, որոյ եղէ ես սպասաւոր ըստ պարգեւաց շնորհացն Աստուծոյ՝ որ տուան ինձ ըստ յաջողութեան զօրութեան նորա: Ինձ՝ որ տրուպս եմ ամենայն սրբոց, տուան շնորհքս այս, ի հեթանոսս աւետարանել զանքնին մեծութիւնն Քրիստոսի, եւ լուսաւոր առնել զամենեսեան, եթէ զի՞նչ է տնտեսութիւն խորհրդոյն, որ ծածկեալ էր յամենայն յաւիտեանց առ Աստուծոյ՝ որ զամենայն ինչ արար: Զի յայտնեսցի արդ իշխանութեանց եւ պետութեանց որ յերկինս են՝ ի ձեռն եկեղեցւոյ բազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ, ըստ յառաջադրութեանն յաւիտեանցն՝ զոր արար ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ժ. 11:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց: Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն եւ փախչի. եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ. քանզի վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն: Ես եմ հովիւն քաջ, եւ ճանաչեմ զիմսն եւ ճանաչիմ յիմոցն: Որպէս



գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայր. եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց: Նա եւ այլ եւս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ. եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր, եւ ձայնի իմում լուիցեն, եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ: 16:

---

## ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### Սրբոյն Ակիփսիմեայ եպիսկոպոսին եւ Յովսեփայ քահանային եւ Այիթալայ սարկաւագին եւ Պղատոնի վկային:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 17:

Որ բարւոք վերակացու լինիցին երիցունք՝ կրկին պատուոյ արժանի եղիցին. մանաւանդ որ աշխատիցին բանիւ եւ վարդապետութեամբ: Քանզի ասէ գիր. Մի՞ կապեսցես զցռուկ եզին կալոտւոյ. եւ արժանի է մշակն վարձու իւրոյ: Զերիցուէ չարախօսութիւն մի՛ ընդունիցիս. բայց եթէ երկուք եւ երիւք վկայիւք: Իսկ որ մեղանչենն՝ առաջի ամենեցուն յանդիմանեա, զի եւ այլքն երկիցեն: Վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի եւ ընտրելոց հրեշտակաց, զի զայդ պահեսցես առանց մտահաճութեան. մի՛ ինչ առնել աչառանօք: 21:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Թ. 23:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Եւ ասէր առ ամենեսին. Եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն եւ առցէ զխաչ իւր հանապազ եւ եկեսցէ զհետ իմ: Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա, եւ որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ կեցուսցէ զնա: Զի՞նչ օգուտ է մարդոյ եթէ զաշխարհ շահեսցի, եւ զանձն իւր կորուսցէ կամ տուժեսցի: Զի որ ամօթ համարեսցի զիս եւ զբանս իմ, զնա եւ Որդի մարդոյ յամօթ արասցէ՝ յորժամ գայցէ փառօք իւրովք եւ Հօր եւ հրեշտակաց սրբոց: Բայց արդարեւ ասեմ ձեզ, եթէ են ոմանք ի դոցանէ որ այդր կան՝ որք մի՛ ճաշակեսցեն զմահ, մինչեւ տեսցեն զարքայութիւն Աստուծոյ: 27:

---

## ՈՒԹԵՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՉԵ. Կեցո զծառայս քո Աստուած իմ. որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն յԵփեսացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 15:

Վասն այնորիկ եւ ես իբրեւ լուայ զհաւատսն ձեր որ ի Տէր Յիսուս, եւ զսէրն որ ընդ ամենայն սուրբս, ոչ դադարեմ ի գոհանալոյ վասն ձեր՝ յիշել զձեզ յաղօթս: Զի Աստուած Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ Հայրն փառաց տացէ ձեզ զհոգին իմաստութեան եւ յայտնութեան գիտութեամբն իւրով, լուսաւոր առնել զաչս սրտից առ ի գիտելոյ մեզ՝ զինչ է յոյս կոչման նորա, եւ զինչ է մեծութիւն փառաց ժառանգութեան նորա ի սուրբս. եւ զինչ է առաւելութիւն մեծութեան զօրութեան նորա ի մեզ հաւատացեալս՝ ըստ յաջողութեան կարողութեան զօրութեանն իւրոյ, զոր յաջողեաց ի Քրիստոս: Զի յարոյց զնա ի մեռելոց եւ նստոյց ընդ աջմէ իւրմէ յերկնաւորս, ի վերայ ամենայն իշխանութեան եւ պետութեան եւ զօրութեան եւ տէրութեան եւ ամենայն անուան անուանելոյ, ոչ միայն յաշխարհիս յայսմիկ, այլ եւ ի հանդերձելումն: Եւ զամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից նորա, եւ զնա եդ գլուխ ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ, որ է մարմին նորա. լրումն որ զամենայն յամենայնի լնու: Եւ դուք՝ որ մեռեալն էիք ի մեղս ձեր եւ յանցանս, յորս երբեմն գնայիք ըստ յաւիտենի աշխարհիս այսորիկ, ըստ իշխանին իշխանութեան օդոյս այսոյ, որ այժմս ընդմտեալ է յորդիսն ապստամբութեան: Յորս եւ մեք ամենեքեան շրջէաք երբեմն ի ցանկութիւնս մարմնոյ մերոյ, եւ առնէաք զկամս մարմնոյ եւ զմտաց, եւ էաք արդարեւ որդիք բարկութեան իբրեւ այլքն: Բ. 3:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ը. 22:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ եղեւ ի միում աւուրց ինքն ել ի նաւ եւ աշակերտքն նորա, եւ ասէ ցնոսա. Եկայք անցցուք յայնկոյս ծովակիս. եւ գնացին: Եւ մինչ դեռնաւէին՝ ի քուն եմուտ. եւ էջ մրրիկ հողմոյ ի ծովակն եւ ուռնոյր, եւ տագնապէին: Մատուցեալ զարթուցին զնա եւ ասեն. Վարդապետ վարդապետ, կորնչիմք աւասիկ: Եւ նա յարուցեալ սաստեաց հողմոյն եւ խռովութեան ջրոցն, եւ հանդարտեցին, եւ եղեւ խաղաղութիւն: Ասէ ցնոսա. Ո՞ւր են հաւատք ձեր. եւ զահի հարեալ զարմացան, եւ ասէին ցմիմեանս. Ո՞վ արդեօք իցէ սա՝ զի եւ հողմոց եւ ջրոց հրաման տայ, եւ հնազանդին սմա: 25:

---

## ՈՒԹԵՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

**Սրբոց հայրապետացն Մետրոփանոսի, Աղեքսանդրոսի եւ Պօղոսի Խոստովանողին, եւ սրբոց նոտարացն Մարկիանոսի եւ Մարտիրոնի:**

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցէք զաթոռ ի յերկրի. առաքելական առէք զպատիւ յերկնուստ, ծառայք Քրիստոսի ո՛վ երանելիք ի հարս սուրբ հայրապետք: Քանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. ԺԳ. 7:

Յիշեցէք զառաջնորդս ձեր, որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն: Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեանս: Յուսմունս պէսպէսս եւ յօտարաձայնս մի՛ դանդաչէք. զի լաւ է շնորհօք հաստատել զսիրտս, եւ ոչ կերակրովք, որովք ոչ ինչ օգտեցան՝ որ այնպէսն գնացին: 9:

Ալէլուիա. ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Դ. 23:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ շրջէր (Յիսուս) ըստ ամենայն կողմն Գալիլեացւոց. ուսուցանէր ի ժողովուրդս նոցա եւ քարոզէր զաւետարանն արքայութեան, եւ բժշկէր զամենայն հիւանդութիւնս եւ զամենայն ախտս ի ժողովրդեանն: Եւ ել լուր նորա ընդ



ամենայն երկիրն Ասորւոց, եւ մատուցին առ նա զամենայն հիւանդս՝ որ նեղեալ էին ի պէսպէս ցաւս եւ ի տաջանս, եւ զդիւահարս եւ զլուսնոտս եւ զանդամալոյծս. եւ բշկեաց զնոսա: Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազումք ի Գալիլեէ եւ ի Դեկապոլեայ եւ յԵրուսաղեմէ եւ ի Հրէաստանէ եւ յայնկոյս Յորդանանու, եւ բժշկեաց զնոսա: 25:

---

## ՈՒԹԵՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն յԵփեսացւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Բ. 4:

Այլ Աստուած՝ որ մեծն է ողորմութեամբ, վասն բազում՝ սիրոյն իւրոյ զոր սիրեացն զմեզ, մինչ դեռ մեռեալն էաք ի մեղս մեր, կենդանիս արար զմեզ ի Քրիստոս. քանզի շնորհօք ապրեցաք: Ընդ նմին յարոյց եւ ընդ նմին նստոյց յերկնաւորս ի Քրիստոս Յիսուս: Զի ցուցցէ ի յաւիտեանսն որ գալոցն են՝ զառաւել մեծութիւն շնորհացն իւրոց քաղցրութեամբ ի մեզ ի Քրիստոս Յիսուս: Զի շնորհօք նորա էք փրկեալք ի ձեռն հաւատոցն. եւ այս ոչ ի ձէնջ, այլ Աստուծոյ պարգեւ է. ոչ ի գործոց, զի մի՛ ոք պարծեսցի: Զի նորա արարածք եմք, հաստատեալք Քրիստոսիւ Յիսուսիւ ի գործս բարութեան, յորս յառաջագոյն պատրաստեաց Աստուած, զի ի նոյնս գնասցուք: Վասն որոյ եւ դուք յիշեցէք՝ զի երբեմն հեթանոսք էիք մարմնով, որ կոչեցեալն են անթլփատութիւն՝ յանուանեալ թլփատութենէ անտի մարմնաւոր ձեռագործին: Զի էիք ի ժամանակին յայնմիկ առանց Քրիստոսի (եւ օտարացեալք յառաքինութենէն Իսրայէլի) եւ տարագիրք յուխտից աւետեացն, եւ յոյս ինչ

ոչ ունէիք, եւ անաստուածք էիք յաշխարհի: Իսկ այժմիկ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, դուք որ երբեմն հեռաւորն էիք, մերձաւորք եղերուք արեամբն Քրիստոսի: Զի նա է խաղաղութիւն մեր՝ որ արար զերկոսեան մի, եւ զմիջնորմն ցանկոյն քակեաց, զթշնամութիւն ի մարմնի իւրում, եւ զօրէնս պատուիրանացն հրամանօքն խափանեաց. զի զերկոսեան հաստատեսցէ ինքեամբ ի մի նոր մարդ, եւ արասցէ խաղաղութիւն, եւ հաշտեցուսցէ զերկոսին միով մարմնով ընդ Աստուծոյ խաչիւն իւրով. քանզի սպան զթշնամութիւն յանձին իւրում: Եւ եկն աւետարանեաց խաղաղութիւն ձեզ հեռաւորաց, եւ խաղաղութիւն մերձաւորաց: Զի նովաւ ունիմք զնուաճութիւն երկոքեան միով Հոգւով առ Հայր: Ապա այսուհետեւ ոչ էք օտարք եւ պանդուխտք, այլ քաղաքակիցք սրբոց եւ ընտանիք Աստուծոյ, շինեալք ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից, որոյ է գլուխ անկեանն Քրիստոս Յիսուս: Յորում ամենայն շինուածն յօդեալ եւ պատշաճեալ, աճէ ի տաճար սուրբ Տերամբ. յորում եւ դուք ընդ նմին շինիք ի բնակութիւն Աստուծոյ Հոգւով: 22:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ը. 40:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ իբրեւ դարձաւ անդրէն (Յիսուս) ընկալաւ զնա ժողովուրդն. քանզի ամենեքին ակն ունէին նմա: Եւ ահա եկն այր մի՝ որում անուն էր Յայրոս, եւ նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտսն Յիսուսի՝ աղաչէր զնա մտանել ի տուն նորա: Զի դուստր միամօր էր նորա՝ ամաց իբրեւ երկոտասանից, եւ էր մերձ ի մահ. եւ ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա: Եւ կին մի էր ի տեռատեսութեան արեան յամաց երկոտասանից, որ ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր. որում ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկել: Մատուցեալ յետոյ մերձեցաւ ի քղանցս հանդերձի նորա. եւ նոյն ժամայն եկաց բղխումն արեան նորա: Եւ ասէ Յիսուս: Ո՞վ է՝ որ մերձեցաւ յիս. իբրեւ ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս եւ որ ընդ նմայն էին. Վարդապետ,



ժողովուրդքդ պնդեն եւ նեղեն զքեզ: Եւ ասէ Յիսուս. Ոմն մերձեցաւ յիս, քանզի գիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն: Իբրեւ ետես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ ի նմանէ, եկն դողալով եւ անկաւ առաջի նորա, թէ վասն որոյ իրաց մերձեցաւ ի նա, պատմեաց առաջի ամենայն ժողովրդեան. եւ թէ որպէս բժշկեցաւ առժամայն: Եւ ասէ. Քաջալերեաց, դուստր, հաւատք քս կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն: 48:

---

## ՈՒԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### Սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի եւ ամենայն երկնային զօրացն:

Ժամամուտ. Զոր օրհնեն անլռելի ձայնիւ իմանալի զօրութիւնք, երկնաւոր նահապետութիւնք, հրեշտակք եւ հրեշտակապետք, աթոռք եւ տէրութիւնք, իշխանութիւնք եւ պետութիւնք, սերովբէք եւ քերովբէք զամենասուրբ Զերրորդութիւնն եւ զմի Աստուածութիւն:

Այսօր երկրաւորս եկեղեցւոյ քահանայապետութիւն ցնծայ հրաշափառապէս՝ զերկնաւոր քահանայապետութեանցն կատարելով զտօնախմբութեան տօնս, անմարմնական դասուց հոգեղինացդ՝ մարմնականքս եւ հողեղէնքս, ո՛վ սուրբ Գաբրիէլ եւ Միքայէլ մեծք, հրեշտակապետք Բարձրելոյն, որք կայք առաջի աթոռոյ Աստուածութեանն. անդադար բարեխօս լերուք վասն մեր առ Տէր, վերաբերել զամենեսեան ընդ ձեզ յերկնից արքայութիւնն, եւ միաձայն բարբառով երգել զփառս:

Ողբ. ՃԽԸ. Օրհնեցէք զՏէր յերկինս. օրհնեցէք զնա ի բարձունս:

Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա. օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա:

Պօղոսի առաքելոյն ի յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 26:

Այլ յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ. ասէ. Երկիր պագցեն նմա ամենայն հրեշտակք Ա-

տուծոյ։ Այլ առ հրեշտակսն ասէ. Ո արար զհրեշտակս իւր հոգիս, եւ զպաշտօնեայս իւր ի բոց հրոյ։ Իսկ ցՈրդին ասէ. Աթոռ քո Աստուած յաւիտեանս յաւիտենից, գաւազան ուղղութեան, գաւազան արքայութեան քոյ. սիրեցեր զարդարութիւն եւ ատեցեր զանօրէնութիւն. վասն այսորիկ օծ զքեզ Աստուած, Աստուած քո իւղով ուրախութեան առաւել քան զընկերս քո։ Եւ դու Տէր ի սկզբանէ զերկիր հաստատեցեր, եւ գործք ձեռաց քոց երկինք են։ Նոքա կորնչին, եւ դու կաս եւ մնաս. ամենեքեան իբրեւ զձորձս մաշեսցին, եւ իբրեւ զվերարկուս. գալարեսցես զնոսա իբրեւ զհանդերձ, եւ գալարեսցին. բայց դու նոյն իսկ ես, եւ ամք քո ոչ պակասեն։ Յո՞ երբեք ասաց ի հրեշտակաց. Նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։ Ո՞չ ապաքէն ամենեքեան հոգիք են հարկաւորք, որ առաքին ի սպասաւորութիւն վասն այնոցիկ՝ որ ժառանգելոցն են զփրկութիւն։ 14։

Ալէլուիա, ալէլուիա. Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր. եւ բանիւ Տեառն երկինք հաստատեցան. եւ Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԸ. 10։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զգոյշ լերուք՝ մի արհամարհիցէք զմի ի փոքրկանցս յայսցանէ. ասեմ ձեզ, զի հրեշտակք նոցա յերկինս հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ՝ որ յերկինս է։ Զի եկն Որդի մարդոյ կեցուցանել զկորուսեալն։ Զիա՞րդ թուի ձեզ, եթէ լինիցի մարդոյ հարիւր ոչխար, եւ մոլորիցի մի ի նոցանէ, ո՞չ թողուցու զիննսուն եւ զինն ոչխարն ի լերինս, եւ երթիցէ խնդրիցէ զմոլորեալն։ Եւ եթէ լինիցի գտանել զնա, ամէն ասեմ ձեզ, զի ուրախ լինի ի վերայ նորա առաւել՝ քան ի վերայ իննսուն եւ ինունցն, որ չիցեն մոլորեալ։ Այսպէս ոչ են կամք առաջի Հօր իմոյ որ յերկինս է՝ եթէ կորիցէ մի ի փոքրկանցս յայսցանէ։ 14։

---



## ԻՆՆԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ԽԱՉԻՆ

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ։

Սղ. ԿԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ։

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ։

Պօղոսի առաքելոյն յԵփեսացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 15։

Տեսջիք՝ որպէս ճշմարտիւ գնայցէք. մի՛ իբրեւ անիմաստք, այլ իբրեւ իմաստունք. գնեցէք զժամանակս, զի աւուրքս չարութեան են։ Վասն այնորիկ մի՛ լինիք անմիտք, այլ իմացարուք զինչ կամք են Տեառն։ Եւ մի՛ արբենայք գինւով, յորում զեղխութիւն է, այլ մանաւանդ լցարուք Հոգւով. խօսել ի սիրտս ձեր սաղմոսիւք եւ օրհնութեամբք եւ երգովք հոգեւորօք, երգել եւ սաղմոս ասել ի սիրտս ձեր Տեառն։ Գոհացարուք յամենայն ժամ ի վերայ ամենայնի, յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ Հօրն եւ Աստուծոյ։ Հնազանդ լերուք միմեանց երկիւղիւն Քրիստոսի։ Կանայք իւրեանց արանց հնազանդ լիցին իբրեւ Տեառն. զի այր է գլուխ կնոջ, որպէս եւ Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, եւ ինքն է փրկիչ մարմնոյ։ Այլ որպէս եկեղեցի հնազանդ լինի Քրիստոսի, նոյնպէս եւ կանայք իւրեանց արանց յամենայնի։ Ա՛րք, սիրեցէք զկանայս ձեր, որպէս եւ Քրիստոս սիրեաց զեկեղեցի, եւ զանձն իւր մատնեաց վասն նորա, զի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին բանիւ, զի կացուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի ինչ արատ կամ աղտեղութիւն կամ այլ ինչ յայսպիսեաց. այլ զի իցէ սուրբ եւ անարատ։ Նոյնպէս պարտին արք սիրել զիւրեանց կանայս՝ իբրեւ զիւրեանց մարմինս. որ սիրէ զկին իւր՝ զանձն իւր սիրէ։ Զի ոչ ոք երբեք ատեայ

զանձն իւր, այլ սնուցանէ եւ դարմանէ զնա, որպէս եւ Քրիստոս զեկեղեցի: Զի անդամք եմք մարմնոյ նորա՝ ի մարմնոյ նորա, եւ ոսկր յոսկերաց նորա: Վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր եւ զմայր իւր, եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկոքին ի մարմին մի: Խորհուրդս այս մեծ է. բայց ես ասեմ ի Քրիստոս եւ յեկեղեցի: Այլ եւ դուք նոյնպէս մի ըստ միոջէ. զի իւրաքանչիւր ոք զիւր կին այնպէս սիրեսցէ՝ իբրեւ զիւր անձն, եւ կին երկնչիցի յառնէ իւրմէ: 33:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ը. 49:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ մինչ դեռ նա խօսէր, գայ ոմն ի տանէ ժողովրդապետին եւ ասէ ցնա. Մեռաւ դուստրն քո, մի՛ ինչ աշխատ առներ զդա: Իսկ Յիսուս իբրեւ լուաւ, պատասխանի ետ նմա եւ ասէ. Մի՛ երկնչիր. միայն հաւատա, եւ կեցցէ: Եւ մտեալ ի տունն՝ ոչ զոք եթող մտանել, բայց միայն զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս, եւ զհայր մանկանն եւ զմայր նորա: Լային ամենեքեան եւ կոծէին զնա. եւ նա ասէ. Մի՛ լայք, զի չէ մեռեալ, այլ ննջէ: Եւ նոքա ծաղր առնէին զնա, զի գիտէին թէ մեռաւ: Եւ նորա հանեալ զամենեսին արտաքս, կալաւ զձեռանէ նորա՝ բարբառեցաւ եւ ասէ. Արի կաց, մանո՛ւկ դու: Եւ դարձաւ ոգի նորա, եւ կանգնեցաւ վաղվաղակի. եւ հրամայեաց տալ նմա ուտել: Եւ զարմացան ծնողքն նորա. եւ նա պատուիրէր մի՛ ումեք ասել՝ որ ինչ եղեւն: 57:

---

## ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

**Սրբոյն Մելիտոսի Անտիոքայ հայրապետին, եւ Մինասայ եգիպտացւոյն, եւ Մելեայ եպիսկոպոսին եւ Եբորայ քահանային եւ Շինու սարկաւագին:**

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցէք զաթոռ ի յերկրի. առաքելական առէք զպատիւ յերկնուստ ծառայք Քրիստոսի ո՛վ երանելիդ ի հարս սուրբ հայրապետք:



Քանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Յովհաննու առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 1:

Ամենայն որ հաւատայ եթէ Յիսուս է Քրիստոսն, յԱստուծոյ ծնեալ է. եւ ամենայն որ սիրէ զծնողն, սիրէ եւ զծնեալն ի նմանէ: Այսուիկ ճանաչեմք եթէ սիրեմք զՈրդին Աստուծոյ, յորժամ զԱստուած սիրեսցուք եւ զպատուիրանս նորա արասցուք: Քանզի այս է սէրն Աստուծոյ, եթէ զպատուիրանս նորա պահեսցուք. եւ պատուիրանք նորա չեն ինչ ծանունք: Զի ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է, յաղթէ աշխարհի. եւ այս է յաղթութիւնն որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր: Եւ ո՛վ իցէ՝ որ յաղթիցէ աշխարհի, եթէ ոչ՝ որ հաւատայցէ եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ: Սա է՝ որ եկն ջրով եւ հոգւով եւ արեամբ, Յիսուս Քրիստոս. ոչ ջրով միայն, այլ եւ արեամբ եւ ջրով. եւ Հոգին է՝ որ վկայէ, զի Հոգին իսկ է ճշմարտութիւն: 6:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Թ. 23:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ասէր առ ամենեսին. Եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն եւ առցէ զխաչ իւր հանապազ եւ եկեսցէ զհետ իմ: Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա, եւ որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ կեցուսցէ զնա:

Զի՞նչ օգուտ է մարդոյ եթէ զաշխարհ շահեսցի, եւ զանձն իւր կորուսցէ կամ տուժեսցի։ Զի որ ամօթ համարեսցի զիս եւ զբանս իմ, զնա եւ Որդի մարդոյ յամօթ արասցէ՝ յորժամ գայցէ փառօք իւրովք եւ Հօր եւ հրեշտակաց սրբոց։ Բայց արդարեւ ասեմ ձեզ, եթէ են ոմանք ի դոցանէ որ այդր կան՝ որք մի՛ ճաշակեսցեն զմահ, մինչեւ տեսցեն զարքայութիւն Աստուծոյ։ 27։

---

## ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդինուպոլսի հայրապետին:

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ, ծառայ Քրիստոսի ո՛վ երանելիդ ի հարս սուրբ հայրապետ։ Քանզի քոյ վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով։ Վասն որոյ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց։

Սղ. ԺԳ. Զերկիւղածս Տեառն փառաւոր առնէ, որ երդնու ընկերի իւրում եւ ոչ ստէ։

Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քում. կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո։

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Ի. 25։

Եւ արդ՝ ահաւասիկ գիտեմ ես, եթէ ոչ եւս տեսանէք զերեսս իմ դուք ամենեքեան, յորս շրջեցայ քարոզել զարքայութիւնն։ Վասն որոյ եւ վկայութիւն դնեմ ձեզ յաւուրս յայսմիկ՝ զի սուրբ եմ ես յարենէ ամենեցուն։ Քանզի ոչ խորշեցայ ի պատմելոյ ձեզ զամենայն կամս Աստուծոյ։ Զգոյշ կացէք անձանց եւ ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցոյց արեամբ իւրով։ Քանզի գետեմ ես՝ եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք յափշտակողք ի ձեզ, որ ոչ խնայեսցեն հօտիդ։ Եւ ի ձէնջ յարիցեն արք՝ որք



խօսեսցին թիւրս, ձգել զաշակերտսն զկնի իւրեանց։ Վասն այսորիկ արթուն կացէք եւ յիշեցէք՝ զի զերկեամ մի զցայգ եւ զցերեկ ոչ դադարեցի արտասուօք խրատել զմի մի իւրաքանչիւր։ Եւ արդ՝ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ եւ բանի շնորհաց նորա, որ կարողն է շինել եւ տալ ձեզ ժառանգութիւն ընդ սուրբսն ամենեսեան։ Արծաթոյ կամ ոսկւոյ կամ հանդերձից ոչ ուրուք ի ձէնջ ցանկացայ։ Դուք ինքնին գիտէք զի զպէտսն իմ եւ որոց ընդ իսն էին՝ պաշտեցին ձեռքս այս։ Եւ զամենայն ինչ ցուցի ձեզ. զի այսպէս պարտ է վաստակել եւ դարմանել զհիւանդս, եւ յիշել զբանն Տեառն Յիսուսի, զոր ինքն իսկ ասաց. Երանելի է մանաւանդ տալ քան առնուլ։ Եւ զայս իբրեւ ասաց, եդեալ ծունր ամենեքումբք՝ եկաց յաղօթս։ Բազում լալիւն եղեւ ամենեցուն. եւ անկեալ զպարանոցաւն Պօղոսի՝ համբուրէին զնա։ Մորմոքէին մանաւանդ ի վերայ բանին՝ զոր ասէր, թէ ոչ եւս տեսանելոց են զերեսս նորա. եւ յուղարկեցին զնա ի նաւ անդր։ 38։

Ալէլուիա, ալէլուիա. Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի. եւ Տէր ընդ աջմէ քումմէ։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. ԺԵ. 11։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրախութիւն իմ ի ձեզ իցէ, եւ ձեր ուրախութիւնն լցեալ եղիցի։ Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս եւ ես զձեզ սիրեցի։ Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց։ Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք՝ զոր եսն պատուիրեմ ձեզ։ Ոչ եւս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ Տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն զոր լուայ ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ։ Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս. այլ ես ընտրեցի զձեզ, եւ եդի զձեզ. զի դուք երթայցէք եւ պտղաբերք լինիցիք, եւ պտուղն ձեր կացցէ. եւ զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս։ Եթէ աշխարհ զձեզ

ատեայ, գիտասջիք զի նախ զնա ատեայց: Եթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զնուրն սիրեր արդեօք. բայց զի չէք յաշխարհէ, այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վասն այնորիկ ատեայ զձեզ աշխարհ: Յիշեցէք զբանն զոր ասացի ձեզ, թէ ոչ է ծառայ մեծ քան զՏէր իւր. եթէ զնա հալածեցին, ապա եւ զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա եւ զձերն պահեսցեն: Այլ զնոյնս արասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ, զի ոչ ծանեան զայն՝ որ առաքեացն զնա: Եթէ չէր եկեալ եւ խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ չեն պատճառք վասն մեղացն իւրեանց: Որ զնա ատեայ, եւ զՀայրն իմ ատեայ: Եթէ զգործսն չէր գործեալ ի նոսա, զոր ոչ այլ ոք գործեաց, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ տեսին եւ ատեցին եւ զնա եւ զՀայր իմ: Այլ զի լցցի բանն, որ յօրէնս նոցա գրեալ է, թէ Ատեցին զնա ստահապարտուց: 25:

---

## ԻՆՆԵՐՈՐԴ ԶՈՐԵՔԾԱԲԱԹԻ

Յոհաննու. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զնաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ· 26· Սկզո զծառայս քո, Աստուած իմ, որ ի քեզ յուսացեալ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհնապազ· ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն Ա Փիլիպացւոց Թղթոյն է ընթերցուածս. Գլ· Զ· 1:

Որդիք, հնազանդ լերուք ծնողաց ձերոց ի Տէր, զի այն է արժանն: Պատուեա զՀայր քո եւ զմայր, որ է առաջին պատուիրան յաւետիան, զի քեզ բարի եղիցի, եւ երկայնակեաց լինիցիս ի վերայ երկրի: Հարք, մի զայրացուցանէք զորդիս ձեր. այլ սնուցանիջիք զնոսա խրատու եւ ուսմամբ Տեառն: Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց ահիւ եւ դողութեամբ եւ միամտութեամբ



սրտից ձերոց՝ որպէս եւ Քրիստոսի. մի՛ առ ականէ ծառայել իբրեւ մարդահաճոյք, այլ իբրեւ ծառայք Քրիստոսի առնել զկամս Աստուծոյ. սրտի մտօք ծառայել իբրեւ Տեառն, եւ մի՛ իբրեւ մարդկան: Գիտասջիք թէ իւրաքանչիւր զոր ինչ առնէ զբարին, զնոյն ընդունի եւ ի Տեառնէ, եթէ ծառայ եւ եթէ ազատ: Եւ դուք, տեարք, զնոյն առնիջիք առ նոսա՝ ներելով առնել զպատուհասն. գիտասջիք թէ եւ նոցա եւ ձեր Տէր գոյ յերկինս, եւ ակնառութիւն ոչ գոյ առաջի նորա: 9:

Ալէլուիա, ալէլուիա. պահոյ է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ· Թ· 10:

Ընդ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Դարձան առաքեալքն, եւ պատմեցին նմա զամենայն զոր արարին: Եւ առեալ զնոսա՝ խոնարհաց առանձինն ի տեղի անապատ քաղաքի միոյ, որում անուն էր Լնեթսայիդա: Եւ ժողովուրդքն իբրեւ գիտացին, գնացին զհետ նորա. եւ ընկալեալ զնոսա՝ խօսէր ընդ նոսա վասն արքայութեան Աստուծոյ, եւ որոց պէտք էին բժշկութեան՝ բժշկէր: Եւ օրն սկսաւ տարաժամել. մատեան երկոտասանքն եւ ասեն ցնա. Արձակեա զժողովուրդսդ, զի երթիցեն շուրջ ի գիւղսն եւ յագարակս՝ հանգիցեն, եւ դտցեն կերակուր. զի աստ յանապատի տեղւոջ եմք: Ասէ ցնոսա. Դուք տուք դոցա ուտել: Եւ նոքա ասեն. Ոչ գոյ մեր աւելի քան զհինգ նկանակ եւ զերկուս ձկունս. բայց եթէ երթիցուք գնեսցուք բաւական ժողովրդեանդ կերակուր: Էանդի էին արք իբրեւ հինգ հազար: Ասէ ցաշակերտան. Հազմեցուցէք զդոսա դասս դասս՝ հիսուն հիսուն: Եւ արարին այնպէս, եւ բազմեցուցին զամենեսեան: Եւ առեալ զհինգ նկանակն եւ զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս. օրհնեաց եւ եբեկ եւ տայր ցաշակերտսն արկանել ժողովրդեանն: Կերան եւ յագեցան ամենեքեան. եւ բարձին զնշխարս կոտորոցն երկոտասան սակաւիւ: 17:

---

## ԻՆՆԵՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

**Սրբոյն Գուրիասայ, Սամոնասայ եւ Աբիբայ սարկաւագին, եւ Ռոմանոսի միայնակեցին եւ Մանկանն խոստովանողի եւ Հիւսիքոսի զինաւորին:**

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԺԵ. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց, ո՛ Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 6:

Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աստուծոյ, որ են ի քեզ ի ձեռնադրութենէ իմմէ: Զի ոչ ետ մեզ Աստուած հոգի վհատութեան, այլ զօրութեան եւ սիրոյ եւ զգաստութեան: Մի՛ այսուհետեւ ամօթ համարիցիս զվկայութիւնն Տեառն մերոյ եւ մի՛ զիս զկապեալ նորա. այլ կցորդ լեր չարչարանաց աւետարանին ըստ զօրութեանն Աստուծոյ. որ փրկեացն զմեզ եւ կոչեաց ի կոչումն սուրբ, ոչ ըստ գործոց մերոց, այլ ըստ իւրում յառաջադրութեանն եւ շնորհացն՝ որ տուաւ մեզ ի Քրիստոս Յիսուս յառաջ քան զժամանակսն յաւիտենից: Բայց յայտնեցաւ այժմիկ յերեւել փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ խափանեաց զմահ, եւ լուսաւոր արար զկեանս եւ զանեղծութիւն ի ձեռն աւետարանին, որոյ եդայ ես քարոզ եւ առաքեալ եւ վարդապետ հեթանոսաց: Վասն որոյ եւ զայս չարչարանս կրեմ, այլ ոչ ինչ ամօթ համարիմ. քանզի գիտեմ յո հաւատացեալն եմ. եւ հաստատեալ եմ թէ կարող է զաւանդն իմ պահել յօրն յայն: Ունիցիս օրինակ ողջմտութեան բանիցն՝ զորս յինէն լուար, հաւատովք եւ



սիրով որ ի Քրիստոս Յիսուս: Զքարւոք աւանդն պահեսջիր ի ձեռն Հոգւոյն սրբոյ ի մեզ բնակելոյ: 14:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԺԹ. 27:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յայնժամ պատասխանի ետ Պետրոս եւ ասէ ցնա. Աւասիկ մեք թողաք զամենայն եւ եկաք զկնի քո. արդ զի՞նչ լինիցի մեզ: Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ասեմ ձեզ, զի դուք որ եկիք զկնի իմ, ի միւսանգամ գալստեան՝ յորժամ նստցի Որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, նստջիք եւ դուք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգն Իսրայէլի: Եւ ամենայն որ ոք եթող զտուն կամ զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ զմայր կամ զկին կամ զորդիս կամ զագարակս վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ եւ զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ: 29:

---

## ԻՆՆԵՐՐՈԴ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն յԵփեսացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Զ. 13:

Վասն այսորիկ առէք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիջիք ի դիմի հարկանել չարին յաւուրն չարութեան: Եւ իբրեւ զամենայն ինչ կատարիցէք, հաստատուն կացէք, զտեղի կալջիք, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ

եւ զգեցեալ զզրահսն արդարութեան, եւ ագուցեալ զոտս պատրաստութեամբ աւետարանին խաղաղութեան: Եւ ի վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոց, որով կարող լինիջիք զամենայն նետս մուխս չարին շիջուցանել: Եւ առէք զսաղաւարտն փրկութեան եւ զսուսեր հոգւոյն՝ որ է բանն Աստուծոյ, ամենայն աղօթիւք եւ խնդրուածովք աղօթս առնել յամենայն ժամանակի հոգւով. եւ ի նոյն տքնիջիք ամենայն ժուժկալութեամբ եւ խնդրուածովք վասն ամենայն սրբոց, եւ վասն իմ, զի ինձ տացի բան ի բանալ բերանոյ իմոյ, համարձակութեամբ ցուցանել զխորհուրդս աւետարանին, վասն որոյ պատգամաւորիմ կապանօքս, զի նովին համարձակեցայց, որպէս եւ պարտ իցէ ինձ խօսել: Բայց զի գիտիցէք եւ դուք զինէն, զինչ գործիցեմ, զամենայն ինչ ցուցցէ ձեզ Տիւքիկոս սիրելի եղբայր եւ հաւատարիմ պաշտօնեայ ի Տէր, զոր առաքեցի առ ձեզ դմին իրի, զի գիտասջիք դուք զմէնջ եւ մխիթարեսցէ զսիրտս ձեր: Խաղաղութիւն ընդ եղբարս, եւ սէր հաւատովքն հանդերձ՝ յԱստուծոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ: Շնորհք ընդ ամենեսեան՝ ոյք սիրեն զՏէր մեր Յիսուս Քրիստոս անեղծութեամբ: 24:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Թ. 37:

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Եւ եղեւ ի վաղիւն մինչ իջանէին նոքա ի լեռնէ անտի, ընդ առաջ եղեւ նմա ժողովուրդ բազում: Եւ ահա այր մի ի ժողովրդենէ անտի աղաղակեաց եւ ասէ. Վարդապետ, աղաչեմ զքեզ՝ հայեաց յորդի իմ, զի միամօր է ինձ: Եւ ահա այս հարկանի ի նմա, եւ յանկարծ գոչէ եւ զարկուցանէ զնա եւ թաւալեցուցանէ եւ փրփրեցուցանէ, եւ հազիւ մեկնի ի նմանէ խորտակեալ զնա. եւ աղաչեցի զաշակերտսն քո՝ զի հանցեն զնա, եւ ոչ կարացին: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Ո՛վ ազգ անհաւատ եւ թիւր, մինչեւ յե՞րբ եղէց ընդ ձեզ եւ անսայցեմ ձեզ. մատո այսր զորդին քո: Եւ մինչ դեռ մատչէր, զարկոյց զնա դեւն եւ շարժլեաց: Սաստեաց



Յիսուս այսոյն պղծոյ, եւ բժշկեաց զմանուկն, եւ ետ զնա ցհայր իւր: Եւ զարմանային ամենեքեան ի վերայ մեծամեծացն Աստուծոյ: 44:

---

## ԻՆՆԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### Սրբոց առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի:

Ժամամուտ. Առաքեալք եւ վկայք Քրիստոսի Աստուծոյ. ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդեգրութիւն կենաց կոչելով՝ միասնական սուրբ Երրորդութեանն յորդորեցին երգել փառս ի յաւիտեանս. ամէն:

Սղ. ԺԸ. Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա. եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա:

Երկինք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԲ. 26:

Եթէ վշտանայ ինչ մի անդամն. վշտանան ամենայն անդամքն ընդ նմա. եւ եթէ փառաւորի մի անդամն, խնդան ամենայն անդամքն ընդ նմա: Այլ դուք մարմին Քրիստոսի էք եւ անդամք յանդամոց նորա: Եւ զորս եդ Աստուած յեկեղեցւոջ՝ այս են. նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ զվարդապետս, ապա զօրութիւնս, ապա շնորհս բժշկութեանց, օգնութիւնս, վարիչս, ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց: Միթէ ամենեքին առաքեա՞լք իցեն. միթէ ամենեքին մարգարէ՞ք իցեն. միթէ ամենեքին վարդապե՞տք իցեն. միթէ ամենեքին զօրութի՞ւնք իցեն. միթէ ամենեքին շնորհս բժշկութեա՞ն ունիցին. միթէ ամենեքին ի լեզո՞ւս խօսիցին. միթէ ամենեքին թարգմանիցե՞ն: Բայց նախանձաւորք լերուք շնորհացն՝ որ լաւն են: Այլ ես առաւել եւս ճանապարհ ցուցանեմ ձեզ: Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ եւ զհրեշտակաց, եւ սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ զպղինձ՝ որ հնչէ, կամ իբրեւ զծնծղայս՝ որ զօղանջեն: Եւ եթէ ունիցիմ մարգարէու-

թիւն, եւ գիտիցեմ զխորհուրդս ամենայն եւ զամենայն գիտութիւն, եւ եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչեւ զլերինս փոփոխելոյ, եւ սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ: Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, եւ մատնիցեմ զմարմինս իմ յայրումն, եւ սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ: Սէր երկայնամիտ է, քաղցրանայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճէ, ոչ հպարտանայ, ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւր, ոչ գրգռի, ոչ խորհի չար, ոչ խնդայ ընդ անիրաւորութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն. ամենայնի տեւէ, ամենայնի հաւատայ, ամենեւին յուսայ, ամենայնի համբերէ: Սէր ոչ երբեք անկանի. եթէ մարգարէութիւնք են՝ խափանեսցին. եթէ լեզուք՝ լռեսցեն. եթէ գիտութիւնք՝ խափանեսցին: Քանզի փոքր ի շատէ գիտեմք, եւ փոքր ի շատէ մարգարէանամք: Այլ յորժամ եկեսցէ կատարումն, փոքր ի շատէս խափանեսցի: ԺԳ. 10:

Ալէլուիա, ալէլուիա. Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. եւ յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ա. 35:

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս, եւ յաշակերտաց անտի նորա երկու: Եւ նայեցեալ ընդ Յիսուսի զի զգնայր, ասէ. Ահաւասիկ Քրիստոս գառն Աստուծոյ: Լուան ի նմանէ երկու աշակերտքն՝ զի խօսէր, եւ գնացին զհետ Յիսուսի: Իբրեւ դարձաւ Յիսուս եւ ետես զնոսա՝ զի երթային զհետ նորա, ասէ ցնոսա. Զի՞նչ խնդրէք. նոքա ասեն ցնա. Ռա՛բբի, որ թարգմանեալ կոչի՝ վարդապետ, ո՞ւր են օթեվանք քո: Ասէ ցնոսա. Եկայք եւ տեսէք: Եկին եւ տեսին՝ ուր էին օթեվանք նորա. եւ առ նմա ագան այն օր, զի ժամ էր իբրեւ տասներորդ: Էր Անդրէաս եղբայր Սիմովնի վիմի, մի յերկուց անտի, որ լուանն ի Յովհաննէ եւ գնացին զհետ նորա: Գտանէ սա նախ զեղբայր իւր զՍիմովն, եւ ասէ ցնա. Գտաք զՄեսիայ՝ որ թարգմանի Քրիստոս: Սա ած զնա առ Յիսուս: Հայեցեալ ընդ նա Յիսուսի՝ ասէ. Դու ես



Սիմովն որդի Յովնանու, դու կոչեսցիս Կեփաս, որ թարգմանի Պետրոս: Իվաղիւ անդր կամեցաւ ելանել ի Գալիլեա. գտանէ զՓիլիպպոս, եւ ասէ ցնա Յիսուս. Եկ զկնի իմ: Եւ էր Փիլիպպոս ի Բեդսայիդայ, ի քաղաքէ Անդրեայ եւ Պետրոսի: Գտանէ Փիլիպպոս զՆաթանայէլ, եւ ասէ ցնա. Զորմէ գրեաց Մովսէս յօրէնսն եւ մարգարէքն, գտաք զՅիսուս՝ զորդի Յովսեփայ ի Նազարեթէ: Ասէ ցնա Նաթանայէլ. Իսկ ի Նազարեթէ մա՞րթ ինչ իցէ բարւոյ իմիք լինել: Ասէ ցնա Փիլիպպոս. Եկ եւ տես: Իբրեւ ետես Յիսուս զՆաթանայէլ՝ զի գայր առ նա, ասէ վասն նորա. Ահա արդարեւ Իսրայէլացի՝ յորում նենգութիւն ոչ գոյ: Ասէ ցնա Նաթանայէլ. Ուստի՞ ճանաչես զիս: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Մինչ չեւ էր Փիլիպպոսի կոչեցեալ զքեզ՝ զի էիր ի ներքոյ թզենւոյն, տեսի զքեզ: Պատասխանի ետ նմա Նաթանայէլ եւ ասէ. Ռա՛բբի, դու ես Որդի Աստուծոյ, դու ես թագաւորն Իսրայէլի: Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Փոխանակ զի ասացի քեզ՝ թէ Տեսի ի ներքոյ թզենւոյն, հաւատաս. մեծամեծս եւս քան զայս տեսցես: Եւ ասէ ցնա. Ամէն ամէն ասեմ ձեզ, տեսանիցէք զերկինս բացեալ եւ զհրեշտակս Աստուծոյ՝ զի ելանիցեն եւ իջանիցեն ի վերայ Որդւոյ մարդոյ: 51:

---

## ՏԱՍՆԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ԶԿՆԻ ԽԱՉԻՆ

### Աւելորդաց:

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. կդ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Փիլիպեցւոց թղթոյն է ընթերցուածս։

Գլ. Ա. 1։

Պօղոս եւ Տիմոթէոս՝ ծառայք Յիսուսի Քրիստոսի, ամենայն սրբոց ի Քրիստոս Յիսուս, որ են ի կողմանս Փիլիպեցւոց, եպիսկոպոսակցօք եւ սարկաւագօք։ Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։ Գոհանամ զԱստուծոյ իմոյ ի վերայ ամենայն յիշատակաց ձերոց, յամենայն ժամ յամենայն խնդրուածս իմ վասն ձեր ամենեցուն առնել աղօթս խնդութեամբ. վասն հաղորդութեան ձերոյ ընդ աւետարանին, յօրէ յառաջնմէ մինչեւ ցայժմ։ Վստահ եմ յայդ, թէ որ սկսաւն ի ձեզ զգործս բարեաց, կատարեսցէ մինչեւ յօրն Յիսուսի Քրիստոսի։ Որպէս իրաւ իսկ թուի ինձ խորհել զայս վասն ձեր ամենեցուն վասն ունելոյ ինձ զձեզ ի սրտի ի կապանս իմում եւ ի պատասխանատուութեան իմում եւ ի հաստատութեան աւետարանին, կցորդս ինձ շնորհացն զձեզ ամենեսին լինել։ Վկայ է ինձ Աստուած. որպէս անձկացեալ եմ առ ձեզ ամենեսին գթովքն Քրիստոսի Յիսուսի. եւ զայն աղօթս առնեմ, զի սէրն ձեր եւս քան զեւս առաւել լիցի ի գիտութեան եւ յամենայն իմաստութեան. ընտրել ձեզ զլաւն, զի իցէք հաստատունք եւ առանց գայթագղութեան ի յաւուրն Քրիստոսի։ Լցեալ պտղովք արդարութեան ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ի փառս եւ ի գովեստ Աստուծոյ։ 11։

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան ի Յայնէն։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Թ. 44։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ի զարմանալն ամենեցուն ի վերայ ամենայնի զոր առնէր, ասէ ցաշակերտսն իւր. Դիք դուք ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ. զի Որդի մարդոյ մատնելոց է ի ձեռս մարդկան։ Եւ նոքա ոչ գիտէին զբանն, եւ էր ծածկեալ ի նոցանէ՝ զի մի՛ գիտասցեն. եւ երկնչէին հարցանել ցնա վասն բանին այնորիկ։ Եմուտ խորհուրդ ի նոսա՝ թէ ո՛ արդեօք մեծ իցէ ի



նոցանէ։ Յիսուս իբրեւ ծանեաւ զխորհուրդս սրտից նոցա, առ մանուկ մի՝ կացոյց ի մէջ նոցա առ իւր, եւ ասէ ցնոսա. Որ ոք ընկալցի զմանուկս զայս յանուն իմ՝ զիս ընդունի, եւ որ զիս ընդունիցի՝ ընդունի զառաքիչն իմ. զի որ փոքրիկն է յամենեսին ի ձեզ՝ նա եղիցի մեծ։ Պատասխանի ետ Յովհաննէս եւ ասէ. Վարդապետ, տեսաք զոմն որ յանուն քո դեւս հանէր, եւ արգելաք զնա, զի ոչ շրջի ընդ մեզ։ Ասէ ցնոսա Յիսուս. Մի՛ արգելուք զնա, զի որ ոչն է ձեր թշնամի՝ ի ձեր կողմն է։ 50։

---

## ՏԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### Սրբոց Հրեշտակաց եւ Հրեշտակապետաց։

Ժամամուտ. Զոր օրհնեն անլռելի ձայնիւ իմանալի զօրութիւնք, երկնաւոր նահապետութիւնք, հրեշտակք եւ հրեշտակապետք, աթոռք եւ տէրութիւնք, իշխանութիւնք եւ պետութիւնք, սերովբէք եւ քերովբէք զամենասուրբ զԵրրորդութիւնն եւ զմի Աստուածութիւն։

Այսօր երկրաւորս եկեղեցւոյ քահանայապետութիւն ցնծայ հրաշափառապէս՝ զերկնաւոր քահանայապետութեանցն կատարելով զտօնախմբութեան տօնս, անմարմնական դասուց հոգեղինացդ՝ մարմնականքս եւ հողեղէնքս, ո՛վ սուրբ Գաբրիէլ եւ Միքայէլ մեծք, հրեշտակապետք Բարձրելոյն, որք կայք առաջի աթոռոյ Աստուածութեանն. անդադար բարեխօս լերուք վասն մեր առ Տէր, վերաբերել զամենեսեան ընդ ձեզ յերկնից արքայութիւնն, եւ միաձայն բարբառով երգել զփառս։

Սղ. ճգ. Ո արար զհրեշտակս իւր յոգիս. եւ զպաշտօնեայս իւր ի հուր կիզելոյ։

Օրհնեա անձն իմ զՏէր. Տէր Աստուած իմ, մեծ եղեր յոյժ։

Պօղոսի առաքելոյն ի Կողոսացւոց թղթոյն է ընթերցուածս։ Գլ. Ա. 12։

Գոհանալ զԱստուծոյ Հօրէ՝ որ կոչեացն զձեզ ի մասն վիճակի սրբոցն ի լոյս. որ փրկեացն զմեզ յիշխանութենէ

խաւարի, եւ փոխեաց զմեզ յարքայութիւն Որդւոյն իւրոյ սիրելւոյ. որով ունիմք զփրկութիւն արեամբն նորա, եւ զթողութիւն մեղաց մարմնովն նորա. որ է պատկեր աներեւութին Աստուծոյ, անդրանիկ ամենայն արարածոց: Զի նովաւ հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի, որ երեւին եւ որ ոչն երեւին. եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք, ամենայն ինչ նովաւ եւ ի նոյն հաստատեցաւ: Եւ նա է յառաջ քան զամենայն, եւ ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ: Եւ նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ, որ է սկիզբն, անդրանիկ ի մեռելոց. զի եղիցի ինքն յամենայնի յառաջացեալ: Զի ի նմա հաճեցաւ ամենայն լրումն աստուածութեանն բնակել: Եւ նովաւ հաշտեցուցանել զամենայն ի նոյն. արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի եւ որ ինչ յերկինս: Եւ զձեզ որ երբեմն օտարացեալքն էիք, եւ թշնամիք խորհրդովք ի գործսն չարութեան, այժմ աւադիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ իւրոյ ի ձեռն մահուն իւրոյ, յանդիման կացուցանել զձեզ սուրբս եւ ամբիծս եւ անարատս առաջի նորա: 22:

Ալէլուիա, ալէլուիա. Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր. եւ բանիւ Տեառն երկինք հաստատեցան. եւ Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԵ. 1:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք եւ մեղաւորք՝ լսել ի նմանէ: Տրտնջէին փարիսեցիքն եւ դպիրք եւ ասէին. Ընդէ՞ր սա զմեղաւորս ընդունի եւ ուտէ ընդ նոսա: Ասաց առ նոսա զառակս զայս. Ո՞վ ոք իցէ ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարիւր ոչխար, եւ կորուսանիցէ մի ի նոցանէ. ո՞չ թողուցու զիննսուն եւ զինն յանապատին, եւ երթիցէ զհետ կորուսելոյն՝ մինչեւ գտանիցէ զնա: Եւ իբրեւ գտանէ, դնէ զնա ի վերայ ուսոց իւրոց խնդալով, եւ երթեալ ի տուն, կոչէ զբարեկամս եւ զդրացիս, եւ ասէ ցնոսա. Ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարս իմ զկորուսեալ: Ասեմ ձեզ. զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ, քան վասն իննսուն եւ ինն արդարոց՝ որոց չիցէ պիտոյ ապաշխարութիւն: Կամ ո՞վ իցէ կին, որոյ իցեն դրամք տասն. եւ եթէ կորուսանիցէ դրամ մի, ո՞չ լուցանիցէ ճրագ, եւ ածիցէ աւել ի տան եւ խնդրիցէ ստէպ՝ մինչեւ գտանիցէ: Եւ իբրեւ գտանէ, կոչէ զբարեկամս եւ զդրացիս եւ ասէ. Ուրախ լերուք ընդ իս, զի գտի զդրամն իմ զոր կորուսի: Այնպէս՝ ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ի վերայ միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ: 10:

---

## ՏԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### Համօրէն մարգարէից:

Ժամամուտ. Տէր որ հիմնեցուցեր զեկեղեցի քո ի վերայ վիմին հաւատով. եւ կարգեցեր ի սմա առաքեալս եւ մարգարէս, հովիւս եւ վարդապետս՝ առ ի հաստատութիւն սրբոց. եւ ճգնութեամբ վկայից զթշնամին սորա վանեցեր. ի խաղաղութեան զսա պահեա, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ԿԷ. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Յարիցէ Աստուած եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԱ. 2:

Թէ ո՞չ գիտէք յԵղիա զինչ ասէ գիր, որպէս ամբաստան լինի Աստուծոյ զԻսրայէլէ. Տէր զմարգարէս քո կոտորեցին եւ զսեղանս քո կործանեցին. ես մնացի միայն, եւ խնդրեն զանձն իմ: Այլ զի՞նչ ասէ նմա պատասխանին. Թողի ինձ, ասէ, եօթն հազար այր՝ որ ոչ կրկնեցին ծունր Բահաղու: Նոյնպէս եւ յայսմ ժամանակի մնացորդք ըստ ընտրութեան շնորհացն եղեն: 5:

Ալէլուիա, ալէլուիա. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԳ. 31:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ի նմին աւուր մատեան ոմանք փարիսեցիք, եւ ասեն ցնա. Ել եւ գնա աստի, զի Հերովդէս կամի սպանանել զքեզ: Եւ ասէ ցնոսա. Երթայք՝ ասացէք աղուեսուն այնմիկ. ահաւասիկ հանեմ դեւս, եւ բժշկութիւնս կատարեմ այսօր եւ վաղիւ. եւ յերիր աւուր կատարիմ: Բայց պարտ է այսօր եւ վաղիւ եւ ի միւսում աւուր գնալ. զի ոչ է մարթ մարգարէի կորնչել արտաքոյ քան զԵրուսաղէմ: Երուսաղէմ Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէսն, եւ քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ. քանիցս անգամ կամեցայ ժողովել զորդիս քո, որպէս հաւ զձագս իւր ընդ թեւովք, եւ ոչ կամեցարուք: Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր: Բայց ասեմ ձեզ, թէ ոչ եւս տեսանիցէք զիս, մինչեւ ասիցէք՝ Օրհնեալ եկեալն յանուն Տեառն: 35:

---

## ՏԱՍՆԵՐՈՐԴ ԶՈՐԵՔԾԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. 26. Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Փիլիպեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 12:

Կամիմ թէ գիտիցէք, եղբարք, զի որ ինչ վասն իմ էր, եւս քան զեւս ի յառաջադիմութիւն աւետարանին եկն: Մինչեւ կապանաց իմոց յայտնի լինել ի Քրիստոս յամենայն հրապարակիս, եւ առ այլս ամենեսին, եւ առ բազում եղբարս ի Տէր, որ վստահ են կապանօքս իմովք՝



առաւել եւս համարձակել առանց երկիւղի զբանն Աստուծոյ խօսել: Ոմանք առ նախանձու եւ հակառակութեան, եւ ոմանք մտադիւրութեամբ իսկ զՔրիստոս քարոզեն, եւ ոմանք ի սիրոյ. քանզի գիտեն եթէ ի պատասխանատուութիւն աւետարանին կամ: Եւ ոմանք առ հեստութեան զՔրիստոս պատմեն, այլ ոչ սրբութեամբ. քանզի համարին նեղութիւնս յարուցանել ի վերայ կապանաց իմոց: Բայց այս զի՞նչ է. որով օրինակաւ եւ իցէ, եթէ պատճառանօք եւ եթէ ճշմարտութեամբ, Քրիստոս պատմի, եւ ընդ այս խնդամ, այլ եւ ուրախ եւս եղէց: Զի գիտեմ, եթէ այս պահի ինձ ի փրկութիւն ի ձերոց խնդրուածոց եւ ի պարգեւաց Հոգւոյն Յիսուսի Քրիստոսի, ըստ ակնկալութեան եւ յուսոյն իմոյ, զի մի՛ իւիք յամօթ եղէց. այլ ամենայն համարձակութեամբ, որպէս եւ յամենայն ժամ եւ այժմ, մեծասցի Քրիստոս ի մարմնի իմում, եթէ կենօք եւ եթէ մահու: Զի ինձ կեանք Քրիստոս է եւ մեռանել շահ: Ապա եթէ կեանքս մարմնոյ՝ այս ինձ պտուղ գործոյ է, եւ զի՞նչ ընտրեցից՝ զայն ոչ գիտեմ: Նեղեալ եմ յերկոցունց. զցանկալն ելանել եւ ընդ Քրիստոսի լինել՝ առաւել լաւ համարիմ. եւ կալ մնալ աստէն ի մարմնի՝ կարեւոր եւս վասն ձեր: Եւ զայս յուսացեալ գիտեմ, եթէ կացից եւ մնացից ամենեցուն ձեզ, ի ձեր զարգանալ եւ խրախ լինել ի հաւատս. զի պարծանք ձեր առաւել լինիցին ի Քրիստոս Յիսուս ինեւ ի միւսանգամ գալստեան իմում՝ առ ձեզ: 26:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Թ. 51:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ եղեւ ի կատարել աւուրց վերանալոյ նորա, եւ ինքն զերեսս հաստատեաց երթալ յԵրուսաղէմ: Եւ առաքեաց հրեշտակս առաջի երեսաց իւրոց. եւ իբրեւ չոգան՝ մտին ի գիւղ մի Սամարացւոց պատրաստել ինչ նմա: Եւ ոչ ընկալան զնա, զի դէմ եդեալ էր նորա երթալ յԵրուսաղէմ: Իբրեւ տեսին աշակերտքն Յակովբոս եւ Յովհաննէս ասեն. Տէր, կամի՞ս զի ասասցուք, եւ իջցէ հուր յերկնից եւ սա-

տակեսցէ զնսսա: Դարձաւ սաստեաց ի նոսա եւ ասէ. Ոչ գիտէք՝ որոյ հոգւոյ էք դուք: Զի Որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան կորուսանել, այլ կեցուցանել. եւ գնացին յայլ գիւղ: Եւ մինչ դեռ երթային նոքա ի ճանապարհի, ասէ ոմն ցնա. Եկից զկնի քո՝ յո՛ր վայր եւ երթայցես: Ասէ ցնա Յիսուս. Աղուեսուց որջք գոն, եւ թռչնոց երկնից դադարք. այլ Որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ: Ասէ ցմիւս եւս. Եկ զկնի իմ: Եւ նա ասէ. Տէր, հրաման տուր ինձ՝ երթալ նախ թաղել զհայր իմ: Ասէ ցնա Յիսուս. Թող զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց, եւ դու երթ պատմեա զարքայութիւն Աստուծոյ: Ասէ եւ այլ ոմն. Եկից զկնի քո, Տէր, բայց նախ հրաման տուր ինձ հրաժարել ի տանէ իմմէ. Ասէ ցնա Յիսուս. Ոչ ոք արկանէ ձեռն զմաճով եւ հայիցի յետս, եթէ յաջողեալ իցէ արքայութեան Աստուծոյ: 62:

---

## ՏԱՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Համօրէն առաքելոց:

Ժամամուտ. Առաքեալք եւ վկայք Քրիստոսի Աստուծոյ. ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդեգրութիւն կենաց կոչելով՝ միասնական սուրբ Երրորդութեանն յորդորեցին երգել փառս ի յաւիտեանս. ամէն:

Սղ. ԺԸ. Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա. եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա:

Երկինք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն:

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 9:

Յիշեցէք ե՛ղբարք, զվաստակն մեր եւ զջան. զի զցայգ եւ զցերեկ գործէաք վասն չծանրանալոյ ումեք ի ձէնջ, եւ քարոզէաք ձեզ զաւետարանն Աստուծոյ: Դուք ինքնին վկայէք եւ Աստուած, ո՛րպէս սրբութեամբ եւ արդարութեամբ եւ ամբծութեամբ ձեզ հաւատացելոցդ եղեաք, որ-



պէս եւ գիտէք իսկ. զի զիւրաքանչիւր ոք ի ձէնջ, իբրեւ հայր զորդիս, մխիթարէաք եւ սփոփէաք եւ դնէաք վկայութիւն՝ գնալ ձեզ արժանապէս Աստուծոյ, որ կոչեացն զձեզ յիւր արքայութիւնն եւ ի փառս: Վասն այնորիկ եւ մեք գոհանամք զԱստուծոյ անպակաս, զի առեալ զլուր բանին Աստուծոյ առ ի մէնջ՝ ընկալարուք, ոչ իբրեւ զբան մարդկան, այլ որպէս ճշմարտիւ զբան Աստուծոյ, որ եւ յաջողեալ իսկ է ի ձեզ հաւատացեալսդ: Զի դուք նմանողք եղերուք, ե՛ղբարք, եկեղեցեացն Աստուծոյ՝ որ են ի Հրէաստանի ի Քրիստոս Յիսուս, զի զնոյն չարչարանս չարչարեցայք եւ դուք ի ձերոց ազգականաց, որպէս եւ նոքայն ի Հրէից. որք եւ զՏէրն Յիսուս սպանին եւ զմարգարէսն, եւ զմեզ հալածեցին, եւ Աստուծոյ յաչաց ելին, եւ ամենայն մարդկան հակառակ եղեն: Եւ արգելուին զմեզ խօսել հեթանոսաց՝ զի ապրեսցին, զի կատարեսցեն զմեղս իւրեանց յամենայն ժամ. քանզի հասեալ է ի վերայ նոցա բարկութիւն մինչեւ ի սպառ: 16:

Ալէլուիա, ալէլուիա. Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. եւ յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Թ. 36:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ ի նոսա. զի էին աշխատեալք եւ ցրուեալք իբրեւ զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ: Յայնժամ ասէ ցաշակերտս իւր. Հունձք բազում են եւ մշակք սակաւ: Արդ՝ աղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս ի հունձս իւր: Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր, ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա, եւ բժշկել զամենայն ցաւս եւ զամենայն հիւանդութիւնս: Եւ առաքելոցն երկոտասանից էին անուանք այսոքիկ. առաջին Սիմովն՝ անուանեալն Պետրոս, եւ Անդրէաս եղբայր նորա: Յակովբոս Զեբեդեայ, եւ Յովհաննէս եղբայր նորա. Փիլիպպոս եւ Բարթողոմէոս. Թովմաս եւ Մատթէոս մաքսաւոր. Յակովբոս Ալփեայ, եւ Ղեբէոս՝ որ անուանեցաւն

Թադէոս. Սիմովն Կանանացի, եւ Յուդայ Սկարիովտացի՝ որ եւ մատնեացն զնա: Զնոսա երկոտասանեսին առաքեաց Յիսուս. պատուիրեաց նոցա եւ ասէ. Ի ճանապարհ հեթանոսաց մի՛ երթայցէք, եւ ի քաղաք Սամարացւոց մի՛ մտանիցէք: Այլ երթայք առաւել առ ոչխարսն կորուսեալս տանն Իսրայէլի: Եւ իբրեւ երթայցէք՝ քարոզեցէք եւ ասացէք, թէ Մերձեալ է արքայութիւն երկնից: Ժ. 7:

---

## ՏԱՍՆԵՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. Ղէ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Փիլիպեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Բ. 12:

Այսուհետեւ, սիրելիք իմ, որպէս յամենայնի հնազանդեցարուք, մի միայն ի գալստեան իմում, այլ առաւել եւս այժմ՝ յորժամ հեռիս եմ ի ձէնջ, ահիւ եւ դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք: Զի Աստուած է, որ յաջողէ ի ձեզ զկամելն եւ զառնելն վասն հաճութեան: Զամենայն ինչ գործեցէք առանց տրտնջելոյ եւ քրթմնջելոյ, զի եղիջիք անբիծք եւ անարատք, որդիք Աստուծոյ, անմեղք ի մէջ կամակոր եւ խեղաթիւր ազգին. յորոց միջի երեւիցիք իբրեւ լուսաւորք յաշխարհի, զբանն կենաց ունել յանձինս ի պարծանս ինձ յաւուրն Քրիստոսի. զի ոչ ընդունայն ինչ ընթացայ, եւ ոչ ընդունայն վաստակեցի: Այլ թէպէտ եւ նուիրիմ ի վերայ պատարագի եւ պաշտաման հաւատոցն ձերոց, խնդամ եւ ուրախակից եմ ամենեցուն ձեր. նոյնպէս եւ դուք խնդացէք եւ ուրախակից եղերուք ինձ: Բայց յուսամ ի Տէր Յիսուս՝ զՏիմոթէոս վաղվաղակի արձակել առ ձեզ. զի եւ ինձ սրտի դիւր լինիցի, յորժամ գիտիցեմ



ինչ զձէնջ: Զի ոչ զոք ունիմ համաշունչ՝ եթէ ընտանեբար հոգայցէ վասն ձեր. զի ամենեքին զանձանց խնդրեն, եւ ոչ զՅիսուսի Քրիստոսի: Բայց զփորձ նորա գիտէք եւ դուք, զի իբրեւ որդի հօր ծառայեաց ընդ իս յաւետարանին: Արդ զսա ակն ունիմ արձակել, որպէս նոյնհետայն զանձնէ ստուգեցից: Այլ յուսացեալ եմ ի Տէր՝ թէ եւ ես իսկ ընդ հուպ եկից: Բայց լաւ համարեցայ զԵպափրոդիտոս զեղբայր եւ զգործակից եւ զզինուորակից իմ, զձեր առաքեալ եւ զպաշտօնեայ իմոց պիտոյից, առաքել առ ձեզ: Քանզի եւ ինքն իսկ յոյժ անձկացեալ է տեսանել զամենեսին զձեզ, եւ հոգայր զի ձեր լուեալ էր թէ խօթացաւ: Եւ արդարեւ խօթացաւ մերձ ի մահ. այլ Աստուած ողորմեցաւ նմա, ոչ նմա միայն, այլ եւ ինձ՝ զի մի՛ տրտմութիւն ի վերայ տրտմութեան կրիցեմ: Արդ փութապէս յղեցի զնա, զի տեսեալ զնա՝ միւսանգամ ուրախ լինիցիք, եւ ես առանց տրտմութեան եղէց: Ընկալջիք զնա ի Տէր ամենայն խնդութեամբ, եւ զայնպիսիսն առ պատուականս ունիջիք. զի վասն գործոյ Տեառն մինչեւ ի մահ մերձեցաւ, գուն գործեալ ոգւովք չափ, զի լցցէ զձեր պակասութիւն իմոյ սպասաւորութեան: 30:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց է Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ժ. 30:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յԵրիքով, եւ անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա եւ վէրս ի վերայ եդին, թողին կիսամահ եւ գնացին: Դէպ եղեւ քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ, եւ տեսեալ զնա՝ զանց արար: Նոյնպէս եւ Ղեւտացի մի եկեալ ընդ նոյն տեղի՝ ետես եւ զանց արար: Սամարացի ոմն ճանապարհորդեալ եկն ընդ նոյն առ նովաւ, եւ տեսեալ զնա՝ գթացաւ: Եւ մատուցեալ պատեաց զվէրս նորա, արկեալ ի վերայ ձէթ եւ գինի. եւ եդեալ ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա ի պանդոկի մի, եւ դարմանեաց զնա: Եւ ի վաղիւ անդր իբրեւ ելանէր անտի,

հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս եւ ասէ. Պարսպան տար դմա, եւ զոր ինչ ծախեսցես ի դա՝ ի միւսանգամ գալստեան իմում հատուցից քեզ: Արդ՝ ո՞ երեւցունց ինոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն ի ձեռս աւազակաց: Եւ նա ասէ. Որ արար ողորմութիւնն ի վերայ նորա. ասէ ցնա Յիսուս. Երթ եւ դու արա նոյնպէս: Եւ եղեւ ի գնալն նոցա, եւ ինքն եմուտ ի գեօղ մի. եւ կին ոմն անուն Մարթա ընկալաւ զնա ի տան իւրում: Եւ նորա էր քոյր մի, որում անուն էր Մարիամ. որ եւ եկն նստաւ առ ոտն Տեառն, եւ լսէր զբանս նորա: Եւ Մարթա զբաղեալ էր ի բազում սպասու. եկն եկաց առ նմա եւ ասէ. Տէր, ոչ ինչ է փոյթ քեզ, զի քոյրդ իմ միայն եթող զիս ի սպասու. արդ՝ ասա դմա զի օգնեսցէ ինձ: Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Մարթա՛, Մարթա, դու հոգաս եւ զբազում իւիք զբաղեալ ես: Բայց աստ սակաւ ինչ պիտոյ է. Մարիամ մանն բարի ընտրեաց, որ ոչ բարձցի ի նմանէ: 42:

---

## ՅԱՍՆԵՐՈՐԴ ՕԱԲԱԹ

**Ցօն է ամենայն սրբոց՝ հինոց եւ նորոց, յայտից եւ անյայտից:**

Ժամամատ. Ընդունարք Քրիստոսի, որք տանջանաց անօրինացն համբերեցիք, եւ զմոլութիւն կռոցն խափանեցիք. դասաւորեալք ընդ հրեշտակս ի յերկինս. որք ունիք զհամարձակութիւն ի Քրիստոսէ, բարեխօսեցէք կեցուցանել զանձինս մեր. զձեզ աղաչեմք:

Սղ. ԺԴ. Ողկիւզածս Տեառն փառաւոր առնէ, որ երդնու ընկերի իւրում եւ ոչ ստէ:

Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քում. կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո:

Պօղոսի առաքելոյն Առաքելոցն Թղթոյն է ընթերցուածս.

ԳԼ. ԺԲ. 1:

Ընդ սուրհեւեւ եւ մեք՝ որ այսչափ շուրջ զմեզ ունիմք զբազմութիւն վկայից, զհպարտութիւն զամենայն ի



բաց ընկեսցուք եւ զմեղս կարեւորս. համբերութեամբ ընթացցուք ի պատերազմին՝ որ առաջի կայ մեզ: Հայեցցուք ի զօրագլուխն հաւատոյ եւ ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ուրախութեանն որ նմա առաջի կայր, յանձն առ զխաչն, արհամարհեաց զամօթն, նստաւ ընդ աջմէ աթոռոյն Աստուծոյ: Ընդ ածէք զմտաւ, որ զայսպիսի համբերութիւն ի մեզանէ հակառակութենէ անտի կրեաց. զի մի՛ աշխատ լինիցիք անձամբք ձերովք եւ լքանիցիք: Օ՛ի չեւ եւս արեամբ չափ պատերազմեալ՝ հակառակ կացէք մեղացն, եւ մոռացարուք զմխիթարութիւնն, որ ընդ ձեզ իբրեւ ընդ որդեակս խօսի: Որդեա՛կ իմ, մի՛ լքանիր ի խրատու Տեառն, եւ մի՛ վհատիցիս՝ յանդիմանեալ ի նմանէ: Օ՛ի զոր սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի՝ զոր ընդունի: Ի խրատու համբերութեան կայք, իբրեւ յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած: 7:

Ընդ ելուբիա,. ալելուիա. Պարծեսցին սուրբքն փառաք եւ ցնծասցեն ի հանգիստս իւրեանց. եւ բարձր արասցեն զԱստուած բերանովք իւրեանց:

Սրբոյ Ա֊եւտարանիս որ ըստ Պ֊ուկասու.

ԳԼ. ԺԲ. 4:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց. Մի զարհուրիցիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ յետ այնորիկ աւելի ինչ ոչ ունիցին առնել: Այլ ցուցից ձեզ յումէ երկնչիցիք. երկնչիջիք յայնմանէ, որ յետ սպանանելոյ՝ ունի իշխանութիւն արկանել ի գեհեն. այո՛ ասեմ ձեզ՝ յայնմանէ երկնչիջիք: Ո՞չ ապաքէն հինգ ճագ երկուց դանգաց վաճառի, եւ մի ի նոցանէ ոչ է մոռացեալ առաջի Աստուծոյ: Այլ ձեր եւ ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է. մի՛ երկնչիք՝ զի քան զբազում ճագս լաւ էք դուք: Ասեմ ձեզ, զի Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, եւ Որդի մարդոյ խոստովանեսցի զնմանէ առաջի հրեշտակաց Աստուծոյ: Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ: 9:

---

# Ի ՏՕՆԻ ԸՆԾԱՅՄԱՆ

# ԱՄԷՆՕՐՀՆԵԱԼ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

## Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ ԻԱ.

---

Ժամամուտ. Աստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց. քանզի ուր քերովբէքն բազմաչեայք եւ աթոռք հրանիւթք եւ վեցթեւեան սերովբէքն նայել ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս յանապականումն ի յարգանդի քում որպէս աղախին զՏէր, եւ ծնար որպէս մարդ զԱստուածն բոլորից՝ զմարմնացեալն առ ի քէն զանճառ զԲանն, ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Սղ. կէ. Տէր տացէ զբան՝ ոյք աւետարանեն զօրութեամբ բազմաւ:

Յարիցէ Աստուած, եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Զ. 16:

Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք որպէս եւ ասաց Աստուած, թէ Բնակեցայց ի նոսա, եւ գնացից ի նոսա, եւ եղէց նոցա Աստուած, եւ նոքա եղիցին իմ ժողովուրդ: Վասն որոյ ելէք ի միջոյ նոցա եւ մեկնեցարուք, ասէ Տէր, եւ ի պիղծս մի՛ մերձենայք, եւ ես ընկալայց զձեզ, եւ ես եղէց ձեզ ի հայր, եւ դուք եղիցիք ինձ յուստերս եւ ի դստերս, ասէ Տէր ամենակալ: Իսկ որովհետեւ զայս աւետիս ունիմք, սիրելիք, սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղծութենէ մարմնոյ եւ հոգւոյ. կատարեսցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ: Է. 1:



Ալէլուիա, ալէլուիա. Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ. եւ զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ա. 39:

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ, գնաց ի լեռնակողմն փութապէս ի քաղաքն Յուդայ: Եւ եմուտ ի տուն Զաքարիայ, եւ ետ ողջոյն Եղիսաբեթի: Եւ եղեւ իբրեւ լուաւ զողջոյնն Մարիամու Եղիսաբեթ, խաղաց մանուկն յորովայնի նորա. եւ լցաւ Եղիսաբեթ Հոգւով սրբով: Եւ ի ձայն բարձր աղաղակեաց եւ ասէ. Օրհնեալ ես դու ի կանայս, եւ օրհնեալ է պտուղ որովայնի քոյ: Եւ ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս: Զի ահաւասիկ իբրեւ եղեւ ձայն ողջունի քո յականջս իմ, խաղաց ցնծալով մանուկս յորովայնի իմում: Եւ երանի՞ որ հաւատայցէ՝ եթէ եղիցի կատարումն ասացելոցս նմա ի Տեառնէ: Եւ ասէ Մարիամ. Մեծացուսցէ անձն իմ զՏէր: Եւ ցնծացաւ հոգի իմ յԱստուած փրկիչ իմ: Զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. զի ահա յայսմհետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք: Զի արար ինձ մեծամեծս հզօրն, եւ սուրբ է անուն նորա: Եւ ողորմութիւն նորա ազգաց յազգս երկիւղածաց իւրոց: Արար զօրութիւն բազկաւ իւրով. ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց: Քակեաց զհզօրս յաթոռոց, եւ բարձրացոյց զխոնարհս: Զքաղցեալս լցոյց բարութեամբ, եւ զմեծատունս արձակեաց ունայնս: Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրում՝ յիշել զողորմութիւնս: Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրահամու եւ զաւակի նորա յաւիտեան: Եկաց Մարիամ առ նմա իբրեւ ամիսս երիս, եւ դարձաւ ի տուն իւր: 56:

---

## ԱՌԱՋԻՆ ԿԻՐԱԿԷ ՅԻՍՆԱԿԱՑ

*Յիսնակաց բարեկենդան:*

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ

Ըստուածածնէն եւ ի միշտ կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Ըստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ· կդ· Քեզ վայելէ օրհնութիւն Ըստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք Երուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Փիլիպեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ· Դ· 8:

Ընդհուպեւ, եղբարք, որ ինչ ճշմարտութեամբ է, որ ինչ պարկեշտութեամբ, որ ինչ արդարութեամբ, որ ինչ սրբութեամբ, որ ինչ սիրով, որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ քաջութեամբ, որ ինչ գովութեամբ, զայն խորհիջիք: Զոր ուսարուք եւ ընկալարուք եւ լուայք եւ տեսէք յիս, զայն արարէք, եւ Ըստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ: Ուրախ եղէ ես ի Տէր յոյժ, զի եւ դուք զմտաւ ածէք հոգալ ինչ վասն իմ, որպէս եւ հոգայիքն. բայց բարբարէիք իմն է: Ոչ թէ առ կարօտութեան ինչ ասեմ, զի ես ուսայ՝ որովք կարեմ բաւական լինել: Գիտեմ նուազել, գիտեմ առատանալ. յամենայնի ամենեւին խնդամուտ եմ եւ յագել եւ քաղցենալ, եւ առատանալ եւ նուազել: Զամենայնի կարող եմ այնու՝ որ զօրացոյցն զիս: Այլ բարւոք արարէք՝ զի կցորդ եղերուք ինձ ի նեղութիւնս: Գիտէք եւ դուք, զի կզոդ եղերուք ինձ ի նեղութիւնս: Գիտէք եւ դուք, Փիլիպեցիք, զի ի սկզբան աւետարանին՝ իբրեւ ելի ես ի Մակեդոնիա, եւ ոչ մի եկեղեցի հաղորդեաց ինձ յաղագս տալոյ եւ առնլոյ, բայց միայն դուք. զի եւ ի Թեսաղոնիկ մի անգամ եւ երկիցս զպէտս իմ ետուք բերել: Ոչ թէ եթէ խնդրեմ զտուրն, այլ խնդրեմ զպտուղն, որ յաճախէ ի բան ձեր: Ընդ իմ առեալ զամենայն, եւ առատացեալ եմ. ընկալայ, եւ լի եմ ի ձեռն Եպափրոդիտեայ, որ է ի ձէնջ հոտ անուշից՝ պատարագ ընդունելի, հաճոյ Ըստուծոյ: Եւ Ըստուած իմ լի արասցէ զամենայն պէտս ձեր ըստ իւրում մեծութեանն փառաւք ի Քրիստոս Յիսուս: Ընդ Ըստուծոյ եւ Հօր մերում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:



Աղջոյն տաջիք ամենայն սրբոց ի Քրիստոս Յիսուս: Աղջոյն տան ձեզ որ ընդ իս են եղբարք: Աղջոյն տան ձեզ ամենայն սուրբք, մանաւանդ որ ի տանէս կայսեր են: Շնորհք Տեառն Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում. ամէն: 24:

Ընդ Ելբրուիա, ալէլուիա. Յարութեան է Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ· ԺԱ· 1:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ եղեւ ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս. եւ իբրեւ դադարեաց՝ ասէ ցնա ոմն յաշակերտացն իւրոց. Տէր, ուսո մեզ յաղօթս կալ, որպէս Յովհաննէս ուսոյց աշակերտաց իւրոց: Ասէ ցնոսա. Յորժամ կայցէք յաղօթս,ասացէք. Հայր մեր, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո: Հաց մեր հանապազորդ տուր մեզ զօրըստօրէն: Եւ թող մեզ զվեղս մեր, զի եւ մեք թողումք ամենայնի՝ որ պարտիցի մեզ. եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն: Եւ ասէ ցնոսա. Ո՞վ է ի ձէնջ՝ որոյ իցէ բարեկամ, եւ երթայցէ առ նա ի մէջ գիշերի, եւ ասիցէ ցնա. Բարեկամ, տուր ինձ փոս երիս նկանակս. զի բարեկամ իմ եկն առ իս ճանապարհէ, եւ ոչ ինչ ունիմ դնել առաջի նորա: Եւ նա ի ներքուստ տայցէ պատասխանի եւ ասիցէ. Մի՛ աշխատ առներ զիս, զի դուռդ փակեալ են, եւ մանկունքս ընդ ինեւ կան յանկողնի. ոչ կարեմ յառնել եւ տալ քեզ: Ասեմ ձեզ, եթէ ոչ յարուցեալ տայցէ նմա վասն բարեկամութեանն, սակայն վասն ժուռթեանն յարուցեալ տայցէ նմա՝ զինչ եւ պիտոյ իցէ: Եւ ես ասեմ ձեզ. խնդրեցէք եւ տացի ձեզ, հայեցեցէք եւ գտջիք, բախեցէք եւ բացցի ձեզ: Ամենայն որ խնդրէ՝ առնու, եւ որ հայցէ՝ գտանէ, եւ որ բախէ՝ բացցի նմա: Յո՞ր ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ փոխանակ ձկան՝ օձ տայցէ նմա: Եւ կամ խնդրիցէ ձու, միթէ կարի՞ճ տայցէ նմա: Իսկ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց, որչափ եւս առաւել Հայր ձեր յերկնից տացէ բարիս այնոցիկ, որ խնդրենն ի նմանէ: 13:

Եւ ապա պահէ Յեհանաւմայիլին, եւ պահէ ոչ լինիլ:

## ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Յոհաննու. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարճացար ի սուրբ կուսէն. որ վասն մեր ի յերկինից իջեր եւ լուսաւորեցեր զտիեզերս. զկաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զկաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ· ճՀՊ· Ընդայութիւն քո ընդայութիւն ամենայն յաւիտենից. եւ տէրութիւն քո յազգէ մինչեւ յազգ:

Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր. եւ արդար է յամենայն գործս իւր:

Պօղոսի առաքելոյն ի կողոսացւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ· Ա· 1:

Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամաքն Աստուծոյ, եւ Տիմոթէոս եղբայր, առ կողոսացիս սուրբս եւ հաւատացեալս, եղբարս ի Քրիստոս: Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ: Գոհանամք զԱստուծոյ եւ զՀօրէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յամենայն ժամ վասն ձեր աղօթս առնեմ: Լսելով լուաք զհաւատսն ձեր որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, եւ զսէրն որ ընդ ամենայն սուրբս ունիք, վասն յուսոյն որ պահի ձեզ յերկինս, զորմէ լուարուք բանիւն ճշմարտութեան աւետարանին, որ եհաս առ ձեզ. որպէս ընդ ամենայն աշխարհ աճէ եւ պտղաբերէ, որպէս եւ ի ձեզ եւս մինչ, յօրէ յորմէ լուարուք եւ ծանեայք զշնորհն Աստուծոյ ճշմարտութեամբ: Որպէս եւ ուսարուք յԵպափրեայ սիրելւոյ ծառայակից մերմէ, որ է հաւատարիմ վասն ձեր պաշտօնեայ Յիսուսի, որ եւ պատմեաց մեզ զձեր սէրն հոգւով: Վասն այնորիկ եւ մեք յօրէ յորմէ լուաք, ոչ դադարեմք վասն ձեր աղօթս առնել եւ խնդրուածս մատուցանել. զի լինուցուք զգիտութիւն կամաց նորա ամենայն իմաստութեամբ եւ հոգեւոր հանճարով. գնալ ձեզ արժանի Տեառն յամենայն հաճութեան, յամենայն գործս բարութեան, պտղաբերք եւ աճեցուն՛ք գիտութեամբն Աստուծոյ,



ամենայն զօրութեամբ զօրացեալք ըստ զօրութեան փառացն նորա, յամենայն համբերութիւն եւ երկայնմտութիւն: 11:

Ընկերութիւն, ալէլուիա. Նկայք ցնծասցուք ի Տէր. աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ· ԺԱ· 14:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ հանէր դեւ մի համր. եւ եղեւ ելանել դիւին՝ խօսեցաւ համրն, եւ զարմացան ամենայն ժողովուրդքն: Եւ ոմանք ի նոցանէ ասեն. Ընդ զբեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս: Եւ այլք փորձէին եւ նշան յերկինից խընդրէին ի նմանէ: Իսկ նորա գիտացեալ զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, եւ տունն բաժանեալ յանձն՝ կործանի: Ապա եթէ եւ սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նորա. զի ասէք զինէն եթէ բզեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս: Եթէ ես բզեղզեբուղաւ հանեմ զդեւս, որդիքն ձեր ո՞վ հանիցեն. վասն այդորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք: Իսկ եթէ մատամբ Աստուծոյ հանեմ զդեւս, ապա հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ: Յորժամ հզօր վաւրեալ՝ պահիցէ զտուն իւր, ի խաղաղութեան են ինչք նորա: Այլ եթէ հզօրագոյն քան զնա ի վերայ եկեալ՝ յաղթեսցէ նմա, զսպառազինութիւնն նորա հանէ՝ յոր յուսացեալ էր, եւ զաւար նորա բաշխեսցէ: Որ ոչ է ընդ իս՝ հակառակ իմ է, եւ որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ: 23:

---

## ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Յոհաննու. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարճացար ի սուրբ կուսէն. որ վասն մեր ի յերկինից իջեր եւ լուսաւորեցեր զտիեզերս. զկաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զկաղաղութիւն եւ զողորմութիւն. որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Սղ. Ե. Երկիր պագից ի տաճար սուրբ քո. երկիւղիւ քո Տէր:

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քոյ Տէր. զի օրհեսցես դու զարդարն:

Պօղոսի առաքելոյն ի Կողոսացւոց թղթոյն է ընթերցուածս: Գլ. Ա. 12:

Ե՛ղբարք, ուրախութեամբ գոհանալ զԱստուծոյ Հօրէ՝ որ կոչեացն զձեզ ի մասն վիճակի սրբոցն ի լոյս. որ փրկեացն զմեզ յիշխանութենէ խաւարի, եւ փոխեաց զմեզ յարքայութիւն Որդւոյն իւրոյ սիրելւոյ. որով ունիմք զփրկութիւն արեամբն նորա, եւ զթողութիւն մեղաց մարմնովն նորա. որ է պատկեր աներեւութին Աստուծոյ, անդրանիկ ամենայն արարածոց: Զի նովաւ հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի, որ երեւին եւ որ ոչն երեւին. եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք, ամենայն ինչ նովաւ եւ ի նոյն հաստատեցաւ: Եւ նա է յառաջ քան զամենայն, եւ ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ: Եւ նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ, որ է սկիզբն, անդրանիկ ի մեռելոց. զի եղեցի ինքն յամենայնի յառաջացեալ: Զի ի նմա հաճեցաւ ամենայն լրումն աստուածութեանն բնակել: Եւ նովաւ հաշտեցուցանել զամենայն ի նոյն. արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի եւ որ ինչ յերկինս: Եւ զձեզ որ երբեմն օտարացեալքն էիք, եւ թշնամիք խորհրդովք ի գործսն չարութեան, այժմ աւադիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ իւրոյ ի ձեռն մահուն իւրոյ, յանդիման կացուցանել զձեզ սուրբս եւ ամբիծս եւ անարատս առաջի նորա: Եթէ կայցէք ի հաւատսն արմատացեալք եւ հաստատեալք, եւ անշարժք ի յուսոյ աւետարանին՝ զոր լուարուք քարոզելոյ ընդ ամենայն արարածս ի ներքոյ երկնից, որոյ եղէ ես Պօղոս պաշտօնեայ: 23:

Ալէլուիա, ալէլուիա. Երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէք Տեառն ամենայն երկիր. երգեցէք Տեառն եւ բարձր արարէք զանուն նորա:



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԱ. 27:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ եղեւ մինչ դեռ խօսէր զայս, ձայն եբարձ կին մի ի ժողովրդենէ անտի եւ ասէ. Երանի՛ որովայնին՝ որ կրեաց զքեզ, եւ ստեանցն՝ որ դիեցուցին զքեզ: Եւ նա ասէ. Նա երանի՛ այնոցիկ է, որ լսեն զբանն Աստուծոյ եւ առնիցեն: Եւ ի դիզանել ի վերայ նորա ժողովրդոցն՝ սկսաւ ասել. Ազգս այս՝ ազգ չար է. նշան խնդրէ, եւ նշան յերկնից ոչ տացի նմա՝ բայց նշանն Յովնանու: Զի որպէս եղեւ Յովնան նշան Նինուէացւոցն, այնպէս եղիցի եւ Որդի մարդոյ ազգիս այսմիկ: Դշխոյն հարաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ արս ազգիս այսորիկ եւ դատապարտեսցէ զսա, զի եկն ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սողոմովնի. եւ ահա առաւել քան զՍողոմովն է աստ: Արք Նինուէացիք յարիցեն ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ եւ դատապարտեսցեն զսա, զի ապաշխարեցին ի քարոզութեանն Յովնանու. եւ ահա առաւել քան զՅովնան է աստ: 32:

---

## ԱՌԱՋԻՆ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՁԵ. Կեցո զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Կողոսացւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Ա. 24:

Եւ արդ ուրախ եմ ի չարչարանս իմ վասն ձեր, եւ լնում զպակասութիւն նեղութեանցն Քրիստոսի ի մարմնի իմում, վասն մարմնոյ նորա, որ է եկեղեցի. որոյ եղէ ես Պօ-

ղոս պաշտօնեայ ըստ տնտեսութեանն Աստուծոյ, որ տուեալ
է ինձ ի ձեզ՝ կատարել զբանն Աստուծոյ. զխորհուրդն որ
ծածկեալն էր ի յաւիտեանցն եւ յազգաց, որ այժմ յայտ-
նեցաւ սրբոց իւրոց: Որոց կամեցաւ Աստուած ցուցանել,
թէ զինչ է մեծութիւն փառաց խորհրդոյն նորա ի հե-
թանոսս, որ է Քրիստոս ի ձեզ յոյսն փառաց. զոր մեքն
քարոզեմք, եւ խրատեմք զամենայն մարդ, եւ ուսուցանեմք
զամենայն մարդ ամենայն հոգեւոր իմաստութեամբ. զի կա-
ցուսցուք զամենայն մարդ կատարեալ ի Քրիստոս Յիսուս:
Յոր եւ աշխատիմ պատերազմեալ ըստ յաջողութեան նորա,
որ յաջողեալ է յիս զօրութեամբ: Կամիմ զի գիտիցէք
դուք, որպիսի ճգնութիւն ունիմ յանձին վասն ձեր եւ վասն
Լաւոդիկեցւոցն, եւ որոց չիցէ տեսեալ զերեսս իմ մարմնով:
Ջի մխիթարեսցին սիրտք նոցա տեղեկացեալք սիրով, եւ
յամենայն մեծութիւն լրութեան իմաստութեան ի գիտու-
թիւն խորհրդոյն Աստուծոյ Հօր 'ի Քրիստոս Յիսուս,
յորում ամենայն գանձք իմաստութեան եւ գիտութեան
ծածկեալ կան: Այլ զայս ասեմ, զի մի' ոք զձեզ զառան-
ցուսցէ պատիր բանիւք: Ջի թէպէտ եւ մարմնով հեռի եմ,
այլ հոգւով ընդ ձեզ եմ. խնդամ, իբրեւ տեսանեմ զկարգն
ձեր եւ զհաստատութիւն հաւատոցն ձերոց որ ի Քրիստոս
Յիսուս: Արդ որպէս ընկալարուք զՔրիստոս Յիսուս զՏէր,
նովին գնասջիք. արմատացեալք եւ շինեալք ի նա, եւ հաս-
տատեալք ի հաւատս, որպէս ուսարուքն, առաւելեալք ի
նմին գոհութեամբ: Բ. 7:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԱ. 33:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ոչ ուրուք լուցեալ ճրագ՝ դնէ ի թագստեան, եւ ոչ
ընդ գրուանաւ. այլ ի վերայ աշտանակի, զի որ մտանեն՝
լոյս տեսանիցեն: Ճրագ մարմնոյ ակն է. յորժամ ակնն
առատ է, ամենայն մարմինն լուսաւոր եղիցի. եւ երբ ակն
չար է, եւ մարմինն խաւարին եղիցի: Արդ զգոյշ լեր, գուցէ
լոյսդ որ ի քեզ է՝ խաւար իցէ: Եթէ մարմինդ քո ամենայն



լուսաւոր է, եւ չգուցէ մասն ինչ խաւարին, եղիցի լու-
սաւոր ամենայն. որպէս յորժամ ճրագն նշողիւք լուսաւո-
րեսցէ զքեզ: Եւ մինչ խօսէր զայս, աղաչէր զնա ոմն փարի-
սեցի՝ զի ճաշ կերիցէ առ նմա. եւ նա մտեալ բազմեցաւ:
Իբրեւ ետես փարիսեցին՝ զարմացաւ, զի նախ ոչ մկրտե-
ցաւ յառաջ քան զճաշ: Ասէ ցնա Տէր. Այժմ դուք
փարիսեցիք զարտաքին բաժակին եւ զպնակին սրբէք. եւ
ներքինն ձեր լի է յափշտակութեամբ եւ չարութեամբ: Ան-
միտք, ո՞չ ապաքէն որ զարտաքինն արար, եւ զներքինն նոյն
արար: Բայց աղէ զարժանն իսկ՝ տուք ողորմութիւն, եւ
ահա ամենայն սուրբ է ձեր: Այլ վայ ձեզ փարիսեցւոց, զի
տասանորդէք զանանուխ եւ զփեգենայ եւ զամենայն բանջար,
եւ անցանէք զիրաւամբք եւ զսիրովն Աստուծոյ. զայս արժան
էր առնել, եւ զայնու ոչ անցանել: 42:

---

## ԱՌԱՋԻՆ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մար-
մնացար ի սուրբ Կուսէն, որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ
լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ
Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր, զխաղաղութիւն եւ
զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարգասէր:

Սղ. ՂԸ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր
պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:
Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին
ի քերոբէս. սասանեցաւ երկիր:

Պօղոսի առաքելոյն ի Կողոսացւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Գ. 15:

Ե՛ղբարք, գոհացողք լինիջիք, զի բանն Քրիստոսի
բնակեսցէ ի ձեզ առատապէս, ամենայն իմաստութեամբ
ուսուցանել եւ խրատել զմիմեանս. սաղմոսիւք եւ օրհնու-
թեամբք եւ երգովք հոգեւորօք եւ շնորհօք օրհնել զԱս-
տուած ի սիրտս ձեր. եւ զամենայն զոր եւ առնիցէք բանիւք
եւ արդեամբք, զամենայն յանուն Տեառն Յիսուսի արասջիք.
գոհացողք լինիջիք զԱստուծոյ եւ զՀօրէ նովաւ: Կանայք,

հնազանդ լերուք արանց ձերոց, որպէս եւ վայել է ի Տէր: Ա՛րք, սիրեցէք զկանայս ձեր, եւ մի՛ դառնացուցանէք զնոսա. Ո՛րդիք, հնազանդ լերուք ծնողաց ձերոց յամենայնի, զի այն է հաճոյ առաջի Տեառն: Հա՛րք, մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր, զի մի՛ տրտմեսցին: Ծա՛ռայք, հնազանդ լերուք տերանց ձերոց յամենայնի, մի՛ առ ականէ ծառայութեամբ՝ իբրեւ մարդահաճոյք, այլ միամտութեամբ սրտի երկնչել ի Տեառնէ: Զոր ինչ եւ առնիցէք՝ սրտի մտօք գործեսջիք իբրեւ Տեառն, եւ ոչ իբրեւ մարդկան: Գիտասջիք, զի ի Տեառնէ առնուցուք զհատուցումն ժառանգութեան ձերոյ. քանզի Տեառն Քրիստոսի ծառայէք: Իսկ ապիրատն ընկալցի ըստ իւրում ապիրատութեանն. զի չիք ակնառութիւն առաջի Աստուծոյ: Տեա՛րք, զիրաւունս եւ զհաւասարութիւն ծառայից ձերոց շնորհեցէք. գիտասջիք, զի եւ ձեր Տէր գոյ յերկինս: Աղօթից ստէպ կացէք, տքնել ի նմին գոհութեամբ: Աղօթս արարէք միանգամայն եւ վասն մեր. զի Աստուած բացցէ մեզ դուռն բանին, խօսել զխորհուրդն Քրիստոսի, վասն որոյ եւ կապեալս կամ զի յայտնի արարից զնա՝ որպէս արժան իցէ ինձ խօսել: Դ. 4:

Ալէլուիա, ալէլուիա. Բարձր արարից զընտրեալն ի ժողովրդէնէ իմմէ. գտի զԴաւիթ ծառայ իմ, եւ իւղով սրբով իմով օծի զնա:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԱ. 49:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Վասն այնորիկ իմաստութիւն Աստուծոյ ասաց. Առաքեցից ի նոսա մարգարէս եւ առաքեալս, եւ ի նոցանէ սպանանիցեն եւ հալածիցեն: Զի խնդրեսցի արիւն ամենայն մարգարէից՝ հեղեալ ի սկզբանէ աշխարհի՝ յազգէ յայդմանէ, յարենէն Աբելի մինչեւ յարիւնն Զաքարիայ կորուսելոյ ընդ սեղանն եւ ընդ տաճարն. այո՛, ասեմ ձեզ՝ խնդրեսցի յազգէ յայդմանէ: Վա՛յ ձեզ օրինականացդ, զի թաքուցանէք զփականս գիտութեանն. դուք ոչ մտանէք, եւ որ մտանելոցն են՝ արգելուք: Եւ ի խօսելն զայս ամենայն առ նոսա առաջի ամենայն ժողովրդեանն, զամօթի հարկանէին. եւ սկսան



գպիրքն եւ փարիսեցիք զչարել եւ գրգռել ընդ նմա վասն բազում իրաց. եւ սպասել որսալ ինչ բանս ի բերանոյ նորա, զի չարախօսեսցեն զնմանէ: 54:

---

## ԱՌԱՋԻՆ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Կողոսացւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Դ. 5:

Իմաստութեամբ գնասջիք առ արտաքինսն, գնոյ առեալ զժամանակս: Եւ բանն ձեր յամենայն ժամ լի շնորհօք Տեառն իբրեւ աղիւ համեմեալ լիցի, գիտել որպէս արժան իցէ ձեզ իւրաքանչիւր ումեք տալ պատասխանի: Այլ որ ինչ զինէն է՝ ցուցցէ ձեզ զամենայն Տիւքիկոս սիրելի եղբայր եւ հաւատարիմ պաշտօնեայ եւ ծառայակից ի Տէր. զոր առաքեցի առ ձեզ դմին իրի, զի գիտասջիք վասն մեր, եւ մխիթարեսցէ զսիրտս ձեր, Ոնեսիմաւ հանդերձ եղբարբ հաւատարմաւ եւ սիրելեաւ՝ որ է ի ձէնջ. զամենայն ինչ ցուցցեն ձեզ՝ որ ինչ աստ է: Ողջոյն տայ ձեզ Արիստարքոս գերեկից իմ, եւ Մարկոս եղբօրորդի Բառնաբայ, վասն որոյ առէք պատուէր՝ եթէ եկեսցէ առ ձեզ՝ ընկալջիք զնա, եւ Յիսուս՝ որ անուանեալն է Յուստոս, որք են ի թլփատութենէ անտի. զի դոքա միայն գործակից եղեն ինձ յարքայութեանն Աստուծոյ, որք եւ եղեն իսկ ինձ մխիթարութիւն: Ողջոյն տայ ձեզ Եպափրաս՝ որ ի ձէնջ ծառայ Քրիստոսի Յիսուսի է. յամենայն ժամ պատերազմեալ վասն ձեր յաղօթս, զի կայցէք կատարեալք եւ լցեալք յամենայն կամս Աստուծոյ: Վկայեմ նմա, զի բազում աշխատութիւն ունի վասն ձեր եւ վասն Լաւոդիկեցւոցն, եւ վասն այնոցիկ՝ որ յԵրապոլիսն են: Ող-

ջոյն տայ ձեզ Ղուկաս բժիշկ եւ սիրելի, եւ Դեմաս, Ողջոյն տաջիք եղբարց՝ որք են ի Լաւոդիկեայ եւ ի Նիմփայ, եւ որ առտնին եկեղեցին է նորա: Եւ յորժամ ընթեռնուցու առ ձեզ թուղթդ, արասջիք զի եւ ի Լաւոդիկեցւոց եկեղեցւոջն ընթերցցի. եւ զառ ի Լաւոդիկեցւոցն՝ զի եւ դուք ընթեռնուցուք: Եւ ասասջիք ցԱրքիպպոս. Զգոյշ լեր սպասաւորութեանդ՝ զոր ընկալար ի Տէր, զի զայդ կատարեսցես: Ողջոյնդ ձեռին իմոյ Պօղոսի է: Յուշ լիցին ձեզ կապանքս իմ: Շնորհք ընդ ձեզ: 18:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԲ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Որովք ի կուտել բիւրաւորաց ժողովրդեանն՝ մինչեւ կոխել զմիմեանս, սկսաւ ասել ցաշակերտսն իւր. Նախ՝ զգոյշ լերուք անձանց ի խմորոյ փարիսեցւոցն, որ է կեղծաւորութիւն: Զի ոչ ինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի: Վասն զի զոր ինչ ասիցէք ի խաւարի, լսելի լիցի ի լոյս. եւ զոր յունկանէն խօսեցարուք ի շտեմարանս, քարոզեսցի ի վերայ տանեաց: Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց. մի՛ զարհուրիցիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ յետ այնորիկ աւելի ինչ ոչ ունիցին առնել: Այլ ցուցից ձեզ յումէ երկնչիցիք. երկնչիջիք յայնմանէ՝ որ յետ սպանանելոյ ունի իշխանութիւն արկանել ի գեհեն. այո՛ ասեմ ձեզ, յայնմանէ երկնչիջիք: Ո՞չ ապաքէն հինգ ձագ երկուց դանգաց վաճառի. եւ մի ի նոցանէ ոչ է մոռացեալ առաջի Աստուծոյ: Այլ ձեր եւ ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է. մի՛ երկնչիք՝ զի քան զբազում ձագս լաւ էք դուք: Ասեմ ձեզ. զի ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, եւ Որդի մարդոյ խոստովանեսցի զնմանէ առաջի հրեշտակաց Աստուծոյ: Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ: Եւ ամենայն որ ասէ բան զՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զՀոգին սուրբ հայհոյեսցէ՝ մի՛ թողցի նմա: Այլ յորժամ տանիցին զձեզ ի ժողովուրդս եւ ի պետու-



թիւնս եւ յիշխանութիւնս, մի՛ հոգայցէք՝ որպէս թէ զինչ պատասխանի տայցէք կամ զինչ ասիցէք: Զի Հոգին սուրբ ուսուսցէ ձեզ ի նմին ժամու՝ զինչ պարտ իցէ խօսել: 12:

---

## ԱՌԱՋԻՆ ԾԱԲԱԹ

### Սրբոյն Գրիգորի Սքանչելագործին եւ Միւռոնայ եպիսկոպոսին:

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցէք զաթոռ ի յերկրի. առաքելական առէք զպատիւ յերկնուստ, ծառայք Քրիստոսի ո՛վ երանելիք ի հարս սուրբ հայրապետք: Քանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 1:

Զերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրեւ երիցակիցս եւ վկայս չարչարանացն Քրիստոսի, որ եւ հանդերձեալ փառացն յայտնելոց հաղորդ. արածեցէք որ ի ձեզ հօտդ է Աստուծոյ. վերակացու լինել մի՛ իբրեւ ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի՛ զօշաքաղութեամբ, այլ յօժաթեամբ. մի՛ իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին: Զի յերեւել հօտապետին՝ ընդունիջիք զանթառամ փառաց պսակն: Սոյնպէս եւ երիտասարդք, հնազանդ լերուք ծերոց: Ամենեքին ընդ միմեանս զխոնարհութիւն ունիցիք. զի Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց: Խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ, զի զձեզ բարձրացուսցէ ի ժամանակի. Զամենայն հոգս ձեր ընկեցէք ի նա, զի նա է որ հոգայ վասն ձեր: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ժ. 11:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց: Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն եւ փախչի, եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ. քանզի վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն: Ես եմ հովիւն քաջ, եւ ճանաչեմ զիմսն եւ ճանաչիմ յիմոցն: Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայր. եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց: Նա եւ այլ եւս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ. եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր, եւ ձայնի իմում լուիցեն, եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ: 16:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՅԻՍՆԱԿԱՑ

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. կդ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տային աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսիառաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 1:

Պօղոս եւ Սիղուանոս եւ Տիմոթէոս, եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց, յԱստուած Հայր մեր եւ ի Տէր Յիսուս Քրիստոս: Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն: Գոհանամք զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձեր ամենեցուն, յիշատակ առնել յաղօթս մեր անդադար, յիշել զձեր գործն հաւատոց եւ զվաստակ սիրոյ եւ զհամբերութիւն յուսոյ



Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ առաջի Աստուծոյ եւ Հօր մերոյ: Գիտէք, եղբարք սիրեցեալք յԱստուծոյ, զընտրութիւնն ձեր. զի աւետարանն մեր ոչ եղեւ առ ձեզ միայն բանիւ, այլ եւ զօրութեամբ եւ Հոգւով սրբով եւ լրութեամբ բազմաւ. որպէս եւ գիտէք իսկ թէ որպիսիք եղեաք ի միջի ձերում վասն ձեր: Եւ դուք նմանեալք մեզ եւ Տեառն, ընկալայք զբանն ի բազում նեղութեան խնդութեամբ Հոգւոյն սրբոյ, լինել ձեզ օրինակ ամենայն հաւատացելոց, որ են ի Մակեդոնիա եւ յԱքայիա: Զի ի ձէնջ հնչեաց բանն Աստուծոյ ոչ միայն ի Մակեդոնիա եւ յԱքայիա, այլ եւ յամենայն տեղիս հաւատքն ձեր՝ որ առ Աստուած են, սփռեցան. զի այսուհետեւ ոչ ինչ է պիտոյ մեզ եւ խօսել ինչ: Զի նոքին իսկ պատմեն վասն մեր, թէ որպէս եղեւ մեզ մուտ առ ձեզ, եւ որպէս դարձայք առ Աստուած ի կռոց անտի, ծառայել Աստուծոյ կենդանւոյ եւ ճշմարտի, եւ ակն ունել Որդւոյ նորա յերկնից, զոր յարոյցն ի մեռելոց զՅիսուս՝ որ փրկելոցն է զմեզ ի բարկութենէ անտի, որ գալոցն է: 10:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԲ. 13:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ասէ ոմն ի ժողովրդենէն ցնա. Վարդապետ, ասա ցեղբայր իմ բաժանել ընդ իս զժառանգութիւնն: Եւ նա ասէ ցնա. Այր դու՝ ո՞կացոյց զիս դատաւոր կամ բաժանարար ի վերայ ձեր: Եւ ասէ ցնոսա. Տեսէք եւ զգոյշ լերուք յամենայն ագահութենէ. զի ոչ եթէ ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա: Խօսեցաւ առ նոսա առակ մի եւ ասէ. Առն ուրումն մեծատան ետուն անդք տոհմականս. եւ խորհէր ի միտս իւր եւ ասէր. Զի՞ գործեցից, զի ոչ գոյ տեղի՝ ուր ժողովեցից զարդիւնս իմ: Եւ ասէ. Գիտեմ զինչ արարից. քակեցից զշտեմարանս իմ, եւ եւս մեծամեծս շինեցից, եւ անդր ժողովեցից զցորեան եւ զամենայն բարութիւնս իմ: Եւ ասացից ցանձն իմ. Ա՛նձն, ունիս բազում բարութիւնս

համբարեալ ամաց բազմաց. հանգիր, կեր, արբ եւ ուրախ լեր: Ասէ ցնա Աստուած. Ա՛նմիտ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջիցեն. իսկ զոր պատրաստեցերն՝ ո՞ւմ լինիցի: Նոյնպէս եւ որ գանձէ անձին, եւ ոչ յԱստուած մեծանայցէ: Ասէ ցաշակերտսն իւր. Վասն այսորիկ ասեմ ձեզ. մի՛ հոգայք ընդ ոգւոյ՝ թէ զի՛նչ ուտիցէք, եւ մի՛ ընդ մարմնոյ՝ թէ զի՛նչ զգենուցուք: Զի ոգի առաւել է քան զկերակուր, եւ մարմին քան զհանդերձ: Հայեցարուք ընդ ագռաւս, զի ոչ սերմանեն եւ ոչ հնձեն, որոց ոչ գոն շտեմարանք եւ ոչ համբարանոցք, եւ Աստուած կերակրէ զնոսա. ո՛րչափ եւս առաւել զձեզ՝ որ լաւ էք քան զթռչունս: Ո՞վ ի ձէնջ առ հոգալ՝ կարիցէ յաւելուլ ի հասակ իւր կանգուն մի: Իսկ արդ՝ թէ փոքուն չէք բաւական՝ վասն այլոցն զի հոգայցէք: Հայեցարուք ընդ շուշանն՝ ո՛րպէս աճէ. ոչ ջանայ եւ ոչ նիւթէ. ասեմ ձեզ եւ ոչ Սողոմոնն յամենայն ի փառսն իւր՝ զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ: Իսկ եթէ զխոտն՝ որ այսօր ի բացի է եւ վաղիւ ի հնոց արկանելի, Աստուած այնպէս զգեցուցանէ, ո՛րչափ եւս առաւել զձեզ, թե՛րահաւատք: Եւ դուք մի՛ խնդրէք՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք եւ մի՛ զբաղնուք. զի զայն ամենայն հեթանոսք աշխարհի խնդրեն. այլ ձեր Հայրն գիտէ՝ զի պիտոյ է այն ամենայն: Բայց խնդրեցէք զարքայութիւն Աստուծոյ. եւ այն ամենայն յաւելցի ձեզ: 31:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### Սրբոց կուսանացն Յուլիանեայ եւ Վասիլուհւոյ:

Ժամամուտ. Հարսնացեալք Քրիստոսի երկնաւոր փեսային, դստերք վերին Սիոնի. խնդրեցէք ի Քրիստոսէ զհաշտութիւն եւ զմեծ զողորմութիւն:

Սղ. Խդ. Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա. եւ զընկերս նորա տարցին նմա:

Բղխեաց սիրտ իմ բան բարի. եւ ասեմ զգործս իմ թագաւորի:



Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Զ. 16:

Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք որպէս եւ ասաց Աստուած, թէ Բնակեցայց ի նոսա, եւ գնացից ի նոսա, եւ եղէց նոցա Աստուած, եւ նոքա եղիցին իմ ժողովուրդ: Վասն որոյ ելէք ի միջոյ նոցա եւ մեկնեցարուք, ասէ Տէր, եւ ի պիղծս մի՛ մերձենայք, եւ ես ընկալայց զձեզ, եւ ես եղէց ձեզ ի հայր, եւ դուք եղիջիք ինձ յուստերս եւ ի դստերս, ասէ Տէր ամենակալ: Իսկ որովհետեւ զայս աւետիս ունիմք, սի՛րելիք, սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղծութենէ մարմնոյ եւ հոգւոյ. կատարեսցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ: Է. 1:

Ալէլուիա, ալէլուիա. Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ. ի հանդերձս ոսկէհուռն զարդարեալ եւ պաճուճեալ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Ը. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ եղեւ յետ այնորիկ եւ ինքն շրջէր ընդ քաղաքս եւ ընդ գեօղս, քարոզէր եւ աւետարանէր զարքայութիւնն Աստուծոյ. եւ երկոտասանքն ընդ նմա: Եւ կանայք ոմանք՝ որ բժշկեալ էին յայսոց չարաց եւ ի հիւանդութենէ. Մարիամ՝ որ կոչէր Մագդաղենացի, յորմէ եօթն դեւն ելեալ էր. եւ Յովհաննա կին Քուզայ՝ հազարապետին Հերովդի. եւ Շուշան եւ այլք բազումք. որք պաշտէին զնա յընչից իւրեանց: 3:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### Սրբոց առաքելոցն Յոկոբայ եւ Շմաւոնի:

Ժամամուտ. Առաքեալք եւ վկայք Քրիստոսի Աստուծոյ. ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդեգրութիւն կենաց կոչելով՝ միասնական սուրբ Երրորդութեանն յորդորեցին երգել փառս ի յաւիտեանս ամէն:

Սղ. ԺԸ. Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա. եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա:

Երկինք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 14:

Այլ Աստուծոյ շնորհքն՝ որ յամենայնի հռչակ հարկանէ զմէնջ ի Քրիստոս Յիսուս, եւ զհոտ գիտութեանն իւրոյ յայտնի առնէ մեօք յամենայն տեղիս: Զի հոտ անոյշ եմք Քրիստոսի առ Աստուած ի մէջ փրկելոցն եւ ի մէջ կորուսելոցն. ոմանց հոտ մահուանէ ի մահ, եւ ոմանց հոտ կենդանութենէ ի կեանս. եւ առ այս ո՞ բաւական իցէ: Քանզի ոչ եմք իբրեւ զայլսն՝ որ վաճառական լինին բանին Աստուծոյ. այլ իբրեւ ի հաստատութենէ, այլ իբրեւ յԱստուծոյ, առաջի Աստուծոյ ի Քրիստոս խօսիմք: 17:

Ալէլուիա, ալէլուիա. Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. եւ յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու. Գլ. Զ. 13:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ իբրեւ այգ եղեւ՝ կոչեաց զաշակերտսն իւր, եւ ընտրեաց ի նոցանէ երկոտասանս, զորս եւ առաքեալս անուանեաց. զՍիմովն՝ զոր եւ Պետրոս անուանեաց, եւ զԱնդրէաս զեղբայր նորին, եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս, եւ զՓիլիպպոս եւ զԲարթողիմէոս, եւ զՄատթէոս եւ զԹովմաս, եւ զՅակովբոս Ալփեայ, եւ զՍիմովն զկոչեցեալն նախանձայոյզ, եւ զՅուդա Յակովբայ, եւ զՅուդա Իսկարիովտացի՝ որ եղեւ իսկ մատնիչ: Եւ իջեալ նօքօք հանդերձ ի տեղի մի տափարակ. եւ ժողով աշակերտացն նորա եւ բազմութիւն յոյժ ժողովրդեանն, յամենայն Հրէաստանէ եւ յԵրուսաղէմէ եւ յայնմ կողմանէ եւ ի ծովեզերէն Տիւրոսի եւ Սիդովնի. որ եկին լսել ի նմանէ եւ բժշկել ի հիւան-



դութենէ իւրեանց. եւ նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին: Եւ ամենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ ի նա, զի զօրութիւն բազում ելանէր ի նմանէ եւ բժշկէր զամենեսին: Եւ նա ամբարձ զաչս իւր յաշակերտսն իւր եւ ասէ. Երանի աղքատացդ հոգւով, զի ձեր է արքայութիւն Աստուծոյ: 20:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԶՈՐԵՔԾԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՁԵ. Կեցո զծառայս քո, Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 1:

Դուք ինքնին գիտէք, ե՛ղբարք, զմուտն մեր առ ձեզ, զի ոչ ընդունայն ինչ եղեւ. այլ յառաջագոյն չարչարեալք եւ թշնամանեալք, որպէս եւ դուք իսկ գիտէք, ի մէջ Փիլիպեցւոց համարձակեցաք Աստուծով մերով պատմել ձեզ զաւետարանն Աստուծոյ մեծաւ պատերազմաւ: Զի մխիթարութիւնն մեր ոչ ի մոլորութենէ է եւ ոչ ի պղծութենէ եւ ոչ նենգութեամբ, այլ որպէս ընտրեցաք յԱստուծոյ հաւատարիմ լինել աւետարանին, նոյնպէս եւ խօսիմք. ոչ իբրեւ մարդկան հաճոյ լինել, այլ Աստուծոյ՝ որ քննէ զսիրտս մեր: Զի ոչ երբեք բանիւք ողոքանաց եղեաք առ ձեզ, որպէս եւ դուք իսկ գիտէք. եւ ոչ ի պատճառս ագահութեան, որպէս եւ Աստուած վկայէ. եւ ոչ խնդրէաք փառս ի մարդկանէ, ոչ ի ձէնջ եւ ոչ յայլոց: Կարող էաք՝ որպէս Քրիստոսի առաքեալս՝ ծանրանալ, այլ եղեաք հեզք ի միջի ձերում. որպէս դայեակ մի՝ որ սնուցանիցէ մանկունս, նոյնպէս եւ մեք գթայաք ի ձեզ: Հաճոյ թուէր մեզ տալ ձեզ ոչ

միայն զաւետարանն Աստուծոյ, այլ եւ զանձինս մեր. քանզի սիրելիք մեր եղերուք: Յիշէք, եղբարք, զվաստակն մեր եւ զջան. զի զցայգ եւ զցերեկ գործէաք վասն չծանրանալոյ ումեք ի ձէնջ, եւ քարոզէաք ձեզ զաւետարանն Աստուծոյ: Դուք ինքնին վկայէք եւ Աստուած, որպէս սրբութեամբ եւ արդարութեամբ եւ ամբծութեամբ ձեզ հաւատացելոցդ եղեաք, որպէս եւ գիտէք իսկ. զի զիւրաքանչիւր ոք ի ձէնջ, իբրեւ հայր զորդիս, մխիթարէաք եւ սփոփէաք եւ դնէաք վկայութիւն՝ գնալ ձեզ արժանապէս Աստուծոյ, որ կոչեացն զձեզ յիւր արքայութիւնն եւ ի փառս: 12:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԲ. 41:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ասէ Պետրոս. Տէր, առ մեզ ասացեր զառակդ զայդ, եթէ առ ամենեսեան: Եւ ասէ Տէր. Ո՞վ իցէ հաւատարիմ տնտես եւ իմաստուն, զոր կացոյց տէր իւր ի վերայ գերդաստանի իւրոյ՝ տալ ի ժամու զկերակուրս: Երանի՞ իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս: Արդարեւ ասեմ ձեզ՝ զի ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ զնա: Ապա եթէ ասիցէ ծառայն այն ի սրտի իւրում. Յամէ տէր իմ ի գալ. եւ սկսանիցի հարկանել զծառայսն եւ զաղախնայսն, ուտել եւ ըմպել եւ արբենալ: Եկեսցէ տէր ծառային այնորիկ՝ յաւուր յորում ակն ոչ ունիցի, եւ ի ժամու յորում ոչ գիտիցէ, ընդ մէջ կտրեսցէ զնա, եւ զմասն նորա ընդ անհաւատս դիցէ: Եւ ծառայ՝ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ եւ ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա, արբցէ գան բազում: Եւ որ ոչն գիտիցէ եւ արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ. ամենայնի՝ որում շատ տուաւ, շատ խնդրեսցի ի նմանէ. եւ որում բազում աւանդեցաւ, առաւել եւս պահանջեսցեն ի նմանէ: 48:

---



## ԵՐԿՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Սրբոյն Կղեմայ հայրապետին եւ Բագարատայ Տոռոմենայ եպիսկոպոսին եւ Գրիգորի Ակրականդացւոյն:

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցէք զաթոռ ի յերկրի. առաքելական առէք զպատիւ յերկնուստ, ծառայք Քրիստոսի ո՛վ երանելիք ի հարս սուրբ հայրապետք: Քանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն ի Փիլիպեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Դ. 1:

Այսուհետեւ, եղբա՛րք իմ սիրելիք եւ անձկալիք, ուրախութիւն իմ եւ պսակ. այսպէս հաստատուն կացէք ի Տէր, սի՛րելիք: ԶԵւոդիա աղաչեմ եւ զՍիւնտիք աղաչեմ զնոյն խորհել ի Տէր: Այո՛, աղաչեմ եւ զքեզ, մտերի՛մ իմ եւ լծակից, եւ դու օգնական լինիջիր նոցա՝ որք յաւետարանին նահատակեցան ընդ իս Կղեմաւ հանդերձ եւ այլովք գործակցօք իմովք, որոց անուանքն ի դպրութեան կենաց: Ուրախ լերուք ի Տէր յամենայն ժամ. դարձեալ ասեմ, ուրախ լերուք: Հեզութիւն ձեր յայտնի լիցի ամենայն մարդկան. Տէր մերձ է: Մի՛ ինչ հոգայք, այլ ամենայն աղօթիւք եւ խնդրուածովք, գոհութեամբ, խնդրուածք ձեր յայտնի լիցին առ Աստուած: Եւ խաղաղութիւնն Աստուծոյ՝ որ ի վեր է քան զամենայն միտս, պահեսցէ զսիրտս ձեր եւ զմիտս ի Քրիստոս Յիսուս: 7:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Թ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն, ետ նոցա զօրութիւն եւ իշխանութիւն ի վերայ ամենայն դիւաց. եւ բժշկել զհիւանդութիւնս: Եւ առաքեաց զնոսա քարոզել զարքայութիւնն Աստուծոյ, եւ բժշկել զախտաժէտս: Եւ ասէ ցնոսա. Մի՛ ինչ բառնայք ի ճանապարհ. մի՛ գաւազան եւ մի՛ մախաղ, մի՛ հաց եւ մի՛ արծաթ. մի՛ երկուս հանդերձս ունիցիք: Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ ագջիք, եւ անտի գնայցէք: Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յորժամ ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ՝ զփոշի ոտից ձերոց թօթափեսջիք ի վկայութիւն նոցա: Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս եւ ընդ գեօղս, աւետարանէին եւ բժշկէին ընդ ամենայն տեղիս: 6:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած. տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՂԷ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 17:

Այլ մեք, եղբարք, թէպէտ եւ որբ մնացաք ի ձէնջ առ ժամանակ մի, երեսօք եւ ոչ սրտիւք. առաւել եւս փութացաք տեսանել զերեսս ձեր մեծաւ ցանկութեամբ: Վասն այսորիկ կամեցայ գալ առ ձեզ ես Պօղոս մի անգամ եւ երկիցս, եւ խափանեաց զմեզ սատանայ: Քանզի ո՞վ է մեր յոյս կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ դուք ի Տէր՝ առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի նորա գալստեանն: Օի դուք էք փառք մեր եւ խնդութիւն: Վասն որոյ ոչ եւս ունիմք ժոյժ, զի բարւոք թուեցաւ մեզ միայն մնալ յԱթէնս: Եւ առաքեցաք զՏիմոթէոս զեղբայր մեր եւ զգործակից աւետարանին Աստուծոյ եւ Հօրն Քրիստոսի, հաստատել զձեզ եւ մխիթարել վասն հաւատոցն ձերոց: Գ. 2:



Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԲ. 49:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Հուր եկի արկանել յերկիր. եւ զի՞նչ կամիմ՝ թէ արդէն իսկ բորբոքէր: Եւ մկրտութիւն մի ունիմ մկրտել, եւ զիա՞րդ փութամ մինչեւ կատարեսցի: Համարի՞ք եթէ խաղաղութիւն եկի տալ յերկիր. ոչ՝ ասեմ ձեզ, այլ բաժինս: Օի եղիցին յայսմ հետէ հինգ ի տան միում բաժանեալք, երեքն յերկուց, եւ երկուքն յերից: Բաժանեսցի հայր յորդւոյ եւ որդի ի հօրէ, մայր ի դստերէ եւ դուստր ի մօրէ, սկեսուր ի հարսնէ եւ հարսն ի սկեսրէ իւրմէ: Ասաց եւ ցժողովուրդսն. Յորժամ տեսանիցէք ամպ ծագեալ յարեւմտից, իսկոյն ասէք՝ թէ Անձրեւ գայ, եւ լինի այնպէս: Եւ յորժամ հարաւ շնչեալ, ասէք՝ թէ Խորշակ լինի, եւ լինի այնպէս: Կեղծաւորք, զերեսս երկնի եւ երկրի գիտէք փորձել, իսկ զժամանակս զայս զիա՞րդ ոչ փորձէք: Ընդէ՞ր եւ յանձանց իսկ ոչ ընտրէք զարժանն: Յորժամ երթայցես ընդ ոսոխի քում առ իշխան, ի ճանապարհի տուր զհաշիւն՝ զերծանել ի նմանէ. զի գուցէ քարշիցէ զքեզ առ դատաւորն, եւ դատաւորն մատնիցէ դահճի, եւ դահիճն արկանիցէ ի բանտ: Ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի՝ մինչեւ հատուցանիցես զյետին բնիոնն: 59:

---

## ԵՐԿՐՈՐԴ ԾԱԲԱԹ

### Սրբոց առաքելոցն Բարթողիմէոսի եւ Յուդայի:

Ժամամուտ. Առաքեալք եւ վկայք Քրիստոսի Աստուծոյ. ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան

ընդհանուր յորդեգրութիւն կենաց կոչելով՝ միասնական սուրբ Երրորդութեանն յորդորեցին երգել փառս ի յաւիտեանս. ամէն:

Սղ. ԺԸ. Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա. եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա:

Երկինք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս ձեռաց նոցա պատմէ հաստատութիւն:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց.

Գլ. Ա. 12:

Ապա դարձան յԵրուսաղէմ յանուանեալ լեռնէն Ձիթենեաց, որ է մերձ յԵրուսաղէմ ըստ շաբաթուն ճանապարհի: Եւ իբրեւ մտին, ելին ի վերնատունն՝ ուր վանքն իսկ էին. Պետրոս եւ Յակովբոս եւ Յովհաննէս եւ Ընդրէաս, Փիլիպպոս եւ Թովմաս, Բարթողիմէոս եւ Մատթէոս, Յակովբոս Ալփեան եւ Շմաւոնն Նախանձայոյզ եւ Յուդա Յակովբեան: Սոքա ամենեքեան էին հանապազորդեալ միաբան յաղօթս հանդերձ կանամբք եւ Մարեմաւ. մարբն Յիսուսի եւ եղբարբք նորա: 14:

Ալէլուիա, ալէլուիա. Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. եւ յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Զ. 7:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ շրջէր շուրջ զգաւառօքն եւ ուսուցանէր: Եւ կոչեաց առ ինքն զերկոտասանսն, եւ սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս. եւ տայր նոցա իշխանութիւն ի վերայ այսոց պղծոց: Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ինչ բարձցեն ի ճանապարհ, բայց միայն գաւազան. մի՛ պարկ, մի՛ պղինձ ի գօտիս, այլ ագանել հողաթափս: Եւ մի՛ զգենուցուք, ասէ, երկուս պարեգօտս: Եւ ասէր ցնոսա. Յոր տուն ստանիցէք, անդէն օթեւանս կալջիք՝ մինչեւ ելանիցէք անտի: Եւ որ ոչ



ընկալցին զձեզ եւ ոչ լուիցեն ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց ի վկայութիւն նոցա: Եւ ելեալ քարոզէին զի ապաշխարեսցեն: Եւ դեւս բազումս հանէին, եւ օծանէին իւղով զբազում հիւանդս եւ բժշկէին զնոսա: 13:

---

## ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՅԻՍՆԱԿԱՑ

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. ԿԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Դ. 1:

Այսուհետեւ, եղբարք, աղաչեմք զձեզ եւ մխիթարեմք ի Քրիստոս Յիսուս. զի որպէս ընկալարուք ի մէնջ, թէ որպէս պարտ իցէ ձեզ գնալ եւ հաճոյ լինել Աստուծոյ, որպէս եւ գնայք իսկ. զի եւս քան զեւս յաւելուցուք ի նոյն: Եւ գիտէք թէ որպիսի պատուիրանս տուաք ձեզ ի Տէր Յիսուս: Զի այս են կամք Աստուծոյ, սրբութիւն ձեր. ի բաց լինել ձեզ ի պոռնկութենէ, գիտել իւրաքանչիւր ումեք ի ձէնջ զիւր ամանն ստանալ սրբութեամբ եւ պատուով. մի՛ ի ցաւս ցանկութեան, որպէս եւ այլ հեթանոսք, որ ոչ գիտեն զԱստուած: Մի՛ զանցանել եւ զրկել յիրիդ յայդմիկ զեղբայր իւր. քանզի վրէժխնդիր է Տէր ի վերայ ամենայնի այդորիկ. որպէս յառաջագոյն ասացաք ձեզ եւ եդաք վկայութիւն: Քանզի ոչ կոչեաց զմեզ Աստուած ի պղծութիւն, այլ ի սրբութիւն: Այսուհետեւ որ անարգէ, ոչ զմարդ անարգէ, այլ զԱստուած՝ որ եւ ետ զՀոգին սուրբ ի ձեզ: Այլ վասն եղբայրսիրութեան չէ ինչ պիտոյ գրել առ

ձեզ, զի դուք ինքնին իսկ աստուածուսոյցք էք առ զմիմեանս սիրելոյ: Քանզի եւ առնէք իսկ զդոյն յամենայն եղբարս՝ որ են յամենայն կողմանս Մակեդոնացւոց: Աղաչեմք զձեզ, Եղբարք, առաւել եւս առաւելուլ եւ առատանալ. Հանդարտել, եւ գործել զիւրաքանչիւր, եւ գործել ձեռօք ձերովք, որպէս եւ պատուիրեցաք ձեզ, զի գնայցէք պարկեշտութեամբ առ արտաքինսն եւ մի՛ իւիք կարօտեալք իցէք: Ոչ կամիմ, Եղբարք, եթէ տգէտք իցէք վասն ննջեցելոցն. զի մի՛ տրտմիցիք, որպէս եւ այլքն՝ որոց ոչ գոյ յոյս: Եթէ հաւատամք եթէ Յիսուս մեռաւ եւ յարեաւ. նոյնպէս եւ Աստուած զննջեցեալսն ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա: 13:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԳ. 1:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եկին ոմանք ի նմին ժամանակի, եւ պատմեցին նմա վասն Գալիլեացւոցն, որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհսն նոցա: Պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. Համարիք եթէ այն Գալիլեացիք եղեն մեղաւորք քան զամենայն Գալիլեացիս, զի զայնպիսի անցս կրեցին: Ոչ, ասեմ ձեզ. այլ եթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքին նոյնպէս կորնչիջիք: Կամ նոքա ութուտասանքն, յորոց վերայ անկաւ աշտարակն ի Սելովամ, եւ սպան զնոսա, համարիք եթէ նոքա պարտապանք եղեն քան զամենայն մարդիկ՝ որ բնակեալ են յԵրուսաղէմ: Ոչ, ասեմ ձեզ. այլ եթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյնպէս կորնչիջիք: Ասաց եւ զառակս զայս. Թզենի մի էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում. եւ եկն խնդրել պտուղ ի նմա, եւ ոչ եգիտ: Ասէ ցայգեգործն. Ահա երեք ամք են՝ յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ի թզենւոջդ եւ ոչ գտանեմ. արդ կտրեա զդա, ընդէր եւ զերկիրդ խափանէ: Նա պատասխանի ետ եւ ասէ. Տէր, թող զդա այս ամ եւս, մինչեւ շուրջ զդովաւ բրեցից եւ արկից աղբ. թերեւս արասցէ պտուղ. ապա թէ ոչ՝ յամէ եւս հատցես զդա: 9:

---



## ԵՐՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### Սրբոյն Գենարիոսի եպիսկոպոսին եւ Մերկիւռիոսի զինաւորին:

Ժամամուտ. Զօրական եւ վկայ ճշմարիտ՝ քաջ նահատակդ Քրիստոսի սուրբդ Թէոդորոս, որ փոխանակեցեր զմարմինդ ընդ հոգւոյդ քում փրկանս, եւ ոչ ածեր զմտաւ զսպառնալիսն Մաքսիմիանոսի թագաւորին. այլ վերին ազդեցութեամբն՝ դիտելով զայրեցումն հոգւոց նոցա, վասն այնորիկ լուցեր զտաճար կռոց նոցա: Արդ ի յաղթող պատերազմի տօնողացս զօր նահատակութեան քոյ՝ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 18:

Բայց մեր ամենեցուն բացաւ երեսօք զփառսն Տեառն իբրեւ ընդ հայելի տեսեալ, ի նոյն պատկեր նորոգիմք փառաց ի փառս. որպէս եւ ի Տեառն Հոգւոյ: Վասն այսորիկ ունիմք զպաշտօնս զայս, որպէս եւ գտաք զողորմութիւն, եւ ոչ ձանձրանամք. այլ հրաժարեցաք ի գաղտնեաց ամօթոյն. զի մի՛ գնասցուք խորամանկութեամբ, եւ մի՛ նենգեսցուք զբանն Աստուծոյ. այլ յայտնութեամբ ճշմարտութեանն ընծայեցուսցուք զանձինս մեր առ ամենայն միտս մարդկան առաջի Աստուծոյ: Ապա թէ իցէ եւս ծածկեալ աւետարանն մեր, ի մէջ կորուսելոցն է ծածկեալ. որոց Աստուած աշխարհիս այսորիկ կուրացոյց զսիրտս անհաւատիցն, զի մի՛ ծագեսցէ ի նոսա լուսաւորութիւն աւետարանի փառացն Քրիստոսի, որ է պատկեր աներեւութին Աստուծոյ: Զի ոչ եթէ զանձինս քարոզեմք, այլ զՔրիստոս Յիսուս զՏէր, եւ զմեզ ծառայս ձեզ վասն Քրիստոսի: Զի Աստուած՝ որ ասաց ի խաւարի լոյս ծագել, որ եւ ծագեաց իսկ ի սիրտս մեր ի լուսաւորութիւն գիտութեան փառացն Աստուծոյ ի դէմս Յիսուսի Քրիստոսի: Գ. 6:

Ալէլուիա, ալէլուիա. Մարդիրոսաց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԻԱ. 12:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Բայց յառաջ քան զայս ամենայն՝ մխեսցեն զձեռս իւրեանց ի ձեզ եւ հալածեսցեն. մատնեսցեն ի ժողովուրդս եւ ի բանտս, եւ տանիցին առաջի դատաւորաց եւ թագաւորաց վասն անուան իմոյ. եւ լինիցի ձեզ այն ի վկայութիւն: Արդ՝ դիք ի սիրտս ձեր՝ մի յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի: Զի ես տաց ձեզ բերան եւ իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր: Մատնեսջիք եւ ի ծնողաց եւ յեղբարց եւ յազգականաց եւ ի բարեկամաց, եւ սպանանիցեն ի ձէնջ: Եւ եղիջիք ատեցեալ յամենեցունց վասն անուան իմոյ. եւ մազ մի ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ: Եւ համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր: 19:

---

## ԵՐՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### Սրբոց վկայիցն Յակովկայ եւ Իրաւափառայ:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԲ. Օրհնեա անձն իմ զՏէր. եւ ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա:

Օրհնեա անձն իմ զՏէր. եւ մի մոռանար զամենայն տուրս նորա:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 1:

Այսուհետեւ արդարացեալք ի հաւատոց անտի, խաղաղութիւն կալցուք առ Աստուած ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որով եւ զընծայութիւնն ընկալաք հաւատովք ի շնորհս յայսոսիկ՝ յորում կամք, եւ պարծիմք



յուսով փառացն Աստուծոյ: Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ պարծիմք եւս ի նեղութիւնս մեր. քանզի գիտեմք, եթէ նեղութիւնք զհամբերութիւն գործեն, համբերութիւն զհանդէս, հանդէս զյոյս. յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ. զի սէրն Աստուծոյ սփռեալ է ի սիրտս մեր ի ձեռն Հոգւոյն սրբոյ՝ որ տուաւ մեզ: 5:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԲ. 2:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զի ոչ ինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի: Վասն զի զոր ինչ ասիցէք ի խաւարի, լսելի լիցի ի լոյս. եւ զոր յունկանէն խօսեցարուք ի շտեմարանս, քարոզեսցի ի վերայ տանեաց: Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց. մի՛ զարհուրիցիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ յետ այնորիկ աւելի ինչ ոչ ունիցին առնել: Այլ ցուցից ձեզ յումէ երկնչիցիք. երկնչիջիք յայնմանէ՝ որ յետ սպանանելոյ ունի իշխանութիւն արկանել ի գեհեն. այ՛ ասեմ ձեզ, յայնմանէ երկնչիջիք: Ո՞չ ապաքէն հինգ ձագ երկուց դանգաց վաճառի. եւ մի ի նոցանէ ոչ է մոռացեալ առաջի Աստուծոյ: Այլ ձեր եւ ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է. մի՛ երկնչիք՝ զի քան զբազում ձագս լաւ էք դուք: Ասեմ ձեզ. զի ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, եւ Որդի մարդոյ խոստովանեսցի զնմանէ առաջի հրեշտակաց Աստուծոյ: Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ: 9:

---

## ԵՐՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՁԵ. Կեցո զծառայս քո Աստուած իմ. որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 1:

Այլ վասն ժամուց եւ ժամանակաց, եղբարք, չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ. զի դուք ինքնին իսկ ստոյգ գիտէք, թէ օրն Տեառն իբրեւ զգող գիշերի՝ այնպէս հասանէ: Յորժամ ասիցեն՝ թէ Խաղաղութիւն եւ շինութիւն է, յայնժամ յանկարծակի հասանէ նոցա սատակումն՝ որպէս եւ երկն յղւոյ, եւ մի՛ ապրեսցին: Այլ դուք եղբարք, ոչ էք ի խաւարի՝ թէ օրն ձեր իբրեւ զգող ի վերայ հասանիցէ: Զի ամենեքին դուք որդիք լուսոյ էք եւ որդիք տունջեան. չեմք գիշերոյ, չեմք խաւարի: Ապա մի՛ զքնով անկանիցիմք, որպէս եւ այլքն. այլ արթունք եւ զուարթունք եղիցուք: Զի որ ննջենն՝ գիշերի ննջեն, եւ որ արբենանն՝ գիշերի արբենան: Այլ մեք զի տունջեան եմք, արթունք եղիցուք. եւ զգեցցուք զզրահսն հաւատոց եւ զսիրոյ, եւ դիցուք զսաղաւարտն յուսոյն փրկութեան: Զի ոչ ետ զմեզ Աստուած ի բարկութիւն, այլ ի փրկութիւն կենդանութեան ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ մեռաւն վասն մեր. զի եթէ արթունք իցեմք եւ եթէ ննջիցեմք, նովաւ հանդերձ կեցցուք: Վասն որոյ մխիթարեցէք զմիմեանս, եւ շինեցէք զիրեարս, որպէս եւ առնէքդ իսկ: 11:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԳ. 10:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ուսուցանէր ի միում ի ժողովրդանոցացն ի շաբաթս: Եւ ահա կին մի՝ զոր ունէր այս հիւանդութեան ամս ութուտասն, եւ էր կարկամեալ, եւ ոչ կարէր ամենեւին ի վեր հայել: Եւ տեսեալ զնա Յիսուսի՝ կոչեաց առ ինքն եւ ասէ ցնա. Կին դու, արձակեալ ես ի հիւանդութենէ քումէ:



Եւ եդ ի վերայ նորա ձեռն, եւ առժամայն ուղղեցաւ, եւ փառաւոր առնէր զԱստուած: Պատասխանի ետ ժողովրդապետն ցասուցեալ՝ թէ ընդէր ի շաբաթու բժշկեաց Յիսուս, եւ ասէ ցժողովուրդն. Վեց օր է՝ յորս արժան է գործել, յայնս եկայք բժշկեցարուք, եւ մի՛ յաւուր շաբաթու: Պատասխանի ետ նմա Տէր եւ ասէ. Կեղծաւորք, իւրաքանչիւր ոք ի ձէնջ ի շաբաթու ոչ՞ արձակէ զեզն իւր կամ զէշ ի մսրոյ եւ տանի տայ ջուր: Իսկ այս՝ դուստր Աբրահամու էր, զոր կապեաց սատանայ ահաւադիկ ութուտասն ամ. ոչ՞ էր արժան արձակել ի կապանաց անտի ի շաբաթու: Եւ զայս իբրեւ ասաց, յամօթ լինէին ամենեքեան որ հակառակն կային նմա. եւ ամենայն ժողովուրդն ուրախ լինէր ի վերայ ամենայն փառաւորութեանցն, որ գործէին ի նմանէ: Եւ ասէր. Ո՞ւմ նման է արքայութիւն Աստուծոյ, եւ որո՞ւմ նմանութեան նմանեցուցից զնա: Նման է հատոյ մանանխոյ, զոր առեալ մարդոյ՝ արկ ի պարտէզ իւր. աճեաց եւ եղեւ ծառ, եւ թռչունք երկնից բնակեալ էին յոստս նորա: Եւ դարձեալ ասէ. Ո՞ւմ նմանեցուցից զարքայութիւն Աստուծոյ: Նման է խմորոյ՝ զոր առեալ կնոջ թաքոյց յալեր երից գրուաց՝ մինչեւ խմորեցաւ ամենայն: 21:

---

## ԵՐՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

**Սրբոց Հարցն եգիպտացւոց՝ Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յովհաննու Գրեցւոյն, Յովհաննու Կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Սիսիանու, Դանիէլի, Սրապիոնի, Մակարիոսի, Պիմէնի եւ այլոց սրբոց Հարցն:**

Ժամամուտ. Ճգնաւորք Քրիստոսի, որք տանջանաց անօրինացն համբերեցիք, եւ զմոլութիւն կռոցն խափանեցիք. դասաւորեալք ընդ հրեշտակս ի յերկինս. որք ունիք զհամարձակութիւն ի Քրիստոսէ, բարեխօսեցէք կեցուցանել զանձինս մեր. զձեզ աղաչեմք:

Սղ. ՃԻԳ. Եթէ ոչ Տէր էր առ մեզ. ասասցէ Իսրայէլ. եթէ ոչ Տէր էր առ մեզ:

Լինդ յառնել մարդկան ի վերայ մեր. կենդանւոյն կամեցան կլանել զմեզ:

Պօղոսի առաքելոյն յԱնբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

ԳԼ· ԺԱ· 32:

Եւ արդ զի՞նչ եւս ասացից. զի չէ բաւական ժամանակս պատմելոյ վասն Գեդէոնին, Բարակայ, Սամփսոնին, Յեփթայայ, Դաւթի եւ Սամուէլի եւ այլոց մարգարէիցն. որք հաւատովք պարտեցին զթագաւորութիւնս, գործեցին զարդարութիւն, հասին աւետեաց, խցին զբերանս առիւծուց, շիջուցին զզօրութիւն հրոյ, ապրեցան ի բերանոյ սրոյ, զօրացան ի տկարութենէ, եղեն զօրաւորք ի պատերազմի, առին զբանակս օտարաց: Ընկալան կանայք ի յարութենէ զմեռեալս իւրեանց. կէսք կոշկոճեցան, եւ չեւ եւս ընկալան զփրկութիւն, զի լաւագոյն յարութեանն հասանիցեն: Եւ կէսք զտանջանաց եւ զգանից զփորձ առին, զկապանաց եւ զբանտից: Վարկոծեցան, սղոցեցան, փորձեցան, սպանմամբ սրոյ մեռան, շրջեցան լերկմաշկօք եւ մորթովք այծենեօք. կարօտեալք, նեղեալք, չարչարեալք: Զորս ոչ արժէ աշխարհս, յանապատի մոլորեալք եւ ի լերինս եւ յայրս եւ ի փապարս երկրի: Եւ սոքա ամենեքեան վկայեալք ի հաւատոյն, չեւ եւս ընկալան զաւետիսն, Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատարեսցին: 40:

Ալէլուիա, ալէլուիա. Երանելի են որք բնակեալ են ի տան Տեառն. յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

ԳԼ· Ժ· 37:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ արժանի. եւ որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի: Եւ որ ոչ առնու զխաչ իւր եւ գայ զկնի իմ, չէ ինձ արժանի: Որ գտանէ զանձն իւր, կորուսցէ զնա. եւ որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա:



Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, եւ որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ: Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի՝ զվարձս մարգարէի առցէ. եւ որ ընդունի զարդար յանուն արդարոյ՝ զվարձս արդարոյ առցէ: Եւ որ արբուսցէ միւմ ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ՝ միայն յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ. ոչ կորուսցէ զվարձս իւր: 42:

## ԵՐՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ· ՂԲ· Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի պատչելիս արար:

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. ԳԼ· Ե· 12:

Աղաչեմ զձեզ, եղբարք, ճանաչել զվաստակաւորս եւ զվերակացուս ձեր ի Տէր, եւ զխրատիչս ձեր: Եւ համարեցարուք զնոսա արժանիս առաւել սիրոյ՝ վասն գործոյ նոցա. խաղաղութիւն արարէք ընդ միմեանս: Աղաչեմ զձեզ, եղբարք, խրատեցէք զստահակս, միխթարեցէք զկարճամիտս, պատսպարան լերուք տկարաց, երկայնամիտ լերուք առ ամենեսեան: Զգոյշ լերուք, գուցէ ոք չարի չար հատուցանիցէ. այլ յամենայն ժամ զբարեաց զհետ երթայք առ միմեանս եւ առ ամենեսեան: Յամենայն ժամ ուրախ լերուք: Ընդդադար աղօթս արարէք: Յամենայնի գոհացարուք. զի այս են կամք Աստուծոյ Քրիստոսիւ Յիսուսիւ ի ձեզ: Զհոգին մի՛ շիջուցանէք: Զմարգարէութիւնս մի՛ արհամարհէք: Զամենայն ինչ փորձեցէք, զբարին ընկալարուք: Յամենայն իրաց չարաց ի բաց կացէք: Եւ ինքն Աստուած խաղաղութեան սուրբս արասցէ զձեզ համօրէնս. եւ բովանդակ ձեր ոգի եւ շունչ եւ մարմին՝ անարատ ի գալուստն Տեառն

մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցի: Հաւատարիմ է որ կոչեացն զձեզ, որ եւ արասցէ զնոյն: Եղբարք, աղօթս արարէք եւ ի մեր վերայ: Ողջոյն տաջիք եղբարց ամենեցուն ի համբոյր սրբութեան: Երդմնեցուցանեմ զձեզ ի Տէր՝ ընթեռնուլ զթուղթդ առաջի ամենայն եղբարց սրբոց: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ: 28:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԴ. 1:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ եղեւ ի մտանելն նորա ի տուն ուրումն իշխանացն փարիսեցւոց ի շաբաթու ուտել հաց, եւ նոքա սպասէին նմա: Եւ ահա այր ոմն էր անդ ջրգողեալ առաջի նորա: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցօրինաւորսն եւ ցփարիսեցիս. Եթէ արժա՞ն իցէ ի շաբաթու բժշկել: Եւ նոքա լուռ եղեն. եւ բուռն հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա եւ արձակեաց: Եւ ասէ ցնոսա. Ո՞յր ուրուք ի ձէնջ էշ կամ եզն անկանիցի ի ջրհոր, եւ ոչ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու: Եւ ոչ կարացին տալ նմա պատասխանի առ այն: Ասաց եւ առ կոչնականսն առակ մի, հայեցեալ թէ զիա՛րդ բարձընտիր լինէին, ասէ ցնոսա. Յորժամ կոչիցէ ոք զքեզ ի հարսանիս կամ ի կոչունս, մի՛ բազմիցիս յառաջին բարձին. գուցէ պատուականագոյն եւս քան զքեզ իցէ կոչեցեալ ի նմանէ. եւ եկեալ՝ որ զքեզն եւ զնա կոչեաց՝ ասիցէ ցքեզ. Տուր սմա տեղի. եւ ապա սկսանիցիս ամօթով զյետին տեղին ունել: Այլ յորժամ կոչիցիս, երթիջիր՝ բազմեսջիր ի յետին տեղւոջ. զի յորժամ գայցէ՝ որ կոչեացն զքեզ, ասիցէ ցքեզ. Բա՛րեկամ, ի վեր մատիր. յայնժամ եղիցին քեզ փառք առաջի բարձակցացն քոց: Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի. եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի: 11:

---



## ԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ

### Սրբոյն Նիկողայոսի զմիւռնացւոյ սքանչելագործ հայրապետին:

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ, ծառայ Քրիստոսի ով երանելիդ ի հարս սուրբ հայրապետ: Քանզի քոյ վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 10:

Այլ դու զհետ եկիր վարդապետութեան իմոյ, առաջնորդութեան, յօժարութեան, հաւատոց, երկայնմտութեան, սիրոյ, համբերութեան, հալածանաց, չարչարանաց. որպիսիք եղեն ինձ յԱնտիոք եւ յԻկոնիոն եւ ի Լիւստրոս, որպիսի հալածանաց համբերի, եւ յամենայնէ փրկեաց զիս Տէր: Եւ ամենեքին՝ որ կամիցին աստուածպաշտութեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս, ի հալածանս կացցեն: Այլ մարդք չարք եւ կախարդք յառաջ եկեսցեն ի չար անդր, մոլորեալք եւ մոլորեցուցանիցեն: Այլ դու հաստատուն կաց՝ յոր ուսարդ եւ հաւատարիմ եղեր: Գիտես ուստի ուսար. զի ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որ կարող են իմաստուն առնել զքեզ ի փրկութիւն ի ձեռն հաւատոցն՝ որ ի Քրիստոս Յիսուս: 15:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ժ. 11:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց: Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ ոչ

իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն եւ փախչի. եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ. քանզի վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն: Ես եմ հովիւն քաջ, եւ ճանաչեմ զիմսն եւ ճանաչիմ յիմոցն: Որպէս գիտէ զիս Հայր. գիտեմ եւ ես զՀայր. եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց: Նա եւ այլ եւս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ. եւ զայն եւս պարտ է ինձ տծել այսր, եւ ձայնի իմում լուիցեն, եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ: 16:



# Ի ՏՕՆԻ ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ

## ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ

# ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

## Ի ԳԵՂՏԵՄԲԵՐԻ Թ.

---

Ժամամուտ. Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մարիամ Աստուածածին, Բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ եւ սուրբ Հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ. որ զամենայն գոյութեանց ստեղծիչն յղացեալ ծնար անճառապէս. մարմնացելոյն առ ի քէն բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր:

Ող. Կէ. Տէր տացէ զբան՝ ոյք աւետարանեն զօրութեամբ բազմաւ:

Յարիցէ Աստուած, եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա:

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 24:

Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեզ ի Քրիստոս Յիսուս, զի ի հաւատոցն արդարասցուք: Այլ իբրեւ եկին հաւատքն, ոչ եւս ընդ դաստիարակաւ եմք: Քանզի ամենեքեան որդիք Աստուծոյ էք հաւատովք ի Քրիստոս Յիսուս: Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք. չիք խտիր, ոչ հրէի եւ ոչ հեթանոսի, ոչ ծառայի եւ ոչ ազատի, ոչ արուի եւ ոչ իգի. զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս: Ապա եթէ դուք Քրիստոսի էք, ուրեմն Աբրահամու զաւակ էք, ըստ աւետեացն ժառանգք: 29:

Ալէլուիա, ալէլուիա. Ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու ի կանայս, եւ օրհնեալ է պտուղ որովայնի քոյ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.
Գլ. Ա. 39:

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ, գնաց ի լեռնակողմն փութապէս ի քաղաքն Յուդայ: Եւ եմուտ ի տուն Զաքարիայ, եւ ետ ողջոյն Եղիսաբեթի: Եւ եղեւ իբրեւ լուաւ զողջոյնն Մարիամու Եղիսաբեթ, խաղաց մանուկն յորովայնի նորա. եւ լցաւ Եղիսաբեթ Հոգւով սրբով: Եւ ի ձայն բարձր աղաղակեաց եւ ասէ. Օրհնեալ ես դու ի կանայս, եւ օրհնեալ է պտուղ որովայնի քոյ: Եւ ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս: Զի ահաւասիկ իբրեւ եղեւ ձայն ողջունի քո յականջս իմ, խաղաց ցնծալով մանուկս յորովայնի իմում: Եւ երանի՞ որ հաւատայցէ՝ եթէ եղիցի կատարումն ասացելոցս նմա ի Տեառնէ: Եւ ասէ Մարիամ. Մեծացուսցէ անձն իմ զՏէր: Եւ ցնծացաւ հոգի իմ յԱստուած փրկիչ իմ: Զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. զի ահա յայսմհետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք: Զի արար ինձ մեծամեծս հզօրն, եւ սուրբ է անուն նորա: Եւ ողորմութիւն նորա ազգաց յազգս երկիւղածաց իւրոց: Արար զօրութիւն բազկաւ իւրով. ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց: Քակեաց զհզօրս յաթոռոց, եւ բարձրացոյց զխոնարհս: Զքաղցեալս լցոյց բարութեամբ, եւ զմեծատունս արձակեաց ունայնս: Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրում՝ յիշել զողորմութիւնս: Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրահամու եւ զաւակի նորա յաւիտեան: Եկաց Մարիամ առ նմա իբրեւ ամիսս երիս, եւ դարձաւ ի տուն իւր: 56:

---

## ՁՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՅԻՍՆԱԿԱՑ

Համամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ



Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. ԿԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 1:

Պօղոս եւ Սիղուանոս եւ Տիմոթէոս՝ եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց՝ յԱստուած Հայր մեր եւ ի Տէր Յիսուս Քրիստոս: Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ: Գոհանալ պարտիմք զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձեր, եղբարք, որպէս եւ արժան իսկ է. զի եւս քան զեւս աճեն հաւատքդ ձեր, եւ յաճախէ սէր իւրաքանչիւր ձեր ամենեցուն առ միմեանս: Որպէս եւ մեզ ձեօք պարծել յեկեղեցիսն Աստուծոյ վասն համբերութեան ձերոյ եւ հաւատոց յամենայն հալածանս ձեր եւ ի նեղութիւնս, որում դուքն համբերէք, յօրինակ արդար դատաստանին Աստուծոյ. արժանի լինել ձեզ արքայութեանն Աստուծոյ, վասն որոյ եւ զճգնութիւնդ կրէք. եթէ պարտ է առաջի Աստուծոյ հատուցանել նեղչացն ձերոց նեղութիւն, եւ ձեզ նեղելոցդ հանգիստ ընդ մեզ ի յայտնութեանն Տեառն մերոյ Յիսուսի յերկնից հրեշտակօք զօրութեան իւրոյ, ի բոց հրոյ առնուլ զվրէժս յայնցանէ՝ ոյք ոչ ճանաչեն զԱստուած, եւ որ ոչ հնազանդին աւետարանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Որք տայցեն վրէժս ի սատակումն յաւիտենից յերեսաց Տեառն եւ ի փառաց զօրութեան նորա, յորժամ գայցէ փառաւոր լինել ի մէջ սրբոց իւրոց, եւ սքանչելի ի մէջ ամենայն հաւատացելոց. զի հաւատարիմ եղեւ վկայութիւնն մեր ի վերայ ձեր յաւուր յայնմիկ: Յոր եւ աղօթս առնեմք վասն ձեր յամենայն ժամ, զի զձեզ արժանիս արասցէ կոչմանն ձերում Աստուած, մինչեւ լցցէ զամենայն հաճութիւն բարութեան եւ

զգործս հաւատոցն զօրութեամբ: Զի փառաւոր լիցի անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ձեզ, եւ դուք ի նմա, ըստ շնորհացն Աստուծոյ մերոյ եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի: 12:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԴ. 12:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ասէ եւ ցկոչնատէրն. Յորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարեկամս քո, եւ մի՛ զեղբարս քո, եւ մի՛ զազգականս քո, եւ մի՛ զդրացիս քո, եւ մի՛ զմեծամեծս. զի մի՛ եւ նոքա փոխարէն կոչեսցեն զքեզ, եւ լինիցի քեզ հատուցումն: Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա զաղքատս եւ զխեղս եւ զկաղս եւ զկոյրս: Եւ երանելի լինիցիս. զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ. եւ հատուսցի քեզ փոխարէն ի յարութեան արդարոց: Իբրեւ լուաւ զայս ոմն ի բազմականացն՝ ասէ ցնա. Երանի՛ որ կերիցէ ճաշ յարքայութեան Աստուծոյ: Եւ նա ասէ. Այր ոմն գործեաց ընթրիս, եւ հրաւիրեաց զբազումս: Եւ առաքեաց զծառայ իւր ի ժամու ընթրեացն կոչել զհրաւիրեալսն՝ թէ Եկայք, զի ահաւասիկ պատրաստ է ամենայն ինչ: Եւ սկսան մի ըստ միոջէ ամենեքեան հրաժարել. առաջինն ասէ. Ագարակ գնեցի, եւ հարկ է ելանել տեսանել զնա. աղաչեմ զքեզ՝ կալ զիս հրաժարեալ: Եւ միւսն ասէ. Լուծս հինգ եզանց գնեցի, եւ երթամ փորձել զնոսա. աղաչեմ զքեզ՝ կալ զիս հրաժարեալ: Եւ միւսն ասէ. Կին ածի, եւ վասն այնորիկ ոչ կարեմ գալ: Եւ եկեալ ծառայն պատմեաց զայն տեառն իւրում: Յայնժամ բարկացեալ տանուտէրն՝ ասէ ցծառայն իւր. Ել վաղվաղակի ի հրապարակս եւ ի փողոցս քաղաքիդ, եւ զաղքատս եւ զխեղս եւ զկաղս եւ զկոյրս մոյծ այսր: Եւ ասէ ծառայն. Տէր, եղեւ զոր հրամայեցերն, եւ կայ եւս տեղի: Եւ ասէ տէրն ցծառայն. Ել ի ճանապարհս եւ ի ցանգս, եւ արա այսր մտանել, զի լցցի տունս իմ: Ասեմ ձեզ, զի ոչ ոք յայնց կոչեցելոց ճաշակեսցէ յընթրեաց իմոց: 24:

---



Եւ ապա պահք սրբոյն Յակովբայ. բայց տօնք լինին:

## ՉՈՐՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### Սրբոյն Մինասայ, Երմոգինեայ, Գրաբոսի, եւ կամաւոր աղքատացն Յովհաննու եւ Ալեքսիանոսի:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԺԵ. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

Պօղոսի առաքելոյն ի Փիլիպեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Ա. 27:

Ե՛զբարք, միայն թէ արժանի աւետարանին Քրիստոսի գնայցէք. զի եթէ գայցեմ եւ տեսանիցեմ զձեզ, եւ եթէ հեռի իցեմ եւ լսիցեմ զձէնջ, զի հաստատուն կայցէք ի մի հոգի, եւ միով շնչով նահատակիցիք ի հաւատս աւետարանին: Եւ մի զանգիտիցէք եւ մի իւիք ի հակառակորդաց անտի, որ է նոցա հանդէս կորստեան եւ ձերոյ փրկութեան: Եւ այդ յԱստուծոյ է՝ որ ձեզ շնորհեցաւ վասն Քրիստոսի, ոչ միայն ի նա հաւատալ, այլ եւ վասն նորա չարչարել, զնոյն պատերազմ ունել՝ զոր յիսն տեսէք եւ այժմ լսէք յինէն: Արդ եթէ մխիթարութիւն ինչ իցէ ի Քրիստոս, եթէ սփոփութիւն սիրոյ, եթէ հաղորդութիւն հոգւոյ, եթէ գթութիւն եւ ողորմութիւն: Լցէք զխնդութիւնս իմ. զնոյն խորհիջիք, զնոյն սէր յանձին ունիջիք, համաշունչք միախորհուրդք: Մի՛ ինչ ըստ գրգռութեան եւ մի՛ ինչ ըստ սնապարծութեան, այլ խոնարհութեամբ զմիմեանս լաւ համարել առաւել քան զանձինս: Մի՛ զանձանց եւեթ գիտել, այլ իւրաքանչիւր ոք զընկերին: Բ. 4:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ժ. 37:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ արժանի. եւ որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի: Եւ որ ոչ առնու զխաչ իւր եւ գայ զկնի իմ, չէ ինձ արժանի: Որ գտանէ զանձն իւր, կորուսցէ զնա. եւ որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա: Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, եւ որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ: Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի՝ զվարձն մարգարէի առցէ. եւ որ ընդունի զարդար յանուն արդարոյ՝ զվարձս արդարոյ առցէ: Եւ որ արբուսցէ միում ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ՝ միայն յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ. ոչ կորուսցէ զվարձս իւր: 42:

---

## ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

**Սրբոյն կուռնելիոսի հարիւրապետին եւ Շմաւոնի ազգականին Քրիստոսի, եւ Պողիկարպոսի Զմիւռնոյ հայրապետին եւ Արեւելեան վկայիցն:**

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. Ե. Տէր, որպէս զինու՝ հաճութեամբ քով պսակեցեր զմեզ:

Բանից իմոց ունկն դիր Տէր. եւ ի միտ առ զաղաղակ իմ:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԴ. 24:

Այլ այնմ, որ կարողն է հաստատել զձեզ ըստ աւետարանիս իմում եւ ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյն՝ ժամանակօքն յաւիտենից լռեցելոյ, եւ յայտնելոյ այժմիկ ի ձեռն գրոց մարգարէականաց, ըստ հրամանի մշտնջենաւորին Աստուծոյ, ի հնազանդութիւն հաւատոց, յամենայն հեթանոսս ծանուցելոյ՝ միայնոյ իմաստնոյն Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն: 25:



Ալէլուիա, ալէլուիա. Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. եւ յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

Գլ. Զ. 7:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ շրջէր շուրջ զգաւառօքն եւ ուսուցանէր: Եւ կոչեաց առ ինքն զերկոտասանսն, եւ սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս. եւ տայր նոցա իշխանութիւն ի վերայ այսոց պղծոց: Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ինչ բարձցեն ի ճանապարհ, բայց միայն գաւազան. մի՛ պարկ, մի՛ պղինձ ի գօտիս, այլ ագանել հողաթափս: Եւ մի՛ զգենուցուք, ասէ, երկուս պարեգօտս: Եւ ասէր ցնոսա. Յոր տուն ստանիցէք, անդէն օթեւանս կալջիք՝ մինչեւ ելանիցէք անտի: Եւ որ ոչ ընկալցին զձեզ եւ ոչ լուիցեն ձեզ, յորժամ ելանիցէք անտի թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց ի վկայութիւն նոցա: Եւ ելեալ քարոզէին զի ապաշխարեսցեն: Եւ դեւս բազումս հանէին, եւ օծանէին իւղով զբազում հիւանդս եւ բժշկէին զնոսա: 13:

---

## ՉՈՐՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՁԵ. Կեցո զծառայս քո, Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 1:

Աղաչեմ զձեզ, եղբարք, վասն գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ մերոյ ժողովելոյն առ նա. մի՛ վաղվաղակի խռովել ձեզ ի մտաց եւ մի՛ զարհուրել, մի՛ հոգւով եւ մի՛ բանիւ եւ մի՛ թղթովք՝ իբրեւ թէ ի մէնջ, որպէս թէ եկեալ հասեալ իցէ օրն Տեառն: Մի՛ ոք զձեզ խաբեսցէ եւ մի՛ իւիք իրօք. զի եթէ ոչ նախ եկեսցէ ապստամբութիւնն, եւ յայտնեսցի մարդն անօրէնութեան, որդին կորստեան, հակառակորդն հպարտացեալ ի վերայ ամենայնի, որ անուանեալ իցէ աստուած կամ պաշտօն. մինչեւ նստել նմա ի տաճարին Աստուծոյ եւ ցուցանել զանձն թէ աստուած իցէ: Ո՞չ յիշիցէք զի մինչ առ ձեզն իսկ էի՝ ասէի զայս: Եւ արդ դուք ինքնին գիտէք զայն՝ որ ունին յայտնել նմա յիւրում ժամանակի: Զի խորհուրդն անօրէնութեան արդէն իսկ զօրանայ. բայց յայնժամ մինչ ի միջոյ բարձցի՝ որ այժմդ ունի: Եւ ապա յայտնեսցի անօրէնն, զոր Տէր Յիսուս սատակեսցէ Հոգւով բերանոյ իւրոյ, եւ խափանեսցէ յայտնութեամբ գալստեանն իւրոյ: Որոյ գալուստն ըստ ազդեցութեան սատանայի է, ամենայն զօրութեամբ եւ նշանօք եւ արուեստիւք ստովք, եւ ամենայն պատրանօք անիրաւութեան ի վերայ կորուսելոցն: Փոխանակ զի զսէրն ճշմարտութեան ոչ ընկալան՝ զի ապրեսցին, եւ վասն այնորիկ առաքեսցէ նոցա Աստուած ազդեցութիւն մոլորութեան՝ հաւատալ նոցա ստութեանն: Զի դատապարտեսցին ամենեքեան՝ որ ոչ հաւատացին ճշմարտութեանն, այլ հաճեցան ընդ անօրէնութիւնն: Այլ մեք պարտիմք գոհանալ զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձեր, եղբարք սիրեցեալք ի Տեառնէ. զի ընտրեաց զմեզ Աստուած ի սկզբանէ ի փրկութիւն սրբութեամբ հոգւոյն եւ հաւատովքն ճշմարտութեան, յոր եւ կոչեացն զձեզ աւետարանաւն իւրով ի փրկութիւն փառացն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Այսուհետեւ, եղբարք, հաստատուն կացէք եւ պինդ կալարուք զաւանդութիւնսն՝ զոր ուսարուք, եթէ բանիւ եւ եթէ թղթով մերով: Այլ ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ Աստուած Հայր մեր, որ սիրեացն զմեզ եւ ետ մեզ մխիթարութիւն յաւիտենից եւ յոյս բարեաց շնորհօք, մխիթարեսցէ զսիրտս ձեր, եւ հաստատեսցէ յամենայն բանս եւ ի գործս բարութեան: 16:



Ալէլուիա, ալէլուիա. Պահոց է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.
Գլ. ԺԴ. 25:

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Եւ երթային ընդ նմա ժողովուրդք բազումք. դարձաւ եւ ասէ ցնոսա. Եթէ ոք գայ առ իս, եւ ոչ ատեայ զհայր իւր եւ զմայր եւ զկին եւ զորդիս եւ զեղբարս եւ զքորս, նա եւ զանձն եւս իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինել: Զի որ ոչ բառնայ զխաչ իւր եւ գայ զկնի իմ, ոչ կարէ իմ աշակերտ լինել: Ով ոք ի ձէնջ կամիցի շինել աշտարակ եւ ոչ նախ նստեալ համարիցի զծախսն՝ եթէ ունիցի՞ բաւական ի կատարումն: Զի գուցէ իբրեւ արկանիցէ հիմն եւ ոչ կարիցէ կատարել, ամենեքին որ տեսանիցեն, սկսանիցին ծաղր առնել զնա եւ ասել՝ թէ Այս այր սկսաւ շինել, եւ ոչ կարաց կատարել: Կամ ո՞ր թագաւոր երթեալ տայցէ պատերազմ ընդ այլում թագաւորի. եւ ոչ նստեալ նախ խորհիցի՝ եթէ կարո՞ղ իցէ տասն հազարաւ զդէմ ունել զայնորիկ՝ որ գայցէ ի վերայ նորա քսան հազարաւ: Ապա եթէ ոչ՝ մինչ դեռ հեռագոյն իցէ, հրեշտակութիւն առաքեալ՝ աղաչեսցէ ի խաղաղութիւն: Արդ՝ այսպէս ամենայն ոք ի ձէնջ՝ որ ոչ հրաժարեսցէ յամենայն ընչից իւրոց, ոչ կարէ իմ աշակերտ լինել: 33:

---

## ՉՈՐՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Սրբոյն Եւստռատիոսի, Օքսենտիոսի, Եւգինէոսի, Ովրեստէսի եւ Մարդարիոսի:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. Ե. Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քոյ. զի օրհնեսցես դու զարդարն:

Բանից իմոց ունկն դիր Տէր. եւ ի միտ առ զաղաղակ իմ:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս. ԳԼ· Ե· 1։

Ընկալուեալ արդարացեալք ի հաւատոց անտի, խաղաղութիւն կալցուք առ Աստուած ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որով եւ ըղնծայութիւնն ընկալաք հաւատովք ի շնորհս յայսոսիկ՝ յորում կամք, եւ պարծիմք յուսով փառացն Աստուծոյ։ Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ պարծիմք եւս ի նեղութիւնս մեր. քանզի գիտեմք, եթէ նեղութիւնք զհամբերութիւն գործեն, համբերութիւն զհանդէս, հանդէս զյոյս. յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ. զի սէրն Աստուծոյ սփռեալ է ի սիրտս մեր ի ձեռն Հոգւոյն սրբոյ՝ որ տուաւ մեզ։ 5։

Ընկալութիւն, ալէլուիա. Մարգէղոսայ է յայնէն։

Սրբոյ Եւտաղանիս որ ըստ Մատթէոսի.

ԳԼ· Ե· 1։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ տեսեալ զժողովուրդն՝ ել ի լեառն. եւ իբրեւ նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա։ Եւ բացեալ զբերան իւր՝ ուսուցանէր զնոսա եւ ասէր. Երանի՛ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից։ Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։ Երանի՛ հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր։ Երանի՛ որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին։ Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն։ Երանի՛ այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն։ Երանի՛ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին։ Երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից։ Երանի՛ է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ եւ հալածեսցեն եւ ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ։ Ցնծացէք եւ ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին։ 12։



## ՉՈՐՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Յոհաննու. Ամէն ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք։

Սղ· Ղէ· Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի պանծալիս արար։

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս. ԳԼ· Գ· 1։

Ընկալուեալ, եղբարք, աղօթս արարէք ի վերայ մեր, զի բանն Տեառն ընթանայցէ եւ փառաւորի լիցի յամենայն տեղիս, որպէս եւ առ ձեզդ։ Օ՛ի ապրեսցուք յանօրինաց եւ յանզգամաց մարդոց, զի ոչ ամենեցուն են հաւատք։ Ընդ հաւատարիմ է Տէր, որ եւ հաստատեսցէ զձեզ եւ պահեսցէ ի չարէ անտի։ Վստահ եմք ի ձեզ Տերամբ, թէ զոր պատուիրեցաքն ձեզ, եւ առնէք եւ առնիցէք։ Ընդ Տէր ուղղեսցէ զսիրտս ձեր ի սէրն Աստուծոյ եւ ի համբերութիւնն Քրիստոսի։ Պատուիրեմ ձեզ, եղբարք, յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, խորշել ձեզ յամենայն եղբօրէ՝ որ ատահական գնայցէն, եւ ոչ ըստ աւանդութեանն՝ զոր ընկալարուք ի մէնջ։ Օ՛ի դուք ինքնին գիտէք թէ որպէս պարտ է ձեզ նմանել մեզ. եւ ոչ երբեք ատահականացաք առ ձեզ, եւ ոչ՝ ձրի զուրուք հաց կերաք. այլ ջանիւ եւ վաստակով զցայգ եւ զցերեկ գործէաք՝ վասն չծանրանալոյ ումեք ի ձէնջ։ Ոչ եթէ չունէաք իշխանութիւն, այլ զի զանձինս օրինակ արասցուք ձեզ՝ նմանողս լինել մեզ։ Վասնզի մինչ դեռ առ ձեզն իսկ էաք՝ զայս պատուիրէաք ձեզ, թէ որ ոչն կամիցի գործել, եւ կերիցէ մի։ Ընդ լսեմք զոմանց ի ձէնջ՝ թէ ատահականաբար գնան, գործ ինչ ոչ գործեն, այլ յուլացեալ հետաքրքիր ըզջին։ Եւ նոցին պատուէր տամք եւ աղաչեմք ի Տէր Յիսուս Քրիստոս, զի հանդարտութեամբ գործեսցեն եւ զհուրանց հաց կերիցեն։ Ընդ դուք, եղբարք, մի՛ ձանձրանայք զբարիս գործել։ Ապա եթէ ոք ոչ հնազանդեսցի բանիս մերում թղթովդ այդուիկ,

դուք նշանակեսջիք զնա, եւ մի՛ խառնակեսջիք ընդ նմա, զի պատկառեսցէ: Բայց մի՛ իբրեւ զմշնամի համարեսջիք, այլ խրատեսջիք իբրեւ զեղբայր: Եւ ինքն Տէր խաղաղութեան տացէ ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ յամենայն իրս: Տէր ընդ ամենեսին ընդ ձեզ: Ողջոյնս իմոյ ձեռին Պօղոսի է, որ է նշանակ, յամենայն թուղթս այսպէս գրեմ: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ամենեսին ձեզ: 18:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԵ. 1:

Ընդ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք եւ մեղաւորք՝ լսել ի նմանէ: Տրտնջէին փարիսեցիքն եւ դպիրք եւ ասէին. Ընդդէմ սա զմեղաւորս ընդունի եւ ուտէ ընդ նոսա: Ասաց առ նոսա զառակս զայս: Ո՞վ ոք լիցէ ի ձէնջ մարդ՝ որոյ լիցէ հարիւր ոչխար, եւ կորուսանիցէ մի ի նոցանէ. ոչ թողուցու զինսունն եւ զինն յանապատին, եւ երթիցէ զհետ կորուսելոյն՝ մինչեւ գտանիցէ զնա: Եւ իբրեւ գտանէ, դնէ զնա ի վերայ ուսոց իւրոց խնդալով, եւ երթեալ ի տուն, կոչէ զբարեկամս եւ զդրացիս, եւ ասէ ցնոսա. Ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարս իմ զկորուսեալ: Ասեմ ձեզ. զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ, քան վասն հինսուն եւ հինն արդարոց՝ որոց չկայ պիտոյ ապաշխարութիւն: 7:

---

## ՁՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ

**Սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետին եւ Մարուգէի ճգնաւորին:**

Ժամամուտ. Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ, ծառայ Քրիստոսի ոմ երանելիդ ի հարս սուրբ հայրապետ: Վանզի քոյ վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն ընծայելով: Վասն որոյ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:



Սղ· ձկն· Վրահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն Հռոմայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ· ԺԳ· 17:

Աւնկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, եւ հպատակ կացէք նոցա. զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց, որպէս թէ համարս տալոց են ընդ ձեր. զի խնդութեամբ արասցեն զայն, եւ մի՛ յոգւոց հանելով. զի այն ոչ յօգուտ ձեր է: Աղօթս արարէք վասն մեր. զի հաստատեալ գիտեմք եթէ բարւոք միտս ունիմք, յամենայնի կամիմք բարւոք գնացս ցուցանել: Եւ առաւել աղաչեմ՝ զի զայն առնիցէք, զի վաղագոյն պատուպարեցայց ձեզ: Եւ Աստուած խաղաղութեան՝ որ եհան ի մեռելոց զհովիւն հօտից, զմեծն արեամբ յաւիտենական ուխտին, զՏէր մեր Յիսուս Քրիստոս, հասուսցէ զձեզ ի գործս բարութեան առնել զկամս նորա. եւ արասցէ ի մեզ զհաճոյն առաջի իւր ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն: 21:

Ալէլուիա, ալէլուիա. Վրահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ· Թ· 39:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ասէ (Յիսուս.) ի դատաստան եկի յաշխարհս այս, զի որ ոչն տեսանեն՝ տեսցեն, եւ որք տեսանենն՝ կուրասցին: Լուան ումանք ի փարիսեցւոցն՝ որք ընդ նմա էին, եւ ասեն ցնա. Միթէ եւ մեք կոյրք իցեմք: Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ կոյրք էիք՝ ոչ էր ձեր մեղ. բայց արդ ասէք՝ եթէ տեսանեմք, եւ մեղքն ձեր ի ձեզ հաստատեալ են: Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ոչ մտանէ ընդ դուռն ի գաւիթ ոչխարաց, այլ ընդ այլ եղանէ՝ նա գող է եւ աւազակ: Իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ է ոչխարաց: Նմա դռնապանն բանայ. եւ ոչխարքն ձայնի նորա լսեն. եւ զիւր ոչխարան կոչէ յանուանէ,

եւ հանէ զնոսա։ Եւ յորժամ զիւրն զամենայն հանիցէ, առաջի նոցա երթայ, եւ ոչխարքն զհետ նորա երթան, զի ճանաչեն զձայն նորա։ Ջօտարի զհետ ոչ երթիցեն, այլ փախիցեն ի նմանէ, զի ոչ ճանաչեն զձայն օտարաց։ Ջայս առակ ասաց նոցա Յիսուս, եւ նոքա ոչ գիտէին՝ եթէ զինչ էր որ խօսէրն ընդ նոսա։ Դարձեալ ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ, զի ես եմ դուռն ոչխարաց։ Ամենեքեան որ յառաջ քան զիս եկին, գողք էին եւ աւազակք. այլ ոչ լուան նոցա ոչխարքն։ Ես եմ դուռն. ընդ իս եթէ ոք մտանիցէ, կեցցէ. մտցէ եւ ելցէ եւ ճարակ գտցէ։ Գող ոչ գայ՝ եթէ ոչ զի գողասցի եւ սպանցէ եւ կորուսցէ. ես եկի զի զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին։ Ժ. 10։

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՅԻՍՆԱԿԱՑ

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ։

Սղ. ԿԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ։

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ։

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Ա. 1։

Բազում մասամբք եւ բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք։ Ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ Որդւովն՝ զոր եդ ժառանգ ամենայնի, որով եւ զյաւիտեանսն արար. որ է լոյս փառաց եւ նկարագիր էութեան նորա. որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ. սրբութիւն մեղաց մերոց արարեալ՝ նստաւ ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս։ Այնչափ առաւել եղեալ քան զհրեշտակս, որչափ լաւ եւս



քան զնոսա անուն ժառանգեաց։ Քանզի ցո՞ երբեք ասաց ի հրեշտակաց. Որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ. եւ դարձեալ՝ թէ Ես եղէց նմա ի հայր, եւ նա եղիցի ինձ յորդի։ Այլ յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ. ասէ. Երկիր պագցեն նմա ամենայն հրեշտակք Աստուծոյ։ Այլ առ հրեշտակսն ասէ. Ո արար զհրեշտակս իւր հոգիս, եւ զպաշտօնեայս իւր ի բոց հրոյ։ Իսկ ցՈրդին ասէ. Աթոռ քո Աստուած յաւիտեանս յաւիտենից, գաւազան ուղղութեան, գաւազան արքայութեան քոյ. սիրեցեր զարդարութիւն եւ ատեցեր զանօրէնութիւն. վասն այսորիկ օծ զքեզ Աստուած, Աստուած քո իւղով ուրախութեան առաւել քան զընկերս քո։ Եւ դու Տէր ի սկզբանէ զերկիր հաստատեցեր, եւ գործք ձեռաց քոց երկինք են։ Նոքա կորնչին, եւ դու կաս եւ մնաս. ամենեքեան իբրեւ զձորձս մաշեսցին, եւ իբրեւ զվերարկուս. գալարեսցես զնոսա իբրեւ զհանդերձ, եւ գալարեսցին. բայց դու նոյն իսկ ես, եւ ամք քո ոչ պակասեն։ Ցո՞ երբեք ասաց ի հրեշտակաց. Նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։ Ո՞չ ապաքէն ամենեքեան հոգիք են հարկաւորք, որ առաքին ի սպասաւորութիւն վասն այնոցիկ՝ որ ժառանգելոցն են զփրկութիւն։ 14։

Ալէլուիա, ալէլուիա. Յարութեան ի յայնէն։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԷ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ասաց եւ առ աշակերտսն իւր. Ոչ է մարթ չգալ գայթագղութեան. բայց վայ այնմիկ յոյր ձեռն գայցէ։ Լաւ էր նմա՝ թէ վէմ երկանաքար կախէր զպարանոցէ նորա եւ անկանէր ի ծով, քան թէ գայթագղեցուցանիցէ զմի ոք ի փոքրկանցս յայսցանէ։ Զգոյշ կացէք անձանց։ Եթէ մեղիցէ եղբար քո, սաստեա նմա. եւ եթէ ապաշխարիցէ, թող նմա։ Եւ եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ, եւ եօթն անգամ դարձցի ի քեզ եւ ասիցէ՝ Ապաշխարեմ, թողցես նմա։ Եւ ասեն առաքեալքն ցՏէր. Յաւել մեզ հաւատս։ Եւ ասէ Տէր. Եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանան-

խոյ, եւ ասիցէք Թէոփիլոսի այսմիկ. Խրատս եւ անկեաց ի ծովու, եւ հնազանդեսցի ձեզ: Կամ ո՞վ ոք ի ձէնջ, որ ունիցի ծառայ հողագործ կամ հովիւ, որ իբրեւ մտանիցէ յագարակէ, ասիցէ ցնա վաղվաղակի՝ Թէ Ընդ բազմեաց: Եւլ ոչ ասիցէ ցնա՝ Թէ Պատրաստեա զինչ ընթրելոց իցեմ, եւ գօտի ածեալ պաշտեա զիս, մինչեւ կերայց եւ արբից, եւ ապա կերիցես եւ արբցես դու: Միթէ շնո՞րհ լինի ունիցի ծառային այնմիկ, զի արար զամենայն հրամանսն: Նոյնպէս եւ դուք՝ յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասասջիք՝ Թէ Ծառայք անպիտանք եմք, զոր պարտէաքն առնել՝ արարաք: 10:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

**Սրբոյն Իգնատիոսի Աստուածազգեաց հայրապետին Անտիոքայ:**

Յառաջաբան. Ո՛Հայրապետականն գարդարեցեր զաթոռ ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ, ծառայ Քրիստոսի ո՛վ երանելիդ ի հարս սուրբ հայրապետ: Քանզի քո վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զիրկութիւն շնորհելով: Ոչ ան որոյ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ. ՃԼԱ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զՅաւիթ եւ զամենայն հեղութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն ի կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս. ԳԼ. Դ. 9:

Ինձ այսպէս թուի թէ զմեզ զառաքեալս յետնորդս արար Աստուած, իբրեւ զմահապարտս. զի տեսիլ եղեաք աշխարհի եւ հրեշտակաց եւ մարդկան: Մեք յիմարք վասն Քրիստոսի, եւ դուք իմաստունք ի Քրիստոս. մեք տկարք, եւ դուք հզօրք. դուք փառաւորեալք, եւ մեք անարգք: Մինչեւ ցայսօր ժամանակի եւ քաղցեաք եւ ծարաւեցաք եւ



մերկ գնացաք եւ կռփահարեցաք եւ անհանգիստ եղեաք. եւ աշխատեցաք ձեռօք մերովք. բամբասեին զմեզ՝ օրհնեաք. հալածեին՝ յանձն առնուաք. հայհոյեին՝ աղաչեաք. իբրեւ առակ նշաւակի եղեաք ամենայն աշխարհի. ամենեցուն փառնել լինել մինչեւ ցայժմ: Ոչ եթէ յամօթ ինչ առնելով զձեզ գրեմ զայս, այլ իբրեւ զորդիս սիրելիս խրատեմ: Թէպէտ եւ բիւր դաստիարակս ունիցիք ի Քրիստոս, այլ ոչ եթէ բազում հարս. զի ի Քրիստոս Յիսուս աւետարանաւն ես ծնայ զձեզ: Ընդ աղաչեմ զձեզ նմանողք ինձ եղիջիք (որպէս եւ ես Քրիստոսի): 16:

Ալէլուիա, ալէլուիա. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

ԳԼ. Թ. 29:

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.

Եւ անտի ելեալ անցանէին առ Գալիլեացւովքն. եւ ոչ կամէր եթէ ոք գիտասցէ: Քանզի ուսուցանէր զաշակերտս իւր եւ ասէր ցնոսա, Թէ Որդի մարդոյ մատնելոց է ի կերտան իւր եւ ասէր ցնոսա, Թէ Որդի մարդոյ մատնելոց է ի ձեռս մարդկան, եւ սպանանիցեն զնա. եւ իբրեւ սպանցի՝ յերիր աւուր յառնէ: Եւ նոքա ոչ գիտէին զբանն, եւ երկնչէին հարցանել ցնա: Եկին ի Կափառնաում. եւ իբրեւ եմուտ ի տուն, հարցանէր զնոսա. Զի՞նչ վիճէիք ընդ միմեանս ընդ միմեանս: Եւ նոքա լուռ լինէին. քանզի ընդ միմեանս վիճէին ի ճանապարհին, Թէ ո՛վ մեծ իցէ: Եւ իբրեւ նստաւ՝ կոչեաց զերկոտասանսն եւ ասէ ցնոսա. Եթէ ոք կամի առաջին լինել՝ եղիցի ամենեցուն կրտսեր եւ ամենեցուն պաշտօնեայ: Եւ առեալ մանուկ մի կացոյց ի մէջ նոցա. եւ ընկալեալ զնա ի գիրկս իւր, ասէ ցնոսա. Որ միանգամ յայսպիսի մանկտւոյ ընկալցի յանուն իմ, զիս ընդունի. եւ որ զիս ընդունի՝ ոչ զիս ընդունի, այլ զայն որ առաքեացն զիս: 36:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

**Սրբոյն Թէոպոմպայ եպիսկոպոսին եւ Թէովնայ վկային, եւ յորից զինուորացն Բասոսի, Եւսեբի, Եւտիքի եւ Բասիլիդեայ:**

*Յոհաննու. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Ստուածած, որպէս մարդասէր:*

Աղ. ձղ. Վրահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զՎաւիթ. եւ զամենայն հեզութիւնորա:

Պօղոսի առաքելոյն ի Հրէայեցւոց Թղթոյն է ընթերցուածս. Գլ. ԺԲ. 1:

Ունիմք զազմութիւն վկայից, զկպարտութիւն զամենայն ի բաց ընկենցուք եւ զմեղս կարեւորս. համբերութեամբ ընթացցուք ի պատերազմին՝ որ առաջի կայ մեզ: Հայեցուք ի զօրագլուխն հաւատոց եւ ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ուրախութեանն որ նմա առաջի կայր, յանձն առ զխաչն, արհամարհեաց զամօթն, նստաւ ընդ աջմէ աթոռոյն Ստուծոյ: Ընդ ածէք զմտաւ, որ զայսպիսի համբերութիւն ի մեղաւորաց հակառակութենէ անտի կրեաց. զի մի՛ աշխատ լինիցիք անձամբք ձերովք եւ լքանիցիք: Ոչ ընդ արեամբ չափ պատերազմեալք՝ հակառակ կացէք մեղացն, եւ մոռացարուք զմխիթարութիւնն, որ ընդ ձեզ իբրեւ ընդ որդեակս խօսի: Որդեակ իմ, մի՛ լքանիր ի խրատու Տեառն, եւ մի՛ վհատիցիս՝ յանդիմանեալ ի նմանէ: Ոչ զոր սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի՝ զոր ընդունի: Ի խրատու համբերութեան կայք, իբրեւ յորդիս մատուցեալ է ի ձեզ Ստուածն: 7:

Ընդ ելս ի ա ի ա. Ստ ո ւ ա ծ ա յ ն է յ ա յ ն ե ն:



Սրբոյ Ընտարանիս որ ըստ Մատթէոսի. Գլ. Ծ. 26:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ոչ ինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի: Որ ասեմ ձեզ ի խաւարի՝ ասացէք ի լոյս. եւ զոր լսէք յունկանէ՝ քարոզեցէք ի վերայ տանեաց. Եւ մի՛ երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ զոգի ոչ կարեն սպանանել. այլ երկերուք դուք առաւել յայնմանէ՝ որ կարող է զոգի եւ զմարմին կորուսանել ի գեհենի: Ոչ ապաքէն երկու ճնճղուկք դանկի միոջ վաճառին, եւ մի ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց Հօր ձերոյ: Ընդ ձեր եւ ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է: Եւ արդ՝ մի՛ երկնչիցիք՝ զի լաւ էք քան զբազում ճնճղուկս: Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցից եւ ես զնմանէ առաջի Հօր իմոյ՝ որ յերկինսն է: Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց եւ ես զնա առաջի Հօր իմոյ՝ որ յերկինսն է: 33:

---

## ՀԻՆԳՐՈՐԴ ԶՈՐԵՔՇԱԲԱԹԻ

*Յոհաննու. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Ստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:*

Աղ. Զե. Կեցո զծառայս քո Ստուած իմ, որ ի քեզ յուսացեալ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհնապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն Հրէայեցւոց Թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 1:

Պատ այնորիկ պարտ է մեզ առաւել եւս ունկնդրել լինել բանիցն ասացելոց, զի մի՛ երբեք նուաղեսցուք: Ոչ եթէ որ ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ բանն՝ հաստատեալ

եղեւ, եւ ամենայն յանցաւորութիւն եւ անհնազանդութիւն ընկալաւ զպատիժ պատուհասի. մեք զհիմդ ապրեսցուք հեղգացեալք յայնպիսի փրկութենէ, որ սկիզբն առ խօսելոյ ի Տեառնէ, եւ ի ձեռն այնոցիկ որ լուան՝ ի մեզ հաստատեցաւ. վկայեալ ՅԱստուծոյ նշանօք եւ արուեստիւք եւ պէսպէս զօրութեամբք, եւ մասամբք Հոգւոյն սրբոյ ըստ իւրոյ կամաց: Օ՛ի ոչ եթէ հրեշտակաց հնազանդեցոյց զՀանդերձեալ աշխարհն, վասն որոյ մեքս խօսիմք: Վ կայեաց ոք ուրեք եւ ասէ. Օ՛ինչ է մարդ եթէ յիշեսցես զնա, կամ որդի մարդոյ թէ այց արասցես նմա: փոքր մի խոնարհ արարեր զնա քան զՀրեշտակս. փառօք եւ պատուով պսակեցեր զնա, եւ կացուցեր զնա ի վերայ ձեռակերտաց քոց: Օ՛ամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա: Ընդ ի հնազանդեցուցանելն զամենայն, ոչ ինչ եթող անհնազանդ ի նմանէ. բայց այժմ ոչ եւս տեսանեմք հնազանդեալ նմա զամենայն: Ալ զփոքր մի խոնարհեալ քան զՀրեշտակս տեսանեմք զՅիսուս՝ վասն չարչարանաց մահուն, փառօք եւ պատուով պսակեալ. զի շնորհօքն ՅԱստուծոյ վասն ամենայնէն զմահ ճաշակեսցէ: Օ՛ի վայելէր իսկ նմա, վասն որոյ ամենայն եւ որով ամենայն, բազում որդիս ի փառս ածել եւ զառաջնորդ փրկութեան նոցա չարչարանօք կատարել: 10:

Ալէլուիա, ալէլուիա. պահպ է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԲ. 11:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ եղեւ մինչեւ երթայր նա Յերուսաղէմ, եւ ինքն անցանէր ընդ մէջ Սամարեայ եւ Գալիլեացւոց: Եւ մինչ դեռ մտանէր ի գեօղ ուրեմն, պատահեցին նմա տասն այր բորոտ՝ որք կացին ի հեռաստանէ, բարձին զձայնս եւ ասեն. Յիսո՛ւս վարդապետ, ողորմեաց մեզ: Եւ իբրեւ տեսս զնոսա, ասէ ցնոսա. Երթայք ցուցէք զանձինս քահանայիցն. եւ եղեւ իբրեւ գնացին, առժամայն սրբեցան: Մի ոմն ի նոցանէ՝ իբրեւ տեսս եթէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն՝ ի ձայն մեծ փառաւոր առնէր զՅստուած: Ընկաւ ի վերայ երեսաց ի ներքոյ առ ոտս նորա, եւ գոհանայր զնմանէ. եւ ինքն էր Սամա-



րացի: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Ո՞չ տասն սրբեցան. իսկ արդ՝ ինուանքն ո՞ւր են. զի ոչ գտան դառնալ տալ փառս ՅԱստուծոյ, բայց միայն այլազգիս այս: Եւ ասէ ցնա. Ելի գնա, զի հաւատք քո կեցուցին զքեզ: 19:

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Սրբոյն Ադդէի հայրապետին եւ Աբգարու թագաւորին:

Յոհաննու. Ի տաճարի սրբոյ եւ ի յիշատակի սրբոյ Թագաւորացդ զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Ստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԼԱ. Պահանջք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զՊաւիթ. եւ զամենայն հեզութիւնս նորա:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուած. Գլ. Զ. 1:

Գործակից եմք ձեր եւ աղաչեմք, մի՛ ընդունայն զշնորհսն ՅԱստուծոյ ընդունել ձեզ: Օ՛ի ի ժամանակի ընդունելութեան, ասէ, լուայ քեզ, եւ յաւուր փրկութեան օգնեցի քեզ: Ահաւասիկ ժամանակ ընդունելի, ահա օր փրկութեան: Մի՛ եւ մի՛ իւիք տայցէք պատճառս, զի մի՛ արատեսցի պաշտօնն: Այլ յամենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր իբրեւ պաշտօնեայս ՅԱստուծոյ՝ համբերութեամբ բազմաւ, ի նեղութիւնս, ի վիշտս, ի չարչարանս, ի գանս, ի բանտս, ի խռովութիւնս, յաշխատութիւնս, ի հսկմունս, ի պահս, ի սրբութեան, ի գիտութեան, յերկայնմտութեան, ի քաղցրութեան, ի Հոգի սուրբ, ի սէր առանց կեղծաւորութեան, ի բանս ճշմարտութեան, ի զօրութեան ՅԱստուծոյ. վասն զինուն արդարութեան՝ որ ընդ աջմէն եւ ընդ ահեկէն է: փառօք եւ անարգութեամբ, գովութեամբ եւ պարսաւանօք. իբրեւ մոլորք եւ ճշմարիտք. իբրեւ անծանօթք եւ ծանուցեալք. իբրեւ մահկանացուք եւ ահաւասիկ կենդանի եմք. իբրեւ խրատեալք եւ ոչ մահապարտ

տեալք. իբրեւ տրտմեալք եւ հանապազ ուրախ եմք. իբրեւ տնանկք եւ զբազումս մեծացուցանեմք. իբրեւ ոչ ինչ ունիցիմք եւ զամենայն ինչ ունիմք: 10:

Ալէլուիա, ալէլուիա. Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. եւ ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. Թ. 1:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն, ետ նոցա զօրութիւն եւ իշխանութիւն ի վերայ ամենայն դիւաց. եւ բժշկել զհիւանդութիւնս: Եւ առաքեաց զնոսա քարոզել զարքայութիւնն Աստուծոյ, եւ բժշկել զախտաժէտս: Եւ ասէ ցնոսա. Մի՛ ինչ բառնայք ի ճանապարհ. մի՛ գաւազան եւ մի՛ մախաղ, մի՛ հաց եւ մի՛ արծաթ. մի՛ երկուս հանդերձս ունիցիք: Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ ագջիք, եւ անտի գնայցէք: Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յորժամ ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ՝ զփոշի ոտից ձերոց թօթափեսջիք ի վկայութիւն նոցա: Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս եւ ընդ գեօղս, աւետարանէին եւ բժշկէին ընդ ամենայն տեղիս: 6:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. Ղէ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր: զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Գ. 12:

Տեսէք, եղբարք, գուցէ երբեք լինիցի յումեք ի ձէնջ սիրտ չար անհաւատութեան, ապստամբ լինել յԱստուծոյ



կենդանւոյ: Այլ մխիթարեցէք զմիմեանս զօրհանապազ՝ մինչ դեռ այսօրդ առաջի կայ. զի մի՛ ոք խստասցի ի ձէնջ խաբէութեամբ մեղաց: Քանզի բաժանորդք եղեաք Քրիստոսի. միայն թէ զսկիզբն հաստատութեանն մինչեւ ի վախճան պինդ կալցուք. յասելն՝ Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք՝ մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր որպէս ի դառնութեանն: Քանզի ոմանք լուան եւ դառնացուցին, այլ ոչ ամենեքեան՝ որ ելեալ էին յԵգիպտոսէ ի ձեռն Մովսիսի: Յումէ՞ տաղտկացաւ զքառասուն ամ. ո՞չ ապաքէն ի յանցուցելոցն, որոց ոսկերքն անկան յանապատի անդ: Ո՞ւմ երդուաւ չմտանել ի հանգիստն իւր, եթէ ոչ՝ անհաւատիցն: Եւ տեսանեմք, զի ոչ կարացին մտանել վասն անհաւատութեանն: Երկիցուք այսուհետեւ՝ գուցէ ի թողուլ զաւետիսն, ի մտանելոյ ի հանգիստն նորա գտանիցի ոք ի ձէնջ նուազեալ: Քանզի եմք աւետարանեալք, որպէս եւ նոքայն. այլ նոցա ոչ ինչ օգնեաց լուր բանին, չամոքելոցն ի հնազանդութիւն հաւատոց: Այլ մեք մտանեմք ի հանգիստն, որք հաւատացաքս, որպէս եւ ասացն՝ թէ Որպէս երդուայ ի բարկութեան իմում, թէ մտցեն ի հանգիստ իմ. թէպէտ եւ արդիւնքն ի սկզբանէ աշխարհի լեալ էին: Քանզի ասէ ուրեք վասն աւուրն եօթներորդի այսպէս. Եւ հանգեաւ Աստուած յաւուրն եօթներորդի յամենայն գործոց իւրոց: Եւ աստ դարձեալ ասէ. Թէ մտցեն ի հանդիստ իմ: Եւ արդ քանզի արդելան ոմանք մտանել ի նա, եւ որք յառաջագոյն աւետարանեալն էին՝ չմտին վասն անհաւատութեանն. դարձեալ այլ օր սահմանէ զայսօրն Դաւթի, եւ ասէ՝ յետ այնչափ ժամանակաց, որպէս յառաջագոյն ասաց. Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք՝ մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր: Զի եթէ զնոսա Յեսուայ հանգուցեալ էր, ապա վասն այլոյ աւուր ոչ խօսէր յետ այնորիկ: Արդ ուրեմն նուազեալ է շաբաթումն ժողովրդեանն Աստուծոյ: Զի որ եմուտ ի հանգիստն նորա, եւ նա հանգեաւ յիւրոց գործոց անտի, որպէս եւ Աստուած յիւրայոցն: Դ. 10:

Ալէլուիա, ալէլուիա: Պահոց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ· ԺԸ· 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ասաց եւ առակ մի նոցա՝ առ այն, թէ պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս եւ մի ձանձրանալ· ասէ. Դատաւոր մի էր ի քաղաքի ուրումն, Աստուծոյ ոչ երկնչէր եւ ի մարդկանէ ոչ ամաչէր: Եւ այրի մի էր ի նմին քաղաքի, գայր առ նա եւ ասէր. Դատ արա ինձ յոսոխէ իմմէ: Եւ ոչ կամէր ի բազում ժամանակս. յետ այնորիկ ասէ ի մտի իւրում. Թէ եւ Աստուծոյ ոչ երկնչիմ, եւ ի մարդկանէ ոչ ամաչեմ, գոնէ վասն աշխատ առնելոյ զիս այրւոյն՝ արարից նմա դատ, զի մի՛ իսպառ եկեալ թախանձիցէ զիս: Եւ ասէ Տէր. Լուարո՛ւք զինչ դատաւորն անիրաւութեան ասէր: Իսկ Աստուած ո՞չ առնիցէ վրէժխնդրութիւն ծառայից իւրոց, որ աղաղակեն առ նա ի տուէ եւ ի գիշերի. եւ երկայնամի՞տ միայն լինիցի առ նոսա: Այո՝ ասեմ ձեզ. զի արասցէ վրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի. իսկ Որդի մարդոյ եկեալ՝ գտանիցէ՞ արդեօք հաւատս յերկրի: 8:

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

**Սրբոյն Ինդոսի ներքինւոյն եւ Դոմնայի կուսին, եւ Գղերիկոսի քահանային, եւ երկուց բիւրուցն, որ այրեցան յեկեղեցին Նիկոմիդացւոց:**

*Յաճախօ-պ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց սարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք ցկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:*

Ող· կե· *Ընդաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր. եւ հաներ զմեզ ի հանգիստ:*

*Աղաղակեցէք առ Աստուած ամենայն երկիր. սաղմոս ասացէք անուան նորա, եւ տուք զփառս օրհնութեան նորա:*



Պետրոսի առաքելոյն ի Պաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուած. Գլ· Գ· 12:

Սիրելիք, մի օտարոտի համարիլ զհուրանդն ինչ՝ որ ի փորձութիւն ձեզ լինիցի. որպէս թէ օտար ինչ իրք ձեզ դիպիցին. այլ իրրեւ հաղորդեալք Քրիստոսի չարչարանացն, ուրախ լինիջիք, զի եւ ի յայտնութեան փառացն նորա ցնծայեալք բերկրեսջիք: Իսկ եթէ նախատիցիք եւս վասն անուանն Քրիստոսի, երանելի էք. զի փառացն եւ զօրութեան անուանն է, եւ Աստուծոյ Հոգին ի վերայ ձեր հանգուցեալ է: Մի ոք ի ձէնջ չարչարեսցի իրրեւ զսպանող, կամ իրրեւ գգող, կամ իրրեւ զչարագործ, կամ իրրեւ զօտարատեսուչ: Ապա եթէ իրրեւ զքրիստոնեայ, մի ինչ ամաչեսցէ. այլ փառաւոր առնիցէ զԱստուած անուամբս այսմիկ: Ոչ ժամանակ է սկիզբն լինելոյ դատաստանին ի տանէն Աստուծոյ. զի եթէ նախ ի մէնջ, իսկ զի՞նչ կատարած այնոցիկ իցէ՝ որ ոչ հաւանեցան Աստուծոյ աւետարանին: Եւ եթէ արդարն հազիւ կեցցէ, իսկ ամբարիշտն եւ մեղաւորն ո՞ւր գտանիցի: Արդեօք զի եւ որ չարչարիցին ըստ Աստուծոյ կամացն, հաւատարիմ հաստչին աւանդեսցեն զհոգիսն բարերարութեամբք: 19:

---

Ալէլուիա, ալէլուիա. Ընդաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր. եւ հաներ զմեզ ի հանգիստ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ· ԺԲ· 17:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Օձայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս: Եթէ աշխարհ զձեզ ատեայ, գիտասջիք զի նախ զիս ատեաց: Եթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զիւրան սիրէր արդեօք. բայց զի չէք յաշխարհէ, այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վասն այնորիկ ատեայ զձեզ աշխարհ: Յիշեցէք զբանն զոր ասացի ձեզ, թէ ոչ է ծառայ մեծ քան զՏէր իւր. եթէ զիս հալածեցին, ապա եւ զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա եւ զձերն պահեսցեն: Այլ զնոցանս արասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ, զի ոչ ծանեան զայն՝ որ առաքեացն

զնա: Իմ եթէ չէր եկեալ եւ խօսեցեալ ընդ նոսա, մեղ չունէ ոչ գոյր նոցա. բայց արդ չունք պատճառք վասն մեղացդ իւրեանց: Որ զիս ատեայ, եւ զՀայրն իմ ատեայ: Եթէ զգործսն չէր գործեալ ի նոսա, զոր ոչ այլ ոք գործեաց, մեղ չունէ ոչ գոյր նոցա. բայց արդ տեսին եւ ատեցին եւ զիս եւ զՀայր իմ: Այլ զի լցցի բանն, որ յօրէնս նոցա գրեալ է, թէ Ատեցին զիս տարապարտուց: 25:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՅԻՍՆԱԿԱՑ

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ· կդ· Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք Յերուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն Յերբայեցւոց Թղթոյն է ընթերցուածս.

Գլ· Դ· 16:

Մատիցուք այսուհետեւ համարձակութեամբ առաջի աթոռոյ շնորհացն նորա. զի ընկալցուք զողորմութիւն, եւ գտցուք շնորհ ի դէպ ժամանակի օգնականութեան: Օի ամենայն քահանայապետ ի մարդկանէ առեալ՝ վասն մարդկան կայ յաստուածակոյս կողմն անդր, զի մատուսցէ պատարագս եւ զոհս վասն մեղաց: Ձափով չարչարակից կարող է լինել տգիտաց եւ մոլորելոց, քանզի եւ ինքն իսկ տկարութեամբ զգածեալ է: Վասն այնորիկ հարկ է, որպէս վասն ժողովրդեանն, նոյնպէս եւ ընդ անձին մատուցանել պատարագ վասն մեղաց: Եւ ոչ եթէ անձամբ ոք առնու պատիւ, այլ կոչեցեալն Աստուծոյ, որպէս եւ Ահարոնն: Նոյնպէս եւ Քրիստոս ոչ եթէ անձին ինչ շուք եդ լինել քահանայապետ. այլ որ խօսեցաւն առ նա թէ Որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ: Որպէս եւ ի միւսումն ասէ. Դու ես



քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի: Որ յաւուրս մարմնոյ իւրոյ աղօթս եւ պաղատանս առ այն՝ որ կարող էր ապրեցուցանել զնա ի մահուանէ, ուժգին գոչմամբ եւ արտասուօք մատուցանէր, եւ լսելի լինէր առ լաւթեանն: Թէպէտ եւ Որդի է, ուսաւ ի չարչարանաց անտի զՀնազանդութիւն: Եւ իբրեւ կատարեցաւ, եղեւ ամենայն հնազանդելոց իւրոց պատճառք փրկութեանն յաւիտենից. եւ անուանեցաւ յԱստուծոյ քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի: Ե· 10:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութիւնն է յայնչէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ· ԻԸ· 9:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ասաց եւ առ ոմանս պանծացեալս յանձինս, թէ արդարք իցեն եւ խոտիցեն զբազումս, զառակս զայս. Երկու երկու եկեն ի տաճարն կալ յաղօթս, մին փարիսեցի եւ միւսն մաքսաւոր: Փարիսեցին կայր մեկուսի, եւ զայս առանձինն աղօթս մատուցանէր. Աստուած իմ, գոհանամ զքէն, զի ոչ եմ իբրեւ զայլս ի մարդկանէ, զյափշտակողս եւ զանիրաւս եւ զշունս, կամ իբրեւ զայս մաքսաւոր: Այլ պահեմ երկիցս ի շաբաթու, եւ տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց: Եւ մաքսաւորն կայր մեկուսի, եւ ոչ կամէր եւ ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ. այլ կոծէր զկուրծս իւր եւ ասէր. Աստուած, քաւեա զիս զմեղաւորս: Ասեմ ձեզ. էջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա. զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեսցի, եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի: 14:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

**Սրբոյն Աբրահամու եւ Խորենայ, եւ անարծաթ բժշկացն Կոզմայի եւ Դամիանոսի:**

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսու-

թեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԺԵ. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ Տէր, ես ծառայ քո եմ. ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Գ. 10:

Այլ դու զհետ եկիր վարդապետութեան իմոյ, առաջնորդութեան, յօժարութեան, հաւատոց, երկայնմտութեան, սիրոյ, համբերութեան, հալածանաց, չարչարանաց. որպիսիք եղեն ինձ յԱնտիոք եւ յԻկոնիոն եւ ի Լիւստրոս, որպիսի հալածանաց համբերի, եւ յամենայնէ փրկեաց զիս Տէր: Եւ ամենեքին՝ որ կամիցին աստուածպաշտութեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս, ի հալածանս կացցեն: Այլ մարդք չարք եւ կախարդք յառաջ եկեսցեն ի չար անդր, մոլորեալք եւ մոլորեցուցանիցեն: Այլ դու հաստատուն կաց՝ յոր ուսարդ եւ հաւատարիմ եղեր: Գիտես ուստի ուսար. զի ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որ կարող են իմաստուն առնել զքեզ ի փրկութիւն ի ձեռն հաւատոցն՝ որ ի Քրիստոս Յիսուս: 15:

Ալէլուիա, ալէլուիա. Մարտիրոսաց ի Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԲ. 32:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն: Վաճառեցէք զինչս ձեր, եւ տուք ողորմութիւն. եւ արարէք ձեզ քսակ առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս, ուր ոչ գող մերձենայ եւ ոչ ցեց ապականէ: Զի ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին: Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս եւ ճրագունք լուցեալք: Եւ դուք նմանողք մարդկան՝ որ ակն ունիցին



տեառն իւրեանց՝ թէ երբ դառնայցէ ի հարսանեաց. զի յորժամ գայցէ եւ բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա: Երանի իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ՝ զի գօտի ընդ մէջ ածցէ եւ բազմեցուսցէ զնոսա, եւ անցեալ պաշտիցէ զնոսա: Եւ եթէ յերկրորդ կամ յերրորդ պահու եկեսցէ եւ գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ: Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն յորում պահու գող գայ՝ հսկէր եւ չտայր թոյլ ական հատանել ի տան իւրում: Եւ դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ Որդի մարդոյ: 40:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### Սրբոյն Յիզտբուզտի վկային, որ Թարգմանի Աստուածատուր:

Ժամամուտ. Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո, Աստուած, որպէս մարդասէր:

Սղ. ՃԺԵ. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ Տէր, ես ծառայ քո եմ. ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս. Գլ. Բ. 3:

Վշտակից լեր իբրեւ զբարւոք զինուոր Քրիստոսի Յիսուսի: Ոչ ոք զինուորեալ աստէն ընդ կեանս աշխարհիս պատաղի, եթէ զօրավարին հաճոյ լինիցի: Եւ եթէ մարտիկ ոք իցէ, ոչ պսակի՝ եթէ ոչ ըստ օրինին մարտիցէ: Եւ հողագործին աշխատելոյ պարտ է նախ ի պտղոյն վայելել: Իմա զինչ ասեմս. տացէ քեզ Տէր իմաստութիւն յամենայնի: Յիշեա զՔրիստոս Յիսուս յարուցեալ ի մեռելոց ի զաւակէ Դաւթի ըստ աւետարանիս իմում, յորում չարչարիմ կապանօք չափ իբրեւ զչարագործ. այլ բանն Աստուծոյ ոչ եթէ

կապեալ իցէ: Վ֊ասն այնորիկ ամենայնի համբերեմ վասն ընտրելոցն, զի եւ նոքա փրկութեանն հասանիցեն որ ի Քրիստոս Յիսուս երկնաւոր փառաքն հանդերձ: 10:

Ալէլուիա, ալէլուիա· Մատթէոսայ է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի·

Գլ· ԺԶ· 16:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ·

Ընդհատիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց· եղերուք այսուհետեւ խորագէտք իբրեւ զօձս, եւ միամիտք իբրեւ զաղաւնիս: Զգոյշ լինիջիք ի մարդկանէ· զի մատնեսցեն զձեզ յատեանս, եւ ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ: Եւ առաջի դատաւորաց եւ թագաւորաց տանիցին զձեզ վասն իմ ի վկայութիւն նոցա եւ հեթանոսաց: Եւ յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հոգայցէք՝ թէ ո՛րպէս կամ զի՛նչ խօսիցիք· զի տացի ձեզ ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք: Զի ոչ եթէ դուք իցէք՝ որ խօսիցիք, այլ Հոգին Հօր ձերոյ որ խօսիցի ի ձեզ: Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, եւ հայր զորդի· եւ յառնիցեն որդիք ի վերայ հարց եւ սպանանիցեն զնոսա: Եւ եղիջիքատելեաք յամենեցունց վասն անուան իմոյ· իսկ որ համբերեսցէ մինչեւ ի վախճան, նա կեցցէ: 22:

---

Ո՞վ եղէ ասվզո֊նի֊ն վաղէմի՝ կոպոբելոյ յո֊ո֊ւ Շ֊աքեո֊ ոչ անիջապէս յաւազ էան վզահո ձեռնբեան Քրիս֊պոսի՝ զՏ֊ն

ՔԱՂԿԵԴՈՆԻ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՅՆ ՈՒՂՂ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ

զայս կոչէ կալցին:

Յ֊ա֊մա֊ո֊պ· Ո՛Հայրապետականն զարդարեցէք զաթոռ ի յերկրի· առաքելական առէք զպատիւ յերկնուստ, ծառայք Քրիստոսի ո՛վ երանելիք ի հարս սուրբ հայրապետք: Վանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ



հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Սղ· ՃՂԱ· Վահանայք քո զգեցցին զարդարութիւն: եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զվաւելիք եւ զամենայն հեզութիւն նորա:

Պօղոսի առաքելոյն Հռոմայեցւոց թղթոյն է ընթերցուածս·

Գլ· ԺԳ· 7:

Յիշեցէք զառաջնորդս ձեր, որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ· հայեցեալք ելս գնացից նոցա՝ նմանողք եղէք հաւատոցն: Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեանս: Յուսմունս պէսպէս եւ յօտարաճայնս մի՛ դանդաչէք· զի լաւ է շնորհօք հաստատել զսիրտս, եւ ոչ կերակրովք, որովք ոչ ինչ օգտեցան՝ որ այնպէսն գնացին: 9:

Ալէլուիա, ալէլուիա· Վահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի·

Գլ· ԺԶ· 13:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս·

Եւ եկեալ (Յիսուս) ի կողմանս Փիլիպպեայ կեսարիոյ, հարցանէր ցաշակերտսն եւ ասէր· Զո՞ ոք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ Որդի մարդոյ: Եւ նոքա ասեն· Ոմն զՅովհաննէս Մկրտիչ, եւ այլք զԵղիա, եւ կէսք զԵրեմիա, կամ զմի ոք ի մարգարէիցն: Ասէ ցնոսա· Իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ: Պատասխանի եւ նմա Սիմոն Պետրոս եւ ասէ· Դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ կենդանւոյ: Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնա· Երանի՛ ես դու Սիմոն որդի Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ քեզ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է: Եւ ես քեզ ասեմ, զի դու ես վէմ, եւ ի վերայ այդր վէմի շինեցից զեկեղեցի իմ, եւ դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն

ցեն: Եւ տաց քեզ զփականս արքայութեան երկնից. եւ զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս: 19:

---

Ի Դեկտեմբերի ԺԷ. Հանապազ բարեկենդան է ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. եւ ԻԷ օրն հանդիպի Հորեքշաբաթի կամ Ուրբաթ կամ Կիրակէ՝ զայսոսիկ կատարեա:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ժամամուտ. Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Սղ. ՁԵ. Կեցո զծառայս քո Աստուած իմ. որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ե. 11:

Վասն որոյ բազում են մեզ բանք, եւ դժուարապատում ի՝ մեկնել. քանզի խօթամիտք եղերուք լսելեօք: Փոխանակ զի պարտ էր ձեզ լինել վարդապետս վասն ժամանակին: Դարձեալ պիտոյ է ձեզ ուսանել՝ թէ զի՞նչ են նշանագիրք ի սկզբան բանիցն Աստուծոյ. եւ եղերուք կարօտք կաթին եւ ոչ հաստատուն կերակրոյ: Զի ամենայն որ կաթնկեր է՝ տգէտ է բանին արդարութեան, քանզի տղայ է: Այլ կատարելոցն է հաստատուն կերակուր. որոց՝ վասն ի չափսն հասանելոյ՝ ճաշակելիքն կիրթ են ընտրութեան բարւոյ եւ չարի: Վասն որոյ թողեալ զբան սկզբանն Քրիստոսի, ի կատարումն եկեսցուք. մի՛ միւսանգամ արկանել հիմն ապաշխարութեան ի մեռելոտի գործոց անտի, եւ հաւատոցն որ յԱստուած, եւ մկրտութեանցն վարդապետութեան, եւ ձեռնադրութեան ձեռաց, եւ յարութեան մեռելոց, եւ



դատաստանին յաւիտենից: Եւ արդ արասցուք զայն, եթէ Աստուած հրամայեսցէ: Քանզի անհնար է մի անգամ մկրտելոցն, որ ճաշակեցին յերկնաւոր պարգեւացն, եւ հաղորդք եղեն Հոգւոյն սրբոյ, եւ զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշակս ճաշակեցին, եւ զզօրութիւնս հանդերձելոյ աշխարհին, եւ կործանեսցին, միւսանգամ նորոգել յապաշխարութիւն, եւ վերստին ի խաչ հանել անձանց զՈրդին Աստուծոյ, եւ դարձեալ խայտառակել: Քանզի երկիր՝ որ ըմպիցէ զանձրեւ բազում անգամ եկեալ ի վերայ նորա, եւ ծնանիցի արդիւնս շահեկանս նոցա՝ վասն որոյ գործիցին, ընդունի զօրհնութիւն յԱստուծոյ: Իսկ որ բերէ փուշ եւ տատասկ, անպիտան է եւ մերձ յանէծս, եւ վախճան նորա յայրումն: Զ. 8:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց ի յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԸ. 18:

ԶՏէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ եհարց (զնա) ոմն իշխան եւ ասէ. Վարդապետ բարի, զի՞նչ գործեցից, զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից: Ասէ ցնա Յիսուս. Զի՞ ասես զիս բարի. չիք ոք բարի՝ բայց մի Աստուած: Զպատուիրանս գիտես. մի՛ շնար, մի՛ սպանաներ, մի գողանար, մի՛ սուտ վկայեր, պատուեա զհայր քո եւ զմայր: Եւ նա ասէ. Զայդ ամենայն պահեցի ի մանկութենէ իմմէ: Իբրեւ լուաւ զայն Յիսուս՝ ասէ ցնա. Միւս եւս պակաս է քեզ. զամենայն ինչ զոր ունիս, վաճառեա եւ տուր աղքատաց, եւ ունիցիս գանձս յերկինս. եւ եկ զկնի իմ: Նա իբրեւ լուաւ զայս՝ տրտմեցաւ. քանզի էր մեծատուն յոյժ: Իբրեւ ետես զնա Յիսուս տրտմեալ, ասէ. Ո՛րպէս դժուարաւ որ ինչս ունիցին՝ մտանիցեն յարքայութիւն Աստուծոյ: Դիւրագոյն իցէ մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել: Եւ որ լուանն՝ ասէին. Եւ ո՞ կարիցէ ապրել: Եւ նա ասէ, Անհնարինք առ ի մարդկանէ՝ հնարաւորք են Աստուծոյ: 27:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՈՒՐԲԱԹ

*Ժամամուտ.* Ո՛ր ըստ ամենայն միտս անցանես՝ զնաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

*Սղ. ՂԱ.* Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւնն նորո. զի սքանչելիս արար:

Պօղոսի առաքելոյն Հռոմայեցւոց Թղթոյն է ընթերցուած:

Գլ· Զ· 9:

Կայց հաստատեալ եմ վասն ձեր, սիրելիք, ի լաւ անգր եւ որ լինի է փրկութեամբ. զի թէպէտ եւ այսպէս խօսիմք, ոչ եթէ անիրաւ ինչ է Աստուած՝ մոռանալ զգործս ձեր եւ զսէրն՝ զոր ցուցէք յանուն նորա, զի պաշտեիք զսուրբսն եւ պաշտէք: Եւ մեք ըղձանամք՝ զի իւրաքանչիւր ոք ի ձէնջ զնոյն փոյթ ցուցանիցէ ի հաստատութիւն յուսոյն մինչեւ ցվախճան. զի մի՛ հիւանդամիտք լինիցիք: Այլ նմանողք եղերուք այնոցիկ՝ որ հաւատովքն եւ երկայնմտութեամբ ժառանգեցին զաւետիսն: Ջի Աբրահամու խոստացեալ զաւետիսն Աստուծոյ, քանզի յայլ ոք ի մեծ ոչ գոյր երդնուլ, յանձն իւր երդուաւ եւ ասէ. Եյո՛, օրհնելով օրհնեցից զքեզ, եւ բազմացուցանելով բազմացուցից: Եւ այնպէս երկայնամիտ եղեալ՝ եհաս աւետեացն: Ապաքէն մարդիկ՝ որ ինչ ի վեր է քան զինքեանս, յայն երդնուն. եւ ամենայն հակառակութեան նոցա վճիռ ի հաստատութիւն՝ երդումն է: Որով առաւել եւս կամեցեալ Աստուծոյ ցուցանել ժառանգաւորաց աւետեացն զհաստատութիւն խորհրդոյն իւրոյ, միջնորդեաց երդմամբ: Ջի երկու անփոփոխելի իրօքն՝ որովք անհնարին է ստել Աստուծոյ, հաստատուն մխիթարութիւն ունիցիմք, որք ապաստան եղեաք բուռն հարկանել զհանդերձեալ յուսոյն: Ջոր իբրեւ զխարիսխ հաստատուն եւ անշարժ ունիցիմք անձանց մերոց, որ եւ մտանիցէ ի ներքինն կողմն վարագուրին, ուր կարապետն մեր Յիսուս եմուտ վասն մեր, ըստ կարգին Մելքիսեդեկի եղեւ քահանայապետ յաւիտենից: Վասնզի այս Մելքիսեդեկ թագաւոր էր Սաղէմայ, քահանայ Աստուծոյ բարձրելոյ, որ ել



ընդ առաջ Աբրահամու, յորժամ դարձեալ գայր ի կոտորածէ թագաւորացն, եւ օրհնեաց զնա, որում եւ տասանորդս յամենայնէ ետ Աբրահամ: Նախ թարգմանի թագաւոր արդարութեան, ապա թագաւոր Սաղէմայ՝ որ է թագաւոր խաղաղութեան: Ընհայր, անմայր, չհամարեալ յազգս, որոյ ոչ սկիզբն աւուրց եւ ոչ կատարած կենաց. նմանեալ Որդւոյ Աստուծոյ՝ կայ մնայ քահանայ մշտնջենաւոր: Արդ տեսէք որպիսի որ էր սա, որում եւ Աբրահամ տասանորդս ետ յաւարէ անտի՝ նահապետն: Եւ որք յորդւոցն Ղեւեայ զքահանայութիւնն առնուն, պատուէր ունին տասանորդել զժողովուրդն ըստ օրինացն, այսինքն է զեղբարս իւրեանց. թէպէտ եւ ելեալ իցեն յերանացն Աբրահամու: Իսկ չհամարեալն յազգս ի նոցանէ՝ տասանորդեաց զԱբրահամ, եւ զնա՝ որոյ զաւետիսն ընկալեալ էր, օրհնեաց: Ջի առանց ամենայն հակառակութեան՝ նուազն ի լաւէ անտի օրհնեացի: Եւ աստ մարդք մահկանացուք տասանորդս առնուն, բայց անդ վկայեցաւ թէ կենդանի է. եւ որպէս բանիւ կարգ է ասել, թէ Աբրահամ եւ Ղեւի իսկ՝ որ զտասանորդսն առնոյր, տասանորդեցաւ: Ջի դեռ եւս յերանս հօր իւրոյ էր՝ յորժամ ընդ առաջ եղեւ նմա Մելքիսեդեկ: Է· 10:

Ալելուիա, ալելուիա. պահոց է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ· ԺԹ· 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով: Եւ ահա այր մի անուն կոչեցեալ Զակքէոս, եւ նա էր մաքսապետ, եւ ինքն մեծատուն: Եւ խնդրէր տեսանել՝ թէ ո՛վ իցէ Յիսուս, եւ ոչ կարէր ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւ: Եւ ընթացեալ յառաջս, եւ ի ժանտաթզենին՝ զի տեսանիցէ զնա. քանզի ընդ այն իսկ անցանելոց էր: Իբրեւ եկն ի տեղին, հայեցաւ ի վեր Յիսուս եւ ասէ ցնա. Զակքէ, փութա այտի, զի այսօր ի տան քումմ արժան է ինձ ագանել: Փութացաւ եւ էջ եւ ընկալաւ զնա ուրախութեամբ: Իբրեւ տեսին ամենեքեան, տրտնջէին եւ ասէին՝ թէ Ընդ առն մեղաւորի եմուտ լուծանել: Նա՛ն եկաց Զակքէոս եւ ասէ

ցՏէր. Տէր, ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց. եւ եթէ
զոք զրկեցի, հատուցից չորեքկին: Եւ ասէ ցնա Յիսուս.
Այսօր եղեւ փրկութիւն տանս այսմիկ. քանզի եւ սա որդի
Աբրահամու է: Զի եկն Որդի մարդոյ խնդրել եւ կեցուցա-
նել զկորուսեալն: 10:

---

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ ՅԻՍՆԱԿԱՑ

### Որ եւ ի ծննդեան պահքն եւս հանդիպի:

Ժամամուտ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ
անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ
Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ
եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ
կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ
Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. ԿԴ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի
Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին
եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Է. 11:

Իսկ արդ եթէ կատարումն ի ձեռն Ղեւտացւոց քա-
հանայութեանն էր, քանզի ժողովուրդն յայն օրէնս գրեցաւ.
զի՞նչ պիտոյ էր ըստ կարգին Մելքիսեդեկի այլում քահա-
նայի յառնել, եւ ոչ ասել թէ ըստ կարգին Ահարովնի:
Այլ ի փոփոխել քահանայութեանն, հարկ էր եւ օրինացն
փոփոխումն լինել: Զի զորմէ այսպէսն ասի՝ յայլմէ ազգէ
կալաւ հաղորդութիւն, յորմէ ոչ ոք երբեք եղեւ հաղորդ
սեղանոյն: Արդ յայտ իսկ է, թէ յազգէ Յուդայ ծագեաց
Տէր մեր, յորմէ ազգէ վասն քահանայից Մովսէս ինչ ոչ
ճառեաց: Եւ եւս առաւել յայտ է՝ թէ ըստ նմանութեան
Մելքիսեդեկի յառնելոց է այլ քահանայ, որ ոչ ըստ մար-
մնաւոր պատուիրանին եղեւ, այլ ըստ զօրութեան կենացն
անվախճանից: Քանզի վկայեցաւ, թէ Դու ես քահանայ



յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի: Արհամարհութիւն
լինէր առաջին պատուիրանին՝ վասն նորին տկարութեանն եւ
անշահութեան: Քանզի ոչ ինչ կատարումն գործեցին
օրէնքն, եւ մուտ ազնուական յուսոյն՝ որով մերձենամք առ
Աստուած: Եւ այնչափ, զի ոչ առանց երդման. զի են ոմանք՝
որ առանց երդման են կացեալ քահանայք: Բայց սա երդ-
մամբ ի ձեռն այնորիկ՝ որ ասացն ի նա. Երդուաւ Տէր, եւ
ոչ եւս զղջասցի, դու ես քահանայ յաւիտեան: Եւ այնչափ
լաւագոյն ուխտի եղեւ երաշխաւոր Յիսուս: Եւ բազում են
կացեալ քահանայք՝ վասն մահու արգել լինելոյ ի մշտնջե-
նաւորել: Իսկ սա վասն յաւիտեան կալոյ՝ առանց անցանելոյ
ունի զքահանայութիւնն: Ուստի եւ կենդանի առնել հա-
մօրէն կարող է զմատուցեալսն նովաւ առ Աստուած. քանզի
միշտ կենդանի է՝ լինել բարեխօս վասն նոցա: 25:

Ալէլուիա, ալէլուիա: Յարութեան է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԺԹ. 11:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ մինչ դեռ նոքա զայն լսէին, յաւել առակ մի եւ
ասէ, վասն մերձենալոյ նորա յԵրուսաղէմ, եւ համարելոյ
նոցա եթէ առժամայն յայտնելոց է արքայութիւն Աստու-
ծոյ. ասէ. Այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի՝ առ-
նուլ իւր թագաւորութիւն, եւ դառնալ: Եւ կոչեցեալ
զծառայս իւր՝ ետ նոցա տասն մնաս, եւ ասէ ցնոսա. Յար-
գեցէք զայդ՝ մինչեւ եկից: Եւ քաղաքացիքն նորա ատէին
զնա. առաքեցին հրեշտակս զկնի նորա եւ ասեն, թէ Ոչ կա-
միմք թագաւորել դմա ի վերայ մեր: Եւ եղեւ դառնալ նմա՝
առեալ զթագաւորութիւնն, եւ կոչեալ զծառայսն՝ որոց
տուեալ էր զարծաթն, զի գիտասցէ թէ ո՛ զինչ շահեցաւ:
Եկն առաջին եւ ասէ. Տէր, մնասն քո՝ տասն մնաս արար:
Եւ ասէ ցնա. Ազնի՛ւ ծառայ եւ բարի, զի ի փոքուդ հաւա-
տարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ունել ի վերայ տասն
քաղաքի: Եկն երկրորդն եւ ասէ. Մնասն քո արար հինգ
մնաս: Ասէ եւ ցնա. Եւ դու լիջիր ի վերայ հինգ քաղաքաց:
Եկն միւսն եւ ասէ. Տէր, ահա մնասն քո՝ զոր ունէի ծրա-
րեալ ի վարշամակի. երկնչէի ի քէն, զի այր ստամբակ ես.

բառնաս՝ զոր ոչ եդիր, եւ հնձես՝ զոր ոչ սերմանեցեր: Եւ ասէ ցնա. Ի բերանոյ քումէ դատեցայց զքեզ, ծառայ անհաւատ. գիտէիր թէ ես այր մի ստամբակեմ. բառնամ՝ զոր ոչ եդի, եւ հնձեմ՝ ուր ոչ սերմանեցի. եւ ընդէր ոչ ետուր զարծաթն իմ ի սեղանաւորս, եւ եկեալ ես տոկոսեաք պահանջէի: Եւ ասէ ցպատասաւորսն. Առէք ի դմանէ զմինասն. եւ տարայք տուք այնմ՝ որ ունիցի զտասն մնասն: Եւ ասեն ցնա. Տէր, ունի տասն մնաս: Ասեմ ձեզ. եթէ ամենայնի որ ունիցի, տացի. եւ յայնմանէ որ ոչն ունիցի, եւ զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ: Ասաց զԼծնամիան իմ զայնոսիկ, որ ոչն կամէին զիս թագաւորել ի վերայ նոցա, ածէք այսր եւ սպանէք առաջի իմ: Եւ իբրեւ զայս ասաց, գնաց յառաջ՝ ելանել Յերուսաղէմ: 28:

---

Ի Վեկոմբեըի ԺԸ. պահ+ ՔՆՆՊԵԱՆ ՏԵԱՐՆ ՆԵՐՈՑ ՅԵՍՈՒԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Յայս պահս՝ ՆԷ Ձորե+ղաքաքի ե- ՈՐԲԱՆ հանդիպի, ըս- Յոհաննո-ս գայս ասաս:

Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զնաղաղութիւն քո, Աստուած, տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Ն- Յերկո-ղաքաղո-, Յերե+ղաքաղո- ե- ի Ընգեղաքաղո-՝ գայս.

Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկինից իջեր, եւ լուսաւորեցեր զտիեզերս. զնաղաղութիւն քո տուր մեզ Տէր. որ խաղաղութեանց ես թագաւոր, զնաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

---

## ԱՌԱՋԻՆ ՕՐ ՊԱՀՈՑ

Յոհաննո-ս ե- Ցեւէրէ ըսպ պապշճի ա-ո-ըն:

Պօղոսի առաքելոյն յերբայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

ԳԼ. Է. 26:

Նա՛զարք, զի այսպիսի իսկ եւ վայել էր մեզ քահանայապետ, սուրբ, անմեղ, անարատ, զատեալ ի մեղաւորաց, եւ բարձրացեալ քան զերկինս: Որում ոչ հանապազ



հարկ է, որպէս այլոց քահանայապետիցն, նախ վասն իւրեանց մեղացն պատարագս մատուցանել եւ ապա վասն ժողովրդեանն. իսկ սա զայն միանգամայն կատարեաց, զի զանձն իւր մատոյց պատարագ: Օրէնքն զմարդիկ կացուցանեն քահանայապետս զգածեալս տկարութեամբ. իսկ բանն երդման յետ օրինացն՝ զՈրդի, որ յաւիտեան կատարեալ է: Եւ բանից գլուխ խօսիցս. այնպիսի ունիմք քահանայապետ, որ նստաւ ընդ աջմէ մեծութեան աթոռոյն յերկինս, սրբութեանցն պաշտօնեայ, եւ խորանին ճշմարտութեան, զոր Տէրն կանգնեաց, եւ ոչ մարդ: Զի ամենայն քահանայապետ վասն մատուցանելոյ զընծս եւ պատարագս կայ. ուստի հարկ է եւ նմա ունել ինչ՝ զոր մատուցանիցէ: Զի թէ էր յերկրի, թերեւս չէր իսկ քահանայ. զի գոյին՝ որ մատուցանէին ըստ օրինացն պատարագ. որք առակաւ եւ օրինակաւ պաշտէին երկնաւորացն. որպէս եւ հրամայեցաւ Մովսիսի՝ յորժամ գործելոց էր զվրան ժամուն: Տեսջիր, ասէ, արասցես զամենայն ըստ օրինակին՝ որ ցուցաւ քեզ ի լերինն: Նայց արդ առատագոյն եւս պաշտաման եհաս Յիսուս, որչափ լաւագոյն եւս ուխտի է միջնորդ՝ որ յառաւել աւետիսն օրինադրեցաւ: Զի թէ առաջինն անարատ էր, ապա երկրորդին տեղի ոչ խնդրէր: Նա աւանիկ բամբասէ զնոսա եւ ասէ. Ահաւասիկ աւուրք եկեսցեն, ասէ Տէր, եւ կատարեցից ի վերայ տանն Իսրայէլի եւ ի վերայ տանն Յուդայ՝ ըստ ուխտի նորո. ոչ ըստ ուխտին՝ զոր եդի ընդ հարս նոցա յաւուր յորում առի ի ձեռն հանել զնոսա յերկրէն Եգիպտացւոց. եւ զի նոքա ոչ կացին յուխտին իմում, եւ ես անփոյթ արարի զնոցանէ, ասէ Տէր ամենակալ: Այլ այս է ուխտն՝ զոր եդից տանն Իսրայէլի յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր. տացի զօրէնս իմ ի միտս նոցա, եւ ի սիրտս նոցա գրեցից զնոսա. եւ եղէց նոցա Աստուած, եւ նոքա եղիցին ինձ ի ժողովուրդ: Եւ ոչ եւս ուսուցանիցեն իւրաքանչիւր զքաղաքակից իւր, եւ իւրաքանչիւր զեղբայր իւր, եւ ասիցեն՝ Թէ Ճանիր զՏէր. զի ամենեքին ծանիցեն զիս ի փոքրկանց մինչեւ ի մեծամեծս նոցա: Զի քաւիչ եղէց անիրաւութեանց նոցա. եւ զմեղս նոցա եւ զանօրէնութիւնս այլ ոչ եւս յիշեցից: Ընդ ասելովն նոր, հնացոյց զառաջինն. եւ որ հնանայն եւ ծերանայ՝ մերձ է յապականութիւն: Ը. 13:

Ալէլուիա, ալէլուիա. պահոց է Յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

ԳԼ. Ի. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ եղեւ ի միում աւուրց յայնցանէ, մինչ դեռ ուսուցանէր զԺողովուրդն ի տաճարի անդ եւ աւետարանէր, հասին ի վերայ քահանայապետքն եւ դպիրք ծերովքն հանդերձ, եւ ասեն ցնա. Ընա մեզ՝ որով իշխանութեամբ գործես դու զայդ, կամ ո՞վ է՝ որ ետ քեզ զայդ իշխանութիւն, պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. Հարցիցէ եւ ես ցձեզ բան մի, եւ ասացէք ինձ։ Մկրտութիւնն Յովհաննու յերկնից էր՝ եթէ ի մարդկանէ։ Եւ նոքա խորհեցան ի միտս իւրեանց եւ ասեն. Եթէ ասեմք՝ Յերկնից, ասէ. Իսկ ընդէր ոչ հաւատացէք նմա. եւ եթէ ասեմք՝ Ի մարդկանէ, ամենայն ժողովուրդն քարկոծ առնեն զմեզ. զի հաստատեալ է ի միտս զՅովհաննէ, թէ մարգարէ է։ Եւ պատասխանի ետուն չգիտել թէ ուստի իցէ։ Եւ Յիսուս ասէ ցնոսա. Եւ ոչ ես ասեմ ձեզ, որով իշխանութեամբ առնեմ զայս։ 8։

---

## ԵՐԿՐՈՐԴ ՕՐ ՊԱՀՈՑ

Ժամամոտ ե՛ս ձեռէդ ըսդ պարշածի ա՛ս՛ղն։

Պօղոսի առաքելոյն Հռոմայեցւոց Թղթոյն է ընթերցուածս.

ԳԼ. ԺԳ. 1։

Վասնզի զտուեր հանդերձելոց բարեացն ունէին օրէնքն, եւ ոչ զնոյն կերպարանս իրացն. ամի ամի զնոյն պատարագս մատուցանեն ցանգ, որք ոչ են կարող զմատուցեալսն կատարել։ Ապա թէ ոչ՝ դադարէին ի մատուցանելոյ, վասն եւ ոչ մի ինչ այնուհետեւ խիղճ մտաց ունելոյ պաշտօնէիցն մի անգամ սրբեցելոցն։ Այլ անդէն ի նմին ի յիշատակս մեղացն կային ամի ամի։ Վասնզի ոչ կարէր արիւն նոխազացն եւ ցլուցն բառնալ զմեղս։ Վասն որոյ ի մտանել իւրում յաշխարհ ասէ. Զզոհս եւ զպատարագս ոչ կամեցար, բայց մարմին հաստատեցեր ինձ. ընդ ողջակէզս եւ ընդ վասն մեղացն ոչ հաճեցար։ Յայնժամ ասացի՝ Թէ



Ահաւասիկ եկի. ի ձառս գրոց գրեալ է վասն իմ, առնել զկամս քո, Աստուած։ Վերագոյնն ասէ՝ Թէ զնդ զոհս եւ ընդ պատարագս եւ ընդ ողջակէզս եւ ընդ վասն մեղացն ոչ հաճեցար, եւ ոչ կամեցար՝ որք ըստ օրինացն մատչէին։ Ապա ասէ. Ահաւասիկ գամ առնել զկամս քո, Աստուած։ Վերջէ զառաջինն, զի զերկրորդն հաստատեսցէ։ Որով կամաք եւ մեք սրբեցաք ի ձեռն պատարագի մարմնոյն Յիսուսի Քրիստոսի մի անգամ։ Եւ ամենայն քահանայապետ կայ հանապազորդ ի պաշտաման, եւ զնոյն պատարագս մատուցանէ բազում անգամ, որք ոչ երբեք կարող են բառնալ զմեղս։ Իսկ սա զմին վասն մեղաց մատոյց պատարագ, եւ միշտնջենաւոր նստաւ ընդ աջմէ Աստուծոյ։ Եւ այսուհետեւ ակն ունի մինչեւ դիցին թշնամիք իւր ի ներքոյ ոտից իւրոց։ Վասնզի միով պատարագաւ կատարեաց զսրբեալսն ի միշտնջենաւորս։ Այլ վկայէ մեզ եւ Հոգին սուրբ, յետ ասելոյն յառաջագոյն՝ Եթէ Այս է ուխտն՝ զոր եդից ընդ նոսա յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր. տայց զօրէնս իմ ի սիրտս նոցա, եւ ի խորհուրդս նոցա գրեցից զնոսա։ Ապա ասէ՝ Թէ զմեղս նոցա եւ զանօրէնութիւնս այլ ոչ եւս յիշեցից։ Իսկ ուր թողութիւն է, ոչ եւս պիտոյ է վասն մեղաց պատարագ։ 18։

Ընկլուխա, ալէլուիա. պահոց է յայնմ։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

ԳԼ. Ի. 9։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Սկսաւ ասել առ ժողովուրդն զառակս զայս. Այր ոմն տնկեաց այգի, եւ ետ զնա մշակաց. եւ ինքն գնաց ի ճանապարհ ժամանակս բազումս։ Եւ ի ժամու՝ առաքեաց առ մշակսն ծառայ, զի ի պտղոյ այգւոյն տացեն նմա. եւ մշակքն զան հարին զնա, եւ արձակեցին ունայն։ Եւ յաւել միւս եւս ծառայ յղել. նոքա եւ զնա եւս զան հարին, անարգեցին եւ առաքեցին ունայն։ Եւ յաւել զերրորդն առաքել. նոքա եւ զնա վէրաւորեցին եւ հանին արտաքս։ Ասէ տէր այգւոյն. Զի՞նչ արարից. առաքեցից զորդի իմ սիրելի, թերեւս ի սմանէ պատկառեսցեն։ Իբրեւ տեսին զնա մշակքն,

խորհեցան ընդ միմեանս եւ ասեն. Այս է ժառանգն, սպանցուք զսա, զի մեր լինիցի ժառանգութիւնն: Եւ հանին զնա արտաքս քան զայգին եւ սպանին: Երդ՝ զի՞նչ արասցէ ընդ նոսա տէր այգւոյն. Ոչ ապաքէն գայցէ եւ կորուսանիցէ զմշական զայնոսիկ, եւ տացէ զայգին այլոց: Իբրեւ լուան՝ ասեն. Ո՛չառ՝ մի՛ լիցի: Եւ նա հայեցեալ ընդ նոսա՝ ասէ. Ապա զի՞նչ իցէ այն՝ որ գրեալն է, թէ Ո՛վէժն զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան: Ամենայն՝ որ ընդհարցի ընդ վէմն ընդ այս, խորտակեսցի. եւ յորոյ վերայ անկցի՝ հոսեսցէ զնա: 18:

---

## ԵՐՐՈՐԴ ՕՐ ՊԱՀՈՑ

Ժամանո՛ւք է՝ զեւեղէն լոյս պապշացի աւուրն:

Պօղոսի առաքելոյն ՚ի Բրայեցւոց Թղթոյն է ընթերցուածս.

ԳԼ. ԺԲ. 5:

Որդեակ իմ, մի՛ լքանիր ի խրատու Տեառն, եւ մի՛ հատիցիս՝ յանդիմանեալ ի նմանէ: Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի՝ զոր ընդունի: Ի խրատու համբերութեան կայք. իբրեւ յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած: Որ որդի է՝ զոր ոչ խրատիցէ հայր: Զի եթէ առանց խրատու լինիցիք, որով ամենեքին բաժանորդք եղեն, ապա խորթք էիք եւ ոչ որդիք: Զի եթէ ի մարճաւոր հարցն մերոց զոր ունիմք խրատիչս՝ պատկառէմք, ո՛րչափ եւս առաւել հնազանդեսցուք հօրն հոգւոց եւ կեցցուք: Զի սոքա առ սակաւ ժամանակս ըստ կամայ իւրեանց խրատեն. իսկ նա վասն օգտի, առ ի յընդունելոյ զսրբութիւն նորա: Ամենայն խրատ առ ժամանակին ոչ ուրախութեան թուի, այլ տրտմութեան. բայց յետոյ պտուղ խաղաղութեան նովաւ կրթեցելոցն հատուցանէ յարդարութիւն: Վա՛ն որոյ զձեռս լքեալս եւ զծունկս կթոռս հաստատեցէք, եւ շաւիղս ուղիղս արարէք ոտից ձերոց, զի մի՛ որ կաղն իցէ՝ գլորիցի, այլ մանաւանդ բժշկեսցի: Զխաղաղութեան հետ երթայք ընդ ամենեսին եւ զսրբութեան, առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր: Զգոյշ լերուք, գուցէ ոք յետնեալ գտանիցի ի շնորհացն Աստուծոյ: Մի՛ ոք արմատ դառնութեան ի վեր երեւեալ նեղիցէ, եւ նովաւ բազումք պղծիցին: Մի՛ ոք պոռնիկ եւ պիղծ իբրեւ զԵսաւ որ ընդ միոյ կերակրոյ զանդրանկութիւնն վաճառեաց: Գիտէք, զի թէպէտ եւ յետոյ կամեցաւ ժառանգել զօրհնութիւնն, խոտան գտաւ. զի ապաշխարութեան տեղի ոչ եգիտ, թէպէտ եւ արտասուօք խնդրեաց զնա: 17:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

ԳԼ. Ի. 41:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ասէ եւ առնոսա. Զի՞նչ ասեն զՔրիստոսէ թէ որդի է Դաւթի: Զի ինքն Դաւիթ ասէ ի գիրս սաղմոսաց. Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց: Իսկ արդ՝ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ, զիա՞րդ որդի նորա իցէ: Եւ լու ի լուսաժողովրդեանն ասէ ցաշակերտան. Զգոյշ լերուք ի դպրացն, որ կամին պատմուճանօք շրջել, եւ սիրեն ողջոյնս ի հրապարակս եւ զնախաթոռս ի ժողովուրդս եւ զբարձրագոյն յընթրիս: Որ ուտեն զտունս այրեաց, եւ պատճառաւոր նոքա յերկարեն զաղօթս. նոքա ընկալցին աւելի դատաստանս: Եւ հայեցեալ եառս զմեծատունն՝ որ արկանէին զտուրս իւրեանց ի գանձանակն: Եւ տես եւ զկին ոմն այրի աղքատ, որ արկ անդր երկուս լումայս: Եւ ասէ. Ճշմարիտ ասեմ ձեզ՝ զի այրին այն աղքատ՝ աւելի արկ քան զամենեսին: Ամենեքին նոքա ի մէրձից իւրեանց արկին յընծայսն Աստուծոյ. բայց նա ի կարօտութենէ իւրմէ զամենայն զկեանս իւր զոր ունէր՝ արկ: ԻԱ. 4:

---

## ՉՈՐՐՈՐԴ ՕՐ ՊԱՀՈՑ

Ժամանո՛ւք է՝ զեւեղէն լոյս պապշացի աւուրն:

Պօղոսի առաքելոյն ՚ի Բրայեցւոց Թղթոյն է ընթերցուածս.

ԳԼ. ԺԲ. 25:

Զգոյշ լերուք, գուցէ հրաժարիցէք յայնմանէ՝ որ խօսեցաւն. զի եթէ նոքա ոչ կարացին զերծանել՝ հրաժա-

բեալք յայնմանէ որ յերկրին հրաման տայր. ոչչափ եւս առաւել մեք, եթէ յերկնաւորէն թիկունս դարձուցանիցեմք: Որոյ ձայնն զերկիր շարժեաց յայնժամ, եւ այժմ խոստացեալ է եւ ասէ. Միւսանգամ շարժեցից ոչ միայն զերկիր, այլ եւ զերկինս: Այլ միւսանգամին յայտ առնէ զշարժելոց իբրեւ զեղելոց փոփոխումն, զի հաստատուն կացցեն անշարժքն: Վասն որոյ թագաւորութիւն անշարժ ընկալեալ, պինդ կալցուք զնորհն, որով պաշտիմք զԱստուած հաճութեամբ, ահիւ եւ դողութեամբ. քանզի Աստուած մեր հուր ծախիչ է: Նզբայրսիրութիւն հաստատեսցի առ ձեզ: Ջօտարսիրութիւն մի մոռանայք, զի այնու ոմանք յանգէտս ընկալան զհրեշտակս: Յուշ լերուր ձեզ կապեալքն, որպէս թէ դուք ընդ նոսա կապեալ իցէք. եւ չարչարեալքն, որպէս թէ եւ դուք իսկ մարմնաւոր էք: Պատուական է ամուսնութիւն ամենեւին, եւ սուրբ անկողինք. բայց զշունս եւ զպոռնիկս դատի Աստուած: Առաք անարծաթասէրք լինիցին, բաւական համարել որչափ ինչ ի ձեռս իցէ. քանզի ինքն իսկ ասաց. Ոչ թողից զքեզ եւ ոչ ընդ վայր հարից. որպէս զի համարձակ լինցուք ասել. Տէր է իմ օգնական, եւ ես ոչ երկեայց. զի՞ արասցէ ինձ մարդ: ԺԳ. 6:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

ԳԼ. ԻԱ. 20:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Այլ յորժամ տեսանիցէք շուրջ պատեալ զօրօք զԻրուսաղէմ, յայնժամ գիտասջիք թէ մերձ է աւեր նորա: Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի լերինս, եւ որ ի միջի նորա իցեն՝ խուսեսցեն, եւ որ ի գաւառսն իցեն՝ մի՛ մտցեն ի նա: Օր աւուրք վրէժխնդրութեան են այնոքիկ՝ առ ի կատարել ամենայն գրելոց: Բայց վա՛յ իցէ յղեաց եւ ստնտուաց յաւուրսն յայնոսիկ. զի եղիցի տագնապ մեծ ի վերայ երկրի, եւ բարկութիւն ժողովրդեանն այնմիկ: Եւ անկցին ի սուր սուսերի, եւ գերեսցին յամենայն հեթանոս. եւ Երուսաղէմ եղիցի կոխան յազգաց՝ մինչեւ կատարեսցին ժամանակք հեթանոսաց: Եւ եղիցին նշանք յարեգակն եւ ի



լուսին եւ յաստեղս. եւ յերկրի տագնապ հեթանոսաց՝ յաշխեղ բարբառոյ իբրեւ ծովու եւ խռովութեան, յլանալոյ ոգւոց մարդկան յերկիւղ եւ ի կարծեաց եկելոց ի վերայ տիեզերաց. զի զօրութիւնք երկնից շարժեսցին: Եւ յայնժամ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ամպովք զօրութեամբ եւ փառաւք բազմօք: Եւ յորժամ սկսանիցի այս լինել, ամբարձէջք եւ բարձրացուսջիք զգլուխս ձեր. զի մերձ է փրկութիւն ձեր: Եւ ասաց առակ մի նոցա. Տեսէք զթզենիսդ եւ զամենայն ծառս: Յորժամ ցուցանիցեն զպտուղ իւրեանց, տեսանէք եւ ի նոցանէ ձանաչէք եթէ մերձ է ամառն: Նոյնպէս եւ դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք թէ մերձ է արքայութիւն Աստուծոյ: Ամէն ասեմ ձեզ. թէ ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եղիցի: Երկինք եւ երկիր անցցեն. եւ բանք իմ ոչ անցանիցեն: 33:

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ ՊԱՀՈՑ

Ժամանակ է՝ Տեառնէ լաւ պաշտել՝ ասէ:

Պօղոսի առաքելոյն Հրէայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

ԳԼ. ԺԳ. 10:

Ընդհանուր մեք սեղան, ուստի ոչ ունին իշխանութիւն ճաշակել, ոյք պաշտեն զպաշտօն խորանին: Զի որոց անասնոց մատչէր արիւնն ի սրբութիւնս վասն մեղաց ի ձեռն քահանայապետին, նոցին մարմինքն այրէին արտաքոյ բանակին: Վասն որոյ եւ Յիսուս՝ զի սրբեսցէ իւրով արեամբն զժողովուրդն, արտաքոյ դրանն չարչարեցաւ: Ելդ եկայք ելցուք առ նա արտաքոյ բանակին, առեալ յանձն զնախատինս նորա: Վասն զի ոչ եթէ ունիմք քաղաք՝ որ աստէն մնալոց է, այլ զհանդերձեալսն խնդրեմք: Ելդ ի ձեռն նորա մատուսցուք պատարագ օրհնութեան յամենայն ժամ Աստուծոյ, այսինքն է՝ զպտուղ շրթանց խոստովանելոց յանուն նորա: Ջարերարութիւն եւ հաղորդութիւն մի՛ մոռանայք զի Աստուած հաճի: 16:

Ալէլուիա, ալէլուիա. Պահոց է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

Գլ. ԻԱ. 34։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ջգոյշ լերուք անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ եւ արբեցութեամբ եւ հոգով աշխարհականօք. եւ յանկարծակի հասանիցէ ի վերայ ձեր օրն այն։ Օ՛ի իբրեւ զորոգայթ հասանիցէ ի վերայ ամենեցուն, որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի։ Արթուն կացէք այսուհետեւ, յամենայն ժամ աղօթս արարէք. զի արժանի լինիջիք զերծանել յայնմ յամենայնէ որ լինելոց է, եւ կալ առաջի Որդւոյ մարդոյ։ Եւ ի տուէ ի տաճարին ուսուցանէր, եւ զգիշերս ելեալ ագանէր ի լերինն՝ որ կոչէր Ձիթենեաց։ Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտն առ նա ի տաճարն լսել ի նմանէ։ 38։

---

## ՁԱՐԱԹ ՕՐ

**որ հանդիպի ի չԶ պահոցս, եւ կոչի Ի։ Պետիմբերի, Տօն է Սրբոյն Բարսղի Կեսարու հայրապետին եւ եղբօր նորա Գրիգորի Նիւսացւոյն, եւ Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետին, եւ Աբբայ եփրեմի խորին ասորւոյ։**

Լոկ ելիր ոչ դէպ ոչի Հաքան, զայս ասա կապաչեա յէր ո-ելօչէից Ձննդեան՝ նախ քան զքրտալոյց յայպանո-ելեան։

Ժամամուտ. Օ՛Հայրապետականն զարդարեցէք զաթոռ ի յերկրի. առաքելական առէք զպատիւ յերկնուստ, ծառայք Քրիստոսի ով երանելիք ի հարս սուրբ հայրապետք։ Ռանզի ձեր վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով։ Վ՛ասն որոյ բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց։

Սղ. ձԱ. Ռահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Յիշեա Տէր զՊաւիղ. եւ զամենայն հեզութիւնն նորա։



Պօղոսի առաքելոյն ի Կողոսացւոց թղթոյն է ընթերցուածս.

Գլ. Ա. 21։

Եւ զձեզ որ երբեմն օտարացեալքն էիք, եւ թշնամիք խորհրդովք ի գործսն չարութեան, այժմ աւադիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ իւրոյ ի ձեռն մահուն իւրոյ, յանդիման կացուցանել զձեզ սուրբս եւ ամբիծս եւ անարատս առաջի նորա։ Եթէ կայցէք ի հաւատսն արմատացեալք եւ հաստատեալք, եւ անշարժք ի յուսոյ աւետարանին՝ զոր լուարուք քարոզելոյ ընդ ամենայն արարածս ի ներքոյ երկնից, որոյ եղէ ես Պօղոս պաշտօնեայ։ Եւ արդ ուրախ եմ ի չարչարանս իմ վասն ձեր, եւ լնում զպակասութիւն նեղութեանցն Քրիստոսի ի մարմնի իմում վասն մարմնոյ նորա, որ է եկեղեցի. որոյ եղէ ես Պօղոս պաշտօնեայ, ըստ տնտեսութեանն Աստուծոյ, որ տուեալ է ինձ ի ձեզ՝ կատարել զբանն Աստուծոյ. զխորհուրդն որ ծածկեալն էր ի յաւիտեանցն եւ յազգաց, որ այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց։ Որոց կամեցաւ Աստուած ցուցանել, թէ զինչ է մեծութիւն փառաց խորհրդոյն նորա ի հեթանոսս, որ է Քրիստոս ի ձեզ յոյս փառաց. զոր մեք քարոզեմք, եւ խրատեմք զամենայն մարդ, եւ ուսուցանեմք զամենայն մարդ ամենայն հոգեւոր իմաստութեամբ. զի կացուցցուք զամենայն մարդ կատարեալ ի Քրիստոս Յիսուս։ Յոր եւ աշխատիմ պատերազմեալ ըստ յաջողութեան նորա, որ յաջողեալ է յիս զօրութեամբ։ 29։

Ալէլուիա, ալէլուիա. Ռահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

Գլ. Ժ. 11։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց։ Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն եւ փախչի, եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ. քանզի վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն։ Ես եմ հո-

վիեն քաջ, եւ ճանաչեմ զիմն եւ ճանաչիմ յիմոյն: Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայր. եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց: Նա եւ այլ եւս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ. եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր, եւ ձայնի իմում լսուիցեն, եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ: 16:

---

## ՈՒԹԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷ

Յոհաննու. Արիածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Սղ. կդ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք Երուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Պօղոսի առաքելոյն Հերայեցւոց թղթոյն է ընթերցուածս.

ԳԼ. ԺԳ. 18:

Ն՛ղբարք, աղօթս արարէք վասն մեր. զի հաստատեալ գիտեմք եթէ բարւոք միտս ունիմք, յամենայնի կամիմք բարւոք գնացս ցուցանել: Եւ առաւել աղաչեմ՝ զի զայն առնիցէք, զի վաղագոյն պատսպարեցայց ձեզ: Եւ Աստուած խաղաղութեան՝ որ ելհան ի մեռելոց զՀովիւն հօտից, զմեծն արեամբ յաւիտենական ուխտին, զՅՏԷՓ մեր Յիսուս Քրիստոս, հաստատեսցէ զձեզ ի գործս բարութեան առնել զկամն նորա. եւ արասցէ ի մեզ զՀաճոյսն առաջի իւր ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն: Ընկալեր զձեզ, եղբարք, անսալ բանիս մխիթարութեան. քանզի սակաւուք գրեցի ձեզ: Եւ ճանաչէք զեղբայրն մեր զՏիմոթէոս՝ զարձակեալն առ ձեզ, ընդ որում, եթէ վաղագոյն գայցէ, տեսից զձեզ: Ողջոյն տայջիք ամենայն



առաջնորդաց ձերոց եւ ամենայն սրբոց: Ողջոյն տան ձեզ՝ որ ի կողմանս Իտալիացւոց են: Շնորհք ընդ ամենեսեան ձեզ: 25:

Ալէլուիա, ալէլուիա. Յարութիւն է յայնէն:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու.

ԳԼ. ԻԴ. 24:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ եղեւ հակառակութիւն ի մէջ նոցա, թէ ո՞ ի նոցանէ համարիցի մեծ: Եւ նա ասէ ցնոսա. Թագաւորք ազգաց տիրեն նոցա, եւ որ իշխանն նոցա՝ բարերարք կոչին: Այլ դուք ոչ այնպէս. այլ որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրեւ զկրտսերն, եւ առաջնորդն իբրեւ զպաշտաւորն: Ո՞վ է մեծ, բազմեալն եթէ պաշտաւորն. ոչ ապաքէն բազմեալն. բայց ես եմ ի միջի ձերում իբրեւ զպաշտաւոր: Եւ դուք էք՝ որ ցանգ կայիք ընդ իս ի փորձութիւնս իմ: Եւ ես ուխտեմ ձեզ՝ որպէս եւ Հայր իմ ուխտեաց ինձ՝ զարքայութիւն. զի ուտիցէք եւ ըմպիցէք ի սեղան իմ յարքայութեան իմում, եւ նստիցիք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգ Իսրայելի: 30:

---

## Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ԻԳ.

Ը-ոգ պօն է

**Սրբոյն Դաւթի մարգարէին եւ Ցակոբայ առաքելոյն Տեառն եղբօրն:**

Ի-ակ ԵՐԵ օրն էջէ Ձ-ըբե+ղաբ-ելի, ո-ըբ-ոյ կա՛ կ-ենդ-անի՝ յոր-ա ո՞ւ կ-ապ-ըկի պօն+ սրբ-ոց, զո- յա-ա-ջ-ափն է պահ-ն-ա +ան զբ-ա-գ-ե-ղ-ոյց ձ-ն-դ-ե-ան Ա-ըբ-ա-ոյ պօն-ե:

Յոհաննու. Տէր որ հիմնեցուցեր զեկեղեցի քո ի վերայ վիմին հաւատով. եւ կարգեցեր ի սմա առաքեալս եւ մարգարէս, հովիւս եւ վարդապետս՝ առ ի հաստատութիւն սրբոց. եւ ճգնութեամբ վկայից զերշնամին սորա վանե-

ցեր. ի խաղաղութեան զսա պահեա, Աստուած, որպէս մարդասէր:

Ող. ՃԼԱ. Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

Որպէս երդուաւ Տեառն. եւ ուխտս եդ Աստուծոյ Յակովբայ:

Յակովբոս առաքելոյն ի կաթողիկեայց թղթոյն է ընթերցուածս. Գլ. Ա. 1:

Յակովբոս Աստուծոյ եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի ծառայ. երկոտասան ազգացդ որ ի սփիւռսդ էք, ողջոյն: Ամենայն ուրախութեան արժանի համարիջիք, եղբարք, յորժամ ի պէսպէս փորձութեանց ի մէջ անկանիջիք: Գիտասջիք զի հանդէս ձերոց հաւատոյն յօրինեալ գործէ զհամբերութիւն: Իսկ համբերութիւնն գործ կատարեալ ունիցի, զի իցէք ողջանդամք, եւ կատարեալք, եւ ոչ իւիք նուազեալք: Ապա թէ ոք ի ձէնջ իցէ նուազեալ յիմաստութենէ, խնդրեսցէ յԱստուծոյ, որ տայն ամենայնի առատապէս, եւ ոչ նախատէ. եւ տացի նմա: Բայց խնդրեսցէ հաւատովք. եւ մի երկմտեսցէ. զի որ երկմիտն է, նման է հողմակոծեալ եւ տատանեալ ալեաց ծովու: Մի՛ ակնկալեսցի մարդն այն առնուլ ինչ յԱստուծոյ: Այր երկմիտ առանց հաստատութեան է յամենայն ճանապարհս իւր: Պարծեսցի եղբայր խոնարհ ի բարձրութիւն իւր, եւ որ մեծատունն իցէ՝ ի խոնարհութիւն իւր. քանզի իբրեւ զծաղիկ խոտոյ անցցէ: Այն ծագեաց արեւ հանդերձ խորշակաւ, եւ ցամաքեցոյց զխոտն, եւ թօթափեցաւ ծաղիկն նորա, եւ կորեաւ վայելչութիւն երեսաց նորա. նոյնպէս եւ մեծատունն հանդերձ շահիւքն իւրովք թառչամեսցի: Երանեալ է այր՝ որ համբերիցէ փորձանաց. զի եթէ ընտիր եւս գտանիցի, առցէ զպսակն կենաց՝ զոր խոստացաւ սիրելեաց իւրոց: 12:

Ալէլուիա, ալէլուիա. Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ, եւ ոչ ստեաց նմա. ի պտղոյ որովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա:



Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԻԲ. 41:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Նա ի ժողովել փարիսեցւոցն՝ եհարց ցնոսա Յիսուս եւ ասէ. Ո՞իարդ թուի ձեզ վասն Քրիստոսի, որդի է: Ասեն ցնա՝ Դաւթի: Ասէ ցնոսա Յիսուս. Իսկ զիարդ Դաւիթ Հոգւովն կոչէ զնա Տէր եւ ասէ. Ասաց Տէր ցՏէր իմ. Նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց: Իսկ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ զիարդ որդի նորա իցէ: Նա ոչ ոք կարէր տալ նմա պատասխանի բան մի, եւ ոչ իշխէր ոք յայնմ օրէ հարցանել զնա եւ ոչ մինչ: 46:

# ՑԱՆԿ ՊԱՏՄԱԲԱՆՑ

## ԸՍՏ ԿԱՐԳԻ ԱԽՈՒՐՑ ՏԱՐԻՆՑ


Ի ՏՕՆԻ ԾՆՆԴԵԱՆ ՏԵՐՈՒՆ ՄԵՐՈՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Ի ԻԹ. Դեկտեմբերի. Ի ճրագալուցի ծննդեան . . . 1
Ի ԻԵ. Դեկտեմբերի. Առաջին օր ծննդեան . . . . . 2
Ի ԻՋ. Դեկտեմբերի. Երկրորդ օր ծննդեան. Ստեփանոսի նախավկային . . . . . 4
Երրորդ օր ծննդեան. Վկայաբար առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի . . . . . 9
Չորրորդ օր ծննդեան. Որդւոցն որոտման՝ Յակովբայ Առաքելոյն եւ Յովհաննու Աւետարանչին . . . . . 11
Հինգերորդ օր ծննդեան . . 13
Վեցերորդ օր ծննդեան . . . 14
Եօթներորդ օր ծննդեան . . 16
Ութերորդ օր ծննդեան եւ Տօն տնօրէնութեանն Քրիստոսի . 17
Ի ճրագալուցի յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի . . . . . 19

Ի ՏՕՆԻ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Առաջին օր յայտնութեան . . 21
Երկրորդ օր յայտնութեան . . 23
Երրորդ օր յայտնութեան . . 25
Չորրորդ օր յայտնութեան . . 26
Հինգերորդ օր յայտնութեան . 28
Վեցերորդ օր յայտնութեան . 29
Եօթներորդ օր յայտնութեան . 31
Ութերորդ օր յայտնութեան . 33
Ա. Կիրակէ զկնի Ութօրէից յայտնութեան . . . . 35
Չորեքշաբաթի . . . . 36
Ուրբաթ . . . . . 38
Բ. Կիրակէ . . . . . 40
Չորեքշաբաթի . . . . . 42
Ուրբաթ . . . . . 45
Գ. Կիրակէ . . . . . 47
Չորեքշաբաթի . . . . . 49
Ուրբաթ . . . . . 51
Դ. Կիրակէ . . . . . 53
Չորեքշաբաթի . . . . . 55
Ուրբաթ . . . . . 56
Ձեւս Ութօրէից՝ առաջին տօնն է Ցովհաննու Կարապետին . 58
Ապա Պետրոսի Աղեքսանդրուս Հայրապետին եւ Աբխազղմայ սարկաւագին . . . . . 60
Ապա Անտոնի անապատականի . 62
Ապա Մեծին Թէոդոսի Թագաւորին եւ Մանկանցն Եփեսոսի . 63
Ապա կիրակոսի եւ մօր նորա Ցուղիտայ . . . . . 65
Ապա Վահանայ Գողթնացւոյն . 66
Ապա Աթանասայ եւ Կիւրղի Հայրապետացն Աղեքսանդրուս . 68
Ապա Գրիգորի Առաւուածաբանին . 69
Ապա Տրիփոնի վկային . . . 70
Ապա Տրիփոնի վկային եւ Ընեսիմեայ աշակերտին Պօղոսի առաքելոյն . . . . . 72
Ապա Սեղբեստրոսի Հռովմայ Հայրապետին եւ յիշատակ Կոստանդիանոսի Թագաւորին . 74
Ապա Գորդիոսի վկային, եւ Պօղիքարպոսի եւ Գրիգորիսի . . 76
Ապա Եւգինեայ կուսին եւ Հօր նորա Փիլիպպոսի եւ մօր նորա Կղոդեայ, եւ երկուց եղբարց նորա Սերգեայ եւ Ակիտոնի, եւ երկուց Ներքինեայ . 77
Ապա Մարութայի եպիսկոպոսին 78
Ապա Եւգինէոսի, Մակարիոսի, եւ Վաղերիոսի, կանդիտոսի եւ Ակիւղեայ . . . . 80

Ի ՓԵՏՐՈՒԵՐԻ Բ· Ի ԳԼԽԸՍ-
ՏԵՒՆ ԱՍՏՈՒԱԾՈՐԴՈՒՈՑՆ
ՔԱՌՍՈՒՆՕՐԵԱՑ Ի ՏԱՃԱՐՆ 82

Կիրակէ· Առաջաւորի բարեկեն-
դան . . . . . 84
Երկուշաբաթի . . . . . 85
Երեքշաբաթի . . . . . 87
Չորեքշաբաթի . . . . . 89
Հինգշաբաթի . . . . . 91
Ուրբաթ· Ցիշատակ Յովհաննու
մարգարէին . . . . . 93
Շաբաթ· Սարգսի զօրավարին
եւ որդւոյ նորա Մարտիրոսին
եւ Թ Դ զինուորացն . . 95
Կիրակէ . . . . . 96
Երկուշաբաթի· Առտվմանց
զօրավարացն . . . . . 98
Երեքշաբաթի· Սուքիասանց
քօշիցն . . . . . 100
Չորեքշաբաթի . . . . . 101
Հինգշաբաթի· Ոսկեանց . . 103
Ուրբաթ . . . . . 104
Շաբաթ· Սահակայ պարթեւի
Հայոց Հայրապետի . . . 106
Կիրակէ . . . . . 107
Երկուշաբաթի· Պիտնի քա-
հանային, եւ Մարկոսի Արե-
թուսայ եպիսկոպոսին, եւ
Կիւրղի սարկաւագին, եւ
Աբդեայ եպիսկոպոսին, եւ
Որմզդանայ եւ Սայենի եւ
Բենիամինի սարկաւագին . 109
Երեքշաբաթի· Ղեւոնդեանց
քահանայից . . . . . 111
Չորեքշաբաթի . . . . . 112
Հինգշաբաթի· Վարդանանց
զօրավարաց եւ այլ զօ-
րականացն Հայոց ՒԼԶ
վկայիցն . . . . . 114
Ուրբաթ . . . . . 116
Շաբաթ· Ճ Ծ Հայրապետացն
Կոստանդինուպոլսի Ս· Ժո-
ղովոյն . . . . . 118

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Ա· կիրակէ Քառասնորդաց Դկ 120
Երկուշաբաթի Ա2 . . . 123
Երեքշաբաթի Ակ . . . 125
Չորեքշաբաթի Բ2 . . . 127
Հինգշաբաթի Բկ . . . 128
Ուրբաթ Գ2 . . . . . 130
Շաբաթ Գկ· Թէոդորոսի
զինաւորին . . . . . 132

Բ· կիրակէ Քառասնորդաց Դ2 134
(Յովսեփայ Աստուածահօրն 138)
Երկուշաբաթի Դկ . . . 139
Երեքշաբաթի Ա2 . . . 141
Չորեքշաբաթի Ակ . . . 143
Հինգշաբաթի Բ2 . . . 145
Ուրբաթ Բկ . . . . . 147
Շաբաթ Գ2· Կիւրղի Երու-
սաղէմայ Հայրապետին եւ
միւս Կիւրղի եպիսկոպոսին
եւ մեր Նորա Աննայի . . 149
Գ· կիրակէ Քառասնորդաց Գկ 150
Երկուշաբաթի Դ2 . . . 153
Երեքշաբաթի Դկ . . . 155
Չորեքշաբաթի Ա2 . . . 157
Հինգշաբաթի Ակ . . . 159
Ուրբաթ Բ2 . . . . . 160
Շաբաթ Բկ· Յովհաննու
Երուսաղէմայ Հայրապետին 162
Դ· կիրակէ Քառասնորդաց Գ2 164
Երկուշաբաթի Գկ . . . 167
Երեքշաբաթի Դ2 . . . 169
Չորեքշաբաթի Դկ . . . 170
Հինգշաբաթի Ա2 . . . 172
Ուրբաթ Ակ . . . . . 175
Շաբաթ Բ2· Քառասնիցն
Սեբաստիայ . . . . . 176
Ե· կիրակէ Քառասնորդաց Բկ 178
Երկուշաբաթի Գ2 . . . 182
Երեքշաբաթի Գկ . . . 184
Չորեքշաբաթի Դ2 . . . 185
Հինգշաբաթի Դկ . . . 186
Ուրբաթ Ա2 . . . . . 188
Շաբաթ Ակ· Գրիգորի մերոյ
Լուսաւորչին Մուտն ի
վիրապն . . . . . 190
Զ· կիրակէ Քառասնորդաց Բ2 192
Երկուշաբաթի Բկ . . . 197
Երեքշաբաթի Գ2 . . . 198
Չորեքշաբաթի Գկ . . . 200
Հինգշաբաթի Դ2 . . . 203
Ուրբաթ Դկ . . . . . 205

Ի ՏՕՆԻ ԱՒԵՏԱՒԱՑ ՍՐԲՈՑ ԿՈՒ-
ՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱ-
ԾԱՆՆԻ . . . . . 207

Շաբաթ Ա2· Տ՛ն է Ղա-
զարու յարութեան . . 209
Է· կիրակէ· Ծաղկազարդ Ակ 211
Աւագ երկուշաբաթի Բ2 . 212
Աւագ երեքշաբաթի Բկ . 214
Աւագ չորեքշաբաթի Գ2 . 215
Աւագ հինգշաբաթի Գկ . 217
Աւագ շաբաթ Դկ . . . 220



Ի ՏՕՆԻ ՋԱՏԿԻ ՑԵՐՈՒԹԵՒՆ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ՑԻՍՈՒՍԻ
ՔՐԻՍՏՈՍԻ

Ա· կիրակէ Ա2 . . . . . 220
Երկուշաբաթի Ակ . . . 222
Երեքշաբաթի Բ2 . . . 224
Չորեքշաբաթի Բկ . . . 227
Հինգշաբաթի Գ2 . . . 229
Ուրբաթ Գկ . . . . . 231
Շաբաթ Դ2· Տ՛ն է գլխատ-
ման Յովհաննու Մկրտչին 234
Բ· կիրակէ Ցինանց· Նոր կիրա-
կէ Դկ . . . . . 237
Երկուշաբաթի Ա2 . . . 239
Երեքշաբաթի Ակ . . . 242
Չորեքշաբաթի Բ2 . . . 245
Հինգշաբաթի Բկ . . . 247
Ուրբաթ Գ2 . . . . . 249
Շաբաթ Գկ . . . . . 252
Գ· կիրակէ Ցինանց· Աչխար-
համատրան Դ2 . . . . 254
Երկուշաբաթի Դկ . . . 257
Երեքշաբաթի Ա2 . . . 260
Չորեքշաբաթի Ակ . . . 262
Հինգշաբաթի Բ2 . . . 265
Ուրբաթ Բկ . . . . . 268
Շաբաթ Գ2 . . . . . 270
Դ· կիրակէ Ցինանց Գկ . . 273
Երկուշաբաթի Դ2 . . . 275
Երեքշաբաթի Դկ . . . 277
Չորեքշաբաթի Ա2 . . . 279
Հինգշաբաթի Ակ . . . 281
Ուրբաթ Բ2 . . . . . 284
Շաբաթ Բկ . . . . . 287
Ե· կիրակէ Ցինանց Գ2 . . 290
Երկուշաբաթի Գկ . . . 292
Երեքշաբաթի Դ2 . . . 295
Չորեքշաբաթի Դկ . . . 297
Հինգշաբաթի Ա2 . . . 299
Ուրբաթ Ակ . . . . . 302
Շաբաթ Բ2 . . . . . 305
Զ· կիրակէ Ցինանց Բկ . . 308
Երկուշաբաթի Գ2 . . . 311
Երեքշաբաթի Գկ . . . 313
Չորեքշաբաթի Դ2 . . . 315

Ի ՏՕՆԻ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ՑԻՍՈՒՍԻ
ՔՐԻՍՏՈՍԻ

Հինգշաբաթի Դկ . . . 321
Ուրբաթ Ա2 . . . . . 323
Շաբաթ Ակ· . . . . . 325
Է· կիրակէ Ցինանց· Երկրորդ
Ծաղկազարդ Բ2 . . . 328
Երկուշաբաթի Բկ . . . 331
Երեքշաբաթի Գ2 . . . . 333
Չորեքշաբաթի Գկ . . . 335
Հինգշաբաթի Դ2 . . . 339
Ուրբաթ Դկ . . . . . 342
Շաբաթ Ա2 . . . . . 345

ՊԵՆՏԷԿՈՍՏԷ Տ՛ՕՆ ԳԼԽԸՍ-
ՏԵՒՆ ՀՈԳՒՈՑՆ ՍՐԲՈՑ

Կիրակէ Ակ . . . . . 349
Երկուշաբաթի Բ2 . . . 351
Երեքշաբաթի Բկ· . . . 353
Չորեքշաբաթի Գ2 . . . 355
Հինգշաբաթի Գկ . . . 357
Ուրբաթ Դ2 . . . . . 359
Շաբաթ Դկ . . . . . 361

ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐ ԳԼԽՍՏԵՒՆ
ՀՈԳՒՈՑՆ ՍՐԲՈՑ ԵՒ Տ՛ՕՆ
ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐԲՈՐԴՈՒ-
ԹԵՒՆ

Ա· կիրակէ վկնի պենտէկոս-
տէին Ա2 . . . . . 363
Երկուշաբաթի Ակ· Հռիփ-
սիմեանց . . . . . 364
Երեքշաբաթի Բ2· Գայիա-
նեանց . . . . . 366
Չորեքշաբաթի Բկ· . . . 367
Հինգշաբաթի Գ2· Ցով-
հաննու կարապետին եւ
Աթանագինեայ եպիսկո-
պոսին . . . . . 369
(Տ՛ օն Մարմնոյ եւ արեան
Տեառն . . . . . 370)
Ուրբաթ Գկ . . . . . 372
Շաբաթ Դ2· Գրիգորի
մերոյ Լուսաւորչին Եւ
ի վիրապէն . . . . . 374
Բ· կիրակէ վկնի պենտէկոս-
տէին· Տ՛օն եկեղեցւոյ Դկ 375
Երկուշաբաթի Ա2· Ման-
կանցն Բեթղեհէմի եւ Ա-
կակիոսի վկային . . . 377
Երեքշաբաթի Ակ· Կուսա-
նացն Նուռնեայ եւ Մանեայ 378
Չորեքշաբաթի Բ2 . . . 379
Հինգշաբաթի Բկ· Սարգսի
եւ Բագոսի . . . . . 381
Ուրբաթ Գ2 . . . . . 382
Շաբաթ Գկ· Մովկիմայ քա-
հանային եւ Կոդրատոսի
զինաւորին . . . . . 384
Գ· կիրակէ վկնի պենտէկոս-
տէին Դ2· Բարեկենդան
սրբոյն Գրիգորի Լուսաւ-
որչին . . . . . 385

Երկուշաբաթի ԴԿ. Եպիփանու Կիպրացւոյ հայրապետին . . . . . 387
Երեքշաբաթի ԱՉ. Կոստանդիանոսի թագաւորին եւ մօր նորա Հեղինեայ 389
Չորեքշաբաթի ԱԿ . . . 390
Հինգշաբաթի ԲՉ. Թէոդիտոնի Գաղատացւոյն եւ Թալիլեայ բժշկին եւ Եօթն կուսանացն Անկիւրիայ . 392
Ուրբաթ ԲԿ . . . . . 393

ՏՕՆ ԳԻՒՏԻՆ ՇԽԱՐԱՑ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԵՐՈՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

Շաբաթ ԳՉ . . . . . 396
Դ. Կիրակէ զկնի Պենտէկոստէին ԳԿ . . . . . 397
Երկուշաբաթի ԴՉ. Ներսիսի հայրապետին եւ Խադայ եպիսկոպոսին . . . . 399
Երեքշաբաթի ԴԿ. Դանիէլի մարգարէին եւ Երից մանկանցն . . . . . 401
Չորեքշաբաթի ԱՉ . . . 402
Հինգշաբաթի ԱԿ. Թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպայ . . . . . 404
Ուրբաթ ԲՉ . . . . . 406
Շաբաթ ԲԿ. Զաքարիայ մարգարէին եւ Ոնոփրիոսի սուրբ Հօրն . . . . 407

ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻՆ, ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ՅՈՒՆԻՍԻ ԻԴ. 410

Ե. Կիրակէ զկնի Պենտէկոստէին ԳՉ . . . . . 412
Երկուշաբաթի ԳԿ. Տրդատայ թագաւորին եւ Աշխէն տիկնոջն եւ Խոսրովիդխտոյ 414
Երեքշաբաթի ԴՉ. Հայրապետացն՝ որդւոց եւ թոռանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի եւ Դանիէլի . . . . . 415
Չորեքշաբաթի ԴԿ . . . 417
Հինգշաբաթի ԱՉ. Եղիսէի մարգարէին . . . . 419
Ուրբաթ ԱԿ . . . . . 420
Շաբաթ ԲՉ. Երկոտասան առաքելոցն, եւ գլխաւորացն Պետրոսի եւ Պօղոսի . . . . . 422
Զ. Կիրակէ զկնի Պենտէկոստէին ԲԿ . . . . . 424
Երկուշաբաթի ԳՉ . . . 426
Երեքշաբաթի ԳԿ . . . 428
Չորեքշաբաթի ԴՉ . . . 430
Հինգշաբաթի ԴԿ . . . 432
Ուրբաթ ԱՉ . . . . . 434
Շաբաթ ԱԿ. Տօն է Տապանակին . . . . . 436

ՎԱՐԴԱՎԱՌ. ՏՕՆ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Է. Կիրակէ զկնի Պենտէկոստէին ԲՉ . . . . . 438
Երկուշաբաթի. Երկրորդ օր Վարդավառի ԲԿ . . 441
Երեքշաբաթի. Երրորդ օր Վարդավառի ԳՉ . . 442
Չորեքշաբաթի ԳԿ . . . 444
Հինգշաբաթի ԴՉ. Եսայեայ մարգարէին . . . . 446
Ուրբաթ ԴԿ . . . . . 447
Շաբաթ ԱՉ. Թադէոսի առաքելոյն եւ Սանդխտոյ կուսին . . . . . 449
Ա. Կիրակէ զկնի Վարդավառին ԱԿ . . . . . 451
Երկուշաբաթի ԲՉ. Շուշանայ դստեր մեծին Վարդանայ . . . . . 453
Երեքշաբաթի ԲԿ. Կիպրիանոսի եպիսկոպոսին եւ Յուստիանեայ կուսին 454
Չորեքշաբաթի ԳՉ . . . 456
Հինգշաբաթի ԳԿ. Խեվկայիցն, եւ սրբոց կուսանացն Եւփիմեայ եւ Քրիստինեայ . . . . 458
Ուրբաթ ԴՉ . . . . . 459
Շաբաթ ԴԿ. Նախահարցն՝ Ադամայ, Աբելի, Սեթայ, Ենովսայ, Ենովքայ, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամու, Սահակայ, Յակովբայ, Յովսեփայ, Մովսիսի, Ահարովնի, Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի, եւ այլոց նախահարցն . . 462
Բ. Կիրակէ զկնի Վարդավառին ԱՉ . . . . . 465
Երկուշաբաթի ԱԿ. Սահակայ եւ Յովսեփայ . . . . 467
Երեքշաբաթի ԲՉ. Երկոտասան մարգարէիցն՝ Ովսէի, Ամովսայ, Միքեայ. Յովելեայ, Աբդիու, Յովնանու, Նաւումայ, Ամբակումայ, Սոփոնիայ. Անգեայ, Զաքարեայ, Մաղաքիայ . . . . . 468
Չորեքշաբաթի ԲԿ . . . 470
Հինգշաբաթի ԳՉ. Աթանագինեայ եպիսկոպոսին, եւ Տասն աշակերտացն նորա, եւ Հինգ վկայիցն 472
Ուրբաթ ԳԿ . . . . . 473
Շաբաթ ԴՉ. Վկայիցն Անտոնինոսի եւ Թէոփիլոսի, Անիկտոսի եւ Փոտինոսի . . . . . 475
Գ. Կիրակէ զկին Վարդավառին ԴԿ . . . . . 477
Երկուշաբաթի ԱՉ. Մակաբայեցւոցն՝ Եղիազարու քահանային եւ Եօթն եղբարց եւ մօր նոցա Շամունեայ . . . . . 579
Երեքշաբաթի ԱԿ. Սոփիայ եւ երից դստերաց նորա Պիստիսի, Ելպիսի եւ Ագապի . . . . . 580
Չորեքշաբաթի ԲՉ . . . 582
Հինգշաբաթի ԲԿ. Քրիստափորի վկային եւ երկուց կանանցն Կալինիկեայ եւ Ակիւլինեայ . . . . 484
Ուրբաթ ԳՉ . . . . . 486
Շաբաթ ԳԿ. Եփեսոսի Ս. ժողովոյն Մ Հայրապետացն 487
Դ. Կիրակէ զկնի Վարդավառին ԴՉ . . . . . 489
Չորեքշաբաթի ԱԿ . . . 490
Ուրբաթ ԲԿ . . . . . 492
Կիրակէ. Բարեկենդան Աստուածածնին . . . . . 494
Երկուշաբաթի . . . . . 495
Երեքշաբաթի . . . . . 497
Չորեքշաբաթի . . . . . 499
Հինգշաբաթի . . . . . 500
Ուրբաթ . . . . . 502
Շաբաթ. Տօն է Շողակաթին 504

Ի ՏՕՆԻ ՓՈԽՄԱՆ ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Կիրակէ. Ա. օր Փոխման . . 506
Երկուշաբաթի. Բ. օր Փոխման 507
Երեքշաբաթի. Գ. օր Փոխման 509
Չորեքշաբաթի. Դ. օր Փոխման 511





Հինգշաբաթի. Ե. օր Փոխման 511
Ուրբաթ. Զ. օր Փոխման . 511
Շաբաթ Է. օր Փոխման . . 511
Ա. Կիրակէ զկնի Փոխման. Ը. օր Փոխման . . . . 511
Երկուշաբաթի. Թ. օր Փոխման . . . . . 511
Երեքշաբաթի. Յովակիմայ եւ Աննայի ծնողաց Սուրբ Աստուածածնի եւ Կանանցն իւղաբերից . . . 512
Չորեքշաբաթի . . . . 513
Հինգշաբաթի. Բաբելայ հայրապետին եւ երից աշակերտաց նորին . . . 515
Ուրբաթ . . . . . 516
Շաբաթ. Երեմեայ մարգարէին . . . . . 518
Բ. Կիրակէ զկնի Փոխման . . 520
Երկուշաբաթի. Պիոնի քահանային եւ Ստեփանոսի Ուլնեցւոյն եւ Աբդլմսեհի վկային . . . . . 522
Երեքշաբաթի. Անդրէի զօրավարին եւ բանակի նորին, եւ Կալինիկոսի վկային եւ Դիոմիդեայ բժշկին . . 523
Չորեքշաբաթի . . . . 524
Հինգշաբաթի. Ագրիանոսի եւ կնոջ նորա Անատոլեայ, եւ Թէոդորոսի ստրատելատի եւ Թիւրսոսի վկային 526
Ուրբաթ . . . . . 527
Շաբաթ. Թովմայի առաքելոյն . . . . . 529
Գ. Կիրակէ զկնի Փոխման . . 531
Երկուշաբաթի. Թարգմանչացն՝ Մեսրոպայ վարդապետին եւ Եղիշէի, Մովսիսի քերթողի եւ Դաւթի անյաղթ փիլիսոփայի, Գրիգորի Նարեկացւոյն եւ Ներսիսի Կլայեցւոյն եւ Ներսիսի Լամբրոնացւոյն . . . 533
Երեքշաբաթի. Մարգարէիցն Եզեկիէլի, Եզրի. եւ Զաքարիայ հօրն Յովհաննու Մկրտչի . . . . . 534
Չորեքշաբաթի . . . . 535
Հինգշաբաթի. Յովհաննու Կարապետին, եւ յիշատակ Յովբայ արդարոյն . . . 537
Ուրբաթ . . . . . 539
Շաբաթ. Նիկիոյ Ս. ժողովոյն ՅԺԸ Հայրապետաց 541
Դ. Կիրակէ զկնի Փոխման . . 543

Ի ՏՕՆԻ ԾՆՆԴԵԱՆ ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ, Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ Ը . . . . . 545
Երկուշաբաթի . . . . 546
Երեքշաբաթի . . . . 548
Չորեքշաբաթի . . . . 550
Հինգշաբաթի . . . . 552
Ուրբաթ . . . . . 554
Շաբաթ. Տօն է Նաւակատեաց սուրբ Խաչի . . 556

ԽԱՉՎԵՐԱՑ ԿԱՄ ՏՕՆՎԵՐԱՑՄԱՆ ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ

Ա. Կիրակէ . . . . . 558
Երկուշաբաթի. Տօն Խաչի 559
Երեքշաբաթի. Տօն Եկեղեցւոյ . . . . . 561
Չորեքշաբաթի. Տօն Եկեղեցւոյ . . . . . 563
Հինգշաբաթի. Տօն Եկեղեցւոյ . . . . . 564
Ուրբաթ. Տօն Խաչի . . 566
Շաբաթ. Տօն Խաչի . . 567
Բ. Կիրակէ զկնի Խաչին . . 569
Երկուշաբաթի. Մամասայ եւ Փիլիկտիմոնի եւ Սիմէոնի Սիւնակեցին . . 570
Երեքշաբաթի. Կուսանացն Փեբրոնեայ եւ Մարիանեայ 572
Չորեքշաբաթի . . . . 573
Հինգշաբաթի. Հայրապետացն Անթիմոսի եւ Երանոսի . . . . . 575
Ուրբաթ . . . . . 576
Շաբաթ. Գէորգայ զօրավարին եւ Ադոկտոսի եւ Ռոմանոսի երգեցողին . 578
Գ. Կիրակէ զկնի Խաչին. Տօն Վարագայ սուրբ Խաչին 580
Երկուշաբաթի. Դաւթի Դվնեցւոյն, եւ վկայիցն Ղամբէոսի եւ Ղամբէուհւոյն . . . . . 581
Երեքշաբաթի. Եւստաքէոսի եւ կնոջ նորա Թէոպիստեայ եւ երկուց որդւոցն. եւ կուսանացն Երմոնեայ եւ Նեքտառինեայ . . . . . 583
Չորեքշաբաթի . . . . 584
Հինգշաբաթի. Իշխանացն Հայոց Սահակայ եւ Համազասպայ . . . . . 586
Ուրբաթ . . . . . 587
Շաբաթ. ՀԲ Աշակերտացն Քրիստոսի . . . . . 589
Դ. Կիրակէ զկնի Խաչին . . 591
Երկուշաբաթի. Փոկասու հայրապետին, եւ Երանոսի հետեւողի առաքելոցն . 592
Երեքշաբաթի. Կուսանացն Թեկղի եւ Վառվառեայ 594
Չորեքշաբաթի . . . . 595
Հինգշաբաթի. Պանդալէոնի բժշկին եւ Երմողեայ քահանային եւ Եւպրաքսեայ կուսին . . . . . 597
Ուրբաթ . . . . . 599
Շաբաթ. Կալիստրատոսի եւ Խթ վկայիցն, եւ Ղուկիանոսի քահանային . . 601
Ե. Կիրակէ զկնի Խաչին . . 602
Երկուշաբաթի. Գիւտնշխարաց սրբոյն Գրիգորիսի Աղուանից Կաթողիկոսի, եւ սրբոց հարցն Թաթլոյ եւ Վարոսի եւ Թոմասու եւ Անտոնի եւ Կրոնիդեայ, եւ եօթն Խոտաճարակացն . . . . 604
Երեքշաբաթի. Անանիայ առաքելոյն, եւ առաքելոցն Մատաթեայ եւ Բառնաբայ, եւ Փիլիպպոսի եւ Յովհաննու եւ Շիղայի եւ Սիղուանոսի գործակցացն Պօղոսի, եւ Երկոտ. վարդապետացն 605
Չորեքշաբաթի . . . . 607
Հինգշաբաթի. Դիոնեսիոսի Արիսպագացւոյն, եւ առաքելոցն Տիմոթէոսի եւ Տիտոսի եւ այլոց աշակերտացն Պօղոսի . . . . 608
Ուրբաթ . . . . . 610
Շաբաթ. Աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու եւ Յովհաննու, Ղուկիանոսի քահանային, եւ վկայիցն Տարագոսի, Պրոբոսի եւ Անդրոնիկոսի, եւ Պեղագեայ կուսին . 612
Զ. Կիրակէ զկնի Խաչին . . 614
Երկուշաբաթի. Ղունկիանոսի հարիւրապետին, եւ Յովսեփայ Աստուածահօրն, եւ Յովսեփայ Արիմաթացւոյն, եւ բարեկամին Քրիստոսի Ղազարու, եւ քերցն նորա Մարթայի եւ Մարիամու . . . 616



Երեքշաբաթի. Թէոդորիտոնի քահանային եւ Զենոնի զինաւորին, եւ Մակարայ, Եւդոքսիոսի եւ Ռոմելայ . . . . . 618
Չորեքշաբաթի . . . . 619
Հինգշաբաթի. Խարիթեանց՝ տասն հազար եւ երկերիւր մարտիրոսացն. եւ Արտեմեայ վկային . . . . 621
Ուրբաթ . . . . . 622
Շաբաթ. Դեմետրեայ վկային եւ Բասիլիսկոսի քահանային . . . . . 624
Է. Կիրակէ զկնի Խաչին. Խաչգիւտ . . . . . 625
(Տօն ամենայն սրբոց . . 627)
Երկուշաբաթի. Անաստասայ քահանային եւ Վարոսի եւ Թէոդիտեայ եւ որդւոց նորա եւ որոց ընդ նոսա 629
Երեքշաբաթի. Հիպերիքեանց 630
Չորեքշաբաթի . . . . 631
Հինգշաբաթի. Սեւերիանոսի Սեբաստացւոյն, եւ Բաբելայ ծերոյն եւ ՉԴ աշակերտաց նորին . . . 633
Ուրբաթ . . . . . 634
Շաբաթ. Բարաղամու Անտիոքացւոյն եւ Եօթն մանկանց Եփեսոսի . . . 636
Ը. Կիրակէ զկնի Խաչին . . 638
Երկուշաբաթի. Ստեփանոսի Հռովմայ հայրապետին, եւ քահանայից եւ սարկաւագաց եւ ժողովրդոց . . 639
Երեքշաբաթի. Ակիփսիմեայ եպիսկոպոսին եւ Յովսեփայ քահանային եւ Այիթալայ սարկաւագին եւ Պղատոնի վկային . 641
Չորեքշաբաթի . . . . 642
Հինգշաբաթի. Հայրապետացն Մետրոփանոսի, Աղեքսանդրոսի եւ Պօղոսի խոստովանողին, եւ նոտարացն Մարկիանոսի եւ Մարտիրոնի . . . . . 644
Ուրբաթ . . . . . 645
Շաբաթ. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի եւ ամենայն երկնային զօրացն . . . . . 647
Թ. Կիրակէ զկնի Խաչին . . 649
Երկուշաբաթի. Մելիտոսի Անտիոքայ հայրապետին, եւ Մինասայ եգիպտացւոյն, եւ Մելեայ եպիսկոպոսին եւ Եբորայ քահանային եւ Շինու սարկաւագին . . . . . 650
Երեքշաբաթի. Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդինուպոլսի հայրապետին . 652
Չորեքշաբաթի . . . . 654
Հինգշաբաթի. Գուրիասայ, Սամոնասայ եւ Աբիբայ սարկաւագին, եւ Ռոմանոսի միայնակեցին եւ Մանկանն խոստովանողի եւ Հիւսիքոսի զինաւորին 656
Ուրբաթ . . . . . 657
Շաբաթ. Առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի . . 659
Ժ. Կիրակէ զկնի Խաչին. Աւելորդաց . . . . . 661
Երկուշաբաթի. Հրեշտակաց եւ Հրեշտակապետաց 663
Երեքշաբաթի. Համօրէն մարգարէից . . . . . 665
Չորեքշաբաթի . . . . 666
Հինգշաբաթի. Համօրէն առաքելոց . . . . . 668
Ուրբաթ . . . . . 670
Շաբաթ. Տօն է ամենայն սրբոց՝ հնոց եւ նորոց, յայտից եւ անյայտից . . 672

Ի ՏՕՆԻ ԸՆԾԱՅՄԱՆ ԱՄԷՆՕՐՀՆԵԱԼՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ, Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ ԻԱ. 674

Ա. Կիրակէ Յիսնակաց. Յիսնակաց բարեկենդան . . . 675
Երկուշաբաթի . . . . 678
Երեքշաբաթի. . . . . 679
Չորեքշաբաթի . . . . 681
Հինգշաբաթի . . . . 683
Ուրբաթ . . . . . 685
Շաբաթ. Գրիգորի Սքանչելագործին եւ Միւռոնայ եպիսկոպոսին . . . . 687
Բ. Կիրակէ Յիսնակաց . . . 688
Երկուշաբաթի. Կուսանացն Յուլիանեայ եւ Վասիլուհւոյ . . . . . 690
Երեքշաբաթի. Առաքելոցն Յակոբայ եւ Շմաւոնի . 691
Չորեքշաբաթի . . . . 693
Հինգշաբաթի. Կղեմայ հայրապետին եւ Բագարատայ Տոռոմենայ եպիսկոպոսին եւ Գրիգորի Ակրական-

դացւոյն . . . . . 695
Ուրբաթ . . . . . 696
Շաբաթ. Առաքելոցն Բարթողիմէոսի եւ Յուդայի . 697
Գ. Կիրակէ Յիսնակաց . . . 699
Երկուշաբաթի. Գենարիոսի եպիսկոպոսին եւ Մերկիւռիոսի զինաւորին . . . 701
Երեքշաբաթի. Վկայիցն Յակովկայ եւ Իրաւափառայ 702
Չորեքշաբաթի . . . . 703
Հինգշաբաթի. Հարցն եգիպտացւոց՝ Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յովհաննու Գբեցւոյն, Յովհաննու Կարճահասակին, Նեղոսի, Արսենի, Սիսիանու, Դանիէլի, Սրապիոնի, Մակարիոսի, Պիմէնի եւ այլոց սրբոց Հարցն . 705
Ուրբաթ . . . . . 707
Շաբաթ. Նիկողայոսի զմիւռնացւոյ սքանչելագործ հայրապետին . . . . . 709

Ի ՏՕՆԻ ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ, Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ Թ. . . . . 711

Դ. Կիրակէ Յիսնակաց . . . 712
Երկուշաբաթի. Մինասայ, Երմոգինեայ, Գրաբոսի, եւ կամաւոր աղքատացն Յովհաննու եւ Ալեքսիանոսի . . . . . 715
Երեքշաբաթի. Կուռնելիոսի հարիւրապետին եւ Շմաւոնի ազգականին Քրիստոսի, եւ Պողիկարպոսի Զմիռնիայ հայրապետին եւ Արեւելեան վկայիցն . . 716
Չորեքշաբաթի . . . . 717
Հինգշաբաթի. Եւստռատիոսի, Օքսենտիոսի, Եւգինէոսի, Ովրեստէսի եւ Մարդարիոսի . . . . 719
Ուրբաթ . . . . . 721
Շաբաթ. Յակովբայ Մծբնայ հայրապետին եւ Մարուգէի ճգնաւորին . . . 722

Ե. Կիրակէ Յիսնակաց . . . 724
Երկուշաբաթի. Իգնատիոսի Աստուածազգեաց հայրապետին Անտիոքայ . . 726
Երեքշաբաթի. Թէոպոմպայ եպիսկոպոսին եւ Թէոմնայ վկային, եւ չորից զինուորացն Բասոսի, Եւսեբի, Եւտիքի եւ Բասիլիդեայ . . . . . 728
Չորեքշաբաթի . . . . 729
Հինգշաբաթի. Ադդէի հայրապետին եւ Աբգարու թագաւորին . . . . 731
Ուրբաթ . . . . . 732
Շաբաթ. Ինդոսի ներքինւոյն եւ Դոմնայի կուսին. եւ Գղերիկոսի քահանային եւ Երկուց բիւրուցն, որ այրեցան յեկեղեցին Նիկոմիդացւոց . . . . 734
Զ. Կիրակէ Յիսնակաց . . . 736
Երկուշաբաթի. Աբրահամու եւ Խորենայ, եւ անարծաթ բժշկացն Կոզմայի եւ Դամիանոսի . . . . . 737
Երեքշաբաթի. Յիզաբուզտի վկային, որ Թարգմանի Աստուածատուր . . . 739
(Քաղկեդոնի Ս. Ժողովոյն ՈԼԶ Հայրապետացն . 740)
Չորեքշաբաթի . . . . 742
Ուրբաթ . . . . . 744
Է. Կիրակէ Յիսնակաց, որ եւ ի ծննդեան պահքն եւս հանդիպի . . . . . 746
Առաջին օր Պահոց . . . 748
Երկրորդ օր Պահոց . . . 750
Երրորդ որ Պահոց . . . 752
Չորրորդ օր Պահոց . . . 753
Հինգերորդ օր Պահոց . . 755
Շաբաթ օր. Բարսղի Կեսարու հայրապետին եւ եղբօր նորա Գրիգորի Նիւսացւոյն, եւ Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետին, եւ Աբբայ Եփրեմի խորին ասորւոյ 756
Ը. Կիրակէ . . . . . 758
Ի Դեկտեմբերի ԻԳ. Դաւթի մարգարէին եւ Յակովբայ առաքելոյն Տեառն եղբօրն 759


# ՑՈՒՑԱԿ ՏՕՆԻՑ

## ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆՔ


Անարատ յղութիւն Ս. Աստուածածնի . . . . . 711
Աշխարհամատրան Կիրակէ . . 254
Աւագ Երկուշաբաթի . . . 211
Աւագ Երեքշաբաթի . . . . 212
Աւագ Չորեքշաբաթի . . . 214
Աւագ Հինգշաբաթի . . . . 215
Աւագ Շաբաթ . . . . . 217
Աւետումն Ս. Աստուածածնի . 205
Բուն Բարեկենդան . . . . 120
Երկրորդ Ծաղկազարդ . . . 328
Զատիկ յարութեան . . . . 220
Ընծայումն Ս. Աստուածածնի . 674
Խաչգիւտ . . . . . 625
Խաչվերաց . . . . . 558
Ծաղկազարդ . . . . . 209
Ծնունդ Ս. Աստուածածնի . 545
Ծնունդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի . . . . . 2
Համբարձումն Տեառն . . . 321
Ղազարու յարութիւն . . . 207
Ճրագալոյց Ծննդեան Տեառն . 1
Ճրագալոյց Յայտնութեան Տեառն 19
Յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի . . . 21
Նոր Կիրակէ . . . . . 237
Պայծառակերպութիւն Տեառն կամ Վարդավառ . . . . 438
Պենտէկոստէ . . . . . 349
Վարագայ Խաչ . . . . . 580
Տեառնընդառաջ . . . . . 82
Տօն ամենասուրբ Երրորդութեան 363
Տօն Եկեղեցւոյ 375, 561, 563, 564
Տօն խաչի . . 558, 559, 566, 567
(Տօն մարմնոյ եւ արեան Տեառն 370)
Տօն Նաւակատեաց սրբոյ Խաչին 556
Տօն Շողակաթին . . . . 504
Տօն Տապանակի . . . . . 436
Տօն Տնօրէնութեան Քրիստոսի . 17
Փոխումն Ս. Աստուածածնի . 506


## ՏՕՆՔ ՍՐԲՈՑ


Աբգար . . . . . 731
Աբդիաս . . . . . 109
Աբդիու . . . . . 468
Աբդլմեհ . . . . . 522
Աբէլ . . . . . 462
Աբիբաս . . . . . 656
Աբիսողոմ . . . . . 60
Աբրահամ նահապետ . . . 462
Աբրահամ ընդ Խորենայ . . 737
Ագապէ . . . . . 480
Ադամ . . . . . 462
Ադդէ . . . . . 731
Ադոկտոս . . . . . 578
Ադրիանոս . . . . . 526
Աթանագինէս . . . . 369, 472
Աթանաս . . . . . 68
Ալեքսիանոս . . . . . 715
Ակակիոս . . . . . 377
Ակիւլինէ . . . . . 484
Ակիւղաս . . . . . 80
Ակիփսիմոս . . . . . 641
Ահարոն . . . . . 462
Աղեքսանդրոս . . . . . 644
Ամբակում . . . . . 468
Ամովս . . . . . 468
Այիթալաս . . . . . 641
Անանիա . . . . . 605
Անաստասիոս . . . . . 629
Անատոլա . . . . . 526
Անգէոս . . . . . 468
Անդրէաս առաքեալ . . . . 659
Անդրէաս զօրավար . . . . 523
Անդրոնիկոս . . . . . 612
Անթիմոս . . . . . 575
Անիկտոս . . . . . 475
Աննա մայր Ս. Աստուածածնի . 512
Աննա մայր Կիւրղի . . . . 149
Անտոն անապատական . . . 62
Անտոն ճգնաւոր . . . . . 604
Անտոնինոս . . . . . 475
Աշակերտք Պօղոսի . . . . 608

Աշխէն . . . . . 414
Ապիտոն . . . . . 77
Առաքեալք համօրէն . . . . 668
Աստուածատուր . . . . . 739
Ատովմանք . . . . . 98
Արեւելեան վկայք . . . . . 716
Արիստակէս . . . . . 415
Արսէն . . . . . 705
Արտեմիս . . . . . 621

Բաբելաս հայրապետ . . . . 515
Բաբելաս դպիր . . . . . 633
Բագարատ . . . . . 695
Բագոս . . . . . 381
Բառնաբաս . . . . . 605
Բասիլիդէս . . . . . 728
Բասիլիսկոս . . . . . 624
Բասոս . . . . . 728
Բարաղամ . . . . . 636
Բարթուղիմէոս . . . . . 697
Բարսեղ . . . . . 756
Բենիամին . . . . . 109

Գաբրիէլ . . . . . 647
Գայիանեանք . . . . . 366
Գենարիոս . . . . . 701
Գէորգ . . . . . 578
Գղերիկոս . . . . . 734
Գորդիոս . . . . . 76
Գուրիաս . . . . . 656
Գրաբոս . . . . . 715
Գրիգորի Լուսաւորչին մերոյ
Մուտն ի վիրապն . . . . 190
Ելն ի վիրապէն . . . . 374
Գիւտ նշխարաց . . . . 396
Գրիգոր Ակրականդացի . . . 695
Գրիգոր Աստուածաբան . . . 69
Գրիգոր Նարեկացի . . . . 533
Գրիգոր Նիւսացի . . . . 756
Գրիգոր Սքանչելագործ . . . 687
Գրիգորիս Աղուանից կաթուղիկոս . . . . . 415
Գիւտ նշխարաց նորա . . . 604
Գրիգորիս վկայ . . . . . 76

Դամիանոս . . . . . 737
Դանիէլ եպիսկոպոս . . . . 415
Դանիէլ երէց ճգնաւոր . . . 705
Դանիէլ մարգարէ . . . . 401
Դաւիթ անյաղթ . . . . . 533
Դաւիթ դվնեցի . . . . . 581
Դաւիթ մարգարէ . . . . . 759
Դեմետրիոս . . . . . 624
Դիոմիդէս . . . . . 523
Դիոնեսիոս . . . . . 608
Դոմնա . . . . . 734

Եբորա քահանայ . . . . . 650
Եզեկիէլ . . . . . 534
Եզր . . . . . 534
Ելպիս . . . . . 480
Եղիայի մարգարէի վերացումն . 363
Եղիասար քահանայ ընդ Նախահարսն . . . . . 462
Եղիազար ընդ Մակաբայեցիս . 479
Եղիշէ վարդապետ . . . . 533
Եղիսէ մարգարէ . . . . . 419
Ենովս . . . . . 462
Ենովք . . . . . 462
Եպիփան . . . . . 387
Եսայի . . . . . 446
Երանոս եպիսկոպոս . . . . 575
Երանոս հետեւող առաքելոցն . 592
Երեմիա . . . . . 518
Երեք աշակերտք Բաբելայ . . 515
Երեք մանկունքն ի Բաբելոն . 401
Երկնային զօրք . . . . . 647
Երկոտասան առաքեալք . . . 422
Երկոտասան փոքր մարգարէք . 468
Երկոտասան Վարդապետք . . 605
Երկու բիւրք . . . . . 734
Երկու ներքինիք . . . . . 77
Երկու որդիք Եւստաքէոսի . . 583
Երմոգինէս . . . . . 715
Երմողայոս . . . . . 597
Երմոնէ . . . . . 583
Եւագր . . . . . 705
Եւգինէ . . . . . 77
Եւգինէոս վկայ ընդ Եւստռատիոսի . . . . . 719
Եւգինէոս վկայ ընդ Մակարիոսի 80
Եւդոքսիոս . . . . . 618
Եւպրաքսիա . . . . . 597
Եւսեբիոս . . . . . 728
Եւստաքէոս . . . . . 583
Եւստռատիոս . . . . . 719
Եւտիքիոս . . . . . 728
Եւփիմէ . . . . . 458
Եփեսոսի Ս. Ժողովոյն Մ հայրապետք . . . . . 487
Եփրեմ . . . . . 756
Եօթանասուն եւ երկու աշակերտք Քրիստոսի . . . . 589
Եօթն եղբարք Մակաբայեցիք . 479
Եօթն խոտաճարակք . . . . 604
Եօթն կուսանք . . . . . 392
Եօթն մանկունք Եփեսոսի . 63, 636

Զաքարիա հայր Յովհաննու Մկրտչի . . . . . 534
Զաքարիա մարգարէ . . . 407, 468
Զենոն . . . . . 618

Թադէոս . . . . . 449





Թաթուլ . . . . . 604
Թալիլէոս . . . . . 392
Թարգմանիչք . . . . 404, 533
Թեկղ . . . . . 594
Թէոդիտէ . . . . . 629
Թէոդիտոն . . . . . 392
Թէոդոս . . . . . 63
Թէոդորիտոն . . . . . 618
Թէոդորոս զինաւոր . . . . 132
Թէոդորոս ստրատելատ . . . 526
Թէոպիստէ . . . . . 835
Թէոպոմպոս . . . . . 728
Թէոմնաս . . . . . 728
Թէոփիլոս . . . . . 475
Թիւրսոս . . . . . 526
Թովմաս առաքեալ . . . . 529
Թովմաս ճգնաւոր . . . . 604

Իգնատիոս . . . . . 726
Ինդոս . . . . . 734
Իրաւափառ . . . . . 702
Իւղաբեր կանայք . . . . . 512

Խադ . . . . . 399
Խարիթեանք . . . . . 621
Խոսրովիդուխտ . . . . . 414
Խորէն . . . . . 737

Կալինիկէ . . . . . 484
Կալինիկոս . . . . . 523
Կալիստրատոս . . . . . 601
Կանդիտոս . . . . . 80
Կիպրիանոս . . . . . 454
Կիրակոս . . . . . 65
Կիւրեղ եպիսկոպոս . . . . 149
Կիւրեղ հայրապետ Աղեքսանդրու . . . . . 68
Կիւրեղ հայրապետ Երուսաղէմի 149
Կիւրեղ սարկաւագ . . . . 109
Կղեմէս . . . . . 695
Կղոդիա . . . . . 77
Կոդրատիոս . . . . . 384
Կոզմաս . . . . . 737
Կոստանդիանոս . . . . 74, 389
Կոստանդինուպոլսոյ Ս. Ժողովոյն ՃԾ հայրապետք . . . . 118
Կուռնելիոս . . . . . 716
Կրոնիդէս . . . . . 604

Համազասպ . . . . . 586
Հեղինէ . . . . . 389
Հինգ վկայք . . . . . 472
Հիպերիքեանք . . . . . 630
Հիւսիքոս . . . . . 656
Հռիփսիմեանք . . . . . 364
Հրեշտակք եւ Հրեշտակապետք 663

Ղազար . . . . . 616
Ղամբէոս եւ Ղամբէուհի . . 581
Ղեւոնդեանք . . . . . 111
Ղուկաս . . . . . 612
Ղուկիանոս քահանայ . 601, 612
Ղունկիանոս հարիւրապետ . . 616

Մակաբայեցիք . . . . . 479
Մակար ճգնաւոր . . . . . 705
Մակար վկայ . . . . . 618
Մակարիոս աղէքսանդրացի . . 705
Մակարիոս վկայ . . . . . 80
Մաղաքիաս . . . . . 468
Մամաս . . . . . 570
Մանէ . . . . . 378
Մանկունք Բեթղեհեմի . . . 377
Մանկունք Եփեսոսի . . . 63, 636
Մանուկն խոստովանող . . . 656
Մատաթիա . . . . . 605
Մատթէոս . . . . . 612
Մարգարէք համօրէն . . . . 665
Մարդարիոս . . . . . 719
Մարթա . . . . . 616
Մարիամ մագդաղենացի . . . 616
Մարիանէ . . . . . 572
Մարկիանոս . . . . . 644
Մարկոս աւետարանիչ . . . 612
Մարկոս եպիսկոպոս . . . . 109
Մարուգէ . . . . . 722
Մարութա . . . . . 78
Մարտիրոն . . . . . 644
Մարտիրոս . . . . . 95
Մելի . . . . . 650
Մելիտոս . . . . . 650
Մելքիսեդեկ . . . . . 462
Մերկիւռիոս . . . . . 701
Մեսրոպ . . . . . 404, 533
Մետրոփանոս . . . . . 644
Մինաս եգիպտացի . . . . 650
Մինաս վկայ . . . . . 715
Միւռոն . . . . . 687
Միքայէլ . . . . . 647
Միքիաս . . . . . 468
Մովկիմոս . . . . . 384
Մովսէս նախամարգարէ . . . 462
Մովսէս քերթող . . . . . 533

Յակոբ Մծբնայ հայրապետ . . 722
Յակոբ նահապետ . . . . . 462
Յակոբոս առաքեալ եղբայր Յովհաննու . . . . . 11
Յակոբոս առաքեալ եղբայր Տեառն . . . . . 759
Յակոբոս առաքեալ որդի Ալբեայ . . . . . 691
Յակովիկ . . . . . 702
Յեսու . . . . . 462

Յովակիմ . . . . . 512
Յովբ . . . . . 537
Յովէլ . . . . . 468
Յովհաննէս Կարապետ . . . 58
Ծնունդ նորա . . . . . 410
Տօն գլխատմանն . . . . 234
Ընդ Աթանագինեայ . . . 369
Ընդ Յովբայ . . . . . 537
Յովհաննէս աշակերտ . . . 605
Յովհաննէս աւետարանիչ . 11, 612
Յովհաննէս Գ.բեցի . . . . 705
Յովհաննէս կամաւոր աղքատ . 715
Յովհաննէս Կարճահասակ . . 705
Յովհաննէս հայրապետ . . . 162
Յովհաննէս Ոսկեբերան . . . 652
Յովնան . . . . . 468
Յիշատակ քարոզութեան նորա առ Նինուէացիս . . . 93
Յովսէփ Աստուածահայր (138), 616
Յովսէփ Արիմաթացի . . . 616
Յովսէփ նահապետ . . . . 462
Յովսէփ քահանայ . . . . 641
Յովսէփ վկայ . . . . . 467
Յուդա . . . . . 697
Յուլիանէ . . . . . 690
Յուղիտա . . . . . 65
Յուսիկ . . . . . 415
Յուստիանէ . . . . . 454

Նաւում . . . . . 468
Նեղոս . . . . . 705
Ներսէս Լամբրոնացի . . . . 533
Ներսէս Կլայեցի . . . . . 533
Ներսէս մեծ հայրապետ . . . 399
Նեքտառինէ . . . . . 583
Նիկիայ Ս. Ժողովոյն ՅԺԸ հայրապետք . . . . . 541
Նիկողայոս . . . . . 709
Նոյ . . . . . 462
Նունէ . . . . . 378

Շամունէ . . . . . 479
Շիղա . . . . . 605
Շինու . . . . . 650
Շմաւոն . . . . . 691
Շմաւոն ազգական Քրիստոսի . 716
Շուշան . . . . . 453

Ոնեսիմոս . . . . . 72
Ոնոփրիոս . . . . . 407
Ոսկեանք . . . . . 103
Ովսէէ . . . . . 468
Ովրեստէս . . . . . 719
Որմզդան . . . . . 109

Չորեքտասան զինուորք . . . 95

Պանդալէոն . . . . . 597
Պեղագիա . . . . . 612
Պետրոս առաքեալ . 9, 422 (424)
Պետրոս հայրապետ . . . . 60
Պիմէն . . . . . 705
Պիոն . . . . . 109, 522
Պիստիս . . . . . 480
Պողիկարպոս . . . . . 716
Պղատոն . . . . . 641
Պրոբոս . . . . . 612
Պօղ . . . . . 705
Պօղիքտոս . . . . . 76
Պօղոս առաքեալ . . 9, 422 (424)
Պօղոս անապատական . . . 705
Պօղոս խոստովանող . . . . 644

Ռոմանոս երգեցող . . . . 578
Ռոմանոս միայնակեաց . . . 656
Ռոմելոս . . . . . 618

Սահակ իշխան . . . . . 586
Սահակ նահապետ . . . . 462
Սահակ Պարթեւ հայրապետ 106, 404
Սահակ վկայ . . . . . 467
Սամոնաս . . . . . 656
Սամուէլ . . . . . 462
Սային . . . . . 109
Սանդուխտ . . . . . 449
Սարգիս զօրավար . . . . . 95
Սարգիս վկայ . . . . . 381
Սեղբեստրոս . . . . . 74, 756
Սերգիոս . . . . . 77
Սեւերիանոս . . . . . 633
Սէթ . . . . . 462
Սիղուանոս . . . . . 605
Սիմէոն Սիւնակեաց . . . . 570
Սիսիանոս . . . . . 705
Սուրբք ամենայն . . (627), 672
Սուքիասանք . . . . . 100
Սոփիա . . . . . 480
Սոփոնիա . . . . . 468
Ստեփանոս Հռովմայ հայրապետ 639
Ստեփանոս նախավկայ . . . 4
Ստեփանոս Ուլնեցի . . . . 522
Սրապիոն . . . . . 705

Վահան . . . . . 66
Վաղերիոս . . . . . 80
Վառվառէ . . . . . 594
Վասիլուհի . . . . . 690
Վարդանանք . . . . . 114
Վարոս ճգնաւոր . . . . . 604
Վարոս վկայ . . . . . 629
Վլաս . . . . . 72
Վրթանէս . . . . . 415

Տասն աշակերտք Աթանագինեայ 472





Տարագոս . . . . . 612
Տիմոթէոս . . . . . 608
Տիտոս . . . . . 608
Տրդատ . . . . . 414
Տրիփոն . . . . . 70

Փեբրոնէ . . . . . 572
Փիլիկտիմոն . . . . . 570
Փիլիպպոս առաքեալ . . . 659
Փիլիպպոս սարկաւագ . . . 605
Փիլիպպոս հայր Եւգինեայ . . 77
Փոկաս . . . . . 592
Փոտինոս . . . . . 475

(Քաղկեդոնի Ս. Ժողովոյն ՈԼԶ հայրապետք) . . . . . (740)
Քառասունքն Սեբաստիայ . . 176
Քառասուն եւ հինգ վկայք . . 458
Քառասուն եւ ինն վկայք . . 601
Քրիստափոր . . . . . 484
Քրիստինէ . . . . . 458

Օքսենտիոս . . . . . 719

# ՎԵՐՋԻՆ ԱԻԵՏԱՐԱՆՔ ՊԱՏԱՐԱԳԻ

## ՅՈՒԹՕՐԷՍ ԾՆՆԴԵԱՆ

### ՅՈՐՈՒՄ ԱՒՈՒՐ Ա. ԱՒԵՏԱՐԱՆ Է Ի ՍԿԶԲԱՆԷ.

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. Ա. 18:

Վասն ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս: Խօսեցեալ զմայր նորա Մարիամ Յովսեփու, մինչ չեւ եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ի Հոգւոյն սրբոյ: Եւ Յովսէփ այրն նորա, քանզի արդար էր եւ ոչ կամէր առակել զնա, խորհեցաւ լռելեայն արձակել զնա: Եւ մինչ դեռ նա զայս ածէր զմտաւ, ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երեւեցաւ նմա եւ ասէ. Յովսէփ որդի Դաւթի, մի՛ երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ ի նմայն ծնեալ է՝ ի Հոգւոյն սրբոյ է: Ծնցի որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս. զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց: 21:

---

## Ի ԶԱՏԿԷ

### ՄԻՆՉԵՒ ՑՆՈՐ ԿԻՐԱԿԷ.

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի.

Գլ. ԻԸ. 16:

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Իսկ մետասան աշակերտքն գնացին ի Գալիլեա ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս: Իբրեւ տեսին զնա՝ երկիր պագին նմա, եւ ոմանք յերկուացան: Եւ մա-

տուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ. Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ: Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ. եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչեւ ի կատարած աշխարհի: 20:

---

## ՅԱՒՈՒՐՍ ՅԻՆԱՆՑ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու.

ԳԼ. ԻԱ. 15:

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ երբեւ ճաշեցին, ասէ ցՍիմովն Պետրոս Յիսուս. Սիմովն Յովհաննու, սիրես զիս առաւել քան զդոսա: Ասէ ցնա. Այո՛ Տէր, եւ դու գիտես՝ զի սիրեմ զքեզ: Ասէ ցնա. Արածեա զգառինս իմ: Դարձեալ ասէ ցնա. Սիմովն Յովհաննու, սիրես զիս: Ասէ ցնա. Այո՛ Տէր, եւ դու գիտես՝ զի սիրեմ զքեզ: Ասէ ցնա. Արածեա զոչխարս իմ: Ասէ ցնա երրիցս անգամ. Սիմովն Յովհաննու, սիրես զիս: Տրտմեցաւ Պետրոս, զի ասացն ցնա երրիցս՝ Թէ Սիրես զիս. եւ ասէ ցնա. Տէր, դու զամենայն գիտես, եւ դու իսկ զամենայն ճանաչես, եւ եթէ սիրեմ զքեզ: Ասէ ցնա Յիսուս. Արածեա զոչխարս իմ: Ամէն ամէնասեմ քեզ, զի մինչ մանուկն էիր, անձամբ անձին գօտի ածէիր եւ երթայիր յո եւ կամէիր. եւ յորժամ ծերասցես, ձեռս ի վեր կալցես, եւ այլք ածցեն քեզ գօտի, եւ տարցեն՝ ուր ոչն կամիցիս: Այս ասաց՝ նշանակեալ Թէ որով մահու փառաւորեսցէ զԱստուած: Եւ զայս երբեւ ասաց, ասէ ցնա. Ե՛կ զկնի իմ: 19:

---



## ՅԵՐԿՐՈՐԴ ԱՒՈՒՐ ՎԱՐԴԱՎԱՌԻ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի.

ԳԼ. Թ. 1:

Վասն այլակերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս, եւ հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն. եւ յայլակերպս եղեւ առաջի նոցա: Եւ ձորձք նորա եղեն փայլուն սպիտակ յոյժ, որպէս թօփիչք երկրի ոչ կարեն այնպէս սպիտակացուցանել: Եւ երեւեցաւ նոցա Եղիա Մովսիսիւ հանդերձ, եւ խօսէին ընդ Յիսուսի: Պատասխանի եւ Պետրոս եւ ասէ ցՅիսուս. Ռաբբի, բարւոք է մեզ աստ լինել. եւ արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ եւ մի Մովսիսի եւ մի Եղիայի: Վասնզի ոչ գիտէր զինչ խօսէր, զի զարհուրեալ էին: Եւ եղեւ ամպ մի հովանի ի վերայ նոցա. ձայն եղեւ յամպոյն անտի եւ ասէ. Դա է Որդի իմ սիրելի, դմա լուարուք: Եւ յանկարծակի հայեցեալ այսր անդր՝ ոչ եւս զոք ուրեք տեսին, բայց միայն զՅիսուս ընդ իւրեանս: Եւ մինչ գեռ իջանէին ի լեռնէ զՅիսուս ընդ իւրեանս, պատուիրեաց նոցա՝ զի մի ումեք պատմեսցեն զոր տեսին, բայց յորժամ Որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ: 8:

## ՄԵՍԵԴԻՔ ՊԱՀՈՑ

ԲՇ. Արքայութիւն քո արքայութիւն ամենայն յաւիտենից. եւ տէրութիւն քո յազգէ մինչեւ յազգ:

Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր. եւ արդար է յամենայն գործս իւր:

ԳՇ. Երկիր պագից ի տաճար սուրբ քո. երկիւղիւ քո Տէր:

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քոյ Տէր. զի օրհնեսցես դու զարդարն:

ԴՇ. Կեցո զծառայս քո, Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

ԵՇ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

ՈՒՐ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

---

## ԱԼԵԼՈՒՔ ԺԱԾՈՒ

---

## ՊԱՀՈՑ

ԱՁ. Հոգի քո սուրբ եւ բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ:

Կամ. Վասն անուան քոյ Տէր կեցուսցես զիս. արդարութեամբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ:



ԱԿ. Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. եւ մի բարկութեամբ քով խրատեր զիս:

Կամ. Զգնացս իմ ուղիղ արա ինձ ըստ բանի քում. եւ մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք:

ԲՁ. Սիրտ իմ խռովեցաւ յիս. եւ երկիւղ մահու անկաւ ի վերայ իմ:

ԲԿ. Դարձ, Տէ՛ր, եւ փրկեա զանձն իմ. կեցո զիս Տէր ըստ ողորմութեան քում:

ԳՁ. Վասն անուան քոյ Տէր քաւեա զմեղս իմ. զի բազում եղեն յոյժ:

ԳԿ. Ողորմեա ինձ Տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ:

ԴՁ. Յիշեա Տէր զգթութիւնս քո. եւ զողորմութիւնս քո, որք ենն յաւիտենից:

Կամ. Զմեղս մանկութեան իմոյ եւ զանգիտութեան մի՛ յիշեր. այլ յիշեա զիս Տէր ըստ ողորմութեան քում, վասն քաղցրութեան քոյ. զի քաղցր եւ ուղիղ ես:

ԴԿ. Տէր, ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ:

Կամ. Զմեղս մանկութեան իմոյ եւ զանգիտութեան մի՛ յիշեր. այլ յիշեա զիս Տէր ըստ ողորմութեան քում, վասն քաղցրութեան քոյ. զի քաղցր եւ ուղիղ ես:

Կամ. Աղաղակեցի առ քեզ Տէր եւ ասացի. Դու ես յոյս եւ բաժին իմ յերկրին կենդանեաց:

---

## ՄԱՐՏԻՐՈՍԱՑ

ԱՁ. Տէր սիրէ զիրաւունս, եւ ոչ ընդ վայր հարկանէ զսուրբս իւր. այլ յաւիտեան պահէ զնոսա:

Կամ. Փրկութիւն արդարոց ի Տեառնէ է. վերակացու է նոցա ի ժամանակս նեղութեան:

ԱԿ. Պարծեսցին սուրբքն փառօք եւ ցնծասցեն ի հանգիստս իւրեանց. եւ բարձր արասցեն զԱստուած բերանովք իւրեանց:

Կամ. Լոյս ծագեաց արդարոց. ուղղոց սրտից եղեւ ուրախութիւն:

ԲՁ. Պարծեսցին սուրբքն փառօք եւ ցնծասցեն ի հանգիստս իւրեանց. եւ բարձր արասցեն զԱստուած բերանովք իւրեանց:

Բ4. Կարդացին արդարքն առ Տէր, եւ Տէր լուաւ նոցա. եւ յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա:

Գ2. Վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպէս զոչխար ի զենումն:

Գ4. Ուրախ լիցին ամենեքեան որք յուսացեալ են ի քեզ. յաւիտեան ցնծասցեն, եւ բնակեսցես դու ի նոսա:

Դ2. Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին. որպէս զմայրսն Լիբանանու բազում եղեցին:

Դ4. Բազում նեղութիւնք են արդարոց. յամենայնէ փրկէ զնոսա Տէր, եւ պահէ զամենայն ոսկերս նոցա, եւ մի ի նոցանէ ոչ կորիցէ:

---

## ՅԱՐՈՒԹԵԱՆ

Ա2. Դու յարուցեալ գթասցիս ի վերայ Սիովնի. ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ:

Կամ. Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Աստուած է. սաղմոս ասացէք նմա իմաստութեամբ:

Ա4. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց:

Բ2. Ծափս հարէք ամենայն հեթանոսք. աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան:

Կամ. Աստուած, դու դարձեալ կեցուսցես զմեզ. ժողովուրդ քո ուրախ եղիցի ի քեզ:

Բ4. Արի Տէր Աստուած իմ ի հրամանս քո, զոր պատուիրեցեր, եւ ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքեւ. վասն այսորիկ ի բարձունս դարձ Տէր:

Գ2. Ուրախ եղեւ Իսրայէլ յարարիչ իւր. որդիք Սիովնի ցնծասցեն ի թագաւորն իւրեանց:

Գ4. Եկայք եւ տեսէք զգործս Աստուծոյ. որպէս զի ահեղ են խորհրդովք քան զամենայն որդւոց մարդկան:

Դ2. Հաճեցար Տէր ընդ երկիր քո. եւ դարձուցեր զգերութիւն Յակովբայ:

Դ4. Յարեաւ Աստուած, եւ ցրուեցան ամենայն թշնամիք նորա. փախեան ատելիք նորա յերեսաց նորա:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0161234

6108

1/0